This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

B 1,224,398



15

ԳՐԱԴԱՐԱՆ

ԳՐԻԳՈՐ ԱՊԱՃԵԱՆԻ

Համար ..........................

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՓԱՅԵԱՆԻ
Կարգաթիւ 14

# ՆԱՐԵԿ ԱՂՕԹԻՑ

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ԶԳՈՒՇԱՒՈՐ ԼՈՒԾՄԱՄԲՔ
ԲԱՑԱՅԱՅՏԵԱԼ ՄԻԱՆԳԱՄ
ԵՒ ԱՅԺՄ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ Հ. ԳԱԲՐԻԷԼԻ
ԱՒԵՏԻՔԵԱՆ ԱԲԲՈՒԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Հրամանաւ Արհիապատուի Տն Ստեփաննոսի Ագոնցեան
Արքեպիսկոպոսի և Ընդհանրական Աբբայի:

Ի ՆԷ
ամէնք 'ի
[illegible]
[illegible]



ԳՐԱԴԱՐԱՆ [illegible]
Կարգաթիւ 14

եւ աշխարհ.
բոլորոց, երգս,
[illegible]
[illegible]

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1827. ՌՄՀԶ

Good
EREN
94
Zubr

# ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ԱՍՏՈՒԱԾԱԽՆԱՄ տեսչութեան արդիւնք՝ ընդ դարս երա-ժանգելոր բազմօրինակ երեւալ 'ի բարեգործութեան հայկազնա-ծննդոցս, մերս եւս շնորհակալութ ճանաչել՝ ոչ միայն ընթերցութե ամէն ամէն պարգեւաց գիտել հաստատեալ, այլ եւ յորոց ջերմ պարգեւի՝ ճանաչել յարգանօք, եւ ընդունել համեստութ։ Ընդ որս երեւեցեր պարգեւաց գրեանց արդարադէս եւ աշխարհակեր մարեան գերերջանկին հօրս մերոյ Ներսէսայ Գրէգորի. գործ արդար, որոյ հրահանգաւոր ընթ. գրել յայն աշխ՝ պանծայ բարձր 'ի գլուխ. եւ պսակեալն պարտ ոչ միայն յառաջին պարծանս անդր 'ի մեր ժողովրդեան, այլ մերոյ պարծանս՝ շնորհակալութեամբ գրեաւ գերապանծան

քառօք 'ի նախակրթեցն նմանութե վերաեալ տանս։

Մեր ինչ երեւալ Ամբրոսիոս, 'ի Ներսէսեան բարձրագոյն մեծա րանցն ամբերելո 'ի հայս գրաւորական աշխոյ, որպէս նախնեն ոմն՝ զօրինաց առ եւրոպէ 'ի օրինական աստիճանութե։ Պատ-ուէր հրեշտակ հայաստանեայցս եկեղեցւոյ, իմանալի քաղցրն պարագլուխ անցեալ առաջի ժողով պաշտանակին, ոչ մարմնա-ւորս հոգւոյն 'ի կատարս յիծութե, այլ շնորհաց միջնորդեալ պծամանս մեղաց՝ 'ի տեսիլ աշխարհի, հրեշտակաց եւ մարդ-կան. ընդ եկեղեցւոյ արարչագործութեանց, երգս խաղաղութեն արքա-յութեան յառաջ շնորհալց. ոչ զօրութեան ոգւոյ առնել 'ի բերան, իբր զառաջին զոհ զաւակացս. (Ե. Թագ. ա. 18. Գ. 3՛.) այլ զանձանց միութեան յերգ արկանել 'ի լուեա ալ՝ յարութեն յաւուր։

Այս՝ զի՞նչ այլ յատեր ինչ ընտանի՝ քան 'ի նախնեն իմ զաս հատեց նմանել՝ եւ՛ անուանել եւ՛ պարզամտէ. նա Լուսաւորիչ Եկեղեցւոյ Գրիգորիոս, առաջնորդեալ մեզ զաշխարհ առաջին, իբր առաջինն՝ շնորհալի. Յովհաննես Նախապետերն՝ յունէք ցանկա

ւն, ամենայն հոգւով կերակրել. յաճախապատում վարդապետ-
ութեն՝ աշակերտս ամենարուեստս, որ 'ի դպրոցին յայս մատեանն ամ-
փոփեցոյց զբանականն արուեստս՝ ընդ Աստուածայնոյն, զԱստուածաբանութիւն տե-
սականն՝ ընդ խորհրդականին, զդաստիարակականն աստուած ծէ Գրոց՝ ընդ
մեկնողականին, զաղօթից հոգի՝ ընդ քանաստեղծականին, զերգելն՝
ընդ սիրոյ, զյոյս՝ ընդ զգօնութե, զայն քարբեան՝ ընդ մարդոյն չա-
րեաց. եւ 'ի մի բան՝ զԱծ ընդ մարդոյ. եղեւ արդարեւ դպրոց ալը-
ղակ արքայութեն նորոյ, որդւոցնեւելով 'ի որդին գանձարանէ զմեղր
նորագործ արեղծականութե, եւ զհին գինի զծերելին սիրոյն:
ՍԷ այլ յանձնապատ՝ մի բնաւ երկնատարած ծովասայն յեւքն որ-
ջեաց կամ 'ի հոժերաց, եւ մի խորալոն՝ 'ի Հերգեներաց կամ յովնէ-
դերաց. զի միչ քան զխրատ առ հայրապետանեայքս ծագեալ երա-
նաշնորհին Գրիգորեայ, որ գերոյց զաղադատեմ հոգին քանաստեղ-
ծութե՝ հնազանդեցեւ ընդ թևոյ Աստուածայնոյ հոգւոյն. եւ զայն՝ որ
ընդ երկնաւոր եւթն ծաղկեցեր, յախորժանս մարդկան ընդունական
յարմարելով, համարձակեալ վերաթռչել 'ի բանն իւր երկինս, անդ
քաղցրացուցանել նուագս ախորժալուրս 'ի լսելիս Այ եւ հրեշ-
տակաց:

# Պիտանութիւն լուծմանց։

Բայց սակայն գոյ մեզ 'ի կարգ այսց գովեստից՝ ոչ փոքր պարտաւանս զմերոյ հեղգամտութեանս խոստովանել, իբր յեսանելոց յարժանաւոր ընդունելութենէ պարգևացս, և զապերախտութիւն ինչ առ 'ի նոյն բերելով կարծիս՝ անճանաչողութեանն մասամբ. վասն զի թէպէտ և յառաջնոց անտի ժամանակաց մինչև 'ի մեզ՝ ամենեցուն փարելի է մատեանս, և մատենագրողն՝ բարեհամբաւեալ, սակայն ոչ ումեք յառաջնոցն, և սակաւուց ոմանց 'ի յետնոցն խնամ ցուցաւ՝ զանյայտութիւն որ 'ի նմա, արժանապէս բացայայտութեամբք ածել 'ի տեսութիւն. որով աղօթաւորացն անձինք անճաշակք յարբմանէ իմաստիցն մնացեալք, աղօթեն հոգւով, այլ սակաւք մտօք. վկայեն զաս թանգարան լինել ականց պատուականաց, բայց անտեսք փայլման լուսոյ երեսացն։

Ուր յայլ ազգս՝ միոյ խրթնածածուկ մատենի յոլովս տեսանեմք կացեալ մեկնաբանս հինս և նորս, մի զմիով 'ի նախանձ բացայայտութեան ճեպեալք հայրասէր բարոյիւք. և զառ 'ի յառաջնոցն զթողեալն, զզեղչեալն, և զծածկեալն՝ յետինքն փութան լնուլ, ընդարձակել, և յերևան ածել. որով մատեանն գլխովին զբնաւորն տայ լոյս. մատենագրողին յարգ և վաստակք բարեհռչակին. մեկնաբանք իբր համավաստակք գովլին. ընթերցողք գնան իբր 'ի տունջեան անսայթաքելի։ Առաւելագունի իմն փութոյ պէտք էին 'ի Նարեկեան մատենիս բացայայտութի, յորում առ ամենայն գլուխ համատարած սփռեալ տեսանեմք զանյայտութեան ծածկոյթ. գողանալով զիմաստիցն տեսութի բազում ուրեք 'ի սրատեսացն իսկ՝ թող թէ 'ի թերատեսաց։

Այլ արդ՝ թէև զկանոնս երկասիրութիւնս ոչ աւանդեցին մեզ առաջինքն, յանպարապութէ թերևս արգելեալք, կամ յայլ ինչ պատճառաց, սակայն զանազանն արդեօք ջանացան երևեցուցանել ոմանք 'ի յետնոց. և գովութեան գտան վերընդունակք յօժարութեան մասամբ, իբր կամակարք 'ի լնուլ զառ 'ի նախնեացն զպարտս. զի և հատուցումն անագան՝ հուպ է 'ի գովելին։ Եւ արդարև կատարելագունի ևս գովութեան էին ժառանգաւորք, եթէ զոյգ յօժարութեանն՝ և արդիւնք իրացն 'ի գլուխ ելանէին ստուգագէտ քննութբ, և հարազատ բացայայտութբ։ Սակայն առ այսոսիկ իւիք իւիք թերակատար գտեալք, յապա եկելոցս թողին պատճառս աշխատասիրութե, նորոգ քննութի 'ի մէջ առնուլ, և զբաւականն տալ բացայայտութիւն, թէ՛ և ոչ զամենակատարն, որ 'ի մարդկային երկասիրութիւս 'ի բաղձալեացն է՝ այլ ոչ 'ի հասանելեացն։

Բայց աստանօր մինչև մեր 'ի բուն մատեանն ձեռնարկել,

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՊՌԱՃԵԱՆԻ
Կարգա''ն.........

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՓԱՅԵԱՆԻ
Կարգաթիւ 14

# ՆԱՐԵԿ ԱՂՕԹԻՑ

ՀԱՄԱՌՕՏ ԵՒ ՋԳՈՒՇԱՒՈՐ ԼՈՒԾՄԱՄԲՔ
ԲԱՑԱՑԱՑՏԵԱԼ ՄԻԱՆԳԱՄ
ԵՒ ԱՅԺՄ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ ՑԱՒԵԼՈՒԱԾՈՎ

ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՆՈՐԻՆ ՏԵԱՌՆ Հ. ԳԱԲՐԻԷԼԻ
ԱՒԵՏԻՔԵԱՆ ԱԹՈՌԱԿԱԼ ՎԱՐԴԱՊԵՏԻ

Հրամանաւ Արհիեպիսկոպոսի Տն [illegible]
[illegible] և Ընդհանրական Աբբայի։

[illegible]

[illegible]

Ի ՎԵՆԵՏԻԿ

Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ

1827. ՌՄՀԶ

Կարգաթիւ 14

Good
ERFN
24
Zuhr

# ԲԱՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍ

ՍՏՈՒԱԾԱՆԱՄ տեսչութեանց արդիւնս՝ ընդ դարս երաժանեալր բաղձօրինակ երևեալ 'ի բարեգործութեան հայկազածննդոցս, մերս զան շնորհակալութեանց՝ ոչ միայն զընթրութեն ազգի ազգի պարգևացն գիտել հատուցանէաք, այլ թէ յորոց ձեռն պարգևին՝ ծանուցել յարգանօք, և ընդունել համբուրիւ: Ընդ թէև երկնաշէր պարգևացս գրեալ արդարապէս և աղօթանուէր մատենի գերերջանիկ հօրս մերոյ Նարեկացւոյն Գրիգորի. գործ արդարև, որում զուգահաւասար չև ևս գտեալ յայլ ազգս՝ պանծայ բարձր 'ի գլուխ. և զգուշացեն պատուին ոչ միայն յառաջին պատճառ ածել 'ի վեր հինգեցուցանէ, այլ երկրորդն պատճառ՝ զմատակարար գրչութեն՝ գերապատճան ջանօք 'ի Նախախնամինեց Նմանութե վերատեսեալ դանէ:

Ո՞ր ինչ երևեալ Մովսէս, 'ի Նարեկեան բարձրադատի մեծարանէն առեներեալ 'ի հայս ղրախտակս աղօթից, որպէս Նախնին այն՝ զօրինացն առ Իսրայէլ 'ի Սինէական առանձնութեն: Պատէր հոգեբերգօղ հայաստանեայցս եկեղեցւոյ, իմանալի փարոսն պարագլուխ անցեալ առաջի ժողովն փաղանանքին, ոչ մարմնապէս հղանելով 'ի նաւաւս ցնծութե, այլ զհոգևոյն մերկացեալ զծածուկս մեղանաց՝ 'ի տեսիլ աշխարհի, հրեշտակաց և մարդկան. ոչ բնադամբ ապաշխարութեանց, երգս խոստովանութեն արգանագրեալ յառաջի ողջոյներով. ոչ զօրարացն ղէս առնուլ 'ի բերան, ինչ զաստուածոյն նման զաբերանքներաւ. (Ե. Թագ. Ա. 18. Փ. 34:) այլ զանձանցն մեղելութեան յերգ արկանել 'ի լսելիս ամ՝ յարութեն յաւետ:

Ա՛յս՝ զի՞նչ այլ յաւէտ ինչ ընդունի՝ քան 'ի Նախնին եմ զա հատաղ Նկարել՝ և՛ անուանելն և՛ պաշտամամբ. Նո՛ր Յ աստուածոյն Երկրորդ Գրիգորիոս, առանդեալ մեզ զաղօթից սահման, ինչ առաջինն՝ զհաստատուն. Յախտեան Նահապետին՝ յաղօթէ յանկա

նէ, առնելոյն հոգւոյն ներանձնէն. յաճախապատում վարդապետութեան՝ աշակերտ անձնաբանութեան, որ ՚ի դպրոցս յոյս մարդկան ածծանոյց զերանութեան արուեստ՝ ընդ իմաստից, զիմաստաբանութիւն վերական՝ ընդ խորհրդականին, զդարձմունական առաւ մէ գրոյ՝ ընդ մերձաւորականին, զաղօթից հոգի՝ ընդ ճանապարհորդականին, զերկիւղ՝ ընդ սիրոյ, զյոյս՝ ընդ զգուշութ, զայս ճարտարն՝ ընդ մարդոյն յարիւ. եւ ՚ի մի բան՝ զամէն ընդ մարդոյ. երկնաւ որդէոր դոյլ աշխզան արքայութեան նորոյ, որդեգրեցելոյ ՚ի որդին գանձարանէ զմեզ նորագործ ուղղութեանն, եւ զհետ գինի իմաստին սիրոյն.

Մէ այլ յանդատակն՝ մի ճշմա ընկերակարծ [illegible] յետոյն որջնաս նամ ՚ի հոմերոս, եւ մի նորանիա՝ ՚ի Վիրգիլիոս նամ յոլիդիոս. զէ միջ քան զնոսա առ հայաստանեայս ծաղկեալ երանաշնորհն Պորփիւրիոս, որ կենաց շատապատմէ հոգւոյն ճանապարհծութիւն հնազանդել ընդ մեռոց իմաստնոց հոգւոյն. եւ զայն՝ որ ընդ երկնաւոր եւեթ ճառիցէ, յանորժանս մարդկան զնոսակն յարմարելով, համարձակեալ վերաբերել ՚ի բան եւս երկինս, առ քաղցրաբանութեան նուագս անուրջութեան ՚ի լսելիս մեր եւ հրեշտակաց.

# Պիտանութիւն լուծմանց ։

Բայց սակայն գոյ մեզ 'ի կարգ այսց գովեստից՝ ոչ փոքր պարտաւանս զմերոյ հեղգամտութեանս խոստովանել, իբր յետնելոց յարժանաւոր ընդունելութենէ պարգեւացս, և զապերախտութեն ինչ առ 'ի նոյն բերելով կարծիս՝ անճանաչողութեանն մասամբ. վասն զի թէպէտ և յառաջնոց անտի ժամանակաց մինչև 'ի մերս՝ ամենեցուն փարելի է մատեանս, և մատենագրողին՝ բարեհամբաւեալ, սակայն ոչ ումեք յառաջնոցն, և սակաւուց ոմանց 'ի յետնոցն խնամ ցուցաւ՝ զանյայտութիւն որ 'ի նմա, արժանապէս բացայայտութեք ածել 'ի տեսութիւն. որով աղօթաւորացն անձինք անճաշակք յարբմանէ իմաստիցն մնացեալք, աղօթեն հոգւով, այլ սակաւք մտօք. վկայեն զսա թանգարանք լինել ականց պատուականաց, բայց անտեսք փայլման լուսոյ երեսացն ։

Ուր յայլ ազգս՝ միոյ խրթնածածուկ մատենի յոլովս տեսանեմք կացեալ մեկնաբանս հինս և նորս, մի զմիով 'ի նախանձ բացայայտութեան ճեպեալք հայրասէր բարոյիւք. և զառ 'ի յառաջնոցն զթողեալն, զզեղչեալն, և զծածկեալն՝ յետինքն փութան լնուլ, ընդարձակել, և յերևան ածել. որով մատեանն գլխովին զբնաւորն տայ լոյս. մատենագրողին յարդ և վաստակք բարեհռչակին. մեկնաբանք իբր համավաստակք գովին. ընթերցողք գնան իբր 'ի տունջեան անսայթաքելի ։ Առաւելագունի իմն փութոյ պէտք էին 'ի Նարեկեան մատենիս բացայայտութի, յորում առ ամենայն գլուխ համատարած սփռեալ տեսանեմք զանյայտութեան ծածկոյթ. գողանալով զիմաստիցն տեսութի բազում ուրեք 'ի սրատեսացն իսկ՝ թող թէ 'ի թերատեսաց ։

Այլ արդ՝ թէև զկանուխ երկասիրութիւնս ոչ աւանդեցին մեզ առաջինքն, յանպարապութէ թերևս արգելեալք, կամ յայլ ինչ պատճառաց, սակայն զանազանն արդեօք ջանացան երևեցուցանել ոմանք 'ի յետնոց. և գովութեան գտան վերընդունակք յօժարութեան մասամբ, իբր կամակարք 'ի լնուլ զառ 'ի նախնեացն զպարտս. զի և հատուցումն անագան՝ հուպ է 'ի գովելին ։ Եւ արդարև կատարելագունի ևս գովութեան էին ժառանգաւորք, եթէ զոյգ յօժարութեանն՝ և արդիւնք իւրացն 'ի գլուխ ելանէին ստուգագէտ քննութբ, և հարազատ բացայայտութբ ։ Սակայն առ այսոսիկ իւիք իւիք թերակատար գտեալք, յապա եկելոցս թողին պատճառս աշխատսիրութե, նորոգ քննութի 'ի մէջ առնուլ, և զբաւականն տալ բացայայտութիւն, թէ՛ և ոչ զամենակատարն, որ 'ի մարդկային երկասիրութիս 'ի բաղձալեացն է՝ այլ ոչ 'ի հասանելեացն ։

Բայց աստանօր մինչև մեր 'ի բուն մատեանն ձեռնարկեալ,

զանյայտութիւնն որ 'ի նմա՝ հասարակ բանիւ 'ի համար բերել պատուղաձ վարկանիմ. և թէ ոյք ոմանք յեղելոցն նախ քան զմեզ, կամ որով օրինակաւ աշխատ եղեն 'ի նորայն բացայայտութիւն. դարձեալ և որ այժմու մերս է բացայայտութիւն՝ զոր կարգ ընթացից և հանգամանս պայմանեալ ունիցի ։

## Խրթնութիւն Նարեկին ։

Օ անյայտութիւն գրոց՝ անհատադրութեան անուամբ կոչին առ Դաւիթ փիլիսոփայ. ( 'ի մեկն. պորփ. պր. Է. ) այսինքն է՝ բառից, և տեսութեանց ։ Բայց առ մերս մտածութիւն՝ երեքկին ասել որոշագոյն կարծեմ. այսինքն է՝ բառից, բանից, և տեսութեանց կամ իմաստից ։ Երրակի այս անյայտութիւնք պարածածկեալ իմն տեսանի Նարեկեան մատեանս բովանդակ, իբր երկիր 'ի նախաստեղծ լինելութեան աներեւոյթ գոլով, և խաւար 'ի վերայ անդնդոց խորիմաց ասացուածոցն. ( Ծննդ. ա. 1 ։ ) և նա ինքն երջանիկ մատենագրողն թուի ինձ ըստ դաւթայ օրինակին՝ 'ի մռայլ լերինն 'ի մթին երկրին ամրացեալ յահէ սաստից արդարութեանն այ ։ ( ա. թագ. իգ. 14 ։ )

Անյայտութիւն բառից տեսանի ոչ միայն 'ի բառսն խրթինս և աներևոյթս. որպէս Փաղանգ, Խնծիղք, Անառաջնելի, եւն., այլ և որք անսովոր նշանակութեամբ են եդեալ. որպէս Անդարք, փոխանակ բառիս՝ անյաղթելի. Լրութիւն, փոխանակ լսելութեան. Մտանկութիւն, փոխանակ խորամանկութեան եւն ։ Թող զայլաբանեալ ձայնսն, այլ ինչ 'ի վերին երեսս՝ և այլ ըստ դիտաւորութեան նշանակելով ։ Այս առաջին անյայտութիւն թէպէտ առաւելապէս յաճախեալ 'ի մատենիս՝ բայց դիւրավաստակ եւս 'ի մեկնել. զի միոյ կամ երկուց բառից յայտնութիւն 'ի վեր ելանէ բանն, որում և բառագիրքն ինքնին նպաստեն ։

Երկրորդ անյայտութիւն՝ որ բանիցն է, 'ի քերթողական շարիցն ունի զմթութիւն. իբր զի թէպէտ և ընդելական իցեն բառքն, սակայն ըստ ոչ սովորութեան բերելով զկուրեանցն շարամանութիւն յոյժ գերապանծ, մռայլ 'ի բանսն արկանեն ։ Եւ այս դարձեալ յաճախագոյն երևեալ 'ի բազմօրութեան մատենիս, բայց ոչ դժուարապատում առ իմանալ՝ որոց կիրթքն են 'ի քերթողական մարզս ։

Բայց երրորդն՝ անյայտութիւն իմաստից՝ կարի տաժանական և տագնապիչ միոյ այն է, ուր 'ի բառսն ընտելս և 'ի պարզ շարագրածս իսկ՝ իմաստք յոլովակի զանխլանան. անյայտեալ թաքչին յարմարութեամբ յաջորդ բանին ընդ անցելոցն, հետևութիւն պատճառին առ խնդիրն, միաբանութիւն օրինակին առ օրինակեալն. մանաւանդ թէ պատերազմօղ եւս կարծի բազում ուրեք բան ընդ բանի, պատճառ ընդ խնդրոյ, օրինակ ընդ օրինակելոյ. մինչև յերկար խուզմամբն գայցէ յերևան որ 'ի խորս անդ գեղեցիկ հաշտութիւնն ։ Եւ՝ ուրեք դարձեալ, զի կարծէ որ ընթեռնուն՝ թէ ըմբռնեաց զիմաստն, այլ ոչ ըստ գրողին

մտաց . և ուրեք յստակապատում են իմաստքն , այլ պատճառ ստուգութեն անյայտ . և այլ ուրեք՝ արտաքին կերպարանք բանին յայտնական , բայց ոչ ողջամիտ , վասն որոյ և ուղիղն խնդրելի ։

Այս ազգ անյայտութե զծաբանութիւն կոչէ իւր օժանդակ , և զընդարձակ հմտութիւն ծծային գրոց , հարցն առաջնոց , վաղնջուց սովորութեց , ազգային պատմութեց , և որ այլ ևս դպրութեց են պարապմունք , և 'ի վերայ այսոցիկ՝ զերկայնամիտ խուզողութի առաջի եդելոց բանիցն ։ Բայց շատև այն է՝ զի յետ խուզողական քննութեն վաստակաբեկ լեալ գործի մտացն անհասութբ , անկանի տուղանի ընդ խորութեամբ բանին , և առ եղան անկարանայ՝ բայց եթէ եղխէական փայտիւն՝ աղօթից ձեռնտուութբ սբյ վարդապետին . ( Է . Թագ . Է . 6 ։ ) զոր փորձն քաջայայտ՝ տայ մտադիւր խոստովանել ։

## Մեկնիչք , կամ յօրինուածք լուծմանց ։

Որք՝ այսքաննեաց անյայտութեց վերբերիչ գիտելով զաղօթական մատեանս , ժամ է արդ տեսանել՝ ոյք ոմանք 'ի բարեխընդրացն հոգ յանձին կալեալ քննութբ լուսաբանել զնոյն ։

Ամենեցունց գրասիրաց ակներև կայ ընդարձակ մատեանն , զոր 'ի մերում դարու երևեցոյց Յակոբ պատրիարգն նալեան տպագրութբ 'ի կոստանդնուպօլիս յամին 1745 . յորում բաց յաղօթական բանիցն՝ և զճառս սբյ վարդապետին առնու 'ի բացայայտութի ։ Արդարև աշխատութի բազում յանձն առեալ 'ի գրել , որպէս և երևի , բայց ընդարձակութբն յայլ խօսս վարդապետականս , կամ բանասիրականս՝ ոչ ժամանեալ տալ զճշգրիտ տեղեկութի առաջի եդելոց բանիցն ։

Սա ինքն 'ի բանս իւր յիշատակէ լուծմունս յանուն Սարգսի քաջաբան մեկնչի կաթուղիկեայց . այլև յիւրում յառաջաբանին ասէ 'ի լրոյ , թէ Լամբրօնացւոյն ևս արարեալ իցէ լուծմունս , թէպէտ և իւր տեսեալ չիք ։ Ապաքէն բարեբաստիկք ամանք լինիցիմք , եթէ երկոքին ջահքս բազմապայծառ Սարգիս և Լամբրօնացի՝ զգեղեցիկ նշոյլսն արձակեալ իցեն 'ի մթին երկիր նարեկայ . և ուխտիւք իսկ ախորժեմ այնպէս հաւանել առ 'ի միտս , իբրև քաջք պատահեալ քաջի ։ Այլ զի մի 'ի համ բաւոյ խաբէէ ըմբռնիցիմք անքննաբար , որպէս առ բազումս 'ի գրոց տեսեալ եղև , յայտ առնեմք՝ թէ յիշատակեալ լուծմունքն ոչ սարգսի է մեկնչին , և ոչ լամբրօնացւոյն ։ Վասն զի գտաւ առ մեզ ամբողջ օրինակ այնց լուծմանց , գրեալ բոլորագիր 'ի մեր թուին իբր պծե. ( յամի տն 1406 . ) յորում բանքն են նոյն՝ զորս Յակոբ պատրիարգն 'ի մէջ առնու յիւրում մեկնութեն յանուն սարգսի . և սակայն մեր օրինակս 'ի ճակատի անդ այլով նոր գրչաւ դնէ . Արարեալ լամբրօնացւոյն . և ոչ մի ինչ յայտարարութի նշանակի 'ի կարգի լուծմանցն կամ 'ի յիշատակարանին , թէ սարգսի իցէ արարեալ ։ Այլ

Ը

Թէ այնոցիկ լուծմանց ո՛ր հանգամանք իցեն, կամ ո՛ւմ ումեք ընծայել արժան իցէ, ահա՛ քեզ պատկեր կերպարանացն 'ի համառօտն ստորերագրեալ, յորմէ և մատենագրին յարգ և ժամանակ իմանի ։

Ապաքէն երևի 'ի լուծանօղ անդր' ջան պարզելոյ զգաղտնիս մատենին, այլ ոչ հաւասար ջանիւն հմտութեան կարևորացն 'ի նոյն. վասն որոյ բազում ուրեք զբանսն խրթնածածուկս' կամ լռութեամբ պատուէ, կամ վեր 'ի վերոյ բանիւք թողու յանյայտութեան, կամ անյարմար իմաստս արտայայտէ. որպէս և 'ի կարգ մերոց լուծմանցս տեսցի ։ Այսմ հակառակ' յոլովակի զբառս կամ զբանս դիւրիմացս' ինքն բացատրէ անհեղգաբար' ոչ միանգամ և ոչ երկիցս. որպէս, դժնդակ, շնորհաջէր, անխարդախ, պաշտպանել, Նշաւանաւոր, եւ ։ Եւ զայն' ուրեք բազմաբանութեամբ ևս. որպէս 'ի սկզբան մատենին, Զայն հաստատանաց, սկսանի 'ի թիւ արկանել զազգս ձայնից' զյօդեալն և զանյօդն, զնշանականն և զաննշան, և օրինակօք զիւրաքանչիւր բացատրել յումպէտս ։ Նմանօրինակ և զասացեալն անդ, 'ի խորոց սրտի ըղձայոց Նէց, նիւթ առնու ընդարձակութեան բանից, աւանդեալ զբաժանումն զգայութեանց և կարողութեանց հոգւոյ, և զիւրաքանչիւր նոցա առ միմեանս բաղդատութեան. զոր ոչ մի ինչ հարկ տեղւոյն պահանջէր ։ Է՛ տեսանել 'ի նմա այլ ընդ այլոյ կոչմունս, զմիոյ գրոյ բան այլում տալով. որպէս 'ի բան ա. 2. զասացեալն, Մէրճ է օր փն, որ է յովելայ գ. 14. լուծանօղն ընծայէ ովսեայ, ուր չիք ։ Զայսպիսիս և այլուր առնէ ։

Բազում ուրեք 'ի կիր առնու վայրապար զբառս և զոճ ռամկական, որպէս, շտապով, Նալան եղաւ, խօսնէլ հասարակնէմ, խմել, ծեծուած ։ Զինչ իցէ լաւ փեսա, որ կերակրէ Նէ ինչ հաւ առնէ ոչ ա ։ Հայոց. (այսինքն այնպէս.) Կլոր ժաղէայ. Կողէցնէս. յահէս որ հալվանէմ. հէճէպով. Մէկն կատծ է. մնալ ։ Արժանի էմ այսոր և այլ շատոց. ծանրալ. էնց ընէնչ ջուրն 'ի մաշէն Նաքէ ։ Մուրճուր ։ Հմայէրն այն է որ 'ի փողոյն ընէխան հալէն, ու պահապանէ առէն. ըստ այսմ և այլն ։

Եւ ոչ այս միայն, այլ յոլով ուրեք իբր ընտանեբար վարէ անխտիր զայլազգական ձայնս' զթուրքին, և զարաբացւոյն, և զայլոց. որպէս 'ի մեկնել զողջակէզն' դնէ որ է Նաօխըդ ա ։ Նաօ, այսինքն ըմպանակ ։ տայսի, փոխանակ' միջակայնոց ։ Տաղալղյ, փոխանակ մուրհակի ։ Նալ, այսինքն շաղիղ ։ Բէհ, չըլիկ, այսինքն առհաւատչեայ, գրաւ ։ Ամանաթ, այսինքն աւանդ. Տաղ, այսինքն դաշն ։ Դանէսար, այսինքն դատախազ ։ Մինդ, այսինքն նաւահանգիստ ։ Նիշանճի, այսինքն նկարել ։ Զառփ.ևնել, այսինքն ընդդէմ թագաւորի մեղանչել ։ Փայէն, այսինքն սուրհանդակ ։ Հազինայ, այսինքն գանձարան ։ Նաւխ, ալամ, այսինքն դրօշ ։ Սարթ, այսինքն օձառ ։ Լէզաթ, այսինքն. բորոտ, առեալ 'ի լատինէն' Լէփրա ։

Արդ' զայսոսիկ ղհանդամանս լուծմանցդ կշռելով, ո՞ ոք լսել անգամ ախորժեսցէ' թող թէ ընդել բանիւ, Սարգսի մենկչի

լինել արարուած, կամ Լամբրոնացւոյն ներսեսի. որոց ընտրութիւն բանից, զգուշութիւն խօսից, ոճն ընտանի յամենայն գիրս իւրեանց աշխարհատես փայլէ։ Առ սարգսի ոչինչ օտարոտի բառից կիրառութիւն է տեսանել. իսկ առ Լամբրոնացւոյն՝ դուն ուրեք 'ի պատարագամեկնիչն կամ 'ի թուղթս իւր 'ի հարկէ բանիցն հարեւանցի յիշատակեալ. քանզի չեւ եւս առ նոցա ժամանակօք սովորեալ էր 'ի վարդապետական գիրս՝ ըղատմկական և զայլազգական խօսս վարել անխտիր. այլ առ միոյին կիլիկեցւոցն տեսանեմք զայդ սովորութիւն. որպէս 'ի դրութիւնս վարդանայ, 'ի մեկնութեան մարկոսի, և յայլս։ Վասն որոյ իմ կարծիք յայն յօժարեալ են, թէ առաջնորդ լուծմանցդ՝ մի յայնց կեղեկեցւոց իցէ իբր 'ի չորեքտասաներորդ դարուն, որպէս բաց յասացեալ նշանացդ՝ զայն եւս նկատեմք 'ի լուծմունս անդ, զի յնծաբանական բանս ուրեք 'ի կիրառնու զորոշմունս բացատրութ, որ 'ի լատինական դրոցն թարգմանելոց առ այնու ժամանակօք ընկալեալ է։ Եւ թերեւս այն լուծանօղ՝ անուանակից գոլով սարգսի, կմ քաղաքակից լամբրոնացւոյն, համբաւն ընկալաւ և տարածեաց նոյն լինել ընդ նոսա. որպէս սակս նոցին պատճառաց՝ յայլ բազումս տեսանեմք լեալ խառնակութիւն անձանց և դրութեանց նոցա։ Մանաւանդ՝ այլ եւս պատճառ գուցէ եւ ոմանց՝ լամբրոնացւոյն ներսեսի կարծել զսա գործ. իբր զի լուծիչն 'ի բանն ը̄. 1. 'ի մեկնել զասացեալն։ Անդաւրհեալ ծաղկեցեալ ոսկւ. կամ Ալոսա-ղանեկս են. 'ի կիր առնու զբուն բանս սբ̄յ լամբրոնացւոյն՝ որ 'ի մեկնութեանն սղմսայ. է. 9. 11։ Կամ, զի զերկու աղօթս հոգւոյն սբ̄յ, որ 'ի բանն լէ̄, բացայայտեղով լամբրոնացւոյն 'ի պատարագի գիրսն, համբաւն անձնոյդ հաչակեր, թէ զնարեկն ողջոյն պարզաբանեալ իցէ։

'Ի լուծմն բանիցս՝ զայն եւս աղդ առնել կարեւոր է, զի կայ և այլ օրինակ լուծմանց՝ ընտրութ̄ համառօտեալ յամբողջ օրինակէն՝ զոր ասացաք. և 'ի համառօտելոյ սորա՝ կրճատութ̄ արարեալ այլ օրինակ լուծմանց, որ և այն իսկ է՝ որ 'ի տպագիր նարեկսն կայր 'ի միոջ արձանագրութեալ, իբր ծրագ առկայծեալ աղօտաճաճանչ՝ միջամուխ արշաւեալ նովաւ 'ի մթագգած վայրս։ Եւ այսպէս երից եղելոց օրինակաց լուծմանցն՝ աղբիւր նոցա այն է, զորմէ կանխեցաք տալ տեղեկութիւն. զոր և 'ի մեր լուծմունս յիշատակեմք, նշանակեալ հին լուծ. կամ հ̄լ։

## Հանգամանք նորոգ լուծմանցս։

Այլ արդ՝ եթէ ըստ նախ ասացելոցս, մեկնողական դրութիւք այլոց 'ի նարեկեան մատենին՝ բաւական էին տալ անմոլորապէս զգոյգս բանիցն, մեզ ոչինչ աշխատութիւն էր բովանդակին լինել յուղախնդիր, այլ զթերին եւեթ լցուցիչ. զի ոչ եւթէ արհամարհոտք ինչ կամ պարսաւաղէտք այլոցն վաստա-

կոց յառնել յօժարիմք, որ ընդ իմաստութեան բնաւ ոչ հաղորդի. բայց ընդ ազգասէր բարոյից՝ և զիրաւասէրն լծորդել խրատիմք: Վասն որոյ 'ի դոյն խորհուրդ կամակար տուեալ զանձն 'ի հանդէս նորոգ լուծմանցս, այնպիսի ջանացաք պահել կարգ, զի յամենայնի ըստ կարի հարազատութիւն իմաստիցն խնդրեսցի, և ընդ հարազատութեանն՝ բացայայտութիւն, և յերկոսեանն՝ զհամառօտութիւն պատուեալ:

Առ 'ի գիւտ հարազատ իմաստից գրոց՝ հարազատութիւն բնագրին է առաջին խնդրելի. Նմին իրի 'ի լուծումն առնումք զբնագիր մատենիս ըստ օրինակին՝ որ 'ի բազմապատիկ սխալմանց սրբեալ տպագրեցաւ 'ի կոստանդնուպօլիս, և 'ի մէնջ: Բայց և առ այնու 'ի ձեռագիր օրինակս՝ որ առ մեզ, դարձեալ հետաքննեցաք. մանաւանդ որ ընտրելագոյնն է՝ գրեալ 'ի մեր թուին չձդ, և յետ այնր համեմատեալ ևս ընդ այլ օրինակի մխիթարայ ուրումն վարդապետի. առ որ յիշատակագիր համառօտ յաւելեալ ազգ առնէ՝ կարի վստահանալ 'ի նոյն: Յօրինակէ աստի բազում ուրեք յիշատակեմք 'ի կարգի լուծմանցս զտարբերութիւն որ 'ի տպագրելումն այլազգ եղեալ կան, նշանակելով, 'ի լուս. օրինակն, կամ 'ի մեր օրին:

Այսպիսաբար յապահովացեալք 'ի բնագիր անդր, զիւրաքանչիւր տեղի կարօտ մեկնութեան՝ ոչ ըստ կամի կամ վայրապար խօսիւք անցանել հաւանեցաք, այլ եթէ քերթողականս իցեն, եթէ ածաբանականք, եթէ իմաստասիրականք և կամ պատմականք, զամենայնն 'ի բուն սկզբանց անտի հաւաստել հոգացաք. և միանգամայն 'ի բնագրի անդ ընդ անցելոց բանիցն և ընդ յաջորդացն համեմատել. զի պատահէ բազում անգամ իմաստից ինչ ինքնին առանձինն լինել ճշմարիտ, բայց կարգի հիւսուածոց բանիցն ոչ անկանել: Այլ թէ ուրեք երբէք բառ ինչ կամ բան յետ զգուշաւոր քննութեան ոչ եկն 'ի հաւաստի գիտնաւորութիւն, զհաւանականն նշանակեցաք, կամ երկբայականօք վարեցաք դիմօք. լաւ համարեալ արդարախօս երևել, քան բանագէտ:

Զընթացս լուծմանցս ջանացաք յոյժ բացայայտ յարմարել, որպէս մեկնչաց է սովորութիւն. զի ինքնին ընդաբոյս վայելչութիւն իմաստիցն ջահաւորեսցի՝ անկարօտ պաճուճանաց բանից: Յիւրաքանչիւր տեղի՝ ուր ոլոր բանիցն է, զայն նշանակեմք կրճատ, և զլուծումն 'ի վերայ բերեալ լրացուցանեմք զիմաստն, թողեալ ընթերցողին՝ ամբողջ աչօք ողջունել զբնագիրն, զի մի թերակատար կամ այլ ընդ այլոյ իմաստքն կարծեսցին: 'Ի դիւրութիւն այնոցիկ՝ որք չեն քաջավարժ 'ի բարբառ գրոց, ուրեք 'ի կարգի լուծմանցս, և բազում ևս 'ի կատարածին մեկնեցաք զբառսն աշխարհիկ և այլազգի բարբառով ըստ նշանակութեացն որով վարին 'ի մատենիս:

Բայց քանզի 'ի մերում խորհրդեան չափաւոր համառօտութեան կայր առաջի նպատակ, խնամով հրաժեշտ կալաք յամենայնէ որ ինչ անկարևոր երկարութեան է պատճառ: Վասն որոյ ըղ-

վկայութիւնս նը գրոց՝ զորս յաճախութբ 'ի կիր առնու երջա-
նիկ վարդապետն, ոչ զամենայն որոց և ուստի են՝ նշանակե-
ցաք, զի մի յանչափն ձգիցիմք. այլ միայն զանծանօթսն ըստ
տեղւոյ կամ ըստ իմաստից, կամ յորս կայր ինչ գիտելոյ ար-
ժանի, ծանուցանել ճշդեցաք։

Զգուշացաք առաւելապէս, մի անյագութբ արտաքոյ վազել յօտար գրոյս, կամ անժուժաբար խնդիրս յուզել 'ի հանդէս վիճաբանութե. զի ոչ գրանոցս իմն՝ և ոչ մատենոցս կառուցանել ատանօր յանձն առեալ եմք, որով կամ բանաքաղս երևիցիմք, և կամ բանամարտ. այդպիսի այլոց գրոց թողցուք. իսկ յառաջիկայս՝ լուծմանց է գիրս, 'ի քննել հաւաստութբ զմիտս բանիցն, և 'ի լսել ճշմարտախնդիր աշակերտութեամբ։ Կամիմք՝ զի ինքն նը վարդապետն զիւրսն խօսեսցի. մեք խօսելեացն որոնօղք լինիցիմք՝ առնուլ և տալ զճաշակս բանին. այլ ոչ եթէ 'ի բերանոյ նորա 'ի մեզ կորզեալ զվարդապետութիւն, ճոխաբան լինել 'ի մեր դէմս. զի մի աղօթական ձևոցն ըղձականութի փոխեալ 'ի վարդապետական, կորուսցէ զիւրն համեղութի։

Եւ արդ՝ այսպիսեաւ երկիւղածութե զգուշով պնդեալ զմիտս, և մաղթանաց ձեռն առ նոյն ինքն երջանիկ աղօթարարս մեր ամբարձեալ, զհետ պնտեսցուք դժուարամատոյց նորայն բանից. եթէ հասանիցեմք ինչ, այն շնորհք, և եթէ անհասութբ յետնիցիմք, մեզ չէ ինչ անծանօթ չափաւորութիւն մեր. այլոց արագամտաց տացի ասպարէզ։

Բայց 'ի քննել մեր զիմաստս աղօթական բանիցս, զիղձս հայցման նոցա՝ և մեք և ընթերցօղք յանծանօթ անտի ուսցուք և հայցեսցուք. վասն զի այս ոչ ընդ քննութբ գայ, և ոչ բանիւ կերպաբանի. որպէս հաստատութբ արտայայտեաց ճաշակօղն աղօթից՝ հրեշտակն լամբրօնեան, բացատրեալ 'ի պատարագի գիրսն զաղօթս հոգւոյն սբյ՝ որ 'ի բանն լգ. ասէ. * Անմարթ և անհնար է ասացեալ զաղօթից բան մեկնել. զի նա իւր ծածկից և ող հանդերձելոյն ունի զիւրն փրկման փոխօրման հոգւոյն տուօղին, որում ժող ցրանեաց յանէր. իսկ զայն բանիւ մարմնացուցանել՝ չէր հնար. և զայս առանց նորին օրինել՝ անհնայն է ... բայց մեք կարիք ոչ ըստ հետ նորին անցեալ, ծանիցէ։ ‖ Եւ զկնի դարձեալ. * Զոր 'ի բան չկել և պարտել՝ անարգարերան է շնորհին. և ասամամբ զայն ճանաչել՝ անհնարաւոր է լսողին ... մի հարծեա գտանել բնա կամ ասանել յօտարոյ, մինչ և 'ի մեն է սորին փոխաբերութեան բղխեալ. և յորժամ ասասցես, արա հաստատես յանձն՝ եթէ ոչ գտես։ ‖

Եւ արդարև ինձ վարձս քրտանց՝ և հանգիստ վաստակոց զայն շատ համարիմ, եթէ 'ի տեղեկանալ իմաստից աղօթիցս՝ և ըղձիցն տեղեկութեան զչափ յանձին առնուցում. և 'ի դոյն եւս կամք ըղձանաց իմոց վասն անձինս կարօտելոյ՝ և որք իբրև զիսն են. և ոչ անյոյս յընդունելութենէն. զի թէ իւրոցն չարաբարաց բարեխնդիր եղև յերկրի մեծարեալ վարդապետս, ('ի բանն ծե. ծէ. ձգ.) յերկինս զարժանի փափագումն իւրոց աշխատաւորաց՝ անտես զիւրն առնիցէ։

## Որ ինչ յաղագս յերկրորդ տպագրութեան գրոցս։

Զհետ համբաւական տեղեկութեանցն որ յաղագս Նարեկեան աղօթից մատենին տուեալ յառաջնումն տպագրութեան, և որ այժմ երկրորդեցան ասկս միշտ կարեւորն լինելոյ 'ի գլուխ և յուշի ունել, կարճառօտ իմն յաղագս երկրորդ տպագրութեանս ասել ունիմք, ոչինչ այլ փութաջանութիւն արարեալ մեր յայսմ՝ բայց զի վերստին խնամով 'ի դպրագիր օրինակս մեր հետազննե-ցաք զուղղագրութիւնն, և զերեւելեան նշանակեալ ծանուցաք։ Այլ առաւել ևս քան զայն, յաւելուածս արարաք 'ի լուծ-մունս անդ՝ ուր ուրեք յառաջնումն համառօտիւք եւեթ տուեալ էր մեր տեսութիւն, և կամ զանց ևս արարեալ։ Թէպէտ և այսքանեօք ևս ոչ եթէ զարժանն կամ զբովանդակն համարիմք նշանակեալ զբացայայտութիւն. քանզի սքանչելարուեստ մատե-նիս բարձրութիւն և կամ խորութիւն գերազանցէ միշտ քան զմեր չափողս։

# Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն Ք

## ՑՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ ԱՊԱՇԱՒԱՆԱՑ, ՀՈԳԵՇԱՀ ԽՐԱՏՈՒՑ

*Անձին տրտմանաց, զղջականաց կամօնաց կենաց, կամաւորութեանց յանձնառութեանց, անկրկնութեանց յայտնութեանց, մեղանաց խոստովանութեանց, յուսմունք զաղանեաց, տարածմունք ծածկեցելոց, յանդիմանութիւնք թաքուցելոց ։*

*Սպեղանիք զօրաւորք՝ վիրաց անբժշկականաց. դեղք աղաղականք՝ ցաւոց անտանելականաց. Հնարաւորութիւնք բազմամասնեայ երկանց վտանգից ։*

## ՚Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ ԱՄԵՆԻՑ ԲՆՈՒԹԵԱՆՑ ԱՌԻԹՔ ԱՐՏԱՍՈՒԱՑ, ՊԱՏՃԱՌՔ ԱՂՕԹԻՑ

### ՚Ի ԽՆԴՐՈՑ ՀԱՅՑՄԱՆՑ ՀԱՐՑ ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ ԱՍԱՑԵԱԼ ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

## Գ Ր Ի Գ Ո Ր Ի

## ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ



Արթնոյն գրեգորի՝ տայէ տիրուհի,
մատչել յիւր որդւ՝ ՚ի յԱղթամար կղզի:

# Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ
## ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ։
### ԲԱՆ. Ա.

ԶԱՅՆ ՀԱՌԱՉԱՆԱՑ՝ ՀԵ-ծութեան սրտի՝ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ տեառնդ զաղաղանեաց. և մատուցեալ եղեալ ՚ի հուր թախծութեան անձին տոչորմանն՝ զպտուղ ըղձից ձենձերոյ սպանեալ մտացս, բուրվառաւ կամացս մատուցել առ քեզ։ Այլ հառաչեցիս հայեցիս գթած, [2] քան ՚ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեն։ Ընկալ զսակաւամասնեայ բանիցս յօդուած քեզ ՚ի հաճութի, և մի ՚ի բարկութի. ելցէ ՚ի խորոց սրտի զգայութեց խորհրդակիր սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէր բանական զոհիս, ողջակիզեալ զօրութ ճարպոյ՝ որ յիմն է պարարտութի։ Եւ [3] ՚ի դնելս իմ ընդ քեզ դատ՝ խառնեալ աղերսիւ հզօր, մի իբրև զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն յակօբու ըստ բողոքելոյն եսայեայ, և զանիրաւութին բաբելոնի՝ տաղտկալի քեզ երևեսցի. զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ. [4] այլ իբր զբուրեալ խունկս հաճոյական ՚ի խորանին սեղանոյ, զոր դաւիթն կանգնեալ նորոգեաց տապանակին հանգստեան ՚ի դերութենէն դարձելոյ, որ ՚ի վերստին գիւտ կո-

բուսեալս հողւոյ առակի, ընդունելի կամաց քոց լիցի ։

Դ. Բայց քանզի [5] ձայնդ ահաւոր դատաստանիդ հատուցման՝ [6] ուժգինս հնչեցեալ 'ի ձորն վրէժխնդրութե, կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս․ այժմէն գուշակեալ շարժմունս յուզմանց ներհակականաց, որ յիմում անձին ցուցանի, խռովութիւն ամբոխից․ հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոցն հոյլք, չարեացն՝ ընդ բարիսն, և գերեալ զիս 'ի մահ ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան զշնորհին ժամանել առ իս․ զոր ընտրեալն առաքելականացն դասուց պօղոս՝ առօրինակեալ զմովսէս, զքոյ փրկութիւն յաղթօղ ցուցանէ ։ Վասն զի Թէ [7] մերձ է օր տն, որպէս գիր ասէ, 'ի հովիտն անձուկ ասպարիսին յովսափաթու և հեղեղատին կեդրոնի, փոքր հանդիսարանացն իրաւանց ժամադրութեց, որ կենցաղականաւ այսր յաւիտենիւ զհանդերձելոյն ինձ կերպարանեն, ապա եւս յաւէտ մերձեցաւ 'ի վերայ իմ արքայութիւն տյ՝ [8] մարմին եղելոյ, մեծապէս գտեալ զիս առիթ մնասուց՝ բազմաց տկասեաց՝ զանազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմից, քան զձեռին նորին վերակացունմն անդ ուրեմն երբեմն 'ի հարուածս եղովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց բարբարոս ազգաց ։ Վանզի [9] այն ընտրութիւն ամօք չափեցաւ, իսկ պատուհաս իմում պարտուց՝ առանց աւարտման ունի զսահման ։ Ահ, գուբ և որոգայթ անձողոպրելի, ըստ մարգարէին և առակողին, տագնապաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամօթն մշտնջենաւոր ատէն գծագրել ։ Ով որ միայն քո է հրաշագործել պտուղս դեղոց 'ի հնարս կենաց՝ ամենավարան տարակուսանաց հոգւոց վտանգից, քաւիչ ամենայնի՝ գովեալ 'ի փառս անճառս անստահմանելի բարձրութէ, յաւիտեանս յաւիտենից ։

(1) Հեծութիւն սրտի՝ ողբոց աղաղակի ։ Ցայլ օրինակ, հեծութեան ողբոց սրտից աղաղակի ։ Աստուած աղօթիցս զայրացիւն խնամասն ունի ։ Զձայն հառաչանաց սրտիս հանդերձ աղաղակաւ ողբոց քեզ վերընծայեմ մի տեսանել զաղաղակաց սրտի․ Թէպէտ և զուռ ոչ կարծեաց խնամ ձայնի՝

[illegible]

[illegible]

(2) [illegible]

(3) [illegible]

կամ իսրայելացւոց, որոց ասէր Եսայիաս (ա. 15.) * Յորժամ համ-բառնայցէք զձեռս ձեր, դարձուցից զերեսս իմ. Ոչ որպէս զաղօթել նոցա մերժէր՝ վասն անձինց նոցա զձեռս ըմբռնեալ արեամբ, նոյնպէս և զիմ աղօթելս կարծես արհամարհել վասն կամաց և յանհոգութէ յանդգնե-լոյս: Եւ զանիրաւութիւն ԲաԲէլոնի, զի. և մի՛ խորհ զանօրէնութիւն բարձ-րելոց տաղտկալի երևեսցի քեզ իմ աղօթելս: Թուի հայել 'ի բանն Դաւթի. ճզ. ժէ. ասէ վասն չարաչար գառածութեան ասէ, թէ խոտե-ցաւ որ՝ եւ անօրէնութեն 'ի բարեկամէ 'ի ծերոց գառածութեանց: Քանզի գործ նոցա երևէր աղաղակութեն և ուղիղ աւաչխորհուրդ ժողովրդեանն. ուր ընհակառակն՝ առաւել Աստ անօրէնութեն էր: Զոր առաւ. զոր և ա-ռաւելագոյն բան հզր սաղմոսին ծանուցանէ 'ի դ սան. * Եղիցի ոչ 'ի ճար-տար անխրատութիւնք նոցա. Ոչ անխրատութիւնք նոցա որպէս նուէր ճար-տար ձեռնանն, երևելին խորհ զոր հաւատալոյ, որ ըստ կրկին անխրատութեանն է:

Այդ՝ մի՛ այսպէս համարեսցի և իմ աղօթելս:

(4) Այլ ԷԷր ղԷաղԷու: Այս իմ նուէր աղօթից ընդունելի լիցի քեզ խորհ զհաճելի խունկին բարձրեալ 'ի խորանին օԷլոԷայ, զոր Դաւթիթն կանգնեաց: Դեկտանաւնդ ղրը ցուցանէ զխորանն. և յետղանակ բանին այնպէս կարծեցուցանէ, թէ զխնկարկութեանս խորանն՝ որ կայր երկեան 'ի սեղոմ, երանց գաւիթ և կանգնեաց 'ի քաղաքի իւրում 'ի սիոն: (ա. թագ. ձ. 17.) բայց ըստ մեկնչաց՝ նոր խորանն չինեաց գաւիթ, իսկ ա-ռաջնեանն 'ի մովսէսէ՝ կայր 'ի բարձու գաբաւոնի. ուր գրի (ա. մնաց. իա, 29:) որում պատահաբան կարգեալ էր սադովկ քահանայ. (անդ. ժզ. 59:) վասն որոյ զտապանակն ոչէ վերհապէս այսպէս մարթ է խնանալ: Աղօթքս իմ ընդունելի քեզ լիցի խորհ զխունկն մատուցեալ 'ի խորանին սեղոմայ, ղոր, զի զորպէս և գաւիթ կանգնեալ նորոգեաց, զի նորակերտեաց վասն համեղատեան տապանակին՝ 'ի փէրուէն թուրծէլոյ. զի թէպէտ յետ զերութեն սոս քահան երեաց 'ի տան սուրբ ադոնայ. (ա. թագ. է. 2:) և յետ այնչափ ամաց երեկս 'ի տան սաբեղաղոյ. (բ. թագ. զ. 11.) բայց քահանայք կայր առաջնոց խորանին որպէս անցաւոր, վասն այսորիկ խորհ նոր դարձեալ 'ի գերութէն՝ համեղխաւ ածեր զայն գաւիթ. որ և ասէ 'ի դարձ կորուսեալ հօգէոյս աստվ, օրհնեալ:

(5) Զայնդ ահաւոր: 'Ի բովանդակ բանիս յաւաղ առնու զբանն (յա-մէէլ. գ. 2.) * Համբարձեալ ձեռս իմ 'ի ձորն յովսափաթու *. ԵՆ: Հին լուծմունքն ըստ կարծելոյ բարունեաց ամենց՝ ինանալ ըստ ճանկին զխաղաղա-ծէ այլազգեաց յաւուրս յովսափաթայ արքայի յուդայ. (բ. մնաց. ի. 22.) բայց անյայտնաւ է. զի 'ի բանն յովէլայ՝ յովսափաթ ձոր է անուանն ազգայլն, այլ սուրբ. թէպէտ և մեկնիչք անկապաբան են՝ թէ զոր աւելի նշանակեցէ. Թուի զայն՝ զի յովէլ յետոյ է ժամանակաւ քան զյովսա-փաթ արքայ. և այս մարգարէութիւն նր հայի յաւուրս կատարած հե-թանոսաց. (տես 'ի բովանդակ գրոցն.) վասն որոյ ըստ քաջ մեկնչաց՝ յա-մէլակեան բանս անդրադէ զհաւաքածս հեթանոսաց՝ որ առ մակարդէսս ունքս: տես և զինի 'ի լուծ. գ: Իսկ առ 'ի միտս՝ այն հաւաքած և վճռե-խնդրութէ հեթանոսաց օրհնեալ զօր Ընհանուր գատաստանին: Ուստի այս ձայն ասէ՝ Նէէլու Էոյ ԷրԷնԷ, երկու խաւարութեամբ կոծ չարութեան ծնա-նի, մի՛ որ 'ի մասանց խաղնէ համբառնալով, և մեւս՝ որ յանհաւատութէ գա-տաստանին: Կամ, ԻԷԷԷու, զի այլևայլ պատահարաղմունս հակառակ մե-ծութեանց. ուշիմին Փաւլասէլաւ. զի յուցեալ յանձին իմ յաղալմունս խորհրդոց հակառակաց: Հաւբէնուն առ մեծաւս զէն առ ասաւէր: Որպէս 'ի մարգարէա-կան պատահարաղմին բաղտում անգամ խառնակութե արկանէր ած 'ի մէջ հե-թանոսաց, և զմեծամեծս տառապեցին. (ըստ բ. մնաց. ի. 22.) այսպէս և առ իս ամենայնք այլևայլ խորհրդոցս Է մեծամեծս մարտնչին. և կատարեն

զանձն իւր. չարչարանս ընդ Քրիստոսի. մասնաւորութիւն չար գործոյ՝ ընդ մասա-
ծութեան բարկութեան որ յԱյ. իբր զի եւ չարիս յանձնականի, և սոծ զղջացեալ
իւր առաստացուցանելոյ: Կամ, պատանեկութեան չար յօժարութեանց մարմնոյ.
ընդ բարւոյ կամաց հոգւոյս. զի յաւէտ զաստուածութեան զօրութիւնս բարւոյ կամաց
հոգւոյս, որպէս Պօղոս կոչէր կամաց կամաց մարմնոյս, յաղթահարելով և զե-
րելով զնա ՚ի մահ մեղաց ընդ հին մարդոյն, կյ ըստ հին օրինացն մեռեալսն,
որ զդարձուցանէ մահու ՚ի մէջ ածել յանցուցելոյն: Կամ, ըստ առաջին
մեղացն և սատանայութեան՝ որ յառաջադոյն էին զիջուցու. յորպէս կայցէ նոր
ֆան զչնորհին միաբանութեան և նոր օրինացն ծառայել ասէ: Զոր, կյ որպէս
չնորհէ աղօթս առօրինակելով նշանակեա, ՚ի մի օրէն. և ըստ հին ըստ. օրինակ ա-
ռնելով, կյ բաղդատակելով զանձնեա կէտ զհին օրէնս, զգին փրկութեան յաղթող
ցուցանէ, յաղթող յարդարացուցանելն. ըստ այնմ (գործոց. ժգ. 38.)
* Յամենայն յորմէ ոչ կարացէք օրինօքն մովսիսի արդարանալ, սովաւ ամ
որ հաւատայ՝ արդարանայ: * (առ՚ս և հռոմայ. Ը. 2. 3:) Այնպէս
յաղթող ՚ի զատելն. ըստ բանին (եբրայ. Ժ. 28. 29:) * Արհամարհեալ
ուրուք զօրէնսն մովսիսի, առ երկուք կամ երիւք վկայիւք մեռանէր:
Իսկ որչափ առաւել պատուհաս արժանի համարիցիք զայն՝ որ զորդին Այ
առ ոտն եհար * ևն: Արդ՝ այսմ չնորհի յանցաւոր գոլով եռ, որչափ
պատուհաս մեծայ լինի:

(6) Ոսկեբերան Մեկնիչ: Լաւ օրինակի այսպէս ասէ. ոսկեբերան մեկնէ,
հրէիցն հին ցերմէ մարմնոյ յարուցանելոյ ամբարտաւանութեան. ըստ յարու-
թեանց ներհակութեանց որ զհնացեալ անցէալ ցուցանէ, խոստովանութիւն սիրելոց հաւատոց
ընդ փրկաւն, զին առ ստուգեր խորհրդոցն, հոյլ չարչարանացն ընդ Քրիստոսի: Եւ
պարտիցէք է. ձայնիւք առհասարակ զաստուածութեան յերկինից առաքի հնչեցեալ
առաւելի, արդէն գոռացեալ են կամ ծանուցեալ զերկրին պատուէրանօք,
կյ չարժման նորհակեան ամբարտաւանաց այլք լինին ՚ի հողի իւր. և խաղա-
ղեցաւ ընդ միաբանեա հարկանելն խորհուրդք մեռանցն՝ երբեմն զէն առ սու-
սեր, մի խորհուրդն մեռանելի Է մեռանին. մի խորհուրդն երբեմն տառապանք
մերժումն կամօք, մի ամն երբեմն մահուան կամ զղջալ պատուհասելու Քնարս.
այսպիսի մեռանելին հողոյ կամ բաղդատեալք չարչարանս ընդ բարերարն ևն:

(7) Մեռեալ է օր Տն. (Ըստ յովհ. Գ. 14.) ՚ի պէտս հոգւոյն յաղթանակութեան,
որ թագաւորեաց՝ զաստուածութեանն ամն, և հեղինակութեան կենդանի, որ ըստ ամենայն ար-
խորհրդութեան՝ անկցանելոյ ընդ այն հոգին. և էր առաջի կատարման զաստուա-
ծային և պատուհասից. որոց ապաշխարեալ զիջուցանէ, ընկենուլ անդր զաղծու-
թիւնս ասածային, ևն: (Գ. Թագ. ԺԸ. 13: Բ. մնաց. ԺԹ. 16. Է. 14:)
Ուստի գոլով անդր մեռեալ պատուհասից այլ, եղեն ձայնք հանդերձեա-
լայն, առաքելութիւնք, Երուսաղեմի ծանուցանելոյ, Քրիստոսի հաւատացելոց՝ ըստ
ժամանակին առհասարակ յԱյ. և ասացին ձայնք, հաւատարիմ առ հոգւոյ
պատուհասն, և առ ընդհանուր զաստուածութեան. զի այն մարմնաւոր պատ-
ուհասք և մեռեալ զաստուածութիւն՝ որ ՚ի կենդանութեան յարութենէ,
զհանդերձեալ կերպարանեալ, ձեռաց ցուցանելն: 3 օրին. կերպարանէն: Արդ
առնէ, եթէ առ յանցուցելոյ ՚ի հեթանոսաց առաքելոց մարդկանն՝ մեծ
լինելով առ մեր մեկնաբանութիւն, որպէս նոյն յաւէտ մեռեալ ՚ի ՏԷ իմ, որ ընդ
չնորհօքն մեղաց, զաստուածականն արդարութեան այլ, (Ըստ բանին պօղոսի. Ժ. 11.)
մարմին եղիցի, կյ մարդկութեան կէտ քնին. Քրիստոսի փրկութիւն առնի, գալ-
ծող յանցանաց, և պարտաւորս բազում փոխանորդ, որ ՚ի չարչարանաց
պարտականացն այլ. որք են զանձնական մեռանելոյ Տէրանց կենդանեա՝
ֆան զկենաց նորին վերակացուն. կյ պարտականն այլ առ իս՝ առաւելով պատ-
ուասիրեն զիս քան զպատուհասս մեռանելոյ ձեռնածին այլ՝ որ առ մեղուցեալ, յոր-
ժամ ՚ի հարկանելն յայլևայլ ժամանակս զենումներ և զայլ հեթա-
նոսաց՝ պատարագէլ պատուհասէ, և նորա առաքելոց լինելն: Կամ, մե

ծառայէս պատուհասադրաց զասանիմ եւս քան զմերբահատութիւն պատուհասականն ձեռամբն ած 'ի հարուածս եղանակեցելոց: բան ընդ այն ընտրութիւն, մինչ-մնացելովքս պատուհասից նոցա, անօթ բարկութեան, սաստամանելեաց էր, պարտական կիք այնչափ սաստ. խիստ իմ պատուհասն՝ յաւիտենական է:

(8) Մարթին եղբարց: Լաւ օրինակին, և հրեայ լուծ. գինեն. Բերկեալս 'ի կէ իմ ապագայութեան ած, ճարթին եղբարց ձեռաղէս. զի 'ի մէջ իմ մեծամեղս մեղ-մին եղելոյս գործովք մերոց:

(9) Այն ընտրութիւն: 'Ի լաւ օրին. այն՝ ընտրոցն անօթ բարկութեան. զի, այն պատուհասն նոցա՝ պարտական կամ տանջանաց ամենայն չարեաց:

---

Սերտին յաւելուած նրէին հեծութիւն՝ նորին հոգոյն, առ նոյն աղերս ճողոպրանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ած:

# ԲԱՆ · Բ ·

ա· Եւ արդ՝ քանզի առ բարձրեալն ած՝ յօդա-
ւորական շրթամբք կարդամ, որ գործովք
միայն գրաւի, և ոչ ստեղծաբանութեամբ կաշառի, որ
յեգիպտոս միշտ ունիս զորդիդ զդարձն, զինչ օրի-
նակ առ այս քեզ նմանագոյն և յարմարական աս-
տանօր եդից՝ անձն իմ պարտաւոր: [2] Պատժակիցս
կործանեցելոյն սոդոմայ. ըմբերանեալ դատախազս
նինուէի. անարի բարբարոս քան զտիկինն Հարա-
ւային. վատթարագոյնս քան զքանան. յամառե-
ցեալս քան զամաղէկ. [3] անբժշկականս քաղաք դղրօ-
շելոց. նշմար մնացեալ ապստամբութեան Հինն իսրայէ-
լի. յիշատակարան պահեալ՝ ուխտազանցութեանն
յուդայ: Աշտամբեալս գեր քան զծուր. տարամեր-
ժեալս քան զծայդան. խորթաբարոյս քան զգալի-
լեա. աններելիս քան զանհաւանն կափառնաում.
պարսաւեցեալս իբր զքորազին. բամբասեցեալս ընդ
բեթսայիդայ. [4] անպարկեշտ ծաղկեցեալ ալիքս ե-
փրեմի: Նզով աղաւնիս միշտ յիմարութեան՝ այլ ոչ
հանդարտութեան. [5] 'ի կորեանց առիւծուց՝ անձնա-
կան օձս եզեռնային. կերպս ձուոց քարբից՝ լցեալ
ժանտութեան. պատկերս վերջին հարուածոցն երու-
սաղեմի, ըստ բանին տեառնն՝ և տեսանողացն ձայ-
նի: Տապաւարս մերժեալ՝ հասեալ 'ի կործանումն.
խորտակեալ [6] դրացս վստահարանն, և կրկին ծըլ-
դեալ չիննուածս խօսսն. թողեալ ժառանգութիւ

յարմարական. մոռացեալ տունս ամենակերտ, ըստ բանից նախագրեցելոցն՝ մովսէսի, դաւթայ և երեմիայի։ Զարկս բանական՝ [7] ունօղս բորբոտութե, հարուածեալ խրատու քերմանն, օրինիւ կազդուրեալ, օծեալ կաւոճն՝ ողջական հեզութե. անձարակ գտեալ յելս հնարից, քակտեալ վերստին ձեւոյք չքնաղին. արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ հրամանաւ հզօրին 'ի տեղի անսուրբ. հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ ամենայնիւ առանց խնայելոյ։ Ծածկեալ դրամս [8] յերկրի չարեօք, ըստ աւանդակորոյս ժխտողին՝ որ յաւետարանին ցուցանի։

Է. Տէր դու ած, [9] ածդ հոգւոց և ամենայն մարմնոց, ըստ դաւանելոյ ամենաշնորհին, երկայնամիտ և բազումողորմ, ըստ ոճոյն յովնանու ձայնին, շնորհեա կատարել 'ի քոյդ հաճուէ օրհնեալդ կամաց՝ զսկիզբնաւորեալ մատեան մաղթանաց այսր ողբերգութե։ Եւ ընդ լալով սերմանել բանիս [10] 'ի նախընթաց չուոս աստիճանաց՝ օթևանացս պատրաստութե, 'ի կատարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն, դարձայց բերկրեցեալ լրութբ քաւութե պտղոյն երանութե որայիցն բարութե։ Մի տացես ինձ արգանդ որոի անորդի՝ իբր իսրայէլի, և ստինս աչաց ցամաքեալս՝ ով ամենագութ։ Լուր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած, [11] նախ քան երկնի, և երկինն՝ երկրի, և նա՝ ցորենոյ և գինւոյ և ձիթոյ, և նոքա՝ իսրայէլի։ Եւ երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս ազդեցէ, քան թէ տարերաց տպականացուաց։ Դու ստեղծիչ և ես կաւ, բաց տարակուսելոյս 'ի մուտս մաղթանաց այսր հեծութե կամս քաղցրութեան՝ զօրանալ ստէն. զի մի 'ի բանալ վերնայինն երկնի՝ [12] անընտիր գտեալ կրթութեան վայելմանն լուսոյ, իբր զնիւթ մոմոյ սպառեցայց ջընջեալ 'ի միջոյ։ Ոգի զրկելոյս, ըստ մաղթանաց դոշմանս ասողին, և ոյժ թալկացելոյս, և [13] կեանք մաշելոյս՝ մնացս խղճիւ, այլ ոչ տաժանմամբ կրից՝ աշխատութբ զքեզ խնդրելոյ. առ զաւանդ մաղթանացս, և տուր զողորմութի քո շնորհացդ. ընկալ զփոքրս 'ի տկարէս, և շնորհեա զմեծդ առ 'ի հզօ-

րեղ․ զօրացո՛ զգանս զղջման, առաքեալ 'ի մեզ հո-
գի 'ի բարձանց՝ ա͞ծաշունչ պատգամօքս 14 'ի սմա ե-
ղելոցս ։ Պարգեւեա՛ բարերար՝ 15 զառաւելն եսայեայ
լուսաւորեալ առ ճշմարտութիւն, մատուցանելով մա-
հու արժանոյս՝ ընդ պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ 16
զոսկի քո շնորհի, ընդ անզարդութե͞ն երկաթոյս՝ սնու-
թե͞ն գունոյս՝ պղինձ պճնելի, ցոյցք առաքինութե͞ն,
հրաշեկ լիբանանու ։ Ընդէ՞ր 17 կարծրացուցանես ըզ-
սիրտս եղկելոյս՝ չերկնչել 'ի քէն, անճառ և ահաւոր ։
Մի՛ եղէց անպտուղ 'ի փոքր վաստակոյս՝ իբր աղա-
ջան սերմանօղ անբերրի երկրի ․ Մի՛ լիցի ինձ 18 երկ-
նել, և ոչ ծնանել ․ ողբալ, և ոչ արտասուել ․ խոր-
հել, և ոչ հառաչել ․ ամպել, և ոչ անձրևել ․ ընթա-
նալ, և ոչ հասանել ․ ինձ ձայնել, և քեզ ոչ լսել ․
պաղատել, և անտես մնալ ․ կողկողել, և ոչ ողորմել ․
աղաչել, և ոչ ինչ օգտել ․ 19 զոհել, և ոչ ճենճե-
րել ․ 20 զքեզ տեսանել, և դատարկ ելանել ։ Լաւ էր
ինձ նախ քան զկարդալս իմ առ քեզ միայնդ հզօր ․
21 մի՛ զանվճար տանջանացն տոյժս՝ ընդ թուով ա-
ւուրց մեղօք կեցելոյս չարագործիս ինձ հատուցա-
ներ ։ Կեցո՛ զիս գթած ․ լո՛ւր ինձ ողորմած ․ մարդա-
սիրեա՛լ ներօղ ․ խնայեա՛լ երկայնամիտ ․ պաշտպանեա՛լ
ապաւէն ․ բարերարեա՛լ հզօր ․ ազատեա՛լ ամենակալ ․
կենագործեա՛լ նորոգօղ ․ վերակենդանեա՛լ ահաւոր ․ լու-
սաւորեա՛լ երկնային ․ բժշկեա՛լ հնարաւոր ․ քաւեա՛լ
անքննելի ․ պարգեւատուեա՛լ առատ ․ շնորհազարդեա՛լ
աննախանձ ․ 22 հաշտեա՛լ անախտակիր ․ ընկալ անա-
խտակալ ․ սրբեա՛լ 'ի պարտուց օրհնեալ ։ Եթէ յա-
ւեցից զաչս իմ, նայեցեալ 23 'ի հայեցուած երկուց
վտանգից յաւուր թշուառութե͞ն, զքոյդ տեսից փըր-
կութի՝ յոյս և խնամակալ ․ եթէ նկատեալ դիտե-
ցից 'ի վեր 24 յամենագրաւ ուղղին տակալի ։ Հրեշ-
տակ քո խաղաղութե͞ն քաղցրութե͞ն ինձ պատահեսցէ ։
Ցոյց ինձ տ͞ր 'ի յելիցն աւուր շնչոյս արձակման՝
մաքրութե͞ն ոգի, լուսով ամբարձեալ 'ի յերկնաւո-
րացն երջանկաց՝ պարգեւօք սիրոյ քոյ եկեալ հա-
սեալ ։ Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց ինձ կը-
ցորդ ժամանեցուցես ․ 25 զանակնկալն բարի՝ չարիս
'ի յուսահատութե͞ն աւուր շնորհեսցես ։ Եւ լիցի

քեզ բարեբանեալ՝ որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ զազան դժնդակ տացես ուղեկից. մեղօք մեռելոյս՝ անմահ կեանք. կործանելոյս պարտեօք՝ փրկութիւն:

Է. Արդեօք մոռասցես [26] զբարերարութեանց՝ անընկալութիւն. անտեսեսցես զգթասիրութեանց՝ խնամածող. այլայլեսցես զմարդասիրութեանց՝ անփոփոխ. նհանջեսցես զկենագործեսց՝ անվախճան. թողուցուս զողորմութիւնդ՝ երջանիկ պտուղ: Ապաւաղեսցես զքաղցրութեանդ բարեշնորհ ծաղիկդ. անպատուեսցես զնիւթ պանծանաց քում ձոխութե. յեղանակեսցես զփառս հերաց քում բարձրութե. ո՞չ պահեսցես զվայելչական զարդ պայծառութե քում պսակի: Եթէ [27] ողորմածացն է երանութիւն, իսկ դու բնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ, ո՞չ զբոլորն պարգեւեսցես փրկութիւն. ո՞չ մատուցանիցես դեղ վիրացս. ո՞չ սպեղանիս՝ խոցուածոյս. ո՞չ դարման՝ տկարութեանս. ո՞չ ծագեսցես լոյս 'ի խաւարի՝ յուսացելոյս 'ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգեւդ տիեզերաց: Որ միայնդ ունիս փառս [28] ինքնութեամբ իսկութեամբ եւ յարակայ մշտնջենաւորութեամբ. վկայեալ 'ի բնաւից. օրհնեալ եւ փառաւորեալ յերիս յաւիտեանս, եւ անդր քան զպայման սահմանի իմանալեացն յաւիտենից. ամէն:

---

(1) Յօդ[illegible]: [illegible] կը [illegible] միայն [illegible] սա. մծ. ( [illegible] . եթ. 13: ) * [illegible] այս [illegible] պատմութ է [illegible]: * Իսկ մծ բառի գործածել միայն Գրքոց, [illegible] ըլլալ, կը [illegible], եւ ոչ [illegible], [illegible] բանիւք [illegible] [illegible] կը [illegible]. [illegible], (Ա. կորն. Դ. 20.) * Ո՛չ եթէ բանիւք է արքայութիւն այ, այլ զօրութեամբ: * Այդ՝ [illegible] [illegible] բանիւք միայն [illegible] սա. մծ, [illegible] յեղյեղ[illegible] աշխարհի, [illegible] եղից եւ:

(2) [illegible]: Որպէս [illegible]՝ թէ՛ եւ [illegible] 'ի [illegible], [illegible] եւ [illegible] [illegible], որպէս եւ ես [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible]: [illegible] [illegible]: [illegible], որպէս եւ [illegible], [illegible], եւ 'ի [illegible] Այ, [illegible] թէ [illegible]. [illegible] յԱյ [illegible], [illegible], եւ [illegible] [illegible]: Այսպէս եւ ես՝ [illegible], [illegible] [illegible], [illegible]: Այնուհետեւ [illegible]. [illegible], [illegible]. [illegible], [illegible], որ ան-

համեմատեալ նոր 'ի զժուարին գործս, կամ 'ի լսել զբանն նոյ. ուր տեղեկ- ութեան յանձն առ զդժուարութիւն ճանապարհաց 'ի լսել զխնամատութեն աստուծոյ, և եցոյց զանքննելութիւն բարուց ։

(3) Անէծեալսն փաղաք ։ Հին ըստ. խնամոց զդատապարտն՝ յորս եղեն զբարութիւնք քոյ, և ոչ հաւատացին ։ Սակայն զայնուսիկ առաքեաց առանձին յերկիր նոր մեղուցեալ, զխաղալիս, զխաբեբայութեամբ, եւն ։ Դարձեալ. խնամոց զելեալ, որում նոյն էր պատահեալ, և հրեշտակք զպատուիրան կորուսին 'ի պարտաւորեն ։ Բայց ասացեալ է և այս. այլ խնամն առաւել բաղդեցան ընդ բանին (Երեմ. ծա. 9.) * Բժշկեցաք զբաբելոն, և ոչ բժշկեցաւ ։ Ի նմա էին զղջացեալք չարաչարութեամբ. իսկ 'ի յետ՝ մեղք և ապաշխ. Եղեւ մեղուցեալ ։ Զբանն Երեմ. (Գ. 11.) * Արդարացոյց զանձն իւր ա- պաշխարութեամբ իւրով նա յարտաքնականն յանձն իւր առաջ ։ Հինն իւր ա- պաշխարանացն յետ պատահեսցէ, ընկեցան. իսկ նա մնացին նոքօք, կամ չարաչար նորա ապաշխարութեան, առաքինեալ 'ի քէն ։ Նոյնպէս ուխտա- զանցութեան յուսացեալ եղեւ յերկնաւորացն. և խնամ զործոցն ցուցանել թէ զորս լինին ապաշխարել յետ, և ուխտադրաց զաստուծոյ, նորա իմացեալք և յուսացեալք 'ի յետ երկրին այժմ իւրեա 'ի մնացուած իւրեանց և ժա- ռանգ չարութեան. նա զերծալ 'ի նոր իւրն եղեւ հնոյն իւրն հնացեալ և նա- խանձաւոր, 'ի նոցա պատահողացն ոչ խորտակեալ ։

(4) Անդարձելի ծածկեցաւ ։ 'Ի մի օրին. և 'ի հին ըստ. անդարձելի. և մարթ է առնուլ իբրև մանկաց՝ անդարձելիչապարտ, կամ անմոռաութեան ծածկեալ ալիքս մարմնոց կամ զգլխոց ։ Եր բանն ակնեաց. (Է. 9.) 'ի յանց զխանութիւն եկեղեցեաց կամ իւրեանց. որ ծնեալ 'ի զխաչութեան օրինաց, յանդարձումն, և 'ի վայելչութիւն բարեխօսութեան խնամոցն նոյ. և սակայն անմոռթեալ զգործ մանկութեան առնելն՝ կրաստաչաութեան և արհամար- հութեան բարեացն նոյ ։ Այսպէս և նա առէ՝ հնացեալ յանդիմանութեն և 'ի վայելչութիւն չնորհաց, զառնուլ 'ի չար կամս անձին անմոռթացեալ ։ Մեղեալ բանն է և յաղթողն, Անդարձելի. զի մեղմամբ տեղւոյն, բայց յանդգնութեան, և ոչ 'ի բանաւոր հանդարտութեան ։

(5) 'Ի խորհրդոց առաքելոց ։ 'Ի նոր և յառաջինն ազգաց եղև նա անմոռացն, բանականն օձն եդեմական, յորժ չար և մնացական ։ Յայտնապէս զբանն (Եսայ. Հ. 6.) * Կործանեան, և 'ի նոցանէն իժք ։ * որ ըստ զդոյն յայլ մեծամեծ հայք ։ Այնպէս յաղթողն, Ներքին նոյն ։ (Եսայ. ծթ. 5.) Նմանութեան ձուոյ քարբից. որ արտաքուստ ունակս կարծիմ, և 'ի ներքս է նոր ժանտ թունաւոր մեղաց ։

(6) Դուրսն վտարեալք ։ Փախստեայք, և այլ անդրութեան զբանն ։ զուտն 'ի մեղ զղջմութեանցն. և փախստեայք՝ երկիւղն նոյ, զոր խորտակեցի առէ ։ Եղեն ծածկեալ. յետ առաջին արդարութեան՝ մերձաւորն ներկեալ կամ առաջ- նորդեալ մեղօք չնորհ ամենայն բանականն ։

(7) Որոնեալ երերեալ ։ Յանձն առաւել զղջանալն (Ղևտ. ԺԳ. 34.) յա- ղագս բարեպաշտութեան առն. որ ըստ քաղ մեկնչաց՝ էր մաշումն և առողջա- նութիւն որոնց և քաղաքաց՝ ներգործեալ 'ի խմանալ է և յորդաց կե- րակրոց. զոր ըստ օրինաց ապառ էր քերել, և այլ քարինս գնել, և այլ հողով կամ կաւով ծեփել. և եթէ դարձեալ երեւեսցի, 'ի հիմանց քա- կել զտունն, և արտաքսել 'ի անդրի ամենայն ։ Այնպէս նա առէ՝ բանականն տունն՝ բարեպաշտ մեղօք, քերեցայ խորտակ առաքինութեան, համարձակ- ցայ օրինաց աւետարանին, ծեփեցայ հեզ մաղթանքաւորութեան իբրև կա- ւով. և սակայն անբժշկելի մնացեալ. ընկեցեալս նոր է անապաշխարս 'ի զժուար ։ Հին ըստ. զառածն՝ երերեալ ողորմութեանն, մեկնէ՝ թէ քահանայն առ- աջնորդեալ կամ առնել, և այնու ծածկել զբանն ։ Հրէական զբոյց է ան- հնարին.

(8) [illegible] · 3 [illegible] ։ [illegible] ( [illegible] · 48 · 24 ։ ) [illegible]

(9) [illegible] ( [illegible] · 22 ։ ) [illegible]

(10) [illegible] · 6 ։

(11) [illegible] · ( [illegible] · 21 · ) [illegible] · 12 · [illegible] · 12 ։ ) [illegible]

[illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

(14) 'Ի [illegible]
373 [illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible] : [illegible] 17 : [illegible] :

(18) [illegible] 24 . [illegible] :

(19) [illegible] 15 . 16 . [illegible] ( [illegible] 19 . ) [illegible] :

(20) [illegible] 16 :

(21) [illegible] :

(22) [illegible] :

(23) [illegible] :

(24) [illegible] :

(25) [illegible] :

(26) [illegible]

և ասէ՝ [illegible] . այսպիսի ԱՅ փառք՝ աստուածութեանն , երկրպագութեան և հաւասարապատիւ [illegible] : 'Ի սոյն խորհուրդ՝ [illegible] Նորա և [illegible] երբ [illegible] [illegible] երեւեցին 'ի աւետարան Յովհաննու . ա . 14 :

(27) [illegible] : Աստուած է առ ԱՅ՝ [illegible] [illegible] Նորին [illegible] : [illegible] երանելի [illegible] աստուածութեան . և [illegible] [illegible] [illegible] , և [illegible] : Եթէ [illegible] աստուածային երանելի է , եթէ [illegible] աստուածութիւն [illegible] և [illegible] [illegible] , [illegible] [illegible] երանութիւն [illegible] և երանացուցիչ , [illegible] [illegible] աստուածութեան . [illegible] երանութեան , [illegible] և [illegible] աստուածութեան . [illegible] [illegible] [illegible] , [illegible] աստուած [illegible] , [illegible] : Աստուած [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] աստուածութեան :

(28) Ինքնաբուխ բարի : [illegible] 'ի [illegible] , [illegible] 'ի [illegible] , ճշմարտութիւն , [illegible] [illegible] և [illegible] [illegible] . և այն՝ [illegible] [illegible] : 2 [illegible] . [illegible] . և [illegible] է [illegible] , 'ի [illegible] [illegible] , [illegible] [illegible] : Փառք [illegible] ոչ [illegible] [illegible] , ոչ [illegible] [illegible] , ոչ [illegible] : Այսպէս [illegible] [illegible] ԱՅ ճշմարիտ . [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] , [illegible] [illegible] . [illegible] [illegible] , 'ի [illegible] և [illegible] : [illegible] [illegible] , [illegible] [illegible] , որ է [illegible] . [illegible] [illegible] [illegible] , որ է [illegible] և [illegible] : Աստուած [illegible] , [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] . և [illegible] [illegible] , [illegible] , և [illegible] . [illegible] և [illegible] , [illegible] [illegible] . [illegible] [illegible] է . [illegible] և [illegible] , [illegible] և [illegible] . [illegible] և [illegible] [illegible] ոչ [illegible] :

Սերտագին յաւելուած երկրին հեծութ՝ Նորին հոգոյն , առ Նորին աղերս ծաղկեալոյ բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱՅ :

## ԲԱՆ . Գ .

ա . Տէր իմ տէր , տուիչ պարգևաց . ինքնաբուխ բարի ,[1] ամենից տիրող հաւատարապէս . միայն արարիչ զամենայն յոչէից . փառաւորեալ . անքննելի . ահեղ . ահաւորկու . սոսկալի . հզօր . սաստիկ . անտանելի . անմերձենալի . անըմբռնելի . անիմանալի . անճառելի . անտեսանելի . անզննելի . անշօշափելի . անարտնելի . անսկիզբն . անժամանակ : [2] Անշամանդաղ դիտաւութիւն . աներկեան տեսութիւն . Ճշմարիտ էակա-

նութեն. բարձր՝ և խոնարհ. 3 որհնաբանեալ գոյու-
թին. անստուեր ծագումն. ամենափայլ ճառագայթ. 4
խոստովանեալ լոյս. անստարակոյս վստահութին. ան-
տարտամ հանգիստ. 5 անյեղլի կնիք. անսահմանե-
լի սեռիլ. 6 վկայեալ անուն. ճաշակ քաղցրութեն.
բաժակ բերկրութեն. հաստիչ հոգւոց հաց. 7 օտար
մթութեց սէր. աներկբայ խոստումն. ծածկոյթ ցան-
կալի. զգեստ անկապուտ. օթոց բաղձալի. զարդ-
փառաց. ձեռընկալու մեծ. ապաւէն գովեալ. ան-
նուաղելի շնորհ. անսպառկատելի գանձ. անապական
անձրև. 8 արփիացուցող ցօղ. 9 ամենատեղաց դեղ. ձրի
բժշկութին. կրկնաձիր առողջութին. վեհագոյն խրա-
խոյս. 10 անպարտիր կոչումն. համօրէն աւետիս. սուրբ-
կամեծար թագաւոր. ողջատաւէր պաշտպան. մըշ-
տահարուստ տուիչ. 11 անխափան դիմեցումն. անհա-
հանջելի հրաման. 12 անհամառօտ յոյս. երկար տե-
սողութին. անզղջական տուր. ամենաբաշխ աջ. ար-
դարակշիռ ձեռն. անաչառատես աչն: Մխիթարու-
թեն ձայն. սփոփանաց լուր. բերկրութեն բերումն. 13
անուն կենդանի. նախախնամօղ մատն. անգայթագ-
ղելի ելք. անխարդախ ընթացք. կենդանարար
կամք. 14 աննենգելի խրատ. անհնախանձ պատիւ. 15
լայնական հնարք. անձկական պայման. անզատանելի
հերք. աներևոյթ շաւիղ. 16 անշափաղիր պատկեր.
ողջանութին անսահման. անմանանական տիպ. անզու-
գական գութ. ողորմութին բազմադէղ. 17 խոնարհու-
թին տօնելի. համբոյր փրկական: Այս ևս քան զայս 18
աղերսմունք վայելչականք՝ մեծութեն նուիրելիք. օրհ-
նեալ. գովեալ. բարեբանեալ. քարոզեալ. աւետա-
րանեալ. հաշակեալ. հնչեցեալ. պատմեալ. 19 անխա-
բելի կամօք աղաչեալ. և որ ինչ առ մեզ բերին առ
'ի քէն՝ համօրէնք քաղցրութե, զոր հանդերձելոցն ճա-
ռից լուսաբանեան կերպաւորութիք. որով զուարթ-
ցուցանես 'ի փրկութին իմ՝ երանութեն, իբր 'ի պա-
րարտութենէ իմեքէ՝ անխորժ տենչանօք լցեալ. զի
մէ իմովս ինչ մնաստիապատուաստ փառաւորիս ես-
գով, այլ զի պատճառ իմն առցես զփոքրս աղերս՝
մեծին փրկանաց:

Է. Ու՛ քանզի ամ հասակ անկեցեալ յերկիր

ազգ. բանականաց՝ այս պատուէր նկարագրական նա-
րոգ. մատենի ողբոց նուագի, որ զամենեցունց ունի
ղերից պատահմանց՝ նշանակեալ յիւրում պատկե-
րի, 20 իբր կցորդ մեծգիտակական կարեաց համայ-
նից, առ բոլոր զումարս բազմահոլով տիեզերակոյտ
քրիստոնէից : Առ նախնի ժամն ժամանողաց, և առ
երկրորդ կոչեցեալ չափու արբունն . առ որ 'ի կա-
տարած աւուրն կալեալ՝ տակաւաձեռն ծերութեան .
առ պարտաւորս, և արդարս . 21 առ ինքնարդոյ
բարձրայօնն, և սխալեալ անձնադատ գտեալն . առ
բարիսն, և եղեռնագործս . առ նկունս, և առ արիս .
առ սորուկս և ներքոյանկեալս, առ սեպուհս և գե-
րաշխարհիկս : 22 Միջակայնոց՝ և պայազատաց . շի-
նականաց՝ և տոհմականաց . արուաց և իգաց . հրա-
մայողաց և հնազանդելոց . գեր ելոց և նուաստից .
վեհից և փոքունց . պատուականաց և ռամկաց . ձիա-
վարժից և ոտականաց . քաղաքականաց և գեղջկաց .
արքայից զուգողութեանց՝ 'ի սանձս ահաւորին ըմբռնե-
ցելոց : Միայնացելոց՝ վերնականացն խոստակցաց .
մաքրականաց 23 տիրանուէր զգաստութեանց . քահանայա-
կան՝ երջանկակրօն ընտրութեանց . այցելութեանց՝ բա-
րեզգեստից դիտողութեանց . աթոռակալութեանց նախա-
գահից՝ որբանուէր տեսողութեանց . որոց ումանց աղերս
աղաչանաց, և ոմանց խրատ բարեաց՝ առ դէմս ա-
ղօթից այսու մատենիւ մատակարարեցի, ձեռնար-
կեալ հոգւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս
բազմադիմի, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գը-
թութեան մեծիդ յանդիմանս լինել տօնաւ հանա-
պազ :

Դ. Եւ արտասուս զայս ընթերցողացն 'ի սիրտս յըն-
տակս՝ բժշկութեան հոգւոյ, և մաքրութեան յանցանաց .
Թողութեան պարտուց, և արձակութեան մեղաց կապա-
նաց : Եղիցի բղխումն արտասուաց՝ տօնաւ վարժե-
լոցն, և պարգևեալ տացի 'ի ձեռն սորին պաշտաւ-
ըղձից : Ընդունեսցի տէր և ինձ ընդ նոսին առ 'ի քէն՝
գթութեան կամաց . և նոցա իմովս ձայնիւ 24 շունչս բա-
րեհամբոյրս . նուիրեսցի վասն իմ այսու մատենիւ
պաղատանք նոցին, և բանիւս այսու 25 հեծութիւնք նո-
ցին ընդ իմ խնկեսցին : 26 Ընդ համբոյր ճաշակմանն

այսր ողորմութեան, շնորհ լուսոյ քոյ մնալ ընակելո-
ցն. 27 Եթէ եւցեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սո-
վաւ, ընկալ կենդանեօքն վէմ քո գրեթած և զիս ընդ-
նոսին. Եթէ 28 ախտս ինչ սրբանուէրս կաթուածոյ
աչաց սովիմք բերիցի, եղիցի 'ի քէն խնամական և
յիս անձրեւել. 29 Եթէ գրեցի և 'ի փրկութե՛ն կառ-
դեցի՝ հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կա-
մաւ քո օրհնել՝ և ինձ համարել. Եթէ հեծութիւ
նծահաճոյս 'ի ձեռն այսր բանի՝ 'ի գաղտնեաց ու-
րուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քեւ բարձրեալ և 30
ես ընդ նմին 31. Եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդեր-
ձեալ առ քեզ համբարձցի; հասցէ միացեալ ընդ իմս
ձայնի և աղաչողացն աղերս՝ յառաջ մատուցեալ։
Եթէ պաղատանս 32 բազմադիմիս ընդ իմս երկնե-
ցի, լիցի և ինձ քեւ՝ և վասն սորին կրկին նուիրեալ։
Եթէ յարգեցի 33 այս անձին բանի պատարագ՝ քեզ
'ի հաճոյն, նախայլոցն ընդ իս քեւ ընծայեսցի։ Եթէ
'ի տխրանաց ինչ ձանձրութէ որ նուաղեսցի, կանգ-
նեսցի վերստին հաստարանաւ այս հառաչանաց՝ 'ի
քեզ յուսացեալ. 34 Եթէ համբարտակն վստահութե
մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք
աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուսցի։ Եթէ 35
յուսոյն ձգարան՝ սուսերքն յանցանաց հատեալ
կորեսցի, կցեսցի դարձեալ միանգամ կամօք ա-
մենակալիդ՝ բարուք պատուաստեալ. Եթէ վտանգ-
մահու՝ 36 անձնական ցաւոյ՝ զոք պաշարեսցէ, գտցէ
փրկութի՛ն սովաւ առ 'ի յայս կենաց՝ յաղօթելն առ
քեզ կեցուցիչ. Եթէ տագնապաւ որ տարակուսի՝ 'ի
սիրտ խոցիցի, քաղցրութե՛ք քո՝ սովաւ ապրեալ ող-
ջասցի։ Եթէ 37 անքաւելի կորստեամբ պարտեաց՝
յանդունդս որ խորոց իցէ ընդլուղեալ, եկեսցէ 'ի
լոյս՝ կարթիւ այս հնարից՝ քեւ պատսպարեալ. Եթէ 38
թմբրութե՛ք խաբից՝ խաւարին գործոց՝ իցէ որ մնա-
սեալ, զօրասցի անդրէն վասն քո միայն ապաւէն՝ 'ի
քեզ ապաստան եղեալ։ Եթէ 39 պահպանակն վստա-
հութե՛ն զանձն ուրուք լքցէ, ընկալցի այսու միջնոր-
դիւ ձեռն քո զնա՝ ամփոփեալ 'ի նոյն հաստատու-
թե՛ն. Եթէ 40 ամայի 'ի դդուշուէ պահողացն որ դե-
գերեսցի, սպասեսցէ սովիմք՝ առ 'ի նոյն դարձ նորա

դողիդ ։ Եթէ [ժա] տարասեւ գիշերային ջերմանն՝ դողու-
թիւ ինչ զոք խռովեցէ, սթափեսցի 'ի սոյն յայս նը-
շան խոստովանեալ և երկրպագեալ խաչիդ խորհըր-
դոյ ․ Եթէ [ժբ] անօրէնութեան մըրրիկ խորտակիչ հողմոյ՝
յանկարծ բախեսցէ զհաստատուածս մարմնոյ՝ շինուա-
ծոյ մարդոյ՝ յերկրային ծովուս, հանդարտեսցի առ-
դրէն՝ զեկաւ այս թեւոց 'ի քեզ պատկանեալ ։

ԺԳ. Այլ արասցես լինել դեղ կենաց՝ առ հնարս ցա-
ւոց հոգւոց և մարմնոց՝ քոց ստեղծուածոց, զայս
կարգեալ սահման ողբոց մատենի սկզբնեցելոյ յա-
նուն քո՝ բարձրեալդ ։ Օ՜ սկսեալս իմ դու կատարեա ․
եղիցի հոգի քո խառնեալ 'ի սա ․ շունչ զօրութեան մե-
ծիդ միասցի 'ի քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս ․
զի դու տաս զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս
փառս յամենեցունց ․ ամէն ։

---

(1) Ազնիւ փիրող ։ [illegible] զօրութեան, և [illegible] Այ, [illegible] և մարմնա-
կանաց, [illegible] և [illegible], [illegible] և [illegible] ։ [illegible] օրհնակաւ [illegible] ։ Մեծի արարիչ ։ [illegible] Այլ, [illegible] Ան ․ [illegible] ։
(2) Անշահանդաղ գիտութիւն ։ [illegible], [illegible] Այ, և ոչ [illegible], [illegible] և [illegible] ։ Աներկիւղ փեսութիւն ։ Որ [illegible], [illegible] 'ի [illegible] ։ [illegible] ։ [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] և [illegible] 'ի [illegible], [illegible] 'ի [illegible] ։ [illegible] ։ [illegible] 'ի [illegible], և [illegible] 'ի [illegible] ․ 8 ․
Թէ [illegible], [illegible] ․ և թէ [illegible] 'ի [illegible], և [illegible] ։ Կամ, [illegible], և [illegible] 'ի [illegible] ։ Կամ, [illegible],
և [illegible] 'ի [illegible] ։
(3) Օրհնաբանեալ ։ [illegible] ․ օրհնաբանելի ։ այլ օր ․ օրհնաբանեալ ի [illegible] ։
(4) Խոստովանեալ [illegible] ։ [illegible] և ոչ [illegible] ։ Կամ, [illegible] և [illegible] ոչ [illegible], [illegible] ․ զի և [illegible] թէ [illegible] ոչ էր, այլ Այ [illegible] ․ և [illegible] և [illegible] ։
(5) Անշեղելի [illegible] ։ Անխախտելի 'ի բնութեան, և 'ի հետ [illegible] ։ Կամ, [illegible] 'ի [illegible], 'ի [illegible] և 'ի [illegible],
[illegible] ։

(6) Վկայեալ անուն ։ Այս անուն վկայեալ է ոչ միայն առ Յուդայեցւոց, այլեւ առ հեթանոսս 'ի վկայութիւն բնական օրինացն ։ Ըստ այնմ ։ ( Գործ ։ Ժդ ։ 16 ։ ) * Ո՛չ եթէ առանց վկայութեան զինքն եթող՝ բարերարութեամբ առ 'ի յերկնից ձեզ անձրեւս || ետ ։ Կամ, [illegible] ԱՃ վկայեալ անուանն իւ-րով ասելով, Ես եմ ԱՃ, այս է անուն իմ ։ ( Եսայ ։ խբ ։ 8 ։ )

(7) Օտար մտածէց ։ Օտար 'ի մեթոդէց, [illegible] անտրամաբանական [illegible] ։ Կամ, որ 'ի սկզբան ոչ մեթոդիւ յանկարծ [illegible] ։ որպէս 'ի [illegible] [illegible] բաղդամ անգամ անձնաւորութեան, [illegible], [illegible] [illegible] [illegible], ետ, որով [illegible] միայն ։ Հմն ըծ ։ [illegible], [illegible] յոյց և [illegible] [illegible], [illegible] գործի նոցա ։

(8) Աշխարհագրող զօղ ։ 'Ի ծագմանէ արեւու ելեալ զօղ ։ որ յորժ [illegible] [illegible] և [illegible] բանւոյ ։ Կամ, [illegible] զօղ ։ Ըստ հմն ըծ ։ [illegible] [illegible] ։

(9) Անմոփեղաց դեղ ։ Որ մանանայ գեղ ամ [illegible], որ [illegible] մի ամ [illegible], և Ը ամ [illegible] նոցա ։ Կամ, մանանայ [illegible] և [illegible] ոչ 'ի մի [illegible] [illegible], ոչ միայն [illegible] որպէս առ [illegible], ոչ առ մի [illegible], այլ Ը ամ [illegible] ։ Մ[illegible] է և [illegible] 'ի [illegible] բնական [illegible]՝ [illegible] 'ի [illegible] և [illegible] ԱՃ [illegible] Ը ամ [illegible], [illegible] և [illegible] [illegible] ։ [illegible], [illegible], [illegible] և [illegible], ոչ միայն [illegible] [illegible], այլև [illegible]՝ [illegible] ։ Կամ, [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] ։

(10) Անդարձելի խորհուրդ ։ Կոչումն որով [illegible] հրաւիրէ 'ի հաւատս կամ յաստուածպաշտութիւն կամ յերկնային փառս, ոչ է [illegible] կամ [illegible] կամ յետս կոչելի, [illegible] կոչէ [illegible] ։ Կամ, յորժամ [illegible] [illegible] առ ԱՃ, և կոչէ յօժարութեամբ, ոչ [illegible], ոչ [illegible], ոչ 'ի [illegible] [illegible] ։ Կամ, զոր կոչումն և [illegible] [illegible] ԱՅ Ը [illegible], [illegible] է, ոչ [illegible] կամ [illegible] կոչէ ։ [illegible] 'ի [illegible] [illegible] կոչեն յայս կամ յայն անուն ։ և որպէս հեթանոսք [illegible] [illegible] [illegible] ։ Հմն ըծ ։ [illegible], [illegible] է [illegible] [illegible] [illegible] ։

(11) Անխափան դիմեցումն ։ Ըստ հմն ըծ ։ [illegible] կամ [illegible] [illegible] առ նա ։ Կամ, որ [illegible] [illegible] [illegible] առ [illegible] ։ Կամ, [illegible] [illegible] ոչ [illegible], և ոչ [illegible] [illegible] ։

(12) Անհամառօտ յոյս ։ [illegible] [illegible], [illegible] յոյս ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ Կամ, յերկինս յուսացուցիչ ։ [illegible] [illegible] [illegible] [illegible], և ոչ [illegible] ։ Կամ Ը հմն ըծ ։ [illegible] [illegible] ։ Յոյս [illegible] [illegible] [illegible] [illegible], որ Ը [illegible] [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], ետ ։ Եւ [illegible] [illegible], 'ի [illegible] [illegible] ։ [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible] և [illegible] ։ Կամ, [illegible] [illegible], [illegible] [illegible] ։

(13) Անուն [illegible] ։ ԱՃդ անուն [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] ։ և է [illegible] [illegible] որ [illegible] [illegible] ։ Ան[illegible] [illegible] ։ Եւ [illegible] [illegible], և [illegible] [illegible] ։ 'ի գործս ԱՅ [illegible]՝ 'ի [illegible] և 'ի [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] ։ որ [illegible] [illegible] [illegible], ոչ [illegible] [illegible] ։ Կամ Ը հմն ըծ ։ [illegible], [illegible] [illegible], առ [illegible] [illegible], և [illegible] [illegible] ։

(14) [illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

[illegible]

(20)· [illegible]

(21) [illegible]

(22) [illegible]

[illegible] (Ղ. Թագ. ԺԳ. 24.) [illegible]

[illegible]

(23) [illegible]

(24) [illegible]

(25) [illegible]

(26) [illegible]

(27) [illegible]

(28) [illegible]

(29) [illegible]

(30) [illegible]

(31) [illegible] (Յայտն. Ե. 8.) [illegible]

(32) [illegible]

(33) [illegible]

(34) [illegible]

(35) [illegible]

(36) [illegible]

(37) [illegible]

(38) [illegible]

(39) [illegible]

(40) [illegible]

(41) [illegible]

(42) [illegible]

Սրտին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հօնողի, առ նոյն աղերս ծաղկանաց բանի.

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. Դ.

ա. Եւ քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ ՚ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հոգւոյս բազմամեղի, յիրաւի սարսեալ դողացեալ տագնապաւ մեծաւ՝ յաւէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի, և [1] ՚ի սահմանէ բանի փախչելի, յիշատակ անձողոպրելի՝ անաչառդ քո ատենի՝ ՚ի կըշտամբութիւն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի: Նա զի՝ և [2] չէք իսկ բժշկութեան բազմավտանգ սաստկութեան վիրացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին բերանոյ ժանեաց՝ որսողին զանձն իմ ՚ի կորուստ: Մանաւանդ զի [3] ոչ գոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի. և ոչ բանիւ իրաւանալի, և ոչ վերարկուաւ պատսպարելի, և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբէք խաբելի. ոչ յաղուածովք բանից ստելի. ոչ արագամամբ ոտից փախչելի. ոչ թիկանց դարձուցանելի. [4] ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի. ոչ բերանով ընդ հող հասանելի. ոչ ՚ի խորս երկրի ղօղելի: Քանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարակեալ են աներևոյթքն. արդարութիւն իմ նուաղեալ և իսպառ ունայնացեալ. մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ ծնացական, և ես կորստական. [5] իրաւանցն կշիռ պակասեալ և անիրաւութիւն խակոյն զօրացեալ. բարեացն բերք հալեալ, և ախտալմունքն արձանացեալ. աւանդն կորուսեալ, և դատակնիքն այժմէն գտեալ. մահուն մուրհակ գծեալ, և աւետեացն կտակ եղծեալ: [6] Բարերարն տխրեցեալ, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց դունդն թաղծեալ, և սատանայ [7] խնծղիւք պարեալ. վերնական զօրքն ողբացեալ, և ստորնայինքն բերկրեցեալ. սպանողին մթերք լցեալ, և պահողին զանձն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ և ստացողին պարգև մաշ-

նեալ. հաստատողքն ձեր մնացեալ, և կորուսեալքն հաստը-քըն պահեալ. [8] երախտիք փրկչին հնգնեալ, և բե-ղեալ զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ, և [9] զուարթին ժամոց՝ ժամերգիս ժամանեալ:

Դ. Եւ արդ՝ ոչ ապաքէն [10] ըղձալի էր, ըստ գրոյն կանխութեան նախաձայնելոյ՝ ոչ ստեղծանիլն երբեք յարգանդի, և ոչ նկատորիլն՝ ի յորովայնի. ոչ՝ ի ծնունդ յառաջագայիլ. և ոչ՝ ի լոյս կենաց հասանիլ. ոչ՝ ի թիւս մարդկան գրիլ, և ոչ՝ ի հասակ աճման ամ-բառնալ. ոչ՝ ի պատկեր գեղոյ զարդարիլ, և ոչ բա-նիւ համերձաւորիլ, քան Է այսպիսեաց սատակա-գունից և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վիմաց կարծրութիւն բերէ, թող թէ մարմնոյ լու-ծականութիւն:

Ե. Եւ արդ [11] տուր բարերարութ՝ աղաչեմ զքեզ, տուր ինձ ողորմութիւն, որ զայսոսիկ դու ինքնին քե-զէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր ասելով, թէ տուք զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ՝ այ, և տուրք եղերուք. զի զողորմութիւն կամիմ, և ոչ զպա-տարագ: Նա բարձրացեալդ վերստին խնկեալ այսր յիշատակաւ, որ ունիս զամենայն. և՝ ի քէն է ամ, և քեզ փառք յամենեցունց. ամէն:

---

(1) ՚Ի սահմանէ բանի: Փոխելի ՚ի սահմանէ բանի, զի անցանէ քան զբան, անասելի է յիշատակ անզերծանելի գաղտնութեանն, յորում ես տեղ-ւոյն կշտամբելոցս եմ:

(2) [illegible]: Եթէ յիշատակ ահաւորին գաղտնութեան ինքնին սարսափելի է, եւ առաւել այնու զի և խնոց սաստիկ վիրաց հոգւոյս՝ [illegible] ՚ի խոստմանէ կորուսիչ գիւտին ընկալայ, չիք բժշկութիւն մնաւորապէս, կամ ըստ հասարակ կարգի:

(3) Ու [illegible]: [illegible] է բանս (Է. 8.) [illegible] զի բան հաշտութեան կամ աղաւթութեան. և սոսա առաւել է փոխանակ [illegible], կամ անմեղադրելի ընելոյ: Մ[illegible] այնու առաւել սարսափելի է սաէ՝ գաղտնութեան ժամանակ, զի նաև ՚ի մարմնական [illegible] յորժամ յետ [illegible] երկուց կող-մանց ոչ յանձնէ հաշտութիւն, և ՚ի մարթ զարձել ձեռն [illegible], չիք [illegible] աստուածաւորութիւն: [illegible] ՚ի հասանել քոյոյ գաղտնութեան՝ [illegible] չեն նախ հաշտեալ [illegible], ոչ [illegible] ժամ [illegible]: Եւ ոչ [illegible], թէ և ընկեր ոչ ժա-մանակ, [illegible] բան [illegible], [illegible]: Ու [illegible] [illegible] ծածկիլ. ոչ [illegible], [illegible] [illegible]: Ա օրին. [illegible]:

(4) Ու [illegible] [illegible]: Ա օրին. չիք [illegible]: ոչ է հնար [illegible] յերկիր մեծացանել. և ոչ [illegible] ՚ի հող առել են:

(5) [illegible] Ա. Յ. [illegible] ( Ե , 27 . ) [illegible]

(6) [illegible] Ա. Յ. [illegible] Ա. Յ. [illegible] ( Ա. Կ. ըն . 30 : )

(7) [illegible] 2 օրին . և հին ըն . [illegible]

(8) [illegible]

(9) [illegible] 2 օրին . և հին ըն . [illegible] ( ՃԽ . 15 . ) [illegible]

(10) [illegible] ( Յոբ . Ա . 1 : Ծննդ . Դ . 3 . Դ . 3 . 4 : Եզեկ . Ի . 14 : ) [illegible] ( Մատթ . ԻԴ . 24 : ) [illegible]

(11) [illegible]

ցի 'ի մէջ քո երախտիքս, քո անուն, քո փառք որ 'ի միջոց մեր հասեալ էն, որ եղիցին, մնացելոյն յանձինս մեր եւս զոր մեզ միշտ յանդգա֊ նեցք առաջնորդեցաք։ Արդ՝ Տէր Յիսուս Քրիստոս նորոգ արարածութեամբ, որովհետև և յառաջնումն պատմութեան եւ. կամ միջոցին խնդրել, օրհնութեանց, զմեզ այսօր ձեռնտուս, յերկրաւորաց քոյոց բանիւք և արարածութեամբ, այս և ասացեր, արարածութեան կամիմ քան թէ զարմացում։ Եթէ 'ի մէջ յաղթանակս և 'ի չարաբանութեանց արարածոցն պատահմանեցեր, ո՞րչափ եւս առաւելագոյն զու յարարածութեան. որ զանմահին անխոս. զինչ արարեալ ա֊ նիս, և զինչ առաւել արարածոյ՝ ոչ միայն արժանաւորաց, այլև անդա֊ ժանից. և ի՞ զեն է անմահին, 'ի քումն բարութեան եղանէ եւս բարի. միշտ զի եթէ զու փառաւորես զխաւարն արարածութեան, յայլմն զառանել զայն՝ ոչ զոյ։

Սուրբին յաւելուած Նորին հեղինակի՝ նորին հօրողի, առ նորա ազգս ծաղկեալ բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ.

# ԲԱՆ. Ե.

Ա. Ա՛յս արդ՝ ես երկրածինս մարդ՝ կենդանական֊
նաւ ¹ անկայուն գոյիւ ղեկավեալ, և յիմա֊
րութք պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ա֊
մենայնիւ ստեմ, և ոչ միով իւիք ճշմարտեմ։ Բանա֊
գի ² որո՞վք դիմօք վերագրեցելովք նշանակօք աղա֊
ղակեցելովք՝ յանդգնեցայց լինել յանդիման քում
դատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր անճառ, ան֊
պատում, հզօր Ած բոլորից։ Քանզի դատեալ ա֊
ռաւելին 'ի սոյն՝ զապերախտութեն մեղուցեալ անձինս
առ քումդ երախտիս, ցուցից զերաւունս քո միշտ
զօրացեալ, և զանիրաւութիս իմ յաւէտ պարտաւորեալ
Որ արարեր 'ի քո պատկեր պանծալի՝ 'ի ձեռն վեհիդ
տպաւորութեն, զսկզբն օժանդակելով։

Բ. Զարդարեցեր բանիւ. փայլեցուցեր փչմամբ.
միտօք ճոխացուցեր. իմաստիւք առնեցուցեր. հանճա֊
րով հաստատեցեր. 'ի շնչականացն որոշեցեր. հոգ֊
ւով իմանալեաւ խառնեցեր. ³ իշխանականին գոյիւ
պճնեցեր։ Ըստ նար հայրաբար. մնուցեր դայեկաբար.
սնուցեր սատարողաբար։ Տնկեցեր զամենաբերչառ 'ի քումդ
դաւթի. Ջրովն կենաց ոռոգեցեր. աւազանին յօդով
մաքրեցեր. կենացն վառակաւ արմատացուցեր. հա֊
ցիւդ երկնային կամբեցեր. Աստծոյին արեամբդ ար֊
բուցեր. անհասից և անհասանելեացն ընտանեցու֊

ցեր. [4] զաչս երկրեղէն 'ի քեզ համարձակեցեր. լու-
սովք փառաց վերածածկեցեր. զհողանիւթ մա-
տունս անմաքուր ձեռացս՝ 'ի քեզ մատուցեր. զմա-
խիրս անարգ մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարգե-
ցեր. [5] զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրա-
պէս և անարժանիս իմոյ անձին կոչեցեր: Ո՛չ կիզեր
զանարժան լցեալ նանրութեամբ՝ 'ի ժառանգակիցն կար-
դալ զքեզ. ոչ կշտամբեցեր զյանդգնեալս՝ 'ի քո
կցորդութիւն. ոչ ստուերացուցեր զտեսիլ աչացս՝ 'ի
քումդ անճառելութիւն. ոչ արգելանաւ կապանաց՝ Է
մահապարտացն տարապարտեցեր. ոչ խորտակեցեր ըզ-
դաստակ բազկիս, որ անմաքրապէս առ քեզ համ-
բառնայր. ոչ մանրեցեր զատամս իմոց մատանցս՝ 'ի
շօշափելն զքանդ կենաց. [6] ոչ պատեցին զինև մա-
ռախուղք՝ 'ի ձօնելն զքեզ ահաւոր. ոչ փշրեցեր ըզ-
պարս ատամանցս՝ յըմբոշխնելն զքեզ անսահմա-
նելի. ոչ գնացեր բարկութեամբ խոտորնակ՝ [7] խո-
տորնակի ընդ քեզ հետևողս, իբր ընդ վրիպեալ-
տունն իսրայելի: Ո՛չ խայտառակեցեր 'ի հարսնա-
րանիդ՝ զանարժանս քումդ պարերգուն. ոչ 'ի գձուձ
հանդերձին տեսիլ՝ զանօրինեալս յանդիմանեցեր.
ոչ կապանօք ձեռաց և ոտից՝ յարտաքին խաւարն
հալածեցեր:

Դ. Ոչ այս ամենայն մատունս բարեաց՝ և զներելոյդ
երկայնմտութիւն ընկալեալ 'ի քէն՝ բարերար, օրհնեալ
և յամենայնի միշտ երկայնամիտ, [8] փոխադրեցի զհա-
տակարս պարտեաց՝ անթիւս և բազմօրինակ անօրէ-
նութիւս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր
բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշութեց:
Ո՛ այսոսիկ քեզ՝ ա̃ծ իմ և տ̃ր, ընդ այսքանեաց բա-
րեաց փոխաբերեցի. զայս քեզ՝ յինձէն հատուցի չա-
րիս, ըստ մովսիսեան յանդիմանութեանն առակի, մա-
ռացեալ զիմաստութի և սիրողս յիմարութե: Ո՛ այսց
բարեաց [9] երախտեաց կամաւոր ընդունայնութե զհնա-
ցիւք՝ չարաչար ունայնացուցի. զայս լուսաւորութե
շնորհաց անճառելոյ՝ 'ի բարձրելոյդ խնամոց բարդե-
ցեալ՝ մոլեկանն խելագարութե ցնդեցի: Եւ թէպէտ
բազում անգամ ծանուցար՝ կարկառմամբ ձեռին
քո այցելութե ձգել զիս առ քեզ, ոչ հաւանեցայ

ըստ մարգարէին որ զինքն յայտնէ անմխիթարութեամբն.
և Թէպէտ խոստացայ դաշնաւորեցի քեզ հաճոյա-
նալ, և ոչ ըստ այսմ սահմանաւ ուխտիս փակեցայ,
այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, անդստին [10] յաճն
առաջին մատեայ, փշոցն մեղաց հերկեցի զանդաս-
տան սրտիս՝ յորոմանն արդիւնաւորութի: [11] Ո՞ր ես
եղանեն առաւօտք նծարեալ նոր մարգարէիցն. քանզի
մնացեր յինէն խաղողոյ. և ես ըստ այնորիկ փուշ
շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառնութի պտղոյ՝
այգիս օտարացեալ. բուռն հարի զանհաստատ հող-
մոյ, որովք միշտ տատանեալ՝ այսր անդր տարաբե-
րիմ. ըստ ձայնի երանելոյն յոբայ՝ ըստ ճանապարհ
իմն անդարձ գնացի. 'ի վերայ աւազոյ՝ շինուածս յի-
մարութե կառուցի: [12] Յայնատարր հեստիլք խա-
բեցայ՝ կենացն անձկալեաց հասանել. փակեցի ին-
ձէն զելիցն ուղեւորութի. բացի կամաւ զկորստեան
խորխորատն: Խցի զպատուհան լսելեացս իմոց՝ առ-
բանիդ կենաց ընդունելութի. կափուցի զաչաց հոգ-
ւոյս հայեցուածս՝ առ 'ի զկենացն դեղ նկատել: Ո՛չ
ընդոստեայ 'ի Թմբրութեց լքմանէ մտացս՝ 'ի պատ-
գամ փողոյդ ահաւորութե. ոչ զգաստացայ 'ի բա-
ղոջ գուժի՝ հրափորձական աւուրն ընտրութե. ոչ եր-
բէք զարթեայ 'ի նիրհմանէ քնոյն մահացուի, որ 'ի
կորուստն կարապետէ [13]: Ո՛չ եւս հանգիստ քոյ
հոգւոյդ՝ 'ի մարմնեղէնս տաղաւարի. ոչ է ընութե
շնչոյս խառնեցի զմասն շնորհաց քումդ պարգևի.
իմոյս ձեռօք կոչեցի կորուստ, ես առակողին, զհոգիս
կենդանի մահացուցանել:

Դ. Ա՞ւ զի՞նչ է ինձ սակաւս և նուաղագոյնս յօ-
դել՝ [14] սահմանս կսկծելիս չափաբերականս, մինչ ան-
ցեալ է ըստ քանակութե, և վրիպեալ ըստ բժշկու-
թե: Ո՞րդ՝ քո՛ է ընձեռել կեանս՝ հոգւոյս մեռե-
լոյս, և անոխակալութբ մատչել առ այցելութի դա-
տապարտելոյս՝ որդի Այ կենդանւոյ. քեզ փառք
յաւիտ. ամէն:

---

(1) Ընթացան գոյնս: Գոլով ես մարդ երկրածին, ոչ միայն անհաստատ իրօք աշխարհի զգալիս, այլև յիմարութե իմոյ առաջեցուցիչ զինեալ մտածութեամբ եղեալ, անձնականս ոգւոյս. յորժամ է յիմարութեան խոհիս կամ դատիմ, միշտ սասանի և տատանի. արդարոյն մարդ՝ ոչ երբէք ...

[illegible] , ուր [illegible] [illegible] , [illegible] և [illegible] : Ա[illegible] [illegible] . [illegible] [illegible] թէ ոչ՝ նաև [illegible] :

(2) Որմնէ [illegible] : [illegible] 'ի [illegible] , [illegible] և [illegible] , թէ [illegible] , [illegible] . [illegible] : [illegible] 'ի [illegible] . [illegible] Այ [illegible] . [illegible] , [illegible] և ոչ [illegible] . [illegible] 'ի [illegible] , [illegible] : [illegible] թէ [illegible] 'ի [illegible] Այ , թէ [illegible] , և թէ ըզ չնորհն , [illegible] :

(3) Խաչխանականին գոյն : Ա[illegible] , [illegible]՝ [illegible] է [illegible] :

(4) Ջուր [illegible] : [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] : մի օրին . [illegible] , [illegible] : [illegible] : [illegible] (Ա. [illegible] . 20.) [illegible] թէ [illegible] , և [illegible] , և [illegible] 'ի [illegible] : Ա[illegible]՝ [illegible] 'ի [illegible] , [illegible] , [illegible]՝ [illegible] , նաև [illegible] , [illegible] 'ի [illegible] :

(5) Ջհայր [illegible] : Ո[illegible] է [illegible] , [illegible] նաև [illegible] . [illegible]՝ [illegible] և [illegible]՝ [illegible] : [illegible] ոչ [illegible] 'ի [illegible] և [illegible] :

(6) Ո[illegible] : [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] , ոչ [illegible] 'ի [illegible] . [illegible] 'ի [illegible] , [illegible] 'ի [illegible] . և [illegible] , [illegible] 'ի [illegible] . [illegible] և [illegible] . [illegible] ( Ա. Թագ. Ա. 10. 11. 12 ) . Ս[illegible] , ոչ [illegible] , [illegible] 'ի [illegible] , 'ի [illegible] 'ի [illegible] թէ : [illegible] և [illegible] . ԼԾ . 9 :

(7) Խ[illegible] : Ո[illegible] . [illegible] : ( Եզեկ . [illegible] 5. 36.) [illegible] . [illegible] ոչ [illegible] . ոչ [illegible] 'ի [illegible] , [illegible] :

(8) Փ[illegible] : մի օրին . [illegible] : Փ[illegible] և [illegible] և [illegible] . [illegible] , [illegible] . [illegible] . [illegible] : Ջ[illegible] , [illegible]՝ [illegible] : ( Ա. օրին . ԼԲ. 6 ) :

(9) Երախտեաց նշանաւ: Ձ օրին. երախտիս, զաւցէ փոխանակ երախտից: Զանազան բարերարութեանց ծողմամբ կամ յանձնխնութեամբ ունայնացուցի, անպտուղ արարի, ի սնոտի գործ պարապելով:

(10) Ցանն առալին: Ակնարկէ ի բանն (Երեմ. Զ. 9.) * Կրկնեսջիք առ կթող՝ յաճ խոր || . զի ի սուղն որթոյն՝ յորմէ կթեաց: Այսպէս և ես ի մեղսն յորմէ արբեցայ, վերստին զարմ արարի:

(11) Առ իս եղանէն: Ցիս կատարեցին, առ իս յարմարեցին բանք և օրինակք մարգարէից, որք ի վեր և ի վայր յեղյեղեալ եմ:

(12) Լուծափարր հեփոյց: Ցոյժ լոյսն և չարաձայն ճանապարհաւ կործեցի հասանել ցանկալի կենաց տէրութեանս, հակառակ ակրաւնական վճռոյն:
(Մատ. Է. 13):

(13) Ու եփու հանգիստ: Հայի յառաջակայն (Ծննդ. Գ. 3.) * Մի՛ մերձեսջիք ոչ իմ ի մարդկանց վասն ըմպելոյ զոյգս մահուհն || . որով և սրբութիւն նշանակ հոգւոյն՝ ոչ եղիւս հանդստեա ի մեռեալ մարմինս. (Ծննդ. Զ. 9:) Առ որ և բանն խօսի. (Ա. 4.) * Հոգին իմ ոչ բնակէ ի մարմնի մարմ- նելոյ մեղօք ||: Այսպիսի բացատրութիւն է յաջորդն, ըստ Բեռնեն ձեռս. Է ընչաւոր կամ ղղալականն հոգիս ոչ խառնեցի, զի ոչ հաղորդեցի, ոչ մաւորեցի զմանն ընդհանց հոգւոյն սբյ՝ զիմաստութիւն կամ զհանճար կամ զմտքրութե. զի ընչաւոր մարդ ոչ ընդունի զհոգւոյն այ. (Ա. Կոր. Բ. 14:) Այսպէս հոգիս իմ բանական մնալով Է ընչաւորին՝ անմահան ի հոգւոյն ընդհանց, ես Բեռնեն կարաւտ անձինս գործեցի:

(14) Սահման նշինելն: Զի՞նչ օգուտ ինձ առէ՝ շարել կամ հիւսել զոյ- ասանկ ասկար բանիւս կոկծեցուցիչս. և կամ եթէ մի յաւող բերեմ. ըստ Բեռնեն, ջամբաւորս, ամփոփեալս, կամ որք շամփոլ համառօտոց յառ- մարեալ են. զի՞նչ այսորիկ առ իմս մեղապարտութե, որ անցեալ է ըստ թանմութե, քան զչափ. և նեղուտ ըստ Բծշկութե, ի վեր քան զբժշկու- թե, անյոյս առ ի բժշկել: Ձ օրին. ըստ Բծշկութե: Այդ՝ առ ի՞նչ այս- քան յՏնէն տառացեալք, մինչ ոչ զչափ չարեացս կարեմ ճառագել և ասել, և ոչ բժշկութե ինքնին գտանել, կամ այսմ ըմպել արժանի, բայց զի զբոյն ողորմութե շարժեսցէ՝ կեանս շնորհել, ևն:

---

Սրտին յառեալ կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. Ժ:

Ա. Արդ՝ [1] զի՞նչ բարուաք գոյ առ այս, կամ ո՞ր օգուտ ինձ առ սոյն սահմանս ընթացից ձայնիս հեծութեան լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վիրիս՝ խարանաւ բանիս արտաքս հերքել. և կամ զծանրութն սրտիս՝ մթերեալ ցաւոյս՝ հոգեկան խիթոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորութե, մատամամբս զգուշանօք փախել:

Բ. Ո՛չ քանզի [2] ոչ գտայ արժանի պարծելոյ ի փառս ընդ սիգոն գաւս, որոց լի են բերանք նոցա ծաղու, և

շրթունք իւրեանց ցնծութի, եւ առակողին և սաղ-
մոսողին, 'ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ
յիշատակել համայն ատեանօք. Թէպէտ առ իմում
թերութեան բարուց անբարեաց՝ և նոքա յաղթականք
իցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն: Տօ-
նելի եղև մանասէ, առ իմոց պարտուցս առաւելու-
թի. պատուեցաւ և փարիսեցին, առ դժնէիս ամ-
բարշտութի. զովեցաւ անառակ որդին, առ անդառ-
ձիս ուխտազանցութի. յիշատակեցաւ 3 կեղծաւո-
րութի որդւոյն ամասեայ, առ անշնորհութի ապախ-
տաւորիս. օրհնաբանեալ եղև աւազակն, որ դատա-
խազն է անհաւատից. պատուեցաւ 4 կինն պոռնիկ՝
սկզբնամայրն ապաշաւողաց: Ո՛չ պակաս քան զփա-
րաւոնն՝ զստեղծուած սրտիս իմ խստացուցի. ըստ ա-
րինակի խուժութեան մրրկաց ծովու ծփեցայ. ոչ այն-
քան սաստեցի և պատկառեցի 'ի սաստկութէ քումդ
հրամանի, որքան այլք ծովուն՝ յեզերացն: Ընդ-
թիւս չափուց կշռուեն առ իմս գործոց՝ և 5 աւազոյն
կոյտ սահմանեցաւ. պակասեաց անբաւիցն չիղջք,
առ համբարս իմոցս անօրէնութեց:

Դ. Որ թէպէտ և յոյժ բազում են մանունքն՝ 'ի
յափունս ջրոյն համահաւաքեալք, այլ 6 ուրոյնք և
առանձնականք 'ի ծննդոց աճելուէ. իսկ մեղանք 7 ի-
մոյս յանցանաց՝ անթիւք, զորս անհնար է առնուլ 'ի
միտ: Ամն՝ և ծնունդք իւր. ամն՝ և շառաւիղք իւր.
ամն՝ և բիծք իւր. ամն՝ և արկածք իւր. ամն՝ և փուշք
իւր. ամն՝ և արմատք իւր. ամն՝ և հաստուածք իւր. ամն՝
և պտուղք իւր. ամն՝ և նշխարք իւր. ամն՝ և ձիւղք
իւր. ամն՝ և ոստք իւր. 8 ամն՝ և արմկունք իւր. ամն
և ձիրանք իւր. ամն՝ և մատունք իւր. ամն՝ և խլրտ-
մունք իւր. ամն՝ և զօրութիք իւր. ամն՝ և ազդմունք
իւր. ամն՝ և նշմարանք իւր. ամն՝ և տիպք իւր. ամն՝ և
մնացուածք իւր. ամն՝ և ստուերք իւր. ամն՝ և մթու-
թիք իւր. ամն՝ և յարձակմունք իւր. ամն՝ և հնարք
իւր. ամն՝ և պատիրք իւր. ամն՝ և դիտմունք իւր. ամն՝
և դիմեցմունք իւր. 9 ամն՝ և չափք իւր. 10 ամն՝ և խորք
իւր. ամն՝ և զարշութիք իւր. ամն՝ և կայծակունք իւր.
ամն՝ և կիրք իւր. ամն՝ և մթերք իւր. ամն՝ և գանձք
իւր. 11 ամն՝ և ցնցուղք իւր. ամն՝ և աղբերք իւր. ամն՝

Եւ գիւտք իւր. ոմն՝ և շանթք իւր. ոմն՝ և հրդեհմունք իւր. ոմն՝ և պատկառանք իւր. ոմն՝ և վիհք իւր. ոմն՝ և անդունդք իւր. ոմն՝ և բորբոքմունք իւր. [12] ոմն՝ և աղջութիք իւր. ոմն՝ և ամպրոպք իւր. ոմն՝ և կայլակք իւր. ոմն՝ և հոսմունք իւր. ոմն՝ և հեղեղք իւր. ոմն՝ և սառնամանիք իւր. ոմն՝ և դղրունք իւր. ոմն՝ և շաւիղք իւր. հնոցն՝ և տապ իւր. հրատն՝ և գոլորշիք իւր. [13] հալոցն ձարպին՝ և ձենձ ձերմունք իւր. օշինդրն՝ և դառնութիւն իւր. կործանիչն և հնազանդեալք իւր. բռնաւորն և յելուզակք իւր. գոռոզն՝ և սպառազէնք իւր. աւազակապետն՝ և գումարտակք իւր. գազանն՝ և կորիւնք իւր. խածանողն՝ և ծակոտուածք իւր. [14] ապականագործն՝ և նմանիք իւր։

Է. Արդ՝ այսոքիկ [15] պետք են գլխաւորութեց՝ ապականողաց ոգւոց համայնից, դասեալք Է ինքեամբք նուաճուիք մասանց՝ իւրաքանչիւրոք 'ի սոցանէ բիւրք բիւրուց՝ և հազարք հազարաց. իսկ զհամայնիցս թիւ նա միայն զօրէ իմանալ, որ զառ 'ի մէնջ չէութիւնն դրեալ իբր զէութի գործոց տեսանէ։ Նա՛ արդ՝ եթէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ կերպարանեսցի, և կեղծաւորաբար [16] ոչ անհաւատեսցէ, և մարդ զինքն ծանիցէ, և հասարակաց բնութե վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ, և 'ի չափու իւրում կանոնին կացցէ, իմասցի ծանիցէ զնախաթիւ մասունս արկածիցդ վերագրելոց, թէ ոչ ընդունայն ինչ գրեցի, և կմ զբնաւ իսկութին սահմանեցի, որ 'ի մերս բնութե պտուտկի ազգի ազգի վրիպականութի. այլ 'ի բիւրուցն արգասեաց չարեաց՝ չափ մի երևեցուցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսցիք, թէպէտ և ոչ բաւանդակապէս։

---

(1) Զինչ էութեան գոյ։ Զինչ [illegible] գոյ կմ ծնանի [illegible], կմ զինչ [illegible] 'ի [illegible] եթէ ոչ [illegible] և [illegible] [illegible]։

(2) Ուր Գոյոյ [illegible]։ Վասն [illegible] ըստ դասուն Ամյ. [illegible] (Ձիթ. 5.) [illegible]

գուցէ ըստ տառապողին. (Յոբ. Ը. 21.) ուստի չկարելով խնդալ ընդ Աստուածոյ ամենեցուն, որք յառաջնում կարգին են, միայն լինի զինուլ 'ի կարգին երկրորդ, որ աղաչաւորելոցն է, մեղուցելոց երբեք զնա. Թէպէտ և առ խնամ Ենթիւրաբեն, համեմատեալ առ Թերութիւն իւր, կշռելով զբազմապատիկ պակասութիւն իւր, վերադրոյն են և ողքա, որչափ աղաչաւորօքն քան զանդաղաչաւորն. վա զի մանաւանդ խառնս աղաչաւորելովն՝ հաշտեցելն եղև բաղձաւորեալ ծանրութեան պարտուց իւրոց: Եւ փոփոխեցին ունելով զգալի գործս ինչ, պատուելի եղև քան զնա, որ ամբարշտութեան միայն ունիւր, եւն:

(3) Կենդանաբանէ որդւոյն ամանեայ: Ցիշատակելի եղև կերծել ամբարշտութեան ողնայ կին աղաչանաց տղայոյն. (Դ. Թագ. ԺԴ. 21. Բ. Մնաց. ԻԴ. 21:) Զի կամելովն ծնել 'ի ատենաբոյն, կործեր ուելի իմն ասնել 'ի պատիւ Եղ. պատով զբնորհակալու կամս եցոյց, ուր եա աղաչեորհ եմ:

(4) Կինն գոմեր: Մարգարէութեանն մարմնամ կործեցեալ. բայց հաւանելի և՝ կինն այն յայտնի մեղաւոր 'ի ատեն մեծնի բարութ. որ և յորհնաբանեալ բերանոյն Քրիստ պատուելցաւ: Եւ առ մայր կին աաաջին առի ոչ միայն պատենեաց աղաչաւորողաց, այլև զի 'ի գիրս՝ առաջին աղաչաւրօղ 'ի հաւատացեալ կանանց՝ նա յիշատակի. Թող զբախար՝ որ չէր 'ի հաւատացելոց:

(5) Աստղոյն կոյս: Համեմատութիւն չափու չար գործոցն՝ կոյս աստղոյ առհմանեցաւ, չափելի եղև. և անբաւ կրոց չինչ, զեղջն պակաս զառան քան զանօրէնութիւն իւր:

(6) Որբոյոյ և տառանջիւսխանք: Թէպէտ Թուով բաղդատ են մանր կոչ՝ առաւել, խիճք, և այլք ժողովելովք յաղին ծովու, բայց հեռի և զուրկ են 'ի ծնանելոյ. իսկ իմ չարիքն՝ ծնելեանք անթիւք են, և զայլս եւ ծնանին: Աստ 'ի յառաջորդաց կարգելով զնէ զբազմութեան՝ Թուով վաթսուն և երկու, զոր մի առ մի մեկնել երկար լինի, մանաւանդ և գժուարին. զի բաղդատք 'ի բառեխը այլաբանեալք գոլով, 'ի զանազան մեղս կամ յախտս յարմարին: Զայս միայն ասել շատ լիցի, զի գգլխաւոր մեղան կամ զախտս եղանի զնելով ան, զերկրորդն միշտ բաղմաւոր զնէ, յայտ առնել Թէ միոյ չար ախտի բաղդատ են ծնունդք չարք:

(7) Իմոյս յանցանաց: 3 օրին. Իմոց յանցանացս:

(8) Որն և որմնանք իւր: Աղանդին՝ (անիրաւել) պատով լինի հարկանել կին մեկել զայլս: Այսպէս բարկութեան պտղունք են կռիւ, նախատինք, և այլն:

(9) Որն, և լաւք իւր: Մեղքն՝ որք ասահման ունին, որպէս են պատուղքն մարմնականն մեղք՝ շուայտութեան, արբեցութե, եւն, որոց 'ի պակասել նիւթոյն՝ Թէպէտ և կայցէ կամք մեղացն, այլ գործն ոչ յաջողէ, պատով և անհնարին առնելէ:

(10) Որն, և խոշք իւր: Մեղքն՝ որք ըստ հակառակն վերադրելոցդ՝ 'ի խորս ձգին. որպէս են հոգևոր մեղք հպարտութեան, նախանձու, եւն:

(11) Որն, և ցնցումք իւր: Ցը ցայտմունք. որպէս գայթակղութե մեղքն, որոյ ցայտմունք են մեղք գայթակղելոցն, կամ վատանունութիւն ծնողաց, առանն, ազգին, եւն:

(12) Որն, և տղձանքեւ իւր: Մթութիւնք, խաւարք. որպէս արբեցութեան՝ որ ածէ խաւար 'ի միտս և յաչս:

(13) Հայրն ճարպին: 'Ի լաւ օրինակ այս հաստատած յետոյ զնի քան զհետեւեալն, Յանկարծ՝ և տառանուեն իւր: Հայոց է կաթոյն կամ ասեն՝ յորում հայն ճարպն, և զձենձերն 'ի վերայ այս. և խմանի ակրտ մեղաւորքն՝ որ 'ի հուր ատանջանաց կին անձկութեան պատկին մաշէ զփափկութեան, յորս վայելեաց յաշխարհի:

(14) Աղախնագործն՝ և նմանիք նոր ։ Զէք յեղծս օրէն ։

(15) Պէտք են գնդաւորութենց ։ Վերածեալ մեղքս են երրի էշխանք և դիպուածք, է որովք կան այլ մեղք երրի նուածութեք, հայասաիք . և զամենեցունն թիւոն ած միայն գիտէ, որ զուշէ կարծեցեալն 'ի մեծն երրի փրկեալս առանէ ։

(16) Ու անհատաբեայէ . այլ օրէն . ու անհատաբառայի ։ Եթէ ոք առանց խորհելոյ զանձն և կերծառութելոյ ոչ երկմտեսցի, այլ մարդ ճանաչելով զանձն՝ ընտառաբանոց բնութենն կիրս դյայցէ, և խնամեացէ զինքն հողածին զոլ, և 'ի չափու տկարութե իւրոյ մնայցէ սրտիւ, յայտնի ծանիցէ այնուհետև՝ թէ զխոխտացեալ մասունս պատահմանց բնութենս ոչ ուժեղութ դիեցի, և ոչ խոկ զբովանդակ չափն ծանուցի զանազան սխալմանց՝ որք յառաջանան բնութեան չարծին, այլ 'ի ըխալ գործոց չարեաց տկարս ինչ յայտնեցի, որովք և զայլ կարիցէք խնամել, թէպէտ առակաւ ինն ոչ բովանդակապես ։ Վասն զի նկատելով ընտանեական տկարութեն բնութենս, խնամեալք թէ ամենակարող է մարդ 'ի չարէս՝ թէ ոչ յամենակալէն այս ուղղեսցի 'ի բարին ։

---

Սերոփէն յաւելուած կրէին հեծութեն՝ նորին հօխոզի, առ Նոյն ավէրս ձաղնանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ծմ ։

## ԲԱՆ. Ը.

Ծն. Նա զի մի զփրկութեն վասահութի խոստով կարեցից, և տպագէն եղեալ՝ մատնեցայց այսքանեաց աներևութից ընդդիմամարտից, որք ոչ այլ ինչ են՝ քան թէ ընտանիք Թշնամիք ինքնածին բուսեալք ՝ զոր վերագրեալքդ սահմանեցին՝[1] զորքանութեն պատկերին ձեռյ եղեալ ահարկուս ։ Ցուցից առ սմին բազմաբոյլ բռնութեն[2] մարտկացդ՝ զօրեղ ախոյեանս ծածկեան՝ ամենայաղթօղս և անպարտելիս,[3] թէ և կսկծելիս կիրս՝ և դժուարակուլթ պտուղս ծառոց անհատանելեաց. և անկոխ ճանապարհաց երկեք և տաժանմունք ։ Քանզի զայն ծմ դունդս չարութե բանսարկութին զօրաց՝ սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց՝ իբր զճճիս զեռունս բազմոտանիս[4] խխայթից երկրի տկար խլրտմանց՝ անկեալ 'ի վերայ ծորումն ձիթոյ, կամ դոյզն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ. և դոյզն մի հառաչումն սրտի հեծութե ելեալ 'ի յաղւոյ, իբր շնչումն հարաւային ջերմութեն խառնեալ յարևու, զսառնամանեաց սաստկութի հալէ. քանզի[5] ըստ միումն

նմանութեն հեշտածինք են. և ըստ միտումն դիմա-
դրութեն դիւրամեռք ։

Բ. Այլ ես ոչ երբէք կամեցիր դատել զդատա-
պարտեալս՝ բանից կսկծմամբ, [6] պարսել զպարտա-
ւորեալս՝ իբր զխստակար անփրկանաւոր անհա-
մոզելի. վասն զի զոմանս տառապեալ ՚ի յիմոց նեղ-
չացն, ոմանց զօրութիւն տամ կենդանանալ՝ առ հոգ-
ւոյս կորուստ։ Տունկս դառնոստեան, որ զզարշու-
թիւն անսառակ վարուց ծաղկեցի. բարունակս ապա-
կանաքեր և մահողկուզեան, որ զկորստեան գինին
երկնեցի. քանանու զաւակս՝ և ոչ յուդայի, որ ասից
մեծին դանիէլի. որդիս գեհենին, և ոչ արքայութ.
ժառանգս դժոխոց, և ոչ փառացն փափաքելեաց.
նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան։ Ապերախ-
տըս առ երախտաւորդ. ապաշնորհս առ բազմա-
պարգևդ. միշտ մեղուցեալս առ երկայնամիտդ. դառ-
նացուցիչս քաղցրութեն բարերարիդ։ Ծառայս չար
և վատ, որ տէրունեան յանդիմանութեն. իմաստունս
զչարիս գործել ըստ եսայեայ նախասացութեանն.
ժիրս առ ժանդագործութիս զազրութե։ Փոյթս առ
՚ի բարկացուցանել զՏէրն. մշտաշարժս առ գիւտս
սատանայականս. հանապազորդեան [7] վիշտս ստացա-
ղքն։ Ծոյլս առ բարեացն թուիչս. [8] ծոյլս առ երա-
նութեն ընտրութե. դանդաղս առ դիտմունս խոս-
տացելոցն. անարիս առ կարիս պիտանեացն և օգ-
տակարացն. պաշտօնեայս տիրադրուժ երախտամո-
ռաց։

Գ. Աւա՜յ անձինս մեղաւորի, զի զարարիչն իմ բար-
կացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեն
ձիր մոռացայ։ Աւա՜յ պարտապանիս անհամար [9] բիւ-
րուց քանքարաց, որ ոչ գոյ հատուցանել։ Աւա՜յ բեռ-
նակրիս ծանրութեն մեղաց դժնէից, որ չունիմ դառ-
նալ [10] առ հանգստարարն. վայ փառակարիս տէրու-
նեան պարտուցն, որ [11] չիք հնար յանդիման լինել
հզօրին։ Աւա՜յ եղէգնախուիւ կիզանողականս նիւթոյ,
որ տոչորելոց եմ ՚ի գեհենին. վայ ինձ առ այս յի-
շատակ, զի [12] նետք բարկութեն ո՛յ՝ այրեցելովք են
գործեալ. վայ յիմարութես, որ ոչ մտաւեցի [13] ըղ-
ծանկեցելոյն յայտնաւէ հանդէս։ Աւա՜յ ամբարշտիս,

որ մեղայ անդադար [14] ատաղձս չարեաց կկեցի. վայ զմարմինս պարարողի՝ կերակուր որդանցն անմահից, կոտտողացն թունաւորաց զխայթ համբերեցից. վայ ինձ առ որբումն մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տուժեցայց. վայ ինձ առ ելս անարժան հոգւոյս՝ յեղկելի մարմնոյս, երբ դատաւորին ճշմարտի յանդիմանեցայց. վայ ինձ առ նուաղութիւն իւղոյն լապտերաց, որ անարծարծելի է աղօտանալն. վայ ինձ առ ձեռն տագնապի [15] ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն փակեսցի. վայ ինձ առ ձայնին ահաւորութիւն դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր թագաւորին վճռաւ կնքելոյն, թէ ոչ գիտեմ զձեզ:

---

(1) [illegible] : [illegible] առ ամն են. 2 օրին. այսպէս [illegible]. [illegible] : [illegible] առ ամն, են:

(2) [illegible] : 2 օրին. [illegible] :

(3) [illegible] : [illegible] օրին. [illegible] : [illegible] են : [illegible] են [illegible] , 'ի [illegible] : Բայց որ [illegible] 'ի [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] են. [illegible] , [illegible] , [illegible] , և [illegible] 'ի [illegible] : [illegible] են. որ [illegible] է [illegible] , [illegible] են:

(4) [illegible] : [illegible] 'ի [illegible] 'ի հող, [illegible] , և [illegible] 'ի հող:

(5) [illegible] : [illegible] 'ի [illegible] և [illegible] . [illegible] 'ի [illegible] թէ : Բայց և [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] տուօք:

(6) [illegible] : Ոչ [illegible] , [illegible] , ոչ [illegible] և [illegible] : [illegible] 'ի [illegible] , և [illegible] . [illegible] , [illegible] , և [illegible] , են:

(7) [illegible] : [illegible] , [illegible] . որ [illegible] զնա:

(8) [illegible] : [illegible] 'ի [illegible] , [illegible] : [illegible] . [illegible]

զինէ՝ առ երջանկութիւն ընդունելին, և աստա 'ի մերոյ յետս երանութեանց, զերծ լինել առնէ՝ 'ի բնութեան մերմէ ընտանեկանութիւնս Այ։ Դանդաղ. հեղգ, ծանրաշարժ 'ի հայեցուած կամ 'ի նկատումն խոստացեալ բարեաց։ անուրխ, երկչոտ, անձնառակ 'ի կարեւոր գործս՝ ակնածանօք եւ ընկերաց։

(9) Բեկեալ փանփարաց։ 2 օրին. բեկեալ փանփարաց։

(10) Ա՜ն հանգստարանի։ մի օրին. առ հանգստարանն։ Վայ ինձ առնէ՝ որ ծանրաբարեանեալ եմ զճնշմամբ մեղաց, և ոչ կեղծեմ զատանալ առ հանգստեան. որ կոչէր զիս առ ինքն, եկայք աշխատեալք և բեռնաւորք. զի այլ անդամ թեթևացուցից զիս 'ի մեղաց, և եւ զառաջեալ բեռնաւորութեանց։

(11) Զիջ ճոխ յանդիման լինել։ 3 օրին. չիջ յանդիման լինել։

(12) Նեղ բարկութեան։ մի օրին. նեղ բարկութեան։ Վայ ինձ առնէ՝ 'ի յիշատակելն զայն, թէ նեղ բարկութեան Այ գործեալ են այրեցելովք. զի յայտնեցեալ նեղութիւն, կամ մեծութեան 'ի կրակի։

(13) Զծածկեցելոց յայտնութեան հանդէս։ 3 օրին. զծածկելոց հանդէս։ Վայ յիմարութեան իմում, որով 'ի միտ ոչ առնէ թէ ծածկեալ յանցանք իմ, առանց մեղացն հանդիսիւ և քննութեան յայտնելոց են 'ի տիեզերաց կամ առնելին։

(14) Ոտնացն շարժեաց կկեցի։ Զթեւս չար գործոց կկոցեալ գործեցի. զի զեմբոս 'ի մեղս յարեցի։ Անկանէ 'ի բանն (եսայ. ծԹ. 5.) * Զձուս իժից սորայեց անկանէն։

(15) Ահեղ պահանջման։ 2 օրին. ահագին պահանջման։ Ցայս երկրայնեան բանիցս ի՛ առաւելի յիմար կուսանացն յարմարէ զաղէտս հոգւոյս. յորժամ խաղ զորոգմութեան պահանջէ 'ի հանդերձեալն, և ահ աղաչեցուցիչ աստուածայնոյ ընդ փակել առագաստին երկնից. ուր աղաչանիցն ձայնն ընդ թափառական, ոչ գտանեմ դարձ։ Այսպէս եղև զաղօթքս, մնացեալ զարդարեալ աստուածային պահպանութեանն, կամ ոչ կեղծեալ 'ի փառաւորութեան սուրբ և այլ, որով ոչ ուշ եղեալ ընթերցողաց որ՝ չգիտեմ զպատճառ շատաւխոսս, կարծեմ ընդ զթերթն՝ յաւելեալ առատօր խօսս յերկարս զգեստաւոր անյարմարութիւնս՝ յորինակ ինչ դրեմ 'ի Թուին ամք, 1365։ Բայց նկատել արժան է՝ զի ոչ այս բան միայն, այլև Ղ և Ը. առանց փառաւորութեան աւարտի, ապառնական գրչինգն 'ի կշտամբութեան մեղաւորաց անձինն. մինչ և առաջ 'ի բանն Ժ վճարեալ զկշտամբանսն, զգուշութիւն առ 'ի յետ մեծացուցանէ, և 'ի փառս կնքէ։

Սերոբէին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նորին աղերս մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ Բ.

ա̃ . Եւ արդ՝ զինչ գործեցես անձն իմ կորուսեալ, կամ ուր թաքիցես, կմ զիարդ ապրեսցիս, կմ որպէս ելցես 'ի մեղաց բանդէ։ Բանդի բազում են պարտիքդ, և անթիւ հատուցմանքն. սաստիկ կշտամբանքն, և անվախճան նախատինքն.

անողորմ են հրեշտակքն, և անկաշառ դատաւորն. հզօր ատեանն, և անաչառ բեմն. քստմնելի սպառնալիքն, և անողորմ հատուցմունքն. ահարկու հրամանն, և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրեղէն են գետքն, և անանցանելի են վտակքն. Թանձրամած խաւարն, և [2] արտաքոյ այցելութեան մառախուղն. ապականութեան է գուբն, և մշտնջենաւոր է տագնապն. ամենագրաւ տարտարոսն, և անզերծ սանձամանիքն: Այլ արդ՝ արդարև քեզ են զանձեալ զաւրինքս այսուքիկ դժնդակք, և տարժանելի օթևանք՝ անըմբերբելեացդ պատուհասից, ով անարժան անձն իմ մեղաւոր, չարագործ, [3] պոռնիկ, բազմաքիծ, և սահման անդաստանի բնաւին անմաքրութեան: Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեսցես՝ թիւրեալդ 'ի յուղղութեանց, և զառածեալդ 'ի մաքրութեանց. տարագրեալդ յարդարութեց, և 'ի կարգաց պարկեշտութեանց. ունայնդ 'ի լուութեանց՝ հոգեպարգև հարստութեց. [4] Նախանձարկու բարերարին, և ամենակալ Թագաւորին:

Ժ. Այլ քանզի կառուցեր քեզ անել արգելան և անփախչելի որոգայթ, [5] խոստովանեալ քեզէն զանբժշկականդ քո վէր, և զանօրինակդ հարուած, վկայելով զանձինդ զպարտականդ մահու՝ զանբուժելիդ բեկութի, ով չարդ 'ի բարեաց. [6] ով դառնութիդ 'ի քաղցրութեց. ով խաւարդ 'ի լուսազարմից. ով կապտեալդ 'ի պճնելոց. ով դորավեալդ 'ի գովելոց. ով անբարիշտդ 'ի բարեպաշտից. ով շնչականդ 'ի բանականաց. ով անմիտդ 'ի մտաւորաց. ով անհանճարդ յիմաստնոց. ով անմաքուրդ յընտրելոց. ով մահացուդ 'ի կենդանեաց. [7] ով խոտերականդ 'ի սրբոց. ով արբշիռդ 'ի պարկեշտից. ով կեղծաւորդ յարդարոց. ով անպիտանդ 'ի պիտանեաց. ով անարգդ 'ի փառաւորաց. [8] ով նուաղդ յառաւելութեանց. ով գերիդ 'ի գերագունից. ով նուաստագոյնդ 'ի վեհից. ով աղքատդ յընչեղաց. [9] ով անարժանդ 'ի փրկութեց. ով տնանկդ 'ի բարձրութեց, և 'ի հոգևոր հարստութեց. և հատուածեալդ յօրհնելոց:

(1) Երեւս 'ի Գաղղիոյ Քաղաքէ : 2 օրին. Երեւելիս 'ի Գաղղիացոց քաղաքէ : Որովհետեւ թէ առաւելապէս աստուածասէրն անկեալ, որ սրտիւ մաքրոյ 'ի նախանձեալ աղօթեն, ըստ տարակուսանօք խօսի, ո՞ր արդեօք թողիցէ, ո՞ր փախիցէ, կամ հետոյ զամենեցէ 'ի բանեան մեղացն վերծանելոյ :

(2) Արտօսրոյ այցելութեան : Զգուշէ յայցելութեան կամ 'ի հետոյ և մատախուղէ, այսինքն անփարատելի. կամ, այնպիսի մեղք ասացի՝ որ ոչ ընդ այցելութիւն կամ օգնութիւն :

(3) Պոռնիկ : Խմել նմանութեամբ, ըստ որում փոխաբերակ անառակ սիրոյն եղ՝ յանդառնալոյ ուեր անզգայականի հեշտասիրեալ :

(4) Նախանձորդիս բարերարին : Դիպող 'ի նախանձ բարեկութեան, ըստ բանին ա. կոր. ժա. 22. " Եթէ զնախանձ ինչ արկանիցեմք ես : ||

(5) Խոստովանել տեղւոյն : Դու ինքնին ասէ՝ խոստովանելով զանձնդ ըստ վերս մեղացդ, և վկայելով զխոստովանութեան մանհատարար անձինք, չենացեր քեզ անկեղծելի արդեւելն : Վասն զի թէպէտ անկեղծ խոստովանութիւնն աղաւնէ զմարդ յարատոյ և 'ի պարտեաց մեղացն, սակայն միանգամայն իբրև ձեռնարկով հաստատէ զպարտաւորութիւն իւր, այնու զի ոչ ևս ընտրէ կարէ ժխտել կամ անպարտ յայտնել զանձն :

(6) ՈՉ դատապարտ 'ի փոխարինեաց. իմն կար թամնձրացեալ. այսինքն ո՛չ զատանց 'ի քաղցրանց. այլ և հեռացեալ 'ի թմնձրացեալն գնին :

(7) ՈՉ խնդրեալս : Պղծեալ կամ զաղել 'ի մեղաց :

(8) ՈՉ նուազ յառաւելութեանց : Նուազեալ կամ կարօտ 'ի լինելոյ, կամ 'ի լաւութեանց :

(9) ՈՉ անարժանս 'ի ժողովուրդս : Այսինքն 'ի փրկելոց : Զարարածս ձեռս բանից իմն ընդհանրապէս, ո՛չ չարդ 'ի մէջ բարեաց, ո՛չ զառնութիւնք 'ի մէջ քաղցրութեանց, ո՛չ խաւար 'ի մէջ լուսաւորեցից են : Որբէլեաց, զգենեալս 'ի մէջ ժուժկալից : Հարստացեալս, անիծեալս, բանադրեալս 'ի մէջ օրհնելոց :

---

Մերովին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ամենակալն Քանն :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ :

# ԲԱՆ. Թ.

Ա. Եւ արդ՝ զի՞նչ արժանաւոր ըստ քեզ բանս բանաւոր շարադրեցից 'ի [1] կոչակ մաղթանաց մատենի այսր ողբերգութեան, ո՛վ անձն իմ թշուառ ամենապատկառ, և առ պատասխանիս բանից անբարբառ, անպիտան եմ և մերձ մատնակցութեան : Զի եթէ զլի՛ճս մի ծովուց 'ի [2] յորդութիւն դեղոյ յեղեղեցից, և զդաշտս տապարակս բաղմոց սահմանեալ 'ի տարածումն լայնութեան քարտեսի չափեցից, և զպուրակս յոգունց անտառաց՝ շամբից եղեգանց՝ 'ի հատուածս գրչութեան գրչաց կազմեցից, և ոչ զթիւ մի 'ի բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ

գրով սահմանի գրաւել։ Նա զի՝ թէ զմանրս լեզուա-
նմանու 'ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զլեառն
արարատեան 'ի կէտ ամբարձման ³ նժարի միոյ ար-
դարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնր
հարթութեան համազուգակցել։

Է. Ուռս ⁴ ամբարձուղէշ՝ ստուարատեղն՝ տերև-
ւալից՝ ունայն 'ի պտղոց, նմանակից յաւէտ հարա-
զատ այնր թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց. քանզի սա-
ղարթօք վարսից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք
կերպից՝ իբր պսակաւ իմիք պաճուճեալ, ⁵ բացակա-
նացն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեցի տնկոյն՝
խուզել զխնդրելին, գտցէ զքեզ ունայն 'ի բարեաց,
և զարշելի 'ի գեղեցկութեաց, ծաղր տեսողաց, և
նշաւակութիւք նախատողաց ։ ⁶ Ով եթէ ապաժա-
ման յանգգոյշ ժամուն՝ հերապանծ տունկն պտղա-
կորոյս անկենդան, որ դոյզն պատկերն է անպատ-
րաստից, եկն ընդ անիծիւք. և կամ երկիր տու-
գեալ ցօղով, ⁷ և ոչ բազմապատիկ զաւանդս արդա-
սեաց երկրագործութեան՝ տածողացն մատուցանէ,
լքեալ մաւանի. իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահ-
մանն բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ 'ի ժամու
իւրում պտղաւոր, իբր ոչ զնոյն կրեսցես պատիժ
նախնում տւակիդ ։ Վասն զի ⁸ զհամայնն ընկալար
'ի քեզ՝ անպակաս յառաւելութեաց, սկզբնաւորեալ
'ի մարդն առաջին՝ և մինչև 'ի սպառումն ծննդոց
նորին՝ զբերս գործոց նախորդաց, և զգիւտս նորոգս՝
ատելիս և անախորժելիս հատատողին զքեզ տոյ։

Ը. Եւ վասն զի եդի զքեզ նպատակ հանդէպ երե-
սաց տեսութեան մնացս՝ անձն իմ անպիտան, վիմօք
ձգելոց արձանաց բանից՝ իբր զանընդդել գաղան վայ-
րենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Որ թէպէտ
և ⁹ ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջ-
նումն պատասխանւոյն՝ իբր ընդ ստախի ումեմն՝ ընդ
անձին յօժարամիտ կամօք սգորիմ, ըստ իմաստունն
բանի. և զյոյզս մտաց խորհրդոց գաղտնեաց ¹⁰ իբր
զպղխաւորեալ յանդաւորուն չարութեն գործոց խոս-
տովանեալ, քեզ տարածեցից՝ ա̃ծ իմ և տ̃ր ։ Ով
սրով չափով չափեցից զանձինս ստգտանօք, 'ի քոցդ
աննուազ գթութեց՝ ¹¹ այսրէն չափեսցայց. ընկալեալ

զշնորհդ յաճախագոյնս՝ Է [12] մեծագունիցս պարտեաց։ Այլ որքան վիրացն հարուածք՝ անբժշկականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքանեօք չափովք կրկին առ սմին՝ և իմաստք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհռչակեալ լուսաւորեսցին. և [13] 'ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ առատութի՛ բարեբանեալ միշտ սպասկեսցի, ըստ խնկաւորդ քում առակի։ Օ՛ ի քո է փրկութիւն. և 'ի քէն է քաւութի՛. և աջով քո՝ նորոգութի՛. և մատամբ քո՝ զօրեղութի՛. և 'ի հրամանաց քոց՝ արդարութի՛. և յողորմութենէ քոց՝ ազատութիւն. և յերեսաց քոց՝ լուսաւորութի՛. և 'ի դիմաց քոց՝ զուարճութի՛. և հոգւովդ քո՝ բարութի՛. և օծմամբ իւղոյ քոյ՝ սփոփութի՛. և ցօղով շնորհի քոյ՝ զուարթութի՛. և դուստա մխիթարութի՛, և մոռացուցանես զվհատութի՛. և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութի՛ ողբոց 'ի ծաղր փոխես։ Այլ քեզ վայելէ է օրհնութի՛ գովութի՛ հանդերձ՝ յերկինս, [14] և յազգս հարցն՝ և 'ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի չքոյն մաղթանաց։ Կատակ կոչել յայտ առնէ, թէ զայս մատեանն ոչ է ոչ գրելով վասն իմ, և վասն իմն ինձ նման մեղաւորաց, կամիմ յայտնել 'ի սմա իբրև 'ի կատակի՝ թէ ով եմ ես, զինչ էի, զինչ եղէ, և զինչ կարեմ լինել այժմ և զկնի մահու, և ցանկամ զի որպէս կատակ՝ հաստատուն և հաւատարիմ մնասցէ։

(2) 'Ի յորախոհութենէ դեղոց։ Եթէ զլիճ մի փոխեսցես 'ի գոյն ստարկի, և զդարշաւ ապարինաց էացօք, բաղդեալ ընդարձակութեա՛ արարից իբրև առաբանեալ թուղթ, և գրաւորակ, զհրաշունս անասանաց եղերականց կարդեցից ինձ գրեալ, ոչ կարեմ զաւակաւն 'ի բարդեալ մեղացս 'ի գիր անցուցանել։

(3) Ըստ որքոյ ժամ [illegible]։ Ուղիղ կամ հաւատալ թուանի մեկոյ. եթէ առնէ՝ հանդերձեալ մեղացս 'ի մի կշիռ եդեալ զմեղսս ընդունաւոր, կամ զեկաւն սարսափանեալ՝ այսինքն զմասնս, ոչ հաւասարին միով չափով կշռել։

(4) Ծ [illegible]։ [illegible] կամ շառաւիղս. [illegible], հասա [illegible], կամ [illegible]։ Աստանօր յայլ եղանակ փոխէ զ[illegible]. իբրև զի կարող էր ոք խորհել և առնել առ [illegible] մեր, [illegible] կան 'ի քեզ նաև բանք բարիք և գովելիք. և զիմ [illegible] զայնցանէ լսեալ, զմեղաւորելեան միայն յեղեղես։ Այլ որ առնէ. զոյն իսկ յաճախէ ինձ պարտաւանս. զի թէ և կրօնաւորութի՛, և քահանայական կարգաւ և վարդապետութե՛ երևիմ իբրև ծառ բարձրացեալ, ամրացեալ ատովք, ներևայից, բայց ո՛չ են պտուղք. նման եմ անխծաղաղութ թզենւոյն էն։ Զայս յանդիմանութիւն առատակացուցանէ 'ի կարգին։

(5) Բ[illegible]։ Հեռաւորացն բաղձալի եւ վասն երկրին և կա

խնամով ատրեաց, այսինքն աստուածային բարեպաշտական նշանօք, որովք կայր պսակեալ զարդարեալ։ Բայց յորժամ անկողին ած մերձենայ առ քեզ՝ զպատուաւորն խնդրելով, գուցէ զքեզ գտանիցէ 'ի բարեաց, և՛ գործեն 'ի գեհենոյ, այսինքն զզուեալ 'ի նոյն խակ պերճեցկութէ ատրեացն մի անպատուութեանց. կմ, 'ի մէջ գեղեցկաց զարդուց։

(6) [illegible]։ Եթէ յանդգնեալ ժամանակին, [illegible], յանկարծակի ժամու առաւօտին ատրեացդ թեւեննի անգղեալ՝ որ փոքր օրինակ է անպատրաստ կամ հեղգ անձանց, անէծս ընկալեալ. խակ զաւակն բանաւոր՝ որում միշտ է ժամանակ բարեգործութեան, առ կայն և ոչ գտանէ 'ի կարեւոր ժամուն, կամ և ոչ երբեմն առանելով պտուղ, [illegible], զհանգոյց ոչ նոյնպէս պատմեսցիս ըստ նախասացեալ օրինակիդ։

(7) [illegible] .... [illegible], [illegible]։ մի օրին. [illegible] .... [illegible], [illegible]։

(8) [illegible] 'ի [illegible]։ Զամենայն չարիս՝ որք են բերք նանրութեան և առակելք այ, կամ զմեղս ամենեցուն 'ի քեզ ընկալեալ, անպակաս յաւ-
իտենութեանց, լինել, առատակեալպէս, ակնեալ յառաջին մարդոյն մինչև 'ի վերջին ծննդոց նորա։ Զայս կամ ըստ նմանութեան առէ, երբև թէ նման ամ մեղուցելոց՝ որ եղեն և լինելոց են, մեղաց. և կամ զխմլատն ամ մարդկան՝ որ գալոց են, կարծէ զարօթս ըս առակելոյն 'ի բանն, է. 2. մի այն մինչև 'ի վերջին մեղուցեալն յարմարէ զբանն։

(9) [illegible]։ Թիւեալէս և չեմ արժանի կոչել որդւոց, բայց զգաղթ արդարոյ առաքելոց, այսինքն զամբաստանութիւն անձին, ըստ բանին խմաստնոյն. (առակ. ժէ. 17.) * Արդարն անձին իւրում չարախօսէ 'ի սկզբան բանից իւրոց։ *

(10) [illegible]։ Զգաստանի խորհրդոց մտածութիւն՝ երբև զլլացեալ կատարութեան չար գործոց խոստովանելով։

(11) [illegible]։ Որպէս զի որչափ եւ մեղաւորեմ զանձն իմ, զխ խառին ընկալեալց զչափ նեղութեանն յանպակասելի գթութեց քոց։

(12) [illegible]։ Այսինքն, փոխանակ առաւելագոյն պատուածեաց. յայլ ապաշխարել կայր, ըստ [illegible]. բայց այժմու և գեղեալ ըստ լաւ օրինակին՝ առաւել յարմար է։

(13) 'Ի [illegible]։ 'Ի չատութէ պատրասուցն առաւել եւ զողս առաւ թողութիւն փոխանակ, ըստ քում առակին, թէ մտաւ ցաւ առ նա պատրաստական մի բերք քանքարոյ, և 'ի չկարելն հատուցանել զանն շնորհեաց։ (մատթ. ժը. 24. 27։)

(14) [illegible]։ Քեզ վայել է օրհնութիւն ոչ այժմ միայն, կամ զոր այժմ կարեմք մատուցանել, այլ և ամ օրհնութիւն որ լինէր յառաջին նոց հարցն, կամ 'ի ժամանակս նախահարցն, և որ յետ այսր լինելոց 'ի ծննդոց նոցա։ Լաւելեայն յայս առնէ, թէ որպէս զկշռաւորանս մեղացն յառաջին մարդոյն մինչև 'ի յետինն յարմարեալ յանձն իւր, ըստ Նը. Ծ. նոյնպէս ցանկայ զամենեցուն օրհնութիւնն ընծայել ԱՅ. որպէս յանցանացն զանձնէ՝ զամ մեղուցելոց կերպարանս զգեցեալ զանձնս՝ թէպէտև բարեաւ առնելով, նոյնպէս յարդարոցուցանել և 'ի մեծացուցանել զԱԾ՝ առաւելագոյն յօժարութը յինքն առնու զբերան և զնիւս ամ արդարոց՝ որ յերկինս, և որ յերկիր։

Մերոյին յաւելուած իւրին հեծութեանն՝ նորին հոգւոյ, առ նոյն
աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ. Ժ.

Ա. Արդ՝ քանզի միապէս մատնեալ կորստեան՝ և [1] զղջմամբ ուժգնապէս, և մեղանչելոյ մոլեգնաբար. զի թէ և օտարացեալ իմն են 'ի մի- մեանց այլայլութիւք նմանութեանց, սակայն զկերպա- րանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վհատութեան ծնունդս արտադրեմ ։ Ո՛ի մինն զհզօրին ձեռն՝ իբր ապիկար թերահաւատէ. իսկ միւսն՝ ըստ նմանութեան քառոտանեաց պաճարեղի- նաց՝ յանզգայս եղեալ, զյուսոյն առասան խզէ. վն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքշեալ՝ հանապազ խնդայ սատանայ. իսկ երկրորդաւն՝ ըստ նմանութեան լափլիզօղ դժոխարովայն գազանի, իբր կերակրով արեամբ պարարի ։

Բ. Արդ՝ [2] իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ, և յափն մահու ժամանեալ՝ դոյզն ինչ դարձուածս շնչոյ ընկալեալ, և յոգի կենդանի եկեալ կազդուրեցայց, պատսպարեցայց, կանգնեցայց, յա- րեայց յանկենդանականս կորստենէ, օժանդակեալ քո ի ձեռամբն՝ որ գթածն է յամենայնի. 'ի բարե- րար յերկնաւոր հօրէն՝ փրկութեան և բժշկութեան պտուղ ընձեռեալ ինձ [3] մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս ։ Այս սկզբնաւոր ողբերգութեան այսք աղերսանաց՝ զհաւատոյն շինուած կառուցից. քանզի և [4] ոմն 'ի նախնեացն սոքիմբք զլինեալ, փոխեցաւ իսկոյն յանմահականն վիճակ վերին. զապաշխարու- թեան դեղ ընկալեալ, ապաշաւանաց թօշակաւն ըղ- դրաւականն անեղծութեան ատեան ժառանգեաց ։ 'Ի վեր քան՝ զորոց առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէսն մրցանակին յերկրի կատարեալ, ապա- գայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և ան- տեսիցն ճոխութեամբ փարթամացան ։ Իսկ [5] զեր- րախոյս ծերունի պաշտելի բանին՝ յիշեալ առ սմին,

զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն ։ 6
Տ՛ զի և զչափն ընտրականաց բարեմասնութեան քոյ
հաճեցելոցն՝ զննեալ ատամնօք, զայս պատկեր բանի
ընկալայք նախնի գահերէց, առ 'ի սրբութեանցն մուտ
ավելիմք հանդերձել. առանց որոյ և ոչ ոքրն փառաց՝
զիւրսն առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ
ոչ նախ՝ լծակից խնդրեաց բարերարութեան իւրոյ
զհաւատոյն մեր. ուստի և 7 կեանս ընձեռել զօրէ
ինքնիշխան բաւականութեան՝ առընթեր գոլով քոյ.
քանզի հաւատք քո կեցուցին զքեզ՝ օրհնաբանեալն
քոյ բերան վկայեաց։ Քանզի արդարև 8 սեան տե-
ւութի, և կատարեալ իմաստութի, և առ քո ըն-
տանութի, և բարձրելոյն ծանօթութի հաւատոց
մամն՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ 9 յարաձգեալ
մնայ անվթար և անփակելի, պատուակից գոլով սի-
րոյ և յուսոյ ։ Զի եթէ 10 փոքու սերմանի գոյի՝
հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք՝ զլեռանց
մեծութի փոխէ զօրեղապէս 'ի սիրտս ծովու, ապա
յիրաւի ընկալայք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կե-
նաց՝ աներկմիտ պաշտօն առ քո. 11 որ զապառնիսն
և զծածկեալսն՝ առանց երկբայութեան 'ի հոգւոյն աչօ
տեսանէ, 12 երրորդութեանն փառատրելի անուամբն
պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն գասեալ և յուսոյ։
Զի թէ՝ և զերիսն հատուածս առանձնաւորականս
'ի մի և 'ի նոյն խորհուրդ դիտեսցես, յաւէտ մե-
ծացիս նովաւ 'ի յքո. քանզի թէ հաւատաս 'ի նա,
և սիրես. որով և յուսաս աներևութից պարգևաց
նորին ։ Նմա փառք յաւիտեանս. ամէն ։

---

(1) [illegible]

ըն զմարդ ։ Իսկ Եբրայեցւոցն, անձնապէս մեղանչելովն, իբրև զառաջին ցեղ-
մացոց, այսինքն ինձ ապաշխարութեան լինելով լսելի զարդեան ․ և Դժոխոց-
վոյն, որոյ որովայնն անյագ է իբրև զդժոխս ․ կամ բուռն իսկ դժոխքն են
որովայն առատանայի ․ այսու սոյ մարդոյ յայտնապէս մեղանչել, և նորա
մեղացն պարապարել հեշտանաց ։

(2) Իբր զծանեալ բազմահարուածեան ։ Իբրև զծեծեալ, և 'ի բազում ան-
դիս մարմնոյն հարուածեալ կամ ջարդեալ ․ հեծանա ․ հասու զաւազա-
նաւ կամ բրով ։ Մարթ է և ոչ խմանել, բազմահարուածեան հեծանա ․ յա
առատիկ հարկանօղ զաւազանաւ ։ յորժամ ծակա, 'ի զաւակն մահու հասանել,
փոքր մի ոգի առնից, և զօրացեալ կանգնեցայց, են ։

(3) Մեղուցելոյս ։ Ձ օրէն ․ Մեղաւորիս ։

(4) Որ 'ի նախնեացն, ենովք, առաքինեաց ըննեալ ․ այլ օրէն ․ առաքինեաց, այս-
ինքն հաւատովքն զօրացեալ բառ առաքելոյ, (Երեմ ․ Գլ ․ 5 ․) ար-
դարոյ մահկանացու կենաց փոխեցաւ ․ զապաշխարութեն ըստ ընկալեալ,
հաւատոյն զօրութեն առաջնորդելով 'ի կեանս յայս, այնու իբրև Թողու-
կաւ զառհաւատչեայն անեղծութեն ժառանգեաց ապքն, այսինքն յա-
ռաջ քան զմեռանելն ։ 'Ի սոյն յարելի է և որ զկնին ․ 'Ի վեր քան զորս ․
այսինքն ենովք զանեղծութիւնն ժառանգեաց առաւել քան զնոսա,
զորս առաջեալն յեշէ ըստ նմա, այսինքն քան զադէլ, քան զաբրահամ,
են ․ զի ենովք իբր իրօք ժառանգեաց յառաջ քան զմահն ․ իսկ այլքն
առաջնոյնց և երկրորդացն յուսոյ հաւատոյն ․ այսինքն Թէպէտև զհամ-
դէս մշտացն յաղագս Աստուծոյ բովանդակ կատարեցին յերկրի, բայց առա-
ջայ երկնաւոր հատուցմանցն յուսով ակնածեցին յետ մահուն ․ կամ 'ի
յայս հանդերձեալ երկնաւոր բարեացն՝ հաւատովք կացին մնացին, ա-
ռանց մասամբ ինչ զանէ ժառանգելոյ առաւել ։ Վասն առաջնորդու-
Թեան ենովքայ անս զկնի ․ Գլ ․ լծ ․ 9 ։

(5) Ձկնաձայն Փրանի ․ զկրօղոր հաւատոյն յեշեցից զերբումնականն, Թէ
ամ ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայ ։

(6) Է՛ գի և գլուխ ։ Է՛ և այս, զի եԹէ զկնի համեմատութեն ընտիր և
ամենահամձայ առաքինութեցն քննեցաւք, զգանն հաւատոյ զամենեքե նախն
փոհերէց, առաջին և գլխաւոր քան զայլս ․ եբր զի հաւատոյ զաւանու-
Թը պատուիրանաւ որք առ 'ի սրբութեան նոսա, առ 'ի մտանել 'ի սրբութիւն
եկեղեցւոյ մկրտութեն ․ որով շնորհազարդեալք՝ այլ բարեգործութեանքն
համձայ լինին այ ։

(7) Կենաց ընծայեալ գիրկ ։ Կեանս հոգևոր և մարմնաւոր զորէ առնել հա-
ւատոյն միայն իբրով զօրութը առանց օժանդակութեն այլոց, որպէս արդարու-
Թե, ճգնութեց, և այլ բարի գործոց՝ որք ոչ հայցին անմիջաբար յան ․
իսկ հաւատք ընծայեն գիրկ այ, անմիջաբար յան հայելով, ունի զայն
զօրութիւն ․ ուստի և քն հաւատոյն առայր զգաշխութիւնն ։

(8) Սեան փետուրն ։ Հաւատքն է յարակ կամ պայծառ անեութիւն
խմանալեացն և ամպոց ․ զի Թէպէտ բառ իմաստն նոյն է, բայց համե-
մատել առ ըմբռնողն լոյս մտաց, առաւել պայծառ առ զնա զամե-
նեան, զոր ընդունի լուսով ընդ աղօտ միայն, և կամ կարծեաց ճանա-
չեմք ։ Կորացեալ խնամարքն, իբրև հաստատեալ յանուանս մկայութիւնն
այ, քան զպատուական խմաստութենն հաստատեալ 'ի մերձակայ լոյս մտաց ։
Առ ամ ընդամն ․ զի հաւատոցն ճանաչեմք առաւել մտախեք առ ամ,
և նմանիմք ամեղէն մտացն ։ Բարձրեալոյն ծանօթութն, այսինքն այ իբրև
գերբնական արարչի և վախճանի ։ Երկնիւն և ընդրեալ անուն ․ այնչափ
ընդարձեալ և ազնուական՝ որ առհասարակ միայն կոչեցաւ, և ընտիր ամե-
նայնցն 'ի նմանէ անուանադրեցան՝ հաւատացեալ ։ Եւս, ընտիր անուն
ասէ հաւատ քն առաւելագոյնունն ․ իբրև Թէ ոչ ունող զհաւա կամ սխրքն,

[illegible]

ժա. 3 :

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible]

(12) [illegible] ( [illegible] 13 . ) * [illegible] 5 . [illegible] 4 . [illegible] 3 . [illegible]

յանձ․ զի թէ հաւատաս ՚ի նա իբրև յանձնէ բարւոք եւ ՚ի բարերարէ, ունիս եւս զնա․ եւ անկեալով՝ յուսոյ վայելել յանձնելոյն պարգևս նորա : Այսմ քաջ միաբանին աստուածային գրոց յանդորրոյ մեծագնոյ հաւատացելոցն․ ձեռա-ւ․ յառաջագոյն հաւատոյ : * Նախ յառաջնորդն հաւատոյ մասնս․ եւ երկ-րորդ հաւատոյ, սէրն․ եւ երրորդ սիրոյ, յուսոյ․ եւ երրորդ յուսոյ, աստուա-ծայնոյ․ եւ երրորդ աստուածայնոյ, շնորհ․ եւ երրորդ շնորհի, մերձանոյ || : Եւ այս է մեծամասնն ՚ի յանձ, զոր ասաց սուրբ [illegible] : Կամ զապաշխարեալ՝ [illegible] հա-ւատացելոյ զմեծագոյն անձանց ասէ, որք տուողին անձնաւորութեան․ որպէս կա-չէ եւ ՚ի լանին խոս․ 1 ․ որոյ եթէ ՚ի մի խորհրդոյ զխոսեցեր ասէ՝ Ք եւ-րից առաքինութեանց, այսինքն զհաւատոյն՝ հօր նմանեցուցանելով, զյուսն որդւոյ, եւ զսէրն՝ հոգւոյն սրբոյ, այսու յորդորելով ՚ի բարիս՝ մեծամասն յանձ․ քանզի ՚ի մեր առանձնում՝ թէ որպէս ոչ է հայր միայնակ առանց որդւոյ եւ հոգւոյ, այնպէս ոչ է հաւատք հանճարական առանց յուսոյ եւ սիրոյ․ ուստի յորժամ հաւատամ ՚ի նա, ընդ նմին եւ սիրել եւ յուսալ : Կամ խնամ այսպէս, որպէս զոր անձն մեծագոյն կարգադրեցեր հաւատով, Ք նմա եւ զայլ անձինս զատանես վասն համեմատութեան, այնպէս զսէր յե-րից մեծագունական առաքինութեանցս որոյ մասն յանձին ունիցիս, առա-նու եւ զյոյսն՝ որք ընդ մեծամեծս կապեալ կան․ եւ այնպէս մեծամասն նա-քեզ յանձ լինելոյ արժանի գործոց եւ փառաց յերկինս :

---

Մերոյին յառաջեղեալ երկրին հեծութեն՝ նորին հոլովի, առ նոյն աղերս մաղթանաց բանի :
՚Ի խորոց սրտից խօսք ընդ Այ :

# ԲԱՆ. ԺԲ.

ա. Նաեւ արդ՝ ես յետինս դաւանողաց՝ ունայն ՚ի բարեաց, նայեցեալ խորհրդով մտացս ՚ի սկզբնաւորն իմ եղելութի ՚ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից, յուսով հաւատամ յնի քեզ՝ առնել զոր կամի : Բանզի հաւատացի, վասն որոյ եւ խօսեցայ խրատեալ պօղոսիւ, ուսեալ ՚ի դաւթայ, թէ եւ արդ կենդանի մաղթանք նոցա այց ինձ արասցէ․ որպէս հաւատովք ճանաչել զնա, եւ զզօրութի յարութե նորա, ըստ առաքելոյ, եւ զհաղորդութի չարչարանաց նորա, եւ որ զկնի բերին ասացեալքն : Այցորդ է սմին եւ յոյժ նմանատիպ՝ հաւատալն իսկապէս եւ ՚ի նորոգս այս փոխադրութի, որ ՚ի մեղացն ՚ի քաւութիւն, եւ [2] ՚ի չարագործութէ յարդարութի, եւ յանմաքրութէ ՚ի սրբութի, եւ յանքաւելեացս պարտեաց [3] մահու յանցանաց՝ յանդատապարտն երանութի, եւ ՚ի ծառայական կապանացս՝ յերկնաւորն ազատութի : Բանզի [4] զիարդ ոչ արդեօք չքնաղ քան

զբան՝ և 'ի մթուէ երկեւանութեան խաւարի զտեալ՝ և
աստուածով օժանդակեալ և օգնեալ սիրտ մեղաւորի,
որ է մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին հեծէ հոգեպս :
Որ թէպէտ և յամբարձմանէ բարձրութեան գերադա-
նիցն կայից՝ տորապատուզեալ ծանրութեան յանդնդայինն
վհին խորխորատ գբոյն կործանման, [5] նորագիւտ մե-
ղօքն անջրեւեօք, ունի և նշխար նշուլից՝ փրկութեան
կենաց հպաւոր, [6] իբր կայծակն լուսոյ պահեցեալ 'ի
միտս և յոգի. որպէս զհուրն նշանաւոր և զարմանա-
ւոր թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրա-
մանի [7] 'ի յատակս ներքինս նիրհեալ ջրհորոցն : Աւա-
տի և մեղուցելոյն իսպառ թաղծելոյ, և ակնկալու-
թի բարւոյն բարձելոյ, և համարձակութի շնորհին
լքելոյ, յուսալ վերստին անդրէն միւսանգամ նա-
խապարգևիցն փառազարդութեց դարձեալ հասա-
նել. քանզի և յածուստ անդուստ հանդերձի և այս՝
ներգործիլ առ սոյնս. վասն զի սա զտուողին զօրու-
թի՝ ամենահնար աւետարանէ : Զոր խունկ հաճու-
թեն մեծապէս հոտոտի տծ, քան յամենայն բուրումն
անուշից, և քան 'ի խառնեալն երբեմն աղացմամբ
'ի սպաս խորանին, որ է կերպարան անձանց խոնար-
հից զիջեալ բեկութե՝ առ 'ի միութի նոյն նմանու-
թեն : Իսա որում հարցեալ փրկչին ամենից՝ ցոմանս
տխտացեալս տեսանելեօք, հաւատայք ասելով առ
այդ թէ կարօղ եմ առնել ձեզ զայդ. ոչ պարգևեաց
աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն գրաւ ըն-
կալաւ : Քանզի զինչ քան զմեռելութի քառօրեայն
դիոյ՝ առ կենդանութի մեզ անյուսագոյն, [8] առ որ
կանանցն ժամանելոց 'ի յուղս արարչին՝ հաւատոցն
հանդերձանօք, անյապաղաբար զփառացն տյ տեսին
զհանդէս՝ 'ի յեղբօրն կենդանութի :

Է. Իսկ [9] աստուածին անկապուտ շնորհին մնացելոյ
զինի մեղանացն՝ հզօրագոյն են վկայք : Նախ՝ ենովք.
զինի ահարոնի. յետ նոցա դաւիթ. դարձեալ և պե-
տրոս. ընդ սոսա և փոքրն եղիազար, որ 'ի մեծէն տյ
տղորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ : Աւելորդ է առ-
այս և բանն աւակի անառակ որդւոյն. Թողում
զպոռնիկն՝ որ 'ի տնէ գովեցաւ. և զմաքսաւորն՝ որ
'ի բարեգործէն յիշատակեցաւ. և զաւազակն երջա-

նիկ՝ որ յարձակումն վերջին չնչոյն հաւատովքն պատա-
կեցաւ. Եւ [10] զոր անքաւելին էն պարտիքն՝ զհաղոր-
դեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխա-
ւորն ընտրելոց պօղոս, որ երբեմն նախնին էր անօ-
րինաց։ Յորոց ոմանք ծանօթութի օրինին գլորեալք,
անդրէն կանգնեցան բիւրապատկեան գերազանցու-
թե [11] քան զնախակրօնիցն առաւելութի։ Իսկ [12] որ
նախ քան զօրինակին տուչութի՝ զաւանդն պահեալ
հայրենի, մերձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնա-
հօրն դաւանուէ, որ և զնախնւոյն պարտիս ինքեան
վարկուցեալ, զնորայսն՝ իւրովքն տուժեաց կրից
տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ 'ի յերկրի,
այլ չարչարելեաւն մարմնովն քանակաւնաց բնութե
կենաց կարապետ՝ յաղթօղ զօրապէս բռնութեան
մահու փոխեցաւ։ [13] Իսկ ոմանք 'ի բուսոյ տհաս հա-
սակին չարութեամբն յերկարաձգեալ, 'ի կատարեալ
տիս ժամանակին ոչ 'ի բարձրութեանն կայից հո-
սեցան, քան թէ 'ի ստորնականաց թշուառութեանց
դժնէից կենացս 'ի կամարն երկնից համբարձան։ [14] Նու-
թէ այն ժամանեաց կանխաւ՝ զօրացեալ 'ի չարեացն
դարձ, որ մինչև յոսկեղէն նիւթ յեզանակեալ հո-
ղոյս գոյուէ, և պատկերն արքունի՝ 'ի պատիւ կեր-
պիս մերոյ՝ նկարեալ արքունականն քանդակուածով,
անկորուստ և անփոխադրիր և յաղթօղ դաւաճա-
նութեան զմերս ենթադրեալ բնութի, ապա առա-
ւել յուսալի է այժմ մերկապարանոց լուսաւորու-
թի անքօղ և անվերարկու՝ տերամբ քմիւ ուխտեալ.
որով և միշտ հաստատեալ պահի 'ի մեզ բանն տրու-
նի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութե և
կնիք հաստատութե՝ առ հաշտարարն միջնորդ՝ երկ-
նային անմահ կենդանի և մշտնջենաւոր բարեխօս.
Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի, և
անփոխադրելի սահմանի, և ալարչաւանդ պայմա-
նի, [15] համբուրեմ հաւատոց շրթամբք զպատկեր բա-
նիս, և ակնունիմ փառացն շնորհի. քանզի արդարև
յարդարացուցանելն զմեզ Տյ՝ ոչ ոք զօրէ դատա-
պարտ առնել, ըստ առաքելական բանիս սահ-
մանի։

Դ. Այլ [16] յայս անստուերագիր վստահուէ ապաս-

տան, կամ կործանեալդ՝ կանգուն. Թշուառացեալդ՝ յաղթօղ. վրիպեալդ՝ 'ի դարձն կենդանականն. անե-նաթշուառ չարագործս՝ 'ի յոյսն. մահու մատնեցեալդ՝ 'ի կեանսն. ընդ ապականութ(եան) վաճառեալդ՝ 'ի ձիրն. դժոխային գործովք գրաւեալդ՝ 'ի լոյսն. ստորնա-սէր անասնականցաղդ՝ յերկինս. կրկին գայթակ-ղեալդ՝ 'ի վերստին փրկութիւն. մեղօք կապեցեալդ՝ 'ի հանգստեանն խոստումն. անբժշկական վիրօք վա-րանեալդ՝ 'ի դեղն անմահացուցիչ. ստամբակեալս վայրագութ(եամ)բ՝ 'ի սանձն հանդարտութե(ան). արացեալս վարատականն՝ 'ի կոչումն. ապառուեմ դժնդակս՝ 'ի հեզութիւն. ընդդիմաբան լուտացօղս՝ 'ի ներումն: ՚՚

'Ի Քս Յս, և 'ի հայր նորին հզօր և ահաւոր, յանուն և 'ի կամս բարերարութե(ան) հոգւոյն ճշմարտի. օրհնա-բանեալ էսկութեանն և մի իշխութեն՝ զօրութիւն և արքայութի, մեծութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) 'Ի [illegible]

(2) 'Ի չարագործութե(ն): Չ. օրին. 'Ի չարգործութե:

(3) Մահու յանցանաց: Չ. օրին. [illegible] յանցանաց: և նոյն [illegible]

(4) [illegible]

զօրութիւնն էր․ որ ասէին 'ի մեկնութեանն հոգւոյն Նորա, իբրև զհրաշալի հուր առաքելոցն, ծնկաչոքեալ, թանձրացեալ 'ի հրամանէն էր իբրև սփռեալ 'ի յառաջիկայ Ներհնէլ, անջրդի Ջրհորոցն, որ և խնկոյն վառեցաւ ։ (Բ․ Մակաբ․ Ա․ 19․ 20 ։) Որոց Ն Միղուացելոյն, որ բաղդատմամբ սրբեցաւ է, և անհնարութիւն բարւոյն բարձեալ 'ի նմանէ, և վստահութիւն ընդունելոյ զշնորհն թուլացեալ, մնայ տակաւին յուսով՝ մերասին հաստատելոյ Նախապարգևուցն ջատագովութեանց, յառաջադոյն պարգևեալ շնորհացն և առաքինութեանց՝ որք փառաւորեցին զհոգին ։ Թանուն Ն յանձնառ․ այս կայծակն հաւատոյ և յուսոյ՝ որ ներգործէ 'ի սիրտ մեղաւորին, յետ պատարագատն 'ի նոսա․ զի զօրութիւն աղաղակացուցանողին ցուցցէ լինել անմեղակարօղ ։ Կամ, յետ անօրէնն այս, զի թողլ տալով Նորա անկցի մարդ 'ի մեղս․ զի յետոյ կանգնելով զնա 'ի մեղաց՝ երևեսցի ամենազօրութիւնն էր ։ Ցոյ խոսնի ։ յայս հաւատոյ զօրօսն առաւել հաճոյ էր, քան 'ի ծխանելիս հեն օրինաց խառնեալս 'ի զանազան խնկոց աղացելոց, որ էր օրինակ անձանց ընկելոց զզջմամբ․ առ 'ի ծառայէն Նոյն Նմանութէ, այսինքն առ 'ի ունել զնոյն նմանութիւն․ զի որպէս այն խունկք մանրեալք և 'ի հուր արկեալ վառէին առ 'ի պատիւ էր, Նոյնպէս սիրտ մեղաւորի զզջմամբն և ապաշխարութեամբ խորտակեալ վառեսցի 'ի սէր էր․

(5) Նուրագիլոփ Միղօփն անջրէլուօփ ։ Այս չէք յօրինակս ինչ ։

(6) Իէր կայծանին լուսոյ ։ Յ․ օրին․ Իէր կայծանան լուսոյ ։

(7) 'Ի յափափս Նէրթինս Նիրհէալ Ջրհորոյն ։ Այսպէս ունին մեր օրինակքն․ հանաձայն ընագրի (Բ․ Մակաբ․ Ա․ 19․) ուր այլ տառագրեալ գնէր եղանի․ Նէրթին Նիրհէալ Ջրհորոյն ։

(8) Առ որ խնամոյն ։ Քան զմեծ ալութիւն չորեքօրեայ վախճանելոյ չէք ինչ անյուսալի առ 'ի կենդանանալ․ և սակայն վասն այնր կանանցն, այսինքն քերցն ղազարու ծանմանելով յառաջ քան հաւատովք, անսփն զփառսն էր 'ի կենդանանալ եղբօր իւրեանց ։

(9) Աղօթքն անխարդախ շնորհին ։ Իսկ թէ այսպէս, կամ զարձեալ անկորուսա մնայ շնորհն յետ մեղաց, բազում են վկայք ։ Նախ՝ Եսայի, որ ապաշխարելով ընդ մեղս Նախահօրն, կամ ընդ իւր մեղսն, վայելեաց ըստ մասին զանմահութիւնն՝ զոր կորոյս ադամ ։ Կարծիք ապաշխարութեանն Եսայեայ՝ թուի սաստանելով 'ի փիլոնէ իմաստասիրէ․ զի սա 'ի լուծմունս ծննդոց․ (քան Ա․ համար 82․) յասելոյն թէ եռամք յետ ծնանելոյն զմաթուսաղա՝ հաճոյ եղև էր, մեկնաբերէ՝ թէ յառաջին մեղուցեալ, յետոյ ապաշխարեաց ։ Եւ ահարոն՝ յետ մեղաց որթագործութեան ոչ կորոյս զքահանայութիւնն ։ Ընդ որս Ն գոգըն Եղիազար ։ Այս եղիազար ոչ է սաուրեանն․ (Ա․ մակաբ․ Բ․ 5․) ոչ եղիազարոս ծերն՝ որ նահատակեցաւ ։ (Բ․ մակ․ Զ․ 18 ։) և ոչ միւս եղիազար քահանայ, որ պատմի (Դ․ մակաբ․ Զ․ 1․) Զի զոյգանէ ոչ պատմեն գիրք՝ մեղուցեալ ինչ և ապաշխարեալ ։ Ամենք ըստ հին լծ․ խմանան զեղիազար որդի ահարոնի՝ փոքր քան զնադաբ և զաբիուդ․ իբրև թէ յանցուցեալ իցէ չկամելով ճաշակել զմասն մեղացն ։ (Ղևտ․ Ժ․ 16 ։) Սակայն յայտ ոչ մեղաւ նա, և ոչ ապաշխարութիւն եցոյց․ ուստի և մովսէս լուեալ յահարոնէ զպատճառս չուտելոյն՝ հաւանեցաւ ։ Այլս մնայ եմանել զեղիազար կրտսեր որդի մովսեսի․ (Ելից․ ԺԲ․ 4 ։) որ անթլփատ գոլով ընդդէմ հրամանին էր, մինչզեռ զառնայր մովսէս յեգիպտոս, հրեշտակ մն կամէր սպանանել զնա, այսինքն կամ զմովսէս, և կամ առաւել զմանուկն վասն անթլփատութեանն․ և 'ի թլփատել զնա մօրն՝ Ներբեաց հրեշտակին ։ (Ելից․ Դ․ 25 ։) Արդ՝ այն հեղուն սարեան եղև եղիազարու գործ ապաշխարութեան․ զոր տալով 'ի մանհունսնէն․

[illegible]

(10) Եւ [illegible]

(11) [illegible]

(12) Որ [illegible]

(13) [illegible]

(14) Եւ [illegible]

կերպարիւ մարդոյ ; անհնարութ և անպայմանելի մնալով, և ընծայելով յաղթող պատերազմացն առատանայի, առաւել ապա յետ ընծայելոյ այնր նմին՝ առաւելու ևս յաւսարկ է և այլն ։

(15) Համեմատեմ . . . զրկամիկէր բանիս ։ Ընդունելով համառօտով զմշտնջենաւորութիւն բանիս . և անճառնելով ծնողացն ընդրել, շնորհեն առաքելութեան՝ որ է ներքին փառաւորն երկնայնոց, կամ, շնորհեն՝ որ է փառք հոգւոյ ։

(16) Ցայս անօրութէրանգիր ։ Ցայսչափ յայտնի զըրկեալ, կամ յանշնչելի յուսադրութիւն առաջնորդեալ, կործանեալս մեղօք՝ կանգնումն կամ համառօտով ։ Վշտացեալս . ախտացեալս, կամ մեղուցեալս՝ ՚ի դուրս, այսինքն կամ, համառօտոյն ՚ի գործն, ՚ի յոյսն, ՚ի կեանսն, ևն ։ Սրտացեալս Նո- րափոխեալ . փոխեցեալս և Թափանցեալս զինքն ՚ի կոչումն նոյ ։ առա- ռօտ . խելս, յանձնումն՝ համառօտով ՚ի հեղութիւնն ։ ըստադրօղս . չարա- բանս, անխծանօղս համառօտով ՚ի նկրումն մխիթարող խնոց, ևն ։

(17) ՚Ի ՏՌ ՅՌ ։ Այս մարդահատութիւն իմ համառօտ կամ յաղթող զօրութեան, և հօր նորա, և անուանք և կամք հոգւոյն նոյ, որոց օրհնաբանն նեալ խնկութեն՝ կամ եղիցի զօրութիւն, աղօթութիւն ևն ։

Սերովբէին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հօնողէ, առ նոյն ողբերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԺԲ.

ա. Եւ արդ՝ քանզի յաւէտ յառաջնում զըղջմանն յուսահատութեան բանիւ լքայ, և տարակուսանաց հեծանաւն ՚ի մահ ձաղկեցայ, առտանօր ՚ի յաւոյն կերպարան փոխեալ յարգահատել համարձակեցայց, զերրորդումն որ կարդալով յօգնականութիւն ինձ մեղաւորիս ։ Որ և անդստին իսկ յօրհնաբանելն և ՚ի դաւանելն զկենդանարարն բնաւից ԱԾ, իսկոյն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեան անուան շնորհաձիրն բարերարի՝ մահացելոյս է կենդանութիւն, ըստ մարգարէին նախաձայնութեան, թէ [2] որ կարդայ զանուն Տն, նա կեցցէ ։ Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութեան նորին . [3] ոչ եթէ վասն պարգևաց նորա մատուցեալ յողորմ դեգերիմ, այլ իբր զկենդանութիւն իսկապէս, և զշնչոյ տուրևառութիւն հաւաստի, առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացումն . զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերիմ ։ Ոչ ՚ի տուրսն, այլ ՚ի տուողն յաւէտ կարօտիմ . ոչ փառացն եմ ըղձակալ, այլ փառաւո-

րեալն է համբուրելի․ ոչ կենացն փափագանօք, այլ
կենարարին յիշատակաւն միշտ ձենձերիմ․[4] ոչ վայե-
լիցն տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տեսչա-
նօք՝ յերկիւղամանց աստի կականիմ․ ոչ զհանգիստն
խնդրեմ, այլ [5] զհանգուցչին զերեսս աղաչեմ․ ոչ
հարսնարանին խնճոյիւք, այլ փեսային անձկութեամբ
մաշիմ։ ’Ի ձեռն որոյ զօրութեան վստահապէս ակնկա-
լութեամբ [6] վերագրեցելոց յանցանօք բեռանց՝ աներկ-
միտ յուսով հաւատամ ’ի կարողին ձեռն [7] ապաստա-
նեալ, ոչ քաւութեան միայն հասանել, այլ զնոյն ինքն
տեսանել՝ յողորմութիւն և ’ի գթութիւն և յերկնիցն
ժառանգութիւն․ թէպէտ և յոյժ եմ պարտա-
գրելի։

Է․ Եւ արդ՝ բազում պատկառանօք ամաչեցելոյս
դիմաց կորացելոյ, [8] զմիջնորդ աղերսման կափուցմանց
երկակի շրթանցս՝ արժանափակ աղխիւ կարկելոց՝
առ անհամարձակ լեզուիս շարժութիւն, նորոգեցից ’ի
յերգ հառաչման պաղատանաց յեղանակութեանցս
աղիողորմ հեծեծանաց՝ ’ի բարձունս աղաղակելոյ։

## Մաղթանք զօրաւորք արհաւրաց Գեհենայնոյ։

Ա․ Ընկալ քաղցրութեամբ տէր ած հզօր՝ զդառնա-
ցողիս զաղաչանս․ մատիր գթութեամբ առ
պատկառեալս դիմօք․ փարատեա ամենապարգև՝ զա-
մօթական տխրութիւնս․ բարձ յինէն ողորմած՝ [9] զան-
բերելի ծանրութիւնս․ անջրպետեա հնարաւոր՝ զմա-
հացու կրթութիւնս․ աւարեա միշտ յաղթօղ՝ զխաբո-
ղին հաճութիւնս․ բացադրեա վերնային՝ զմոլելոյն
մառախուղ․ կնքեա կեցուցիչ՝ զկորուսչին ընթաց-
մունս․ ցրուեա ծածկատես՝ զըմբռնողին չար գրո-
մունս․ խորտակեա անքննին՝ զմարտողին դիմեցմունս։
Տեառնագրեա քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յար-
կիս․ պարփակեա քո ձեռամբդ՝ զառաստաղ տաճա-
րիս․ գծագրեա քո արեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս․
կերպացո զքո նշանդ՝ ’ի հետս ելից մաղթողիս․ ամ-
րացո քո աջովդ՝ զհանգստեանս խշտի․ մաքրեսցես ’ի
հաղթից՝ զծածկարան անկողնոյս․ պահեսցես քո կա-
մօքդ՝ [10] զտառապեալ անձն ոգւոյս․ անխարդախ ա-

ըստացես՝ զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուցեր շրջափակ՝ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեցեր 'ի դիմի՝ ընդդէմ դիւացն զասու։ Տուր հանգիստ բեր- կրութեան մահահանգոյն նիրհման 'ի խաղութեան գիշե- րիս, քաղցրախօսութեամբ հայցուածոց սրբոյ ածածնիդ՝ և ամենայն ընտրելոց։ Ամփոփեալ [11] պարուրեա զպա- տուհան ոտևոունեց՝ զզայարանացս իմաստից՝ անզար- հուրելի զգետեղմամբ՝ 'ի ծփական խռովութեանց, կեն- ցաղական զբաղմանց. անրջական երազոց, [12] խօլա- կանաց ցնորից. յիշատակաւ քո յուսոյդ՝ անվնասե- լի պահպանեալ։ Եւ ըսթափեալ վերստին 'ի ննջմա- նէ ծանրութեան ամենազգաստ արթնութեամբ, հոգենո- րոգ զուարթութեամբ 'ի քեզ արձանացեալ, զայս ձայն մաղթանաց՝ բուրմամբ հաւատոց՝ [13] քեզ ամենօր- հնեալ Թագաւոր փառաց անճառելից, փառաբանո- ղաց երկնազումար խմբից երգակցեալ՝ յերկինս ա- ռաքել։ Ո՛վ դու փառաւորեալ ես յամենայն արա- րածոց յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Յառաջնում զղջմանն։ 'Ի բանսն Դ. Է. Զ. հայելով 'ի բազմապատ- տիկ անօրէնութիւնս իմ և յորդոր զաստուածայինն ԱՅ յուսահատութե- բանիւ զիս պարտաւորեցի. և ասացի ապաշխարութիւնք իբրև հեծանաւ. հատ զաւազանաւ հարուածեցայ մինչև 'ի մահ. այս է՝ խնդրել բանիւ խոստովանեցայ զօղ որդի կորստեան, և ոչ արժանութեան ցուցանել կամ լինել անօրէնութիւնքը։ Բայց այժմ զկերպ յուսոյն յանձն իմ ընկալեալ. հայելով 'ի զօրութիւնն ԱՅ՝ իշխեցից աղաչել, պաղատիլ, յաղթանա- թիւն ինձ կոչելով զԾր Եղբայրութիւնն, որ կարէ և կամի զիս ազատա- ցուցանել։

(2) Որ և անդրանիկն։ Այնչափ յուսալի է ողորմութիւնն ԱՅ, և աստ- ուածահաս օգնականութիւն նորա, մինչև անդէն 'ի զաւակնեն զնա արարիւ, խակոյն յորդորիւք ընկալեալ և իբր ընտանեբար կոչել զանուն նորա, Թէ և ինքնին ահաւոր է. և այն կարգաւն կամ կոչելն կեանս տայ մեռե- լոյս, ըստ մարգարէին, որ կարդայ զանուն Տն՝ կեցցէ։ Որ կոչեցաւ զա- նուան Տն։ Այսպէս զնի 'ի լաւ օրհնակս առաջել հաւատացեալ ընտանեաց յոմեմեք. (Յհ. 32։ և հռովմ. Ժ. 13.) այլ և յաղթար նախանձեալ բա- նին, յորում ասէ՝ կոչումն ընտանեաց ձայնի անուան բարերարին՝ մեհեցեա- լոյս է կենդանութիւն։ Իսկ յայլ տարրերաց զնի, որ կոչեցաւ գո՛ր։

(3) Իսկ ես ոչ միայն։ Ես ոչ լոկ ընկալեալ կարգաւ զնա, ոչ առակաւ 'ի յուսոյ շարժեալ, օգնութիւն եկեալ հայցեմ 'ի կարիս իմ, այլ պաշտե- նախ հաւատամ մեծութեան նորա։ Ո՛չ Էնկ վասն պարգևաց նորա։ Ո՛չ վասն ընտանեան և զերբնականն պարգևաց նորա աղաչեմ, այլ զնոյն ինքն պարգևատուն համարիմ ինձ ճշմարիտ կենդանութիւն, և շունչ հոգ- ւոյս և մարմնոյս. զի Թ զերբնականն կենդանութեան՝ որ 'ի ձեռն արարչակ շնորհաց, նա միայն է պատճառ. և Թ ընտանեաց կենդանութեան՝ սահմ- ծիչ միայն նա է, և նա ինքն ընդհանուր պարգևատուիչ. և կատարիչ պարգ-

առաքինութիւն երկրորդ արդարադատութեան : Այսու բանիւ ոչ խոստովանի՝ թէ զպարգևս զեւսն ում չէցէ ապարտ խնդրել կամ առնել, կամ ոչ վասն հատուցմանն վարձ ձրից ծառայել նմա . քանզի զի է և այս 'ի զաւակութեան մասին, և աւանդել 'ի նմա գործ . այլ նշանակէ՝ թէ չէ՛ ապարտ 'ի պարգևսն անդր զանձն առ նոսա, կամ վասն պարգևացն միայն խնդրել զնա . զի այս վարձկանի է, և յայս՝ 'ի սիրոյ ամենայնի՝ քանզի ոչ . վասն այն յաւելէ . Դէ ոչ այնքան ցանկայն հանգուցեալ, որքան սիրոյն [illegible] : [illegible] սիրութեան է՝ առաւել զնա սիրել քան զպարգևս նորա, և զնոյնս սիրել վասն նոյն և յանձն : Այլ զերագոյնս խորհ սիրոյ է՝ զնա միայն սիրել 'ի պարգևս [illegible], ոչ զի [illegible] պարգևէ, այլ զի [illegible] է պարգևատուն . որով պարգևքն և պարգևատուն [illegible] միայն [illegible] սիրոյ, [illegible] և բարութիւն նորա [illegible] [illegible] և [illegible] սիրոյ : Զայս խորհ կամի յայտնել նա [illegible] [illegible] յայս բանն, և 'ի յաւելուածն :

(4) Ո՛ւ հոյեւեցի : Ո՛չ հանդերձեալ վայելչութեանցն ցանկութիւն հատուցանել, այլ հանդերձողին, զնոյնս [illegible] բաղձանօքն յերկնային [illegible], 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] բաղձեալ [illegible]:

(5) Զհանգուցեալն վերստին աղաչեմ : Այսինքն խնդրեմ, աղաչեմ :

(6) Վերագրեցելոյ յանցանօք բեռանց : Այսինքն բեռնաւորք մեղադրելոյ յանցանաց : Թէպէտև ասէ՝ ապաշխարող եմ նախատանաց մեղօքն, բայց 'ի զօրութիւն փրկչին [illegible] վստահացեալ, անձնեալ հաւատամ ոչ միայն քաւութիւն գտանել, այլ և զնա ինքն յիւր բնութեան [illegible], [illegible], [illegible] և [illegible] նորա, [illegible] [illegible], հանդերձ [illegible] երկնից :

(7) Աղօտափայլեալ : Յ . օրին . աղօտափայլ եղելոյ :

(8) Զմեծորդ աղքատն : Թէպէտ և վստահութիւն [illegible] [illegible] յաղագս [illegible] Այ, բայց միշտ [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] 'ի վեր հայել . այլ միայն [illegible], այսինքն [illegible] որ է [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] վասն մեղաց, որպէս զի [illegible] [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible] . կամ 'ի [illegible] [illegible] : Կամ, [illegible], այսինքն [illegible] որ է [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] [illegible] . զի [illegible] է նշանակ [illegible] . և [illegible] [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible], կամ [illegible] : [illegible] [illegible], կամ [illegible] . [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] : 'Ի մի օրին, [illegible], այսինքն [illegible] [illegible] [illegible] մեղաց [illegible] [illegible] : [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] [illegible], որ [illegible] [illegible] և [illegible] : Բայց [illegible] է [illegible] [illegible] :

(9) Զանբերելի ծանրութիւնս : Բարձ յինէն զանտանելի ծանրութիւն մեղաց, կամ [illegible] [illegible] : [illegible], 'ի բաց [illegible], [illegible] [illegible] [illegible] : ( օրին . [illegible] [illegible] ) [illegible] [illegible] մեղաց, կամ [illegible] [illegible], և [illegible] մեղաց : [illegible], այլ օրին . [illegible] : այսինքն [illegible] կամ [illegible] [illegible] [illegible], [illegible] կամ [illegible] [illegible] [illegible] : [illegible], [illegible], կամ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible], որ [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] : [illegible], [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] իմ, կամ, [illegible] և [illegible] նորա [illegible] [illegible] :

(10) Գծագրեալ քո արարածք : [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], որպէս զի մի [illegible] [illegible] 'ի [illegible] նորա, և [illegible]

ամբ եւ ինքն հայցեմ, [illegible] արտասուացն [illegible] ան-
ներելիս. այլ և զանձամբ, զի մի՛ [illegible] ։ Կերպարան, ձեւոյն
զնշանն խաչին 'ի ճակատս եղից և մտաց իմոց, զի մի՛ օձն [illegible]
խայթեսցէ ։ Պահպանեսցէ [illegible] իմ, [illegible] յոր հանգ-
չիմ ։ Մաքրեսցես 'ի հողէնս, 'ի [illegible] իմոյ՝ որք իցեն [illegible]
կարծն լինել 'ի ծածկագոյն [illegible]՝ կամ [illegible], կամ 'ի չա-
րութեան մարդկան և գիշերոյ ։ Պահեսցես [illegible] անձն [illegible] ։ Երթէ
անձն առաջի փրկականի մարմնոյ, որպէս և 'ի բանին ըստ. 2. ըստ. 2. կեթ.
2. բացատրի, [illegible] մարմինն՝ որ է հոգւոյն
իբրև ընծայաբեր. Իսկ անձն [illegible] փրկականի հոգւոյ, բառ որում
յանձնախ [illegible] ։ բացատրի [illegible] անձնեա՝ որ է հո-
գիս, և [illegible] 'ի [illegible] հոգով, բառ ան-
ձար [illegible], [illegible] . հմր 845 ։ Անխարդախ, ան-
[illegible] կամ [illegible] մարմնոյս՝ զոր զա-
[illegible] ։

(11) Պարուրեա՛ պարսպաւորեա ։ Պատեա՛ կամ պահպանեա [illegible] իմ, որ է
[illegible], զոր [illegible]
[illegible] կամ [illegible] ։

(12) Խօլականաց ջնջոցս ։ այլ օրէն. խառնակական. [illegible]
[illegible] կամ [illegible]՝ որք 'ի [illegible] լինին ։

(13) Քեզ [illegible]. Օրհնեալ էին [illegible], [illegible]
[illegible] ։ [illegible] ։
Զայս [illegible] Ընկալ [illegible], [illegible] 'ի [illegible]՝ [illegible]
Ցովսէփ [illegible], [illegible]՝
[illegible] է 'ի [illegible], և [illegible] Աղեքսանդրի [illegible]
[illegible] ։

---

Սերովբէն յաւելուած կերկէն հեծութէ՝ Նորին հօրոգէ, առ Նոյն
աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ. ԺԳ.

ա. Ո՜վ բարերար հզօր ահաւոր, ² հայր գթած բարձր
ողորմութեանց շնորհի, որոյ անունդ իսկ
մեծիդ՝ զգթութիւն և զընտանութիւն աւետարանէ,
քաղցր դժնէից և անզգոհացողաց ։ Ընդ քեզ և ³ որ-
դիդ քո՝ իբրև զքեզ, զօրաւոր ձեռն իբրև զքոյդ,
անժամանակ տէրութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ
քում բարձրացեալ ։ Եւ հոգիդ նոյն ճշմարտութեամբ
բղխեալ առ 'ի քէն անսպառութեամբ, ³ կատարեալ իս-
կութեն գոյի, էութիւն միտնջենաւոր, հաւասար քո
ամիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ ։ Երրեակ
անձնաւորութիւն՝ համայն անքնին, ⁴ տրոհեալ 'ի դի-
մաց՝ ուրոյն զատուցմամբ. իսկ ⁵ միաւորեալ համա-

զուգութիւն, նոյնազգոյ բնութեան առնելովս, անշփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կցորդութեամբ. ոչ երկցութեան ումեմն ՚ի յումեմն, և ոչ քթթել մի ական առնուազութեան միոյն ժամանակաւ, քան թէ պատճառուրոյ երկնայնոյ անստուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութեան, միով պսակաւ սրբասացութեան անսկզբնաբար ծածաքանեալ։ Վասնզի արդարև վերաձայնեալս այս խոստովանութիւն [6] երեքփառատրեանդ դաւանութեան զվէմն հաւատոյ պետրոս երանեաց. իսկ զդատապարտելոյս անձն մեղօք՝ [7] բարեհրամման քո ակնարկութեամբ, ամ խնդրողդ գերելոյս՝ հրաշանորոգ արդարացուսցէ։ Վասնզի թէպէտ և քո իցեն պարգևք, և քո ողորմութիւնք, այլ ոչ ՚ի պարգևսն ես այնքան հաւչակեալ, որքան յողորմութեանն. զի երկրորդն՝ ըստ քոյդ յաճախէ զփառս, իսկ առաջինն՝ զճգնաւորացն յայտնէ զգործս. զի պարգևք՝ վաստակոցն են փոխատրութիւնք, իսկ ողորմութիւնք՝ մեղուցելոյս բարերարութիւնք։

Է. Նաև արդ՝ [8] մի զօրասցին մարդկայինս գործք առաջի քոյոցդ շնորհաց՝ տ'ծ գթութեանց, թէ և անդր իսկ իցեն [9] քան զօրէնս հասարակաց՝ բնաւորականս հրամանաց. այլ յաղթօղ եղեալ քոյդ երկայնմտութեան, նուազ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց։ Վասնզի և որ [10] մաքրութեամբ պերճանային օրէնականացն վստահութիւնք, ՚ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիս, ամենանուազ անձկութեամբ լքեալ հրէութիւն՝ յետնեալ, և յաւէտ ընդտարագրական ողորմելոյն, առաւել նոքա գտան կարօտեալ մարդասիրութեան։ Նաև քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ՝ բարերար, լե՛ր պաղատանաց գոչման հեծութեանս՝ որ կարդամս առ քեզ. ողորմեա կեցո, և մարդասիրեա։ Զի քո է երկայնմտութիւն, քաղցրութիւն, փրկութիւն, քաւութիւն, և փառք [11] յամենեցունց՝ յաւիտեանց ազգաց. ամէն։

(1) [illegible] ։ Ո՛չ [illegible] ես մեր՝ [illegible] . [illegible] , ՚ի շնորհաց [illegible] ես մեր՝ և ոչ բնութեամբ. [illegible] և [illegible] , [illegible] , և [illegible] ։ [illegible] . [illegible] . [illegible] ։

**(2) Ոտոնք գո ։ Այս քեզ և ընդ քեզ է միշտ ոգւոյդ, նման քեզ յանձն, զօրաւոր ձեռն նորա կամ կարողութեանն իւրև գեղոյդ, անժամանակ և անհատ ը̅ յանկութենն. ընդ արարչութեանդ, ընդ արարչական բնութեանդ բարձրացեալ ։ Այնպէս որպէս է քո, զի ոչ ելից և ոչ երբեք 'ի քէն պակասի ։**

(3) Կապարեալ խոխոմեան ։ Նոյնպէս և հոգիդ որ յառաջ եկեալ առանց սպառելոյ, նմին նման քեզ՝ կատարեալ բնութիւն, կամ անձն գոյօղ, ոչ անկատար զօրութիւն ինչ՝ ը̅ մոլորութն հոգեմարտոլացն ։

(4) Տրոհեալ'ն տինոց, բաժանեալ, զանազանեալ ը̅ դիմաց կամ ը̅ անձանց, [illegible], որոշ տարբերութբ̅ 'ի ձեռն անձնական յատկութեանց, որք 'ի միմեանց իրապէս զանազանին, և զանազանեն զանձինս ։ Վարդապետք յունաց և հայոց, այլև հնագոյնք 'ի լատինացւոց՝ առեալ 'ի կիր առնուն զա̅ծային անձանց զբառքս՝ բաժանեալ, զատեալ, տրոհեալ, անջատեալ, են. առ 'ի ցուցանել միայն զգոյացական և զանշփոթելի զանազանութիւն նոցա ընդդէմ սաբէլի և այլոց աղանդաւորաց, որք պատահական զանազանութիւն ինչ եւեթ դնէին 'ի նոսա ։ Այլ զի այսպիսի բառք կարեն եւս նշանակել զբաժանումն 'ի մասունս, կամ զայլևայլութիւն բնութեան, ը̅ այսմ՝ անբաժանելի, անանջատ ասէին զա̅ծային անձինս. որպէս և աստ զինի ասէ, [illegible]։ Վասն որոյ ըստ այլևայլ մտաց զայսպիսի բառս ուրեք ընծայէին ա̅ծային անձանց, և ուրեք ոչ ։ Ըստ որում և շնորհալին 'ի ն̅. թղթ. առ մանուէլ կայսր գրէ ։ * Եւ ոչ դարձեալ հրէականին հետեւողի սաբէլի լիբէացւոյ ձայնակցելով, զերիսն 'ի մի հաւաքել անձնաւորութիս, այլ բաժանեալք անբաժանաբար, և միաւորեալք որոշմամբ՝ ըստ ուղղափառ հարցն դաւանութեան ||։ Յայսպիսի իրս քաջայայտ գոլով ողջմտութիւն և մեծ զգուշութիւն հարցն, յանդգնութիւն է ստգտանել զկկրատութիւն նոցա ։

(5) Միաւորեալ համագոյ[illegible] ։ Նոյն ա̅ծային անձինք՝ որք ը̅ յատկութեանցն զանազանին, միաւորեալ են միաձևաբար մի և նոյն անհատ բնութբ̅ [illegible], այսինքն յատկապէս, իսկապէս, և ոչ անյատկաբար որպէս զբաղում մարդիկ, որք մի բնութիւն ասին միայն ըստ տեսակին ։ Ան[illegible], անորոշելի 'ի միմեանց՝ [illegible] հաւանութեան, և [illegible], գործակցութբ̅ 'ի խնամս արարածոց ։ Որով խմանի՝ թէ անորոշելի են ոչ միայն առ 'ի ներքս բնութբ̅ և այլ բացարձակօքն, այլ և առ արտաքս 'ի ամենատութիւն արարածոց ։ Ո՛չ [illegible] 'ի [illegible]. ոչ մեծութիւն կամ առաւելութիւն միոյն քան զմիւսն. կամ, ոչ իշխանութիւն միոյն 'ի վերայ միւսոյն ։ [illegible], և ոչ վայրկեան մի [illegible], մինն 'ի նոցանէ նուազեալ կամ պակասեալ 'ի գոլոյ, որով խմանի գոյակցութիւն նոցա ։ Կամ, և ոչ առկա մի՝ մինն առ կարօտութիւն միւսոյն ժամանեալ յօգնել, որով խմանի համազօրութիւնն ։ Կամ, և ոչ փոքու իմն միոյն առ նուազութիւն ժամանեալ, այսինքն նուազ կամ թերի գտեալ քան զմիւսն. որով խմանի հաւասարութիւնն ։ [illegible] ։ Կրկնակի յարի այս ընդ նախասաց բանիդ. մի՝ իբրև նմանութիւն առեալ յարեգակնէ. այսինքն որպէս պայծառ լոյս արեգական պատճառ է ջերմութեան, և երկոքին համանգամայն են, արեգակն՝ լոյս և ջերմութիւն, այսպէս յերից անձանց մին քան զմիւսն և ոչ փոքու իմն նուազեալ է կամ յետին. [illegible], այսինքն որպէս թէ, կամ իբրև պատճառ գոլով մին հայր՝ [illegible], հոգւոյն այլ, և [illegible] որդւոյն ։ Որ [illegible] է [illegible]. այս օրինակ բացատրութեան ը̅ մերում ձայնաչեման ասի. կամ որչափ 'ի մեր կողմանէ ձայնաչել կարօղ եմք ։ Ուր 2. օրին. եւ

[illegible]

(6) [illegible]

(7) [illegible]

(8) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

առաքինութեան մեր ։ || Ջուր և Նուրկ կենդանի. ( Մատթ. Ե. 20. ) * Եթէ ոչ առաւելուցու արդարութիւն ձեր առաւել քան զդպրացն և զփարիսեցւոց, ոչ մտանիցէք յարքայութիւն երկնից ։ || (11) Ցանկանեցուանց՝ յաւիտենից ազգաց ։ Քեզ փառք յամէն դարուց ազ-գաց, կամ յամէն Նախնեաց ազգաց ։

Ս երափէն յաւելուած երկին հեծութեն՝ Նորին հօրողէ, առ Նոյն աղերս ծաղկեալաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԽԳ.

ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ ճառագայթ, արքայ երկնաւոր, գովեալ անպատում, որդի անճառ մեծիդ Այ. խոնարհեցո զունկն քո՝ բարձրեալ բարեգութ, կենաց ապաւէն, Նորոգ մերձեցեալ կրկին աստանօր 'ի հառաչմանս նուաղս ձայնի վիրաւորելոյս ։

բ. Ո՛չ ցուցեալ է երբէք, եթէ աղաչեաց զքեզ 'ի ձեռն աւազակացն որոյ խողխողեալն, քանզի կարկամեալ էր. ոչ ձայն պաղատանաց զկնի արձակեաց, քանզի [1] անկուինչ էր. ոչ մատամբքն տատանելոց զաղէտ վտանգին յայտնեաց տեսողիդ, քանզի խորտակեալ էր. ոչ աչս կողկողագինս արտասուօք ողբոց՝ բարերարիդ յանդիման կացոյց, քանզի մնասպարտ էր. ոչ 'ի պատգամ բանից միջնորդի՝ զողորմածիդ կամս հաճեցոյց, զի [2] անպայցելու էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ մարմնոյն արիւներանգ Ներկուածով ձործոց՝ զգթածիդ զսիրտ ճմլեցոյց, վասն զի անյոյս էր. Նա և [3] ոչ ծնգովքն հաստատուն իւր զարշապարաւ ոտին վարեցաւ, այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն ասել կենդանութն՝ սակաւ ինչ նուազ է 'ի մեռելութենէ ։ Մանաւանդ զի [4] 'ի քոյոց խրատեալ բանից, և բարերարեալ [5] քոյդ ողորմութեամբ, և փառօք քո լուսազարդեալ, ոչ միայն զի ոչ վերջացաւ 'ի հակառակն քո ընթացից, այլ ստահակեալ ապստամբութեամբ, յիւր թշնամեացն թիւ յաւելաւ. ընդ Նոսին դաշնաւորեցաւ, միաբանեաց ատելեացն քոց ։

գ. Իսկ դու՝ բազմապարգև, բարերար, անոխա-

կալ, անմեկնակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչա֊
րագործին մեղացյիշատակ, այլ և ոչ բանիւ յան֊
դիմանեցեր. ոչ ետն հարեր անկելոյն, այլ կարեկ֊
ցաբար մատուցեալ՝ զծայրագոյն ցուցեր զխնամս։
Ո՛չ քահանայապէս ըստ ահարոնեան 6 տկար օրի֊
նին՝ զօրաւոր առ մահուն պաշտօն՝ դատապարտիչն
անիծիւք և բռնալիր քարանցն ձգմամբ 'ի խորտա֊
կուման խոցելոյն արագեալ մատեար. և 7 ոչ որպէս
ղևտականն կարապետային անկատարագործ՝ 'ի յեր֊
կուցն միջի բաժանեալ խորոց, հնոյն լրումն՝ և նո֊
րոյս սկիզբն, ունայն 'ի հոգւոյ յապաշխարանն հան֊
դիսացեալ՝ զվիրաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի
աստակիչն օրինակութբ տապարաւն արմատակտրաւ՝
զմահուն պաշտօն 'ի քեզ նկատեալ, յառաջ քան
զփորձ առակայիցն սատակեսցի. այլ հեթանոսացն
պահպան անուն ասորեստանեայսն, որք 'ի հրէիցն ըն֊
կալեալ զօրէնս՝ ամբողջ պահեցին, զոր նոքա մոռա֊
ցան, նոցին կցորդեալ մարմնոյդ վերարկուաւ՝ մե֊
րակերպարան խառնութբ, զաղատարարն գծագրե֊
ցեր զաւետիս առ օտարազգիսն. և ծածաբարդ ներ֊
գործութբ անապականաւ՝ ձեռն կարկառեալ, յա֊
րուցեր զմարդն նախնի՝ մեղուցեալ 'ի մահ իւրովքն
ծննդովք։ Ո տրտմեցելոյն սիրտ բերկրեցուցեր, և
զվհատեալն հաստատեցեր, և 8 զթշուառացեալն
միանգամ՝ կրկին զուարթացուցեր։ Նաւաղանիւն կե֊
նարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. հացիւդ
երկնայնովդ արարչականդ քոյին մարմնովդ նոր յեղա֊
նակեցեր։ Վերակացութբ 9 երջանկացն ազանց ըն֊
տրելոց՝ յանձանձեցեր, գրգեցեր, և խնամարկե֊
ցեր։ 10 Հանդարտընթաց գրաստուն տածողութբ
անզգուելի պահեցեր, մինչև յարկն լուսոյ ածեր։ 'Ի
ձեռն 11 երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկ֊
րորդաց՝ տուչութեն կտակաց կենդանականացն, մար֊
դասիրապէս դարմանատրեցեր։ Իսկ որպէս երբեմն
ընդ մովսեսի՝ Թևս տարածեալ արծուոյն օրինակաւ
ընկալար զնա, և 'ի հանգիստ հանդարտութեն երկրին
բարութեան առաջնորդեցեր. և զբանիւն կերակուր
ջամբել հրամանատրեցեր վարդապետութեց։
Է. Իսկ արդ՝ որ 12 զբնաւուն ծայրագունին բարութեն

լուսոյ՝ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր, զօգտողին զգանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զիս մաքրեալ 'ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգևես և անպատրաստից. ընդ որոց և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն՝ բարեգութ, զօրեղ, անքննին, անեղծ, անհաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

---

(1) Անկոխուն էր ։ Ոչ կարէր կանչել, անբարբառ էր ։ Մաքամէջին փաքանելոց ։ այսինքն ստատանեցելովք ։ Պաղատիմ առ քեզ ասէ, թէ և նուազ ձայնիւ վասն վիրաւորեալ գոլոյս հոգւով. բայց մի՛ մերժեր աղաչեմ, ուր առ անկեալն 'ի ձեռս աւազակացն դու ինքնին մերձեցար գթութք. որ ոչ ձայնիւ աղաչեաց. ոչ մատամբք զաղէտն եցոյց. ոչ արտասուօք կողկողեցաւ. ոչ բարեխօս ունէր եւ ։

(2) Անոյշեղուն էր ։ Անօգնական. անխնամածու էր. ուստի ոչ կարէր բարեխօսութք միջնորդի ուրուք հաճեցուցանել զկամս քո ։ ոչ հոյթոյթմամբ. ոչ գթարկութք կամ ողոքական ցուցմամբ ջախջախեալ մարմնոյն, և արիւնաթաթախ զգեստուն, եւ ։

(3) Ո՛չ ծնգոլչն հաստատութք ։ Ո՛չ հաստատութք կամ զօրութք ծընգացն՝ իբրև ոտիւք վարեցաւ գալ առ քեզ. այնպէս անշարժ էր, այնուզի, կամ վասն զի անկանգնելի էր, չկարէր 'ի վեր կալ ։ Բասս անշարժ բաղադրի 'ի բայէն՝ յառնեմ. յարեայ. ուստի ոչ նշանակէ անյարմար, այլ անկանգնելի ։

(4) 'Ի բոյաշտ խոցոտեալ բանից ։ Անկեալն 'ի ձեռս աւազակաց ասի իջանել յեղէմէ յերիքով. (ղուկ. ժ. 30.) և եղէմ գոլով աթոռ օրինաց և [illegible]. (եսայ. բ. 3.) վասն այն իջանելն յեղէմէ՝ նշանակէ թէ խոտորեալ էր նա յօրինացն. յորմէ օտարացեալ, գնայր 'ի ճանապարհ մեղաց, որ երիքովաւն նշանակի ։

(5) Քոյր ողորմութեան ։ 2 օրէն. ողորմութէ ։

(6) Տէր օրինին ։ Հին օրինացն՝ որ տկար էր առ արդարացուցանել, և զօրաւոր առ ծածկեալ պաշտօն, 'ի սպանանել զյանցաւորս նզովիւք և քարկոծմամբ. (բ. կոր. գ. 7. 9.) Արթնեալ ծաղէաւ. մի օրէն. ծաղկէր. այսինքն հին օրէնն ։

(7) Ո՛չ նոր զնոփանն ։ Եւ ոչ իբրև զղևտացւոյն նմանեալ կապանեան յովհաննէս, (որ և էր խակ 'ի ցեղէն ղևտեայ,) որ միջնորդ գոլով հին և նոր օրինաց՝ անկատար գործով տայր միայն զմկրտութիւն ապաշխարութեան առանց հոգւոյ շնորհաց ։ Այլ՝ ոչ իբրև զայս ղևտացի հայեցար 'ի վտանգ վիրաւորելոյն. զի մի՛ ստորակայական օրինակաւ արմատահաստատ տապարին՝ զոր յովհաննէս սպառնայր, (մատ. գ. 10.) զծածկեալ պաշտօն, զտատակութիւն հին օրինաց 'ի քեզ տեսանելով վիրաւորեալն, անյուսութք մեռցի յառաջ քան զփորձ տառաչանաց, նախ քան զփրկարան կամ զկիրս վիրաւորս արտասուհասեացն ։ այլ օրէն. և ա հին ըծ. տառաչանաց. որ և 'ի մէջ յովհաննու տանու զայս, իբրև թէ առանց փորձելոյ՝ զմեղուցեալն տապարաւ հատանել ասէր. բայց անյարմար է ։ Այլ ստամբացւոյն նմանեցար, որ էր 'ի հեթանոսաց պահպան անուն սարեքանեայց. ստամբ րիոս՝ պահպանան թագաւորին. և 'ի անդրայն ստամբացւոյ կոչեցան բնակիչքն՝ որք յասորեստանեաց եկին անդր, և ընկալան զօրէնս հրէից, և

պահեցին մինչև 'ի քո. ( Գ. Թագ. ԺԷ, 24 : ) Նոյնպէս , այսինքն սամարացւոցն հաղորդեցայ՝ զյետեւեալ գիրս մարգարէիս , և զաղաստաւորս աւետեաց ծանուցեր առ օտարազգիս , առ ապրս մարգարէն՝ որք 'ի քէն առաջ էին : կամ, զայն աւետեաց առէ՝ զոր ես կնոջն սամարացւոյ . ( Յովհ . Դ . 23 : ) Եւ ամբոխուրդ, ամենայնի քո Ներգործութեամբ անապականեան, որ զանխեղծութեան կամ զառաքինութեան առոյ , ձեռն կարկառեալ յարուցեր զաղամ բավանդական բնութեամբ . որում օրինակ էր անկեալն 'ի ձեռս աւազակաց : Տարբերութիւն կայ յօրինակին . զի մի օրին . գնէ . ոչ զեւանական կարապետականին անկատար գործ : Այլ օրին . * Եւ ոչ զեւանական կարապետական անկատար գործ . . . ունայն 'ի հողւոյ առաջնորդականն հանգիստեան , զվերաստեղծեալն անեալ զմարմին . . . յառաջ քան զփորձ առաքելոցն : || Միւս օրինակն են Նախ գրէ առաքելոցն . ապա առաքեալ առաքելոցն . յետոյ այլով գրչաւ , առաջնորդացն : Որք զամենայն՝ յառաջ քան զփորձ առաքելոցն , մարթ է ասպարէլ , Նախ քան թէ առաւել հաստատագոյնին արգելանքս կատարեցեր . և կազմին խմատեալն . Եւ ոչ զեւական կատարելագին յանձնանաւ , կամ ոչ զեւանցի կատարելութեան անկատար գործ ցուցեր , զմարմինդ եւեթ աղաւաղելով , և միութեան առլով առանց հոգւոյ , այլ հեթանոսաց առաքելոցն անհատակն առաջնորդաց Նեոյյ կցորդեցար մարմնոյ զգեցեալ : տար Նոյնպէս , և կրկնութիւն առ ընտրանեաց :

(8) Ձեւացուցանողն մանգամ : Ձեւերի բնութեան՝ որ միանգամայն յագամ Թշուառացուցար , կրկնապատիկ զուարթացուցեր . ըստ այնմ * Եւ ոչ որպէս յանցանքն , նոյնպէս և շնորհքն : || ( Հռոմ . Ե . 15 : ) Կամ, զաղամ զոր Նախ 'ի դրախտին՝ մերկացին յեկեղեցւոյն զուարթացուցեր :

(9) Երկանկացն աղանց : Հրեշտակաց , կամ առաքելոց , զոր 'ի գումարս Նոցա կոչէ * ամենազօր առնելք գնդից : ||

(10) Հանդարտութեան Գրաքոն : Դատանմանիք կամ առաջնորդութեամբ քաղցր և Թեթև օրինաց , անդրանէլ , անմխիթար կամ առանց առաջնորդունաց պահեցեր : Հին լծ . գրաւոր խնամոյ զօրութեան մարգարէն , որ Է խաչին երկրորդ յոտս իւր զմերսցուցեալ բնութիւնս :

(11) Երկփոխանդրոց մկնօրդաց : Դատանմանաւորեցեր առաջուգ երկպառնչեալ կենդանիս կառակացն՝ առաջնոյն կամ հնոյն , և երկրորդին կամ Նորոյն , որոց օրինակ էին երկու զանհեկանքն առեւալք 'ի սամարացւոյն : Եւ որպէս երկրաւոր ընդ մոլոսի , այսինքն ընդ ձեռամբ մոլեկան երբեմ արծուի 'ի վերայ Թեւոց առեալ զմեզ , ( ըստ Է օրին . ԼԲ . 11 . ) 'ի հանգիստ երկրին բարութեան առաջնորդեցեր . և զկերակուր բանի օրինացն Ջամբել Նմա՝ հրամայեցեր կերպարանափոխեանց , առաջնորդաց , ուսուցչաց :

(12) Որ դիմանն : Դու որ զամ գործս ծայրագոյն բարութեան բովանդդակապէս հրաշալի օրինակաւ կատարեցեր առ կորուսեալ բնութիւնս մեր . մինչ յերկնից սանել , զինչ նիչ առնել էր , և ոչ արարի : և զգեցլին , զխոտորեալն առաջնորդ զգուշացեալ զանձն , որ են հոգիք մարդկան , յափշտակեալ 'ի նմանէ առ քեզ դարձուցեր , կեցո և զիս Են :

Վերոյին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս ճառընթաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԺԱ.

ա. Իսկ [1] դարձեալ սաստուստ վերստին առ նոյն հեծութեան սրտիս վտանգի ինձէն մատուցել, ավլին նուագաւ 'ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արգահատեցից, տագնապեալ ոգւոյս վտանգիւ իսպառ. [2] իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղթեմ Այ, խոստովանեալ [3] ընդ փառացդ քո՝ զիմն անարգութեան, եւ առ չարեօքս իմովք՝ զքոյդ բարութիւն. որովք յաղթեալ գտայ՝ քան թէ բժշկեալ, եւ ամաչեցեալ՝ քան թէ համարձակեալ, ուխտակորոյս աւանդամրաւաց ։

բ. Իսկ [4] կրկին առակն որ առ իս՝ որ ոչխարին տրուպն տարացուցիւ, որ յետին [5] անզգայութեանն էր մատնեցեալ՝ մոլորեալ, եւ 'ի լերինն՝ ուր ոչ է այցելուն, [6] ընդ գազանականացն դիւաց՝ եւ կուոցն վայրենութեան թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին. ոչ բան ունէր, որով եւ զցաւոցն աղէտ պատմէր. ոչ ձեռն ձգողական, որ համբոյն է աղաղական ։ Իսկ դու միայն գովեալդ [7] յսկզբանցն յաւիտեանից եւ յարդի ծնելոցս, գտեալ ըստ մաղթանաց գոչման երգողին՝ զիս զմեղուցեալս յաննշոյն մոլորութեան, խնամողորէն տեսչութեամբ կամաց՝ հովիւ կոչեցար. եւ ոչ միայն հոգացար, այլ եւ խնդրեցեր. եւ ոչ գտեր միայն՝ հրաշագործ, այլ անճառելիդ բարերարութեամբ սիրոյ՝ 'ի կենդանարարդ քո յուս բարձեր, եւ ընդ երկնային զօրուն դասեցեր՝ 'ի հայրենիդ քո ժառանգութիւն ։ Նոյն արդ՝ դու հզօր կենարար օրհնեալ այցելու գթածդ յողորմութեան, եթէ [8] զնոսա ընկալար զապաքանեալսն աղերսանաց, որ մինն 'ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութեան վտարանդի բացամեժութեամբ յանբնական վայրի վարանեալ, 'ի բաւաչձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանական, Ածային բարեխնամութեամբդ տնտեսեցեր զտիեզերա-

հրաշն խնամողուն և կորուսելոյն մեծ թշուառու-
թն, յայտնեաց վերստին և արդ գթութեցդ խորք
և բարերարութեցդ հրաշք՝ առ անօրինեալս առա-
ւելութբ [9] վերագրելոցդ օրինակութբ։ Ո՛չ բազմօ-
րինակ մահու պարտականս, [10] առ որ 'ի բարութեց
խառնից քաղցրութեց յատուկ՝ համն չար. առ ան-
դամն մարմնոյ՝ արժանաւորս հատման. առ համա-
ձարակ ամենաբոյլոր ախտացեալ հոգիս վիրաւոր.
առ հաւասարեալս անզգայութեց անասնոց. առ օտա-
րացեալս յընտանութէ իմաստնոց. առ աննմանս հան-
դունակից բանաւորութեց։ Որ եթէ տարացոյց գոյր,
ես ասէի. թէ նմանակից գոյր իմ, պատմէի. թէ
համգունակից գոյր, ես ճառէի. թէ հաւասար գոյր,
ես գրէի. թէ զուգագործ գոյր, ցուցանէի. թէ օրի-
նակ գոյր, ես ազդէի. թէ [11] յանցեալսն, հայթայ-
թէի. թէ 'ի ներկայումս աստ, ես յուսայի։ Բայց
քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ [12] ի
նմանութէ, զոր միայն քո է քաւել, բժշկել և [13] կե-
նագործել՝ կենդանարար համայն մեռելոց, նորոգու-
թիդ տիեզերաց։

Գ. Ո՛վ ի եթէ մտին սրտի տեսութբ երջանկին դաւ-
թայ՝ անօրէնութն չարեաց բարձրացեալ ասի քան
զգլուխ, և ըստ ծանրութեց բեռանց դժուարակրե-
լոց՝ յանցմունք մեղաց. իսկ որ առ իս կրկին սխալ-
մունք [14] գերազանցեն քան զհեղեղին ջրակուտակ տիե-
զերատոյզ ամենապատ ծովուն յորդութն, և գլխոց
լերանց վերադրէ։ Ո՛չ ընչեցեն ով քո քաղցրութն
իբր առ նոյին, և որ զլերինս հալէ զօրութն, ցա-
մաքեցուցանել զշրջիս ջրակոյտս բազմակոհակս՝ և
երկրակործան խմոյս պարտեաց և լեռնակարկառ
բարձրութն մեղացս ամբարձելոց։ Այլ [15] համառօ-
տեալ զբանս քո հզօր՝ ամենակար հնարաւորութբ
հակիրճ հատուցմամբ, արասցես ահա ելս քաւութն,
ըստ մարգարէին, առ երկարաձիգս անօրէնութիւն.
և ներելով իմն յամառութն ով երկայնամիտ ողոր-
մած օրհնեալ, թողցես միանգամայն, բարեգործեա-
ցես իսկապէս, հատցես բոլորովին զանվճարելի պար-
տուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժա-
նակիրս։ Այո զի՝ և չիք իսկ առ քեզ ցասումն սրտի,

և կամ բորբոքումն բարկութե, որպէս [16] ոչ կերին
նենգութիւք, և կամ նշմարանք մթութեան. քանզի
զի կեանք են 'ի կամաց քոց և լոյս. և ոչ արարեր
զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ դաւ-
թի և սողոմոնի ։

Է. Եթէ [17] մարդկան կարգեցեր զայս կէտ սահմա-
նի մեծի պայմանի՝ 'ի բարեվիճակդ քո կանոնաց՝ ոչ
փոխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս
եօթն թողուլ անդուստ 'ի յաւուր զիւրաքանչիւր
մեղանաց զպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ 'ի
բնութե ունիմք [18] բնաւորաբար ուղերձեալ զախծս չա-
րեաց՝ անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրէ-
նաւորին երևին յանդաստան սահմանի ամենաբոյս
փշածին բնութես, ըստ անսուտ քո վկայութե, որ
թէ միտք մարդոյ 'ի խնամս չարի են արձանացեալ 'ի
մանկութէ ։ Զի որ զկատարեալ մաքրութիւն ունէր
աւետարանիչն կենացդ բանի՝ յովհաննէս, և զինքն
ընդ հասարակաց բնութե լծակցեալ, հաստատեաց զճըշ-
մարտութի քո՝ առ իմս ստութե յոյժ արդարացեալ.
թէ ասեմք ասէ, մեղս ինչ մեք չունել, սուտ առնեմք
զնա ։ Նա արդ՝ [19] կատարեալ է բան քո խնկեալ, և
'ի գլուխ ելեալ անպակաս 'ի ստուգութէ՝ առ իմս
մոլորութի և դժնդակ անիրաւութիւն ։ Վասն որոյ
խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրութե ճաշակմց
աղբիւր, միայն օրհնեալդ յամենայն յաւիտենից.
ամէն ։

---

(1) Դարձեալ տպագիր ։ Օրինակք չորք խերկ բայ տանուտն դարձեալն, և
զբայն ծագեցեալ յարեն 'ի յաղօթսն, այսինքն դառնալով վերստին առ
նոյն հեծութիւն, մատուցեալ առաջին նուագաւ 'ի նոյն ոճ բանի, են ։
(2) Իւր ձեռնեալ ։ Մի օրինակ ընթեռնու, Իւր ձեռնեալ կենդանեայն՝ ան-
մահից մաղթեմ. ըստ որում ասի, կենդանութեան մեռեալ է. (ա. տիմ.
ե. 6 ։) և առանց նորա կա մարթ է խնամեալ, նման մեռեալ կենդանե-
ւոյ՝ քեզ անմահից մաղթեմ ։
(3) Խոստովանեալ ։ մի օրին. խոստովանել ։ Խոստովանելով վասն փա-
ռաց քոց զիմ անարդարութիւնս. կամ, համեմատութեամբ, համբակ
փառաց քոց ։ Ն. տպ. լուրեօք խնդէ. համեմատութեամբ չար գործոց
իմոց՝ զբարութիւն քո ։ որովհետև, այսինքն չարեօքս՝ 'ի խորհել իմում
յաղթեալ գտայ 'ի պարտաւորութիւն, քան թէ բժշկեցայ 'ի նոցա-
նէ ։ Կամ, բարութեամբք քո յաղթեալ պարտաւորեցայ, քան թէ
բժշկեցայ նոքօք ։ 'Ի խոստովանելն զփառս քո և զմեծութիւն՝ խոս-
տովանիմ զանարդութիւնս իմ, համբակ չարեաց իմ զնեմ զքո բա-

բութիւնք. տուեալ մեծանան փառք քո, և բարութիւնք գերահրաշա-
լի յորժամ զանարգութիւնս յիշատակեալ և զչարիս. որով փոխանակ
համարձակելոյ 'ի քումն բարութիւնդ, ամաչեցի յանձն, ամօթերեա
գոյաց, գոլով ուխտադրժից և կորուսիչ ինձ աւանդեալ պարգևացդ:

(4) Կրէին առաջին: Ցեառ ատեալի անկելոյն 'ի ձեռս աւազակաց՝ երկ-
րորդ առաջին՝ որ է մոլորեալ ոչխարին: փրկեալն փարագոաջին, ամփոփ օ-
րինակաւն:

(5) Անդիսայացն կր նոփնեցեալ: Այլ օրին. նոփնեալ 'ի մէջին առ. 2.
օրին. 'ի մէջին:

(6) Ըստ գաղանականացն: Ընդ գաղանաբարոյ գիւացն 'ի գործ մեղաց,
և 'ի վայրենի կրօնս կատակաշատուն գեգերեալ, հեռի գոլով 'ի փորձերեն
հօտէն անծապալաշագից: Ոչ ևս ունէի խոստովանութեան առ 'ի պատանել
պարկեշտ մեղացն. ոչ չէաւ չգողական, բարի գործոց, որ համեշտ է ազգո-
ղական. 2 օրին. ազգողութեան. գործի ասպնելոյ կամ խօսելոյ: Հատի էի
առէ 'ի խոստովանութիւն, և ոչ ունէի գինէ ընականն գործս բարիս, որ
տայ նշան և յոյս՝ երջանիկ գտանելոյ և խոստովանելոյ. որպէս առաց
հայրն ալբեռն վասն պտղնի կենդի, որ առնէր գործս ողորմութեան:
( վարք հարց. եր. 280 :)

(7) Ցանկամբ յանգիպայն: Գոմկեալ գու 'ի սկզբանէ ժամանակաց,
կամ յառաջին ազգաց և յարժմու ծնելոցս, գտանելով զիս զանկեալը 'ի
խաւարային ճանապարհ մեղաց, նման մոլորեալ ոչխարին, բառ բա-
ցախնամ անայութեամբ հովիւ կոչեցար, յանձն առեր կոչիլ հովիւ, կա-
տարելով զհայցուած սաղմ. ձիր. մոլորեցայ ես որպէս ոչխար կորու-
սեալ, խնդրեա՛ ևն: Ոչ լոկ հոգացար փրկութեան իմում խնամելով
եկեր, այլ և անձամբ խնդրեցեր, որոնեցեր, ընթացար յետ անզէս առ 'ի
գտանել: Եւ ոչ միայն բաղցամ վշտօք գտեր յանհնջոյն մոլորութէ, բառ և
զեկեալն. լք. 11. 12. 'ի միջի խնդրելով, այլ և անձամբ գթովք ան-
բոյ բարձեր յուս քո ըստ խաչին, և զասակից արարեալ երկնաւոր հօ-
տին, ժառանգ հօր քո կարգեցեր. և այնպէս որ նախ մոլորեալ ոչխարն
էի, եղէ որդի սիրելի: Ի՛մ էր կորուսանն, գու զայն քեզ համարեցար.
ինձ վնասակեաց գիւան՝ հայր առանալով զանասահմանն Ած. իսկ գու իբր
գիւտի հանդիպեալ զուարճացար՝ եղբայր քեզ առանելով և ժառանգա-
կից: Ո՞վ անճառելի բարերարութիւն, արդարև նորահրաշ. վայելուչ
քեզ միայն՝ որ հրաշագործ ես:

(8) Զնոսա ընկալոր, այսինքն զանկեալն 'ի ձեռս աւազակաց. և զոչ-
խարն մոլորեալ. ղաղափանեալն ազերսանաց. զպաշտպանձեալն առ 'ի ա-
զերծել: որոց մինն 'ի մէջոց նահա. մի օրին. 'ն մէջոց. այսինքն 'ի մէջ
առհեմանի մանհու: այլ. 'ն մէջոյ: իսկ միւսն ոչխարն՝ տարադիտաց հեռաց.
մանաք յանբնակն վայրի. մի օրին. յանբնակական, յանմարդաբնակ լերին առա-
նեալ: մի օրին. յանբնանական. 2 օր. յանբնակին: Այսպէս մարդն սատար-
ցեալ 'ի շնորհաց և 'ի դրախտէն, յայս աշխարհ անիծից՝ և 'ի ճանապարհ
մեղաց վարանեալ, որ ուղիղ ընութեանն և նախնի վիճակին շնորհաց
ընդդէմ էր: Անդ 'ի մեղսն կեալ ոչխարն բառնալով անմնշանն ձայնիւ
զաղէտն յուցանէր. զի խիղճ մնացն նան 'ի հեթանոսս վկայէր զանկար-
գութիւն մեղացն, սակայն առանց գիտելոյ՝ թէ յումմէ է այն ձայն.
և զհնարս լինելոյ արդարանալ:

(9) Վերագրելոյ օրինակութէ: Այսոք ունին մեր օրինակք երկք և հին
ըն. յարմարագոյն ես. զի կամի ասել, բառ օրինակի անկելոյն 'ի ձեռս
աւազակաց, և մոլորեալ ոչխարին:

(10) Առ որ 'ի բարուոնեանց: Երևեցի՛ր գթութիւ առ իս առ չար հասմս.
որ 'ի խառնութենէ անծայրին բարութեանցն մնամ յափուկ, այսինքն զա-

տեսալ, ողջունեալ, պատուել և անուանեալ 'ի քաղաքս նիւթոց : Կամ, ասէ իմ՝ որ [illegible] չար կամ գտանի համ եւ : Մասին [illegible] առ անուանեալս [illegible], [illegible], որ [illegible] և [illegible] նոր նմանութեանց եւ [illegible], այլ [illegible] համաստուածս :

(11) Թէ յանցեալսն : Այլ և այլ [illegible] զմի միտս յայտ առնէ, [illegible] թէ անուանեալն եւ [illegible] մտաց : Եթէ առ[illegible] զոր ես օրինակ, կամ [illegible] 'ի [illegible], ոչ [illegible] ցուցանէր : Եթէ յանցեալսն, յառա[illegible] մտաց [illegible], կամ որ [illegible] քան զնա եղեն, զառնէր զոր ինձ նման յանցաւոր, հայեցեալ, [illegible] թէ չեմ ես միայնակ : Թէ 'ի Ներկայսն, եթէ յայսմ ժամանակի առնէր զոր նման ինձ միաբանեալ և [illegible], եւ յառաջ այնպէս լինել : Բայց քանզի [illegible] 'ի վեր է քան զօրինակ, քո միայն է եւ :

(12) Ըստ նմանութեան : 3. օրին. ըստ նմանութեան :

(13) Կենագործել : 3. օրին. հրաշագործել :

(14) Գերաղանցէ : 3. օրին. գերաղանց է : [illegible] քան [illegible] : որ [illegible] երկիր, և [illegible] : Ի գլխոց միոյ վերադէ. [illegible] քան [illegible] . կամ որպէս թէ 'ի վերայ գլխոց [illegible] 'ի [illegible] : Բայց [illegible] որպէս առ նոյն, [illegible] հողմ ոչ [illegible], այլ [illegible] քո . այս է՝ [illegible], [illegible] այն [illegible], որ [illegible], [illegible], ըստ [illegible] : ( [illegible] . ԺԹ . 11 . ) որ և [illegible] և [illegible] իմոց :

(15) Համաօրհնեալ [illegible] : 'Ի գործ [illegible] քո՝ որ հզօրն է [illegible], և [illegible] 'ի [illegible], կարծ [illegible] քաւեսցես, [illegible], առաւ [illegible] քո [illegible] . ( [illegible] . ԽԶ . 26 . ) թէպէտ իմ [illegible] երկայն են՝ ըստ նոյն [illegible] . (Ն . 18 .) բայց այսու կարծ [illegible] եւս կամ [illegible] . և [illegible] թէ [illegible] քեզ [illegible] քո, [illegible] իմ եւ :

(16) Ու կրկին նենգաւորեալս : [illegible] է քեզ [illegible]՝ [illegible] իմ . զի ոչ [illegible] զքեզ՝ որպէս 'ի մեզ [illegible] . ոչ զոյ 'ի քեզ [illegible] 'ի [illegible] . ոչ [illegible], [illegible] մտաց . այլ [illegible]՝ կեանք են 'ի կամաց քոց ըստ [illegible] . ( [illegible] . ԽԹ . 6 . ) և [illegible] մտաց ոչ [illegible] . ( [illegible] . [illegible] . 13 : ) [illegible] [illegible]՝ ըստ [illegible] :

(17) Եւեթ մարդկան : Եթէ [illegible] կամ [illegible] մեզ, մի՛ [illegible] չար [illegible], այլ [illegible], և [illegible] մեզ [illegible]՝ որք 'ի [illegible], [illegible] եւս զու [illegible] եւ :

Այս [illegible] կոյ յասելն, [illegible] :

(18) Բնաւորաբար ստորերկեալ : [illegible] որ 'ի [illegible], [illegible] կամ [illegible] 'ի մեզ [illegible] կամ չար [illegible], որ օրինաւորին Երկին, որք ըստ օրինաց [illegible] և [illegible] 'ի [illegible] : կամ որք [illegible] և [illegible] օրինօք 'ի վեր [illegible], որպէս [illegible] ըստ [illegible] և [illegible]՝ այլ և այլ են [illegible] : Այսպէս այլ [illegible]

են 'ի մանկութեան, որք 'ի պատանութեան, որք յերիտասարդութեան, կամ 'ի ծերութեան: Այսպիսեաց զանազանութիւն է ասելոց ըստ այլ և այլ վիճակի և դիպուածոց. այլով ստացանելք 'ի հաւատոյ, և այլով յաղթութեան, այլով աշխատասիրութեան, և այլով եկեղեցականին, այլով սուրբ, և այլով կանոնօք, այլով խնամակալութեամբ, այլով ողջունիւ, ըստ այսմ և յայլս: Հին լուծ. զբաւան օրինաւորին, մինչեւ իբրեւ անուն, այսինքն ամենայն զօրէն, որով եկեալն 'ի մեզ ամենայն բնութեան ըստ աստուածեղէն հաւանեալ. է. 7. 8. բայց եթէ բայց մինչեւ տանել ըն-տանելի է:

(19) Կատարեալ է բան սա: Այսինքն բանին որով ասացեր, մինչ մաքր-ւոյ 'ի խնամս չարին հատուածեալ. և 'ի գլուխ եկեալ եղև միջին մտօք ծով տանելոյ ստացեալ եղեւ, առ խնդ ծանուցանէ, այսինքն առ 'ի ցոյց խնդոյ մաքրութեան և խնամ անխռովութեան. կամ, այն բան քո անձնեայ կատարեցաւ յանուն մաքրութեան: Վասն որոյ պարզապէս գինեգործեալ և չարաւորեալ զայլով սպասաւորեալ բնութեան, տանել եւս կարօտ է խնդրել-ւոյ, և այլն:

---

Սրբոյն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նորին աղերս Ճառընտրաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ԺԸ.

Ա. Եւ արդ՝ դու միայն Տէր երկնաւոր՝ բարձրեալդ, բարեգործ. քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առատութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են [1] ձիրք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնարք անխափանելիք, քո արուեստք անգտանելիք, քո չափք անչափելիք. դու սկիզբն և դու կատարած: Բանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես զլրացեալ ընդ մասամբք ախտից՝ 'ի վերդ քան զքան: [2] Պատկեր անպատրագիր՝ անդր քան զորքանութիւն կշռութեան. անչափ լայնութիւն փառաց. անտարրափակ ընդարձակութիւն՝ հաստու զօրութեան. անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան. անտկարանալի բարերարութիւն գթութեան: Դու դարձուցանես՝ ըստ մարգարէին, յայգ՝ զստուերս մահու. որ իջեր կամաւ 'ի տարտարոսն ներքին [3] արգելականացն բանտի, յորում և մաղթանացն դուռն էր աղխեալ. և գերեալ անտի զմթերիցն կապուտ՝ վտարանդելոցն հոգւոց սուսերբ հրամանի յաղթական բանիդ՝ զկապ սատակման մահուն խզեցեր, և զմեղացն կար-

ծիս ցրուեցեր ։ Դ[3]արձ առ իս՝ որ[4] զընդդամ զընդդանաւ վէհիս՝ տղմաախտ գգայս՝ յերկաթս մեղաց, վերաւորեալ խոցմամբ սլաքաց՝ բանսարկուին նետից ։

Է. Տէր դու յամենայնի տէրդ բարերար, լոյսդ 'ի մէջ խաւարի, օրհնութեանդ գանձ, ողորմած, գթած, մարդասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքննին, անճառ. [5] բաւական՝ ըն սէյն յակոբայ. անհնարինցդ ամենից՝ դիւրապատրաստ հնարաւորութի. հուր ծախիչ զխուռիւս մեղաց. [6] ճաճանչ կիզանող ընդհանրական թափանցանցութե խորհրդոյ մեծի. [7] յիշեա զիս յողորմութե քո՝ օրհնեալ, և մի յիրաւունս քո. 'ի ներողութե քո, և մի 'ի հատուցման. յերկայնմտութե, քան 'ի հաւաստութե ։ Եթէ կշռեսցես զմեղանաց իմոց ծանրութի, ընդ քաղցրութե քո՝ և մի ընդ արդարութե. զի առ սակ նախնումն՝ յոյժ է նուազեալ, իսկ 'ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր ։

Ը. Տէր՝ մատի՛ր առ իս՝ բժրութի, որպէս յունկանն բժշկուհի՝ հակառակ քո համբարձելոյն. բարձ 'ի մեղուցելոյս զհօղմ մահու խռովութեա, զի հանդիցէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան ։ Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) Չէր† Յէր ։ մի օրէն. Յէր† Յէրդ ։

(2) Պորփէր [illegible] ։ Պատկեր՝ որ գծովք ոչ [illegible], և [illegible] [illegible] [illegible] համեմատութե ձևոյ և գծի ։ Զայս, և զհետևեալսն առ որդին ասէ, բայց ըստ հասարակ բանի [illegible], և ոչ ըն որում անձն եղեալ. [illegible] հօր և հոգւոյն ես [illegible] ։ Ա[illegible], ընդ[illegible]ութիւն [illegible] կիմ [illegible] զօրութե, որ ոչ [illegible] 'ի [illegible] [illegible]. կամ ոչ կա[illegible] 'ի [illegible] [illegible]ութիւն [illegible] ։ Ա[illegible] [illegible]. [illegible]ութիւն [illegible]ութեան, որ [illegible] կիմ չա[illegible] [illegible] ոչ [illegible] ։

(3) Ա[illegible] [illegible] ։ Ցեռ [illegible] քո [illegible] իշէր [illegible], [illegible] [illegible]՝ և ոչ 'ի [illegible]ութէ կամ ըստ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]՝ որք ըստ [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]. յորում և [illegible] [illegible] [illegible] էր, զի ոչ զօրէր [illegible]. զի ոչ [illegible] էր [illegible]. [illegible] և ոչ [illegible] լինէր [illegible]ութի. զի եթէ լոկ [illegible] չկայր [illegible], զի[illegible] [illegible] մեղաց և [illegible]ութե լինէր [illegible]ութիւն ։ Եւ [illegible] [illegible], [illegible] [illegible] հոգին՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

մեռաւ ունէր սատանայ ը՟ խուռն եւելանունի, յաղթօղ բանիւ երբեւ սրով խոցեցեր զարգելս մահուն պարտաւորութեան. (ըստ զաքար. Թ. 11.) * Արձակեցեր զկապեալս քո յանջրդի գբոյ||։ Եւ զնեղոյն նործիս ցրունեշէ. զի փրկագործեցեր յարգամրոցն զապաշխարս և զարհաւթս՝ որ ՚ի մեղաց։ Կամ, արձակելով զկապեալսն ՚ի սատանայէ, բարձեր զկործիս հրեից՝ որք համարէին զքեզ չարագործ և մահապարտ, այլև զկործիս գիւտացն՝ որք կարծէին զքեզ երբեւ զայլ մարդիկ մեռեալ ՚ի պատճառս մեղաց։

(4) Զձեռս ողնդանեաւ։ Տառապեալ, չարչարեալ ՚ի զընդանի մտքս, փոքր ոնէ Վէրս, Թանձր տղմով լցեալ գբոյս, որով խիճանէին զարշութիւնք մեղաց։ Նման երեմիայ ընկեցելոյ ՚ի գուբ տղմոյ, զոր չարախօսք նորա երբեւ նենգաւոր խոցանէին։

(5) Բառանկան ըստ օքն յոխոբայ։ Կարօղ յանծի՝ ըստ որում առաքեալ ա- յսկոր նահապետ. (ծննդոց. լէ. 11։) մի օրէն. յոբայ։

(6) Ճանճանչ կնդանօղ։ Ասլեկօղ երբեւ զձառաղայլթս արեգակեան, ըստ հանրական բաքանգարանցն է. զի ճառճանչ առհասարակ յամս լինէր Թագաւոր-ցօղ։ Նորհրդոյ մեծի. որ ունի զմեծ խորհուրդ, կամ զաղանսածածուկ. զի լոյս ածայնին մտացն անցանէ մինչև ցխորշուածս հոգւոյ և ուղղոյ, և քննիչ է մտաց և խորհրդոց սրտից. (եբրայ. դ. 12.) և այսու Թագաւորութիւն զանանս կնդանէ մաքրելով, զայլս՝ ապաշխարելով, ամենից բարեկարծեցեալ խորհուրդն և երգք՝ ցուցանէին ընդ չար. յայլս աղաչանք զարմանալիք ներգործին, և։ Թուէ ակնարկել զբան Խմաստ. է. 24. 25. * Ընդանանէ ընդ ամ վասն յստակութեան. քանզի ճառճանչ է այ զօրութեանն և||։

(7) Ցուցէ՛ ղէս յաղորմութէ. աղորմութիւ քով, և մի՛ խստասիրտ արդարութեան. երկայնմտութիւն, փոխ ՚ի հատուցանէ, ծիրգ կի անաչառութեան քննութիւ։ Զմեղս իմ կշռեա՛ ընդ քաղցրութեան քո, և մի՛ ընդ արդարութեան. զի առ առ նախնամն. 2 օրէն. առ առ, առ չափ ողորմութեան մեղք իմ Թեթևանան. խոչ ՚ի ներհայ վերջնոյս, համեմատ արդարութեան ծանրանան։

---

Մերոփին յաւելուած նըէին հեծութեն՝ նորին հոխողէ, առ նոյն աղերս նողոչանաց բանի։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ։

# ԲԱՆ. ԺԱ.

ա. Որդ՝ աղաչեմ զխնամակալդ վտանգաւորաց տաժանելեաց կրից Թաղծութեց հոգւոց վշտացելոց։ [1] Մի՛ յաւելուր հեծութեա ցաւ. մի խռովեցեր զվիրաւորեալս. մի դատապարտեր զպատժեալս. մի տանջեր զչարչարեալս. մի գաներ զհարուածեալս. մի գլորեր զանկեալս. մի կործաներ զգայթագղեալս. մի մերժեր զհեռացեալս. մի տարագրեր զհալածեալս. մի ամաչեցուցաներ զպատկառեալս. մի կըշտամբեր [2] զհարթուցեալս. մի խորտակեր զբեկեալս.

մի խռովեցուցաներ զամբոխեալս . մի աղէկոծեր [3]
զբաքացեալս . մի սասանեցուցաներ զդղրդեալս . մի
շփոթեր զմրրկեալս . [4] մի կեղեքեր զցփշատեալս . մի
ջաղջախեր զբեկեալս . [5] մի գօշեր զմորմոքեալս . մի
կուրացուցաներ զխաւարեալս . մի զարհուրեցուցա-
ներ զապշեալս . մի խորովեր զխարշատեալս . մի մա-
հացուցաներ զհիւանդս . մի բեռանց ծանրութե մատ-
ներ զտկարս : Մի անուր յաւելուր կարկամեալ թի-
կանցս . մի կրկնակի ողբումն՝ դառն հեծութես . մի
ուժգնապէս վարեսցիս առ հողս . մի սաստկապէս՝
առ մոխիրս . մի անաչառապէս՝ առ ստեղծուածս .
մի ահարկութեամբ առ փոշիս : Մի ընդհարկանիր
խստութե մեծդ՝ ընդ փոքուս . լոյսդ՝ ընդ ստորնա-
կանիս . բնութեամբ բարիդ՝ [6] ընդ 'ի բնէ չարիս . ող-
կոյզդ օրհնութե՝ ընդ պտղոյս անիծից . քաղցրութիդ
իսկապէս՝ ընդ համայն դառնութես . փառաւորեալդ
անփոփոխ՝ ընդ ամենեւին անարգիս . կենացդ նշխար՝
ընդ կաւոյս զանգուածոյ . տէրդ տերանց՝ ընդ տղմիս
երկրայնոյ . աննուազդ լրումդ՝ ընդ չքաւոր սորկիս .
անկապուտ Ճոխութիդ՝ ընդ անպատսպար տառա-
պելոյս . անկարօտ բարութիդ՝ ընդ ամենաթշուառ
աղքատիս : Զանզի ո՞վ ոք հասեալ յառաւօտ , և [7]
'ի ծագման լուսոյն խիթայ մթանալ . և կամ ընթե-
րակաց կենաց , մահանալ . կամ ազատութե , և պար-
տաւորիլ . կամ շնորհաց , և դատապարտիլ . կամ
փրկութե , և մատնիլ . կամ նորոգման , և եղծա-
նիլ . կամ օրհնութե , և տարագրիլ . կամ բժշկու-
թե , և վիրաւորիլ . կամ լիութե , և նուազիլ . կամ
յաճախութե հացի , և քաղցնուլ . կամ գետոց հոսա-
նաց , և պասքիլ . կմ մայրենի գթոց , և նենգիլ . կամ
խնամոց ածեան աչքոյդ , և զզուիլ :

Է . Նու արդ՝ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմ-
նոյն բորոտութե հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ ,
տէր՝ եթէ կամիս , կարող ես զիս սրբել : Ընդ [8] աչա-
ցաւացն նեղելոց մշտագիշերն խարխափանօք՝ մեծա-
կական ձայնիւ հառաչեմ . ոչ որդի անուանեմ դաւ-
թի , այլ ծնունդ էիդ այ դաւանեմ . [9] ոչ միայն ռաբ-
բի կոչեմ , որ վարդապետացն է պատիւ՝ կարծողա-
կան զխսկն գիտելոյ , այլ տէր երկնի և երկրի հաւա-

տամ: Մ՚չ ձեռինդ միայն ձգմամբ հպաւորութեան, ով բարեգութ ած մերձաւոր, այլ ՚ի բացեայ գոլով միջոցաւ մեծաւ՝ ակնունիմ զօրել քո բանիդ առ իմ բժշկութի: Մ՚չ թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի բանի, որ երկմտութեն կարծի նշանակ՝ ՚ի մէջ արկանեմ [10] կամելոյն և ողորմութե, այլ կամիս որպէս բարեգութ, և կարես որպէս զարարիչ. տամ բանիւդ, և բժշկեցայց: Ընդ հարիւրապետին հաւատոց [11] և ես լծակցեմ. ոչ մինչ անձուկ միայն բացակայութե հեռի լինելով խորան ՚ի խորանէ, հաւատամ ազդել քոյ կարողութեդ առ յարուն և բժըշկուի, այլ ՚ի վերինն երկնի բազմելով, և ՚ի ստորինս երկրի բովանդակ առ հրաշիցն սքանչելութի ոչ ունիմ հաւատացանել:

Դ. Շնորհեա ինձ, որպէս դատաւակնիւք բանին քո վճռեցաց առ պոռնկին ընդունելութի [12] հնգից հարիւրոց դենարաց պարտուց շնորհաբաշխութի ած բարութեց և տէր երանութեց. որ յաճախին ընձեռել՝ բազում փառաւորիս, և ՚ի շատն մատուցանել՝ նովին չափ սիրիս. և յառաւելն ողորմել՝ կրկին բարգաւաճիս. և յայսքան բարիս՝ իրաւամբք գովիս. և [13] ամի տէր գոլով հաւասարորդ ճանաչիս. և որ զբոլորն ունիս՝ ընդ մերումս կշռիս. և անճառելեաւդ ձրիւ՝ մերայնովքս վճարիս. և ընդ երկրաւորիս՝ զանվախճանն պարտ վարկանիս. և մեծագրեալ քո ըղմերն՝ վեհս գոհաբանիս. և ՚ի սակաւուն տուչութի դոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս: Արդ և ինձ զնոյն գթուի՝ ունողիս զգործս անհամար պարտուց. զի և ՚ի ճառս երախտեաց քումդ պարգևաց՝ [14] նորին իսկ սակով սիրելն կարգեցի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) Մ՞է յաւելուած: Մ՛ի լքանելով զիս ՚ի քո յուսոյդ և ՚ի մխիթարութէդ, ՚ի մերոյ հեծութեան տառապելոյն ցաւ հոգւոյս: Յայս հայելին բովանդակ յանձնում բանիցն այսպէս նմանութիւն. յորս աւելին առ Ած, մի խոցեր, մի դատեր, մի կուրացուցանեն եւն, իմանի՝ մի թոյլ տար խոցել, դատել, կուրանալ:

(2) Զհաւատացեալս: Զերկրաւորեալս, կամ զանձնիշխանեալս ՚ի խորքէ մտացն՝ մի կշռաւեալը:

(3) Զէջացեալս: Զհարեալս ՚ի բերոյ, զհողմնակոծեալս մի տար տէկածել.

(4) Մի կեղծեր դգիլափելու : Մի՛ աղճատեր կամ ծուատեր զպատառեալս :

(5) Մէ գոշէր դմորմոթելու : Մի՛ խածաներ զկսկծեալս :

(6) Ընդ 'ի բնէ լուրիս : Ընդ իս՝ որ բնութ. չար եմ վասն լինելոյս յոչընչէ, որ ըստ ինքեան չար է, կամ վասն սկզբնական մեղացն, որ 'ի ծննդենէ ըստ բնութեն ասացեալ լինի : Կենացդ նշխար. սկիզբնդ կենաց՝ մի՛ հարկանիր ըստ անկենդան կաւոյս :

(7) 'Ի ծագման լուսոյն խիբոյ, կասկածի՝ երկնչի միանալ, խառնակիլ : Ու կամ ընթերակաց կենաց, մերձ գոլով կենացն՝ երկնչի մահանալ :

(8) Աւշոշանայն նեղչելոց : 2 օրին . ուշոշանայն նեղչեյելոց :

(9) Ո՛ւ մոթն ... : Իբրև զկոյրան ոչ լոկ ուսոյց կոչեմ զքեզ, որ է սովորական պատիւ վարդապետական, հարծողական դինին գիտելոյ . այլ որ ըստ կարծեաց թողու զխոտել զիւսկն կամ զմուն անձն, թէ ո՛ և որպիսի՛ ոք է . զի կոյրքն և հրեայք վարդապետ միայն կոչելով զքեզ, ոչ ցուցանէին զանէրութիւն քո և զմծութիւն . վասն որոյ ես փոխ երբեք ու երկեր հասափամ : Ոմանք զմերոզդրեալ բանդ այսպէս խմացան . վարդապետական անուն առեալ լինի յուսուցանելոյ . և ցուցանէ զգիտութիւն իսկութեն օրինաց . և վարդապետք հրէից ուսուցի անուն ըմռնելով, կարծեցուցանէին զխոտել զիւսկն օրինաց, և ոչ զխոտէին : Բայց այս զխառաւորութիւն ոչ յարմարի բովանդակ բանին :

(10) Կամեղոյն ու դուրմանեանն : Ո՛չ եթէ իբրև զբարոան ( մատ . ը . 2 . ) դրոշմութն ինչ կասկածական բանի 'ի մէջ ձգեմ կամելոյդ և ողորմութեանդ, ասելով, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել . որ զերկմտութիւն ինչ ցուցանէ կամելոյն, այլ ես հաւատամ անկասկած՝ թէ իբրև ողորմած՝ կամիս, և իբրև արարիչ՝ կարող ես : Այս են միտք բանիս . առ կայն հայելով յամբողջ պարքերութիւնն, վկնալով երեւի 'ի բանն կամելոյն, փոխանակ գրելոյ կորելոյն . այս թէ ոչ՝ առաւելօք կամելն և ողորմութիւնն կամ ողորմելն՝ զնոյն նշանակութիւն բերեն . ըստ որում և 'ի բացատրելն ասէ, կամիս որպէս բարեգոյն . ուստի ոչ յարմարէր խարրոց արկանել 'ի մէջ կամելոյն և ողորմութեանն . այլ և 'ի բանի բովանդակն երբէք մասնիկն խարոց դնէ 'ի մէջ կամելոյն և կարելոյն . զոր և ՆԸ վարդապետս մեկնելով, զատաբար յիշէ զկամելն և զկարելն :

(11) Ել-ետ ջիթոնեթ : 2 օրին . ջիթոնեթ : Թ կցորդիմ համորդիմ ընդ հաւատոց հարիւրապետին : ոչ թէ սակաւ հեռաւորութ. խորան 'ի խորանէ, այն 'ի տանէ՝ հաւատամ զօրել կարողութեանդ 'ի յարուցանել կամ 'ի բժշկել միայն, այլ 'ի վերին երկինս բազմելով քո, և 'ի սորին երկիրս բոլանդակ, ամբողջ գոլով, կամ բովանդակապէս ոչ կարեմ առ զարմանագործութի անբաւ հրաշից քոց հասուցանել, այսինքն բանիւ վճարել կամ պատմել : Հին լուծ . զկատարելութիւնն այսպէս խմանայ . 'ի բժշկութեան հարիւրապետին սակաւ միջոցաւ հեռի էիր, իսկ ես. և ոչ սակաւ միջոց հաւատամ, այլ անընդմիջելի մերձ : Ցոյժ հեռի ձգի 'ի դիտաւորութենէ սոյ վարդապետիս, որ յայտնապէս ասէ՝ թէ նա 'ի բարձրութեան երկնից հաւատամ զօրել կարողութեանդ, և ոչ թէ լոկ սակաւ բացակայութ. :

(12) Հնգից հարիւրոց դենարաց : Որ ( ղուկ . է . 41 . ) գնի դահեկան . իսկ ՆԸ վարդապետս գենար ասէ, զի երկու բառքս փոխան միմեանց գնին . որպէս ( մարկ . ժդ . 5 . ) սոր դահեկան ասի, նոյնն ( յովհան . ժբ . 5 . ) գենար գնի :

(13) Ամենայնի փէր 'գուլով : 2 օրին . որպէս և հին լուծ . ամենայն գուլով . այսինքն դու ամ ինչ գոլով, հաստարուրդ ծանուցիս . իբրև հաւատար մեզ 'ի դաշն մասանես, խոստանամք պարտ առնես զքեզ՝ ըստ վաստակոց վար-

ձրս չափել։ Զոր ինչ ունելով, ընդ Աբրահամ ևլն. զքեզ տեառ ՚ի փա-
խստէն գործոց մերոց։ կամ, ամենայնիւ հատուցանա ծախս գոլով, տակա-
ւին այնու փոքրուսմբն զոր մեք ունիցիք, զինչ անիս իբրև կարօտ, կամ զա-
ռաւել ինչ տացեալ համարելով։ Եւ փոխանակ անձնատուրք ձրիցդ՝ Ա-
բրահամեան շնորհս. զմեր գործս վճար տանելով և շատանամս։ Եւ զայն մեծ
համարելով, ըՀկն գոհաբանին. մեծապէս փառաւորիս։ կամ, բաղդատեմ
զողորմութիւնս ընդունելոյ պարտեանի ես. այնու զի զմեր չնչին գործս հա-
մարիս իբրև մեծամեծ վաստակս։ Եւ յորժամ ՚ի փոքր գործոց մերոց
քեզ տակաւ փառաք լինին, ոչ ամբարշտանին. ոչ զժուարիս՝ անմոլորե-
լուս համարելով քաւմ մեծութեանդ զփոքր տուրս մեր։ Խոստովանիմ.
այլ օրէն. խոստովանիլ։

(14) Նորէն խօսի ասելով։ Նախկին չափով. Է Թիւ երախտեաց քոյ՝ նախկին չափով կարգեցեր օտարելի քո զիս, և իմ զքեզ։ Կամ, ըստ պայմանի անքոյ պատճէնին կարգեցեր և իմ ստրկել. որում ասացեր՝ Թողութ զպարտս մեզ մեր յարժ ստրկելոյն։ կամ, նոյն խակ ստրուկն զքեզ՝ լինիցի մեծ երախտիք քո. զի յորժամ վասն բաղդատ Թողութեանդ առաւել ստրկեցեր զքեզ՝ իբրև զապաշխարող պարտապեն, նոյն խակ մեծ երախտիք են քո։

---

Սրտէն յառաջասացեալ երկէն հեծութեան՝ նորին հեղինակի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԺԲ։

ա. Արդ՝ ես ծնունդս մեղաց, որդիս մահացու երկանց, արդարև անատահման [1] բիւրուց քանքարաց տուժից գոլ հատուցանող ՚ի միում աւուր։ Այլ [2] ոչ թէ առ փոքրկուն մարդկային միտաց հայցեմ ներութի, այլ առ աննուազ լիութի փրկչիդ յոր քոյ պաղատիմ մարդասիրութի. որ չէի երբեմն, և ստեղծեր. չմաղթեցի, և դու արարեր. չև ես եկեալ ՚ի լոյս, և տեսեր. ոչ յայտնեցեալ իմ, և գթացար. ոչ կարդացեալ, և խնամարկեցեր. ոչ համբարձեալ ձեռն, և նայեցար. ոչ պաղատեալ, և ողորմեցար. ոչ կերպացեալ ձայնիս, և լուար. ոչ հեծեծեալ, և ունկնդրեցեր. [3] գիտելով զարդեան դիպուածոյս, և չանտեսեցեր. նախահայեցող աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութի, և յօրինեցեր։ Իսկ արդ՝ զքո արարեալս, և զքև փրկեալս, և զայսքանեաց խնամոց յանձանձեալս՝ մի իսպառ կորուսցէ մեղացն հարուած՝ գիւտք բանսարկուին. մի յաղթեսցէ յամառութեանս իմոյ մառախուղ՝ ներողութեն քո լուսոյ. մի սրտիս կարծրութի՝ եր-

կայնամիտ բարութեդ. մի մահացու մնեղիս՝ ամե-
նակատարդ լրութե. մի տկարութիւն նիւթոյ՝ անպար-
տելիդ բարձրութե:

Է. Ահա կարկառեմ զկարկամեալ բազուկս հոգւոյս
յանուն քո՝ հզօր, արասցես ողջ իբրև զառաջինն [4]
մինչ 'ի դրախտին փափկութե զպտուղն կենաց կթէիր:
Կաշկանդեալ գօսացեալ 'ի կոր կործանմամբ ընդ
կնոջն տագնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուա-
ռութի, ընդ երկիր պշուցեալ [5] մեղացն կքմամբ՝ սա-
տանայական բուռն կապանօք, զի մի զերկնայնոյդ
ընկալցի զողջոյն. խոնարհեա՛ց առ իս՝ միայն ողոր-
մած, զի բարձրացուսցես զփայտս խոնարհ բանաւոր
անկեալս, և զչորացեալս ծաղկեցուսցես [6] 'ի բարի
կրօնս վայելչութե, ըստ ածաբանութե նր. մարգա-
րէին: Որպէս զ'ի ծնէ կոյրն անլուսաւոր՝ չունիմ
տեսարան, որով զստեղծչիդ նկատել զկերպ մաղթե-
ցից՝ հզօր բարերարութ, միայն դու պաշտպան ակնար-
կեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ 'ի շնչական խա-
ւարն քո անօթս, յանէից [7] գոյաւորութիւն լուսոյ
հաստատեսցես: Ընդ երկոտասանամեայ չարեօք չարչա-
րեալ վշտագին կնոջն տանջեցելոյ՝ գետովք մեղա-
նաց արեան հեղեղիմ. հայեա՛ց 'ի բարձանց անմա-
տոյց լուսովդ պարածածկեալ, [8] ուր ոչ է քղանցք
ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարա-
ծութե հրաշից ամենայն ուրեք զօրացեալ: Ո՛չ օծու-
թեամբ իւղով պատժապարտս ընդ մեղաւորին մա-
տուցեալ առ կենդանաձիր ոտից դարշապարդ՝ զկա-
թիլս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ
զամբիծ հաւատս՝ ամբարձմամբ բազկացս՝ ստոյգ դա-
ւանմամբ հոգւոյ ողջունիւ՝ շրթանց կափուցմամբ
զերկիր համբուրեմ. խառնեալ հեծութիւն [9] աղ-
բերցս արտասուաց, բժշկութի հոգւոյս աղերսեմ:
Մատնեալ մեղանօք [10] հոգւոյս գոյութիւն լուծեալ
մեղկութեամբ, և յերկուց կայից միայնակողմամբ
անհաստատ հետովք, զընթացից գործին՝ նահանջ-
մամբ չարին՝ զհետևականն բարձողութի շինուածոյ
մարմնոյս՝ առ ելս ծառոյն կենսաբեր պտղոյն խա-
փանեցելոյ, պատսպարեսցես անդրէն վերստին միայն
հնարաւորդ առ 'ի փրկութի: Զփառաբանարան [11]

հաստատածոյ կերպիս 'ի քէն եղելոյ՝ ամրափակ խրց-
մամբ համրացոյց որդեւ հողմն բանսարկուին· հոգիդ
քո ազդեալ մեծդ ողորմութիւն, ըստ յաւետարանին
բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեցեր բանդ-
կենդանի՝ ինձ խօսողութիւն անսայթաքելի ։ Ընկեալ
կամ չարեօք 'ի մահճիս ախտից ընկողնաց մեղաց՝ դու
կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ իմում
թշուառութեանս՝ 12 ողբականօք քքուանաց ձայնից,
ձով բարերար որդի այ, օրհնաբանեալ աչացդ ցօղով
վերականգնեցեր 'ի կենդանութիւն, իբր զսիրելին 'ի
յանշնչական մեռելութէ ։ 13 Սոյնպ. դառնացօղս 'ի
զքի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատու-
ցեալ՝ որպ՛ անսատուեր որդի բարձրելոյ, հանցես զիս
'ի լոյս քումդ նշուլից ։ Ընդ աղխողարմ թշուառու-
թեան կականման ձայնի՝ այրւոյն 'ի Նային՝ մօր միամօ-
րին, 14 տատանմամբ մատանցն, կոծմամբ կրծիցն,
հօսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դե-
մացն՝ և ես պաղատիմ վերջին հեծուքս, տուր յու-
սահատելոյս զքաջալերութիւն մխիթարութեան գթած
քո բանիդ, ասելով և ինձ գոմեալդ բարի ստեղծիչ
աշխարհի, թէ մի լար գերի՝ բազմաց ողբալի. որով
ընդ պատանւոյն կենդանացելոյ՝ 'ի վշտացելոյ ծնո-
ղին սփոփանս՝ զամենապարտ ոգիս ընկալայց 'ի քէն
ընդունմին կրկնանորոգեալ ։ Ընդ 15 այսակիր անզգայե-
լոցն՝ դիւալլուկ և քարակոշկոճ հեղձամղձուկ եղկե-
լի անձանցն, քստմնելի գիսախռիւ հերացն, վայրե-
նեբես բանդագուշելոցն՝ 'ի քէն ողորմեալ փրկիչ
բոլորից, իբրև զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ
մերժեսցես զգունդս չարացն ապականողաց՝ 'ի քո
խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի՝ այսրէն
հանգիցէ. լցեալ զմարմինս մաքրութիւն շնչոյս՝ զգեց-
մամբ անդամոցս, զգայօս արասցես զխելագարեալս
ամենաթշուառ ։ Ընդ գերեցեալ դժոխաբնակաց 16
վտարանդելոցն հոգւոց՝ արգելեալ կամ 'ի վտանգի.
զճառագայթ ողորմութեան փառաց քոց ծագեալ՝ լոյսդ
իմ անձկութեան, 'ի կապանաց օցտողին զերծեալ զիս
ազատեցուսցես ։ 17 Գաղտնորոգայթ աներեւութերակ
վրիպակ արահետ գարշութեան մեղացս ջրգողեցեալ
ոգւոյս կերպարան, կայ 'ի տագնապի. զծածկեցեալն

՚ի տեսողութեանց՝ զչարագործսն [18] նիւթիցն այլայլեցմունս, քո ինքնաւորդ զօրեղութեանդ ծրդի ոչ, զ-թածաբար առողջացուցես։ Ողորմագան տարագս ցեղիցն զանազանից ախտաւորութեանց [19] մահացուցանողաց՝ իւրականօք կորստեան բերիւք՝ դժնդակարմատն շառաւեղօք հաստատեցելովք ՚ի յանդգաստանի անօրէն մարմնոյս, տարակորզեցեր ՚ի ձեռն ձեռինդ ամենակալի. որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զսահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութիւն։

Է. Ու քանզի անցաւ ըստ նմանութեան օրինակութեանց յանցուածոցս վէր, [20] ըստ Ճարակողն քաղցկեղի, առ ընաւ անդամս մաշնաւորեալ զախտին տարածումն, չիք ապեղանի իբր իսրայելի առ անչափութեան խարանացն մատուցանել. ՚ի խարսխաց բարձիցս մինչև ցափն կառուցման լրութեան անդամոցս չէ առողջութեան, այլ ամենեւին անբժշկութիւն։ Իսկ դու՝ ողորմած բարերար օրհնեալ, և երկայնամիտ Թագաւոր անմահ, լուր պաղատանացս արդահատութեան որտիս վտանգի, որ կարդամս առ քեզ Տէր ՚ի նեղութեան։

---

(1) Բնագրաց փոխադրաց։ Յ օրինն. Բնագրոց փոխադրոց։ Բնիւր քանքարաց կորստեան [illegible] ՚ի հաստուցանել ՚ի մտաւ [illegible]։ [illegible] զբանն [illegible]։

(2) Ու եկ առ ճշգրիտ [illegible]։ Ո՛չ ըստ [illegible] հայցեմ թագաւորութիւն, այլ ըստ [illegible], հայցեմ [illegible]։ [illegible]։

(3) Գիփերուն [illegible]։ [illegible]։ [illegible], և [illegible]։ [illegible]։

(4) Մինչ ՚ի [illegible]։ Առողջացի առել՝ [illegible] հոգւոյս՝ [illegible]։ [illegible]։ Կամ, [illegible]։ Կմ, [illegible]։

(5) Մեղաց [illegible]։ [illegible]։

[illegible] ԺԷ [illegible]
[illegible]:

(6) 'Ի բարբ կրծոս վայելչութեն: մի օրին. 'ի բարբեկրծոս վայելչութեն. [illegible] (ԺԷ. 24.) * [illegible] . . . և [illegible] ||:

(7) Գոյաւորութեն լսաոյ հաստեցնէս: 4 օրին. հաստատեցնէս: Որպէս 'ի ծնէ [illegible]:

(8) Որ ոչ է [illegible]: [illegible]:

(9) Աղբերցս արփաւոյ: մի օրին. ընդ աղբերց արփաւոյ: [illegible]:

(10) Հոգւոյս գոյաւորին: [illegible]:

(11) Հաստատածոյ կերպին: [illegible]:

(12) Ողբականաց [illegible]: [illegible] (ծննդոց. [illegible]) [illegible] 2 օրին. [illegible]:

(13) Սփոյք [illegible]: [illegible] (տարեց. ա. 20.) [illegible]

[illegible] · ( Երեմ. ԼԷ · 7 : ) Անդ [illegible] , որ [illegible] · [illegible] Ա. Յ. [illegible] · և [illegible] :

(14) [illegible] : 2 օրէն · [illegible] , [illegible] Է [illegible] : [illegible] :

(15) [illegible] : [illegible] : [illegible] , 'ի [illegible] · [illegible] : [illegible] , 'ի [illegible] : [illegible] , [illegible] , և [illegible] : [illegible] , [illegible] : Ա[illegible] ( [illegible] · Է · 28 : [illegible] · Ե · 2 : [illegible] · Է · 26 : ) [illegible] , և [illegible] 'ի [illegible] · [illegible] 'ի [illegible] , [illegible] · և [illegible] , [illegible] 'ի [illegible] , [illegible] , և [illegible] :

(16) [illegible] : [illegible] 'ի [illegible] · [illegible] : [illegible] և [illegible] 'ի [illegible] · [illegible] 'ի [illegible] :

(17) [illegible] : [illegible] , որ է [illegible] , 'ի [illegible] · [illegible] , Է [illegible] · [illegible] , [illegible] 'ի [illegible] · [illegible] , [illegible] և 'ի [illegible] : Ա[illegible] , [illegible] և [illegible] , [illegible] , և [illegible] :

(18) [illegible] : 4 օրէն · [illegible] : [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] :

(19) Մ[illegible] : 2 օրէն · [illegible] : [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] 'ի [illegible] , [illegible] , [illegible] :

(20) [illegible] : [illegible] · ( որ է [illegible] · [illegible] · ) [illegible] , [illegible] · [illegible] և [illegible] , [illegible] և [illegible] : 'Ի [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] · ( [illegible] · 6 : ) [illegible] , [illegible] 'ի [illegible] :

Սջերմին յառաջեալ երկինն հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն
աղերս ճաղբանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# Բ Ա Ն․ Ժ Թ․

ա․ Նայեաց ամենահայեաց տեսութիւն կենաց բա-
րութեան յուսոյ, 'ի մեծաբարբառ աղաղակ
ցաւագնեալ անձինս հեծեծանաց ։ Ո՞վ հզօր մեծութիւն ․
անմահ ահաւոր ․ բարերար կենդանի ․ լոյս ցանկալի ․
ճաշակ ախորժելի ․ կոչումն պաշտելի ․ բարութիւն խոս-
տովանելի ․ [1] ազդումն խնկելի ․ իսկութիւն դաւանե-
լի ․ էութիւն փառաւորելի ․ գոյութիւն օրհնաբանելի,
տէր Յս ընդ հօր քում գովեալ և երկրպագեալ, և
ընդ հոգւոյդ սբյ բարձրացեալ և վերաձայնեալ ։ Որ
միայն [2] մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի արասցես
զմեզ վասն քո՝ ըստ քեզ ․ լոյս ամենայնի, յամենայ-
նի ողորմած, հզօր, երկնային ։ Եւ այժմ զլուծեալ
և զխորտակեալ հողանիւթ անօթս՝ ամենօրէն հրաշա-
կերտութեամբ, աղաչեմ գթած, նորոգ հաստատեա ։
Զքոյին պատկերս մեղօք հնացեալս՝ [3] 'ի քրայս հա-
լոցաց կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ,
վերստին ձուլեա ։ Զխախտեալ շինուածս քումդ
հանդստեան [4] խորանի մարմնոյս՝ պահպանաւ հոգ-
ւոյս, մաղթեմ բարերար, 'ի բնակութիւն քեզ մա-
քրագործեա ։ Մի հատուցաներ չարեացն իմ գոր-
ծոց՝ զնոյն փոխատրութիւն ։ [5] Արբեալ եմ ըստ մար-
գարէին բանի՝ և ոչ 'ի գինւոյ ․ Թափեա զմրուրս
անօրէնութեան թմբրութեան մահու բաժակիս՝ ազատարար
հրամանաւդ՝ ամենակեցոյց, զի մի զքոյդ քամեցից 'ի
վերջին աւուր յետնում հատուցմանն ։

բ․ Արդար ես յիրաւունս քո, և յաղթող 'ի դա-
տաստանի ․ եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք
քո ․ եթէ դատապարտես՝ աստուստ սկսեալ զտան-
ջողականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո ․
եթէ յանդունդս խորոց սուզեսցես, թէ զկենդանու-
թիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութիւն ունայ-
նացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացու-
ցես, [6] թէ զկենացն ճաշակ 'ի քեզ ինքն ամփոփես-

ցես, թէ զհաստարակաց կերակրոյս դարմանս բարձ-
ցես, թէ [7] զաւուրցս հարստութիւն համառօտեսցես,
թէ ըստ իջման քաղցրութեան ցօղոյ՝ և հուր տեղա-
ցես, թէ [8] 'ի լրութէ բանի քո սովեցուսցես, թէ
զականջաց դրունս խցցես, թէ զշնորհիդ ձիր կորեա-
ցես, թէ զգետին յատակի ոտիցս [9] սասանեցուսցես,
թէ յանձկալի երեսաց լուսոյդ քո հանցես, թէ 'ի
համօրէն աշխարհէ աստի հերքեսցես, թէ փայլա-
տակմամբք հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցա-
ւօք դատեսցես, թէ դիւաց չարաց մատնեսցես, թէ
գազանաց ժանեօք մանրեսցես, թէ հողմով ցրո-
ման հոսեսցես, և թէ այլ ինչ նորոգ արարած տան-
ջանարանաց կազմեսցես՝ չար քան զտարտարոսն, և
սաստիկ քան զգեհենն, թունաւորագոյն քան զոր-
դունսն, տարակուսելի քան զխաւարն, երկիւղագին
քան զխորխորատն, ողորմելի քան զմերկութիւն, վը-
կայեմ անձամբ անձին՝ յոյժ [10] պարտապան գոլ
տոցա։

Զ. Այլ քանզի յաւէտ տպաւորագոյն են [11] նմանու-
թիւք փոխաբերութեանցն՝ առ ազդակցութիւն մեզանացս՝
իբր պատկերակիցք միատեսակք զուգաշաւիղք՝ նշա-
նակիչք այսր խորհրդոյ, արդ կարեւոր է խոստովա-
նել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս՝ առ ծա-
նօթուն խնդրողին։ Որպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ
ընկերին կարիս մատուցայ, [12] յիրաւի 'ի նախնումն
վտանգին տառապեալ սառնում։ Այլ զի ոչ [13] զցան-
կականն խորոխտականութիւն ամենեցի, յարժանի կրեմ
եղկելիս՝ զանզգամնալի զկիզումն։ Այլ քանզի ոչ սի-
րեցի զլուսոյդ աւետիս, արդար հատուցմամբ 'ի մը-
թութիւն ըմբռնողական միգին կորստեան վրիպեալ
դանդաչեմ։ Այլ զի ոչ խոտորեցի զմանուանս փուքումնցն
յանցանաց, իբրև անմխիթարակարք վարկանելով, պատ-
կանապէս 'ի խածանողականացն զազիրն զեռնոց
խթեալ խոցոտիմ։ Այլ զի ոչ ձեռն կարկառի առ
կիրս վտանգաւորին՝ այց առնել նմին, 'ի դէպ իսկ [14]
ըստ գծագրութե այսր օրինակի, ապականութեան զբոյ
նուիրեալ մատնիմ։

Է. Այլ արդ՝ [15] ոչ յածուստ ամենաբարի գանձուցդ՝
չարիս, և ոչ 'ի լուսոյդ նշուղից՝ խաւար, և ոչ յա-

պաշտօնութենդ՝ զայթագղումն, այլ եւ յինձէն կորըս-
տեան որդիս զտի զայսոսիկ. Մեղանք անօրէնութեան
իմոյ զանձեցին նուաթեցին զայսքանեաց բարկութեան
մթերս. 16 Հոգւոյ իշխանին մոլորութեան հնազանդեալ,
թողի զտեղի քո՝ Նորա, ըստ գրոյն խրատու յանդի-
մանութեան: Եւ քանզի յայտնեցաւ յետուստ զաղտ-
նեաց առականաց 17 մարմնոյս անդամոց, եւ արկաւ
զերեսօք կերպիս՝ անվայելուչ ստուեր ամօթոյս, ըստ
մարգարէին առակի, տգեղս ցուցեալ զիս ամենեւին՝
իբր մերկացեալ խայտառակեցելոյ պատկեր, ծածկեա՛
յիս զլոյս քաւութեան՝ որքան երկնաւոր. զի 18 թօթա-
փեալ զմեղաց փուշս, ըստ աւետեաց ձայնին դարձե-
լոցն 'ի բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ 'ի
հողոյ, եւ 'ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ ան-
սասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրու-
թիւն բազկի կարութեան նախնում մաքրութեան, վասն
մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգեւ քոյ
ածութեան. օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Աղօթանս խնկեալ. իբր աղաչելութիւն կամ զօրութիւն օրհնելի: Խնկա-
ւէտ [illegible]. խնկութիւն կամ զինչ էր՝ է միայն [illegible], հաստատ-
ելի, եւ ոչ հասանելի. որպէս եւ էութիւն, գոյութիւն՝ [illegible] է.
2 օրէն. [illegible]. օրհնաբանելի՝ քան թէ քննելի: Եւս եւս, յարա-
բանական իրքս՝ խնկութիւն նոցա, կամ էութիւն եւ գոյութիւն ոչ են
ինքնին [illegible] ոչ [illegible], եւ ոչ [illegible],
[illegible] մարդոյ խնկութիւն կամ էութիւն [illegible] ոչ
[illegible], եւ ոչ [illegible], այլ իբրեւ անհաս կամ անձնաւորեալ:
Ընդհանրապէս՝ յԱծ խնկութիւն նորա եւ գոյութիւն ինքնանք է [illegible]
[illegible] եւ [illegible]. Նոյնպէս ինքնին է [illegible], [illegible]
եւ այլն:

(2) Մարմնացոյց [illegible]: Վասն մերոյ փրկութեան, ըստ մեզ, ըստ բնութեան
մերում, եղեալ իբրեւ զմեզ մարդ: Զի արարեալ զմեզ [illegible], [illegible]
[illegible] քոց, վասն [illegible] քոց, ըստ [illegible], իբրեւ զմեզ [illegible], եւ [illegible]
շնորհօք:

(3) 'Ի [illegible]: Զքեզ [illegible] մեղօք՝ [illegible]
'ի [illegible], (այսինքն 'ի [illegible] կամ 'ի [illegible]
[illegible].) [illegible], [illegible] քո, կամ [illegible]
րութեան հրամանաց:

(4) Խուզանի [illegible]: Զմարմինս՝ որ կացուցեալ խորան հանգստեան քո,
եւ մեղօք խափանեցաւ, մաքրագործեա [illegible], այսինքն հան-
դերձ հոգւովս, որ է [illegible] մարմնոյս:

(5) Աւերեալն: Յաւիտենական կեանք հոգւոյ, եւ ոչ թէ 'ի բնական [illegible]
ապականեցեալ են, ըստ մարգարէին եսայեայ. (Եղ. ց. ծա. 21.) որ չեար ես
է քան զմարմնոյ ապականութիւն: Այլ զու բարերար՝ [illegible],
մաքրեա՛ յինէն [illegible] մեղաց [illegible], զոր ես իբր [illegible]

գլխոյ, և մեծահարկ թմբրութիւն ածեն 'ի վերայ . զի մի՛ յետոյ դիպող գա- ձեցէ, զգաստական բարկութեան և վրէժխնդրութեան խաւսու արբից, ճաշակե- ցից բովանդակ 'ի հանդերձեալ սանձահան . ըստ բանին երեմ . ( եմ . 15 . 16 : ) Հլին լծ . մրուր խմանաց զհանդերձեալ սանձահանն, և գինի՝ զաստուածային պատուհասն . և համարի՝ թէ աղաչէ այնս այժմեան թափել 'ի վերայ նոր զպատուհաս անտի սանձահանացն : Բայց ո՛չ յարմարի այս կարգի բա- նիցն :

(6) Թուէ շնչնոցն ճաշոյ : Զկենդանական շունչս, կամ զհոգիս, Դ՛ փեղ ընդն ամփոփեցես, յետս առցես :

(7) Զառաւուցս հարցափոխելն : Զբազմութիւն առուրցս կամ ամաց կեր- ճեցես :

(8) 'Ի լըումն բանի քոյ : 'Ի լռելութեան բանիդ քաղցելոյ թողուցուս, ըստ բանին՝ տաց ձեզ սով լսելոյ զբանն Տն : ( ամովս . Ը . 11 : )

(9) Սատանեցուսցես : մի օրին . սատանեցես :

(10) Պարփակեալն գոլ : 2 օրին . պարփակեալն :

(11 Նմանութիւնս փոխադրութեանցն : Ցոյժ յարմար են համեմատութիւնք հա- տուցմանցն կամ պատժոցն՝ որ միանան ինձ աստ կամ 'ի հանդերձեալն, առ նմանութիւն մեղացս . որք ի՛եր պատահեալքեալքդ՝ են նշանակիլք այսր խորհրդոյ . այսինքն այսր համեմատութեան պատժոց : մի օրին . նշանակիցէ : Այլ գ՝ զայս կարեւոր է ասէ՝ խոստովանել, և բանալ ...երեացն ծածկոյթ, զպատարագական բանին, զի ծանիցէ խնդրօղն . զոր և 'ի կարգին բացայայտէ :

(12) 'Ի նախնական վտանգին : 'Ի պատահել առաջին վտանգին կամ փոր- ձանաց՝ յիրաւի սասանումն կորուստ, այնու զի սասանեցաւ զայս 'ի կարգս ընկերին : փառաւորելով . 4 օրին . փառաւորել :

(13) Զդանկոկանն խորովեալն : մի օրին . խորովումն :

(14) Ըստ գծագրութեան : Փոխաբերակ զի անկելոյն 'ի գուբ կամ 'ի բանտ ոչ մնասցի ձեռն, պատաշաճապես ըստ նշանակութեան այսր օրինակի՝ մատնեալ 'ի գուբ դժոխոց :

(15) Ուսպծուսք : Որոմնհնդեան անհնար է յածեալն ամենայնի գան- ձուցն յառաջ գալ չարի ինչ, որպէս ո՛չ 'ի լուսոյ խաւար, և ո՛չ յա- մենայն առաքինութեան գտել կամ գայթակղել, յայս է թէ ես կորստեան որդիս հնարեցի, մեղք իմ գանձեցին ...բարկութիւն միերս . զայս քան նիւթս, պատճառս բարկութեան ինչ 'ի պատուհասել զիս . ուր այս- փանեաց առնելով ...բարկութիւն, ...եղեալ է, զի նաև բարկութիւն լռելեայն բարեմտութեան իմանի : Իսկ առնելով ...կան բառին միերս, ...եղեալ է ...ըստ [illegible] [illegible] : [illegible] Քերթողի . համար 924 :

(16) Հոգւոյ իշխանին : Ցայս ...եղեալ էր միերս հոգւոյ, ըստ այլ- այլ գրչագրաց : Սակայն ոչ միայն ըստ իմաստից յարմարի առել միերս հոգւոյ, ուր յիշատակեալ պատուհասքն պատշաճին և մարմնոյ, այլ առաւել ես՝ զի այլ օրինակք ընթեռնուն՝ հոգւոյ իշխանին . և այն իսկ գայ 'ի դէպ բանի ժողովողին : * Եթէ հոգի իշխանին ելցէ 'ի վերայ քո, մի՛ թողուր զտեղի քո || : ( Ժ . 4 . ) Ըստ ճառին զայլ մի... ...բանք . բայց յարմարական մեկնութիւն առէ, հոգի իշխանին մոլորութիւն . 2 օրին . մոլութիւն՝ այսինքն ...թիւն կամ կատաղութիւն գլխին շարժե- ցաւ 'ի վերայ իմ, և ես հնազանդեալ կամաց նորա, թուլացայ, թողի նմա զտեղի իմ՝ որ առեղի քո է . զչար իշխանն նախանձող առաջի քան զքեզ . ըստ Գրոյն խորհրդոյ, որ խրատեցուցի չթողուլ զտեղին, յանդիմա- նէ զթողուն :

(17) Մարմնոյս մարտանաց : Խայտառակութիւն մարմնական գործոցս, որք առնին անդամովք մարմնոյ : ( կողոս . Գ . 5 : ) Իսկ յիշատակեալ առակա-

ւոր բանին բովանդակ՝ է նուաստութեան. (Պ. 5. 6.) * Ցուցանեցից զկատա-
քո, և ցուցից ազգաց զամօթ քո ևն || ։ Ուր հին լծ. անյարմարապէս
ը մասին զեղայրեալ բանին կարծէ. (Խէ. 2. 3.) * Բաց զարուձս քո . . .
յայտնեսցի ամօթ քո ||. և բոտ մասին յեղեկէլէ բերէ ամէլ։ Զապա-
ւառ անառակաց ձերոց յերեսս ձեր զարձուցից։ որ չէ յեղեկիէլ, այլ մա-
ղաք. Բ. 3. ամ. * Ցանեցից զապարանսն Է երեսս ձեր՝ զապարանսն տօ-
նից ձերոց ||։

(18) Թօթափեալ վեղոյ խուլս. Հայր 'ի բանին եսայ. ԾԲ. 2. * Թօթա-
փեամ զփոշիդ, յառն կաց և նիստ Երուսաղէմ ||. ևն. որ անհնարէ 'ի գոր-
ծածուլն 'ի գերութեան բաբելոնացւոց. ուր և զկնի յայտնէ։ Այսպէս ասէ
զգեցեալ զզօրութիւն. է բանին եսայ. (անդ. համար. 1.) Զգեցիր զօրութիւն.
այսինքն կարողութեան։ Խմաստք բանիս են. որովհետև առհաս խոստովա-
նութիւնս յայտնեցի զամօթալի մեղաց իմոց, ծածկեալ յիս զզօրս քաւութեան՝
որով ծածկեսցի խայտառակութիւն իմ. և մաքրեալ 'ի մեղաց՝ համառ-
ձակեցայց յանաստանելի յոյսդ, զգեցեալ զկարողութիւն բառ առաջին
մաքրութեան աւազանին. և զայս հայցեմ վասն մեծանալոյ փառաց քոց,
զի քաղցր ես նաև առ անարժանս։

---

Մերորին յաւելուած նշէին հեծութեան՝ նորին հանդէի, առ նոյն
ողբոց մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. Ժ։

ա. Տէր տէր՝ անոխակալ և երկայնամիտ, Ներող, բարեգութ, հզօր, ողորմած. ահա՛ ճշմարտութք են գործք քո, և խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրողութիւնք քո՝ տեսօղդ ծածկութեց։ Ընդ երից երջանկաց մանկանցն՝ որք կիզանողական բոցովն փորձեցան, և ոչ վնասեցան 'ի բաբելովնի, զնոցա թախծութն զերգն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի։ Նա քանզի մաքուր գոլով 'ի վնասուց նոքա, և զայս խոստովանութիւն գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ ամին ողբոց երգուե, և այլ յաւելից՝ ամենապարտս մահու։ Ընդ դանիելի երանեալ և նք մեծ մարգարէի, որ 'ի քում հարազատութն ազգականութէ տանն յուդայի՝ շառաւիղ ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուիրական բանից պաղատանս, խմուս պատժականութն գոչմամբ հեծութն՝ և այլ կրկնեցից։ 'Ի մէջ գիտութեն՝ անպատշաճականս գնացի, զարտաուղի սխալեալ դժնդակա-

ղէս. այս է՝ ամենայնիւ ամենայն իրօք մեղանչելն։
Ըստ սահման կշռութեան կամաց քոց արտաքս վարե-
ցի. որ է հաւաստի կերպարան բասիր անօրէնութեան։
Ընդդիմակցն չափոց՝ չարութեան գործոց լրութեամբ յաճա-
խութեան նիւթեցի. որ է ճշգրիտ պատկեր յանցաւո-
րութեան։ Ապականեցայ, և ոչ զարհուրեցայ. արգա-
հատեցայ, և ոչ երբէք լուայ. որ է ապստամբութեան
յայտնի նշանակ։ Վասն զի արդարութիւն հանդերձեցեր
բարերար, և ինձ ամօթ և պատկառանս պատրաս-
տեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նախատինս
յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ, և ինձ
[2] մաղձ քացախեալ՝ ի կատարածի. քեզ բարեբանու-
թիւն անլռելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի. քեզ
օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն տարա-
գրութեան [3] անյուսալի. քեզ երաշունս բազմարժանիս,
և ինձ պատասխանատուութիւնս ամենավարանս. քեզ
բարձրութիւնս անճառ գովեստից, և ինձ զաձիւն լը-
զելոյ՝ [4] պատիժ ձաղանաց։

Ը. Նոր արդ [5] ընկալար դու բարեաց ընտրութեանց
անկշիռ սահման՝ զքոյոցդ ախորժականաց կնդրկաց
պտղոց վերաբեալ ըստ քեզ, և ես զիմոյս աստէն ա-
ամին պարսաւանս յոգունս՝ կրկնակի բարդեալ ինձ
ըստ իս։ Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր
յանձնառութիւն, իսկ ինձ զո՞րս հիւսեցից շարս և տաղս
բանից զորովականաց, որ քան զամենայն դժնեայս՝
յաւէտ վրիպեցայ։ Մոլորեցայ [6] անտառակ ընթա-
ցիւք՝ ի միտս վայրենիս. յանդգնեցայ շըթամբք խօ-
սից՝ ի բանս երկրաւորս. զանկատեցայ անկասելի՝ ի
պատկառելեացն գործոց։ Փքացայ, վերացայ, որ
յետ սակաւ մի ժամանակի ի հող մահու եմ իջա-
նելոց. գոռոզացայ, բարձրացայ, որ [7] և ոչ զգրա-
ւական հոգւոյս տուրևառութեան շնչոյս՝ ունիմ ի ձե-
ռին։ Ամբարտաւանեցայ փոշիս շնչաւոր. ամպար-
հաւաճեցայ կաւս ձայնաւոր. հպարտացայ հողս ա-
նարգութեան. ի վեր ամբարձայ մոխիրս մերժելի. [8]
բազուկ կառուցի բաժակս մանրելի։ Տարածեցայ
առաւել իբր վէհ, և դարձեալ իբր զհերքեալ առ-
խս ինքն ամփոփեցայ։ Նարկութեամբ բայով. ցոլացայ
տիղմս բանաւոր. իբր զանմեռ ոգ մեծամտեցի, որ

ընդ քառատամնեայ ժամհու եմ փակեալ։ Փրկես առ-
կի կենցաղոյս սորոյ, և 'ի քեզ Թիկունս՝ փոխանակ
դիմաց դարձուցի. 'ի Թուիչս մտաց՝ ընդ խաւար
խորհրդոց սլացայ. զանարատ հոգիս՝ մարմնոյս փափ-
կութե յաւէտ վատեցի. զզօրութի աջական կողմանս՝
տկար արարի, 9 ահեկանացս կայից ուժգնութի տա-
լով յաղթեցի։ Օ քեզ իսկ 10 տեսի հոգացեալ վասն
իմ, զոր չէ՛ ասա գրելի, և ոչ պատկառեցի. իբրև
զհաւ վայրենի սրացայ, ըստ ովսէեան բանին առ
եփրեմ, 'ի նախնին իմ սովորութի։ 11 Յաղօթարանն
վայրի՝ ընդ պատաղմունս այսր կենցաղոյս շրջանա-
կեցայ. ոչ կացուցի յոտին 12 զերիվար մտացս՝ երա-
սանաւ բանին։ 13 Ընդ հին չարութեցն՝ նորոգ ինք-
նաստեղծութիս գտի. անուրս ըստ յոբայ, ծանուցս
և անտանելիս՝ ինձէն ինձ սաստկացուցի. 14 առխզած
անկարկատելի, ըստ երեմիայի, զանձն իմ արարի. 15
իբր զվիժած անգրելի կոչման, ըստ առակարկուին,
'ի մարդկանէ համարոց եղծայ. իբր զհանդերձս ինչ 16
ապարահից, ըստ եսայեան բանին, զազրացայ. որ-
պէս զԹրծեալ ամանս խեցեղէն՝ փշրեցայ անպա-
ծարծելի. ըստ բամբասանացն եղամայ 'ի մարդա-
րէէն, զչորրորդ չափն անօրէնութեան սատակմանն՝
ինձ պատրաստեցի։ 17 Այլ զի՞նչ սասութի առ այս՝ և
զայս յաւելուլ ընդ այս. քանզի զվրանն իսկ դիւա-
նուէր մողոքայ առի ինձ այսրէն՝ առ դժոխոցն ժա-
ռանգութի, լքեալ զերկնայինն յեղանակաւ իմն օրի-
նակի 18 նմանակիր ձևակերպութեան, որպէս առակ
պատկերի աստեղն ռեփանայ բաբելականին՝ յիսրայէ-
լէ պատուեցեալ ցուցաւ 'ի սինայ։

Է. Իսկ արդ՝ զի 'ի նախնի շնորհին համարձակու-
Թէ դարձեալ՝ փոխեցայ, զրկեցայ, ելայ, հեռացայ,
բաժանեցայ, և անպատուաստելի կտրեցայ, 19 արդ
ընկալ զիս տէր վերստին կերպարանեալ 'ի պատկեր
հոգւոյ, զանարժանս կենաց՝ իբր զմահապարտ. իբր
զչարագործ. իբր զպատկառեալ. իբր զկոխան եղեալ
բանսարկուին. որպէս զհասեալ յատակս մահու.
որպէս զգարշեցեալ. որպէս զխոտան գտեալ քո կող-
մանդ. որպէս միանգամայն 'ի կորուստ վարեալ. որ-
պէս դեգերեալ. որպէս վանեցեալ. որպէս տարա-

կուսեալ. որպէս թշուառացեալ. որպէս վհատեալ. որպէս կործանեալ. որպէս խորտակեալ. որպէս ընկեալ. որպէս զթախծեալ. որպէս յոգւի տրտմեցեալ. որպէս թշնամանեալ: Նայեա դարձեալ ակնարկելով քո՝ գըթած, մարդասէր, հզօր, 'ի յաղերս բանիս՝ որպէս զզջացեալ. որպէս խոստովանեալ. որպէս 'ի յոյս քո դիմեցեալ. որպէս զապաշխարեալ: Որ կշռես, գրես և մեծ համարիս զհառաչ հոգւոյ, և զազդումն շնչոյ հեծութեան, զկսկիծ շրթանց, զպաքել լեզուի, և զտխրականութիւն երեսաց, զկամս խորհրդոց, և զյօժարութիւն խորութեան սրտից: Որ փրկութիւն ես անձանց, և տեսող ոչ գործեցելոց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վիրաց աներևութից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամօղ տէր ամենեցուն: Նա քեզ փառք յաւիտեանսն, յաւիտենանս.

ամէն:

---

(1) Ընդ դանիէլի: 'Ի վերայ աղօթիցն դանիէլի. որ 'ի գլ. Թ. 4. 5. յարմարէ զպաշտօնդ բանս: [illegible]. խոնարհ հեծեծական գոչմամբ պատմաստութեան՝ յաւելեալ 'ի բանս դանիէլի: 'Ի [illegible]. զխոստովանութիւն օրինաց քոց՝ անկարգաւորապէս վարեցայ, և խոտորեցայ [illegible]. որ է [illegible]. այսինքն զխոստովանութիւն և չարութիւն: Ըստ [illegible]. արտաքոյ ուղղութեան կամաց քոց եղի, որ է խնկութիւն կամ բուն համ[illegible] [illegible]. այսինքն զարտմեալ անօրէնութեան: [illegible], անդիմանելի չափոյ կամ բարձրութեան չար գործոյս՝ զկատարումն յանձախութեան գործեցի, որ է բուն նշանակ [illegible], կամ անիրաւութեան: [illegible], և ոչ երկեայ. աղաչեցեր, և ոչ լուայ. որ է [illegible] նշանակ: Յայս չորեսին հաստատեալ ընդարձակէ զչորեսին խօսս դանիէլի և երից մանկանց. այսինքն [illegible], [illegible], [illegible], [illegible]: Այլ՝ եթէ նոքա անմեղք և բարեգործք այսպէս խոստովանութիւն յանձն առնուին զմեղուցելոց, պիտոյ է առել՝ առելի ևս քան զնոցայն [illegible] լինել զխոնց մեղաւորաց:

(2) [illegible]: Որպէս յետ աւելակերութեան՝ քացախաւանն առամբքն, և մաղձն դառնանայ, այսպէս ինձ դառնութիւն սրտի և խղճի մտաց լինի 'ի [illegible], յետ կատարման մեղացն, կամ 'ի մահուանս:

(3) [illegible]: չիք 'ի 4 օրինակ: [illegible]: Ըստ անձնառ երախտեաց քոց ստացայ քեզ [illegible] 'ի վերայ իմ յոյժ արդարապէս, խակ ինձ տալերախտիս մեայ պատասխանի [illegible] [illegible]. [illegible] 'ի չքմեղս լինել. թէ [illegible] կամեցիմ, անդէն պապանձիմ:

(4) [illegible]: Ինձ արժանի է պատիժ խայտառակութեան, այս է՝ պատիժ զմոխիր լինելոյ:

(5) [illegible]: 'Ի փոխարէն բարերարութեցն որ առիս, ընկալար զտուգանեկշռելի [illegible], կամ չափ [illegible], այսինքն զանարգան դարձելի անուանց՝ զորս յիշատակեցի, այս է՝ արդարութեան, փառաց, քաղցրութեան, օրհնութեան, խրատուց, զովեստից, են. որք են իբր կնդրուկ.

խնկեալ, և պատուով վերառեալ յարարչածոց՝ ըստ Եղ. որպէս վայել է քեզ 'ի հաստատութիւն պատրաստեալ քոյ: Իսկ ես ընդհակառակն 'ի հաստատութիւն մեղաց խորոց ընկալեալ զատակէն բազմապատիկ պատուհասիս, ըստ Նա, որպէս վայել է ինձ: Մարթ է և այս պատշաճ անկիրթ սահման մեկնել իբր կոչե֊ կան. յթ. ընկալեալ զա. մէլ անկշռելի սահման բարի և ընտրականն կա֊ տարելութեանց՝ զհաստատութիւն անպարտելի պատուոյ գովութեան:

(6) Աննման ընծայիւք: Աննման կամ անկարգ ընծայիւք մոլորեցայ 'ի Ծերս վայրենիս, 'ի խորհուրդս օտարս, կամ ապաշաւամբերդականս: Ցանկ֊ գրգռեցայ չարեաց խոհից, փոփոխման ատելոյ՝ խոտելի չըթոց: Վայրագե֊ ցայ անխառնելի, մոլեգնեցայ, խոտորեցայ ուսմանց կանոնաց կամ գաղափարե֊ լոց 'ի պատկառելի գործոց: Ցայսօրինակ բանս կարդալ խոստովանի զմեղս խորհրդոյ, բանի և գործոյ:

(7) Եւ ոչ պիտանեան: Զուռնին յանձնամ խղճմտութեան և ոչ զանձառն կամ պարզասպանութեան հոգւոյս, որ է տուրեսաութեան չնչոյ: մի օրէն. գրէ, և ոչ պիտանեան ընչոյս փառաւորութիւն: այլ օրէն. և ոչ պիտանեան հոգւոյս փառաւորութիւն ընչոյս: այլ օր. և ոչ պիտանեան ընչոյս փառաւորութիւն:

(8) Բազում կարգաց: Զբազումս ընդդէմ քեզ մեղուցայ՝ մանկունս բաժակս. որ զհոգեւորն առօթս եմ իբր խոնարհեղէն կամ տարալ: Թուի անկանոնել յառաջացեալն վասն բարելոյն, բաժակ սեղի 'ի ձեռին ՏՆ. բայց զի ընդդէմ գարձաւ ԱՆ, փշրեցաւ խորտակ: (Երեմ. ծա. 7. Ճ. 24. 29:) կամ, լաւելեայն օրինակ առնու գործել պէ, որ 'ի պայծառութեան ու֊ նելով 'ի ձեռին զբաժակն նոցա համբերէ ձգէ զբազում ընդդէմ այ֊ լոց, և անգէն մանուկ բաժակին:

(9) Անձկանաց կայից: Զանձուկ կրպանս, այսինքն յօժարութեան մեղաց և սատանայի ուժգնութիւն տալով, յաղբեցի. յաղթահարեցի, կամ նուա֊ ճեցի զանձնակալին բարեաց. կամ, յաղթ ասացի, զի մեծացուցի և յաղ֊ թօղ արարի զձախակողմնա 'ի վերայ աջակողմնա:

(10) Տեառն հոգացեալ: Այսու կամ պատերազմ ասէ՝ որ ուսանողի, թէ ե֊ սես զիս մանուկ 'ի գիրկս ծնօղացն, զոր և սա չէ արժան գրել ասէ՝ վասն անօրթոյն կամ խոնարհութեան: Եւ կամ ընդդէմն քեզ 'ի պատրաս֊ տեն ասէ. այսօր հաւատոյ անուն դրել հոգացեալ և պատուիրեալ վասն մե֊ ղաց խորոց. զոր չէ ասէ Գրելի. զի զոր զանց առնելով սորա գրել, այլում բանի թողեալ. կամ զոր ամփոփեալ յիշել սոսա:

(11) Ցանգիտարանն վայրի: 'Ի անդունդ աղօթելոյ կամ աղօթից յանդիմանութեան կամ պատաղմանս պատուաստեցայ:

(12) Զերբեմն ծագաց: Զմտաւ իմ որ անկեալ էր 'ի Ճանապարհ կամ 'ի տեղի մեղաց, ոչ 'ի վեր կանգնեցի Երրորդութեան բանին, հրամանաւ և իշխա֊ նութեամբ կամօք, կամ մտածութեամբ բանից իմ:

(13) Ընդ հին լարուածոյն: 'Ի վերայ նախկին ախտից ապականեալ լինու֊ թեան, կամ 'ի վերայ չարութեանց առաջին մեղսաւորացն՝ ես նորանոր չարիս յաւելի տակաւին:

(14) Աղեգան: Մեծածանելի, կամ կասա առ 'ի գրգռծել մեղաւորս. որդի առաւելն՝ զոր կամեցայք արգասեան զանձնագ:

(15) Իբր պեխծան: Իբրև զանգուցեալ ապրոյն, անհիւրեւն կուշտն, որոյ անուանն ոչ գրի, կամ ջնջեալ 'ի համարոյ մարդկան. (ըստ Ժողովողին. Զ. 3. 4:)

(16) Աղաւաղից: Այսինքն զինի ոչ միայն յօրինակս, այլև 'ի բանին եսայ֊ եայ (կԶ. 6.) ըստ ձեռաղրաց. նաև 'ի մեկնութեան գեղջկոյ վարդա֊ պետի, և յայլ բազում գիրս գտանեմք գրեալ աղաւաղ, իբր տաւսել ընթեռնելի. Թէպէտ և գոյ ևս գրեալ աղաւաղ: Նշանակէ զաղտոտն. (ամ֊ սակեղէն բառնած կէն:) ըստ բանքաբանաց Եղոմայ: Զանձն յանձնգիտանութեան

մարգարէին ասելով (Ա. 3.) պատրաստել զտէր եղանակաւորելովս, որպէս և առ այլս հեթանոսաց՝ զի և նա զբազմաց չարի մեղաց խնդրէ, որում զհետ գայ փրկութեան էր:

(17) Եւ գիտէ, որ [illegible] այս: Զի՞ք ասէ ասացեալ ինչ, եթէ 'ի վերայ-գրեալ յաւելից և զայս, [illegible] : որպէս խոստովանելովք [illegible] (ըստ ասելոյ. Ի. 25.) յորում ըմբռնեցին [illegible] գիտաց, այսպէս և նա ասէ զախտս մարմնոյ՝ և զայլս արքայութեան. [illegible], որով զգեստս չարհեցաց, թողեալ [illegible] ժառանգութեան. որպէս և խոստովանելովք վասն կատարածութեան՝ փրկութեան երկրին ասելով՝ [illegible] ժա-ռանգեցէք [illegible] խնդրեալ: Եւ այս եղև յորժամ և նմանն այնմ, որ-պէս [illegible], որպէս օրինակին [illegible] հանդէս [illegible] յայտնութեան 'ի սմին՝ 'ի [illegible] ձեռն-տուութեան. այսպէս և նա՝ զախտս մարմնոյ՝ [illegible] կերակրով, 'ի կրօնաւորութեան, ևն: Ըստ հաւանականութեան [illegible] մեկնչաց՝ [illegible], զոր այսու [illegible] առաքելոյն [illegible], եր [illegible] եղկելեացն, [illegible] 'ի ձե. որ [illegible], և 'ի [illegible] [illegible], և 'ի [illegible]: Իսկ [illegible]՝ ըստ [illegible] է նոյն [illegible]. ըստ այլոց՝ է [illegible], զոր 'ի ձե. [illegible] առաքելոյն [illegible], [illegible], և [illegible]: Եւ [illegible] [illegible]՝ զնէ [illegible]. զի այսպէս զնոյն ըստ օրինակս [illegible] 'ի [illegible] ասելոյ: Այլ՝ ասէ թէ [illegible] խոստովանելովք 'ի սմին. զոր եթէ նոյն [illegible] է [illegible], յայտնեալ [illegible] նի որթն՝ զոր [illegible] յաճախագոյն սմին. (Եբր. ԺԲ. 4:) Իսկ եթէ այլ [illegible] 'ի [illegible], [illegible]՝ թէ 'ի սմին [illegible] խոստովանելովք. զի [illegible]. և [illegible] որ՝ [illegible] է [illegible] 'ի [illegible]. վասն որոյ [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible]: Այսպէս զնէն [illegible]. որպէս և [illegible] (Ե. 7. 8.) և [illegible] (Զ. 26.) այլև [illegible]. (Գործոց. Է. 43.) [illegible] 'ի վերայ կատարածութեան՝ զոր [illegible] խոստովանելովք [illegible]: Իսկ զի [illegible], ոչ եթէ 'ի [illegible] [illegible], այլ զի և [illegible] առաքելոյն զայն:

(18) [illegible]: 4 օրին. [illegible]: այլև [illegible] այսպէս զնէ, [illegible] [illegible] 'ի սմին:

(19) Աւրր [illegible], [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], կամ 'ի [illegible]. զի [illegible] 'ի [illegible]: Ընկալ զնա [illegible]՝ [illegible], ևն, [illegible] 'ի [illegible]: Իսկ [illegible], [illegible], ընկալ զնա [illegible]; և այլն:

(20) Մանրեցեալ: 3 օրին. [illegible]:

Սերտին յանձեալ նշխին հնձուածն՝ նորին հօզովն, առ նոյն այնքոս ձաղկանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ձը :

# ԲԱՆ. ԻԲ.

ա. Եւ քանզի ես յանձնէն անձամբ իմով [1] ինքնագրաւ 'ի մահ՝ ոչ կացի երբէք 'ի յատս մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ գրոյն : Եւ քանզի ոչ փոփոխեցայ 'ի նախակարգելոցդ, և ոչ ընդ բարուք ուղղին ընթացայ, ընդէ՞ր ոչ զխոստովանական հեռոցն խաւարայնոց զդէմս ցուցից 'ի սահման կարգի այսր ընթերցուածոյ : Եւ որս ածեալ յարմարեալ առ սոյն՝ զկերպարան տեսակի բանիցերեսաց, ըստ վերադրոյնդ նշանակելոյ՝ անփոփոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին դարձեալ տառանօր զմնացեալ չարութեանցն զախտս, զոր յաջորդաւդ է իմանալի :

բ. Օտար ժամանագործս արժանապատիժս՝ անձնցուն արարի [2] զնոցին զանօտարութեան զգուշնդն բելիարայ : Սակաւս կայթից և ցոյցս վազից խաղաղացն դիւաց դարշելեաց Ճարտար խաբողայ՝ ծուլութեամբ իմով շնորհեցի : Պսակս զաղանիս՝ և խոցուածս անյայտս 'ի կործանեցելոցն դաւաճաց ընկալայ : Ո՛չ հերքեցի զվանեալսն խաչին քո, քան թէ անդրէն առաւել կրկին իսկ զօրացուցի : Սատն իմոյ հիքոյս անօրէնութեան անունդ Յոբի հայհոյի [3] 'ի մէջ այսականաց, որպէս վասն իւրայնելի 'ի մէջ հեթանոսաց : Հարուածս հարուածոց՝ մխասակարս ապականութեց [4] ժանդոյ և թրթրոյ և այլոց կերչաց վանողաց զծաղիկ հոգւոյս, ըստ նշին յովելեայ հրաշական օղքոցն, որ 'ի ցոյցս երկրի վասն իւրայնելի՝ յաւակս հինից և չարաց հոգւոց, յիս ինքն անկեցի . սանեղծանել զնոսա պատրաստեցայ, քան թէ սատակել : Նիւրս կուտեալ հաւաքեցի անձին իմում մարտիկս մահաղէնս . կշտամբիչս ինձ գոյացուցի՝ անիրաւս և անպատկառելիս . ներհակս ինձ զօրացուցի՝ ապառումն և անկռուելիս . [5] դառնինս ինձ առի մատունս՝ ընդ քաղցրաւենեացն ճաշակաց . առ սատացօղն՝ մերժս նենգա-

ւորս, և առ բանաւորիկուն՝ յաւէտ հաւատարիմն: Սուղ աղէտիս, [6] վէշտ վտանգիս, խաւար ամօթոյս, մէութ պատկառանացս. [7] զիա՛րդ և առ բանիս յանդիմանութեն համարձակեցայց. մեծ է ձայնս գուժի, և անքներելի բողոքս աղաղակի: Քանզի թէ զհոգիս էր զիմ տեսանել, [8] տգեղս և նուաղս և ամենևին ներգևեալս, ցաւովք հեծուեծս 'ի վերջինս վարեալ վարանումն, և մրձոտեալ աղտեղեալ գունով զազրութեն իբրև զպաշտօնատար մեհենի. վասն զի նոյն է սպաս տանել ձուլեալ պատկերի, և մեղաց ախտի: Որդ՝ ես գնացի ընդ այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի. եւտու [9] զքաժինն քո ցանկալի՝ յանապատ անկոխ, ըստ մարգարէին՝ որ առ քահանայսն իսրայէլի ամբաստանութեն:

Ը. Եւ զիա՛րդ տեսցից անձին իմում մարդ՝ դրեալս ընդ անմարդիս. և իբր անուանեցայց բանական՝ անբանիցն յիմարութեն կցորդեալ. և որպէս կոչեցայց տեսանողական՝ մթացուցեալ զլոյսս որ յիս. և ընդէ՞ր համբաւեցայց զգայական՝ զիմաստիցս դրունս փակեալ. կամ որո՞վք ցուցայց [10] տպաւորութի նկարագրութե անեղծին շնորհի՝ անձամբ ինձէն յոգի մահացեալ. նաև ոչ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել, թող թէ հոգեկան, կամ [11] միայն ընդունական. անպիտանս 'ի թիւս անօթոց. անարգս 'ի քարինս որմոց. արհամարհեալս 'ի կարգս կոչեցելոց. վատթարս 'ի յազգս հրաւիրելոց. արհաւրօք մահու պակուցեալս, [12] անխրախուսելի 'ի բոլորեցունց՝ ցաւովք և տանջանօքն երուսաղեմի, ըստ երեմիայի բանին լորատեցեալ. պակասեալ աւուրցս 'ի հեծութեն, և ընթացք ամացս 'ի հառաչմանէ, ըստ նուագարանաց երգողին: Իբր ասուի 'ի ցեցոյ՝ և փայտ 'ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, 'ի խիթմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեն ձայնի, սպառեցայ: Այլ ո՛չ 'ի մարդ ոք ունիմ զյոյս եթէ [13] անխծեալ 'ի տեսանողէն՝ անյուսադրելի վհատիմ. այլ 'ի քեզ՝ տէր իմ ոգեսէր, որ ընկղմեալ 'ի քոյդ գթութենց բարեաց անքաւից, և

'ի բեւեռեւլոյս ժամու 'ի խաչին [14] մաղթեցեր մեծ֊
ողորմութեան առ Հայր քո բարձրեալ՝ քո չարչարողացն։
Արդ՝ շնորհեա ինձ յոյս քաւութեան, կեանք եւ ապաւէն.
եւ 'ի [15] սուր ճնչոյս թշուառի՝ առից զոգիդ քո բարի։
Եւ քեզ ընդ Հօր Հոգւոյդ սրբոյ՝ զօրութիւն, յաղ֊
թութիւն, մեծութիւն եւ փառք յաւիտեանս. ամէն։

---

(1) [illegible] ։ Եա ինքնին կամաւ դրդեալ կամ մատնեալ 'ի մահ մեղաց եւ գժոխոց, ոչ կարէ յառնել [illegible] ։ Զանապին [illegible] (Է. Կ.) [illegible] . ոչ կարէ [illegible], գլուխ 'ի վեր, եւ ոտք 'ի վայր, որպէս է ձեւն մարդոյ. այլ [illegible] . եւ ոչ [illegible], [illegible] 'ի գործս իւր։

(2) [illegible] ։ Գործակալք [illegible] եւ [illegible], [illegible] եւ [illegible] 'ի [illegible] , եւ [illegible] ։

(3) 'Ի մէջ [illegible] ։ [illegible] անօրէնութեան, [illegible] 'ի մէջ [illegible] ։ Զ[illegible] 'ի [illegible] . 1 ։

(4) [illegible] ։ [illegible], [illegible], [illegible] . [illegible], ( որ է [illegible] . ) եւ [illegible], [illegible] ( Ա. Կ. ) [illegible], [illegible] եւ [illegible] ։

(5) [illegible] ։ Ան, [illegible] եւ [illegible], [illegible], [illegible] ։ Կամ, [illegible] ընդ [illegible]՝ [illegible], [illegible], [illegible] ։ Այս [illegible], [illegible] եւ [illegible] եւ [illegible]՝ [illegible], [illegible], [illegible]՝ [illegible] ։ Որչափ [illegible] է այս [illegible], որչափ [illegible] . եւ [illegible] իւր՝ [illegible] ։

(6) [illegible] ։ Այ[illegible] են [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], են։ Կամ [illegible], [illegible], են, [illegible] ։ Որ[illegible] . [illegible], են։

(7) [illegible] ։ Որ[illegible] 'ի [illegible] կամ 'ի [illegible] իւր. կամ, [illegible], [illegible] իւր [illegible], եւ [illegible] ։ [illegible] է [illegible], եւ [illegible] ։

(8) [illegible] ։ [illegible] է [illegible] իւր, [illegible] եւ [illegible] . եւ [illegible], [illegible], [illegible] . եւ 'ի [illegible], 'ի [illegible] ։

(9) [illegible] ։ [illegible]՝ [illegible] է . [illegible] եւ այլ [illegible]՝ [illegible], եւ [illegible], [illegible]

Այն գաւառաց ։ Զայս բաժին քո ասէ՝ Եփրաթ յանապատ, աղօթք որպէս անապատ, զուրկ 'ի պտղաբեր բարեաց, և ախտից գաղանաց եղեալ կո֊խան և բնակութիւն, որպէս յանդիմանէր երեմիաս ․ ժբ ․ 10 ։

(10) Տէրունաբանէ նկարագրութեան ։ Որպէս երևեցայց աղօթք կամ նմա֊նութիւն անեղծին շնորհի, անմահին իմ բաց շնորհաց առաքչութիւն, կամ ը աղաղակող շնորհաց, որ անձամբ ասպանի զհոգի իմ մեղօք ։ Զբան պատ֊կերին առ Այն՝ ըստ անմահութեան և ա տանելն վարդապետաց, 'ի բանէ անտի ( խնասա ․ ա ․ 23 ․) * Այն հաստատեաց զմարդ յանեղծութեան, և 'ի պատկեր իւրոյ բարերարութեան արար զնա ‖ ։ Ուստի ասէ, որպէս մնամ ես պատկեր իմ, որ անձամբ զանձն մահացուցի ։

(11) Մեղաց ընդունական ։ Է մեռան սահմանի մարդոյն՝ ըստ աստուածեղէն նախանձեաց, որք սահմանեցին զմարդ, կենդանի բանաւոր, մահու և հան֊ճարոյ ընդունական ․ այսինքն ունող կամ ընդունող մաղթանաց իմաստ֊ութեց ։ Մեղօք խեղճ կորուսի ասէ՝ որ ինչ է յիս բանական կամ զգայա֊կան ․ անբանից յիմարութեան նմանեցայ, անասնեցայ խաւարեալ, զգայու֊թիւնք իմ ապշեալ ․ և ոչ շարժողական կամ շնչական կենդանեաց արժանի եմ ․ զի առ բարիսն անշարժ եմ, և շունչ իմ յանդգնաբար փոխեալ ։

(12) Աններկայանելի 'ի քաղաքէ ։ Այսպէս ընթեռնուլ է ըստ օրի֊նակաց ուղիղ եա է, քան թէ 'ի քաղաքէ ։ Աններկայանալի եմ ասէ՝ յառ֊աջնեցունց նման ցասմանց և աստուածայնոյն երեւակայել ․ զորմէ ասացաւ երե֊միաս, ո՞ մտերմանալ գտցէ զքեզ, եմ ։

(13) Անծնելոյ 'ի փեսանողն ։ Զայս իմ ասէ՝ ոչ եմ եղեալ 'ի մարդ որ, որով արժանի անխիծից լինելով ըստ երեմիայի, ( ժէ ․ 5 ․ ) յուսահատու֊թե լքանիցիմ ։ Այլ յուսացեալ եմ 'ի անդր իմ ողբերգ, որ ընկղմեալ 'ի ծով գինարբեց, որ 'ի գերմանէ անբաւ գթութեան քոյ ոչ թէ ընկղմել, բաղցրագին լողանալ, և անսեւ արտասուալ պարգևութեան ցասմանց խաչին, անդէն մինչ լուացեալ կարէր՝ վասն չարչարողացդ աղօթելոյ ։ Ո՞վ ան֊սահման գթութեան ։

(14) Մաղթեցէք Աստուծոյ ։ Մաղթեցէք զհեծ աղաղանութեամբ 'ի հո֊րէ վասն քոյ չարչարողացդ ։ Կամ, մաղթեցէք զա՝ որ մեծ եմ ողորմու֊թեն, կամ յողորմութեան, ըստ առաքելոյն ( եփես ․ բ ․ 4 ։ )

(15) Եւ 'ի փոր ընկեր ։ Ցասմանեցին զթշուառ հոգիս իմ, առաջ զհոգի քո բարի ։ Կամ, հայր 'ի բան ասաց ․ Ճժբ ․ 131 ․ * Զմերան իմ բարի և սուրբ զհոգի ‖ ։ Ցորժամ խառնակութեամբ բանսա[illegible] զերեան իմ, ընկալեալ զհոգի շնորհացդ ։ Վասն այսորիկ Դաւիթեան այլաբանեցից ․ (ետ) զպանծա֊ցմանութիւն անձինս նկարագրեցից այսպէս նմանութեամբ ․ զի այս լեզի խա֊ռնակութեան զաղանի չար գործոցս ։

---

Սերոփէն յաւելուած նրկէն հեծութեան՝ նորին հոկողէ, առ նոյն ողբերս Մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ․ ԻԲ․

ա․ Պարծեալ այլաբանեցից՝ 'ի նոյն շարունակ բարդեալ զկշտամբանացս եղանակ՝ զօրա֊վեալ անձինս, ածեալ մատուցեալ՝ կրկին կացու֊

ցեալ նովին պատկերաւ 'ի նոյն պայմանի․ Թերեւս
գրեսցէ ինձ ամենագէտն՝ զայս յանդիմանութե դա-
տակնիք կսկծեցուցանողականս բանի՝ ճշմարիտ խոս-
տովանութի համայնից գործոց՝ գաղտնութեց չա-
րեաց։

Ը․ ԱՅԼ ոմն[1] ձիս խոտնական՝ կարծրերախ սանձա-
կոտոր արձակերասան․ յովանակս անհամբոյր՝ վայ-
րենական և անկրթական․[2] երինջս աւողական ա-
նուղղական և անվարժական։ Մ՝արդս մոլեգնական
տարագրական և կոբատական․ մանուկս մեղանչա-
կան անխրատական և վարատական․ տնտեսս մա-
հապարտական՝ տարտամական և անգործական․[3]
բանականս անասնական՝ գազանական և անմաքրա-
կան։ Ձիթենիս ամայական՝ անպտղական և կործա-
նական․[4] մարմինս հոգւոյս իմ թախծողական՝ դա-
տողական և տանջողական․ խոցեալս անբժշկական
անխնամական և անկանգնական։ Ոսկի շարս կայսե-
րական՝[5] արդվատնական և անգտական․ ծառայս
սխալական՝ փախստական և թշուառական։

Թ․ Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս[6] անձնա-
մատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մտա-
խաբ, կամակոր իսկ՝ և սրտաբեկ, ուշամոռաց և
հանճարազրաւ, զգայազիրկ և իմաստասպառ, յայ-
րատատես և եղեռնալուր։ Ես աստուստ և անդուստ
բնաւիւք բոլորքմամբք մահաբեր երկամբք վնա-
սեալ, ոչ միով իւիք տեսութեամբ 'ի գործ ընտրու-
թե քեզ պիտանացուս տէրդ բոլորից, ողբամ զորո-
վայնն որ երկնեացն զիս․ աշխարեմ զստինսն, որ դիե-
ցուցին․ ընդէ՞ր ոչ մաղձ մակարդեալ ընդ կաթինն
ձգեցի, և զիա՞րդ ոչ դառնութի ինձ ընդ քաղցրու-
թե ջամբեալ մատուցաւ։ Օ՜ի եթէ ես ինձէն ան-
ձին իմում դժնեայ դատախազ համբարձայ այպքա-
նեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուր բարկութես
անխոնարհելի,[7] ով որ 'ի յերկրածնաց աստի զիս
ողոքեսցէ․ զո՞ւմ խայտառակեցից․ զբնաւ էութիւնս
դատեալ տուժեցից․ զհամօրէն զվնասակարացն ըզ-
գուշտ գանեցից․ զխոցողացն զինուորութեց դատա-
խազեցից․ զզգայականացն գլխաւորութիւն կշտամբե-
ցից։ Մեղայ ամենայնիւ յամենայնի, ողորմեա զմ-

Ղթած. ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեաց մատուախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին ⁸ պատահմամբ պարտաւորութեան, անկցելի ձորձով սխալեալ առաջի քո՝ անփոփոխելի, և դու միայն իսկապէս գթած օրհնեալ մարդասէր, ըստ աշմէ իմոյս փրկութե կանխեալ ներութեամբ անայլայլելի ։

Դ. Որդ՝ մատոյ խնամակալ հզօր երկնաւոր բարի՝ ամենից հաստիչ յոչէից՝ զբանիւդ զօրութեան ⁹ իմաստից կայծակն 'ի գործի ազդման լեզուիս շարժութե, առիթ մաքրութեան յամենուստ զգայականաց գոյաւորութեանց յիս մանաւորելոց՝ քո ձեռակերտից. սուքօք առ 'ի քէն եղելովք և բժշկելովք, կրկին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ բարբառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն 'ի փառս մեծութե հօրդ քոյ. ա̃յ մերոյ, յաւիտեանս. ամէն ։

---

(1) Չիս խօսակցաւ ։ Ածանցեալ 'ի բառէն խօսուն. սեռ. խօսնոյ. որք և 'ի բառէն շուրթուն, կաղզի շուրթնագոյն ։ Խօսուն եմ, բանական բնութիւն, այլ բարուք [illegible], ունօղ զկարծր [illegible], [illegible] ։ Ցանկանալոյ օրհնակելով զայրասաստանս անձինն, առել կամի. առհա 'ի մտադրկայլին 'ի գովելոյ կարգաց [illegible]. բայց և ոչ զանկանալոյ զխաստ բնութեանն գոնէ ցուցանել, այլ զմերութեանս նոցա կոչել ։

(2) Երկինքս սաղաղան ։ Զի հեծօղ, որ գժուարն ընդ լծով, (ուղքացօղ. ախուվախ ընօղ.) Թուի կաղմեալ 'ի բառէն սաղ, սանձէ, փոխանակ սանլոյ՝ սաղաղական ։ Ակնարկէ 'ի պատմութիւնն (Ա. Թագ. Զ. 12.) յորում երկինքն անդրանկածնիք զատուցեալք յորթուց իւրեանց՝ երր հեծեալով ձգէին քարշէին զսայլն յոր եդեալ կայր տապանակն Այ. և սակայն գնային ուղիղ անխոտոր ընդ Ճանապարհ իւրեանց, և մնային ընդ լծով ։ Իսկ ես ասէ՝ հեծեալ ընդ բեռամբ այ, այլ ոչ ուղիղ, ոչ կրթեալ 'ի բարիս ։

(3) Բանական անասնական ։ Բնութիւն բանական գոլով, ունիմ ըստ բարուց զանասնութիւն անասնոյ, գաղանական, ունիմ զկատաղութիւն գազանի, անմարդկական, ունիմ զանմարդկութիւն անմիտ կենդանեաց ։

(4) Մարմնոյ հոգւոյս էմ ։ Ողջակէզ սահման, մարմնոյս որ սանձ է հոգւոյս, և անձին ծառայ լինելոց էր, եղև նմա տրտմեցուցիչ, գազիչ, և չարչարօղ ։

(5) Արտաշխարհական ։ Որ իբր տակն չար կազմեցայ յայ, այժմ վատնեալ և ցրուեալ եղէ ։

(6) Անձնական ։ Այսու, և յաջորդ բառիւքն [illegible] մարդոյն [illegible] 'ի Թիւ արկանէ. զբարբառ անձնա ասէ մտանեցի 'ի մեղս և 'ի սանձիւն. զմարմնոյ կործանեցի 'ի մարմնական մեղս և յայլութիւն, և 'ի կործումն որդւոց. զհոգւոյս կորուսի հոգևոր մեղօք. մնոք խարեալ 'ի դիւէն. կամօքս կորուսեալ խառնութիւն. միրտս բեկեալ լռելով կամ անյօժարութիւն առ բարին. ուշ ժիշողականիս մոռացկոտ. հանճար խոհականիս սպառեալ. յառաջնութեան ներքին զգայութեանց զրկեալ, և արթնութեան նոցա

կամ հնազանդութիւն նուաճեալ. ոչ զի յաղօթելիս նկատեալ. անկանիմք 'ի բոլոր չարութեանց ազատեալ: Եւ ապաւոր և անպատոր, այսինքն յամ կող-մանց՝ նեղչաց և աղքատաց, ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ ամ բազմապատիկս մեղաց մնացեալ, ողջոյն ողորմեցին. այս, և հեռանալոյն հայցին միայն 'ի մեծամեծ սկզբնական մեղացն՝ յորում մարդն յղանայ և ծնանի, և յա-ւուր պարտեալ 'ի նախադրական մեղս անկանի: Ընդէր ոչ ծնայ. վասն էր ոչ ծնեալ խառն ընդ կամեցն, կամ փոխանակ կամեցն զծնունդ, կամ զմարմնաւորսն զուտն ըմբռնելի, որով կարծեալ 'ի կենաց, առաւել միայն 'ի պարտեաց մեղաց:

(7) Ո՛Վ ով 'Ի ԶԵՐԿՐԱԾԻՆԱՑ: Եթէ եւ յետ այսչափ ամբարտաւանութեան զինէն՝ ամպարշտութիւն զոր բարկութեան ոչ անտանելով բարձրացեալ 'ի վերայ իմ, մի՛ որ 'ի մարդկանէ կարգեալ մեղանչողութիւն զիս յողբոց աստի, կամ 'ի կատարելութենէ: Ա՛ՅԼ ԴԻՄԱՑ ԽԱՌՆԻՑ, զհողեղէն և զմարմնին, և զգգայու-թեան զաւակաւ պատմեսցի: զՖայանանոյն Գեղխասաբանին, զգլխաւորս 'ի գգայութեանց յանդգնեալ, կամ զկատարութեան չար նախադրութեան նոցա պատմեսցի. զորս՝ վասն առաւել հայեցմանն յանդգնեցին անկեալ-բութիւն, առաւելութեան կամ 'ի խառնակ կացուցեալ. զանկանիմ՝ վասն անարժան լուսաւորութեան՝ յանդգնեցին ձայնիւ սրբոց, միաւորութիւն, ունկնդրութիւն ամբարշտին բանին. զխորհուրդ՝ վասն անարժան խօսիցն յանդգնեցին լսութիւն, անձնաւորութիւն, մեղսալատութիւն, ևն:

(8) ՀՈԳԻՆ ԱՊԱՇԽԱՐԱՆ: Հոգին զաւակ կամ առաջնորդ պայծառութեան միշտ երկաթի: անկշռելի ծոցով, անպարագրելի, պարտաւորութիւն հանդերձ յանդգնութեամբ ապաշխարութեան 'ի փրկել զիս ևն: Թէպէտ անհամարեալ 'ի սուրբ շնորհաց, (Գ. 2. 3.) յա-րում առաւել Ցեսու քահանայ 'ի հանդերձս աղտեղիս առաջի նոր, և այլն:

(9) ԻՄԱՍՏԻՑ ՀԱՅԺԱՐԻ: Որպէս արտաքինն մաղձոյ զայրացեալն 'ի բարձր ևասոյիցս, սաստկացեալ այս պատմեալ զմեղս քո 'ի քէն, (Եսայ. Ա. 7.) այս-պէս նաև զմեղմանալ կայծանին զօրութեան քո 'ի լեզու իմ. առնիլ մտերութիւն, զի լինիցի պատճառ մաքրութեան յամ պատասխանեաց, պատասխանեաց Գոյասարու-թիւնս իմ մոռանալեաց, ողջոյն փրկութեանց քո ձեռամբ զիս քաշեսցես կամ զամենայն պատեցն. զի լեզու-խոստովանութիւն լինի գործի մաքրելոյ զմեղս այլոց փրկութեանց: Որպէս զի ասէ, փրկութիւն՝ որք 'ի քէն եղեն, և քո բժշկին, նոյն հանդերձեալ, վասն առաջելոյ՝ և բժշկելոյ՝ ան-գամայն արհեստից զգեստ:

---

Սերովբէն յառաջելուած նկնին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ Նորին աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ:

# ԲԱՆ. ԻԴ.

Ա. Տէր Աստուած ամենայնի, զօրաւոր յամենայնի. ան-պարագիր և անվայրափակ[1] տեղի ամենե-ցուն. բոլոր իսկութիւն հուպ յամենեսին.[2] անուրեք վայրից, և չիք սահման առանց քո: Ո՛չ երևեալ երբէք, ոչ տեսականութիւն առանց քո ծագման՝ լու-

լուսաւոր։ Փառք ահաւորութե՟. 3 անուն անհասութե՟.
կոչումն մեծութե՟. ձայն անբաւութե՟. իսկութի՟ անքննու-
թե՟։ 4 Անմատչելի հեռաւոր, և անընդմիջելի մեր-
ձաւոր։ Տեսող հեծութե՟. նկատիչ թշուառութե՟.
մօտակայ թախծութե՟. 5 ամենաբոյժ հնար անճա-
րութե՟. հայր գթութե՟ց. ծագօղ ողորմութե՟. ա՟ծ
մխիթարութե՟։

Ե. Հայեաց տէր ողորմութ՟բ 'ի պատկեր վշտաց դառ-
նութե՟ բազմավտանգ կրիցս կարեաց, զոր հանդէպ քո
տարածանեմ. կցորդակից լեր բժշկապէս, և մի 'ի
խոյզ ընտրութե՟ կոչեր դատաւորաբար։ Արդարև
մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարան-
ման, յորժամ իցէ մարմինն մեղօք գրաւեալ, և
անձն' 'ի գործոց չարեաց ոչ մեկուսացեալ. 6 գործ-
նականացն գործի' սովորութ՟բն կարեաց կապեալ. 7
զանգուածն հանդերձանաց' մահացու կրիւք շաղա-
խեալ. զգայութի՟ սրտին իմաստից' խեթիւ խոցո-
տեալ. ակնկալութի՟ բարեացն' բնաւին բարձեալ.
և 'ի բանականութե՟ն' ընդ անասունս դասակարգեալ.
և 8 զազիր գարշութի՟' ընդ գոյութե՟ն շարամանեալ.
և 9 տեսականացն ողջ ելով' իմանալիքն վիրաւորեալ։
Այլ 'ի սաստկութէ՟ 10 յանցանացն յիշատակի' յաւէտ
յուսահատեալ. և տագնապաւ նախագործելոյն'
միշտ տարակուսեալ. և յատակու՟ի աղերսին' խապա-
պղտորեալ. և խղճիւ մտացն յուզմանց' կրկին ճեն-
ճերեալ։ 11 Այլ ձեռն 'ի մաճի գործոյն' զյետնոցն
հետազօտեալ. և կերպ 'ի յառաջ դիմեալ' ոտք 'ի
վերջ կոյս յետահարեալ։ Այլ 12 դիտութ՟ էիցն' 'ի
չէիցն միշտ խաբեցեալ. և 13 'ի մտացն մարտ' 'ի փո-
քունցն յաղթահարեալ։ Այլ 14 'ի թառանչ սրտին'
հագագին դուռն հրդեհեալ. և խոնաւ զօրութիւն
քմացն' ամենայն ուրեք տօչորեալ, և անարև մի-
գով յամենայն մասանց պարփակեալ։ Այլ լոյսնու՟ի
ակնկալութե՟ն' ամենևին խապառ ամփոփեալ. և 15
անբերելեացն տոյժ' 'ի զգալիոն տպաւորեալ. և եղ-
կութի՟ կորստեանն' 'ի յուշ անդ եկեալ. և դատակ-
նիք հատուցմանն 'ի դիւանի մտացն դրեցեալ։ Այլ
բարերարին ակն' 'ի ցասումն իմն երևեցեալ. և լոյսն
բնութ՟' զանկուածոյ հողոյս զայրացեալ. և ահաւո-

րութիւն էին՝ ընդ փոքրկութիւն բնութեանս ընդհարեալ,
և մինչ որոտմամբ բանից՝ բանաւոր մոխրոյս բարկա-
ցեալ, և իբրաւանցն վիմօք՝ զարժանիս մահու կոչկո-
ճեալ։ Այլ որ իմն է տաղանդ՝ յանապատակս աստէն
կորուսեալ. և պատուական իւրին ստացուած՝ իբրև
անարգ յերկրի թաղեալ. և [16] տաժանմանցն արգա-
սիք՝ ծուլութեան մթով ծածկեալ, և իբրև զ'ի բաց
բարձեալ նշմարան ճրագի՝ չերևեալ։ Այլ [17] պա-
տախանաբան լեզուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկե-
ցեալ. և անհամբոյր շրթանցս դրութիւն՝ օրինաւոր
դատմամբ պապանձեալ։ Այլ [18] յուզմունք մտացս՝
'ի զանազան մասունս ցնդեալ. և զկեալն 'ի վերայ
օգտին՝ ոչ ինչ գիտացեալ. և 'ի կշռութիւն բարւոյն
ընտրութեան՝ յիմար երևեալ. և ընթացք ելիցն՝ նը-
հանջմամբ չարին խափանեալ. և վառարան իւղոյն՝
աճիւնովն հնոցի լցեալ։ Այլ անուանս գիր՝ 'ի կենաց
մատենէն եղծեալ, և կշտամբանք ընդ երանութեան՝
անդ արձանացեալ։

Է. Եթէ զինուոր տեսանեմ, մահու ակն ունիմ. [19]
եթէ պատգամաւոր, խստութեան. եթէ մատենագէտ,
մուրհակի կորստեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ
աւետարանական, փուշոյ ատիցն թօթափման. եթէ
բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապառում,
կսկծման։ [20] Եթէ ջրովն ընտրութեան փորձիմ, խոր-
տակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ։
Եթէ [21] բերս նկատեմ բարութեան, 'ի կարծեաց չա-
րեացս փախնում. եթէ ձեռն համբարձեալ, կորա-
նամ. [22] եթէ փոքր ինչ խրտուիլ, սարսեմ. եթէ սա-
կաւ մի թնդիւն, ընդոստիմ։ Եթէ 'ի խրախճանս
ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծիդ յանդի-
ման լինիմ, սարսափեմ. եթէ 'ի հարցուածն բանի կո-
չիմ, կարկիմ. եթէ իրաւամբք քննիմ, համրանամ։
Արդ՝ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարա-
կուսանացս՝ 'ի վերայ միմեանց բարդելոց, [23] որք
զատորև զգայականաց սրտիս գոյութեան 'ի ներքուստ
անտեսուստ անբժշկական ցաւօք՝ աներևակի նետիւք
խոցոտեալ, անարտաբերելի մշտակիր յարամնաց
հանապազամուխ բևեռեալ ստուստ ընդ հոգւոյս,
լցեալ շարաւով կրկին հարուածովս, վտանգ սաստիկ

մահ մահու գուշակեն ։ [24] Մարախ մեհերից պատեալ զերկաթով զազանեացս ծածուկք ազդեն ինձ տագնապս՝ վէրս պահեալս անխռնամարկելիս ընդ ելս չնչայս տուրևառութե. յորոց նեղուեց չարաչար Ճնշեալ աղաղակ ձայնիւս, խառնեալ արտասուօք՝ կողկողագին Թախծանօք հոգւոյ, բարեգործիդ հնարաւորութե յերկրատանջիցս նահատակաց ընդ իմ մաղթօղաց, վերջին հեծութիւս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենաքումբք նուիրողօք՝ զաղերսանս ըղձիցս՝ 'ի ստորնայնոցս սաստի [25] յերկինս առաքեմ ։ Շնորհեա՛ տէր անդորրութի կենաց հանգստեան՝ ողորմելի վատաակեցելոյս 'ի յընդունայն երկրագործութիւս, համայնդ յամենայնում. ամենայնիւ սատացեալ քեզ փառս ։

---

(1) Տեղի ամենեցուն ։ Այծ սար տեղի ամենեցուն, մի՛ գաղափարականս, ըստ որում զամ երկրաց խնկութիւն յեւր մասա ամփոփեալ ունի ։ Երկրորդ, պարագրականս. զի զամենեցուն զգոլն կրէ 'ի զօրութիւն իւրում ։ Երրորդ՝ պատճառաբար. զի Ամ ստեղծող ինքն սոյ զզօրութիւնն զետեղիչ կամ պարագրիչ այլ մարմնոց ։ 2. օրին. այսպէս որոշեն, փեղի ամենեցուն Քոլոր Խօխաբէ, հաւաք յամենեսին ։

(2) Անսարէտ վայրից ։ Ոչ բովանդակեալ 'ի վայրս ուրեք. և սակայն չիք առհասարակ կամ տեղի առանց քո ։ Ո՛չ Երևեալ. ոչ երևիս բնաւ աչաց. և սակայն ոչ փոփոխանակ. ոչինչ երևելութե ընթի յայտնի առանց ծագման քո. զի զլոյսն երևեցուցիչ նախ՝ Ամ ծագէ. կամ, ոչինչ տեսողութե աչաց է պատճառ և ընդունօղ լուսոյ՝ առանց ծագելոյ քո լուսոյ ։

(3) Անուան անհասանելի ։ Անուան նշանակիչ բնութե ԱՅ չէ՛ բնաւ գիտելի ։ Յակոբ հարցանէր յերևեալն՝ զի՞նչ անուն է քո, և լսաւ պատասխանի, զի՞ հարցանես ։ (Ծննդ. ԼԲ. 29 ։) Նոյնպէս հարցանէր և Մանովէ հայր սամփսոնի. և լսաւ, սքանչելի է ։ (Դատաւոր. ԺԳ. 18 ։) Յոյն անէաստ, Այն անուն անբաւ կատարելութե է յայտնիչ. խոհաբէ ամփոփ, էութե ունօղ անքննութե, կամ անքննելի ։ Զայսոսիկ կոչմունս մարթ է առնուլ և այսպէս, անունս անհաս, անբաւ, անքննելի, ԱՅ միայն տիրապէս սոսի, և ոչ բնաւ ումեք յարարածոց. քանզի անհասութե, անբաւութե, և անքննութե ոչ գտանի արարածոյ ԱՅ. այսպիսի անհաս և անբաւ և անքննին՝ կամ ԱԾ միայն է, և կամ բնաւ իսկ ոչ գոյ ինչ ։

(4) Անմարմին կերպարանաւ ։ Անմերձենալի 'ի գոյն և 'ի ձևաւորել. զի ոչ խակական հաղորդութե բնութե, և ոչ պատութե մասանց հնար է մերձենալ. և անընդմիջական մերձաւոր. և սակայն գոյացութե ամենայն մերձ ես յիւրաքանչիւրս, զի ոչ գոյ մինչոց կամ խտրոց 'ի մէջ քո և նոցա. զի Ամ 'ի գոյութե իւրաքանչիւր արարածոց ընդունակ է ։

(5) Ամենազոր ։ Ամենայնի բժշկող. այսպէս ուղիղ գրի 'ի լաւ օրին. իսկ յայլս՝ ամենազօր ։

(6) Գործնոխտակն գործի ։ Հին լուծ. զչար գործման խմանոյ այսու ։ Բայց սատար է. այլ խմանալի է կարողութիւնն՝ որ պատճառ է գործե-

լեռանց . և այսպիսի է նորա՝ կառքն, որ աստուծոյն շարժիչ է 'ի գործելիսն, կամ 'ի կատարութեան ծանուցեալ բարւոյն . զարձեալ և այլ զգայարանք, և մանաւանդ ձեռն, որք արդիւնաւորեն 'ի գործել : Այս գործի առնէ՝ ուղղութիւն խոհից, առաքինութիւն արարոցն, կամ բարեաց ուսանելութիւն միտաց իբր երկաթեղէն կազմեալ է : Յայսմ բանէ մինչ 'ի կատարած այսր համարոյ նկարագրէ զագեղական մեծամեծ մարդոյ, որ 'ի մեղս ունայնացեալ, և զգայութիւն միտացն ճաշակեալ, մեղ զգեցեալ կամաւ և աղաչանաւ, և մեղ 'ի մեղանչելն հանդերձ . այլ մարմնով և հոգւով և հանգոյն զգայարանօք 'ի յայլ խառնակութեանց աստուածայնոյ անմեղութեամբ :

(7) Զանգուածն հանդերձելոց : Յօրինուած բնութեան՝ մահացու խառնուած սկզբնական և նիւթական մարմնոյ շաղախեալ, իբրև զխեցեղէն կերպարանս :

(8) Զանիւ գործուածին : Զարմանալի ստեղծութեան ընդ գոյութեան բնութեանս կամ ընդ մարմնոյս միաւորեալ . որպէս զարդ ասիղ 'ի մարմնի խոցի :

(9) Տեսակաւորն ողջ Էլովն : Երկեղէցս կամ պարապեցից իմ առողջ զանգուածոյ, հոգևորին կամ անձնականութեանց իմ միաւորեալ են . այսինքն արտաքին մարմնոյ առողջ, և յերկուս արգասս և երկնաւոր երեսին, բայց հոգւով միաւորեալ մեղօք և խղճիւ :

(10) Յանցանացն : Զ օրէն . յանցանացն : 'Ի տառապանս կամ յաղագս յերկրակէ մեղացն յանառաջանս ընծայիմ . և թէ և այժմ ոչ նմանապէս մեղանչեցից, բայց առաջնոյս նախագործելոցն, յառաջանորդն գործեալ մեղացն միշտ դժխեմն ընդ, զարմանան ապրանաց, և զխոցս մատանց զայրանացն :

(11) 'Ի նաւի գոգծոյ : Զնաւս 'ի մեծի երկրապագութեան, կամ գործւոյն, իբր աղօթոյն . առեալ կառոյ . ուխտիւ հրաժարեալ յաշխարհէ, ձեռնարկեալ 'ի միջակութեան հոգւոյս իմ և այլոց . և առաջնոյն ընձիւ դժնդակ հետաքրքրող աշխարհականն իբրև խնդրեալ, ըստ բանին տէր . (Ղուկ . Թ . 62 :) 'Ի սոյն հայի և յաղօթսն, կերպ 'ի յառաջ, ևն :

(12) Գիտութեան էիցն : Գիտելով զգուշան զանձանց բարիս երկնից, 'ի լէիցն, յանձնայն յանցաւոր լերանց խոտորեցայ : Կամ, գիտելով թէ զինչ են երկրաւոր բարիքս, խոտորեցայ 'ի նորանէ այնու երկուութիւն որով ոչ են . զի անցաւորք զոլով և մշտաւորինչ, իբրև անանց և հանգստեան ձևամանն :

(13) 'Ի նորոցն նորոց : Ես որ հոգևոր գոլով մտօք եմ մեղս խորհրդոց արտասահմանեցի մնալ իբրև կերպ և զօրաւոր, 'ի փոփոխոյն, 'ի փոքր և 'ի զինուորն արտաքսեալ մարմնոյ յանցնեցայ : Կամ, 'ի մեծաւոր արտաքսեալ յանցթեցայ նաև 'ի փոքր փոփոխութեանց խորհրդոյ : Կամ, 'ի խառնելն մեծաւ խղճմտութեամբ, նաև 'ի փոքր և 'ի նուրբ մեղաց յանցնեցայ մեծութեամբ և արտաքսեալութեամբ :

(14) 'Ի թշնամւոյն սրտին : 'Ի հասարակաց արտաքին կենդանի շնորհաց, և բնական խոհեսս հետև քննեալ աշխարհն : Ի խոտորեալ, ընդգանաձևութեան որով կարող եմ ունել յայս մեծ, խաղաղու արտելութեան :

(15) Անէերևելեացն թողի : Անմահեկք աստուածականք հոգւոյս, կամ հանճգերեալ աստուածայինք զօրութեան՝ 'ի նգաստեան զղջալովն, 'ի զէնս երկնային արդարութեանն . կամ 'ի զգայուն խոյս անտառաւեալ զիջանեցելոյ մարմինս թէրն . զի արդարանք առաքելականք 'ի աստուածայնս անկեալ մեծ : (Եփեսս . Զ . 21 . ժղ . 24 :) Այսպէս կայրին 'ի խղճէ մտացն աղաչանութեամբ, զանձինս, ամն իբրև զաւետիք նիզակաւ անտառներ (Ծննդ . Գ . 14 :) Եւ նիզան այս առնէ ղինիլ : Երթէ զինուորս անտառներ, մահու ասիւնուխիմ, ևն :

(16) Տուժամանակն արգասիք : Պատուհաս կամ արգելանք ապականութեանցն՝ զորս շահեցի 'ի կիրառութեան աստուածայինն այս, ծուլութեամբ ծածկեցան, և իբրև աղբե լցոյ մեռելք պատկանեալ անդէպակացն :

(17) Պատասխանատուական ընդունելիս : Նշրուա՝ որ է գործի պատասխանատուանաց , ցի-
բանանցն օգուտ , զոր իւր յիրաւանց՝ ճնշմեն պատրաստանձեալ կայ . Ի անհամեմատ
ուժեանց , զինք կամ ձև. անիրաւ և գործելի ուժեանցն՝ առողջաբար զատաստա-
տանաց փոփոխեալ լռութիւն :

(18) Ցաւղնանք մաղջ : Ախտահարեալ խորհրդոց մասանց 'ի գանձարան կաղ-
մածոց առաջնութեանն գլխ . մերթ 'ի կողմն յուսաահատութիւն , մերթ 'ի պղծութիւն .
առաջնորդել կամիմ , և վարանիմ թէ զոր առաջնորդութեան յանձն առից ,
կամ երբ . [illegible] ոչ թողու անօթն . ճնշմեն զանձնա
բժշկել՝ ոչ է կարելի . արդեօք յանձնառեալն առաւանձնական լռու իցէ , թէ
'ի միաբանութեան կալ . և առաւ՝ զօրաւորին առաջնորդութեան առանձին , թէ
գնդերձին միայն 'ի ծածուկ՝ առ 'ի չգայթակղեցուցանել զայլս . մերթէ
հրաժարել 'ի վարդապետութենէ , և զանձնա միայն հոգալ , կամ արդեօք
յետ առաջնորդելոյ՝ իցէ թէ գործեալ անկանիցիմ , և յոր պատճառ
առաց արդեօք : Այսպէս խռովեալ , ղէկավարի 'ի վերայ օգտին , թէ որ իցէ
օգտակար ինձ և այլոց՝ ոչ գիտացի . և յետ ժողովել զբարին՝ յիմարութեան ան-
կարօղ գտայ . որով և ընթացք եղիցի , եղանելոյն 'ի մեղաց՝ արդեօք
զխելն խափանեցաւ . Ի վատարան խաղոյն , կանխեալ մասունս՝ անխանագին ճնշ-
ցի , միացուածովք մեղաց , ( որ առաջնորդն է միացուած կրակի , ) ըմբռնել
խառնակեցաւ :

(19) Եղէգ պարզանաւոր : Եթէ առնումեմ զայն պատրաստականութիւն , անկեա-
նիմ խոփոութէ , առաւելից , աղաւաղեալ : Եղէգ ձողէնագէր , թէ առնումեմ
զգայիր առանձնի , կամ որ պաշտօնեայ է զատաստանական գիտանի , անկեա-
նիմ ճողէհալի , պարզաւորեալ , կամ կործանման առաջացուածոց : Եղէգ օրինաւոր ,
օրինադէտ առնումեմ , ազատեմ անէծս լռել : Եղէգ առեղբաբանական , առև-
տարանից կամ քարոզիչ , ազատեմ թօթափել զխոյս ռամկին . փոխանակ
ծոծակման՝ 4 . օրին . ծոծակելոյ : Եղէգ ապառամ , գծնեարարոյ , միամ
խոխծման , կակծեցուցիչ բանից : 3 օրին . յապառամ :

(20) Եղէգ Լեռնէ ընդրութէ : Եթէ ըմբռնի այնուհետեւ՝ արդ ի օրինացն մանկ
անոյն փորձեալ լինէր կենդ չնացող , ( Թուոց . Ի . 17 . ) փորձիցիմ և ես ,
խորտակիմ . որպէս յայնժամ եթէ Ճշմարտութ ընդունեալ էր կենդ , յաղ-
թելն զօրութ՝ ուղղոյն որովայն նորա , և բարձք նորա խորտակեցին : Եղէգ
դեղ ինչ դարման . ըս գեղ ինչ քննութեն , առաջնորդութեն , կամ ուղղութ
առնում , փոխանակ առաջնորդաց առնումիմ :

(21) Բերոն նկարէմ : Եթէ առնումեմ յաւելանէ բարեաց ինչ բաշխումն ,
ես 'ի կարծեաց չարեացս փախուցիմ , ոչ համարձակիմ մտաբերել գիտակցութ
զանկարծ առնութիւն իմ :

(22) Եղէգ ծոթր ինչ խորդուխ : Եթէ առնումեմ զխորհրդեան խորտակեալ ,
( խառնեալ , գոլոգաւորք . ) ազատեմ ելէն վերակացու թուլութեն 'ի պատ-
ահեղս :

(23) Որթ վայրենի : Այս իմ որդեակ առաջնորդութեան՝ զխորս զգայութ
արարիս 'ի ներքուստ անհրաժեշտ ներտեսք խոցոտեն . այլ անպարգեւերեւելի ,
անհնար առ 'ի արտաքս հանել , մինչ մնան մնացեալ և բնաւորել 'ի հո-
գիս . և բովանդակ թարախով լնուլ , եկին հարուածոց խոցմունքն և
թարախեցուցանելոյն՝ զչարաչար մահ իմ ցուցանեն : Գաղտնեաց ծա-
ծուկ , զաղանի փտութիւնք հոգւոյս՝ ելեալ եւրոպս միջոց , փոխադրութեն
հեղեալ է , փոխանակ առողջ՝ մթերք թարախոյ , ըս թարախ ժողովեալ
'ի ներքս , դարձեալ դժրախտ բժշկին , զոր 'ի վիճակն զեղերան՝ 'ի ներքս մնաց .
և յորժամ թարախոտ առնումն վերակամն , խնամոց անբժշկելի զալ
զեղերան . այսպէս ներքին փտութեն իմ երեւեալ խիստ կանոնաւորն առաջնոր-
դութեն , ցուցանեն ինձ զեղերս անդարմանելիս արտահեղեալ ընդ նոյն ընթացս ,
'ի չնչայականս , կամ 'ի թուղթս հոգւոյս . յայնժամ և առաջադէկ զղջմանս նուա-

վճարել ՛ի նմա։ Փափագանօք յառաջին ընթացիւն, մի արժանի գնէ՝ ընթանալ։ Բայց եւ ընդ նուաղ ձայնիս խառնեալ զպաղատանս աչացս, եւ զարտասուութիւն հոգւոյս, զոր հնարաւոր զօրութեամբ նուիրեմ զպակասանս յերկրպագութիւնս նախապատուոյ, է այն, կի է ընդունելութեան արժանաւոր ընդ իմ մաղթանաց, է իմ կամս վասն իմ մաղթանաց։

(24) Թագաւոր միերից։ Ցայլ արժանի վերջս հնչ [illegible] է. Ռակարի մի [illegible] ընթացս [illegible] ընթացիւն գաղտնեաց ծածուկ. եւ մարթ է խնամել, մեծ [illegible] թագաւորք կի. փառաւորք հոգւոյս պատմել ՛ի ծածուկ զկարծրութեան պարտիս։

(25) Ցերկինս առաքեմ։ Ցերկնս արժանիս կրկին զնի այս. զի յերկինս առաքեմ վերջին հեծութիւնս։ Եւ զինի. ՛ի առաջինայնոցս առաքի յերկինս առաքեմ։

Սրտին յառաջեալ ներքին հեծութեան՝ նորին հօնողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի։
՛Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ած։

# ԲԱՆ. ԻԴ.

ա. Եւ արդ՝ որոց խնդրոց արժանաւոր վարկա-
նելով զիս, մատչիմ աղերսել. արքայու-
թեան յորմէ վրիպեցայ, եթէ փառացդ վայելչու-
թեն յորմէ զրկեցայ. Թէ կենացդ անմահականաց
յորմէ հերքեցայ. Թէ ընդ հրեշտակաց պարակցու-
թեն յորմէ տրոհեցայ. Թէ ընդ արդարոց մասնակ-
ցութեն յորոց ձեղքեցայ. [1] Թէ ուռ որթոյն կենդա-
նւոյ յորմէ քանցեցայ. Թէ ոստ ոնկոյն բերկրութեն
յորմէ գօսացայ. Թէ ծաղիկ փառացն շնորհի յորմէ
թափեցայ. Թէ պանձանացն ժառանգաւոր յորմէ
կորացայ. Թէ հայրենի ծոցոյն հարազատ յորմէ ընկ-
կեցայ. եթէ զգեստուն լուսոյ պարծիմ յորմէ մեր-
կացայ. եթէ ՛ի ստացօղ դարձին յուսացայց յորմէ
խորթացայ. եթէ ՛ի լուսոյն իղձս դիմեցից յորմէ
մեկնեցայ. [2] եթէ Քրիստոսի յօսկերացն յօդիմ՝ յոր-
մէ մերժեցայ. եթէ ՛ի թեւս նորա մերձիմ՝ յորմէ
օտարացայ. եթէ յապաւէնն ապաստանեցայց՝ [3] յոր-
մէ լսեթացայ. եթէ ՛ի փրկութեն նորոգութեան յորմէ
մահացայ. [4] եթէ ՛ի զգաստութեն զուարթութեան
յորմէ ես լքայ. եթէ ՛ի կանոնն կենացն ուխտի՝
յորմէ փոխեցայ. [5] եթէ ՛ի սահմանն հաստատրա-
կան՝ յորմէ սահեցայ. եթէ յանշարժ վիմին պնդու-
թեն՝ յորմէ սասանեցայ. եթէ [6] ՛ի շարս զուամարտա-

կեա՛ն՝ յորմէ հատեցայ. եթէ 'ի քաղաքէն անդրանկաց շինիմ՝ յորմէ գերեցայ. եթէ հանապազորդեան հա-ցի՛ն աղօթեմ՝ զոր ոչ վաստակեցայ. [7] եթէ փոխա-դրութի երկա՛նցն խնդրեմ՝ յոր ոչ քրտնեցայ. թէ պարգեւօքն պսակեցայց՝ յոր չհանդիսացայ. թէ ար-ձա՛ն ինձ կենաց գրեցայց՝ յորմէ ջնջեցայ. թէ զերախ-տեա՛ցդ ձիր յիշեցից՝ զոր միշտ մոռացայ:

Բ. Այն հատաւ եւ կամ [8] խզեցաւ լար կենաց յու-սոյն. տիրեցայ 'ի բորոտութեանցն գարշութէ, հա-մայն ախտացեալ՝ ամենայնիւ. [9] սպառեալ մարմինս, ապականութին շրջապատեալ մեռոյց այ: [10] Կոյզն պալար փայլունակ տգեղ լմնացեալ, մնացուած ինչ պահեալ նախունակ երկդիմի կերպին, որ զկերպին անմաքրութին նշանակէ. պարծանացն նշոյլ ամենեւին ինձ շիջաւ. փրկութին մատնեցաւ. բարին ստուե-րացաւ. ելք կենացն բնաւին փակեցաւ. մխիթա-րութին բարձաւ. դատաստանին ատեան մերձեցաւ. թոյնք մահուն ինձ արծարծեցաւ. սպանեալն կրկին ինձ կենդանացաւ. [11] լատին դադարք վիմօք խցաւ. շաւիղն յուսոյն [12] կուրացաւ. շնորհին ծածկոյթ յի-նէն մերկացաւ. փառացն վայելչութի ստուերացաւ. հանճարոն առաջնորդական խափանեցաւ. կշտամբա-նացն փուշ բազմացաւ. անօրէնութեն ուղէշ ծաղ-կեցաւ. բոց գեհենին ինձ բորբոքեցաւ. ծառայու-թեն լուծ սաստկացաւ. տրկութեն կապ զօրացաւ. [13] ունօղն յարկին կառուցման ահա անկաւ. [14] բարձ-րութեն վստահարան կործանեցաւ. ընտանութեն միաւորութի անջրպետեցաւ. որդութեն սիրօղ հա-գին այ տրտմեցաւ:

Գ. Ու քանզի զվերջինն համբուրեցի դառնութի, տանջանս՝ խէթս՝ տխրութիս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս, տարակոյսս անյուսադրելիս, ամօ-թանս անպարուրելիս, խայտառականս անվերարկե-լիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս ան-դառնալիս, հալածանս անմարդասիրելիս, [15] երկայն ուղեւորութե ապաձեռն անթոշակութիս. իսկ դու փրկութի զօրութի եւ օգնութի, ողորմութի լուսա-ւորութի քաւութի եւ անմահութի տէր յս քս, որ-դի այ կենդանւոյ, արարիչ երկնի եւ երկրի. որ ըն-

Ձեռնես Ջուր պարզելոյն՝ 'ի ծարաւուտ վայրս անա-
պատի, օրհնեալ, բարեգութ, Հզօր, մարդասէր,
երկայնամիտ, խնամակալ, Հնարաւոր, այցելու,
պաշտպան անձնախնամ, պահապան յաղթող, կեանք
անկորուստ, միջնորդ երկնային, լիութի՛ աննուազ,
երանութի՛ տօնելի, ձեռն ձգեալ սիրոյ՝ ողորմութե՛
քոյ աջոյ՝ ընկալ և մաքուր քաւեալ և սրբեալ զիս
զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւատարապա-
տիւ քո հոգի, զի քե վերստին հաշտեալ՝ յիս դարձ-
ցի: Այլ 'ի ձեռն քո՝ իւրովն կամօք մաքուր նուի-
րեալ, [18] զօրեղն ինքնութե՛ զիս հօր ընծայեալ; ան-
դէն առ նմին նովիմբ միշտ 'ի քեզ շնչայս ողջունիւ
կապեալ ընդ շնորհիդ՝ 'ի քեզ միանալ անբաժանե-
լի: Այլ որոյ քեզ ընդ հօր քում հոգւովդ սրբով
երրեակ անձնաւորութեդ, 'ի միում բնութե՛ և 'ի
մի ա՛ծութե՛ փառք, և 'ի ստեղծականաց էից՝ գոհա-
բանութի՛, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) Թէ ... ոգնոյն: Եթէ աղաչիցեմ երբէ ... որթոյն կենդանւոյ՝ քնի: Այսպէս 'ի հետեւեալն զօրութք իմն զպատս ..., զի երբէ ..., երբէ ծառքն, էն: 'Ի սփաջօղ դարձին, եթէ յընդունող դարձին յաւ-սացեալս, յորմէ սատարեսցի երբէ զանասուն որդին:

(2) Եւէ Ցօր յօւէրուն: Մինթէ 'ի քն միասարիցիմ երբէ սիրելի, յորմէ սանելութիւն կարեցայ: Կամ, 'ի նրան՝ որք մարմին են քնի յերկինս:

(3) Ցուրմէ խինացոյ: Ցորմէ խնԹիւ կմ խառնելով հեռացոյ. կամ ընդ դրում խառնեցայ, Թշնամեցայ:

(4) Եւէ ն զփոփոխեն: 'Ի զգաստութե հաւատացիմ և արԹուն ծա-ռայքն, և խմասսուն կուսանացն փառահացայց, յորմէ ես Թուլացայ: Եւէ ն կանան, յօրէնս ատեսպանին, յորմէ փախեցայ յօրէնս Հէն մար-դոյն:

(5) Եւէ ն սահմանն: Ցուխս միրսութես և կրօնաւորութես, յորմէ գլորեցայ:

(6) 'Ի շարս գասմարփակին: Խողովոյ կամ խոճքի վանականաց, յորմէ վա-րուքս հասեցայ, անկայ, արտաքոյ մնացի: Կմ, եթէ գասմարփակ խմացի ... զարդ ..., (որպէս գնի եղիշ. Է. 136.) ըստ այսմ նշանակէ՝ 'ի կարգս սէց, որք են զարդ եկեղեցւոյ:

(7) Եւէ ...: Մինթէ խնդրեցեմ բառնալ յինէն զեր-կանա աշխատութեն, զոր ած օրէնսդրեաց ադամայ, եւ՝ որ ոչ քրտնե-ցայ: Կմ, միթէ խնդրեցեմ փոխադրել զերկուսն ... կենաց 'ի հան-գերձեալ հանդիսան՝ ուր վաստ ոչ քրտնեցայ. կամ, միթէ խնդրեցեմ հատուցումն աշխատութեց՝ որոց ոչ քրտնեցայ: Եւ ... Թանականս վարձուց պատկեցեմ յայն քնչ գործ, կամ վաստ այնր, յոր չհանդիսացայ, յորում ոչ ճգնեցայ, ոչ ըմբռիր գոլոյ: Եւ ... եթէ զեր հատասսուա, կամ զպրութե կենաց կարծիցեմ ունել, յորմէ մա-նաւանդ ընկեցայ:

(8) Խաչեալ լոյս ։ Ցետ առակոյն՝ հաւատ, յառաջոյն՝ և կամ խաչեալ, լու-
սոյն նշանակէ՝ մանաւանդ, զի, որպէս լոյս յուսոյն հատուած, կարկեալ,
մանաւանդ թէ բոլորովին խաւեալ, բարձեալ զխաւարն չնորհն՝ որ է լոյս
հոգևոր կենաց՝ շաղկապելիչ ընդ նմա. և չէ յուսալի՝ թէ մնայց յետ կենացս
հոգևոր ։ Կամ, եթէ խաւարն զհանդերձեալ կենաց և զյուսոյ փրկութեն,
նշանակէ՝ բարձեալ համարձակութեն կամ վստահութեն փրկութեն վասն մե-
ղացս և անարժանութեանս ։

(9) Սպառնեալ ։ 4. օրինակք գրեն, սպառնեալ զմարմնոյ ապականութեն ։

(10) Դրոշմն պալար ։ Ցանձն այլաբանէ զդիւս բորոտութեն լեառ գրելոցն
(ղևտ. ժգ ։) Եւ առացեալ վերագոյն՝ թէ փրրէզայ 'ի բորոտութեան գաղ-
ղուէ, որ տարածեալ սպառէ զմարմինն, զայս առնու յօրինակ սկզբնա-
կան մեղաց, որ զբնականական բնութիւն ապականեալ, մեռոյց զնա ։ Եւ թէ-
պէտ յայս ապականութեն բժշկեցայ առնէ մկրտութեն, սակայն վերստին
ներգործական մեղքն երևեցան յետ խոցև դրոշմն պալար, փոքր ուռոյց
փայլուն՝ բայց ապեղ, լնացեալ, խոցև զլուան եղեալ, զի սպիտակ բիծ.
որ է սկիզբն և նշան բորոտութեն. որպէս և ներգործական մեղքն սկըզ-
բնականին, որ և է ծագեալ խոց պահեալ նախաստեղ եկեղեցի կերպն ։ 2
օրին. և հին լուծ. ծագեալ խոց ։ Որպէս պալարն փայլուն և լնացեալ
յառաջ քան պատարածանիլ բորոտուն 'ի բովանդակ մարմինն՝ կերևին սա-
կիլ արկանէ 'ի մարմինն. մի՝ սպիտակութեն 'ի մազն, և զխորագոյն սա-
պէ. և մի՝ բնական գոյն և զերք առաջ մասանց մարմնոյն. (ղևտ. ժգ.
3. 7 ։) ։ Եւ 'ի տարածիլ բորոտութեն 'ի բոլոր մարմինն, համակ միա-
գոյն սպիտակ լինի. (անդ. համար 13 ։) Իսկ եթէ յետ այնր երևեսցի
'ի առողջ նոյն առաջ գոյն, կամ կենդանի մարմին, պիղծ լեալ՝ համե-
րի մնացեալ առաջին երկդիմի անալեանն, և բորոտութեն չար. (անդ.
համար 14. 15 ։) Այսպէս անձնական մեղքն ապականեալ՝ 'ի նման խոցև
պալար լնացեալ, ըստ մասին հոգւոյն ապականելոց զնա. և ըստ մասին
մարմնոյն եթող այն՝ առաջ, բայց պատրաստ և զիւրաշինական. և այն
մեղք նորա տարածեալ 'ի ծննդեան՝ զբովանդակ բնութիւն առար որպէս
բորոտութեն ։ Իսկ յետ արտաքոյ մեր 'ի նորա մեղացն, յորժամ դարձեալ
երևին 'ի մեզ անձնական մեղք ներգործականք, այս համարի մնացեալ
առաջին մեղացն ապականոյ. իբր զի ըստ նմանութեան յանցուածոցն ապականեց
հոգւով սպանանէ, և ըստ մարմնոյ թէպէտ առաջ թողու, բայց պատ-
րաստ և ակնարկեալ. վասն այն յարէ, որ զկրկին անմաքրութեն նշանակէ.
զի զհոգւոյն և զմարմնոյն, կամ զառաջինն և զերկրորդն ։ Ուստի և պար-
ծանացն նշոյս որով քննադատեալք լինելով մկրտութեն, պարծիմք 'ի քն,
ավետիսն խոց ընկալ 'ի ձեռն յետոյ ներգործական մեղացն ։

(11) Լորին գրգռել ։ Դառնին համբաւոյրանն, կամ նմանահանգիստ
մեծամեծ քարանցք խցեալ ։

(12) Կուրացեալ ։ Ճանապարհ յուսոյն փակեցաւ ։

(13) Ոսկոյն յորէին ։ Վերամբարձօղն չինուածոյ յարկին, (որպիսի է
սիւնն, կամ գերանն, կամ հեծանաձգութիւնք,) անկաւ. և հոգևորա-
պէս խոնի, երկիւղն որդիական առ նա՝ բարձաւ, որ 'ի վեր ունի զչի-
նուած առաքինութեն, ըստ սիրաքայ, ին. 4 ։ Հին լուծ. խնամոց զհոգին՝
բարձող մարմնոյ ։

(14) Բուրջրութիւն վիթաւորան ։ Նկեցուկն կամ մոյթ բարձր չինուածոյ. որ
է համարձակութեն յուսոյն ։

(15) Երկոյն ուղղութեան ։ Գնացքն 'ի հանդերձեալ աշխարհ, որ յաւէ-
տենական է և անդառնալի. զոր և ասէ սաէ՝ գնալ յաշխարհ հեռի.
(ղուկ. ժթ. 12 ։) Այսմ երկայն ճանապարհի սաէ՝ պատրաստեցի
սղոյեան անթողուլութիւ, ունայնաձևան պակասութեն թոշակի կամ պաշա-

րև , փախստական առնելոյ , ոչ արտաքոյ ընտանեաց սպասելոյ ։

(16) Ջօրէղն ինծնուեքէ ։ ցի հոգին նր՝ որ զօրեղն է ընտւթիւ, կի՞ զօրաւոր ինքնիշխանութիւ զի հօր ընծայեալ է, անդէն առ նմին, միանգամայն նա- մին հաւասարն 'ի տէղ ընկրոյ ողղոմնի, ակրատարի ըղձանօք առ քեզ, կի՞ զրկախտան համբաւրիւ ընդ քեզ, նողնեալ ընդ ընորհիր, այսինքն ընդ սի- րելութեանդ, ընդ բարեշնորհ գթոյդ, ընդ քեզ միանալ առանց բաժա- նելոյ ։

Գուցէ ոչ յաղ եւ պատաղումն թուեցի ամանց՝ կատարածն աղօթեցա ընդ ան- ցելոցն բանից. եւրէ թէ յետ խաղաղ յուսահատելոյն 'ի կենաց Այ, անդէն վաղվաղակի զամենեսին ընտանութեան ող յուսացեալ խնդրեցէ, զանբաւական առ նա զմխանալն ։ Սակայն արթուն Աղօթաւորս մեր երկիւղածք ուշօք վարի յաղաչանս եւր. միում յանձին մեղանաց հայցելով եւ 'ի չարժանութիւն, ընդ յուսակատար խաղաղ. իսկ միւսով յառնել յանկար գթութիւն եւ 'ի զօրութիւն Այ, եւ 'ի միրկանս ՔՏի, յուսա պատասար քաղցրերկեալ զօրանայ. ուստի թէ առաջինոյն իբր անձնապատճե- առական զանձն խոստովանի, երկրորդական ոչինչ երկբայի լինել երկնաքա- ղաքացի ։ Եւ առաւ ը այսպիսի հայեցուածոց, խոստովանելով նախ՝ թէ ընփանուելն մառադրան անկրդեփեցա, ցի բարձաւ հեռացաւ. եւ թէ հոգին ող փրփիցաւ, եւ թէ այսորինք զմեղքն զառնութիւն եւ ատեղծանս եւ անծ- թանս ինձ պատրաստեցի, յանձն առի, զառնոյ առաջ զքոյ թախանձել, զի ըստ անհնահնար իւրումն փրկագործութեան՝ ձեռն ափրոյ ձգեալ ըն- կալցի զինքն, եւ սրբեալ մաքրեսցէ առ հաւասարութիւ Հոգին նր. եւ նորա եւս հաշտեալ, երկոքին Որդի եւ Հոգի միաբան հաճութիւ ընծայեսցեն երկնաւոր Հօրն. որպէս զի հոգւոյն աղբերղ զօրութեամբ, եւ որդւոյն հա- մահամբոյր սիրոյն մերձութիւ կապեալ միանայցէ անբաժանելի ։

---

Մերտին յաւելուած ներհեն հեծծութեան՝ նորին հոգոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱ՛Ն. ԻԸ.

Ա. Բայց քանզի 'ի վերայ այսքանեաց գերութեանց անհնարշուառ վտանգաւորիս՝ [1] մի զմիով եւ եւս առնելոյ, զոր զկերպարանս անցիցն՝ 'ի մասնէ վերաձաւալեալքդ նախագրեցին. ուստի եւ փոխեալ զեղանակ բանիս՝ այլ ձեւ զերկիւղութիւն աղէտիս ։

Բ. Այն զի [2] ծով է ինձ ծփանաց կենցաղոյս բերմունք յոյժ նմանապէս. յորում կոհակք բազմօք անթիւ դիմեցմանց՝ տատանեալ հոգիս 'ի յայսմ աշխարհի՝ մարմնոյս շինուածով իբր 'ի նաւակի ։ [3] Զոր եսայիաս մարգարէ զյանկարծադէպ կատարածն, որ 'ի պարսկականն հինից՝ երուսաղէմի եւ սամարիոյ կործանմանն, նմանեաց այսր օրինակի կեր-

պատուիրեցոյց. որ և առ իմն հոգևորական խորատա-
կումն զուգաձայնել՝ ոչ է սխալական։ Քանզի 4 մինչ-
դեռ չուէի ես յանհոգութենէ անտարակոյսն վստա-
հութեան, դոյզն կասկած արկածից 'ի միտ բերելով
առ խորոց փոքր մինչցին, որ 'ի մէջ հանգստեանն
և աշխատութեան, իբր այն թէ հասեալ իցէ ձմեռն
յամարայնի, բքաբեր հողմով ժամանեալ՝ երկքա-
լեանն դիմակցութեան, ամբոխեաց զհանդարտութիւն։ 5
Սաստիկ նաւն 'ի բախմանէ վայրենի ալեացն՝ խորտա-
կեցաւ։ 6 Թևոցն ձեռնարկուն քայքայեցաւ. 7 կայմն
ամբարձման՝ 'ի կայից իւրոց խլեցաւ. առագաստին
թռչարան՝ յանկարկատելի ծուէնս պատառեցաւ.
շինուածոյն շուրջ՝ անզարդեցաւ. 8 առաստանք ձգողա-
կանացն՝ խզեցաւ. 9 տեսարան գլխոյն դիտակի՝ խո-
նարհեցաւ. 10 տպաւանդակին պարան՝ կտրեցաւ. 11 ա-
պաւինունն խարսխին լուծաւ. 12 լուծք սատուարք ամե-
լեցն կցորդութեան քակտանեցան. 13 սամիք ուղղչացն
հեռոց՝ գալարեցան. 14 լարս հիմանն հաստարանի՝
ընկղմեցաւ. 15 ղեկացն կառուցմունք՝ անդրէն սու-
զան. չըւոցն յարմարութեան պակասեցան. 16 ողնա-
փայտին պատսպարան՝ իսկոյն բեկաւ. 17 կապարանք
զրատին հաստատուածոյ՝ յօշատեցաւ. 18 գօգք ամփոփ-
ման ծոցոյն կազմածոյ՝ անարգեցան. 19 խելք շըր-
թանցն եզերաց՝ խախտեալ ոստեաւ. 20 պաղպաջունք
բազմականացն՝ անկեալ բարձաւ. 21 վանդակապա-
տին վայելչուն՝ յատակեցաւ. 22 գահաւորակին համ-
գստարանն՝ չփոթեցաւ. 23 մածմունք տախտակա-
շարք՝ 'ի միաբանութենէ միմեանց անջատեցան. 24 հե-
ղոյք պնդման բևեռացն՝ քարշեցան։ 25 Արգասիք
իւրին՝ յիշատակարան ողբոց ինձ նմանեցաւ։ Նաւա-
վարն հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն 'ի
ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ Ընչ-
մարք սակաւ մնացուածոց՝ 'ի ծայրից ծփմանց աղ-
դելոյ ծովուն, իբր խողխողեալ բանաւոր՝ ողորմա-
գին թախծանօք հեծէ։ Այսն զի թէ զբարի նաւա-
պետն երկնաւորօքն զօրօք՝ յաշխարհիս ծովու առ
'ի զխորտակեալս իմ տապան իմանալի գոյութեան՝ առա-
ցէ աշխարհել բանիւ յարմարութեան, ոչ ինչ վրիպեա-
ցէ 'ի սատուգութենէ։ Քանզի արդարև ելաց բարեգութեան

տէր՝ յառաջ մարդկութեան՝ զթաղեալ ազգականցն․ ելաց առ նմին և զերուսաղէմ մոլեալ, և զյուդայս մոլեգնեալ․ յորոց երկուցն կորեաւ վստահութիւն՝ յօրինակ նմանութեան աղարտեալ նաւի․ իսկ միւսն հասեալ յատակս անդնդոց, առաստան յուսոյն՝ ձեռամբ ունողին՝ յանքոյթն արտաքսերեաց խաղաղութիւն ։

Է․ Արդ՝[26] իցէ՞ թէ յաւելից հայել զգագամախորտակելի տապանակ մարմնոյ իմոյ նորոգեալ ։ Իցէ՞ արդեօք տեսանել զփշրեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ ։ Իցէ՞ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ մեծաւ՝ վերստին կցեալ ։ Իցէ՞ արդեօք տեսանել զյօգնաթախիծ սիրտ վշտացելոյս՝ բերկրեցեալ ։ Արդ՝ իցէ՞ ակնունել նայել զյաւէտ[27] խաթարեալ կերպարան բնութեան՝ կրկին հանդերձեալ ։ Իցէ՞ արդեօք թէ տեսից զքակտեալ տաղաւար թշուառացելումս՝ միւսանգամ կանգնեցեալ ։ Իցէ՞ արդեօք յուսալի նայել զտարամերժեալ գերիս՝ ազատեալ ։ Ապաքէն գուցէ՞ ակնունել՝ զանկեալս 'ի շնորհէդ լուսոյ՝ դարձեալ կազդուրեալ ։ Արդեօք տեսից զվայելչութիւն ընտանիդ քո պայծառութեան՝ յաղորմութիւն ինձ երևեցեալ ։ Եթէ տեսից երբեք զամենատեսուր կերպարան հոգւոյս իմոյ՝ ժպտեցեալ ։ Արդեօք լուսոյ ընդ ձայնի գուժիս՝ աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ ։ Արդեօք տեսից զախտակործան վնասեցեալս անօթ՝ կազմեցեալ ։ Իցէ՞ թէ տեսցեն[28] պատուհանք աչաց իմաստից ըդմուրհակ պարտուցս իմոց՝ պատառեալ ։ Եթէ յայտնեսցի[29] օրն իմ անձկութեան՝ շնորհին քաւութեան՝ բարուոք ինձ ծագեալ ։ Արդեօք մտից 'ի խրախճանութի խորանին լուսոյ՝ քեւ առաջնորդեալ ։ Իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքս, ըստ եզեկիէլի, ցամաքեալքս 'ի կենդանութեանց՝ նկաւորութեամբ ազդողականն շնչոյս զօրացեալ ։ Իցէ՞ թէ յաւելից հայել 'ի տաճար սբ քո, աղաղակաւն մարգարէին 'ի փորոյ կիտին, հերքեալս 'ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ ։ Եթէ լինիցի՞ խաւարամանուածս մթացելոյ՝ ծագման առաւօտ ։ Եթէ հասցէ՞ տեսանել զառագնապեալս մշտասառոյց՝ յեղանակս գարնանն

մեռ ։ Եթէ տեսից զցօղ անձրեւոյն ³⁰ կանաչացուցա-
նօղն հողւոց՝ ինձ արօտ ։ Եթէ ³¹ իցէ՞ արգեօք նկա-
տել զգազանաբեկ հերքելն ոչխարս՝ վերստին կամաց
գթութեան քո հօտ ։

Է․ Եւ քանզի ըստ բանին Յոբայ, շուրջ պատեալ
են չարեացն հնարք՝ ընդ որ ո՛չ կարացից անցանել․
իսկ եթէ լոյս ողորմութեան բարերար կամաց քոց
ցուցցի․ գթութեան քոյ դուռն բացցի․ Ճառագայթ
փառաց քոց ծաւալեսցի․ խնամք ձեռին քոյ յայտ-
նեսցի․ արեգականդ կենաց օր տարածեսցի․ առա-
ւօտիդ ըղձալի տեսիլ մերկասցի․ առատութիւն քաղ-
ցրութեան քոյ աղբերասցի․ վտակ արարչիդ կողից
հոսեսցի․ ծորումն անապակ սիրոյ քոյ հեղցի․ ծա-
գումն աւետեաց շնորհի քոյ երեւեսցի․ պարգեւիդ քո
ծառ ծաղկեսցի․ ³² մատունք օրհնեալ մարմնոյդ բաշ-
խեսցի․ համառօտեալն ակնկալութիւն հանդիպեսցի․
հատուածեալ ձայն ողջունի քոյ տէր՝ լուիցի․ հեռա-
ցեալդ խաղաղութիւն մերձեսցի ։ ³³ Այսոսիկ յաւէտ
սահմանաւ երանականաւ՝ հաւատ ընկալեալ յուսոյ
հաստատանոյ, ապաւինեալ ՛ի հոգիդ քո տէր, որ ընդ
հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան՝ ընդ քեզ
փառաւորեալ ՛ի լոյս անմատոյց, որով կեանք եւ ե-
րանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ մեղա-
պարտիս ։ Յաւանդ անկորուստ ընդ իս պահելով
առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի, ՛ի ձիր անեղ-
ծութեան անուամբք անճառելեաւ ահաւորութեան
հզօրի ո՛չ միայնոյ եւ անքննելի տէրութեան՝ երրեակ
անձնաւորութեամբ․ որ եսդ յիսկութեան յէութեան եւ
յարակայութիւն բարձրութեան քաղցրութեամբ ողորմու-
թեամբ եւ մարդասիրութեամբ պատկեալ հանդերձեալ
եւ Թագաւորեալ ։ Եւ առ ամենեսին ամենայնիւ
յամենայնի կարօղ ես՝ գթած․ եւ քեզ վայել է
փառք յայսմ յաւիտենի, եւ ՛ի հանդերձեալ մշտն-
ջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի, յաւի-
տեանս․ ամէն ։

(1) Մէ կէտ ։ Որովհետեւ Թշուառութիւնք հոգւոյս մի քան զմի սաստ-
կացեալք չարչարեն զիս, իսկ զերզանեակ [illegible] ՛ի [illegible], ըստ [illegible]
[illegible] եւեթ, կամ սակաւ ինչ ծանուցին [illegible] բանիւք, [illegible]

ըմպել փոխանելով մեռոյն զգեւ բանսին՝ այլ ոչ զողջակական ձայնս, կամ զերգսն աւաղէն, այն գլի, թէ յոյն զապաշխարութիւն զըսաոն ատամանս, զի ծուխ է խնկ եմ: Ըստ այսմ 3. օրինակք ասասնց գլխաւորի զննեն զայս հատուած, եւ յառաջանցեալ բանին յարելով: Կայ եւ այլ ասորութիւն. զի փոխանակ 'ի ձեռնց, 3 օրինակք ունեն, 'ի ունանց. որպէս թէ նոքա քան զայս մերձաւորագոյն: այլ որ. ուրոյ կերպարանս վերծանելոյք: 'ի սկզբան աղօթիցս Գերոսեն ասէ՝ նշանակէ զմտանելն հոգւոյն ընդ բանութեան մեղաց, անուից եւ զաւան խշխանութեան զխուացս: Այլեւ շարադրութիւնս պարզագոյն է. 'ի մերոյ կամ յաղագս այսրքան գերութեանց՝ որք մի զմիով երեւեալ ասնենն, կամ մի քան զմի զօրանանն, զոր, թէ ըզոյս զհամարձակութիւն պատուականացն փոխել խմն ծածուկոյն նախանձաւորութեանց, փոխեալ պէղանով եմ. եւ

ըստ այսմ ասորին մեղաց թարգմանութեամբ:

(2) Ծուխ է խնկ ծխանաց: Կ օրին. ծխալեաց: Ցայս զեղուս զնետանս աղխարհեն՝ 'ի ծով ասասէ, եւ զանմարասար շարժմունս մեղաց՝ ալեօք նշանակէ. յորոց հողմն խռով ուղեալ 'ի նաւի մեղաւորոյն չարաչար խորտակի:

Տապանեալ հոգիս: 2 օրին. տապանէ կամ տապանեալ զհոգիս:

(3) Ջուր Եսայեան: Ակնարկէ 'ի բանն. (Ե. 30.) * Ակնարկէ սորայն վասն նոցա ասէր յաւուր յայնմիկ եւրկ զձայն ծովու ամբոխեալ ալեօք||ն ալ 'ի նախընթացան խօսի զհարուածոց ասեն խորոցեալ՝ ատամնեալ յաղթ զի մերժեսցէ. (Հռովմ 25. 26:) Եւ յանկարծակի ասէ՝ վասն բանսին. * Վաղվաղակի տարած ընթացեն || եմ: Իսկ 'ի պօրգնայանն կինից, հոգեւորն 'ի բանն, * Ցաղգս հեռաւորս, եւ ածցէ զնոսա 'ի ծագաց երկրի ||, եմ: Որ ն առ ինս ողոգուրդեւ. զոր եւ խռովեալ հոգեւոր խորտակեսցէ յաղթահարել՝ ոչ է ընդդէմ, կամ անդադար ամ: մի օրին. վէրոյնյենւ, թէ բարձրաձայն ասէ:

(4) Մինչեւ լուեի: Ցորժամ 'ի մանկութեան, կամ 'ի ծաղկել բանաւորութեան՝ յառաջ քան զչարժել ախտից զնու թեան, զնորա հանդարտութիւն եւրկ զնաւ 'ի խաղաղ ծովի, ըզմին կարեւոր ուղղեներ, ասկաւ եւս երկիւղ զժուարութեան կամ փորձանաց զգալով 'ի շարժել ցանկութեան, (որպէս զհոգին՝ որ յառաջէ քան զախտս ձայնութեանն,) ... մեղ հանգտեանն ... . զայս փորձ երկիւղ ունելով յաղագս ասկաւ մեղուցին՝ որ 'ի մէջ անմախ հանդարտութեան մանկութեանն, եւ 'ի մէջ պատանեկութեան ախտաւոր շարժմանցն. զի մանկութեան ասկաւ ժամանակս վայելէ յանխռովութեան ախտից, եւ եւրկ սկսանի ձանձրել զհրդեհ նոցա եւ զանհանգստութիւնն, երկիւղ աչխատութեան ծնանի 'ի սիրտն, եւ խորշելն յանդորրութենէ: Կամ, զայս երկիւղ կրելով 'ի մերոյ ասկաւ մեղուցի զժուարութեանն՝ որ 'ի մէջ աշխատութեան պատանեկութեան՝ եւ 'ի մէջ հանգստեան հոգւոյն. զի զժուարութիւն նուաճելոյ զախտս՝ 'ի սկզբանն է. եւ ասկաւ մի կրթեալ, հանգչի հոգին 'ի բնութենէ ախտից, եւ զվարժեալ ասսովորութեան. որ եւ նա մարդասպանս ասէ. (Մեկն. Երգ. 80:) * Դժուարն է 'ի սկզբան ասսովորութիւնն, եւ յետոյ քաղցր ||: Կամ, զայս երկիւղ ունելով յաղագս ասկաւ մեղուցի ժամանակին՝ որ 'ի մէջ աշխատութեան աստի կենաց, եւ հանգստեան հանդերձելոյն: Այսինքն՝ ասէ յայսմ երկիւղէ զարհուրեալ, որպէս թէ յառաջագոյն ձմեռն հասեալ իցէ, եւրկ ձմեռնախառն հողմով, եւրեքալեան դիմակացն, հողմով որ յարուցանէ զերկրաբարձ ալիս խռովեալս. այսպէս շարժմունք ախտից խռովեցան եւ խորտակեցին զնաւ հոգւոյս մերոյ: Եւրեքալեան ասէ՝ յորժամ ալիքն մի զկնի միոյ երեքս զեղանան, եւ դիմակացեալ, կամ զբազմութիւն ասէ՝ որով ալիք հարկանեն զնաւն, եւ կամ զառ մեծամեծս զխուսափումն նոյն խնկ ալեացն՝ յորժամ հակառակ հողմով փոխադրեսցին. կամ յանդիմ ծովու եւ 'ի ժայռս բախելով մխեալ ... է

տարաջ եղանին ։ Իսկ 'ի մարդն այսպիսի երկրագնդեան յուզմունք են փոփո-խութիւնք աշխարհի, մարմնոյ, և սատանայի. կմ զոր ասէ յովհաննէս (Ա. Թղթ. Բ. 16.) ցանկութիւն մարմնոյ, ցանկութիւն աչաց, և ամբար-տաւանութիւն աստի կենաց ։ Ասացեալն, Իբր այն թէ հոսեալ իցէ ջրեան, են, յերկս օրինակս այսպէս գնի. Իբր այն թէ հոսեալ իցէն, ջրեան յամարա-նի . . . ամբոխեաց ընձանդարփոսենն ։ Եւ ը այսմ ընթերցուածի այլեայլ յարմարքն իմացքն. ըդ, մինչգեռ 'ի կեանս աշխարհի և կրօնաւորու-թեանս անխրկիւղաբար և վստահ սրտիւ գնայի, թեթև կապած ևեթ կրելով 'ի մեռ ընդ ձախորդ պատահմունս ինչ, իբրև զի այնչափ փոքր է միջոցն ը աշխատութեան և ը հանգիստս, մինչև թուէր ինձ թէ արդէն հասեալ իցեմ 'ի հանգիստն. ուստի յայսչափ սակաւ միջոցի ոչ կարծէի հանդիպելոյ վտանգաց ինչ, այլ վստահութե գնայի, զոր օրինակ խաղա-ղիկ օդով որք մերձ իցեն 'ի նաւահանգիստ ։ Այլ ահա որպէս թէ ձմեռն յանկարծակի գործիցի յամարանի, յուզումն ալեկոծեաց զհան-գստութիւն հոգւոյս, և մատնեցայ 'ի վտանգս. Ոստի նաւն ե՛ն ։ Այս իմացք առաւել ըստ կարգի երևին ։

(5) Ոստի նաւն ։ Հոգին՝ որ կարգեցաւ յայս ը բնական և ըստ ձրիական կատարելութեանցն իբրև զնաւ բարեյարդար, խորտակեցաւ յալեաց մե-ղաց. խորտակումն՝ մարթ է իմանալ զկորուստ անմեղութեան առաջ-նոյն ։ Ցանկն, զի 'ի յաջորդեան տարրագրէ զմասունս նաւին ըստ կարգու-թեանն որ լինէր յայնմ ժամանակի. վասն որոյ ուրեք ուրեք աղօտ երե-ւին մեզ, այլազգ գոլով քան զամենայն այժմու ժամանակիս ։ Այլև յիւրաքանչիւր բանսն չէ գիւրին որոշակի նշանակել զյարմարութիւնն առ մասունս հոգւոյ, կամ առ իւրաքանչիւր մտաց մեղաց. զի ինչ ինչ գնի միայն առ 'ի սատակացուցանել զթշուառութիւն խորտակմանն՝ թէ նաւին, և թէ հոգւոյն ։ Սակայն առ հասարակ զայս նմանութի իմա-ցուք 'ի մէջ նաւին և հոգւոյն. զի ներքին կամ ստորին կողմն նաւին նշանակէ զգգայական մասն հոգւոյն, վերին կողմն՝ զբանական մասն. իսկ այլ շարժական կազմած նաւին ցուցանէ զբնական և զգերբնական ձիրս ։ 'Ի հետևեալսդ համառօտիւ զմի կամ զերկուս 'ի յարմարութեցն նշանակեմք ։

(6) Թիւոցն ջեռուցելոցն ։ Ըստ ոմանց իմանի թիակաց ասելն. բայց լա-ւս իմանելն փայտք առագաստից. (Էյրի, կմ Էնկրի.) որք իբրև ձեռն կամ բազուկ՝ կալեալ և տարածեալ ունին զառագաստն՝ որպէս թևս նաւին ։ Հոգևորապէս իմն զբարձումն ձեռնկալութեն նոյ, և զանդործ միայն ապրեցութեան հոգւոյն սոյ ։

(7) Կայմն ամբարձեալ ։ Միջին բարձր գերան կամ սիւն նաւին. (օրթա ախրէկի.) խզեցաւ 'ի կոյնց նաւոց, 'ի ոտիցոյն յորում հաստատեալ կայր ։ Ուստի առագաստին բոլորան, մեծ առագաստն՝ որ կապեալ կայր 'ի կայմն, պատառեցաւ յանկարկասելն ծովէն, մասունս, կտորս ։ Ըստ հոգևորին՝ կործանեցաւ յոյսն. և ջանք առաքինութեան որք հաստա-տին 'ի յոյսն, ցրուեցան ։

(8) Առագաստ ջգողկանացն ։ Զուանք՝ որք ձգեն զառագաստս և զայլ փայտս կամ զձողս նաւին, խզեցան ։ Ըստ հոգևորին՝ խրատք առաջ-նորդաց զատարկացան. կամ արիութի հոգւոյ թուլացաւ. կմ երկիւղն նոյ բարձաւ ։

(9) Տեսարան գլխոյն ։ 'Ի վայր անկաւ ատեղին չինեալ 'ի գլուխ նաւին՝ առ 'ի գիտել զՃանապարհ ծովուն, կամ զգալուստ այլ նաւաց, կամ զատաղն առաջնորդական 'ի գիշերի ։ Ոմանք իմացան զդրօշակն. (ըդ ըն-դայլրախն.) բայց ոչ 'ի դէպ ։ Հոգևորապէս, արթնութիւն մտաց և խոհեմութիւնն կորեաւ ։

(10) Ալպանտրայինի պարքա : Հաստ պարանն՝ կապեալ 'ի վերուստ կայմին մինչև 'ի վայր 'ի չըթռանս նաւին, յոր հաստատեալ կան այլ չուանք, որոց առպաւանդակ կոչէ : Հոգևորապէս, օրէնքն՝ յոր հաստատին կանոնք վարուց, 'ի մտաւորութիւն եղեն :

(11) Ալպանիաւոնէ խարսխին : Հաստ պարանն (հալաթն) յոր կախեալ կայ խարիսխ կամ երկաթ նաւին. կամ, խմոյնի ասուար կոչեցն, յոր ապրին ծայր պարանի խարսխին : Ըստ հոգևորին՝ համբերութիւնն սպասեցաւ, որ քաջնայր զծանրութիւն աշխատութեան :

(12) Լոսծօ օփասաբօ : Երկոքին հաստ գերանքն՝ որք 'ի գլխոյ կողմն նաւին կցորդին ընդ միմեանս՝ իբրև լուծք 'ի պարանոցն : Ըստ հոգևորին, խաղաղ միաբանութիւն հոգւոյն և մարմնոյն քակեցաւ :

(13) Սոծօ ոււղղլայն : Փայտն անցուցեալ 'ի գլուխ զեկին՝ առ 'ի դարձուցանել զայն. (ափոմէնի գլուխ.) կամ, ցցուեալ փայտքն՝ յորս անցուցանին Թիակք նաւին. (տրապասան.) զի զեկք և Թիակք ուղղին հետք նաւին. և տղքա գօլարբեցան, այսինքն ծաեցան 'ի բանութենէ ծովուն : Հոգևորապէս, բարոյական ուսմունք՝ որք շարժեն զսիրտ մտաց, կամ զԹի լեզուի և ձեռաց, Թիւրեցան 'ի մոլար ուսմունս աշխարհի :

(14) Լապա հիմանն : Յատակ նաւին ընկղմեցաւ, որ է հիմն և հաստատութիւն բոլոր շինուածոյն : (Նաւուն Թէքնէ :) Ըստ հոգևորին, զգայական ճանաչումն և բաղձանքն՝ որք 'ի մարդն հիմն են բանական ճանաչման և բաղձանաց, ընկղմեցան 'ի մարմնականս :

(15) Պէջյայի կատառացմանն : Կազմած զեկին. (ափոմէնին չէնքը.) ամպրէն, այսինքն անդէն կամ իսկոյն ասաղան, ընկղմեցան. ուստի և նուոցն յարմարութեամբ, ուղղութիւն ընԹացից նաւին խանգարեցաւ : Ըստ հոգևորին, միտքն 'ի մարմնականս ընկղմեցաւ զհետ զգայութեանց. առ որ գնացք մարդկային կենաց խոտորեցան յուղիղ ճանապարհէն :

(16) Որմանթոյլին պատպաղարան : Ողնափայտ է հաստ գերանն յատակի նաւուն՝ երկայնեալ 'ի խելաց մինչև 'ի գլուխն, յոր ամփոփին կողք նաւին. (Նաւի օմուրղա :) իսկ պատպաղարան՝ կամ զնոյն իսկ զողնափայտն առէ, իբր զի ամրութիւն է կողաց և տախտակաց յատակին, և կամ զհաստ բևեռսն՝ որովք ողնափայտն ամրի ընդ այլսն : Ըստ հոգևորին, ցանկական մասն՝ որ կայ 'ի միջնոյն մարդոյ, խորտակեցաւ յանպատշաճ ցանկութիւնս :

(17) Կապարանօ ուրափին : Կողքն՝ որք կապեն զտախտակս յատակի նաւուն, (զապուռղա.) յօղափեցաւ, քակեցան : Ըստ հոգևորին, Ջիղք և կողք՝ որք կապեն և պատեն զկուրծս և զԹիկունս մարդոյ, յանչափ ցանկութենէն Թուլացան, և անպիտանացան առ բարի ցանկութիւնս :

(18) Գոփօ ամիւսիման : Մէշն, կամ ներքին դատարկութիւն նաւին, (ամպար.) յորում ամփոփին բեռինք, անպիտան եղև քայքայմամբ կողից և տախտակաց : Կուղմածոյ : այլ օրին. Կաղմատծոյ : Ըստ հոգևորին, ընդունակութիւն ցանկականին առ հոգևոր շարժմունս կամ իղձս կորեաւ. զի ընչասէր մարդ ոչ ընդունի զհոգւոյն ինչ. (Ա. Կորն. Բ. 14:)

(19) Խնէս ուրանցն Եպերաց : Յետին կողմն նաւին՝ ուր չըԹռանքն եղեցին, (խէլին քիւփիւշտէնները.) խախտեցաւ 'ի բաց անկաւ : Ըստ հոգևորին, բանք ածայինք՝ որք են չորրհ չըԹանց, պակասեցան 'ի մտաց :

(20) Պօղպաղետօ բոլմախոնացն : Զարդարուն նաւապատք՝ որք 'ի խելաց կողմն չինեին. (օԹուրաճախ ատղուանք.) կամ մանուանդ, վրանաձև կամ կամարաձև հովանոցք պատրեալ 'ի կտաւոյ կամ 'ի տախտակէ 'ի խելս նաւին՝ հովանի առնել յարևէ և յանձրևոյ. որպէս երևի 'ի ցա-

կանոնաւ ։ Ըստ հոգեւորին, խոստովանութիւն հոգւոյն, կամ մխիթարութիւն ՚ի վերջոյ՝ բարձաւ ։

(21) Վանդօփսոփին հայելւորէն ։ Վանդակաւորէն յօրինուածոյն գեղեցկութիւնն՝ որ յարտաքին երեսս խելոյն, ( կամ դամասկեայն, ) յոփոխէցաւ, եզ ՚ի յառաջ ծոցոյ, կամ հարթեալ հաւասարեցաւ ։ Ըստ հոգեւորին, զարդք առաքինութեանց կամ արհեստից՝ ՚ի բանական մտացն անշքացան, և անպտուղ եղեն ։

(22) Գոհարաքարին հանգստարանն ։ Փառաւոր նստարանն՝ յոր հանգչէր նաւավարն, կամ իշխան նաւուց. ( Թագաւորական ։ ) Ըստ հոգեւորին, խելապատակին՝ յոր էր յաթոռ առաւելապէս հանգչել հոգին, շփոթեցաւ աղէտալի ցնորիւք երեւակայութեան ։

(23) Մոծմանչ փոխփոխալար ։ Տախտակամած նաւին, (կէօվէրթէ.) ՚ի կատարեցութենէ միմեանց բաժանեցան ։ Ըստ հոգեւորին, ՚ի խաւարութենէ կամ ՚ի խանգարմանէ երեւակայութեան՝ կարգաւոր խորհուրդք մտաց, և փոխադարձ համաձայնութիւն ներդաշնութեանց կամաց պառաւականեցան. մինչև զոր միայն բարի համարէ, կամքն չհաճին. և ընդ որ կամքն հաճին, երեւակայութիւն խափանէ. և այնպէս պատերազմունք և կռիւք են ՚ի մարդն ։ ( յակոբ . դ. 1 ։ )

(24) Հեպչօյօ ոփրմնո ։ Բեկեալք՝ որք ամենայն ունէին զպարսպաւորս քաղաքացն, եղեն ՚ի անվայելչ խարկանց ։ Ըստ հոգեւորին, երեկեալն եւ, արդարութիւն օրինաց, յիշատակ մահու, մտածութիւն ունայնութեան աշխարհի, եւն, որք ամենայն ունէին զմիտս և զհոգին ՚ի բարի միաբանութեան խարկանց, բարձան ՚ի միջոյ ։ Եւ մնաց այսպէս ամենայն թշուառութեանց

(25) Աւրգամէօ էլէմ ։ Համբերութեան գործոյն՝ որ ՚ի խորտակման նաւին և հոգւոյս, յիշատակարան ողբոց լինի եղև ։ Եւ զոր օրինակ նաւաբեկեալն, նաւավարեան առանց խորտակեալ նաւուն կալով, և զձեռն ՚ի ծնօտին զնելով, ողբոց զամենայնին զկորուստ նաւին, մանաւանդ ՚ի անտանելի զննացողս նաւին՝ որք ՚ի ծփմանէ ալեաց ծովուն երբեմն զնոսա խորտակեալ մարդ որք ապաստանեն ապաւինել ձայնիւ, այսպէս ոչինչ առաւ է ՚ի ճշմարտութենէ՝ համարել թէ կարծօղն և ուղղիչ հոգւոյս քո համբերեմ դիմեցուցանելով ողբոց զներքին խորտակեալն հոգւոյս ։ Որպէս և երեմիայ յառաջ մարգարէն, յօրինակ մարդկային բնութեանս, զնախնեաց ողբոց, զգաղթականս. զոր աղաղակէր ասէ՝ կամ մեղ, ըստ որում մարդ էր, և կամ քեզ, ըստ որում հրէայ՝ և ակրկնութեանն կատարեալ ընտանի. երկաց ն... մասնակից. այս չէք յայտնապէս ՚ի գիրս. այլ կամ խանձոյ զմանն ՚ի մասնաւորութեան գերէզրին. (երեմիայ . Ե. 7.) և կամ զաւաղելն նոյն ասէ. " Վայ յոյր ձեռն որդի մարդոյ մատնեսցի ||. (մատ . իզ. 24 ։ ) Սակայն ՚ի լալոյն քում ոչինչ շահեցան եղէմ և յուսացայ երբեմն զնոսա եղծեալ բոլորովին ։ Իսկ զազգայինն հասնելով յառաջս անդրադոյն, մատնեցինն ՚ի գերեզմանն, և հոգւոյն յարգելւոյն նախահարցն, առաւել յառաջն քեզէն, ջեռուցանէ ամենայն, ընդանուրին քում, արքայեզէնայ, եհան արտաքս յանգոյն խաղաղութիւն կենդանութեանն ։

(26) Իօէ՞ Եէ յաւէլւօ ։ Աղբերք անհաս նորոգեալ զմարմինս, որ խորտակեցաւ ըստ պարզական մասին ։ Իօէ՞ արդէօք փէնանէ օդէալ դհո..., որ փրկեցաւ ըստ բանական մասին ։ Իօէ՞ արդէօք փէնանէ վերստին միաւորեալ ընդ իմ հոգիս՝ որ բաժանեցաւ կարգաւորութք գերեզմանական ձորոյն ։

(27) Իուանաղէալ ։ Եղծեալ, աւերեալ ։

(28) Պարուհանօ ալաջո ենմարէջ, խոնարհալի աջոյ մարդոյ ։ Եւ եթէ ըստ մարմնոյ աջս խոնարհութեան, կոչին աջք ենմարէջ, այսինքն խոնարհութեան կամ հնազանդութեան, զի աջոքն պատռեալ կապոյ աստուածը անդրեկութիւն ։

(29) Օրն իմ անցանէ: Արդեօք որ նեղութեան խելս, այսինքն մտահոգութեան, յայտնեսցի ինձ որ շնորհին փառաւորեան:

(30) Կատարածացուցանօղն հոգւոյ: Որ կատարածացուցանէ ինձ զարօտ հոգւոյս: կամ, արդեօք տեսից զկատարածացուցիչ հոգւոյ զանձրեւն՝ ինձ 'ի յարօտ. այսինքն 'ի ճաշակումն, կամ յարբումն:

(31) Իջէ՞ արդեօք: Յ օրին. Իջէ՞ եւեւք: Մինչ իջէ՞ կարեմք, զի ես նմանեալս զաղանեալն ոչխարի՝ որ ըստ օրինաց աղտեղծ է և անդադարութ գեղջ, մերժեալն աղքատ՝ խառնեցայ 'ի հօտն քոյ, 'ի դասս համբերել աղաղակագոյ:

(32) Մատուցն օրհնեալ: Եթէ նայեցար արդեօք մատուցեալ, մինչև արժանաւոր ըմբռնել յանդգնութեան այդ խորհրդոյդ: Եթէ համատօփեալն անխոնջութեան. արտաքոյ կամ համարեալ անհնարութեան հանդիպեցայ: հարստութեան, ըստ կամ զղջացեալ ողջոյն խաղաղութեան:

(33) Ցուցանէ յանկ: Մեկնեալ 'ի բանէն՝ խնդ եւեւ ըստ արդարացելոց, են, մինչև ցմեր զգլուխ կատարեալ է արդարութիւն բանիցն: Եթէ առէ՞ ըստ արդարութեան քո ցուցցի, եթէ զուտ զթութեան քո բացցի, են, յաղթող, այսինքն առաւելագոյս կամ մեր երանելի միշտանկաւ հաւատո ընկալեալ հասարակ յամատ, և վառանգեալ 'ի քո փառաւորից հոգիդ, ոչ միայն քաւութիւն զարից, այլև կեանք և երանութիւն: Ցուցանէ անհնարին: զայս հաւատ և վառահութիւն իւր անկարաւոր աւանդ առ իս ապահեալ, առհասարակ, ապաստան կամ զբաւականն ճշմարիտ արդարութեան քո, 'ի յիր անհասանելեան, իւր աղօթքն անհնարութեան՝ որ ըմբռնելոց է անճառելի անտարակոյս կամ զօրութեանն: Որ և փառաւորեալ ես 'ի բան էութեանդ, և 'ի մշտնջենաւոր բարձրութեան. բայց և 'ի միջնոլ մեր վայելեւն քեզ փառք յայտն յաւիտենիս ոչ կարծես, այլև 'ի հանդերձեալ մշտնջենաւորութիւն յայտնեսցէ, այսինքն 'ի հանդերձեալ մեծի աւուրն յայտնուել արդ յայտնելոց ես, և այն որ է մշտնջենաւոր, զի ոչ ունի երեկոյ և կամ գիշեր:

---

Ներբողին յառաջբերեալ ճրճին հեծանէն՝ նորին հոխոյն, առ նոյն տղերս մաղթանաց բանին:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ ԻԶ.

ա. Եւ արդ՝ [1] աստուածապէս և իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն՝ և զբանիցն յարմարութի՜ հանդերձեն, և 'ի նոյն գիր բերեալ զաւարտմանս տանցն, որովք առաւել սաստիկ մորմոքեալ ճմլեցուցանեն զաղէտս կարեացն սրտին ըղձից առ արտասուացն բղխմունս. ուստի և բազմեալ իմ 'ի գլուխս պարու ակմբից դասու այնր երախանաց՝ որք զլալեացն յեղանակեն բանաստեղծութի, և ես ընդ նոսին՝ նոցին հեծութե՛՝ աւաղական ձայնարկութեամբ՝ զանձինս տարածանեմ զվը-

տակրութի ։ Որ ² ոչ ընդունին մեռեալ աշխարհի, և ոչ իսկապէս կենդանի են ․ ոչ ջերմ սոսկ, և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին՝ գրեալ 'ի յայտնութեն ․ երից ատելի՝ երրեակ տէրութեն, և ամենատես արարչութեանն ։ Այլ այս են պատկանեալ ³ Թախծականացն կերպագրութիւք, կրկին աղորմելի այսու երևեցեալ, որ 'ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զԹշուառութեցն զօրինակ, այսպիսի կցորդութեամբ շաղկապեալ ։

Ի․ Պարտուցն ⁴ ժխտեալ տաղանդացն՝ Ճեպով մեծաւ 'ի տուժի ․ ես ապիկար մատնեալ՝ անարժան գործովքս յիրաւի ․ վատնիչ արքունի գանձուց՝ ⁵ կրկնապատ և անթափելի ․ պատասխանատու մեծին՝ ըմբռնեալ անհրաժարելի ․ բիւր քանքարոց խնդիր՝ ես չունիմ ⁶ կշիռ մի ունկի ։ Անբարեխօս կապեալ 'ի պահեստ՝ դառն արգելանի, հեծումն և վաստակ ցաւոց՝ Ճաշակեալ յաննշոյլ բանտի, անապաւէն տանջեալ անթոշակ՝ կամ ողորմելի ․ ⁷ այլ յեղանակ ինձ ողբականաց՝ աստուստ կնքեցի, փոխատրեցի սավին բարբառով կոծ կսկծելի, կարգադրեցի շրջաբերութեամբ՝ 'ի նոյն պայմանի, ⁸ անհատական Թիւխորհրդական՝ երկեակ տասնեկի ։ Աղքատութեանն հնոց՝ յամենուստ մասանց մերկի ․ անպատսպար Թշուառ ⁹ վտանգեալ սրտիւ 'ի գրաւի ․ տարակուսեալ հոգւով ապաշնորհ այր 'ի վրիպակի ․ ¹⁰ անխընամելի հայցմամբ՝ դատաստանն յինէն պահանջի ։ Մեղաց և մահու զինուք ¹¹ զգայարան գաղտնեացս խոցի ․ անփրկելի մատնեալ բռնութե՝ չարեացս գերի ․ սուր սուսերաւ սաստից՝ գոյութի բնութեանս յօշատի ։ Յիշատակաւ բեմին՝ ¹² աստատին 'ի դատաստանի, անծագելի մռայլ՝ չարատես աչացս երևի ․ անձեռնկալ՝ կապեալ՝ եղկելիս 'ի տարակուսի, ահարկութ̃ դիմաց՝ պատկերի վերնոյն տեսանի ։ Յոյժ անարև՝ և անվերարկու 'ի տարտարոսի ․ անապաւէն մոլար՝ մորմոքեալ 'ի հուր գեհենի ․ անյայտնելի կորուստ՝ կործանեալ 'ի մեղաց վէհի ։ Ահա զոր ունիմ ¹³ արծաթ անպիտան՝ ոչ երբէք յարգի, և ոչ ընդունի և կամ համբարի՝ 'ի գանձ տէրունի ․ հայցուած պղտոր և ձեռն անմաքուր՝ աննուիրելի ։ Այլ բե-

կեալ սրտիւ մատանց տատանմամբ՝ յոյս առեալ
դարձի, [14] զդէմս 'ի յերկիր եդեալ պաղատիմ մերձ–
ջի • բարեխօսեամ մաղթեամ քաւութի՝ ինձ մեղաւո–
րի • դու զօրաւոր [15] փրկանակ կենաց՝ իսկուհի եր–
կնի • [16] քեզ օրհնութիք ձայնից՝ և բուրմունք խըն–
կոց 'ի յերկրի, և անուշից իւղոց մատուցեալ՝ մըն յա–
մենայնի ։

Զ • Մարդ՝ յասացեալ ողբոցս հիւսուած՝ այլ մասն յա–
ւելլի • բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մա–
տուցի • զկորստեան խորս չափելով՝ զորքանն երբէք
ոչ գտի • [17] մամնաւորօք բանիւք՝ 'ի հանդէս Նորին
ջանացի • զմտացս արագեալ զթեւս՝ [18] յերևոյթ իւրն
ոչ հասի • զուշին պարտութի յանվթարելեացն՝ բա–
ժակ բարկութե 'ի ձեռն իմ առի • զտարտամութի
տարակուսանացն՝ իբր ճաշակումն մահու արբի ։
Եւ այժմ զյանցիցն յաճախութի՝ ողորմելի ձայնիւ
յերգ արկի • աներևոյթ կրակարան տապոյ՝ բորբոք–
մամբ մեծաւ անզովանալի • անտեսական իմն քրայս
հալոցաց՝ սաստիկ եռացմամբ անշիջանելի • [19] սլաքս
նետից պատկանեալ դեղովք՝ 'ի շտեմարան խորուե
սրտի • խիթք ցաւոց խոցոտման մահու՝ 'ի գնացս ե–
րակաց գոյութե լերդի • կիրք երկանց [20] անճարակ
ճեպոյ՝ 'ի պատուած աղեացս անելանելի • [21] անզօ–
րելի դեղոց ջերմութի 'ի յերիկամանց մասունս եր–
կակի • անհնարաւոր դառնութի մաղձի՝ [22] 'ի նախա–
դուռն իմոյս կոկորդի ։ Եւ աղս ձայնից լքուցանո–
ղաց՝ 'ի փողս շնչոյս խոշոր հնչի • [23] բազմահատուած
էութի ընութենս՝ ներհակք միմեանց 'ի պատերազմի •
երկչոտութբ կարծեաց վարանեալ՝ ամենայնիւ կայ
'ի վտանգի • հարազատաց դաւաճանութի՝ անհաշ–
տելի 'ի կոտորուածի • ոչ մեռեալ և ոչ կենդանի՝
թաղեալ 'ի մեղաց գարշութե տղմի • կասկածաւոր
պատժապարտութբ՝ վերակնարկելով քեզ բարերա–
րի, յանակնկալս կենաց վհէ՝ արտաքերել 'ի լոյս
անձկալի ։

Է • Նոյն ինքն [24] որ զայս՝ բան տպաւորեաց, ընդ եր–
ջանկաւ՝ ցըն պսակեսցի • ակնարկելով քո ողորմութե,
անարատի՝ ցըն հաղորդեսցի • վասն զենման Քսյ բա–
նիդ, բարեգործեալ՝ քև կենդանասցի • [25] օրհնու–

թի՝ դոմէեալ քո շրթանց՝ 'ի գլուխ բաշխողի՝ այսր մատենի. հաստատեսցի ընձականութի՝ տղամննեան բանիս առակի. նկարագրեալ հոգւովք՝ բարձրեալ, 'ի նորոգումն անեղծանելի ։ Օ՛ի դու միայն ես երկայնամիտ, ներող՝ քեզ փառք յաւիտեանսն. ամէն ։

---

(1) Սփուդէոզէս ն Իրաստոէոր ։ Արժանապէս և յիրաւի՝ ըստ այնոցիկ որք ըստ ողբական ձայնից կարգեն և դասաւորութեամբ կամ զյօրինուած բանիցն, 'ի նոյն գիր դարձուցանելով զատուրփոնս փոնցն, զմերձեալ իւրաքանչիւր տանն. (մի օրին. փծնւցն, որ մերձական ծոցի ։) որով առասել մորմոքելոց ըննին բանիցն, և յարատասս շարժեն, ծաղկեալ և խօլ 'ի գլուխ այնպիսի դասու ըսլականաց, ևն. Այսպէս բայս ծաղկեալ յարկեր է ըստ յարադրերականներն՝ ըստ ոըս. և առակն՝ ասափ թարգմանութ է. այնպէս յաջորդն, ն էս ըստ նոսին, բացայայտել կրկնութիւն է ։ Աւնէից դասս. ժողովոյ դասուն, այնը էրախոսաց, այնր խաղի ըսլականաց ։ այլ օրինակ գնէ, պուրուակն խմէից. այսինքն պարսաւոր խաղից, որք սար կամ գասս կարգեն ։ Իւ զինի, ստաղական ծայնարկումէ. 3 օրին. ծայնարկսոյուէ ։ Այսու սկսուածով բացայայտէ նա մարգարէաս զհանդամանս և զդիտաւորութիւն ողբերգական կամ երերական բանաստեղծութեան. երբ զի ոչ միայն եղանակ ձայնին ողորմագին լինելոց է, այլև քերթուածք տրամական բանիցն կարգին տասնաւոր շարժով և նման յանգիւ. որպէս զի կրկնութ՛ նոյն ձայնի առէաք սրտին առասել զբղձեալին ։ Վասն զի բնական յօժարութիւն է մարդոյ՝ յամ կեղս ողբականս կամ 'ի տրտմական՝ միշտ 'ի նոյն դարձուցանել զխօսսն. և որպէս առակն ասէ,

ուր ցաւս կրէ ոք, անդր արկանէ զձեռն ։

(2) Ո՛ւ Բեռանին մեռէալ ։ Թէպէտ միրսութեան և ուխտի կրօնաւորութ և քահանայութեան մեռեալ են աշխարհի, բայց սրտիւ և գործովք մարմին ըստ ցանկութեան աշխարհի. ուստի և ոչ բոկոզէս կէնդանի ա՛յ, որ զվերա և զգործ խնդրէ ։ Ո՛ւ Զեւէմ ասոյ, ոչ կատարեալ ջերմ և եռացեալ յամծ, ն ոչ ցուրփ յաթաւյ, զուս ցրտացեալ, կամ սառուցեալ 'ի հաւատոց և 'ի կրօնաւորութենէ, այլ գաղջ (ըստ յովհան. յայտն. կ. 15. 16 ։) վասն որոյ էրէցս ափէմ ա՛յ, այսինքն յայժ առակի և զզուելի՝ արժանի փսխելոյ ։ Հին ըստ. մեկնէ՝ երկցս, այսինքն հոգւովք,

մարմնովք, միտքս ։

(3) Թախծականացն կէրդոգրամմիյանց ։ այլ օրին. կէրդոդրամմիյանց ։ Տրամական բանիցն կարգութիւնք. կէկէն ողորմելի այսոս էրնէյեալ. այլ օրին. էրնէյալ ։ կրկնակի կամ առասել ողբալին լինելով այսու, որ 'ի մի գիծ, 'ի մի տուն ասպանեն զձե ասպնաք թշուառութեանցն ։ Յաղագս չափաբանելեալ ասօթից ծանի՛ր, զի բովանդակն է նոյնաձայնք, առաւտելով 'ի տասն է. բայց իւրաքանչիւր անդամն կէս տաղն ոչ է զուգաձայնի. զի յերկրորդ համարն, Պորփուրցն ծիփէալ, ամենք 'ի 14, և այլք 'ի 15 վանկից բաղկանան ։ յերրորդ համարն, Արգ յասոյէալ, ամենք բաղկանան 'ի 14 վանկից, և բազումք 'ի 19, կամ 18, կամ 20 վանկից ։ Իսկ 'ի չորրորդ համարն, Նոյն նինն, ամենեքեան բաղկանան 'ի 18 վանկից ։

(4) Խիփէալ փաղանգացն ։ Զպարտաս տառանգաց շնորհաց ուրանալով, ծէղով մէծա, մեծաւ տագնապաւ և փութացմամբ պատրոսմ առաժել ։ 3. օրին. Պորփուրցն ծիփէալ փաղանդ՝ այն ծէղով մէծա՝ն փուծէ ։ որպէս թէ, զպարտաս տառանգաց ժխտելով միայն ծառայն՝ նա մեծաւ տագնապաւ

՚ի տունժի մէնաց. իսկ եւ ապլիկոր մոնոփէլաւ, Նաեւ անապժանն գործակցք վասնիւ գանձուն, են:

(5) Կըբնատրոփ: Կրկէն պատաստասանի արտաստակոր. մի՝ վասն չչահեցաւ ցանելոյս գլխանձն արդեանի. և միւս՝ վասն կոտուսանելոյս, կամ զի ա ակերախա գասոյ առ Նէորզն ած, և անտողոմ առ պատառս եղոզոն: Ն ան բոփեւէ, անգերծանելի ՚ի ձեռն ջառապարմաթեան, կամ միջնորդաւ, կամ փոխիչելով:

(6) Կըլիտ մի ունիլ: Բառս ունելի լաւ հին լուծ. կարծիք սեռականնն ունի կամ ունգ բառէն, այսինքն մելեղ, (յարգի մանրուք): Բայց Նորա սեռականն լինի ընդոյ, և զի սասանոր բանն է ՚ի վերայ չափոց, առաւ ուղիզ եւ իմանի առա յուռնական բառն՝ ունգիտ, կամ ունծոյ, որ է ծանրութիւն 8 կամ 12 արգասոյ. և առել կամի. յինէն լինի աղահան ջումն բիւր փանփարոյ, որ առնէ բառըսամ հաղարաւոր հօնայս. իսկ եւ յուներ զանէ չափ մի 8 կամ 12 առամ փոքոյ առ ՚ի վճարել: Ցայլ առ. ճղեալ էր փանփարոյ. որպէս և յավելորդն, ուէս լուսիմ. բայց լաւ լաւ օրէ Նակաց եղալք, փանփարոյ, եւ:

(7) Այլ յեղանակ: Որանք լաւ հին լուծ. զոյզ խոլև ածական անուն իմաստաւ, մեկնեն՝ սառլեկը կամ զանազան եղանակ. կամ Թէ այս ողջա կան ձեւ սառլեկր է յայլ աղօթից: Բայց լաւ եւ իմանի խոյև շարկաց, որպէս Թէ առել. եւ յանն չյայլ բանաւ կամ անօգնական և անալաշար, այլ միայն յեղանակ լալականաց ինձ մեաց առաէն:

(8) Անհաստատուն Բիւ. անհաստատնելի կամ անբաժանելի Թիւ. զոր ունենք իմացան ՚ի վերայ վանկից իւրաքանչիւր առոյն. իբրև Թէ 13 վանկ գոլով, կոչման Թիւ է, որ չբաժանի ՚ի հաւասար մասունս: Այլք իմացան լաւ հին լծ. զհաւասարութէ առոյցն, համարեալ Թէ իւրաքանչիւր առոյք միաչափ են ՚ի վանկն և ՚ի յեզն, և ոչ հասանի առեն ՚ի առնէ: Բայց և ոչ մի ՚ի մեկնութեցդ ունի զանգի, զի անհաստատ են առոյքն՝ լաւ առացելումն ՚ի լծ. 3: Այսպ այլազգ իմանալի է. եԹէ գյաւջորդ բառն Եւլինոյ փանէլի, իմացուք՝ երկոտասան, որպէս այլք իմանան, և մեկնեն ՚ի վերայ երկոտասան առոյցն՝ ակնեալ ՚ի Պորփուռյն ծիփեալ առնէն մինչև ցայս ասաչիկայ առեն, լաւ այամ երկոտասան Թիւն ամ անհաստատն, այսինքն անհնազանդելի կամ անպակասելի. իբր զի խորհրդա կան գոլով այս Թիւ, ած միշտ զդասակասումն Նորա լնայր և ամբողջ պա հէր. որպէս փոխանակ յուդայի ընտրեաց զմատաթիա՝ ՚ի լրումն երկո տասան առաքելոց. և ՚ի լրումն երկոտասան ազգաց ժառանգութեան՝ յերկրս բաժանեաց զեղէն յովսեփայ. (ծննդ. խր. 5: ր. օրին. լբ. 17:) Սակայն հարազատ իմաստս բառէցն Եւլինոյ փանէլի, իմանալի է՝ երկկեցս առան, այսինքն բառն. և յայս առնէ զառան ի, յոր առաջակ առաքեալ, և ամ անհաստատն, զի մի անհասս ձայնաւոր գիր է. Ն Բիւ խոբհրդական. զի Նշանակէ զբառն, որ յայտամ բանի խորհուրդ ունի. զի վերագրեն զառակ քանեքարացն յէշեաց. իսկ այն առակ ՚ի զակ. (ժԹ. 13.) անուանէ մեաւոյ գնի, և առ՝ Թէ առաւջեայն եա առան մեաս, և Նա յարգելով այն՝ շահեցաւ այլ եւ առան. և եդն ընդ ամենն բառն. (անդ. 16:) Այրք՝ Նա վարդապետս ծանուցանէ, Թէ վասն այն զառա Նասարս ի գրով առաքեալի, զի ցուցից զեա պարտառոր բառն մեասացն եա. ջը բարձրապատիկ շնորհացն՝ զորս ընկալայ յիւ, այլ և Նոցին համե մատեալ բարեացն՝ զորս շահել կարող են, և հեզգութեան կորուսի զա ռաքելոյն և զանձիւն: Զայս միտս յայտ առնէ առելն յառաջեացն, Տուրնըփուրէֆի ուշարէրութե ՚ի Նոյն պոյմանի, այսինքն կարգեցի զառանուացս գործածանելով ՚ի Նոյն կերպ առաջադասն ՚ի գիրն ի. յոր ՚ի վերայ բերե լով Թէ անհաստատն Բիւ, են, առայ իմանալ. որ է անհասս Թիւ Նշանակէ

քանակի ։ Ոմանք խմանալով զայս 'ի վերայ ամաց իւրաքանչիւր ատամն, այս_ պէս բացատրեն · կարգեցին զատամնաւորս այնպիսի Թւով, որ 'ի նմանէ երկու ատամն անհատանելի է 'ի հաւասար կէս ։ Այսպէս հատուածն Պիւթագորեան մինչեւ յերկրորդ. հանրագումարն ըստ մեծի ամսոյն բաղկանայ 'ի 14 ժամուց · որոյ կէս է 7 · որ 'ի նմանէ ատամն ոչ բաժանի 'ի հաւա_ սար մասն ։ Իսկ յերրորդ. հանրագումարէն մինչեւ 'ի վերջին բաղկանայ ըստ մեծի ամսոյն 'ի 18 ժամուց · որոյ կէս է 9, որ եւ 'ի նմանէ ատամն ոչ հատանի 'ի հաւասար կէս ։

(9) Վարանգեղաւորքն 'ի Գրուն ։ Որովհետեւ աղքատութիւն կամ չքաւո_ րութիւն հոգեւոր բարեաց՝ իբրեւ հնոց բորբոքեալ այրէ զնա շուրջանակի, եւ պատուաստեալն զգուշաւոր ունի զայլ ամենայն ինչ զինչ փոխանակ պատ_ րաստեալ, առհաս վարանգեալ կամ պատճառ 'ի հոգս անմխիթարս · զի եւ Թշ_ ուառս անպատսպարս՝ անձնանուէր եմ զգլխովին · չունիմ ուսանք յոյս զերծանելոյ զգրաւն ։ Եւս առաւել տարակուսեալ եմ հոգւով, զի խոճով յանցանաց ասացնէ եմ առ պատուաստեալքն 'ի Ձեռուածքն, բաղում սխալանաց ։

(10) Անխռովքն հայրենեաց ։ Անդորր քննութիւն · կամ պարհամբք յանձն գաղտնութեան, որում չիք հնար հայրենեաց կամ աղաչանաց ։

(11) Զգուշութեան գաղտնեաց ։ Ակնառու կոյր հոգւոյ՝ որ զգաղտնիս իմ գիտէ · զննութ ամբողջս եւ ծածուկս, զառաւելապատուութեանն խորհրդոց ։

(12) Ապաքէն 'ի տարածութեան ։ Ցնծալով աւետեաց ատամնեաց տառապեալ խեղճ, կամ այժմէն իբրեւ 'ի զառածեալ անհանգիստ խառնակ երկնի շարժմունս աւուրս, այժմէն ապաստանեալ կամ խռովեալ աշխարհս · որպէս առաջ երկնչեալ 'ի մեծամեծ արհաւրաց անհանգիստս ։

(13) Արծաթի անօթոց ։ Էր բանն երեսն · ( Յ · 30 ։ ) բարեկամ կորուսն իմ զոր ունեի առ նա՝ նախ քան զնեղանձնելն, եւ կամ զոր 'ի մեջս գտեալ առ_ բարեկամ վարդապետութեան, Ճգնութիւն, եւն, իբրեւ ասա արծաթ ոչ արժեն, եւ ոչ մնասեն 'ի գանձն իմ ։

(14) Զարմն 'ի յերկնից ։ Արտաքին երկրպագութիւն մարմնոյ՝ կարէ ըն_ ծայել նաեւ առագծութեան, որպէս Թագաւորաց լինի, եւ նահապետաց բազում անգամ առնեն այլ մարդոց, կամ հրեշտակաց ։

(15) Փրկանաւ կենաց ։ Աստուածն կենացն շնորհաց եւ փառաց · կամ զօրու_ թեան փրկութեան կենաց · այսպիսի է նա կոյսն ոչ միայն բարեխօսութեամբն, այլ եւ ծնանելով զփրկիչն եւ զկենսատուն, եւ շարժառականութեամբն առ_ բանեկելով ընդ նմա 'ի գործ փրկութեան ։ Իմանալի Երկնի · իմանալ կամ Ճշմարիտ Թագաւորի երկնից ։

(16) Քեզ օրհնութիւն յանկոյց ։ Օրհնութիւնն ըստ որում է խոստովա_ նութիւն եւ բարեբանութիւն սկզբնապատճառին իմ բարեաց, է գործ կրօնի, ուստի անկրաւութէ իմ միայն վայելչական ։ Բայց ըստ որում զօ_ րութեամբ գերապատուելութեան ուրուք, կամ ընծայումն շնորհակալութեան, է գործ յարգանաց, կամ երախտագիտութեան, եւ պատշաճի նաեւ արարծ_ ոյ, յորս առաւելապէս Տեառն Աստուածածին ։ Իսկ Քաւարանաց իմոց, եւ Խաչից մարդացութն, եւն անկրաւապէս գործք կրօնի եւ ամենավայելուչ · վասն որոյ սուրբն յիշատակաւ՝ իմ միայն ընծայեն ։ Ցեա յաջնակարան բանիցն՝ սովորութիւնն 'ի պատուադարձս առ Տէր Տէրունականն՝ զայն յորժամ ասէ Թէ ա_ մենայն աշխարհաց պատշաճապան եւ հզօր խնամածուլ նա միայն է ։ Սորին վասն եւ զ ճ բանին կարգեցեալ մաղթանս առ նոյն Տէրունականն, խորհրդով սկսանի, Եւ արդ 'ի վերայ այսքանեաց յասանահարութեանց եւն ։

(17) Մահուանորէն քանիւ ։ Հանդուստ կամ ամպոյ բանիւք, 'ի հանդէս, 'ի յայտնութիւն կամ 'ի ցուցումն երկրպագելու Ջանագի ։

(18) Ցերեկոյն երեն ։ 'Ի անուանութիւն կամ 'ի բան որպիսութիւն երեն

ոչ հասանի մտացս . վասն որոյ պաշտելին պարզաբանէ , զյաղթելն մտացս , յան-
վրէպելեաց , յանպատկառելի և յանչափելի խորոցն մեղաց՝ առ ի ինձ նիւթ
զայրացմանն ընդդէմ անձինս . որպէս որ անտանելութիւն առնէ զկապուած
պարտս , յետոյ ընդ անձինն պատերազմի , անտանելով զկապանութեն պար-
տուցն՝ զոր չկարէ վճարել :

(19) Սլաքս նետից : Վասն մեղաց իմոց՝ իբրև սուր երկաթք նետից , պար-
հանէալ դեղովք , այսինքն սաստիկ մեծալք կամ թիւնաւորք՝ թափանցեն
'ի սիրտ իմ :

(20) Անճարակ ճիգոյ : Անզգամութեանն բանութեան խիթք ( խօսուածք )
յաղէս իմ պատոյսին առանց ելանելոյ արտաքս :

(21) Անդորրելի տեղոյ : Անզգամութեանն կամ անյաղթելի 'ի գեղոյ :

(22) 'Ի նախադրութեան : 'Ի դասուց կակղալին , այսինքն 'ի բերանն , կամ
'ի քիմսն :

(23) Բաղձահափուած կամեն : Էութիւն մարմնոյս՝ որ 'ի ներհակ տա-
րերաց կազմեալ , և բոլոր էութիւնս՝ որ 'ի հոգւոյ և 'ի մարմնոյ բաղ-
կացեալ . և ամենեքեին հակառակամարտք , մարմինքն ընդ միմեանս , և
մարմինս ընդ հոգւոյս , այժմ երկիւղիւ մեղացս և դատաստանին՝ ան-
նախնի կայ 'ի դիմեակի . առ հասարակ տագնապի մարմինս և հոգիս : Հա-
րաղբաց դաշնաւորութեան , հարազատք զոլով միմեանց՝ զմիմեանս դաւա-
ճանեցին . և այժմ անհաշտելի են 'ի նոյնութեան , 'ի կտրել զերկարս
զատն խառնուածոյք խղճի մտաց : ոչ դիւրեալ . կենակենդան կալով իմ
'ի դառն ողմի մեղաց , երկիւղալի պատժապարտութեն՝ զոր ճանաչեմ և
խոստովանիմ , առ քեզ բարերար ամենակալ զաղաղեմ , և պաղատիմ
հանել 'ի լոյս ցանկալի 'ի հէք , 'ի դրոյս՝ որ անակնկալ է կենաց , յորում
միացեալ , յոյս կենդանութեան ոչ գոյ :

(24) Որ ... : 'Ի բերան աղօթողացն գնէ աղաչել վասն իւր : Կամ
մարթ է ասել , թէ որովհետև նր վարդապետս 'ի յիշատակարանի ան...
գործակից իւր առնէ զհօրեղբայր իւր յովհաննէս , գուցէ նա էնքն առաջ գալ
յառաջեալ՝ աղօթել վասն երանելի նարեկացւոյն : Այսմ նման կայ և
'ի բանն ԻԸ . 4 :

(25) Օրհնութեան գովեստ ... : Օրհնութիւնք ... հանդիցէ 'ի գլուխ
բաղխողի , յօրինողի և տուողի ... ... ... մտ-
անելի . որով կատարեցի մաղթանք ողորմելեան բանիս . ( տանդեր . ժա .
26 . ) * Օրհնութիւն ... 'ի գլուխս սխալողաց : ||

Մերոյին յաւելուած ... ... , ... 
... ... բանի :
'Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ :

## ԲԱՆ. ԻԲ.

Ա. Իւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղ-
ծութեանց վերընծայելոց՝ գեղեցիկ թուեցաւ
յարմարեցի՝ կական և հեծութիւ , հառաչանք կող-
կողագինք , դառնութեան լալումն և արտասուաց երգ ,
դարձեալ սկսայց զձայն պաղատանաց՝ խոստովա-
նողին զղջականաբար՝ զգաղտնածածուկն յայտնա-

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՂԱՅԵԱՆԻ
Կարգաթիւ ________

բարբառ. զի անդրադարձութեամբ սկզբմամբն՝ և վերջաւորօքն բառիւք, զնոյն համաձայնութին 'ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խնամարհուէ

աստանօր եդից:

Է. Մեղայ մեծիդ բարերարութե, անսահման մեղայ. մեղայ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ. մեղայ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարև մեղայ. մեղայ սիրոյդ վերնում գթութե, յայտնապէս մեղայ. մեղայ ստացողիդ յոչէութէ, տուգապէս մեղայ. մեղայ գերունակ գոգոյդ գրկանաց, անբաւս մեղայ. մեղայ անմնուազ լուսոյդ վայելման, նենգօղս մեղայ. մեղայ ճաշակման անճառդ կենաց, բազում մեղայ. մեղայ անհաս պարգևացդ ձրից, համապամզ մեղայ. մեղայ գովեալ մարմնոյդ տ̃յ, մահուչափ մեղայ. մեղայ պաշտելի արեան արարչիդ, իսկապէս մեղայ: Ահա արդարև օրհնեալ է հաստուած բանի՝ յուսադրական սրտի՝ այսր մեղայի. սոյն սա՝ պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, [2] հայրենեացն տուր, նախահարցն օրէն, համայնից թոշակ, [3] անհերքելի բան, զօրաւոր պատասխանի, կենդանութե կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց, անխզելի կապ, հրաշալի բարբառ, անշրջելի պատճառ, բաղձալի աղերս, փափաքելի սեղան, սրբտաբեկ հնչումն, անհնարից ճարակ, կարծրութեան վանիչ, [4] ամենապաշտից սահման, հեթանոսաց դիրք, վաղնջուց կանոն, քրիստոնէից հարազատ, արարչութեն յաղթող, [5] անջրպետ հզօր, խարոց ահաւոր, [6] արուեստ բարձրութե, խորութի անչափ, հիացման տեսիլ, [7] խորհուրդ կնքեալ, ընդ որ չիք ումեք անցանել, եթէ ոչ անըմբռնելի մտաց արագման զածանիցէ: Զայն բարեպատեհ հրաշաւորական, որ ոչ յիշատակեցաւ [8] 'ի վերջին դատաստանին դատուն լքելոյ. գուցէ առ նմին խզեալ համառօտ զվերիժակն իրաւանց մահուն հասելոյ, յորմէ ընտրութին տպագրոծ եղեալ, զսահմանն յաւիտենական քակտեսցէ: [9] Օարդ փառաց մեծութե, որով նոյն ինքն ամենութիւն պատկեալ բարգաւաճի: Քանզի ո՞վ ոք դիմեալ կալաւ զեղջերաց սեղանոյ այսր սրբութե, և ոչ առժամայն ապրեալ 'ի պատժոց՝ անարատ գտաւ:

Իսկ եթէ [10] աքար զարմեան, և սաւուղ կիսեան, և յուդա սիմոնեան՝ ասելով զոյոյն ոչ արդարացան, և ես վկայեմ՝ իրաւամբք խոստովանեալ զայս պայման բանի. զի ակամայիցն բռնադատելոց՝ ոչ է կատարեալ սէր, ուստի և ոչ բովանդակապէս փրկութիւն. Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զեր-
ջանիկ բանիդ [11] զմկրտութեան հարազատս:

Է. Մեղայ երախտեացդ մեծացուցութեան, վերստին մեղայ. [12] Մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ, յիմարս մեղայ. մեղայ առ կեանսդ գժրաղութեան, [13] իսկ և իսկ մեղայ. մեղայ բանիդ ապախտ առնելոյ, չարաչար մեղայ. մեղայ 'ի յօր սատակման ինձէն ստիպեալ, վատթարս մեղայ. մեղայ պարտականս անկենդան մահուն, ծաղելիս մեղայ. մեղայ անպատկառս քո բարձրութեան, տաղտկալիս մեղայ: Վերջին ինձ [14] կրկին աշխար հոգևոր, զի 'ի կորուստ և 'ի կործանումն ինձ երևեցայ. զի անդարձս վարատեցայ. զի որդիս՝ թշնամի գրեցայ. զի 'ի բարձանցն երկնից ընկեցայ. զի փուշս վարուց դիզի: Այլ ես առ սմին ողբս աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի. զի բագին կորուսչին գտայ: Այլ իմն կսկիծ դժնդակ սրտի, զի [15] զիս ունին՝ առ որ չեմ, զարտաքնայարգար բաժակս անմաքուր, զբռնեալ որմն զարշունակ, զսին պարծանօք պաճուճեալս, զլոյսս՝ 'ի մռայլ շրջեալ, զգերանակիր ակնս՝ թշուառացեալ, զջահս փառաց՝ շիջեալ, զամենայնիւս յամենայնի ամենայն իրօք վնասակարս, [16] առ անօրինականն տէրունականս, առ յայտնութիւն ծծայլինս, առ երևմանն արարչագիրս, առ խոնարհութեան սարսափելիս, առ այն՝ զոր տեսի աչօք իսկ իմովք: Որ որ մեծ է պատասխանատուութիւն, քան առ համօրէն աւետարանին՝ զարմանս, հիացմունս, հոգս հալողականս, [17] անդաձմունս անհնարաւորս, թուականութիւն՝ մտաց անքարդելիս, ելմունս անկատարս, իջմունս անհաստատս, յուսահատութիւն յարմարականս, յանդիմանութիւն պատշաճականս, ձաղանս պատեհագոյնս, նշովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս: Որդ՝ այսոքիկ են մեղաւորիս իմ կշտամբութիւնք, և ինքնահարուած տանջանաւորութիւն:

Է. Ո՛վ քանզի կարող ես զայս ա՟մ զպարտս թո-
ղուլ, և զխայթուածս մահու բժշկել, տ՟ր ողորմու-
թեանց, ա՟ծ բոլորից, ք՟ս թագաւոր՝ բարձրեալ հօր
որդի, ստեղծիչ՝ գթած՝ բարերար, օրհնեալ՝ առատ՝
հարուստ, ահաւոր՝ հզօր՝ ողորմած, տեսուչ՝ ձեռն-
կալ՝ հաստիչ, ապրեցուցիչ՝ դարմանիչ՝ կեցուցիչ,
երկայնամիտ՝ անոխակալ՝ ապաւէն, բժիշկ՝ գովեալ՝
երկնաւոր, անճառ՝ լոյս՝ կեանք, յարութ՟ն՝ նորո-
գութ՟ն՝ քաւութ՟ն. եթէ հայեսցես մարդասիրութ՟բ,
ըստ որում քոյդ են սովորութ՟ք, նայեցեալ 'ի քեզ՝
կողկողիմ և ես: Եթէ լուիցես, հառաչեմ. եթէ
ունկն մատուցանիցես, պաղատիմ. եթէ անսայցես,
աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առ իս
դառնայցես, գոչեմ: Ապա եթէ անտես առնիցես,
կործանիմ. իսկ եթէ առ ոտն հարկանիցես, լամ.
եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա
եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ
եթէ սաստեսցես, դողամ. եթէ խեթիւ տեսանես,
ոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ
հալածես, հեծեմ. 18 իսկ եթէ ընդ վայր հարկանի-
ցես, հերքիմ. եթէ զքոց վհատութեանս ոչ առցես,
տագնապիմ. եթէ խստանաս, փախնում. ապա եթէ
սպառնաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քայկածիմ.
ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ
անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ.
իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն տա-
ցես, երկնչիմ: Ո՛ բարեացն պարգև մատնեալ. զե-
րանութիւն թողեալ. զշնորհն լքեալ. զուխտն ցրեալ.
զաւանդն կենաց մոռացեալ. զհամարձակութեանն
վստահութ՟ն կորուսեալ. զստեղծիչդ էիցս բարկա-
ցուցեալ. զանճառութ՟ն շնորհին ընդոտնեալ. զպատ-
ուոյն պատկեր այլայլեալ: Իսկ եթէ առ այս խեղդ-
մահու հեծութ՟ն ցաւոյ մարդասիրեալ՝ առ իս ժա-
մանեցուսցես՝ տ՟ր յ՟ս ք՟ս 19 զապդեալն գիր ընանիլ 'ի
յիս, եթէ բժշկութ՟ն դադարեցուցանէ զմեղս մեծա-
մեծս. որով ամենառատ քաղցրութեամբ պատուա-
տեալ 'ի քեզ, զքոյդ կերպարան լուսոյ նկարեալ
յոգի՝ վերստին գտեալ պնդեցայց քաւեալ, և 20

տեղծեալ կրկին 'ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) Զպրոսինեան եռանդս: Զկարգաւորութիւն թուաւոր բանիցս նախադրելոց յարմարեցի ըստ բանաստեղծական ոճոյ լատինականաց: Պարզեալ սկսայց զաղաղատամբս խորփոլանօրէն ըղղխանաբար, (մի օրին. խորփոլանողօրէն.) խառնածանելով գլխաւորն, դպրոսինածածուն յայփոնաբարեաս, զայատմանս եւ յայտնի բարբառով: կամ հայցականն՝ դպրոսինածածուն հայր առ բայն սկսայց: Ըն անդրդարձութիւն սկզբանն. զի կրկնութիւն նոյն բառին 'ի սկզբան և 'ի վերջին հատուածոյն (որ է ձև ճարտասանականն՝ յունարէն տացեալ սինքլոփէ, ազատիչն բաղձառութիւն. և լատ. սիմփլոկէ, ազատիչն օձաձև:) զնոյն համաձայնութիւն, զնոյն եղանակ տրամաբանական մտաց թանայց եղից տառածոր: Վասն զի զնոյն բառ կրկնելով 'ի սկզբան և 'ի վերջ բանին, երբեմն թէ մի և նոյն ձայն ոգւոց լսի անընդհատ, և լինի մին երբեմն արձագանգ միւսոյն, որ և կարի թախանձեցուցիչ է և ժառանգեան եղանակ: 'Ի մի օրին. փոխանակ վերջաւորօփն եռանկ, զգի եոյնոփ. և փոխանակ համաձայնութիւն, զնի համարչակութեան, ոչ թուի հաղարտ, բայց կարէ ունել զայն խնամս, թէ առնել զնոյն բան կրկնել և թախանձել՝ համաձայնութեան ցոյցք են: Գոյ և այլ տարբերութիւն յօրինակս. զի մի օրին, զնէ սկզբանցն: այլ օրին. սկսանք վերջաւորօփն: այլ, սկսանքն և վերջնաւորօփն:

(2) Հայրենեացն փառք: 'Ի հայրենիքն մեր 'ի դպրախան տուաւ յետ մեզ այն, ներելուն և տպաւորելով լսել 'ի նախատատեղծեցն: Եւ ծանիր, զի զոր ինչ առէ տառածոր յաղագս մեղայն, խնամն 'ի վերայ ներդործութեան գլխաւոր կամ խառնաձանուան՝ զոր այս ձայն նշանակէ: Նախահարցն օրէն. թէ նախատատեղծեցն, և թէ այլոց նահապետաց եղաւ օրէն գլխաւորք արդարանալ. և նորա զայս օրէնս յետնոցն աւանդեցին երբեմն ամենեցուն հարկաւոր. վասն որոյ յարէ. համաձայնից եղանակ. ազատիչն պարզոր: Այս հնգեակ բանիւք ցուցանել կամի, թէ օրէն գլխաւոր ոչ երբեմն զայլ դրականն օրէնս յետոյ եղաւ, և կամ վասն ումանց՝ և առ ժամանակ մի տեսական, այլ 'ի սկզբանէ մինչև 'ի կատարած վասն ամենայն մարդկան եղելոց:

(3) Անհերքելի բան: Ըստ որում ոչ մերժէ զմարդոյն ճշմարիտ խոստովանութիւն: Կենդանութիւն խաչողի: Ընդ ծով մեղաց, ընդհատանս փորձութեանց՝ մարդկութեան անցանելոյն մարդիկ և ազգին: Անվրէպ դարման. անկուծանելի կամ անդրհոգանոր վտանգ. զի առողջ խոստովանութիւն մեղաց վճարէ զգառատարան: Անհնարին ճարակ. անհնարին կամ դժուարաբուժելի մեղաց գեղ և դարման, կամ անհնարին պատժոցն հանդերձելոց հնարք: Կարծրութիւն, խստութիւն սրտի կակղիչ:

(4) Անձաղդայկեց աւանդն: Այսինքն կանոն. զի արդարաք 'ի մեղացն սկսանին զաղօթսն. ըստ գանիւլ, երկե մաղթանք, են. տե՛ս 'ի բանին Թ. լուծ. 8: Հեթանոսաց գիրք: նուաստացեալ հեթանոսք՝ որք զայլ օրէնս ոչ ունէին, զմեղայն օրէնն գիտէին և ընթեռնուին 'ի սիրտս իւրեանց: Սոյնպէս անհաւատ հեթանոսք լոկ բնական լուսով ճանաչէին զասուածն բնական գլխաւոր: Կամ, հեթանոսաց դարձեալց 'ի հաւատս՝ առաջին գիրք առեալ լինի մեղայն նախ քան զմկրտութիւն, և այն է վաղնջուց կանոն, 'ի սկզբան եկեղեցւոյ կանոնաւ աւանդեալ: Քրիստոնէից հարազատ: Թէպէտ և ծանուցեալ է հեթանոսաց, սակայն ճշմարիտ մե-

զայն՝ որ 'ի շնորհացն իւր՝ այլև խորհրդականան, միայն զզխաստանեաց և յաւտուկ: Արբեցութեան յաղթող: ըստ որում առաքելոյ զգաստութեան իւյ. որպէս գաւիթ այսու մեղայիւ խոստովանեալ ապաշխարութեան իւր՝ որ 'ի ըն- թանայն նաւթանայ. (Բ. Թագ. ԺԲ. 13:) Այնպէս այսու մեղայիւ առգել զայս հրեշտակին. (Թիւ. ԻԲ. 17:)

(5) Անձրևաց հողք: Ըստ որում նախահանջէ զզղջումն աստուածային: Եւ խոփքով ակօսոր, ըստ որում խոնարհ առնէ 'ի մէջ կենաց և մահու, առագաստ և մեղաւորաց. ըստ այնմ (Ղուկ. ԺԶ. 26.) *Վիհ մեծ է ընդ մեզ և ընդ ձեզ||:

(6) Արուեստ բժշկութեան: Հնարք ամենատեսողաց 'ի բարձրութիւն շնորհաց, կամ յերկինս. այլ և խորութիւն անդնդոց, զի որպէս յանդիմանել խորս մեղաց և զաստուածպաշտութիւն ժառանգելոց 'ի վեր առնու զհոգին. ուսուցանէ և է հնարս ճանաչել. այսինքն զզանազանել անձին, յորժամ զաստուածպաշտութեան առնէ երկնաքաղաքացի: Մարթ է և խոնարհել, առաւելապէս կամ հնարք բարձր և գերազանց, զի որպէս մեծ է զզջման հնարինակ և ուսուցիչ, և նոյնպէս միայն հնար է հաշտել Բ իւր: Եւ խորութիւն անդնդոց, անքննելի խորհրդ գաղտնեաց առաքելոյ 'ի նմա. որպէս և յաւելորդ առնէ:

(7) Խորհուրդ Ծածուկ: Ո՛չ միայն ըստ որում 'ի նոյն օրէնս՝ զզջումն և խոստովանութիւն են մասն խորհրդոյ ապաշխարութեան՝ Բ կենդանի փրկելոյ, այլև վասն բաղում գաղտնութեանցն՝ որ 'ի նմա: Մի՝ զի 'ի կատարելոյ զզջման բաղում գաղտնի ներգործութեան առնէ մեծ 'ի սիրտ մեղաւորին: Երկրորդ, զի անցումն 'ի մեղաց յարդարութիւն է մի 'ի մեծամեծ զգաս- ցելեացն իւր՝ գերբնականն քան զարարչագործութիւնն. եւ զի մեղքն առաւել հեռի են յԱյ, քան ոչէն յէակէ. և զի անեզծանելին բնականն բա- րեացն իւր լինելոյ բաժանորդ. իսկ արդարութեանցն՝ գերբնականն բա- րեացն, և նմին իսկ բնութեան իւր հաղորդակից շնորհօք: Երրորդ գաղտ- նութիւն է 'ի զզջման, զի զՃշմարիտ զզջումն որոշել 'ի սուտն՝ իւր միայն է կարողութեան: Ահա ընդ այսոսիկ և ընդ այլ գաղտնութեամբ անցանելի անքննելի մնայ առնէ:

(8) 'Ի վերջին դատաստանի: Ոմանք ըստ հին լուծ. զզխաւոց խնդացեան զայս. առակացն բանին հայի 'ի վերջին գատաստանին ձախակողմեան դասուն մե- ղաւորաց, որք լսելոց են յԱյ ընդ լոել. Երթայք յինէն, ևն: Ցայնժամ դա- տապարտեալ առնէ՝ ոչ յիշատակելով հրաշալի ձայն մեղաւորին, յորժամ գատաւորն յանդիմանէր զմեղաւորսն վասն չկերակրելոյն զինքն, վասն չարբուցանելոյն. ևն. (Մատթ. ԻԵ. 42.) այլ փոխանակ մեղայիւ առ- գարացուցանել կամեցին զանձինս. զի եթէ առացեալ էին մեղայ, գուցէ առ Նմին, Թերևս խոկոյն խզէր զՃշմարտին Երդմանց, զերկձմնդրութեան արդարութեան իւյ, կամ զերեւացի վՃիռ դատապարտութեան նոցա. յորմէ Եւ ընդդէմ, որոշումն արդարոց և մեղաւորաց, կամ յաւիտենական բացարձակութեան իւյ անզգած եղեալ, զյաւիտենական գատաստանն լու- ծանէր: Այսու ծանուցանել կամի, թէ այնչափ է զօրութիւն մեղայաւոր զզջման, մինչև 'ի վերջին յայնմ ահաւոր ատեանէր 'ի դատապարտութեան զմեղաւորսն, եթէ լինէր 'ի նոսա այնպիսի զզջումն Ճշմարիտ: Հին լծ. Ընդդէմ խնամոց և զնորհաւոր մարդեղութեան. որպէս թէ՝ եթէ 'ի ձախակողմեան դասն առացեալ լինէր մեղայ, վՃիռ կամ առհասարակ մարդե- ղութեան ոչ 'ի գործ գնիւր: Բայց այս անյարմար է՝ ոչ միայն կարգի բա- նիս, այլև ուղիղ վարդապետութեան. զի որպէս յայլ զզջացելոյն՝ զզջումն, արդարութիւն 'ի մեղաց, ապատութիւն 'ի դժոխոց՝ եղեն յարգեանց շարչա- րանացն Քի, նոյնպէս 'ի ձախակողմեանն յարգեանց Քի լինելոց էին այսոցիկ՝ եթէ արդարև զզջանայցեն, և մեղայ գոչէին:

(9) Զօրք եռեալ: Զմեղայն կոչէ զօրդ և ապաւէն փառաց մեծութեան. զև-

վերջին նմանեցուցանելով զնոծ՝ անդամոյն որդութեան, և զհերոյն երբև եր-
կնաւոր այնր անդամոյ. որովհետև բուռն հարեալ յանցաւորացն փոփոխելոցն՝
անպարտաւոր արձակեցին: Այսպէս զոր օրինակ եղջերուին՝ զարդ էր և պաճոյճ
անդամոյն, այնպէս մեղոյն՝ նոյ. և որպէս նոր ողորմութիւն և գեղեցկութիւն
պաճուճէ զնոյն, նոյնպէս մեզ զգեցեալք պաճուճեալք զնոծ, 'ի նոյն զարդարեցա-
ներով զթագաւորութեան հօրն իւրոյ մեզոյ՝ և զգեստեան, որոյ մեզօքն բարձեալ
'ի նմանէ: Թուին զի 'ի նորին էր և 'ի Թագաւոր զգեցեալոյ՝ պայծառութեան
անմեռելութեան Թէ նոյ, ողորմութիւն, անփոփոխութիւն, ևն. որով և
առաւել փառաւորի. մինչ զի նա խնդրէ Ած՝ զարդ [illegible] հանդե-
րձելով, [illegible], և երբ որ [illegible] [illegible]. ով է երբև
զնա՝ որ Թագաւոր զինքս էն:

(10) Ափոր շուշան: Աստուածոր [illegible] [illegible] է յօրինակին. զի
Ափոր որդին էր [illegible], Թագն [illegible], և Թագնիա [illegible]. (յին.
առ. է. 1. 18.) որ և 'ի [illegible]. 20. շուշանի [illegible]. [illegible] Թագն Թէ [illegible]
զեղ և է զրեթէ [illegible] շուշայեան: Այլ՝ նորա [illegible], [illegible].
[illegible] [illegible] մեղոյ, ոչ [illegible], ոչ [illegible] [illegible]
ժողն. վասն զի [illegible] [illegible]. նորա [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible]
[illegible], ոչ է [illegible]. [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible]
[illegible] [illegible] և զգեցեալ, որ [illegible] [illegible] [illegible], այլ [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible], ոչ է [illegible] [illegible], այլ
[illegible] [illegible] [illegible] այլ [illegible]. [illegible] էր [illegible] [illegible]: Զի [illegible] 'ի
[illegible] [illegible] [illegible] մեղոյ. (յին. է. 18. 20:) և [illegible] զի
[illegible] [illegible] [illegible]: ( [illegible]. Թագ. ժէ. 30: ) և [illegible]
[illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] մեղոյ
[illegible], և [illegible] [illegible]: Բայց նա [illegible] [illegible] [illegible] և [illegible]
[illegible] և [illegible] [illegible] մեղոյ. [illegible] [illegible] [illegible] [illegible],
[illegible] [illegible] [illegible] էր՝ [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible]
մեղոյ: Կամ Թէ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] 'ի
[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] էր՝ որ է այն. [illegible]
[illegible] [illegible] [illegible] կամ մեղոյն:

(11) Զմրխտոյ հարաւակի: Ընկեր կամ [illegible] [illegible] [illegible] [illegible]
[illegible]. զի 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] և
[illegible]. այլ և [illegible] [illegible] [illegible], զի [illegible] [illegible]
[illegible] է 'ի [illegible] [illegible] մեղս, և [illegible]՝ [illegible]
[illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] Մխիթարութիւն, և
Աստուած:

(12) Մեղոյ՝ [illegible] [illegible] [illegible] հարեալ: Մարմնականն [illegible] [illegible]
[illegible]. կմ, [illegible] [illegible], [illegible] [illegible] 'ի հա-
[illegible] [illegible]. կմ [illegible] [illegible] [illegible]. մեղոյ [illegible]՝ [illegible]
[illegible] 'ի [illegible] հոգւոյ. [illegible] մեղքն ոչ [illegible] հոգւոյն [illegible],
այլև [illegible]: Հէնս [illegible]. [illegible] և [illegible] [illegible], [illegible] կմ [illegible]
[illegible] [illegible], [illegible] [illegible]: Բայց այդ ոչ է [illegible]
[illegible] մեղոյ, [illegible] [illegible] [illegible] [illegible], այլ [illegible] [illegible]
[illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] է:

(13) Խնկեղէն մեղոյ: Խնկաւէտ կամ [illegible] մեղոյ:

(14) Կրկին ուղխոր: Այս է [illegible] [illegible]՝ [illegible] և [illegible] [illegible]
[illegible] [illegible], զի նա [illegible] [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible]
[illegible]: Բայց [illegible] [illegible] [illegible] [illegible], Կ. [illegible]. [illegible] [illegible]
[illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] մեղոյն. [illegible] Թէ [illegible], մեղոյն

որ մի միայն հնչիւնք է փոփոխութիւն, [illegible] 'ի [illegible] կամ [illegible], [illegible] թէ և [illegible], բայց [illegible] · [illegible] [illegible], [illegible] հայրն՝ [illegible], կամ [illegible] · [illegible] թշնամի [illegible], կամ [illegible] : [illegible], բայց 3 օրին · [illegible] :

(15) Զիս [illegible] որ [illegible] : Զիս [illegible], [illegible] · [illegible], [illegible], ևն, որ [illegible] և [illegible] · [illegible], [illegible] և [illegible], որ [illegible] [illegible] :

(16) Զ[illegible], [illegible], [illegible], [illegible] և 'ի գործ [illegible], [illegible] և [illegible] : Ա[illegible] · [illegible] և [illegible] [illegible], կամ [illegible] : [illegible], [illegible], [illegible] [illegible], [illegible], ևն : [illegible] · [illegible], կամ [illegible] · [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], 'ի [illegible], 'ի [illegible], ևն : [illegible], [illegible] 'ի [illegible], կամ [illegible], [illegible] : [illegible], Ա[illegible] · [illegible] և [illegible] 'ի [illegible] · [illegible] 'ի [illegible] 'ի [illegible], կամ 'ի [illegible], [illegible], և [illegible] · [illegible], [illegible] և [illegible] · և [illegible], [illegible] և [illegible], [illegible], և [illegible] · [illegible] : Ա[illegible] է [illegible] · 2 օրին · [illegible] · [illegible], [illegible] · [illegible] է [illegible] · [illegible] է [illegible] 'ի [illegible] և [illegible] · [illegible] 'ի [illegible] · [illegible] է [illegible], որ [illegible] · [illegible] 'ի [illegible], 'ի [illegible] : Ա[illegible] 'ի [illegible] · [illegible] է [illegible], [illegible] է [illegible], [illegible] է [illegible] · ևն :

(17) Ա[illegible] : Մ[illegible], կամ [illegible], [illegible] կամ [illegible] : [illegible] : [illegible] կամ [illegible] և [illegible] 'ի [illegible] : [illegible], [illegible] : կամ, [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], ևն, բայց [illegible] : [illegible] : [illegible] 'ի գործ [illegible], [illegible], [illegible], ևն, բայց [illegible] :

(18) [illegible] : մի օրին · [illegible] : և [illegible] : 3 օրին · և [illegible] · [illegible] · որ [illegible] :

(19) Զ[illegible] · է [illegible] · ( Ժ · Կ · ) Ո[illegible]

ցանէ զմեզս՝ մեծամեծս || : զոր նա վարդապետեաց զնէ . բժշկաւէն դարդարեցուցանէ, յայլ Թարգմանութեց առեալ. զի այսպէս ունի երրորդականն, յոյնն, ասորին եւ լատինն : Եթէ ասէ՝ 'ի գութ շարժեալ ընդ հեղձուցիչ ցաւս հառաչանաց իմոց, առ ես ծածանեցուցէս, յաջողեսցես յիս կատարեալ բանին զգոյ՝ բժշկութիւն բանիւդ զմեզս, արդարեւ այսու ամենատարած քաղցրութեամբ միանամ յարիմ 'ի քեզ առ Տէր Յս, 'ի քոյդ կերպարան վերստին ձեւացեալ հոգւով :

(20 Սոփեղծէաւ կրէին : Ցեա առաջին առեղծմանն 'ի բնական կեանս՝ վերստին առեղծեալ 'ի կեանս շնորհաց եւ փառաց անմահ յարութեամբ :

Մերոյին յաւելուած կրկին հեծութէ՝ նորին հօրողէ, առ նոյն ողբոց մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԻԲ.

ա. Եւ արդ՝ զո՞ր յայտնեցից, եւ յաղագս ո՞յց նշանակեցից, եւ վասն ո՞րպիսեաց ձայնեցից, եւ զո՞րքան ծածկեալս մերկացուցից, եւ կամ վասն որո՞ց խոստովանեցայց, Զներկայի՞ցս զոր արդէն ունիմ, թէ զանցելոցն զոր մթերեցի. զապագայի՞ցն յորոց կասկածեմ, թէ [1] զբազմասահ շարժուե՞ցն յորոց գլորեցայ. զփո՞քրն ինձ համարեալ՝ որ է Այ մեծ գրեցեալ, թէ [2] զանկերպագրելին չյիշատակելի. զնուա՞զն՝ որ է առաւել, թէ զթեթեւագոյնսն՝ որ են ծանունք : Զհոգեկանա՞ցն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց. [3] զառադրունս հեշտականա՞ցն, թէ զծայրակոտոր մխասակարութե՞ց. զաներեւութի՞ցն, թէ զտեսականացն. [4] զառձեռն հպաւորութի՞ւն, թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն : [5] Զլայնականն դիւրին խածմունս, թէ զերկարաւորն նեղաձգութի. զխորութեա՞նն զանչափութի, թէ զամենածախին յայտնատեսիլ. [6] զյոքնագլո՞ւխն պառնկութի, թէ զառողջութե՞ն անբժշկութի. զպարարո՞ւմն չարին մարմնովս, թէ զսովն բարւոյն հոգւովս. [7] զխնամո՞ցն հանդիսանալ յոչ ախորժելիսն Այ, թէ զուռնադատութե՞ն տոռամբ ձգիլն 'ի նոյն մոլեգնութի. [8] զառ 'ի մա՞հն մեղաց, թէ զընդունայնութեն կարծեաց :

բ. Արդարեւ որպէս կամաւ խելագար [9] զերծեալ 'ի ձորձոյ, զառականացս տեսիլ յանդիմանեցի, զընդ-

դիմմն գործեալ իմաստնոյն, որ՝ թէ հանճարեղքն
վերարկեսցեն զամօթս իւրեանց. օտարացեալս 'ի
կրօնից. հեռացեալս 'ի կարգաց. 'ի սրբութենէ ան-
սուրբ. 'ի կուսութենէ անմաքուր. յարդարութենէ ամ-
բարիշտ. 'ի բարեպաշտութենէ վնասապարտ. բերա-
նովս մերձ առ ստացօղն, և հեռի երիկամամբք.
շրթամբքս պատուամատոյց, ըստ մարգարէին, այլ
ոչ եթէ սրտիւս: Այլ եթէ պարտ է զքստմնելիսն
ասել աստանօր, [10] չար քան զտանջանսն յանդգնու-
թիւն, իբր զուր իմն պաշտօնատարս ա̃յ, 'ի միտս ան-
կայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս՝
ջանամ, և ոչինչ օգտիմ. պնդիմ, և ոչ հասանեմ.
փութամ, և ոչ ժամանեմ. անձկամ, և ոչ տեսա-
նեմ. փափաքեմ, և ոչ հանդիպիմ. կարօտիմ, և
ոչ պատահիմ. [11] ունիմ զա̃մ երկրի, և եմ պատ-
գամաւոր աղօթանուէր ա̃մ աշխարհի: Այլ թող
զբազումս զայսոսիկ՝ բարբերար, և մի՛ ունիցիս. դիւ-
րինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանա-
ւորս աջով նկարել. վասն այնորիկ գրեցի առանց
խնայելոյ, զի դու առատապէս ջնջեսցես՝ օրհնեալ:
Որ վասն մեր մեղաւորացս երկայնամիտ անուանե-
ցար, ըստ մաղթանաց բանի՝ հեծութենէ սրտի՝ եղրի
երջանկի. [12] յոյժ ներեալ անձն և ձանձրացեալ ոգի՝
բանիւն յիշատակաւ, որ զսոյն պատմէ. յա̃մ կրից
մահացուցանողաց վտանգեալ, անկեալ 'ի վիհ դառ-
շութենէ մեղաց՝ անդնդականաց ապականութեց. քան-
զի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ, ըստ յոբայ ձայ-
նիւն: Արդ՝ ես ինձէն ինքնադատորով անձնադատ գե-
րի՝ կամաւորապէս [13] մատն եղեալ բնութեանս, արգե-
լի փակեցի կնքեցի առ յինէն՝ յամենայն մասանց՝
զկենացն հնար, զի 'ի փրկութե մեղօք կապելոյս՝ կըր-
կին մեծասցիս գովեալ:

Գ̃. Այլ քանզի [14] 'ի մարգարէէն բարուք խրատեալ
փորձ գտցուք, մաղթել ընդ նմին հոգւով քո եր-
գեալ՝ յուսով հաստատնով 'ի քեզ ապաստանեալ,
առէք ընդ ձեզ բանս, ասէ ովսէէ, և դարձարուք
առ տէր ա̃ծ ձեր, և ասասցէք ցնա, կարող ես թո-
ղուլ զմեղս. զի ընդունիցիք զբարիս, և վայելեսցեն
'ի բարութե անձինք ձեր: Ահա ա̃ծ խօսեցաւ, և ո՞վ է

որ ոչ լուիցէ . Նոյն ինքն վկայեաց , և ո՞վ է որ ոչ
հաւատասցէ։ Արդ՝ այսօրիկ [15] վճիռ պաշտելի, նուի-
րեալ պայման , սահման նոյնագոյ , կենաց աւետիս ,
կէտ տէրունի , դուռն բարութե , սփոփանաց հրա-
ւէր , ճշգրիտ պատկեր , անստգիւտ գանձ ; անմոռաց
յիշատակ ։ Այսու առ սոյն և ես հաւատ ընկալեալ ,
աստուստ վկայեմ սմին՝ ընդ մարգարէին , կարօղ
ես յամենայնի թողուլ զմեղանս բազմաբեղունս . և
ես զօրացելս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ-
կործանեալ հոգիս ։ Յամենայնի իշխես . ամենայնի
բաւես . ո՞մ ուրեք հասանես . ամենից բնութեց
յաղթես . և զո՞մ կարծրուն փշրես . զո՞մ ընդդի-
մահար վանես . զո՞մ խստուն վատնես . [16] զո՞մ սրա-
ցեալ ընդոտնես . զո՞մ դառինս անուշես . զո՞մ դը-
ժուարամըքելիս քաղցրացուցանես . զո՞մ զպարտս
շնորհես . զո՞մ յանցանս թողուս ։ Կարօղ ես՝ զօրա-
ւոր հզօր հնարաւոր ամենարուեստ՝ զամենեցուն ըղ-
մեղս ընկղմել՝ և չքացուցանել բառնալ 'ի միջոյ ,
իբր զճաճանչ փոքու կայծական [17] սահմանեալ 'ի չափ
ոչէից՝ անկեալ ընկլուզեալ կորուսեալ 'ի տիեզերա-
տարածն ծովու ։

Է . Արդ՝ [18] բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ
մատենի , ողորմեա՛ վասն խաչի և չարչարանաց մա-
հու որդւոյ քոյ՝ հայր գթութե ։ [19] Սկիզբն առաքե-
լի՝ ողբերգութե ձայնի՝ այսմ արտօսրածին նուա-
գի , որ զայս դեղ փրկութե կենաց՝ մեզ յարմարե-
ցոյց , եղիցի բժշկեալ յանուն քո հզօր ։ Որ հետս
ելից խոստովանութե մեզ նկատեցոյց այսու պայմա-
նաւ պատշաճականաւ , լիցի անարատ յիւրոցն պար-
տեաց ։ Որ զհպարտութեն թեւս հարթել մեզ վար-
դապետեաց՝ [20] 'ի սոյն կանոնի կենաց պատգամի , ե-
ղիցի զերծեալ 'ի չար կապանաց մահու արկածից
սկզբնականաց՝ վերջնոյ և միջնոյ , երրորդութեդ
բարեգործեալ , 'ի նորոգութի լուսաւորութեան .
ընդ որում և մեք գրեսցուք՝ երջանիկ գտեալ ընդ
սմին ։

[21] Ընդդիմամարտ դիւաց այս նուագ աղօթից, և դիւաստրուտ
Ճերմնարագնաց ախորժութեանց առողջածոյլ փարատիչ:

Է. Որդ՝ այսքանեացս անբաւից հրաշից հանդերձ ծնիչ հայր ամենաստեղծ՝ անունդ ահաւոր, ձայն սարսափելի, [22] կոչումն ընտանի, բան համբուրելի, ազդումն սքանչելի, հրաման սոսկալի, էութիւն անքննելի, գոյութիւն անճառելի, իսկութիւն անբաւելի, զօրութիւն անզննելի, կամք ամենաբարի, տէրութիւն անսահմանելի, մեծութիւն անչափելի, բարձրութիւն անբովանդակելի, ողքանութիւն անկշռելի, առաւելութիւն անհասանելի, [23] պատճառ որդւոյ հայրութիւն, այլ ոչ նախադրութիւն. քեւ և 'ի ձեռն քոյդ անպարագիր զօրութեանդ՝ սաստեալ տագնապօղ և դիւական տենդիս ջերմութեան, որ սպրդեալ մուծաւ ընդ մեղաց՝ զի փախիցէ 'ի մարդոյս, [24] զարհուրեալ 'ի սխրալի և յանբաւելի արեան վտակի՝ գառինդ երկնաւորի. որով սրսկեալ միանգամ 'ի մշտնջենաւորս՝ համայն մաքրեցաք:

Ը. Ո՞ւ արդ՝ յայս պատկառելի խոնարհումն արար չակերտս խորհրդոյ, ամաչեսցէ սատանայ 'ի գործս չարեաց իւրոցն հրեշտակաց. տանջեսցի և հալածեսցի, հեռացեալ և արտաքս առաքեալ 'ի շինուածոյ [25] խորանիս քումդ բնակութեան յարտաքին խաւարն: Ո՞ւ ընջեալ մաքրեա զարտասուս ողբոցս 'ի դիմաց մերոց, և զհառաչումն ձայնիս հեծութեան 'ի սրտից մերոց: Ո՞ւ յիշատակաւ հարման հեղուսիցն՝ [26] քստմնափուշ տաժանատեսիլ ոգեպահանջից, որով պրնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին, ցուեսցի չարին. Ո՞ւ 'ի կողահերձ սայրասուր [27] սլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ ընկալաւ, խոպանասատակեսցի սկզբնարար մահուն: Ո՞ւ զի խոնարհեցոյց զգովեալն գլուխ՝ յաւանդել զոգին 'ի ծոց քո՝ բարձրեալ, ապստամբութիւն անբարի բարուցն բելիարայ՝ 'ի կոր կործանեսցի, ամիւ հերքեալ 'ի կորուստ: Ո՞ւ զի ղօղեալ ծածկեցաւ [28] անմահն իսկութիւն յորովայնի երկրի, այսու ամբարձեալն հպարտութիւն կարծեալ գոռոզին՝ 'ի յատակս մահու դժո-

խոց մթին ստուերին՝ յառնել դիտեսցէ. և յիշես-
ցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահա-
ցաւ դիմամարտութե թիւնից վիշապին՝ կենարարն
կրիւք ամենազօրին: 29 Սան զի 'ի փառս քո՝ հայր
ողորմութե, իբր 'ի գովեստ որդւոյ քոյ՝ հոգւովդ
սրբով զայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ
սոսկ զօրութեն ունի զմիւսմէն՝ առ մի խորհրդականն
խորութե, այլ զանսկիզբն բանդ անձնաւոր՝ ընդ
անժամանակդ հօր փառաւորեսցէ: Լու քեզ միայնոյ
նք երրորդութեդ, հաւասարապատիւ տէրութեդ,
համաբուն անբաժին ինքնութեդ՝ օրհնաբանութի,
գոհութի, զօրեղութի, և անճառ վայելչութի մե-
ծութե, բարեվիճակ հարթութե, զուգակշիռ հա-
ւասարութե յաւիտեանս ամէն:

---

(1) Զեղջերուական շարժմունսն: Կամիմ դարձեալ ըղձական աղօթս մատուցանել, խոստովանելով զյանցուածս իմ և զպակասութիւնս: Այլ ապաշխարութեան եմ թէ զինչ յայտնեսցես, վասն որոց խոստովանեցայց. ա՛րդեօք զներկայ մեղս իմ զոր ունիմ. ա՛րդեօք զանցեալսն զոր ինձ պատրաստեցի. ա՛րդեօք զապագայսն յորս անկանել կասկածիմ: Միթէ զեղջերուաստեղծ շարժմունսն՝ որք սաստ և յանձնաւ շարժին յանձին իմ, և վասն գլորել 'ի բազում յանցանս. որպէս են շարժմունք բարկութե, ընչուի, աչաց են:

(2) Զանհեթեթաբանեալն սխալմունս: մի օրէն. զանհեթեթաբանել եւս յիմարանել: Որոնք են հէր ըն, խոհեմն՝ ոչ առձանի նկարագրելոյ և յիշատակելոյ. և մեկնեն զամաչականն աղտեղի մեղաց: Բայց զայնմանէ տուրք խօսի. իսկ աստ ըստ կարգի զթեթև կարծեցեալ մեղաց իմանի բանս. զի սոսկ իսկ, արդեօք զփոքրն յիշատակեցից, զնուազն, զթեթեւն: Այսպէս անհեթեթաբանեալ սասէ՝ զայն խորհուրդս և զշարժմունս մտաց, որք առաջ և իբր անդգայաբար կրեմն 'ի մեղս. զորս և չկարեմք երեւակայել և մի թէ միտքն յիշատակել. ուստի կամ մեղս չհամարիմք, և կա՛մ փոքր. առակայն բազում անգամ յանհոգութե եղեալ 'ի ծանր նիւթս, յանցանեմք. այսպիսի են շարժմունք հպարտութե, թիւր դատողութեան, տրտնջման, երկբայութե 'ի հաւատոյն, են:

(3) Զատ դրունս: Որք դրանց զգայութեանց հեշտալիք են. և առակայն յետոյ ծայրաքոտոր մահու գործեն. այսինքն ծայրագոյնս կամ չարաչար կատարեն զհոգին. կամ զծայրագոյն բարին չհորհեաց առաքինեաց: Կամ ըստ են. զորս յայտնեսցես, զատդրունս, այսինքն 'ի սկզբան հեշտացուցիչսն, թէ զծայրաքոտորս, 'ի ծայրն կամ 'ի կատարման առաջինս մահու կորուստ. զի բազումք 'ի մեղաց նախ հեշտացուցանեն, և ապա 'ի կատարածին առաջնեն խղճիւ մտացն, կորստեամբ համբաւոյն, կարօտութ ընչից, ցաւագարութե, են. որպէս արբեցութե, անառակութե, բղջախոհութե, են:

(4) Զառաջեան հաղորդութե: Զձեռամբ մերձենալն 'ի հրաժարեալսն, ըստ զառ նոյն ինքն զանց, թէ նաև շնչով հեռի կալն 'ի յանցնառակաց: Ասել կամի. ոչ հրաժարեցայց մերձենալ 'ի չարն, որպէս յաղթելեալ

ծառան, և ևս ձեռամբն շողոմելեաց ոչըն․ հրամայեալ ընդդիմել պատուիրանին, ևս և ոչ չնչով կամ յօժարութեամբ ընդունել մերձեցեալ 'ի նա ։ Մարթ է ևս խնամել զմեզ՝ որ ձեռօք գործեն, որպէս գողութեն, ապաշխարհեն, ևն. և զմեզ՝ որ 'ի հեռաւոր կատարեն չնչով ընդունել, կամ լեզուաւ. որպէս հայհոյանք, բամբասանք, սուտխօսութեն, ևն ։

(5) Զյայնակամն դիւրին ։ Անաեն զհանդամանս մեղաց բացայայտ բաժ չորից աւտակաց դրից, այսինքն լսելութեն, երկայնութեն, խորութեն, և բարձրութեն. զի ամենայն երրորդ լայն կամ ընդարձակ՝ հեռաւորութեամբ խանձանեն. որպէս աղքատութեն ։ զերկրաւորն նեղանձնութեն ։ ամենայն լեր կար երրորդ նեղանձ խոցանեն. որպէս նախանձ, հակառակութեն, ևն ։ զխորութեն զանցանութեն ։ ամենայն կարծ 'ի խորս ապաշխարութեան. այլ հպարտութեն, ատելութեն, ևն ։ զմեծութեան յայտնութեն ։ ամենայն զմեծ բարձր նաև զանազանակամս ծածկեն, վաստակեն, և ամենեցուն յայտնի լինի խոտ ապաշխարութեան, երրորդ կարգեալն 'ի բարձր անկանել. այլ են անսաստակութիւնք, խոհեմ նորոգ, ապաշխարութիւնք, ևն ։

(6) Զյօժարակամութեան զօրութեն ։ Ըստ որում պատուիրեն անխտիր լինել ընդ բարկութեան, որ զդժուար են կենալ ։ կամ, զի բարկութեամբ մեղս յիշելն ծնանի՝ երրորդ պատերազմական մեղաց ։ Եւ զառողջութեն անբժշկութեն ։ Ըստ որում առողջութեն պատահական անբժշկելի է յառաջնական. կամ զի ապաշխարանաւ կամաւորութեան ոչ ևս ամբողջանայ ։

(7) Զխառնակն հանդերձանաւ ։ Զկամաւորութիւն ըստ կանոնին 'ի գործս անխտիր արժանի ևս, թէ զծանօթութեան փառօք, 'ի բանաւորութեան չար ու դառնութեան ձգելն 'ի նոյն ամբարշտել մեղս. կամ, զձգելն Թախանձանօք, հրապուրանօք և աղաւաղանօք այլոց 'ի մեղս՝ երրորդ չութ ասպատակ վարելով Թ բանելի առաւելոց ։ ( Է․ 22 ։ )

(8) Զոր 'ի ծնունդ մեղաց ։ Զմեղաց՝ որ անեթողլի գողով և զծառայաբարաժմելի՝ մինչ 'ի մահ անեն, եւ զընդունայնութեն կործանեաց. զընդդաւնայն կարծեաց՝ թէ մեղանչեմ, և յետոյ ապաշխարեմ ։

(9) Զերծեալ 'ի յոլովս ։ Իբրև խոնարհագոյն ոք՝ մերձ 'ի հանդերձ՝ զանձնութիւն աւանդել հոգևոր երկնեցուցչի բանիւքս. զընդդիմամբ գործեալ խմորանոյն, ( 2 օրին․ բառ խմորանոյն․ ) այլեւ բանի առաքելոյն․ որ ասէ՝ եթէ հանձարեղն մերորինեցին․ ( առաքեալ․ ԺԲ․ 16․ ) * Ծածկէ զանառակութեան ևս այլ խորագէտ ։

(10) Զոր ծառ զրախտին յանդգնութեն ։ Յանդգնութեանն՝ որ չար կամ զծնողական է բան զաղաւանդն ևս. խաչ յանդգնութեան այս է, զի եթէ զօր խմ աղաչանարութ ոչ․ երրորդ աստ ապաշխարենեալ ոչ, կամ երրորդ ընդդիմադարձ և զմաղձան ապաշխարեալ երևեալ, անհաստատ մտօք, երկեակ ծառայութեան մահու, երրորդ զխորամանկութեան յերկրաւ հեռու կացուցեալ. ( Է․ Թագ․ ԺԲ․ 21․ ) մերթ զխոյ ապաշխարել, մերթ զղջան ։ կամ աւաւելովզանցութեամբ վարելով 'ի բարին կամ 'ի չարին, և նաւաղութեամբ միշտ 'ի բարին. որ երկեղին ևս մեղք և մահաբերք են. և ասացին յայտնի ամենայնի երրորդ ոչ ապաշխարեաց ձեռամբ նմանն փորձանացուցեալ. որ է մեծ յանդգնութեն և անամօթութեն ։ Այսպէս ձևացութեամբ ևեթ ապաշխարեաց Սաւուղ ընծեալով, ձանձրացուցանել զործս, և ոչինչ օգուտ հաւատով ։

(11) Սահմանեմ զքեզ երկիր ։ Սահման զքեզ մաքրեայ աւազան, կամ զմեղս և ընդ ապաշխարհս. կամ ասելով զքեզ որ երկիր է, այսինքն երկրաւոր և չնչաւոր մեռելական. և ասացին եմ պատերազմաւոր, եմ երրորդ, ձեռամբ երրորդ պատերազմաւոր ոչ առ մարդ, և ապաշխարեալ առ նա վասն ամենայնի աշխարհի ։

(12) Յոյժ նեղելով ամենեցուն ։ Զևս ասէ յոյժ նեղելով. բանին յիշատակաւ, յիշատակաւ մեղացն խորացեալ. որ և զսոյն կեղծ պատասխ. ( Սղ․ երգ․ Է․ 72․ Թ․ 2 ։ ) Այսպէս և ևս ասէ՝ նեղեալ և ձանձրացեալ եմ յիշատա-

[illegible]

(13) [illegible]

(14) [illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

(20) [illegible]

(21) [illegible]

(22) [illegible]

(23) [illegible]

նի զօրացի, այլ ոչ նախադրութեան. ոչ նախանձութեան ժամանակի. որպէս յառ-
բաղդածս ծննդեան յառաջ է ժամանակաւ քան զծնանելն: Այսմ, ոչ ըստ
նախ զաւակելով անուանելն, որպէս հայհոյեր ասելն, որ մի անձն համա-
րելով զհայր և զորդի, ըստ նմին գծիւր՝ թէ հայր նախ գոյի քան զորդի
կոչեմսուք միայն, և ոչ աստուածութեամբ:

Յաղագս պարծանս բանին յայտնի է ուսանողաց մեծապատուն, զի վար-
դապետսք յունաց ասելոցաց 'ի կեր սաղմոսն յամենայնի, կոչելով զհայր՝
պատճառ որդւոյ, կամ հոգւոյն սրբոյ. որով խմանան զծննդեան և զելու-
կան աստուածորդիչ սկիզբն անձին որդւոյ, կամ հոգւոյն՝ առանց զանազա-
նութեան էութեան, և առանց կախման. և զայն կիրառութեան յեղեղեանս ըն-
կալեալ վարդապետսք հայոց, զխնկելով զուարճ խմաստ բանին, և զսահ-
մանութեան լատինացն, և միաձայնութեամբ ոչ անդ խառնամբ զայլ նշանակութեան
այնոր բանի, ըստ որոյ ոչ պատճառն մեծայնի անձանց. զի պարծառ 'ի
ասեղծութեան զայնցանէ առի ասելոցաց, յորս գոյ զանազանութեան ըստ
թեան, և կախումն միայն զմիմեանց. և ըստ այսմ մեղաց՝ անպարծառ առեն
վարդապետսք հայոց զորդին և զհոգին սրբ. որպէս ճշմարտեցին առեն 'ի Յա-
սղգին, 'ի բանն յաղագս Երրորդութեան. * Հայր է պատճառ՝ անպատճա-
ռականց, որդւոյ ծննդեան՝ հոգւոյն բղխմանց: Զի ոյ՝ չէ ինչ պատ-
ճառ, ինք՝ պատճառաւոր՝ գոյից պատճառ ||: Զայն առէ 'ի շարականն
հոգւոյ զալստեան, 'ի կանոնն. գ. 'ի հարցն. Որ բղխեցեր ես պատճառ,
ևն: Այնպէս և յառաջինն Թղթին առ մեանսէլ կայսր. * Հայր պատ-
ճառ, և որդի և հոգին 'ի պատճառէն անժամանակաբար, և առանց
պատճառի ||: Իսկ վարդապետսք լատինացւոց ասելոցաց 'ի կեր սաղմոսն
զբառն սկիզբն, և յառաջնոյն՝ երկեակն նաև զբառն պարծառ. որպէս
հետեւտս. (գիրք ժա: և ժբ:) օգոստինոս. (գիրք ձգ. խնդրոց. ժգ:)
միեղտորինոս ամբրոսիոս. (գիրք ա. ընդդէմ արիոսի:) Անսելմոս: (գիրք
յաղագս բղխման հոգւոյն սրբոյ: Րիքարդոս միեղտորեան. (գիրք Ե. յա-
ղագս Երրորդութեան. գլ. Է.) Իսկ յետ երկոտասաներորդ դարուն խա-
փանեցաւ առ լատինս կիրառութիւն այսր բանի, թէպէտ առանց մեր-
ժելոյ զառելութիւն այլոց ազգաց. որպէս առէ նա ինքն սր. Թովմաս աքուի-
նացի, 'ի Ժ. խնդ. յաղագս կարողութեան. յօդուածս. ա. առ Ց. * Յոյնք
ընդարձակագոյն վարեն անուանս պատճառականն, զծագումն ևեթ այնու
նշանակելով... վասն զի ոչ ըստ պատճառի առի ինչ 'ի լատինն եկեղե,
զոր վասն համեղամանաց եկեղեցին մերժէ ըստ պատճառի առեալ 'ի եկեղե-
ցւոյն: Սակայն յանդգնութեամբ մեր զանուն պատճառականն յամենայնի ըստ յու-
նաց, չէ արար յայն միտս խմանալ, որպէս յարժամ զասեղծուածոց
առի ||: Վասն այսորիկ 'ի փիլիսոփայական ժողովեն՝ 'ի միաբանութեան անդ
յոյնքն անդադար 'ի կեր սաղմոսն զբառն պարծառ. և երկեակն նաև լա-
տինքն ըն մեաց յունաց. մինչ զի նաև 'ի սահմանն հաւատոյ առացին:
* Որդին ևս է՝ ըստ յունաց պատճառ, և ըստ լատինացւոց՝ սկիզբն են-
թակայութեան հոգւոյն սրբոյ, որպէս և հայր ||:

(24) Զարհուրեալ 'ի սխրալի արեան վտակէ: Յր զարհուրեալ 'ի վտակէ
սխրալի կամ զքանչելի արեան երկնաւոր գառինն. որ և անհասելի է, զի
ոչ գոյ բան կամ չափ զօրութեան նորա. մինչ զի թէև միանգամ հեղեալ
կամ արտասուր, մաքրեաց զհամայնս ընդ ամ յանցանաց: Այսպիսի
յառակցեալն 'ի վտակէ՝ եղեալ է 'ի սուրբ կենաց հեղեալ նմանն յառակցու-
չին՝ արեան, ներհակադրաբար այնմ ածոյ՝ որով յառակցացուցին զնի 'ի հեղեալ
յառակցելոյն. տես գլուխ լծ. 25. 27: Այլ՝ ասելէ, զի անհնարին զխա-
կան, և մանաւանդ ինքն զեն փախիցէ 'ի անհեթեթոյն, զարհուրեալ 'ի
հեղմանէ արեան քնքի փրկչին, որ միանգամ հեղեալ, 'ի մշտնջենաւորս
անկի զզօրութիւն:

(25) Յայս պարփակեսցի խոնարհութիւն ։ 'Ի Հ օրինակս գնի յայսոց, որ ըստ-ըստ այն ցուցանէ զմիշտ քննական խոնարհութիւն, և զայն բազմացուցանէ, եթէ թէ 'ի աստուածային խոնարհութենէ յայտնէ խորհրդոյ մարդեղութեան, ամաչեցուցէ սատանայ. հեռացեալ մերժեսցի 'ի շինուածոյ խորանիդ, որ 'ի շինուածոյ խորանին՝ 'ի մարմնոյ Քերովբէութեան կամ լուսաւորեն, յորում դու նիզին բնակես ։

(26) Քարշեմաքնաւ. Քամահեցուցիչ. (փոշ փոշ ընթող.) փախեաւոքն. գծեղակ կիմ ցանկացուցիչ ձեռին ։ ոգեղակահանչէց. որ մեծ և սաստիկ բնակայն քնք, որք զոգին հանէին սաստիկ ցաւովն, և քամահեցուցանէին զածսորս և զլսողս բնակամանն ։ Աւրդ՝ յիշատակաւ բնակայն այնոցիկ ամաչեցուսցէ ցաւովք չարին սատանայ՝ փոխանակ չնկեւրյն զըսասնաւն ։

(27) Սետէ ովգէն բախման ։ 'Ի սաստիկ բախմանէ կողոպտեալ և ամբողջքն կամ ամբողջն՝ որով ընկալաւ փրկիչն զմեծ և զդերաանացեալ վէրն, սաստկեսցի սատանայ՝ առաջին զանեց և պատժաւ մահու ։ Վէր կողի փրկչին մեծ եղև՝ ոչ միայն առ այլ վէրան որ 'ի զանեցն և 'ի բնակայն, որ և նիզնեին մահացուցիչ էր, այլև ըստ անարդութեան և ըստ յանդգնութեան ամբողջին. զի ոչ խնայեաց նմա և ոչ 'ի մեռեալ մարմնին խաչելոյն ։

(28) Աշմաղն բախումբ ։ Փոխանակ Թանձրացելոյ գնի. որ անմահն մեծ մահկանացու մարմնովն ծածկեցաւ 'ի գերեզմանի ։ Այսու Թաղմանաք փրկչին՝ հարուստութեան կործանեալ գոռոզին, կործեցեալ իշխանին սատանայի՝ 'ի յատակս խաւարային գծոխոց անկցէ զինքն ։ Եւ յիշեսցէ զառաջին հարուածն որով 'ի փրկագործ կողէն խաչեցելոյն Թզնիք սատանայի անհնարագրան խաղաղ ։

(29) Վանն ղեն 'ի ֆաան փո հայր ։ Զամենայն զփրկագործ կեղս որոտոյ քո, և զմասնաւորութիւն սատանայի՝ այնպէս խոստովանիմ 'ի փառս քո մի հայր ամենակալ, զի եղէ միանգամայն նէր 'ի գոլքօփ ողբոյ փոյ՝ հոգի ուրդ օէի, որ 'ի փառաւորեալ զքեզ՝ զխօսեմ փառաւորել և զորդիդ և զհոգիդ՝ եւրբ համաստուածաբանական զամենակալեալս 'ի քեզն ։ Քանդի ոչ ղեփոյ նոյ ոռոյ զօրութեն ։ Ասանէն զհփաղն խնամի գոյական 'ի ղեփ բանէն, ամ դ ռոոյ, նրամող, 'ի բանայն՝ ռաօ, նրոմ, և նշանակէ՝ այեալ, կարողութեն. ուստի և խնամն է, վասն զի մեն յանանցեալ անձանց ոչ այնու նէնչ կամ կարողութեն ըստ զօրութեն ուստի 'ի միասնէն, առ ձ խորհրդականն խորհութ, 'ի միում անհասանելի ծոցութեան. որպէս հայհոյեին արիանոսք և հոգեմարտք, զորդի և զհոգի եթէ կարօտեալ զօրութեն ինչ առել հօր. այլ զանսկիզբն բանդ անձնաւոր՝ փառաւորեալ ընդ անժամանակ հօրդ, ընդ նմին իմս և զհոգին ։ Այլ խնամք պատճառաւ այսս են. եթէ եւ զորդիդ և զհոգիդ համարեսցի ոք ըստ զօրութեան ինչ զքեն կարեկցեալ, որ այնս ամենազարութեան կործանեն, ոչ զխօսեն 'ի փառաւորեալ զքեզ՝ փառաւորել և զիսան. բայց քանզի զի զուանմանքն զիսան անձնաւոր էութեամբ զուգապատուեալ քեզ, վասն այն 'ի փառաւորեալ զքեզ՝ փառաւորեմք և զիսան. ընծայեալ քեզ գոհութեն, կարողութեն, անճառ փոյեւղութեն, անճառելի վայելչութեն, կամ արժանաւորութեն մեծութեն, և միայնութն հաւասարութեն են ։

Սերտին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոց մաղթանաց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԻԹ.

ա. Եւ արդ՝ դու միայն սկիզբն բարեաց, գթութի անճառ՝ որդի բարձրեալ միոյդ այ, որ զողջոյն զօրն՝ թողութե ցուցեր փրկարան, և մեզ կորստեան դատապարտաորան, [1] յեղանակեալ ինձ զաւուրն չար՝ առ մեծ աւետիս ակնկալութե։ Բժիշկ ախտացելոյս. հովիւ մոլորեալ ոչխարիս. տէր՝ ապաւինեալ ծառայիս. գինի անապակ՝ մեծ տրտմեցելոյս. սպեղանեաց դեղ՝ վիրաւորեցելոյս. ազատութի՝ մեղօք գրաւելոյս. օրհնութի բարեաց՝ մերժելոյս. [2] կնիք շնորհաց՝ խոտելոյս. օծումն կոչման՝ կապտելոյս. կանգնումն վերստին՝ կործանելոյս. պատսպարան հզօր՝ գլորեցելոյս. օժանդակ վեհ՝ գայթակղեցելոյս. դուռն բարձրութե տարակուսելոյս. սանդուխք երանութե եղկելոյս. Ճանապարհ շաւղաց՝ մոլորելոյս. թագաւոր ներող՝ պարտելոյս. քաղցր յուսադրութիւն՝ լքելոյս. ձեռնկալ կենաց՝ հերքելոյս։
Մեծդ [3] միայն՝ և ամենառատ, որ զլիութի բարեաց սահմանեալ, հեղուս անչափ յաճախութբ քան զոր խնդրեմք և իմանամք, ըստ պօղոսի գոհաբանութեն։ Քանզի իննուց յիսնից՝ և թուոց՝ երից և չորեակ տասանց՝ 'ի վաղորդայնէ տունջեանն՝ առ մուտս արևուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ իսկ և իսկ 'ի սոյն՝ անարգել սրտիւ, 'ի վեր է քան զաղերսանաց ակնկալութի մարդկան, բարեգործել միմեանց շնորհատրութի. իսկ առ իմս թշուառութե և անարգութե զքոյդ եդեալ փառս՝ ամենակարօղ զօրութի ահեղ, բոլորից ած՝ օրհնեալ տէր քո, որովք սահմանեսցի կշռութբ չափոյ՝ հաստողիդ ընդ հողոյս հաւասարութի կցորդեալ։ Քանզի մնաս յայտնի անքաւ և անհետազօտելի, ամենևին բարի՝ անմասն բարկութե խաւարի. ուստի յոյժ նուազ են քում մեծութե աստեղացն թիւք, զորս գոյացուցեալ յոչ էից, յորջորջմամբ անուանց կնքեցեր. և կամ հիւթ

երկրի 'ի յօդս հեղեալ, զոր [4] 'ի չքոյից հատեալ,
տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նախա-
գրեալ համարգ սակաւութեան, որով քեզ նմանիլ
վարդապետեցեր ։

Է. Ո՜հ ծածկեցաւ և [5] ընկղմեցաւ 'ի քոյդ լոյս կա-
մաց երկայնմտութեան հանուրց չարութիւն, երբ դոյզն
մնայր՝ 'ի տապ արևու. և որպէս աստուստ իսկ կիրք
բնութեանց զհասարակաց բարուց ցուցանէ ։ Քանզի
ով որ 'ի մարդկանէ մեղաւ, և ոչ զղջացաւ. ով որ
զազրացաւ, և ոչ ամաչեաց. [6] ով որ գարշեցաւ, և
ոչ պատկառեաց. ով որ սխալեաց, և ոչ ապաշա-
ւեաց. ով որ կործանեցաւ, և ոչ հեծեծեաց. ով որ
գայթակղեցաւ, և ոչ ստրջացաւ. ով որ պարտե-
ցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ով որ պատրե-
ցաւ, և ոչ յօգուտ ելաւ. ով որ ճաշակեաց լեղի,
և ոչ դառնացաւ ։ Ով որ անկաւ 'ի բարձրութենէ,
և ոչ ընդոստեաւ. ով որ կորոյս մեծութիւն, և ոչ
աշխարեաց. ով որ զրկեցաւ յերանութենէ, և ոչ ելաց.
ով որ կապտեցաւ 'ի շնորհէ փառաց, և ոչ ողբաց.
ով որ գտաւ ինքեան մնասակար, և ոչ ստգտաւ. ով
որ մերժեցաւ յերեսացն այ, և ոչ հառաչեաց. ով
որ լուաւ զձայն սպառնալեացն, և ոչ սոսկացաւ ։ Ով
որ [7] ընդ մի չարեացն՝ հազարս չուապեաց. ով որ
մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զոփացաւ.
ով որ անօրինեցաւ, և ոչ քարամբք զմիտսն կոծեաց.
ով որ եսես զտորուկն յիւրում մեծութեան, և ոչ զկծե-
ցաւ. ով որ կատարեաց չարիս, և ոչ զինքն իսկ նզո-
վեաց. ով որ ախտացաւ, և ոչ զանձն դարմանեաց.
ով որ յամօթալեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին
ձաղեաց. ով որ 'ի պատկառելեացն հպեցաւ, և ոչ
զօրն իւր անիծեաց ։ Ով որ զգործեցեալսն յիշեաց,
և ոչ տապացաւ. ով որ զգաղտնիսն մտաբերեաց,
և ոչ խորովեցաւ. ով որ զծածուկսն նկատեաց, և ոչ
մահ կորստեան խնդրեաց. ով որ զանէրևոյթսն կեր-
պաւորեաց, և ոչ կրկին յերկիր կորացաւ. ով որ
ընդ մեղացն հեշտութեան բաց անշէջ հնոցի ոչ խառ-
նեաց. [8] ով որ զմնասակարսն բնութեան, և ոչ պա-
պակեցաւ. ով որ զկամաւ ներգործեալսն, և ոչ սա-
տակմամն ինքեան աղօթեաց. [9] ով որ զանճառելիսն,

և ոչ խռովեցաւ. 10 Ով որ զանկրելին էութեան, և
ոչ թախծեցաւ. Ով որ զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ.
Ով որ զանքծութեան ապականաբարան, և ոչ տաչարե-
ցաւ. Ով որ զտարագրութեան պատճառ յանցմունս,
և ոչ տագնապեցաւ. Ով որ զերեսացն աղտեղի տե-
սիլ, և ոչ բարկուն վերնոյն զանձն պարտ վարկաւ.
Ով որ 11 զմի 'ի կարևորացն մեղաց յաչս կերպացոյց,
և ոչ զինուք մահու խոցեցաւ. Ով որ զխայտառա-
կանացն, և ոչ վայս վհատութեան ընդ հեծութիս ձայ-
նիւն հիւսեաց: Ով որ յարքայական գահոյիցն տնան-
կացաւ, և ոչ կարկամեալ 'ի վայր գլորեցաւ. Ով որ
ընդ պսակին պերճութեան՝ հող 'ի գլուխ եղեալ, և ոչ
կրկին չարչարեալ յոգի մահացաւ. Ով որ ընդ պայ-
ծառ պատմուճանին՝ քրձազգած եղեալ, և ոչ տխրե-
ցաւ: Ով որ զկեանս իւր կորոյս, և ոչ արեան ար-
տասուս երկնեաց. Ով որ ընդ արկանելեաց լուսոյ
խաւար զգեցաւ, և ոչ նուաղեցաւ. Ով որ 'ի վերայ
սգոյ սիրելւոյ ոչ թառամեցաւ: Ահա այս կերպա-
րանք ճշգրտագոյնք՝ պարտաւորիս յանդիմանութեան,
տխուր դէմ. 12 քաղեալ ճաճանչ. ցամաքեալ խոնա-
ւութիւն. 13 երիթացեալ շուրթն. անշքեալ տիպ.
սրտմտեցեալ ոգի. այլայլեալ ձայն. կրկնեալ պա-
րանոյ: Այլ զի 14 թէ որ զխոկութիւնն իսկ նշանա-
կեսցէ, ոչ անօրինէ, անանբարտաւան միտ. անհր-
պարտ սիրտ. անխնդրող պարգևի՝ թշուառ. ան-
աղերսալի պաղքեալ. ինքնակշտամբելի դեգերեալ.
իրաւամերժ սովեալ. արդարալլուկ քաղցեալ. պատ-
շաճադատ հարուածեալ. ինքնավկայ մահապար-
տեալ. արժանապէս հանեալ. անձնանէծ եղկելի:
Այլ զայս թարգմանեալ ցուցանէ արդարագործ փա-
րիսեցին կշտամբեալ, և մեղապարտ մաքսաւորն բա-
րեհամբաւեալ:

Է. Այլ արդ՝ 15 եթէ զչարիսն՝ հնարաւորաւն բան-
սարկուին գտողին զմեզ գայթակղեալս, զիւրն 'ի
մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիարդ ոչ զբա-
րիսն տնկեալս 'ի մեզ հոգւոյ արութիւ՝ 'ի խնամա-
կալութէ կամաց կեցուցչին՝ օնեօն գրեսցես՝ տէր
բարեգութ, հզօր և յաղթօղ. քաւիչ մեղուցելոց.
կարօղ յամենայնի՝ առ ամենայն փրկութի: Եթէ

զանդունդս առ երկինս փոխես, և կամ զխաւար մթութեան[16] 'ի լոյս հաստատես, եթէ զդառնութիւն լեղւոյ՝ 'ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոծ սաստկութեան վշտաց՝ 'ի պարս դասու բերկրութեան հարսանեաց կարգես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ։ Զի ես քան զսոսին բաւես առ նոսին՝ տիրեալ համայնից ահաւորապէս. և քեզ փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

---

(1) Ցնդանաւէութիւն։ Զոր դուք ասացէք՝ թէ դոյ աւուրն չար իւր. (մատթ. Զ. 34.) կամ, զոր առաքեալն ասէր. (առակ. ԻԴ. 16.) թէ եօթն անգամ անկցի արդարն, խնայելով զանկանելն է 'ի մեղս բազում անգամ յաւուրն։ Դու զայս չար աւուրն փոխեցեր յաւիտենս յաւուրց, հրամայելով թողուլ եղբօր եօթն անգամ մեղուցելոյ 'ի միում աւուր. ծանուցանելով այսու՝ թէ զօրն ողջոյն մարթ է արդարանալ և փրկել, և ոչ թէ մնալով 'ի չարն՝ կորնչել։ Այն որ 'ի մեղս ղուկ. ԺԷ. 4. գրի. * Եթէ եօթն անգամ մեղիցէ || են, 'ի յոյնն և 'ի լատինն յաւելուածով առի, յաւուրն։

(2) Կնիք շնորհաց։ Այսու, և յանձրորդաւն յայս առնէ զներգործութիւն միրոնութեան, և օծմանն, որ 'ի նմա. իբր զի քո շնորհօքն և վասակօք խուր է կնքէիչ հոգւոյ միրոնելոյն, և օծանօղ՝ 'ի կոչելն առ իւրքն զկաղոպառեալս 'ի զարդարուց հոգեւորաց։ Կամ օծման կոչման, խնամ օծանօղ բառ քննական անուան իւրոյ։ Իսկ եթէ զայստեղի ասացաք ոչ բառ ժամանակի միրոնին՝ այլ առաքելութեան, նոյն խնամոք յարմարին. իբր զի և առաքելութեան է երկրորդ միրոնութիւն։

(3) Մէծդ ծայն։ Դրէ միայն Ճշմարիտ հաւատոյ և Ձօխ, ամէնատարբ ես միանդամայն 'ի արարչել անխառն. որ զլինելութիւն բարեաց ամենայնեանց ունելով, այսինքն բովանդակեալ ունելով 'ի քեզ, հեղուս 'ի մեզ առապելոս առատութեամբ, առաւել քան զոր խնդրեմքն եմ. կամ, բառ այլ օրէն. ամենայնեաց հեղուս. այսինքն զլինելութիւն բարեաց բաշխեալ բառ իւրաքանչիւր չափու՝ առատութեամբ հեղուս եմ։ Քանզի խնայս չխնայ։ 'Ի բառ օրէն. և 'ի հին լուծ. յանէ, կամ յլանէ։ Առատօրէ յառաջ բերէ զառաւելն մա առ պետրոս՝ 'ի միում աւուր ներել եղբօրն մեղուցելոյ եօթանասնեկին եօթն, որ առնէ 490։ Այսչափ անգամ ասէ՝ յառաւել մինչև 'ի մեռանել արև, անպատ առ նմին, այսինքն միրժ մեղանց, կամ հեա զհեառէ 'ի նմին աւուր յանէն կարկառանմէ, յօժարապարտ, կամ զներանելով 'ի նոյն ներումն եղբօրն անարգել սրտիւ, բարեգործէն մեղաց, բարեբարբել առ մեղաւորս ներողութեամբ, կամ շնորհել մեղաց, 'ի վեր է, առաւել է քան զայս խնդրելոյ մարդկան։ Այդ՝ խնամ անդրադ թշուառան օրինադրեցեր այսչափ ներողամտաբ լինել առ ընկերն, որում համեմատեալ զքո մեծութիւն՝ զիարդ չափեսցի հաւատարութիւն հոգւոյ ընդ աղաւըջեր, որ անբաւ ես և անհնարին, և անվախճան 'ի բարերարէ. զեան որոյ առաւելն մեծութիւն քո առաւել առակաւ են թէ [illegible], և փոքրիկ երկրի յօդս ցնդեալք, քան թէ իմն եօթանասնեկին եօթն թեւդ, որով ուսուցեր ներել քեզ՝ 'ի թողուլ եղբօր մեղուցելոյ։ Բաղդատական մեծանալութիւն է բանս, իբր ասէ. եթէ խնամ մեծութեամբ հրամայեցեր՝ եօթանասնեկին եօթն անգամ ներել յանցուցելոյ եղբօրն.

մերձաւոր եւս յայտնութիւն նկարագրեալ զաւ մեզ, որ ամենայնիւ ատենակալութեան զսոյն զմեզ, և որում ատենակալացն Թիւք, ('ի բերմ օրէն. Թ԰Ծ.) և ժամանակաց երկրի՝ առակաւորութիւք են։

Զթիւն եօթանասնեկի եօթն, այսինքն 490. բացատրէ նա ժամանակաւոր այլովք մասնաւոր Թուովք. ասելով առաւ. Յիսնից յոբելից, այսինքն յիսն ամեակ յոբելեան, որ լինի 450։ Ն Թուոց՝ Էրէց Ն յոբելեան փառաց։ (Տե՛ս օրէն. յոբէլ) Առաջին ատենագրողք նկարեցին 'ի բաց Թողեալ լեալ ատենան Թուոց Էրէց, ներ սկսեալ և աւետարան հաշուելով. վասն զի յոբելեան փառացն բացմանկական լինել զԹիւն 490։ Սակայն յետ զորշուկեր օրէնսդիր և 'ի հին լուծմանս զսոյն այն բանք. վասն որոյ 'ի վերջին ատենագիրս եղան 'ի ամենի ժողովոց։ Իսկ նմանապէս բանիւն զԹուրաւ 'ի յայտ գայ՝ եթէ կերպագրութիւնն լինէին որպէս եղաք մեք, այսինքն Ն Թուոց՝ Էրէց Ն յոբելեան փառաց. որով բաժան փառաց անկանի 'ի վերայ Էրէցն և յոբելեանն. նոյն ասել, և այլ Թուոց՝ երեք և չորք ամսոց. որ առնէ 40. և յաւելեալ 'ի 450 ն բացմանկական Թիւն 490։

Այս եղանակ որոշման Թուոց՝ է լաւ բնական կարգի շարադրութեան, առեալ 'ի առակաւորական ոճոյ մարգարէին՝ որով ասացի, երկու և երեք ամգամ, երեք և չորս զոյգ, են, և նմանի ընդ ամենայն՝ երեք անգամ, չորս զոյգ։ Այսպէս 'ի առակութեան գրոց ասի, (Առակ Լ. 5.) * Երեքս և 'ի չորս զոյգս, || այսինքն ընդ ամենայն՝ չորք զոյգ. որպէս մեկնէ և սմին և վերամ յաւելի. (Հատ. Ա. երես 221.) * Եթէ ոչ ապաշխարեսցեն, զարդարութեան հանցէ 'ի գլուխ չարութեանն։ || Ցոյց և նմանն այսմ է առնել այլ ասելն. * 'Ի վերայ երից անօրէնութեանց Դամասկոսի՝ և 'ի վերայ չորիցն ոչ դարձայց 'ի նմանէ. || զոր և ուԹ անգամ կրկնէ անդ. (Ա. 3. 6. 9. 11. 13. Բ. 1. 4. 6.) յորս նմանի. 'ի վերայ չորրորդ անօրէնութեանն, են։ Այսպէս լաւ այսպիսի օրինակաց՝ ասելն ամենայն, Էրէց Ն յոբելեան փառաց, նշանակէ՝ երից ամաց, և չորրորդ ամսոյն, որ լինի ընդ ամենայն 40։ Այսպէս նմանն բացատրէ և հին լուծմանքն։ Իսկ եթէ զբաժան Էրէց՝ յարմարեսցուք 'ի բաժան Ն Թուոց, ասելով, Ն Թուոց Էրէց, կարգի զԹուականին լինի նմանական և անստոյգ, և անհամեմատ կարգի շարադրութեան։ Վասն զի եթէ նմանութեամբ այսպէս, և Թուոց երից, այսինքն 'ի վերայ երկուց Թուոցն՝ յիսն յոբելից, յաւել և զերրորդ Թիւն, այսինքն զերրորդական ամսոյն։ կամ այսպէս, յաւելեալ 'ի վերայ յիսն յոբելից՝ զերկուս Թիւս, որ է չորրեակ ամսոյն, յորոց գումարի 40. և այնպէս գտանի նմին երեք Թիւք, այսինքն չորս, ամսոյն. և ապառնաբերական 'ի առաջանէ՝ բացատրութեան։ Եթէ առնեմ այսպիսի՝ և այլևս նմանութիւք Հանրացի որ մեկնեն, բայց և լաւ համաձայնից ձգէ զբանն. որպէս յայտնի է մանր քննողաց. և Թէ և չկայր այլ ընդդիմութեան, գտնէ աւետարան և առաջադասութիւն հաւանական Ն յաւելեալ 'ի վերայ յոբելեան փառաց. զի լաւ այնպիսի մասանց բաժանքն յոբելեան փառաց լինէին բացատրական բառիցն Ն Թուոց Էրէց. վասն որոյ անհրաժեշտ էր զնոյն խառնել 'ի միջի գնել երկոցունցն։

Ուսենք այսպէս լաւ համաձայնից է և այն նմանս, զոր 'ի վերայ առաջինոյն յաւելու հին լուծ. ասելով. զ40 երկու կարգ ամս, այսինքն 26. և 14 և այսպէս լինէին երեք Թիւք, այսինքն 450, 26, և 14։ Իսկ ոչ այսպէս շարադրեալ, 'ի բարոյականն միտս չզիջէ զբանն, ասելով. ամսոց երից՝ համարոյ, յաւուր, և սկըզբն ոչ լինի Թուղութեան մեղաց. և ամ խորհրդոյ՝ անուանակ եղբայրութեան կատարի։ Քանզի առաւել ընթերցողին՝ մերձաւոր 'ի հետեւորս ձգի բանին։

(4) 'Ի Հայոց հաւաքեալ։ 2 օրէն. հաւաքեալ։ Զհիւթ երկրի՝ խմանալով և զջուր և զօդ, յորժամ հաստատեսցէր ասէ, յայտ առնել Թէ այլ գոյացութիւն են առաջնոյն տարբերութեանց՝ որոց յերկնային լուսաւորաց, զա-

բայց եւ ասէ՝ սանդղածանսք յոչէից պտղաբերացն ։ Իսկ զառաւելս յորջորջե-
նաք անուանց կոչել, ( բառ առաջ. Ծնն. Բ. ) ոչ եթէ նշանակել զմտաւ
մտաւ ՚ի նոցանէ յառաջ անուանս եդեալ Ադամ, որպէս այժմու սա-
ռեղծագործք կոչէին նոցա անուանս ըստ իւրեանց բնաւորութեան . այլ խնամել Ծա-
նուցել Ադամ հաստատութեան զերկրաւորս աստուծոյ զբնութիւն եւ զզօ-
րութիւն եւ զգործուածս , եւ միանգամայն ընդ իշխանութեամբ մա-
րդել զանձինս յոր գործ եւ կարգի , եւ նոցա անձնեայ հնազանդել , եթէ
այն թէ յանուանէ կոչեցեալ էին . քանզի յայս իսկ առ հաճեալ առ մար-
դկեղ անուանագրութեանն ազգայնոյ , ծանուցել զօրաւորութիւն , եւ ընդ իշ-
խանութեամբ ունել զնա՝ զոր անուանէ ։

(5) Ընկղմեալ ՚ի փոյթ ջոյժ ։ Ցեռ աստեղայն թէ անկրաւ է զօ մեծութեամբ
՚ի ներքս , հետեւեցուցանէ . Այժմ ծածկեցաւ , այսինքն . առաջ յայտնի
ծածկեցաւ ՚ի լոյս երկնայնանալ կեանքն զոյց՝ չարութեան անձնեցաւ , որ-
պէս աստուած մնալն ՚ի լոյս արեւու ։ Եւ որպէս ասացաւ իւլ ։ Ջայս յա-
ւելու իբրեւ երկրորդ սպառնալ զխաւար ներքնոյն եղ . զի որպէս ՚ի կող-
մանէ եղ զայ առաւել ներգործութեան , նոյնպէս ՚ի կողմանէ մարդոյն զայ
մեծ մեղսագործութեան , եւ զխաւարութեան առաջարկելոյ . որպէս եւ ինքնին իսկ
բնաւորական կեանք կամ յաւէտ՝ զոր զգածք յետ մեղաց , անհասարակաց ծա-
ռայց , ցուցանէ զհատուածականան բարս մարդոյն՝ զմեղսագործութեանն ,
եւ զվնասակարութեան , առաւել եւ զխաւարական ներգործութեան ։ Քանզի ոմն որ ՚ի
մարդկանէ մեղաւ , եւ ոչ զղջացաւ՝ զոհէ բնական զզեստս իբրեւ ընդ
չար կեանս եւ մեղաւորական բնութեան ։

(6) Ոչ ոք փութասցի ։ Այսինքն զգուշասցի , առանձնասցի ։

(7) Ընդ Գ չարեաց ։ Ո՞վ որ մնան միոյ եւեթ չարի մեղաց՝ ՚ի ծանու-
ցելն զխնամ նոցա , հաղորդ չարաց լինել . ոչ հաստատիցի առաւել եւ մեղ կորուսեալ
անձինն ։ Ոչ ոք մերկասցի ։ Զայս կամ իբր նմանութիւն այլոց առա-
ջնոյն ՚ի մեղ ապականէ , այսինքն թէ զոր օրինակ մերկացեալն ՚ի մարմնա-
կան հանդերձին՝ անհնար է թէ ոչ ամաչեսցի , նոյնպէս զմեղաւորն մեղքն ՚ի
զգեստ չնորհաց՝ անհնար է թէ չամաչեսցի , չամաչեցեալ , եւն ։ Եւ կամ
փոխաբերութիւն խնամակալ է մերկանալն , եւ ձեռնն , այսինքն ոմն որ մեր-
կացեալ ՚ի ծածկութենէ չնորհաց ՚ի հանդերձին կենաց աշխարհին՝ ո ոչ որ-
փացաւ , ոչ ապաշաւեցաւ , ոչ զղջացաւ ։ Արտաքոյ ծանօթ , զի ՚ի յեռա-
տակելն զգեստական կեանս կամ յաւիտենական՝ որ մնան մեղաց լինելն ՚ի մե-
ղացելոյն , ոչ զգեստ զանձն ցուցանել իբրեւ օրինաւոր եւ հետեւելն , որպէս
անփոխանել զանձն կամ զօրն , կամ զհանգ անձինն խնդրել , եւն , այլ թէ
արտաքսէ կեանք՝ որք յանձնա լինին , յայտնի ցուցանէն զապաշխարութեան բարս
մարդոյ ։

(8) Ոչ ոք զեղխասցի բնաւին ։ Առաքէ մինչեւ ՚ի բանին ոչ ոք պէտ-
սասցի փոխել , եւն , զոր թէ խնամակալ է բայն խնդրութեան , այսինքն ՚ի
մեռան ներքսեանց , յեռատակեաց , խորհեցաւ , եւն ։ Ո՞վ որ ասէ՝ անուանե-
լով գործեալ զայնպիսի չարիս՝ որք նմին իսկ բնութեան մարմնոյ մնան ա-
ծեն , ոչ պատասխանի , ոչ սաստկանայցաւ ՚ի ցաւոց պատժին ։ Ո՞վ որ ընդ-
ծուլոյն , ՚ի հեշտութեան անդ մեղացն ոչ զգաց յանձինն զաղօթաւ խղճի՝
իբր Ծառայէ իւրն անձինն բացայայտ գտանել ։

(9) Ոչ ոք զանձնասպանեսցի ։ Զանասնելի մեղաց անօրէնաւոր գործեաց , կամ
յոխերաց , եւ ոչ խոստովանեցաւ ։

(10) Ոչ ոք զանկրթեսցի , այսինքն զանառակեալ բնութեան մեղաց ,
զզեխաւոր , կամ զայն մեղս՝ որ յոյժ ստոր են , որպէս անզգօնութիւն ,
առաջարկութիւն , եւն ։

(11) Ջի ի կարեւորաց մեղաց ։ Այսինքն զոր յայնց մեղաց՝ որք ՚ի կա-
րեաց բնութեան գործին . այսինքն ՚ի տկարութենէ , ՚ի անփութութենէ , կամ

պատճառաւ քնոյ, կերակրոյ, համբերման, եւն. Իսկ 'ի բանսն՝ մի՛ ով յարգայական, մինչեւ ո՛չ ով 'ի վերայ ոգւոյ եւն. Են իբր օրինակք մարդոյ ան-կեալ 'ի շնորհաց մեղօք. Իսկ թէ ըստ օրինակ անհնար է չարաչարելոյ մարդոյ ընկեալ 'ի թագաւորութիւն, 'ի պատիւս, 'ի փառաւոր համբեր-մանց, 'ի առաքինութեանց, 'ի սիրելեաց, նոյնպէս մարդոյ մերկացեալ 'ի շնոր-հաց: Ո՛վ մեք մինչ, ըստ անցաւորին զկարեւորս կենացն կարգս, եւ ոչ արժան իմ[ն]ոց յաջողն:

(12) Քաղցու ճաճանչ: Այսինքն ամփոփեալ, նուաղեալ լոյս աչաց:

(13) Երկնացեալ շարքն: Այսինքն ցանցառեալ, չորացեալ:

(14) Թէ ով չինչանքն: Եթէ զուարթն կամ զմշտամարմին կամեցի յայտ-նել, ոչ սխալէ ասել, թէ առ անօթոյ մարմնոյն միայն ոչ կարէ ամփոփ-ասանել (անանկարգական մեր, այլ օրէն. անմիաբանական. մի օրէն. Ներ:) մի սիրոյն հաղորդութեան. Թշուառ զոյգն ոչ իմանէ պատրանս խնդրել, եւն: Ջայս ամ ասէ՝ առ 'ի հաստատել զանապատացեալն խոյ, թէ խիղճ մեր ըստ բնականապատ անմահութեանն զմարդ, եւ խնամակալութեանն, որպէս եւ յաւելեալ 'ի միաբանական մարմնոյն:

(15) Եւնէ գլխոյն ձեռնամարութիւ: 2 օրէն. ձեռնամարութիւ: Եթէ զմիտսն՝ որք հոգիք եւ գլուխք են առաւելոյն, եւ իբր զեւր սերմանս յա-նէ 'ի միտ: Կամ, եթէ զմիտսն՝ խորհրդական նմանութեան առաւելոյն իբր զեւր սերմանս, առ օրն համարեացի, առ օրէն կամ 'ի միում ասեր զանանէ բաղդատութեան արդարացեալ, կամ 'ի միում ասեր այնչափ բա-զում թուով համարէ, այսինքն եօթանասներորդ եօթն: Կամ, առ օրն համարեցի, այսինքն յայն օրն գաղտնաբանութեան 'ի համար բերելոյ, ծնցիս հաշուեցեալ եւն: Այսպէս մի՛ շնորհ եւ մեր բարեկամութ՝ զոր 'ի քեն անկեալ բարձրան 'ի միտ հոգւոյ ուրախ, զօրութիւն զգայական, ամօթոյ, երկիւղի, խոնարհութիւն, եւն, քան զխնամակալութիւն մի եւ մի գրեցես, հաստա-տուն եւ արդարութեան արարչին, կամ մի բառ մինչեւ նշանակեցէս, եւ ընդունելի համարելով:

(16) 'Ի լոյս հասարակս: Այսպէս 'ի նորկայ ժամանակ զենն բաղդատ օրինակք համեմատ այլոց բայիցն, ծոխս, կաղծս, կորճես: Յայլ ասորւ-ղեր զնիւր, հասրեայս: Եթէ ասէ՝ ի գործս ընուն կամ զբանաշխարհ՝ ղեկավարս առ երկինս, զխորս ծովու բարեխառնութեան յերկինս առեալ եւ ուսուցանել, կամ որպէս առ լուսաւորս: Գինաւոր միւնին, որ բառ օրէ զխաւար գիշերի 'ի լոյս առաւօտու գործուցանս, եւ զմիտ՝ 'ի արդա-րութիւն. կամ առ խորախորհրդական յերկնաւորս եւ յանձառական: Զգալութիւն ընդոյ, զգալն հիւթս՝ քաղցրան կաղմեա 'ի ասեղան, կամ որպէս զմտաւոր մարմին: Ջեռն ասորւոյ, զառաւելն կոծոյ արժանաւոր յարաբերութեան հաղորդելոց կարգս. որպէս առ ամենայն միաւորս՝ կեցու-ցանելով զարդն նորա, կամ 'ի ասան յայտնա խնամին: Այսպիսի քեզ գիւտին են եւ կարելի. եւ առաւել քան զայսուհետ կարող են, մեր զարդ անձնայնի, եւն:

Մերոպին յաւելուած երկին հեծման՝ նորին հոգւոյ, առ նորին աղերս ծաղկեանց բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ Ա.

Ա. Եւ արդ՝ ճշմարտեցի բան քո մեծարմամբ, բոլորից ած, ներճղ և օրհնեալ, [1] ՚ի բազմագթելին դարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեղաւորին, թէ և առ յետին խոկ շունչն իցէ ընտրութիւն, և կամ ՚ի մէջ չարութեան փոխադրութիւն ։ Մանաւանդ զի դժնեայ [2] կցորդս այս անձնիշխանական՝ [3] միշտ մարտիկ, խաբօղ շողքօրթ, յարեալ ՚ի ստուէ, ըստ առակօղին, արածօղ հողմոց դժուարունելի, հաստատողին փախչօղ, գերեալ որսողին, մոլեկան մարմնոյս՝ ներհակ տնկակից, յոգնապատճառեան ամենավարան. զոր քո է գիտել զքանեացն յաճախութիւն ։ Եւ զկնի մեղանացն, ողորմագինս իմն ողբարկութիւս վհատականս՝ տաժանակեծս՝ բազմաւաղելիս, քո առաջի տէր գթարկութիւս՝ գրեալս արտասուօք, թառանչս թշուառութեանց կարգելոց՝ անքաւս չար վտանգից մեղսատագնապ պատկառեցելոյն ։

Բ. Եւ զի մի կրկնաբանութիւս ՚ի շատախօսութիւն կրթեսցի, առաւել քան զոյն այսու ողբալի. քանզի ոչ երբէք համարձակի խնդրել իւր զարքայութն, այլ զտանջանացն թեթևութի. [4] ոչ ընդ կենդանեացն ՚ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն՝ զզայական շնչոյն ՚ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն ։ Ի հանգստեան իւրում վատակեալ. ՚ի խրախութեան ինքեան արտմեցեալ. դիմօք ժպտեալ, և մտօք խոցեալ. կերպ ՚ի ծաղր, և աչք ՚ի յողբումն. երեսք զփոփանս ձևացուցանեն, և արտասուքն զզաւանութիւն սրտին ճշմարտէ ։ [5] Ըմպանակք երկու՝ յերկոսին ձեռսն, միոյն արեամբ և միւսն կաթամբ ։ Երկու [6] բա֊

րանոցք կայծակնմունքը, մինն խնկով և միւսն ճեն-
ճերիւ։ Սկաւառակք ⁷ կրկին կրաւորականք համոց,
մինն քաղցու և միւսն դառնութ̃։ Բաժակք զոյգ՝ ⁸
առ երկուս բերմունս, մինն արտօսր և միւսն ծծումբ։
⁹ Տաշտք կրեցեալք 'ի ծայրս մատանց, մինն գինի և
միւսն լեղի։ ¹⁰ Կրունկք տեսանելեաց ներհակաց,
մինն 'ի լաց և միւսն 'ի վրիպումն։ ¹¹ Խանութք հա-
լոցականաց հակառակութեց, մինն արծարծէ և միւսն
շիջուցանէ։ Հայեցուածք ¹² դիմաց երկուց, մինն
զոյգն ողորմանօք և միւսն անխնայելի բարկութբ̃։
Համբարձումն ¹³ երկակի բազկաց, մին 'ի հարուածս
և մին 'ի մերժումն։ ¹⁴ Կնեմք կրկնակի կերպից, մինն
տխրեալ և միւսն ցասուցեալ։ Աշտամբանք՝ ընդ միոյ
երկու, մինն ատեացս և միւսն ապառնեացն։ ¹⁵ Ապա-
ւինութք կարծողականք, մինն գոնէ և միւսն թերեւս։
Ի մի բերան երկակի բարբառ, ¹⁶ մինն եղկութ̃ի և
միւսն խռովութ̃ի։ Երկուս ազդմունս 'ի միում սրտի,
¹⁷ մինն կեղակարծ յուսոյ և միւսն ճշգրիտ կորստեան։
¹⁸ Ամպ լրթագոյն ահագնատեսիլ՝ կրկին տեղացմանց,
մինն նետս և միւսն քարինս։ Որոտումն ահեղ՝ եր-
կոցունց բերմանց, մինն կարկուտ և ¹⁹ միւսն հրա-
ցան։ Զոյգ ցուագին՝ երկուց վտանգից, ²⁰ մինն լա-
լոյ և միւսն մահու։ ²¹ Առաւօտ սգոյ՝ երկուց բողոք-
մանց, մինն սաստից և միւսն սպառնալեաց։ ²² Արե-
գակունք երկու՝ 'ի յերկուց ծայրից, մինն խաւարի
և միւսն կիզման։

Է. Եթէ հարուածոց աջ կառուցանի, ինքեան վար-
կանի. և թէ ձեռն պարգեւածիր, ոչ իւր ակնունի։
Ի պարծանս ուրուք՝ կորանայ. յամբարձումն գլխոյ՝
ընկճի. 'ի չարեացն յիշատակ՝ հեծէ. ²³ 'ի ճառս
մաքրոց՝ պատկառէ. 'ի պատմութիւնս հանդեր-
ձելոցն՝ երերի։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի,
'ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեստ յումեքէ
լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ։ Եթէ զսրովեա-
ցի սաստկապէս, ինքեամբ ինքեան վկայէ. եթէ ձա-
ղեսցի ուժգին, սակաւ համուցումն՝ առաւել պար-
տուցն գրեսցէ. եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ,
այն ասէ, և դարձեալ կրկնէ։ Եթէ ²⁴ որոգայթ մա-
հու ճայթեսցէ յերկնէ, հաղիւ զդէմն համբառ-

նայցէ ։ Օ՜ իւրոց իրաւանցն մատեան խփեալ. զպա-
տասխանութեն յոյս՝ լքուցեալ. զհամարձակութեն
ընթացս՝ փակեալ ։ Նա 25 եթէ ոչ էր անփրկանաւոր
կորուստ գերելոյն, զիւրովին երթալ ոչ լինէր դան-
դաղէր ։ Արդարև 26 վայ մեղաւորին՝ որ տարակու-
սեալ կայցէ 'ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հո-
գելից բանի իմաստնոյն ։

Գ. Նա՛ւ արդ՝ զիա՞րդ ոչ ողորմեսցիս՝ բարեգութ,
այսքանեացս ձայնարկութեանց՝ կողկողագինս հեծե-
ծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողոր-
մած եմ ես տէր ։ Ոհա՛մ առ չարութի գերւոյս, բա-
րութի քո. առ մահապարտիս դառնութի, քաղցրութի
քո. առ կորուսելոյս յայտնութի, ճառագայթ քո.
27 առ յանդգնելոյս մեղութի, ողորմութի քո. առ
խակութի չխրատակարիս, հեզութի քո. առ կործա-
նելոյս այցելութի, աջ քո. առ ընկղմելոյս վերբե-
րութի, ձեռն քո. առ բժշկութի անողջանալի խո-
ցուածոյս, մատն քո. առ պակուցելոյս պաշտպա-
նութի, ոգի քո. առ ապախտաւորիս իմ վստահու-
թի, երկայնմտութի քո. առ օծումն ամենադժնէիս,
զօրութի քո. առ մեղաւորիս քաւութի, հրաման
քո. առ փախուցելոյս ապաւինութի, աջք քո. 28 առ
որսացելոյս պատսպարութի, բազուկ քո. առ մոլորե-
լոյս առաջնորդութի, լոյս քո. առ տարակուսելոյս
հնարաւորութի, հանճար քո. առ անիծելոյս կրկին
տոտացումն, օրհնութի քո. առ վհատելոյս քաջալե-
րութի, խրախոյս քո. առ վշտագնելոյս մխիթարու-
թի, բաժակ քո. առ նեղելոյս ընդարձակութի, կամք
քո. առ ատեցելոյս կոչումն, սէր քո. առ հաստատումն
տատանեցելոյս, բան քո. 29 առ հոգւով վիրաւորե-
լոյս, կաթուած արեան քո. առ աներևոյթ մթերս
ցաւոցս, ակնարկութի քո. առ յուսահատելոյս ան-
դրէն ընտրութի, իշխանութի քո. առ պատուա-
տուումն կորեցելոյս, կցորդութի քո. առ խաւարա-
մահու ծածկելոյս, նշոյլ կենաց քոց. առ խռովե-
ցելոյս իմ հանդարտութիւն, խաղաղութի քո. առ
վայրագութի օտարացելոյս, ողջոյն քո. առ մոլորե-
լոյս դարձաւորութի, ձայն քո ։ Օ՜ ի դու տիրես ամե-
նայնի գթութի, և չիք 'ի քեզ մասն ինչ խաւարի.

և ոչ է քաղաքն առանց քո . և քեզ վայել է փառք յաւիտեանս . ամէն :

---

(1) 'Ի Բաղձագիենայն գուրյանոսութեն : Ծնմանեցւոյ՛ բանքս՝ որ յաղագս եօթանասնեկի եօթն մեղուցելոյն գարձի և պղծմանն , տաուրն պոփէրէ , այսինքն 'ի միում աւուր . թէ և 'ի յետին շաւնչ կենացն իւր յերեկոյն Եղէ ընփրութեան , գարձն կամ ընտրելոյն պղտորին . և կամ 'ի միջ չարութեն , 'ի գործելն անգ ըշար՝ հասցէ նմա փոխումն 'ի կենաց , կամ 'ի մեղաց յաղագսարութիւն : Ճանաւանդ դի , ունելով մարդս ընկեր իւրեան միշտ խաղաղութեան , և յայլ կողմանէ՝ յետ մեղանչելոյն ցաւ և տագնապ և ողբս , երկրորդն այս են պատճառք՝ որք նորոգեն ողորմութեան ցուցանեն ըղձմարգն :

(2) Կցուրդ այս : Ոմանք զմարմինն խմացան . բայց յաւէտրդքն առաքելոյն ոչ յարմարքն նմա , որպէս և ո՛չ կատարեալ մարդոյն , կամ բանաւորական հոգւոյն : Այլ իմանի զգայութեն , կամ զգայական մասն , որ անձնիշխանական առն , այսինքն ինքնագլուխ , աղաղակէ 'ի բանէն . հանապազ մարմնոյն ընդ հոգւոյն , խառն , յարի 'ի սուտ յինքնութեան զգայոյ կրս , որոց երբեմն գժուարութեանն հաղորդ ըշնորհ անհոգի , ոչ յարգելով զգայութեանս : Հաւասարն Խոսքն . յարաւացէն կամ յայլ փախչի : Մոյնէս Ճորնոյս , ախտաւորն մարմ նոյս , ներհակ փոխոյից , 'ի մարմինն անկեալ է և հարազատ , բայց երբ թշնամի մնասէ նմա , ցաւս՝ հիւանդութիւնս և աշխատութիւնս տալով նմա : յոփնագարբանութեան , 'ի բաղում պատճառաց զգայոյ հեշտալեաց շարժի . կամ , բաղում պատճառանաւ հնարէ 'ի կատարումն հանճոյից իւրոց . և անձնակալութեան , յամենայն զգայոյս մարմնական թափառի . կամ 'ի խնդիրս լի նի նոցա , և 'ի չհասանելն՝ տրտմի , տարակուսի . և թէ քանի՛ են այս ո գորմեալ հանգամանք բնութեան , գու միայն գիտես : Այլ՝ երբեմն այսպէս մի խաղաղի հեռանելով հոգւոյն՝ մեղանչէ , այնուհետև է տեսանել 'ի նմա ողբս մշտնջենս , Եսաւեայ Եղբայր Յակոբայ , հաւասարանս յաղագս թշուառութեանցն , և Հ :

(3) Մինչ փորձի : 'Ի մի լուծ ողջունով այս անել կայ այսպէս . * Մինչ մարմնեկ խաղաղ , չողոքորթ յարելով 'ի սութեն , լոյս տեսանողին՝ արտաքող հոգւոյ , գժուարութեանն հաստատին փախչող , գերեալ տրտմին մեղս կանն մարմնոյս , ներհակ անկանելի || : Յայլ ողջունակս եւ բանն դժուարութեանն զնի ոռ հաւասարն . և իմանի . փախչողն՝ զգայական մասն այնպիսի տասամբակ է , մինչև տարաբերն եւ գժուարացիցանելի է , խոյս տալ յորժ նոց նոցա և 'ի հրամանաց :

(4) Ո՛ւ ընդ կենդանեաց : Ո՛չ համարձակի կամ յուսայ ընդ կենդանեացն 'ի լոյս ընակել , քան թէ ընդ մեռելոցն՝ դժոխական ընդ , որք կամ կեն գանեայն 'ի խաւարի կալ : Ո՛ւ ընդ անէարծելոյն , յերկիրն փառօք , իշխա նութեամբ , մեծութեամբ , կամ յերկնիս երանութեամբ . այլ ընդ բերկեալն , ընդ խոնարհեալսն աղքատութեամբ , արհամարհանօք :

(5) Ընդդանունք Երկու : Երկուս բաժանեա ունի յերկրորին ձեռն՝ լսելու մեն ուրանք , բարկութեամբ իւր , և միւսն յանձնէ , քաղցր յուսով զգլխման : Այսու , և յաւէտ նմանութեանցս գիտէ ցուցանել զմեղաւորն 'ի մէջ երկուց կրից , այսինքն յուսոյ և երկիւղի , ուրախութեան և տրտմու թեան :

(6) Բազումաց կայծակնաւորդ : մի ոք ոփն . կայծակնաւորդ : այսինքն բազում փառք կամ անօթք բազմանաց լսելաց կրակաւ , մին ծնէ զթշնամի յու սոյ , և միւսն զմնանձիր անձկութեն տայ :

(7) [illegible]

(8) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

(14) [illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

(20) [illegible]

(21) [illegible]

նաց և յանդիմանութեան վասն յանցանացն. և վասն ապաշխարողաց, ապաւինաց:

(22) Արեգականն եղջիւր. միտքն և ամպ. կամ նոյն ինքն ամպ կոչեցեալ որդ-նանման ցուցեալ: Ի ծերունոյ ծառայէն. երկուց հակառակ գործոց երևե-ցուցիչ, կամ յերկուս ծայրս աշխարհի՝ յարևմուտս և յարևելս: Միտ խաւարի. միտքն՝ խաւարեալ մեղօքն. կամ ամպ յարևմուտս երևեալ, ըստ որում զըղջին ողորմութեան աւետեաց է. (Խմաստ. Ե. 6:) և վասն կիզման. ամպ յարևելս, ըստ որում մտանէ 'ի հուր գեհենին: Այսպէս կոչեցին մարդ, այսինքն ըստ որում զըղջին ողորմութեան ոչ ծանօթ է, և մտա-նէ 'ի հուր տանջողական, խմանի և բարոյապէս նմանին ամպ յարևելս և յարևմուտս: (Մատթ. ԻԵ. 5. 34:) Ընկալեալ արժանի է, զի յեղեալ գերկրս ժամանակին, զայսպէս կամ զգիշեր, զառաւօտ և զերեկորին կամ զտիւ, զայն յայտ առնէ՝ թէ առն զղջակամի ընդունելեացն 'ի խաւարս խղճի մեղաց չիք համբերութիւն, և ոչ գիշեր. յետ բարերանցելոյ ժա-մանակի ոչ գիշերութեան գտանէ, այլ ողորմութեան:

(23) 'Ի ձեռաց մահուց: 'Ի լռել կամ յընթեռնուլ զմեղս իւր և արտաք-րոյ՝ առնուշէ, հակառակ նորաս անտանելով զիւր վաղա:

(24) Որոգայթ մահու. կայծակն կամ շանթ՝ որ յանկարծ հարկանէ տապա-նանէ, ճայթէ, շառաչմամբ արձակեցեալ յամպոց:

(25) Եթէ ոչ էր ամբաւապարտ: Եթէ կորուսեալ կամաւ զերուեալն զմիտքն 'ի մահ, այսինքն անձնասպանութիւն՝ ոչ էր անդարձանելի, այսպիսի տառապանօք զերծեալ 'ի խղճէ մեղաց՝ ոչ գանդաղէր անդրանանել զմիտսն:

(26) Վաղ մեղաւորին: Ակնարկէ 'ի բանն սփրաւքոյ. Ը. 14. որ ըստ գրոյն խմանի 'ի վերայ երկաբնեցւոց մարդոյ, որ կամի ծառայել Այ և գե-ղեցին. բայց նա վարդապետաս գեղեցկի յարմարէ մեղաւորին, որ 'ի խղճէ մտացն խառնեալ կայ 'ի մէջ յուսոյ և յուսահատութեան, որ վտանգա-ւոր է յոյժ և առաւելի: Զայս բան՝ հոգեւորն առնէ, որ առնորսարար ամբա-ռանէ բանից պատուհանի. յորմէ մարթ է ձեռնարկել, թէ ընդ ամբա-ռանէ գիրս գտանէ զմերայսքոյ խմաստութեան՝ համաձայն արևմտեան վար-դապետաց, ոչ հայեցեալ յերկրպագութեան այլոց արևելեան վարդապետ-աց. քանզի և 'ի պարապաւոր ժողովոյն պայծառեալ 'ի սեան կեղեցեաց՝ 'ի մեր թուին ամէն. 768. յօրինակ ինչ, 'ի 25 կանոնին՝ թէպէտ Է այլ նա գիրս ոչ գտանի, բայց օրինաւորի ընթեռնուլ առ 'ի յուսումն մանկանց: Այլ և ընթերցուածս առնի Սեպտիերեանին Ձեռագրերն առնու 'ի Աե-բրայց ԴՀ. ԼԹ: ԱԷ վարդապետս յիշէ գործեալ ընթրոց 'ի բանն Գ. 3. անուանեալ Ենոսփոս Երջանիկ:

(27) Առ յանդգնելոյ մոլութե: այլ օրին. մոլորութե:

(28) Առ որոգելոյ: Փախուցեալս 'ի ձեռաց գեւտն, կամ ուժգին թա-փով անկելոյ:

(29) Առ հոգւով Միրաւորելոյ: Խոցեալ, առ հոգւով վիրաւորեալս. որ-պէս և ըղձեալն, առ խաւարս մահու ծածկելոյ, այսինքն առ ծածկեալս:

Սերտին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԼԸ.

Ա. Եւ արդ՝ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս՝ զաղէտ տագնապի հեծութեան ձայնիս մեծ հառաչանացս՝ անսփոփելի իմոյս վտանգի. զի դու՝ ողորմած [1] սկզբնահայրդ խոստովանութեան անյայտ ծածկութեանց՝ որդի Այ կենդանւոյ տէր յա քն, քաղցրութեամբ նայեսցիս քաւել ։ Արդարև կարող ես. ճշմարտապէս բաւական ես. եթէ կամիս, հնարաւոր ես. [2] կամիս առաւելապէս, որպէս և կարես ։ [3] Հարստանաս մեծապէս ընդ տալն, քան եթէ ընդ առնուլն. բազմանան քեզ գանձք 'ի ցրուելն, քան 'ի ժողովելն. յաճախեն ստացուածք քո 'ի սփռելն, քան 'ի ճշդելն. կուտին քեզ համբարք 'ի տարածանելն, քան 'ի շտեմարանելն ։ Հաստատեալ [4] այսմ ամենայնի՝ տէր, գտանել քև ելք փրկութեան. հաստատեալ անարգս՝ ընդ պատուականին. յուսամ ընդ աբրահամու, և ընդ աննայի. զի միւսն բանիդ քո հաստատեաց, և միւսն քահանայապետին բարբառոյ աննաց ։ Նման որոյ և ամն 'ի խորին ծերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ. [5] զառանցեալն և զամուլն արգանդ սառայի՝ անդաստան պտղածին արգեան օրհնութեան բազում ժողովրդոց՝ մարգարէից սրբոց՝ և թագաւորաց ընտրելոց՝ հայել յուսացաւ ։ Իսկ միւսն՝ զանհանդերձելի երկիր որովայնին սննկի՝ եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց. [6] որ է թիւ մի անբաւութեան, զննաւն նշանակելոյ զէութեան, ամնութեան յարակայութեան սահման անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց՝ անհատ յորդութեան ։ Այս թիւ պանծալի՝ որում ոչ է կէտ կցորդի, և ոչ ապառուած վախճանի. այլ կայս այն է՝ ուրոյն ընտրութեամբ նուիրեալ՝ յաւէտ անճառ վիճակաւ համայն յաւիտենիւ, դժուարաթարգմանելի մերոց իմաստից ։

Բ. Արդ՝ համարեալ յարդարութեան անյուսալի փրկու-

Թէ հոգւոյս՝ զամենավարան ձայն կողկողանաց սրտիս
հեծութեան, ընդ նախագրելոցն երջանկաց եդեալ և
դասեալ զայս դաւանութիւն փոքր հաւատոց իմոյս խըն-
դրուածոց. զի կեցից և ես առ նոքօք՝ բերկրեալ
ընդ նոսին, բուռն հարեալ քան զիմոց գործոց ըզ-
քոյդ շնորհաց: 7 Մանաւանդ զի՝ կրկին բարձունք
են և փառաւորք՝ և քան զչափ կշռութեան բանի գե-
րագոյնք, իմում խառնութեան հաշտարանք, և հզօրա-
պէս քաւարանք, և կարծեաց թերութեան մտաց սլա-
ցեալք: Ընդ արեան քո ահաւորի՝ և ըստ մարմնոյ
ծնօղդ քո խնկելի: Պարք առաքելոցն, դասք մար-
գարէիցն, գունդք մարտիրոսացն, 8 ձիաւորեալքն
հետևակ՝ սպառազէն արիութեամբ՝ մերկամարտիկն
մրցութեամբ. գումարք միանձանց, 9 բոյլք բանականաց
ընտրելոց, ժողովք բարեկրօնից. 10 հոյլք հոգեղէ-
նաց՝ յերկրէ երկնաւորաց, զինուորութիւնք վերնա-
կանաց՝ ընդ մեզ կցորդելոց: 11 Նուէրք երախայ-
րեաց, մատուցմունք զուարակաց, լուցմունք ղամ-
բարաց, բուրմունք խնկոց՝ իւղոց հանդերձանօք,
յաղթանակք փրկական նշանաց, կառուցմունք խո-
րանաց ա͞ծաբնակաց, ձեռք քահանայից՝ շնորհիւ կա-
տարելոց: 12 Առ շարժումն անձին յիշատակ ա͞յ, առ
փոփոխումն գարշապարի. առ կարկառումն աջոյ, և
ամբարձումն բազկի, առ բարիս՝ գոհութիւն, և առ գթել՝
աղաչանք, առ բանս ընտանիս, առ խօսս հասարակաց,
առ ձայնս բնաւորականս, առ գործոց յաջողուածս,
առ առաքինութեան ջերմութիւս, որ 'ի տունջեան և
'ի գիշերի՝ ընթացմունս օգտակարաց հոգևորաց՝ քև
առաջնորդեալք. 'ի նիրհել և 'ի զարթնուլ, 'ի պա-
տերազմի ազգաց, 'ի մարտս դիւաց, 'ի հակառակու-
թիւս հերձուածողաց, առ փոքունս, առ մեծամեծս,
առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց, և
որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշ-
տականս՝ եթէ տատամնելիս. վասն ոմանց աղօթս
մնալ 'ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես
սքանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ
յամենեցունց, թէ 13 բաւական ես ամենայնի, կաթ-
նաբոյծ հասակաց, տիոց պատանեաց, 14 մտաց վայ-
րենեաց, ստամբակաց գոռոզաց. մինչ զի առ թա-

ներս տեսարանաց, և առ կոյս խառնիճաղանճ
բազմութեանց, և կամ առ կաքաւս կայթից անախոր-
ժականաց կամաց հզօրիդ՝ ոչ ես մոռացեալ :
Է. Արդ՝ դու [15] ստացար զամենեսեան, և քո են
ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բա-
րեգութ. զի թէ և մեղիցեն, քո են, վասն զի 'ի
քում համարի են. քանզի գիտեն զզօրութիւն քո, ըստ
առակողին մաղթանաց : Որում և ես կցորդիմ
թշուառս բանիւ վկայեալ սորին յանցաւորապէս.
յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ զովեստիւ,
ծանուցեալ զքեզ թէ իցես, [16] թէ և եօթեամբք
իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբք, [17] առ
այս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զիա՞րդ ոչ քո իցէ :
[18] Յորս է տեսանել 'ի մէջ արջնատես ագռաւուց՝
սպիտականիշ երամս աղաւնեաց. 'ի մէջ խրոխտա-
կանաց ձիոց անմաքրից՝ ողջս հանդարտաբարս. 'ի
թիւ շանց գազանականաց գառինս նուիրելիս : Հե-
զութիւն 'ի խստութեան. կատարելութիւն 'ի թերութեան.
խոնարհութիւն յամբարհաւաճութեան. ճշմարտութիւն
'ի ստութեան. [19] միամտութիւն 'ի մանկութեան. անբծու-
թիւն յայլամտութեան. բարօրութիւն 'ի չարութեան. պար-
կեշտութիւն 'ի լկտութեան. ողորմութիւն յանգթութեան.
ապաշխարանք յանյուսութեան. քաղցրութիւն 'ի բարկու-
թեան. հաշտութիւն 'ի թշնամութեան. անոխութիւն 'ի խա-
ծանողութեան. քաջալերութիւն 'ի լքութեան. [20] օրհնու-
թիւն 'ի նետաձգութեան : Յոր [21] ոչ բաւականացայ եր-
բէք 'ի դատել ճշգրտապէս, թէ ո՞վ յերկրածնաց
ստոյգ կանխեսցէ ժառանգել զքեզ. որ միայն անա-
չառաբար կշտամբես իրաւամբք զարդարութիւն առ-
ամբարիշտ մաքուրն, և առ պոռնիկ զզջացեալն. առ
ամենեսին բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ 'ի
բարձունս, և յաւիտենայն յաւիտեանս. ամէն :

---

(1) Սկզբնակայքը խոստովանութիւն է. առաջին զմեղս և ապա խոստո-
վանութիւն մեղաց : Այսպէս անուանէ զքեզ, նախ՝ զի իբրև առ 'ի
սկզբանէ առանձնակաց մարդկան՝ խոստովանութիւն արդարանալ 'ի մեղաց,
ըստ նոցա. (Առ. 18.) Երկոքեան խոստովանիք ընդ միմեանս. || և
(Յկ. 5.) " Ընդ միմեանս զյանցանս, ասա դու նախ զանօրէնու-
թիւնս քո՝ զի արդարասցիս ||, որ և զիտա և Հռոմայ այց միայն է, զի

[illegible]

[illegible] Ա[illegible] [illegible]

(8) [illegible] [illegible]

(9) [illegible] [illegible]

(10) [illegible] [illegible]

(11) [illegible] [illegible]

(12) Աս [illegible] [illegible]

(13) [illegible] 3 [illegible]

(14) Մ[illegible] [illegible] ( [illegible] . 480 . ) [illegible]

հանդիսականաց անտի, և կամ 'ի նոյն իսկ խաղաղականաց ունիմք յիշել զսէր, և զզղջումն. որպէս սաղմոս պատմէ զնա՝ որ յանապատ անցուցին յիշելով զայն՝ զարմանս առնէ. (Սաղմ. հատ. 107:) Նոյնպէս պատուհասն, որ յանապատ պատուհասն ձգեցաւ առ նա: (Անդ. 111:)

(15) Սփռոցոր զամենեսեան: այլ օրհն. զամենեսին:

(16) Թուր ու երկարեք: Թուր և բազմապատիկ պատրաստութիւնք յիշել իցէ ըստ կայենի եօթն վրիժուցն: (Ծննդ. Դ. 24:) Իսկ երկարաձգութիւն կամ տառապանացուցիչ է, և կամ ցուցանէ զպատրաստութիւն մեղաց և պատժոց, կամ զառատացս և զհանդերձեալսն պատժոց:

(17) Առ այս օրհնեալ: Ըստ այսմ յիշատակելով օրհնեալս, եթէ յետ անուրջ նոյն, այսինքն հեծուս կամ զօրաւոր վճռոյ իմաստութեան. (Իմաստ. ԺԹ. 2. Թէ 'ի մեղանչելն 'ի քուոյ հանճարոյ ...) զերծիցէ ու ... եղէ: Բազում յետ անուրջ նոյն այլոց և փոխանակ վճռոյ կամ բանին զնի. որպէս 'ի բանին ձեռ. 2. այլև (Իսայեա. Զ. 86:) Այսոր անեղուոյ ամբարշտ իմաստութեան: Որով հեռու զմտաւ, առաջօք ամենեցուն և սրբութիւն և վերակացութիւն, և յաղագսն՝ ամենայնիւ, վասն այսորիկ թէ և մեղաց ունիմք յանցանութիւն, ոչ եթէ այնու զադպուն 'ի ընթերցանքն. այլ ձանձրացելով զզօրութիւն 'ի կեցուցանել, մինչ 'ի քուոյ հանճարոյ, որպէս իմաստութիւն առօթեալով առնէ. որում և ես յանցանս մեկնելով համառօտ ձայնիւ առնել, թէ այսպիսի թեթևաւ իցէ բազմապատիկ մեղօք պատուհասիւ, մինչ թէ կարող էր առ քեզ իշխել ազատ, զսիրով ոչ ընկերցի քո անդէն վաղվաղակի՝ ըստ անպարտելի վճռոյ իմաստութեան:

(18) Յորս է փետանել: 'Ի մէջ զանազան մեղաւորաց կամ մեղաց՝ քո զզօրութիւնս առաւելս, զի կամ ընդ մեղաւորս խառն զատանէին արդարք, և կամ 'ի նոյն իսկ մեղաւորաց յանկարծ արդարք ընդնին: Այսպէս 'ի նոյն առաւել միայն՝ զատանել հեղութեան 'ի միասին. և կամ թէ նոյնն 'ի խառնութեան զատանեալ 'ի հեղութիւն: Ըստ այսմ խամ զդարձանքն: օրհնափեա. անապատն:

(19) Միաձայնութեան ի ծանրութեան: Այսինքն 'ի խորամանկութեան. զի զխոնարհութեան բարձրութեան զայս միայն պատահեսցէ. և ամենեցին 'ի ծանր բանին, և ոչ 'ի ծանրաց: Անձնութեան յայլայլութեան, անկեղծութեան 'ի կեղծաւորութեան, կամ 'ի խորագիտութեան: Բարձրութեան ի ըմբռնութեան, բարութեան, կամ բարեկարգութիւն:

(20) Անօթութեան ի կոծանօղութեան: Ոչ պատահեալն ունի՝ յորժամ այլ ոք խոս ծանէ բանին, կամ այլով մտաւ: փոխարինութեան ի ըմբռնել. ուր առնուլ կամ ասացեալ 'ի մէջ մեղաց, կամ յայս ունել 'ի մեծ վասնինչս: Օրհնութեան ի ներդաշնակութեան: օրհնութեան 'ի ձգելն այլոց զնուագս անխոնարհաց. կամ զօրհնութիւն առ ած վասն ձախողութեան՝ յորժամ այլք ձգեն զնուագս պատանեաց. կամ զօրհնութեան՝ յորժամ ած զնուագս թշուառութեանց արձակէ, ըստ յոբայ (Է. 13.) "Ներողիք իւրովք խոցոտեաց զիս:"

(21) Ուխտակալացն: Տեսանելով զի 'ի մեղաւորս խառն զատանեին արդարք, և 'ի մեղաց յանկարծ արդարութեանց մարդ, ոչ կարացեր զիտել համատարած, թէ ով 'ի մարդկանէ ժառանգելոց է զսէր. այլ զու միայն ունիս զատանս, և կշռադատես խորհուրդս զսրտից. ցուցանես զբարերարութիւն քո առ անհաւատս ծածկեալ, առ այն անտառաբերսն՝ որ մնացին, կամ մնացեալս կարծիս. որպէս փարիսեցիքն, և առ պատմիչ զզղջացեալն. որ պատմեսցի կարծիս, կամ է խոտ, և ամենայն զզղջացեալ է: Յայտնելով բանիս առնելն՝ ոչ բաւական է, կամ չկարացի գիտել, խմառն՝ անհնարին է գիտել, թէ և 'ի քննել յանդգնեսցի ոք: Զի եթէ 'ի մէջ խորհրդանշանաց կարեւի մեղուցելոց՝ զատանել և անմեղ, կամ մի և նոյն մեղուցեալ շարժելով 'ի շնորհաց Այ զատանել և արդարութեան, ով կարիցէ ընտրել ո

յանհնարին մարդկանէ անմեղ իցէ, և կամ ՚ի մեղուցելոցն ոք որ առ-գաստանալ ունիցի: Բայց միայն արտաքինն ԱՅ է զոյգ գիտել, և նորին և ևեթ մաքրելոյ գիտել առ ՚ի յարգար դատաստանութեն: Եթէ իրա-քանչիւր համատասցելոց չէ տարեալ գիտել անդամ և զանձինէ հատա-նի՝ եթէ ալիտանիքն առաջնոց գտանիցի, կմ խոստան, այլոց ստացող մերձեա ընտրող լինիցի, կամ յումեք առեալ իշխանութին:

Մերոպէին յաւերժաւորած նըրէին հեծութեն՝ նորին հոգւոյն, առ նոյն տէրն մաղքետաց բանի:

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱՅ:

# ԲԱՆ. ԼԲ.

ա. Իսկ արդ՝ ես յետնեալս [1] ՚ի նախադրութեանց արժանաւորաց գրեալ ինձէն ընդ պարտաւորեալն պատժոց, հայցեմ զողորմութի ընդ ամենեցուն մաղթանաց: Ընդ նկունս և անհամարձակս, ընդ տկարսն և փոքրկունս, ընդ ընկեցիկսն և արհամարհեալս, ընդ տարադրեալսն և առ քեզ դարձեալս, [2] ընդ երկուացեալսն և չճշմարտեալս, ընդ կործանեալսն և յարուցեալս, ընդ ընկճեալսն և հաստատեալս, ընդ գլորեալսն և կանգնեցեալս, ընդ մերժեալսն և ընկալեալս, ընդ ատեցեալսն և կոչեցեալս, [3] ընդ ապշեալսն և զգաստացեալս, ընդ անառակեալսն և զսպեալս, ընդ հեռացեալսն և մերձեցեալս, ընդ հերքեալսն և սիրեցեալս, ընդ պատկառեալսն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալսն և խնդամտեալս: [4] Այլ ես պատմեմ ստամոք զարձեալ՝ ոչ զմեղսն երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանաւն, որ [5] առ ժողովուրդն նախնի, և կամ տանն յակոբու զանօրէնութիս նորա, այլ իմոյս ժամանեցից յայտնութե. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յարելով, ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւ, ըստ սաղմոսողին. որպէս զի յանձնառական յայսմ համայնապատում խոստովանութեանս՝ [6] ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն խսպառ որքեցայց՝ օրհնեալ հրամանաւ Տերդ:

բ. Իսկ արդ՝ կրկնելով ծունր բարերարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զ՚ի մահ

գլորմամբն ցուցից կերպարան. որ ՚ի հող խոնարհեալ
մածեալ ընդ երկրի. և ընդ անցաւորս այս կենցաղ
կորստեան՝ անասնական գետնաքարշութե. սոցին սա-
հեցմամբ՝ կամօք բևեռեցայ: Այլ ՚ի քեզ տէր յե-
ցեալ՝ իբր 7 ՚ի հաստատուն կենաց գաւազան՝ ՚ի յար-
մատոյն դաւթի ընձիւղեալ մարմնով՝ անճառ շաղ-
կապմամբ յանեղ ա͞ծութիդ, կանգնեցայց անդրէն
կիսայար՝ պատկառեալ ՚ի քոյդ երախտեաց՝ ՚ի վայր
կորացեալ դիմօք, աչք ՚ի բարձունս յառեալ աղօ-
թագին տեսութե՛ ՚ի քեզ՝ 8 մերձ ՚ի հեծութե, բնա-
ւին ողորմութե, բոլորովին քաղցրութե, գլխ՛ լու-
սոյս արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի
մեծիդ վերընծայեցից: Ձեր ամենաստատ ամենաւաղ
երկայնմտութե՛ քո դանդաղացուցչի, միայն դու ՚ի
յամենայնի սահման փրկութե, ա͞ծ բոլորից, անճառ
մեծութե, անբովանդակելի բնութի, անքննելի իմաստու-
թե, հզօր զօրութե, կարող բարերարութե, անպա-
կաս լրութե, անճառ ժառանգութե, 9 վայելչական
վիճակ, առատ պատրաստութե, անսասանելի իշխա-
նութե, անճառելի տուրք, անձկալի ձիր, բաղձալի
բերկրութե, անտրտում հանգիստ, անտարակոյս դիւտ,
անսպառ կենաց, անծախելի ստացուած, անփո-
խանորդելի բարձրութե, անհնարութեան բժիշկ, ան-
սասանելի հաստատութե: Դարձուցիչ մոլորելոց,
գտիչ կորուսելոց, յոյս անյուսալելոց, լոյս խաւարե-
լոց, քաւիչ մեղուցելոց, ծածկարանող փախուցելոց,
անզօրօրիչ խռովեցելոց, փրկութիդ մահացելոց, առ-
ձակիչդ կապելոց, ազատիչդ մատնելոց, պատսպա-
րանող սահեցելոց, վերստեղծիցդ դայթագղելոց, եր-
կայնմտութե տարակուսելոց: Զլոյս տեսակ, ցնծու-
թե ցոյցք, օրհնութե անձրև, հոգի երեւոյց, զօրու-
թե դիմաց, հովանի գլխոյ, շարժարան շրթանց, 10
աղբերակն բանի, կառավար անձին, բարձուռն բազ-
կի, ձգուածն ձեռին, երանաստանական սրտի: Նաւանի
անուսն, մերձաւոր ձայն, կցորդութե հարազատ, խնա-
մածութի հայրենի, խոստովանեալ անուսն, պաշտե-
ցեալ պատկեր, անպարագրելի տիպ, երկրպագեալ
տէրութե, բարերանեալ յիշատակ, խնդութե մուտք,
անվրէպ շաւիղ, փառաց դուռն, ճշմարտութե ճա

նապարհ, երկնաձեւ սանդուղք։ Եւ այլ բազմու-
թի բանից գովեստից 11 անհամար կարգաց՝ և տանց
անբաւից, զոր ոչ բերէ բերան երկրածին, և ոչ տա-
նի գործի մարմնեղէն, և ոչ կշռեն իղձք հոգե-
ղէնք։

Դ. Առ քեզ հայի ա՛մ ակն տեսողի՝ ա՛ծդ ամենայ-
նի. Նայեաց ՚ի պաղատանս հառաչման ձայնի քոյոց
ծառայից, և թէ յաղախնեաց ոք աղաչեսցէ։ Եւ
ընկալ զցօղ ողբերգութեան լալոյ արտասուաց աչացս
ցանկասիրի՝ յանարատ սուս մարդեղութեան քոյ՝ Ք՛ս,
և 12 օրինակաւ խորհրդոյ հերաց կնոջն յանցաւորի՝
զառ քեզ դարձն և զդաւանութի. և համբուրիւ
շրթանցս առ ճաշակ փրկութեան կենացդ հաղորդութե՛
համաշնչապէս զանքակ միութի. և զնոյն գթութի
նորին ողորմութեա՛ ընկալեալ ՚ի քէն՝ բարերար, 13
դրպաւակամնեսցես զմեծդ պարգև՝ ընդ փոքու հաւա-
տոցս. և ՚ի ձեռն գթութեան սիրոյ քոյ 14 առ քո անձ-
կալի անունդ խոստովանեալ ծառայիս, դարձցին
ձմերունք հողմոյն խստութեան ՚ի յօդ հանդարտութե.
և մրրկին սաստկութի՝ ՚ի սիկ ախորժութեան. և կար-
ծիք երկիւղին՝ ՚ի մեծ վստահութի. և պատուհաս
պատժոցն՝ յերանութեան պատահումն. և վտանգք
թախծանացն՝ ՚ի հոգևոր խրախճանութի. և ալէկո-
ծութի ծփանացն՝ ՚ի խոր խաղաղութի. և 15 ղեկացն
թևարկմունք՝ յանքոյթ նաւահանգիստն. և բերք
բեռանցս մեղաց՝ փոխարկեսցին ՚ի թռչակ շնորհաց։
Եւ յայսքանեացս ամենից բիւրուց բարութեցս ՚ի
քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ և խոս-
տովանեալ. ամաչեսցէ բանսարկուն չարեաց՝ հեր-
քեալ և հալածեցեալ. ունայնասցին մուրհակք մե-
ղացս. 16 խզեսցին խայթքն. որոշեսցին որոգայթքն.
կապտեսցին կապանքն. վանեսցի վիհն. վերասցին
վնասքն. պարսեսցին պատրանքն. ջրեսցին մեղքն.
պատառեսցին պարտիքն. խորտակեսցի լուծն. 17
քակտեսցին քեղիքն։ Եւ ընդ մառայլ մթութեան չա-
րեացն յանցանաց, և դիւացն բանակաց պաշարո-
ղաց՝ 18 արև փառաց քոց ժամանեսցէ՝ կեցուցանել
փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, ՚ի դիմաց
և ՚ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ

դարնայնոյ ընդ անձնկալութեան սպառողացն քումդ
երևման ։ Զի դու ես բարերար առ ամենեսին, և
հնարաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն զկեանս
կամիս, և զփրկութիւն բաղձաս ։

Է. Ո՜վ ամենապարգև ձեռն յմի քմի, և առ իս
դարձցիս կարկառմամբ շնորհի աջոյդ քոյ ոջյ ընա-
կեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութենէ սրտէ
սիրոյ սենեկիս. և 19 անեղծական քո նկարագիր՝ նշ-
խար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչ-
ման՝ ընդ իս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ 'ի
մատեան յաւիտեան՝ կտակաւդ կենաց՝ հոգւոյդ
աւետեաց՝ երկնից յօրինողիդ ։ Նա 20 քեզ միայնոյ
պատճառիդ, և միոյդ 'ի միոյ պատճառէ, և ունո-
ղիդ զպատճառ միոյ, երրեակ անձնաւորութեան և
միոյ ածութեանդ վայել են փառք յերկնաւորացն
վեհից, 'ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն ։

---

(1) 'Ի Նախադրութեան աղօթամատեանս ։ Եւ յետնեալս 'ի նախ եդեալ արժա-
նաւոր և զմեծի կարգաց, այսինքն 'ի հեզութենէ. 'ի խոնարհութենէ,
'ի ճշմարտութենէ, ևն. զոր նախ դասեաց քան զիւրաքանչիւր ներգոր-
ծութիւնս ։ Կամ, յետնեալս յառաւելութեանց անձանց՝ զոր կոչեաց առա-
նի, որով, և զատն ։ Ցոյցանելով յետնեալ զոր իմ առէ, և անձամբ
ընդ աղաւաղուածս համարեալ, հայցեմ զորպիսութենէ ընդ աղօթիցա-
մենեցուն նոցա, կամ ըստ օրինակի աղօթից նոցա ։ Ընդ նկատս, ընդ
երկչոտան, ընդ տկարս, ընդ արհամարհեալս. ընդ փութաջանեալն, ընդ
այնոսիկ որք նախ մեղօք ստացեալն 'ի քէն, և առաջ զգլխաւորս գործեան ։
Ըստ այսմ խնամոյն և յաջորդքն մինչև 'ի Ա. Ա. եւ ։

(2) Ընդ Երկնայնեալն, և ճշմարտեալս ։ Ընդ առաքինութեանն նախ 'ի
փրկութենէ, կամ 'ի սրբութենէ հաւատոյ, և առաջ անմերկասցեալն
յուսով, կամ հաւատով ։

(3) Ընդ աղչեալն ։ 3 օրին. ընդ աղաղակեալն, բայց առաւելինն պահէ
զմխիթարութեան բանին. այսինքն ընդ թմբրեալն և զգաստացեալս; ընդ
անզգայացեալն մեղօք կամ ապախտութեան ։ զարթեալս, այլ օրին. զարթեցեալս ։

(4) Այլ են զարմէ ։ 2 օրին. Այլ են ։

(5) Այս ծողովոյդ նախկին ։ 4 օրին. նախնի ։

(6) Ունկնդրացեալ կրթուածին ։ Այժմ կամաւոր հանդերձ խոստովանել՝
նախէն առանձին, զի մի կարօտասցուք երկրորդ անդամ խոստովանել 'ի սպե-
ղանական առանձին ։

(7) 'Ի հաստատուն կենաց ։ Եւ իբր սկսեալն զխոստովանս՝ յերկրաւոր
սիրոյ և 'ի մեղս անկեալ մածեալ կամ ։ Բայց առհա 'ի քեզ իբրև 'ի զա-
ւազան կենաց հաստատեալ յեցեալ ամրանամ, որ յարմարոյն յետնեալ
բարձեալ, այլ յանձնեալ ածութեանդ շաղկապեալ, ասելով ես կենաց. առ
որ սրբեալ 'ի քեզ՝ լամ և հայցեմ կանգնել անդրէն կիսոյր, կիրառել
մարմնոյն 'ի մեղս ունկեալ. այսինքն կարօտեալ գթոյդ առ սուրբ, բայց

զուգս միայն 'ի վերայ ձգեալ կամ, [illegible] . [illegible] ոչ [illegible]
[illegible], [illegible] ։

(8) Մերձ ի հեծումն ։ 4 օրին . Ջերմ ։ Այսպէս եմ ասել՝ ցուցանողին հայեցմանց 'ի վերայ նշանակին առ քեզ՝ որ մերձ են 'ի համաստեղութիւն [illegible] ։ Զ [illegible] . [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible], եւն ։

(9) Վայելչական վիճակ ։ Ըստ որում Այծ է անճառ ծառանգութիւն մեր, նոյն և բարձին հողաւոյ՝ մի միայն վայելչութեան բանաւորութեան ըստ [illegible] .
Տէր բարձին ժառանգութեան եղից ։

(10) Աղջամն բախտ ։ Ներգործիչ խօսից, շարժիչ ըմբռնի ։ [illegible], [illegible] կամ [illegible] . [illegible] թուէ՝ [illegible], [illegible], [illegible], եւն . [illegible] ոչ նշանակէ [illegible]
հոգի ։

(11) Անհամար [illegible] ։ Կարգեալ կամ [illegible] անուանց . և [illegible], [illegible] կամ [illegible] . [illegible] ։ Անհամար [illegible] և [illegible] . [illegible] ոչ [illegible] . և ոչ [illegible], և ոչ [illegible]
[illegible] ։

(12) Օրինական [illegible] ։ Ընկալ [illegible] և [illegible] . [illegible], և [illegible] [illegible], և [illegible] 'ի [illegible] ։ [illegible] 'ի [illegible] 'ի [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] 'ի [illegible], մի
հոգի է ։

(13) Գրաւական [illegible] ։ [illegible] ։ կամ [illegible]
[illegible] ։

(14) Ար [illegible] ։ Վասն [illegible] 'ի [illegible], կամ [illegible] ։ Այսր՝ 'ի [illegible] և 'ի [illegible], [illegible] 'ի [illegible], 'ի [illegible] և [illegible] ։ [illegible], [illegible] և [illegible]
[illegible] 'ի [illegible] ։

(15) Խուզեացն [illegible] ։ 4 օրին . և հինգ [illegible] . [illegible] . և [illegible] մի է, [illegible] և [illegible], [illegible] . և [illegible], [illegible] և [illegible], [illegible], [illegible], [illegible]
[illegible] եւն ։

(16) Քակնեացն [illegible] ։ մի օրին . [illegible] ։ Հինգ [illegible] . [illegible] որ [illegible] է ։ Սակայն 'ի [illegible] Փիլոնի և [illegible], [illegible] նշանակէ [illegible], կամ [illegible] ։ Ուստի [illegible] է, [illegible], կամ [illegible] . [illegible], [illegible], [illegible], [illegible]
[illegible], և [illegible] 'ի [illegible] ։

(17) Արն [illegible] ։ Փոխանակ [illegible] և [illegible] և [illegible] 'ի [illegible]

[illegible] 'ի [illegible], և [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible]։

(18) [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ և [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] է, և [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]։

(19) [illegible] [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible]. [illegible] [illegible] է [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] ոչ [illegible] [illegible]։ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible] է [illegible], 'ի [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible]. և [illegible] է [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]` ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] 'ի [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] 'ի [illegible] և [illegible]։ [illegible] [illegible] [illegible] է` [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] և [illegible] [illegible]. (Հարցմանց. երես. 105.) [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] է. [illegible]` 'ի [illegible], [illegible] [illegible]. [illegible]` 'ի [illegible], [illegible] ոչ [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] և [illegible] [illegible]։ (Ագաթանգեղ. եր. 153.) [illegible]. * [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] 'ի [illegible]` 'ի [illegible]։ || [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible]` [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]` ոչ [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] և [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]` [illegible] [illegible], և [illegible]` [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible]` [illegible] [illegible]. [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] է [illegible]. [illegible] է [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] է [illegible]. է [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] ոչ [illegible] [illegible]։ [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]` [illegible] [illegible] [illegible], և [illegible]` [illegible] [illegible]։ Տես և 'ի բանին ԻԸ. ԼԾ. 51։ Ցուցանէ բանքն` [illegible] [illegible] 'ի բանին ԻԸ. ԼԾ. 23։

Մեղաւորին յանցուցած ներքին հեծութիւն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԼԴ.

Ա. Արդ՝ զյարմարութիւն պաշտաման բանիս՝ ՚ի
խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ՝ ծրհ-
նեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազգեա-
տիցն զուգամամնապէս՝ խառնեսցես ՚ի յանուշու-
թիւն կազմութեան իւղոյն մարիամու՝ կնոջ բարեպաշ-
տի ։ Զոր հաւասարեալ նոյնութ̃ ընդ երջանիկ պտուա-
կացն՝ ՚ի քէն ընկալելոցն՝ յաւէտաշնորհաշ յարգանօք,
պարարեսցես մեծապէս իմովս բանիւ նուաստիւ, ըն-
կալեալ յանհաս և ՚ի բարեբանեալդ գլուխ բարձ-
րելոյդ, անկշտամբելի ՚ի բամբասանաց սաղմոսին,
մի օծցէ զտերև ոստոց զագաթան՝ իւղ մեղաւորին ։
Այլ արասցես զօրանալ կրկին յաճախութ̃՝ բուր-
ման խոստովանութեան այսր մատենի՝ ՚ի բազումս ա-
դեալ, համասփիւռ ամենատարած և աշխարհալիր
տանն տեսակաւ, ըստ օրինակի համեմատութեան նո-
ցայն յիշատակի. քանզի դու նոյն տէր զգաստացու-
ցիչ՝ նախնի չարախորհից կանանց մեղաւորաց ։ 2 Որոց
առաւելեալ զմարգարէին կերպարան՝ քումդ ճշմար-
տատիպ պատկերի յեղանակեցեր, անտուստ առ առ-
ոյն անճառ ներգործութ̃՝ ՚ի յիս վերաբերեալ զծայ-
րագոյն շնորհին կատարումն ։ Ընդ անասնական
գարշոյն կերակրոյ, զբազմահամբաւ պտուղ ցորե-
նոյդ՝ կենացդ հացի. ընդ ապականացու արծաթոյն,
զարքունականդ պատկեր. ընդ յիմարարար թմբրու-
թեան գինւոյն, զբաժակդ արեան արարչիդ. ընդ իւ-
ղոյն առելոյ ՚ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն,
զօծումն շնորհին առ իս դարձելոյ. ընդ զերծման
գլխաշուք կտաւոյն, զանապականութեան վերարկուն. 3
տպարանջանին պճնութ̃, զթուիչս բարեմասնութեան,
օրինօքն և աւետարանաւն՝ համդերձ գործնական
առաքինութ̃ն. 4 ընդ ունկանն գնդի՝ վայելչականն
զարդու, զանստուեր յիշատակ տէրունականդ ձայ-
նի. 5 ընդ քայլս պերճութեան լանջացն, զյուշնա-

հաւատք աւանդօք ուղղուն քրիստոնէից ընծայ քաղց-րութեան։

Է. Բայց զի՞ է յայտնի ինձ պարծել, և ոչ վերըս-տին ՚ի սոյն պատկառել։ Ուստի յայլ օրինակ փո-խեալ զմատեան մաղթանաց այսր ողբերգութեան, որ ինչ ինձ է յարմարաւոր, ամենայնիւ հատուցից ըղ-պատիժ պարտուցս իմոց մեղանաց, [6] ՚ի մարգարէիցն տառից բերեալ համառօտս՝ ՚ի սոյն յարկ մուծից սաստիկ դատապարտ. ընդ ողբոց նոցին ընծայեալ, քան թէ ընդ բերկրութեան նոցա պարել. յորս հառա-չանս, ձայնս հեծութեան, բողոքս բարկութեան, նախա-տինս խորտակման, լալումն կարևոր։ Ուստի մեծիդ-ա̃յ գթութեան ամենաժաման՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատրութի. առ որս՝ զզջմունս, խոստովանու-թիս, աւետիս, պարգևս, լուսոյ երևմունս, խրա-խոյս ա̃ծայինս, փառաց ժառանգութիս, հրաշից յայտնութիս, աքանչելեաց տեսութիս։ Չորոց ոմանք յոյս ընձեռեն, և ոմանք վհատութիս բազում մա-տուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորստեանն մերձակեցայ։ Զի եթէ [7] զգեստ ա̃յ զվարագուրին պատրուակ ասաց եզեկիէլ, յորում արար ժողո-վուրդն կուռս կարկատունս, որով պոռնկել ասէ՝ ՚ի նոսա. իսկ ո՞րքան պատիժ անմաքրութեանս եղիցի՝ զա̃ծ զգեցողիս ներքոյ և արտաքոյ։ Զարմանամ, թէ զիա՞րդ ոչ կիզում. հիանամ, թէ ի՞բր ոչ այրիմ. ափշիմ, թէ ո՞րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ, չարչարեալ, ջախեալ, մանրեալ, խորտակեալ, կըտ-րեալ, բաժանեալ [8] ՚ի յօրինակէ ժանեաց կորու-չին, ըստ գրոյն։ Ուստի այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ յիշատակի՝ փրկութեան յուսոյ, զի ք̃սեան աւե-տարանն՝ կեանս է ամենեցուն, [9] ՚ի կերպարանաց պատ-կերի բանին ծանուցեալ։ Որով առ մեղանաց դարձն. առ պարտիմն՝ շնորհն. առ եղծումն՝ նորոգութիւն. առ անօրէնութիւն՝ քաւութիւն. առ վէրն՝ բժշկու-թիւն. առ վտանգն՝ անդորրութիւն. առ պատիժն՝ ներումն. [10] առ պատերազմն՝ հանդարտանալն. [11] առ հուրն՝ անձրևն. առ պատուհասն՝ պարգևն. [12] առ ակնկալութի սատակմանն՝ ձիրն. [13] առ գործա-րան մահուն՝ կենացն ազատութի։

Է. Եւ զի՞նչ է ինձ [14] զայսքանեաց յիշմանց 'ի թիւ-
արկանել, և ոչ զանձաւելինն աստանօր դասել :
Յիշատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդւոյն կցորդութե.
յանուն միածնին՝ առ հայրն ընտանութիւն. ասցին
անկնարկութք՝ ընդ հոգւոյն հաղորդութե : Խաչին
փրկանք. բանին սփոփութ. [15] բարուք վարձ կամացս՝
առ կշռութ գիտողին. աւազանն կենդանարար՝ հաշ-
տութեն միջնորդութ : Եւ այլք ամենայնք անթիւք
բարիք 'ի բարերարէն բարդեցեալք, [16] ազատք 'ի
հարկէ, արձակք 'ի լծոյ, իշխանականք՝ և ոչ իշխե-
ցեալք : Սոքիկ են՝ որ ինձ 'ի մէջ դատաստանութե
մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի
եթէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ աւրդեօք կորու-
սեալ էի իսկ և իսկ ըստ բանի երգողին : [17] Ո՛չ փոքր-
կութք որդւոյ՝ զհայր փառաւորեմ, ոչ նուաստութ
հոգւոյ՝ զորդի նախատեսեմ. համափառ ունիմ զե-
րեսեան՝ և նոյն արարչութք : Վանզի և 'ի դէմ
հոգւոյն սոյ՝ այս են աղաչանք, նախընծայ սկզբան
պատարագին՝ յորում դաւնդ երկնաւոր զենանի,
զայս աղօթեցի :

Աղօթք, որ նախ քան զպատարագն [18] Նարեկացւոյն :

Ը. Ամենակալ բարերար մարդասէր ա̃ծ բոլորից,
յօրինօղ երևութից և աներևութից, փըր-
կօղ և հաստատօղ, խնամօղ և խաղաղարար, հօր
հզօր հոգի, հայցեմք բազկատարած մաղթանաց դող-
մամբ հեծութե յանդիմման եղեալ քեզ ահաւորիդ :
Մատչիմք մեծաւ դողութք սաստիկ երկիւղիւ՝ մա-
տուցանել նախ զբանական զայս պատարագ՝ քում
անզննին զօրութեդ, իբր աթոռակցի փառակցի և
արարչակցի՝ հայրենի անկապուտ պատուոյդ, և քննո-
ղի ծածկութե խորոց խորհրդոց ամենակատար կա-
մաց հօրդ. եմմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կեն-
դանատուի և արարչի ամենայնի. [19] Ի ձեռն քո ծա-
նուցաւ մեզ երրեակ անձնաւորութիւն միամնական
ա̃ծութեդ, յորոց մի և դու ճանաչիս անհաս. Որ և,
և 'ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին

շառաւիղք՝ տեսանօղք անուանակոչեալք, զան-
ցեալսն և զգալեացսն, զեղեալսն և զոչ գոյացեալսն
20 անստուերաբար բարբառով բանի վերապատմե-
ցին ։ Ոգի այ քարոզեալ զքեզ Մովսէսի, 21 որ ՚ի
գնալն քո ՚ի վերայ ջրոցն՝ անպարագիր զօրութիւն,
ահեղ շրջարկութբ տածողականաւ՝ թևապարփակ
պաշտպանողօրէն՝ զթասիրեալ ՚ի ծնունդս նորոգս՝
զաւազանին խորհուրդ ծանուցեր ։ 22 Որ կերպա-
րան օրինակութե նախ քան զկատարուցանել զգործ-
մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր կա-
բօղ տիրապէս զառավանդակ բնութիս ամենից բնա-
ւից բոլորից գոյից ամենայն էից՝ յանէից ։ Եւ ստեղ-
ծանին 23 ՚ի նորոգումն յարութեան ամենայն եղեալքս
տու ՚ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ
կենցաղի, և օր առաջին՝ երկրին կենդանեաց ։ 24
Եւ եղ հնազանդեցաւ միութբ կամացն որպէս հօրն
իւրում, ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որ-
դի՝ մերովս կերպիւ ։ զքեզ աւետարանեաց ճշմարիտ
ած՝ հաւասար և համագոյ հօր իւր հզօրի, և զառ
՚ի քեզ հայհոյութիւն անքաւելի քարոզեաց, և 25 իբր
զածամարտիցն զքո հեստելոցն՝ չարաբանական բե-
րանս կարկեաց, և 26 զիւրն շնորհեաց՝ արդարն և
անարատն՝ գովքն ամենայնի ։ որ վասն մեղաց մերոց
մատնեցաւ ։ և յարեաւ վասն զմեզ արդարացուցա-
նելոյ ։ Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանու-
թի ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից ։
ամէն ։

Գուարճեալ երգեսցուք ՚ի նոյն կարգ բանի, 27 մինչև վերահասութե
լուսոյ հրաշալեօք յայտնեսցուք աղբեւր, աւետարանել վերջին
ողջերթին խաղաղութե ։

Ե. Աղաչեմք և աղերսեմք 28 արտասուալից հա-
ռաչմամբ յամենայն անձնէ՝ 29 զփառաւո-
րեալ արարչութիդ՝ անեղծ և անստեղծ՝ անժամա-
նակ հոգւոյդ գթածի ։ 30 որ բարեխօսդ ես վասն մեր
յանմռունչ հեծութիս առ ողորմածդ հայր ։ որ ըղ-
ձուրբսն պահես, և զմեղուցեալսն մաքրես՝ և տա-
ճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձ-

ընեալդ հօր ։ Արդ՝ աղաչեմ զմեզ յամ անմաքուր գործոց, որ ոչ է հաճոյ քում բնակութե. և մի չիջցիս առ 'ի մէնջ՝ լուսոյդ շնորհաց փայլմունք՝ 'ի տեսականացս աչաց իմաստից. վասն զի [31] դքեզ ուսաք միանալ 'ի մեզ 'ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց ։ Այլ քանզի մեղդ յերրորդութեդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի իւրոյ. իսկ դու ընկալցիս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս [32] ամենայն պատրաստութե 'ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոց դատապարտութե ընդունել զայս անմահացուցիչ մաննանայս կենաց նորոյ փրկութե ։ Այլ հալեսցի 'ի հրոյս յայսմանէ զայթագղութիս մեր, [33] որպէս մարգարէին կենդանախարոյկ կայծակամբն 'ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քաղցրեցի գթութի, որպէս որդւովդ տյ՝ հօր քաղցրութի. որ զանառակ որդին մերձեցոյց 'ի հայրենի ժառանգութին, և զպոռնիկսն յառաջեցոյց յերկնայլին արքայութին՝ արդարոցն երանութեան ։ Այո՛ այո՛ և ես մի եմ 'ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութե կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ քի սրբացեալս ։ Որ յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանիցի քո ածութիդ՝ ընդ հօր փառաւորեալ համապատուաբար 'ի մի կամս, և 'ի մի իշխանութի գովութե. զի քո է գթութի, և կարողութի, և մարդասիրութի, զօրութի, և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) 'Ի խոյզէնաց հոգւոյս ։ 'Ի պղտորց հոգւոյս ։ Զյորինուած զզղջական բանիցս առէ՝ զոր յոլորձից հոգւոյս քեզ նուիրեցի, ողորմածաբանակս, հաւատարապէս հաղորդելով ընդ նուէրս խաղաղականացն, խառնեսցես յանոյշ խունկն ծաղկանց նոր բուրեաղաղի, մարխամու կղեոզայ, կամ մարգարտենացուոյն, որ յառաջին մեղաւոր գոլով յետոյ զքեզ պաշտեաց ։ Յոր հաւատացեալ, արժեալ հաւատարեալ և ես նոյնաւրէն, նոքին նմանութեամբ ընդ երջանիկ պոռնկացն, մարգարէացուոյն և շնացեալ կնոջն, որք զզղջմամբն երջանիկք եղեն ։ Իբր զի որպէս զնոցա անուշից ծխումն հաճութեամբ ընկալար, նոյնպէս իմոյս նուաստ աղօթիւք զուարճասցիս. և ոչ յանկ գիմանեսցես բանից սաղմոսին, թէ իւղ մեղաւորի մի՛ օծցէ պղերն ոփոց, զհերս գլխոյ իմոյ ։ Այլ ապաւցես և զիմ աղօթից բուրումն ազնիւիլ և ատարանծիլ առ ամենեսին, ողջոյնհանէր, լռուցանելով զաղաղակս, փառս փեսայիս. որպէս տունն՝ որ օրհնեալ էր աշխարհէի, լի եղև 'ի հոտոյ

խաղոյն . ( յովհան . ժԶ . 3 : ) և որպէս [illegible] հրամայեցեր զարդարել ընդ աշխարհ, [illegible] և [illegible] արարեր : [illegible] դու նոյն [illegible] . վասն զի դու նոյն [illegible] . որ [illegible] և [illegible] կամաւոյն՝ [illegible], [illegible], և [illegible] . վասն որոյ և զիս կարօղ ես [illegible], և 'ի [illegible] [illegible] իմ :

(2) Որոյ [illegible] : Այնպէս [illegible] . ( [illegible] . 2 . ) և [illegible] 'ի [illegible] . ( [illegible] . 1 . 2 : ) [illegible] 'ի [illegible] ( [illegible] . 2 . 3 . ) [illegible] ( ժԼ . 9 . ) [illegible] ( [illegible] . 7 . ) [illegible] 'ի [illegible] : ( [illegible] . 12 : )

(3) Աշտարակն : [illegible] 'ի [illegible] . ( [illegible] . 11 . 12 . ) [illegible] :

(4) Ընդ [illegible] : 2 [illegible] :

(5) Ընդ [illegible] : 2 [illegible] . ( [illegible] . ) [illegible] :

(6) 'Ի [illegible] : 'Ի [illegible] :

(7) Զգետ [illegible] 'ի [illegible] . ( ժԼ . 16 : ) [illegible]

մանաւթեն, յորում ասէ. * Աւետ 'ի հանդերձից իմոց. || զոր նա վարդապետս մեկնէ 'ի վերայ վարդապետի առաջնորդին, կամ վարդապետի ուղղութեան, որով ած իսկն զգեստով ծածկեալ լինէր։ Իսկ եթէ ասէ՝ զայն վարդապետ կամ ընդ այնու վարդապետութեան առնելով խորագիտելութեանց կոչման կարգաւորութեան, կամ 'ի հանդերձս կարոյ, այսու ասանելով ասէ, ասար քանզի պատիւ կոյցէ անմարմնութեան իմոյ, զոծ զգեցողիս ներքոյ, 'ի ձեռն մարմնութեան. և արտաքոյ, 'ի ձեռն հաւատացութեան. կամ ներքոյ՝ ու խոսի կրօնաւորութեան, և արտաքոյ՝ կրօնաւորական զգեստով։

(8) 'Ի յօրինակէ ծանեաց հոգւոյն։ 'Ի նմանութեան ժամանակ կամ յօրինակական ժամանակ առաքելոյ, որք են բանութեան նորա. ըստ Գրոյն.
(Ա. որին. ԼԲ. 24.) * Քանիս զարմանաց առաքեցից։ ||

(9) 'Ի կերպարանաց պատփէրէ։ 'Ի հանդամանաց կամ յատուածէ բառաքս ուղղութեան. Ձանաւչի՝ թէ ձր առաքելութեան իմ կեանք է. որով առ Փիղիմոն՝ դարձի. որով առաքելութեան խոստացեալ լինի 'ի մերձանալն՝ զործն, ևն։

(10) Ա. պատփերակի. որով ցուցանի յետ դատաստանաց գեսանց կամ աշխարհի՝ հանդերձութեան լինելը. կամ զարդարելն 'ի դատաստանաց և 'ի հանկարծակութեան. որպէս 'ի գերեզմանի մնանութեանն՝ յարժամ արդարոց դատաստանաց կամելը, քո հանդերձեալց։

(11) Ա. հարցն անհրնն։ Ա. հարցն փոփոխմանց՝ անձրև այցելութեան. կամ փոխանակ հրոյ՝ անձրև. որպէս որդւոցն զեբեդեայ հուր յերկնից իջուցանել ասէին, և ձա զանձրև նորոգութեան խնդրեյ։

(12) Ա. ոփինարոսթէ սոփարնան՝ ջրին։ Որպէս յանկարծելն զձա՝ փոխանակ սառնամանիցն, որում արժանի եղեն ընկերնօղացն, ձեր բարկութեան եղաց յանկարծ մտաքումն։

(13) Ա. փործոփան ձանոան. որպէս առաջադրն 'ի խաւսի անդ զորքայութեան խոստացման։

(14) Ջայոփանեայ յեղանակ։ Ընդէր զմնաւսորպ հանգստարանն բարերան ինչ մեծարանելով 'ի թիւս ծերոց. և ոչ զայլ անճառելեան՝ զգեստարանս և զմծայնս զնեմ առաւօտ. որք են, յեղափոխս հօրն, հայր մեր կոչելոյն զմծ՝ կցորդ լինել որդւոյն միածնի։ յանուն փոխնի, որոյ ինչ կամ փրկութեանց անուանելոյն մեր՝ առ հայրն ընտանի գոլ։ սոյնն ափափեւթէ, հաճութեան հօր և որդւոյն՝ մնանանալից գոլ հոգւոյն։ Իսկ 'ի վերայ այսոցիկ՝ խաւսին փրկագործութեան. Բանն ափոփաթէ, առաքելական և ամենայն ած այլն բանից ափափանքն և միմիթարութեան. ևն։

(15) Բարբարոս ձայն։ Մի յանձնաւէր զործոյն ինչ այս է, զի բարձի հաստատութիւն առնէ յօժարութեան կամաց, թէ և զործով ոչ կարիցէ կատարել, կամ զործն փոքր իցէ։ կամ թէ այնուհետև կամաց վարձս առեյ՝ որ որդւէն խոկ պատրաստական էր ինչ. և զայս առնէ ած ըստ զատաման իւրոյ, որ զխառէ զմիրատ։

(16) Աղափ 'Ի հարկէ։ Անձնաւէր պատրաստ ինչ ազատութեան շնորհեմ մեզ, և ոչ բանադատէ ած 'ի սառ, կամ ընդունօղքն՝ յառնել։ Աղէփափ 'Ի չփոյ. ազատաք 'ի լծոյ պատրանաց. զի այն բարեկէ՝ ոչ ընդհանուր մարդկութեան, և ոչ խորաքանչիւրոց առանձինն պատրաստականք են։ Իշխանական. զերբնականք են, զերադոյն քան զբարյման բնութեան. կամ, իշխանութեան առաւելոյք նոր և զինուորք և ոռամ կամի. Նա ոչ Իշխնեցէառյց. 'Ի ներքոյ կարողութեան բնութեան, կամ ժամանակի, և տեղւոյ և եղանակի։

(17) Ո՛ւ ճափերկաւթէ։ Ջայս յաւելու 'ի նախադրեալ բանսն, իբր անձնաւէր, կամ յառաւելզադան վասն յաղթող աղօթիցն՝ որ առ հայրն էր. որպէս թէ ասել. յայլ աղօթս առ հայր աղօթելով, և կամ առ

[illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

(20) [illegible]

(21) [illegible]

(22) [illegible]

կէր ըՀոգեւոր ծնունդս աստուածային . մի զի որպէս ընդ Ջրովլին ծածկեալ կայլին Թանձր ասպերք , և անբաւելք աստղատունն բազմազգեաց , նոյնպէս ընդ Ջրով մկրտութեան՝ Հոգեւոր ծնունդքն : Երկրորդ , զի որպէս կարող Հոգին նա ստեղծանել զայն բնութիւնս յոչնչէ , այսպէս և ըՀոգեւոր ծնունդս՝ յանծնունդ Ջրոյն :

(23) 'Ի նորոգումն յարութեան : Հայր 'ի բանին ( սաղմ . ձէ . 30 . ) * Առաքեսցես զհոգի քո . և նորոգեսցես զերեսս երկրի : || քանզի նորոգումն ասէ՝ յարութեան ժամ եղելոյն . մարդկան՝ յառնելով , բայց երկնիք և երկիր նորոգելով , 'ի վերջին աւուր կենդանութեան , որ է օր առաջին եւթներ կենդանեաց . զի անմահ յարուցելոց աշխարհն՝ յայնժամ աւուր սկսանի . և այնպէս է օր առաջին , զի ոչ ունի զերեկորդ և զերրորդ . այլ միշտ մնայ օր մի :

(24) Փեսայ հնազանդեցաւ : Որդին ամենայն քեզ հնազանդեալ եղև , մինչ [illegible] , միաբանութեամբ կամացն՝ այնպէս որպէս հօրն իւրում , մինչև [illegible] . զայս հնազանդութեան ասէ [illegible] . զի յատուկ հնազանդութեան [illegible] զամենայն [illegible] , և [illegible] . բայց որդին [illegible] [illegible] , անմարթ է [illegible] հնազանդեալ հօրն , բայց եթէ կարծի [illegible]՝ [illegible] հաճութեան 'ի նոյն գործ : Զայս ասելն այսպէս պարտ է [illegible] , և ոչ [illegible] 'ի յանձնորդն [illegible] . մինչև [illegible] [illegible] . զի ոչ միայն [illegible] բանիւն [illegible] , այլև [illegible] այնպէս [illegible] , և նոյնպէս [illegible] և միայն Լուսաւորչացն 'ի [illegible] : Իսկ [illegible] [illegible] Հոգին՝ նշանակէ [illegible] , կամ զի [illegible] 'ի նոյն հօրէ յառաջ գալն , Թէպէտ այլ և այլ օրինակաւ :

(25) Իբր զբծամարդոյն զգօ հեշտեցելոյն : 2 օրին . Իբր զբծամարդոյ զի փեսայ հեշտեցելոյն , կամ հեշտեցեցելոյն . բայց յօրինակ Լուսաւորչացւոյն , զի փեսն : Զ [illegible] [illegible] [illegible] 'ի քեն՝ [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] . զի [illegible] [illegible] [illegible] հակառակէին , և [illegible] զօրութեն ընծայէին : ( մատթ . ժէ . 25 . )

(26) Զիւրն ընորհեաց : Ոմանք միկնեն՝ զիւր բարձրան շնորհեաց . բայց այս [illegible] է 'ի կարգէ բանին . այլ [illegible] , Թէ զառ 'ի քեզ հայհոյութիւնն [illegible] , բայց զառ [illegible] հայհոյութեան՝ ներեաց :

(27) Մինչև վախճանեն լուսոյ : Յօրինակն Լուսաւորչացւոյն զնի . մինչև վերահասեցաւ լուսոյն հրաշալիս աղբեալ յայտնեաց : Իմաստ բանիս է . [illegible] [illegible] զեկայր [illegible] , որ մինչև ցարդ օրհնութիւն էր և [illegible] , [illegible] զայն 'ի [illegible] . մինչև ծագումն լուսոյ Հոգւոյն [illegible] [illegible] 'ի միտս իմ որպէս [illegible] լուսոյն [illegible] ժամու : Կամ լոյս Լուսաւորչացւոյն , մինչև լոյս զօրութեանց՝ զոր 'ի վեր [illegible] [illegible] [illegible] , առ իս հասեալ : Որով [illegible] 'ի Հոգւոյն կրկին [illegible]՝ զոր [illegible] [illegible] 'ի [illegible] , և [illegible] շնորհեաց նոցա [illegible] ըՀոգին : ( յովհան . ի . 19 . 20 . 21 . 22 : ) Իսկ եթէ վախճանեն զնիցի , [illegible] . մինչև համբարձմանն [illegible] լուսոյ [illegible] . զի որպէս [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] լուսոյն , [illegible] [illegible] 'ի [illegible] Հոգւոյն [illegible] :

(28) Արփատատանից : մի օրին . արփօրանից :

(29) Զփառատորեալ արարչութեմբ : այսինքն [illegible] : մի օրին . ըՓառաւորեալ : յօրինակ Լուսաւորչացւոյն , և յայլ , ըՓառաւորելն :

(30) Որ բարեխօս ես : Պատճառ [illegible] [illegible] , այսինքն որ [illegible] [illegible] [illegible] առ Հայր՝ [illegible] [illegible] , որ անմեկնելի հեծութեամբ : Այսպէս բացայայտէ նա [illegible] [illegible] [illegible] [illegible] երեսաց . ( երեսս 19 . ) * 'Ի հեծութեամբ աղօթելով քո՝ Հոգին [illegible] [illegible]

քեզ պատիւ օրհնութեան՝ անպատրաստ անձամբ։ || Իսկ յասել՝ առ որոշ-ման հայր, զ[illegible] ոչ զնի փոխանակ [illegible] գերապատուութեան, որպէս թէ՝ առ հայր քո. այլ փոխանակ ցուցականի՝ որ զմերձաւորն [illegible] ցուցանէ, որպէս թէ՝ առ այդ հայրդ. յայս [illegible] բազում [illegible] զնէ նա վարդապետս. որպէս և աստ [illegible]. Երկնաւոր հօր.... մեր [illegible], և [illegible]։ Սոյնպէս [illegible]. 2. առ Նոյն հոգի խօսելով զնէ. որդւոյդ ծնծղի. այսինքն այդ որդւոյդ՝ որ քեզ մերձ է, են։

(31) Զ[illegible] ։ 'Ի բազում բանից մի զօրս [illegible] քեզ աղօթելք և մաքուր վարուք. որպէս և այն. " Որ մերձենայ 'ի տէր, մի հոգի են։ || (Ա. կորնթ. Զ. 17։)

(32) Ամենայն պարգևաբուխ։ մի օրէն. ամենապարգևաբուխ։

(33) Որդիս [illegible]։ Որպէս անմաքրութեան չքթանցն [illegible] [illegible], [illegible]՝ որ զկենդանի չքթանս [illegible]. կամ այնպէս այլ[illegible]՝ որ զկենդանութեան չքթանցն [illegible]։ Նոյնպէս [illegible] 'ի [illegible]՝ [illegible] հրով մի [illegible], կամ [illegible] քնի։ Այս այս։ Աղօթել մի [illegible] և [illegible] 'ի յան-[illegible], և [illegible] [illegible] մեծի. [illegible] և [illegible]. [illegible] [illegible], յայս [illegible], [illegible], [illegible] ժամ, միշտ, կամ բովանդակապէս [illegible] [illegible] քո [illegible] են։

---

Մերոյին յաւելուած նրկին հեծութեան՝ Նորին հոգւոյն, առ Նորին աղերս ժողովանոյ բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա՛յ։

# ԻՐՆ. ԼԴ.

ա. Որդ՝ [1] առ այսորիկ Թշուառացեալ չնչոյս իմոյ իղձք, և առ քեզ դաւանութիւք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն՝ ա՛ծ, զոր 'ի նախնին Ճառեալ՝ և յերկրորդումս ցուցից։ Իսկ [2] յանդիմանութիւն գրաբանականս՝ 'ի կոյսս բազմութեան ազգաց, և Թարգմանութիւն՝ ժողովրդոց, զայս արգահատութիւն մաղթողականս Նուիրեցի, զոր ներբ-նաշարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւք։

'Ի հանդիսարանս խօսից արինի՝ բանս ժողովանոյ, որով հոգին իմ [3] հաղորդեալ՝ հասանէ յօգնականութիւն։

բ. Աղաչեմ զանփոփոխելի տէրութիւն ամենազօր հօգւոյդ հզօրի, առաքեա զցօղ քաղցրութեան քո, և [4] բարեգործեա 'ի յանձին՝ և յիշխանականն ազդման զգայութեան զամենայնից շնորհս բազմապարգև քո ողորմութեան։ Այլ հերկեա զբանական անդաստա-

տան մարմնեղէն կարծրացեալ սրտիս՝ յընդունակութիւն արգասեաց հոգւոր սերմանց ։ Բուռն ամենիմաստ էութեանդ խոստովանիմք զամենայն պարգեւս 'ի մեզ ծաղկեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս. լցուցանես մարգարէս. ուսուցանես վարդապետս. բարբառեցուցանես համերս, և բանաս զփակեալ ականջս խլից. որպէս ազգակիցն քո՝ էակիցն հօր՝ անդրանիկն որդի՝ քոյին գործակցութ͞ե ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ՝ ա͞ծ հաւասարակից իսկութեանդ հօր ։ Շնորհեա և ինձ մեղաւորիս խօսել համարձակութ͞ե զկենդանարար խորհուրդ աւետեաց աւետարանիդ, հետեւել առագաթռիչ ընթացիւք մտաց՝ [5] ընդ անհուն ասպարէզս քոյինաշունչ կտակարանաց ։ Այլ 'ի մտանել իմ 'ի գլուխ հանդիսի՝ մեկնութեան բանի՝ նախաժամանեացէ առ իս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն և զպիտանիսն և զհաճոյսն քո՝ 'ի ժամանակի, 'ի փառս և 'ի գովեստ ա͞ծութեանդ քո, և 'ի լրութիւն շինութ͞ե կաթուղիկէ եկեղեցւոյ ։ Այլ կարկառեա 'ի վերայ իմ զամենամերձ աջ քո. և զօրացո զիս շնորհօք գթութեանդ քո ։ Փարատեա 'ի մտաց իմոց զմէգ մթութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին զխաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստիցս՝ 'ի կենցաղոյս երկրէ 'ի բարձունս ։ Լուսաւորեա [6] 'ի յիս վերստին զծագումն անստուեր ճրագիդ գիտութեան ա͞ծութ͞ե քոյ՝ հզօր, արժանի լինել՝ առնել և ուսուցանել յօրինակ բարեաց ա͞ծասէր լսողաց ։ Այլ քեզ ամենայն փառք՝ յամենայնի, ընդ հօր ամենակալի, և ընդ որդւոյդ միածնի և բարերարի, այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն ։ Նաև զհաւատոյ սահման բանի՝ ընտրութ͞ե շնորհի՝ կենաց կանոնի [7] առ համագոյ ս͞բ երրորդութեան՝ զայս վարդապետեցի, զոր շաւիղ կարգիդ վերանկարէ ։

[8] Երրորդութիւն անպատմելական նորոգ ստեղծագործութեան, այցելու
յոյժ, յոր ինչ 'ի ներքոյ սահմանեցաւ հատուածս։

Գ. Աստուածայինք և զուարթնայինք, պաշտօնէիւք և
երկրպագեալք գերագոյն միութիւն ամե-
նամեծ Երրորդութեան։ Միութիւն անճառ, միշտ բա-
րի, նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից
թևոց սլացման, 'ի վեր քան զօրինակ և անդր քան
զնմանութիւն, գերազանց գոլով սահմանի՝ անպարա-
գիր բացարձակութեամբ, [9] յառաջ քան զէիմն յաւի-
տեանցս անտարրափակ էութեանց, ստեղծականացս
կարգաց, օրհնաբանութեամբ անթարգմանելեաւ՝ ամե-
նահարուստ մեծութեամբ՝ յաւէտ պսակեալ. հաստիչ
ժամանակաց՝ և որ 'ի ժամանակի են կերպաւորեալք.
ինքն պատճառ հանդերձից՝ և յարմարապէս յօրի-
նիչ՝ տեսականաց և աներևութից։ Ոչ անուամբ չա-
փեալ, և ոչ յորջորջմամբ նշանակեալ. ոչ որակու-
թեամբ նմանեալ, և ոչ քանակութեամբ կշռեցեալ. ոչ օրի-
նակաւ ձևացեալ, և ոչ որպիսութեամբ ծանուցեալ. [10]
ոչ 'ի թերութենէ տարածեալ, և ոչ 'ի լրմանէ ամփո-
փեալ. ոչ ուրեք երբեքի գրաւեալ, և ոչ 'ի տեղւոջ
վայրի երևեալ։

Դ. Հայր գթութեանց՝ ամիօղ ամենայնի, և մեծ հա-
նուրց՝ որ յերկինս և որ յերկրի, [11] բաց 'ի բանէն
միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի։ Ստեղծիչ և տուիչ
ընչից ամենից, [12] բաց 'ի հոգւոյն իսկակցէ՝ որով զհա-
մայնն կազմեաց։

Ե. Միոյն յերջանկափառ համազօր ահաւորութեան
երից անձնաւորութեանց [13] խոնարհեալ 'ի վերուստ՝
աստուած 'ի ստորինս, որ էրն իսկ 'ի բնէ անբաժ
'ի ներքնոցս՝ անկապուտ մնալով փառացն աթո-
ռոյ, և անկարօտ դիմացն [14] ծնողին իւրոյ։ Մտեալ
'ի սենեակ կուսին արգանդի [15] պարզաբար, և ե-
լեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս՝ անորա-
շելի, անթերի մարդկութեամբն, և անպակաս
մեծութեամբն։ Մի որդի հօրն միայնոյ, և միա-
ծին անդրանիկ՝ մեծամայր տիրածին կուսին, [16] արա-
րիչն՝ յեղականութեամբ մարդ եղև ճշմարիտ սկզբնա-

ծին. ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանու-
թե, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ,
որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամա-
նակս, անդրանիկ՝ ըստ սաղմոսողին, քան զամենայն
թագաւորս երկրի. [17] անապական խառնութբ կեր-
պացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ
մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապէս
իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ ան-
ջատեալ: Նոյն ինքն եկեալ կամաւորութբ 'ի խաչն
մահու, իբր զգառն անարատ՝ 'ի սպանդ վարեցաւ,
և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութբ զարարա-
ծոց իւրոց փրկութի. [18] չարչարեալ իսկութբ կեն-
դանեօք՝ եդաւ 'ի շիրմի անորոշելի յանծուէն. եռօ-
րեայ թաղմամբն՝ 'ի դժոխս սանդարամետականացն
[19] վհատեալոցն բանտարգելիցն՝ քարոզեալ ցուցաւ նո-
րոգումն և լոյս: Նա աւարառեալ [20] զանօրինակա-
նացն զփրկանաւորն զանտեսութի, ածապէս վերա-
կենդանացեալ. և կառավարեալ 'ի թևս հողմոց՝ ելեալ
'ի քրովբէս ամպով անքննութե ծածկեցաւ. համ-
բարձեալ գեր 'ի վերոյ ամ երկնի, նստաւ ճոխու-
թբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հա-
ւասարութե, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ,
անկորուստ առեցելովն, և աննուազ սեպհականօքն:
Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման, քննել
զծածկեալսն կշռութբ չափոյ՝ արդար իրաւանց.
որում սպասեմք, և 'յոր աղօթեմք, հաւատացեալք
յանձն՝ ամէն ամենակալ տէրութե նորա. [21] որ արդարև
մինն է միայն 'ի միայնոյն՝ 'ի միոյն փառաւորեցուի յա-
ւիտեան երկրպագեալ:

Է. Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և
ընդ հօր՝ և [22] զհոգի էութե նոցին, ամենազօր, ճշմա-
րիտ, կատարեալ և ն. որ յանէից գոյացոյց զա-
լոր եղեալքս ամենայն. ինքնագործ համիշխան եր-
կուցն եւ ընդ նոցին՝ անեղծ և անսահման թագաւո-
րութե. որ ինչ պատճառն ասացին, և բանն ահա-
ւոր նորին ինքնութե, նոյն ինքն և հոգին բարձրա-
ցեալ: [23] Բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն
պարգևս՝ 'ի զօրեկան անուան փառաց միածնին. որ
ազդեաց յօրէնսն. շնչեաց 'ի մարգարէսն. [24] փչմամբ

ազգակցին տպաւորեցաւ յառաքինալոյն. [25] կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի յորդանան՝ 'ի մկրտուն փառաց եկեղոյն. փայլեաց [26] 'ի գիրս աւանդականաց. արար հանճարեղս. զօրացոյց իմաստունս. լցոյց վարդապետս. [27] օծ արքայութիւնս. օժանդակեաց թագաւորս. եւ վերակացուս. հրամանատարեաց փրկութիւնս. շնորհեաց ձիրս. հանդերձաւորեաց քաւութիւնս. զմկրտեալս 'ի մահն քի՝ 'ի բնակութն իւր մաքրազարդեաց. զոր հայր եւ որդի, զնոյն եւ հոգին ներգործեաց. եւ ինքն է ա͞ծ խնկեալ տիրապէս՝ ամենայն յամենայնի:

Է. Քանզի [28] ոչ նախաթուելովն յերրորդութենն՝ որք մեծ ինչ քան զմիւսն. եւ կամ զկնի անուանիլն՝ նուաստագոյն առ նմանն. եւ կամ 'ի միջին ասելով խառնակութն զօղ դիմացն. եւ կամ յերիցն տրոհումն՝ ուրոյնութն եւ կամացն: Քանզի անմեծար հայր ամենայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութն. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհաղագ ումն եւ անկենդան՝ եւ առ ամենայն հրաման նուազեալ: Իսկ բանն՝ եթէ ոչ անուանք հօրն ծանիցի, որք ումն՝ եւ կամ լքեալ, եւ կամ [29] 'ի մահացուէ ումեմնէ ուէրի: Որպէս եւ հոգին՝ եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի, [30] ապաշուք ումն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդաստելի: Այլ եթէ որք հակաճառականն բանիւ՝ [31] յաւակնի կապտել զհայր 'ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն՝ յորժամ եւ չէր, եւ անբանութեն բամբասանօք պատուել վարկանի զմեծին մեծութի, եւ կամ սորկութիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգւոր, որով այլ իմն գոյութիւն օտար մուծանել, եւ կամ ամբոխումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութե սբ երրորդութեն, զայնպիսիսն՝ քարամբք պարսից՝ հաւատոյ բանից, իբր զդժնդակ դեւս դիմամարտիկս զաղանականս՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հալածեմք. եդեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին, փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս դաւթի: Ուստի զսբ երրորդութեն փառաւորելով 'ի նոյն տէրութե միակցորդ հաւատարութե, զուգաձայն սրբաբանութեք, համզունատիպ հարթութեք, օրհնեալ եւ

փառաւորեալ յերկինս և յերկրի, 'ի ժողովս անդ-
րանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յա-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Ը. Արդ՝ զայս[32] գոչումն ծածուկ խորհրդոց կեր-
պաւորելոց յայսմ մատենի՝ ամենալուր ականջաց
մեծիդ այ՞ ընծայեցուցի. տուիմք սպառազինեալ, և
ապա մտի 'ի հանդէսն: Այլ ոչ եթէ կարօտեալ
իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ստեղ-
ծեալ էր քո զամենայնն՝ նախ քան զլինելն երկնի,[33]
փառաբանչօքն անմահից՝ և երկրաստեղծս բանա-
ւորօք, դու քեզէն 'ի քումդ լրութէ՝ փառաւորեալ
իսկ էիր. այլ զի զմերժեալս զիս յարգեսցես՝ անճառ-
քաղցրութի, ճաշակել զքեզ բանիս հաղորդութբ:
Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ՝
կենաց կանոնիդ՝ ասել ադոնայի տէր, և զհրամայ-
եալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զիս[34] զրա-
կեղէն տախտակս խօսումն՝ նուիրեալ քումդ պատ-
գամի, զգրեալս մատամբդ այ՞՝ եղծի, որ և խորտա-
կելն է իրաւացի. և ես տխրատեսակ մրովս զերկ-
րորդն նմանութի առեալ հայթայթեմ: Այլ արդ՝
քանզի[35] բազմօք պաղատեցայ դրուակօք խանդա-
ղատականօք, որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի,
լուր բարեգութ, ըստ սմին բանի՝ այնմ ամենայնի:
Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօ-
թից՝ յօդեալ ընդ նոսին. թերևս 'ի մաքրոց և 'ի
կամարարից այս նուէր հացի՝[36] պանից բաղարջոց՝
իւղով զանգելոց՝ 'ի սեղան փառացդ քոց մա-
տիցէ:

Թ. Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր,
քնդ մի՝ այ՞ միոյ, հզօր և ամենակալ. որ յաղթես
գթութբ խնամոց քաղցրութե քո,[37] ոչ հասարակա-
կանաց միայն մարդկութեա՝ իմոց գոյակցաց, առ որս
յաւէտ է ամբոխութի և բիւրամասնեայ հակառա-
կութի, այլ և հրեշտակացն անախտականութե. նաև
և ևս քան զայս՝ սրբանալոցն անարատութե, յորոց
մի էր և հեղիաս. որոյ ցոյցք խստութեն՝ 'ի քորեբ-
լերինն նշանակեցաւ յերիս օրինակս, 'ի շարժումն
մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական.
իսկ քոյդ հեզութի երկայնմտութե՝ 'ի հանդարտու-

թն մեղմութեան օդոյն քաղցրութեն . քանզի [38] կամաց ողորմութեանց՝ դու միայն ես, ըստ գրեցելումս ։ Վասն զի թէ և հաճոյք գտան մերասերքս՝ առաքինութեան յեղանակեալ յոյլ նմանութեան վերնային, սակայն երկրածինք են և նոքա , ընտրեալք 'ի մարդկանէ . իսկ դու ոչ ունիս չարանալ՝ իսկութեամբ բարիդ . յամենայնի օրհնեալդ . ամենևին փրկութիւդ . ամենայնիւ հանգիստդ . համայնից անդորրութիւդ . համօրէն ախտացելոց՝ դեղ առողջութեան . աղբիւր ջրոյ կենդանւոյ , ըստ երեմիայ ։ Դարձ առ իս և ողորմեա ինձ . որ այնքան ծարաւեա պասքիս անկարօտդ ած իմում փրկութեան , մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց [39] բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ անեղծական յարակայութեամբ մշտնջենաւոր պաշտամնս օրհնեալդ քո գթութեան 'ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութեան մաղթել , ողորմեա երուսաղէմի . որ է լուսաւոր խորհրդյայց ելանելոյ մեծիդ յայտնութեան , առ հրեշտակականն թափուր տեղի սորանկելոց , 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինակականս երուսաղէմի ։

Ժ . Մարգարէ լուար՝ բարեգութ . անսացեր թագաւոր . ունկնդրեցեր կեանք և յոյս . 'ի միտ առեր Երկնաւոր . յարգեցեր հզօր . նկատեցեր ծածկագէտ . տեսեր խորհնամակալ . կարեկցեցեր անպատում . խոնարհեցար՝ մի'շտ բարձրեալ . նուաստացար ահաւոր . յայտնեցար անճառ . ամփոփեցար անսահման . քանակեցար անքնին . [40] մածար ճառագայթ . մարդացար անմարմին . շօշափեցար անքանակ . կերպաւորեցար անորակ . լցեր իսկապէս [41] զաղաչողացն բաղձանս ։ Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս , միջնորդ կենդանի , պատարագ անմահ , սպանդ անվախճան , նուէր մաքրութեան , ողջակէզ անծախ , բաժակ անսպառ ։ Ահա ողորմած , մարդասէր , օրհնեալ , մի'շտ կատարեսցես [42] առ մեղուցելոյս զպարգեւատուն կամաց քոց կենդանատուաց , գովեալ երկայնամիտ . և քեզ վայել է փառք յաւիտեանս . ամէն ։

(1) Առ այսօրիկ : Առ այսոքիկ են խնդիք կամ յօժարութիւնք Թշուառա հոգւոյ. և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, խոստովանութիւնք մեղանաւորի, կամ յատուկ քեզ վայելչականք. զոր Թէ և բովանդակ ածանես զու և գիտես, բայց ես որպէս 'ի նախնեան, նախ քան զայս յանցեալ աղօթիւն ծանուցի, զնոյն և յետ կրկնութեամբ ցուցեալ կրկնեցից ։

(2) Ցանկալութիւն Գրաբանական : 'Ի բացայայտութեան, կամ 'ի հրապարակական բանսն՝ որ 'ի մէջ գրոց. կամ Գրաբանական ասէ՝ Թերևս զի 'ի գիր անցուցեալ զբանն՝ այնպէս խօսէր յատենի բառ ամփոփութեան առաջնոցն. որպէս և Շնորհալին արար զատենադական խօսսն առ ժողով հայրապետացն. և ասէր. * Զբերելս մատուցանել զուարճալեաց արտացիս բանից, որ ոչ 'ի բերելս հայեալ, միանգամայն և յօդս ցնդեալ. այլ արձանագրեալ գրով բառ գերակատար խմաստնոցն օրինի || ։ Արդ՝ վա այնորիկ ատենականն վարդապետութեանց, զայս յաջորդ արգահատութիւն, արարչանս նուիրեցի. զոր նմուշ եղեալ աղօթական բանից ցուցանեն ։

(3) Հաշտեալ : 'Ի միում, պաշտեալ, յայլ, պաշտեցեալ, որ և այս յարմարի. երբեմն Թէ՝ որով հոգին մեր հաշտեալ, աղօթիւք կամ պաշտամամբ պաշտեալ. վասն զի բարւոյ՝ պաշտօն և պաշտել, բարեաւ անդամ զնոյն փոխանակ բանսոր կամ ժողովոյ աղօթից և օրհնութեան ։

(4) Բարեգործեա : Շնորհեա կամ յօրինեա զամենայնից շնորհս քո՝ 'ի յանձինս, 'ի հոգւոյս, և յեւոխական [illegible] զգայութիւն, 'ի լեռնում՝ որ իշխանն և առաջնորդ է զգայութեանց. կամ, 'ի միտս՝ որ իշխանաւոր ամենայն զգայութեանց, որ ամենայնի զգայ և առաջնորդ է մեծամասն գլխոյ ։

(5) Ընդ անհուն առաջարկեալ : Անցանել կամ գնալ առաջ ընԹացմամբ միայ ընդ անանցանելի ընդարձակութիւն ծածաչունչ գրոց ։ Առաջնոց վարդապետաց ամփոփութիւն էր՝ զատենական ձեռս կամ զգայարանս խորհրդոց յօրինել 'ի վերայ բանից մեր գրոց, մեկնաբանելով զնոյնս, որպէս աստենին ասկերբերան, եփրեմ, և այլք. վասն այն առաջ ընԹացութիւն կոչէ զայն ։

(6) 'Ի յետ վերուստ : Ծագեա յիս վերուստին զծածկեալն գիտութեան քո, որպէս միանգամ ծագեցեր 'ի լուսաւորութիւն մկրտութեան. յայնժամ ծագեցեր առ 'ի ուսանել ինձ, այժմ ծագեա առ 'ի ուսուցանել այլոց ։ Կամ, վերուստին ասէ պայծառացուցանել զհոգևոր գիտութիւն, որպէս 'ի սկզբան յառաջեալն ։

(7) Առ համագոյ "Է Երրորդութիւն : Զ[illegible] դաւանութիւն հաւատոյ որ առ մեզ Երրորդութեան, զայս՝ կամ այսու օրհնական աւանդեցի, յօրինեցի, բառ որում յաջորդ բանիդ երևեցուցանէ ։ Զայս դաւանութիւն յայն ասէ զնէ մեզ վարդապետս, զի օրէն է քարոզչաց բանին՝ նախ զուգել հաւատոյ հիմն արկանել ։

(8) Երրորդութիւն անայլայլական : Այսինքն դաւանութիւն Երրորդութեան, կամ ձևս և բան յառաջագոյ այդ երրորդութեան ։ Զի ամփոփութիւն է զանակալութեան գրոց կամ ձևալից 'ի նիւթոյն առնուլ, որպէս գիրք մովսեսի կոչին՝ Արարած, Ելք, Թիւք, ևն. զի են բանք զլխաւորութեան բովանդակ, զեղեց խորայկեն յեղափոխառանէ, և զԹուոյ նոցա. այնպէս գիրք աւաղաց Զգմունք կոչի. զի են խորանք խմաստութեան ։ Նմանապէս յառաջնոցն՝ Իւխոս ասէ բանաստեղծութեան հոմերոսի՝ յորում խօսի զեղխանական պատերազմէ. և օդիսեա կոչի միւս ևս բանաստեղծութիւն նորա, յորում զոդիսեայ ձևանէ. բառ այսմ և այլք բազումք ։ Կամ, եԹէ համարեցի մք, Երրորդութիւն խմանալ՝ Երրորդութեան, այսինքն Երրորդ անգամ կրկնութիւն դաւանութեան հանգանակին. զի նախ՝ յառաջերեալ աւանդեցաւ. երկրորդ անգամ 'ի ժողովս նիկիոյ և կոստանդնուպոլսոյ բացայայտեցաւ. իսկ երրորդ անգամ ինքն առաւել ևս ընդարձակէ աստ ։

Զայս պատմութեան եղբայրութեան անայլայլական ասէ՝ ըստ ճշմարտութեան բանիցն և ըստ մտաց հաւատոյ. զի մի՛ 'ի տգիտաց ոք կարծիցէ՝ թէ յաւելման կամ այլայլութիւն բառիցն փոփոխել զիմաստս, և բազմացուցանէ զհաւատալիսն: Նորոգ ստեղծաբանութիւն, ըստ բացայայտութեանն նորոգ եղանակաւ ընդարձակ յօրինել: աւելնուլ յայս, այս պատմութեան աղդեցութեամբ ըստ հաւատոյն կամ ըստ համեմատականին, որ 'ի ժողովն նիկիոյ աւանդեցաւ, որպէս և 'ի յաջորդսն զմասունս նիկիական համեմատականին ընդարձակ ձևացուցանէ:

(9) Յառաջ քան զյաւիտենից: Օրինակք զհրեշտակաց խմնական. բայց ըստ և խմանի՝ յառաջ քան զակիզբն ստեղծելոյ ժամանակացս, անփոփոխ էութեան. յորում էութիւք ստեղծելոյ խորոցս ոչ էին փոփոխել ընդ աստուածոցս, այլ ծածկեալ 'ի միտս նոյ, նա անճառագոյն օրհնութիւն իւրոյ ամենահարուստ մեծութեան պատմել էր. իսկ թէ՝ անկարօտ էր արարածոցս փառաւորութեան. զի յառաջ քան զնորայն լինելութիւն՝ նորա մեծութիւն է փառք իւր, որպէս զինի ասէ 'ի հաւատոյն Ը. տես ԼԹ. 33: Կամ, անփոփոխ էութիւնք իմանալին անմարմին բնութիւնք՝ որք ոչ փոփոխին ընդ աստուածոց. իսկ ստեղծական կարգ են այլ ամենայն մարմնականք: Յառաջ քան զհրեշտակութեան ժամանակացն ասէ՝ յորում եղեն անմարմին և մարմնական բնութիւնք, օրհնաբանեալ է Աստուածն՝ ոչ յայլմէ, զի ոչ կարօտ ինչ. այլ յինքենէ, և նա է անհաս ի զինորդ ոք յիւրումն օրհնեսցի, փառաւորեսցի. բայց եթէ զի ինքնագոյ անհունալի մեծութեան նորա է փառք իւր:

(10) Ո՛ւ՛ Ի Բէկրանէ փարածէալ: Ո՛չ յառաջին թէքի և անկատար գոլով, ամբողջանալ 'ի կատարելութիւն. և ո՛չ 'ի Լըմանէ, 'ի կատարելութենէ նուազեալ կամ պակասեալ: ո՛չ ուրէֆ էրէէֆի. ո՛չ ընդ ժամանակաւ եղանէ փոխելով, և ո՛չ 'ի անդուլով պարսպեալ: 'Ի կարգի բանիս զաստուածակ աստուածութեան արքունականութեան 'ի բաց ասէն յԱյ. զի թէ և էակ է ծագումն՝ ամենահանք, բայց ո՛չ իւր գոյացութեան անուանք ճանաչի կամ ասելի. ո՛չ քանակ 'ի նմա, ո՛չ որակ, ո՛չ առ ինչ յարաբերական, ո՛չ կայ, ո՛չ ուր ժամանակի, ո՛չ ուր անդուլոյ:

(11) Եաչ 'Ի Եանեքն: Հայր՝ է ամ ամենեցուն, բայց միայն բանին կամ որդւոյն ոչ է ամ ըստ ամաւին, թէպէտ և է նորա ամ ըստ մարդկային բնութեան: Օրինակք 'ի հարց նաև ըստ ամաւութեան մեկնեցին զասելն քնի (յոհան. Ի. 17.) առ ամն իմ: Որպէս նոյն կեսարիոյ, (կոչ. ընծայ. դլ. ժա. համար. 21.) ասէ. * Աստուած իմ, որդիութիւն, բնութեամբ և մարմնաւորութիւն: Ն 'Ի սոյն միտս խօսի և այլն Նկարագրեա. (գլուխք. Ը. յաղագս եղբայրութեան. համար 11. 12. և գլուխք Գ. համար 53:) Բայց այս մեկնութիւն ոչ է հասարակ և հարազատ:

(12) Եաչ 'Ի հօգասյն Եօխաղ: Հայր է ստեղծօղ և կենդանացուցիչ ամ ենչաւորաց, բայց միայն հոգւոյն այլ ոչ է, որ էութիւն ընդ հօր ունի զկենդանութիւն, և ընդ նմա կենդանացուցանէ զամ:

(13) Խանարհեալ 'Ի վերատափ՝ առատափ 'Ի սորբինա: մի օրին. խոնարհեալ 'Ի վերատափ մնաստափ: այսինքն 'ի վերուստ անդր, կամ յերկնից: որ եղն խոկ 'Ի Եոկ. այսինքն բնութեամբ կամ յառաջինն խոկ անբաժանելի 'ի նմանէնցս:

(14) Ծնունդին էուրոյ: 'Ի չորս օրին. ծնունդին ուրոյ. և խմանի, այնմ որ ծնօղ է անժամ և անայլայլական եղանակաւ, որպէս ասէին անժամանակ ծնանի: Կամ, այնպիսի ծնօղ՝ որ անապականապէս ծնանի՝ և ոչ ըստ բնաւոր աղքատութեան, և կամ 'ի զեղծալոց ինչ:

(15) Պուրղաէար: Իսկ և այսպէս և անմարմին, կամ այսպէս բնութիւն. և եղեալ անդր յօրաւորաէար, յօգնավոր կամ բարեգործեալ մարմնեալն և հաց

ւով, հարցին նշանք, մասամբն խոհութք, ճշմարտապէս և ոչ կարծեօք,
ամենայն մարդկայնոյն, որ անբաւ ժամանակս էր յանձնութէն ։

(16) Աբաթէին չեղանելեաց ։ Բանին ամ ասացեալ՝ յերկնային կամ ՚ի աստեղ ծնեալ մարդոյն քննելով մարդ ճշմարիտ․ ոչխոծ․ այսինքն առաջին ծնունդ կամ անդրանիկ մարդ, կամ առաջին ծնեալ ՚ի կոյս մարէ ։ Աչեռ ուղին․ ոչ համեմատ կամ բաղ նմանութեն այլ մարդկան յերկրէ եղելոց, այլ նոր և զարմանալի, թէ՛ բաղ ծնեցելոյն, և թէ բաղ երանեալ՝ ծննդեանն ։ Բանն՝ ուղին յայլ գիրս և ս երգեան նշանակէ՝ համեմատ, կամ բաղ․ որպէս Լևոնիդոն․ (Ճառ յաղագս առաքին․ եկեղեց․) * Անմիջական որէնքն ոչ գիտ է, և զենի բնութեան ։ || այսինքն համեմատ բնութեան մերոյ․ զայն գնէ և (՚ի մեկն․ առաք․ ժզ ։) Բաղդատութեան մերոյ․ գերազանց քան զծնունդ թագաւորաց, որք ամենեքեան բնութեամբ խաբեալց մարդ ծնանեն, և հերկ զայլ աղքատ առանց խնամութեան, այլ և բաժանեալ զկուսութիւն ծնողացն ։ Իսկ բանն ամ կուսածին՝ առաջ անդրանիկ բաց սահմանաւորինքան զամենայն թագաւորս․ (առաք․ ձզ․ 28 ։)
Որ ՚ի միջոցին կայ բառս՝ Բորէր, այսինքն բարձր քան զամենայն թագաւորս ։ Բայց որ մարդկայնոյ համեմատ զայն և առ բանն անդրանիկ․ խոնարհեալ առաջին քան զամենայն թագաւորս ոչ միայն խոնարհութք, այլև ծնեալ բաղ մարդկութեն․ վասն զի միայն քն ծնաւ թագաւոր, իսկ այլք ոչ ծնանին թագաւոր, այլ ՚ի մարդկանէ կարգին, թէպէտև ծիրանածինք կոչին, թագաւորազն․ են ։

(17) Անապական խառնումն ։ Անշփոթ և անայլայլելի խառնութեամբ, այսինքն նորոգին անբաւ միաւորութն․ կերպարանելոյ զերս ՚ի մարմին․ քննելն աստուածն բնութեամբ մարմնով, կամ զնորա հոգի ՚ի մարմին անդ ։ Բաց օրինի համար, են ։ Այս օրինակ հոգւոյ, հրոյ, և լուսոյ՝ այնչափ միայն առնին յարաբերութն, զի որպէս անշփոթ և զարմանալի միաւորի հոգի ընդ մարմնոյ, և հուր ընդ սրոյ, և լոյս ընդ օդոյ, այսպէս անշփոթ և ՚ի նմանութեան կերպէ միաւորի ամենայն ընդ մարդկութեան ՚ի մի քն ։ Որ և յաղագս առաքելոյ լուսոյ յանձնեալն, կամ յայտնապէս խոյ առնել, նշանակէ՝ առաւել յայտնի կամ երևելի օրինակ անուն միաւորութն քնի․ զի լուսոյ ընդ օդոյ միաւորութն առաւել զգալի է մեզ և առաջադրական՝ քան զհոգւոյ և զհրոյ ։ Զբանն խառնմանն անուան փոխանակ անշփոթ միաւորութն յայտնի է ոչ միայն յայլ գրոց, այլև ՚ի կիրառութէ սոյն վարդապետիս, որ ՚ի բանն ժբ․ 2․ առ Ած ասէ, միասն ընդ լուսոյ կենաց խառնումն ։

(18) Զորշորեալ խոնարհ ։ Զարշարեալ ճշմարտապէս, կեհեդանեօք, այսինքն ՚ի կենդանութեն միայն, և ոչ յերս մահուանն, որպէս ամենայն հոգւ հոյեցին՝ թէ հոգին քն ՚ի գերեզմանսեալ, որք և դժոխոց առ նոսա ամենեցուն ։ Կամ, կեհեդանեօք իսկ այսպէս․ ճշմարտապէս չարչարեցաւ ՚ի մահ մարմնովն, կենդանի և անմահ մնալով ածութեամբն ։

(19) Վհափէլոյն բանափարգէլին ։ Ասէ՝ որք ՚ի բանիւ նախահաւրցն արգելեալ կային, և յերկայր անկենդանութք փակեալն վհատեալք էին, այսինքն հաշեալ և վատաբանեալ ։ Կամ, եթէ վհափելոյ խնամոց յուսահատեալ, արգասիւ յուսահատ էին խաբեալց զորութէ, կամ այլոց բարեխօսութք զերծանելոյ անտի ։ Իսկ եթէ որ յաղագս մեղաւորացն ասացէ զբանս, առաջինն և նորա քն փարոզեալ ցուցանէ նորագոյն, և լոյս, ոչ զի ճշմարտութք նորագոյն և լուսաւորեալն յայտնեաւ, այլ զի ծանեցին՝ թէ ոչ հաւատացին ՚ի նա, և ՚ի չարէ մեռանելոյն՝ զերկեցան ՚ի նմանէ ։ Բայց զայն զօրութեան յայտնապէս ասէ որ վարդապետս ՚ի բանն խը․ 5 ։ անդ անդ ։

(20) Զաէօրինաւորացն ։ Կատարելով քեզ մահուանն զմարդկութեան

խաչոյ գիտելեօք խորհրդոյն, ամենայնիւ յայտնեաւ. և զնմանէ 'ի Եսա-
յեայ. ըստ ասելոյ. (ԺԷ. 11.) որով նշանակի արդարութեան վերաբերեալն յերկինս, նստելով 'ի քերովբէական կառս՝ ծածկեցաւ անձամբ անփոփոխութեամբ. ըստ բանին գործոյ. (Առ. 9.) զի անձամբ ծածկեցաւ յաշխարհ արարչութեան նշանակեր զանհասութիւն փառաց և մեծութեան քոյ: Այսու օրհնեաց հանգուցանելով յերկինս, նստեալ փառօք յաթոռն անհասական՝ անկշռելի հօրն հաւասարութեամբ: Այս է մեկնութիւն ասելոյն՝ ընդ աջմէ հօր. իբ հաւասար հօր ըստ ամենայնին՝ իբրև բանն և աստուծոյ ժառանգ նորա. յորմէ ոչ բնաւ մեկնեցաւ, այլ և հանգուցաւ: Անբաժանաբար անանջատելի, պահելով զառաւել զմիաւորութիւնն, և անպակաս անմեկնելի, զի ամենայն յաւուրս փառացն:

(21) Որ արդարեւ մինն է: Մի որդին 'ի միայնոյն հօրէ, 'ի միոյն հօրական փառաւորեցութեան: Խոստովանեցուցի քերթ 'ի անօրէնութեանն ներգործութեամբ, ոչ եթէ ինքն փոփոխեցաւ կամ նուաստացաւ. այլ միայն նոյն միակ որդի միայնոյն Աստուծոյ Հօր, և նախկին փառաւորութեամբ ընդ Հօրն իւր: Այսպէս հաւատամք զմիածինն ընդունելի նորա. և փառաւորեմք զա-
մենայնն ասացեալ յաւիտենաբար:

(22) Զհետ նորին: Օրհնաբանեմք զՀօր և որդւոյ և զՀոգւոյն Սրբոյ, որ էակից է նոցա, հոգի նորին և էութեամբ միացեալ, ոչ արարածոց իբրև զօրութիւն հոգւոյն: հաւասար երկնից, որ ինքնին իւրով զօրութեամբ գործէ, և իշխանակից է հօր և որդւոյ, որք ընդ նմին են միշտ, մի և նոյն անբաժանելի թագաւորութեամբ: Որ ինչ է պատճառն ասելոյն, այսինքն Հայր ամ, և որ ինչ է Բանն ամ էակից, նոյն է Հոգին Սբ ըստ էութեանն և ըստ կատարելութեան: Այսպէս ըստ էականացն խնամոյ բանիս ասաց սուրբ Լուսաւոր-
չեանն Գրիգորիս վարդապետ մեծաց ասացեալ. * Հայր ծնօղ զորդի, որ է այն ինչ՝ որ ինչ Հայր է. քանզի որ ինչ Հայրն է, և Որդի այն է. բայց ոչ որ Հայրն է, և Որդի նա է: ||

(23) Բարի խնամող: Խնդրեսցուք կամ խնդրանօք բարի, և ոչ ատեցեալ է: Որպէս կենդանի զաստուածն՝ բարի, խնամող. բայց ըստ եա է միայնոյ ըն-
թերցեալ ըստ ընծայի օրհնակաց:

(24) Փրկանք ամենեցուն: Փրկանաց որդւոյն իւր՝ որ ազգականաց ամենայն վասն բնութեանակից գոլոյն, որպէս ասացաւ (թուն. ԼԷ. ԼԾ. 24:) Որպէս յայտնի բարեաց կատարեալ ձեռնարկել, թէ որդին ոչ է բարիոք հոգւոյն իւրոյ. այլ թէ ոչ՝ ոչ առաւել ազգականաց. որպէս ասեն՝ հայրն ամ գոլով յառաջնածոց որդւոյն և հոգւոյն՝ ոչ ասէ նոցա ազգականաց: Սակայն եթէ քննութեամբ խոստէին զայս, զառանէին նորին իսկ իւր վարդապետին՝ զերկոս անձինս են ազգակից ասացեալ (կ'ի գոյց. առաջ.) ասէ գրէ.
* Հայր՝ Որդի՝ Հոգի՝ 'ի մի չար զատեալ, զի թէ Յ սրբութեամբ և օրհնութեամբ նոյնաւ երկոցն ազգակցոց՝ երկրպագութեան վերանկարէ: || Այսպէս ասելով նաև յառաջնածոց և յառաջնածելով անձինքն ասէին միաբանից ազգակցաց: Այսպէս 'ի բանն ՀԷ. Դ. ասէ. Անձնաւորութ ազգականութեանց:

(25) Կերպարան սքանչելեաց: Հոգին Սբ 'ի նմանութեան աղաւնւոյ հանգուցեաւ 'ի վերայ քրիստոսի 'ի մկրտութեան նորա. և այս անօրինակեցաւ յԱՅ առ 'ի մեծացուցանել զզգաստս էակայն 'ի մկրտութեան, զի մի նման այլոցն կարծեսցի կա-
րօտ մաքրութեան. այլ թէ ինքն իսկ մաքրագործող է, 'ի մաքրել եկեալ, առաքէ հոգւոյն շնորհաց: Այսպէս 'ի խոստովանել քերթ կերպարանօք մե-
ղուաց, փառաւորէրակ զՀոգին Սբ՝ սքանչելի անձնացուցան միաւոր-
ելով: Զարդարանոյն երկնակերպ կերպարանք է 'ի վարդապետաց. որպէս ասեն՝ թէ եր լոկ երկնային աղաւնեայ, այլ՝ թէ էր Տէրն և զգայուն ա-
ղաւնի. և զայս կարծիս նախանձաց յեղեղ ականց եղեւ. (կոչ. ընծայ.

գլ. ժե. համար 8 ։ ) և ընդունի մեծին օգտակարութիւնս, և ընդ նմին թաղ-մանս աղօթիցն. ( Տ. մասն. խնդ. լԹ. այր. Է. այլ և 'ի մեկն. յոհ. համ. գլ. ա. ընթերց. ժԳ. ) նորոգ առաքել հաւատակից ընտրելով. Թեպէտ և յառաջին գիրս կարծեաց նախաւել էր, ( 'ի ա. գիրս մեկնոց, ժղ. խնդ. Է. առ 3 ։ ) Սակայն այսու ոչ բնաւ համաձայնեցան նոքա, թէ հոգին որ անձնաւորապէս միաւորեցաւ 'ի բնութիւն աղաւնւոյ, և ոչ խակ աստց աղօթիցն, թէ էառ զճշմարիտ աղաւնւոյ բնութիւն. այլ ընդ հանգամանս առէ. * Թեպէտ ոչ էառ զայն 'ի միութիւն անձին ։ Ո Եւ ոչ խակ ճշմարիտ աղաւնոյ առնելին` հանգամանաց ինչ է աւետարանչաց. զի նոքա ասեն` թէ հոգին որ երկն աղաւնի երևեցաւ, և ոչ ասեն` թէ երևեցաւ աղաւնին էր երկն աղաւնի ։ Որպէս յառնել` թէ 'ի նմանութիւն առնելոյ յայտնեցաւ 'ի Թաբօր, կամ նման հրեղէն էջ 'ի վերնատունն, ոչ խմանի` թէ անձն և հոգին ոչ էին ճշմարիտ առնել և հուր ։ Եւ ոչ ան-ասել ինչ է` 'ի կիր առնուլ ԱՅ յայտագիրս զգաւն զերակէին կենդա-նիս` 'ի նշանակ կանխց կերպ, կամ յայլ ակնկալ. որպէս 'ի կերպակերպել զԱՅ-զիւր` 'ի գործ առել զաղաւնա, որ յամենայնց խակ էր, և չիք հարկ ասել թէ երևոյթ էր այն աղաւնւոյ ։

(26) 'Ի Գիրս աստուածայնոց ։ Այսինքն աւետարանչաց, և այլոց առա-քելոց, որք զաւանդեալսն 'ի Քէ ընդ գրով արկին ։ Այս խմաստ է ա-ռաքել հայրապետս, քան թէ զմարգարէից խմանալ. զի նախ ասաց` աղ-գեալ յօրէնսն, ընթեռնուլ 'ի մարգարէսն. ուստի մնայր զնել զխօսելն յա-ւետարանսն, ըստ կարգի բացայայտութեան մերս հանդէսակի ։

(27) Օծ [illegible] ։ Այսինքն [illegible], որպէս զդաւիթ, զմեծն կոստանդիանոս, զմերս տրդատ, եւ ։ [illegible], զօրագոյն, յաղթող արքայ զԹագաւորս ։ [illegible]. խոստովանութեամբ [illegible], կամ հրամանաւ [illegible] 'ի մարմնական և 'ի հոգև-կան փորձութեանց ։ [illegible], նորոգութեանց քաղաքութեան մերոյ և [illegible] ։ կամ, կարգեաց քաղաքական նախատօս յեկեղեցւոյ ։

(28) Ո՛չ [illegible] ։ Ցերկրպագութիւն յարմարեալ մի անձն նախ թուի քան զմիւսն, ոչ եթէ այսու զանախնթացութիւնն համաձայնեալ կատարելու-թեամբ մեծ, և զերկրորդն փոքր և նուաստ. այլ միայն զկարգ ամենայն յառաջադասութեանցն յաւաքանէ ։ և կամ 'ի մինն առ[illegible] յաւելն մի զերիս անձինսն, այսու ոչ զանձինսն չափեալ ։ [illegible], և կամ յերրիս զանազանեալ [illegible] էր, որոշումն կամ առաջնորդութիւն զայլ կանխոց նոցա, ընդ նմին և բնութեանն ։ Այլ այնչափ անբաժան և հա-ւասար զաւանեալ զնոսա, մինչև [illegible], անխառն կամ ան-զօր լինէր, եթէ ոչ ունէր զիւր բանն անձնաւոր. որպէս ոչ ունելով զհոգին որ, [illegible], [illegible] և [illegible] լինէր ։

(29) 'Ի [illegible] ։ Առանց հօր ոչ ճանաչելով զորդին, երևէր 'ի մարմն-կանացն հօրէ [illegible] ոչ զոյացէ [illegible]. մի օրինակ. [illegible], այսինքն երևէր` թէ մարմնականացն որդի է [illegible] ։

(30) Աղ[illegible] ։ Եթէ զհոգին որ առանց բարեաց խմասցուք, լի-նէր անդորր ինչ հողմ [illegible], զոր ոչ զիտեաց` ուստի գայ, կամ յո երթայ. և ոչ գտանի 'ի թիւ անձնաւոր գոյացութեանց. որպէս և ան-միտքն խորհեցին ասել թէ [illegible] զօր. Թույլ. և ոչ գտանի ընդ կենդանիս ։ ( Խմաստ . Է . 3 ։ )

(31) Ցա[illegible] ։ Ցանկագինի զերկել զհայր յիւրում բանին. [illegible] ( մի օրին . [illegible] ) [illegible], [illegible] ոչ [illegible] ։

[illegible]

(32) [illegible]

(33) [illegible]

(34) [illegible]

(35) [illegible]

(36) [illegible] ( [illegible] . 39 : [illegible] . 2 : [illegible] . 20 : ) [illegible]

(37) [illegible]

ծին. ահա ոչ զկնի եղելոց երկրաստեղծիցս նմանու-
թե, այլ նոր և չքնաղ, թագաւորաց վեհափառ,
որ ոչ ցուցաւ 'ի դարս, և ոչ գոյացաւ 'ի ժամա-
նակս, անդրանիկ' ըստ սաղմոսողին, քան զամենայն
թագաւորս երկրի. 17 անապական խառնութբ կեր-
պացեալ զմերս 'ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ
մարմնոյ, և ոսկւոյ ընդ հրոյ, և կամ յայտնապես
իսկ ասել' լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և ոչ ան-
ջատեալ: Այն ինքն եկեալ կամաւորութբ 'ի խաչն
մահու, իբր զգառն անարատ' 'ի սպանդ վարեցաւ,
և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութբ զարարա-
ծոց իւրոց փրկութի. 18 չարչարեալ իսկութբ կեն-
դանեօք' եդաւ 'ի շիրմի անորոշելի յանծուէն. եռօ-
րեայ թաղմամբն' 'ի դժոխս սանդարամետականացն
19 վհատելոցն բանտարգելեցն' քարոզեալ ցուցաւ նո-
րոգումն և լոյս: Այլ աւարտեալ 20 զանօրինակա-
նացն զփրկանաւորն զտնտեսութի, ածապէս վերա-
կենցաղեաց. և կառավարեալ 'ի թևս հողմոց' ելեալ
'ի քրովբէս ամպով անքննութե ծածկեցաւ. համ-
բարձեալ գեր 'ի վերոյ ամ երկնի, նստաւ ճոխու-
թբ յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հա-
ւասարութե, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ,
անկորուստ առեցելովն, և աննուազ սեպհականօքն:
Որով և եկեսցէ 'ի դատաստան հատուցման, քննել
զծածկեալսն կշռութբ չափոյ' արդար իրաւանց.
որում սպասեմք, և յոր աղօթեմք, հաւատացեալք
յանմի' ածիւ ամենակալ տէրութե նորա. 21 որ արդարև
մինն է միայն 'ի միայնոյն' 'ի միոյն փառակցութի յա-
ւիտեան երկրպագեալ:

Է. Բարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և
ընդ հօր' և 22 զհոգի էութենոցին, ամենազօր, ճշմա-
րիտ, կատարեալ և ՟ա. որ յանէից գոյացոյց զբո-
լոր եղեալքս ամենայն. ինքնագործ հոմիշխան եր-
կուցն եւս ընդ նմին' անեղծ և անսահման թագաւո-
րութե. որ ինչ պատճառն առաջին, և բանն ահա-
ւոր նորին ինքնութե, նոյն ինքն և հոգին բարձրա-
ցեալ: 23 Բարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն
պարգևս' 'ի գովեստ անսուան փառաց միածնին. որ
ազդեաց յօրէնսն. շնչեաց 'ի մարգարէսն. 24 փչմամբ

ողջակիզին տպաւորեցաւ յառաքինալոյն. [25] կերպիւ աղաւնւոյ ցուցաւ 'ի յորդանան՝ 'ի մեծութեան փառաց եկեղոյն. փայլեաց [26] 'ի գիրս աւանդականաց. արար հանճարեղս. զօրացոյց իմաստունս. լցոյց վարդապետս. [27] օծ արքայութիս. օժանդակեաց Թագաւորս. եդ վերակացուս. հրամանատարեաց փրկութիս. շնորհեաց ձիրս. հանդերձաւորեաց քաւութիս. զմկըրտեալս 'ի մահն քնի՝ 'ի բնակութի իւր մաքրազարդեաց. զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեաց. և ինքն է ած խնկեալ տիրապէս՝ ամենայն յամենայնի:

Է. Քանզի [28] ոչ նախաթուելովն յերրորդութեն՝ որք մեծ ինչ քան զմիւսն. և կամ զկնի անուանիլն՝ նուաստագոյն առ նմանն. և կամ 'ի մինն առելով խառնակութի գոլ դիմացն. և կամ յերիցն արտահուսի՝ ուրոյնութի եւ կամացն: Քանզի անմեծար հայր ամենայնիւ, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութի. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհաւասար ոմն և անկենդան՝ և առ ամենայն հրաման նուազեալ: Իսկ բանն՝ եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որբ ոմն՝ և կամ լքեալ, և կամ [29] 'ի մահհացուէ ումեմնէ ոչէր: Որպէս և հոգին՝ եթէ ոչ 'ի պատճառէն նշանակեսցի, [30] ապաշուք ոմն թափառեալ՝ իբր զշունչ ինչ անդասելի: Այլ եթէ որք հակաճառական բանիւ՝ [31] յաւակնի կապտել զհայր 'ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն՝ յորժամ և չէր, և անբանութեն բամբասանօք պատուել վարկանի զվեհին մեծութի, և կամ ստրկութիւն տացէ բղխողին՝ ոչ բնաւորաբար գոլով հոգեոր, որով այլ իմն գոյութիւն օտար մուծանել, և կամ ամբոխումն ինչ այլայլական՝ յանարատ պատիւ միութե՝ որք երրորդութեն, զայնպիսին՝ քարամբք պարսից՝ հաւատոյ բանից, իբր զգժնդակ դևս դիմամարտիկս զազանականս՝ հերքեալ 'ի միջոյ՝ 'ի բաց հալածեմք. եդեալ 'ի նզովս զնոյնս ընդ նոսին, փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցականս գաւթի: Սուրբ զոր երրորդութիւն փառաւորելով 'ի նոյն տէրութի միակցորդ հաւասարութե, զուգաձայն սրբաբանութբ, համագունատիպ հարթութբ, օրհնեալ և

փառաւորեալ յերկնի և յերկրի, 'ի ժողովս անդ-րանկացն, և յազգս երկրածնացս բանականաց, յաւ-
ւիտեանս յաւիտենից. ամէն:

Ը. Արդ' զայս [32] գոչումն ծածուկ խորհրդոց կնքապաւորելոց յայսմ մատենի' ամենալուր ականջաց մեծիդ ա̃յ ընծայեցուցի. սովիմք պատուազդնեալ, և ապա մտի 'ի հանդէսն: Այլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչև ստեղծեալ էր քո զամենայնն' նախ քան զլինելն երկնի, [33] փառաբանչօքն անմահից' և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն 'ի քումդ լրութենէ' փառաւորեալ իսկ էիր. այլ զի զմերժեալս զիս յարգեսցես' անճառ քաղցրութեամբ, ճաշակել զքեզ բանիւս հաղորդութեան: Իսկ զի՞նչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ' կենաց կանոնիդ' առնել ադամայի տէր, և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զիս [34] զոսկեղէն տախտակս խօսումն' նուիրեալ քումդ պատգամի, զգրեալս մատամբդ ա̃յ' եղծի, որ և խորտակելն է իրաւացի. և ես տխրատեսակ մրով զերկրորդն նմանութիւն առեալ հայթայթեմ: Այլ արդ' քանզի [35] բազմօք պաղատեցայ դրուակօք խանդաղատականօք; որ ոչ է գրեալ 'ի յայս կարգ ձայնի, լո՛ւր բարեգութ, ըստ սմին բանի' այնմ ամենայնի: Եղիցի և այս աղերս բարբառոյ հայցման աղօթից' յօդեալ ընդ նոսին. Թերևս 'ի մաքրոց և 'ի կամարարից այս նուէր հացի' [36] պանից բաղարջոց' իւղով զանգելոց' 'ի սեղան փառացդ քոց մա-
տիցէ:

Թ. Այլ դու բարերար և յամենայնի մարդասէր, քնդ մի' ա̃յ միոյ, հզօր և ամենակալ. որ յաղթես գթութեամբ խնամոց քաղցրութեանդ քո, [37] ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոց գոյակցաց, առ որս յաւէտ է ամբոխութիւն և բիւրամանեայ հակառակութիւն, այլ և հրեշտակացն անախտականութեան. նաև և ես քան զայս' սրբանալոցն անարատութեան, յորոց մի էր և հեղիաս. որոյ ցոյցք խոտութեանն' 'ի Քորեբ լերինն նշանակեցաւ յերիս օրինակս, 'ի շարժումն մեծ, 'ի հողմն ուժգին, 'ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեզութիւն երկայնմտութեան 'ի հանդարտու-

թի մեղմութե՟ օդոյն քաղցրութե՟. քանզի [38] կամաց ողորմութե՟ց՝ դու միայն ես, ըստ գրեցելումն: Վասն զի թէ և հաճոյք զատան մերասերքս՝ առաքինութե՟ամբ յեղանակեալ յայլ նմանութի՟ վերնայինս, սակայն երկրածինք են և նոքա, ընտրեալք 'ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ՝ իսկութե՟ բարիդ. յամենայնի օրհնեալդ. ամենևին փրկութի՟դ. ամենայնիւ հանգիստդ. համայնից անդորրութի՟դ. համօրէն ախտացելոց՝ դեղ առողջութե՟. աղբիւր ջրոյ կենդանւոյ, ըստ երեմիայ: Դարձ առ իս և ողորմեա ինձ. որ այնքան ծարաւեա պապքիս անկարօտդ ա՟ծ իմում փրկութե՟, մինչ զի զուարթնոցն երկնից անմահից օրհնաբանողաց [39] բան իմն ընծայեցեր մարդկօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ աներդծական յարակայութե՟ մշտնջենաւոր պաղատանս օրհնեալդ քո գթութե՟՝ 'ի մերոց դիմաց կենցաղականաց՝ վասն իմ լքելոյս հաշտութե՟ մաղթել, ողորմեա երուսաղէմի. որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնութե՟, առ հրեշտակականն թափուր տեղի ստորանկելոց, 'ի ձեռն մարդկան՝ քո կցորդութե՟՝ աւետարանեալ առակաւ այսօր օրինակականս երուսաղէմի:

Ժ. Արդարև լուար՝ բարեգութ. անսացեր թագաւոր. ունկնդրեցեր կեանք և յոյս. 'ի մէտ առեր երկնաւոր. յարգեցեր հզօր. նկատեցեր ծածկագէտ. տեսեր խնամակալ. կարեկցեցեր անպատում. խոնարհեցար՝ մի՛շտ բարձրեալ. նուաստացար անհասոր. յայտնեցար անճառ. ամփոփեցար անսահման. քանակեցար անքնին. [40] մածար ճառագայթ. մարդացար անմարմին. շօշափեցար անքանակ. կերպաւորեցար անտորակ. ցցեր իսկապէս [41] զաղաչողացն բաղձանս: Դու իսկ եղեր թշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարթնոցն՝ բարի բարեխօս, միջնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ անվախճան, նուէր մաքրութե՟, ողջակէզ անծախ, բաժակ անսպառ: Ահա ողորմած, մարդասէր, օրհնեալ, մի՛շտ կատարեսցես [42] առ մեղուցելոյս զբարեբաստութի՟ կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ. և քեզ վայել է փառք յաւիտեանս. ամէն:

(1) Առ Այսօրինի․ Առ այսպիսի ևս իրիք կամ յօժարութիւնք Թէոփանա Հայրոյ․ և առ քեզ զաւանութիւնք յորմնորդական, խոստովանութիւնք մեռնելոյ, կամ յաղագս քեզ մաքրելական․ զոր Թէ և բովանդակ անուանեա զու և զխաւա, բայց ևս որպէս ՚ի նախնին, նախ քան զայս յանցեալ աղօԹանն ծանուցի, զնոյն և յերկրորդումն յուշեալ կրկնեցից ։

(2) Ցանդինանութիւն Գրաբանական ։ ՚Ի բացայայտութեան, կամ ՚ի հրաշապարակական բանն՝ որ ՚ի Տէր զրոյց․ կամ Գրաբանական ասէ՝ Թերևս զի ՚ի գիր անցուցեալ զբանն՝ այնպէս խօսէր յասելին ըստ առաքութեան առաջնոցն․ որպէս և Ընդհանուրն աղօր զաւանական խօսան առ ժողով հայրապետացն․ և ասէր․* Զբեկեալս մատուցանել զուգընթացս ապացեալ բանից, որ ոչ ՚ի լսելիս հայեաց, միանգամայն և յօդս ցնդեալ․ այլ արձանացուցեալ գրով ըստ գերակատար խնամոցն օրինի || ։ Առդ՝ մի այնպիսի առաքելական վարդապետութեանց, զայս յաջորդ աշխարհութիւն, ապաշխարհ նախկինցի․ զոր նախնեաց եղեալ աղօԹական բանիւք ցուցանեն ։

(3) Հաղորդեալ ։ ՚Ի միում, զուգեալ, յայլ, զուգեցեալ, որ և այս յարաբերի․ իբրև Թէ՝ որով հոգին Տէր հայցեալ, աղօԹիւք կամ աղաչանօք աղաւաւեսցոց․ վասն զի բարւոք՝ աղաչանօ և աղաչել, բարւոք անդամ զնեն փոխանակ բանաւոր կամ ձայնաւոր աղօԹից և օրհնութեն ։

(4) Բարեգործեմ ։ Ծնողական կամ յօրինեալ զանձնաւորս շնորհս քո՝ ՚ի յանձին, ՚ի հոգւոյն, և չիշխանական աղբման զգօյութէ, ՚ի լսողաց՝ որ իշխան և աղղաորար է զգայութեց․ կամ, ՚ի միտս՝ որ իշխանավարար ամենէ զգայութեց, որ ամբողջ ևս զգայ և ազդէ զխնամաս գրոց ։

(5) Ընդ անհնան ապարէնը ։ Անցանել կամ զնալ արտաք ընԹացմանց մտաց ընդ անմանցանելի ընդարձակութիւն անծառնէ գրոց ։ Առաջնոց վարդապետաց առաքութեն էր՝ զաւանական Հատուս կամ զխաղորդս խաւաւոց յօրինել ՚ի վերայ բանից Տէր զրոյց, անկանապանելով զնոյնս, որպէս ասանեն առակաբանան, ևփորեմ, և այլք․ վասն այն առարկ Ճեմոութէ կոչէ զայն ։

(6) ՚Ի չիս Վերոսին ։ Ծնաւեալ յիս վերասին զմեծայրն զխոսութեան քո, որպէս միանգամ ծաղեցեր ՚ի լուսաւորութեն միրոսութեանս․ յայնժամ ծագեցեր առ ՚ի ուսանելն ինձ, այժմ ծագեսցես առ ՚ի ուսուցանել այլոց ։ Կամ, վերասին առէ աղայծառացուցանել զհոգևոր զխոսութեան, որպէս ՚ի սկզբան յառաքելոյն ։

(7) Առ համագոյ տէր երրորդութիւն ։ Զասահման զաւանութեն հաւատոյ որ առ Տէր Երրորդութիւն, զայս՝ կամ այսու օրինակաւ աւանդեցի, յօրինեցի, ըստ որում յաջորդ բանք երևեցուցանէ ։ Զայս զաւանութեն յայնասեկս զնէ Տէր վարդապետս, զի օրէն է քարոզչաց բանին՝ նախ զուղիղ հաւատոյ հիմն արկանել ։

(8) Երրորդութիւն անայլայլական ։ Այսինքն զաւանութեն Երրորդութեն, կամ Հատու և բան յաղագս այլ Երրորդութեն ։ Զի առաքութեն է զխակադրութեան զրոց կամ Հատուից ՚ի նիւԹոյն առնուլ, որպէս գիրք մովսեսի կոչին՝ Արարածք, Ելք, Թիւք, ևն․ զի են բանք զլինելութէ արարածոց, զելից խաղայէլի յեգիպտոսէ, և զԹուոյ նոցա․ այնպէս գիրք առակաց Ժողովողէ կոչի․ զի են խրատք իմաստութեն ։ Նմանապէս յարաղբերացն՝ Իւլիա ասի բանաստեղծութիւն հոմերոսի՝ յորում խօսի զերկինական պատերազմէ․ և ոդիսսիա կոչի միւս ևս բանաստեղծութեն նորա, յորում ղոգխասեայ Հատուէ․ ըստ այսմ և այլք բազումք ։ Կամ, եԹէ կամիցի ոք, Երրորդութիւն խմանալ՝ երրորդութիւն, այսինքն երրորդ անգամ կրկնումն զաւանութեն հանդամանակին․ զի նախ՝ յառաքելոց աւանդեցաւ․ երկրորդ անգամ ՚ի ժողովս նիկիոյ և կոստանդնուպոլսոյ բացայայտեցաւ․ իսկ երրորդ անգամ հիմն առաւել ևս ընդարձակէ աստ ։

Զայս զաւակութիւն եղբայրութեան անայլայլական ասէ՝ ըստ ճշմարտութեան բանիցն և ըստ մտաւորաց հասարակաց. զի մի՛ ՚ի ազգիսաց ոք կարծիցէ՝ թէ յաւելմանէ կամ այլայլութեան բառիցն փոփոխեսցէ զիմաստս, և բազմացուցանէ զհասարակութիւն։ Նորոգ սփեղծուքանութեն, ըստ բազմայայտութեանն նորա եղանակաւ ընդարձակ յօրինեալ։ ասէ... յայս, այս զաւակութիւն ազդեցաւ յայս ըստ հասարակին կամ ըստ հանդամանակին, որ ՚ի ժողովն նիկիոյ առանձնեցաւ, որպէս և ՚ի յաջորդան զմասանս նեկեռնական հանդանակին ընդարձակ ձևացուցանէ։

(9) Յառաջ քան ըզնծն յաւիտեանս։ Ոմանք զհերետիկոսաց իմանան. բայց ըստ եա իմանի՝ յառաջ քան զակիզբն առեղծեալ ժամանակաց, անփոփոխ եղանէ. յորում էութիւնք առեղծեալ խորհուրդս ոչ էին փոփոխեալ ընդ ատարերքս, այլ ծածկեալ ՚ի միտս իմ, նա անճառելի օրհնութիւն իւրոյ ամենահզօրութեան մեծութեան պատկեալ էր. կամք թէ՝ անկարօտ էր արարածոց փառաւորութեան. զի յառաջ քան զնոցայն լինելութեանն՝ նորա մեծութիւն է փառք իւր, որպէս զինի ասէ ՚ի հատուածն Ը. աս. լծ. 33։ Կամ, անփոփոխ էութիւնք իմանալին անմարմին բնութիւնք՝ որք ոչ փոփոխին ընդ ատարերսք. խոկ սփեղծական կարգ են այլ ամենայն մարմնականք։ Յառաջ քան զհրեշտակութիւն ժամանակացն ասէ՝ յորում եղեն անմարմինք և մարմնական բնութիւնք, օրհնաբանեալ է Աստուածն՝ ոչ յայլմէ, զի ոչ կարօտ էնչ. այլ յինքենէ, և սա է անճառելինն. զնմին ոչ յուզեալ օրհնեսցի, փառաւորեսցի. բայց եթէ զի էնքնաբոյս ամենայն մեծութիւնն նորա է փառք իւր։

(10) Ո՛չ ի բերանէ փարածելու։ Ո՛չ յառաջին թերի և անկատար գոլով, ամենայն ՚ի կատարելութիւն. և ո՛չ ի չմանէ, ՚ի կատարելութեան նուազեալ կամ պակասեալ։ ո՛չ որէւ երբէւէ. ո՛չ ընդ ժամանակաւ երբեք փոփոխեալ, և ո՛չ ՚ի անդուլ պարփակեալ։ ՚Ի կարգի բանիս զատանեալ ստորոգութեանն արգասաւորականս ՚ի բաց առնէ յԱյ. զի թէ և էակ է ծայրագոյն՝ ամենայնիւ, բայց ո՛չ էր գոյացութիւն անուանք ձայնաւոր կամ տողիւ. ո՛չ քանակ ՚ի նմա, ո՛չ որակ, ո՛չ առ ինչ նմանակման, ո՛չ կայել, ո՛չ երբ ժամանակի, ո՛չ ուր անդուլ։

(11) Բոց ՚ի բանէն։ Հայր՝ է ամ ամենեցուն, բայց միայն բանին կամ որդւոյն ոչ է ամ ըստ ամութեն, թէպէտ և է նորա ամ ըստ մարդկային բնութեան։ Ոմանք ՚ի հարց նաև ըստ ամութեան մեկնեցին զասելն քոյ (յովհան. Ի. 17.) առ ամն իմ։ Որպէս նոյն կիւրեղ, (կոչ. ընծայ. գլ. ժա. հատուած. 21.) ասէ. * Ամբ իմ, որդիութեամբ, բնութեամբ և միածնութեամբ։ Ի այն միտս խօսի և այն իլարիոս. (գիրք. Ժ. յաղագս եղբայրութեան. հատուած 11. 12. և գիրք Գ. հատուած 53։) Բայց այս մեկնութիւն ոչ է հասարակ և հաստատուն։

(12) Բոց ՚ի հոգւոյն խոխանձ։ Հայր է առեղծող և կենդանացուցիչ ամ ենքեսցոց, բայց միայն հոգւոյն սրբոյ ոչ է, որ էութեամբ ընդ հօր ունի զկենդանութիւն, և ընդ նմա կենդանացուցանէ զամ։

(13) Խոնարհեալ ի վերուստ՝ ապաստան ի սփոփման։ Այլ օրինակ. խոնարհեալ ի վերուստ անսպառ։ այսինքն ՚ի վերուստ անտի, կամ յերկնից։ որ երն եւ ի ենք. այսինքն բնութեամբ կամ յառաջինն իւր անճառմանելի ՚ի նեղքնոցս։

(14) Ծնողին նորոյ։ ՚Ի չորս օրինակ. ծնողին սրբոյ. և իմանի, այնմ որ ծնող է անմահ և անայլայլական եղանակաւ, որպէս աներն անսպառ ծնանի։ Կամ, այնպիսի ծնող՝ որ անապականապէս ծնանի՝ և ո՛չ ըստ բնաւոր սովորութեան, և կամ ՚ի գիտաւոր ինչ։

(15) Պարզաբար։ Իբրև պարզ և անմարմին, կամ պարզ բնութեամբ. և եղեալ անտի յօգուտ մեր, յօգուտ մեր կամ բարեգործեալ մարմնականն և հող-

ւով, ծարծի եղանիս, մտածէին խորհուրդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք,
առնելով մտադրութեանն, որ անդառնալի էր յետ ուխտին :

(16) Ալուբէն յեղափոխութեան : Բանին սոյն տարածէ՝ յերկրային կամ 'ի սահմանա ծնեալ մարդն զինելով մարդ ճշմարտիւ. մինչ և ամենայն. այսինքն առաջին ծննդեան կամ անգրաւելի մարդն, կամ առաջին ծնեալ 'ի նոյն մարդէ : Այս ուղղին. ոչ համարեալ կամ բնաւ նմանութեան այլ մարդկային յերկրէ եկեղց. այլ նոր և պղտորելի, թէ բնաւ ծնեցելոյն, և թէ բնաւ եղանակի ծնն դեանն : Բանն՝ ուղին յայլ գիրս և ա երկրորդ նշանակէ՝ համարեալ, կամ բնաւ. որպէս Լամբրոն. ( Ճառ յաղագս սաղմոսին. Եկեղեց.) * Ամենայն օրէնքն մի գիրք է, և զինի բնութեան : || այսինքն համարեալ բնութեան մերոյ. զայն գնէ և ('ի մերն. սաղմ. ԺԶ: ) Եսգաւորաց վիճակաւ. գերագոյն քան զծնունդ թագաւորաց, որք ամենեքին բնութեանն խորհրդոց մարդն ծնեանն, և խորհ. այլ աղքատ սառնոց երկնաւորութեան, այլ և բաւականալով զկատարութիւն ծնողացն : Իսկ բանին սոյն կատարեալ առաջ անդրանիկ բոց առաջնորդն քան զամենայն թագաւորս. ( սաղմ. ՁԸ. 28:) Որք 'ի միջնորդն կայ բառս՝ Եարէր, այսինքն բարձր քան զամենայն թագաւորս : Բայց որ վարդապետս հայերէնացանէ զայն և առ բառն անդրանիկ. խառնելով առաջին քան զամենայն թագաւորս ոչ միայն երկնաւորութեամբ, այլ և ծննդեամբ բնաւ մարդկութեան. վասն զի միայն քո ծնաւ թագաւոր, իսկ այլք ոչ ծնանին թագաւոր, այլ 'ի մարդկանէ կարգին, թէպէտև ծիրանածնիք կոչին, թագաւորացն. եւն :

(17) Անառակին խոստովանութիւն : Անշփոթ և անայլայլելի խառնութեամբ, այսինքն նոյնքին անբաժ միաւորութիւն. կերպարանեաւ զկերպ 'ի ծառին. յինքն առնելով զմեր բնութիւն մարմնոյ, կամ զմերս հոգի 'ի մարմնի անդ : Բոց օրինի հոգւոյ, եւն : Այս օրինակաւ հոգւոյ, հօրն, և բանին՝ այնչափ միայն ունին յարաբերութիւն, զի որպէս անշփոթ և գոյացապէս միաւորի հոգին ընդ մարմնոյ, և հայր ընդ որդւոյ, և լոյս ընդ ծագմ, այսպէս անշփոթ և 'ի նմանութեան երբեմն միաւորի աստուածութիւն ընդ մարդկութեանն 'ի մի քո : Որք և յաղագս աստուածացի բանին յառաջելովն, կամ յայտնապէս խիստ առնէ, նշանակէ՝ առաւել յայտնի կամ երևելի օրինակ առաջ միաւորութիւն քո. զի բանին ընդ որդւոյ միաւորութիւն առաւել պայծառ է միտ և աղարտական՝ քան զհոգւոյ և զհօր : Զբանն խոստովանութեան անծանօթ խառնակ անշփոթ միաւորութեան յայտնի է ոչ միայն յայլ գրոց, այլև 'ի կիրառութիւն այսմ վարդապետաց, որ 'ի բանին ԺԶ. 2. առ Աստ առնէ, միա նալ ընդ բանին կենաց խոստովանութիւն :

(18) Զորօրհնէ խոնարհ : Զարմանալեաց ճշմարտապէս, կենդանեօք, այսինքն 'ի կենդանութեանն միայն, և ոչ յետ մահուան, որպէս ասեն հայ հոյլեցին՝ թէ հոգին քոյ 'ի գժոխս ատանջեցաւ, որք և երկրորդ առնեսցին : Կամ, կենդանեօք խոնարհ այսպէս. ճշմարտապէս չարչարեցաւ 'ի մահ մարմնոյն, կենդանի և անմահ մնալով ածութիւն :

(19) Վհատեալ բանսարկեւին : Այսին՝ որք 'ի բանին նախահայրն արար և ընդ կարգին, և յերկրոր անկեալ թիւ զրկեցին վհատեալ էին, այսինքն հաշտեալ և վատասիրտ : Կամ, եթէ վհատեալ խոնարհ յաղթահարել, որպէս յաղթահար էին խորհրդոց զօրութիւն, կամ այլոց բարեխօսութիւն զերծանելի առնել : Իսկ եթէ որ յաղագս մեղաւորացն առնէ զբանս, առ որոշեն և նոյն քո բարոզեալ զաղթ ննջեցեալ, և լոյս, ոչ զի ճշմարտիւ նորոգեցին և լուսաւորեցին յայտնեալ, այլ զի ծանուցին՝ թէ ոչ հաւատացին 'ի նա, և 'ի չարի մնացեալ զրկեցան 'ի նմանէ : Բայց զսոյն աղաւաղութիւն յայտնապէս առնէ որ վարդապետս 'ի բանին ԽԶ. 5 : անդ առնէ :

(20) Զերծօրհնեալն : Կատարելով զինի մահուանն զմարդկութեան

խորոց զգիտակցութիւն խորհրդական , ծածուկս յայտնեաց . և զծագեալ 'ի Նոյն հոգւոյ . ըստ առաքելոյ . ( Ժէ . 11 . ) որով նշանակի առաքինութիւն մերձելոյն յերկինս , նմանեալ 'ի քրոմէական կառս՝ ծածկեցաւ ամպով անփոփոխելի . ըստ բանին գործոց . ( ա . 9 . ) զի առնլով ծածկեսցին յաչաց առաքելոց նշանակէր զանհասութիւն փառաց և մեծութեան քնի : Այսու օրինակաւ համբարձեալ յերկինս , նոյնու փառօք յաթոռն աստուածային՝ ոչ բաժանեալ ուստի հօրն հաստատութիւն : Այս է մեկնութիւն ասելոյն՝ ընդ աջմէ հօր . զի հաւասար հօր ըստ ամենայնի՝ իբրև բան և աստուծոյ ժառանգ նորա . յորմէ ոչ բնաւ մեկնեցաւ , այլ միշտ հետ էր : Անճառելի առեղծուածս , [illegible] , և [illegible] , ընդ ամենայնի յաւուրս փառաց :

(21) Որ արարիչն մին է : մի սուրբն 'ի միայնոյն հօրէ , 'ի միոյն հոգւոյն փառաւորեցութիւն : Խոստովանելով [illegible] 'ի [illegible] ներգործութիւնս , ոչ եթէ ինքն փոփոխեցաւ կամ նուաստացաւ . այլ միայն նոյն մեծ սուրբ միայնոյն ԱՅ Հօր , և նովին փառաւորութեամբ ընդ Հոգւոյն մեզ : Այսպէս հաւատամք զմիաւորութիւն եռեակութեան նորա . և փառաւորել զամենայնն [illegible] յանհասանելով :

(22) Ծնունդ Էութեան : Օրհնաբանեմք զՀայր և զՈրդի և զՀոգին Սբ , որ էակից է նոցա , հոգի նորին և էութեան միացեալ , ոչ արարածն իբրև զարարեալ հոգիսն : [illegible] էութիւն , որ ինքնին իւրով զօրութեամբ գործէ , և իշխանակից է Հօր և Որդւոյ , որք ընդ նմա են միշտ , մի և նոյն անբաժան Թագաւորութեամբ : Որ ինչ է զարմանալի աստուածն , այսինքն Հայր ած , և որ ինչ է Բանն ած էակից , նոյն է Հոգին Սբ ըստ էութեան և ըստ կատարելութեան : Այսպէս ըստ էականացն [illegible] բանս ասէ՝ որ ինչ . [illegible] . և այսմ յարմարել բանն Լուսաւորչական Գրիգորի վարդապետ [illegible] . * Հայր ծնաւ զՈրդի , որ է այն ինչ՝ որ ինչ Հայր է . քանզի որ ինչ Հայրն է , և Որդի այն է . բայց ոչ որ Հայրն է , և Որդի նա է :*||

(23) Բարի Խնամակալ : [illegible] , և ոչ [illegible] : Ուստի [illegible] զառաւելն՝ Բարի , Խնամակալ . բայց [illegible] է [illegible] ընթեանդրեալ [illegible] օրինակաց :

(24) Փրկիչ ամենեցուն : Փրկեաց որդւոյն մեզ՝ որ [illegible] բնութեան զորոյն , որպէս ասացաւ ( բան . ԼԳ . Լծ . 24 : ) Ուստի յայսմ բանէ [illegible] , թէ որդին ոչ է բղխող Հոգւոյն մեզ . [illegible] թէ ոչ՝ ոչ [illegible] . որպէս ասեն՝ հայրն ած զգալով յառաջնածօղ որդւոյն և հոգւոյն՝ ոչ [illegible] : Այսկոյն եթէ [illegible] , [illegible] նորին իսկ մեզ վարդապետեալն՝ [illegible] ( 'ի [illegible] . ) ասէ զրէ . * Հայր՝ Որդի՝ Հոգի՝ 'ի մի [illegible] , զԹիւն [illegible] և օրհնութեան նմա երեքին [illegible] : || Այլ [illegible] յառաջնածօղ և յառաջնածեալ [illegible] : Այս [illegible] 'ի բանին ՀԷ . Դ . ասէ . Անհասանելի ամենակալութեան :

(25) Կերպարան [illegible] : Հոգին Սբ 'ի [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] . և [illegible] յԱՅ [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] , զի [illegible] [illegible] . այլ թէ ինքն իսկ [illegible] է , 'ի [illegible] , [illegible] հոգւոյն [illegible] : Այսպէս 'ի [illegible] [illegible] , [illegible] Հոգին Սբ՝ [illegible] : [illegible] կարծիք է 'ի [illegible] . [illegible] թէ էր [illegible] , այլ՝ թէ էր [illegible] և [illegible] . և [illegible] . ( [illegible] .

գլ. ԺԵ. համար 8։) և ընդունի մեծն օգոստինոս, և ընդ նմա թով-
մաս աքուինացի. (Գ. մասն. խնդ. ԼԹ. յօդ. Է. այլ և 'ի մեկն. յով-
հան. գլ. ա. ընթերց. ԺԳ.) Երկու առաւել հաւանական ընտրելով.
թէպէտ և յառաջին գծիս կարծիքն եղեալ էր, ('ի ա. գիրս միտաց,
ԺԶ. խնդ. Գ. առ 3։) Սակայն այսու ոչ լինաւ համարեցան նոքա,
թէ հոգին որ անձնաւորապար միաւորեցաւ 'ի բնութիւն աղաւնւոյ, և ոչ
իսկ առաւ աքուինացին, թէ էառ զճշմարիտ աղաւնւոյ բնութիւն. այլ
ընդ հակառակն ասէ.* Թէպէտ ոչ էառ զայն 'ի միութիւն անձինն։ Ո
Եւ ոչ իսկ ճշմարիտ աղաւնի առնելն՝ հակառակ ինչ է աւետարանչաց.
զի նոքա ասեն՝ թէ հոգին որ երկ աղաւնի երևեցաւ, և ոչ ասեն՝ թէ
երևեալ աղաւնին էր երկ աղաւնի։ Որպէս յասելն՝ թէ 'ի նմանութիւն
մարդոյ յայտնեցաւ 'ի Թաբօր, կամ նման հողմոյ էջ 'ի վերնատունն, ոչ
իմանի՝ թէ մարմին և հողմն ոչ էին ճշմարիտ մարմին և հողմ։ Եւ ոչ ան-
տեղի ինչ է՝ 'ի կիր առնուլ ԱՅ յայտնելոյ զհոգին զերկնային կենդա-
նիս՝ 'ի նշանակ կամաց իւրոց, կամ յայլ ակնս. որպէս 'ի կերպարանել զհո-
գիսն՝ 'ի գործ առել զաղաւնի, որ յանմարմնոց իսկ էր, և չիք հարկ ասել
թէ երևոյթ էր այն աղաւնւոյ։

(26) 'Ի Գիրս առաքելական։ Այսինքն աւետարանչաց, և այլոց առա-
քելոց, որք զաւանդեալսն 'ի ջէ ընդ գրով արկին։ Այս իմաստ է ա-
ռաւել հաւաստի, քան թէ զմարգարէից իմանալ. զի նոքա առաջ՝ ա-
ռաջեալ յօրէնսն, չնչեալ 'ի մարգարէսն. ուստի ՑԽայր զնել զխօսելն յա-
ւետարանսն, ըստ կարգի բացայայտութեն մերս հանգանակի։

(27) Օծ թագաւորութեան։ Այսինքն արքայս, որպէս զԴաւիթ, զմեծն
կոստանդիանոս, զմեր տրդատ, ևն։ Օծանողակնաց, զօրացոյց, յաղթող
արար զԹագաւորս։ Հրամանատուաց Իշխանութեան. Իշխանութեանցն պար-
գևեաց, կամ հրամայեաց տալ ազատութիւն 'ի մարմնական և 'ի հոգե-
կան փորձութեանց։ Հանդերձեալ օրէնսդրաց, ներգործեաց քաւութիւն մեղաց և
պատուհասից. կամ, կարգեաց քաւչարար նախատառ յեկեղեցի։

(28) Ո՛չ նախաթանալով։ Ցերրորդութեն յարժամ մի անձն նախ թուե-
քան զմիւսն, ոչ եթէ այսու զնախաթանակալն համարիմք կատարելու-
թեամբ մեծ, և զերկրորդն փոքր և նուաստ. այլ միայն զկարգ ծագման
յառաջնագայութեցն ցուցանեմք։ և կամ 'ի մինն առնելով. յասելն մի զերիս
անձինսն, այսու ոչ զանձինսն շփոթեմք։ Եւ կամ յերկոսին փոխանակ, և կէ
յերիս զամենազանցելոյն՝ առաւելութիւն էր, ապշուցանէ կամ առաւելութեն զայլ
կամաց նոցա, ընդ նմին և բնութեն։ Այլ այնչափ անբաժան և հա-
ւասար դաւանեմք զնոսա, մինչև անծէծար հայր, անպատիւ կամ ան-
զօր լինէր, եթէ ոչ ունէր զիւր բանն անձնաւոր. որպէս ոչ ունելով
զհոգին իւր, անհոգի, անշունչ տեղ և անկենդան լինէր։

(29) 'Ի մահացուէ։ Աստանօր հօր այ ճանաչելով զբանն, երևէր 'ի մահ-
կանացու հօրէ ունեմնէ ոչ գոյացէ ծնեալ. մի օրինակ. Եւ կամ մահացու է
ասէին ոմն. այսինքն երևէր՝ թէ մահկանացու որդի է ունեմն մեռեալ։

(30) Աղաղաւ ասէ։ Եթէ զհոգին որ առանց բնկերութեան իմացուք, լի-
նէր անտարբ ինչ հողմ առաջնորդեալ, զոր ոչ գիտեմ՝ ուստի գայ, կամ
յո երթայ. և ոչ գտանի 'ի թիւ անձնաւոր գոյացութեանց. որպէս և ան-
միտքն խորհեցին ասել թէ ազդն ասէր երկու զօգ Թոյլ. և ոչ գտանի ընդ
կենդանիս։ (Իմաստ. Բ. 3։)

(31) Յաւանիկի կազմէլ։ Յանդգնի զեկեղ զհայր յիւրմէ բանէն. Եւ ան-
բաժանութեան. (մի օրին. անբաժանութիւն) Համբառնաւոր, անտարբերութեան՝ արով ան-
բան ասանէ զհայր, կարծէ պատուել զմեծութիւն հօրն, և կամ նուաս-
տութիւն տայցէ բնկերութեան, ոչ Քնառարաբար Գուշով հոգևոր. այսինքն ոչ բնու-
թեամբ ունելով զհոգին՝ այլ առաջնական երկու առար էութիւն ինչ, զայն-

[illegible] : Այս է բանն [illegible] ժողովոյն՝ [illegible] ևն : [illegible] ևն : [illegible] : [illegible] ՚ի բանն [illegible] . 1 :

(32) [illegible] : [illegible] :

(33) [illegible] : Այսինքն [illegible] : [illegible] (3. [illegible] .) ՚ի [illegible] : [illegible] :

(34) [illegible] : [illegible] : [illegible] Տէր Տէր . [illegible] ևն :

(35) [illegible] : [illegible] : [illegible] :

(36) [illegible] : [illegible] . ( [illegible] : ) [illegible] . ( [illegible] . 39 : [illegible] . 2 : [illegible] . 20 : ) ևն : [illegible] ՚ի [illegible] :

(37) [illegible] : [illegible] : [illegible]

հասանէին, թէ ոչ [illegible] (՚ի Բ. Թագ. ԻԲ. 16։ [illegible] ( [illegible] ԺԲ. 19։)

(38) Կամաց ողորմութեանց։ Հայր ՚ի բանին ( [illegible] Է. 18.) * [illegible] ՚ի բանին. * [illegible] Տէր և բան ՃԻ. ԺԵ. 14։

(39) Բան իմն ընծայեցեր։ [illegible] (Զաքար. Ը. 12։) [illegible] 3 [illegible] 4 [illegible]

(40) Մածեալ ճառագայթ։ [illegible]

(41) [illegible] ( [illegible] ) [illegible] ։ 2 [illegible]

(42) Այս [illegible]

Սրտածին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աթոռս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԼԸ.

ա. Եւ արդ՝ տէր զօրութեանց, մեծութեան ահեղ, [1]
անտարակոյս տեսաւորութեան, կամաց ամեն-
ընդարձակ, առատութեան անպակաս. ո՛վ որ զօրեցեր
տանել համբերու [2] պղերգութեանց՝ 'ի միոյ կաթուա-
ծոյ ցօղոյ քաղցր բարութեան, որ ցանկ դեգերիս պատ-
րաստել պատճառս հնարից՝ իմոյս փրկութեան։ Եւ
զոր մեծն է գրեցից՝ պատմել յապառնիս. քանզի
[3] ոչ անուանեցար հրեշտակասէր, և որ զպետութիւս
նոցունց հաստատեցեր. այլ և զերկինս ղամբարօք
նոցին՝ զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սի-
րել զնոսա. այլ առեր 'ի պատիւ մեծաց զովեստից՝
առաջնոյն դասեալ զմարդասիրութիւն։ Վասն որոյ կըր-
կին մեծացուցեր քեզ անուն անճառ՝ 'ի խորհուրդս
տոսկալիս. [4] զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր ըն-
տանին սպասաւորս և գլխաւորս յատուկ մատակա-
րարութեանց. իսկ զստորնային ծնունդս մահկանա-
ցուաց՝ տիրական և ա̄ծական պաշտելի անուամբդ
պերճացուցեր։ Նոցեալ վերստին ըստ սահման կըշ-
ռութեան չափոյ, լայնեցեր քեզ կտակս գրոց՝ ճառից
անքաւից՝ զանապակ ծորմանն ծայրագունին վեր-
նում բարութեան։ Եւս և 'ի մարդանալդ քո [5] միդ-
յէութեն, ոմանց վասն ինքեանց, և կիսոց վասն այ-
լոց՝ զեղեր առատութեամբ զտուրս կենաց, աքուեստս
բազմօրինակս, աքանչելիս ա̄ծագործս, նշանս ճշմար-
տատեսիլս։ Որպէս զի թէ անդամալուծին պակա-
սելոյն 'ի հաւատոցն, [6] հոգաբարձացն առաջարկուե
դիպեսցի յուսոյն՝ գթացեալ ողորմեցար, և որչափ զօ-
րեսցէ առաւել բան քո ամենակար՝ առ ախտալից
մարմնոյս մաքրութեան աղաղակողիս հառաչման. քան-
զի արդարև մեծ են չափք հրաշից՝ [7] քան զանմա-
քրեալս հոգի՝ ոչ հաստել, զլուացեալս պատկեր՝ ան-
տիրելի աղտոյ ներգործել. նա զի և երկրորդս ա-

ռաւելուք յաւազանին շնորհ յաճախեալ՝ զփառսն
հայրենի բարձրացուցանէ ։

Ը. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեցելոյն քո [8] Նախատպաւորեցեր մովսէսի. դու ես, որ 'ի մեղս և յանօրէնութիս՝ վերակացու եղեր տաճմին յակոբայ, մինչ յեգիպտացւոցն երկրի [9] ընդ խաւարն հեթանոսաց ընտանենայիս։ Դու ես, որ օրէնսդէտ ածնես զմեղաւորսն 'ի ճանապարհի, ըստ բանի երգողին դաւթայ. դու ես, որ [10] փոխատրես զքարեղէն սրտից կարծրութիւն՝ 'ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան՝ բանի ընդունելութեան ։ Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել 'ի քէն զբովանդակ կենացն սահման. դու ես, որ տաս զերկիւղ քո 'ի միտս խստութեան՝ առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն
ձայնի ։

Թ. Օրհնեալ քո շնորհաց [11] զաշխարհաստեղծ բերանոյդ՝ զմծեղէն անձրևացդ զկեցուցանողդ կաթուած՝ մատոյ լսելեաց դրանց բացարան, որով զօձին խորամանկուն՝ բանսարկուին թիւնից՝ բարձեր և բժշկեցեր ։ Ամենակալդ ձեռօք՝ զխօսնականացս շարժողական գործի ըմբռնեալ՝ ազդեալ զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութին բանի, [12] զի զատիաքակեալ զպատշաճականն՝ մի յանդգնաբար խօսելով իբր զնախնին՝ լքայց 'ի յուսոյդ, և անբանութե մատնեցայց վանեալ յորսողէն ։ Յուսաւորեամ վերստին զխաւարեցեալ հոգւոյս աչս՝ կենդանաբաշխ աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակութենն շիջեալ լապտեր շնչմամբ վիշապին՝ 'ի ներքոյ գրուանին ստորածածկեցայց ։ Բարձ զանօրէնութիս իմ տէր, և ընկեա 'ի խորս ծովու. [13] որ է փոքր առակ մեծութե քումդ անբաւութե, ըստ մարգարէին, զիմն ընկղմել չարութիւն ։ Կանգնեա կործանեալս անձին՝ [14] Նշան վստահութե, զի մի յուսահատութեն կոթող կառուցեալ՝ զծածկեցելոցն բողոքեսցէ։ Բայց հզօր և գթած՝ [15] զբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի զառ 'ի ներքոյսն մշակութե կորուսչին սերմանց՝ մանկաղաւ կամացդ՝ հուպ առ արմատ խուզեալ հնձեսցես ։ Դնեմ եդեալ հետևել առ

քեզ բողոքիցդ նոճ՝ պետրոսեան օրհնակութեամբն, ՚ի կենցաղիս ծովու մեղանացս ալեաց՝ ընկլուզեալ . [16] մաղթեմ ժամանեալ զաջդ կեցուցիչ՝ յօգնականութիւն ինձ սասանեցելոյս։ Ընդ քանանացւոյն ձայնի՝ ՚ի խորոց սրտիս պաղատիմ, սովեցելոյս [17] ասպատականապատ կաղկանձողական անմնաթշուառ վտանգաւորիս, ապրուստ կերակրոյ փշրանաց հացի՝ ՚ի բազմադեղդ քո սեղանոյ մատուցանեսցես։ Նրամ փրկութիւն [18] նոր-թայ խորանիս՝ որդւոյս դառնութեան, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորուսեալս։ Ո՜վ քո է մեծութիւն, յաղթութիւն և զօրութիւն. և դու ես քաւութիւն և բժշկութիւն, նորոգումն և երանութիւն. և քեզ վայել է փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

---

(1) Անփոփոխելի [illegible]։ Անփոփոխելի [illegible] . [illegible], [illegible]։ [illegible] . (2 [illegible] . [illegible] .) [illegible], [illegible] և [illegible], [illegible] և [illegible] . [illegible] և [illegible], այլ և [illegible] [illegible]։

(2) [illegible]։ այլ [illegible] . [illegible]։ [illegible] ՚ի [illegible], [illegible] ՚ի [illegible], որ [illegible] [illegible]։

(3) [illegible]։ [illegible] և [illegible], [illegible] և [illegible], [illegible] և [illegible] [illegible], [illegible] ՚ի [illegible], [illegible] ՚ի [illegible] . այլ [illegible], և ՚ի [illegible] . [illegible]։ [illegible] և [illegible] . [illegible] ՚ի [illegible] Աճ [illegible] է, [illegible] և [illegible], որ [illegible] է, [illegible] . [illegible] Աճ [illegible] . [illegible] և [illegible]։ [illegible] է՝ [illegible], [illegible] և [illegible] . այլ [illegible] . [illegible]։

(4) Զ[illegible]։ [illegible]՝ [illegible], [illegible]՝ [illegible] և [illegible] [illegible] և [illegible], և [illegible], [illegible] և [illegible], [illegible], [illegible], [illegible] և [illegible]։ [illegible]՝ [illegible] . [illegible], [illegible] . և [illegible], և [illegible]՝ [illegible] . Այս [illegible], [illegible] . [illegible]՝ [illegible]

նիւ [illegible] չարաց զանխառն և զծածկագոյն հնարմանց [illegible] բա-
[illegible] ։

(5) Մեր չքնաղն ։ Որ մեզ յանձնութէ․ որպէս [illegible], և 'ի բանին [illegible]․ 2 ։ 'Ի մարդանալ [illegible] մեզ յանձնութենէն, [illegible] հնարիւք, [illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible]՝ յօգնութ նոցա․ և [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible]՝ յօգնութ [illegible]․ չնորհեցեր [illegible] [illegible] կենաց, [illegible], [illegible] էն ։

(6) Հոգւոյ [illegible] ։ Եթէ [illegible]՝ որ ոչ [illegible] [illegible], կամ ոչ [illegible] [illegible], այլ միայն [illegible] նոցա [illegible] [illegible] կամ [illegible] յուսոյ նորա, [illegible], որչափ [illegible] [illegible] բան քո 'ի մարդկութիւն [illegible] [illegible] [illegible] մարմնոյս, [illegible] հաւասարն, [illegible] մարմնոյս կամ [illegible]՝ որ [illegible] [illegible] [illegible], կամ [illegible] [illegible] [illegible] ։

(7) Քան դամբարանս ։ Քան [illegible] հողիս [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] են [illegible] [illegible] [illegible] [illegible]․ [illegible] զի [illegible] է [illegible] [illegible] չնորհաց․ [illegible] [illegible] [illegible] [illegible] չնորհացն՝ [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] մարմնոյ և [illegible] ։ Նա զի և [illegible], [illegible] չնորհաց՝ [illegible] [illegible] [illegible] [illegible], 'ի [illegible] չնորհաց [illegible] [illegible], կամ [illegible] քան [illegible] չնորհ․ [illegible] [illegible] զի այն 'ի [illegible] [illegible] մեր [illegible] և [illegible] [illegible], [illegible] [illegible] 'ի չնորհս՝ [illegible] կամաց և [illegible]․ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] թէ զայն [illegible]՝ [illegible] [illegible] [illegible], և թէ զայն՝ [illegible] [illegible] [illegible] յանձ [illegible] ։ Այլ [illegible] [illegible] զայն [illegible] կամի, թէ զմեծն հրաշից՝ [illegible] [illegible] [illegible] 'ի չնորհս [illegible] [illegible]․ [illegible] [illegible] և [illegible]՝ [illegible], [illegible] [illegible] [illegible] ։

(8) Նախապատուեցեր [illegible] ։ Այսու կամ զայն խնամոց, որ ասա-
ցաւ ( Եզեկ․ Լ՟․ 7․) " Բազմաց զանօրէնութիւնս և զանխրատութիւնս || ։ և
կամ խնամոց [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible], [illegible] [illegible]
թն 'ի մեզ ։ ( Եզեկ․ Դ․ 7 ։ )

(9) Ընդ խառն հեթանոսաց ։ Եբրայեցիք յեգիպտոս կալով, ոչ միայն զհեթանոսական սովորութիւնս ուսան, այլ և բազումք հաղորդեցան 'ի նոյն սովորութիւնս, որպէս յեսու յանդիմանէ զնոսա ։ ( Իդ․ 14․) " 'Ի բաց արարէք զաստուածս օտարս, զորս սպասաւորեցին հարքն ձեր յայնկոյս գետոյն, և յԵգիպտոս || ։ Այլ ասէ, ընդ խառն կամաւորութեան հե- թանոսացն [illegible] Եբրայեցիք, որ [illegible] [illegible] էր [illegible] [illegible]․ [illegible] որպէս [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible], նոյնպէս 'ի [illegible] նոցա ։

(10) Փոխարէն . . . ի լոյծ կոչեցաւ ։ Փոխեա 'ի [illegible] կակղութն, [illegible] 'ի լոյծ կակղութն ։ Զխառնակեալ [illegible] փոխեա 'ի կակղութն մարմ- նեղէն՝ առ 'ի ընդունել [illegible] [illegible] [illegible] ։ Բոլոր [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible]՝ առ 'ի [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] կենաց ։

(11) Զանխորհրդութեան [illegible] ։ [illegible]՝ որ [illegible] է․ [illegible] [illegible] [illegible]․ զի որպէս մարմինն՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], նոյնպէս [illegible] մարմնոյն՝ և [illegible] մարմնոյն [illegible] [illegible] ։ Նոյնպէս [illegible] [illegible] [illegible] թուքն, [illegible] [illegible], կամ առ [illegible] [illegible] [illegible] ։ Ըստ այսմ և [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] ․ և [illegible],

[illegible] չէ, քաղաք, և ն. [illegible], [illegible] : Այլ [illegible] [illegible], [illegible] [illegible] : [illegible] 'ի [illegible] [illegible] : [illegible] 'ի [illegible] : [illegible] 'ի [illegible] :

(12) Զի [illegible] : Ա[illegible] [illegible], [illegible], որ է [illegible] կամ [illegible] . [illegible] . [illegible], կամ [illegible] .) [illegible] . [illegible], և [illegible], [illegible] 'ի [illegible] . և [illegible], [illegible], 2 [illegible] . [illegible], և [illegible] է [illegible], [illegible] և [illegible] :

(13) Որ է [illegible] : [illegible] է [illegible] :

(14) Նշան [illegible] : Ա[illegible], կամ [illegible] . [illegible] , [illegible] . ( [illegible] [illegible] .) [illegible] 'ի [illegible], [illegible] :

(15) Զ[illegible] : Բ[illegible], կամ [illegible] . [illegible] 'ի [illegible], [illegible] . [illegible] 'ի [illegible] :

(16) Մ[illegible] : Կ[illegible] 'ի [illegible], [illegible] 'ի [illegible] . այլ [illegible], [illegible], [illegible] :

(17) Աստղաբաշխութիւն : Հ[illegible] . [illegible] է, [illegible] . և [illegible] : Եթէ [illegible], [illegible] : Ս[illegible], [illegible] 'ի [illegible] կամ [illegible], [illegible], [illegible] . [illegible] 'ի [illegible] . ( [illegible] . [illegible] . [illegible] .) [illegible], [illegible] . և [illegible] . * Ա[illegible] և [illegible] || : [illegible], [illegible] և 'ի [illegible] : Ց[illegible] և 'ի [illegible] Պ[illegible] . Թ. 5, [illegible] . * Հ[illegible] || : [illegible] : Այլ՝ [illegible] . [illegible] է [illegible] : Ի[illegible] ( [illegible] .) Ց[illegible] և [illegible], [illegible] . [illegible] և [illegible] 'ի [illegible] :

(18) Նշխարաց [illegible] : [illegible], [illegible] 'ի [illegible], և [illegible] 'ի [illegible] և [illegible], [illegible] 'ի [illegible], որ [illegible], այլ և [illegible] և [illegible] :

Մերոյին յաւելուած նըշէն հեծութեան՝ նորին հոլովոյ, առ նոյն ողբերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ ։

# ԲԱՆ. ԼԶ.

ա. Եւ քանզի անթիւ են յաճախեցեալ եւ գե-
րազանցութեամբ միշտ առաւելեալ փըր-
կանաւորդ արդասիք շնորհաց՝ [1] առ պարտուցս իմոց
առաւելութիւն, չարչարանացդ հանդէս եւ յանձնա-
ռութիւն ։ [2] Զափդ ամփոփիչ ամենից հոգւոց՝ գոյից
արարիչ՝ 'ի գործարանի մահուն նշանի խաչին հե-
ղուեր, զի զձեռնարկութիւն իմ ընդդիմութեան կամաց
քոց՝ լքցես ։ [3] Զընթացողական ըծակցութիւն եր-
կոցունց ոտիցդ կեցուցանողաց՝ յանարգելութեանս
պատճառ՝ 'ի պատժարանի փայտին մածուցեր, զի
զփախուցեալս վայրագութիւն Թշուառացելոյս գրա-
ւականեսցես գթածարար ։

բ. Ո՛չ գոսանալ [4] ձեռաց կափողացն հրամայեցեր՝
օրհնեալ գագաթամբդ, որ զԹզենւոյն տունկ առժա-
մայն չորացուցեր, զի եւ զառ իս նկրելոյդ օրինակ
կանխաւ աւետարանեսցես ։ Ո՛չ զանողացն ալիրա-
տուն [5] զխոստովանեալդ ա՟ծ՝ սպառնացար, որ զա-
րուսեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին՝ բա-
րութիւն հանգստեամբ հանդերձ գործեսցես ։ Ո՛չ ըդ-
հայհոյչացն [6] հնարաւոր չարաբանութիւն կապտեցեր,
որ զլուսնին պատկեր երանգաւ արեան գունեցեր,
զի զանհամարձակ լեզուս 'ի գովեստ քեզ զօրացուս-
ցես ։ [7] Ո՛չ նախատողացն մոլեգնութեան սաստեցեր,
որ զաստեղս սասանեցեր, զի զԹշուառացեալս զլեզուս՝
գթութեանդ օծմամբ իւղեսցես ։ Ո՛չ 'ի մոլորեցուցիչն
կարդալ զքեզ ա՟ծապանիցն՝ զօդուած ծնօտիցն
բաժանեցեր՝ քակտեալ 'ի միմեանց, որ զկարծրու-
թիւն վիմացն հերձեր, զի զանունակս բարեաց հոգիս՝
'ի բերմանէ ընդունայնութեան ողորմութեամբ հանդար-
տեցուսցես ։ Ո՛չ զպահապանացն սուրս՝ [8] ընդ երաց
իւրեանց մատուցեր, որ զորովայն օձին սահեցմանն
հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս՝
ինձ 'ի գանձարանի պահեալ, կենաց յարութեան ար-

ծանուցուցես։ Որ 'ի կնքելն զշիրմին փակման 9 կենդանակիր քո գերեզմանին՝ անդրէն յորդայնեալս զնոյն յանդունդս երկրի տուժեցեր, զի 'ի տապանակի անձինս զնշխար լուսոյդ հանդուցես։ Որ 'ի համբաւելն զքեզ կորուսեալ, և 10 իբր զերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենապատառ՝ զօրմն ծննդոցն կործանեցեր, զի զիս զանարժանս յիշատակի ընտրութե բարեաց՝ անկորուստ և անմիջաւելի՝ ընդ փրկեցելոցն հաղորդեսցես։ Որ յարծաթոյն 11 կրկնակապէն կաշառաձգութե, որ 'ի գանձարանէ հօր քում նուիրաց քեզ զրաւ մատնութե և անարգութե մամոնաւորեցին՝ զուրացողացն մոլեգնելոց, ըստ հին հարուածոց հանոյն մովաբու՝ 'ի յարձան քարի յեղանակեցեր, զի զիս զվրիպեալս 'ի հաստատութենէ՝ և ընդ իշխանութե մահու վաճառեալս՝ արեամբ քո փրկեալ, 'ի հաստատուն վիճակ կառուցես։ Օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յամի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Ա. [illegible] Փրկաւէտ [illegible] քոյ միշտ [illegible] ... [illegible] ... և 'ի մէջ [illegible] ... [illegible] ... զի [illegible] կեցոյց զՔս։

(2) Զատիկ [illegible] ... [illegible] 'ի [illegible] (Ժ. 8.) "Զեռք քո [illegible] զիս ‖. և (ԺԲ. 10.) "Որ 'ի ձեռսն Նորա [illegible] շունչ ամ կենդանեաց, և ոգի ամ մարդոյ ‖։ [illegible] 'ի [illegible] ... (3 [illegible]) [illegible] ... [illegible]։

(3) [illegible] ... [illegible] ... 'ի [illegible] ... [illegible] ... [illegible]

ատս քո ախորժեսցես 'ի պատուհասական փոխարէնն՝ որ պատուհասէ. կամ զործի եղե-
ւոյ անարգել անհնազանդութեան 'ի նախաստեղծեան, յորժամ հալած մերձեցան 'ի ծառն արգելեալ : Խմասացն ամբողջ են . եւ ինքնին եւ կամ 'ի նախաստեղծեան անարգել զնոցա տուեալ մարմնոյ, եւ կամ բաղձանօք զգայականօք, խոյս տուեալ 'ի հանապազորդաց քոց, եւ յօտար շաւղս ընթանալով . վասն այն զկենդանարար զքո զօրութ 'ի պատուհասանի խաչին անձնել յանձն առնէր, որով զաղեյես եւ պինդ ուժեյես զանարգել ընթացս իմ :

(4) Ձեռաց նուիրողացն : Ոչ հրամայեսցես զօսանել . չորանալ ձեռաց հարկանողացն օրհնեալ գագաթանն, զի հարկանողաց զօրհնեալ զագաթն . որ բանիւ եւեթ չորացուցեր զամբողջ առանց Թզենւոյն՝ ընթանձրն եւ զերջան . զի՞նչ դժուարին էր քեզ նոյնպէս զանօրէն ձեռան չորացուցանել վաղվաղակի, այլ զի ծանուցանիցես զառ իս ներելոյդ օրինակն :

(5) Զխոտորմանելոյ տեղ : Ոչ տապանեցար, ոչ տառեցեր չարութեան զանուողացն զխոտորմանելոյ ԱԾ, այնուցիկ որք կամ հանաչէին զքեզ ԱԾ, եւ կամ յայլոց լսեալ էին, եւ առաջին առակաւ զխաւսն չարաւէտ հատուածէն զանաւհարութի . եւ զոր Տէր՝ որ զօրութեան, զարեգակն մթացուցեր, խաւարեցուցեր, լռեցեր առ զանխէջն՝ առնս իմոյ հանդերձ անձան : Լաւ օրէն . առավօտաւոր զրէ արեգակն . եւ զայս բառ փոխանակ արեգակին առնու Ոբ վարդապետ նաև 'ի Ցեշտոաանասանն, այլև 'ի զամեան Աւաջելոց, եւ Մծբնայ եւ 'ի պատմ . Աշխարհիկց խաչէն :

(6) Հնարաւոր չարաչարանաւն : Զկենդանաւոր չարախօսութի հայհոյչացն ոչ խռովեցեր, ոչ պատասխանեցուցեր . ոչ լռեցուցեր, ոչ կարկեցեր 'ի բերանոյ նոցա խրատական բանիւք, ոչ 'ի բաց առներ զպատրաստական առութեան նոցա : Բայց Թուի Թէ մարթ է առանձնոր զխռովեցեն առնուլ 'ի խռովս բառէն, այսինքն կասկածանել, եւրև Թէ զկենդանաւոր լեզուս կամ զշըրթունս հայհոյչացն ոչ կասկածեցեր, առ 'ի պատմել առնեցուցանել զարիւնն . (տե՛ս եւ ռուսկ . առն՝ մեծմեծ ընել :) Զայն մէտս անկանել է առնելն զկնի, զոր՝ որ զերկնս լուանեն գոմեշէր, ներկեցեր 'ի զոյն արեան մթագին, եւ առաւել կարող էիր զփողփն անզամ լեզուի ներկել 'ի կապոյտ՝ սառուցմամբ եւ այտուցմամբ : Սակայն ոչ արարեր զայդ առ նոսա, այլ դու ինքն լռեցեր՝ տալով խնուլ լեզուի համարձակութի ընթերցան հնչել զօրհնութիւն քո փոխանակ հայհոյանաց նոցա :

(7) Ու նախափողացն : Ոչ տառեցեր կատարել յանդգնութեն այնոցիկ՝ որք փչէին պատկառանս նախատանեցին զքեզ եւրև սուտ Թագաւոր, կարող զոլով զգլուխս նոցա խլել 'ի առեղծէն՝ զոր որ զերկին եւ զերկիր առանձնեցուցեր . այլ տարար համբերութե այնպիսի նախատանաց . որպէս զի օծմամբ շնորհաց քոց զգլուխս եկեղեցւոյ զարդարեսցես :

(8) Ընդդէմ նուէրաց : Զսուրս զենողացն պահապանողաց ոչ յառնուս նոցա մխեցեր, ոչ ընդ սուսեր եւրևանց հաներ զնոսա, զոր օրինակ զորավարն օձից ընդ հող տապալեցեր . որպէս զի քոյով յանձնառութե ինքնին պահապան լինիցիս տաճարի մարմնոյ ունեցողաց առ անմահն կենդանութե :

(9) Կենդանակիր ծնողին : 'Ի կնքել հրեից զգուշն գերեզմանին՝ որ կրէր կամ ունէր յինքեան զմարմինդ կենդանարար, կամ որ կենդանի էր ծածկութե մխատրելով, ոչ յորդորեցեր, յերկիր կործանեալ զնոսա յանդգնութս ընկղմեցեր . որպէս զի 'ի փողանակի, 'ի գերեզմանի մարմնոյս հանգուցես, պահեցես զնշխար լուսոյդ, զմնացուածս օծման քահանայութե, կամ զնշխար Որ մարմնոյ քո, եւրև Տրդատ կամ կանթեղ՝ նշանակ յարութե . որպէս եւ առաւօտուն էր առաքելոցն՝ զնել կան-

թեղ 'ի գերերկրեանն [illegible], և [illegible] 'ի [illegible] խոր-
հրդոյն :

(10) Իբր [illegible] մարմին : Ցորժամ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] թէ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] են :

(11) Կըթնախաղէն : [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] : Արդ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] : (Ծննդ. ԽԹ. 37 :) Զոր [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], (Ա. [illegible]. Գ. 27. 28.) [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] : [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] : [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] Ա. [illegible], ա. 5. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] Ժ. 8 : Այսպէս [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible] : [illegible] 'ի [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible], այլ [illegible], [illegible] :

---

Ս Երարին յաւելուած երկին հեծութիւն՝ որդին հոգւոյն, առ որոյն աւերս մաղթանաց բանին :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Թ :

# ԲԱՆ. ԺԱ.

ա. Որդ՚ք այդ զուարճարարն վերադարձուցեալ բա-
րեշնորհութեան քոյդ պարգևաց առ իմս
երախտիս, ձգ՚ ամենազութ բարերար գոլեալ և
ամենազօր, թէ և սակաւք շարադրեցան առաւօր
եղեալ, այլ արքայազունք են, և իշխանականք իսկ-
նականութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վեհից,

Ածափառք, լուսանորոգք, և հրաշապատիւք։ Յաղթողական վերամբարձութ̃՝ դրօշիւք հաշակեալք ըստ գլխոց գլխոց՝ պսակապաճոյճ գեղազարդելոց,[2] բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւս օրհնաբանողաց, համբոյրս՝ հեզս՝ երջանիկս և խաղաղականս ա̃ծային հարազատութ̃ց՝ այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթի՛ր տէր զզօրութիւս քո, և եկ կեցուցանել զմեզ.[3] որք յոյժ զօրեն հալածել զմեզ, և զանյուսութ̃ն կարկուտ հալել և փախուցանել, քան թէ նախամարտիկն զինուորութ̃ի երկնային պարուն՝ զգիշերավարն խաւարասէր սկզբնաներհակ՝ բարւոյն ա̃յ։ Քանզի և զբնաւն այլքանեացս ձրից որ 'ի բարձրելոյն ինձ անձրևեցաւ՝ տկարիս, թշնամւոյս՝ և ապախտաւոր ծառայիս, անճառ է ասել. իսկ եթէ համարձակեցի ոք զօրել խօսել, զսակաւս 'ի բազմացն՝ քան թէ[4] զիսկութ̃ի համանգամայնիցն. առ այսոսիկ՝ զառաջին նիւթն յիշելով յորմէ հաստեցաւն, իբր ըղտկար ոք նկուն՝[5] 'ի զօրութ̃է մեծէ հերքեալ պարտեսցի։

Ժ. Այլ[6] թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ զնոյն վկայեմ առ թերի խակութիւն հողոյս՝ և կատարելութիւն հաստողիդ, և առ բարիսն իմ չարժանութ̃ի, սակայն ամենալոյս աննախանձ և բազմազեղուն գովեալ արարչութ̃դ զօրեղութ̃ վանեալ են կարծրութ̃ք արտաբերուն սրտի բանսարկուին. որ քարին առակաւ՝ յուսահատն վհատուն, սպառմամբ խոպանացման աղբերացս երկուց, որ 'ի զգայականս եդեմայ բղխել պատրաստեաց անկօղն, զի ոռոգեալ ծաղկեսցի նովաւ՝ որ 'ի յիս բարեգործութ̃ կենսատունկն դրախտ, ահա մի ցամաքուք արտասուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խարամանկեսցէ վերստին հանել 'ի փափկութ̃է նախնաւմ վիճակին։ Իսկ[7] յորժամ կացցէ ա̃ծ՝ համբարձեալ հրաշիւք արուեստից 'ի մէջ աստուածոց հաշտարանացն խաղաղութ̃, բարձեալ ընդ ինքեան զշնորհացն կտակ, առ որ ամենայն վնասակարութ̃ք խարդախութ̃ց և կարճմտութիւնք ստնեղութ̃ց՝ իբր ընդ միմեղէն լերին պնդուե̃ բաղխեցեալ ցնդին,

Ջրոյ օրինակաւ տակաւու հեղեալ, և կամ հողոյ խոր-
տակմամբ փշրեալ:

Գ. Որդ՝ չէ իմ կշտամբանքս՝ ըստ ձայնին յոբայ՝
'ի մարդկանէ իցեն, այլ յամենատես աչաց վերին
հրամանից մտեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս,
8 տանկմամբ սասանեալ յոմն կարծեաց, ապաւինիմ
և արդ անձամբ բեկելով 'ի յոյսդ հաստատութեան
կենդանի անեղծ. զի ողորմութիւն նայեցեալ 'ի յիս
իբր 'ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բա-
րերարութեան երկնայնոյդ յանդիման եղեալ՝ 9 ապա-
ձեռն անթոշակութիւն, զքոյդ երախտիս անպատում
փառաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ
ոչ մոռացմամբ զբաղեալ նիրհես, և ոչ թարթափ-
մամբ աչաց ընդմիջեալ՝ զհեծութիւն կրից անտեսես:
Հեռացո յինէն աղաչեմ զքեզ, խաչիւդ լուսոյ՝ 10
զխեղդ վտանգիս. հոգարկութիւն տրտմութեանդ՝ զտա-
րակուսելի տխրութիս. փշանիւթ պսակաւն՝ զբող-
բոջ մեղացս. զարկուածով գանին՝ զհարուած մա-
հուս. ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս. թըշ-
նամանօք թքոյն՝ զանարգանելի գարշութիս. լեղւոյն
ճաշակմամբ՝ զհոգւոյս դառնութիւն: Մահ քո են այս
ամենայն բարութիք անքովանդակելիք՝ այ միոյ միածին
որդի. առ որովք զչարութիս իմ յիշատակեալ՝ զա-
մենօրհնեալ անուն քո կարդամ բարձր աղաղակաւ
11 իմանալեացս պատգամանօք: Տես 'ի խոստովանութիւն
զղջման պարտութեան ամաչեցելոյս, և տուր ողոր-
մութիւն որդւոյս սատակման մահուն անմահի. զի 'ի
բաղմութեան իմոցս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին
անձնեցմամբ առաւելութիւն՝ քո ողորմութիդ աւետա-
րանեցի, հռչակեալ հնչմամբ ահաւորութեան յերկ-
նի և յերկրի: Այլ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով
փառք յաւիտեանս. ամէն:

---

(1) Այդ գաւառբարբառ: Խառամբ, կամ կարդեալ բաղմութիւն մերձաւորեալ քոց պատարագաւոցդ, առ իմն երախտիս, առ 'ի բարերարական ինձ: Աստուածոր դէմ վարդապետսս զզանազան մասունս և զպատուաղս չարչարանաց փրկչին՝ օրինակէ 'ի բանսն աղաղակացութեան զորաց՝ որոշելոյ ակնարկս զդրօշակացն յաղթողականօք առ 'ի պատանեալ բաղմին ընդդէմ մեղաց և սատանայի: Որտորի առէ՝ Թէպէտ և սակաւս եղի, այլ անբաւապատենք են, եւն. վասն զի քոյ առաքելին են կիրք, և նորա ինքնակալութեան գործք. ոչ նուաստ-

[illegible] մատուցանէք, ոչ այն մեծարգութեամբ, ոչ՝ հրեշտակաց [illegible]-
թեամբ, զի այսուհետեւ ծառայից են, և ծառայականք: [illegible]. ոչ [illegible]
[illegible] [illegible]՝ [illegible], այլ [illegible] [illegible], [illegible] առ [illegible]-
[illegible] [illegible]թեամբ [illegible]. [illegible] [illegible], յաւիտենականք [illegible]թեան
[illegible]. զի հայր [illegible], [illegible], հայրն [illegible]-
ցոյց: Որով [illegible] են քան զերկնաւորս [illegible]թեան. [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] յաւ-
[illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible], յաղթող
[illegible] 'ի [illegible] [illegible] և [illegible] և [illegible]. և որ [illegible]
է՝ յաղթելով [illegible]թեն և [illegible]թեն [illegible]. զի որոց ոչ յաղ-
թեսցէ զօրութիւն և [illegible], յաղթեսցէ [illegible] և [illegible]:
Որպէս և [illegible] [illegible] [illegible] առ հրեշտակս. (Եսայի. կէ. 3.) * [illegible]-
ցի [illegible] [illegible]թիւն, և [illegible] [illegible], և զնա հանդերձ իմ [illegible]-
[illegible] ||. [illegible] [illegible] և [illegible] [illegible], որք զնա [illegible]
[illegible]. և [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible]. (Երգ. Համառ. Դ.) * Զօրութիւն [illegible] [illegible]-
[illegible], [illegible]թիւն [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]
[illegible], || [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible]. զի այլ
զրօշ է [illegible] և [illegible] [illegible]. այլ զրօշ [illegible].
այլ զրօշ [illegible] [illegible], և այլ զրօշ [illegible] [illegible]: [illegible]
[illegible], այլ զրօշ [illegible] [illegible], և այլ [illegible] [illegible], այլ [illegible]-
հութեանն, այլ [illegible]թեանն, ըստ [illegible] և [illegible]:

(2) Բեւեւոյ ըստ [illegible]: Այս [illegible] [illegible] [illegible] [illegible]
ըստ [illegible] 'ի [illegible] [illegible]թեան հրեշտակաց [illegible]. որք [illegible]-
նեան զօրութեան, [illegible] և [illegible]թեան [illegible], և ոչ թէ [illegible]
[illegible]: [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible]
են: Եւ այս [illegible] են [illegible] [illegible], [illegible] [illegible]-
[illegible], կամ 'ի [illegible] [illegible] էր, [illegible] [illegible], [illegible] [illegible]-
[illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], (Սաղմ. ՃԹ. 3.)
[illegible] [illegible] [illegible]. [illegible] քո [illegible] [illegible] 'ի [illegible] և 'ի
[illegible] [illegible] քո առ [illegible], և էլ [illegible] [illegible] 'ի [illegible]
[illegible]:

(3) Որ [illegible] [illegible]: Այս [illegible] ոչ [illegible] [illegible], այլ [illegible]
[illegible] [illegible], որք [illegible] [illegible] և [illegible] [illegible]՝ [illegible]-
[illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible]թեն, [illegible] [illegible] [illegible]
[illegible], [illegible] [illegible], կամ [illegible] [illegible]
[illegible] [illegible]՝ [illegible], [illegible] [illegible], որ [illegible] [illegible]-
[illegible] [illegible] [illegible] էր:

(4) Զ[illegible] [illegible]: Զ[illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]
ոչ [illegible] [illegible], այլ [illegible] 'ի [illegible]: [illegible] և [illegible], 'ի
[illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ [illegible]
[illegible], ըստ [illegible] և [illegible] [illegible], յաղթել՝ [illegible] [illegible] [illegible]-
[illegible] 'ի [illegible] և 'ի [illegible] [illegible] [illegible]:

(5) 'Ի [illegible]: Յ [illegible]. 'Ի [illegible]:

(6) [illegible] [illegible]: [illegible] և [illegible], թէ [illegible] [illegible] [illegible]-
[illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] քոյ, և
[illegible] [illegible] [illegible] առ [illegible] [illegible], [illegible] [illegible]
[illegible] կամ [illegible]թեն [illegible] [illegible], և [illegible]-
[illegible], և առ [illegible] իմ [illegible], և [illegible] [illegible]-
[illegible] [illegible] իմ առ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]-

[illegible]

(7) [illegible]

(8) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible]

Սերտագին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն·
աղերս նաղխանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# Բ Ա Ն Ի · Լ Բ :

ա · Բայց արդ՝ որպէս երբեմն յայլ ընթերցուա-
ծի [1] որ 'ի սկզբնաւորականացն կարգի՝ զմե-
ղանացն զխաւարայինն ծնունդս գլխաւորացն օրի-
նացն՝ մարմնականացն անդամոց՝ գրեցի, յորոց տի-
րեցայ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահմանի
ընտրութեան բանի՝ զլուսածնելոցն զազատարարն օրէնս
հոգւոյն կենաց որ 'ի տէր յս՝ յիշատակեցից նուազս
յոքունց, իբր յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի
առեալ :

բ · Բանզի են արդարև [2] կայսերականք ոմանք 'ի
բարձրութեան գահի բազմեալք, թագակաւն շնորհաց
լցեալք և հաստատեալք : [3] Մաքրութիւն՝ և սրբե-
ցեալք իւր · արքայն՝ և պատուաւորք իւր · պսա-
կեալն՝ և իշխանականք իւր · բարեհաճականն՝ և
հնչմունք իւր · յաղթողականն՝ և փողք իւր · զօրա-
ւորն՝ և մարտիկք իւր · գովեցեալն՝ և փառք իւր ·
փեսայն՝ և պարաւորք իւր · [4] դշխոյն՝ և օրիորդք
իւր · [5] փեսաւէրն, և հանդերձանք իւր · [6] ազատու-
թիւն՝ և շնորհք իւր · այցելութիւն՝ և ձեռն իւր · խոս-
տումն՝ և քաւութիւն իւր · պահպանութիւն՝ և աջ իւր ·
պարգևն՝ և զարդ իւր · նշանն կենաց՝ և ամրութիւն
իւր · կնիքն՝ և նկարագիր իւր · ամպն և հովանի իւր ·
արուեստն՝ և հրաշք իւր · հոգին՝ և անեղծութիւն
իւր · բանն՝ և կատարած իւր · ուխտադրութիւն՝ և
լրումն իւր · զօրութիւն՝ և հրամանք իւր · լուսաւո-
րումն՝ և սքանչելիք իւր · մանանայն՝ և անապակա-
նութիւն իւր · վէմն կենդանի՝ և վտակք իւր · ակունն
հրոյ՝ և ճառագայթ իւր · որոտումն՝ և ազդմունք
իւր · յոյսն վերին՝ և փրկութիւն իւր · ծառն օրհնու-
թեան՝ և պտուղք իւր · բարունակն՝ և բարութք իւր :
Այլ զի [7] մի զբնաւն առեալ յամենայնսէն վրիպեցայց,
իբր յարեգակնէ այլայլեալ աչաց տկարութե, 'ի շատն

տանել լուեցից՝ և 'ի տակաւն ժամանեցից, բաւակա-
նացեալ ամենապիրկար կարիւ ։

Է. Այց առ[illegible] յաւէտ աստանօր՝ թշուառացելում եղկելի անձինս. քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս՝ բողոք գուժիս. վասն զի ընդ այսօսիկ ապ ընթեր սորին գայ, արդարութիւն՝ և կշիռքն. վճիռն՝ և հատուցմունքն. քննութիւն՝ և լոյսն. [8] յանդիմանութիւն՝ և զամբարքն. մերկութիւն՝ և պատկառանքն. յայտնութիւն՝ և ամօթն. ամբիծն՝ և վատակքն. Թիւրեալն՝ և պատիժքն ։

Է. Դարձեալ վերստին աշխարհ՝ կրկին եղկելոյս. քանզի գայ հասանէ [9] առ հասկ հասակիս անհնարին բարկութիւն, մահագաղն՝ առ հունձս. դատաւորն՝ առ ատեանս. հզօրն՝ առ բեմն. ապաշնացեալն՝ առ կորուստ. բազուկն՝ առ դատաստանն. գաւազան խրատուն՝ առ հարուածն. ապաշաւքիւթիւն՝ առ նախանձն. հովիւն՝ առ ընտրութիւն ։ Քանզի բանն զոր խօսեցար ընդ իս, նա դատի զդատապարտեալս 'ի վերջնումն աւուր հատուցմանն ։ Այլ կանխեալ բարեգութ, [10] նախընծայ քաղցրութիւն՝ առ նուազ հեծութիւն վարանական երկիւղիս. և զօրութիւն ընձեռեալ ձեռամբդ օրհնութեան 'ի յետին տագնապիս՝ առաջինդ քո օգնութիւն մխիթարել բժշկել, քաւել և կենագործել ։ Նոյն քեզ փառք յամի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

---

(1) Որ Ն [illegible] ։ [illegible] (Յ [illegible]. Հռովմ. Է. 23. Ը. 2 ։) [illegible] և [illegible] ։

(2) [illegible] ։ [illegible] ։

(3) [illegible] ։ [illegible], [illegible]. և առ [illegible].

Թէ որ [illegible] կամ [illegible], և կամ [illegible] ինչ ինչ. որպէս [illegible] առնել կամի, թէ նոյն ինքն [illegible] օրինակաւ, և համօրէն [illegible] նորա [illegible] [illegible] յերախտաւոր մարդկան ։

(4) [illegible]՝ [illegible] ։ [illegible], և [illegible], և կամ [illegible] ։

(5) [illegible] ։ [illegible], [illegible] նորա, և [illegible], որով [illegible] քո ։

(6) [illegible] ։ [illegible], և [illegible] իւր, [illegible] ։ [illegible], այս [illegible], և [illegible] իւր, [illegible], կամ [illegible] ։ [illegible], և [illegible] իւր, [illegible] ։ [illegible], և [illegible] իւր, [illegible] նորա ։ [illegible], [illegible], կամ [illegible], և [illegible] իւր, [illegible], կամ [illegible], [illegible], եւ, որք [illegible] 'ի վերայ [illegible] ։ [illegible], [illegible], և [illegible] իւր. [illegible] իւր [illegible] ։ [illegible], և [illegible] իւր, [illegible] 'ի [illegible], [illegible]. (Գ. 27.) * Որ [illegible] 'ի քո [illegible], [illegible] ||։ Ա[illegible], և [illegible] իւր, [illegible], որ [illegible] իւր 'ի վերայ [illegible] ։ Ա[illegible], [illegible], և [illegible] իւր, [illegible] նորա ։ [illegible], և [illegible] իւր, [illegible], [illegible] նորա, կամ [illegible] ։ [illegible], [illegible], և [illegible]. և [illegible] իւր, [illegible] նորա ։ [illegible]. [illegible], (Գաղ. Եփ. 29.) * Եւ [illegible] ||։ [illegible], [illegible] քո, և [illegible] իւր, [illegible] ։ [illegible], [illegible], և [illegible] իւր, [illegible] նորա ։ [illegible] 'ի [illegible]. և [illegible] ։ [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] քո, որ [illegible]. որպէս և [illegible], քո, և [illegible] իւր, [illegible] ։ [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible]՝ որ [illegible], որպէս և [illegible], [illegible], [illegible], եւ, որպէս 'ի նորա [illegible], և [illegible] 'ի վերայ քո 'ի [illegible] ։ Յ[illegible], [illegible] ։ [illegible], և [illegible] իւր. [illegible]՝ [illegible] ։ [illegible], [illegible], կամ քո [illegible] 'ի [illegible], (Բան. [illegible]. Եփ. 2. 14. 19.) և [illegible] իւր, [illegible] և քո. [illegible], [illegible]՝ որ [illegible], և [illegible] իւր, [illegible] ։

(7) Մէ [illegible] ։ [illegible], [illegible], և ոչ [illegible]. որպէս որ [illegible]. [illegible], [illegible]՝ և ոչ [illegible] նորա և կամ [illegible] ։ [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], [illegible] ։

(8) Յ[illegible] ։ [illegible], և [illegible], [illegible], և [illegible], և [illegible] ։ Ա[illegible], [illegible],

և [illegible] [illegible] արժանի գործքն. որպէս և [illegible], [illegible], և [illegible]։

(9) [illegible] ... 18 ... [illegible]։

(10) [illegible] ... [illegible]։

Մեղաւորին յառաջեալ ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ասելոց ձայնականաց բանի։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԼԹ.

ա. Եւ քանզի [1] զկերպարանն առաջին լքի ՚ի մըտա-
սակարին թելադրութեան՝ իմոյս ծուլութեամբ
կորուսեալ խսպառ, ցուցից արդ այժմուս զհնոյն
յիս տեսակ. ողորմելի հեծութեամբ թախծեալ ՚ի հո-
գի, անաչառ խայտառականօք հրապարակաւ՝ ՚ի յե-
կեղեցիս բազմութեան ազգաց՝ վերապատմեցից բարձր
ձայնիւ, բարբառով մեծաւ աղաղակելով։

բ. Մատեանս չնչական՝ բարդեալ ՚ի յինքեան [2] ներ-
քոյ և արտաքոյ ողբս և վայս և ձայնս, ըստ տու-
մարի տեսլեանն եզեկիելի. քաղաքս անպատուար և
անմահարձան. յարկս ունայն ՚ի դառնութական ամ-
բութեց. [3] աղս տեսակաւ, այլ ոչ համեղութք. Ջուրս
աղտաղտին՝ անախորժելի ծարաւեաց արբման. գե-
տինս՝ անօգուտ հերկագործութեան. սահմանս լքեալ՝
հեղեղավայրս կնիւնոյ. խոպանացեալ և տատասկա-
բեր անդաստանս. ծածախնամ երկիրս անձնաւոր,
որ բանսարկուին պատրանաց մշակեցայ. [4] եւղեւ-
ծիւղ փայտս պտղակորոյս. հատանելի ծառս ունայ-
նաբոյս. [5] կրկնամեռ՝ խօսուն ռունկս ամլոյս. ամե-
նաշէկ ճրագարանս անլոյս։ Արդ՝ վերստին առ սոյն

բերելով զայս [6] նմանութիւն աստղականաց, բազմօք կրկնեցից. որ ամօթոյն դատն պատուհաս՝ պահեալ կայ հիքոյս, կրծուցն ատամանց, և անկէտ լալուցն աչաց եղկելոյս. հայրական [7] ցասուցն անապատժելի՝ դատնանութեան որդւոյս. ապականութիւն անմոռանալի՝ մեղուցեալ մարմնոյս: Որ կշտամբութեան դատողիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս. [8] տարտամ տագնապի տարակուսանաց՝ ելից դերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն թշուառացելոյս. 'ի խորշանս որոմանցն վկայելով վտանկեցելոյս. 'ի ձայն ահարկու՝ զանբժշկութիւն ազդել լքելոյս:

Է. Նա արդարև երգս կատակերգութե [9] Ընարահար պոռնկի, յածեալ և կոծեալ քաղ հնչեցուցեալ ողբս ողորմելիս և զկծեցուցիչս, ըստ առակաւոր բանին եսայեայ՝ որ 'ի պատգամին տիւրոսի: Ո ի թէ նա զգիպուածն փոքր անցից ապառնեացն՝ 'ի մօտոյ իմն տպաւորեալ, բողոքէր դիմակս դիմակս՝ կերպից կերպից աւաղականաց, ըստ կոծողացն կաքաւելոյ, իսկ առ իս ո՛րչափս և ո՛րպիսիս ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս. որ զալատեանն մեն սպառեալ առանց վրիպանաց, մնացի անպատրաստ և անհամերձելի: Արդ՝ եթէ զդատաստանացն ահաւորութե կրկնեցից, բազմացուցից ինձ աշխար. [10] ապա եթէ զփորձն խոկումն ցուցից, յաճախէ ինձ երկիւղ. իսկ եթէ զկերպարանացն տեսիլ գրեցից, առաւելուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զայսոս՝ և ոչ անազան ապաշաւեցի: Այլ խնայեա յիս՝ գթթած, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգև քո թագաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Զկերպարանս տասանցն: [illegible]

(2) Ընարահար պոռնկի: [illegible]

(3) Այր փետոնա ։ [illegible]

(4) [illegible]

(5) [illegible]

(6) [illegible]

(7) [illegible]

(8) [illegible]

(9) [illegible] (Երգ. 15.) [illegible]

(10) [illegible]

ժամանակս եղջեր, որպէս առ [illegible], առ [illegible], առ քսան-
նացս, և առ այլս : Եթէ զայսոսիկ մի լուծ մեղէք եղեց [illegible], առա-
ւելու երկիւղ իմ, և մեծ եւս պատուհասն ինձ հասանէ. որովհետև գիտ-
ակցեալ զայս եմ, և ոչ զղջմէ ամենայնի [illegible] : Եւ այսպէս [illegible]
[illegible]. այլ զուր [illegible] եմ :

Մերոյին յառաջադրեալ հրէին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն
տէրս մաղթանաց բանի :
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՟յ :

# ԲԱՆ. Խ.

ա. Մենակալդ ա՟ծ բարերար արարիչ բոլորից՝ լուր հառաչանաց ձայնիս վտանկի, և յերկիւղէ տագնապի ապագայիցն կարծեաց՝ փրկեա կաքօղ զօրութեամբ զերծեալ ՚ի պարտեաց. քանզի բաւական ես յամենայնի՝ առ ամենայն հնարս զօրանալ անբաւ մեծութեամբ և իմաստութեամբ անսահմանելեաւ :

բ. Ոչ քանզի ուշիւ մտացս տեսեալ ՚ի հեռաւոր զհանդերձելոցն հանդէս ահաւորափայլ, նկատեմ ինձէն սաստանօր կանխաւ[1] զահիւն լուսոյ՝ որդոցն յուսոյ, զօրն խաւարի՝ պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յէիցս՝ առ պատապարտն փախըստեան : Ոչ[2] անդունդք խորոց. ոչ վիհք վհից. ոչ բարձրութիւնք լերանց. ոչ անձաւք քարանց. ոչ կարծրութիւնք արձանաց. ոչ ծերպք ծակաց. ոչ փապարք փոսից. ոչ սորք հեղեղաց. ոչ բաւիղք խորշից. ոչ շտեմարանք յարկաց. ոչ ծածկութիւնք ննջեկաց. ոչ եմակք հովտաց. ոչ ծործորք դժուարաց. ոչ վերադրութիւնք բլրոց. ոչ արձակմունք շնչոց. ոչ անբաւութիւնք ծովուց. ոչ ասահանք յորձանաց. ոչ հեռաւորութիւնք եզերաց. ոչ ողբմունք ձայնից. ոչ հեղեղք արտասուաց. ոչ տատանմունք մտաց. ոչ համբարձմունք ձեռաց. ոչ պաղատանք շըրթանց :

գ. Որ յայցեն[3] սաստկութեանց մտաց անձկողացուելեաց՝ զի ես տէր քո՝ հնարք և դարմանք դիւրութեան և անդորրութեան փրկութեան ամենայնի հոգւոյ. արդ՝ հայցեմ ՚ի յանզերծ վտանկիցս շրջադրութեան միջնոր-

քաղցր առ ամենեսեան ։ Խոցեալ սուսերաւ յաղթա-
կան[4] կենազէն խաչիդ՝ զցանցս վարմից, որ յամենայն
կողմանց պաշարեն 'ի մահ զգերիս ։ և հան 'ի յանդորր՝
զոտս սասանեալ թիւր ընթացողիս ։ Մածչկեալ զհրա-
տապ ջերմնական տոչորումն՝ մղձկեալ սրտիս ։ մեր-
ժեալ զդիւային[5] չարահնարութեան շշունչ՝ քո պար-
տաւորիս ։ հալածեալ զյուսահատ անձկութե հոգւոյս
մթութի՝ չարի կենակցիս ։ ցրուեալ զծխամած թանձ-
րութի[6] բռնութե մեղացս երևոյթ՝ մտելոյս 'ի յիս ։
կործ զզազիր թխատիպ կրից՝ ապականութեան կա-
րիս ։ Նորոգեալ զպատկեր լուսոյ՝ պաշտեցեալ փա-
ռաց մեծութե անուան հզօրիդ՝ յոգիս ։ զօրացո ըղ-
ձնորհիդ փայլումն՝ 'ի գեղ դիմացս, և 'ի կերպարան
տեսութե մտացս հողեղինիս ։ յարմար յերիւրմանե
կացո յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշա-
նագրոյդ մաքրութե զատեալ զմռայլս մեղաւորիս,
ա̃ծային կենդանի՝ անեղծ՝ երկնաւոր լուսով քո ծած-
կեալ՝[7] յօրինակս երիս ։ Զի դու միայն ես օրհնեալ
ընդ հօր՝ 'ի գովեստ հոգւոյդ սրբոյ՝ յաւիտեանս յա-
ւիտենից ։ ամէն ։

---

(1) Զփրկե լուսոյ ։ [illegible] ( [illegible] ժէ. 19. 20 ։ ժը. 1 ։) Եւ [illegible]

(2) [illegible]

(3) [illegible]

(4) [illegible]

խաւարին: Խորհեմ ասէ՝ տուտերաւ խաւարիդ զնկատս աստուածային, որ խեթ բազմ 'ի մահ ըմբռնեցեն զիս զգեղեցիս: Դիտեմ, զի ասել մինչ 'ի բանն՝ յօրինակս երկու, պահէ զձեւ նմանութեան՝ 'ի նս:

(5) Զարմանափառութեան շնորհ: Դիւական նենգութեան ամբոխութեան, խառնակութիւն:

(6) Բանաւոր ձայնս երկրոյն: Ցուցանեմ զթմբիր ծուխն կամ մուրն, որ է երեւոյթ կամ կերպարան տխրացեալ մեղաց, որ մնացեալ է 'ի ներքս իմ:

(7) Յօրինակս երկու: Ըստ հին լուծ. 'ի մարմին, 'ի շունչ, եւ յոգի. Բ յայլոց՝ 'ի միտս՝ 'ի բանն՝ եւ յիշողականն, որք օրինակք են առաջինն՝ հօր, երկրորդն՝ որդւոյ, երրորդն՝ հոգւոյն սրբոյ: Բայց լաւ եւս պարզի բուն բանիւք սրբոյ վարդապետին. որ հայցէ մաքրել զաղթութն մեղացն՝ մերոյին յինքն տպաւորել զնմանութիւն Այ ասելով, նորոգեա զպատկեր. եւն: Եւ զայս նախ՝ յոգին, 'ի հոգին՝ որ օրինակ է հօր. գոլով հոգւոյն արմատ նմա յառաջութեանց եւ կատարելութեանց մարդոյ, որպէս եւ հայր՝ նմա ծնողն: Երկրորդ. 'Ի միտս՝ որ նմանի, չնորհօք մաքրութեան զգայարանացն. զմտացն՝ օրինակ որդւոյ, որ կերպարան է հօր. եւ զի մարդեղութեամբն երեւելի եղեւ մեզ: Երրորդ, 'Ի կերպարան փառաւորել մտացն, ուղիղ եւ պայծառ ճանաչելով զԱծայինն. եւ ըստ այսմ միտքն՝ օրինակ հոգւոյն սրբոյ, որ քննէ զամ, եւ զխորս Այ: Դարձեալ, յօրինակս երկու, խմանի երրեակ երկանակ կամ նմանութեան պատկերին Այ. այսինքն բանականն՝ 'ի ձեռն խնացականութեան, զերծմնականն՝ 'ի ձեռն արբարար շնորհաց, եւ երանականն՝ 'ի ձեռն պայծառ տեսութեան Այ 'ի հանդերձեալն. զոր եւ յայտ առնէ մերոյին բանիւքն. Ածային՝ կենդանի՝ անեղծ՝ երանաւոր լուսով զօ ծածկէ. որ է ըստ փառաւորելի երեսացն Այ, ըստ 'ի նոյն պատկեր նորոգելովք փառաց 'ի փառս: (Բ. Կորնթ. Գ. 18:)

---

Սրբոյն յաղթական նիւթին հեծութեան՝ Նարեկին հոգւոյն, առ Աստուած աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք ընդ Այ:

# ԲԱՆ. ԽԱ.

ա. Արդ Այ կենդանւոյ օրհնեալ յաւիտենայնի, հօրդ ահաւորի անքնին ծնունդ. որ տկարանայ առ 'ի քէն եւ ոչ ինչ: Որ [1] 'ի ծագել անստուեր նշուլից՝ ողորմութեան քոյ փառաց, հալին մեղք. հալածին դեւք. ընջին յանցանք. [2] խզին կապանք. խորտակին շղթայք. կենդանանային մահացեալք. բժշկին հարուածք. ողջանան վէրք. բառնին ապականութիւնք. տեղի տան տխրութիւնք. նահանջին հեծութիւնք. փախնու խաւարն. մեկնի մէգն. մերժի մառախուղն. փարատի մուայլն. ապաւի աղջամուղջն. վերանայ մութն. գնայ գիշերն. տարագրի տագնապն. չքանան չարիքն. հալածին յուսահատու-

թիքն. և թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի։

ճ. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ՝ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես[3] յերկնի անճառ, և յերկրի ազնիւին. [4] 'ի տարր գոյի, և յեզրս ծագաց աշխարհի. սկիզբն ամի, և յամի ամենայն լրմամբ, օրհնեալ 'ի բարձունս. և քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի ծագել անստուեր։ Ցուցեալ ծագեսցես 'ի մեզ զանստուեր, զանմթանալի քո լոյսդ, որ է լոյս ողորմած և խաղաղ, որ ցուցանէ միանգամայն զփառս քո և զողորմութիւնդ։ Քանզի ըստ որում առանց նուաղելոյ ծագէ 'ի քէն, ցուցանէ զփառս քո. իսկ ծագելովդ առ անարժան խաւարեալքս կամաւ, յայտնէ զողորմութիւն քո։ Այլև 'ի մեծամեծ գործոց անտի՝ որ և տուրև շարադասեալ յիշատակին, ցուցանէ զկարողութիւնդ 'ի փառս քո. և զի անսպառապէս շնորհես ամենեցուն, զբազմապէկ զգթութիւնդ ծանուցանէ։

(2) Խղճին կապանք։ Այս, և յաջորդքն՝ կամ մարմնաւորապէս իմանելին, ըստ որում ամենայնին զօրութբ ելոյծ քն զկապանս բազմաց, որպ զպօղոսն և զշիղայի. կենդանացոյց զմեռեալս, առողջացոյց զհարուածեալս, ևն։ Եւ կամ իմանելին հոգևորապէս 'ի վերայ իմանալի կապանաց, ցաւոց, ևն։

(3) Յերկնի անճառ։ Դու միայն յամի որ յերկինս են՝ անճառելի ես, և դու միայն յերկրի ազնիւին, յամ երկրաւորս անզննելի մտօք։ Կամ, դու միայն յերկնաւորաց հրեշտակաց անճառելի ես, և յերկրաւորաց անհասանելի։ Կմ, դու միայն գոլով ներկայ յերկինս և յերկրի միանգամայն, անճառելի ես լեզուի, և անհաս մտաց, թէ զիարդ իսկութբ կաս 'ի նոսին յամի՝ առանց բաժանելոյ 'ի քէն, և առանց հեռանալոյ 'ի նոցանէ։

(4) 'Ի տարր գոյի։ 'Ի բնութեն կամ յիսկութեն գոյացելոց 'ի նմանէ կաս, այլև տարածեալ նոցա յեզերս ծագաց աշխարհի։ Կմ լաւ ևս, 'ի տարր, այսինքն 'ի սկիզբն իրաց գոյացելոց, ըստ որում բառս տարր նշանակէ և սկիզբն կամ առաջինն յիրս. և այսմ համեմատ գայ յաջորդն, յեզերս ծագաց. այսինքն որպէս կաս 'ի սկիզբն իրաց, նոյնպէս 'ի ծայրս ամ իրաց աշխարհի։ Սկիզբն ամի. այս լաւ ևս յարմարի յառաջեացն, սկիզբն ամի. և յամի ամ լրմամբ, քան թէ ընդ յաջորդին, ամ լրմամբ օրհնեալ ևն։ Զի թէպէտ և կաս 'ի սկիզբն իրաց, այլ և 'ի ծայրսն և 'ի կատարածն, առ կայն ոչ բաժանիս, ոչ մնան ինչ առաջ կաս, և մնան ինչ անդ. այլ ամբողջ լրութբ բովանդակապէս կաս 'ի սկիզբն և 'ի կատարած իրաց. այնպէս զի նոքա միայն են հեռի 'ի միմեանց, իսկ դու նոյն և բոլոր յամի, մնաս յաւիտենական. քեզ մի է սկիզբն և ծայր իրաց։ Այսպէս օրհնեալ և ծանուցեալ ես յերկինս 'ի բարձունս առ 'ի սրբց. և մեք այսպէս զաւանելով յերկրի, փառս տամք ևն։

Մերոյին յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հաւաքէ, առ նոյն ողբոց մաղթանաց բանից ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱ՛Ն. ԽԲ.

ա. Տէր մեծ գթութեամբ, փրկութեամբ և ողորմութեամբ, քաղցրութեամբ, և նորոգութեամբ, բժշկութեամբ և առողջութեամբ, լուսաւորութեամբ և կենդանութեամբ, յարութեամբ և անմահութեամբ, յիշեա՛ զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենաստեղծ, կենդանի՝ գովեալդ ամենակատար, մերձ 'ի հեծութիւն[1] համայն եղելոց ։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ՝ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո՝ և ոչ կապեցեալ, ոչ կախեալ՝ և ոչ բևեռեալ, ոչ կռփեալ յանուն մեծիդ՝ և ոչ անարգեալ, ոչ լլկեալ՝ և ոչ նշկահեալ, ոչ խոցոտեալ՝ և ոչ մահացեալ, և արքայութեան արդարոց՝ մասին[2] անձկալեաց լուսոյ՝ արժանի ցուցեալ, իբրաւամբք ուխտի երդմնականաւ ամենիւն ազդեալ զանփոփոխութիւն բարեացն տուելոցն, փառաւորեցեր առ յոյս փրկութեան խոստացելոյս ։

բ. Օրհնեալդ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք, կանգնեա 'ի կործանմանէս՝ բարերար. բժշկեա 'ի հիւանդութեանցս ախտից՝ ողորմած. յեզերաց մահու դարձո զիս 'ի կեանս՝ կենդանութիւն. քո եմ և ես, կեցո ընդ նմին՝ ապաւինութիւն. անձամբ մեռելոյս՝ կենդանական շնորհ ընծայեցո՛ յարութիւն կեանք անմահութիւն. անպատկառ բարութիւն, անսպառ շնորհ, անփոփոխ ներողութիւն,[3] աջ ամենազօր, ձեռն ամենիշխան, մատն ամենամերձ ։ Կամեա՛ց տէր՝ և փրկեցայց. ակնարկեա միայն գթութեամբ՝ և արդարացայց. տուր բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց. մոռացիր զթիւս չարեացն՝ և անդատին համարձակեցայց. առատաձեռնեա՝ և արդէն 'ի քեզ իսկ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն ։

(1) [illegible]

(2) [illegible]

(3) [illegible]

---

Մերժումն յանդգնութեան նրկէն հեծանե՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս խաղթանաց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այս:

## Բ Մ Ն. ԽԴ.

ա. Բժշկական կրթականութ. անձնափորձ հնա- րաւորութի՛ պատճառ կենաց անախտա- կանաց, Թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր յն քր. ած ամենեցուն, իմանալեաց և տեսականաց. ² աՀա դու 'ի յիս, ըստ մարգարէին՝ որ ընդ ասելոյն՝ նոր կցորդութե. առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միութեան, լուսաւորեցայց կրկին ողջա- ցեալ հոգւով և մարմնով, ամենայնիւ կարօղ և ան- վանելի:

բ. Որ ձչ կարօտանան ապեղանեաց, առ պատրաս-

տութի պատանեաց՝ հոգեկան վիրաց. ոչ ժամանակի. ոչ միջնորդի. ոչ աւուրց երկարաձգութե. ոչ [3] փոփոխս մատուցանելոյ. ոչ հատման. ոչ խարման. ոչ սրագործութե, ըստ երկրաւորս դեղատուութե, [4] առ որս միշտ է վրիպութի և ամենասխալ տարակուսութի: Իսկ քեզ արարչիդ հոգւոց և մարմնոց, ո՜մ ինչ՝ լուսաւորեալ է. ամենայն ինչ առաջի է. ո՜մ ինչ գրեալ է. ամենայն ինչ դիւրին է. համայնն՝ հնարաւոր է. [5] իմաստն՝ գլխաւորեալ է. խոստումն՝ լցեալ է. կամքն՝ կատարեալ է. քո կտակն՝ աւետարան է. քո վճիռն՝ ազատութի է. քո մատեանն՝ շնորհ է: Ոչ փակեալ ես ընդ օրինօք. ոչ պարունակեալ ես ընդ կանոնաւ. ոչ արգելեալ ընդ նուազութբ. ոչ խոնարհեալ ընդ հնազանդութբ. ոչ պարագրեալ ընդ փոքրկութբ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ. [6] ոչ վրիպեալ 'ի բարկութէ. ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ. ոչ սխալեալ 'ի խստութէ. ոչ ամբոխեալ 'ի խռովութէ. ոչ դղրդեալ յանգիտութէ. ոչ փոփոխեալ յողորմութէ. ոչ պակասեալ 'ի բարձրութէ. ոչ լքեալ յայցելութէ. ոչ տկարացեալ 'ի փրկութէ: Դու սկիզբն՝ և լրումն ամենայնի. և 'ի քէն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն.

---

(1) Աղեքսանդրոյ Ափրոդիսացւոյ: Ամենեքին տեղեակ ճարտարութբ բժշկական ներհմտութե, բժշկական հմտութե կամ արհեստի, պատճառս ես անախտ կենաց: Թուի ընդելեալն զեկուցանել, թէ բաց յամենագէտ իմաստութէ և յազդող կարողութէ՝ որով ճանաչես և բառնալ կարող ես զնոյն ցաւս, ունիս և զհամայն ցաւոց զփորձն և զտեղեկութի՝ յորմէհետէ ախտացան մարդիկ 'ի սկզբանէ աշխարհի: Աղաքէն բժիշկ ճարտար այն համարի առ մեզ՝ որոյ բազում իցէ փորձ. և զի՞նչ կարծիւր՝ եթէ ոք լինէր տեղեակ անձամբ համօրէն ցաւոց պատահելոց 'ի սկզբանէ անտի:

(2) Ահա դու 'ի յէս: Վաղվաղակի լեր դու 'ի յիս. ըստ... Նոր կտակարան, մերձաւորութենն՝ խոստացելոյ 'ի ձեռն մարգարէին, թէ ընդ աղեղոյն մերձ գտայց. որ է բանն եսայ. (ծը. 9.) * Մինչդեռ խօսեսցիս, ասասցէ՝ թէ ահաւասիկ հասեալ կամ ||: Որով դաւանք այսր բանի միանալոյ ընդ քեզ, ...... որպէս և ասէր. (անդ. 8.) * Յայնժամ ծագեսցի կանուխ լոյս քո ||: Կրկին ողջացեալ հոգւով և մարմնով, ... և ասէր: * Բժշկութի քեզ վաղվաղակի հասցէ ||:

(3) Ու կարօտանաւ: Զմարդկային բժշկացն զանազան կարօտութիւս 'ի թիւ արկեալ, ցուցանէ զերկնաւոր բժշկին զանկարօտ զօրութիւն 'ի բժշ-

կել։ Դիւր առնէ, ոչ միայն ամենադարմանաւոր ճարտարութիւն պատճառ կամ ներգործող ես կատարեալ լինելոյ, այլև ինքնին քո միանալովդ բժշկես անվրէպ։ Ուստի ոչ կարօտիս աղեղանաց, 'ի կիր առնուլ աղեղանօք, (մեծ-լեմ,) և պատրաստել դայիս առ 'ի պատուելոյ զվէրս հոգւոյ։ Ոչ կարօ-տիս ժամանակի, որպէս մարդ բժիշկ չկարէ երբ և կամիցի՝ առողջ դնել, այլ ընտրէ զժամ ցրտոյն և ջերմոյն. և եթէ զայսպիսի ինչ գործոցնէ, ապաւէ հասուցանելոյ են։ Ոչ կարօտիս միջնորդի, այսինքն օգնականի, գործակցի, ծառայողի. կամ, ոչ մեծաւ բարեխօսի և աղաչաւորի՝ առ 'ի դարմանս առնել հիւանդին, որպէս ամենայն 'ի մարդկաց բժշկաց հասեալ բա-ղում աղաչանօք շարժէին 'ի տեսչութիւն հիւանդին։ Ոչ կարօտիս ստուգ ներկայութեան, որ յորժամ ձգելոյ զդարմանն. զի ոչ կարէ մարդն փարա-ւորել դախման 'ի միում ժամանակի, այլ մերթմերթ, սակաւ սակաւ։ Ոչ կարօտիս [illegible] ծախուցանելոյ, այլևայլ դեղս առնլոյ առ 'ի փորձել, կմ զնոյն դեղ առնել կրկնելոյ կամ զանեղին փոփոխելոյ, մերթ 'ի գլուխ դնել, մերթ 'ի կուրծս, մերթ 'ի բազուկսն են։ Ոչ հօրմոն, հատանե-լոյ զվէրսն, կամ զխողխողեալ, կամ զաւելորդ խուլ ինչ։ Ոչ [illegible], ջերմացեալ երկաթով խարելոյ զմիս փտեալ, կամ զարմատս ուռուցից։ Ոչ [illegible], կապելոյ սրով զանդամ փտեալ, կամ սուր գանակաւ և ածելեաւ խզզատելոյ զմարմին։ Ոչ կարօտանաս այսպիսի հնարից ի երկրաւորս [illegible], զարմանաւորութեան դեղոց և բուժմանց. [illegible], 'ի դարմանս մարդկային բժշկաց՝ թէպէտ և բազում և զանա-զանս 'ի կիր առնուն, սակաւուն [illegible], այսինքն յաճախ սխալմամբ լինի՝ կամ 'ի չճանաչելոյ զպատճառս ախտին, կամ առնլով դեղ անյարմար, կամ չառնլով 'ի դէպ ժամու, և անհնարին [illegible], տարակուսաւ նոքա գործեն, յածեն կասկածելով սխալել. և 'ի մատուցանելն դարմանս ներքին անյայտ ախտից, դրեթէ միշտ 'ի փորձ վարին՝ տեսանել օգտիցէ՛, և կամ ոչ։

(4) Աւր [illegible]. Դու քանզի արարիչ ես հոգւոյ և մարմնոյ, ամ ինչ քեզ [illegible] է, պայծառ, յայտնի է։ Այս և յաջորդք խնամին ընդհանուր առ ամ իրս. բայց առանձինն թերևս ըստ բժշկու-թեան ներգործութեց յարմար եւ է առնուլ. այսինքն որ ինչ առ բժշկու-թիւն պիտոյ է, ամն քեզ յայտնի է, պատճառ հիւանդութեան, դեղն, ժամանակն. ամն առաջի քո առձեռն է. ամն գրեալ է, իբրև գրով բա-ցատրեալ է. որպէս և բժիշկք գրեն վասն հիւանդութեանն և վասն դեղոցն. ամն [illegible] է, հնարաւոր, դիւրագործ և կարելի. և ոչ ընդ որ 'ի մէնջ բժշկացս, որոց ոչ միշտ դիւրին է գտանել զդեղն զոր խնդրե-լին։ Իմաստն, ճանաչումն քո, մտածութիւն, կարգաւորութիւն գործովք վճարեալ է. [illegible] լցեալ է, կատարեալ զխոստացեալդ. որպէս ա-սեցի, ես ելից և բժշկեցից։ [illegible] կատարեալ է. որպէս յասելդ, կամիմ սրբեաց, և վաղվաղակի սրբեցաւ բորոտն։ Քո [illegible]. այն զոր մարմնաւոր բժիշկք առդ առնեն հիւանդին վասն զկնականն յօրինելոյ, մահու դուշակ է. իսկ դու յորժամ կամիս առնել հրամայես, ասեալ լինելոց է յայնմ. որպէս եղեւ [illegible] ծանուցաւ բերանով եսայեայ՝ հրամանն առաջ վասն [illegible]. սակայն ընդ այնու առեալ լինելոց էր ծած-կեալ։ Քո [illegible], յորժամ վճիռ տաս՝ ասես, ոչ մնասցի՝ այլ կեց-ցէ, այն իսկ ապաքինութիւն է. որպէս յաղագս Ղազարու ասացեալն, այն հիւանդութիւն չէ՛ 'ի մահ, առ [illegible] յարութեան նորա։ Քո [illegible]. ըստ մարմնոյ բժիշկն մատնեան համարոյ մատուցանելով առ հիւանդն և կամ առ ընտանիս նորա, ծանուցանէ զծախս դեղոցն, և զվարձս բժշկութեան և զծառայողացն. բայց դու առնէ՝ առաջի դնես հիւան-դին զընտրելի զոր արարեր, առնելով անհաւասարիկ ողջացար, այլ մի՛ մե-

զանձինս · կամ, ահա արդէ քո կենդանի է · կամ · ընծեք և Թողէք եր-
Թալ, կամ, ասաց նմա ամէն :

Զվերջին երկու բանն, կրակ, վէրս, մարմին, ընդհանրապէս եթէ խոր-
հրդես, մեկնեսցես [illegible] · քո նոր կատարեն ոչ կարէ զկատարեն հեն՝ ամենայն և
Թշնամութիւն զգուշանալ, այլ արհնութիւն, բարութիւն ամենայնի :
Քո վէրքն [illegible] այժմ ոչ կարէ ընդունելի վէրաւն՝ [illegible]
հրամայէ 'ի բանս, 'ի [illegible], 'ի մահ, այլ [illegible] ընդունէ 'ի մե-
ղաց և 'ի [illegible] : Քո մարմինն որով կամենաս [illegible], ոչ կարէ
ընդունելի [illegible] [illegible] յանցանաց և յանցանացելոց
[illegible], այլ նեղութեն, Թողութեն, [illegible], յորդոր 'ի
զղջումն · և եթէ [illegible] են կայցեն, առ 'ի նեղել է · այլ և զքո
զարծեալն հրամայէ, յաղթէ ընդունել · և ոչ կարէ զհեն [illegible]
առոյ [illegible] [illegible] [illegible] [illegible] :

(5) Ու նեղութեւ : Ոչ գոյ 'ի քեզ բարկութեն, որով սպառնասցես · ոչ [illegible]-
[illegible], որով [illegible] · ոչ խոռովութեն, որով յանդգնութեն խառնասցես ·
ոչ խոտորութեն, որով [illegible] · ոչ [illegible], որով [illegible] [illegible]-
[illegible] : Այլ հեզութեամբ այդպիսի՝ [illegible] [illegible], բարե-
րութեան են :

Աշխարհին յաղթելով նորին հեծանէ՝ նորին հոգւոյն, առ նորա
[illegible] [illegible] [illegible] :
'Ի նորոյ սրտից խօսք՝ ընդ այս :

# ԲԱՆ · ԽԱ ·

Ես · Ո՜վ անսահմանն, ծնունդ այդ հայրաշատ ան-
թարգմանելի · արարիչ ընաւին եղելոց,
քո Թագաւոր · լոյս 'ի խաւարի սրտից մթացելոց · [2]
ընդ մեզ լերմամբ, և ընդ աւաքչիդ իսկութեամբ · մե-
րայնովս զքոյինով ծանուցանօղ հրաշալեաւ : Հայր
քո օրհնեալ երկնաւոր անձաւ՝ որ առաքեցաք զքեզ
'ի վերուստ, [2] ուռ փառաւորեցդ ես արարչութ, այն-
քան հոգացաւ փրկութեն իմոյ տարադրեալ գերւոյ,
մինչև զքեզ իսկ մատնեաց մարդկան : Իսկ դու կա-
րօղ գոլով 'ի վեր քան զվիշտս՝ զմնանեաւն աւար-
տեալ խորհուրդ, հաճեցար ընդ պարտեցելումս
զմահուն ճաշակել բաժակ՝ անմեղի մարդկութեամբ, և
անպակաս մծութե : Նու հոգիդ նը կենդանարար՝
որպէս քո, և հօր քոյ խսկակից, և համապատիւ էու-
թե ծնողիդ՝ և ծնիցելոյդ : Մ'ի երրորդութեն կատա-
րեալ 'ի դիմաց երից անորոշելի համաւածոց · անբա-
կիզգան և անժամանակ · ընաւին բարերար · համայն

կենդանարար․ բոլորից խաղաղարար․ ստեղծիչ գոյից, և յօրինիչ ամենից․ անքակութիւն և միով բնութիւն փառաւորեալ։

Դ․ Իսկ[3] եթէ հայրն գթած երկնաւոր՝ հզօր՝ մին յէութէ՝ վասն մահապարտիս յանցանաց մարդոյ զմիածնակ ծնունդդ յանքնին ծոցոյն, ոչ անխայեալ յորդւոյդ 'ի համապատուդ և 'ի սիրելւոյդ, այլ կամաւ նաւորեաց մահու՝ չարչարողացն զինու, ըստ մարգարէութեան զաքարեայ․ վասն զի զարթնուլ սրոյն 'ի վերայ հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն[4] նուրբ նախագրին՝ և ուխտադրութիւն խորանին՝ և նուիրաւն արեան սպանդին՝ և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին, զփրկութիւն թշուառացելոյս՝ 'ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր․ և արդ հիմ տրտմիս անձն իմ կործանեալ՝ ոչ յանձուսա հնարաւորութենց, այլ 'ի քումդ ինքնագործ հակամիտութենց․ կամ ընդէ՞ր զիս խռովես՝ յուսահատութիւն տատանայականաւ զմիտս հարեալ․ յուսա յանձ, խոստովանեա ընդ նմա, և նա հոգայ վասն քո, ըստ դաւթեան սաղմոսին, և[5] այլ մարգարէի կենսախրախոյան բանի։

Ե․ Իսկ[6] յեղանակ խնամարկելոյ հաստողին՝ 'ի վեր է քան զսահման կշռոյն մտաց հրեշտակաց և երկրաւորաց․ և եթէ բիւրս կրկնեսցի, ոչ լինի չափեալ․ քանզի անքովանդակելոյն՝ և բարերարելն է անձառելի։ Նա զի[7] որն օրհնեալ՝ զորն օրհնաբանեալ յերրորդական համագոյութենն առաքեաց․ իսկ նա 'ի հաճութիւն կամաց առաքչին եկաւ․ և միւսն ահաւոր՝ 'ի յերկուցն հաւանութիւն՝ մեծաջան բաղձանօք մաղթէ։ Իսկ[8] համաբարւոյ միակամութեան ցուցակ՝ առ 'ի զնոյն բարի ներգործել, որպէս հոգւոյն՝ կենդանացոյն, և բանին՝ բանականին, պայծառութիւն փառացն, և կերպարան՝ էութեանն։ Նո կեանսն փոյթ․ առ ողորմութիւն սթափ․ առ ձեռնկալութիւն պատրաստ․ առ փրկութիւնն կազմ․ առ առատութիւն յորդ․ առ յաճախութիւն զեղուն․ առ անքաւութիւն լի․ առ աններողութիւն փարթամ․ առ երկայնմտութիւն ձոխ․ առ անհատութիւն բարձրեալ․

## մի երրորդութիւն կատարեալ 'ի յանձանց երից. օրհ-նեալ յաւիտեանս. ամէն :

(1) Ընդ Հօր լուսոյ : Ընդ մեզ ես կատարելապէս մարդկութեամբ. եւ է աստուածային Հօր նոյնութիւն, նոյնպէս բնութեամբ աստուածութեան : Հոգւովդ, միայն մարդկային բնութեամբս զգեստն աստուածայնացուցանելով ծանուցանելով հրաշալի օրհնաբանութ :

(2) Որ խոնարհեցար : 2 օրհն. ոգւով : Հայրն քո երկնաւոր՝ առ 'ի փրկել զիս առաք՝ զգեցեալ 'ի սրբոյ կուսէ, անճառ հոգածութեամբ զգեստ զմարմնեղէնդ մարմնեղէնս վասն մեր. իսկ դու որպէս արարչութեամբ փառակից ես նմա ; նոյնպէս զգթութեամբ նմանող եղեալ, մինչ կարողն էիր 'ի վեր քան զմիտս, առանց երկից մարդոց կատարել զգործ անմարմնութեամբ, համբերեցեր ընդ պատ-փեշեցեալս, փոխանակ պարտաւորին՝ յանձն առնուլ զմահ զժնդակ, զոլովեցք մարդ կատարեալ, որպէս եւ Աստ կատարեալ : 'Ի նոյն կամակից եւ Հոգւոյն Սբ, որպէս եւ էակից երկրպագութեան, բովանդակ Սբ երրորդութեան հոգացաւ առ իմ փրկութիւն : Եւ էր վասն այսչափ հոգւոց 'ի վերայ իմ. մի՞թէ իմում փրկութեան կարօտ լինէր էր, նա որ անժամանակն եւ անսկիզբն, բոլոր բարերար, յինքեան էապէս փառաւորեալ. ԵՆ : Աստին առաք, եւ կրկնեցի 'ի կատարածին, մի երրորդութիւն կատարեալ, խնամեալ՝ յերից անքակտանելի առանձնաւորութեանց կատարեալ ես՝ եթէ ըստ միութեան, եւ եթէ ըստ երրորդութեան. այսինքն ծայրագոյն ունելով միութիւն ըստ էութեան; եւ ծայրագոյն զանազանութիւն ըստ անձանց. ոչ նոյնութիւն էութեան միացուցանէ զանձինսն, եւ ոչ որոշումն անձանց բաժանէ զմիութիւն էութեան. այնպէս իսկութեամբ մի, որ երրորդութեամբ չխափանի. եւ այնպէս կատարեալ երրեակ, որ միութիւն չբաժանի : Դարձեալ, այլեւայլութիւն անձանց ոչ անկատար կացուցանէ զմի անձն քան զմիւսն : Յայն երրորդական թիւ բովանդակի ամենայն կատարելութիւն. լինել միոյ Աստուածութեան յերիս անձինս՝ զեղումն է ծայրագոյն կատարելութեան. եւ է յաւէտ ծայրագունի բարւոյն նշան : Զայս տես անօր իմաստս աստուածաբանութեան փառէք յինքեան այս բան կարճառօտ :

(3) Իսկ Էրէ հայրն : Իսկ արդ՝ եթէ Հայրն երկնաւոր այնքան հոգացաւ 'ի փրկութիւն իմ, ապա ընդէ՞ր տրտմիս, ընդէ՞ր տխրիս ո՞վ անձն իմ կործանեալ ոչ յանհնար ողորմութեանց, ոչ յանձնայնին հաւատոց, այլ 'ի քո կամաւ գործեալ հակառակութեանց, այսինքն 'ի յօժարութեանց կամ 'ի մեղմեցանց առ չարն : Այսպէս կապակցելի է բանս, իսկ այլքն են ընդմէջ անկեալ բացատրութիւնք փրկագործ կամացն Հօր : Ոչ խոնայեաց առաք՝ 'ի փրկելն, այլ կամաւ ներքուստ մահու չարչարողացն զենու. այսինքն ներքուստ կամ մտաց զինու կամ գործարանի չարչարողացն մահուանս, կամ առ 'ի մահ : Եւ այնպիսի կամաւորական ներքուստն, զի եւ կանխաւ 'ի հին ժամանակաց մարգարէիւք յայտնեաց, եւ օրինակօք նախատպաւորեաց ԵՆ : Ապա ընդէ՞ր խռովես զիս անձն իմ, յատակապոխիք տապանայոյնանս, որ 'ի սատանայէ չարչարեալ, կամ որ յաւէտ է սատանայի վասն անզղջութեան :

(4) Դիւրէք Նախագրին : Որպէս օրինակն գառին նախատիպն, այսինքն Հաբէլի. որ անպարտ սպանեալ, առաջին արիւն եղեւ քո զենմանդ. կամ, ըստ հին լուծ. օրինակն մովսէսի՝ որ բազմապատկութեամբն եղեւ օրինակ քո խաչելութեան. եւ ըստ այսմ Նախագիր իմանի առաջին գրողն : Ն նախ-գրութիւն նորանն, զորով ցանկաց մովսէս զարիւն ուխտին այս : ( Եբր. Թ. 20. 21 : )

(5) Եւ այլ ժողովրդեանն՝ Բազում են առ մարգարէս այսոր նման բանք. որպէս Եսայ. Խ. 31: Սղմ. Գ. 24. 25: Ղուկաս. Թ. 7. ևն: բայց Թուի խմբնալ և զօրինելի բանն առ յովսափատ արքայ յուդայ. (Բ. Մնաց. Ի. 15.)
* Ո՛չ է ձեր պատերազմդ, այլ Այ || :

(6) Ցնդական խնամարկելոյ: Իսկ յեղանակ խնամարկելոյն Այ ոչ կարէ կշռել մտօք՝ ոչ միայն մարդկային երկրաւորաց, այլև ոչ հրեշտակաց անգամ. և եթէ բևեռիցս կրկին կշռեսցին, չափ ոչ գտանի. քանզի Այ որ անքննելադակելի է բնութեամբ և զօրութեամբ, նաև բարերարելն է անպատմելի: Եղանակ խնամարկելոյն այն է՝ զոր նախ ասաց, և զկնի ասէ զաղձեալ. այսինքն Այ ընդ նախագործն գթովք հոգալ զփրկութեան մարդկան, ոչ արժանաւորաց և հաւատարմաց, այլ տարաշնորհաց և թշնամեաց. և զայն հոգալ միածնաւն, և այն՝ մահուամբ նորա, և զայն՝ կանխաւ հաստատելով մարգարէիւք և օրինակօք. և այն՝ 'ի նոյն կարգաւորելով զամենայն զարս անցելոյ. և յայսպիսի խնամս բովանդակ մեր երրորդութեանն պատրաստեալ: Բաւէ. որ մինչ չափել կարիցեն զխորութեան սիրոյն Այ:

(7) Որ օրհնեալդ, Հայր մեծ, որ օրհնաբանեալդ, զՈրդին միածին առաքեաց. Ո՜վ մեծ անուանք, Հոգին մեր 'ի յերկնային հաստատութեան, 'ի համահաւասարութեան հօր և որդւոյ մեծացեալ բաղձանօք մաղթել, ամենայն կամօք միաբանի. Ուստի երեքին անձինք ես պատուաւորեալ են 'ի խնամս քո անձն իմ պարտաւոր:

(8) Համաքարոզ: Եթէ խնդրես ասէ՝ ցուցակ կամ օրինակ այսր համաշունչ միակամութեան երից անձանցն առ 'ի փնոյն բարի ներգործել, այնպէս խնա, որպէս հոգին՝ կենդանւոյն. որպէս կենդանին ոչ կայ և ոչ գործէ առանց հոգւոյ. և ոչ բանականն առանց բանին կամ մտաց. և ոչ փառքն արտաքին առանց պայծառութեան. և կերպարան կեանքն, և ոչ էութին կերպաց առանց կերպարանի կամ տեսակի նոյնս: Այսպէս ոչ է, և ոչ գործէ հայր առանց որդւոյ և հոգւոյ: Ուստի երեքին եամլորինակ են առ կենդանի գոյն, ևն: Այս անբաւունքն. անբաւութեամբ չէ են. աննմանութիւն փառքնում են. անհասութեամբն բարձրեալ են: Բայց՝ համաքարոզ ոչ է առաւելն, այլ ուղղական, և նոյն իսկ համաբարոյ բառն՝ իւնիւ գրեալ լուր ասէ որութեն բազում ձեռագրաց. զի և յայլ բառս առնեն. որպէս գիշերոյ, մարդոյ, Թէքոյն; վայրենաբարւոյ. ևն:

---

Միւսոյն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոց ձայնից բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ԽԶ:

Ա. Եւ արդ՝ յոյս բարեաց տնկեալ 'ի սրտի՝ անձին իմ կործանելոյ, և գտեալ հաւատոց պնդեալ զերկիւղամանցդ երկակի մասամբ՝ [1] ըղձկրկնապատիկ խորհրդոցդ զցանկականիդ գործարան, խոստովանս լեր բարերարին Այ: Օմաացդ՝ երբեւ զգործոց. զխորհրդոցդ՝ երբեւ զլռութեց. զան-

տեսիցն՝ իբրեւ զյայտնեցելոց. զորտիդ ծածկութեց՝
իբրեւ զբարբառումն ձայնից. [2] զակնարկութեցն՝ իբրեւ
զարդիւնականաց մեղանաց. [3] զաղգեւլ շրթանցդ՝
իբրեւ 'ի գլուխ ելելոց չարեաց. զատիցդ հեռոց՝ իբրեւ
զպատուիրանաւն ոչ վազողաց. [4] զձեռացդ ձգումն
առ ցասումն՝ իբրեւ 'ի հեղումն արեան գործողի. [5]
զծիծաղելն բնաւին՝ իբրեւ զկամաւորական լքումն
շնորհի. [6] զերդմնականն, որ թէ 'ի հանդէպս՝ թէ 'ի
տարադէպս՝ իբր զգործակցութի խաբողին: Օ՛ առ
բարտաւանութին՝ իբր զհին կործանիչ նախաստեղ-
ծին բարձրութե. զսրտին նեղութի իբրեւ զթերու-
թի հաւատոց. [7] զմեղկութին՝ իբրեւ զպարտութի զա-
րաւորին պնդութե. զտրտմութիւն առ վտանգս կրիցն՝
իբր զուրացութի ուխտին, որ առ տէրն. [8] զապա-
բասանութին՝ իբր զթոյն իմն անգթութեն. զամ-
բարհաւանութին՝ [9] իբր ոչէիւք առ վեհին գոռո-
զութի. զհպարտութին՝ [10] իբր զկամաւոր հարազատ
գտողին չարեաց: Օ՛ ակամայիցն՝ ընդ կամաւորացն.
[11] զբռնացելոցն՝ ընդ հաւանականացն. զեկամուտիցն՝
ընդ բնաւորականացն. զանօրէնութիւն՝ ընդ ապա-
տուածութեն. զփղձուկն՝ ընդ սատակագունիցն.
զնուազունն՝ ընդ յոլովիցն: Օ՛ անձառիցն իմոց՝
իբր զձառելեաց գիտողին. զանգրելոց մտաւուցն՝
իբր զնկարելոց տեսողին 'ի յարձան [12] մագնեսախ
վիմի. զթեթեւագունիցն [13] առ խտիր մնաց՝ իբր զբա-
տուար ծանրութի բեռանց. [14] զխնդիր չափոյ ծած-
կելոցն՝ իբր զճշգրտով պահանջումն սատերն ամկի՝ 'ի
բերանոյ կխտին կորիւնի՝ չարեքդրամեան կշռութեն. [15]
զանգնդականացն գործոց՝ իբր 'ի յականջս ոչ արագ-
ժամանելոց: Օ՛ այսոսիկ յաճախեալ կուտեալ կրկին
յանձնառութեամբ, վերստին պատմեալ աստանօր
մեծաւ հեծութբ [16] զչէոցն՝ իբր զեղելոց, ընծայեալ
ոչ զպարտութի վանեցեալ անձինդ. զի ընկալցիս 'ի
փոխատուէն զշնորհօք թողութի [17] պարտուց մեղա-
ւորին. զոր տէրն արդարացոյց, եւ հրաշափառադէս
հաշակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգո-
վեստ զղջմանն՝ քան զպարքաւանս մեղացն:

ԽԶ. Բարդեալ եւ դիզեալ անձինդ մեղապարտի՝ բազմ
բազմաց յոքունս, զքոյսն [18] խոհերս բազմամամանեայս՝

անձն իմ կշտամբեալ յողնախթանաց բանիւ։ Ո՛ չա-
րութիւն, զանօրէնութիւն, զվրիպութիւն, 19 զոր 'ի մար-
մնի համագիւղ փախուստ. զպարտութիւն, զմոլեգնու-
թիւն, զամբարշտութիւն, զապշութիւն, զթմբրութիւն,
20 զքունս արթնական, զոր 'ի յղփթացմն՝ զնիր-
հումնն, զխորհուրդն օտարոտի, զբանիցն նանրութի,
զպարզութիւն հաձութի, զյամենայն 'ի նմին, զփա-
փագելն՝ ոչ առնելեացն, զանհրկիւղութիւն, զանսաստ-
տութիւն, 21 զանհարթութիւն, զթերութիւն. զթիւրու-
թիւն, զլուծութիւն, զձշղութիւն, զանկայ արձակումն։
Ո ծիծաղականան, զվրնջողականան, զկատակերգա-
կանան, զդայթագականան, զպատրողականան, 22 զանե-
գէտ քաղցութիւն, զանյագուրդ մարմնոյն, զաւանց
օրինի արիութիւն, 23 զխեղդամահն հոգւոյն, զտա-
տանողականսն զերկչոտութիւնս, զապագմատեղեկան
ձիւղսն զպահեստականս, 24 զանպատկառ փարթա-
մունսն, զդժոխութիւն, զդժնդմնութիւն, 25 զանզգա-
տեղութիւնս, զմարմանջմունսն զխորդմանողա-
կանս, զփոքունցն զանկշռութիս, զխոստմանցն դժրա-
ղութիս, զուխտիցն մոռացութիս, 26 զնմանեացն այլա-
կերպութի, զկեղծեացն քողարկութի, զփառամո-
լութիւն մարտութի, 27 զյօժարիցն յուսահատութի, զա-
պիրատութիւն, զինքնախոհութիւն, զնախադահիցն
անկիրչութի, 28 զհատուցանելն եղեռնականացն, զնա-
ցինսն՝ զանշահ աղձառանսն, զվայրապար բերմունսն,
զընթացակցութիւն խորամանկութե բանսարկուին։
Ո բանսին 29 ներքնականութութիւն, զվաձառումն կե-
նացն՝ ընդ գնոց տառապանաց, զկորուստ աւանդիցն,
զհայրենեացն ծախս, 30 զկապարանն ձգողական՝ զփա-
կակ լծոյ երկնից անխզելի ըմբռնմամբ՝ զանօրէնու-
թեւ, 31 զյարաթաթաւ տղմաքնականութիւ, զ լքումն
լաւացն, 32 զընթագրութիս անկարծիցն, զկնիք գար-
ձին՝ առ նոյն դարձ դաժանական. 33 Ո նորոգ մոռացն,
զօտար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաշմանս
հաղադրին, զէութի չնչոյն, 34 զևան քան զսահման կա-
նոնացն դրութեն զիշխանականին զամենապիրև բա-
ցարձակութի. և զոր չէ՛ ձառելի, և կամ գրելի, և
կշռպատմելի, և կամ յերեւս գիտաց բերելի։
Գ. Իսկ արդ՝ զիա՞րդ բժշկեսցիս՝ անձն իմ եղկելի,

'ի յայսքանեաց տիգաց խոցոտեալ, բարձեալ թու-
ղեալ այր մի 35 տարագիր անողջանալի, ըստ մարգա-
րէին. քանզի մի 'ի վերագրելոցդ՝ բաւականապէս
զօրէ սատակման, թո՛ղ թէ այսքան գունդք սպանողաց՝
դժնէից դահճաց՝ շուրջ պաշարողաց: Մանաւանդ-
զի 36 ո՛չ այսու և եթ նմանագրութեամբ-կշռի տա-
ռապոյց տարժանեցելոյս. այլ զոր օրինակ անթիւ
բազմութիւն կայտառաց կարճեաց խայթողականաց՝ 'ի
տօթին մասունս ծայրից տանոցն զօրհասական թոյնս
բերելոց, և յամման մաշկեղէն արկեալ՝ ամփոփէ զե-
լիցն շաւիղ՝ կապարանին շրջափակութեամբ. ցու-
ցանի արտաքուստ բարիոք, իսկ 'ի ներքուստ համ-
բարք չարի, և պահեստ կորստեան, և կայտ կսկծման,
և գործօնեայք սատակման, և մշակք մահու: Արդ՝
37 այսոքիկ են ամբարեալքն քո՝ անօրէնութեան տա-
ժանեաց թշուառաքերտն թոշակք՝ 38 անձն պարտա-
կան կրկին սատակման. որ կամաւորաբար ընկալայ
'ի քեզ, զոր թշնամին սերմանեաց 'ի վերայ ցորե-
նոյն՝ յագարակի աշխարհիս. ո՛վ այր անմաքուր՝ ամ
բարիշտ և ծոյլ, բնաւին ատեցեալ, սիրօղդ մոացդ-
ախորժմամբ զլցեալդ տմ անառակութեան. և զոր
առաքեալ ցուցանէ զթիւս բանիցն՝ տարապիլեացն
կշտամբողաց, սաստուստ սկսեալ մինչև 'ի կատար
կանոնի այնր պայմանի, և որ հասեալ են ասէ՝ յիս
իրաւանցն վերայ, եթէ որք զայսպիսիսն գործեն, և
կամ կամակից են, արժանի են մահու: Արդ՝ ես
ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման՝
կորստեան սատակման 'ի մահ դատապարտութեան. այլ
39 անխայեամ յիս ողորմութեամբ՝ բարեգութ, կեն-
դանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Ջէյրնոդղյուր խուրհրդոցդ, Ջերկին մասունս երկկամանցդ որ է դար-
ծորման ցանկականին կրկին պղտորիչ խորհրդոց, այսինքն ախորժութեան
առ հեշտալիսն կամ առ չարս, և անախորժութեան առ տրտմականս կամ
առ բարիսն. կամ զի կրկին կերպք ծնանին 'ի ցանկականն, այսինքն ցան-
կութեան յախորժելին, և փախուստ յանախորժիցն: Արդ՝ անուանեալ ա-
սէ հաստատունս զմէջս ցանկականին, խոստովանի լեր ճարճէրոչին ոչ, որում
նոյն իմաստ յայտնի է, զենւոյց մեղաց իբրև վայրենոյ, զամենայնութիւն իբրև
զանասնոյ, են: Այլ այսպէս խոստովանին լեր. իսկ քահանայքն՝ այնպէս

որպէս և խրոխ եղեալ է . այսինքն զձայնսն իւրև մնաց , զաղաչանսն իւրև ա-չաց ևն :

(2) Զանխտրականութեանն : Զհայեցուածոյն . այլ օրին . զանխտրականութեան , որ համանմանն է այլ հասարակածոյ , իբրև զարդիւնականաց ճշմարտաց . իւրև աղ-գեստիւք կամ արտաքինն գործովք եղեալ մեղաց :

(3) Զարդէւ ուխտին : Զխոտակն կիր զգայնս ընկրանաց խոստովանեալ իբրև ի գլուխ ելլելոյ լուրեալ , իւրև գործովք մշտապէս եղեալ չար : 3 օրին . լուրէ :

(4) Զյետոյ յետոյն : զգայարանսն չարժանեալ ձեռօքն խոստովանեալ իբրև ի հեղձամ ուրեան գործողն , աշխատողի կիր գործողի 'ի հեղձամ ապաւէն , կամ , գործողի զհեղձամն ապաւէն :

(5) Զծիծաղս թռչնոցն : Զհամանմանակ և զանխտրականն ծիծաղելի , իբրև զխո-նարհական . իւրև զկամաւոր թուլանալ 'ի չարիս հաստատութեան և զզօրու-թիւն . զի անժամ ծաղր՝ նշան է թուլացելոյ 'ի բարեկեցութենէ . որպէս առաջ հայրն մնակաց : ( Վարք հարց . 23 : )

(6) Զերդմնականն : Զերդմնութիւն առանց հարկի , թէպէտ և 'ի հանդիպոյ , 'ի պատուիրանս իցէ , և թէ 'ի դժուարեալ , յանդգնաբար իցէ . զի երդմնու-թիւն և ճշմարիտ իցէ , առանց առանց հարկի արարեալ անխտրականօք , անպատ-ուութիւն է անուանն այն , և վնասակար անձինն յանդգնաբար և 'ի սուտ երդմնութեան : Այլ՝ զայնպիսի երդմնականն բանս խոստովանեալ իւրև զդա-ռնացուցանեն խորհրդոյն աստուածայինն , կամ իւրև զնմանս գործ խաբէութեան մեղաց :

(7) Զգեղեցիկս , զթուլանալն 'ի գործս առաքինութեան իբրև զխորհրդոյ , իւրև զյաղթել զօրութեամբ առաքինեաց . կամ , իւրև զյաղթել և անկանել զերեկ ախտութեան և ապիկարութեան . կամ որպէս թէ յաղթեալ իցէ զօրու-թեան մերոյ . զի լինելն զինուորին՝ համարի լինելն զօրավարին , որպէս ասէ զգայլն յաղթելոյ մնակարեան . ( Ա . մակ . Թ . 7 . ) թէ 'ի վնասակարել զօրաց իւրոց՝ լինելու , լինել , անկանել :

(8) Զապարասանութիւնս : Զանհնազանդութիւն , զզխնամարանութիւն խոս-տովանեալ իբրև զխաբէ իմ անփութութիւնն , իւրև զծնունդ անհաղորդութեան . զի անհնազանդութեան մեծ մեղաց հաստատեալ բարի հրամանացն . կամ զի յանհնազանդութենէ առ խղճմտանս՝ բարուրեալ մնացեալ ծնեալսն 'ի բարեացն և 'ի ժառանգութեան :

(9) Իբր ոչխար : Զբնակ առաքինութեանն խոստովանելոյ իւրև ունողն և անձամբ խրախ զգուշանալ հակառակ մեղաց կամ խղճմտանաց : 2 օրին . գառն : կամ իւրև համեմատել զանձն առ զերծանելոյ 'ի մեղաց կամս :

(10) Իբր գինաւոր : Զհայրապետութեան խոստովանն ընդ իւրև զխրատու ծնունդ հայրապետ աստուածային զօրացն չարեաց : Այսպիսին մեղք յաղ-թողին հայրապետութեան եղև , իւրև անպարտելի և յոյժ ազատելի ծնունդ աս-տուածային կամացն : Բայց 3 օրինակք զնեն , իւրև գինաւոր հայրապետ , իբ այնպիսի հայրապետ՝ որ ոչ կարէ բնաւ օտարանալ 'ի աստուածայնէ , ոչ բնաւ կարէ ուղղել , խոտորեցել :

(11) Զ թշնամիս իւրեանց : Զմեղացն գործելոյ 'ի բանութենէ կամ յերկիւղէ՝ խոստովանեալ ընդ հասարակաց , ընդ մեղացն որք գործեն ներքնագործաց կամօք : գինարբուս , զաստուածական մեղացն , կամ զոր չար օրինակաւ և խրատու այլոց գործեսցէ , խոստովանեալ ընդ թշնամեաց , ընդ մեղացն որք գործեն 'ի բնական կարիս կերակրոյ , ըմպելեաց , քնոյ , ևն . կամ ընդ մեղացն որք յաղագս բնութեան ներքնոյ ծնանեն . որպէս եկամուտ է հայհոյութիւն , գողութիւն , ատելութիւն , ևն . խաղ բնաւորական՝ ծուլու-թիւն , անժուժկալութիւն , զանազան պատճառանաց , ևն : Յայսպիսի բանս նախանձութեան ընդ , կամ իմանալ հանդերձ , այսինքն զակամայն խոս-

առաւելանեաւ հանդերձ կատարեալարարք են, և կամ խնամօք փրկութեան, իբրու առանց, զտնկանելոյ մեղացն խոստովանեաւ փրկութեան կատարեալն, զի կատարեալն փրկութեան ընդունելոց, զփոխանակն փրկութեան մեծաց, են: Զանօրէնն զործուն խոստովանեաւ ընդ աղանդաւորին, փրկութեան անմահութիւն, կամ իբրև ուրացողաւն իմ. զի անողորմն ասէ 'ի սրտի իւրում, թէ ոչ գոյ նա:
(սաղմ. ծթ. 1:)

(12) Մաքսնեսոկեն Ջկթ. ցր մեղանչականաց, յորժ կարծիք քարին: Զայն մեղացն որք յետնեն ոչ անզգամեն 'ի գիր, խոստովանելեաց Այ իբրև ներկայացեալ առաջին նորա 'ի կարծիս մեծի անհնարինի, բառ այնմ. * Մեղք յաւիտեան գրեալ են գրչաւ երկաթեաւ ||: (երեմ. ժէ. 1:)

(13) Առ խոփեր մարց: Զմեղս թեթև կարծեցելոց բառս զասանման կամ համանմանեաւ մեծաց՝ խոստովանեաւ իբրև զծանրութիւն ընդունելոց մեղաց:

(14) Զխնդիր լուերոյ: Զդժնդակութիւն տղեկութեանց մեղացն ծածկելոյ 'ի աղօթս, որպէս ճշգրիտ արտահանելով զձայն ասաւերին ծածկելոյ 'ի փոր ձկանն: (մատթ. ժէ. 26:) Սարփէր, բառ յաճախականն՝ ստարդիր. որ ուղղականն է, այլ աստ իբր սեռականն զնի փրկութեան առանց սարփէրն: Ղեշանակէ զգլխոմ խնդ լուերոյզականն նշանաւքն, չորս տրամ ծանրութիւն. որոյ արծաթին բառս աժեկեցն էր իբր մի զոլոնթոյ:

(15) Զանդրանդակացն: Զ'ի խորս սրտի եղեալ մեղացս խոստովանեաւ իբրև յերկնքիս ժամանակաց:

(16) Զչքոցն: 2 օրին. չքեղն. որ առաւել առաւելութեան հոլով է. բայց գոյ և առաւելինն. որպէս ('ի կոչ. ընծայ. ժգ. համար 7:) * Իջէ նա հոցն ||: Արդ՝ ասէ, զչնչելոցն կամ զուղղործեալ մեղացս արտաքեւ իբրև զնշելոց, ոչ առաւելթը, այլ ճշմարտութը. այնու զի թէ ոչ ամբ արահէր զքեզ, անկանելիր 'ի նոյն մեղս, յօժար զոլով 'ի չարն, և անդ զատարար զորձեալ 'ի զխեշն. առաւել վասն նորա եւ պատրաստութեան եւ իմ իբրև պահպանողի: կամ, չքեղն, խմա զթողեալ մեղաց, որք թէպէտ և ոչ զան այժմ, բայց զու խոստովանեաւ իբր թէ իցեն: ընծայեալ իմ. խոստովանեալ իմ զյարդթել քո, կամ զդարձութիւնն:

(17) Պորփուրոց մեղաւորին: Այս մեղաւորն՝ խնամօք կեանս արտաքինի, որը աղօ- զատարարութիւն քո. (Ղուկ. է. 44:) 2 օրին. մեղանաց. մի օրին. պորփերաց. այսինքն չնորհաց թողութիւն արտասուաց մեղացն՝ որը առնէին քաւելոյ, կամ յորոնն արտասուացերց: Արդ ասէ. որչ զործեցեալ մեղաց և կամ զթո- ղեալն խոստովանելով Այ իբրև թէ զան այժմ, ընծայեցի նմա զզօրս արտասուացելն. որպէս զի ընկալցես զնորա թողութիւն արտասուաց մեղաւորի կնոջն, կամ արտասուաց մեղացդ. ոչ լոկ արտասուելով, այլև զովութ, որպէս զմեղաւորն կենաց զաղօթականն օրհնութեան հաշակելոյ քո, մեծաւ զովելով կոկին ամենայնացանելով զզեղուն նորա քանի զարտասուաց մեղացն: Քանզի արտասուեցաւ նա ծածկապէս 'ի փարիսեցւոցն՝ խոր- հելով թէ մեղաւոր է նա. բայց քո զգործս զզեղման նորա մի առ մի թուելով, զծունն զլխոյն, զլուացումն և զհամբոյրս ոտիցն, և զօծել հերացն, առաց թէ՝ վասն զի յորժ սիրեաց, թողեալ լիցին նմա բազում մեղքն: Եւ յետոյ կոչեն առաց՝ թողեալ լիցին քեզ. և առաջի երկրպագ- ականամ, համարը քո կեցուցին զքեզ, երթ 'ի խաղաղութիւն: Տեառնն, ծրչական առաւելապէս զովեաց նորա քանի զարտասուսն: Եւ եթէ այս կին և օծումն նորա նոյն համարեցի ընդ պատմեցելոյն 'ի մատթ. իզ. 7. որպէս երևի կարծել այլ վարդապետաց 'ի բանին լէ. 1. առաւել եւ հաշակեցաւ զովեալ զզեղման նորա քանի զարտասուսն մեղացն, այնու զի ընկալն նմ մեղաւորն՝ ծանուցեալ էր 'ի մեռել քարոզի եւեթ. (Ղուկ. է. 37.) խոկ զզեղումն նորա և զործն եղև քարոզեալ ընդ ամ աշխարհ բառ նմ բանին: (մատ. իզ. 13):

(18) Խոհներս բաղձականներս ։ Թէպէտև փափաքանաց ԱՖ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] թէ և [illegible], [illegible] [illegible] է [illegible] [illegible]: [illegible] որոյ [illegible] [illegible], [illegible], [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible], այլ [illegible] [illegible], [illegible] [illegible] կամ [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible] ։

(19) Զառ ՚ի մարմին հանդիսել ։ [illegible] ՚ի հոգևոր [illegible] . [illegible], ՚ի [illegible], [illegible], ևն ։

(20) Զօրանն [illegible] ։ [illegible] [illegible] [illegible], [illegible] ՚ի ժամ [illegible] ։

(21) Զանհարթութիւն ։ [illegible], [illegible] ։ կամ [illegible] և [illegible] [illegible] ՚ի [illegible] ։ [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible], ևն ։ որպէս ընդ [illegible], [illegible] [illegible], [illegible] կամ [illegible] [illegible] [illegible], ՚ի [illegible], ՚ի [illegible], ևն ։ [illegible], [illegible] [illegible] ։

(22) Զանդէպ փոխութիւն ։ [illegible] [illegible] . որպէս [illegible] [illegible] ՚ի [illegible], [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible], [illegible] ՚ի [illegible], ևն ։ [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] [illegible] . որպէս թէ [illegible] [illegible] [illegible] [illegible], և ոչ [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible], ևն ։ կամ [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible], ոչ [illegible] ՚ի [illegible] . ՚ի [illegible] [illegible] [illegible] [illegible] ՚ի [illegible] . կամ ոչ [illegible] թէ [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] է [illegible] . [illegible] [illegible] . և է [illegible] [illegible] է ՚ի [illegible] [illegible] . որպէս [illegible], ևն ։ [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] ՚ի [illegible] [illegible] . որպէս [illegible] և [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible], [illegible] ընդ [illegible] [illegible], ևն ։

(23) Զխնդրականս հոգւոյն, որ [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] և [illegible] ՚ի [illegible] հոգևոր [illegible], կամ ՚ի [illegible] [illegible], ևն ։ [illegible] . [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible] . [illegible] [illegible] [illegible] ։

(24) Զանդարդյա [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] . այլ և այլ, կամ [illegible], որ ոչ [illegible] [illegible] ։ Այլ թուի [illegible] ՚ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] . որ ՚ի [illegible] [illegible], (երես. 207.) [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] է [illegible] թէ [illegible] [illegible], և թէ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] . և այս [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible], [illegible], ևն . [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(25) Զանդարտ արտելութիւն ։ [illegible] [illegible] [illegible], կամ [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] ։ այլ [illegible] . և [illegible] . ըն . [illegible] . որ [illegible] է ։ [illegible] [illegible] [illegible], որ [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] . [illegible] որոյ թուի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] . որոյ [illegible]

ւանին է՝ անիրաւ և անձնահաճոյից սէրն առ այլս . որով դիւրաւ ըմբռնի որ 'ի բանս այնպիսի անձանց , համեմատ բանին առաքելոյն , ( Բ. Տիմ. Դ. 3 . ) * Կուտեսցեն ինքեանց վարդապետս ըստ մտաճաշակելոյ լսելեաց իւրեանց : || Զհետևանացն շանկշռութիւն , ոչ կշռելն , կամ ոչինչ համարելն զխրատս բարիս , կամ զթեթև մեղս :

(26) Զնմանեացն այլակերպութիւն : 'Ի նմանակցաց օտարաբարոյ ձևանալն . որպէս 'ի կարգակից կրօնաւորաց այլակերպ վարելն 'ի հանդերձս , 'ի կերակուր , 'ի բնակութիւն , ևն : կամ , նմանն գործովք բարեաց՝ այլակերպ լինելն 'ի սրտի : Ցոյցն և պճեղծեացն փոփոխութիւն . առաւ բարեպաշտութեամբ իւր քօղել ծածկելն : Բայց զերկոսին զայս մարթ է այլազգ ևս իմանալ . այսինքն զնմանն չար գործս այլակերպ համարելն , որպէս զանկարգ վրէժխնդրութիւն , որ է գործ բարկութեան , համարել իւր ճշմարիտ նախանձ բարւոյ . և առ 'ի հաւանեցուցանել զայս՝ առնուլ արտաքուստ զուր պատճառս կամ իրաւունս :

(27) Զյմնիցն յառաջնութիւն : Զյօժար բարձրացուցանելն , որ է գործ ամբարտաւանութեան և գոռոզութեան :

(28) Զհաւատացելն եղբայրակցացն : Զչար հաստատուցանելն չարաբարոյից : զնոցինն , զնոցա զանխղճահ աղճատանն , չարաբարոյութեանն՝ թէ՛ զոր գործ առնեն զնոցանէ , և թէ նոցա պատճառ լինին առնելոյ :

(29) Սերմանախութիւն . ( Այլ օրինակ . սերմանխանութիւն : ) զանաւացուն ածայնին բանին , կամ զչարախօսութիւն , և զխեղճ թուլութիւն յամ խօսս : Բայց առաջինն յարմար է յաղերգ բանիցն , պչրանաց կնոջ , այսինքն զհրապոյր կեղծաւորեր պատրանս վաճառել ընդ ժամանակաւոր իրաց՝ որք են զինն առաւօտեանն . կամ զերկնայինն կեանսն վաճառել ընդ մեղաց : պերճաւոր տեսակին , չնորհաց մեղուած , և այլ պատրանաց : պճնազարդեալ ծախս , զխոստմունս բարեացն սոյ :

(30) Զխառնաբան յեղանակն : 'Ի լաւ օրինակն կերակուր զատանի այս 'ի յաւելուածն . բայց երկրորդն ևս հայի 'ի բանն եսայ . ( Ե . 18 . ) և նշանակեն զչար առաքինութիւնս՝ որք իբր կառք բանին ձգեն 'ի մեղս :

(31) Զյարաբերութիւն : Մեծս թաթաւել , կամ շաղախել : այլ օրինակ . շաղախութիւն , աղծաշաղախ , աղծակից : Զլքանն լաւացն . զթողուլն լաւացն կամ առաքինեաց . որ կոչին խմանի , թէ կրաւորաբար , այսինքն . թողեալ լինելն կամ լքանելն 'ի բարոյ արանց իւր անհուղելի . և թէ ներգործաբար , այսինքն թողուլն զբարի արս՝ հեռանալով 'ի նոցանէ :

(32) Զանձնապաստան անխոհեմութիւն : Զներքոյ անկանելն անկարծելի թշուառութեանց և մեղաց : Բայց այլ օրինակ . գնէ անխածիցն . և խմանի առ ոսն հարկանելն կամ արհամարհելն զխոստմունս և զանձնարդս , կամ զանկեալն 'ի մեղս : Մարթ է նաև զբառն անխածիցն՝ ըստ այսմ մտաց առնուլ . զի որպէս նշանակէ ( 'ի մեկն . առակաց . Ժ . 4 . ) * Ոտսն ծնանեցուցեն իբրև . . . բայց եթէ յանկարծ՝ 'ի վատթար արանց || : Այս երկրորդ իմաստ առաւել համեմատ է նախընթացն բանին . որպէս թէ ասել . զլաւսն և զառաքինեան թողլ . իսկ զանկարգսն կամ զմեղուցեալսն արհամարհեցի : Զնոր դարձին . յետ գտանելոյն 'ի մեղաց՝ վերստին առ նոյն մեղս գտանելն , որ առաւել չար է և գարշելի :

(33) Զնորոգ ծնողացն : Խոստովանեմ զանկարգութիւն մանաւանդ թշնամեացն՝ որք միշտ նորանոր ծնանին առանց գործոյ՝ զանկարգութիւն պէսպէս խորհրդոցն . որք հակառակ են աւետարանին . կամ կրօնաւորական յանձնառութեան . զանկարգութիւն զանխոյսնե կանանցն , անհաստատ յօժարութեան 'ի բարին . զանկարգութիւն պճնաւոր հագուստին , վայելչազարդ խօսից , կամ աղաղակաւոր խօսելոյն : Զյաւելի ընչոյն , զբազմացուցանելն զընչաւոր մնան , ընախորժացուցանելով զգաղտակայսն , իբր մեծ ինչ գնել զայն , նմա անձնել և

ծառայել ։ կամ, զմարմինն որ մեռեալ էր առաքինութ., մերոյին հեղգա-
ցանել կամ կենդանացուցանել ։

(34) Չնան փոխ զսահման. արտաքոյ սահմանի օրինաց, դիւրախառնականն, պղծամացն կամ զսահմանական մասին՝ զանձնատուր բազաբնակութիւն, յանմեղոյն երա ընդդարձակելն, կամ կարի յոյժ հեռանալն և օտարանալն ։ Եւ դոր մ ճառէլն ։ Գոյ և այլ ինչ բաղդատել զոր չկարեմ կամ ամաչեմ յայտնել, գրել, բերանով պատմել, կամ այլ օրինակաւ յիշեցուցանել ։

(35) Տարագիր ըստ մարգարէին ։ Երեմ. (ԻԲ. 28. 30.) * Գրեա՛ զայրդ զայդ՝ այր անարգելի ։ ||

(36) Ո՛ւ այսու ներէի ։ Այսպիսեաց մեղուցելոյս օրինակօք մեղաց ոչ չարիք արդարութեան աշխատանելոյս 'ի չարիս. այլ են բարիք զանազանութեան կարգաց. են, որք գերհասական, զմահացուցիչ Թոյնս ունին. զոր այս զեղանան 'ի սատանն բարիք յամենայն մահաշխարհէն աշխարհ, փախել զնմին դարիւ, զծայր ատամն՝ ընդ որ Թոյնն արտաքս ելանէ, կողդբանին ըմբռնելով, շուրջանակի զնառակերպ կապելով զխայթոցն ։

(37) Այսոփիլ են ։ Որպէս կարիճն արտաքուստ բարուք երեւի, բայց ներքոյ 'ի տանն առնդրակալ ունի զԹոյնս կորուսիչս և կսկծեցուցիչս, որք պատճառք են սատակման, այսպէս և ես արտաքուստ բարեկրօն երեւեալ, բայց ներքոյ լցեալ կամ առաջեալ չարեօքս, որք են անօրէնութեան վասուակոց Եղանակաւորեալ Երգոց, այսինքն վարձք սատակման քրքտտանքս Թշուառութեան, կամ Թշուառացուցիչք ։

(38) Անձի պարգևական ։ 2. օրին. անձին իմ պարգևական ։ Վասն այլազգանեաց անօրէն գործոց արժանի եմ կրկին սատակման, կամ որպէս 'ի վայր ասէ, կրկին հարուածոյ, Թող Թէ զոհութեան ։ Զի զոր Թշնամին սատանայ յանեաց զորանն մեղաց 'ի վերայ բարի ցորենոյն, զառ փոխանակ խլելոյ զայն՝ կամաւորապէս ընկալայ, պահեցի և գործովք պտղաբերեցի ըստ բանի առաքելոյն զկենալին ամենայն անառակութիւն, (Հռովմ. Ա.) ուր և 'ի կատարածի եղեալն կանոն առ իս ելանէ, Թէ զխոտէին զկրա-ւուանն այ՝ զի մահու արժանի են ոչ միայն գործօղք չարեաց, այլ և կամակիցքն ։ Իսկ ես ոչ լոկ կամակից այլոց լինելովս, այլ և անձամբ գոր-ծելով կատարեցի զչարիսն ամ ։ Վասն որոյ զիս ինքն պարգև վարկայ, պար-տաւոր զատեցայ կրկին հատուցման պատուհասից ։

(39) Աշխանդոյէմ ։ 2. օրին. խնդրէմ ։ Եւ անձնաւդասս լինիմ առէ, այլ զառ բարերդութ՝ զանէ խնդրեմ ողորմութեանս. զի չեմ արժանի լսել զոհութեան ։

Մերոյին յառեալ նշկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն տէրն Սաղմոսաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ. ԽԸ ։

ա. Որդ՝ վրիպեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ դժնեայ վայրենաբարոյ՝ անձամբ անձին՝ մահու կշտամբիչ. արածօղս գերամակս զազիրս՝ վայրագասունս խոզից արօտականաց՝ գարշութեան մեղաց, [2] Նախատ վարձկանութեանց ։ Հովիւս տածո

ղական [3] զհօրանս ուլուցն ամայաբնակաց՝ 'ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առ իս առակին. որ ոչ իսկ ծանեայ զիս երբեք գիտել, թէ յո՞վ, և յո՞ր պատկեր, և վասն ո՞յր գոյացայ:

Ը. Ահա 'ի յոտս տանողականս կրողաց երկուց՝ միակցորդ խորհրդականաց, [4] ըստ ձեւոյ հրեշտակի կառուցար, իբր 'ի Թուխս Թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանողաց՝ յաշխարհն հայրենական հայել. ո՞վ յիմար, զի՞որդ քեզէն կորացար յերկիր, զատեալս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիւս անասնապատականս համարեցար: Իբր զՃրագ բազմաբեւրանեան՝ 'ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ [5] գըլխոյդ բոլորութի, զի և այսու 'ի յօրինակէն շնորհէ մի օտարացիս զա՛ծ տեսանել, և զմնացականացն իմաստասիրել: Նանականութեն յարգանօք՝ [6] կրկին Ճոխացար, զի զյաղթանակ բարեմասնութեն՝ որ առ քեզ եղեն, անարգել լեզուով խօսեսցիս: Ձեռինդ հաստմամբ՝ [7] յարմարօստեան մատանցդ շառաւեղօք՝ զգործնականացն տնօրինել զանտեսութի, իբր կցորդ համացեղութք ամենաբաշխ աջոյն ա՛յ՝ ա՛ծ կոչեցար: [8] Երից հարիւրոց՝ և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ 'ի քեզ ընդ նոսին 'ի նոյն՝ և պատշաճական մասունս չափոց ազդողականաց՝ հինգ ըզգայութեց, զի մի և երևելիդ նիւթականութի քումդ տեսութե՛ մնացդ դիտման անդատ եղիցի. զի ոմանք ստուարք են և զօրաւորք. և այլք փոքունք են և պիտանիք. կէսք կարծրակերպք՝ և ազդողականք. են և [9] գողտրականք՝ և պատուականագոյնք. դարձեալ կարևորք և պատկառելիք: Իսկ [10] Թարգմանութիք ոսկերն տեսութե՛ 'ի քե՛զ են նկարեալ իբր յարձանի անջնջականի՝ ա՛նձն իմ եղկելի. որպէս զի և տարր ժամանակաց՝ և շարունակ հետևման աւուրցն առաւել ամէն, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մասամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեսցի:

Թ. Դարձեալ [11] այլ օրինակ հոգևորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ 'ի մի առ եկեղեցի, քե խորհրդածի. իբր զի առանց ընաւից զուգամասնութե՛ կապակցել ծով հաւանականաւ զմեհն ընդ փոքուն, մնասեալ է հաստուածոյն անարատութի՝ յա-

նուն քնի ժողովելոյն. որպէս 'ի հատուածս և 'ի նուա-
զուն միոյ յանդամոցս անարգացս պատուատելոցս
'ի մարմնի, կրճատեալ իմն է յօրինուած կազմուն։ 12
մարմնոյ քում սեննեկի զգայականի, և շրջեալ է ըն-
տանութի պատկերին յանարգ փոփոխումն։ Այլ արդ՝
այսպիսեօք, և ևս բազմօք անզուգական հրաշակեր-
տութբ 13 եղական պատկեր ոմն՝ կշտամբեալ իսպառ-
ոգի իմ գերի. և թէպէտ յառաջին նմանութէն կո-
ղոպտեալ գտար պատուիրանին յանցաւորութբ՝ 'ի
դրախտին կենաց, այլ աւազանին լուսազարդ շնոր-
հիւն զհոգւոյն փչումն առեալ, և նմանութի ես կեր-
պարանին. և արդ ընդէ՞ր կորուսեր զփառսն երկնա-
ւորս, իբր նախաստեղծն երբեմն 14 զմխճակն երկրա-
ւոր՝ յադին դարաստանի. ընդէ՞ր փակեցեր քեզէն
քեզ զերկին, և զմերելոցն դուռն աղխեցեր. ընդէ՞ր
խառնեցեր ընդ ջրոյն մաքրութն զախտ արտասուացդ-
տարժանուն. ընդէ՞ր զլուացեալ զձորձ վերարկուին՝
զարշելի գործովք զաղրացուցեր. Հի՞մ զերդեալ հան-
դերձին մեղաց պատմուճան՝ անառակութն վարուք
քեզ արկեր. ընդէ՞ր զտանողացդ ոտից սրբութն ճա-
նապարհաւն ժանդից աղտեղեր. ընդէ՞ր կրկնեցեր
իրաւադատին՝ զուխտադանցութի հին պատուիրա-
նին։ Ընդէ՞ր մերժեցար 'ի պտղոյն շնորհաց, իբր զա-
դամ 'ի ծառոյն կենաց. ընդէ՞ր 15 նենգեցեր քեզէն
քո կամաւ՝ զանստուեր յուսոյն յարակայութիւն.
ընդէ՞ր 16 պատկառանք անհամարձակելիք քոյին դի-
մացդ նպաստեցեր. ընդէ՞ր զինեցար ընդդէմ քո ներ-
հակ, ո՞վ ընդունարան խելագարութ. ընդէ՞ր որսա-
ցար 17 'ի ծուղակ մահու՝ թողեալ զարահետն վստա-
հութե. ընդէ՞ր 18 կարթիւ պատրանաց ածար՝ հա-
ղորդդ մարմնոյ կենդանարարին։ Այլ վերստին յու-
սացեալ 'ի նա՝ կարդամ նմա, 19 ապաւէն և լոյս, քա-
ւիչ՝ նորոգիչ՝ փրկիչ՝ կեցուցիչ՝ և կենդանարար.
ողորմած խնամօղ մարդասէր և անոխակալ բազմա-
գութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Մահու կշտամբիչ։ Եւս ինքն խղճմտութեամբ կշտամբեալ զմահ մեղացս. կամ, 'ի մահ կշտամբիչ, այսինքն պատուհասողիչ։
(2) Նախատ վարձկանութենէդ։ Նախատական, անարգ վարձկանութեանց, կամ ծառայութեանց։

(3) [illegible] ։ Հրճուեալ գնդակամբք վերամբարձս մարդկանց ձայնալից արծից, այսինքն գազանութեանց մեղաց. և այս վասն այնորիկ՝ վասն զի ոչ [illegible], ոչ զմտաւ ածել զարժանաւորութիւն իմ ըստ բնութեան և ըստ շնորհաց. վասն այն յանդուգն ծառայութեան մեղաց դարձայց ։ Եւ այս է բան երգոց. ( տ. ղ. ) * Եթէ ոչ ծանիցես զանձն քո գեղեցիկդ 'ի կանայս, ելեր դու զհետ գարշապարացն || ևն ։ և յայս միտս մեկնէ զայն Որ վարդապետս 'ի բան մեկնութեանն. ( երես 31 ։ ) [illegible], յի՞նչ գոյացայ ըստ մարմնոյ, և ըստ հոգւոյ, և ըստ խառնակութեան կարողութեան նոցա. և յայր նմանութեան, և վասն որոյ ստեղծանիս, զոր և 'ի յաջորդական բացատրէ ։

(4) [illegible] ։ Ո՛չ եթէ մարմնոյ կերպարան ընծայէ հրեշտակին, այլ զի մարդս երկու ոտիւք միայն հաւեալ յերկիր, և երկու բազկօքն իւր երկու թևօք վերամբարձ կանգնեալ կայ գեղ յերկինս, այսու ձևով յայտ առնէ՝ թէ ոչ է երկրաքարշ, այլ երկնաթռիչ ստորոտի լինել իբրև զհրեշտակ, և հայել յերկինս իբրև 'ի հայրենիս ։ Աստ 'ի ձև մարմնոյս նմանութիւն հրեշտակի, և վախճանին՝ երկնից փափաքել ։ Իսկ դու ասէ՝ իբր քառասնամի անասուն՝ զերկրաւորս միայն հոգացեալ, և համարեցար ընդ ցիռ, ընդ վայրի էշս ։ Աստէն 'ի յօդս [illegible], մթութեան մեխ վասն շրջման ոտիցն. զի բառն [illegible]՝ գոլով բացայայտիչ տրամախոհին 'ի յօդս. զմեծէ էր 'ի տրամախոն հողով, բայց փոխադրութեամբ զնի սեռականն, և այնմ համաձայնեալ ածականացն՝ [illegible]. ուստի պարզելի է, 'ի յուռս առարկան, երկուս միաբան խորհրդականս. այսինքն 'ի միաւորին շարժելոյ ։

(5) [illegible]. Գիլոյդ բոլորակութեան զանազան զգայութեանցն հաստատեցաւ իբր ծրագ բաղձանաց 'ի վերայ մարմնոյդ. զի և այսու 'ի [illegible], 'ի վայելչութեան կամ 'ի յարմարութենէ օրինակին մի՛ ստորագրեսցես ։ [illegible]՝ կամ զծրագն ասէ, զի որպէս ծրագի լուսով տեսանեմք 'ի գիշերի, այսպէս լուսով զգայութեանց տեսանելով զարարածս, 'ի նոսա աղօտապէս տեսանեմք զարարիչն իբրև 'ի մթան. և կամ օրինակ ասէ՝ զնոյն իսկ արարածս, որք իբր հետք են արարչին մեր. ուստի ասէ՝ որպէս զգայութեամբք տեսանես զարարածս, նոյնպէս մի՛ ստորագրեսցես նոքօք տեսանել զԱծ՝ որպէս զնիւթ երևելի 'ի նոսա ։ Կամ դարձեալ, [illegible] մարթ է առնուլ զաշխարհական տաճարին. իբրև թէ որպէս այն աշխարհակ միջոց վառելոյ կայր 'ի ցոյցս ներկայութեան ԱՅ, այսպէս և զմարմինդ կարգեաց ԱԾ գնելով 'ի նմա զզգալիսդ իբրև ծրագ բաղձանաց, զի այնու տեսանիցես զԱծ ։

(6) [illegible] ։ 'Ի վերայ զգայութեանցդ յաւելու և բանականութիւն, կամ խօսողական զօրութիւն, զի զգօնութեան հաղորդութեան բարեացն [illegible], քաղցրացուցես ։ Կամ, [illegible] հանդերձեալ իմանի համեմատութեամբ անասնոց. զի նոքա թէպէտ ունին նման մարդոյ զգայարանս զգլխոյն, այլ ոչ զխօսնական զօրութիւն, որ յատուկ մարդոյ է ։

(7) [illegible] ։ մի օրին. [illegible] ։ Ջանացաք հանդերձ մատամբքդ հատանեաց զԱծ, [illegible], զարհեստական գործոց իբրև վճարել. որով նման լինելով արարչական աջոյն մեր, ԱԾ [illegible], այսինքն առեղծիչ յօրինող արհեստական իրաց, որպէս նա՝ բնական ։

(8) [illegible] ։ Երեք հարիւր և վաթսուն մատամբք կազմեցար, յաւելեալ 'ի նոյնս և զյարմար թիւ [illegible], զգայուն մասանց հինգ զգայութեանց. որով ընդ ամենն լինի 365 ։ [illegible], զգայութեամբք սոսան, զի մի՛ արտաքին նիւթական կարգութեան մարմնոյդ՝ տեսութեան մասցդ [illegible], անծանօթ կամ

անուշալյա Անասելէ · այլ սահմանելով և գծելով զդասաւորութիւն, զզօրութիւն և զզարդ խաւարչիւր ոսկերաց և յօդից, անոր ծանուցեա զզօրութիւն և զիմաստութիւն արարչին · և 'ի միա ասացեա՝ թէ մարդս իբրև փոքր աշխարհ՝ բովանդակի 365 մասամբք, որպէս ընդհանուր աշխարհն ժամանակին պատակի 365 աւուրբք ։ Զ յիշատակելով թիւդ ոչ է մարթ իմանալ 'ի վերայ ոսկերացն միայն · զի նոքին բառ երևելի անդամանըննից՝ ոչ անցանեն քան զ304, ատամամբքն հանդերձ · առանց որոց ամենք զնեն 249, այլք՝ այլազ ։ Այլև զի որ մարդասպեաս զինի ասէ՝ ամենայն յեներ փոփոխակ և աղաղողական, և ամենայ կարևոր և պատկառելի, որ ոչ պատաշաճի ոսկերաց ։ Աւանի երևելի թուել զամենայն ոսկերս հանդերձ անդամօք և այլ մասամբք մարմնոյ բառ հաշուելոյ բժշկաց այնր ժամանակի ։

(9) Գոաշրպայն ։ Փափկունք, կակուղք, որպէս լեարդ, թոքք, սիրտ, և այլն ։

(10) Թուոցմանութիւն ։ Բազմաշարայօրութիւնք կամ խորհուրդք աշխարհի կարգաւորութեան մարմնոյդ նկարեալ են 'ի թիւ մասանց մարմնոյդ · որպէս զի և փոքր, եթէ զի և ամփոփեն կէս փոքր մասն ժամանակաց, և շարունակ հեփանան, և հետ զհետ անկողոմն յաջորդութեան աւուրցն · առ պատ ամին, մինչև 'ի կատարումն տարւոյն, եթէ կանոնաւ իւրք, եթէ կանոնաւ համեմատութեամբ ընդ 365 թուոյ մասանց մարմնոյ, և աւուրց տարւոյն՝ ամբողջ պատշաճելի ։ Բազմազգայա իմաստքն են · մասունք մարմնոյդ, և աւուրք տարւոյ զուգադիպութիւն սահմանեցան, առ 'ի նշանակել քեզ թէ որպէս փոքրիկ մասն մարմնոյ ախտանի է և կարգեալ առ յայն, նոյնպէս և փոքր մասն ժամանակի՝ ախտանայցէ 'ի գործ արդարութեան · կորուսան մասին իւրեք ժամանակի այնպէս ընդ դատապարտեալ է, որպէս և մասին մարմնոյ ։

(11) Անշօրինակ ։ 'Ի միաւորութեան և 'ի կարգի մասանց մարմնոյն՝ խորհրդածէ զարձեալ զարարչին միաւորութիւն անդամոց եկեղեցւոյ · եթէ զի որպէս 'ի հատանել միոյ անդամոյ՝ ոչ մնայ ամբողջութիւն մարմնոյ, այնպէս առանց հաղորդակցութեան խաւարչիւր հաւատացելոյ՝ հաստատելով վայրապառնից առ մեծն, միասին ամբողջութիւն մարմնոյ եկեղեցւոյ ։

(12) Մարմնոյ բան ունենիլ ։ Կ · զգեն · մարմնոյ բան ։ 'Ի հատանել կամ 'ի պակասել միաւորելով յանդարգ անդամոց մարմնոյս՝ որ է անձնական մարդոյս, թերանայ կազմածն ողջոյն · և ընթանան պատկերին, հապաղաս և բան կերպարանք մարմնոյն փոխարկեսն յանդարգ ձև և 'ի տեսիլ ։

(13) Եղական պատկեր քո ։ Սահմանեալ կամ արարեալ պատկեր քո ։ Իսկ զնմանութիւն պատկերին՝ յայս գլուխ բացատրելոյ բացատրէ, այսինքն բառ մարմնոյ մասին · բառ որում ուղիղ ձևով մարմնոյն՝ ցուցանէ զերկնիս լինել իւր հայրենիք, որպէս քո անսահմանական ուղղի աւդին երկնից · նաև բաղարծ ձևաւոր ցուցանի լինել արարիչ արհեստականաց, որպէս քո՝ ընականացն · մասամբք մարմնոյն բովանդակէ յինքեան զ աշխարհս ժամանակաց, որպէս և քո յիւրում յաւիտենականութեան ։ Իսկ զնմանութիւն պատկերին 'ի կողմանէ հոգւոյն և շնորհաց՝ ատամանօր հարկանցի յետէ ասելոցն · և նա Բարձր անդուսփական հրաշակերտութիւն, այսինքն, բաց յաստեղեայ՝ առաւել եա բազում անհամեմատ և հրաշալի կարողութիւն հոգւոյդ և օծմամբ շնորհաց՝ հաղորդեալ պատկեր քո ։

(14) Զինքն երկրաւոր ։ Գրիւ անձն իմ՝ որ մկրտութեամբ վերստին եղեր նմանութիւն քո՝ շնորհօք, ընդէ՞ր դարձեալ կորուսեր զերկնային փառսն, որպէս աղամ կորոյս զերկրաւոր մեծարին, այսինքն զանմահութիւն մարմնոյն, զանցաւութիւն, զանապական գեղեցկութիւն, յարգին դրախտին,

յերկնաւորական դրախտին: Վասն էր փակեցեր զերկինս. եւ զմերժեալս, ըն-
դունելն եղանելոյ 'ի մեր յերկինս՝ [illegible] ցուցեր: [illegible]
ընդ [illegible] ամենայն [illegible] [illegible]
[illegible]: [illegible]. [illegible] [illegible]՝ որ [illegible]
[illegible], [illegible] [illegible] [illegible]: [illegible] [illegible] [illegible]
[illegible] [illegible]՝ որ 'ի բաց եղեալ էիր, [illegible] [illegible] [illegible]. [illegible]
[illegible]. ( 3 օրին. [illegible] ) [illegible]:

(15) Նենգեցեր: Խորամանկութեամբ ապականեցեր զնենգութեամբ յանուրս յորս-
կայութեան, զհնարաւորութեան [illegible] յուսոյն առ Ած:

(16) Պարփակուած անհամարձակելով: Այսինքն՝ որովհետեւ ոչ համարձակի
երեւել, 'ի գերեզմանս նայեսցէ, [illegible] [illegible] [illegible] եւ [illegible] [illegible]-
[illegible] քո:

(17) 'Ի ծովուն: Այլ օրին. 'ի ծովուն: Ընդ էր անկար կամաւ [illegible] յա-
[illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]
[illegible] [illegible]՝ զոր Ած հորդեաց:

(18) Կարեկից ածող: Ընդունելոյս [illegible] կերպն զնա որ հաղորդ-
եղեր [illegible] [illegible] քեզ:

(19) Առաջին եւ լոյս, փախիչ: 3 օրին. [illegible] փախիչ:

Սրտին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն
աղերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# Բ Ա Ն. Խ Է:

ա. Եւ արդ՝ զի՞նչ գոյ առել ամաչեցելոյս յերե-
սաց մեծիդ ահաւորութեդ, բայց եթէ համ-
բանալ, եւ հող 'ի բերան եղեալ լռել 'ի սրտի, [1] ըստ
մարգարէութեան խրատու, ահա 'ի բարւոյն կարկա-
ռեալ 'ի յոյս: Իսկ եթէ զփականս շարժողութեան
շրթանցս բացից բանադատեցից՝ խօսել կամեցեալ,
դարձեալ զնոյն ձայն կրկնականն եղերերգութ լա-
լեաց բազմութե [2] խէթ մտացս յառաջադրէ:

բ. Եւ արդ՝ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ
կամաւ առ 'ի մահ զնորին գոչումն երկրորդեցից եւ
ես ընդ նմին. մեղայ տէր՝ մեղայ, եւ անօրէնութեանց
իմոց ինձէն վկայեմ: Հիւսեալ ընդ նմին զբանս յի-
ներորդի սաղմոսին, անթիւս դրեմ [3] զպարտուցս սակ
անձինս մեղմանաց՝ [4] քան զհիւղ երկրի հողմահոս փոշ-
ւոյ՝ ընդ օդս ամենայն տարածեցելոյ:

գ. Մեղայ յերկինս եւ առաջի քո, ընդ անառակ
որդւոյն պատկառեցելոյ՝ հայրենի գթոյդ վերստին
դարձեալ՝ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն ա-

զերաժանաց՝ արտօսրածին ողբովք գոչմամբ՝ 'ի տխուր դիմս մատուցեալ առաջի քոյ տարածանեմ՝ Հայր գթութեանց, ամ բոլորից, [5] չեմ արժանի կոչիլ, և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաքան վարձկան։ Ընկալ զսովեալս տարագրական, պարտական միասուց. և զցաւ քաղցոյս՝ ըկանաց [6] նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հացիւդ բժշկեսցես։ Եկ ընդ առաջ քո ողորմութեդ՝ [7] 'ի սկզբնաւորս ապաւինութեան. զգեցո գթած և անախակալ՝ անօրինեալս մեղապարտի՝ զնախակապուտ համդերձին ծածկոյթ. աւանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեղօք՝ զկնիք մատանւոյն համարձակութեան ամենառատ կամօք մատուսցես. զգարշապարացս թշուառութեան մերկութեան ոտից՝ պատսպարութ աւետարանական [8] ամրավերարկու ոտից կօշկաց՝ 'ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես։ Զուարակդ պարարակի եզլինդ երկնային, որ է միածին որդիդ քո օրհնեալ իսկապէս մարդասիրութք՝ կարօտելոյս բարեաց՝ նուիրեա. որ մատուցեալ միշտ՝ և անպական մնայ 'ի լրութեան, [9] յարակայ զենեալ 'ի սպանդարանի անթիւ սեղանոց անսպառութք, բոլոր յամենեսին՝ և բնաւ յամենայնում, էութք յերկինս՝ և իւկութք 'ի ստորինս, աննուազ մարդկութեամբ՝ և անթերի ամծութք. փշրեալ՝ և բաշխի 'ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ 'ի նոյն մարմին իւրումն գլխոյ. քեզ փառք ընդ նմին՝ հայր ողորմութեան յաւիտեանս. ամէն։

(1) Ըստ մարգարէութեն։ Բազում են 'ի մարգարէս այսպիսի բանք. բայց զոր ինչ վարդապետս ասաց՝ երեւելագոյն է. (Ողբոց. Գ. 28.) "Նստցի միայն լռեսցի 'ի սուրն իւրում. || այսինքն, 'ի սրտի։ և 29. "Տացէ հողոյ զբերան իւր. վասն զի կայ յոյս։ || Եւ յոյս հայցի հեռաւորութ բանին. [illegible] յոյս. այսինքն լռեսցի 'ի սրտի, համբերելով կամ վստահելով 'ի յոյս ողորմութեն նոյ։

(2) Խնէթ ժողովս։ Եթէ համարձակեցայց շարժել զշրթունս իմ 'ի խօսել, ոչ եթէ զօրհնութեանս քո երգել կարեմ ըստ [illegible], այլ խնկոյն խնդրել կամ հառաչանօք [illegible] թեւակոխէ զնոյն աղաչական ձայնս երկրպագել։ Ուսանի աղաչանկաց ընթեռլով Թեռ Թեղաւորին, Մանասէի թագաւորին, որ կամաւ՝ և ոչ սպառնութք կեն 'ի սկզբնութէ անօրինեցաւ, զանձն և զերկրպագութ իւր խոնարհելով, զնոյն գոչումն երկրպագեալ են։

(3) Զղջարդութ առն։ Զհաշիւ կամ զթիւ պարտուցս, անչափս մեղանաց, 3 զգեն. Գեղոյ։ Ընդ աղաչական ձայնս մանասէի կցորդեալ և զն սաղմ.

Որպիսում լինի Այ · և առաւել անհամար խառնուածովն զհաւքս ամբո-տուց մեղաց քան զփոշի են ։

(4) Քան զհող ։ այսինքն քան զփոշի ։ 2. օրին · փառ զհող ։

(5) Զեմ արժանի կոչիլ 'ի քէն ստրողապէս, և ոչ Բնաւորն յայլոց անուանիլ որդի քո · կամ, չեմ արժանի կոչիլ որդի քո, և ոչ ընաւ առ այս, բայց յայտնեմանէ, կամ 'ի վերայ այսր՝ անուանիլ վարձկան քո ։

(6) Նեղեալս նուաղեցեալս ։ Նեղութե նուաղելոյս, կամ թուլացելոյս 'ի քաղցոյ ։

(7) 'Ի սկզբնաւորս առաւօտունս · 'ի նախկինն կամ 'ի նախընծայ առաւօտ-նութեան · որպէս զանապականն աւետարանելով նախ առ քեզ զխմբաւլ, ընդ-առաջ պնակեր նմա ։

(8) Ամբոխներալին ։ Ամբոխութե կամ անդադարեալն ծածկող · ուրեք, առաւ-ներեալ սակս, որպէս կոչէկ, սանդղաւ ։ Զմերկութիւն ողորմելի սակս զզաւրութեանց՝ պահպանեսցես 'ի թիւնից սատանայի պատերազմութե ամբարտաւան կոչկաց աւետարանին, ըստ բանին եփեսաց · զ. 15 ։

(9) Զուարակին պարարակին ։ Պարզելի է շարադրութեանս · զզուարակդ՝ այն է երկնային եզն պարարակ, որ է միածին որդին քո, Նորբէմ, որ մեզ մատչի պատարագ, և անպակաս միշտ ։ Յարակից զենեալ ։ Մինչև 'ի կատարած աշխարհի զենեալ քո խորհրդաբար, 'ի սպանդա-րանի, 'ի տեղւոջ ուր սպանդքն կամ ուտելի անասունք զենեալ լինին · և նմանութեամբ խմանի նմա տեղւոյն պատարագողին ։ Եկեղ յամենեւին, բայց ընդ քո յամենայն տեղւոջ և 'ի ճաշակօղս · և Ենաս յաւիտենական · և ամ-բողջ քո յամենայն մասն նշխարին, կամ բաժակին ։ Եւ բեռնամբ յերկինս · գոյացութեամբ մարդկութեանն յերկինս, և խոնարհ 'ի սուրբս, և նոյնն ճշմարտապէս յերկրի 'ի մէջ խորհրդոյն՝ բովանդակ մարդկութե և անթերի ածութե ։ Փոխեալ ըստ էութեան հացին, և Ենաւ ընդ-ստակք հացին և գինւոյն, 'ի ձեռն անհատ, բաշխի 'ի ներքոյ անթիւ մասանց նշխարին կամ գինւոյն՝ ուր բաւական իցեն պահել զտեսակս իւրաքանչիւր նոցա · կամ անհատ, իբր մակբայ՝ անհատաբար, առանց հատանելոյ կամ բաժանելոյ · այսինքն քո ըստ մասանց հացին կամ գինւոյն բաշխի բոլորն առանց բաժանելոյ իւրոյ ։ Զբաժանումն խորհրդա-կան տեսակաց հացին և գինւոյն՝ ընծայել քոյ 'ի խորհրդեան անդ, առ վերակայն ո՞ր է վարդապետաց · յորոյ վերայ և տպեսերան ասէ ( Ճառ. իգ. 'ի մեկն. ա. կորնթ. Ժ. 16.) 'ի բանն, Հացն զոր բեկանեմք · * Բեկանի մարմինն քոյ 'ի հաղորդութե, որ 'ի խաչին ոչ եղև, այլ ընդ-հակառակն ասացաւ, ոսկր նորա մի՛ փշրեսցի · և այնպէս զոր ոչն կրեաց 'ի խաչին, կրէ վասն քո 'ի պատարագին, մանրելով առ 'ի լնուլ զամե-նեսին ։ || Զայն խմասս գնէ և մեր վարդապետս ('ի մեկն. երգ. երգս. 165 ։) Զի զհամայնն համագէւոյ · զի զբովանդակ եկեղեցի ճաշակողաց, միաւորեսցէ 'ի մի մարմին Բարուն Գլխոյ, այսինքն զգլխոյն եկեղեցւոյ որ է Որդին քո · կամ Բարուն խմանի՝ քոյ, այսինքն զի միաւորեսցէ զա-մենեսին 'ի բարոյական մարմինն քո հօր, որ է գլուխ քոյ ։ Եւ բա-ցայայտ խմասս բանիս է, թէ քո ամբողջ բաշխի իւրաքանչիւր հաւատա-ցելոց, զի ամենեքին միով հոգևոր կերակրով անեալք, շնորհօք միաւո-րեսցին յածծ՝ իբրև մի մարմին խորհրդական ։ Յայս համեմատ բան ա-ւանդէ մեզ վարդապետս զամենայն ուղղափառ ճշմարտութեան խորհրդոյ հաղորդութեան ընդդէմ նորաձայն աղանդոց լուտերականաց և կալվի-նականաց · զի դաւանի՝ թէ ճշմարտիւ գոյ է պատարագն քոյ, յորում Որդին իրապէս գոյացութե գտանի · և Որդին բոլոր բաշխի հաւատացե-լոց, և ոչ թէ գոյացուն հացին կամ գինւոյն · և 'ի ճաշակողսն ներ-գործէ հոգեւոր զօրութե զշնորհ միաւորութե ընդ իւր ։

Վերստին յաւելուած նըշխին հեծութեան՝ նորին հոլովել, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ ԽԲ ։

ա. Բարձրեալդ, հզօր, անսկիզբն, անեղ, ան-
բովանդակելի[1], անքննելի ակնդ նկատօղ,
ծնօղ անքնին փառաց միածնիդ. [2] իրաւացուցես
զիմս ողորմութեամբ հերքեցելոյս ընդունելութեան՝ առ
երկնայինս և առ երկրաւորս ։ Տօնեալ զկեալս կո-
րուսելոյս՝ վերնականացն պարերգութեամբ. աւետարա-
նեալ բանիւդ օրհնութեան զկենդանութիւն իմ մահա-
ցելոյս. [3] զբարերարութիւն կամացդ յայտնեալ զձ-
վեալ՝ բոլորից գոյից եղելոց. ստացիր անուն քեզ՝
անձառ, և ինձ թշուառիս՝ նորոգ փրկութիւն. կո-
րուսցես զգիր մուրհակի մեղուցելոյս ամբաստա-
նութեան. զմծիռ հոգւոյս մահու՝ ջնջեսցես կայլակօք
արեան որդւոյդ սիրելւոյ. վստահութիւն փրկութեան
բարեաց՝ արեամբ քո նկարեսցես. ցոյց զսքան-
չելիս քո բարեգթութեանդ՝ 'ի ճաշ հարսանեաց քում
հարազատի ։ Մի՛ փակեսցես դիմելոյս առ քեզ զա-
ռագաստ սրահի կենացդ յարկի. մի՛ տրտմեսցես 'ի
բազմականացդ, և 'ի բարեացդ քո զրկեսցես. մի՛
պահեսցես 'ի գանձարանիդ զնիւթեալ իմ պարտուցս
անօրէնութիւն. մի՛ կնքեսցես 'ի քսակ բարեացդ՝ զզազ-
րութեանց իմոց գարշութիւն. [4] մի՛ երկարս ինձ զվէր մե-
ղացս՝ 'ի յախտալից մարմնիս ծածկեսցես. [5] մի՛ զփը-
տութիւն նեխութեան ցաւոցս՝ ինձ անկակից մահու մնա-
ցուսցես. այլ բարձ բանիւ քոյդ ողորմութեան [6] զժան-
տութիւն ապականարար, որպէս զի զատեալ 'ի հիւծ-
մանց ախտից՝ նաւողջութեան պատրաստեցայց. հնա-
րաւորեալ գթութեանցդ հայր մեծ խնցուածոյս՝ զօ-
րեղ սպեղանիս, [7] կարևոր կործանմանս՝ բարի այ-
ցելութիւն ։ Ո՜վ քո եմ տէր օգնեա, [8] թէև առ մի
նուագ բիւրս մեղիցեմ, բայց ոչ գրեցայց համայն
մեղուցեալ՝ տուիչ կենաց իմոց բարերար՝ 'ի շնորհ
պարգևաց կենաց քոց աղաւնեալ. զի ճանաչելդ
զքեզ՝ բովանդակ արդարութիւն է, և գիտել զզօրու-

թիդ քո՝ արմատ անմահութեան, որպէս և կանխաւ
իսկ գրեաց իմաստունն. և դարձեալ՝ տիրելդ քո
ասէ՝ ամենեցուն, խնայել տայ քեզ յամ̃. և դար-
ձեալ՝ մօտ է քեզ յորժամ և կամիս, կարող գտա-
նել:

Ը. Այս տողմանի յուսոյ աղերսանք՝ իմոյս առեալ
տիպ. քանզի ոչ այլ ոք բազմամեղ՝ 9 որ քան զնա՝
ինձ զուգաշաւիղ: Երբեմն որդի, ապա ատելի. եր-
բեմն միջնորդ խաղաղութեան՝ այ̃ ժողովրդեանն, և յե-
տոյ խորոց որոշման՝ բազում խռովութեան. Երբեմն
օրէնք կենաց կացեալ, և յետոյ մուրհակ մահու
հաստատեալ. զերկնաւորին պաշտօն ընդունեալ, և
զօտարին անուն ծանուցեալ: Նպատճառ օձոյ. 10
անկարօտ զրկող. անսովելի գող. գրգեալ տրտնջող.
փափկացեալ փախստական. 11 սեղանանենգ սարտու-
ցեալ. անպատասխանի մնասապարտ. քաղցրանոյց
հայհոյիչ. զաւակ հայրատեաց. 12 կտակարանացն
մատնիչ. մովսէսի չարախօս. մոռացող երախտեացն.
իմաստուն սխալական. ամենագէտ յանցաւոր. ամօ-
թապարտ զղջացեալ. 13 տարակուսեալ աշխատող. 14
աղաչաւոր կռապաշտեալ. 15 յամրայրին դարձաւոր.
կաղակարծ ընկալեալ. կասկածաւոր հաշտութի. յա-
պայս յիշատակ. յերկրպայս փրկութի. չաւատալի
գիւտ. 16 'ի մանանէ մնացուած. խարդաւանեալ գերի.
17 կիսակտուր պրծեալ. կամաւոր անձնամատն. տր-
մարդի յղփացեալ. բազմավրէպ հանճարեղ: 'Ի
յընթացս բանից 18 երկեակ որոշմանց՝ ամենայն ու-
րեք բանս արկեալ ողբոց և ձաղանաց, մեծ պարսաւ՝
և փոքր գովեստ՝ իբր 'ի վերայ ինքնագրաւ կորստա-
կանի, երգիծանութի խառնեալ ընդ աշխար. բան
նորա՝ թելադիր բարգաւաճութեան ամենայն հասա-
կի, և խոստովանումն նորին՝ 'ի շրթունս բնաւից թա-
ւանչ թախծութեան ողորմելւոյ իմն ազդեալ:

Թ. Ո՜րմանամ, վհատիմ՝ տարակուսեալ ապշու-
թեամբ. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պա-
տահեսցէ. զի՞արդ անկաւ ամբարձեալն. զի՞արդ սա-
սանեցաւ հաստատեալն. զի՞արդ կործանեցաւ կա-
ռուցեալն. ի՞բր օտարացաւ ծանուցեալն. զի՞արդ 19
զակատեցաւ զաւակն ընտրութեան. զի՞արդ 20 սրացաւ

մերձաւորն. զիա՞րդ աղօտացաւ փայլեցեալն. զիա՞րդ
պատանդեցաւ ազատեալն. զիա՞րդ անօրինեցաւ ու-
սուցիչն. զիա՞րդ նուաղեցաւ հռչակեալն. զիա՞րդ [21]
անարգեցաւ փառաւորն. զիա՞րդ փոքրկացաւ մեծա-
տունն. զիա՞րդ ամբարշտեցաւ բարեպաշտն. զիա՞րդ
ամբարհաւաճեցաւ ընտրօքն. զիա՞րդ ունայնացաւ
պատարագն. զիա՞րդ կորեաց զուխտն՝ որ ընդ
բարձրելոյն։ Պատկառեմ ասել, թէ՝ և ընդ սան-
դարամետականին կապեցաւ. զի՞ կայր նորա՝ և
կռոց. ուստի՞ սէրն ընդ պատկերաց. [22] վասն էր
կամքն ընդ խորանաց։ Օ՜ իա՞րդ ոչ յիշեցաւ յան-
դիմանութիւն սամուէլի՝ առ սաւուղ եղեալ. հմայք
ասէ՝ մեղք են, և ցաւս և աշխատութիւն ածէ թե-
րափ 'ի վերայ։ Օ՜ իա՞րդ ոչ հայրենի յանդիմանու-
թիւն, կուռք ասէ՝ հեթանոսաց՝ դևք և անշունչք
են, և նման նոցա լիցին պաշտօնեայք նոցա։ Տէր
միայն ածէր զնոսա, մովսէս նախագրեալ յառաջա-
ձայն ձայնիւք՝ սաստիկս իմն ամբաստանէ, ոչ էր
ընդ նոսա ասէ՝ աստուած օտարոտի, զոր ոչ ճանաչէին
հարքն նոցա։ Ո՞ւր է մահամատոյց այլազնեայ [23] որ-
ձանն փառօքն. ո՞ւր օգեղն և [24] անպանծալին սի-
դոնացւոց՝ իգական ամենանզով ձուլածոյն. ո՞ւր
կանացի կերպին անդրիլին խայտառակութիւ զագիր
տեսակին, որով ամօթոյ մարգարէքն զանասնօրէնն
դիմեցուցին անխտրաբար, յանուն չարուն անժուժ-
կալ դիւլին՝ անմածաբար ձօնեալ մոլէին։ [25] Տարա-
զէտութիւ բարեբաստութեն՝ որ զնախնին որսաց 'ի կռ-
բուստ. յաղթեաց մեծութիւն՝ իմաստիցն առաւե-
լութե. գերեաց զառաջութիւն. յիմարեցոյց փափ-
կութիւն. վանեաց արծաթն ծառայեցուցիչ. [26] յոգի
դատեցաւ զայրն տօնելի՝ հին զէնն կործանողին. 'ի
դրկացն ամ հանեալ՝ 'ի յոսս սատամբակին գթեցոյց.
մեռոյց մեղկութիւն. թմբրեցոյց ծուլութիւն. արթե-
ցոյց շուայտութիւն։ Ո՞վ դիւրապատիր մարմին երկ-
րածին, որո՞վք ձայնարկութեամբք զքեզ ատաղեցից.
քանզի ոչ տիրապէս առ նա հանդիպի ընդդիմաբա-
նութիւն, այլ ամենից սխալողաց՝ կամաւ վրիպելոց.
վասն զի նովաւ է խմանալ, թէ [27] անհրաւ է պարծել
յիմաստս մարմնոյ, եթէ ոչ աստուծով զատեալ ըն-

տրեսցի. որ զի թէ առ այս պայմանի՝ յիմար ոք իցէ,
և 'ի հաստատչին կամս յուսասցի, ոչ եա 'ի նորայոց ան-
տի ինչ կրեսցէ:

Է. Այլ քանզի սաստիկս և քստմնելիս ունի տեղա-
մնն զդարձին իւրոյ յիշատակարան՝ ինքնապարառն
կշտամբութեամբ, իբր մեռեալ իսկապէս համայն
աշխարհիս անձնասիրութեան. զոր եթէ զխակն ոք
նկատեսցէ, 28 Ունայնութիւն է իմանալի. 29 այլ և 'ի
մատեանս քահանայիցն՝ և 'ի գիրս աքիայ սիրանաց-
ւոյ, 30 յորում զփոյթն իւրում ընթացիցն՝ արտա-
սուելիս իմն յեղանակէ: Ո՜ւր ջան. անօգուտ վաս-
տակ. անմիտ հետեւումն. անշահ աշխատանք. ան-
կայուն երկք. 31 ծառային իմաստք. 32 ունընչից հողմք.
բամբասելի բերք. անյարմար վարկածք. մնոտի սեր-
մանիք. 33 աւազափուլ շինուածք. ապականացու
ստացուածք. քամահանաց տաժանմունք. 34 ինքնա-
մարտ կռիւ. ընդ ոգւոյ իւրում դատ. 35 ընդունայ-
նաթող քիրտն. մնասակար փափաք. կորստական
շաւիղ. վրիպակ ճանապարհ. կործանական կրթու-
թի. մոլորապատիր վարժութի. հանապազասխալ
տեսութի. 36 անհնայայլրատ պչրութի. պտունկակերպ
կերպարան. ախտաբորբոք նիւթ. 37 դժնեատեսիլ
գոյն. յոքնատխուր դեղ. 38 յոլովամեղծ ծուխ. շա-
ղի ցնդելի. 39 վաճառ մերձ 'ի յառ. տաղաւար քակ-
տելի. ընդվայր աղաղակ. անպատճառաւոր ծաղր. 40
արհամարհելի ապարէզ. 41 անձնավաճառ գիր. սա-
տակչական եւք. անծ̃ծ մտածմունք. տայօղ ճառ.
ղայրացուցանօղ զրոյցք. 42 եպերանաց խծբիծ. խե-
լագարութէ խնդիր. ամօթանաց ցոյցք. խայտառա-
կանաց յայտնութիք. առակ ապառնեացն. ապաշա-
ւանաց գործ. 43 ըմպահկանաց պատմութի. հեղգա-
ցելոց օրինակ. խորխորատ ծածուկ. որս խաւարայինն.
մահադուշակ վիհ. անյատակելի անդունդք. ուղեկ-
ցութի սպանողաց. յիմարութեան բարբանջմունք.
դարանակալաց վայր. խարխուլ յարկ. շինուած սա-
սանեալ. կամուրջ խախտեցեալ. 44 երևոյթ փախչե-
լի. խաբօղ շողոքորթ. անօպայ մատնիչ. ընդդէմ
բարձրելոյն հակառակութի: Ո՜ այս ամ մատենս
բանից խոստովանական կանոնադրութի, 'ի սիրաս

ընտրելոց նախասահմանեաց ժողովոցս՝ կանոնադիր դարձելոց զղջման. որպէս [45] զի մի պարծեսցի ոք 'ի մարդկանէ՝ բամբասաւորք զինուորեալ նետիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիշտ է քողով ծածկեալն, որ զկերպարանս միայն ունի, և զուշախորժելիս ստեղծելին կատարէ:

Ե. Այլ արդ նա՝ որ [46] ոչ այնքան մեղաւ, որքան զղջացաւ, մի իսպառ պախարակեսցի. այլ յիշեսցէ այրն այն 'ի բարի, իբրև զհիմն յուսադրութե 'ի տէրունի ստոն դիմելոց, յորժամ հոգւոյն էջ յայցելութի ծնութեն անքաժանելեաւ՝ կենագործել զանդ խոստովանեալսն. զոր միւսեալքն՝ ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս: [47] Որոց որում մաղթեալ իմ պարտաւորի՝ իմաստութեն ոչ ժամանելոյ, 'ի մեղանացն մասն կարգեալ, բարերանեալ մեծիդ պաղատիմ. ընդ զնուագդ իմ բանադրութի 'ի յերջանկին համձարեղութի. նիւթեացին ներկայիս հայցմունք՝ 'ի բարգաւաճին յարդարութի 'ի գերաշխարան արքային աղերս. այցելութի խնդրոցս դիցէ քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրինակեցեր: Յարեանն կցորդութե՝ զքո փառակիցդ ճաշակեցաք. ամէր փրկութի քոյոյ ծառային՝ ամենահնար զօրեղ ահաւոր, 'ի ստեղծողիդ փառս աճեցուցեալ զանքաւելի մեղացն քնքուշ: Աշխատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմելեացն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապաճոյճ առակագրուէ՝ զնծուեոդ քո քարոզեալ՝ 'ի մատեան լուսազարդ կտակի եկեղեցւոյ, ընծայեաց հետս բարութե խոստովանութե մատչել առ քեզ՝ հայր: Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կալթուած չէր անկեալ 'ի յեռանդն սրտին ըղձից, որ զձեռ զղջմանն փողր կոչ կասեաց:

Զ. Արդ [48] 'ի յուշ բերեալ զոր 'ի քեզ անճառելի բարեմանութիւք, զգթութի քո աղջուսնեսցես. որով զկոշկոճեալն 'ի բազում դարուց՝ բամբասանաց քարանձգութե, երանութե վերաբերանացն. որ յաքնահրսան արտասուաց ելիւք՝ զմէջ յատակի յարկին հե-

զեղեալ ապարանիցն իւր խրախճանութ̃՝ տառա-
կակսկիծն ապաշաւանօք, հօրն կրկցն գերազանցեաց
ողորմելի որդւոյն հեծութ̃. զոր 'ի յաչաց բանիդ-
քո արտօսր՝ առ որ մերօվս 'ի յիւրն ախտակրեաց,
երկայնամիտդ. ներողութ̃ միացուցեալ խառնեցեր
գրկեալ. և զանյարմարն առ նա կարծեցեալ զաղա-
մատին բարեբանութ̃, 'ի փառս էակցի որդւոյդ՝ կնքե-
լով նովաւ՝ կեցուսցես զնա քաղցրութ̃՝ ընդ աղ-
քատս ժողովրդոց: Զայս [49] պուետիկոս ամն բարե-
շնորհ արդարահատէր ընդ ողորմածի, ամենայնիւ վարձս
վարկուցեալ համակցորդ զուգաձայնութ̃՝ իւր կեն-
դանեօք նովաւ՝ ընդ նմին վասն նորին աղերսել առ
քեզ, զոր յաւելուած կարգիդ մնտեսէ: Քանզի և
աւտատացւոյն 'ի նմանէ ստեղծեալն՝ բազմահրաշա-
ւորն մարգարէաձառն պատմագրութիւն ամ̃ծութ̃ն
արդարացուցիչ՝ զսողոմոն ողորմեալ կարգէ. որ զի
անպարսաւ է աղօթելն, քան չարաբանելն վասն
նորին:

է. Զոր և ես մաղթեմ մեծ վստահութ̃ նմանա-
կից այսր հեծութ̃ և զիմս ընդ նմին ընծայել զո-
չումն. զի թէ կորուսցես զմեզ դատեալ ըստ գոր-
ծոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճա-
նաչիս. իսկ եթէ զոյցես, [50] այնքան բարձրանայ, որ-
քան մեծութեդ քում վայել է. քանզի յաւէտ օրհ-
նաբանելի ես դու երկրորդաւս՝ ողորմածութեամբ,
քան նախահրաման տատտկութ̃ն: Դարձիր տէր՝
դարձիր քաղցրութ̃ 'ի խնամս գթութ̃ ձրի և ամէն-
առատ պարգևօք սիրոյ՝ մխիթարել յաւէտ [51] զտրտ-
մեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տուչորման
անբժշկականի: Ջեռն եդեալ փրկութ̃ նորոգե-
ցես վերստին, քաւեալ և պատսպարեալ 'ի մեղսա-
կործանս խորտակմանէ: Եւ քեզ [52] միայնոյ սկզբանդ
և անսկզբանդ, ընդ սկզբանդ, և սկզբնաւորիդ սկըզ-
բանց՝ որք երրորդութեանդ՝ և միում ամ̃ծութեանդ
փառք և իշխանութիւն՝ յաւիտեանս յաւիտենից.
ամէն:

---

(1) Ա[illegible] [illegible]: Այն կամ [illegible] ես՝ [illegible] ոչ [illegible]. և [illegible]
[illegible], [illegible] [illegible]: [illegible] [illegible]. [illegible] [illegible]՝ որ [illegible]-

ասաց է, այսինքն փառաւորեսցի, կամ, որ քեզ փառքն է, ըստ այնմ. * Եւ զքեզ փառաւորեսցի յերկինս. || (Յոհ. ԺԷ. 4:) կամ, [illegible] փառօք ծնօղ [illegible]:

(2) Իրաւաղաւաղէն [illegible]: Իրաւացի ցուցցես կամ հրապարակեսցես [illegible], որ առ [illegible] կամ [illegible]: Այլ [illegible] և առ [illegible], որպէս [illegible] և առ [illegible], [illegible] կարեւորս, և [illegible]:

(3) Զ[illegible] [illegible]: Զ[illegible] կամ [illegible], [illegible] և [illegible]. [illegible] և [illegible] և [illegible], և քեզ [illegible]: [illegible]. [illegible] Այն [illegible], կամ հայր, կամ [illegible], [illegible] հայր [illegible] և [illegible]: Կամ, [illegible] է քեզ, [illegible] և [illegible]. և [illegible], [illegible] և [illegible]. այլ [illegible] ոչ [illegible] [illegible]:

(4) Մի երկար [illegible]: Այսինքն, մի [illegible] մե[illegible]: մի օրէն. մի երկարեա: այլ օրէն. և հին [illegible]. մի երկարեացէս:

(5) Մի [illegible]: Զ[illegible], [illegible] կամ [illegible]:

(6) Զ[illegible] [illegible]: մի օրէն. [illegible] [illegible]: այլ. [illegible]:

(7) Կարեւոր [illegible]: այսինքն, [illegible]: 2 օրէն. [illegible]:

(8) [illegible]: [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible], ոչ [illegible], կամ [illegible] կամ [illegible], [illegible] 'ի [illegible]: Այլ, և [illegible] (ԺԵ. 2. 3. ԺԶ. 18:)

(9) Որ [illegible]: այլ օրէն. [illegible]. այսինքն [illegible]. որպէս [illegible]:

(10) Ա[illegible], [illegible] 'ի [illegible], կամ [illegible] [illegible]. որպէս [illegible] (Զ. Թագ. ԺԶ. 4:)

(11) Մ[illegible]: 'Ի [illegible], [illegible] և 'ի [illegible]. կամ, [illegible], [illegible]:

(12) Կ[illegible]: Զ[illegible], [illegible], և [illegible] 'ի [illegible]. [illegible] և [illegible]. ըստ [illegible] [illegible]:

(13) Տարակուսանաւ [illegible]: [illegible], թէ հարցէ [illegible]:

(14) Ա[illegible]. [illegible], և [illegible] [illegible]. կամ, [illegible]:

(15) Ց[illegible]: Ա[illegible] և [illegible] 'ի [illegible] [illegible]. [illegible] և [illegible], [illegible] [illegible]

*յոյն, հաշտութիւն, փրկութիւն ։ յաղագս չիրարփոխ․ սատարութեան ժամանակի եկեղեցին՝ յերշտանակ երկինս, գթութիւն, խոնարհութիւն, եւն ։ ըստ տառին գիր, կամ այլ օրէնս․ չհաստատին․ այսինքն դժուարահասանելի գիտութ հոգւոյ նորա, ոչ ’ի կողմանէ զօրութեան իւր, այլ զի գիտութիւն մերոյ, եւ յանգիտանալն յոյն, ոչ գլխաւորաց․ եւ ոչ որ գիտէ յայտնի ինչ ամենակից զատարակապահութեան նորա․ քանզի եւ զգործառութեանց չինելոց կարգի, ոչ երբեք, այլ յոյժ նոցա յետոյ քանի։ (Գ․ Թագ․ ԻԳ․ 13 ։) Այսպէս են պատճառքն՝ վասն որոց բազումք ’ի վերջատեղեաց ամեն զատուածն անգործականութեան․ մնալով․ Թէպէտ այլք եւ ամեն ապաշխարելով․ ուստի յերկնայս մեծաց փրկութեան նորա ։ Տես գլխի․ լուծ․ 28․ եւ յայլուն ։*

(16) ’Ի ձեռնէ ճաշուածոց ։ *Ըստ ամենայն միայն մեծագործ թագաւորութեան․ զի տանն ցեղքն աստուածայինքն ։*

(17) Կիւռակիոսուր ողբերգ․ *կամ ըստ փրկութեան, զի ոչ անմեղութեամբ, այլ ապաշխարութեամբ ապրեցան․ եւ կամ ըստ նորութեան յարգին իւր․ զի կարեցաւ թագաւորութեան ։*

(18) Եւրիեւոյ որոշմանց ։ *’Ի բնոյս՝ մերկոս զանազան կամ հանգատակ բանից յնմ սնայալ ծառն ուրիշ, զորոյ նմանալ զատուածնէ․ այլ օրէն․ ծառ ուրիշ․ այսինքն նախատանս, այպանելով ։ Իսկ կրկին բանքն են՝ որ ծոց վասն անկման այծեամբաւոյ առն․ և յաղուկոյ, զարտավանաց վասն գիտութ և կամաւ և անապատական օտարական լոյն յոյն․ որով մեծ եղեւ պատճառ նորա, և փառք՝ գովեստ խոնարհութեան եւ աւագքն անմեղութեան ։ Եւրիեւոյն, մեղաւորագէն խառնելով ընդ աղէտս, ընդ որոց կամ ցաւակցութեան․ վարդապետութեան նորա Եւսեբիոս Եւրիպոսիոն, խորագոյն բաղկացութեան նմանական ըստ իւրաքանչիւր հատուածի, զորօք Աստուածոյն զանազանահատուած վարժելով, եւ ժողովելոյն՝ զի չար հաւանութեան ։ Իսկ խոստովանութիւն նորա յոյն՝ ’ի բերանս առեննեցան՝ Եւսեբիոս Եւսեբիոսէ, աստուածային հատուածոյ նրբեթ՝ ոսկերչացն եւն, ողորմելի օրինակաւ կամ ցաւակցութիւն խօսեցելոյ ։*

(19) Զանդիւցաս գրութիւն․ *Թիւրեցաւ, խորթացաւ․ կամ մեղադրեցաւ, յանդգնեցաւ ։*

(20) Մրոցաս մերձաւորին․ *փախեաւ, հեռացաւ ։*

(21) Անարգեցաս ։ *այլ օրէն․ անարգացաս ։*

(22) Վասն էր խոսին ընդ խոցելոց․ *յօժարութեան՝ ընդ կատարելոց անտասի պաշտամանս, յորոց խորհէին օրէնքն իւր ։*

(23) Արքայակ քարվաղիայ ։ *Փեսայից, որ և փեսայից և փեսայից, էր կուսակ մեղաւորացաց, որում զգործառութեանն չինելոց աստուածոն, (Գ․ Թագ․ ԺԶ․ 7 ։) ուր անուանքն քաղաքայ գլխի․ զոր քաղ մերձեցաք նոյն համարումն ընդ փեսայից ։ Արդ՝ սա ծառանգութեան․ զի այն կուսակ եղեւ պատճառ կատարածի որդւոյն խորտակելի քանն եւ չարս հաւաքս տունից․ (Թուոց․ ԻԵ․ 9 ։) արքայենւոյ, այսինքն այլանդակ առաջեաւք․ զի ըստ օրինաց՝ կացուցեալ էր ’ի սնաւ քաղէ՝ կանանցի կերպարանաւ․ ըստ այլոց՝ առաջնական կացուցեալ էր՝ եւ անկանոն առաւելաւ ։ Որոնց Թուեցաւ, Թէ այս բան գրելի իցէ՝ արքայենւոյ․ բայց այսմ չէք հիմն՝ ոչ յօրինակաց նորա, եւ ոչ ’ի հաւատոյ ծանօթութենէ մերոցդելով կարգի փեսայից ։*

(24) Անզանձաւայն սերկանոյոց՝ Եփեսոս ։ *Իմաստի ասատուածէս չար մերձաւորաց․ զորոյ բարձրաւանդակն կանգնելոց աստուածոն․ (Գ․ Թագ․ ԺԶ․ 5 ։) Լուսաւոր էր սա, եւ արձանն եղջերաւոր կացուցելով, կամ ’ի ձեռական նորա եղջերաձեւ լուսոյն եղելով․ իգական ձեւով խոյասատակութեան ’ի զարշութիւն գրգռելով զպաշտօնեայս իւր․ որք և մերկանդամ ծառայէին՝*

[illegible] ։ Այս է [illegible], [illegible] գարէին, եւն ։

(25) [illegible] ։ [illegible] 'ի [illegible], [illegible], եւն, [illegible]՝ որ [illegible] 'ի [illegible] ։

(26) [illegible] ։ [illegible], [illegible]՝ որ [illegible] ։

(27) [illegible] ։ 'Ի [illegible] թէ [illegible] 'ի [illegible], թէ ոչ [illegible] 'ի [illegible] ։ որ [illegible] 'ի [illegible] ։

(28) [illegible] ։ Այսպէս [illegible] 'ի [illegible] ( 'ի [illegible] . 14 . ) [illegible] * [illegible] ։ || Այս [illegible] . 32 . [illegible] 'ի [illegible] * Եւ [illegible] || [illegible] * Եւ [illegible] ։ || Այլ [illegible], թէ [illegible] ։

(29) Այն 'ի [illegible] ։ [illegible] . [illegible] . 29 . ոչ [illegible], եւ [illegible] ։ [illegible] ( [illegible] . [illegible] . 41 . ) * 'Ի [illegible] ։ || Այս [illegible] 'ի [illegible], [illegible]՝ [illegible], թէ [illegible] ։

(30) [illegible], [illegible], [illegible] ։ Եւ [illegible], եւ [illegible] 'ի [illegible] . եւ [illegible] ։

(31) Օ[illegible] ։ [illegible] 'ի [illegible], [illegible] ։

(32) [illegible] ։ [illegible], [illegible] . [illegible] ( [illegible] . 6 . ) * [illegible], եւ 'ի [illegible] ։ ||

(33) Ա[illegible] ։ [illegible] ։

(34) [illegible] ։ [illegible] եւ [illegible] .

բառ բանին. (Բ. 23.) * Այլ աւուրք նորա ցաւոց. և տրտմութեան զբօսանք իւր. եւն: (Եա Է. 26. 27:)

(35) Ընդունայնաթեող փէրգին: յանդգնութեան հայրապետաց կամ աշխատութեան ծննդեան քերթողի. կամ ընդդիմութեան շարադրող: Կուրծաւորեան հրեութէ: այլ օրէն. հրեութէփ: Նուրբաղթարիր վարծութէ: 3 օրէն. վարծութինաւփ: այսինքն վարժմունք կամ ձևոք որ 'ի մտրապութեան արհեստին:

(36) Անխոյայրափ դլըութէ: Անգանելիչ կամ հեշտացուցիչ աչաց անհաւ մեռո արարք: պոռնկակերպ: 3. օրէն. պոռնկակերփ:

(37) Դիմինեափեուիւ գոյն: Ընդ հասարակն առաւելոյն՝ երբ աշխարհի որք խորշելիք են և անհամոյ երևի զգածեալ կերպարանս. որպէս խուժութեն զզեստու, ցանկալիքն կերակուր, եւն:

(38) Ցուղլովեղծ ծուղ: յորժ թանձրամած ծուխ:

(39) Վաճառ մեչ՝ ի յառ. այսինքն մերձ 'ի յափշտակութիւն, զիւրապատան նալի. զի երբ աշխարհի արար յափշտակելին՝ կամ 'ի մարդկանէ, կամ 'ի մահուանէ, կամ 'ի ժամանակէ:

(40) Արհամարհելի առաքէլ: Խոտելի վասն փոքրութեանն, կամ վատնելին. այսպէս խնամոյ աշխարհս, կամ ընթացք կենաց:

(41) Անթիալամառ գիր: Ցարքին յաշխարհայնն երա՝ է երբ ձեռագիր վաճառելոյ զանձն, կամ սորուն լինելոյ:

(42) Եղերական խծէնծ: Պարապանաց հեռաւորութեն:

(43) Ըմպանեկանոց: Սրտմտանաց կամ խայտառակութեան պատմու թիւն:

(44) Եւնոյթ փոխմէլի: առաւօտք ստեղծ գիւրանիցանելի:

(45) Զի՞ մ պարծեոյն ոփ: Զի՞ մի որ հայելով թէ նիւթն ոչ կառավարութ ցա երևի զստղումն, կամ որպէս զայլ թերահաւատս, պարծեցի յանձն, բանիմաստասիրաց նետու ձգելով յայլս, որով զնիւթն և զընկերն խոցոտէ. Քանզի բառ մերօրզելեալ բանից ժողովողին՝ կեանս մարդիչ է և աշխարհհաւ ակըն՝ որ քօղով խծբաչութեն ծածկեալ 'ի վերջին երեսս, զանհամոյն նոյ զարծէ:

(46) Ուլ այնպան ծերա: Թէպէտ և մեղք առաջնոյն յայտնի են, խակ զգլուխն անյայտ մեղ, սակայն մեղք նորա գործովք միայն եղեն՝ և ոչ վարդապետութեամբ. իսկ զգլուխն ոչ միայն գործովք, այլև վարդապետութեամբ ժողովողին. որովք ոչ միայն առ մարդիկ իւրոյ ժամանակին արձանացոյց զիւր զգլուխն, այլ և առ հետեւեալ յապա եկեղոց եղբայր ձգա նապարհ զգլխոյն. և այսու մատուցանէ զգլուխն նորա առաւել սաստ քան զմեղսն: Վասն որոյ յիշելի է այսրն 'ի բարձր իբրև զհին յառաջարութեան, որպէս ազդեցութեր յուսադրիչ, 'ի փէրսանի ոսկի դիմելոյ. այսինքն առաջ խառորդաց և զարմելոց առ ած. կամ այնոցիկ մեղուցելոց՝ որք զգլխոյն մեռեալ յառաջ փրկչին զխաւլին, յորժամ հոգացեալ բանականացն՝ յորմէ ան բաժանելի էր ածութիւնն, էջ 'ի ըմեմպաս՝ կենագործել զամէ խուփոխմէնայն. փրկել զյառաջնոց հառաջացելոյ իւր՝ որք անդն կային: Զոր մեռեայն. այսինքն մեռելոցն՝ որք յառաջն 'ի մահուանէն քրի, մեղ կենդանեաց եռեան ածեալ առաջութե հոգւոյն արդարոց. զի այն յարութե մարմնոյն՝ նշան էր առաջութե հոգւոց. և որպէս քրի մարմ նոյն մեռելութիւն՝ զմեռեալ զմարմինսն կենդանացոյց, նոյնպէս ոգւոյն իշխանքն 'ի սորին՝ հոգւոյն առաջ այցելութե. և որպէս 'ի մեռելոցն՝ միայն զորին մարմինս յարոյց, նոյնպէս յարգելեալ հոգւոյն՝ միայն զարդարոցն առաջեաց: Եւ ոչ որպէս ոմանք համարին մինչ վարդապետաց հակառակեցան՝ ասել, թէ յիշանելին քրի առաջեցան այնոցիկ՝ որք հաւատային 'ի քն, եթէ յիւրեանց ժամանակին եկեալ էր յաշխարհ: Այս ոչ միայն չէ՞ համարաւ մինչ վարդապետաց, զոր յայտնապէս խակ

մարթէ Ոսկեբերան. Մեկն. Մատ. Ճառ. ԼԷ. այլ և անհնարին. զի թէ այդմ արարեալ էր համարելի, թէ նոքա ախտացեալք, և ախտամտեալք, և տառապեալք տառապանացն 'ի դժոխոց, և ապաշխարութեան այժմ ընդ աղաղակաւն և ընդ խոստովանելոյ. վասն զի Տիւրոս քո մեկնեցի զնոցանէ՝ թէ ապաշխարեսցեն, եթէ առ նոսա լեալ էին զօրութիւնք խորհ. ուսուցն և հաւատային 'ի քո։ (Մատթ. ժա. 21. 22. 23։)

(47) Ընդ որում. այսինքն ընդ սողոմնի, կամ վասն սողոմնի մեղսմամբ եւ աղտեղութեամբ, որ խմանութեան նոցա ոչ ժամանակաւ՝ մեղացն հաղորդեցաւ։ Այդ գիտացեալ եմ. խառնեալ զանկան բանիւք իմ 'ի հանճարեղ բանս երկանին, փառաւորեցելոյն սողոմնի։ (այլ օրին. 'ի չերեկնիքն հանճարեղաւն.) Նիւթեցին, միացեալն առաջինկայ հայցուածք իմ՝ որ վասն յարգութեան ետփառանին, այսինքն Ճոխացեալն, 'ի գեղարժոյան, 'ի յոյժ աշխարհող աղքայքն ասկերանս, կամ 'ի յոյժ գղջական աղաչանս նոցա։ Այսեւեաբն, կատարուածն կամ ընդդանելութեն, խնդրոյս իմ և նոքա՝ յաղթանեցէ մեծ աղքայորդեայն. զոր մածնիւք օրինակեցեր, օրինակ եսաւր խնամութենն, Թագաւորութենն, օրինադրութեքն, չինութեն առաճարքն, եւն։ Փրկեսմ զծառայդ քո, 'ի փառս սանդղնոյն բարձրացուցանելով զնիշխանն գժուարին մեղաց նոցա՝ խղաւորութենն և կաշառութենն։ Ցեչառախառ խորհրդոյն, խրատուցն բարեաց նորոգեալ զնա ընդ աղդանեալն. որ ախորժելի և բազմապատ առաւելք զնծութեք քո քարողելով 'ի գիրս Առաքեաց, ժողովողին, և երգոցն, աւանդեալ զնոյնս կառակ եկեղեցւոյ՝ խոստովանութե մատուցել առ քեզ։ Քանզի ոչ հետի յաղորմութե. հայելով 'ի ցոյցս բանից սողոմնի, խմանալք՝ թէ ոչ յերկրաւ ժամանակաւ հետն մասցը 'ի նեղութեէն, բէ անցանութեն կոծանած, եթէ չարժուածն ինչ յաւաահատութե ոչ էր եղեալ 'ի սրտի նոցա, որ զմիոյթ զղջմանն փոքր ինչ յառաջադեցցոյց, խորհելով զմեծամեծ աղաղակեան նոյ եղեալ առ նիքն, և զերկինն զդաշացուցիչ աղգեցութեան նոյ. որոց անաստակեալ, խոստովեցաւ յանձնթայլեան. յայսպիսի մեծութեանէ ծանրութեան մեղաց իւրոց՝ ասատանեցաւ սիրան, և յանեաց 'ի զղջմանէն։

(48) 'Ի յաւէ բէրեաւ։ Այլ դու յիշելով զանճառ բարեաց հաղորդութեք, ցոյց զգթութեն քո 'ի սողոմնն. և զպարտաւորեալն 'ի բազում ժամանակաց՝ երանութեք արժանի արա. կամ փոխանակ բազմապատկացն՝ 'ի գովութե գարձեմ զնա, որ բազմապատիկ արատաւոր զմեղ յարակից չարէին, զղջմանդաւ յառաջ աղաղակեցն ընդդ։ Այս աւանդութե է ամենից, և ոչ 'ի դրոց։ Որով գերազանցեաց քան զապաշխարութենն զաւթի հօր իւրոյ. զի նա 'ի գիշերի զանկողինսն միայն թանայր արտասուօք. իսկ սորքին զապաշխարանն՝ զանհղի խրախնաութեանն ընդդ արտասուօք։ Զոր խառնեցմն առէ՝ յարաատեա միածնի քո, առ որ մերձն, մերով մարդկութենն ընութեք, կամ մերով ընակեան կերպարս ախտանուրացու յետր ծնողքն անձն։ Եւ զանյարմարն առ նա կարծեցեաւ զատադանն հա. որ թէ ազնւ և մեծապատիւ աստին, 'ի սողոմն՝ սողոմն, առակայն անյարմար կարծի նմա, կամ զի ոչ նոքա է առաջեալ զայն, և կամ զի բանքն առաւել հայքն 'ի նորին սողոմնն 'ի քո, քան թէ յառաջինն։ Այլ դու առէ՝ զայն առաքեա 'ի փառս որդւոյ քո դարձուցանելով, 'ի մեղուցեալն առ զանձն կառավարեալ զայն բանն. "Իբրև արարայէ աղքատաց ժողովրդեան իւրոյ, և կեցուցէ զորդիս անանկաց." (Հռովմ. 4. 13.) Իբր առել. թէ ոչ ընդ անմեղն, զանէ ընդ ապաշխարողս փրկեսցի։

(49) Պաշտիկոս ան։ Խմանութեն ամն, արգահատեր. հողայր կամ առաջ չեր վասն սողոմնի, բարեգործութեն համարելով ընդ նմա երեւ ընդ կենդանեայ արժանաւոր լինել, և ազերսել վասն նոցա առ քեզ։ Դոր յա

ուեւրանծ հորհիտ , զոր և յաղթող բանից ցուցանէ . քանզի և առաքելական . զի գիրք կամ պատմութեանն յորոց մարգարէականն հոգւով 'ի սողոմոնէ շարադրեալ , յորում ամենայն նախախնամութեանն աստուածայայտնութեանն , ցուցանէ միաբանականն և զատուցանել ողորմութեան յետ , կամ այսու՝ զի մարգարէութիւն առաջ զնա գրեալ էր գրոց , և կամ նախանձութիւն անցելոյն յորոյ . երբ զի որպէս յոր 'ի մեծութենէն անկեալ , յետոյ կրկին և մեծացաւ , այնպէս սատանայ 'ի չնորհացն անկեալ մեղօք՝ առաջ գլխաւորն անդրէն բարձրացաւ 'ի չնորհս : Որ զի անդարձ է . այսինքն վասն որոյ անմեղադրելի է աղօթելն վասն սատանայի՝ յուսալով թէ դարձ լինելոց , քանզի թէ անդառնալի հաստատեալ չարութեամբ վասն նորա : 'Ի սողոմոնէ գրեալ գլխոյն յորոյ՝ հաստատեցան և այլք 'ի մարգարէութեան , ընդ որս զամենայն սանդուղս և գրեալ աստուածոյն . երբ զի 'ի Յոբայ Թ . առ յոյլ նոր հարկաւորս , յիշեալ զայնմն յորոյ . Գ . 13 . կոչէ յանխառն առաքեալ : Որպէս անկան և այլքն կործանեալ՝ սատանայի անկեալ գլխոյն գլխովն , զի ժողովն լուսաւորեալ , այլև մեղսատու սատանայ , աթոռոյ և այլ և հրեշտակք յանցանաց՝ 'ի կորուսեալ անդ գլխաւորականն Տէր Գիրք՝ զինի գլխաւորոց սատանայի՝ յիշատակեն զ Յովհաննու : Իսկ թէ ո՞ւ էրէ առաջնորդն , որ աղաչէր վասն սատանայի , որպէս զինչ աստիճանին գրեալ առնն . առակաւ 'ի գործս նորա ոչ պատահ այնպիսի ինչ . որպէս և ոչ 'ի գործս աստուածոյն , կամ բազմաց , կամ առաքելականին : Որպէս ըստ սիրելեացն կործանեցին , ('ի մեկին . առաջ . հա : ) Այլ խնձ թուի զաւրութ իմանալ . (զոր Տէր մարգարէական անուանեաց իմաստնոյ ասէր է կոչել . անհ . Լ . 3 . եմ : ) Այլ՝ սիրողք (գլ . խէ .) յետ պատահեալ զանդս սատանայի՝ յաւէտ 'ի հանգոյն 24 . * Այլ ամ ոչ թուոյն զաղագումն թէ իւր , || եմ . որ աղաղակէ աղօթականն բան է վասն անձինն սատանայի , և ոչ վասն որդւոյ նորա 'ի յաղթողութիւն թագաւորութեան . վասն զի 'ի ժամանակս յետոյ և որդւոյ նորա սիրողաց վասն և բարձեալ էր թագաւորութիւն յուդայ : Աստուածոր ոչ արկանք խնդիր , սրբեսք փրկեցան սատանայ , թէ զատապարտեցաւ . քանզի և յաւաղելոց հայրն որպէս զայս առնն , և որպէս զայն . և յետ նոցա մարգարէութեամբ՝ մեկնիչք և աստուածք երկուածք քննեալ զպատմառն՝ մինչ առաջ գրեցին , թէ չներէաք էրէանեա : Եւ առ նոյն սրա գրեալ մեղմ զմին ցուցանէ , և մեղմ զմիւսն . զի 'ի հանգոյն Ջ . առէ . հողահորդ ընկալեալ , կոխոծառոց հողոյն , չներէաք էրէաւ , լուսափայլ հիրսք : Իսկ 'ի հանգոյն Դ և Ե , 'ի զաւրոյ ժողովրդեան՝ աւաղեալ և յորոյ ցուցանէ զնա առաջաչաղաւորեալ և փրկեալ : Այլ կինք բանից լուսոյ զայս քնէ , թէ յասեւնի եկեղեցւոյ լաւ եւ է զօրութեամբ յիշատակել զնա , քան պարաւել . և թէ աղօթելն վասն նորա ընդունելի է քան զանխծանելն : Այլ թէ զինչպէս աղօթել վասն նորա արժան համարի , զի 'ի հանգոյն Ե ցուցանէ աղաչեալ յիշատակելն քնի 'ի բանս աղօթելեաց հոգւոյն , անելի է նախ՝ վասն զի երկրպագութեամբ առն զայն պատուութեն , և ոչ առաջադութեան , վասն այն մնայ առաջի օժանդակելոց աղօթից . զի միայն վասն անապաշխարութեան մեռելոց , կամ վասն յայտնի երանելոյն յերկինս՝ աղօթել չէ օրէն . իսկ վասն երկրպագականացն՝ որչափ և բազմաժամանակեայ մեռեալ իցեն , չէ՛ անպէտ աղօթել , մանաւանդ յաւանձին աղօթս : Եւ այս 'ի մերոյ սողոմոնի առաւել հաստատի , այնու զի վասն նորա միշտ 'ի մեծս հաւատացելոց կայր կասկած ընդ յուսոյ . մինչև լուր գրեցոյն աշխարհեայ մեկնչէ՝ յետ բոլոր ժամանակին մեծանալն քարոզիչ ոմն 'ի հայոց՝ հրապարակաւ պատմեաց զյայտնութիւն եղեալ առ սրբասէր ոմն , թէ սողոմոն յայնմ ժամանակի փրկեալ 'ի պատժոց՝ հանգեաւ յերկինս : Ո՛չ հաստատեալք զյայտնութիւնս , այլ այսու զպարկեշտութեան հաւատացելոց ցուցանել զխունս :

Երկրորդ, այս աղօթելն վասն առաքինեաց՝ է ցոյց գթոյ եւ սիրոյ առ արժանաւորութիւն այնպիսեաց առն : Այսպէս աղօթեմք կատարման կամացն իւր յաջողանս, եւ վասն հաստատութեան փառաց նոցին . Թէպէտ եւ գիտեմք թէ առանց մեր խնդրոյ՝ կամք իւր անփոփոխ կատարին, եւ նոցին փառք միշտ հաստատուն են :

Երրորդ, այս եղանակ աղօթից՝ բերումն է բնաստուածեղծական հոգւոյ . որ առլցր է զանշուշտ հոգեխաղացուցանել, եւ զանշարժ զինացուցանել . այսպէս եւ զհեռաւորն եւ զանցեալն առնել մերձաւոր եւ ներկայ : Այլ եւ զգործակատարականեայ մեծաւորն զառաջնոյն՝ ձեւացուցանէ իւր կենդանի, եւ այնու օրհնական փոխութիւն աղօթէ : Այս եղանակ խնդրուածոյ զանանց եւ յայլ աղօթս եկեղեցւոյ . զոր եւ Տէր վարդապետաց ուսուցանէ առա 'ի հանգոյն Հ. առնելով վասն խնամածոյն՝ Թէ Եկեսցէ արքայութիւն Քո . այսինքն իւր կենդանի զօրով առաջնոյն՝ նմանա հանդերձ ապերսել :

(50) Այնքան բաշխմանս : 'Ի զատանելոյ զմեզ 'ի կորուստնէ հոգւոյս, այնքան փառաւորիս՝ որչափ վայել է քում անհուն մեծութեանդ . զի ձեռնարկ՝ թէ անհուն է զօրութիւնդ . անհուն՝ սէրդ, անհուն՝ երկայնամտութիւնդ, եւն :

(51) Զօրութեան համագոյն : Միութեամբ զօրութեանցս վասն մեզոյ՝ ասացեալս, որ նմանակից է անձկութեան առաջնոյն :

(52) Միոյնոյ սկզբանց : Աստուծոյ առ ամենայնն Երրորդութեան առաջոյ զիւրաստութեան, եւ փոխանակ անուանն խոստովանեցեր անձինն զնէ զյատկութեան նոցա . որպէս սորա եւ 'ի բանն ԼԶ : Ուստի վասն անձին Հօր զնէ, սկիզբն եւ անսկիզբն . զի յատուկ է Հօր՝ լինել սկիզբն այլոց երկուց անձանց՝ առանց եղանելոյ յայլմէ : ընդ սկզբանց . այսու զորդի խնամոյ . զոր եթէ ոք առնէ սկիզբն ըստ առաջնութեան, այդ ոչ յատուկ է որդւոյ, այլ երկոց անձանց հասարակ . առաւ սկիզբն առնէ զորդի նկատամամբ այլոց Աստուածային անձին . եւ զի լոկ սկիզբն ասաց՝ առանց յաւելլոյ անսկիզբն, յայտ առաւ զորդի լինել այնպէս սկիզբն՝ որ չէ անսկիզբն . եւ ասէ այս է յատուկ որդւոյ միայն : Եւ սկզբնաւորեալ սկզբանց . այսու խնամ նէ Հոգին Սբ . եւ եթէ մեկնեսցէ ոք, (որպէս ասեմք ասանեն) թէ սկիզբն է արարածական սկզբանց, կամ սկզբնաւորող է Է Հօր եւ որդւոյ, այդ ոչ յատուկ իւրն է հոգւոյն սբյ . զի առաւելանի եւ Հօր եւ որդւոյ՝ լինել սկիզբն արարածական սկզբանց, եւ զի նաեւ հայր է սկզբնաւորող Է որդւոյ եւ ընդ հոգւոյն, որպէս եւ որդի ընդ Հօր եւ հոգւոյն : Այլ առ 'ի լինել յատուկ հոգւոյն՝ խնամեալ է, սկզբնաւորեալ, այսինքն յառաջեկեալ 'ի սկզբանց, այս է՝ 'ի Հօրէ եւ յորդւոյ . եւ յոգնակի ասելն՝ սկզբանց, ոչ զբազմութիւն սկզբանց նշանակէ, այլ զբազմօր անձինսն, զորս յառաջին մասունս բանին սկիզբն կոչեաց . ուստի առ 'ի ցուցանել թէ յերկուցն եւ յառաջ գայ հոգին՝ յոգնական եդ սկզբանց . Թէպէտ եւ մի եւ նոյն բղխմամբ յառաջ գայ 'ի նոցանէ, որով մի սկիզբն բղխման լինին, եւ ոչ երկու : Այս է հարազատ խմաստ բանիս՝ Աստուածօրէն քննելով : Եւ զայն բան եւ զխմաստս յայտնապէս ընկալեալ է Տեր վարդապետս մեր 'ի սբյն Գրիգորէ Աստուածաբանէ : Քանզի 'ի Ճառին ԼԲ . խօսեցեալ յանդգնեան Տեր Ժողովոյն կոստանդնուպօլսոյ, ասէ այսպէս . * Որ անսկիզբն, եւ սկիզբն, եւ որ Է սկզբանն, մի Աստուած է . || Եւ առաջ յանուանէ բացայայտելով ասէ, անսկիզբն՝ Հայր, սկիզբն՝ Որդի, ընդ սկզբանն՝ Հոգի Սբ : Այլ զի մի կարծիցի՝ ըստ առաջնութեան կամ առ արարածս սկիզբն ասել զորդի, այդ ասէ Աստուածային յաւելուածովս . * Զի ոչ եթէ բնութեամբն է լինել սկիզբն . || այսինքն ոչ ըստ Աստուածային բնութեան առաւելանի լինել որդւոյ՝ սկիզբն, այլ ըստ անձինն . խակ լինելն

առաջնական սկզբան՝ պատճառն ծածկեալն բնութեան՝ հաստատապատարար եղեց և ս ծածկեալն անձանց ։ Իսկ որք յայլ մտաւ ջրհեղ կամին, ասելով թէ որ գլխն, ոխքեղն կոչի նկատմամբ արարածոց, և հոգին՝ ոխքնաւոր ասի, այսպիսիքն սկիզբն կամ սկզբնաւորող այլ արարածական սկզբանց, այսու մեկնութիւն ոչ միայն խառնակին 'ի մասնց արյ մարդաբանութին, որ գիտէ խորաքանչելի անձին գիտ յառաւելն ընծայել, որպէս առաջադ, այլև առաբանան նախ 'ի կարգէ բանին. զի յառաջին մասին յասելն զհայր՝ ոխքեղն անոխքեղն, զբանն սկիզբն՝ խմանան նկատմամբ որդւոյ և հոգւոյն. Իսկ 'ի հետեւեալ մասունս զհոյն ոխքեղն բանն հայեցուցանեն առ արարածս. որում չունին և ոչ մի ինչ պատճառ ։ Երկրորդ, ստորասանն 'ի յառաւել նշանակութէ բառին ոխքնաւոր, որ ոչ նշանակէ սկիզբն, կամ սկզբնաւորող, այլ ունող սկզբան, կամ սկզբնաւորեալ. որպէս և այլ այսպիսի ածանցական անուանք, զոր օրինակ լուսաւոր, ջրաւոր, գունաւոր, ևն, ըստ բուն նշանակութեան իւրեանց խմանին՝ ունօղ լուսոյ, փառաց, գունոյ. կամ լուսաւորեալ, փառաւորեալ, գունաւորեալ ։ Ըստ այսմ ասի ( Աստուածաբան. երես 162. ) * Զիարդ կարիցեմք քննել . . . սկզբնաւորք զանսկզբանն էն. || այսինքն սկզբնաւորեալքս զանսկիզբն ։ Ցայս միտս խմանալով և ասթեւացին. ( Հարցմանց. եր. 63. ) հարցանէ. * Ցանսկզբնէ՞ն բղխէ հոգին, թէ 'ի սկզբնաւորէն ։ || և յետոյ փոխանակ ոխքնաւոր բառին զնէ ոխոխոյ ։ Այս ասելն զհոգին որ ոխքնաւոր ոխքնանց, յայտնապէս նշանակէ՝ սկզբնաւորեալ 'ի սկզբանց. զի յայս աղխակ բանս ստուական անուանն զօրութիւն բացատական է. որպէս և յայլ բաղդուած գասանի. ըստ այսմ ասելն ( երեմ. ժզ. 18. ) * Վկրաւորք արդ, || խմանի՝ վկրաւորեալք 'ի արդ ։ Որպէս և որ մարդասպանս ասէ ( 'ի գոռ. մծբն. ) * Այլք կայսերաց հրովարտակաւոր, || այսինքն 'ի կայսերաց ունող զհրովարտակ, կամ պատուամաւորեալ ։ Այսչափ ինչ համառօտեցաք միայն 'ի սուղ գութի մեկնութեան. իսկ զընդարձակ հատատութե այսր խնդրոյ՝ յայլ գիրս հատուցեալ եմք ։

Սերովբէն յառեղեալ հրկէն հեծանէն՝ նորին հովւոյն, առ նոյն
ողբերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ. ԽԹ.

ա̃. Եւ արդ՝ մի տիրեսցեն անօրէնութիւնք՝ քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում, ա̃ծ բոլորից լուսոյ. մի կապտեսցէ գուողն ապստամբ զպարգ փչմանդ շնորհի՝ 'ի քո ստեղծեալս կերպէ. մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմնոյս մահացուի առ 'ի գրաւել զիս 'ի նոյն ։ Զիք իմ թագաւոր առ իշխել շնչոյս՝ բաց 'ի քէն քո, որ անբռնադատ հնազանդեցուցանես ըծոյն քաղցրութե. որ բառնաս զկարիս մեղաց՝ ամենակատարդ բանիւ. որ արեամբդ քո ստացար, և մարմնովդ կերակրես.

ցեր. որ կարգեալ սահմանեցեր [3] ուխտ կենաց ան-
փոխադրելի. որ յոգի քո կնքեալ կցորդ քեզ գրե-
լով, հօր քում մատուցեր ժառանգակցապէս. որ
յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց՝
առ նոյն բարերար աղօթել համարձակեցեր, ստեղ-
ծիչ ամենից և կեանք: Դու ես ա̃ծ ամենայն հոգ-
ւոց, որ մեծացուցեր [4] զայս տուրս շնորհաց՝ քան զա-
մենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս իւրովքն զար-
դուք և հրեշտակացն պայծառութիւք. ոչ զերկիր
և զմարդկութիւս, և որ առ սոսա են զարմանութիւք.
ոչ զսահման լայնութեան ծովու, և որ 'ի նմա են եղե-
լութիւք. ոչ զանդունդս աղխիւքն հանդերձ, և որ
'ի նմա են անբաւութիւք. ոչ բարձրացար յօրինմամբ
այդքանեօք վեհիւք, որչափ առ իմս կարեկցութիւն
յառելն քո 'նր մարգարէիւն՝ քաղցրութեանց յուսոյ
բարութեն, ո՞վ է ա̃ծ իբրև զիս կարող, թողուլ միշտ
զմեղս և ջնջել զանօրէնութիւս: Ահա արդ խնկեալ
են բանք քո՝ ողորմած, և խոստովանեալ բարերա-
րութիւք. փառաւորեալ խորք խորհրդոցդ, և երկր-
պագեալ զեղմունք շնորհացդ:

Է. Արդարև ոչ ոք բաւէ յէից թարգմանել խօ-
սիւք նիւթական լեզուի՝ 'ի մասանց այտի քումդ
գթութեանց զոր առ իս ցուցեր՝ յօրինիչ. քանզի և [5]
մեծ իսկ է զօրութիւն զհնացեալն անդրէն նորոգել
ըստ առաջնումն պայծառութեան, քան յանգոյից ստեղ-
ծագործել: Այլ զի ոչ է քո տկարութիւն, որ զօրու-
թիւդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազդեալ՝
զլրութիւն գործոցն գլխաւորէ, ահա յարիցես փա-
ռաւոր լինել՝ բարեգործ, 'ի ստացուածս այս կրկին
անյուսալի փրկութեան. [6] զի իրաւամբք ուխտի բարձ-
րացի, հաստատուն եղեալ մեծապէս՝ օրհնաբան
աւետեաց քո ձայն 'ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ,
ողորմութեան լուսովդ ուղերձեալ, քան 'ի Ճանապարհ
ստեղծանելոյն: [7] Ո՛ ի առ մինն՝ արարիչ միայն Ճա-
նաչիս. իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն՝ և երախ-
տաւոր. ընդ կերպացուցանելոյն՝ և քաւիչ. ընդ նա-
բոզելոյն՝ և բարերար. ընդ հաստելոյն՝ և ողորմած.
ընդ կազմելոյն՝ և հնարաւոր. ընդ յօրինելոյն՝ և
հեզ. ընդ նկարելոյն՝ ամենազօր. ընդ առաջնորդե-

լոյն՝ և լոյս. ընդ տածելոյն՝ հովիւ. ընդ դարմանելոյն՝ խնամիչ. ընդ ողջ պահելոյն՝ բժիշկ. ընդ ձեռնկալութեան՝ զօրավար. [8] ընդ անպարտութեան՝ թագաւոր. ընդ արարչութեան՝ քաղցր. ընդ ամենատուր պարգեւացն՝ առատ. ընդ միշտ անտալոյն՝ ներող. ընդ ոչ բարկանալոյն՝ անոխակալ. ընդ կարեացս վշտակցելոյ՝ ծածկագէտ. ընդ յանձանձելոյ զթոցն՝ ապաւէն. ընդ գերունակ զօրութեանն՝ Աստուած. ընդ անսպառ բարութեան՝ օրհնեալ յամենայնի:

Գ. Որդ՝ որպէս ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծանուցար ինձ գոյացուցիչ, և այժմ զհոգի մաղթողիս մարմնոյս տաղաւարաւ՝ յարդարեա՛ անդրէն վերըստին յանարատութիւն մաքուր սրբութեան նախնի լինելութեան. զի բազմացի առաւել աճեցուն եղեալ յաճախ տուչութիւն անսահմանելի [9] քոյդ սքանչելեացդ՝ նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոցն ստուերականաց: Եւ ընդ ճառելոյս զթիւս մեղացս՝ որքան մտացս թիւս ընթանայ զանբերելիս յիշատակել, արդարացայց յանուն քո հզօր. և 'ի պատմելս ինձին զանձին իմոյ բիծ, և դու թողցես զամբարշտութիւն բազում մեղանաց խոստովանելոյս՝ հզօր ծածկատես ամենափրկիչ. [10] զի մի ծայրագոյն լրութեան աւետեացս, դարձեալ նախնումն կարօտացայց՝ երանելով սաղմոսիւն զշնորհօք փրկեալսն մկրտութեան. և փշովք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեսցի յիս առաւելապէս այժմէն վերստին, ծանրս առնելով զբեռն պարտեացս՝ քան զքաղցրութիւն պարգեւացդ, այլ [11] ազատեա՛ զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ զքեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու: Ո՜ւ լիցի, թէ անկցի ընդ տկարութեամբ սահմանաւ ճշմարտութեան ծագումն՝ իբրև զգրոյն օրինակ. քանզի ուր քաւութիւն է թագաւորեալ, վտարեալ են մեղք. և 'ի խորախոյս կենդանի բանիդ, ոչ է յուսահատութիւն. և ամբարձեալ քոյոցդ շնորհաց, հալածեալ են պարտիքն. և մերձ գոլով ձեռինդ Աստուծոյ՝ ոչ գոյ անհնարութիւն, այլ ամենեւին լուսաւորութիւն, բովանդակապէս զօրութիւն, անպարտելի կարողութիւն: Որ է փրկութիւն, կենդանութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղցրութիւն, ար-

քաղցրութիւն, անեղծութի՛ւն, և փառք յաւիտեանս. ամէն ։

---

(1) Փիամ ղափիլէրլու ։ Մի՛ տիրեսցեն մեղքն՝ հոգւոյս, որ է թագաւորական տաճարն կամ նմանութի արփայուժէնը ձյրնամ, մերձն և գերագոյն թագաւորութեանց, այսինքն կամ աերութեանց 'ի վերայ արարածոց, որում հաղորդ տաճարս զհոգդա, կացուցանելով 'ի վերայ ամենայն ձեռակերտաց. և կամ երկնային երանական արքայութեան, որում նմանութիւն է մարդս 'ի ձեռն արդարութեան շնորհաց և երկնային փառաց ։ Արդ այսպիսում թագաւորական երկնանմանն տաճարի քանի՞ անվայելուչ է թէ անօրէնութիւնք տիրեսցեն ։ Մի՛ կարգեսցի, մի՛ յափշտակեսցէ աւազակամտն սատանայ ղուրը, զփչութիւն շնորհիդ, որ է զարդ հոգւոյս, զոր օրհնակեցեր փչմամբն յերեսս ադամայ ։

(2) Աճենախարդը ժամն ։ 3. օրին. ամէնախարդ ։

(3) Ռուխ կէնաց ։ Սահմանեցեր անփոփոխելի ուխտ կենաց, այսինքն զխորհուրդ նոր աւետարանին, կամ զգովանդակ խորհուրդս նոր օրինաց. որ յոգի թո ֆիփէրլ, միաւորութիւն և զդրոշմն հաղորդ քեզ առնելով, առհաւատ քո մնասցեր նոր արդեն ժառանգակից քեզ ։

(4) Ձայն դարձ շնորհաց, փրկագործութեան, արդարութեան, կամ խորհրդոյ նոր առաքելոյն՝ մեծացուցեր քան զայլ հրաշալի գործս քո ։ ոչ. ղէբլիկու. զորութիւ խնամ, այնպէս մեծացուցեր՝ համբերեալ ամենայն զոր-գուդն, և գերեզմանութեանս հրեշտակաց. ոչ այնպէս մեծացուցեր զերկիր և զարդ մարդկան, և որ առ սոսա էն զարմանալի, զարմանալի էրք ։ Ո՛չ ղանձան, ոչ այնպէս ընդարձակեցեր զաստուածական լոյսն ծագման ծովու, և որ ինչ 'ի նմա էղէլուժին, զանթիւ կենդանեաց գոյացեալ 'ի ծովու ։ ոչ զանգաւոր. ոչ զանդունդս խորութեան ծովու և կամ զամպս, ալխիւքն հանդէրձ, խառնչելով կամ փառաւորեալ այնպէս անհամեմատ ցուցեր իմ ։ Ոչ բարձրացեալ կամ փառաւորեցեալ յօրինմամբ այսպանեօք վէհիւ, այլ ինքն այրասն զերացանց երաց, որչափ կարեմ զմեծել ինձ 'ի թագաւոր ղմեղս. ուստի զաւ ինքնին զայս 'ի մեր քան զայլսն ցուցանելով, առաքեր բերանով մարգարէին, ով է իմն զիս կարող թագաւոր զմեղս և այլն ։

(5) Մէծ խօլէ ազրամէ ։ Վասն այնորիկ ոչ ոք 'ի բանաւորաց կարող է բացայայտել խոնարհ, նոյն և մարդ խնամոցն 'ի մասանց այսր, նաև զմտան ինչ գթութեանց քոց՝ թող թէ զգովանդակն. վասն զի առաւել մեծ զօրութեան երևի՝ զմեղաց հնազանդել արարեալ հոգիս նորոգել բաղդատելին արդարութեան, քան թէ յանդգնեալ աստուածանել զայն. ոչ զի այս քեզ դժուարին էր քան զնորոգելն. որովհետև ոչ է քո փոխանակ. առ քեզ չէք ակարութեան յոր և է գործս, այլ բաղդատելին զօրութեան ես. և ընդ բանն հրամանի քո կատարի զամենայն ։ Այլ զի առաւելագոյնս պայծառանան փառք քո 'ի կատարելոյ զիմ անյուսալի փրկութիւն ։

(6) Ձի իրաւամէ օխտի ։ Բանին այնը ուխտ՝ եասյեան խոստացեալ (Ղկ. 10.) * Արդ յարեայց առաջ ասեր, արդ փառաւորեցայց, արդ բարձրացայց, || հանգստ, բոլորմաւց, մեծ երևեցի անյուսալի փրկութեն իմ. որովհետև այն առաւելաբար ձայն մեծապէս հաստատեան եղեալ 'ի փառելոյն ընդհ, պարզևոք քաւութեն մեղաց առաւել ձանաչի, քան 'ի ձանապարհ օփէղծանելոյն, քան թէ աւերծանագործելովն ։ Ըստ երկայն անկանա կէ զառաւելութեն փրկելոյն քան զանեղծանելոյն՝ այնու մանաւանդ զի յառաջադրեալին ոչ արար Ած ուխտ կամ խոստումն առ 'ի անեղծանել,

[illegible]

(7) [illegible]

(8) [illegible] * [illegible] || ( [illegible] 5 : ) [illegible] * [illegible] || ( [illegible] 20 : ) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible] ( [illegible] 1 . ) * [illegible] || [illegible]

ըսնաց ձեռն քո 'ի վերայ իմ, դարձայ 'ի Թշուառութիւն, զի հարան յիս փուշք, || որպէս եւ 'ի միւսումն. (Լէ. 3. 5:)

(11) Աղօթեմ՝ ղեւ: Հայք 'ի բանին հառնել. (Ծ. 2:)* Օրէնք հա֊գւոյն կենաց 'ի քո յոյժ ազատեցին զիս յօրինաց մեղաց եւ մահու. || վասն որոյ քաւ լիցի, Թէ ծառայութեան Ճշմարտութեան նոր օրինացդ անկցի ընդ փխրուրմբ, խոյս ... օրինակ, այսինքն խոյս զգեստն հին՝ որ օրի֊նակ էր. զորմէ եւ ասէ խոկ անդամոր. * Որ անհնարին էր օրինացն, որով տկարանայր մարմնով: || Աւաղ 'ի քո նոր օրէնս՝ Թողութեան մեղաց Թափառորէտ է, այսինքն խշկատնապատ շնորհեալ, ... մեղքն ընթին, եւ ոչ եթէ լոկ անուամբ լինին: եւ 'ի խորախոյս, քո կենդանի եւ աղագաղանդն բանիւք խրախոյս առեալ, Թէ ապաշխարեցէք, դարձեալ, ոչ եւս մեղց յուսահատութեան: եւ անհարկեալ փոյթոյ. եւ յորժամ քո շնորհքն զգամտն, աստուածային, զերագանցեալ քան զյանցաւորն, ոչ եւս մեղս պարտականք:

---

Մերոպին յաւելուած երէկին հեծութենէ՝ նորին հօխողէ, առ նովի աղէրս ծաղրանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք ընդ Այ:

# ԲԱՆ. Ծ.

ա. Այլ արդ՝ քանզի որպէս ոչ է առանց քո Տ̃ր՝ ոգւոց փրկութիւն, եւ ոչ [1] առանց տես֊ման աչաց՝ առ լոյս զուարճութիւն, եւ կամ առանց արուեստին նշուլից՝ արեւու երբէք քաղցրութիւն, այսպէս եւ ոչ առանց խոստովանութեան ծածկութեից եւ ոտդատանաց անձին՝ քաւութիւն: Զի զինչ [2] օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ փարիսեցւոյն դա֊տեսցիս. եւ կամ զի՞նչ վնասեսցեն զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գովեցայց. եւ կամ ո՞ւր առ պարսաւեալ մարգարէն յոյժ, երիցս կրկնելով զանձինն եղկութի. եւ կամ զի՞ գուցէ [3] ոճիր դատաս֊տանն՝ առ 'ի յիշատակ աւուրն մեծի. եւ կամ ի՞բր արդեօք անմաքուր իմացի շրթամբք եսայի՝ հեռի՛ն 'ի գործոց տանն իսրայէլի. եւ զի՞արդ Տ̃ծ պարտա֊ւոր պաշտէ ադամեան մարմնովն՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. եւ կամ յո՞րս Թարգմանի առած առակին, Թէ [4] սիրտ իմաստնոյն 'ի տան սգոյ, եւ սիրտ անմտին՝ 'ի տան ուրախութեան: Զի որ զսխալելն ադամայ՝ անձին իւրում ոչ գրեա֊ցէ, եւ [5] զմեղս ամենից՝ ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զհարցն, կորոյս զիւրն արդարու֊

թն՟ որպէս անախտակիր գոլ բնութե՟ն . և [6] ոչ բերկ-
րի սիրտ՝ առ զուարթութիւն երեսաց աւետեօք յու-
սոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաքելոյն ք՟ի ու-
սեալ՝ ա՟միւ ահալ ըստ Ա՟յ տրտմեցի ։

Բ. Արդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր [7] խորտան
հլին՝ նորոգ ընկալեալ հոգևոր հանճարեղին, զոր
տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել՝ ոչ յառա-
ջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրա-
խորհուրդ ժողովելոց, ուստի դաւիթ և երեմիա՝
ուխտիւ կանոնի սահմանս հաստատեալ հրաժարեցու-
ցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մե-
ղօք՝ և ՚ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ
հատուցմանն, յետնոցն հաւասարեալ աստէն ՚ի յերկ-
րի կամաւ խոնարհութե՟, ուստի բարձրեալն Ա՟ծ պա-
րարեալ բերկրի . որով ընդ նախադասեալսն ՚ի բազ-
մականսն երանութե՟ համարձակեցայց, [8] թէ ես՝ և
թէ նա՝ հետևեալ սովխմա ։ Առ որ զերծեալ ՚ի բամ-
բասանաց բանի մարգարէին, որ ՚ի վէսս ոմանս ակ-
նարկի, մի՛ յիս ասէ՝ մերձենար, մաքուր եմ, և մի՛
զիս տեսանիցէ ։ Այլ [9] զանկշիռն խոնարհութի՟ եր-
ջանկին դաւթի՝ ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին,
ես իբրև զանասուն համարեցայ, հերքեալ ՚ի զգայու-
թէ . և հարին չարիք ինձ շուրջանակի . և նեխեցան
և փտեցան վէրք իմ ՚ի յանզգամիս անբժշկութի՟ ։
Այս զայլոց ոմանց [10] ընտրելոց ՚ի յասորեստանի՝ ըղ-
կամաւորն կշտամբութի՟ մեղապարտութե՟՝ անձանցն
անարատից . ընդ որս և զեզրի մեծի քահանայի զա-
սելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զե-
րեսս բաւական իցեմ համբառնալ ՚ի վեր առ քեզ՝
Ա՟ծ ։

Գ. Արդ՝ ես [11] ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝
զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս, և ՚ի նոցայոցն
զառ իս դառնութի՟ կրկին առաւելեալ, նոքօք հե-
ծեծեցից . թէպէտ և չէ՛ ինչ պիտոյ գարշութե՟ գու-
նոյ՝ դարձեալ տգեղութի՟ ։ Ահա արդ մեղայ՝ զի ան-
մտութե՟ գործեցի զոչ հաճոյսն քո՝ բազմօք սխա-
լեալ յանցաւորութե՟ք . [12] նայեա՛ յիս գթած, որ-
պէս երբեմն յուրացութե՟ն ըմբռնեալ պետրոս, զի
յոյժ ունայնացայ ։ Լուսաւորեա՛ ինձ զողորմութե՟դ

նաս զայցելութի. ոչ լքանես զաւրի. ոչ արգելաւ զգթութի. ոչ բերես վճիռ կորստեան, այլ կոչակ ազատութե: 22 Ո՛չ թշնամանիս յառատութեց. ոչ բամբասիս 'ի շնորհաց. ոչ հայհոյիս 'ի պարգևաց. ոչ նախատիս 'ի ձրի ձրից. ոչ անգոսնիս յերկայնմտութեց. ոչ եպերիս 'ի ներութեց. ոչ բանսարկիս 'ի բարութեց. ոչ անպատուիս 'ի քաղցրութեց. ոչ քամահիս 'ի հեզութեց. ոչ առաքին այսոցիկ տրտընջմունք, այլ անլռելի գոհաբանութիւք: Նարձ զմեղս իմ հզօր. լոյծ զանէծս իմ ծրհնեալ. քաւեա ըզպարտիս իմ ողորմած. ջնջեա զյանցանս իմ գըթած. 23 մատո մատն այցելութե, և անդաստին իսկ կատարեցայց. զի՞նչ քեզ տէր՝ քան զոսկին դիւրագոյն, և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարևորագոյն: Նաև կենդանապրեալ բարեխնամ քոյինաստեղծ պատկերիս՝ փչումն կրկին 'ի շունչ նորոգման լուսաւորութե մաքրական շնորհի՝ զամենամեղս ոգի պաշտպանեալ:

Զ. Մի՛ անցեր ողորմած՝ ինձ 24 որ տարաժամ 'ի հաւմառօտս երբէք՝ անթօշակ ապաշխարութե՝ ընդ անկատար ուղին հետևել. մի՛ մատուցաներ բաժակ դառնութե՝ 'ի ժամ ծարաւու. 25 մի՛ փակեր գըթած՝ իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛ իբր յանկարծադէպ հինից ապաստան՝ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. 26 մի՛ տապ տօթոյն յանպատրաստ պահուն՝ զարմատս հաւատոյ ցամաքեցուսցէ, և մի՛ լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն. մի՛ պահեսցի ինձ սառն մեղացս, և մի՛ հոսանք ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն: Մի՛ 27 հանդիպան մահ բերիցէ, և մի՛ ննջումն 'ի սատակումն յառաջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն ապականութի գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝ 'ի վերայ իմ արշաւեսցէ, և մի՛ շնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ՝ 'ի խոնարհ լեցի:

Է. Դու ես տէր. դու գթած. դու բարերար. դու երկայնամիտ. դու ամենակարող. 28 առ ամենայն բան անհասութե անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝ կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել, 'ի ժանեաց կերչաց գազանաց՝ և կամ յատամանց մի-

շապաց 'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս
բերկրութեան ածել, եւ 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց,
29 ընդ արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել։
30 Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ,
կարօտեալ քում շնորհաց. եթէ երկնայինք, եւ ե-
թէ երկրաւորք. եթէ անկածն մեղօք, եւ եթէ ամ-
բարձեալն արդարութ. եթէ տէր, եւ եթէ ծառայ.
եթէ տիկին, եւ եթէ աղախին. եւ 'ի ձեռին քո է
շունչ կենդանեական բոլորեցուն։ Եւ քեզ ընդ հօր
եւ հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Մինչեւ խափանեցէր փառօք՝ զտանջեալն մարդկութիւն, ընդ ամենայնիւ [illegible], ընդ ամենակատար ածութեանդ՝ ընդ աջմէ հօր բազմեցուցանելով 'ի մեծութեան աթոռոյդ։ Կամ [illegible], մինչեւ կատարեցեր զանկանելեալ մարդկութիւնդ նուիրապետութեամբ 'ի խաչին, [illegible] բանին. * Ըստ խորոց կատարեցաւ, եւ ամենայն հաստատեալեաց իւրոց || ԵՆ. * Հայեցայք 'ի կատարելն Յի || (Եբր. Ե. 9. ԺԲ. 2։) Զայս կատարումն արար Քն ամենակատար ածութեամբ։ Հետ ըստ. խոնարհ զկատարելութեան երեւելեալ հասակին Քի. բայց [illegible] ոչ 'ի դէպ գայ։

(2) Զորոց զփոխնուին։ Զընդարձակ ծաւալն ասէ՝ զոր յօրինեաց 'ի [illegible] առաջնեալն եւ յետ [illegible]։ Բայց չէ յայտ թէ բանի ժամանակայատուկ բան [illegible] արարեալ լինէ։ Որմանց թուեցաւ՝ ընդ այլ երկուց ծովուց խաչին եւ Արամեանն [illegible] 'ի նմին ժամանակի։ Սակայն 'ի յեղանակացն այնց ծովուց ոչինչ այլ [illegible] նշանակի. եւ ոչ մանկունք ծովուն առաջելոց ցուցանէ զկատարելութիւն եւ ընդ նոսա, որպէս այլոց երկուց ծովուցն մանկանցն ցուցանեն յայտնապէս։ Մանաւանդ կամ [illegible] յետոյ բան զայն ծովուն արարեալ զառաջելոցն, յաւելն [illegible] 'ի սկզբան անդ. * Քանզի առ ձեռն եւ յաղագս ձեռն 'ի [illegible] կարգ բանին, || ԵՆ։

(3) Յիշատակաւ սիրոյ։ Յիշատակաւ սիրոյ քո՝ որով զմեզ ընտրեցեր. կամ, յիշատակաւ ընտիր եւ գերազանց սիրոյ նոցա առ քեզ։

(4) [illegible] հանդերձեալներն։ Կ օրին. [illegible] հանդերձեալս. որ ըստ կարգի եւ է, այսինքն նոցա բարեխօսութեամբ եւ [illegible] առ քեզ գայ։ Զայն [illegible], ձայն առաջնորդութեան նոցա, որ իւրեանց [illegible] 'ի մեզ հասանէ, [illegible] ոգւոյն կենաց, զոր առաքեալն [illegible] հրամանաւն Քի։ (Մատթ. Ժ. 12։)

(5) 'Ի յաւիտենականն [illegible]։ Մանն կամ [illegible] ընդունիցիմ, հաղորդեցիմ ընդ առաքելոցն. որք քարոզութեամբ եղեն առաջնորդք կենաց, 'ի յանեղծ փրկութեան յոր յուսամք. կամ 'ի [illegible] յայտն անեղծ փրկութեան։ [illegible], որք եղեն առաջին [illegible] առաջնորդական աթոռոյս։ [illegible] հաղորդ լինել առաքելոց 'ի յուսացեալ փրկութեանն, հայի յայն բանս նոցա՝ որովք զհաւատացեալն կոչէին նոքա հաղորդակիցս, մեկնակիցս, հանդիսապատիւս ԵՆ։ [illegible]. որք [illegible], այսինքն տէրութիւն, [illegible] եղեն կատարեալք. որք [illegible] ծնեալն Քի եղեն ըն-

[illegible] ։

(6) [illegible] ։ [illegible] ։ Ընդ [illegible] ։

(7) Ընդ [illegible] ։ [illegible] ։

(8) Ըստ [illegible] ։ [illegible] ( [illegible] ․ 13 ․ 14 ․ ) և [illegible] ․ ( [illegible] ․ 11 ։ ) [illegible] ( [illegible] ․ 7 ․ ) * [illegible] ‖ ։

(9) [illegible] ։ [illegible] ։

(10) [illegible] ։ Ընդ [illegible] ։

(11) [illegible] ։ [illegible] ։

(12) Ըստ [illegible] ։ [illegible] ։

(13) [illegible] ։ [illegible] ։

(14) [illegible] ։

(15) [illegible] ։ 3 [illegible]

կամ գերապայծառ առաքինական սրբութեան. առանց չեփոխի փոփոխումն, առանց խոտորելոյ ընկերութեամբ, կամ առանց հայելոյ յանցեալ Ճգնութեանս՝ որ ըստ օրէ յառաջադիմեն ըստանայքն :

(16) Ընդ նախագրելով երգմանկացն փառաբանեան : այլ օրէն. ընդ նախագրեցեալ երգմանկացն փառաւորեան : Ընդ գովասանական աւետարանս նախաշաւիղեալ երանելեացն՝ Առաքելոյ, մարգարէից և Ճգնաւորաց՝ խառնելով նաև զիմ անարժան աղօթս, և ես Է նուագս պաղատիմ, գոչեմ, թէպէտ յոյժ տառապեալ 'ի նոցա նմանութենէն. որպէս զատ իմն ընդ քաղցր նիւթոց են :

(17) Տապանակ ընդ ողորկութէ : Փշալից բոյս ընդ սերտ շաղաւխեալ, կամ ընդ յղկեալ գաւազանի :

(18) Բացասութէ : Ուրացումն Ճշմարտին, կամ առանձնութէ, կամ աստ իմն ընդ Ճշմարիտ իրի :

(19) Կամ առաղ, որ 'ի հաց խառնեալ, ապաժամուռ լինի. յո սրբելու պատուական 'ի ծամելն, և շունչին առնէ :

(20) Զնոցայն վասն իմ : Լուր պաղատանաց նոցա որ վասն իմ. Ես զինս ընդ նոսին, և զիմ աղաչանս ընդ աղաչանաց նոցա, որ եկեսցէ նոցա 'ի գովութիւն, և ինձ 'ի փրկութիւն 'ի փառս քո : Եթէ նոցա լսիցես, և եթէ ինձ, եթէ նոցա գովեստ լինիցի, և եթէ ինձ փրկութիւն, ամենայնն կատարի 'ի փառս քո. վասն զի քո են պարգևք և շնորհք. զի պատճառ բարեաց ամենայնի : Եւ զարձեալ, 'ի քեն զոլով ամենայն պարգև, ոչ կարօտես միջնորդութեան այլոց. և 'ի քումն բարութէ ոչ զառածանորդակից լինիս, այլ աղաչիչ են :

(21) Ու պարծանս : Թէև մեք արժանի մահու մեղանչեմք, բայց զու գթած՝ ոչ պատճառաւս իրաւանց կամ զատաստանի արդարութեան կշեռս, այլ մնաւանդ խնդրես զանանել փառս, հնարս կենաց : ոչ են 'ի կամս. յո ոչ յօժարես 'ի կամս ապաժամելոյ, կորուսանելոյ, այլ 'ի ծրէնութէ ողորմութէ, յո 'ի փրկել ողորմութէ, ձրիապէս, առանց վասնա կոց արժանեաց :

(22) Ու Եշխանսն : Ցասմանամենեալ քո՝ թէպէտ և կարի մեծ իցէ, ոչ թշնամանիս իբրև շաայլ. այլպէս 'ի շնորհելդ, յերկայնամտելդ, 'ի ներելդ, 'ի հեզութէ գնալդ, են, ոչ պատասխանիս իբրև անխոհեմ, կամ տկար. և ոչ արտաքնոյ 'ի մարդկանէ առնուս, այլ զոհութէ. զի 'ի զարծել քո զայս ամենայն՝ ցուցանես զբարութիւն, զխնամատութիւն, և զամենութիւն. և ոչ ուսմբ զրկանս առնես : Այլա եթէ ասէս որք կամ նախանձու այլազգ խոտորելով, տրտմեցուցանէ, կամ մեղաւոր լինիցի, եւս անմեղ յանցանաց. որպէս առաջին կոչեցեալ մշակքն՝ 'ի տրտմելն ըղձաւանդանն ըստ աւուրն, եթէ չամենիցիմ յիմոյս իշխանութե՝ առնել զինչ և կամիմ. (մատթ. Ի. 11. են :) Սոյնպէս երէց որդին գծուծելով Է ընդունելութե անառակին, բուռն պատճառանս. ոչ էր արժանի խնդալ ընդ կենդանութե և Է գիւտ եղբօր քո. (ղուկ. ԺԵ. 28. են :) Թեպէս սակայն՝ և երեժշտայն գանգատեալ զեղ վասն երկայնմտութեան առ ամբարշտաց. (ԺԵ. 1 :) Բայց ոչ էր զանգատ, այլ մարդկօրէն զարմանք ընդ անոխակալութեան Այ. զորոյ զպատճառն զինեալ նինեւէի բացայայտէ զինս (հաւան. 3.) * Ժողովեալ զնուաս իբրև պղնձագործ 'ի սապանութեան || սակայն քեզն յաղթէ նոցա ած՝ զի յանդգնեաց մնաքն զամենայն զնուաս իբրև պղնձագործ պատրաստեալս : Այլա անպատրաստ է ած յամենայն 'ի գործս իւր. և մարդկան միայն լինին պատրաստելք, յարժամ անշնչի առաջադրանեն, կամ նորին յանցանաց. զի ոչ են ինքնամատոյց ընչից իւրեանց, կամ իրաւանց արդարութե :

(23) Մոփոփ ծափն : Մեծածեցի առ իւ զնձան օգնութե, և անդաստին, իւ-

կոյն կատարեալ գտայց յոգնութիւն, 'ի քաւութիւն են։ Այլ կենդանագրեալ, 'ի քո ստեղծեալ պատկերս տաղաւարեալ կրկին կամ մերասին փչումն, խորև զաւակլինն, նորոգեալ լուսաւոր շնորհ որ զմնգրութիւն շնորհաց յինքեան ումի։

(24) Օր պարզնթեմ. Յո՛ անպատաշաճ, կամ անապական, Դի հանապազօր Եւբեն, 'ի կարճ ժամանակիս, անխոչակ ապաշխարութիւն, անպատշաճ զատարկութիւն բարի գործոց, ըստ անխափան ոգւոյն, ընդ անմեղասխան ճանապարհ մահուամբ գնալ։ Այսու, և յաղթող բանիւքն տպաւորէ՝ մի՛ յանկարծ օրհասաւ մերձենիլ 'ի կենաց՝ անպատրաստ և ունայն 'ի բարի գործոց։

(25) Մէ Քոնէբ։ Մի՛ թողուլ տար խափանելի ինձ 'ի յաղթողութեանց հոգևոր օգտիս՝ տաղաւարութիւն և այլ բարեգործութեանց, որք խափանելին առագահաս մահուամբ. զի ըն նմանութիւն յանկարծահաս հեծեց բաժնոյ զքեզ բարիս։

(26) Մէ փառք փէթոյն։ Այսօր անկանելէ 'ի բանն ապաշխարին. * Այսօրգանկն 'ի տանէ քեզ մի՛ մերձեցէ, և մի՛ լուսաւոր 'ի գեհեն||։ Իսկ փառ կմ խնամոց զգեստական ջերմն մահուամբ, որ տարաց ցամաքեցուցանէ զարմանս կենաց, և կամ ընդդեմական տապանաց գերեզմանն փորձութեանց 'ի ժամ մահուն։ Եւ մի՛ լուսաւոր, պատահաբար որ 'ի լուսոյ՝ մի՛ յանկարծ կամ գաղափարաւորս մեռանելոցն. և զայս ես խնամ կրկնակի, այսինքն կամ զգեստական, որպէս ախտամոլութիւնք 'ի լուսոյ ներգործեալք, կամ թուլութիւն մահաբերք, են. և կամ ընդդեմականն, որպէս են փորձութիւնք 'ի մարմնոյ ծնեալք։

(27) Հանգիստի մահ։ Այլ յաղթէ և ըն կարգի խնամոյն են բառ մարմնական, այսինքն մի՛ հանգիստ մարմնոյ 'ի մահկենին մահ բերիցէ, են։ Եւ մի՛ նախաձեռն անյարմար, այսինքն մի՛ մերձեցէ 'ի մերոյ իմ յանկարծ մահն բանական որ պատահէ անկանելի, ընկղմելի, այրելի, և այլով օտար ճանապարհաւ, որք չեն բառ բնական կարգի եղծման մարմնոյ։ Կամ անյարմար առ մահն հասանել 'ի ժամ քնոյ, որով 'ի վտանգաւոր յոյժ ժամանակի ամենեւին անպատրաստ եղանէ մարդ յաշխարհէ։ Եւ մի՛ ընդոյս վերաբերութիւն, եղանին կամ աւուրեալ շնչոյս մի՛ 'ի ներքս արգելցի խեղդմամբ. կմ, արձակումն հոգւոյս 'ի մարմնոյ մի՛ 'ի գլխոյ արգելլեալ 'ի տարբեր խափանեցի. կամ, տագնապ հոգեվարութիւն մի՛ տանջեսցէ։

(28) Ա— ամ բան։ Այլ ամ խոս անհասանելիս կամ անհնարին՝ անձեռնասաքս զօրաւոր։

(29) Ըստ արդարս Եւշանիկոյ։ այսինքն ընդ արդարոց երջանկաց կմ երանելեաց. կամ, ընդ արդարս երջանիկս. բայց բառ շարադրութիւն՝ մի բառագանի նախնդիրս արժական, և միւսն վերջնահոլով, վասն զի ըստ նախադրութիւն յարմարին երկրաեան ևս։ Սոյն ամ է և յառաջասացեալն, ըստ խորացեալն հուրբ՝ արեամբ ներջեւոյն։

(30) Ամենայն ոգի։ Ամենայն բանաւոր քեզ անկեալ, յատուկ առաւել ամենայնն մարմինան՝ այլ զանազանաբար. այլոց էակին, հրեշտակքն, և այլոց Էակ. ամ այլոց՝ մեղաւորն, և այլոց՝ արդարն, այլոց ասէին. և այլոց ծառայն, են։ Այդ՝ հրեշտակաց յաւուր առաւելն և կարգալին շնորհաց՝ եթէ խնդացի ըն մեռելոյ, և յառաջ քան զերանութիւն, ահա յայտնի է բանն. զի յուսալի առ ամ՝ և նորին շնորհ հօքն կոչին յանմեղութիւն, և երանութեան։ Բայց քանզի բանս 'ի ներկայումս խօսի, խորև այժմ ևս յուսացօղս և կարօտեալս շնորհաց. բառ այսմ ոչ խնդրի զնորոգ առաջամնէ շնորհաց, այլ զհաստատութիւն առաջեալ շնորհաց և երանութիւն. զի որպէս զինի ասէ, 'ի ձեռին ոյ է շունչ կենդանական ամենեցուն՝ թէ բառ բնական, և թէ բառ գերբնական

կան զօրէն ։ Այսպէս բանին հաւանեալ խօսի սմին աւելորդաբար ('ի մեկն․ սաղմ․ ՃԺԶ․ Թիւ 29․) * Ակնարկէ կարգաց աստուածաբանութեանն Այ հրեշտակին, և սրբոյ մարդոյն․ սրբոյ ոգւոյ անձին սրբութեան հրեշտակացն, և սրբոյ մարդոյն . . . Նա ոգւոյ անձին սրբութեանն Այ, զի մի՛ կարգաւորեսցէ մարդկան, և մի՛ անկեալ 'ի շնորհացն Այ, յանխոս զրկեսցի ։

---

Մերոյին յաւելուած նշխէն հեծութեանն՝ նորին հեղինակի, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ․ ՂԴ․

ա․ Բարձրեալդ անքննին․ զօրութիւն անհաս․ Տէր արարածոց․ Թագաւոր երկնի․ տանուտէր հրեշտակաց․ [1] դայլարան մտաց․ հաստիչ հրեղինաց․ պետ բարի հոգւոց․ աջ ապաւինութեան․ անդորրութիւն հանգստեան․ [2] տեսարան լուսաւորութեան․ պայծառութիւն բերկրութեան․ Ճանապարհ երանութեան․ պատճառ կենդանութեան․ առիթ բանաւորութեան․ փրկութիւն [3] առանց չարութեան․ առաջնորդ խաղաղութեան․ պարիսպ ամրութեան․ պատուար պահպանութեան․ [4] ցանկ բոցոյ մեծի օրհնութեան․ սահման անոխակալութեան, [5] յիշեա՛ յայսմ ողբերգութեան մատենի բանիս խոստովանութեան և զոր 'ի մարդկային ազնէ Թշնամիս մեր՝ 'ի բարի, և արա՛ կատարեա՛ նոցին քաւութիւն և ողորմութիւն ։ Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ՝ Տէր, իբրև զմեզ բամբասողաց՝ առ յանձնս սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա ։ Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո՝ մրդարադատ, [6] ամենք առ մեզ վնասակարագոյնք սակաւուք Թերևս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ՝ ամենապարգև, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս ։

բ․ Արդ՝ յիշեա՛ զքո մեծութիւնդ՝ Տէր, նայեցեալ 'ի յիմս անարգութիւն․ և ընդ խնդրելս իմ 'ի քէն բարի իմոցն ատելեաց, [7] և դու առ քոյս՝ ըստ քում մեծութեանդ՝ անձառելիս հրաշագործեսցես ։ Մի՛ սատակեսցես [8] զիմմն խածանողմն, այլ փոփոխեսցես․

խլեալ զխոստմունս բարս երկրաւորս՝ զաւրինս արմա-
տացուցեր, և յիս և 'ի նոսին։ Մանաւանդ զի դու
լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. [9] դու իսկու-
թիւն բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար.
դու տէր ստորից և երկնից, և ես անիշխան շնչոյս
և հոգւոյս. դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և
ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան
զկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան դարշութեան.
դու՝ ըստ մարգարէին, մնաս յաւիտեան յանբաւ
բարձրութեան, և ես միշտ կործանիմ՝ ըստ նորին բանին.
'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես [10] բո-
վանդակն ենկ եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի։
Զանն զիս 'ի բանտէս. արձակեա 'ի կապանացս. [11]
զերծ 'ի շղթայիցս. փրկեա 'ի խեղդմանէս. ազա-
տեա 'ի տագնապէս. քակտեա 'ի յերկաթիցս. լոյծ
'ի պաշարմանցս. [12] արտաքսեա յերկմտութեացս. սփո-
փեա 'ի տխրութեանցս. հանգո 'ի նեղութեանցս. փարա-
տեա 'ի վշտացս. հանդարտեա 'ի խռովութեանցս. ա-
պաքինեա 'ի լալոյս. մերժեա 'ի հեծութեանցս. հեռա-
ցո 'ի յողբոցս. կազդուրեա 'ի կականմանցս։ Մի՛ ա-
ղորմութեան և պարգևատու քաղցրութեան, մի՛ զզրա-
ւեալս արեամբ հզօրիդ՝ անտես արարեալ ընդվայր
կորուսաներ. կանգնեա զհասեալս յափն մահու՝ 'ի
բազմավտանգ հիւանդութենէս։

Գ. Ահա [13] բարդեցան կուտեցան շրջանակք ամացս
ընդունայնութեան, յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ
յոչնչէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ տե-
նեկի՝ փուշս դժնիկի՝ մեղաց շառաւիղի. մի՛ լինիր ինձ
խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ [14] տոհմին յուդայի,
և կամ զաւակին եփրեմի։ Այլ քանզի բուսուցեալ
տնկեցի յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմանն [15]
խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս,
ըստ գրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիսն, զիմոյդ
ոչ կոչեցից զանձն իմ՝ դարչելի անդաստան անիծա-
բեր փշովք մեղաց հեղձեալ։ Ո՛չ սերմանեցի արդա-
րութիւն, ըստ բանին յավսեայ, և զիմոյդ հնձեցից և
ժողովեցից զկենաց պտուղն։ Զնկաւ ստինք կուսու-
թեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ
առ իսրայէլ, կարօղ ես տէր՝ 'ի նոյնն հաստատել։

բայց առ 'ի փրկելն՝ ուխտին խոստացեալ քաւել, նորել. և պարգևատու-
թեն երկուցս ընդարձակէ յաղօթս բանիւք :

(7) Զի առ Տէր : Առ աստուածաբանելն՝ Առաքելոց միայն լինիս և ճանաչիս. իսկ առ մեզ, առ փրկելն, առ քաւելն, առաջնորդելոյն, բայց յարգարչական անուանեն՝ ճանաչիս և անուանիս և Երախտաւոր, առ ապաշխարեալս, առ յանցաւորս : Քանզի փրկելն, քաւելն զմեզ՝ ԱՅ միայն գոլով, ցուցանէ թէ փրկիչն է ԱՅ արարիչ, բայց մեծանդամեայն բարեխնամող առ յանցաւորս : Զայսպիսի արդարութեանց ԱՅ առ մարդկանս զուցեալ, և ոչ առ հրեշտակսն յանցուցեալս. զի առ նոսա ճանաչի միայն արարիչ, հատուցիչ, յօրինօղ, այլ ոչ քաւիչ, ողորմած, ներօղ էն : Եւ 'ի բովանդակ կարգս բանիցս այսպէս է խնամող, թէ 'ի փրկագործութեան փառսն որ են միանգամայն արարչական զօրութեանն է. այլ ոչ անզգալապարտելով՝ յարարչութեանն ցուցանի որ են 'ի փրկագործութեան. ուստի որ փրկիչն է, հարկ է զի եղէ և ԱՅ արարիչ. այլ ոչ ըստ անդրդարատուութեան՝ որ արարիչն է, հարկ եղէ և փրկիչ լինել : Զայսն հետևանօք յայս առնէ նա վարդապետս յերկու գիտակցելով բանիւք, ընդ արարչութեան՝ ասացեալ, ընդ Գերանաւոր Գործոյն՝ նծ. այսպիսիքն փրկագործեալն որպէս ցուցանէ զնա լինել ընդ արարչութեան միանգամայն քաղցր, նոյնպէս ընդ գերազանցեալ զԹագն լինել ԱՅ միանգամայն :

(8) Ընդ անդորրութեամբ : 'Ի փրկագործելդ քաւելով զմեզ՝ ճանաչիս և բարձրացեալ ոչ միայն իբրև անյաղթ զօրաւոր, այլև Թագաւոր իշխեցող. վասն զի արարեալ յամենայն բռնութենց աստուածայի, և բովանդակ զգաստովս մեղացն հատուցանել, առահանձէ զանպարտելի զօրութեն. ըստ այնմ * Փրկեաց զնոսա բազուկ իմ || ( Եսայ. կգ. 5 : ) Եւ միանգամայն իշխելով փրկելոցն՝ իբրև ստացեալք անդէ 'ի մերոյ նոցա. ըստ այնմ. * Զեք անձանց առեր. քանզի գնոց գնեցայք : || (Ա. Կոր. Զ. 20 :) Ընդ կարեաց, 'ի փրկելդ՝ ճանաչիս իբրև մշտակից իմոց կարեաց, և միանգամայն ցուցանիս գիտօղ զարտանի թշուառութեան իմոյ. զոր միայն ճանաչեմ՝ թէ որչափ 'ի խնամս չարեաց հատուցանելով են մեզ մարդոյ 'ի մանկութէ, վասն այն ներողամիտ լինիս էն :

(9) Քոյդ օրհնեցեայ : Մի օրէն. փոյթ : Որպէս 'ի աստուածաբանելդ զնա առնէ՝ ծանուցանէ իմն արարիչ, այժմ քաւելովդ զհոգի և զմարմին իմ նորոգեալ յանդորրութեան նախնի լինելութեն, յայն մաքրութեան որ 'ի նախաստեղծն մեղանչելն շնորհեցաւ, կամ 'ի արդարութեան որ նախկին ծնողն զԱդամ միրդարութեան պարգևեցաւ. որպէս զի բազմապատիկ անձնեցանէ արդիւնաւորի աստուածն զբանչելի պարգևեաց Նորոգ Ներկայիս, այժմ առնէ նոր օրինացս քան զառաջնոյն հնոյն, թէ քան զհին մովսիսական օրինաց, և թէ քան զհին մեղանչելն առաջնոյ, որք և երկրորդին համեմատեալք առ նոր օրէնս, առաւելութիւնք են : Եւ այս առաւելութեն քան զմովսէսեան կանոն՝ քաղցրագոյն է. զի անդ ոչ միայն չլինէր մեղաց թողութեն նորին զօրութեն, այլև օրինական յանցանք յաճախ էին, իսկ ներողութեն կարճ առակ : Այլև քան զգրախտին մեղանչել առաւելեալ է այս. զի անդ շնորհք միայն եղեն առանց յաղթութեն, շնորհք արարչի՝ և ոչ փրկողի. որ միայն օրինացս նորոյ պահեալ էր :

(10) Զի մի ծայրագոյն : Զի մի յաջորդաց բազմապատիկ առաւելութեն նորոյ շնորհացս՝ մերսանին կատարեցայց առաւելեայն, իբր նորոգ արդեն միրդարութեն. որ ոչ գոլով հնարաւոր վասն անկրկնելի լինելոյն, երանեցից զայնոսիկ, որ մկրտեցելոցն որդին, բանիւ առաքելոյն. ( Հռ. 1. )
* Երանի' որ թողութիւն եղև մեղաց : || Իսկ ես խոստովանիմ մեղացս յոգի խոցոտեալ, ձեռն բարկութեան քո մեծացի յիս. և առաւել ես ծանրացեալն պարտեօք քան զառաջագոյն. ըստ նոյն առաջի կ. * Ծան-

ընդ ձեռամբ քո 'ի վերայ իմ, դարձայ 'ի թշուառութիւն, զի հարան յիս փուշք, || որպէս և 'ի միտսում. (Լէ. 3. 5:)

(11) Աղօթեմ զէս: Հայր 'ի բանին հառաջ. (Է. 2:) * Օրէնք հոգւոյն կենաց 'ի քս յս ազատեցին զիս յօրինաց մեղացն և մահու. || վասն որոյ քաւ լիցի, թէ ծառայութիւն ճշմարտութեան նոր օրինացդ անկցի ընդ փոխարէնէ, [illegible] օրինակ էր. զոյգ և [illegible] անդամոր. * Որ անհնարին էր օրինացն, [illegible]: || Այլ 'ի քո նոր օրէնս՝ թողութիւն մեղաց խոստացեալ է, [illegible] չնորհեալ, [illegible] և ոչ եթէ [illegible]: և 'ի խորախոյս, քո կենդանի և [illegible] թէ [illegible], [illegible], ոչ ևս մեղայ յառաջահաղութի: և [illegible]. և յորժամ քո շնորհքն [illegible], [illegible], [illegible] քան [illegible], ոչ ևս մեղան պարտիք:

---

Սրտերին յառաջացեալ ներքին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ամբերս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. Ծ:

ա. ԱՅԼ արդ՝ քան զի որպէս ոչ է առանց քնիմոյ՝ ազնուոց փրկութի, և ոչ [1] առանց տեսանման աչաց՝ առ լոյս զուարթութի, և կամ առանց արուեստկին նշուլից՝ արևու երբէք քաղցրութի, այսպէս և ոչ առանց խոստովանութե ծածկութից և ստգտանաց անձին՝ քաւութի: Զի զինչ [2] օգուտ քեզ է մաքրութիդ, եթէ ընդ փարիսեցւոյն դատեսցիս. և կամ զի՞նչ վնասեսցեն զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գովեսցայց. և կամ ո՞ւր ասի պարտաւեալ մարգարէն յովէլ, երիցս կրկնելով զանձինն եղկուն. և կամ զի՞ գուցէ [3] սնդյն դատաստան՝ առ 'ի յիշատակ աւուրն մեծի. և կամ ի՞բր արդեօք անմաքուր իմասցի շրթամբք եսայի՝ հեռեն 'ի գործոց տանն իսրայէլի. և զիա՞րդ տէր պարտաւոր պաշտի ադամեան մարմնովն՝ իմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ հայր աղօթել. և կամ յո՞րս թարգմանի առած առակին, թէ [4] սիրտ իմաստնոյն 'ի տան սգոյ, և սիրտ անմտին՝ 'ի տան ուրախութե: Զի որ զխալեալն ադամայ՝ անձին իւրում ոչ գրեսցէ, և [5] զմեղս ամենից՝ ինքեան ոչ համարեսցի, իբր երջանիկն արքայից զհարցն, կորոյս զիւրն արդարու-

թիւն որպէս անախտակիր գոլ բնութեան․ և [6] ոչ բերկ-
րի սիրտ՝ առ զուարթութի երեսաց աւետեօք յու-
սոյն, ըստ ասացելոյն, եթէ ոչ յառաջելոյն քնի ու-
սեալ՝ ամիւ ահա ըստ այ տրտմեցի ։

Բ. Արդ՝ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր [7] խրատն
հին՝ նորոգ ընկալեալ հոգւոր հանճարեղին, զոր
տէրն իսկ երկրորդեաց, երթալ նստել՝ ոչ յառա-
ջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրա-
խորհուրդ ժողովելոց, ուստի դաւիթ և երեմիա՝
ուխտիւ կանոնի սահման հաստատեալ հրաժարեցու-
ցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մե-
ղօք՝ և 'ի դատաստանաց մեծին պակուցեալ ահիւ
հատուցմանն, յետնոցն հաւասարեալ ասաէն 'ի յերկ-
րի կամաւ խոնարհութե, ուստի բարձրեալն ած պա-
րարեալ բերկրի․ որով ընդ նախադասեալսն 'ի բազ-
մականսն երանութե համարձակեցայց, [8] թէ ես՝ և
թէ նա՝ հետևեալ սովիմք ։ Աւ որ զերծեալ 'ի բամ-
բասանաց բանի մարգարէին, որ 'ի վէսս ոմանս ակ-
նարկէ, մի յիս աւէ՝ մերձենար, մաքուր եմ, և ոչ
զիս տեսանիցէ ։ Այլ [9] զանկշիռն խոնարհութի եր-
ջանկին դաւթի՝ ինձ նպաստ առեալ ասել ընդ նմին,
ես իբրև զանասուն համարեցայ, հերքեալ 'ի զգայու-
թէ․ և հասին չարիք ինձ շուրջանակի․ և նեխեցան
և փտեցան վէրք իմ 'ի յանզգամիս անբժշկութի ։
Այլ զայլոց ոմանց [10] ընտրելոց 'ի յասորեստանի՝ ընդ-
կամաւորն կշտամբութի մեղապարտութե՝ անձանցն
անարատից․ ընդ որս և զեզրի մեծի քահանայի զա-
սեալն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զե-
րեսս բաւական իցեմ համբառնալ 'ի վեր առ քեզ՝
ած ։

Գ. Արդ՝ ես [11] ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝
զիմս խառնեալ ընդ նոցին պարտիս, և 'ի նոցայոցն
զառ իս դառնութի կրկին առաւելեալ, նոքօք հե-
ծեծեցից․ թէպէտ և չէ ինչ պիտոյ գարշութե զու-
նոյ՝ դարձեալ տգեղութի ։ Ահա արդ մեղայ՝ զի ան-
մտութե գործեցի զոչ հաճոյսն քո՝ բազմօք սխա-
լեալ յանցաւորութիւք․ [12] նայեաւ յիս գըթած, որ-
պէս երբեմն յուրացութեն ըմբռնեալ պետրոս, զի
յոյժ ունայնացայ ։ Լուսաւորեա ինձ զողորմութեդ

նաս զայցելութիւն. ոչ լքանես զաղքատ. ոչ արգելուս
զգթութիւն. ոչ թերես վճիռ կորստեան, այլ կտակ
ազատութեան: [22] Ո՛չ թշնամանիս յառատութեանց. ոչ
բամբասիս 'ի շնորհաց. ոչ հայհոյիս 'ի պարգևաց.
ոչ նախատիս 'ի ձրի ձրից. ոչ անգոսնիս յերկայն-
մտութեանց. ոչ եպերիս 'ի ներութեանց. ոչ բանսարկիս
'ի բարութեանց. ոչ անպատուիս 'ի քաղցրութեանց. ոչ
քամահիս 'ի հեզութեանց. ոչ առաքինն այսոցիկ տրտնջ-
մունք, այլ անլռելի գոհաբանութիւնք: Բա՛րձ զմեղս
իմ հզօր. լո՛յծ զանէծս իմ օրհնեալ. քաւեա՛ ըզ-
պարտիս իմ ողորմած. Ջնջեա՛ զյանցանս իմ գը-
թած. [23] մատո՛ մատն այցելութեան, և անդստին իսկ
կատարեսցայց. զի՞նչ քեզ տէր՝ քան զսոսին դիւրա-
գոյն, և կամ զի՞նչ ինձ պարտաւորիս կարևորա-
գոյն: Ա՛յլ կենդանագրեալ բարեխնամ քոյինա-
ստեղծ պատկերիս՝ փչումն կրկին 'ի շունչ նորոգման
լուսաւորութեան մաքրական շնորհի՝ զամենամեղս ոգի
պաշտպանեալ:

Գ. Մի՛ ածեր ողորմած՝ ինձ [24] որ տարաժամ 'ի հա-
մառօտս երբեք՝ անթոշակ ապաձեռնութեան՝ ըստ ան-
կատար ուղղին հետևել. մի՛ մատուցանէր բաժակ
դառնութեան 'ի ժամ ծարաւու. [25] մի՛ փակեր գըթած՝
իմ հանդէպ՝ զյաջողուած հոգևոր օգտիս, և մի՛ իբր
յանկարծադէպ հինից ասպատակ՝ գիշեր մահուան
ինձ պատահեսցէ. [26] մի՛ տապ տօթոյն յանպատրաստ
պահուն՝ զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի՛
լուսնական դիպուածք հասեալ զաղտնեօք վնասես-
ցեն. մի՛ պահեսցի ինձ սառն մեղաց, և մի՛ հոսանք
ուղխից կենցաղոյս զիս ողողեսցեն: Մի՛ [27] հանդիտան
մահ բերիցէ, և մի՛ նեղութիւն 'ի սատակութիւն յառա-
ջեսցէ. մի՛ քունն ինձ կորուստ լիցի, և մի՛ նիրհումն
ապականութիւն գործեսցէ. մի՛ վախճանն անյարմար՝
'ի վերայ իմ արշաւեսցէ, և մի՛ ընչոյս վերարձակու-
թիւն ըմբռնեալ՝ 'ի խոնարհ լիցի:

Դ. Դ՛ու ես տէր. դու գթած. դու բարերար. դու
երկայնամիտ. դու ամենակարող. [28] առ ամենայն
բան անհասութեան անճառ զօրաւոր, քաւել՝ փրկել՝
կենագործել, լուսաւորել, վերստին հաստատել, 'ի
ժանեաց կերչաց գազանաց՝ և կամ յատամանց վի-

շապաց 'ի կեանս կորզել, 'ի խորոց անդնդոց 'ի լոյս բերկրութեան ածել, և 'ի հեղձմանէ ծփանաց մեղաց,
29 ընդ արդարս երջանկաց՝ փառօք բազմեցուցանել։
30 Յամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քում շնորհաց. եթէ երկնայինք, և եթէ երկրաւորք. եթէ անկածն մեղօք, և եթէ ամբարձեալն արդարութ՟. եթէ տէր, և եթէ ծառայ. եթէ տիկին, և եթէ աղախին. և 'ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուն։ Եւ քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Մինչև նորոգեսցես փառօք՝ զառեցեալն մարդկութիւն, ընդ ամենայնիւ նմանութեան, ընդ ամենակատար նմանութեանդ՝ ընդ աջմէ հօր բազմեցուցանելով 'ի միութեան անձինդ։ Կամ խնամ, մինչև կատարեսցես զընկալեալ մարդկութեանդ նուիրագործութիւն 'ի խաչին, ըստ բանին. *Եւ իբրև կատարեցաւ, եղև ամենայն հնազանդելոց իւրոց || եւն. * Հայեցարուք 'ի կատարիչն Յս || (Եբր. Ե. Գ. ԺԲ. 2։) Զայս կատարումն արար Քս ամենակատար նմանութեամբն։ Հին լուծ. խնամոց պիտառորելութեան երեւմանայ համակին Քնի. բայց անեղութիւն ոչ 'ի դէպ գայ։

(2) Զորոց դժոխոցն։ Զընդարձակ ճառն ասէ՝ զոր յօրինեաց 'ի [illegible] առաքելոյն և յեօթանասունսն։ Բայց չէ յայտ թէ քանի՞ ժամանակաւ յառաջ քան զաղօթքս արարեալ իցէ։ Ոմանց թուեցաւ՝ ընդ այլ երկուց ճառից խաչին և Աձածնի արարեալ 'ի նմին ժամանակի։ Սակայն 'ի յիշատակարանի այնց ճառից ոչինչ այդպիսի նշանակի. և ոչ մակագիր ճառին առաքելոց ցուցանէ զկապակցութիւն ինչ ընդ նոսա, որպէս այլոց երկուց ճառիցն մակագիրք ցուցանեն յայտնապէս։ Մանաւանդ կարծիս առնումք՝ յետոյ քան զայն ճառսն արարեալ զառաքելոցն, յաւելն [illegible] 'ի սկզբան անդ. * Քանզի առ ձեզ և յաղագս ձեր 'ի դադարմանէ լռութեան շարժեալ կարգ բանիս, || եւն։

(3) Յիշատակաւ սրբոց։ Յիշատակաւ սրբոյ քո՝ որով զնոսա ընտրեցեր. կամ, յիշատակաւ ընտիր և գերապանց սրբոյ նոցա առ քեզ։

(4) Լուիր ինձ եղիցի նոցա և հանդերձեսցեն։ Կ օրին. լուիր ինձ եղիցին նոցա հանդերձեսցես. որ ըստ կարգի եա է, այսինքն նոցա բարեխօսութբ և վարդապետութբ առաջնորդեսցես ինձ ճանապարհ ուղիղ առ քեզ գալոյ։ Զոյն բույի, ձայն աշակերտութեան նոցա, որ իւրեանց դրովքն 'ի մեզ հասանէ, լուիցի ինձ իբրև ուղղոյն կենաց, զոր առանդեցին աշակերտելոցն ըստ հրամանին Քի։ (Մատթ. Ի. 12։)

(5) 'Ի յանեղծութիւն փոխութիւն։ Մասն կամ բաժին ընդունիցիմ, հաղորդ եղիցիմ ընդ առաքելոցն. որք քարոզութբ եղեն առաջնորդք կենաց, 'ի յանեղծ փրկութեան յոր յուսամք. կամ 'ի տօնեալ յոյսն անեղծ փրկութեան։ [illegible], որք եղեն առաջին տուիչք առաջնորդական պատուոյս։ Աւելի հաղորդ լինել առաքելոց 'ի յուսացեալ փրկութիւնն, հայցէ յայն բանս նոցա՝ որովք զհաւատացեալսն կոչէին նոքա հաղորդակիցս, միաբանակիցս, համախոհակիցս եւն։ Իսկ [illegible] ըստ [illegible]. որք խնամակալք զուարթարար իւրով փրկական լուսոյն, այսինքն տէրունի, քնական օծմանն եղեն կատարեալք. որք տիրապէս օծեալքն Քնի եղեն ըն-

[illegible] կամ [illegible] յերկրի · որ և է [illegible] [illegible] առա_ քելոյն ։

(6) Եւ մարգարէասցեն [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] · Որոց հանձնեալն [illegible] [illegible] , [illegible] [illegible] է [illegible] ։ Ընդ աշակերտաց [illegible]՝ նաև [illegible] [illegible] [illegible] և հանձնեալ [illegible] [illegible] [illegible] [illegible] , ևն · և ըստ այսմ որոցն՝ յարաբերելով [illegible]՝ մարգարէութեան , [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] , և 'ի [illegible] բանին ։

(7) [illegible] ։ Մարգարէութեան [illegible] [illegible] [illegible] [illegible] , և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] , [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible] [illegible] , ընդ հրոյ՝ [illegible] , ընդ [illegible]՝ [illegible] կամ [illegible] , ընդ օդոյ՝ [illegible] , 'ի [illegible] [illegible] , [illegible] [illegible] · ընդ հողոյ՝ [illegible] , [illegible] ևն ։ [illegible] ընդ [illegible] , ընդ [illegible] [illegible] ։

(8) Ըստ մարգարէին ։ Ելանելն յերկրէ ըստ մարգարէին , եթէ [illegible]՝ ըստ [illegible] մարգարէին , կամ [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] յերկրէ [illegible] [illegible] · ( Դ · Թագ · Ա · 13 · 14 · ) և կամ [illegible] [illegible] , որ [illegible] [illegible] [illegible] յերկրէ · ( Գ · Թագ · Ժ · 11 ։ ) Իսկ եթէ [illegible]՝ ըստ բանի մարգարէին , [illegible] [illegible] [illegible] · ( Ելք · 7 · ) * Եղև եւ 'ի [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] ‖ ։

(9) Ամենակալին [illegible] ։ [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] · կամ , [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(10) Հաստատութեան գործոյն ։ Ընդ [illegible] [illegible] , [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] · [illegible] ոչ [illegible] [illegible] 'ի նոցա [illegible] , ընդ [illegible] [illegible] [illegible] ։

(11) [illegible] [illegible] ։ Այսօրինակ՝ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(12) Ըստ նոյին մասին ։ Այսպէս է [illegible] ըստ [illegible] [illegible] , և ոչ ըստ նոյին ։ Այլաբանութեան [illegible]՝ [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] · [illegible] [illegible] [illegible] նոցա , 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ Այլ [illegible] ոչ ընդ [illegible] [illegible] [illegible] [illegible] Գրիգոր [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Աստուածային [illegible]՝ [illegible] 'ի [illegible] [illegible] , կամ [illegible] նոցա 'ի [illegible] [illegible] ։

(13) Եւ [illegible] [illegible] ։ Այս [illegible]՝ է [illegible] [illegible] , [illegible] · ընդ [illegible] [illegible]՝ նաև [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] , ևն ։ Որ [illegible] [illegible] [illegible]՝ և [illegible] [illegible] , ևն ։ Կարգ [illegible] [illegible] ոչ ընդ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] , [illegible] նոյին [illegible] [illegible] [illegible] [illegible] ընդ [illegible] [illegible] [illegible] · [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] ։ [illegible] օրինակ · [illegible] · և [illegible] է [illegible] , [illegible] [illegible] [illegible] · [illegible] և [illegible] [illegible] ։ Իսկ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] · ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] ։

(14) Քեզ հեթանոսաց ։ այլ օրինակ · [illegible] հեթանոսաց ։

(15) [illegible] [illegible] ։ 3 օրինակ · [illegible] · [illegible] [illegible] [illegible] [illegible]

կամ զերրորդոյն առաքինական արդարութեան . առանց չեփեոյն մարմնութեան , առանց խորհելոյ զմարթութիւնս , կամ առանց հայելոյ յանցեալ ճգնութիւնս՝ որ ըստ օրէ յառաջադիմական լինելոյն :

(16) Ընդ նախագրելոյ երջանկացն փառաւորելոյն : այլ օրին . ընդ նախագրեցեալ երջանկացն փառաւորութեան : Ընդ գովասանական ասպարիսաւ նախայիշատակեալ երանելեացն՝ Աստուծոյ , մարգարէից և ճգնաւորաց՝ խառնեալ նաև զիմ անարժան աղօթս , և ես ը նոցին պաղատանօք , գոչեմ , թէպէտ յոյժ ստորացեալ 'ի նոցա նմանութենէն . որպէս զասն իմն ընդ քաջաց նիւթոց են :

(17) Տարտամ ընդ ողորկութեան : Փշալից բոյս ընդ ողորկ շաւաւղի , կամ ընդ յղկեալ գաւազանի :

(18) Բազմաւորեան : Ողորմութեան ճշմարտին , կամ առատախօսութեան , կե՛ր աստ իմն ընդ ճշմարտին իցէ :

(19) Կամ աւազ , որ 'ի հաց խառնեալ , ապականիչ լինի . յի աղաւեղա-զատանակութիւն 'ի ծամելն , և շունչին ատամ :

(20) Զհոգոյն վասն իմ : Լո՛ւր զաղաչանս նոցա որ վասն իմ . Ն զինս ընդ նոսին , և զիմ աղաչանս ընդ աղաչանաց նոցա , որ եղիցի նոցա 'ի գովութիւն , և ինձ 'ի փրկութիւն 'ի փառս քո : Եթէ՛ նոցա լուիցես , և եթէ ինձ , եթէ՛ նոցա գովեստ լինիցի , և եթէ ինձ փրկութիւն , ամենայնն կատարի 'ի փառս քո . վասն զի քո՛ են աղօթքս և խորհուրդք . զի՛ս պատճառս բա-րեաց ամենայնի : Ես զարձեալ , 'ի քէն գոլով ամենայն աղօթքս , ոչ կարօտաւ միջնորդութեան այլոց . և 'ի քումդ բարութեան ո՛չ գառատառապանիչ լինիս , այլ աղաւաւիչ են :

(21) Ու զոփձանս : Թէև մեք արժանի մնոց ամպանչելք , բայց գտա-զրե՛թան՝ ոչ պատճառաւ երասանաց կամ գառատատանի պաղատառութեան հեղեցես , այլ մնանանդ խնդրես գաանեալ փառաս , հնարս կենաց : ու Եւ 'ի կանս . յի ոչ յօժարես 'ի կամս ապաւանանելոյ , կորուսանելոյ , այլ 'ի ծրկութեան ողորմութեան , յի 'ի փրկել զողորմութիւն , ձրիապէս , առանց վաստա-կոց արժանեաց :

(22) Ու Եղեսանես : Ցառաստատանեալ քո՝ թէպէտ և կարի մեծ իցէ , ոչ թշնամանես երբեք շաայլ . այնպէս 'ի շնորհելդ , յերկայնամտելդ , 'ի ներելդ , 'ի հեզութիւն զնալդ , են , ոչ պարտաւոր երբեք անխառհեմ , կամ ակրար . և ո՛չ արատաւոր 'ի մարդկանէ ասանս , այլ գոհութիւն . զի 'ի գոր-ծել քո զայս ամենայն՝ ցուցանես զքաղցրութիւն , զմարդասիրութիւն , և զաւե-րութիւն . և ո՛չ ուժեք զերկանս ասանես : Այլ եթէ ասէ ոք կամ նա-խանձոտ այլալուղ խորհելով , ապանդրեացէ , կամ մեղադիր լինիցի , երա-նութիւնս յանդգնանի . որպէս առաջինն կոչեցեալ մշակըն՝ 'ի արանջեւն ըն-տանեսուստանեցն լուան , եթէ չանեցի՞մ յիմն իշխանութիւն առնել զինչ և կամիմ . ( մատթ . Ի . 11 . են : ) Սոյնպէս երէց որդին զժտաշալ ը ընդ ընդունելութիւն անառակին , բաւաւ պատասխանի . ո՞չ էր արժան խնդալ ընդ կենդանանալն և ը գիւտ եղբօր քո . ( ղուկ . ժե . 28 . են : ) Թէպէտ ամփցես՝ և երկամեայի գանդգատեալ զնոյ վասն երկայնմտութեանն առ ամ-բարշտաւ . ( ժը . 1 : ) Բայց ո՛չ էր գանգատ , այլ մարգարէն զարմանք ընդ անոխակալութիւնն այս . որոյ զպատճառն գիտացեալ նինուէին բացայայ-տէ զինն ( համար . 3 . ) * Քաղցրակամ գթոտա երբեք դաշնաւոր 'ի սաստանումն || : աղաղակաց յաղօթէ նոցա ամ՝ զի յանդգնարձ մնալն գառնալով գթոտա երբեք դաշնաւոր պատուհասելալ : Այլա անարգապատ է ամ յամենայն 'ի գործս իւր . և մարդկեղ միայն լինեն պաղպատաւել , յորժամ անչափ առաստանեանեն , կամ ներեն յանցաւորաց . զի ո՛չ են նիւքնակարողք ընչից իւրեանց , կամ երասանաց արդարութեան :

(23) Մարմն ծալն : Մերձեցա՛ առ իս զնեանն օգնուն , և անպատիւն , իս-

կոյն կատարեալ զատոյց յողջութեն, 'ի քսանուն եւ ։ Այլ է ընդունակագրեալ, 'ի քո ստեղծեալ պատկերս ապաստանեալ կրկին կամ վերստին փրկութեան, երկրի դրախտին, նորոգեալ լուսաւոր շնչով որ զանմարմնութեն շնորհաց յինքեան ունի ։

(24) Օր փորձման. յի անապատական, կամ անապական, ի համառօտս երբէք, 'ի կարճ ժամանակիս, անխոնջ աշխատանաւք, անպակաս դատաստանին բարի գործոց, ըստ անխափան ուղղին, ըստ անվախճան ճանապարհ մահուան գնալ ։ Այսու, և յաղթող բանիւքն ասացէ՝ մի յանկարծ օրհասաւ մեռանիլ 'ի կենաց՝ անպատրաստ և ունայն 'ի բարի գործոց ։

(25) Մի՛ ծուլիր ։ Մի՛ թողլ զատ խափանել զինչ 'ի յաջողութեան հոգևոր օգտին՝ աշխատութեան և այլ բարեգործութեանց, որք խափանեն արագահաս մահուամբ. զի ը նմանութեան յանկարծահաս հեծեց բառնայ զամ բարիս ։

(26) Մի՛ փախ փախչիր ։ Ապստամբ ակնարկէ 'ի բան առաքելոցն. * Աւետարանին 'ի սուրբ քեզ մի մերժեսցէ, և մի լուսաւորին 'ի գեհեն ||: Իսկ փախ կամ խոնարհեաց պղտոսկան ջերմն մահուանն, որ արդար ցասմամբ պատժեցէ զապաշխարողս, և կամ զհոգեկան սաստկութեամբ դիւական փորձութեանց 'ի ժամ մահուան ։ Եւ մի լուսանալ, պատահեալ որ 'ի լուսոյ՝ մի յանկարծ կամ զայրացեալ մեռանեսցին. և զայս եւս խնամ կոչնակի, այսինքն կամ զգանականն, որպէս աշխատաւորութիւնք 'ի լուսոյ ներգործեալք, կամ թուանք մահուանք, եւն. և կամ զհոգեկանն, որպէս են փորձութիւնք 'ի մարմնոյ ծնեալք ։

(27) Հանգիստ մահ ։ Այսինքն եւ ը կարգի խնամակալ են լուսոյ մարմնականին, այսինքն մի՛ հանգիստ մարմնոյ 'ի մահկանց մահ բերեսցէ, եւն ։ Եւ մի՛ դիւական անշարժութ, այսինքն մի՛ վաղեսցէ 'ի վերայ իմ յանկարծ մահն բանական՝ որ պատահէ անկեանք, ընկղմանք, այրմանք, և այլով օտար ճանապարհաւ, որք չեն ըստ բնական կարգի եղծման մարմնոյ ։ Կամ անջորժ առի մահն հասեալ 'ի ժամ քնոյ, որով 'ի վտանգաւոր յոյժ ժամանակի ամենեքին անպատրաստ ելանէ մարդ յաշխարհէ ։ Եւ մի՛ զհոգւոյ վերջինաւորն, եկեալն կամ տարրական շնչոյս մի՛ 'ի ներքս արգելեալ խեղդամանք. կամ, արձակումն հոգւոյս 'ի մարմնոյ մի՛ 'ի գիշերոյ արգելեալ 'ի ստորև խափանեսցի. կամ, սաստկութեամբ հոգեվարութեան մի՛ տանջեսցէ ։

(28) Առ ամ բան ։ Առ ամ իրս անհասանելիս կամ անհնարինս՝ անճառ ասացեալ զօրաւոր ։

(29) Ընդ արդարս Երջանկաց ։ Այսինքն ընդ արդարոց երջանկաց կամ երանելեաց. կամ, ընդ արդարս երջանիկս. բայց ըստ շարադրութեանն՝ մի բառ գնի նախադրիւ արականն, և միւսն վերջահոլով, վասն զի ընդ նախադրութեան յարականին երկրպագեան եւ ։ Սոյն աձ է և յաւաղջաղացեալն, ընդ խաղաղութեան հօրէ՝ որեանք ներքնեացն ։

(30) Ամենայն ազգի ։ Ամենայն բանաւոր քեզ ակնկալեալ, յասով ասացեալ. ոչ ամենայն միօրինակ՝ այլ զանազանաբար. այլ ազգ երկնայինք, հրեշտակքն, և այլ ազգ երկրաւորք. սոյն այլ ազգ՝ մեղաւորն, և այլ ազգ՝ արդարն, այլ ազգ արքն. և այլ ազգ ծառայն, եւն ։ Արդ՝ հրեշտակաց յաւելով ասացեալն և կարօտելն շնորհաց՝ եթէ խնայեցի ը մեղաւորաց, և յաւել քան զերանութիւն, ահա յայտնի է բանն. զի յաւելի առ ծ՝ և նորին շնորհ հօրն կոչին յանմեղութեան, և երանացեալն ։ Բայց քանզի բանս 'ի ներկայութեան խօսի, երբև այժմ եւս յաւացօղս և կարօտեալս շնորհաց, ըստ այսմ ոչ խնայել զնորոգ ասացեալն է շնորհաց, այլ զհանդարտութեան ասացեալ շնորհաց և երանութեանն. զի որպէս զլինի առ, 'ի ձեռնին ևս է շնորհ կենդանական ամենեցուն՝ թէ ըստ բնական, և թէ ըստ գերբնա

կամս գոլոյն ։ Այսպէս բանիւ [illegible] (՚ի մեկն. սաղմ. ՃԺԸ. Թիւ 29.) * Այլ [illegible] [illegible]

---

Մերոյին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

## ԲԱՆ. ՂԳ.

Ա. Բարձրեալդ անքննին. զօրութիւնդ ահեղ. տէր արարածոց. թագաւոր երկնի. առեղծիչ հրեշտակաց. [1] գոյարան մտաց. հաստիչ հրեղինաց. պետ բարի հոգւոց. աջ ապաւինութե. անդորրութի հանգստեան. [2] տեսարան լուսաւորութե. պայծառութի բերկրութե. ճանապարհ երանութեան. պատճառ կենդանութե. առիթ բանաւորութեան. փրկութի [3] առանց չարութե. առաջնորդ խաղաղութե. պարիսպ ամրութե. պատուար պահպանութե. [4] ցանկ բոցոյ մեծի օրհնութե. սահման անոխակալութե, [5] յիշեա՛ յայսմ ողբերգութե մատենի բանիւ խոստովանութե՝ և զոր ՚ի մարդկային ազնէ թշնամիս մեր՝ ՚ի բարի, և արա՛ կատարեալ նոցին քաւութի և ողորմութի ։ Մի՛ բարկասցիս նոցա վասն իմ՝ տէր, իբրև զնոսա բամբասողաց՝ առ յանձնս սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա՛ յանցանաց նոցա ։ Եւ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո՝ արդարադատ, [6] ամենք առ մեզ մխասակարագոյնք սակաւուք թերևս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ՝ ամենապարտև, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւս ։

Բ. Արդ՝ յիշեա՛ զքո մեծութիւնդ՝ տէր, նայեցեալ ՚ի յիմս անարգութի. և ընդ խնդրելս իմ ՚ի քէն բարի իմոցն ատելեաց, [7] և դու առ քոյս՝ ըստ քում մեծութեանդ՝ անճառելիս հրաշագործեսցես ։ Մի՛ սատակեսցես [8] զիմսն խածանողսն, այլ փոփոխեսցես.

ծուլեալ զխոստմամբ բարոյ երկրաւորս՝ զպարգեւս արժա-
տացուցես, և յիս և 'ի նոսին: Մանաւանդ զի դու
լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. [9] դու խնկու-
թիւն բարի գովելի, և ես համայնիւն չար ապիկար.
դու տէր սորբից և երկնից, և ես անխղճական շնչոյս
և հոգւոյս, դու բարձրեալ 'ի կարեաց զատեալ, և
ես տաժանաւոր և վտանգաւոր. դու 'ի վեր քան
զկիրս երկրիս, և ես կաւ անարգութեան գարշութեան.
դու՝ ըստ մարգարէին, միայն յաւիտեան յանբաւ
բարձրութեան, և ես միշտ կործանիմ՝ ըստ նորին բանին.
'ի քեզ ոչ է մթութիւն կամ նենգութիւն, և ես [10] բա-
վանդակն ծով եմ՝ որ զաւանդն իմ ոչ պահեցի:
Հան զիս 'ի բանտէս. արձակեա 'ի կապանացս. [11]
զերծ 'ի շղթայիցս. փրկեա 'ի խեղդմանէս. ազա-
տեա 'ի տագնապէս. քակտեա 'ի յերկաթիցս. լոյծ
'ի պաշարմանցս. [12] արտաքսեա յերկմտութեցս. սփո-
փեա 'ի տխրութեցս. հանգո 'ի նեղութեցս. փարա-
տեա 'ի վշտացս. հանդարտեա 'ի խռովութեցս. ա-
պաքինեա 'ի լալոյս. մերժեա 'ի հեծութեցս. հեռա-
ցո 'ի յողբոցս. կազդուրեա 'ի կականմանցս: Ո՛վ ա-
ղորմութեան և պարգեւատու քաղցրութեան, մի զգրա-
ւեալս արեամբ հզօրիդ՝ անտես արարեալ ընդվայր
կորուսաներ. կանգնեա զհասեալս յափն մահու՝ 'ի
բազմավտանգ հիւանդութենէ:

Է. Ո՛հ [13] բարդեցան կուտեցան շրջանակք ամացս
ընդունայնութեան, յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ
յօչպէտս երևեալ, 'ի յանդաստանէ մօրն իմոյ սե-
նեկի՝ փուշս դժնկի՝ մեղաց շառաւիղի. մի լինիր ինձ
խայթոց խոցոտիչ՝ որպէս անդ [14] առհմին յուդայի,
և կամ զաւակին եփրեմի: Այլ քանզի բուսուցեալ
տնկեցի յոգիս՝ փոխանակ ցորենոյն բարեսերմունեան [15]
խոտս խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս,
ըստ գրոյն բանի՝ որ երէցն է քան զաւետարանն, զիմորդ
ոչ կոչեցից զանձն իմ՝ գարշելի անդաստանն անիծա-
բեր փշովք մեղաց հեղձեալ: Ո՛չ սերմանեցի արդա-
րութիւն, ըստ բանին յովսեայ, և զիմորդ հնձեցից և
ժողովեցից զկենաց պտուղն: Ընկալ սոփնք կուսու-
թեան անձինս մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ
առ իսրայէլ, կարօղ ես տէր՝ 'ի նոյնն հաստատել:

Լայնեցի ընդարձակեցի, ըստ մոլեկան բարուցն յու-
դայի, զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց, 'ի
ձեռս քո է ամփոփել դարձեալ 'ի նոյն զգաստութի:
Եթէ 16 մարմնապէսն կցորդութի ընդ տեսանողին՝
անարատ գործեաց զպոռնիկն, իսկ դու փրկութի՝
հոգեպէս միացեալ 'ի յիս՝ կրկին մաքրեսցես. եթէ
արեգակնս այս անկենդան՝ ստեղծեալ առ 'ի քէն
երկրիս մատակարար, և 17 զկարակումն մօրից ցա-
մաքէ, և զտհաս պտուղս հասուցանէ, իսկ ստացող-
ամենից՝ հոգիդ տր՝ որքան զօրեսցես զտիղմ չարեաց
աղտոյ՝ և զթարախ պղծութե մեղաց մթերից՝ իսկոյն
սպառել: Վասն այսր կանխաւ իսկ ժամանեցի հայ-
ցել առ 'ի քէն բարի՝ առնելեացն իմոց 'ի կարգ այս
բանի, զի զհերքեալ մնասակարս պարտուց մահու՝
յամենախնամ աչաց հզօրիդ մի մերժեսցես՝ օրհ-
նեալ գթութիւն. արդ՝ կենագործեա զիս զամենա-
մեղս անդամօք մարմնոյս՝ 18 ընդ բնութե հոգւոյս խառ-
նել միշտ զքոյդ: Իսկ բարեգործացն խնդրել բա-
րիս, բնութե են օրէնք՝ 19 անբռնադատ կրիցն յա-
րակցապէս առ սոյն թերումն: Վասնզի արդարև առ
միդ այդ պատուէր՝ ամենայն հասակ զօրանայ. իսկ
միւսոյդ երկրորդի՝ առաջնովդ խնամով հանդիպել,
ծածկանիդ է նմանութի. յաղագս այսր իրի՝ նախ-
նի դասեցի զթշնամեացն իմոց աղերսանս, քան զե-
րախտաւորացն բարիս:

Է. Եւ արդ՝ յիշեա զնոսա 20 կրկին ընդ միոյ, որ 'ի
քո անուն բարձրացեալ՝ զանարժանս զիս ընկալան.
և տուր նոցա տէր ամենառատ բարերար և անոխա-
կալ, վարձս արդարոյ և մարգարէի, թէև ես յա-
ւէտ թափուր իցեմ յարժանեաց, ըստ հաւատոց նո-
ցա և առ յոյս նոցին ակնկալութեան, որ առ պար-
տաւոր գերիս՝ ողջամիտ կամօք ակնարկեն, որպէս
թէ 21 'ի մասանցդ քո կեցուցչաց՝ 'ի պահպանարան
հոգւոյս ծածկութի՝ լիով ունիցիմ: Եւ զպատժա-
ւորս՝ 22 անամփոփելի 'ի քոց տեսութեց, և յանխա-
բելի 'ի յուղիղ կշռութեց՝ քաղցր գթութբդ ան-
սահմանելեաւ մերձեցեալ առ իս՝ մաքուր արասցես,
անխայտառակելի պահելով 'ի տիեզերական յանդի-
մանութենն: Եւ որպէս շուք իմն վայելչական դնել

ախորժելն ինձ անարժանիս՝ սիրելիքն քո՝ վասն քո, նայեցեալ 'ի կրօնս զգեստուս բարեկերպութե, չգի-տելով զբիծս գաղտնեացն՝ երջանիկ կարգան եղկե-լոյս, և դու հնարաւոր ամենապարգև օրհնեալ մար-դասէր՝ առ բնաւս ողորմած, վասն ամենաթշուա-ռիս հեծութե հաշտեաց ընդ նոսա ըստ հաւատոց նոցա. ընծայեալ նոցին մատո պարգևեալ զանեղծ մեծութիդ՝ և զանթառամելի զպսակդ՝ յահաւոր ա-ւուրն յետնում հատուցմանն ամենափորձ ընտրու-թեանն ։

Ե. Որ դու ես գրաւ փրկութե մեծութե անվատ-նելի և [23] անծախ գանձուց սորկիս և սովեցելոյս, 'ի վաճառ վերնային շահու օգտութե՝ բանիւդ որ 'ի քէն՝ յարգեալ ձոխանամբք ։ Կյաւ ինձ սահման՝ ջրոյ հանգստեան. [24] արձանացո անփոփոխ՝ պատրաս-տական վստահութի. կարգեալ օրհնաբանեալ՝ ան-կեղակարծ յուսոյ ամրութի. տուր ամենախնամ դու՝ անաչառ պաշտպանութի. սասանեցելոյս՝ բարեաց անդորրութի. տարակուսելոյս լուսոյ ապաւինութի. աշխարեցելոյս՝ մեծ երջանկութի. վհատելոյս՝ կենաց օգնութի. լքելոյս՝ անդայթագղելի օժանդակութի. նահանջելոյս՝ անսայթաք վերընթացութի ։ Որ [25] քո է բնաւդ, և 'ի քէն է ամենայնդ, և 'ի ձեռն քո բաշխին հատուցութիք պիտանացուաց համայնից կենաց. և քեզ վայելէ փառք՝ յաւիտեանս յաւի-տենից. ամէն ։

---

(1) Գոյական մտաց. այսինքն գոյացուցիչ մտաց և ուղղիչ խորհրդոց. կամ. միայն առէ՝ փոխանակ իմանալի և հոգևղէն գոյացութե ։

(2) Տեսական լուսաւորութիւն ։ Երևեցուցիչ լուսոյ. կամ, պատճառ ամ լուսաւորութե հոգևոր և մարմնաւոր. կամ, դու ինքն առաւօտ և կայան լուսոյ. Ը այնմ, բնակեալ 'ի լոյս անմատոյց ։

(3) Աստանց լուրութիւն. այսինքն փրկութի ազատ 'ի մեղաւորութեանց, կմ 'ի վտանգաց, որ է տալ, անվտանգ փրկութե. կմ, փրկութի 'ի տառա-պանաց՝ տառանց տուգանաց կամ գանից. կամ, փրկիչ միայն՝ տառանց կո-րուսանելոյ ։

(4) Ցանկ բարոյ ։ Ցանկ կամ պարիսպ հրեղէն. (ըստ Ծննդոց. Գ. 5.) որ ունի զսուր մեծ՝ ոչ այլելոյ խորև զտացեղէն աւուրն չըկսապատող ծա-ռոյն կենաց, այլ օրհնութիւն, զի է բոց սիրոյ ։

(5) Ցնծում յոյսմ ։ 'Ի կարգի աղօթականն բանիցս զյզութե յոգւոյ և զթշնամիս մեր որ 'ի մարդկանէ, բայց առնել նոցա թողութի և ողոր-մութի, և ոչ 'ի պատուհասել. մի բարկացցիս նոյ 'ի պատճառս իմ, մի

[illegible] որպէս թէ [illegible] ... [illegible] յոլով [illegible]. Տարակուսանս [illegible] [illegible] թշնամեաց [illegible] Բազմապատիկ է, [illegible] թշնամեաց [illegible] ... [illegible] 'ի յանցանս [illegible] ... [illegible] 'ի [illegible] :

(6) Ոմանք առ մեզ [illegible] : Այսպէս [illegible] ... Թերևս և [illegible] ... [illegible] 'ի [illegible] ... [illegible] թշնամիք են, [illegible] ... Թերևս [illegible] ... [illegible] ... Այսպէս [illegible] ... թշնամիք իմ, [illegible] թէ ես և այլն :

(7) Եւ դու առ բոյս : 'Ի [illegible] [illegible] [illegible] թեան :

(8) Ջինն [illegible] : Որք [illegible] ... [illegible] թեան : Ցայտնի [illegible] Թերևս [illegible] ... [illegible] թեան :

(9) Դաւ [illegible] : 1. օրին. [illegible] :

(10) [illegible] ... 3. օրին. [illegible] ... 'Ի քեզ ոչ [illegible] ... և ոչ [illegible] ... թէ [illegible] ... կամ [illegible] :

(11) Ջերծ 'ի [illegible] : 2. օրին. [illegible], 'ի [illegible] :

(12) Ար[illegible] : [illegible] հան 'ի [illegible] :

(13) [illegible] : Ահաւասիկ [illegible] ... 'ի [illegible] ... [illegible] թէ [illegible] ... 'ի [illegible] :

(14) Տուրին [illegible] : Ի բանին [illegible]. (Ե. 12.) * Եւ ես [illegible] ... 'ի [illegible] : || [illegible] ... [illegible] :

(15) [illegible] : Փոխանակ [illegible] ... 'ի [illegible] ... որպէս [illegible] և այլ [illegible] ... [illegible] և այլք, որք [illegible] կամ [illegible], [illegible] :

ցեչա . ըստ Գրոյն Բանի , յորոց . ( Լա . 40 . ) * Փոխանակ ցորենոյ բուսցի եղինձ , և փոխանակ գարւոյ՝ մորենի : || Որ եբերն է քան զամեփին . որ նախկինն է քան զամենայնն առաւել արտաքսեցին :

(16) Մորճոպէսն կշռեցաւ : Անմահանայն ամենայն . ( Եփ . 3 : ) Եթէ այն ամենաւսնութեան մարմնականն ընչեաց զանոնն պատմութեանն 'ի կեանս անտի , և'ս առաւել զու փրկութեան ամենայնի՝ հոգևորականս 'ի նոցա յետ մեռանելոյ , կենդանութեան եւս մնալով կարող եւս , ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ :

(17) Զկարոյնան ծորէց : Զգարշ խոնարհութեան առաջնոյ յանձնկերութեանն է :

(18) Ըստ Բնութէ հոգւոյս : Անմահացած զմեղուցեալս ամենայն անդամոց մարմնոյս . զի և մարմնոյս միաբանեալ ընդ բնական յօժարութեան հոգւոյս , զբոյսն խորհրդի . կամ , կենդանացած զմեռեալ մեղաց անդամս մարմնոյս , համեմատ առաքինեալ բնութեան հոգւոյս , որ է առնել՝ զմտածմոնս և զհոգիս : Կամ արարածն է , զնա զամենայնս , այսինքն որ բանականն միաւորեալ եմ թէ անդամոց մարմնոյս , և թէ բնութէ հոգւոյս , որ է առնել մարմնով և հոգւով , կենդանացած զի խորհրդոյ զքո կամս և զպատուիրանս :

(19) Անբաւարար կէրէն : Վասն երախտաւորաց բարիս խնդրել՝ օրէնք են բնութեան , ոչ միայն բանականաց՝ այլև ընդ հանուր ամենայն կենդանեաց , ամենալով 'ի այն զգեստուն կամ զհանգուստ ինչենայօժար կերպն կի՞ առաքածանաց , յորդորեալ , եւ ընդ արդարոյ և անբաւամեկելի : Վասն զի առ ծեր այր , առ 'ի բարերարել երախտաւորաց՝ որ հրաւիրեալ բնիկ է , ամենայն մարդ ըստ խոստովանչէր հաւատ , կամ ամենայն կենդանի կարող է և յօժարել . զի ըստ ՏՆ բանին , սիրել զմերձակա , բարի առնել նոցա և ոչ զոյն առ , և՛ մեղաւորք և՛ մաքսաւորք յորդորաւորք են , ( Մատթ . Ե . 46 . 47 : ) Իսկ ծառայք , երկրորդեաց՝ որ է բարիս կամել թշնամեաց , հանդերձեալ առաջօրինել , առաւելութք խնամով , համեմատ բարիս առնելով երախտաւորաց , այս է նմանութեամբ ԱՅ , ըստ որում և ասէ՝ լինել որդիք հօրն երկնաւորի՝ որ ածէ արև և անձրև 'ի վերայ չարաց և :

(20) Կրէէն ըստ ծոյ : Կրկնապատիկ փոխանակ միոյ երախտաւորաց նոցա հատուցանես . և առնել նոցա վարձս ըստ արդարոյ և մարդարէի . զի թէ ակնունեալ յորժ արժանաւոր եմ յարժանաւորութեան արդարոյ և մարգարէի , բայց նոքա այստ հաւատով և յուսով հային յեա , և բարերարեն :

(21) 'Ի ծառայոց քո : Բարերարօղք իմ հանմօզքն , թէ յաւագքնականն զարծոց՝ որք են մտաւորք քոյոյ արքունեանդ , լինել ամենայն 'ի յոգւոյս :

(22) Անասպիտեւն 'Ն քոյ : Անթարգելի , անծածկելի : Զի զաղատմա-սպաղառու՝ որ անծածկելի եմ 'ի առաւելութեան քոյում , և չկարեմ զերծանել 'ի քո անխափան զաստուածութեան , մարդկուն արարչեմ անասահմանելի զթութիւն , զի մի խոյսանակեցայց 'ի աներեւութական աստծոյն : Եւ զի քո ամենայն ծաւ-ալութիւն կամեին արարիչ ինձ զնել վասն քո , հայելով յարարածքն կերպա-րանս կրծնաւորութեան , և ինձ երանելի կարգաւն՝ առանց զխառնելոյ զգացանելի արարատ իմ . վասն այսորիկ աղաչեմ . ըստ հաւատոց նոցա հայեաց 'ի նա-սա , և արարչական զանխարակա արարչին և այլն :

(23) Անծանօթ գանձուց . անապատելի գանձուց : Այս հատուցած բանի՝ ակնկալեալ անտի , Զի դու ես Գրաւ , կատարեսցի ընդ նախագիտեաց բանին , արդէօս թէ առնել . վասն իմոյ երախտաւորաց 'ի քէն հայցեմ զհատուցումն բարեաց . վասն զի ինձ ամենեկեան զու ես զբոււ կամ առ հատուցա-նելոյ մեծութեան անապատ գանձուց , 'Ն վաճառ , 'ի բաշխութեան երկնայինն

օգտից ։ Քանզի որ 'ի փէն , բանիւ իշխանութեն քահանայութեն և վար-դապետութեն , որով 'ի քէն յորդեալ Ճոխանանք ․ եթէ թէ՝ այսպիսի իշխանութե գոլով կարգեալ մատակարար շնորհաց քոց՝ իշխեմ 'ի նոյն գանձուցդ առնուլ մեան մասն խոյց բարեբարոց ։

(24) Արժանացն անփոփոխ ։ Հաստատեալ , տուր արդարութե զպատուաստ և զգեստ վատաահութեն 'ի բարի գործս կեմ 'ի մէջ վատանաց ։ Կարգեալ ... անքէղոկործ , անխրկապայելի յուսոյ ամրութեն ։ 2 օրէն ․ անկողոկործ ։

(25) Քո՛ է Քնաւր ։ Այդ ամենայն զոր հայցեմ , քո է առանց նուաստ-ութ ․ և 'ի փէն է ։ 'Ի քէն ունիմ զամ , և մեղ 'ի քէն միայն առաքելի՝ և ոչ յայլմէ , և 'ի ձեռն քո բաշխին հաստատութեմբք ողորմութեան , գանձեալք կեմ զօրութեք ... ամենեցուն կենաց ։ 2 օրէն ․ հաստատութիւնք , ... ։ 1 օրէն ․ հաստատու-թիւնք , համեմատ շնորհք ։

---

Սերովբէին յաւելեալ նրկէն հնծանէ՝ նորին հոգւոյն , առ նոյն տէրս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ․ ՂԳ․

ա․ Արքայ երկնաւոր․ թագաւոր բարձրեալ․ տէր
բոլորից․ ամենից ակնկալութի․ ստեղծօղ
տեսականաց․ հաստիչ իմանալեաց․ [1] պատճառ եղա-
նութեց․ կազմիչ հանդերձելոց․ տուիչ լուսոյ․ ա-
ռիթ առաւօտու․ պատրաստիչ վաղորդայնի․ երեւե-
ցուցիչ երեկորի․ տարրիչ խաւարի․ [2] արուեստաւոր
բարեհնար․ իմաստութե գործօնեայ․ [3] քաւարան օրհ-
նեալ․ հալիչ մեղանաց․ հալածիչ ցաւոց․ քակտիչ
դառնութեց․ պահպանարան հանգստեան․ [4] հնարք
նորհման․ յարմարիչ քնոյ․ պարգեւիչ ննջման․ շնչոյ
յարակարգութի․ զգայութե տեւողութիւն․ ցրիչ
ցնորից․ յեղանակիչ անրջոց․ փոխարկութի զար-
հուրմանց․ այլայլութի տխրութեց․ խափանիչ խիթ-
մանց․ ընդարձակիչ կարծեաց․ [5] համադրութի ծրփ-
մանց․ ահագնութի խարդախմանց․ հարուածիչ դի-
ւաց․ փախուցիչ ախտից․ ընկղմիչ գայթագղութեց ։

բ․ Պաշտպանեալ երկնաստեղծ ձեռամբդ․ զօրացեալ
բարձրացեալ քո աջովդ․ ամփոփեալ ամենակալդ
թեւօք․ ծածկեալ ծածեան խնամօքդ․ ամրացեալ վերա-
կացութե վերնայնոցդ․ շուրջանակի պարսպեալ գու-
մարտակօքդ անմահից․ 'ի յամենօւստ սպարփակեալ

կցորդութե հրեշտակացդ. վանեալ զընդդիմամարտն իմ՝ զկնուորութե զուարթնոցդ. պատսպարեալ զսատանեալս՝ ա՛ծածնիդ մաղթանօք. զբանակս անդրանկացդ՝ 6 բարեկարգեալ ինձ պահապան ։ Բայց 7 ընդ աչացս դիմաց՝ և զմտացս իմ տեսանելիս. զգաստ արա ընդ ոգւոյս՝ և զծանրաբեռն կրիցս դանդաղութի. վերացո տէր 'ի զգայութեցս՝ զմածեալս յիմարութի. բարձ միայն բարեգործ՝ զպատրուակիս թանձրութի ։ Ընդ սկզբան 8 բերմանս լուսոյ՝ զողորմութի քո ծագեա. ընդ ելից արևուն՝ արդարութե արեգակնդ 'ի յանձկութի սրտիս մտցէ. Ճառագայթ քո փառացդ՝ 'ի յիմաստիցս խորհրդանոց ջահեսցի. խաչիդ տեառնագրութի ընդ շունչս և ընդ մարմինս համասփիւռ տարածեսցի ։ Յանձն առնեմ քեզ յաւուրս՝ զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոյս՝ որ 'ի սմին ։ Զի դու ես ա՛ծ անքնին, առ ամենեսին բաւական, և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

---

(1) Պետրոսոս էքսուսիէնց ։ Պատճառ կամ նկարագրծող եղեալ իրաց, որ գոյացեալքն են ։ Կուրիէ հանդէրձիէլոց. յօրինող առաջոյ իրաց, որք մինելոցն են ։ առիթ առաւօտու, պատճառ առաւօտեան ժամուն, յորում ծագէ արեգակն ։ պորփուրիէ վողուրդոյին, ժամուն յորում բարձրանայ արեգակն ։ փարէնէ խուուրէ. գոյացուցիչ գիշերայն ժամանակին՝ յորում ծածկի արեգակն ։ Այսոցիկ ժամուց պատճառ առ Աստ, երրորդ նա առեալ զարեգակն և զլուսին, և զնոցա զելս և զմուտ այնպէս կարգեաց, զի անվրէպ կանոնաւ յաջորդեսցեն միմեանց առաջեաւ ժամքդ, և որպէս առհամանեացն, նոյնպէս պահէ միշտ. ըստ այնմ. * Եթէ խափանիցէք զուխտ իմ զտուընջեան, և զուխտ իմ զգիշերոյ || են. (Երեմ. լգ. 20 ։)

(2) Արուէնոփառը բուրէնոր ։ Ըստ որում ած հնարեաց՝ թէ զուզիցի բան բնութե իւրաքանչիւր իրաց, և թէ զմարդկայինն արհեստս, լուսաւորեալ զմիտս մարդկան 'ի գիւտ այնց, և 'ի բարւոք կիրառութի նոցա, ըստ յոբայ. (լը. 36.) * Ո՞վ ետ կանանց իմաստութի աստուածայնականութե.* են ։ Իմաստութէն գործոնէայ, առ գիւտութեց առաջնորդ, կամ յաջողիչ առ մարդիկ ։ Գիւտ մարդկային հնարութեց ընծ [illegible] խուզի մարդկային հանճարոյ. բայց նորա՝ Աստ է որ զմիտսն լուսաւորէ. այլ և բանն նախկին գիւտութեցն որ յաղագս, Աստ նիւթին է տուիչ ։

(3) Քարոզան օրհնէող ։ քաւիչ մեղաց և պատժոց, այր վասն ամենայն օրհնութե արժանի ես ։

(4) Հնորէ նիւրհման ։ Ըստ որում ած կարգեաց 'ի բնութե կենդանեաց զհաւաքումն գոլորշեացն 'ի խելամարտուկն, որով ծանրանան և թմրին զգայարանքն, այս է՝ նիրհումն. որում զհետ գայ քուն, այն է՝ կապումն զգայութեց. և քնոյն զհետ գայ նինջումն, այն է՝ յարկաւոր հանգիստ

զգայութեանցն, և բոլոր մտացն։ Եւ [illegible] համբաւանաւ մտացն՝ [illegible] յարաժամ[illegible]։ [illegible] 'ի [illegible]։ [illegible] 'ի [illegible]։ [illegible] 'ի [illegible] կամ յարթնութեան։ [illegible]

(5) Համառօտութիւն ծննդոց։ [illegible] կամ [illegible]։ [illegible]

(6) Բարէկարգեալ։ մի օրէն. Բարեգործեալ։ Յետ [illegible] Աստուծոյ, [illegible] 'ի [illegible]։

(7) Ընդ ուշոյ [illegible]։ [illegible] 'ի [illegible]։

(8) Բերմանս [illegible]։ Յայտ է 'ի [illegible]։ 'Ի [illegible] ԱՅ, [illegible]։ [illegible] 'ի [illegible]։ [illegible] 'ի հոգի և 'ի մարմին։

Սերտին յաւիտենական կենաց հեծութեան՝ նորին հոգւոյն առ նոյն տեառն մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ՁԱ.

ա. Իսկ արդ՝ վասն զի [1] արթնականն մեր զուարթութիւն՝ քեզ հնչումն իմն է համարեալ, իսկ 'ի խոր թմբրութի լռելն՝ վասն ուղիղ հաւատոյն 'ի քեզ՝ անթարթափ բացութի աչաց, ուղղեալ հոգւոյդ քո իմաստութեմբ [2] զյաջողուած ձեռինս գործոյ՝ ընդ հեծութե ձայնիս մաղթանաց։ Օրացն տէր՝ 'ի հանդէս բարի ձգնաւորական [3] աւրի վաստակոյ. կցորդ-

լեր կարեացս տկարութե՛. 4 Թեթեւս կացո զաշխա-
տութենս այս սկիզբս. արագեա՛ մի՛շտ կարօղ՝ զյա-
ռաջադրեալ ձեռակերտս. զիւրաւորս ընթացո 'ի
յաւարտումն լրմանն: 'Ի վախճան իւրին՝ բերկրու-
թե՛ զխս հասոյ. ժամանն կացուսցես՝ 'ի հանդիպումն
յաւսոյն. կցորդ լեր ուղղոյն՝ 5 Ճանապարհիս ընթա-
ցից. 'ի Թռիչս ամբարձման՝ փութացուսցես յօգ-
տակարն. ընդ աջմէ իմ լեցիս՝ 'ի վտանգի ծանրու-
թեն. զձայն քո լուռ՛ 'ի յանձկութեն պահու. ձե-
ռամբ քո կեցո՛ 6 'ի կորստեանն ժամու. մատամբ քո
աղդեա՛ 'ի սահմանին անձկուե՛. հարթեա՛ զխոտորոց՝
ամենաչար խափանմանն. հոգեղէնին առաջմամբ,
լուս ամբակումայ, ինձ հնարեա՛. բան ինձ շնորհեա՛
'ի յատենի բազմութեն. իմաստութի յիս ունկեա՛ 'ի
հանդիպման քննութե: 7 Ամպով կամաց քոց հովա-
նացիր հրաշապէս. հանդարտեցո՛ փայտիւդ կենաց՝
զծովուս մրրիկ. սանձեա՛ զաստեաց կենցաղոյս պատ-
կեր՝ քոյին հրամանաւդ. քանզի թէ սաստ ողորմութե
քո տէր՝ կամեսցի, այս լուծութի կոհակաց կարծր
է քան զվէմ. և թէ 'ի ցամաքի անտես առնիցես,
իբր զանկայուն՝ պնդութի յատակիս 'ի ներքոյ սասի
հոսեալ սասանի:

Է. Արդ ընկալ յիս զպաղատանացս ձեռնարկութի
քեզ 'ի հաճութի, և արա՛ ինձ 8 զամենակարծն գայ-
թագղութի մեծ վստահութի: Որպէս 'ի Ջրահեղ-
ձոյց ամենակործանն դարու, որք 'ի հարթ տարած-
ման գետնի առանց երկիւղի յանհոգս կէին, յողոր-
մութէդ ամայի մնացեալ՝ կորուսան. իսկ ընդ հովա-
նաւոր 9 մածուածով լաստիւն յօգնատատան հիմանն
հայթայթանօք՝ յանուն գթածիդ յեցեալ պահե-
ցան. ընդ որս՝ և զաղաչօղս մշտատատան՝ 'ի նաւա-
հանգիստն խաղաղութե մարդասիրապէս պրծեալ
ապրեցո. 10 վարձս 'ի քոյոցդ ընդ իս բերելով հոգևոր
շահից, զստորաքերս այս ստուարութի պարտուցս
լքեալ բանիդ առակաւ, 'ի քեզ տէր անկայց միա-
ցեալ իսպառ անքաժանելի՝ օրհնեալ յամենայնի:
Այլ կցորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամե-
նամաքուրք՝ ընդ հողեղինացն մարտիրոսաց, որք
Ջրով և հրով փորձեցան, և 11 յեւլից զերծմանն ընդ

մեր խնդրեցին, և մեզ յիշատակ թողին օգնութեան, ասասցեն ընդ մեզ համաքանաբար զուգամանութեամբ՝ եղիցի եղիցի։

---

(1) Աւբբանոյանն Ճեր ։ Մարմնով միայն արթուն լինելն մեր՝ առանց հոգևոր զգաստութեան, առաւելն քո խոր քուն համարեալ է․ ըստ այնմ (Եփես․ Ե․ 14․) «Արի որ ննջեսդ ։ || և ընդ հակառակն՝ 'ի խոր քուն կալն մարմնով քեզ իբրև անփոյթ բացումն աչաց համարեալ է մեզ առաւել ուղիղ հաւատոյն առ քեզ, որով աչք մտացն միշտ արթուն են․ ըստ այնմ (սաղմ․ իդ․ 15 ։) «Աչք իմ յամէն ժամ առ Տր ։ || Սկսեալ աղօթիցս յայն հայի, թէ ոչ զի զգաստացեալք 'ի քնոյ՝ կարօղ եմք ձեռնարկել 'ի գործ իւրաքանչիւր, այլորիկ աղաղաւ անկարող իմէջ երեւեմք Այ յաղօթելոյն ։ Վասն զի այս մեր արթնութիւն իբրև զքուն թմբրո համարեալ է առ ած, իմքնին անգործ և անպտղական․ ուր ընդհակառակն՝ հաւատով վստահեալ յած զօրաւոր է իբրև զքուն արթնութիւն, թէ և ոք խոր 'ի քուն կայցէ ։ Վասն այսորիկ ակնոյ է և վասն ցերեկի գործոց պատրաստել առ Աճ ։

(2) Զյաջողեալ ջեռուսն գործոյ ։ Ուսանիք խմացան զպատշաճումն աղօթական գրոցս ։ Բայց 'ի կարգէ բանիցն յայտնի է, զի և այս աղօթք վասն առաւօտեան ժամուն ասացեալ է․ ուստի հայցէ զպատշաճումն ամենայն գործոց՝ զոր յառաւօտն առնելոց է իւրաքանչիւր ոք ըստ իւրում վիճակի և պաշտաման․ խնդրելով զի յաւուր հասանիցէ առ զիւրաքանչիւր գործս ըստ իւրոց հաճոյից․ և զխոստովանութիւն կամ զարդեւելոյն խոստովանեսցէ ։

(3) Ածը վաոփառոյ ։ 'Ի գործ պահոց, ըստու, աղօթակբղութեան, ողորմութեանց, են ։ Զօրացո ասէ՝ յորժամ առաւել կայցէ իմն ձեռն արկանել 'ի գործ առաժամանելի և բազմավաստակ, թէ առանձնաւոր գործ իցէ, և թէ հասարակաց ։ Եւ եթէ ոչ իմքնին ծանր իցէ, այլ առ իմում տկարութեան, գոն լեր կցորդ ։

(4) Թեթևս'ս կոցս ։ Օգնելով տկարութեան՝ թեթևս արա իմն զանկինն առաջ աշխատութեան․ կամ, փոխադրութք հոլովոյ, թեթեւացո զաշխատութիւն ակնցանս․ որովհետև յամենայն գործս՝ ակնկալն առաժամանելի է միշտ․ և առընթեր, յառաջնեցո զառաջնոյ ձեռնադրումս ։ Գնալով յառաջ, գնալով յառաջ ի վճարումն գործոյս․ և այնպէս խնդրութք հասեալ 'ի կատարումն երանցն, և 'ի հանդերձեալ յաւուրն, 'ի ստացումն յաւիտենական կենին, կամ օգնական՝ զոր ակնկալեմ 'ի գործոյ աստի ։

(5) Ծանօթութիւնս ընթացից ։ Ընթացից սկսեալ գործոյն, կամ, ուղղութեան, զոր վասն հոգևոր կամ մարմնաւոր գործոյ առնէ ոք ։

(6) 'Ի կորուսեանն ժամու ։ Յորժամ վասնդ իմն լինիցի ։ 'Ի սահմանեալ անյ-կոյթ է․ 'ի ժամու դժուարութեան գործոյն՝ մտաւորաց օգնեա ։ անծանօթ խափանմանց․ բարձ զարգելս միտաւորաց խափանմանցն, հոգեւորին առաջնորդէ․ առաքելաց հրեշտակին իմն ճարտիկ շնորհեա 'ի օգնութ, կամ յայլ անհնարին դիպուածս, որպէս գանձելի արարեր 'ի ձեռն ամբակումայ ։ 'Ի հանդերձեալ փնտուց․ խմաստանացո զիս 'ի քննելն զբանս Տր գրոց, կամ զձշմարտութիւն հաւատոյ, և զմոլար վարդապետութիւն ։

(7) Անզօղ խափանաց ։ Զանցս խորամանկութեանց ընդ ծածկ կարգիր՝ յարգանաւէ 'ի բանիս․ 'ի նաւասարկելն իմ ասէ՝ աստ խաղաղ ճանապարհս հոգւոյս լիցի․ և զդարձութեամբ Տր խաչին հանդարտութեամբ զհրդեհս․ ամպեղէն ձեռնամբ դիւածոյ․ որ է սատանայի վաղաղեալ կենդանութ ։ Վասն զի յաջորդէ․ քո՝ լոյծ տերե

ծովու կարծր լինէին քան զվէմ. նաև եթէ 'ի ցամաքի անուշս առնէր ջուրս, անդրդութեան զերանոյս ինքն զանկայան ինչ 'ի խորոց անոր թուլացեալ տառախի :

(8) Զանձնալքեքս : Զայս էրկիւղալի գայթակղութիւնն կամ վտանգն՝ փախեան 'ի մեծ վտանգութեան. մի օրէն. զանձնալքերերն. կը զայս կարծր կամ զժուարին առզերը գործոցս: Եւ որ առ, զզաղափանոցս ջնջանորէն եէ, կը կարգեալ բան. մի օրէն. զնէ՝ յոյսարինութէ :

(9) Մահաառածոհեգրոփին : Տախտակաձեւ շինուածով տապանին, յօ- նափոխ հինման հայեցողութեամբ, նախատիպ շարժական հնման տապանին՝ որ տառմանէր 'ի վերայ Լուսոյն :

(10) Վարժս 'ի փոյոյ : Աշխատաւոր գործս բարեկաց ընդ նս բերելով 'ի քո հողեր շնորհացդ. որպէս նոյնանքն զնա կենդանականն հանին 'ի աս- տանէն քեզ 'ի պատարագ, զոփորաքեր այս, զմաքրահամ ծանրութեան պատարագն՝ առաջ թողլով, բանիւ առաջին, բառ նմանութեն յիշատա- կեալ բանիւ փրկութեան նոյն. որ զատալոյ կալզութեան տապանին եթող, և միայն զնա պատարագիցին եկեալ, քեզ յանդիման եղև: Հէն լուծ. 'ի յանհրապն յարէ զայս, որպէս թէ առ հայր ասեն. բառ օրինակի բանիւ 'ի քեզ միացեալ հայր, որպէս և նա. զի ասաց. հայր զու յիս, և ես 'ի նա. զի և նոքա 'ի մեզ եղիցին: Այսպէս մեկնէ, ոչ համեցեալ թէ առ քեզ է առօթքս. որպէս և ասացեալ 'ի հանդերձ է. Արդ՝ ընկալ զս զզա- ղափանոցս, եւն: Վասն որոյ բառ այդմ մնաց առաւել ես, և առ քեզ ուղ- ղեալ, այսպէս խոնարհելի է. Ը բանիւ քո քեզ որովհանեցեր, եղիցին 'ի մեզ, միացեալ և ես անբաժանելի :

(11) Ցեղից մէրմանն : Մարդակերպութեան որք 'ի մահուան խորհրդոյն վասն մեր խորհրդեցին, և յիշատակ օգնութեան թողին զնորա և ընծայող նորածնոյ, համաձայնութեամբ զուգանմանութեան, միանձայն երգոցութեամբ տասցեն ընդ մեզ. Ամէն :

---

Սերովբէին յանդըլաւած հրէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի :

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ. Ձ.Օ.

ա̄. Ընդ այսր հառաչանաց թախծութեան ողբոց՝ 'ի բազմաց կերպից չարակարգելոց, և ամենից հոգւոց ողորմեալ, գովեալ և երկրպագեալ Թագա- ւոր: Նաև այնոցիկ առաւել՝[1] որոց հասեալ է անկեն- կալութեան փրկութեան կենաց. որք նմջեցին անպատրաս- տաբար՝ չիջեալ լապտերօք իւղոյն պակասութեան. Նա յիշեա տէր իմ գթութեան, և [2] 'ի յայս ևս պատ- ճառ իրաւունս ինձ գրեա: [3] Բանզի թէ և 'ի փառս աջահարութեան ազանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանե- դերձեցեր զկազմած մարդոյս, [4] զամն ծանր՝ և զամն թեթև. զմին զօրն և զմիւսն հրայրին. զի դիմադրու-

թեան 'ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդար կոչեսցուք հաւատարիմ հաւատարութեան. [5] և 'ի յայսմ դարման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձելոյն, գխոնարհութեան առ կաւն դիտման անմոռաց պահեալ՝ պսակ ընկալցուք Ճգնաւորական ։ Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, և անառանաբար սահեցմամբ ըստ հողոյն գիջման՝ ընդ երկիր մածաք, [6] այլ ոմն ախտիւ, և այլ ոմն անգթութեամբ, միւս մասն մոլութեամբ ամենաբաղձ կերակրոց՝ իբր գազան մշտաբոյծ՝ յարակայ կապեալ ընդ բնութեանս ։ Նաև 'ի քառիցս՝ [7] ոմն անըմբռնելի և անողոքելի սլացմամբ 'ի բաց ոստուցեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնումք տապով սիրոյն որ 'ի քեզ՝ նշխարաւբոցոյն որ 'ի մեզ, ցուրտն առընթեր կենակից նմին՝ զնոյն կասեցուցեալ, բարւոյն ընդմիջէ. եթէ օդականաւն հրեշտակայնովն յառիցիմք 'ի քեզ, ծանրութե թանձրաւ անդրանիկ նիւթոյս այս հողոյ՝ 'ի ստորև քարշեալ խափանէ ։

Է. Եւ արդ՝ [8] յամենուստ պարտեալ և խպառւքեալ՝ իբր զապիկար հաշմեալ հերքեցայ կորեայ վանեցայ. վատնեալ 'ի բազմաց՝ 'ի մահ գրաւեցայ. վասն որոյ 'ի պարգևականէն զրկեցեալ՝ յողորմութենն կողմ նայիմ. և պատկառեալ դիմօք համայնից անօղս՝ զընաւուց աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կորստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ զօրելի է. նա զի՝ և ընդ անտկար կարելոյդ՝ և կամելդ է ախորժելի ։

Ը. Արդ՝ այսց [9] երկուց բարդաւած շնորհաց նորոգչաց՝ առ միմեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձեալ եղիցի և յուսահատութեն վհատութի ադաց մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս՝ հոգւոց բժշկութե քումդ հրամանի՝ տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

---

(1) Որոց հոգէւոր է ։ Անսակքի է կարծել, թէ այսու բանիւ խնդրիցէ նա վարդապետս ողորմութի վասն յուսահատ և անզեղջ մեռելոցն. զի այդ ոչ միայն օտար է 'ի Ճշմարտութէ, այլ և հակառակ բազում բանից՝ որովք նա վարդապետն յաղօթս իւր ցուցանէ, թէ անզեղջ մեռելոցն չիք ողորմութի 'ի հանդերձեալն. որպէս 'ի բանն ԿԹ. 2.

* փափկութիւն գեղոյն, և պայծառութիւն առաքինութեան ։ || և զկնի ․ 3 ․ * Որք զըրանն բարձեալ ոչինչ առնիցէ, մինչ եղեալ զծուլութեան առ իս ։ || և զկնի ․ Հաստատեսցուք հեծութեն, ևն ։ (տես և 'ի բանն ձա ․ լծ ․ 8 ։) Այսպէս հարկաւոր ըստ այլ միտս անկանողէ առաջնոյս ։ Ոմանք խոնարհն՝ ոչ զմտանել մարդոյ, այլ զխնդամանեցն՝ որք 'ի քուն ծուլութեան նշեն ։ Բայց զայլագունեալս ոչ ճշմարտի առնել, թէ հաստատել է անհնարութեան փորձութեան ․ և նոյն խոկ մտաւ բանին յուսացանէ՝ թէ վասն մարմնով մեռելոց է աղօթքս ․ զի ասէ, Է այլ խնդրուած՝ զոր զմտաւորն օրհնական կարգեցի, ի մեծից հոգւոց ողորմած ․ որպէս թէ առնել, վասն կենդանեացն բարեփոխեալ ազատագութեան, այժմ և վասն մեռելոցն ապաքինել ողորմել, մանաւանդ վասն այնոցիկ հոգւոց՝ որոց անհնարութեն փորձութեն պատահեալ է ։ Վասն որոյ խնամողն է բանս վասն այնոցիկ, որք 'ի մեղաց զղջացեալք, ծուլութեն կամ արտաքսման մահուամբ փոխեցան յաշխարհէ՝ առանց ապաշխարութեն ․ որոց ոչ ևս մնայ յոյս՝ խաբէութեան արժանաւոր գործովք փրկել 'ի պատուհասից արդարութեան ․ այլ կերպ պատժոցն մնացելոց ․ և 'ի սոյն միտս յարէ, որ+ ննջեցելոյն անպատրաստ‐ պաճար, այսինքն առանց ապաշխարութեան բարի գործոց ․ զի թէպէտ ապաշխարէ հաստատեն ոգիքն, և զարդ առ փառս զի ննջեցելոցն՝ յաւա‐ նելով է առաւելապէս, այլ չունելոյն զնոյն բարեգործութեան ։ Այլ յաղագս հաստատութեան ասէ՝ առաւել այնու ողորմութեն ․ զի որպէս ասէ 'ի բանն ․ հզ ․ 1 ․ * Ահա է ողորմածն խաղաղէս, յորում հաստատ անհնարութեն վասն նոցա ։ || Այլ զի յիշեսցես զնոսա ըստ իմ, ևն ։

(2) 'Ի յայս նոր զորձոյ ։ Ոմանք մեկնեն, այսու պատճառաւ՝ զի մեծ այնպիսեաց հեղեղացելոց ողորմութեն հայցեմ, զաւ և խոստմունս հաստատեալ ճեմ ողորմել ։ Մարթ էր և այսպէս մեկնել ․ այսու պատճառաւ, զի ողորմեսցես այնպիսեաց, 'ի մեռոց իմ նոր խոստմանս բարերարութեան գրեալ ․ կամ, զի հաստատեալ քեզ պատարագեալ ։ Սակայն առաւել հաստա‐ տոյն կարգի բանին այսպէս խոնարհել է ․ թէպէտ և չնչատակեալ ան‐ ապաշխար մեռեալքն անկեալ են 'ի ձեռս արդարութեան քո, և վասն հեղձ կենդանեացն չեն արժանի ողորմութեան, բայց զաւ յայս խնդրեմ իմ առեալ ճեմ խոստմանս, կամ խոստացեալ հաստատեալ, հաստատեալ 'ի գթութեան քո, որում բաւական է և փոքր խոստմունք ։ Զպատճառս խոստմանցն 'ի յա‐ ջորդն յուցանէ ։

(3) Քանզի ԲԿԿՆ Դի ձառս ։ Հաստատուն խոնարհ բարելաւեցաւ բանն ասա‐ ցեալ աղօթիցն ։ Թէպէտ և 'ի ցոյց ողորմելի ողորմութեան քո՝ հաստատեալ առ‐ բերեալ յարգելեցեր զմարմինն մեր, զի հաստատութեն մեղացն՝ մինչ նոր‐ հաստատն չառնաստալ, պահեսցի 'ի մեղ արդար հատուցումն՝ թէ 'ի բնական տառապանութեն, և թէ 'ի բարոյական ուղղութեն ։ Բայց քանզի անմահանալոյ փրկեցաք, նոյն խոկ հաստատեալ առաքեալս խոստման ներ‐ մեղ առ բարին ․ զի յորժամ հասեալ մերոյ Յերուսաղեմի, զգացումն Յորդանան չի‐ Յոյզանէ, ևն ։ Վասն այսորիկ 'ի կարգնութեն մերում մեղքն առաքեալ նեղեալ՝ կամ արդարեսցն բարութեան, և հաստատեալ 'ի չարն ։ Եւ յայսպիսի զի մահկանացութեն անկատարեալ մեղանչեցաք ․ և հեղձամանք 'ի գործս ապաշ‐ խարութեն ․ և յայնժամ պատճառաւ զմիւսքն նորոգելի ողորմութեն ։ Այս այս է խոստմունքն՝ որոյ վասն հաստատեալ խնդրել ողորմութեն վասն անա‐ պաշխար մեռելոցն ․ զի յուսոյ և Թանկագին ծառութեամբ մեր կատարեսցի գիտաւ 'ի փառաւորեալ ապաշխարութեն ։

(4) Զամենայն ծանր ։ Առաջինոր ամն և ամն ոչ զմտանել առնի, այլ զառաջելոյ ․ զամենայն 'ի հաստատութեան ասէ՝ եղեւ ծանր, այսինքն զհոգին, և զմիւսն ԲԵԵԱ, զոգին ։ զմիւս՝ զոր, զալով, այսինքն զհոգին, և զմիւսն կրեալն, Ջեր, այսինքն զհոգին ։

(5) Եւս ՚ի յոյժ դարձեալ ։ Եւ այսու զառաքինութեան առաքինութեան, որ հաստատութեանցն, վերաբերեալ ընդ ամենայնիւ, ՚ի վերայ նորա կամ ՚ի բարձրանալն ընդ հոգւոյն որ վախճանականն է. ՚կամ, ընդ ամենայնիւ, այսինքն ընդ հոգւոյն՝ որ ՚ի բարձրն զնաց, զխոնարհութիւն առ իւրն, զխոնարհութիւն և զհնազանդութիւն մեր հայեցականք առ հող մարմնոյն՝ ամենաւանդ ապաշխարութեամբ. որով ընկալցուք զկատարութեան ճշմարտութիւն ։ 3. օրէն. և հին բան. և ՚ի յոյժ ՚ի դարձեալ. և մարթ է մեկնել. այսու առաջնորդք կամ ընտրութեանց առաքինութեան ։

(6) Այլ ոմն ասէ ։ Իսկ զանաստուածս ՚ի հողեղէնս յարեցոյց, անձն ամենայն զկերութեն մարմնոյ, որ յառաջնորդութեն ջերմոյն և խոնարհն ընդ նմա ։ և այլ ոմն ասէ. մեծամն՝ բարեկութեան, որ ՚ի հոգւոյն մարմնէ ընդ նմա, և ՚ի զօրութեան՝ որք օգոյ նմանն խառնեալն զնեղեալն. և այլ մեծամն՝ առաջնորդութեան, որ ՚ի յանդգնութեն կամ ՚ի յղութեն հոգւոյ ընդ, կամ յանդգնութեն ջերմոյն՝ որ առաւել զկերակրութեան ։ Այսպէս խաղաղանալն հաստատեալ կայ ընդ նոսա, ընդ բնական խառնուածոյս՝ իսկ զանազան մարմնոյն, միշտ անուանեալ յիւր առաջնորդական կերակրոյ ։ Այսու բանիւ ոչ եթէ առանձնակ զբնական խառնուածն, կամ զնոսա առնէ աղաւաղեալ խաղաղանալ մնալութեանց. այլ զի մարմին անառաջնորդ վարեսցել, բնա ընդ բնական խառնուածոյն զործէ, և առանձնայ զխոհութեանն ։

(7) Որք անօրէնէին ։ Պատմէ՝ զի ՚ի չորից առաքինութեանց՝ կէս ՚ի խառնուածոյ՝ մեծ անասնական ընկերութեան թշնամութեան բանականին, ՚ի բաց վարէ ՚ի միաբանութեն այլոցն. և իւր վարդենոյ՝ ամբարտաւանէ ՚ի վերայ հակառակին ։ Որպէս եթէ երբեմն ջերմութեամբ ՚ի ասէր քո բնական կամ զերբնական ՚ի ձեռն չնորհաց քոց, նշխարաւ Քրիստոսի՝ որ ՚ի մեզ, մեծացուցեալ ջերմութեան՝ որ ՚ի բնութեան մերում, յղութեան որ առ նմա է միշտ, մեղկացուցանելով զնոյն, Քրիստոսի ընդդէմ, արգելեալ կամ խափանեալ ընդ բարւոյն ։ Երբեմն օտարական հրեշտակաւն, օդայինն թեթեւութեան կամ նորա թէին՝ որ է նմանութեան հրեշտակի, կամ հրեշտակայինն վարուց, յանտեսնէ ՚ի ներքս, մարդ առաքեալ թռչելով, ծանրութեան թանձր հողոյս ՚ի վերաքարշեալ խափանէ ։ Իսկ անօրինեն նոքա անսալ զհոգին, այն է՝ զի յառաջինն արարչութեան նախնեացն յիշատակի ընդ անուանեալ երկրի. և զի ՚ի կատարման մարդոյ՝ հոգին առ առաջինն հիմն և նոյն մարմնոյ ։ ( Ծնն. Բ. 7 ։ Ա. 19 ։ ) Բայց վասն անձնոյն առաջնորդ ծանօթ, զի ոչ վարդապետեան ոչ եթէ զօրաւորութեամբ առաջնորդն հանճարն բանս ինքեան աղաւաղեալ բարւոյն կամ չարին ՚ի մարդն, այլ ՚ի բնական զխոհականութեն նոցա բարեպաշտ խորհրդածէ զխոհականութեն բոլոր և յօժարութեանց հոգւոյն և մարմնոյն. քանզի այսմ բարոյական զխոհականութեն՝ բարւոյն ամ զամ բան աղաւաղեալ աղաւաղեալ ընդ զխոհականութեն առաքինական, յօժարամ բանականն կամ հակէ, և կէս անհնազանդ ՚ի կամանել զնոսա ։

(8) Յանձնառութ զորքեալ ։ Յանձնառոյն կորուսանէ, կամ յանձնառոյն զործս յաղթեալ վասն հակառակութեան յօժարութեամբ, իբր զազիկոք հալածեալ, իբր զանկար ոչ կծկեալ անդադարն, հեղձեալ և վատնեալ ՚ի բարւոք, զի ՚ի բարւոյն բարեաց, կամ բարւոյն փորձութեանց և մեղաց ։ Վասն որոյ ՚ի զորքերոյն, յառաքինական վարուցն զերծեալ, որով արժանի լինել աղաղակող վարձուն, առաջնորդեալ ՚ի կողմն աղօթութեան ։ Եւ առնօտս անձնեցուն մեղաց՝ ամբարտաւանեալ զնոսա՝ ՚ի նոյն կենդանեաց, վասն անձնոյն մեռելոցն՝ որք քեզ կենդանի են. ( Ղուկ. Ի. 38 ։ ) Յայլ առաքելոց եղեալ էր որոշումն, զնոսա ՚ի նոյն կենդանեաց. որպէս թէ և մահուամբ մեռեալ կենդանեաց՝ որք առ սոյն մեռեալ են ։ Բայց զի նոյնպէս ընդ առաքելոցն՝ յաւելեալ ՚ի զկեղծսն ։ Փառաց կարող են և հնազանդ՝ և խորհրդածութեան բարի իւր մեռեալն. իսկ զի՝ արժանի կարա_

տեսան եղեալ մեռելոյն , այսինքն որք էին եւ զնա ասացից բարի գործոց նմինեցին :

(գ) Երկնից Բարեխօսն ընդհանուր : Ցուցանէ մխիթարանացն կարելը և կամելը , ( որք են երկու ատամ և անարատ շնորհք աստուածայինք , ըստ որում աստուածաբանութեան նկարագրեն 'ի մեր զամենայն շնորհս , ) այնուհետև բարձրացեալ յաստուածութիւնն վճարութեան , ըստ այնմ յուսոյն՝ որով ըստ գործոց իւրեանց իւրաքանչիւր 'ի վերջում ժամուն մերձեցուցեալ՝ թէ կենդանիք , և թէ մեռեալք . զի ոչ կարեն անձամբ արդարանալ 'ի մեղաց , կամ ազատել 'ի պարտեաց մեղաց : Վասն որոյ յարդարադատութեանն քո զմեղաւորն յառաջ կենաս , և 'ի թողութեանն զպարտս մեղաց 'ի համբերանաց , այսոքիւք ցուցանես զզօրութեն քո , և զկամս բարերարութեան :

Մեղաւորին յանցուցեալ զբերեն հեծութիւն՝ նորին հոգւոյ , առ Նորա ողորմ մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ :

# ԲԱՆ. ՁԱ:

ա. Եւ արդ՝ քանզի 'ի գլուխ կատարման հասեալ սակաւամամանեայ կտակի այսր ողբերգութեան, արամ տէր՝ վախճան դադարման առնուլ [1] ընդ այսց բանից մաղթանաց՝ ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք . Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց ակնկալութեան դատապարտելոյս՝ առնելով, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչիցի մի ոք 'ի փոքրկանցս . և դարձեալ, այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից :

բ. Այս օրհնեալ ես 'ի գթութեան . բարեբանեալ միշտ 'ի քաղցրութեան . խոստովանեալ յերկայնմտութեան . ծանուցեալ 'ի յայտնելութեան . քարոզեալ տէր 'ի փրկութեան . Ներբողեալ դու յառատութեան . պատուեցեալ 'ի պաշտպանութեան . [2] փառաւորեալ ես 'ի փրրկութեան . երկրպագեալ յանբաւ բարձրութեան . պաշտեցեալ 'ի յանքննութեան . գովեցեալ միայն 'ի յաղթութեան . վերաձայնեալ 'ի մեծ զօրութեան . խնկաւորեալ յողորմածութեան . համբուրեցեալ յանճառ հեզութեան . [3] Ճաշակեցեալ 'ի խոնարհութեան : Ընդ քեզ և ծնօղդ քո երկնաւոր հօրդ [4] բոլորից մխիթարութեան . ըստ որում հոգիդ քո նոյն բարութեան , որ զանեկեալ [5] զզօրաւոր թշնամւոյն՝ և զգայթագղեալ մարդն

անբանութե՛ն՝ կանանեցեր ոչ անտես առնել։ Որոյ [6]
երախտիս հզօրիդ 'ի յիս, և առաքինութեն մեծիդ 'ի
բարձունս տօնեալ անդադար յանվախճան փառա-
բանողաց. որովք զայս ձայն աղերսական յարգեալ
ընկալցիս՝ մարտիրոսացն պաշտամանօք 'ի հոտ հաճու-
թեն բուրման անուշից։ Նաև այսու [7] փրկանօք հաշտա-
րար բանի՝ զնախնեացն պարտս և զաներևոյթ վէրս՝
միջնովքն և վերջնովքն մահացուցանողօքն զանձն և
զմարմին բժշկեա՝ ամենակարող, զներքինս և զար-
տաքինս, [8] զտիպքն և զգիծքն, և զխարանս հարուա-
ծոցն. բարձեալ և մաքրեալ դեղովք ողորմութեդ-
զկտեալ խածուածս բազմագունիս, որք գարշելիս
ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զէութի բնու-
թեանս։

Գ. Նաև եթէ [9] հասից յամս ծերութեն քո առաջ-
նորդեալ՝ արժանիս մահու, մի թողցես զտկարու-
թիւնս. մի անարգեր զալիսն. մի կորացուցես ըղ-
կործանեալն. մի զիջուցես [10] զկքեալն. մի վայրա-
բերեր զխոնարհեալն. մի շնչման հողմոյ մատներ
զառկայծեալն. մի ընդպահկեսցես զդեդևեալն. մի
անվերարկու առներ զասռուցեալն. մի անդարման
լիցի տագնապեալն։ Մի առանց տածելոյ՝ [11] յարկն
խարխալեալ. մի անպատիւ՝ պատկերն հնացեալ. մի
պարարտութիւն անհամեալ. մի շուք շնորհին անար-
գեալ. մի հնութիւն քամահեալ. մի նաւ հոգւոյս ա-
լեկոծեալ. մի երկարութի յուսոյն կորեցեալ. մի
լար շաւիղին խզեալ. մի ուշ իմաստին բարձեալ. [12]
մի գոյին կազմած զեղծեալ. մի ամբարձմանն թևք
փետտեալ. մի զուարթութի դեղոյն տգեղեալ. մի
ճաճանչ նշուլին քաղեալ. մի պատուհանք աչացս
փակեալ. մի լուսաւորութի նորին խափանեալ. մի
պատկերն խօսուն անկեալ։ Ահա աղաչեմ զքեզ՝
բարերարութ, ամենայն որբովք պաղատիմ, [13] լուր ա-
ցին ինձ կանխաւ, զի զանագանն մի մոռասցիս։ Դու
առաջնորդեցեր ինձ, ըստ սաղմոսողին, և ապրեցու-
ցեր, հան տէր ընդ երգողին՝ և 'ի կարծեացն կա-
կածանաց, յորմէ երկնչիմ։ Եակ ես չեմ արժանի 'ի
քէն՝ և ոչ [14] հատարականն կերակրոյն վարձու,
այլ դու կարօղ ես ավօրաբար՝ և առ զըլացօղս բա-

ընդարձել ։ Որ են զարմանալիք անճառելից բարեաց՝ միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտութի, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ համապազ՝ յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

---

(1) Ընդ այսոց բանից ։ 'ի կատարման աղօթական գրոցս՝ զոր և [illegible] [illegible] թիւք իմ [illegible] ։

(2) [illegible] ։ մի օրին․ [illegible] ։

(3) [illegible] ։ Այս քո առնէ, [illegible] խոնարհութեան, և ոչ [illegible], որ և 'ի խորհուրդ [illegible] 'ի մէնջ անճառ խոնարհութեանն ։

(4) [illegible] ․ ընդ քեզ օրհնեալ է առնէ՝ և Հայոց [illegible] [illegible] ։ 2 օրին․ [illegible] ․ [illegible] է, [illegible] ․ որպէս և [illegible] օրհնեալ է ընդ քեզ ։

(5) [illegible] ։ Եղեց իե․ 5․ 'ի մեր [illegible] [illegible] ․ [illegible], [illegible], [illegible], և [illegible] ․ որպէս [illegible] ( Համեմատ 4․ ) [illegible] [illegible] ։ [illegible] ։ 'ի [illegible] [illegible] 'ի [illegible] ։ [illegible] թեան ։

(6) [illegible] ։ [illegible] 'ի [illegible] ․ [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] ․ [illegible] ։

(7) [illegible] ։ Այսու [illegible] ․ [illegible] ․ [illegible] ․ [illegible] ։ [illegible] ։ [illegible] ։

(8) [illegible] ։ [illegible] ․ [illegible] ։ [illegible] ․ [illegible] 'ի [illegible] ։ [illegible] 'ի [illegible] ․ [illegible] 'ի [illegible] ։ [illegible] ․ [illegible] ։ [illegible] 'ի [illegible] ընդ [illegible] թեն, որք համարելի են այ ։

(9) Հաւոյ յանձ ․ Խոնարհութիւն բանիւս՝ չէ եւս 'ի խոր ծերութեան հասեալ այն վարդապետական 'ի յօդինել աղօթիցս, Թէպէտ եւ բառ հասանական հաւ_ շուէ՝ ունէր յայնժամ գտնել ամս վաթսուն․ ամս Ցիշատակարանն : Եւ ոչ կենաց, այլ մահու ասէ՝ արժանի եմ․ բայց եթէ քո կամօք հասից յամս խորին ծերութեան, այժմէն աղաչեմ, մի՛ անխնամ թողուր զտկա_ րութիւն իմ․ զի յայնժամ առաւել կարօտ եմ քոց խնամոց, յորժամ ջիլս յաւէտ տկարացեալ՝ սակաւաւորոյն 'ի մարդկանէ գտանեմ հոգա_ ցուն : Եւ ասա այլ եւ այլ բանիւք 'ի կարգ. աղկանէ զխնամածս եւ զմխիթա՝ տոյց նորքոյ անկեալ է հասակին ծերութեան, է՛ որ 'ի բնութենէ, եւ է՛ որ 'ի մարդկանէ․ զորս ինքնին երջանիկ աղօթաւորս անուանեալ եւ էր յայլ ծերս․ եւ այնու խոնարհ որչափ առանձին անուշութեան ակներ ունեցի այդ հեծեծօսրոյ, զի մի՛ 'ի ծերութեան կորուսանիցէ զոր յերկարատեւութեան վաստակեաց, նմանեալ ճանապարհորդի՝ որ անվտանգ հասեալ դէր_ կայն ուղին, առ դրան անդ կործանիցի : Այս աղօթք են կարեւոր ամե_ նեցուն, կանխագոյն եւս ասացեալ 'ի սաղմոսերգու մարգարէէն․ * Մի՛ մերժեսցես զիս տէր 'ի ժամանակի ծերութեան, 'ի պակասել զօրութեան իմոյ մի՛ թողուր զիս : || ( Սաղմ․ Հ․ 9 : )

(10) Չէօէաղը : Զթիւրեալն մարմնով, զկծկեալն, որոյ բազմանցն կո_ րացեալ է : ընչման հողմոյ․ զկեանս ծերութեան՝ որ իբր ձրաց առկայծեալ մերձ է 'ի շիջանել, մի՛ առար յանկարծ պակասել : Մէ ընտղտահկէօյէօ զէէ_ տէէսըն․ սովորաբար մեկնի, մի՛ հերքեր, մի՛ մերժեր, մի՛ անտես առներ զդողդոջեալն․ բայց Թ այլում՝ եղանէ առ 'ի բառէն՝ դուհօյ․ ( այսինքն անկարիւոյի բանդվածն․ ) յորմէ նշանակէ՝ մի՛ բանադատեր 'ի գնալ, կամ մի՛ ծանրաբեռներ զդողդոջեալն 'ի ծերութենէ, կա՛մ յայլ ցաւոց :

(11) Ցորէն խօրխօշլըօ : Զծերութիւն նմանեցուցանէ զանդադան իրաց ապականելոց․ եւ 'ի խնդրելն՝ չառնել անպտուղ կամ չանարգել, զնծայեն խնամսն ասէ չպակասեցուցանել, եւ ոչ եթէ զառ 'ի մարդկա_ նէ պատուիւն խնդրէ : Մէ դուբլըփանիէն, մի՛ երբեք զկծուեալ իւղ անպիտան թողջի : Մէ ջաւէ ըննօբիէն․ մի՛ յարգ. զերեղեցկութեան անտարբերացի : Մէ էրէխ_ բունի յօւսոյն․ երկարութեան յաւուց վարձուցն՝ որով 'ի ծերութեանս յեր_ կար ապառնեմ, մի՛ կարծեցի անվարձ մնացեալս․ կամ, մի՛ վասն երկարու_ թեան թուլասցի յոյս իմ : Մէ յէր չաւուշլէն․ լարին՝ կամ չուանն, որով ա_ ռաջնորդիմ 'ի ճանապարհս, մի՛ խզեսցի, այսինքն հաւատքն, լու_ սաւորութիւն մտաց, եւ այլն :

(12) Մէ գօյնի կալմըշ : այլ օրինա․ կալմըշ․ այսինքն կաղկեւծ մարմ_ նոյս, կա՛մ զգայութեանցս մի՛ խանգարեսցի : ամէօգրջմանն բէնէ․ բազուկք եւ ձեռքն մի՛ լիցին անպիտան իբրեւ զխեռանեալ թեւս թռչնոց : Ճաճանչ նշա_ նին․ մի՛ լոյս աչացն նուաղեալ : Եւ դոփուհանէ աչօղս, սրտատեսանելքն թալկանալով մի՛ փակեսցին․ եւ մի՛ լուսաւորութիւն աչաց խուֆանելու, ըն_ ծայ ինձ՝ որք արտաքուստ խափանեսցեն զտեսութիւն : Եւ մէ դոփխէրն խօ_ սուն, կենդանի մարմինս անկեալ դնիցի անդամալուծութեամբ, կամ ան_ կարութեամբ 'ի շարժիլ :

(13) Լօր օօյնի էնչ : Լէր ինձ յայժմու աղաչանօս՝ նախ քան զծերա_ նալն․ դի դանափանն, զխնամս քո որ 'ի ծերութեանս՝ մի՛ մոռասցիս․ կա՛մ, այսու աղաչանօք՝ զոր կանխաւ մատուցանեմ, յիշեա՛ եւ զանդադան ա_ ղօթսն զոր ցանկամ առնել 'ի ծերութեանս, բայց դու ցէ չկարիցեմ յայնժամ :

(14) Հաստարօխօխան կէրակերոյն : Թէպէտ եւ չեմ արժանի նաեւ վարձու հաստատուն կերակրոյ իբրեւ զվարձկան, բայց դու կարող ես ոռնըրբաէոր, Թ քում սովորութեան նաեւ առ ղըլըօյօղը՝ առ ապերախտս՝ բարիս առնել․ վասն զի փօ էն ղօրմանէլի․, դու առնես բարիս անձնաւս, եւ առնես

պաշտօնէից օրինակաւ 'ի պարզմտութեան ամենայն մարդոյ. և առաջնորդին 'ի գործ ոք և իցէ երկայնմտութեան առ մարդիկ՝ զոր միայն նա կարող հաւա- տալ: Ո՛չ մարդիկ, և ո՛չ հրեշտակք կարացին այնչափ ժուժկալել 'ի մեղանչողութեան անապաշխարողաց Այ, որչափ ինքն Այ ոչ միայն ժուժ- կալէ, այլ խնամս եւս յաւելու՝ փոխանակ ապստամբութեան. և ինքնին խոկ ապաշխարել ցանկացողաց զառաջին ստամբութեան Եղիայի, և զհրեշտակսն առ Դաւիթ: Ցայս բարերարութեան ընկալաւ իւր գործակիցս Այ 'ի հրաշագործել. աղօթելով և՛ մարդկան, և՛ հրեշտակաց գործել մեծա- մեծս 'ի վերայ քան զկար բնութեան. բայց յերկայնմտութեան առ յանցաւորս՝ միայն Այ է հրաշագործող: Վասն զի Այ միայն է որ յանցանս առնէ զմեղս, և յանցանս ապաշխարութեան իւր. նա միայն կարող է և՛ զարժա- նի պատուհասն՝ և զպարգևահասն 'ի վերայ ածել անապաշխարողաց յաւիտեան և իցէ: Այլ 'ի վերայ այսր ամենայնի ներել յանցաւորին, առնել ժա- մանակ, գարշելիս նորա մոռացանել, ո՛չ առաքէն 'ի վեր է քան զամե- նայն հրաշս, և միայն ամենազօր բարութեան սեպհական: Այսորիկ աղա- գաւ ընդ ամենայն անուանս գասեալ է 'ի գիրս և երկայնամիտ կոչումն. և նոյն ձայն որ խօսեցաւ առ Մովսէս, յայտնելով նմա զիւրական ա- նուան Որէն, զբազմագթեա կոչեաց առ նա՝ ողորմած, երկայնամիտ: ( Ելք. լդ. 6: ) Ցերեւի այսպէս կատարեալ աղօթիցս՝ միայն հրաշագործ զԱյ առնէ առ երկայնմտութեան. և այս ո՛չ 'ի միում կամ յերկուս, այլ առ ամե- նայն երկայնմտութեան. զի չէք խտիր մեծի և փոքու. այնպէս հրաշալի է երկայնամտութիւն Այ առ Դաւիթ, որպէս և առ Նաբուգոդոնոսոր. մի՛ թէ չկարիցէ զարմանալ ընդ երկոսին, կամ ոչ օրհնել զերկայնամտողն յաւիտեան: Տե՛ս և բան լգ. լծ. 37. 38: Սովին խմաստիւք աւարտէ և զբանն հզ. Քեզ փառք ամենակալդ՝ առ ամենայն հրաշագործութեան քոյ և խնամոց երկայնմտութեան:

Մեկնութիւն յառաջեալ երգին հեծութեան՝ նորին հօնողին, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ՁԲ.

ա. Սա՛ է արդ՝ * Ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բեկութեան հոգւոյս՝ մնացս լքմանս՝ խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի՝ զմարգարէին յիշեցուցանեմ զարամաթացւոյն սամուէլի, զոր առնեալ եհեղ 'ի սկաւառակէ յանդիման քո՝ ամենատես, առ ժողովրդեանն օրինակութեան զանձն արկանելոյ խոստովանութեամբ և հնազանդութեամբ կենդանաբարդ գարշապարաց:

բ. Սա՛ է արդ՝ ընկալ զայս հիւսուած բանի աղերսողս հեծեծանաց, և հաստատեսցես յայս նուէր բանի՝ անարիւն զոհի՝ թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեալ զտառ մատենի այսր ողբերգութեան. և գրեալ դրոշ

մեացես յարձան յաւիտեան՝ [2] ընդ հաճոյականացն
սպասաւորութիս ։ Կացցէ առաջի քո մշտնջենաւոր,
և յիշատակեսցի 'ի լսելիսդ քո հանապազ․ բարբա֊
ռեսցի [3] շրթամբք ընտրելոց քոց, և խօսեսցի բերա֊
նովք հրեշտակաց քոց․ տարածեսցի հանդէպ աթո֊
ռոյ քոյ, և ընծայեսցի 'ի սրահ սրբութե քոյ․ խնկես֊
ցի 'ի տաճար անուան քոյ, և բուրեսցի 'ի սեղան
փառաց քոց․ պահեսցի [4] 'ի գանձարանի քում, և
համբարեսցի 'ի ստացուածս քո ։ Կատարեսցի 'ի յա֊
կանջս ազգաց, և քարոզեսցի 'ի լուր ժողովրդոց․
նկարեսցի [5] 'ի դրունս իմաստից, և տպաւորեսցի 'ի
սեամս զգայութեց․ իբր կենդանեօք՝ զիմն պատ֊
մեսցէ խոստովանեալ զանօրէնութիւն․ և թէպէտ
վախճան ընկալայց իբր զմահացու, այլ յարակայու֊
թեամբ բանի այսր սոփերի՝ գրեցայց կենդանի ։
Մ՛նասցէ սա աներկծ 'ի կամս քո տէր՝ [6] ինձ պատժա֊
պարտիս համբարձեալ միշտ՝ անդուլ դատիչ․ ան֊
աչառ կշտամբիչ․ անպատկառ յանդիմանիչ․ աննա֊
խայելի դարուլիչ․ անողոքելի պարսաւիչ․ անհամբոյր
ծանակիչ․ անմարդասիրելի մատնիչ․ անփրկելի տան֊
ջիչ․ անկաշառ կառափիչ․ անխնամելի յայտնիչ․ ա֊
պառուամ հրապարակիչ․ աշխարհալուր բողոքիչ ։
Փողով մեծութե ազգման առանց լռութե և կամ
դադարման՝ զիմոցս պարտեաց խոստովանեսցի ։

Է․ Մո՛յն գիր՝ իմովս ձայնիւ՝ [7] իբր զիս ընդ իմ ա֊
ղաղակեսցէ, տարածեսցէ զծածկեալսն․ հռչակես֊
ցէ զգաղտնիսն․ կականեսցէ զկատարածն․ հնչեսցէ
զմոռացեալսն․ յայտնեսցէ զաներևոյթսն․ բարբա֊
ռեսցէ զբարուրսն․ քարոզեսցէ զխորոցն․ պատ֊
մեսցէ զմեղացն․ մերկացուսցէ զանտեսիցն․ ցուց֊
ցէ զկերպարանս թաքուցելոցն ։ Շօշափեսցին [8] տա֊
վաւ որաքն․ գտցին գայթագղութիքն․ յանդիմա֊
նեսցին անճառք․ քամեսցին չարեայն մնացուածքն ։
Եւ թագաւորեսցեն կեանքդ շնորհաց ողորմութե
քո ք՛ս 'ի գանձս [9] պահեստի ոսկերացն ցամաքելոց․
որով 'ի ժամանակս կենդանականս սկզբնաւոր լուսոյ
մտի գարնայնոյն՝ նորոգման աւուրն պայծառութե
քոյովդ ցօղով յոգի առնեցեալ այսու փրկութք ան֊

մահականաւ, և անցաւորքն վերաբերութեամբ շա-
ռաւիղս ձգեալ խմանակեացն բարեաց՝ դարձեալ դա-
լարացայց և կրկին ծաղկեցայց, ըստ քոյինաշունչ
գրոյն յուսադրութեն ։ Նոյ քեզ միայնոյ փրկողի՝ և
հոգւոյդ քում հօր խնկակցի՝ միասնական տէրութեն
և անճառ երրորդութեն՝ խորհրդական զովեստիւ
փառք և երկրպագութիւն յաւիտեանս • ամէն ։

---

(1) Ջրոյ կոճայ ։ [illegible] ( Թ. Թագ. Է. 6 ։ ) [illegible]

(2) Ընդ հաճոյականացն ։ [illegible]

(3) Շքեղանէ իմաստն ։ [illegible] Ած, և [illegible] ( Թ. կորն. Ժա. 10 ։ ) [illegible]

(4) 'Ի փանջարանէ գաւի ։ [illegible]

(5) 'Ի դրանէ ներսիս ։ [illegible]

հետ յօրինեցան աղօթքս, բայց ըստ խնդրոյ երանելւոյն ամփոփեցան 'ի ըստ բոլոր ազգաց հայաստանեայց. մանաւանդ և նորուն արժա-հայց աղօթից պտուղս ինձ համարիմ, զի աշխատակալ միանգամ 'ի բա-ցայայտութեն բանից նորա, գործեալ յետ իբր երեսուն ամաց՝ յաւե-լեաց յաւելուածովք և եւս պարզել զմթութիւնս, թէ և ոչ բովանդակ տարակուսին:

(6) Ինչ դատափետութիւն: Ինձ մեղապարտիս ասէ՝ երկիցս ոտն անդ դա-տփէն, անդադար դատող, են: Զայս 'ի սաստկութեան զգլխանն ասէ. և թէպէտ այսպէս փափաքեաքեր և խնդրէր երանելին, բայց յարգելանցն ան-սանձեալք՝ զի այս մասանն ոչ եւս է նմա անասելի կշտամբել, այլ գոնէ յաւէրժական. իսկ մեզ անդադար յանդիմանեն, զի բերբառապատեն ա-ռաւել մեղուցեալք, չուանեալք զանէ մասն ինչ 'ի նորա զգլխութեցն:

(7) Իբր զնա ընդ իմ: Որպէս թէ եւ կենդանի եղեալ, փոխանակ իմ ա-ղաղակեսցէ: կոչանեսցէ զհոգւոյն. աղաղակել յարանեսցէ զկատարած մեղացն, և զկենաց, կամ զխափանման պատուհասիցն: քարքարեսցէ զհո-գւոյն, մեծամեծայն ծանուսցէ կէս մերկանայցէ զուսա պատճառանաւն: քարոզեսցէ զխորոգն, զարմանալ կէս զնորա կթերութեան մեղաց:

(8) Մոխրոյ որոփն: Այսու զրով 'ի ձեռս եկեղեցեն զաղամի պատարանք բնութենս, կամ ասասանեայի, որովք որոյ զմարդ 'ի մեղս: Գտցէ գոյ-նագաղափէս, յայտնեսցեն նուսթք կամ պատճառքն զայթակղելոյ 'ի մեղս: յանդրժանեսցին անձամբն: յերկանն եղցեն անմատելի կամ թմբու-ցեալ մեղքն: փամեսցին, խաղաղա թափեսցին կամ ապառնեսցին մնացորդք մեղացս: որպէս զի բնագատեսցեն յաւիտեան իմ կեանքս չարչարեալ, են:

(9) Պահեսցին ասէրուացն: 'Ի զանձս պահեստի աւերացս, այսինքն 'ի գերեզմանի, բնագատեսցեն, ամփոփեսցեն հեղանդ ընդդէմ, կենդանացու-ցիչ զօրութեն քո, որ է շնորհք մարմնոյս. և ոչ ըստ բնական ակզբանց նորա պատրաստեալ ինչ: Այլ յարժամ մարդն մեռանի 'ի մեղաց մկրտու-թեն և ապաշխարութեն, և զործովք ճգնաւորութեան աղոյ մարմին 'ի մնացուածոց մեղացն, և նա խորհրդոյն ճաշակմամբն սնանի, յայնժամ պահի 'ի նմա զօրութիւն ճգնայքն իբրև սերմն կենդանութեան: Որով 'ի ծանմանակս հեղանդանակս, 'ի ժամանակի կենդանանալոյ, զարմանալին ակնանն նորոգ լուսաւորութեն, որ այն նիզն է զաւոտն յարութեան, որ պայծառութեն արդարոց, փայլել ցոլով, ազգաց ապար հրամանաւ փո-ղոյն, կամ 'ի զօրութեն արեգակն քո, յոգի ածեցեալ, կենդանանական ընդդէմ ածնեցեալ անմահ յարութեն, անթառամ մշտնջենաւորութեամբ, եթէ ընծե-մանք շառաւիղս արձակեալ նմանութեան բուրեաց. թէ հոգևոր բարիք ըն-դհաց և փառաց հոգւոյն իբրև շառաւիղս արձակելով զմարմին մարմնոյն, որ են պայծառութիւն, անօսրութիւն, թեթևութիւն, և անչարչարութիւն, այսու օրինակաւ կրկին զաւրութեան և ծաղկեալ մարմնովն՝ գերեզմանաց քան պատուիրին կենդանութեան: ըստ փոխանակումն Գրոյն, ըստ յուսայցուցանել 'ի քեն աղաչեցեալ զորոյն, որ 'ի բարուն անուանէ զպուրս յարութեան, որպէս (Եսայ. ԻԶ. 19.) *Յարիցեն մեռեալք, և կանգնեսցին որք 'ի գերեզմանս. զի ցօղն՝ որ 'ի քէն է, բժշկութեն է նոցա ||: Այլև երեկեկեաց. ըէ: բայց թուի և գլորայն խնամոց. (Ժէ. 7.) *Զի գոյ յոյս ծառոյ, զի թէպէտ և կտրեսցի, միւսանգամ ծաղկեսցի. || և (12.) * Եւ մարդ ննջեաց, և ո՞չ յարիցէ: ||

# ԲԱՆ. ՁԹ.

ա. Աստուած և տէր. կեանք և արարիչ. ողորմած. գթած. լոյս. երկայնամիտ. անոխակալ. մարդասէր. ամենազօր. պարգևատու. փրկիչ. օրհնեալ. գովեալ. բարեբանեալ։ [1] Դարան ամրութեան. պատսպարան վստահութեան. առանց նենգութեան բարի. առանց խաւարի ճառագայթ. քաւիչ մեղաց. ողջացուցիչ վիրաց. անհասանելեաց հնարք. [2] անմատչելեաց հպաւոր. անյուսութեան ելք. անուն քո խոստովանեալ՝ Այ որդի. և Հօր քո ընդ քեզ Հզօրի և Ահաւորի, և Հոգւոյդ ամենակալի՝ և ընդ քեզ երկրպագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն։

(1) Դարան ամրութ՛. Անկոյթ ամրոց ապաւինելոյ 'ի ձեռաց գերեաց։ առանց նենգութեան. այսինքն անմեղութեան բարի. կամ, այնպիսի բարի և անկեղծ, յորում ոչ կարէ խառնիլ նենգութիւն. որպէս և առանց խաւարի, անմթառնալի ճառագայթ, կամ, լոյս՝ որում ոչ յաղթէ խաւար։
(2) Անմատչելեաց հպաւոր։ Անմատչելի աներևոյթ մերձ. զի յերկինս է, և 'ի խորս անդնդոց. ըստ սաղմոս. (Ճլթ. 8.) * Թէ ելանեմ յերկինս ||, և Ն։ անյուսութեան ելք. յանյուսալի եղաւ՝ հնարք և դարման։

Սրբոյն յառաջեալ երէցն հեծեան՝ նորին հօկողէ, առ Նորին աղերս մաղթանաց բանի։
’Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. Ղ.

ա. Բարեբանեալդ Այծ երկնաւոր, միայն արարիչ, տէր ամենակալ. մեծութեան ահեղ. գթութեան օրհնաբանելի. ողորմութեան խոստովանելի. բարերարութեան երկրպագելի. խնամակալութեան պաշտելի. մարդասիրութեան տօնելի. պահպանութեան խնկելի. բարձրեալ անքննին. մեծաւոր կամարար. ապա-

ւէն անկասկածելի . մխիթար սրտից . փարատիչ վշտաց . ապաքինիչ ցաւոց . սպառումն վհատութեանց . բարձումն պարտեաց . [1] փոխարկիչ կարեաց . կարգաւորիչ կրից . յարմարիչ բանից . սանձարկու լեզուի . [2] շրջադրութիւն շնչոյ . կացուցիչ հագագի . [3] ամփոփիչ խորհրդոց . կրթարան կամաց . արձանացուցիչ յուշմանց . հանդարտութիւն մրրկաց . խաղաղութիւն ծփանաց , որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանականիս , և իմաստութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես :

Է. Գոհաբանեալ միշտ երախտաւոր , որ հեզութեամբ անհպարտութեան երկայնամտեալ [4] համբերես տենչանօք անճառ հրաշիւք՝ յանձինս որբոց : Թագաւոր էից համայնից , ամենայնիւ ծանուցեալ գթած . սկզբնահայր և [5] նախաշաւիղ որդոյն ընթացից . Ճանապարհ կենաց , որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս 'ի լոյսդ վերին : Զեւնկալու մեծ վստահութեան , որ ոչ թողացուցանես գայթագղելոյս 'ի վայր կործանել . յուսոյ կերպարան , [6] Ճշմարիտ առհաւատչէիւ աղաչողաց մատանց յայտնի երեւեալ . ապաւինութիւն հանգըստեան , որ ոչ երբէք մատնես վտանգի դատապարտութեան : Ոգտութիւն շնորհածիր , որ տաս լիապէս առանց փոխատրութեան փրկանաց . առատութիւն աննախանձելի , որ քոյին փառաւորութեամբ զանարգնիւթ հողոյս ճոխացուցանես : Պայծառութիւն անըստուեր , որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զթշուառս՝ կրկին բարգաւաճ առնես : Վարիչ մեղանաց բազմաց , որ զհերքեալս 'ի փրկութէ առաջնաւն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես : Ճնարաւոր դիւրահաս՝ [7] առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ . ելք վստահութեան առ խոստացելոցն վայելս . երանութիւն անձկալի , [8] յոր զկենդանութիւն շնչոյս լքանելըն է ախորժելի , զի զքեզ գտից՝ կենդանի : Ամբ անփոխադրելի՝ առ 'ի քաւութիւն գերոյս զօրացեալ ամենազօրելի . անսխալելի դեղ կենաց , որ և մեռելոց՝ բնաւին եղծելոց առնես զսքանչելիս : Ամենաստեղծ աներկբայելի , որ զհուրն կիզեալն , և զհողմով հոսեալն , և զժանեօք գազանաց ծախեալն , 'ի

քթթել ական ⁹ Նովին հիւթականութեամբ անսպառ յարուցանես ։ ¹⁰ Ընհաւասար համարձակութիւ, յու-րում ամծօրէն պանծանօք պարծելն է իրաւացի ։

Է. Հայեաց տէր՝ յերկնից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և որում անդորր հանգստական դիւրաւոր՝ 'ի բազմատագնապս հեծու-թէ ։ Դու զյարուցեալ գումարս սատակչացն, եթէ սպառազէնք այսական դժնեայ հնարաւորութեան ¹¹ բռունն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մե-ղաց տգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժես-ցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես՝ հեռի սահմանաւ խոպառ տարագրեալ անդարձորոշ-մամբ վերստին կորստեանն. և կառուսցես կացուս-ցես նպաստակ կենաց և ամուր մահարձան՝ զնշան խա-չիդ՝ ապաւինելոյս 'ի քեզ՝ փրկութիւ ։ Դու յայսմ ¹² անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ա-հաւորիդ մեծութեան՝ լուծցին որոգայթքն գաղտնա-ծածուկ սատանայականք. կապտեսցին մեքենայքն. վատնեսցին գայթակղութիւնք. խայտառակեսցին հաղ-բիցն դրութիւնք. յայտնեսցին երևոյթք որսոյն. գտցին նենգողին ծուղակք. վերասցին վարմին վերարկուք. տաչորեսցին որոմանցն բոյսք. նզովեսցին բռնաւորին չարաբանութիւնք. կորեսցի լար խաբէութեան 'ի մահ-որսողին. պարտեսցին պատրողին բանսարկութիւնք. պակասեսցին զէնք զրպարտողին. անկցին սուսերք մահաբերին. սուզեսցին սադրողին պատրաստութիւնք. արձակեսցին տոռունք տագնապողին ։ ¹³ Այլայլես-ցին սուտ կերպարանք կեղծաւորին. սատակեսցին խորտակմանացն խիստ յարձակմունք. ցրուեսցին կցորդութիւնք կերչացն. բաժանեսցին ազինք աւազա-կացն. քայքայեսցին բոյլք բարբարոսացն. քանդես-ցին ամրոցք ապստամբողացն. արգելցին ամպրոպք յանդգնելոցն. փարատեսցին փորձողին անձրևք. հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին ։ Խոր-տակեսցի եղջիւր գոռոզին. մանրեսցին ¹⁴ ամբառ-նալիք դրօշիցն կերպարանաց. փշրեսցին ամբարհա-ւանութիւնք հպարտացելոցն. նահանջեսցին դիմեց-

մունք Ճակատելոյն . քակտեսցի՛ն միաբանութիւնք զօ-
րացն բեւեռարայ , թէ անմարմինք , և եթէ մարմնա-
ւորք . փախիցե՛ն ընդ նոյն Ճանապարհ 'ի մի շաւղաց
հետոյ՝ [15] յեօթն տարակոյս . 'ի գուբն ինձ փորեալ՝
ինքեանք ընկՃեսցին ։ Յեղանակեսցի՛ն [16] ձմերունք
ձանձրացուցչի՛ն . հատցի՛ կապն կցորդութե՟ն մշտաջան
աւազակին . նողկասցի՛ մտացս կայից՝ համբոյր շողո-
քորթին . ընդմիջեալ մեկնեսցի՛ն՝ նետաձգունք նեղ-
չին . կասցէ՛ 'ի սասանման՝ նաւ խարդախողին . խլեա-
ցի՛ն յարմատոց անտի՝ տատասկունք խածանողին ։

Դ. Վասն փայտիդ օրհնութեան կենաց , յորում
պրկեցար ա՟ծդ անըմբռնելի . յիշատակաւ բեւե-
ռացդ , որով 'ի գործի մահուն մածուցար՝ արարիչդ
երկնի և երկրի . արեամբդ տէրունականաւ , որով [17]
զվիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար . լեղւոյն
դառնութբ՟՝ զոր արբեալ , [18] զդեղատուաւն կորուս-
չին արտաքս հեղեր . [19] պատմաբանութբ՟ ըղձական
Ճառիւք կրիցն սարսափելեաց , որով զլրբութի՟ հա-
կառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր . անուամբդ
անհասականաւ ամենայնիւ անթարգմանելւոյդ , յոր
մէ դողան և դատապարտին սոսկացեալ սատանիկ տար-
սափմամբ՝ բնութիւք ամենայն [20] երևութից և աներ-
ևութից , եղիցի՛ն [21] այս ամենայն պարգևք շնորհաց՝
խոստովանելոյս 'ի պաշտպանութի՟ , 'ի բժշկութի՟ և
'ի քաւութի՟ ։ Այլ մահաբեր [22] դառնաթոյն օձին , և
որ 'ի նմա ազդեալ տիեզերադաւ չարութի՟ն , 'ի սա-
տակումն եղիցի նորին . նոյն ինքն 'ի կորուստ և
յանբժշկական հարուած տանջանացն՝ սովաւ մատ-
նեսցի ; կապեսցի՛ և ըմբռնեսցի՛ ։ Եղիցի՛ ողորմութի՟
ստեղծողիդ ընդ իս , և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ
անբաժանօրէն կապաւ միացեալ 'ի մի ։

Ե. Այլ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի՝ մաղ-
թանաց գոչման՝ աղօթից հայցման [23] ծերոյ և տղայոյ,
կուսի և երիտասարդի , և եթէ յաղախնաց ոք պա-
ղատեսցի ա՟ծսիրաբար , հաւասարապէս անաչառու-
թբ՟ ընկալցի՛ն 'ի քէն մասն երանութե՟ պարտուց ա-
զատութե՟ , հաստեալ վերստին յանարատութի՟ նո-
րոգ մաքրութե՟ ; [24] նկարեալ դարձեալ զքոյդ կեր-

պարգան անփոփոխելի ։ Նմա տիրապէս հնարաւոր՝ զօրեղ՝ անպարտում անհաս՝ անքննելի, 25 տեսցես աստանօր 'ի հառաչանս կողկողանաց այսր հեծուէ, որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի, վասն հօր քո երկնաւորի և բարերարի, և հոգւոյդ սրբոյ փառակցի և կենդանատուի, ծածնիդ բարե-խօսութք, և խնդրուածովք ամենայն սրբոց ։ Ով դու ստեղծեր զամենայն. և 'ի քէն եղեն ամենայնք. և դու տիրես ամենայնի. և քեզ փառք յամենեցունց՝ միշտ յիշխութէ անժամանակ երրորդութէդ, զուգակցապէս փառաւորեալ յանքաւս, և յաւիտենից յաւիտեանս. ամէն ։

---

(1) Փոփոխելի խորհուրդ ։ Բնական կարգաց [illegible]՝ այսինքն [illegible], [illegible], [illegible], [illegible], են, փոփոխականք, կամ [illegible]. վասն զի կամ [illegible] [illegible], որպէս [illegible] 'ի [illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible]. են ։ և կամ բնական [illegible] [illegible] [illegible]. զի [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] և [illegible] ։ [illegible] [illegible]. այսինքն բնական [illegible] [illegible], [illegible] և [illegible], [illegible] և [illegible], [illegible] և [illegible], են. [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible], և [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] ։ [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], այլ և բնական [illegible], [illegible] [illegible] [illegible] և [illegible] ։

(2) [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] կամ [illegible] [illegible]. զի 'ի [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible] ։ Կամ, [illegible] և [illegible] [illegible]. զի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], որպէս զի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible]. [illegible] [illegible] կամ [illegible]. կամ, [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible]. [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] և [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] ։

(3) Անփոփոխելի խորհրդոց ։ [illegible] և [illegible] [illegible] [illegible]. կամ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible], [illegible] կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible], կամ [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible]՝ [illegible] և [illegible], և [illegible] քեզ [illegible] ։

(4) Հանդերձեալ փրկութեան ։ Հանդերձեալ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], * Եւ յո՞ հանդերձեալ՝ [illegible] ոչ 'ի [illegible] և 'ի [illegible] ‖ ։ (Եսայ. ԿԶ. 2.) [illegible] է [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] որ [illegible] [illegible] [illegible] է՝ [illegible] [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] որ 'ի [illegible], [illegible] ոչ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] 'ի [illegible]. [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

Այսպէս ահա [illegible] է [illegible] համբերել ԱԾ յոյժ : [illegible] [illegible] և այն, զի Թագաւոր [illegible] երկնից [illegible], [illegible], [illegible], [illegible] է [illegible], [illegible] [illegible], որպէս եթէ հայր միայն է՝ [illegible], [illegible] [illegible] :

(5) Նախաշաւիղ սիրոյն : Առաջին ծնող և առաջնորդ սիրոյ [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] . և [illegible] [illegible] : Այլև [illegible] առաջին [illegible] սիրոյ [illegible], [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], և [illegible], [illegible] նոր և նոր [illegible] : (Յովհան. ժգ. 34. ժե. 12 :) [illegible], [illegible] [illegible] սիրոյ՝ [illegible] է . զի [illegible] է [illegible] . և [illegible] է [illegible] [illegible] . [illegible], [illegible], [illegible] . ( [illegible] ) 'ի [illegible] Նախաշաւիղ է ԱԾ սիրոյն [illegible], առաջնորդ և [illegible] [illegible] է [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] . [illegible] ԱԾ [illegible] է [illegible] սիրոյ, [illegible] : [illegible] ( Յովհ. ժե. 12 . ) և սիրոյն [illegible] . ( գ. 11. ) Եթէ ԱԾ [illegible] սիրեաց զմեզ, [illegible] սիրել [illegible] :

(6) Ճշմարիտ [illegible] : [illegible] [illegible], [illegible], [illegible], ( [illegible] . [illegible] . ) [illegible] : Այսու [illegible] [illegible] :

(7) Առ [illegible] : [illegible] [illegible] [illegible] :

(8) Յոր [illegible] : [illegible] . [illegible] . և [illegible] է [illegible], [illegible] . [illegible] է [illegible], [illegible] [illegible], [illegible] :

(9) Նոյնն [illegible] : [illegible] : Այլ [illegible] [illegible], [illegible], 'ի [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] 'ի [illegible] : Այսպիսի [illegible] է [illegible] :

(10) Անհատ [illegible] : [illegible] [illegible], [illegible] . [illegible] է : Անհնար է [illegible] 'ի [illegible] . [illegible], 'ի [illegible] :

(11) Բ[illegible] : [illegible], [illegible], [illegible] : [illegible] 'ի [illegible], Թէ [illegible], Թէ [illegible]

ղաց, և թէ իցեն կորուսիչ ցաւք և հարուածք մահաբերականք, զամենայն մերժեսցես. և հեռացուսցես անդարձ որոշմամբ, առաւել վերջացեալն զառանձնաւոր նոցա 'ի կորուսանել զիս. կամ, զզեան տարապարտեսցես անդադար հեռացմամբ յերկրորդ կորուստ խորտակմանց. որպէս միանգամ կորուսեր զնոսա յարդարադատութեանն քո: Եւ ընդդէմ սոցա կացուսցես ինձ զնշան խաչին քո և անուն տեառն, մնացական կամ աշտարակ պաշտպանութեան:

(12) Անդորր: Անխռովութիւն կամ անվրդովականն, և անդորրիկ, անձնեա զիսն կամ ճշմարիտ, ուղղափառ, կեաց շարժուածոց, կամ զօրութեանց: Զմիտքաղացորդ անխորհրդութեան քեզ կոչէ ուղղափառ, և հեզ հանդարտ անձնաւորութեան այս, թէ որպէս հանգստականք զհանգստական ներգործեսցես. և պատարագեալ լինելով, բայց անհանգիստ անդորր. և անդորր, այլ անխռովելի. և անդորր, այլ անդորրիկ: Ահա յայսմ անխռովութ կամ յանդորրականն և 'ի ճշմարիտ շարժմանց ամենայնիւ քեզ' լուծցես զադամեան որդւոյ տառապանաց, ևն: Յաղթեսցես երանելւոյդ որդոյն, հանգստանք որոնեացն, կամ կաղնութեան թշնամութեան. բարձցես ձայնին միջնորդին, ծանծաղեղք վայրեն:

(13) Այլազգոյն: Յաղթեսցես, երկնեսցես ընդ բանս կենդանարարն առաւ զենեղն կենդանութեան ստեղծանողի. լուսաւորեսցես կրօնաւորաց կենդանացն. միաբանութեանս կենաց կամ յանդիմանականաց: տեղիս ամենեցունց, ժողովք աստուածոց:

(14) Անքանանալի դրօշիցն: Զողջ նշանաց դրօշակացն ամենայնիւ մահ, ընկալեալ, խորտակեսցես:

(15) Ցնորն փարախոյս: Ընդ նոյն ճանապարհ' ընդ որ յարձակեցան 'ի վերայ իմ, փախիցեն 'ի մի հետոց յաւիտեանս կամ 'ի բազում բաժանեալ ճանապարհս. որով խմանի, յէր և ցան փախիցեն:

(16) Զմերժողի յանձնարարութեան: Փախիցեն 'ի չարութեան յանցաւորաց փորձութիւնք դիւաց, որոց չարեաց ձեռնամատուցանել զիս. կամ կարող ծառայութեան. կամօք՝ որով ընդ խորամանկ կամ առ նոցին առաքելեալ ունի զիս, կամ և ցնորողական, զարշելի և զարհուրելի մարդոյ հոգւոյ, ճանապարհ՝ յորում կալ ուղեկից՝ անցեալ խորհրդոց, հանդերձ խորամանկ դիւաց. ընդունելի, առաքելեալ կամ նախանձելով հեռացեալ միջնորդութեամբ փորձութիւնք նոցա:

(17) Զմեղաց նէծ: Զաստուածայ արեամբք և կարմիր ընթանելով ու աւագ, բազ բանին յորոց. (Զ. 8: Ն. 20:)

(18) Զդեղափառութն: (Կ օրէն. ազնիւ փառութն): Զմահաբեր, կամ զիսն խորտակական զեղ ստեղծանողի ապաւէնս հանեալ:

(19) Պարզաբանութիւն: Քաղաքականութիւն և ընտրութիւն ընդմանէ ճառից աստուածոց չարչարանաց քոց:

(20) Եղանակ և անեղանակ: Երևելեաց և աներևութից բնութեանց զօրութեան յանուանէ քումն. բառ բանին ՛ Յանուն քո քոյ ամենայն ծունր կրկնեսցի || ևն: (փիլիպ. Բ. 10): 'Ի վերայ հրեշտակաց' զօրաց լինել միայն խմանալի է. առաջարկ 'ի բանին հշ. լուծ. 17. խակ որ փառաւորին անելի՝ խմանի 'ի վերայ չար հրեշտակացն դիւաց:

(21) Այս ամ դարձեալ: Վասն նշան խաչի առէ' և յիշատակաւ նշանի դեղ, և այլոց մահամերձ չարչարանաց, այն տէր ընդդէմ զորս հալածեցի վասն կործանման ստեղծանողի և տառապանաց նոր, եղիցին ինձ 'ի պաշտպանութեան, ևն: Այսպէս ձեռնտու կարողութեն բանիս' եթէ դարձեալ բառարան խմացարք զհալածեալ ապաստանութեան 'ի բանական ստեղծանողի. բայց եթէ դարձեալ խմանալք զմատուցեալս չարչարանաց փրկչին՝ զորս նշանն կարգէ. բայց այսմ ոչ պատասխան լինի յարմարութեան բանին առել, թէ վասն նշան խաչին և յիշատակաւ բաժնեալ, և այլն, եղիցին այս ամ դարձեալ

[illegible] 'ի պաշտպանութեան, եւն։ Այլ [illegible] բանին՝ [illegible] մինչեւ 'ի բայն [illegible]՝ [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], եւն, վասն [illegible], եւ [illegible], եւն։ Իսկ բայն [illegible]՝ [illegible] եւ [illegible] նոյն։

(22) [illegible]։ [illegible]՝ [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] . [illegible], [illegible]՝ որ 'ի [illegible] 'ի նոյն [illegible]։ Նոյն [illegible] 'ի [illegible], [illegible]։

(23) [illegible]։ Այս [illegible] 'ի [illegible] որ [illegible] 'ի [illegible], եւ [illegible], որ [illegible] 'ի [illegible] եւ 'ի [illegible] . 'ի [illegible], եւն. [illegible], [illegible], [illegible] որ [illegible]՝ [illegible] եւ [illegible], [illegible] 'ի [illegible]։ [illegible]։

(24) [illegible]։ [illegible] 'ի [illegible]՝ որ 'ի [illegible] է. [illegible], [illegible], [illegible]՝ [illegible]։

(25) [illegible]։ [illegible] 'ի [illegible]՝ որ 'ի [illegible], [illegible]։ [illegible]։ Այսու [illegible]՝ [illegible], [illegible]. եւ [illegible], [illegible] որ 'ի [illegible] եւ [illegible]՝ 'ի [illegible] եւ [illegible]. [illegible] 'ի [illegible]՝ եւ ոչ [illegible]. [illegible]. եւ [illegible]. եւ [illegible], [illegible]։

---

Սրբոյն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ ՂԱ.

Ա. Տէր տէր զօրութեանց եւ Այծ ողորմութեանց. անուն մեծութեան. ձայն ահաւորութեան. կոչումն սաստկութեան. լուր անհասութեան. բարբառ թողութեան. հնչումն հրաշման. յուսադրութիւն բարերարութեան ամենողորմ քաղցրութեան։ Յորմէ երկուցեալ սատանային ամենայն գնդութիւք եղելոց. [2] 'ի քո սաստանալեաց ահիդ պակուցմանն՝ սատանային սերոբէք. ամ

փափին քերոբէք․ պարուրին պարք լուսակերպիցն․
երկնչին հիացմամբ բոլոր պետութիւնք վերնոցն․ նոյնք
ցնծան դասդութի մեծաւ 'ի մի նուաակատիս բերկրու-
թե․ զարհուրին դեւք․ ընկրկին չարութեանցն գունդք․
պակասին խաւարասիրացն հոգիք․ անդնդոց մատ-
նին [2] հրեշտակք օտարին ։ Աղային նշանաւ խաչին՝
յարձակմունք դիմամարտին․ փակին 'ի տարրին բան-
տի՝ [3] քինաւոր ամաղեկացիքն․ անխզելի հանգուցիւք
պաշարին խումբք հակառակորդին․ [4] արգելին ան-
դերծ գլխագանաւ՝ մահապինացն կաճառք․ պնդին 'ի
մետաղս ահեղ հրամանիդ՝ [5] այսականնացն գումարք․
պատպանձին կարկեալ՝ ընդդիմաբանիցն դասակցու-
թիւք․ պարտաւանդին հիւծմամբ կորստեան աներեւու-
թիցն ժողովք․ անլոյծ շղթայիւք նեղին՝ [6] սաստկե-
լութիւք դերաքրիստոսին ։

Է․ [illegible]հա կարկառեալ մատամբք ձեռինս՝ զտեառնա-
գրութիւն նշանիդ 'ի ժամ գիշերիս, որ ոչ մթանայ
խաւարաւ անդիտութեան ամենեւին տեսականութե,
քան թէ 'ի լոյս անմատոյց հանգուցեալ բնակես ։
Ընկալ զաղաղաջօղս վտանգաւոր գոհաբանի՝ ընդ պահ-
պանութեամբ թեւոց հզօրիդ․ փրկեալ 'ի ցնորից՝ երկա-
մտեա պղտորութեանց․ ունելով առ զգայարան հայե-
լեաց՝ արտիս նկատմանց․ ամրացեալ փայտիւդ կենաց
'ի տխրական անրջոց․ արեամբ քո արոսեալ [7] զշրջար-
կութս կայից․ զհետս եղեռնիցն՝ կաթուածով կե-
նարար կողիդ դծագրեալ․ [8] երդոցն պահպանարանի՝
քառակերպիդ ձեւակերպութի եղիցի․ հանդէպ տե-
սութեան աչացս ամբարձման՝ փրկականդ քո կրից խոր-
հուրդ առդիցի․ [9] ընդ բարբառոյ յարկիս՝ չարչարա-
նաց քոց գործի հասուցի․ զծառայդ որհնութեան հա-
ւատք յուսոյ իմոյ կախեսցի ։ Արդէն տէր ողջա-
ղատաակիչն հոգւոց․ մնացէ անխափան՝ պաշտպանն
լուսոյ․ և [10] ընդ տաստիկ ծանրութե ցաւոցս՝ և զերեան
պարտեացս թեթեւացն, զոր 'ի լաւրանի մնացս առ
փափման մահաձայն անկողնի՝ ուշաբերեալ զյուսահա-
տութեցն դառն պտղոցն՝ խոստովանիմ ամենազինսոդ
զանհամար մասունս գործոց չարաչար անօրէնու-
թեանցս ։

Ը․ [illegible]անգձ զվստահաակեալս [11] 'ի բազմածուփս աշխա-

տութէ. բարձ զտագնապ տարակուսանաց ոգւոյս
կործանմանս, 12 զդառնութիւն ընդ մշտացն. զհեծու-
թիւն ընդ կարեացն. զանձկութիւն ընդ թշուառու-
թեցն. զհառաչմունսն ընդ խորտակմանցն. զբեկու-
թիւսն ընդ ապշութեցն. զթմբրութիւնս ընդ շլամմանցն.
զարբեցութիւն ընդ յիմարութեցն. զթերամտութիւն
ընդ խելագարութեցն. զսառուածն սիրայն, և զհրայինն
ջերմութի աղուական ախտին։ ( )ժանդամկ լեր տկա-
րութե բազմախուրս տարտամութե, բարեգործ ա-
ջովդ շնորհի. 13 ձեռամբդ նորոգողի. մատամբդ կեն-
սաբաշխի. փառօքդ մշտափայլի. յարակայութբ ան-
եղծի. երեսօքդ զուարթականի. իսկութբ էիդ պաշ-
տելի. բարձրութբդ երկրպագելի։ 14 Հատո՛ զչարա-
չար հեծութի կորստականս խեղդմանս. զնոր գիւտ
չարին, զհին խարդախութի բանսարկուին, զօտար
ազդեցմունսն՝ 'ի մահ կրթողին, զանյարմարական ե-
րևոյթս՝ հանապազորդեան եղեռնագործին, զառ-
աջս հնարադրութիւն դժնդակ դիւին, զողոքական բա-
ցաշնչութի ձգօղ կախարդին։ Պահեա՛ 'ի տեղւոջ հան-
գըստեան մեռօրինակ այսր դադարմանս, 15 յանմերկ-
ւոյթ մտածութեց, 'ի մասնաւոր սխալութեց, 'ի մե-
ծագոյն գայթագղութեց, 'ի փոքրագոյն ոտնաւու-
թեց, 'ի խաբեբայ չար ձանձրութեց։ Հեռացո՛ 16 զան-
հանդէպ մտածութիւն 'ի զգայութեց ծառայիս յան-
ցաւորի, 17 զկիրս բասրելիս, զվարս թշնամանելիս,
զդիպուածս պատկառելիս, զհետս վրիպելիս, զպա-
տիրս ձաղելիս, զխորհուրդս անգոսնելիս, զաւելաբա-
նութիս նշկահելիս։ Նոխալ հոգւով և անշաղախ
մարմնով զապաւինեալս 'ի քեզ հանդերձեա՛, 'ի
շնչմանէ հողմոց, 18 'ի զարկմանէ բռնութեց, 'ի բախ-
մանէ փոթորկաց, 'ի յոսմանէ մրրկաց, 'ի յար-
ձակմանէ գազանաց։ 'Ի կափման աչացս՝ հայեցուած
սրտիս մի ստուերացի, այլ զուարթացի պայծա-
ռացի վայելչացի՝ ընդ քեզ փայլեցի՝ տէր յս քս,
լուսաւոր վառմամբ անշիջանելեաւ։ Նանիւ քո սըր-
բեա՛ 19 զպատսպարանս բազմականիս՝ 'ի խորամա-
կութեց, 'ի զբաղմանց, 'ի քո ատելի յիշատակաց,
'ի վերնամարտ մտածմանց, 'ի քրէական մերսութեց,
'ի տիրանենգ անշնորհութեց, յաստուածընդդէմ

հերձուածութեանց ։ Պնդիւք վերնայնոցդ՝ վերակա-
ցեալ լինել լոյսիս, պետութիւնք, իշխանութիւնք. [20] զօրա-
ւորօքն անյաղթականաց՝ մաքուր մատակարարաց՝ նը-
ածութեանդ. [21] աթոռքն՝ աւետեաց աւետարա-
նաւն. մարգարէքն՝ կատակարանօքն. մաղթանք եր-
ջանկացն՝ 'ի կատարածի աւուրն ընծայեալ ։ Որովք
նորհեցից [22] երկիւղիւ ըստ քեզ՝ տրամութիւն, և զար-
թեայց չնորհօք քո՝ կրկին ուրախութիւն. [23] եթէ մհա-
տութիւն ննջեցից, յարեայց դարձեալ հոգևորական
բերկրութիւն. եթէ ընկղմեսցայց մեղանօք, կանգ-
նեցայց վերստին գտեալ 'ի խղճէ անաղտ անքծու-
թեամբ ։

Դ. Մեր խնդրուածոց ամենահաւաչ ձայնիս հե-
ծութեան միայն բաղձմադութ, բարեխօսութիւն սբյ ածած-
նիդ, և ամենայն արդարոց, և նահատակաց ընտրե-
լոց ։ Դու քեզ փառք յամենեցունց՝ իմովս գոչմամբ վե-
րառաքեցեալ [24] որբովք զուարթնոցն անմահականաց
դասուց՝ 'ի գովեստ հօր քոյ այ մերոյ, և հոգւոյդ
սբյ ընաւից հաստողի և նորոգողի, յաւիտեանս յա-
ւիտենից. ամէն ։

---

(1) 'Ի [illegible] ։ 'Ի [illegible] 'ի վերայ [illegible] [illegible] Ա Յ է [illegible] ... [illegible] ։

(2) Հրեշտակք [illegible] ։ Դուքն՝ որք են հրեշտակք [illegible] [illegible] յոյ ։

(3) Քերովբէք [illegible] ։ Ոսկեկալ [illegible], կամ որք [illegible] և [illegible] [illegible] էին ։ ( եզեկ. ժէ. 14 ։ )

(4) Աթոռք ։ [illegible] . 2 օր [illegible] . [illegible] ։ [illegible] [illegible], [illegible], կամ [illegible] 'ի [illegible] ։

(5) Ա[illegible] ։ [illegible] կամ [illegible] [illegible] Դ [illegible], [illegible] ։

(6) [illegible] : [illegible], որ է [illegible] :

(7) [illegible] : [illegible] :

(8) [illegible] : [illegible] :

(9) Ընդ [illegible] : 'ի [illegible] :

(10) Ընդ [illegible] : [illegible], եւն :

(11) 'Ի [illegible] : [illegible] :

(12) [illegible] : [illegible] :

(13) [illegible] : [illegible] ծ. 20. [illegible] :

(14) [illegible] : [illegible]

[illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

(20) [illegible]

(21) [illegible]

(22) [illegible]

(23) [illegible]

(24) [illegible]

[1] 'Ի փայլն ներշնչելի բարեխօսութեան՝ ժամանակին խորհրդա-
ծութեան. աղաչանս նորեալ ընդ ներբողաբանս բարեձայնութեան:

# ԲԱՆ. ՂԲ.

ա̄. Գոհանամ զքէն բարերարութ, միայն մարդա-
սէր, արարիչ երկնի և երկրի, որդի Այ
կենդանւոյ, [2] այն ինչ զարթուցեալ անձկութեամբ
սրտոյ քոյ յիշատակի՝ 'ի լռութիւն հնչման փայ-
տիդ հրաւիրման: Որով բախեալ [3] զձայնարձակու-
թեանցն զաղաղակարան, սթափեցաք կանգնեցաք, 'ի
վեր յարուցեալ 'ի մեռօրինակս թմբրմանէ. ուստի
իբր կոչմամբ սփոփանաց բանի՝ բերեալ ձգեցաք 'ի
ժամ պաշտաման օրհնաբանութե, յանդիման լինել
քեզ ուրախութբ՝ հանդէպ հատուցմանս բեմի:

բ. Որ հա փառք քեզ՝ անսահման անուն՝ և անքա-
մանդակելի զօրութի, որ այսքանեօք հնարաւորու-
թեք՝ [4] ընդ փրկութե իմում հոգացար. զոհաբա-
նեալ անեղծ իսկութի, որ կերպարանեցեր [5] հրա-
շիւք սաստին զհանդերձելոցն նմանութիւն, հան-
դարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ՝ ան-
քունս անյարիր՝ սաստիկս որոտացեր: Որպէս թէ
ընդ ծուլութեա դանդաղութի զյանդիմանութիւն
խրատուդ խառնեցեր. 'ի հայրենի սիրոյդ հեզութի
զուժգնութի ձայթմանն յարեցեր. [6] յընդոստ զար-
կուած երկուց միջնորդաց՝ մարդասիրապէս քաղցր
անձրևեցեր. ոչ մեղմուք [7] մեղմական վանդիւ նիրհ-
մամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորութբ
զտառապեալ հոգիս զարհուրեցուցեր: Ներադրա-
կան երկրպագութի սառեղծցիդ բոլորից, որ այժմէն
ցուցեր համայն յայտնապէս՝ զօրինակ ահեղ բար-
բառոյն՝ մեծի աւուրն յարութե. կենդանացուցեր
'ի դադարմանէ [8] դժոխական անքանուէ. 'ի խնդիր
ելեալ կոչեցեր զպակասամիտս՝ 'ի գիւնիդ ուրախու-
թե. արարեր զոյն՝ լինել [9] հանդերձիչ անարատ հար-
սինն՝ առ ոչեր փեսայիդ. երկուցեր փոքր այս խթա-

նաւ՝ [10] զապարասանին զվկեթխարութն. լուծ ասուար
կրթութն տառամքակին ուսոյ զայս իր գործեցեր. վա-
րապան վանիչ՝ չարախօսին կղակաց եղեալ կացմե-
ցեր: Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութն. մե-
ծիդ Այ, որ փոխարկեցեր [11] զփայտին պարտիս՝ յա-
ղատութ շնորհիդ կենաց. իմաստնացուցեր վերստին
դարձեալ՝ զյիմարս ցնդեալ՝ հոգևորական հանճա-
րովդ. կարկառ կռճիմամբ՝ զանբժշկութն հիւրա-
ծոց օձին՝ առանց մառացման մեղա Թարգմանեցեր.
[12] ընդ երրորդութեդ գծագրութն՝ զկապն երեքկին՝
իմ Նուսաակարին 'ի կատարածին ավիմբ կրկնեցեր:

Գ. Պ՝ոմեստ նեբրադից՝ բուրմամբ խնկոց վերառա-
քեմ քեզ՝ ամենախնամ, զի 'ի ստապատիր կաոցն
բարդմատուածութ՝ [13] առաւել յաճախադունիւք
որսացար զանձն իմ պարտաւոր 'ի քո երկրպագու-
թն. խորխտ և աշխարկոււ նուիրեալ փայտիւս՝ զճըշ-
մարտութն քարոզեցեր. մեծացուցեր այսր պատ-
ճառաւ պատուաճականաւ՝ զնոր աւետարանութեդ
պատիւ: Այն ինքն աղաղակ բարձրութե գոչման
ապառաջինութեդ քո՝ որքայ պետութեց կայսերաց
երկրի տէր քո. նշան խրախութե աւարտման հան-
դիսի մարտի քո՝ յՍ, յորում իմանալին փարաւոն
կապեալ ըմբռնեցաւ. կոփիչ հանապազորդեան՝ դըժ-
խոյ գազանթան հպարտացեալ չարագործին՝ շերտս
այս տաշեցեալ: Ամլաւ գումարին 'ի պատերազմ
որդիք սիոնի ընդդէմ աշխարհականին խաւարի. [14]
առն իմն Աճուանդ կրթութե կարգեալ 'ի հեռաւոր՝
այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ
խափանման. նշանակիչ ժամանակի ապագայիցն հա-
տուցման 'ի բացուստ անդր ծանուցմամբն. [15] աղդա-
կից հանդուրժանման կենացն փայտի՝ որ 'ի դրախտիդ
Այ. կոչարան բարութեան հաւաքման փոյթ ընթացիւք՝ 'ի
յարկն օրհնութե. պատկեր տեսակի [16] անկոյն դի-
տութե՝ 'ի կարգ ընտրութե բարւոյն և չարի. յիշա-
տակ մեծ [17] տեառնագրութե յերեսս կերպիս հոգևոր-
ութեան մնչան խաչիդ. [18] նախադեկոյց աւետամատոյց
փառաց գալստեան՝ 'ի դշխոյն պահեալ ՍԲ Թագա-
ւորիդ. յորդորիչ քաջալերական՝ մաքրապարից

խրախճանութե. [19] անախտական սիրարկու՝ անձնա-
համբոյրն կցորդութե՝ շքեղաշուք քաղցնծայ ամե-
նածին կուսին Թագուհւոյ. յարդարիչ ծածուկ
պճնութե, որ 'ի հոգին է վայելչութի. [20] նմանու-
թի պատգամին սինայ, որ 'ի անէրածնեայն արտաքս
ծաւալքիւր. միշտ օրհնող պանծալի անշաղախ որդւոց
մայր անարատից՝ ոսկւոյ փառաւորագեղ էր։

Է. Գ՝երագոյն քան զերկնայինն [21] փոխն եղջերւոյ՝
զգաստութիւն բեկխարայ ոսկւոյ հարթեալ տապալե-
ցեր. քարինս արձակեցեր պարսիւս այսու փայտեայ՝
ընդդէմ գողիագու. [22] գայլսան նորոգ կառուցեր՝
վկայ ահարկու կործանմանն սատանայի. զ'ի խոր ա-
ճեցեալ արմատս մեղացն՝ մաքնեայիւս այսու խլե-
ցեր. զմոռացեալ գործոցս իմ պարտիս՝ այսր երախ-
տեօք ընդ իս կապեցեր։ Ո՜ որ եթէ այլ իմն ձայն
բանից ոյ անուանեմ նախապատուեմ եկաւորութիւն՝
ոչ սխալեմ, քան թէ ճշմարտեմ. 'ի տեղւոյ անմնա
այսնիւթոյ հոգեկրի՝ մեծութի գործոցդ յոյ՝ ատա-
ւելապէս պատմեալ հաչակի. բիւրաւոր օգնակա-
նութիս վերնապարգեւս և քոյինատուրս՝ 'ի յայսմ
անպատապար ապաւինութէ՝ երկրականաց զարմա-
նադրեցեր։

Ը. Ա՝ստուածանեալ անուանդ անքնին՝ մարդասիրիդ
բարերնամութե, խնկեալ [23] խորհրդով սրբամատ-
նութե՝ անդծագրելի կերպարան լուսոյ. որ կրկնա-
ձիր նշանաւս այսու՝ նետս արձակեցեր հեռաձիգս
ձայնատրականս՝ օդաչուս և յարմարաթռիչս՝ ու-
նօղս յինքեան հոգի կենդանի. որով անախալ համ-
դիպմամբ վնապատակն խաւարային աղեղնաւորին
գաղանութե՝ յաւէտ կործանմամբ 'ի յետս ընկճե-
ցեր։ Ի՝բր [24] զպատնէշս ամրաբերձ բերդամարտու-
թե՝ կանգնաւորս անվայրարկելիս՝ աստուտա անտա-
նօր զկտեալ դիպուածս այս փայտի զարկման՝ հրեշ-
տակ կամարար՝ Թշնամւոյն ներհակ վերլուծարկե-
ցեր։ Ո՝անիւ հրամանի մեծիդ ակնարկուն՝ [25] օծու-
թէ չնորհիդ արեամբ քո խառնեալ՝ զայս եղջիւր
խեթկէշ՝ մոլի գոռոզին, իբր զխաչիդ փրկանակ յե-
ամնեալ սրեցեր։ 'Ի մեծ աղդմանէ այսր աղաղակի [26]
գեր քան 'ի վերնոցն՝ քանդեալ վերացաւ դրանդն

ամբոււթեն կամաց՝ անվայելուչ և ամենեւրկչոտ խնե-
շութեն կարճամտին, ըստ հրեական սրտին իմաստից՝
և տոււերական տանն կործանութեն ։

Դ. Փառաբանութեն քեզ վերընծայեմ՝ անմահ թա-
գաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո
հզօր՝ աղաչեմ զքեզ՝ կրկին նորոգործեա։ Ցնցուցեր
ոսկաւ հերքեալ առ 'ի մէնջ [27] զխեթ դժնդակ խա-
բամանկութե քանսարկուին, զատաժանական տարա
մեղաց, զհողմն դառնութե չնչման խաբողին, զտարր
արկածից մահու երկիւղի, զառ 'ի յօդից ցնդմանէ
միաստակար քերմունս տխրեցուցիչս, զայլախառն
հեծեծութիւնս թալկացուցիչս ։ Ցրուեալ վերստին
քայքնազէն հեծանաւս՝ օժանդակեալ թեւօք նշա-
նիդ՝ զամպս հրածինս, զորոտմունս կարկտաբերս, [28]
զցաւազին ցոլմունս հրախառնար կեղծաւորութեան
փչման՝ բազմոտանի վիշապին, զսուր սատակման,
զճակատամարտ գիմեցման, [29] զյարուցելոցն 'ի վե-
րայ վայրենական խորհրդոց զդիւացն կաքաւս ։ Յոր-
մէ զարհուրին յայսմ իրէ փոքուէ՝ տեղի տուեալ
մեծաւ գոզութե, կիրթ իմն ծանօթութե յայտնի
գիտացեալ, թէ [30] յայս աղգ ձայնի՝ յառնէ տէր 'ի
դատաստան ։ Այլ խրախուսին յաղի արութե՝ զըս-
հեալ պնտապէս տուտերու հոգւոյն՝ [31] ննծարեալ մար-
տիկք ամենայն՝ 'ի ձև կանոնի այսր յիշատակի, որ
զամենափորձ հոգւոյն ընտրութենէ գոչմամբ անկեր-
պադրելեաւ՝ համօրէն աղանց քարոզէ 'ի յօրինա-
ւոր տապարէզ երջանկաբար նահատակութեան ։

Է. Զաքաւ ահա [32] փող աւագափող, համբարձա-
ոսկաւ ոծ օրհնութե. պատմեցաւ սկիւմբ ոմ երկ-
րի. հնչեաց 'ի լսելիս բաժանման հեթանոսաց. ձայն
պահպանաց մեծին զօրացաւ, ըստ բանին եսայեայ,
և 'ի նոյն բարբառ առհասարակ ցնծացուք ։ Յնդե-
ցան Ջրոյն տաւակաւ՝ 'ի ձեռն սորին՝ թշնամիք խա-
չին. անպատուեցաւ ճաշակն պտղոյ [33] առաջին փայ-
տին. տօնեցաւ նիւթս այս խորհրդական՝ կենաց ա-
նուանեալ. [34] անարգեցաւ երկաթ՝ առ 'ի պէտս պա-
տերազմի. իբր զօրութե ան՝ [35] 'ի սանձս երիվարին
մեծին նշանի՝ այս փայտ կենաձայն յարմարագրե-

ցաւ. ամփոփեցաւ օծեալս ցպաշտ հոգւոյն երկնայ-
նոյ՝ [36] սուրբ իշխանութեան մարդկային ձեռին: Ա՛հ
գծեաց 'ի քար տաճարին [37] մուրճ ինչ գործողի. իսկ
յա̃ծակերտս խորան՝ փայտս այս նուիրեալ ընդ խա-
չին թևոց սլացեալ զօրէ: Ա՛հ 'ի գլուխս ամսոցն, և
կամ յեօթնից եօթնեկօրորդս յոբելինիցն՝ յանկեան
ուրեք խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս տիեզե-
րաց՝ և ընդ ծիրս եզերաց՝ 'ի ծոցս Ջուրց բազմութե
ծովուց և կղզեաց նոցա՝ յաճախ սատակումն՝ անար-
գել ճայթմամբ իմն ա̃ծայնով հնչեցեալ աւետարա-
նէ: Կոտորեցան [38] տուներք սատակողին՝ այս փայտի
ցուցմամբ, յանօգտակարէ անտի մեզ փոխանձեալ
'ի խոտս և 'ի մանկազս:

Է. Ա՛հ [39] արձագանք արձանաց 'ի խորոց ինչ գան-
չութէն՝ խիստս առաքեցեալ, և ոչ դժնդակապէս,
ըստ իմաստակի ումեմն օտարի, զօդ վիրաւորեալ.
ոչ անախորժ սրութբ ընդ ունկն մտեալ, և ոչ զա-
մենն ուղղոյն անկամակութբ չար թնդեցուցեալ, ոչ
ակերցն փուշ խրտուցման՝ յանձն բուսուցեալ, և
ոչ մտացն այլայլ տաշուն աւաղի արկեալ. ոչ զան-
դակ նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ, և ոչ քար
ընդ վիրգս տալի՝ առանց քաղցրութե առ նոյն զար-
կուցեալ: Պարփակարան անխորտակելի նորայս ոտոմ-
նի. մի ամ 'ի տպատուցն կազմուածոց արարչական-
դիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից՝
ընդ ղեւտականացն՝ զգուշաւորապէս [40] բարձեալ յան-
ձանձեն. օրինակ [41] ձայնի հրեշտակին, զոր առակա-
ղին բան՝ հաւասն կոչմամբ այսու տեսակաւ զայն
տպաւորեաց. նոր գործի շնորհի նուագարանաց ա-
ւետարանին՝ զարթուցիչ [42] հոգւոյն ա̃յ առ մեզ, քան
առ օրհնաբանութի սաղմոսարանին՝ 'ի վերայ եղե-
ւէին: [43] Ակզբնապար նախընթացութե աղէյարմար
Ջութակաց՝ բարեսաւուր ողբերգարկութեանց՝ բա-
րացուցական բամբռան բառացի բարբառնութեց.
որինակ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ՝ ընդ
հնոյն փոխանորդութբ. ոչ հեթանոսօրէն [44] ուրուա-
ձայն հնչման, և կամ հրեշաբար խակախորհութե,
զոր մարգարէն տեսամբ աղդեցոյց՝ 'ի բաց արա յի-
նէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրա-

կան տածմանմբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պա-
տահարաց։

Թ. Նու արդ՝ [45] ընկալ օրհնութիւն յարդեալ զովես-
տիւ զայս տուր սրբութեան ինձ պահպանութիւն. և քո
փառաւորութիւն. քո պաշտօն՝ և իմ գոհութիւն. [46] անսա-
ղանող արութեան բարձրութեան արարչական փառաւո-
րութեանդ։ Մոցէ [47] ձայնող այդ ծածարեալ՝ ընդ պա-
տուտոտ յոգնիցս շաղկապուն, հանել 'ի հողւոյս զպա-
տիրս դիւաց՝ և զմուտս անիծից՝ և մեղաց ապակա-
նութեան։ Խրատեցէս լինել [48] զայս իր՝ նշանակիչ ընդդէմ
ջահաւորականն՝ անջրելի նշանակ՝ ջատագով անխափա-
նականն անօրինականացդ։ Ահա պարգևեալ տուալ՝ զբա-
րերութ, աղաչեմ հզօր՝ կրկին մեզ շնորհեալ պահ-
պանութիւն 'ի դիմամարտից՝ յաներևոյթ և յերևե-
լի։ Ընծեռեալ մեզ [49] ձեռն ամենայն, որ բանտ և
մատուցանես պատրաստաբար բաշխմամբ 'ի մատուցա
բազմապիսիս, օգոց քաղցրութիւն, անձրևաց շահեկա-
նութիւն։ Պահպանեցէն քոյով հրամանաւ այսու բար-
բառով հզօր տապախտան, շնչումն ցամաքեր, յար-
ձակմունք հինից չար խարդախութեանց. տուաւ խա-
փանեցէն ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց
դժնեայ մահաչքին. հալեցէն հատցէն և մեռցէն յեր-
ջանիկ ձայնէ՝ օծեալս այս փայտէ՝ որդն և ուտիչ, և
ամենայն նմանք նոցին, որ 'ի մերոց մեղաց զօրացեալ՝
ընդ մեզ պատերազմին։ Արմատացի մեզ [50] տուաւ
տունկ երանութեան գլխաւոր 'ի քեզ մեծ պաշտպա-
նութիւն՝ սահղծիչ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ
տարեկայ, որ ունի կախեալ 'ի դիտակ տատացն՝ զա-
ւանդ 'ոչ նորոգ՝ այժմու փրկութեան ծաղկեալ քե՝
քո, 'ի պտուղ կենաց անմահականաց։ Փախիցեն
յանհուն հեռաստան խորին խաւարի՝ այսր փայտի
փառաւորելոյ բարեգեկոյց ձայնարձակութիւն [51] նե-
տարք ներհակք տապատահին տարրականաց՝ բազմա-
ձևանեան խարդաւանողաց։ Մերժեցէն տուաւ 'ի
յանդող՝ [52] պտղատահմական արօրադրութեանց մերոց
տահմանաց՝ և 'ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վէրք
վտանգիչք, և հոյլք մորմոքեցուցիչք. կորեացէն տա-
լաւ՝ [53] յաւելուածք կրկնատգեղ և անվայելուչ պա-
տահմանց՝ 'ի հնարից չարին 'ի մեզ յայտնելոց. խա-

կապէս վանեցի սովաւ, որք [54] յերկարքանչիւրոց ընտա-
թեցս մերոց վերերևեին ինքնատեղծութիւք մերձա-
ւոր դաւաճանողաց: Փրկեալ տէր յն աղաչեմ զքեզ,
փրկեամ բարերար. կարկառեամ առ իս զաջդ ամենա-
զօր, և օգնեալ ինձ սովաւ՝ զերծ զիս յամենեցունց
ընդդիմացողաց:

Ժ. Սատանեցի միացի հրաման քո 'ի սոյն՝ առ 'ի
փոխարկել [55] զանդամանդեայ սիրտս յիմարեալ՝ 'ի
քոյին բանիդ արդիւնատրութի. հարցեն մնեցեն [56]
զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեաց՝ 'ի սիրտ
ծորեալս և յոգիս լքեալս, և հաստատեցեն կազ-
մեալ անդապէս՝ 'ի կայունն ուղիղ անսասանելի. իսկ
[57] զանընդոտն կակղացուսցեն զարթնուլ և զդժնդ
լինել յոգի հեզութ՝ ածուանդ քո պատուիրանիդ,
որպէս զպօղոսն և զմատթէոսն: Ածիշեցն մարդասէր
պատուելս այս փայտիւ՝ զերախտին խաչիդ, որով
զանձառաւն նորդործեցեր. բարձ յինէն՝ կնքուցիչ,
զմտաւոր պարտեացս՝ [58] պանծալի լծակօք ամբաստա-
նեաց նոր ասպանակիդ: Բացցեն կամօք քո հրեղօր՝
'ի յայս ձայն կենաց՝ լսելիք սրտից յամառեցելոց.
լուսցեն յայս մեծի բարութե քումդ անհնարինութե՝
ականջք խլից. պարզեսցեն 'ի ձեռն սորին՝ լեզուք
համրացելոց. լուսաւորեսցեն 'ի սոյն՝ տեսարանք ա-
չաց, հայել մաքրապէս 'ի քեզ պշուցեալ անայլայ-
լաբար. զղջասցեն դարձցեն կազդուրեալ [59] կամք
յափրացելոց. ընձեռեալ տացեն տէր՝ տագնապե-
լոյս անձրև արտասուաց: Եղիցի քև սա մեզ՝ լոյս
ցնծութե, ձայն ուրախութե, բարբառ բերկրութե,
[60] նուագ հանգստեան, նիւթ երանութե, պատճառ
փրկութե, առիթ քաւութեան, մերժումն վշտաց [61]
խզումն խեղդմանց, ընդարձակութի նեղութեանց, հա-
մառօտումն խեթմանց, հալածումն հեծութեց, թև-
թևութի թառաչմանց, յապահովութի կարեաց,
կարգադրութի կրից, սփոփութի վհատմանց, բժշ-
կութի ցաւոց, տևականութի հեղգութեց, ուշա-
դրութի անտեսիցն:

ԺԱ. Ի յայս [62] կամուրջ ցանկալի անխոտոր և ան-
խոտորնակ, և 'ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբա-
հետ սանդուղ երկնաշու, առ հայր քո օրհնաբան

ահաւոր անուն՝ ձգեալ մնացուցեր՝ բամբերար, հա-
ւատոյ առաջնորդութեամբ միանալ 'ի քեզ անընդ-
միջելի. որով և սէր միոյ՝ միայնոյ և միասնական
տէրութեանդ՝ և անեղծ արարչութեանդ 'ի կենդա-
նեաց և յանշնչականաց հաստելոց՝ վայելչական գո-
հութիւն փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտե-
նից. ամէն:

---

(1) 'Ի ծայրն [illegible]: Յաղագս օրհնեալ փառացն՝ որ զործի ընդ հա-
գեաց բարեխօսութեան՝ հանգստեան փառացն անմեղաց: [illegible] խորհրդա-
ծութէ, խորհրդասոր ժամանակացն, այսինքն կոչնականն, որ ունի զխոր-
հուրդ յետոյն փառացն. կամ ժամանակացն՝ որ հրաւիրէ 'ի [illegible]
[illegible]: [illegible] աղօթքս կարգեցաւ ըստ [illegible]
նութեն, համդերձ [illegible] միհնութեան, կամ ըստ օրհնութեան բարեպաշ-
տութեն: Այս [illegible] թուի եղեալ 'ի սէր [illegible], որպէս և
[illegible] ցուցանէ: Իսկ թէ [illegible] 'ի կարգ աղօթից,
թէ յայլոց եղաւ, չէ յայտնի. զի մեր [illegible] օրհնութեն 'ի [illegible]
նի [illegible]՝ թուի զէ աղօթս, և ընդ թիւ նոցա առնէ՝ յաւելեալ բանիւն որ
վասն ժամանակացն, և վասն սրբազան Մեռոնին: Այս ևս յայտնի
երևի, զի [illegible] բանս առաջ [illegible] ընդդէմ բառ-
[illegible]. (տես [illegible] 'ի բանն Հն. ըծ. 39:) Եւ զի
աղօթական ձևով առաջ գայիս, նմին իւիք այլ թերեւս 'ի կարգ աղօթիցն
[illegible], յառաջ [illegible] երեկոյեան աղօթիցն զնել զայս՝ իբրև
առաւօտեան: Եւ չէր ինչ զարմանք՝ թէ [illegible] արհամարհէին
զառաջնութիւն ժամանակացն. քանզի և [illegible] երևեցան աղանդա-
ւորք, որք [illegible] արհամարհէին, [illegible] կա-
մէին:

(2) Այս ինչ [illegible]: [illegible] փառաբանութեամբ [illegible],
'ի [illegible], 'ի [illegible], կամ ընդ [illegible] հրաւիրման 'ի
սրբազան [illegible]:

(3) [illegible]: [illegible]՝ որ է [illegible], կի
[illegible] ժամանակաւն, [illegible] և յա-
[illegible] 'ի [illegible] թագաւորութէ քոյն. [illegible] քեզ [illegible]
[illegible], [illegible], կամ [illegible]՝ [illegible]
հանգստութիւն և [illegible] սրբազան ծառայութեան միոյ հաստատեսցես
քեզ, և զառ ըստ քում առատութե՝ [illegible] առաքինութե մեր հաստա-
տեսցես:

(4) Ընդ [illegible]: Այսպէս [illegible] հոգևորաց [illegible]
կութե [illegible]:

(5) [illegible]: [illegible] օրհնակաւ [illegible] ձևա-
ցուցեր [illegible], [illegible] նմանութե. զի համարձակ գործեաւ
ժամանակացն՝ [illegible], [illegible] խոր [illegible] ուժ-
գին [illegible], որպէս [illegible] 'ի [illegible]
լոց [illegible]. [illegible]՝ [illegible]
իմ [illegible]. իսկ [illegible]՝ և ոչ երկաթի գործեան՝ զհեզութե
քո ցուցեր: Հին ըծ. [illegible]՝ [illegible]. զի առնէ՝
[illegible] է [illegible]: [illegible] 'ի բանն ԺԳ. ըծ. 3.
թէ [illegible]՝ [illegible]. վասն որոյ ոչ միայն [illegible] նշանա-

կութեան անդրադարձ է բանին, այլ և առաւել պարտաճանաչ․ զի մնայուն ոչ է լոկ բանական, այլև կենդանի, որում յարմարի քննել․ ուստի և որ վերադարձեալ 'ի մեղաւորսն (բան ճզ․ 1․) կոչեաց զնոյն․ հաւատ ներհնձեալ, յարմարիլ փոյթ, պարգեւիլ նոցին ։

(6) Յանդուգն պարկեշտ ։ Ընդհանրականս պարկեշտութեամբ Երկնից Թագաւորին, այսինքն առաքինականն և Թագաւորն, այն է՝ փառաւորեալ կամքն․ կամ, երբ կոչէ կատարեալ ընդհանուր հարմարանս [illegible] ու խօ զուգորդութեան քո, որպէս բարեխնամ [illegible] զբանական անձինն շնորհէս ։ Ոմանք զամենայն, Երկնից Թագաւոր, ասելով զմեծամեծ երկնայ ծառայից՝ ոչ խօսս, և ոչ մտօք․ բայց այս ասացեալ է 'ի գրոյն ։

(7) Մեղմիկն ձայնիւ ։ Ո՛չ փառաբանութեան բանիւ կամ ձայնիւ 'ի քննել ընկղմեցեր, որպէս առաջոյ ասենն յորդորն․ և ոչ խոստովանիւ ձայնիւ զարհուրեցուցեր, որպէս գերեաց ասենն ։ Մարթ է զգալով զերկրաւորն և խոնարհ 'ի վերայ ձայնի ժամանակին, երբ զի հնչումն նորա՝ ոչ այնչափ մեղմ է, որով առաւել ընկղմէր 'ի քնոյ՝ քան թէ զարթուցանէր․ և ոչ այնչափ սաստիկ՝ որով 'ի զարթուցանելն զարհուրեցուցանէր ևս ։

(8) Դժոխոյն անէանութենէ ։ Յարուցեր զմեզ 'ի գագաթամանէ գերեզմանական անդնդայնութեան, այսինքն թմրութեան որ յանկարծի, որ գերեզմանի նման է ։ Եւ կոչեցեր զմեզ քնով 'ի գիտակ զարթումն, 'ի ժամանակութեան, 'ի առաքինութեան, որ զինի է ուրախացուցիչ ծառայելոց ։ Յարմարի զայսն առակաց․ Թ․ 4․ 5 ։

(9) Հանդերձեալ մնացորդ ։ Զարթուցեալս ժամանակի առաջնոյ առաջարկեալ եկեղեցւոյ 'ի պաշտօն փառացն ։

(10) Զապաշխարանսն ըմբռնութեան ։ Փոխանակ կոչնականս՝ երբեմն զմեզ խմանա (մանաւանդ) արտասուացուցեր զանձանց զգածին զանհամեմատ մեծութեան ։ Եւ առաջարկեր զայս երբեմն թմբրեալ ըստ նուազելոյ զասա առաքինութեան սաստկանայի․ և երբեմն վերատեսն ձայնիւ, որ զանձն կրկնաց սաստկանայ ։ Բայց զերեսին զայս բան մարթ է 'ի վերայ մարդկային խնամոց․ որպէս թէ կոչնականս երբ խնամաւ շարժեցեր զանձն 'ի պաշտօն իմ, և երբեմն ընդ թմրութեան զասա հեղգացելոցն ծանրացուցեր․ և երբեմն կամս բերանոյ առաջարկեր շարախօս թմբրանեցելոցն, որք արհամարհեն զժամանակս ։

(11) Զճաշոյն պարտիս ։ Զպարտանսն՝ որով երևի զօրինի խորհուրդն և կերակրեն փոխարկեցեր յաղօթութեան քո շնորհիւ, առնելով զայն՝ զօրինի ճաշակումն․ և որ առաւելին փոխանակ յիմարեցաք, առնելով խմանահեցուցեր զմեզ հոգևոր համաձայնութեամբ ։ Կոչէ ճաշ կերակուր, այսինքն կերակրական կատարեալ հնչեցուցանելովն, կամ բարեխնամ զպատմութիւն զաներեւելի հարուածս օձին անմեղութեան մեզ ծանուցեր․ երբեմն թէ՝ օձն փոխանակ խաբելով զմեզ, դու ևս համարձակ կոչնականս միշտ զգուշանալ նորա հարուածս ։

(12) Ընդ Երրորդութեան ։ 'Ի գծագրելն զանուն Երրորդութեան 'ի դէմս իմ՝ յորժամ զարթնումն ձայնիւ ժամանակին, դու զերեսին կամ զանձանց կատարեալ առաքինութեամբ որով 'ի կոփումն կարելոց է, այսու կրկնեցեր, կամ հաստատեցեր ։ Ոմանք կոչ երեքին խաչին զերեսս շնորհեալ՝ որոց կոչնակին, և համարին զայն 'ի նմանութեան կայից առաքինութեան ։ Բայց լաւ ևս լինի գրոյն այլ խմանալ ունի․ զի ասացեալ է 'ի հարկանել զժամանակս՝ թէ 'ի սկզբան և թէ 'ի կատարածին՝ մինչ կան նա երեք կոչել, 'ի նշանակ նոր Երրորդութեան․ ուստի 'ի կատարածին ևս կրկնելով զերեքս կոփումն, այսու կրկնեցեր սոյն՝ զերեսին կամ զանձնուածանելն կայից առաքինութեան ։ Այս ասացեալ է կոփելոյ երեք 'ի

տեսլեան և 'ի կատարածին՝ տրուելի մինչև ցայժմ նոսա 'ի մէջ յունաց ։

(13) Ասմոդէւ յամախոխոփոսեխոս ։ 'Ի խալդէական աւանդութեանն կարգ՝ ասացեալ բարսեղեայն կամ ըղըրդեայն գործեաց և [illegible] [illegible] 'ի քո երկրպագութեն ։ որ որպէս նորա [illegible] [illegible] [illegible] և այլոց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], նոյնպէս [illegible] [illegible] [illegible] կամ [illegible] նոսա գործեաց [illegible] մեջ ըմբռնեցաւ՝ [illegible] 'ի քո երկրպագութենէ ։ Եւ նախընթաց [illegible] ։ [illegible] [illegible] [illegible], ( [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ ) 'ի [illegible] նորա՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ և [illegible] նորա [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] ։ Եւ է [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], 'ի նշան [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ Եւ նշան [illegible] ; [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ Եւ է [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] նոցա՝ [illegible] [illegible], [illegible] ։ կամ [illegible] [illegible] ։

(14) Տես Յոհ. 3 գլուխ ։ [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] է ։ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], և [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ ( Ծննդ. ԽԲ. 18. 19. և ԽԷ. 7 ։ ) Ասմոդէս և [illegible]՝ [illegible] [illegible], և [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] 'ի [illegible] ։ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible], կամ [illegible] ։ Օծութեն [illegible] է [illegible] [illegible], որպէս [illegible] [illegible] և [illegible] [illegible] ։ ( [illegible] 'ի [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] ։ ) [illegible] և [illegible] [illegible] մինչև ցայժմ [illegible] է [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] ։ և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ և [illegible] [illegible] կոչին Մելքոմէն [illegible] ։

(15) Ազգափելը ։ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible], [illegible] [illegible] և [illegible] ։ և [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], որպէս [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] ։

(16) Տեփոն Զեփոնէ ։ [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] 'ի [illegible] [illegible] ։

(17) Տեառնագրութէ ։ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] և [illegible] 'ի [illegible]՝ Յանուն [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(18) Նախագլխոյց ։ [illegible] է [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ 'ի [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] է [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] ։

(19) Աննախորական օրէնքէ ։ Որպէս [illegible] է [illegible], [illegible] ։ [illegible] ։ [illegible] և [illegible] 'ի [illegible] [illegible], նոյնպէս [illegible] [illegible] է [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]

[illegible]

(20) [illegible]

(21) Փող եղջերեայ . 3 օրին . [illegible]

(22) Գոչիւն : [illegible]

(23) [illegible]

բանիւ արգելրդութե , որում մասնակից են երկք անձինքն եւս ։ անգիտա- գրելի , անմեկնելի , կամ խոնարհելի կերպարան լուսոյ ։ Որ նշխոյիր նշա- նաւս , յետ խաչին երկրորդ անդամ շնորհեալ փրկութեան , կամ փրկ- ութեան՝ որ կրկին ձիրս հոգւոյ և մարմնոյ նորոգորդէ , հնչեցեր ձայնս , որք էր նոսա շառաւշօղս՝ օգտոյնութես յարմարաւորս [illegible] թուացեալ հոգւով զօրութե քո , հարկանելն զնդակասանկն սատանայի՝ զծուլութե , զանկրօ- նութե , զապխտութե ածայնոց , եւն ։

(24) Ջորոփեզր ։ Զայս 'ի բացատրական հոլով աստ է իմանալ . զի իբրեւ յաւիտենականոյց՝ կանգնեալ , անշարժ որ [illegible] , անկործանելի պատնէ- շոյ , ( պէտոկն , մեթեղէզ . ) տափարափ , 'ի տախտակէ ժամանակի , կամ 'ի անդունդ՝ [illegible] հարկանել , պնդեալ դիրդաւ , զբարձրեալ հաստատեալ այս փրկել՝ իբրեւ պատուարանաւորք առաջեցեր ընդդէմ թշնամւոյն սատա- նայի ։

(25) Օծութիւն քարհիր ։ 'Ի ձեռն մեռոնի օծանելովն , կամ թէ հոգեւոր շնորհն իբրեւ օծութե լինելով այսմ փրկել , որեամբ քո խառնեալ , ոչ եթէ խորհրդական արեամբն քոյ խառնեալ ասէ զմեռոնն , կամ օծեալ զփրկչին , այլ թէ զօրութե արեանն քոյ խառնեալ 'ի յօծութիւն և 'ի փրկչին , իբրեւ եղջիւր խնկիլի , հարկանող սատանայի՝ բառ նմանութեան խաչափայտին , չեռանելով , օծմամբն իբրեւ 'ի յեռանդն արեցեր ։ Այսու բա- նիւ 'ի ժամանակաւն յարմարէ զատուցեալն յաղագս եղեռնոյ օրինացն , և եղջերաց նորա , զորս բառ հրամանին ույ աստուած էր օծանել իւղով , և արեամբ արեանն ։ ( Ելից իթ . 21 ։ Ղևտ . Թ . 9 ։ Երրորդ . Թ . 19 . 21 . 22 ։ )

(26) Գինր քան 'ի վէրաց ։ Առաւել 'ի ձայնէ ժամանակին վերացեալ զրամիցն , քան 'ի ձայնէ ոտնաճանելոցն բառ առաջնեանն եւայերոց . ( Է . 4 . ) զի անոր վերացումն զրամիցայն , այսինքն վէրքն անդհոյն՝ նշանակէր ասէ՝ զկործանումն հրէական խմբաւորցն , և սատակողական աւան հին օրինաց . իսկ 'ի ձայն ժամանակին բանին զրամիցն ածաւէ յոմոց , այսինքն ավետա- թէ կամաց՝ անապատն և ամենակալ խնկեցուխէ , զի զանկապաղութեան կեր վաստակէ կարծեաւ ծուլին ։ Եթաւս խնկեցուխէ , 'ի գիրս Պիտոյից բացառու անդամ զնի փոփոխանակ վաստուե , հեղգութե , եւն ։ Իսկ բանն՝ անմխայեցուր , 'ի բառ օրինակ եւջ զնի՝ անմխայեցուցէ . իբրեւ թէ՝ անմխայել ընդդէմ . զի զուրկ 'ի զեղութէ , կամ 'ի զուարթութէ , անշուշտ ։

(27) Զխեթ դծնդալ ։ Զգծնդակ ցասս , կամ զդորդայոյթ , կամ զթըշ- նամանութե , եւն ։ Զայս՝ և զհեռանեալն մարթ է իմանալ 'ի վերայ մարմ- նաւորս և հոգեւոր փորձանաց . յորոց զերծանելք կամ նոյն իսկ հարմարէ ժամանակին , և կամ ձայնիւ նորա յաղօթս և 'ի պաշտօն ույ յարդարե- լովն ։ դորբբ առնծնեց , զպատահմաս մահաբեր փորձանաց ։ դրոս 'ի յոդնեց . 'ի ցնդաձանկ կամ 'ի թուլութէ յօդուածոց եղեալ մխարականաց գիպուածս ։ զայրախառն , նենգութե կամ զարծակցութե զինելն եղեալ հաստատնան նուազեցուցիչս . որպէս յարժամ լինի 'ի սուզ մեռելոց , կամ 'ի կորուսանս այլ իրաց ։ Զայսպիսի արկածս ասէ՝ ձայնիւ ժամանակին բառնալ ան- դամ անհետացեր 'ի մէնջ . այսպ՝ զոր նախ արարեր , առաջնոյն զգեղ՝ զաւ- ձեռալ նորոգործեաց . զառաւեալ վերստին փոյթնաղին հեծանաւ , քո զօրութեամբ զինելով փրկութեան ժամանակին՝ հանդերձ օգնականութեանք նշանիդ խաչի ։

(28) Զցատուկն ցոլմամբ ։ Զցատկեցուցիչ աղաց , կամ զերկկեալն զոլա- մանս զբնչերաց , որք ասեն ասեն փայլատակեն 'ի խաւարային առ- աղաց , և են օրինակք հրախառն կեղծաւորութե սատանայի . որ խաւար զօրով ձևանայ 'ի լոյս հրեշտակն իբրեւ հրեշտակ՝ պատրողական փչմամբ խորհրդոց ։

(29) Զյօրացեալ ։ Յ օրին . զյօրացեալ ։ Եթէ այսպէս եղանական աս-

ցի, հայլի առ բանն՝ Դիմեցելոյ. զի ըշմարտասանութեան զինեցելոցն 'ի վերայ յարուցելոյն. բայց յոգնական եղեւ. հայլի առ բանն խորհրդոց. այսու ինքն զինեցելոյն վաղվաղակի խորհրդոցն 'ի վերայ յարուցելոց, կամ յարձակելոց. Իսկ յաղթողն՝ դժնդակն նոպաս, զայս հաստատուն է. զի յաւիտեան զկայծակնաձեւ զինուոյն, որք խնդան ընդ մեռան մեր՝ հոգւոյ և մարմնոյ. կամ յարգարապատիւ ատենելով զմեզ 'ի պաշտօն քո՝ յաւիտեան զուարթութեն զինուոյն, որք խնդան ընդ հեշտութեն մեր:

(30) Յայս աղգ յոյժ: Քաղ մերձիւ զինակն զնա, թէ ձայնիւ ժամանահայրն յատենէ նոր 'ի գառաղեսանէ, զնեան ատենելով, զարթեցեալ 'ի գերեզմանաց նոցա հանելով, և զպաշտօնեաներն պատկերելով, եւն. կամ, այսու ձայնիւ բառ որում օրինակ է յետին փողոյն, 'ի մեռ ատենեն զնա զդատաստան տէ 'ի գառաղեսանն:

(31) Անօրէնաց մարդկան: Պաշտօնեայք եկեղեցւոյ բառ խորհրդանշեալ կարգել՝ հոգևորականս զինուորին: Ի յն կանոնի, բառ ծանուցանելոյ ժամանահայրին. որ զընդդիմութիւնն հրոյ դատաստանին քարոզէ ամենեցուն՝ գոչմամբ անհնարապատրաստ, անյօգապար ձայնիւ, 'ի յօրինաւոր ատուրեալ, յեկեղեցւոջ որ է օրինաւոր անեղի պատկերագծելոյ ընդ զինուոյ, և երկնայնպաքուր նահատակելոյ յանձնապաշտութեն:

(32) Փող առագաստ: Փող մեծամեծ: Առաւօտ զգանին աւուրքն, (Իսէ. 6.) և Եսայեայ (ծը. 8.) յայտնապէս հարկանն ժամանահայրին, և հաւաքման 'ի պաշտօն նոյ: Այսպէս ցնծան պաշտօնեայք նոյ 'ի բարբառս ժամանահայրին: Իսկ Թշնամիք խաչին զնա կամ անհաւանք՝ զարհուրեցան Չրոյն օրինակա, որպէս դատաստանաւ մնալոյն 'ի Չարաց ծովու եղկելութեանց:

(33) Առաջին քայքին: Ծաւալոյն գիսաւորութեն Ճառագայթն անհաղորդեցաւ 'ի Ճառագայթն զարդարեալ փայլուն ժամանահայրին, զի առ ձայնիւն լինի առաւել Ճըշմարտութեան զինուոր. Իսկ այն եղև առաւել յիմարութեն: փոխեցաւ, մեծագոյն խորհրդականն փայլուն ժամանահայրին՝ կենաց անուանեալ. բառ բանին առ աւել. զի նորա զծառն կենաց եղև զօրծի հոգևոր կենաց. տե՛ս 'ի վերո. լծ. 11. 15. 16:

(34) Աներևելի երկար: 'Ի գաղ ժամանահայրին մէջ և ս ողբոց եղև երկաթ պատկերագրի. տե՛ս զլինի. լուծ. 38:

(35) 'Ի սանձս երկնաւորին: Յայտնապէս զգանին զաւաքար. (ժէ. 20.) որպէս թէ միայն ժամանահայրին եղև արդարութի, կամ նուիրեալ տե, 'ի սանձ եղև վաղուին ջիւ, այսինքն պաշտօնէից եկեղեցւոյ, նուաճելով զարթեցուցիչն նոցա:

(36) Մոր խնամոց: Օծեալ փայլուն՝ իբր դատաստան հանդերձ ջահ, հեռացոյց զտուր Թշնամեաց. որպէս ցուցին յաղթութեան զտուր եռեալ, կամ ցուցին դատաթի առ զէնս դողութեան:

(37) Մուրճ ինչ գործողի: 'Ի քարինս տաճարին՝ 'ի կառուցանել անդ ոչ գծեաց կամ կոփեաց մուրճ (զի չէրքիճ) քարակոփի. զի յառաջագոյն կոփեալ էին. (Գ. Թագ. Զ. 18:) Իսկ յեկեղեցւոջ օրհնեալ ժամանահայրն՝ իբրև զԹև նր խաչին համաձայն լինէր: Այսու կերպին առաւելութեան ակնարկէ. մի՝ զի մուրճն երկաթի ոչ կարաց ազդել 'ի տիրապետութեն հրէից, իսկ փայլուն ժամանահայրն զօրեղագոյն ազդէ 'ի քրիստոնեայս. երկրորդ, զի մուրճն չեղև արժանի հնչել 'ի աստուածական տաճարին, իսկ ժամանահայրն իբրև զփայլուն խաչին համաձայն հնչէ 'ի Ճշմարիտ եկեղեցւոջ: Եւ հնչէ՝ ոչ յամենազօրութիւն միայն, որպէս առ հրէայս փողն ազդէ ցուցանէ. և կամ չէօթննիցս եօթնեբորդս յոբելինիցն, այսինքն յեօթն եօթներորդ ամս, որ լինի 49. որում յաջորդ յիսներորդ ամն՝ յարաժամ էր ամ Թողութեան. զոր փողով ազդ առնէին. (Ղևտաց. իԵ. 8. 9:) և

[illegible]

(38) [illegible]

(39) [illegible]

(40) [illegible]

(41) [illegible]

(42) Հոգւոյն ոչ առ մեզ։ Յ օրէն․ և հին լծ․ չիք ոչ ։ ժամանակաւ իբրև նոր գործի [illegible] 'ի մէջ նուաղապատանացն՝ որ առ քրիստոնէութեան 'ի [illegible] տակաւնին, առաւել զարթուցանէ 'ի մեզ զնկարագրութիւն կամ զհաւատ-մունս հոգւոյն մեր, քանի թէ 'ի վերայ Եղիսէի առ օրհնաբանութիւն աստուծ-ւոյ [illegible] ․ [illegible] հնչմամբ կամ 'ի նուաղել [illegible] ։ Իսկ առաւ-ելութիւն [illegible] այնու նորա, զի [illegible] հնչումն նուաղապատանին [illegible] [illegible] յեղյեղէ միայն, և ոչ յայլ [illegible] ․ Իսկ ժամանակին հնչումն զարթուցանէ զբազում ժողովուրդն 'ի պաշտօնէութիւն ։ Եղիկարդ, [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի նորաստ [illegible] [illegible] և են․ Իսկ ժամանակին ձայնիւ առաւել կառաւորին նորաստ [illegible] չնորհաց հոգւոյ և մարմնոյ ։ Այլ զի՞ասէ՝ նոր գործի, այս 'ի հնումն օրինագրեալ և նախամեկնեալ էր, որպէս և յառաջին առաց ։ Ըստ հան-գամանացն և ըստ զօրութեան առն նոր, և առաւել բացայայտեալ իսկ 'ասէ, որինէ նորոգ այն իւր փեսայից առաջնոյ մեզ՝ ընդ հնոյն փոխանորդու-թեան ։

(43) Սկզբնաւոր նախընթացութիւն ։ Պարապլոսիւ յառաջընթացս այլոց նուաղապատանաց, որք յեկեղեցւոջ կամ արտաքոյ հարկանին․ ըստ որում ձայնիւ ժամանակին հառաջեալ յեկեղեցին, 'ի պաշտօնատան հնչեցու-ցանեն զայլ նուաղապատնս, կամ կառավորել զպաշտօնն՝ առաջ զատանան 'ի մարմնական ուրախութիւն այլոց նուաղապատանաց․ որք են՝ ողնյարմար Զանաւի, այսինքն առեւր կաղմեալ երգարանք, (առնէ, կամ քնա-րան․) Քարէփաւիղ ողբերգակութեան, քաղցրաձայն դաշնական երգոց ։ Քարապարախն, զբազում երգողին կամ ըստ նոցին ցուցանօղ և շարժօղ, Քանք Քաւան, զոր ունիմք մեկնեան (շարժմուրոյ, գիր․) և այլք՝ (Թմբկուակա․) Քառասուն Քարատաւոնութեանց․ բառւէրք խոսնց յարմարեալ ցուցումն բարբառ մարդոյ, և այլ կենդանի կամ անկենդանի իրաց, և ոչ ձեռակերպութեամբ զդեստուց և շարժման մարմնոյ․ կամ, զեռեղկին յօրինեալ բանաստեղ-ծութեան ։ Զերկոսին խնամոյ են նշանակեն այս երկու անուանք․ և բանին են յարմարեալ․ զի հարկանօղք շարժմարայն կամ Թմբկուակին՝ յերգել իւրեանց երգեմնի յառաջ մերին զդեստս այլոց՝ բանիւք, և ոչ կերպարանաւ, և երգեմն միայն ձայնիւ բանաստեղծական բանս ա-ռնեն ։ Էր զարդարեալ որինէ նորոգ, նոր որինը՝ ոչ փչմամբ, այլ հարմամբ․ առաւել մեզ փոխանակ որինեի հին օրինաց ։

(44) Որպիսութիւն ձայնին ։ Միակն կամ անփոփոխ հնչմանն․ զի հեթանոսաց նուաղապատանք ոչ ունէին խորհրդոյ ինչ, և բանք նուաղացն՝ առաս և առասպելք էին ։ Իսկ ոչ հրէաւոր խոհական քանզի հրէական թմբկար մասնաւոր, որով հանգիստ զորութեան հնչմունս լինել հաճելի ոչ, և փառաւորիչ, և հաշտեցուցիչ․ վասն որոյ և ընդդիմանալ աստեղաց (Ծ․ 23․) արդելին․ այլ զժամանակին օրինաց, ընկալօղ, և առաւել պատուելոց մատուցական փարթամք օրհնութեան և օծմանն իբրև անհարկու զենոց ։

(45) Ընդհանուր օրհնութիւն ։ յօրհնեալս ինչ, ընկալօղ, որ առաւել յարմար է․ զի որոգէն մեկնելոց՝ թէ ժամանակաւ ընդունելի է ոչ․ ուսանի ոչ միայն խնդրել՝ թէ ընկալ, այլ թէ՝ եւ ընկալեալ օրհնութեամբ և գովասանութեամբ զայս պառ օրհնութիւն, որպէս և որպիսութեան՝ ինձ 'ի պատահականութիւն․ և այլն ։ Վասն որոյ ձայնէ յաւիտ, ևն․ մի այլ օրէն․ ընկալօղ ։

(46) Անպարտ [illegible] ։ Անխարդախ, և անխարդախելի հնարք կամ զիւտ զեղծանելոց․ զի ժամանակաւն ոչ յաղանդաւորաց հնարեալ է, և ոչ կարիք խառնեալ կարեն ։

(47) Ձայնը այդ ։ Ձայն ժամանակին իբրև ձայն անծայրին մարդ ընդ-կալեալ յօգնականոց մարմնոյ․ և հանդէպ 'ի հոգւոյս զորավորս զինուց, և զինեալ առնոյ անփոփոխ․ որպէս զսո անծայրին ձայնիւ հառնելով 'ի մարմնոյ

[illegible]

(48) Ձայս իր ։ [illegible]

(49) [illegible]

(50) [illegible]

(51) [illegible]

(52) [illegible]

(53) [illegible]

(54) [illegible]

(55) [illegible]

երկնայնոցն, և թէ ըստ Փիլիսոփային պտղաբերն [illegible] ամենայն [illegible] պատուէ
իբրև [illegible] . և ըստ երկնայնոց [illegible] փոփոխականի 'ի [illegible]
կեալ [illegible] և [illegible] ։

(56) Զայս նեցուկ հրաշից ։ Զայս հրաշալի նեցուկ (աստուածային) [illegible] 'ի [illegible] ծորեալս, թուլացեալս, և հաստատեալս 'ի կոյսն, 'ի կանգնեալ [illegible] ։

(57) Զանընդունակն ։ մի օրինակ . զանընդունակն, զանշարժն [illegible] [illegible] [illegible] հեղ [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] և [illegible] ։

(58) Պանծալի ցնծալից . երկոսեան [illegible] ժառանգութեան իբրև ընծայք [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(59) Կամք յաւիտենից, [illegible] 'ի Հօրն [illegible] ։

(60) Ըստ [illegible] հանգանակեալ ։ Երբ հանգուցեալ հօրն . [illegible] և [illegible] [illegible] 'ի [illegible] հօրն [illegible], [illegible] [illegible] ժառանգութեան է [illegible] [illegible] [illegible], [illegible] յաղթեալ 'ի [illegible] [illegible] հօրն, [illegible] [illegible], [illegible], և այլն ։ [illegible] [illegible] [illegible] [illegible] ժառանգութեան [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] է, և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible], և այլն ։

(61) Խաղաղ խնդութեան ։ Խաղաղ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] խնդութեան ։ [illegible] [illegible] [illegible], թէ հօր[illegible], և թէ [illegible] . [illegible] [illegible] [illegible], [illegible] ։ [illegible] [illegible] ։ [illegible] [illegible] հօրն, [illegible], [illegible], [illegible], [illegible], և այլն ։ [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] [illegible] ։ [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] ։

(62) Կամաւորն ցանկալի ։ Ժառանգութիւն [illegible] իբրև [illegible] և [illegible] [illegible] . և իբրև [illegible] [illegible] . մի օրինակ . [illegible] . իբրև [illegible] [illegible] ընդ որ [illegible] [illegible] [illegible], և ոչ [illegible] ։ Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] . և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] . մի օրինակ . [illegible] ։ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible], [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], 'ի [illegible], 'ի [illegible], 'ի [illegible] և այլն ։ Վասն զի [illegible] [illegible] [illegible] [illegible] ժառանգին [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] . [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible] . [illegible] զի [illegible] [illegible] է [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] . և 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] է [illegible] ժառանգին, [illegible] և [illegible], [illegible] [illegible] [illegible] զի [illegible] [illegible] [illegible]։

¹ Սերովբէին յաւելուած երգին հեծութեան՝ նորին հօրոցն, առ նոյն
աղերս ձաղկեանց բանին ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ՂԳ.

² Աղօթք Թարգմանօրէն ձայնի ողբալցս եղցին Աստուածածնէ ։

ա. Սուրբ ահաւոր անուն բարձրեալ անպատում.
անձկութ ³ փափաք յարախորժելի. ⁴ 'ի սրբ-
բերգենիցն փառաւորաղաց միշտ սրբաբանեալ՝ ընտա-
կեալդ 'ի սրբում. լի և ամենազեղուն բարութ առա-
տաձեռն աննուազելի. լոյս բարի, և ծագումն գովե-
լի. ⁵ երկրպագեալ փառաւորելի, ահեղ և անզննե-
լի. ⁶ ամէն և յաւիտենայնում. Նոյնու բանիւ ⁷ դա-
շամբք յուսոյ՝ ուխտ ընդ քեզ միութ հզօր, ⁸ այժ,
ամէն, ալէլուիայ. գովեալ թագաւոր հանուրց, Ած
բոլորից, ստեղծիչ գոյից, և տէր կամարար, ⁹ միայն
առիթ պատճառաւորաց, փրկիչ և ¹⁰ օծեալ մշտա-
պաշտելի ։

բ. Ուստի ¹¹ մեկնապէս թարգմանեալ 'ի մեզ զայս
գանձ անվաճառ՝ և հարստութիւն անփոխադրելի՝ յա
քո արքայ երկնաւոր. որում դողութ մեծաւ ¹² սպա-
սեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշըն-
չութիւնք, կրկնեալ քեզ յօժարութ 'ի հաճութենէ
անխառն միաց՝ ծանր գոհութե. ¹³ ստեղծօղ էու-
թեանց, որ են 'ի տեսման և 'ի ծածկութե. Որ նոյն
և էիր միայն բովանդակ՝ ամենեւին անպակասելի, ա-
ւեր զմերս իսկապէս համայն, զի 'ի լրութէ քումմէ
լցուցես. օրհնեալ և բարեբանեալ՝ ծանուցեալ յա-
ւէտ միշտ անքննութեամբ ողորմութ մեզ 'ի փրկ-
կութե, 'ի փառս և 'ի գովեստ անճառ բարձրութե
ահաւորիդ բարերարութեան. Սկզբնածին ¹⁴ օծմանս
շնորհի՝ մեծախորհուրդ հրաշազարդութե. ¹⁵ քան-
զի լոյս քո մեզ ծանուցեալ՝ ճառագայթ անհատ.
ծագումն անսահման. արեգական անաշառափիռ. ¹⁶
ամսոց սահմանիչ՝ երկակշիռ տարրութեանց. ¹⁷ ճրագ-
տեղց՝ և լոյս հետևմանց, ¹⁸ որով 'ի ցոյցս իմաստից

եկեալ տեսութե՝ բանիս այս յարմարութե, տօնեմք
պարերգութե հրեշտակօրէն յստակամտաբար՝ փրկ-
չավայելուչ կնդրկաւ խնկեալ զպարգևաբաշխ առա-
տատրութիւն ամենիմաստիդ՝ յիւղ զուարթ անբիծ
դաւանման ։ Վասնզի 'ի սկզբան անդ՝ 19 կապտեցե-
լոյ ողորմելի տխրականութե 'ի փչմանէ բարձրագոյն
շնորհին՝ հայրն իմ սկզբնաստեղծ՝ և հնացեալ յա-
ւէտ մեղացն գերմամբ 'ի մահ գրաւեցաւ. կապեալ
ընդ եղծման ապականութե անզերծ հանգուցիւ, 'ի
ծառոյն պատճառաւորեալ յանկումն անյարիր ամե-
նակործան գլորման, հերքեալ 'ի լուսոյ՝ այսր խա-
ւարին վայրի մատնեցաւ. իսկ դու գթած տէր ողոր-
մութե, քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղ-
ծեր, 20 և զի չէիր անկնկալութեամբ չեկաց յոր կնչ-
էրն, որով անկարողանայր իսկապէս տեսանել 'ի
լոյսն վերին անմատոյց գերակայութե անսահմանել-
ւոյդ, ոչ միշտափայլ յարակայ վառմամբ անաղօտե-
լի տարածանեցեր, այլ գիշերայնոյն սանալպիրծ
մթին արհաւրաց՝ ձեռնկալուն ձիթոյ՝ շարամանու-
թեամբ նիւթոյ պատրուկի ընդ նոյն զանգելոյ՝ յօ-
րինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝
մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր. զի որ 'ի լու-
սաւերս մահու տարագրեալ գտաք՝ կանխակորուստ
անկումն պարտեաց, 'ի պատճառ իբրին՝ ազգակցաւ
պտղոյն ջահաւորեցեալ հաւատոյն վառմամբ՝ 'ի
նոյնն դարձցուք խնկաւորութե. որպէս և փայտիւն
մահու՝ մածմամբ քո 'ի նա՝ ածեալ մածուցեր զմեզ,
առակաւ մեծի խորհրդոյն՝ միաւորեալ 'ի փայտն
կենաց ։

Է. Եւ արդ՝ 21 որպէս ոչ է որ լոյսամբ՝ առանց գի-
շերոյ, և ոչ տնօրէնութե յարկի՝ առանց ձիթոյ պի-
տոյից կնդրոյ. քանզի եթէ օրինակն հասարակային
ոչ նուիրաւոր՝ զմարմնաւոր աչաց տեսութե լուսա-
ւոր առնէ, նոյնպէս և մաքրեալն քոյինաշունչ շնոր-
հին ընտրութե անիմանալեաւ զաներեւոյթ հոգևո-
միութե 'ի մեզ անտեսիդ՝ հրաշափառապէս պայծա-
ռացուցանէ ։ Ոի որպէս 22 յիջումն լուսարանի նա-
աւազանին՝ լուացմամբ. մարմնոյն՝ զանձինն հաւա-
տամք առնուլ սրբութե, այնպէս 'ի յօծումն իւղոյն

պարարեալ յուսով՝ զՀոգւոյն զօրութիւն առնումք և 'ի նոյն՝ Համարիմք ունել ամենայնիւ աներկմտելի: Եւ որպէս Հրամանաւ տէրունական օրՀնաբանելի՝ զքաւութիւն մեղաց ախտացելոցն [23] նախաձեռնէիր. իսկ ոչ Հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն Հրաշալի՝ յանդիմանակաց անՀաւատ առ նմին մարմնոյն տեսակի՝ Հաւատարիմ վկայ անդարձիցն Հաստատէիր, տոյնպէս իսկ այս փրկութեան լուսով կատարեալ Հեղեալ 'ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքին մարդս անտեսանելի ծածկապէս մտեալ նոր կենդանածնէ:

Է. Պատկեր պանծալի [24] այս զանգուած նիւթոյ՝ արարչիդ երկնի. քանզի որք զիւղոյն կրեցին օգտութիւն որ յողորմութեանն շնորՀնծայութի, և դու 'ի դա մեռոն քեզ զայս բան նուՀմանեալ, թէ ողորմած եմ ես տէր. քանզի որպէս սիրոյն [25] անուան կցորդիս նմ, նոյնպէս 'ի մասնէ և այսու զինեալ դծագրիս՝ ըստ անուանութեանն որ առ մեզ: Ահաւադոյն մեծութեան խորՀրդոյ յարմարաւոր [26] դիմակերպութի այս ճարպ պարարտութեան երկրի թանձրութե Հողանիւթ գոյականութե. զի որպէս տոյն մասն 'ի կենդանւոյն՝ ոչ 'ի կերակուր Հրամայիւր անդ՝ ըստ օրինին, այլ արարչութեանդ բոլորովին [27] պատուղ որոշիւր, նոյն նմանութի եւս և աստանօր [28] իբր զզօրութի՝ մն մատչելի յայտ ուանդ Հաճութե էիր ...ոյ վայելչապէս տուեալ նուիրի, Հոգւոյս Հարազատ զուգաճանապարՀ, արարողիդ պաՀեալ և ուխտեալ. քանզի ոչ շունչ արեան՝ և ոչ ճենճեր ինչ զուարթութե՝ [29] օրինակ Հոգւոյս իմոյ և կարոյս՝ ընդ անդամաթիւս մարոյն ծախի, այլ արքայութեանդ վերնում վիճակի՝ տէրունական բազմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ ջանՀաւատական մշտաբորբոք անաղօտելի:

Ը. Մ'Է էր մատչելի 'ի նախապաՀութի առու անդրանիկ [30] դատիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ ինչ նշանակէր. ոչ քաՀանայութի 'ի յանկոխելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր: Յակոբ զքարն [31] պատկեր վիմին՝ 'ի խորՀուրդ երկար՝ խորանին ընտրութե՝ օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զիջուցն անճառ բարձրելոյդ՝ տեսուէ սանդ-

զոյն յարմարութե, և զխս 'ի վեր տանելոյն անդրա-
դարձութեն, զարձանն իւղեալ կառայց նպատակ՝ 'ի
ցոյցս տապանենացն յիշատակի։ Զհարմարեան քահա-
նայութեն պայծառութի հրամանաւ Մեծիդ այ՝ օծ-
մամբն Զուխանայր. որով 'ի գլխոյ անտի 'ի մօրուսն
ղեղեալ [32] գերափառ իւղոյն՝ զարմանազան կենդա-
նագրութի, ըստ սաղմոսողին, զփառաց նախնւոյն
առակեր զանգրադարձութիւն, և զշնորհիդ կենաց
արքութե ընդ մեզ խառնութի։ Աստուածորութիւն
ոչ էր պանծալի անդամոր [33] պատկերան տեղծա-
գործիդ, եթէ ոչ եղջերբ իւղոյն օրհնութե ձեռնա-
դրեալ՝ արմակառ պձնութե Թագին՝ յանուն քո քմ
գլուխ ամբառնայր։ Այլ զխնդրդ զնախնեին վեհից մա-
ռայցոյ՝ զծառայն Մեծիդ՝ և զկերպարանն անպարա-
դրելույդ. ոչ ահա Մելքիսեդեկ՝ յօրինակ Ճշմար-
տիդ ահարութե 'ի ձիթաստանեաց լերինն, ուր
'յետոյ առք մարմնացելոյդ այ զետեղեալ կայցեն, [34]
'ի վերնոց անտի հրեշտակաց՝ [35] 'ի պտղոց տեղւոյն
իւղեցաւ. ուստի [36] շիրմի սկզբնահօրն պաշտպան՝ և
դիտակապատական արքայապատիւ Զօխութե՛ 'ի քէն
հանդերձեալ նստաւ, մինչև յայտնեցար երևեալ
լրմամբ՝ համայն խնկութի. աստուածային կենդանագոր-
ծութեդ։

Դ. Այլ արդ՝ քանզի քո են շնորհք, և քեզ վայե-
լեն գոհաբանութիւնք՝ օրհնաբանեալ որդի այ, դու
ինձն յարմարեալ [37] բարեխնշմար տպաւորութե՛ զաղա-
չանս իւղաւորականս՝ խնկապատարս՝ զմռասալիրս՝
պատճառ քեզ փառաց, և ինձ մեղապարտիս առիթ
բժշկութե. մատն տէր ջո, վերացս աներևութից՝ [38]
զայս ձէթ լուսանիւթ. և արկ 'ի սոյն խարանս խո-
ցոյ մահացուի՝ զկաթուած օրհնութե իւղոյդ փրկու-
թե անապակ գինեաւ սիրոյդ, մխութե արարչակա-
նաւ պատապարեալ պատանօք խնամոց. զի յիշատա-
կարանս Թարգմանօրէնս բանիս մաղթանաց՝ վայել-
չական իմն յարմարութե՛ 'ի Թևս հոգւոյդ զկարգ
իւր գտցէ։ 'Ի վերայ դպութի հոգւի քո բարձրեալ՝
յայնմ օրէ խաղաց, յորմէ օծութեն նուիրեցաւ։
Սաւուղ յայլ յայլ՝ և 'ի մարգարէս ամանս անտուստ
իսկ դրեցաւ, յորժամ օծումն ժամանեցաւ զադա-

թան նորին ։ 39 Սրբութեան առաքինութեանցն՝ օծ-
մամբն զարդարեալ՝ մատուցանէ ՚ի կցորդութի առանձին իւ-
րայնքն ։ 40 Այսպիսեաւ ասմամբ նշանակութեամբ վեհս և երեւե-
լիս ՚ի խորհրդականաց քարոզարար աղբերաց՝ խելք այս կեն-
դանացուցող ցօղով անձրեւեալ՝ իբր կարթիւ որսացեալ
՚ի լուսաւորութի հոգեւորութեան մեծիդ. այս ։ Որանք
որ առ կերպս 41 երկնաւորին պատուասիրութեան զօ-
ծեալքն ձայն՝ նախն մեծ վարկեալ ։ Զայն սաղմոսողին՝
42 դեր քան զմարգարէութեան զօծեալն անուն նախա-
յարմարեաց, կանխափակ ընդ մեջմակեալ պատուէր
առանդեալ, մի մերձենայք, և մի մեղանչէք ։ Որ հե-
զիշա առաքելութեն ամենայնն հրամանատարութեան, 43
նշանակ իմն հանելոյ ՚ի պաշտամանէ անտի քահա-
նայ, զօծելութիւն ՚ի քորեպ աղջկաց յէսայ և ա-
ղայելի ։ Իսկ թափեալ անուն փեսայից՝ ՚ի հոգեկից
բանից խմասարանոյն վերամկայեալ՝ կանխառ իսկ զբե-
ցառ. 44 որպէս զի հոգին՝ այն յաւէտ պատկեր և նշա-
նակիչ զ՚ի փոքուս զմեծդ կերպադրութեն քև նկա-
րագրեալ՝ ընդ քեզ միացուք առամամբ քո շնորհիդ ։

Է. Իսկ զի և երկարս՝ 45 պատուածօրէնս՝ բացա-
կանադրոյն դծադրական և առակաւորս շարադրե-
ցից առաջի վերնոյդ և աշաւորիդ մաղթողական
բանաստեղծութիս. տէրդ և կենդանարարդ՝ արա-
րիչդ երկնի և երկրի՝ 46 ՚ի յօծմանէ անտի սկսար
քարոզել զաւետարանն արքայութե. վկայեալ ան-
տուառ ՚ի յոհաննէ՝ օծեալ և գառն այ՝ բարձող մե-
ղաց աշխարհի ։ Ոչ թէպէտ ընդ օծմանն օրհնու-
թեն հոգին էր քեզ իսկաբար լրմամբ, և այնութե
խառնութիւն բովանդակապէս, այլ անուննն պաշտի
խորհրդեամբ շնորհին հրաշափառապէս աղդելոյ ՚ի
մեզ. զի զստրկութի տղամեան մարմնոյն՝ մեծանալ
յաւէտ այսու յորջորջմամբ պատրաստ արասցես ։
Նացեալ զառածս մարգարէութեան եսայեայ՝ զու-
խինքն 47 այնութիդ մարդացեալ՝ ընթերցար, հաւա-
տարիմ առնել զբան ծառայից քոց տէր. և խորհե-
ծանուցեալ եղեր օծութն ՚ի կարգ անդ բանին, թէ
հոգի տն ՚ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, առաք 48
փակեցեր ՚ի հանդիսատեսան օծելութէ՝ զորքանու-

թէ երկնաքաղաքացւոցն յայս արարեալ խորհրդոյս սահմանս՝ ընդարձակ հեռաւորութիւն մեծամեծ կենքեցեր, զմերս՝ կաթուածով ինչ շնորհազարդեալ, և զքոյդ՝ իսկութիւն ընդ հօր՝ և ընդ հոգւոյդ հաւասարութիւն թարգմանեալ: [49] Ի նախածանօթ մերձակերպութեան՝ պանծալի իմն զովելութիւ ծնեալքն կոչմամբ ՚ի հրեշտակացդ փառաւորողաց՝ արարածոց երկրի ծանուցար: Ո՜ որ մարգարէքն կանխաւ զուշակեաց զ՚ի յորդանանն, և յինարեալն լուսոյն թագաւորական՝ հայրենի ձայնիւդ եկաւորութիւն, թէ [50] որ պատմէ ՚ի մէջ մարդկան զօծեալ իւր: Ո՜ որ սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝ հզօրիդ փառաց զայս պատիւ [51] առ ՚ի զաւեալդ ձեռնագրելոյ, օծ զքեզ ա̃ծ՝ ա̃ծ քո իւղով ուրախութեան:

Ը. [illegible]ոգի երեկոյ մերոյ առէր քեզ. ձեր է [52] օծեալ անուանդ իւղոյն, որով զփչումն կենդանութեան ՚ի գեհեմեր լոյս՝ բարեբարբառնդ քո աղդեցեր. [53] իմաստութիւն ումեմն երջանկի՝ մարգարէութիւն խաստովանելի, առելով առ ամ, թէ եդ վկայութիւն առաջի ամ օծելոյն. զնոր աւետեաց վկայելով, թէ կոչիկս անգամ ոչ առ ի յամենայն մնեղեաց. Ներգացն երգ՝ [54] իւղեփեցական գինի՝ զաստուծով ծանուցեալ զխորհուրդն՝ ՚ի զովեստ հարսին Տր եկեղեցւոյ՝ զմուռս առաքինութեան հանդերձ ամենայն առաջին իւղովն. և ես զմուռս և կնդրուկ մաքրութեան վարուց ամենայն փոշեաց անուշից՝ իւղովքն զանգեալ՝ անդրստեն և այսր յառաջաբերեաց: Դանիել զկենսատու մահու քո՝ ք՚ս թագաւոր երկնի, ՚ի վեր քան զօրինակ կոչումն ձայնի՝ զայս անուանադրեալ վկայեաց յայտնի, թէ զկնի վաթսուն և իննն եօթներորդացն՝ սպանցի օծեալն, և օծեալ առաջնորդ զքեզ յորջորջեաց: Ճրագակիր աշտանակն [55] զաքարիայ աղաղակայ՝ որ ՚ի բարեքեայ՝ [56] իւղոյն բարեբաշխ բացատրութիւն ՚ի մասունս եօթանց առաջադրութեանց գնդիցն վառելոց՝ ՚ի ջահէ անսուր զօրութիւն անեկամնաքար վիճակաւորեալ, զ՚ի քոյդ լրութէ ՚ի մեզ փրկութիւն և օծելութիւն գերաբնապես նախաղեկուցեր: [57] Ո՜ որ ըստ օրինին անսուաս գուշակմամբ ՚ի խորանին որ ՚ի տաճարին՝ ամէնընդել իմն կրթու-

թէ ամփոփաբար մատուցեալ լինէր, պանք բաղդաւորեալ-ծայք, և նաշինք խուզմունք խառնեցեալք, և զուարանք եղանց խուղարկեալք, և տիրական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ամանց թաթաւմամբ յաղթանակից ձարդին 'ի յարիւն, այսր խորհրդոյ՝ առձեռն տեսակք և նշանակիչք յարմարականք քեզ՝ միածին ծնունդ որհնաբանեալ մեծիդ այ. միայն զուծեալ նորոգ և զարմանալի՝ խնքնութե համայն էութե՝ խնկաւէս լցմամբ ամենայնիւ անպականելի:

Թ. Եւ զի՞ ես իցէ բազմապատիկս նշանակել առ այս մեծ խորհրդոյ անհասանելի, [58] և ոչ ճաշակել զքեզ՝ քաղցրութի. իմանալ քև զայս՝ թէ զի՞նչ իցէ իւղն, եթէ ոչ՝ զախորութին 'ի փայտն պարտեաց՝ սպանմամբ բժշկեալ, ըստ առաքելոյն, զուարթ զգործեացն: Եւ զի՞նչ պարարտութին, եթէ ոչ՝ զկերակուրն մահու ռոմաւ մատուցաք լցեալ 'ի ամանէ: Եւ զի՞նչ օծութին, եթէ ոչ՝ զմխիթարին թշուառ տեսութին՝ 'ի ձեռն որոյն փոխարկեցաք 'ի պայծառութիւն յաւէժ ուրախութե. անուամբ քո փրկեալ յոգի զօրութե՝ հօր անուանեցաք: Եւ զի՞նչ արդեօք մարգարէին հոգևոր ըղձականութի ամենատենչ բաղձանացն իցէ իմանալ, [59] որոյ ծերութին առակի 'ի ձէթ պարարտութե, և կամ օծանելոյ իւղով զգլխոյն վերամբարձութի, եթէ ոչ՝ զհկին խարդախութի ապայն տասանակութ 'ի մահ կործանմանն՝ կենագործեալ զեղովս այս կենաց՝ պատապարեալ օժանդակեցեր: Եւ զի՞նչ [60] ճրագին լուսաւորելոյ շնորհակալութի, եթէ ոչ՝ 'ի մէջ իմն անյուսութե մեղացն միջի և կապաշտութեն խաւարի՝ կերպակցապէս միութե 'ի յիս եմմանուէլ: Եւ կամ զի՞նչ մարգարէն ա՛ծաբանեալ 'ի ափափանս զուարթարարս որհնութե նշանակ յայտնի վայելչապէս ամանց աւետէ, օծցին իւղով 'ի մերոյ պարգևելոյ. և կամ իմաստունն 'ի զիմաց հարսինն՝ առէ օրիորդացն, հաստատեցէք զիս իւղով, և զեղեցկաղարդ խնծորով յարկեալ ծածկեցէք, և [61] 'ի պարտէզ իւղենեաց տածեալ զորդեցէք, եթէ ոչ՝ այսր առհա [62] ընտրական նիւթիւ՝ հրգաւէտ քո լցեալ 'ի ասյն լոյս տեսցուք զանիմանալին:

'ի մեզ բարձրութեն գծվեալ։ Այլ արդ քեզ միայն՝ խնամակալ, պատճառ բարի[63] բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բազկացս՝ երիկամանցս գործակցութբ՝ սրտիս հեծութբ՝ լեզուիս և շրթանցս ձայնարկութբ. լո՛ւր ողորմութբ տէր, պաղատանացս խնդրուածոց առ քեզ կարդալոյս. շնորհաւորեալ այսու պարգևօք՝ գոհաբանութեն քեզ վերընծայեմ հզօր ահաւոր բարձրեալ անքննին, անփակ փափագմամբ միշտ համբուրեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ, օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնութբ։ Ընձեռեա առաւել բարերարութեն իսպառ վրիպելոյս. տո՛ւր յոյս քաղցրութեն՝[64] ոչ մասին միոյ մատուցման լուսոյ՝ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լայնել քև բանի զնրբուն ծածուկ խորհրդոյս, գրգութեն խառնեալ ընդ աղերս՝ առել ընդ դաւթի, ընկալայք մ՚ծ զողորմութեն քո, և զծածուկս զաղտնեացդ անտեսից՝ իմաստութբ քով յայտնի արարեր։

Ժ. Այլ արդ՝ մեծութեն քեզ՝ ամենակալ առատաձեռն աննուազելի՝ ամենափոյթ առ 'ի գթութիւն՝ մշտայօժար 'ի բժշկութեն, զի միացուցեր խառնեցեր ընդ մերձաւոր դիւրագիւտ[65] ընտանի նիւթոյս՝ ըղհրաշս անճառս քումդ սքանչելեաց ահաւորութեն։ Քանզի զոր երկին ամենայն բարձանց՝ երկիրս լայնութբ՝ և անդնդոց ներքնոց խորութբ՝ ծովուց բազմութբ՝ ոչ զօրէ տանել, այլ իբր զգոյզն 'ի մեծէ բերի, 'ի փոքր գոյս տեսականեցեր զօրութբ՝ առհմանեալ Ճշմարտապէս անհրապուրելի. զի մի նորագիմն երևելով յայլ էութեն՝ առ աչս հարևանցի[66] երևականութեն ինչ վարկանիցի, վիրաւորել՝ քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտաց։ Քանզի[67] որպէս մարմին՝ քեզ հաւատապէս՝ օրհնաբանեալ որդի այ, իսկութեն և ոչ օրինակ՝ 'ի յարդեանցն ցորենոյ արարչապէս միշտ հանդերձեցեր, և կայլակ կաթլից՝ զարիւն խաղողոյ, և արգանդ կենաց հոգևոր ծննդեանն՝ զառատութեն ջուրց յոլովութեն, նոյնպէս և զհոգի անմահից փչմանն՝ նովաւ և 'ի սոյն արդիւնաւորեցեր.[68] երկունք կենաց՝ որոյ կերպարան յառաջ եկելոյն՝ և ոչ հեթանոսութեն է փոխարկութեն, այ

ոչ տեսանողութեան խաչականն փայտին ինչ երկրպա-
գութիւն, նստելոցս յերկրի խաւարի՝ ըստ նմանութեան
քո տէր՝ ծագեցեր ։ Վասնզի [69] յայս կերպարանս շը-
նորհի՝ զանսպական լուսութիւն անհասից յայտնեալ առ-
խարհի լուսաւորեցեր, զի մի անանկն կարօտասցի՝ և
մի ընչեղն բարձրամտեսցէ, ըստ օդոյ հաւասար
բաշխման, և լուսոյ արեգականն տարածման, և ջրա-
կանն վտակաց զեղման. զի հաւասարապէս բաշխիւր
երկրածնաց մնանայլին զուգամանութեամբ՝ փրկութեանն
առաւել, քան մեծամեծացն ։

ժա. Իսկ այս նիւթոյ [70] տեսաւորութիւն խորին խոր-
հրդոյ՝ և 'ի քննուստ աննտուստ հրաշապէս ունի ըղ-
թարգմանութիւն. որպէս զի ոչ երկմիտ ինչ շուէթա-
փութեամբ անհասատատապէս զտեղի փոխէ, և ոչ նենգա-
ւոր զննակութիւն ինչեան լքանէ. քանզի ոչ վերջ-
նակաւոք ածասովք հերքի, և ոչ յընդդիմակցե
տամբքէ ողողեալ արտաքս ելանէ ։ Նաև զի որպէս
[71] պատահուամն գանոյ յեութի մարմնոյ՝ անփոփոխ
իմն և անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ՝ և ոչ
գոլովն ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութեամբ
իւղոյս զօրութեան աննըստին 'ի յիւրոց անտի կերպա-
րան զառեալն ունողի՝ միասնական զուգութեամբ ընդ
մեզ իսկ կցորդեցեր՝ տէր իմ քո, ընդ իրեն գոյի՝ և
զօրինակն ըծակցելով. քանզի զանխիմանալին տեսու-
թեան աչաց և մտաց ըղձից՝ 'ի դէմս բերեալ կերպա-
ւորեցեր. 'ի պտղոց երկրի ծնեալ մզելով զարմա-
նալեօք հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատ-
րաստեցեր ։ Մանաւանդ զի [72] ոչ յոլովից խառնից
'ի մի եկելոց խմբակցուէ զանազան ծաղկանց, ըստ
հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլուէ, զայս
իւղ օծութեան հրամանատրեցեր, այլ իբր զօրինակ
փոխեալ զայն առ այս՝ դու ինքն խառնեցար 'ի սոյն
մաքրութի վերնալոյս ձիթոյ ։ Որ թէպէտ անձառ-
ենն համեմողութիք քումդ անուշութեան, և [73] ընդ օրի-
նակաց իւրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի՝ և
շուշան հովտաց՝ և նարդոս ընտիր՝ և եղեգնախունկ
խառնեալ հալուէիւ, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝
փթթեալ ողկուզոյ և ազնիւ գինւոյ, ոչ սոսկ՝ քան
թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար փա-

սպասաւորեալ անասնոց անբանիցն, որ զանմահանային ըստուս, և յիւրն իմեքէ սեղանեղէն ոչ կարօտանայ: Սաստի 74 ոչ չփոթելովք ի հակառակաց բանսարկութեանց՝ բաժանեալ կամաց՝ մեկնեն առակի, այլ ի սիրոյ հաւանութէ ծնապէս ի մէնջ պարապին, վասն մեր ըստ մեզ՝ առ ամենայն վայելչական նմանութեն օրինակեցեալ. առ որս լոյս բարի՝ և հուր ջեռուցիչ, առաջ սիրոյ առանց մասին ինչ չնչմանն անզգայական սոսանացրասութեն՝ այս զանգուած նիւթոյ կաթուածոյ ձիթոյ՝ մաքուր մասաց տեսեալ խմանի, որով յերաւի առվաւ ի յամն է մխանալի: Ընդ սաղամանի օծելոյ որդեգրեցելոյ սոյ՝ երգեմ բերանով հարսինն՝ երկնաւոր փեսայիդ քարեբան գոհաբանութեն, համբուրեալ ի յիղձս մասաց՝ զհոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս, և իբր զբանս կենաց յաւիտենականաց ածնողի, ըստ հոգելից բանի իմաստնոյն՝ և 75 ծնարան աւետարանչին, զհետ քո ի հոտ իւղոյ քոյ ընթասցուք. 76 Լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ ի վեր է քան զերկերն օդոյս այսորիկ, և օծեալ ըզգլուխս անախտական իւղովդ երկնայնով յանդիմանն եղէց քեզ ուրախութե, զուարթապէս և ոչ տխրաբար:

ԺԶ. Սոյս իւղ խնկելի՝ 77 պաշտելի և երանելի, ոչ սոսկ օծութե ուղղոյս սենեկի, և կամ հերոց վարսից զարդաթեան նպաստ ինչ մատուցանի, եթէ ոչ տէրունական կենսատու խաչիւդ նկարագրեցի: Սոյն իւղ զարմանահրաշ օրհնութե լուսոյ՝ զհրեշտակս և 78 զխուժն՝ զհնդիկն և զբարբարոսն՝ զսկիւթացին և զելլենացին՝ զդուժն դժնէաբար՝ և զարհաւրատեսակ շանադլուխն ասկավլիթխար, զտէրն ազատ՝ և զտարրուկն ծառայածին՝ քրիստոնեան արարեալ՝ անուանբ քո կնքէ. և հոգւոյդ սէր ընծայէ, և հօրդ երկնաւորի՝ հարազատ որդի հաստատէ: Նազովրենակ են սովաւ արուեստից տեսմունք յարմարեցեալք, 79 նախ նիւթոյն՝ ապա զօրութեն: Անդի իբր անօթ փայտեղէն մինչև օծեալ իցէ՝ դիւրաբար հերձի, և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ՝ ոչ իւղեալ սովաւ՝ հեշտեաւ խոցակի, և մեկուսի եղեալ առ ի քէն՝ ոչ լուսաւորի: 80

Մատն սա քո՝ յս, որով զհրաշալիսն զարմանա-
գործես. քանզի իբր անգծելի կազմութբ կարծր պահ-
պանակաւ՝ ամենապատրաստն շրջարկութբ պաշտ-
պանեալ՝ ծածկէ յայլազգունակ խրթնի եկամտից.
մինչ զի այսու մաքրութբ թաթաւեալն ՚ի սմա՝ ոչ
ներկի արեամբ, և ոչ տխրատեսակ երփնիւ այլայ-
լի: Նա զի և թափանցանց իմն խառնութբ հոգե-
պէս՝ ընդ թանձրութի[81] մերոյս գոյութեան մտեալ
անցանէ. զի թէ անէծք սաղմոսողին՝ ձիթոյ առա-
կաւ՝ ընդ ոսկերս չարին համայնիւ բաշխի, որչափ
ևս հոգիդ սոյն ճարպով լուսոյ՝ զաներևոյթ ներք-
նոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ. ազդուու-
թն տուեալ ՚ի խորոց անտի շնչման հագագին՝ մինչև ՚ի
սպառուած ծայրիցն եզերաց՝ զբնաւն ընկղմէ զյի-
շատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդա-
նական զօրութի քո միշտ ահաւոր՝ տէր յս քս՝ ՚ի սմին
խառնեցեալ՝ ընդ սոյն իսկ բնակէ:

ԺԳ. Այս օծումն բարետեսիլ՝ և[82] առ բնաւմար-
տիկ մերկամրցանակ ըմբիշս՝ իբր զօրաւոր հնարից
կերպարան ճգնաւորական՝ անըմբռնելի ձեռացներ-
հակին օրինօք պաշտի, դիւաց և տխտից հզօր ահար-
կու: Քանզի յոքնապաճոյճ պճնութի բանին եղե-
կինելի առ իմանալին փարաւոն, հեգնաւոր առակա-
գրութբ ողբականօք շարայարմարեալ, յորժամ ե-
ղեր՝ ասէ, և համդերձեցար ընդ օծելոյ քերովբէին,
ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան:
Օրհնաբանեալ ահաւորութի[83] ամենավայր ձեռն-
կալութե, որ միշտ անճառ ես բանից՝ և գերազան-
ցեալ քննութեց. որ աւետարանաւն կենաց ինքնին
յարակայ՝ իբր նորածին օծեալ ՚ի քաղաքի դաւթի.
և ՚ի քահանայապետին հարցմանէ, դու ես օծեալն
որդի օրհնելոյն. և յերանաւորն դաւանութէ պետ-
րոսի՝ օծեալ միայն որդի այ կենդանւոյ. և յապա-
հաւատ քննողացն, եթէ դու ես օծեալն՝ ասեն, ա-
սա մեզ համարձակ. և ՚ի կանոնականացն քոց՝ հա-
ւատամք յօծեալդ ուսուցիչ և տէր ամենայնի. և
հերովդէս յառաջ քան զսոյն՝ զօծեալդ անուն
յայտնապէս հարցեալ. և զիմքդ գրեն՝ դու իսկ ա-
սացեր, զօծեալն այ զտէրն դաւթի՝ զանսկիզբն որ-

դի՝ ժամանակաւ որդի ։ Քանզի այսպէս ընկալաք
վայելչաբար զայս թարգմանեցեալ, որ 'ի մեզ բերի
ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վիճակ
քրիստոնէից նախապատուութեն ։

ԺԷ. Որքան ունի ահաւորութի̃ միանգամայն և
սրբութի̃ 84 իւղաւորական խնկաւորութի̃ սոսկալի
անուանս օծութե̃, մինչ զի որպէս ոչ է համարձակել
ուրուք յերկրայնոցս 85 ա̃ծ անուանել՝ այլ ա̃ծային,
նոյնպէս ոչ բերէ մարմին՝ զքրիստոսդ անուն անձին
համարել, այլ զքրիստոնեայն. անտանելի 86 նախ-
նեայն մեծութե̃ մկրտչին՝ ջուրք զհոգին հրաւիրողին.
քանզի չե՛մ ես ասէ՝ օծեալն, այլ առաքեալ առա-
ջի նորա ։ Սովաւ շրջէին՝ որպէս բանն ազդէ աւե-
տարանչին մարկոսի, 87 առաքելականացն լծակցու-
թիւք, իբր ազգակից հարազատ ձեռինդ ա̃յ՝ այսու
վարեցեալք. քանզի իւղով օծանէին՝ և առանց
մարդկային հնարից՝ անուամբ քո բժշկէին ։ Սան
զի որպէս խաւար 'ի լուսոյ՝ և 88 ցաւ յառողջութե̃,
գիշեր 'ի տունջենէ՝ և մահ 'ի կենաց, այսպէս և 'ի
սոյն իրէ տիրապարգևէ՝ ամենայն չարին երևոյթք
մերժին խափանին և բնաւին ամփոփին ։ Քանզի որ-
պէս ճանճք զազիրք՝ և փոքր զեռունք սարդից և 89
ունկնամոլից՝ իբր 'ի դեղոց մահու՝ յայս նիւթոյ
սպառեալ պակասին, սոյնպէս լրութե̃ շնորհի օրհ-
նութե̃ սոյն իւղ զօրացեալ՝ և զայսս վանէ, և զմոր-
հակս չարեաց ջրէ, և զվճիռ մահու պատառէ. 90
Ո՛չ է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդա-
կութե̃ ։ 91 Եթէ աւազականցն մահու խոցման զմարդն
առաջին, 92 այս դեղ փրկութե̃ մատուցեալ տուաւ.
եթէ անճարակ վիրացն յակոբայ և իսրայէլի՝ սոյն
իր պատուական յիշատակեցաւ. այս իւղոյ փափա-
քեալ դաւիթ՝ իբր ձիթենի պտղալից 'ի տանն ա̃յ՝ 93
յուսով յարակայի, լքեալ զթլփատութի̃ն անդստին,
զմկրտութեան շնորհ գուշակէ ։ Իսկ զի՞ է ինձ զայս-
մանէ ճառել, և համայնին կարծել հասանել, որ 94
և ոչ վերինքն զօրեն ձեռնարկութե̃ ինչ բանի՝ 95
զսոյն խորհուրդ 'ի մասնաւորէ ինչ ճառելով նշանա-
կել, թողում ասել՝ թէ յիսկութէ ։

ԺԸ. Փառք քեզ միշտ և յամենայնի անմահ թա-

դաւար՝ 'ի յայժմու երգեցեալ [96] օրհնաբանութեանս, զոր արարեր և կատարեցեր առ իս՝ բարեխնամ՝ գթած և երկայնամիտ, հարուստ և առատ ամենայաղթօղ. անդստին 'ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչև 'ի լրումն ածեր զիսկութիւն ճշմարտապէս: Դու լոյս իսկ բնութեամբ և արեգակն մշտապայծառ՝ և զաշակերտացն դաս՝ լոյս անուանեցեր, որով զարարածս ամենայն երկրի՝ ճառագայթիւք երջանիկ շնորհի նոցին լցուցեր: Ընկալար զիւղն անուշութեան [97] յաւմեմնէ՝ 'ի յոտս, յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ. և 'ի միւսամէ պտունկէ՝ 'ի գլուխ, նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ. մշտափափաք բաղձանօք անսահմանելիդ 'ի սոյն հոտառեալ, [98] մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ՝ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրաման պատուէրս կենաց՝ ընդ համօրէն աշխարհ քարոզել զսակաւաձեռն իւղոյն յարգաւորութի, զարմանս հրաշից լոզայն՝ առ ապառնեացն յուսադրուէ: Դուք օծութի ունիք զմիւռն՝ ասաց [99] երջանիկն առաքելութեց, մեկնեալ զխորհուրդն որ 'ի մեզ գեղեալ՝ յառաւելութէ կենդանարարիդ անպակաս բովանդակութե: Ուստի յաւէտ իմն յարմարաւոր և հանգունատիպ՝ [100] առ 'ի մասնաւորն նմանութի լուսոյդ և հոգւոյդ միոյ՝ այս կաթուած օրհնուէ 'ի վերնոյդ բարեբաստութեց՝ անսպառաբար սրսկեցեալ 'ի մեզ, և առի լոյս, իբր զնախաթիւ գոլ ստեղծուածոց՝ և արարչութեդ պատկերակից, որով զխաւար մթութե մեղաց հալածես. [101] իսկ հուր, զի յամենայն տարր արարածոց հաւասարապէս ունի զուգութի՝ ըստ էականին կշիռ բաշխուէ, ծածուկ և յայտնի, լուեալ և ծանուցեալ. և եթէ ոչ ընդհարցի 'ի հակառակէն, ոչ յինքնաստաստ յօժարմտութէ բաղձայ բորբոքիլ: Դարձեալ [102] և օծումն, զի արքայաբար որդեգրեալ՝ ընդ քեզ 'ի ժառանգութի հօրդ մատուցես. ողորմութեդ ազգակցաւ նկարեալ 'ի մեզ անեղծանելի՝ 'ի հանդերձեալ փառսն փայլեսցուք. դարձեալ և հոգի, զի մաքրեալ զարկածս խաբէութեն՝ որ 'ի բանսարկուին ներգործուէ, նորոգ փոփոխմամբ հոգւով և ճշմարտութեամբ՝ հօրդ երկնաւորի երկրպագեսցուք,

բնեռնեալ ընդ քեզ յաւուրս հաւատովք՝ ամենա-
պարգեւ ։

ԺԸ. Ահա արդարեւ յաւէտ իսկապէս՝ իւղս այս լուսապատար [103] խնկալիր՝ մեծխնականիւդ սիրոյ տեսութե ։ Վասն որոյ եւ պօղոս իսկ պատշաճ վարկաւ 'ի ճառ գոհաբանութեն՝ ասելով յայտնի, [104] որ օծ զմեզ ձեօք հանդերձ 'ի քս յս՝ ած է, որ եւ կնքեաց զմեզ՝ եւ ետ զառհաւատչեայ հոգւոյն 'ի սիրտս մեր. եւ դարձեալ, մի ասէ, տրտմեցուցանէք զհոգին սբ այ, որով կնքեցարուք յաւուրն փրկութե ։ Պատկառելի եւ անմատչելի [105] օծութեա յորջորջումն իւր 'ի նորումս՝ յաւէտ քան 'ի հինումն. քանզի բանն դաւթեան սաղմոսին՝ զտիրական տնօրինականացն սկզբնաւոր կրիցդ խորհուրդ՝ ճշմարտաբար մերատահմանէ, ժողովեցան կուտեցան իշխանք ժողովրդոց՝ վասն տն եւ վասն օծելոյ նորա ։ Արդարեւ մեծ տապաւորեալ զանսրբելի արեանդ պարտիս՝ հրէախումբ չար մոլեգնութեն՝ որ 'ի տէրդ յանդգնութե, ո՛վ է [106] որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տն՝ եւ քաւեսցի. քանզի թէեւ յազգայնոյն ապանա սաւուղ, այլ ոչ իսպառ մերժեցան յամօթ եւ 'ի նախատինս ազգաց օտարաց, մինչեւ արեանդ այ հաղորդեալ գտան ։ Գերաւական մեծ յիշատակի ապագայից ժառանգութե [107] աղօթանաւէր աղերսարկութի ասել սաղմոսին, վասն դաւթի սիրելոյ քոյ՝ մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ. եւ դարձեալ, նայեա եւ տես յերեսս օծելոյ քոյ, եւ արա ողորմութիւն ընդ
օծելոյ քոյ ։

ԺԷ. Զեռինդ քո քս, երկրպագեալ պարգեւատրութիւն՝ այս հիւթ լուսակիր. քանզի [108] ոչ այլ մեծ բարձրութե յարքայութեն ճոխութեն՝ ասէ մարգարէն 'ի դիմաց քո տէր, քան թէ՝ գտի զդաւիթ ծառայ իմ, եւ իւղով սրբով իմով օծի զնա ։ Ուստի կիրթ իմն յիշատակաւ՝ զքոյդ համբուրեալ լուսոյ օծութիւն՝ տէր յս քս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշտնջենաւորութի, թէ դու ես ամենայն՝ եւ յամենայնի միայն թագաւոր թագաւորութեց, եւ ճշմարիտ օծեալ իւղելոց, փառաբանեալ երկրպագուն, երէկ եւ այսօր ։ Քանզի զոր օրինակ պատրոյկ թա-

ցեալ 'ի Ճարպում՝ ոչ երևեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչև հուրբ լուցեալ վառիցի, նոյնպէս և այս օծութիւն լուսոյ առ 'ի մեզ հեղեալ՝ 'ի հանդերձեալսն ջահաւորի։
109 Այս է կերպարանին մեկնաւոր բացերևութիւն, 'ի նախնեացն և այսր ընթեալ բարենշան իմն յարմարութիւ՝ հրաշապայծառ երանգաւ գունեալ։

ԺԸ. Արդ՝ այսոցիկ պատճառ 110 վերագոյն մասանց կեցուցչաց ա̃ծականաց՝ արարչութեանց հաստատաց, 111 առանց որոյ ոչ է դիւրել քննեան, և ոչ նազովրեցի անուանիլ, և ոչ յիշատակիլ յորդիս յուդայի, և կամ խորախոյս բանանալ յանուն ա̃յ յակոբայ, այս 112 հիւթականութիւն օրհնութեան ձիթոյս, յորում 'ոք եւ բորբոքեալ խառնեցեալ միւռոնի. Ճառագայթ շնորհաց. 113 շուք մերոց դիմաց. նկարագրութիւն երեսաց. բարեձևութիւն պատահմանց. լուսաւորութիւն աչաց. ա̃ծանագրութիւն բերաց. վայելչութիւն այտից. զարդ կերպարանաց. պահպանարան շրթանց. 114 հանդերձիչ կրծից. յարմարիչ վարուց. շաղկապ հաւաքմանց. զօրութիւն անձանց. ուժգնութիւն դիմեցմանց. խափանիչ 115 յուռթից. քակիչ հմայեկաց. նահանջիչ ձեռնածուաց. խայտառակիչ կախարդաց. գտիչ աղանդից. բռնախոյեան դիւաց. փարատիչ ցաւոց. 116 կատարիչ կնքեցելոց. աւետչանք երախայից. 117 անեղինն արտաքնոց. հիացումն հեթանոսաց. նախանձաբեկու անհաւատից. մերկացուցիչ գաղտնեաց. 118 յարգանք յեանց. փառք սրբոց. պճնումն կանանց. աճեցումն տղայոց. հրճուանք ծերոց. ձեռնադրիչ նուիրելոց. զգուշութիւն մաքրոց. պսակ թագաւորաց. ճոխութիւն արքայից. յառաջադրութիւն կայսերաց։ Վասնզի զոր օրինակ աման ինչ կնքեալ՝ նշանակիչ իմն է 119 ներքնայնոցն մեծագնութե, նոյնպէս բարձրութիւն շնորհին 'ի մեզ սովաւ ծածկեցեալ յանուն քս՝ ա̃՛ծ տէր յս քս, վայելչական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակի։ 120 Նաև անուանն խոկոյն անդրադարձն 'ի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգելից արանց իմաստնոց՝ որ յեգիպտացւոց անտի սկսեալ, 'ի դէմս ածելով զիւրեանց կերպարան՝ ահաւոր խորհըրդոյ պատկեր։

[121] Սակս սրբազան խորհրդոյ մեռոնի ։

ԺԲ. Քանզի մեռոնս այս օրհնաբանեալ, [122] զոր մարգարէն կանխաւ լոյս ասաց՝ դրեթէ զսոյն աղերսեալ խնդրէր, ըստ քերթութեանն բանի՝ որ ըստ խորութեան հոմերոսի՝ թարգմանեալ [123] իմանի, յինձ մայր. այսինքն է՝ առ 'ի յինքն ձգօղ զմերս բնութիւն զօրապէս, և կայուն հաստատեալ չքնաղ փափախմամբ զջուրց լուծականութի առ աստուածային լուսաւորութի. և իբրև զդեղ մածուցիչ կաթին՝ 'ի նոյն ինքն յեղանակել զցնդեալս իմ վայրապարութիւն, և զաղքերց հեղեղեալ միտահոսութի։ [124] Նաև մասնամուռ՝ որ և այս միւռոն, ըստ այլում բանի ցուցանի. այսինքն է՝ մթին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և սոյն կոչումն գիտնութեամբ չէ օտարացեալ. քանզի արդարև յիրէ անտի անուանս նշանակի. վասն զի անքննին է այս խորութի յաւէտ՝ քան զամենայն սրբութի սեպ։ Ոչ ինչ եթէ ջրոյ օրինակաւ զաղտ ինչ լուանայ, և կամ հացի բնութեան զօրութեան հաստատէ, այլ նորոգ իմն յարմարութեամբ 'ի մասունս ազգազգականացն անօրինապէս թնադրի. սակայն անհասութեամբ վերնականաւ՝ և զանուանն ունի անքննին։ Քանզի որպէս ած [125] իսկ և իսկ 'ի լոյս անմատոյց ասի, իսկ անսահման փառաւորութեամբն՝ յեղանակաւ իմն անքաւութեան 'ի խաւար անզննին ծածկեալ իմանի, փակեալ արտաքուստ 'ի ձեռնարկութեանց մերոց իմաստից, նոյնպէս և այս ծարութիւն լուսոյ՝ 'ի լեզուաց ոմանց ճարտարաց 'ի ճահ ճնմութեանց՝ դրականապէս անուանադրութեամբ՝ մռայլ առձայնի, վասն ոչ զօրելոյ երկրածին բնութեան զխոկն գիտելոյ։ Նաև զերկաքանչիւրս [126] ածականացն՝ անդստին յինքեան հարստաբար տիրապէս ունի. քանզի զի 'ի կոչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ իւղս այս նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կնդրկաւ. վասն զի ած մեր՝ հուր ծախիչ է, ըստ մովսէսի. և դարձեալ լոյս է, ըստ յովհաննու. ուստի և եսայի ճշմարտապէս զսոյն ակնարկէ, եղիցի՝ ասէ, լոյսն իսրայէլի 'ի հուր ։

ն. Դարձեալ՝ այլ իմն կերպարացուցանելով զգանս՝ տա 'ի նոյն պատկեր յայտնութե իւրի. վասն զի ոչ մնացանամ[127] զիմն նողկութե որ 'ի գթութեն մեծիդ քաղցրացայ՝ վերստին գովեստիւ օրհնել. քանզի՝[128] մեռայ, որ է դառնութի, այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարանաց կրից տաժանմանց, որ և միւոն տառապանեալ մեկնապէս ըստ միոյ՝ մեռելութե աղքատկանութե. Քանզի այսու օծմամբ հոգևորականաւ՝ խզեալ կամ հատեալ 'ի մնատխարհէ մահակերպարան տաղտկաղալքական հեշտութեց հակառակօրէն, որ օդախոնաւ մեղկութե զգնայրս ձայնաորական՝ և կամ զարկուած վերածածկութե մզնարհետ ուժգնաբարբառ խորոխտահնչական կաղմաւածոյ թմբկիս գործականութե ջրացիր իմն գիջութե՝ անվայելուչ թուլադաշնակեալ՝ 'ի սորև կորստեան քարշէ զօրինակ մերս գոյութե, կապիմքյաւուլ վերըստին դարձեալ ընդ անձաւ խորհրդոյ խաչի քո Քն. մկրտեալք 'ի մահ կենդանութեան՝ անվախճան կենացդ տալոյ հաղորդիմք, 'ի քեզ իսկ ա͞ծ համայնիւ խրախուսեալ՝ իսպառ ամենևին անհատուածելի.

իմ. Այս իւղ՝[129] դդրօշեալն քառակուսեան յանուն քո յո՜ նշանի բարձրելոյդ հաւասար հաստէ. շնորհ ընձեռեալ զուգափառ և[130] նմանատիպ արեան կեցուցչիդ՝ նոյն անվանելի փառօք պսակեալ մեծացուցանէ.[131] Փայտ անուանի իւղոյ օրհնութե, ըստ մարգարէին կանխաձայնութե, զ'ի հասարակաց կադմեցեալ բուսոց անտառաց զօրապէս ուղղեալ՝ 'ի խակութե չարին արկածից և օտար կարծեաց՝ 'ի ստեղծողդ վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց հաստուն ներգործէ.[132] Ով և որ 'ի մեզ մտիցն պատուհանաց մշտաբացիկ թափանցանցուկք՝ յանուն մեծութե աշաւորիդ զօրութե 'ի խորհական իմն համեստութե քև ածնագրեցեալ առ 'ի յըղձակերտ օթեվան հոգւոյդ՝ անապգելի պատրանաց չարին՝ խաւարահոգմ խարդախողին,[133] այսու լուսով զսպեալ ամփոփիմք 'ի նուագ գոհութե երեկորեան պաշտաման՝ ընդ երկնայնոցն զամբարաց՝ առ օրինակ վառման շնորհիդ

որ 'ի մեզ. [134] 'ի սոյն յիշատակ փրկութեն բարեացն՝ տուեալ տնկեցեալ ծառի, և ծաղկաւէտ եղեալ պտղածնի. 'ի սոյն ընթերցեացն պատրաստութեան յետնում գիշերի՝ 'ի մեծիդ գալստեան։ [135] Ահա զայս լոյս ճրագի համարեալ 'ի կիր արկանեմք։

ԻԹ. Դարձեալ՝ [136] ըստ գծագրացն գուշակութեան քսանևչորիցն շարագրութեն որ յալփափետաց անետի վերաթուի մինչև 'ի քսաներորդ երկրորդն կարգի, յորում զայս խորհուրդ խորութեան անտուստ թարգմանեալ ճաշակ հեշտալի որոց հաղորդին՝ ջամբել պատրաստեմք ամենակազմ յարմարութի. քանզի յութներորդէ անտի գրոյ՝ 'ի չորեքհարիւրն փոխաբերեալ՝ սուտագաբանօրէն քննութի ընդ ծիթոյն անուան՝ նիւթ ճշմարտագրի. որ է կերպարան արդեան խմորոյ՝ յինքն բերողի զզանգուածն զօրեղապէս. որ ոչ տակաւ 'ի յոլովէն պարագայի, քանզի թէ 'ի նոյն իրն դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամենայն առ ինքն վերաբերեալ անձնացուն առնէ։

Լ. Սոյն իւղ հեզութեն միշտ համբարձման և խոնարհութեն օրինակ և նմանութի, [137] առ ոմն կակուղ պատուական մատուցեալ ջամբի, հարթակշիռ և բարեյարմար բանի կերպարան. իսկ համայնիցս լուծականաց՝ հոմանուտ և ստորածորելի նիւթից՝ գերափառ վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի և [138] յաման ինչ մորթոյ արկեալ՝ ոչ ըստ դինւոյ ձեւոյ և կամ ջրոյ թացութեն մեղկէ, այլ 'ի սահման պատշաճին պահէ։ Այսպէս ընկալեալ զքոյոցդ բարեաց [139] անհաւասար առաւելութի՝ որդւոյ կենդանւոյ, զորբանուէր այս օծելութի 'ի ճակատ դիմացս [140] արեամբ քո գրեմք. և 'ի բնութի շնչոյս՝ հոգւով քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մտացս, եթէ յաւէտ յայտնեցի նորոգ փայլեցեալ բազմաճաճանչ [141] ծայրարձակութեն 'ի տարածութեան յոգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութեն պտուղ իւղոյ ընծայեալ զկոյս՝ 'ի փառս ապառնեացն հանդերձելոցն։ Այս ճարպ հոգևոր երջանիկ և վերնանշոյլ՝ 'ի դէմս երեսաց իմն պատկերի՝ քաւմդ նշա-

Նաւ Ջահաւորեցի :

Իէ. Այլ քանզի եթէ անհաս [142] ոչ ըմբռնականն այս
մեծ զօրութ՝ առաջ. ալացման. 'ի Թեւս ԹեԹեւս մտաց
պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ իմաստից՝ ան-
հուն հետեւման անհետ փախստեան՝ լայն իմն մերձա-
ցաւ խոպառ որոշեալ, փակեցաւ յինէն. ոչ օրինա-
կեցաւ կցորդաւ. ոչ նմանեցաւ զուգամանութե.
ոչ սահմանեցաւ ձեւակերպութե. ոչ կշռեցաւ ընկե-
րին չափով, այլ ահա ընդ ամենայն խաչիդ նշանի՝ հա-
ւատարութ առեալ կեցուցչիդ՝ հոգեխաղէս գերազան-
ցեցաւ: Այլ արդ՝ օրհնեալ զՔեզ տէր սովաւ և 'ի
սոյն. եւս և [143] անուանդ քո ահաւոր, լուսաւոր, երկ-
նաւոր և զարմանաւոր, 'ի գովեստ փառաց անձա-
ռից՝ մաքրակրօնից բուրվառաւ խնկեալ, սուրբ՝ Տր,
անքննին, անպատում, [144] բարձրեալ, ողորմած, վեր-
երգեալ, ճշմարիտ, բարերար և Տր, որով սովաւ
փրկութի. տուր և քաւութի. պարգեւեա բժշկու-
Թի. [145] հանդերձաւորեա շնորհ. առատաձեռնեա և
բանութի: Զօծութիւն այս ձիթոյ՝ երկնանձրեւ լուսոյ՝
անարատ գտայց. յիւղեալս այս [146] Թեզան բանաւո-
րական՝ մի մտցէ, և մի գրաւեսցէ տխրականութի
աղտոց մեղանաց՝ շաղախել երբեք զոգւոյս կերպա-
րան: Այլ եղիցի սոյն խնքն որոց մատչին օծանիլ սովաւ
[147] հարսնապաճոյճ պանծանօք պճնել զեղայօրէն Տր-
վայելչութե՛ երջանկապէս յոգի զարդարեալ: Այլե-
ցի հուրս այս լուսափառ և ամենամիր՝ ներձեցելոցն 'ի
սոյն ընտրութի [148] մուխ կրկներաց և բարեփափաք
ջերմութե այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ան-
նապատրաստ ընդդութե՛ 'ի կարծրականութեանդ անսա-
սան վիմիդ յարակայեցեալ մշտ արձանացայց՝ 'ի
քեզ հաստատեալ աներկմտելի: Եղիցի նշանակ [149]
վերնամրցանակ մխոյ պարգեւի սովաւ վառեալցն, ոչ
տղողել ջուրք. ոչ այրել հուրք. ոչ ցրտանալ 'ի սառ-
նութե. ոչ մնասակար հողմով շրջանիլ. ոչ աղտեղիլ
յուրուականն ինչ պղծութե. ոչ զպահեալսն՝ չարին
մատնել, և ոչ 'ի սորե ելլցն՝ զմթերս գանձուն կե-
նաց՝ յիմարաբար արտաքս հանել. ոչ անպատսպար
մնալ 'ի թեւոց քոց օգնականութե, և ոչ զեղացեալքն
'ի մեզ օծութիւն՝ անմաքրապէս 'ի բաց մերկանալ:

Այլ եղիցուք քեւ 'ի սոյն հրացեալ. սովիմք պարա-րեալ. սովաւ լուսաւորեալ. այսու արդարացեալ՝ պայծառացեալ՝ պսակեալ և թագաւորեալ: Նա [15] քեզ միայնոյ միայն օծելոյ՝ յամենեցունց օրհնութիւնք երգոց, ակնլուք լեզուաց, հնչմունք ձայնից, յաղ-թանակութիւնք գովեստից, բարեբանութիւնք շրթանց, երկրպագութիւնք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ քո յաւիտեանս յաւիտենից. ամէն:

151 Ո՛ն էմ յիշատակարանին 'ի սրբութիւն, և այս արձանագրութիւն 'ի սրբութեանցն սրբութիւն:

---

(1) Վերափոխն յաւելուած: Այս մասնաւորիր չէք 'ի մի օրինակ, այլ միայն յաւելորդն, Աղօթք Նարեգնաւորին, եւն: Եւ թերևս յօրինակողաց մտածեալ իցէ. բայց և օրինակք ոչ սակաւք չունին 'ի կարգի աղօթիցս զբանն որ վասն Մեռոնի:

(2) Աղօթք Նարեգնաւորին: (մի օրին. աղօթք Նարեգնաւորին, յս մեկնաբանականք:) աղօթական բացայայտութ 'ի վերայ սրբալոյս, որ կոչ հոգևոր լուսոյ առաւել իւղոյն մեռոնի: Վասն այսր բանի՝ թէ առ ինչ յօրինեաց որ վարդապետս, և կամ ինչն արդեօք եդ 'ի կարգ աղօթիցս, թէ այլք՝ ասեն 'ի բանին ղբ. լծ. 1: Աստանօր ծանիր, զի սուրբն կիւրեղ երուսաղ-էմի ունի ճառ 'ի վերայ մեռոնի, կամ գրոշմի, մանկապարտեալ խորհրդա-ծութիւն երրորդ, որ թէպէտ ոչ գոյ 'ի հայումս 'ի տպագրեալ կոչումն ընծայութեան, բայց խոստանայ ('ի գլ. ժզ. երես. 373.) առաւ-ցանել: * Որպէս գրոշմն ձեզ տուաւ 'ի հաւատարութեն հոգւոյն սրբոյ: || Այդ՝ սոյն գրիգոր բազում ինչ համաձայն այսմ ճառի խօսի յառաջիկ-կայս. որպէս առողե 'ի անդրեա ինչ յիշեսցուք:

(3) Փոխոտ յարախորհէնի: Տենչմանաց փափագ միշտ անհասանելի, այսինքն անյագ փափագմամբ անհասանելի. որչափ ահաւոր ես, և բարձրեալ և անպատմելի, նոյնչափ և անձկալի միշտ փափագանօք:

(4) 'Ի սրբերգենին: 'Ի որ որ երգող փառաբանողացն, այս 'ի դասուցն միշտ օրհնաբանեալ, բնակեալդ 'ի սրբում, 'ի սրբութեան երկնից:

(5) Եւերաղածեալ խառնուրեմն: 2 օրին. խառնուրդն:

(6) Այն. այսինքն դու ես Ամենայն՝ գոյութիւն, զամենայն անխառն կատարելութեամբ ունելով ծայրադոյն օրինակաւ: պատճառաւոր՝ իբրև գոյա-ցուցիչ ամենայնի: գաղափարաւ՝ զամենայն իրաց իսկութիւն 'ի քում էութեան երևեցուցանելով: Ու յամենայն, յամենայն իրս գոյող էու-թիւն՝ իբրև ամենատեսեղ, ներկայութիւն՝ իբրև ամենատես, և կարո-ղութիւն՝ իբրև ամենիշխան: Զայս առաց և 'ի բանն Ճ. 3. և առեալ է 'ի բանէն ա. կարգին. ժե. 28.

(7) Դրոշմէք յաւոյ: Այսու բանիւ խոստովանութիւն իբրև յուսադրել գաշամբ եղիցի ինձ ուխտ միութեան ընդ քեզ: Դրոշն յաւոյ աւաէ ընդ հաւատալոյն մարդկային գաշանց, որք 'ի վերայ ածեն զպարտս արդա-րութեան, և իւրաքանչիւր գաշնադրութի պարտ առնեն առ ինչ և առնուլ յօգուտ միմեանց: Բայց գաշն առ մեզ՝ զմարդն միայն պարտաւորեալ առա-նէ ճշգիւ. իսկ մեզ 'ի պարտ գայ միայն յիւրումն սուրբութեան, և ոչ առ-նու 'ի մարդոյ զնորոյն ինչ յօգուտ իւր. այլ մարդն առնու բարեմասնական

[illegible] թէ [illegible], եւ թէ [illegible]. վասն որոյ [illegible] ՝ է [illegible] :

(8) Այս [illegible] : [illegible] ՝ [illegible] 'ի [illegible]. ( [illegible] . ղ : )

(9) Մեռոյն [illegible] : [illegible], [illegible] : [illegible] եւ [illegible] : [illegible]. [illegible] :

(10) Օծեալ [illegible] : [illegible] : [illegible] 'ի [illegible]. [illegible], եւ [illegible] ՝ 'ի [illegible], որ է [illegible] : Վասն [illegible] :

(11) Ուրախ [illegible] : [illegible], [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] 'ի [illegible] 'ի [illegible], որ է [illegible], եւ [illegible], [illegible] :

(12) Սեղանէն : Սեղան [illegible], [illegible], [illegible] ՝ [illegible] եւ [illegible], [illegible] եւ [illegible] :

(13) Սրբեղծող [illegible], որ են 'ի [illegible] եւ 'ի [illegible] : [illegible], եւ [illegible], [illegible] եւ [illegible] : Բայց [illegible] : [illegible], որ [illegible], [illegible] : [illegible], եւ 'ի [illegible], [illegible] ՝ [illegible] 'ի [illegible], [illegible]. վասն որոյ [illegible], եւ [illegible]. եւ [illegible] 'ի [illegible], [illegible] եւ [illegible], [illegible] 'ի [illegible]. եւ [illegible] ՝ [illegible] 'ի [illegible] եւ 'ի [illegible]. [illegible] ՝ [illegible] :

(14) Օծման [illegible] : [illegible], եւ [illegible], [illegible]. եւ [illegible]. որ [illegible]. [illegible] եւ [illegible] : [illegible], [illegible]. [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] :

(15) Քահանայ [illegible] : [illegible], եւ [illegible] 'ի [illegible]. [illegible]. ( [illegible]. [illegible]. 27. ) * Որպէս [illegible] : || [illegible], [illegible] 'ի [illegible] : [illegible], [illegible], [illegible] : [illegible]. [illegible] եւ 'ի [illegible] :

(16) Աստղ [illegible]. Ոսկիք [illegible]. [illegible] ՝ [illegible] եւ [illegible], [illegible] եւ [illegible] : Բայց [illegible]. [illegible] է ՝ [illegible], [illegible], [illegible], [illegible] եւ [illegible], [illegible] է [illegible], 'ի [illegible] ՝ [illegible] : [illegible] է [illegible]. [illegible] ՝ [illegible]. եւ [illegible], [illegible] է [illegible] : Աստղ ՝ եւ [illegible], ( [illegible]. [illegible]. 16 : ) [illegible] է [illegible], եւ [illegible]. [illegible] եւ 'ի [illegible]

[illegible] ( յովհ. ա. 5. ) * Լոյսն 'ի խաւարի [illegible] լուսաւորէ , || [illegible] :

(17) [illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

(20) [illegible]

(21) Ո՛չ է որ չմնալ ։ Որպէս ոչ է կատարեալ որ բնական՝ առանց [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(22) [illegible] լուսաւորեալ ։ [illegible] 'ի լուսաւորման . [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(23) [illegible] ։ 'Ի [illegible] [illegible] [illegible] ( Մատթ . Ժ . 5 . 10 . 11 ։ ) [illegible] [illegible] [illegible] ։

(24) Այս [illegible] ։ [illegible] ( 'ի մեկն . եսայեայ . եր . 43 . ) [illegible] [illegible] [illegible] ։

(25) Անուան [illegible] ։ [illegible] ։

(26) [illegible] այս ծառոյ ։ [illegible] ( Ղուկ . Է . 23 . 25 ։ ) [illegible] [illegible]

[illegible]

(27) Պտուղ [illegible] : [illegible]

(28) Իբր [illegible] : [illegible]

(29) Օրհնալ [illegible] : [illegible]

(30) Պտուղ [illegible] : [illegible] ( [illegible] . 7 . 8 : ) [illegible]

(31) [illegible] : Օրհնեալ [illegible]

(32) [illegible] : [illegible] ( [illegible] . 23 . ևն : ) [illegible]

արդարութեան քաջ չհամբերեաց 'ի մեզ խառնելով ։

(33) Պօղիկեանց [illegible] ։ Անդամոր յեկեղեան ազգի և յորենեան ոչ էր պահեալ, այդոյ, ընդունելի, օրհնութ՝ Թագաւորական իշխանութիւն՝ իբրև պատիւր հաղորդ իշխանութեն պատուէր 'ի վերայ երկրի, եթէ ոչ օրհնեալ իւրովի ձեռնադրեալ՝ յանուն [illegible], իբրև օծեալ այդ պատրաստեալ Թագաւորն ամբաստանեալ պղլուխ 'ի վերայ ժողովրդեան ։ Թէպէտ և յաղթէ Թագաւորաց որ էր, և 'ի ծերանիս ծննդեան, ոչ Թագաւորէր օրհնութ առանց օծման ։

(34) 'Ի Աւրելոյ [illegible] ։ Աւանդեալ է այս յերկար պատմութիւն ինչ յուշեալ, որ կոչի Թագաւորանալ յայտնապես . մարտի 25 . [illegible] 'ի վերջին աւուր, թէ Մելքիսեդեկ կայր առանձնացեալ 'ի լեառն Թաբովրայ, ( և ըստ յուշանակութեան 'ի Թաբոր . ) առ որ երթեալ Աբրահամ օծաւ իւղով 'ի Մելքիսեդեկէ . և [illegible] ձայն յերկնից, թէ Մելքիսեդեկ մնասցէ քահանայ յաւիտեան . և ։ Եւ Թէպէտ 'ի պատմութեան անդ ըստ այժմու օրհնակաց ոչ գրի յայտնապէս, թէ 'ի հրեշտակաց օծեալ էր Մելքիսեդեկ, սակայն կամ յայլ օրինակս կայր գրեալ, և կամ յայտնեանն իբրև հաւանական ձեռնադրեալ առնէ որ մարգարէութ, թէ անդ 'ի հրեշտակաց օծեալ էր Մելքիսեդեկ ։ Այս պատմութիւն յանուն ազդի Աթանասի հայրապետական առյողս, ընդունելի իբրև [illegible] . բայց առաջ քննեալ առաւելութ՝ ոչ առ Թանասի գրել, և ոչ ընդունելի ։ Այլ ընդ հակառակն՝ [illegible] . ('ի Մեկն . Ծննդ . Հատ . ԺԴ . ) գրէ այսպիսի ինչ, * Քահանայ էր, Թերևս առնէ ձեռնադրեալ, զի այնպէս էին յայնժամ ժամանակի քահանայք . կէր զի հինաւուրց էր հաւատով, յերկրի անուն ընծայէր այն պատուն ։ ||

(35) 'Ի Աղարաց [illegible] ։ [illegible] ։ 'Ի [illegible] ։ [illegible] ։
այսպէսի յետայ պարագ ձեռնադրեալ ։

(36) [illegible] ։ Աւանդութիւն է առաքելոցն՝ առեալ 'ի հրէից, թէ նոյ գանձերս ադամեան ընդ իւր առնելով 'ի տապանին, յետոյ ամփոփեաց 'ի լեառն գագաթան . որով ամենայն գաղտնիքն առանձին, ոսկի և գիտութիւնքն ադամեան պատուական կարգեցաւ առն՝ Մելքիսեդեկի, իբրև եպիսկոպոս և Թագաւոր ։ Բայց ոչ կարող քանել վասն ադամեան . մինչև յայտնեցաւ պա [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] Ջրհեղեղի քահանայք եկեղեցականութեան ադամեան ։ Բայց ըստ օրհնակն գնէ . [illegible] . որպէս թէ, մինչև յայտնեցաւ, և եղեւ կատարելապէս Ջրհեղեղի քահանայ ։

(37) [illegible] ։ Բարեպաշտօն կամ հաւատն կարգութիւն յարգանմանն զայս ալօթս խաղաղութեան, օծեալս եւանգելի սերոյ . [illegible] , [illegible] նուիրեալս ձեռնադրութեան . [illegible] , [illegible] զաւակութիւն ըղձման ։

(38) Զայս [illegible] ։ Զօրութիւն Մեռոնին՝ որով օծայ, մնալ 'ի վերա հոգւոյս . և զհեղանգութիւն օրհնութեն նորա հանգելով զինեալ սերոյ . անդ 'ի խաղաղութեան հոգւոյս, փոփոխեալ ամբաստանեալ պատուանաց՝ զմիութիւնն ընդ պատուէր չհամբերելով . որպէս պատուէր ամենայն 'ի ձեռս առաքեալց . [illegible] . որպէս զի այս Մեկնողական Ջատա մաքրութեանց՝ վայելչապէս 'ի [illegible]՝ առաքինութիւն հոգւոյս այդ կարգաւորեալ ։

(39) [illegible] ։ Զայս խնդրեան ամենայն ըստ հին լեալ . 'ի վերայ ադամեան ազգայն առաջոց . զորմէ առաջնա առ եղեալ՝ օծանել 'ի Թագաւոր առաջոց . ( Գ . Թագ . ԺԹ . 15 ։ ) Բայց ոչ յայտնապէս . զի որ մարգարէաս առնէ թէ օծանելին անտեղեաւ 'ի կարգութիւն ամենայն իւրայնքն . իսկ Թագաւորութիւն ազգային իբրև 'ի կարծանագ նորա . և զի զգանն օծանելն ազգային՝ յետոյ զառ յղէ որ մարգարէաս ։ Այլ Թաէ

[illegible] 'ի Կիւրղէ. վասն զի [illegible] ( [illegible] . 1 : ) և [illegible] ( [illegible] . 43. 47 : [illegible] . 4 . 10 . և Ն. ) [illegible]

(40) [illegible]

(41) [illegible] ( [illegible] . 1 : ) [illegible]

(42) [illegible] ( [illegible] . 15 : ) * [illegible] || [illegible] * [illegible] || [illegible]

(43) [illegible]

(44) [illegible]

դեռ զնա առնուլ ի բեր նախանձոյ, որպէս զՆ հոգին. և զհեռացեալ զՆա առ-
նուլ ի բեր չարակամ, յայնժամ ապաքէն խնամի. եւ զԹափեալ զգեցու-
ցանէ, որպէս զՆ հոգին, որպէս զԹափեալ 'ի հոգին մեր. զՆ քօղաւ,
որպէս զի փոքր հոգւոյս՝ զմեծ քո կերպարանս նկարագրեաւ, և այլն:
Եւ եթէ հոգին այս, խնամոցս զհոգին իմ, յայնժամ մեկնի. որպէս զի
հոգին այս՝ Թափանցիկ եղոյն՝ առաւել պատկեր և նշանակէ զի փոքր
բնութեան զմեծ նմանութեան ձևացուցեալ, են: Հին բան. յայլ ինչ օրա-
բացուցանէ զբանս, 'ի գեղմ հոգւոյն այլ առնել: Ո՞վ հոգի այս, որ այս
եղբ՝ առաւել պատկեր և նշանակէ քո է, պատուցէ՝ զի ընդ փոքրամբ
զմեծդ ընդ քեզ կերպարանեացուք: Անպարագրութեան ինքեան յայտնի
է. զի բովանդակ ընԹացք բանիս առ քեզ խօսին:

(45) Պարառածօրէն: Մանաւանդ, կամ խորհրդածածուկ բանաստեղ-
ծութեամբ. բազմախոհագոյն, հեռաւորս, կամ մեկնողականս. գծագրական,
օրինականս, նմանականս: Զի՞նչ եւս յաղագս մեծութեան եղոյս ա-
ռնել զանց բանս 'ի հեռաւոր և յօրինականն և 'ի մԹին առաջացուցից,
որ ահա զու ինքն ահաւորդ ես:

(46) 'Ի յօծման անօթ: Ցեառ քարոզելոյդ՝ օծեալ, առաջ սկսար քարոզել
զաւետարանն, մկրտեալ 'ի մկրտչէն. ( Յովհ. ա. 36: ) * Ահաւասիկ
քո գառն այ: || Կամ յօրինականն օծմանէ անօթ՝ սրով 'ի մկրտանն
զՀոգին իմ մաքրութեամբ անուշեանց ընկալեր 'ի քեզ, սկսար քարոզել:
Զի Թէպէտ ընդ օծման օրհնութեան, փոխանակ օրհնութեական կամ շնոր-
հական օծմանն 'ի սկզբանէ յղութեն հոգին իմ էր քեզ օծումն նուխեմբ
լցեալ, եւ ութեան կատարելապէս ընդ քեզ լցեալ, եւ ուծութեն խառնու-
թէ, և միաւորութեն ածութեան բովանդակ էր օծումն մարդկութեանդ,
այլ անուան պաշտի, առկայն անուն օծմանն կամ օծելոյ հաշուեի 'ի
մկրտելոյ, կամ յետ մկրտութեանդ, խորհրդեանն շնորհին, 'ի խորհուրդ
կամ 'ի նշանակութեն շնորհական օծմանն, որ 'ի սորին գործի. որով ա-
նուանեալ զնուաստութեն աղամեան բնութեանս մեծացուցեալ: Ասէլն,
անուանն պաշտի, յերկու օրինակ զնի, անուանն պաշտենլի. և առաջ զայս մերաս.
Թէպէտ և քեզ առաւելութեն հոգին իմ էր օծումն, և չէին այնպէս ա-
նուանակոչութեն օծելոյ, առկայն առակաւքն անուանն պաշտելի էր, յաղա-
գս և հաշուելոյն առ 'ի նշանակ օծման արդարոց են:

(47) Անօթեխանդ նարդոսեան. այսինքն Անդ մարդացեալ, որպէս և
յայլ բանս առացեալ եմք Թէ մարդասիրաբար 'ի խօսելն զնծաբաց՝ բա-
զում անգամ զմերացեալ անուանս 'ի կեր առանուն փոխանակ Թանձրա-
ցելոյ. զու ինքն Աձ 'ի մարդկեղութեանդ անձամբ ընԹերցար զբան եա-
եայ. Հոգի տն 'ի վերայ իմ և այլն. և ծանուցանէ 'ի կարգի բանին Թէ
զբուանն օծութեան մարդասէրութեն է. վասն որոյ փոխեցեր են:

(48) Փոխեցեր 'ի հանգիստ օծելութեն: Եթէ փոխել խնամովք ըղ-
գերան՝ զոր ինքնին երաց ՏՐ, և կատարեալ զընԹերցուածն՝ խփեաց,
բաց այսմ բանդն 'ի հանգիստ օծելութենն՝ յարեալ են 'ի յանձրոյն:
Իսկ եթէ զփակութիւն մի առ գերան առաջացք, յայնժամ նշանակէ՝ խա-
փանել, 'ի բաց առնել, դադարել, և խնամել՝ այնու մարդասէրական բանիւ
զայլ օծեալսն 'ի հաւատարապատւն օծմանէ՝ դադարեցեր, զասեն. զորոշ-
նութեան երկապատկերոցն, զի երկրպագանիչեր օծմանցն նախայիշատակելոց՝
քո և մեր՝ ցուցեր բարձրեալ խորոցաւ առաքելեաւ. զմեր իբր կամելով
մի շնորհաց, և զգոյդ՝ բովանդակ լրութեն ածութեին:

(49) 'Ի նախածանօթ մերայներութեն: 'Ի նախկին ծանօթանայց մերումս
կերպամբ 'ի ծննդեան գիշերին, հրեշտակք օծելոյն անուանք քարոզեցին
հովուաց: ( Ղուկ. բ. 11: )

(50) Որ պարփակ 'ի մէջ նարդեան: Է բանն առաւել. ( Է. 13: )

(51) Ա 'ի պատենք յետնորդելոյ: Ա 'ի զգեցեալ մարդկութիւնդ.

ձեռնադրելոյ օծմանցն ։ Զայս պատիւ օծման ասէ՝ պատմելով զաւետիսն ․ ( սաղմ․ խդ․ 8 ։ ) զոր խնկեցեալ զանձնաւորականն օծմանն , պատուեալ՝ ոչ եղեւ մարմնոյ առողջութեանն քոյ ․ զի ըստ այսմ հետեւի՝ թէ քո եղեւ ընդ մարդ զործեալ եղէ զաղդատութիւն , եւ այնպէս առժամանակեալ անձնաւորական միաւորութեանն , որ նախատրական է ․ ասացի յառաջ աստղինոյն ․ * Վասն այսորիկ օծ զքեզ եւծ || եւն , վասն այսորիկ ոչ յայսմ ասէ զաղդխոնական պատճառն , եթէ թէ վասն սիրելոյդ զաղդատութեան , եւ վասն ատելոյդ զանօրէնութիւն եօծ զքեզ անձնաւորական միաւորութեան ․ այլ յայսմ ասէ զխափճանական պատճառն , եւրե թէ վասն այնորիկ եօծ զքեզ , որպէս զի սիրեսցես զարդարութիւն , եւն ։ Իսկ եթէ զօրէն խնկոցն փառաց մարմնոյն քոյ , մեծութիւն անուանն , զատաւորական իշխանութիւն , եւն ․ որով եւս առէ օծեալ պատուահական եւ առաւելքն օծմանց , ըստ այսմ ասելն վասն այսորիկ , նշանակէ զաղդխոնական պատճառն ․ եթէ թէ վասն սիրելոյդ զարդարութիւն , օծ զքեզ եւծ խաղով փառաց ասացեալ քան զընկերս քո , զի քան զամենայն երանելեաց եւ փառաւորելոց , որք հաղորդութեամբ փառացն առնեն ընկերք քոյ ։ Զայս անզի առաջնոյն այսպէս որոշէին եւ մեկնեն վարդապետք եւ նծայրանք , եւ զգուշութիւն է քննելի ։ զորմէ տես ՚ի մեկն ․ Սաղմ․ եւ մեք իսկ խօսեցեալ եմք ՚ի մեկն ․ եբրայ․ ա․ 9 ։

(52) Օծեալ անուանք խաչին ։ Ասելն երեւմայ ( Երգ․ գ․ 20 ․ ) հոգի եւ բնաւից մեռոց առեր քո , յայսմ ասէ զորտն զիմաստական անուանց Օծեալ , կամ զանուանն խաղութեան եւ ճշմարտութեան ․ որով ծանուցեր մեզ՝ թէ կենդանարարական շնորհ եւս ՚ի հոգիս մեր ըստ առաջինն փրկութեան ․ ( ծննդ․ բ․ 7 ․ ) եւ միանդամայն լոյս վասնեալ յօծմանէդ , ըստ սաղմ․ դ․ 7 ․ նշանեցաւ առ մեզ լոյս երեսաց քոց , ուրախութիւն պարգեւեալ որտից մերոց ՚ի պարտս ձեռաց ։

(53) Իմաստութիւն ամենայն Եբրայեցւոց ․ զի սիրալիրս , ( խէ․ 22 ․ ) մարդասիրութիւն եւ խոսափոխանելի ։ կամ առ նախատեսելոց բանին յարմարէ է այսպէս ․ բարերարութեամբ քո առաջնորդեսցէք՝ խոնարհութեանքն սիրալիրս ․ ոմն մարդասիրութիւն խոստովանելի ․ ասելովնայ առ տե , վասն ասեմն , այսինքն վասն ասանելի , թէ եւ մեկութիւն առաջի ոչ օծելոյն , այսինքն առաւօտուց , զոր որ վարդապետս այլայլանէ ՚ի քո ․ զոր աւետեաց մեկնելով բանիւն , թէ եւ ոչ կոչեցաւ ասեն յամենայն մարդոյ ։ Ասել կամի , առանձնել յօծեալն առաւօտ զքո անուանելով , զոր առաքելովն կանոնն պարծելով խոստովանէք զայն՝ զոր քո աւետարանս առաջելոյ՝ մի բանիւ կոչէիւ ։ Զինեապատ ձեռն ։ Դանիէլ մարգարէ զկենդանատեսութեան մանուկ քո վկայեաց յայտնապէս , զայս կոչումն ձայնի , այսինքն զօծեալն՝ անուանեալ գրելով ՚ի վեր ձան զօրինակ , այսինքն առաւօտեայ քան զամենայն կոչմանց պատուոյ ․ եւ վկայեաց ասելովն թէ զկնի վաթսուն եւ ինն եօթներորդացն ասացելոյ օծելոյն ։ ՚ի անուանն զանիէլի ( թ ․ 26 ․ ) ասէ՝ յետ վաթսուն եւ երկուց եւթներորդաց ․ իսկ որ վարդապետաց գնէ՝ վաթսուն եւ ինն , ՚ի մի զումարելով զամենայն ժամանակին սահմանեալ մինչեւ ՚ի վերջ , ըստ յառաջընթացից բանին անուանեն , համար 25 , մինչեւ զօծեալն առաջնորդ՝ եւթներորդք եւթն , եւ եւթներորդ վաթսուն եւ երկու ․ որով ընդ ամենայն՝ վաթսուն եւ ինն կատարի ։

(54) Իւղ էֆինեցական գինի ։ զինի կարգեալ ըստ արհեստի իւղագործաց՝ խառնութեանց ազնիւ իւղոց , զոր ծանուցեալ զխորհրդոյն մարգարէութիւն , այլ եւ զամենայն վարս առաքինութեան եւ մաքրութեան , անգամ եւ այլք , ՚ի սկզբանէ անտի , կամ ՚ի սկզբնէ գրոցն մինչեւ ՚ի վերջին՝ անուանք զխաչ , կնիքին , եւ ամենայն փոշեաց անուշից՝ իւղովք կարգելոց յառաջաբերեալ , առատայայտնեալ , ծանոյց ։ ( տես երգոց ․ ա ․ 3 ։ բ ։ 4 ․ 5 ։ գ ․

6 ։ [illegible] . 10 . 11 . 14 ։ [illegible] . 2 ։ )

(55) [illegible] ( [illegible] . 1 . 7 . ) [illegible]

(56) [illegible]

(57) [illegible] ( [illegible] . 12 ։ ) [illegible] ( [illegible] . 10 ։ [illegible] ) [illegible] ( [illegible] . 8 ։ ) [illegible] ( [illegible] . 6 ։ ) [illegible]

(58) [illegible] ( [illegible] . 3 . ) [illegible]

Եսայ. կա. 3. 9:)

(59) Որոյ ծնրանէն ասաւ. յր օրհնեալն՝ կամ աղաղակաւն 'ի ձեռն աստուածայնոյ, (սաղմ. ղա. 11:) Բազմամանցն զաւակին՝ զի ծնրաւորն խորհրդեալ օծեալ ձիթով, և օծանելիքն զգեստ նորա (եզ. 5.) զի՞նչ այլ ասէ խոստովան ասէ՝ բայց եթէ զհեն օծանութիւն ասուածն մահու կենդանութեան կամ բժշկել զերգով մեռանելն:

(60) Ճերմակն լուսաւորելոյ շնորհախոյանէ: Շնորհս մկրտութեանն զաւակին վասն լուսաւոր ատենելոյն զհրաման. (սաղմ. ժէ. 29:) Մանզթ է զզաւան լուսաւորելոյ ընթերցմանն զատա. լուսաւոր եղբ. քանզի և 'ի մի օրհնակ զենի՝ լուսաւոր եղելոյ: Այս շնորհաւորելոյն ասէ՝ զի՞նչ յայտ ատենէք խորհրդազգեաց, բայց եթէ զի 'ի մէջ խաւարի անյուսութեան և կասկածանաց ծնծղաց եղբայրութեան նորա, ընդ մեռեալ կենդանի լինելոյ ներհանձնեալ՝ 'ի յետ լինելոյ եւ էջմիածնաւ եղբ:

(61) 'Ի պարփակեալ խաչելոյ: 'Ի քննողին եղբօրս. ե. 1. գնի. * 'ի պարածեալ խոր 'ի զարդու խնկոց, || և 10. գնի, * 'ի պարածելոյ ընկերացն: || Խնկ նա մաքրագործեաւ զնէ խաչելոյ. զի խնկեմնքն և ընդունելն՝ խաղաղենք են:

(62) Ընթրական նշանին: Բանսն եսայեաց. (եզ. 6.) օծցեն խաչով, և այլ բանք երգոյն զի՞նչ այլ յուսացանենն, բայց եթէ՝ զի պարու նախնեաց նշանով մեռանելոյն՝ յորում զայս զօրութիւն հարկաւոր ազգ, լուսաւորեալ անուշակ զանխափանելի բարձրութիւն:

(63) Բնակից եղելոյ: մի օրին. Բնակին եղելոյ: Սա քեզ որ պարածեալ եւ ամենայն եղելոյ, ձեռն համբառնաւ համաշխարհէ երկնաւորաց, ընդ սրբութեամբ պարզազգայնոյ առ քեզ խոստովանէ, յր կարգացեալս, առաքելական. կամ, ընդ կարգաւորաց պատուականաց: շնորհաւորեալ, ընդ համբարձեալ աղաղակաւ օծմամբ, գոհութեան քեզ մկրտութեամբ, որ բարձ բեալ են, և անմահ հրաշագործ, անյայտելի, անտարակոյս փառաբանութեամբ միշտ օրհնեալ, են:

(64) Ո՛վ ճշմարիտ Հայր: և ոչ փոխեր ինչ լուսոյ մկրտութեանն պարծանք եղելոց՝ առաւ յայս քաղաքութեան, լոյս եւ, պատուիրել, բազմայարգել քո լուսաւորել՝ զպատուիրեալ մեռանելն. որպէս զի Գրգուեն, զանմարմնական և զհեռաւորացն մեծութեան խոնարհեալ ընդ աղերսական բանիւ, առաջնոյ՝ թէ պարզամտացն եմք, և զմեծայայտ խոստովանութեամբ քո յայտնեցելոյ եմք: (սաղմ. խէ. 10. ծ. 8:)

(65) Ընտանի նշանոյս: Ընդ սովորական կամ հասարակ նշանոյ ձիթոյ մկրտութեան զհրաշս անմահ, զօրութիւն հրաշալի զործոց քոց: Երկրի լուսաւորեցէ. մի օրին. Երկիր լուսաւորեցէ: Աստուածոյ բարեխաւսութիւն երկրի և երկնի առ նմ՝ ոչ է բառ էակութեան, այլ բառ ընական զօրութեան նորա առ շնորհատու և պաշտելագործ զօրութեան նոյ: Զոր ընտրեալս ոչ զօրէ ասէ՝ ատենել երկինք և երկիր. այլ եթէ զգոյն 'ի մեծէ բերի, որպէս զխորք 'ի մեծէ պատուանակի կամ յաղթահարի. զի ընական զօրութիւնք երաց յաղթահարելն 'ի պաշտելագործ զօրութեան նոյ: Այլ՝ զօրութեան զօրութեան ասէ, 'ի խոնար գոյս, 'ի նուաստ էակս ձիթոյ փոխանակեցեր զօրութիւն, էացուցեր կամ երեւեցուցեր հաստատութեամբ, առհասարակ Աստուածութեամբ անհրաժեշտելի, առաւել պատուականաց. և ի՛ նորոգ ինս. զի մի՛ յորժամ նորահրաշ գործ ինչ երեւեցի եղեալ մեռանելն, (որպէս 'ի զղջմանն՝ այլ լեզու խօսել, կամ մարգարէանալ,) յայտնեցէ, յայտ էութէ ձիթոյն, որ ընտրեալ շնորհ յինքեան զայնափառ զօրութիւն, առաջնոյ անդրանար առնել ինչ կարծեցի. որով մեզ անտարակոյս մկրտութեան առաւել թերահաւատութեամբ, կամ ծածուկ ատենելով զխորհս մեր. զայն թէ բժշկեն հաստատելով և լուսաւորեն: Աստ կամի. զմեռեալ

[illegible]

(66) [illegible]

(67) [illegible]

(68) [illegible]

[illegible]

(69) [illegible]

(70) [illegible]

(71) [illegible]

և ոչ բնական զօրութիւն ներգործելոյ զհոգևոր գործս, առաւելեալս ունին բնական նմանութիւն ինչ ընդ այնց գործոց. որպէս 'ի մկրտութեան ջրոյն բնութիւն լուացող է աղտից. և 'ի հաղորդութեան հացին բնութիւն է յագեցուցիչ, և գինւոյն բնութիւն զուարթացուցիչ, համեմատ հոգևոր գործոց իւրեանց: Այսպէս և 'ի դրոշմին՝ մեռոնին բնութիւն դժուարալուծանելի է՝ համեմատ անջնջելի ներգործութեան իւրոյ: Վերադրելով բանին, 'ի յիշեցոց ամփոփ կերպարան զառաջնոյն ածողի, կարէ իմանիլ և այսպէս. խորհուրդ յաւ-րոց հանդերձանաց անուն՝ իբրև բնութիւն զառաջնոյն ենթակայ ունողի. իբրև թէ, զենթակայն՝ զոր ասեն, իբր բնական նիւթական ըմբռնէ, կամ 'ի նորա բնութիւն կերպարանաց:

(72) Ո՛չ յուղղելոյ խոստանելոյ: Ո՛չ հրամայեցեր զայս իւր կամելով 'ի բազում դիւրութէ բարդել խոստովանել ծաղկանց և յայլ և այլ անուշահոտ իւղոց, որպէս հրամայեցեր մովսիսի 'ի հին օրէնսն. (Ելից. Լ. 23.) այլ փոխանակ այնպիսի իւղոց զօրհնեալն 'ի ճշմարտութեան փոխելով, զոր ինքն խոստացեր, ոչ բնութե, այլ զօրութեամբ 'ի նոյն անխառն ձէթ ձիթենւոյ, առաւել երկնայնոյն լուսոյ: Այսու ոչ եթէ ասելով կամ անպատշաճ ասէ ըղխառնութիւն անուշահոտ իւղոց 'ի մեռոնն, որ հին սովորութիւն է նաև առ յոյնս, որպէս յիշէ յաւատեան մեկնիչն, որ էր յերկրորդ դարուն, 'ի բանն ընդդէմ աղանդոցն. այլ և յիշատակի 'ի գիտնականագոյն գիրս, յա-ռաջագոյն եկեղեցւոյ. քահանայութեան. գլ. Է: Այլ ասէ եթէ, թէ ոչ հրամայեաց քո 'ի նորումս, որպէս հրամայեցաւ 'ի հնումն. յայս պատճառ թէ այս խառնութիւն ոչ է 'ի հարկէ խորհրդոյն, և ոչ յանձնայն հրամանէ, այլ միայն եկեղեցական աւանդութիւն և հրամանն բարոյական պատշաճի: Զի և վասն խառնութեան բալասանի, որ սովորութիւն է առ լատինս և առ յոյնս, ասացեալն բազում եմն աւանդութեց քննիչք, թէ հարկաւոր է առ նոսա յեկեղեցական հրամանէ միայն, իբր զի նախ քան զեկեղեցւոյ դարուն չէր ասեն՝ յիշատակ խառնութեան բալասանի: Այլ զայսպիսի յերկարել՝ ոչ է աստանօր:

(73) Ընդ օրհնակոյ ...: Թուեալէս և քաղցրութիւն քո մեռոն օրհնակա-ոչ համեմատ, այլ զանազան իւղոց նմանմամբ, այսինքն ծաղկի դաշտաց, շուշանի, նարդոսի, երեքնուկի, քրքմոյ, աղեւրոյ, եւն. առաւել ոչ առանց, ոչ վայլուչակար, քան թէ պատուհասեալս օրհնեալ նուազ մեռոն, միայն պարզ իւղոյն օրհնեալ փառաւորեալ անուանց, որ իւղ թա-փեալ ասացեալ յերգսն. իբր զի զոր զինչ ընտրս, և ոչ իմիք կարօտս. և այսու ատոյեալ նմանմամբ 'ի յերգն. զի յանձն առաջնեալ ծաղկեալ և յա-նուշահոտ իւղս՝ փոխեցեր զամենեւին իւղոյն մասունս, և նմանս է ազնուա-թեն նոցա:

(74) Ո՛չ ... : Պարզ և անխառն իւղոյն օրհնեալ, և 'ի նա միաւորեալ՝ պատարագս. որով ցուցեր՝ թէ ոչ խառնեցելով 'ի հոլոտա-կոյ ... , յայլ և այլ հակառակ և անմեղեան իւղոց, որ է ձիթենի առաջ, յայսմի օրհնեալ բաժանեալ կամաց և անմիաբանութե, այլ 'ի միաբանական ... միոյ իբրև պատարագ մեր ... և զուարճանալ. ... և վասն մեր ... լուս մեր ... կամ խոնարհութե՝ ... նմանութեամբ օրհնեալս. ... . ընդ որ նմանութեան՝ նաև ... միութեան մեր ... լոյս բարի, և հուր ... անխառն 'ի ... ( ... . ... ) այսինքն ... հոգւոյ միութեան:

(75) Ամենայն աւետարանչօքն: Յովհաննու. (Գ. 69:) ... աւետարանին, (... . Է. 10.) * Ընկալ զգանձս իմ, զի բազմաց յոյն ...  կենաց քոց ||:

(76) Լուացէք ... : 'Ի կեր ... ( մատթ. Է. 17.)

* Օ՛ծ զգլուխ քո, և լուա զերեսս քո ||. [illegible] և ես ասեմ՝ [illegible] զերեսս կենդանատու [illegible], որ է [illegible] 'ի վերայ [illegible] երեսաց. ( Ծննդ. Բ. 7.) և օծեալ զգլուխս [illegible] [illegible], [illegible] խաւ-Թիւ, և ոչ [illegible]Թիւ:

(77) [illegible] [illegible] [illegible]. և [illegible]. [illegible]. ոչ [illegible]. [illegible] և [illegible] է ոչ [illegible] և [illegible], [illegible], [illegible], որ է [illegible], և [illegible] [illegible]. այլ [illegible] [illegible]. 'ի մի [illegible]. [illegible], [illegible] [illegible] է [illegible] և [illegible]Թիւն [illegible]:

(78) [illegible], [illegible]. [illegible], [illegible]. [illegible], [illegible]. [illegible], [illegible]. [illegible] [illegible]. և [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible]. [illegible] [illegible]: [illegible] մի [illegible]. և [illegible] մի [illegible], [illegible] [illegible]: [illegible] 'ի [illegible]. ( [illegible]. Է. 11:)

(79) [illegible]: [illegible] 'ի [illegible]. և [illegible], [illegible]: [illegible] ոչ [illegible], [illegible] ոչ [illegible], [illegible] 'ի [illegible]՝ և 'ի [illegible], [illegible]:

(80) [illegible]: [illegible] է [illegible] քո, [illegible] [illegible]: [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible], 'ի [illegible]. [illegible] ոչ [illegible] [illegible], [illegible], [illegible]. և ոչ [illegible], [illegible] [illegible]Թի, [illegible] [illegible]:

(81) [illegible]: [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] 'ի [illegible]՝ [illegible] և [illegible]. [illegible] և [illegible]՝ [illegible] [illegible]: [illegible]. և [illegible], [illegible], [illegible]. և [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible] 'ի [illegible], 'ի [illegible] 'ի [illegible]. և [illegible]. [illegible] է [illegible]. և [illegible] է [illegible] Թիւն քո:

(82) [illegible]: [illegible]՝ [illegible], [illegible]. [illegible], [illegible] 'ի [illegible].

իբրև զօրաւոր հզօրագոյն ներգործական ճգնաւորական, համարձակութիւն կամ անտանել սպառնաբարբառական, որպէս զի անդրանկանելի լինի ձեռաց հակառակորդին: Այսպէս խորհրդական օծումն 'ի մեզ՝ աւհարկու է ընդդէմ գնալոց և այլ մեռանել: Քանզի զեկեղեցականաց բանին եղեկելի սաէ առ խմանաղին փառաւորեանն ասասանոյ, ևն: Առաւօտեան յարամարէ զբանն եղեկեկի (գլ. ԻԶ.) որ ըստ գրոյն խօսի զեղջամնէն ծուլայ, և առ 'ի մեռու զատառանոյէ. յարաւել զկարծանութիւն նորա հենգնաւոր աառախգրութե, ընդ ծառայ նամանապանութե և ողբական խօսեք յարամարեալ սաէ (համար 13. 14:) Յորժամ հաստատեսցուք. և հանդերձեցուք 'ի պատերազմ ընդ օծելոյ թշնամեաց, այսինքն ընդ օծեալ քրիստոնէից՝ որ իբր հրեշտակացեալ է. ուր աւրինաց հերկալուց, յարաւել պարզեք և շնորհեք հոգւոյն իբրև հրեշտակ քաղցրիք պատերազմաւել կարգին առ 'ի չարախեալ զշրջելս քա: Յայս մասն բերէ զայս Նա մարդասիրեան՝ յարամարեալ անձնելոյ բանին. Թէպէտ ըստ ճառսին սովորաբար յայլ մասն խմանան մեկնիչք:

(83) Անհոտելոյ կենդանութե: Անհաւսա անէրաութեն, որ յաւիտենից անեղէն օգնական են և կարող, անձնաւորելի բանիւք, և գերազանց քան զչնորհութեան մարդոյ: Որ աւետարանաւն խնկիւ, օրհնիւ, օրհնութե պատուեալ յիշատակիս իբրև օծեալ անէր, որպէս առ համբաւն 'ի գերեզմ ծննդեանն (Յովհ. Ժ. 11.) և 'ի քահանայապետէն հարցեալ 'ի մեռանելութն գերեզմանին. (Մատթ. ԻԶ. 63.) և պետրոս նոյնպէս գաւառնեաց զրկեր. (Մատթ. ԺԶ. 16.) և 'ի Թերահաւատ խնդրողացն նոյնպէս հարցաւ. (Յովհ. Ժ. 24:) Եւ 'ի նաւաստակացն ձայն, 'ի կանանական խաղասեւց կամ հրամանաց քոց, յորս ասացեր (Մատթ. ԻԷ. 10.) ասացելչ ձեր քն է, այնպէս հաւատասցեք և մեք: Եւ յաւել քան զայստակի՝ հերձեցէս օծեալ անմահականին հարցանէր զքեն առ մարդասիրաս հրէից, (Մատթ. Ը. 4:) Եւ նոցին աւետարանիչք գրէն, թէ դու խոկ ասացեր, զինչ դաւիթ ղածեալն մեծ՝ դուէր իւր և զանձակիզն որդի իմ՝ կոչէ որդի իւր ժամանակաւոր: Այսմ հարցմանն հրէայք չկարացին տալ պատասխանի. բայց հաւատացեալքս այսպէս ընկալեալ զմեկնութե բանին, թէ կատարումն այնր խորհրդական կոչմանն օծելոյ՝ 'ի մեզ հայի: Այն է գերազանց մեծանակ քրիստոնէից, իբր զի ժամանակաւոր ծննդեան որդիքս ազգաւոյ՝ օծմանք մեամբն հաստատեալք որդիք եմ: Գիտելի է, զի առաւօտ յայտնաւորին լինելն խմառնին, եթէ զայսին գրեն ընթեռնուլք եղանակն՝ գրեն, իբր առաւել. Դու խոկ ասացեր, զինչ գրե դաւիթ զանձակիզն որդին՝ ճշմարտ ժամանակաւոր որդի ևն:

(84) Իշխանութեան խնկաւորութե: Գերազանց անուն օծութեն զոյգեան անհատութեան ամենի և զօրութեն, և զամենասաս յարգութեն, կամ օրհնութեն, մինչ զի ևն:

(85) Ած անուանիւ: Ո՛չ դէ 'ի սաեղծուածոց եղծանէ մեծ կոչիլ բնութե, (Թէպէտ և հաղորդութե կոչին եղբարք.) այլ մեծայն կոչին պատահաբար, այսինքն մերձաւորելով առ մեծ իբր ընծայաւոր. իբր պաշտօնեայ, իբր հաղորդեալ խմաստութեն իմ, կարողութեն, մեծութեն, ևն. ըստ որում ասացեր, Աստուածք անգեղ, Աստուածք աւագելով. ևն: Իսկ եօթանասնից խնիցեալ զմեծայնն, ոչ ասէ սաեղծուածոյ. զի ըստ այսմ բնութե իմ պատուէլն, որպէս ասացեր՝ մեծայն անձն, բանն մեծայնն, ևն: Սոյնպէս ով ճեղն ծարքն, ոչ ասէ մարդն՝ զԶն անուանն խորհրդէս կոչել. (Թէպէտ և պատասխանապար սաէ. որպէս կիւրեղ. 'ի խորհրդած. մեռան. " Դիտող մեաւն քն եղբայք||.) այլ և ճշգն նա մարդասիրաս բերէ յանծանօթն ('ի մեկն. երգ. երգոց. 94.) " Քրիստոսաս զքանակ զկեցելոյն ըստ քն||. այս է 'ի զամենայն անեմանաս. բանն իմն. այլ ըստ ճշմարտ օծութեն՝ մեայն Քրիստոսեայ կոչելք:

(86) Նախնւոյն ծննդեանն ։ Օծեալն անուն անուանեալն եղև մեծութեան յաղագս համանուն միլորդի, յաւելուլ նորա, չեմ ես քեն . (յովհ. ա. 20 ։) Նախնւոյն ամենայն բանս հենն բուծ . խնամեան բանս հասարակի, իբր մեղ [illegible] յաւ-աւոլ ծնեալ քան զքեզ . բայց բաւ և ես խնամի բանս գերազանցութեան արարութեն . այսինքն գերազանց արարութեն յանհամեմատ՝ որով մեծ կոչեցաւ և ամենայն քան զամ [illegible], չեղև համապատասխանեալն քեզ անուն ։ Չորք ղեկեկն, որ միլորդն ըստ Ջրոյն զհոգևոր միլորդեն արարչութեան . (մատթ. Գ. 11.) կամ, 'ի ջուրն յորդանանու հրաշալեաց զհոգեն որ 'ի վերայ քոյ ։

(87) Աստուածընկալեալ ընծայաբերիք ։ Աստղագիտացն երկու երկու մոգութեանն (մարկ. Հ. 7. 13.) ինչ աղքատ, խաղաղն երդև քո ձեռագործ վերաբերել, բարեկեցն զհեթանոսաց ։

(88) Յառ յաստուածն ։ Յայտնապէս օրինակաւ զանձնաւորութեան խաղաղութեան հանգստութեան արարող է խնամեալ, և ոչ զմերժումն միոյն 'ի միաւորէ . այսինքն որպէս յառ չկարէ կալ ընդ աստուածութեն, և ոչ մահ Է կենաց, նոյնպէս ընդ անձնաւորաց խաղաղ չկարեն կալ զինչ և իցէ զօրաւոր չարեն ։

(89) Ոսկեհանդերձ . (ակնարկութիւն . մեղքաւ զգեստն էր ։) բայց 'ի մի օրէն . և հեռ բուծ . զնոր, ոսկեհանդերձ ։ որպէս ձեռնաւոր ասէ՝ և ասորեստ (մանեակ,) և ոսկեհանդերձ ձիթով միաւորեն, այսպէս որդն ձեթ չնորհօք օրհնութեամբ զգեստ հաղորդէ, և զաղաւնոյ շուրջ՝ ներքին միտքս լինի ։ կամ, զգեստաւոր շարժական կենդանութեան արարէ . զի առ հեռուն առաւելութեն էր՝ զգեստաւորեալն 'ի հերձուածոյ մաքրական օծմամբ միաւորել . որ և յետ ասաւելն որ ժողովն կատարեցաւ . 'ի կանոնն . Է ։ որպէս և զարդարեալ ան-գամն, կամ եկեղեցւ, կամ անձն՝ առաւելութեն է օծմամբ արարել ։ և զհեռաւոր, զգեստաւորութեան մահու բանին նշանակաւ յարութ . զի օծումն՝ կենդանութեան նշանակ է ։

(90) Ո՛վ է աստուածն կարելի ։ Եթէ աստուածային խնամոցս զամօթն կամ զաստուածային միլորդութեն, առաւել ոչ լինել կատարեալ առաւելոյ օծման, զի յորժամ զաստուածն՝ եղբայրապետ միաւորեն 'ի ներքուստ զգեստ անկեղծաւ, և քահանայութն ընդ նմին արտաքոյ կոչմանց օծանեալն . որպէս զմեն դրաց մարդկութեան . (որ առաջադրութիւն զանց արարեալ են .) և յետ այսպէս օծա-նելոյ՝ ասէ կատարեալն 'ի նմա զմիլորդութեն ։ Իսկ եթէ աստուածն խնամոցս զնոյն իսկ միլորդութեան, անկատար ասէ զայն առաւելոյ օծման, ոչ բան բա-նի խորհրդոյ . զի առ խորհուրդ միլորդութեան բնաւորական է ջուրն ընտա-կան՝ կոչմամբ ամենաին երրորդութեն . այլ խօսի բան կատարելութեն միլորդութեան . յարութ օրէն է 'ի գործ ածել զմեռոնն, կամ 'ի ջուրն հեղլով, որպէս միւս է առաւելութեն, և կամ զմեռոնն միլորդելոյն օծանե-լով . որպէս առ լուսաւոր քահանայն յետ միլորդելոյ զերախայն՝ միաւորեն օծանէ զպարագութն, որ ոչ է խորհուրդ դրոշմի, այլ ըստ արարողութեն ։ Դարձեալ, մարթ է խնամել բանս գործոյ միլորդութեն . զի թէպէտ գործ միլորդութեն՝ բան որով չնորհք հոգևոր ծննդեանն՝ կատարեալ է բան [illegible], բայց հաստատութեն ակնա ունի առ 'ի դրոշմութեն, որ առց օծումն դրոշմին ։

(91) Երկն ... ։ զօրութեամբ իմն, եթէ աստուածայնոցն ասէ՝ մահա-բեր խոցեալն զաղաւն, որոյ օրինակ էր իջեալն յերիքով . (ղուկ. Ժ. 30.) օծումն ասաւ դեղ . (հռովմ. 34 ։) Սոյնպէս եթէ անդա-մանեալն մեղաւորն յանկարծ ասէս, ասն դեղ յիշատակեցաւ ։ (եսայ. ա. 6 ։)

(92) Այս տեղ ... ։ մի օրէն . այս տեղ՝ ... ։

(93) Յաստուծոյ ... ։ Յաւուրն աւէ կամ մշանջենաւորէ . զի [illegible]

[illegible] ( [illegible] . 10 : ) [illegible] ( [illegible] . 90 : )

(94) [illegible]

(95) [illegible]

(96) [illegible]

(97) [illegible] ( [illegible] . 3 . ) [illegible] ( [illegible] . 38 . ) [illegible] ( [illegible] . 46 : ) * [illegible]

(98) [illegible] ( [illegible] . 13 . ) [illegible]

(99) [illegible] . 20 . [illegible]

(100) [illegible]

[illegible] և [illegible] կոչի լոյս, [illegible] 'ի [illegible], [illegible] ընդ միութեան, և 'ի նմա 'ի գործ [illegible]. և զի [illegible] մե-ղաց [illegible]։

(101) [illegible] ։ [illegible] կոչի [illegible]. զի որպէս հուրն՝ [illegible] յիմն [illegible] [illegible]. և ոչ [illegible] [illegible], և [illegible] ։ [illegible] [illegible], [illegible] [illegible], որ թէ [illegible], և թէ [illegible] [illegible]. [illegible], [illegible] [illegible] է [illegible] [illegible]։ Որպէս [illegible] լծ. [illegible], [illegible], թէ հուրն [illegible] և [illegible] [illegible]։ [illegible] [illegible] է. [illegible] զի [illegible] [illegible] [illegible], որ [illegible]։ Որպէս (Սաղմ. 117.) ասէ. * [illegible] [illegible], և [illegible], և [illegible]՝ [illegible] ||։ Եւ (Եզեկիէլ. ԻԸ. [illegible]։) * Որ [illegible] և [illegible], չէ [illegible] ||։ և (ԻԼ. [illegible].) * Մի է [illegible] [illegible]՝ և [illegible] և [illegible]. || ԵՆ։ Եւ [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] լոյս, [illegible], ԵՆ։ Որպէս [illegible] [illegible]՝ [illegible] [illegible]՝ [illegible], (տե՛ս 'ի [illegible], ԺԳ. 3։ և գործոց. ԺԷ. 29.) [illegible] [illegible] [illegible]։ Եւ որպէս հուրն [illegible] [illegible], և [illegible] և [illegible]. [illegible] [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible]. [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible]. [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible]՝ թէ ոչ [illegible]։ Ըստ [illegible] և [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible], [illegible]. և [illegible] [illegible], և [illegible] 'ի [illegible] և [illegible]։ Այլ՝ որպէս [illegible] հուրն [illegible], [illegible] և [illegible]։

(102) [illegible] ։ Կոչի [illegible] [illegible], [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]. և [illegible] [illegible], [illegible]՝ որ [illegible] և [illegible] [illegible] է [illegible] (տե՛ս [illegible]. 24) [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], 'ի [illegible] [illegible]։ [illegible]։ Կոչի [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible] և [illegible], [illegible] և [illegible] [illegible], [illegible] և [illegible] 'ի [illegible] ԵՆ։

(103) [illegible] ։ Ըստ [illegible]՝ [illegible] [illegible], թէ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] և [illegible], է [illegible] [illegible], [illegible] և [illegible]։

(104) Որ [illegible] ։ է [illegible] Ա. [illegible]. [illegible]. 21. 22։ [illegible], է [illegible], է 'ի [illegible]. Ա. 30։ Եւ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], ընդ [illegible] և [illegible]։ Այն-[illegible] [illegible] [illegible]՝ [illegible] և [illegible] է [illegible], [illegible] զի և [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]։

(105) [illegible] ։ Կոչումն [illegible] [illegible] և [illegible]՝ [illegible] և [illegible] է 'ի [illegible], [illegible] 'ի [illegible]. [illegible]

անդ աստուածպաշտական քահանայքն՝ և երկրաւոր Թագաւորն էր պատիւ, իսկ ասա՝ որդւոյն իմոյ, և երկնաւոր քահանայութեն, և որդեգրելոց իմոյ : Բայց այլ օրինակ գնէ, Եէ 'ի Նորաւմն՝ յաւէտ 'ի հնումն, և խմանել, որպէս 'ի Նորումն՝ առաւել ևս 'ի հնումն պատուական էր՝ ոչ նկատմամբ մարմնաւոր օծելոց, այլ նկատմամբ երկնաւոր օծելոյն քրիստոսի. Եւր զի պատրաստալէս օծէ առնելով զմեծափայլն խնամոյքն : Այսոմ մասաց նախատէ յաւջորդ քան սաղմոսին (Բ. 2.) ժողովեցան իշխանք ՚ի վերայ տեառն և ՚ի վերայ օծելոյ նորա : Վասն զի այսու Ճշմարտութեան նշանակէ զաւիւթ զկատարումն իշխանացն՝ Կղեմենտ կեսոս, այսինքն որ նախ քան զկիրս կամ զսարսաբարձ ամբարշտութեան զոր. կամ, յայտ առնէ զկատարումն նախնեաց կրիցն ակրունեաց և անօրինականաց. այսինքն կամաւոր կրիցն յանձն առնելոյ վասն փրկութեն և այլն :

(106) Որ ՅԳԻԿ ՎՅԷՈՆ : (ա. Թագ. ԻԸ. 9 :) Այսու բանիւ մեծ մասամբ զարհուրեցուցանե ծանոյց, թէ անբաւական են պատրանք յանդգնութեն հրէից առ քրիստոս. զի եթէ վասն սատանայի միայն առաջնոյ էր զայն, առհա նա սպանանել յանդգնեցաւ պատուանդանին. (Բ. Թագ. Ա. 13 :) զոր առ Գոլիաթ կոչէ. համարձակեալ հրեայ գոլ. և առկայն մի այնր սպանութեն ոչ պատուհասեցաւ այգն հրէից, այլ յորժամ առեալ որդւոյն իմոյ պատրաստական զասան : Հարազատութեն անդուստ պարզելի է. ծանոյց զաւիւթ զանազանելի պատրանս առ քրիստոս՝ հրէական կատարածութեն, որ էր յանդգնութեն ընդդէմ տեառն :

(107) Աղօթանուէր ամէնապարկութեն : Այն աստուածաբանից ապաշխանքն՝ զոր մատուցանէր զաւիւթ և սողոմոն, և զոր մեք առնեմք 'ի սաղմոսին, մի զարմացուցանէր զերկուս քո յօծելոյ քումմէ, է Փրկական Ճեծ, մեծ առահաւատչեայ 'ի յիշատակ ժառանգութեն առաքելոյն օծելոց քրիստոնէից. կամ 'ի յիշատակ ժառանգութեն առաքելոյ նախաւոյն յաղթութեն իմոյ : Վասն զի եթէ մարդկանաւորն այն օծումն թագաւորական զաւիթի և այլոց՝ շարժէր զնա յաղթութեն և 'ի պաշտպանութեն, որչափ ևս առաւել հոգևոր օծումն քրիստոնէական :

(108) Ո՛վ այս Ծեծ Եարէ երութ : 'ի յաւիտենական արքայական Ճոխութեն զաւիթի՝ ոչ զայլ մեծ պատիւ յիշէ, քան թէ խաղալ առաջի խմել օծի տեառ. (առակ. Հը. 21 :) Ուսոփ կերբ խմ. յորմէ հասանեն խմն անդրեկութե զքո օծութեանց խանգեալ, ծանիցուք՝ թէ զա ևս Թագաւոր Թագաւորաց, և Ճշմարիտ օծեալ խաղելոց, քան զայլ օծեալս, որք էին միայն օրինակ, աւետարանական մի օծեալք 'ի Թագաւոր կամ 'ի քահանայ, իսկ զա 'ի մշտնջենաւորս անփոփոխ օծեալ Թագաւոր և քահանայ միանգամայն. և այսուհետեւ երկրպագէս Եէկէ ու այսօր, 'ի սկզբանէ մինչև ցայժմ, և յաւիտեանս նոյնպէս : Բայց զայս, այսինքն թէ զքո Ճշմարիտ օծութեան, և թէ զմեր հաղորդեալ օծութեն՝ ծանիցուք մանաւանդ 'ի հանդերձեալսն : Զի որպէս պարզեալ Եարէ, առաջարկեալ 'ի Ճարպամ, 'ի Ճարտար կամ 'ի ձեթ, ոչ առայ լոյս՝ մինչև վառեսցի հրով, նոյնպէս օծութեան երեւեալ 'ի մեզ պայծառ երևի 'ի մերձենալ հրոյ աստուածութեան 'ի հանդերձեալսն :

(109) Այս է կերպարանին : Այս, և այսչափ է համբաւանաց կամ մեծութեն մեռանելն պարզ բացայայտութեն, 'ի հնոց անտի մինչև 'ի մեզ առանձնեալ պատուական օրինակօք և նմանութեամբ, որով լուսաւորէ պայծառ զատնելն նկարագրի մեծութեն և զօրութեն նորա :

(110) Վերագոյն ձայնից : Այսուհետեւ զերագոյն ամպոյն զարծոց կամ պատրաստեալ՝ պատրաստ է խաղն նմա : Աղաղակեն հարգաղաց, այսինքն զարծոց կամ պատրաստեալ՝ որք ընտանի և անդրհական են առաջելոց : Կատարելութեն բանիւ պատահէն զէտական բայց. և ամէն բայցին ըստ կարգի խմանելի է Այս հետեւականութեն. որով բանն կարգի այսպէս. Այո՝ պատրաստ

տյսաոցին Վերափոյի ճառանց ... է այս հիփոթեթիքոնին օրինակն կիրառայ. յոր այս մատրմանական նիւթ օրհնեալ ձիթոյս, և այլն ։ Իսկ այլ բանիցն մեկնու- թիւնք են ։

(111) Ալանդոց ուրոյ ։ Ալանդոց օծման մեռոնին ոչ լինի գրել բանիւն. և խմանի այս՝ կամ զի յօծմանէն առաւել լինի անուանն քրիստոնեայ, և կամ զի մկրտութիւն կից է ընդ օծման ։ Զայս և կիւրեղ ասէ 'ի խորհրդածն. *Արդ յայդ մեռոնիս արժանացեալք, քրիստոնեայ կոչիցիք, զճշմարտութիւն անուանս՝ վերստին ծննդեամբն ստացեալք. զի մինչչև էր արդարեւ զձեզ այս շնորհ, այնմ անուան արժանացեալ չէիք արժանի. այլ յայն ժամ նկատեցիք՝ զի լինիցիք քրիստոնեայք ‖ ։ Ես ոչ նորոգեցի. և ոչ կրօնաւոր կոչէր, կամ 'ի կրօնաւորութիւն մտանել առանց օծման դրոշմին. զի նո- րոգեցի յեկեղեցականին նշանակէ զառաւել, պրոշեալ. և հրեայք խմանեալքն այսու զհրաժարելն 'ի մարմնոյ հեշտութեց. որպէս են կրօնաւորքն առ քրիստոնեայս ։ Եւ ոչ յեշտափիլէ յորդիս յաւորայի. և ոչ անուանել յե- կեղեցական աստիճան կամ իշխանութիւն առանց դրոշմի. կամ առնլն յորդիս յաւորայի, խմանի 'ի թիւ խոստովանողաց, կամ 'ի խորհուրդ խոս- տովանութեան. զի յաւոր՝ խոստովանօղ լսի. և չէ օրէն զնա առ դրոշմեալն մեռոնաւ՝ ընդունել 'ի խոստովանութիւն ։ Եւ կամ երախայս բանալ, յար- գելել կամ զինել 'ի նահատակութիւն վասն ճշմարիտ հաւատոյ՝ առանց դրոշմի. զի այս է նորա նեցուկութիւն՝ զօրացուցանել զմկրտեալն 'ի պահ- պանութիւն հաւատոյ ։

(112) Հիփոթեքանուլիւն ։ Այս մատրմաւոր նիւթ օրհնեալ ձիթոյս՝ յա- րուամ մի եկրորդութեան միաւորի զօրութեան և շնորհօք, և ոչ թէ անձնա- ւորապէս, է ճառագայթ փորհոց, թէ 'ի հոգին, ներգործելով 'ի նմա զնորհ հաստատութեան, և թէ 'ի մարմինն, բարեկարգութեան առաջել ան- գամոցն ։ Արդեւեւ զյաղթողն խաչ յերկաւս մեռա, այսինքն հոգեւորա- պէս և մարմնաւորապէս. զի երկեալն մարտիկք զկնոյն՝ զորս յերէ, օծա- նէին 'ի դրոշմին ։

(113) Ռուփ, զօրոք կամ վայելչութիւն մերոց դիմաց, Ճախտառան. Ն... րա- փրաւթիւն, զեղեցկագործութիւն երեսաց ։ Բարէյինաւթիւն պատանեաց, այսինքն բնական գունոյ երեսացն. զի իւղ զուարթ առնէ. բայց առաւելոր կամա- կածիմ վերծողակ մանել փոխանակ զերելոյ սպանմանց, զի դրոշմեալքն անթէ- խածութեամբ ծիծաղելով, բարեձև յուցանեն զառատանսն ։

(114) Հանդէսիէ կրմիդ ։ Կարգաւորեալ կամ պատրաստեալ արարողին զործոց անդարձութեան. այսինքն հաստատական աղօթից, աստուածարան եկեղեցւոյ, ևն. յարմարէ թաբոյ, բարեկարգօղ առամինքն վարուց բարե- պաշտութեան. շաղկապ հանդերձանց, ժողովոյ հաւատացելոց. ուժգնաւթիւն դիմեցմանց, զօրութիւն, կամ արիութիւն զինելոյ ընդդէմ թշնամեաց հա- ւատոյ ։

(115) Ցուռիկց ։ Կախարդական կամ հեթանոսական ծրագրից և նշա- նաց. փոյփէն, մի օրին. փաւիլ, այսինքն բարձող հմայեից, մոգախաղացա կապոց. (համայել.) նախանձիւ յետեւածուաց. արգելօղ կամ կապօղ այ- նոցիկ՝ որք ձեռամբ գիւթեն. (ֆալծի, կեօզպազըճի.) գոփէ աղանդից. 'ի յայս բերող կախարդական ծածուկ կապից, կամ ծածուկ հերձուա- ծոց. բանախոսէան, զօրաւոր աւետեան ընդդէմ գիւտոյ ։

(116) Կոփուրէ Բոփէգելոյ. այսինքն մկրտելոյ, նոր կնիք և շնորհս ստա- ցաւելով 'ի նմ. փենեանփ Էրախոյից, նորահաւատից, որք բաղձան եկեղե- ցեցական օծմանն, այլ և բաց 'ի մկրտութենէն՝ ցանկան եւս օծման դրոշմին ։

(117) Անդէնն ուրփանոց ։ Անդիմալի անհաւատից, և անկնունք մար- դոց, յորոց ծածկեալ լինէր խորհուրդ դրոշմին. և ոչ 'ի նոցանէ մեայն,

[illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] : [illegible] · ( [illegible] · Է · 18 : ) [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · ( [illegible] · ԺԶ · 24 · 25 : )

(118) [illegible] : [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] · [illegible] :

(119) [illegible] : [illegible] · [illegible] · [illegible] :

(120) [illegible] : [illegible] · [illegible] · [illegible] : [illegible] · [illegible] : [illegible] :

(121) [illegible] : [illegible] · [illegible] :

(122) [illegible] · [illegible] ( [illegible] · ԺԶ · 4 · ) [illegible] :

(123) [illegible] : [illegible] : [illegible]

մեջ երևանի․ որ ըստ խորհրդոյն հանդերձի․ այսինքն ըստ որոշմանն, կամ ըստ նշանակութեանն՝ զոր ունի յանձնական անուանս օրինօք․ որ 'ի նոյն առանձնասոյ երևանի՝ յորժամ և բազում միտմ․ կամ, հանդերձ խմբեցեալ փոխանակ յանձն, առնել կամի․ զայս որոշումն բառիս առնուլ ոչ ըստ հոլովման, այլ ըստ յանձնականին․ կամ զուգաձևեալ, հանդերձ փոխանակ բանաստեղծի խմբի, երբեմն թէ ըստ բանաստեղծական որոշման առնել, և ոչ ըստ առաջադրական նշանակութեան բառին։ Եւ ըստ այսմ քննելով, մարթ է առնուլ զիւրն բառն՝ 'ի յոյն գերմանուանեալ մի, այսինքն ենձ, և 'ի բայէն [illegible], հատեմ․ որոյ ընդունելութիւն նշանակեալ՝ [illegible], այսինքն հատող․ յորժամ ածանցեալն բայքն [illegible], բաժանեմ, հատանեմ․ [illegible], հատանանեմ․ [illegible], ձգեմ, արտաքսանեմ, բաժանեմ։ Ուստի առնուն մի [illegible], նշանակէ՝ ենձ բաժնող, կամ հատող․ զոր [illegible] վարդապետս ըստ ծննդութեան խմբաւորել գնէ ինչ ձայր։ Այսմ մեկնութեան նշանակեն յաջորդ բանքն․ զի մեկնէ, յինքն չգող զմեր բնութիւն դըրագէս․ և կոչումն հաստատել զբա-ծութիւն Հօրըն, են․ ուր 'ի կէր արկանէ զնշանակութիւն բայիցն ածանցե-լոց 'ի [illegible] բայէն։ 'Ի [illegible] առաւել խորհրդածէ զխառնակ զորդն մեռանելոյն․ երբ զի սոյ ընդդութիւն և արկութիւն 'ի սպանել զգրկանաւորութիւն՝ ընկալեալ մկրտութեամբ․ ուստի զմեր զիւրաստան բնութիւն առել՝ յինքն ձգեալ ունէր, և 'ի Հօրն առաքելոյն հեղեալ, հաստատութիւն առնէ զմիա-թեն Հօրըն ըստ ընդունելոյ ծննդեանն․ և երբեմն զբեղ ծնծղայիւ, երբեմն զմի-կերպ արկեալ 'ի կալթն՝ զոր թանձրանալոյ և մածանել․ այսպէս մեռանին խառնեալ 'ի մեղ, յետոյ հաստատութիւն փոխարկէ զմիաբանութեանց ձայնը-գութիւն, անհաստատութեան 'ի բառըն, կամ զբաղաքանալոյն 'ի [illegible] են-նոց, այլ և զարձէրոյ՝ զՀօրըն բնական մշտահաստութեան։

(124) Իսկ ճառածանոք, զի խաւարապատեալ, կամ մեթաղեն ևս յաւելանել այս միտումն՝ ըստ այլուստ բառի, որ թուի ընծայել յանձնականս ճառօք, այսինքն սէրու, մեթին, որպէս և ինքն գնէ․ որ և այս խոհական գրեանութիւն, փոխագրեալ կամ այլաբանական անուանս չէ օտարացեալ, անմաման, ան-յարմար․ զի ըստ երկին կամ զործոյն՝ անուանն յարմարել նմա․ որոյ խո-րութիւն կամ զաղանութիւն առաւել է քան զանձնայն սրբութիւն ոչ հեթ օրինաց, այլ և օրինակաւ ինչ քան զնոր օրինաց, այսինքն քան զմեր-ութիւն և զհաղորդութիւն, ոչ ըստ գերազանցութեան խորհրդոյն կամ գործոյն, այլ ըստ երկնակից ներգործելոյն ունի զաղանութիւն ինչ քան զհասս։ Զի ոչ էին Հրոյ օրինակաւ, ոչ երբեմն զՀօրըն ընդունելոց մարմնոյ առաքելոյն՝ յայտ առնէ զարարչութիւն հօրըն․ և իսկ հայր էութիւն, զի բնու-թեն հայրին՝ ճառագայթմամբն յայտ առնէ զհաստատութիւն որդին կէս հօրըն․ այլ նոր յարմարութիւն 'ի ճառածոյ [illegible], 'ի զօրութեան խորհրդ-գործոյ փոփոխելի, 'ի ձև խաչի մատուցանի․ և այս երևանակ մերձեցուց-անելն 'ի զգայութեան՝ զաղանաբար ցուցանէ զներգործութիւն նորա, զի զհաստատութիւն հօրըն և զորդութիւն 'ի հաստատ․ թէպէտ բնական հանգամանօք խառնյն երևեցուցանի այն, որպէս ասաց վերագոյն․ ըստ․ 70․ 71․ զի անհասութիւն Աստուածայնոյ, հօրն և որդւոյն ներգործու-թեան զաղանի է, վասն այսորիկ և զանուանն ունի անքնին կամ մեթին։

(125) Իսկ և նոյն 'ի բայս։ Իսկ այսպէս 'ի բայս անմատոյց առաջ Ած, վասն ծածկագոյն պայծառութեան․ առնելոյն վասն անհասանելի զօրոյն 'ի մերոց մտաց՝ 'ի խաւար ծածկեալ ասի․ (սաղմ․ ժէ․ 12․) * Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր ||։ Սոյնպէս և այս օծումն թէպէտ և լուսաւոր՝ առնելոյն 'ի ընդունակութեանց մերոց 'ի ձեռն նշանաց, յարմարական բանաստեղծու-թեանց կամ խոնարհ, գրաւորական անուանց, մակագրական անուանց՝ ճառցի, մեթին կոչի, ըստ վերագրեալ յանձնական բառին, (ըստ․ 124։) այլ օրինի․ անուանագրաւոր, կամ անուանագրաւոր։

(126) Ածախանոցն ։ Զերկուսն յիմացեալս անուանեաց յիմացական ածխի ըմբռնել . և այսու ածխակերպ կոչեմանց երկինն մարմնոյ ի վեր այս նուաճելեալ, որ միշտ պատուոյ բարբառանք խնկոց . զի բուռ անուանին եւ կոչէ հուր՝ վառմանցն, և լոյս՝ լուսաւորելովն . և այսմ 'ի դէպ յարմարի բանին Եսայեայ, (Զ. 17։)

(127) Զխնդութիւն ։ ոչ մտաւորական զխմ զարմանալեաց զարդութեան, որ 'ի քո զկեթութեան քաղցրացուցանէ. վասն այն այլազգ և ձևացուցեալ զդասս, յարմար 'ի յայտնել զնոյն ճշմարտութեան ։

(128) Մեռոյ . կամ մաս, յիրաւաց յանկանն զաստուածութեան նշանակէ, և 'ի հայցուածն՝ զմերձեցուցանէ. և երկրորդն հուաղ են յաստուածային անուանս՝ մեռոն, որ և է յարմար նշանակ մեռուցանող կրից . զի զդաստութիւն մեղացն բառնայ, և սպանանէ զհին մարդն մեղաց ։ Վասն զի հոգևոր օծմամբ համառօտելով 'ի մահահամբոյրն և 'ի փաղփիւղաղաղբահան, 'ի զգուշ և 'ի զասն հեշտութեանց սատանայի . որով խորև օրախոսա մեղինաւ, խոնարհեցուցիչ զթուլութեամբ, պնդալ յոյնաբերական, զկենդանի մեր, ն զորքաւոր, զմերձաւորեալ աշխատելին ծնանդեամբ, մաշխալն յորինեալ, և սատանեն հնչող կաթոլիկոսական նմիկի, նեղեալ ախտանձամբ, նաւակառքնաւկերով, թուլացուցանելով 'ի կարգաւոր ձայնարձակութէ ։ Այսէ կամի . որպէս լսոց քնարին, և մարմնական խռնչութեամբ օդոյ, կամ ցանկանամբ ջրոյ թուլացեալք, խանգարին 'ի հնչմանն ձայնի, այսպէս սատանայ զմերս հեշտութեան թուլացուցանել զկենդանի մեր և զայլ զգայարանս, 'ի կորուստ մահու քարշէ զկնոջն մեր ։ Իսկ մեռոն մեռուցանէ օծեալք 'ի մեղաւորն և 'ի զգուշանն, մերժեն կապելեալ և ամրանալ զօրութեամբ չարաչարանաց փորձչին, և 'ի մահ.նորա մեռանիլք, կենաց նորա հաղորդիլք, զկենդանին յանձ զօրացուցանել արանց այլ եւ հեռանալոյ ։

(129) Զորոշեալն փառաբանեան ։ Զկարգեալ խաչն յանուն քո օրհնելով և օծանելով, նշանն Քրիստոսի, բառն խաչափայտին՝ յարուեալ բնակութեան, հառաչ հապէ, բառ զօրութեան պաշտպանութեանց, կամ ըմբռնելով. զի որպէս խաչափայտն քո՝ նոյնպէս օծեալ խաչք երկրպագութեան սահմանի, և պաշտպանութեան զօրծին ։ Օրհնութեան և օծման խաչին՝ է հին աւանդութեան, ոչ միայն առ հայս, այլ և առ յոյնս, որպէս զրեալ Շնորհալին 'ի Թղթին առ ալեքս . և յառաջին Թղթին առ կեա մանուել կայսր ։

(130) Կենդանաբեր ամբոխն ։ Կենդանի առնող զերկչելով՝ զօրութեան պաշտպանութեան ընծայի օծեալ խաչին, որ զարքեութեանն զխառըստ երևեցուցանէ ։

(131) Փոյթ'առնուլ խաղաղ ։ Այսու զգեկթեինմէն խնամեան մատուցանել, (Եսայ. Խո. 19 ։ Ամբակ. Բ. 20 ։) Իսկ առա փոխանակ մեռանի խնկացան տանիք ։ Բոյց լու եւ ըմ կարգի բառին՝ խնամել խաչն, որ մեռուցանէ օծեալ, փոյթ խաղաղ անուանեսի առն. պարփակեալ խաղեալ փոյթ օրհնութե. զոր մեռանն ոչ'ն հասարակաց կանգնեցելոյ զկարգաւորեալն 'ի հասարակ անկեալ անառաւելով՝ առաջնոյ, աղեկեալ և մաքրեալ 'ի խոյնութեն լաւեն արկածից, 'ի մաքրութէն զխաւարան աղբեցանից, և 'ի պաշտօն սանդղանեաց մերձաւորել, առ նոյն նիւթս կենաց, առ փոյթ կենաց հասան ներգործէ. հաստատեալ, հաւատարէ ։ Այսու ոչ կամի ասել, թէ ոչ օծեալ խաչի երկրպագելն՝ կռապաշտութիւն է, այլ թէ պարտաւորութի օրհնութե և օծման եղեալ է 'ի զգուշութի սրբազնեալն . զի մի կարծիցեն՝ թէ փոյթ առն երկրպագելով, այլ այնմ խաչի՝ յարուեալ բնակեցուս անդրն, յորոց առ նոյն օրհնելով զնոյն և օծանելով ։

(132) Զի ն որ 'ի մեզ Որպէս խաչն ասէ՝ յանուն քո օծեալ միանգամ, այսպէս և որ 'ի մեղ'են պատուհասանաց զգայութեանց ծղրտեցի Բոփանեան ցուցէ, միշտ բաց զբռնեցն կամ անցքն, ընդ որս անցանեն սատանեայք

և մտածութեամբ նոցա, [illegible] զօր, և զի 'ի ձեռն մեռանելոյն [illegible] 'ի զգուշաւոր համեստութեն, առ 'ի լինել համձեռն օթեւան հոգւոյդ, և [illegible] (մի օրէն. [illegible],) [illegible] 'ի [illegible] շուանչ նենգողին սատանայի։

(133) Այսու լուսով։ 'Ի մի օրինակ [illegible] 'ի [illegible] և [illegible] կամի։ Այսու լուսով մեռանելոյն [illegible] ընդ [illegible], [illegible] 'ի [illegible] ընդ [illegible] որք են օրինակ [illegible] 'ի մեզ 'ի [illegible] մեռանելոյն։

(134) 'Ի սոյն' [illegible]։ Առ [illegible] լուսով մեռանելոյն [illegible] 'ի [illegible] մեր. և [illegible] և [illegible] 'ի [illegible] ընթերցող [illegible]։

(135) Ահա դոյա։ Այսպէս [illegible] 'ի մեր լոյս օրինակն, [illegible] 'ի [illegible], [illegible] լուսաւորութեն մեռանելոյ։

(136) Ըստ [illegible]. մի օրէն. և 'ի հէն էծ. ըստ [illegible]։ [illegible] 'ի [illegible] և [illegible] թուական [illegible]։ Այլ [illegible] 'ի վերայ [illegible], [illegible] և [illegible]։ Արդ' [illegible] 24 թուի, թէ [illegible] և մեր 36 է [illegible]. և կամ [illegible] 420, և զ4 թուոյ [illegible] 80. զի [illegible] 80. [illegible] և [illegible] 'ի [illegible] 80 թուոյ, որ է ʒ. և [illegible] 'ի [illegible], մինչև 'ի 22 գիրն [illegible], որ է ն. [illegible] 'ի 80 [illegible], որ է ʒ, [illegible] 'ի 400, որ է ն, [illegible] և [illegible]։ [illegible] 'ի նոյն [illegible], և [illegible]։ [illegible] և [illegible], թէ [illegible], և [illegible] օրինակ և [illegible], [illegible]։ Այսպէս և մեռանելոյն [illegible] 'ի [illegible] մեր, [illegible]։

(137) Առ [illegible]։ [illegible] կամ [illegible], և կամ [illegible] 'ի [illegible]. [illegible] է օրինակ [illegible] և [illegible]. [illegible], [illegible] և [illegible] օրինակ [illegible], թէ [illegible], որ [illegible] և [illegible] մեզ [illegible], և թէ [illegible] 'ի [illegible]։ [illegible], [illegible] և [illegible] 'ի վերայ [illegible] 'ի [illegible]. [illegible] է օրինակ [illegible], և [illegible] 'ի [illegible]։

(138) Ցաման խնչ: 'Ի ափին առկեալ խեղ, ոչ թուլացուցանէ զայն և եզ-ծանէ, որպէս առանեն գինին և ջուրն. այլ 'ի պատշաճ կակղութեն պա-հէ զափին. այսպէս և մտաւոնն զծեալս խըս:

(139) Անհատաստր տատանելուն: Անհամեմատ կամ անզուգական առա-տութեն, կամ գերազանցութեն:

(140) Աւետմն փո: Զօրութիւ առեան քո զգեստք 'ի ճակատ մարմնոյս, կամ հոգւոյս զայս օծումն. զի ներգործութիւք նոր արքայական խորհրդ՝ 'ի զօրութէ չարչարանաց նոր յաղթողին:

(141) Ծայրաբերջակոնեք. շատատարեղենեաք: Հաստատամ, թէ նորոգ յայտ նեացի բազմաճառանչ շառաւեղենեաց այս պտուղ խաղող՝ մտանս, ընծայե-լով զայս 'ի համբերեմեալ փառաւն՝ թէ հոգւոյն, և թէ մարմնոյն: Յօ-րում ժամանակի Այս ճարգ, խաղս հոգեւոր ըստ ներգործութենն՝ համ-գերձ նշանաւ խաչիւք 'ի գետս իմ փայլեցաւ:

(142) Ո՛չ ըմբռնողն: Զօրութե մտաւնս [illegible] անըմբռնելի [illegible] թուլա-ցեալ մատաւոր թեւօք, 'ի վեր քան զհասութիւն մեր մտաց՝ անհասն ճառա-գայթհասս, և անհնար փոխաւորութիւ հետազօտել, ծածկեցաւ յիմէն. ո-րում 'ի հին օրինաց՝ կամ յայլ ընտական խորաց ոչ զտաւ հաւասար օրի-նակ, կամ մանաւանդ, կամ հետեւերգութե, և ոչ այլ ընկեր՝ [illegible] որում եղեալ չափեցալ, բայց միայն [illegible] խաչդ և արիւնդ. ընդ որս հո-գեւոր, հոգեւոր զօրութիւն գերազանցեալ երեւեցաւ:

(143) Անանց փո ահաւոր: Յօրհնեալ քո զմեղ մտաւնաս, եղիցի և անուանդ քո ահաւոր՝ զօրեղագոյն անճառ փառաց, [illegible], [illegible] կամ հրեշտակաց ըղձիւքն՝ օրհնեալ:

(144) Բարձրելալ: 2 օրին. բարձրացելալ:

(145) Հանդերձեալարեմ: 2 օրին. հանդերձեմ:

(146) Թեղմ: Ըստ բառին նշանակէ զերկայն թելան՝ որք կկոցաւ ան-ցուցանելն ընդ աւեղս կտաւոյն. նմանութիւ զնի փոխանակ զգայութեց կամ կարողութեց հոգւոյն, և կամ փոխանակ բոլոր մարմնոյն, որ երբ կտաւ գործեալ է յինյ: Յայս օծեալ թելանս աւէ՝ մի՛ մնացէ. և մի՛ [illegible] [illegible] [illegible], [illegible] կամ [illegible] [illegible] մեղաց:

(147) Հարանադրաբոյծ: Իբրև հարան զարդարեալ, կամ հարսին պատ-շաճեալ փառօք, գեղայօրէն, գեղեցիկ յօրինեալ հոգեւոր գեղեցկու-թեամբ:

(148) Մոխ կերենաց: Այս [illegible] հուրս եղիցի մերձեցելոցն յընտրութե կամ 'ի մաքրութե քրիստոնէութե միտումն կրկին եռաց-մամբ արարեալ, [illegible] հոգեւոր ջերմութե, այլ յօրինաւոր. ո-րով 'ի կակղութեն փոխեալ 'ի կարծրութե, լինի այլ յօրինուած կամ գործած: Այսել կամի, որպէս 'ի հուր խեցեղէն կի՛ 'ի յեռացեալ հեթ մխեալ երկաթն՝ առաւել կարծր լինի, այսպէս զօրութե մտաւնս եղի-ցի օծելոցն աւելի՝ միտումն կրկին կի՛ [illegible] եռացմամբ. որով ամրացեալ հոգեւորապէս, 'ի կարծր և յամառաման [illegible] հաստատութե [illegible]:

(149) Վերնամբցաման այսր պարգևուն: Վերին յաղթութե պարգեւս. կի՛ [illegible] պարգեւս՝ այս լիցի նշանակ աւելու [illegible], զի մի՛ [illegible] ջուր մարմնական հեշտութեց. մի՛ [illegible] հուրք, [illegible], [illegible] են. մի՛ [illegible] 'ի [illegible] [illegible]. մի՛ [illegible] [illegible] [illegible]. մի՛ [illegible] [illegible], 'ի [illegible] կամ [illegible] [illegible]: Մի՛ [illegible], [illegible]՝ որք քեզ պահեալք են (Ա յա-կոբ. Թղթոյն. 1.) կամ [illegible] և [illegible] և [illegible] զօրութեան՝ որք [illegible] պահեալք են, մանաւանդ [illegible]: Եւ մի՛ 'ի [illegible], 'ի [illegible] [illegible] [illegible], կամ 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible]

տառապելոյն յանմարթարար կորուսանելն։ Եւ մի՛ դժուարին, զընկալեալն 'ի մեզ օծութեան՝ անմաքրութեամբ 'ի բաց մերկանալ ըստ գործոցն և ըստ պատուոյն, թէպէտ և ըստ կենցոյ զգուշաւին միշտ մնայ։

(150) Քեզ՝ մայնոյ մայն օծելոյ։ մի օրհն. փեղ մայն մայն օծելոյ։ Քեզ՝ որ միայն և մի Տէրմարիոս օծեալ ես, առաջին ամենայն, ...կար_ գացեալքն ընդունող, հնչմունք յայնից նուագարանաց. յաղթանակութիւն, յայլ օրին. յաղթանակութիւն գոհէսաւորեւ, այսինքն յաղթողական գովա_ սանութիւնք. ... երանական բարբառք չքնաղ. ... սրբազան երգեցմունք ...։

(151) Այն ես յետադարձութիւն։ Այսպէս կայ 'ի մերում լուս օրինակի որ տասուել յարմար թուի. (տե՛ս և այլուր տառացեալ 'ի բանն հէ. լծ. 99։) Քանզի Տառաքս՝ որ վասն ժամանակին՝ և վասն մեռանելոց, ... մեռեալս կատարելութիւն իւրև ընդդէմ թշնամեացն ... ստացեալք. սա_ ... իւրև ... զ... հայի առ երկնաւորս ... Այն առաջին բանն՝ որ վասն ժամանակին, է իմ ձեռնադրեալ կամ խառնակութիւն 'ի ... , 'ի ժամանակին, որ է ընդ սրբազան գոր_ ծի եկեղեցական. և այս՝ երկրորդ բանս որ վասն մեռանելոց, է ես ... , հատուածոյն գրութիւն գաւառական՝ 'ի ... , 'ի մեռանելն՝ որ կրկին ... է քան զժամանակն, ... խորհրդոց, և սրբա_ զութիւն եկեղեցեաց, և ամենայն սրբազան անօթոց։

---

Մերտին յաւելուած նըկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ՂԳ.

Ա. Ո՜վ յաւիտենական, բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք 'ի մահու և լոյս 'ի խաւարի. յոյս ակնունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց. որ ամենարուեստ իմաստութեամբ քո ¹ դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուազ ծագումն և անմուտ արեգակն. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ։ Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա, ա՛ծ իմ և թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ. յս քս ա՛ծդ ամենայնի. սուրբդ հանգուցեալ 'ի հոգիս մեր. մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ

քան զլինել նոցա․ առաքեա՛ զպահպանողական զօրութի՛ւն աջոյ քո, և փրկեա՛ զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ ։ Որպէս զի զյիշատակ սոսկալի և դր քո անուանդ միշտ համբուրեալ[2] շրթամբք հոգւոյ ընձութի՛ւն շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ ։

ի․ Դու[3] 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիւդ, զոր ա՛ծային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր այսու պարգևօք ա՛ծականօք, ամաչեցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սայրասուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մառախուղն ։ Բազուկ քո հովանասցի, և աջ քո կնքեսցէ․ վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց ։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից․ ամէն ։

---

(1) Պաշտօնագիրքս յայտ ։ Քո հզօրութեան իմաստութեամբ յառաջուստ զպարձուցանես զգիշերն, որ է խոր հեռք և ննջմունթիւն մարդոց․ կամ, զխաւարն մարդոց փոխադրես 'ի բարեխօսութեամբ ։ Անձնար ոչէփոխ․ արեգակն ես [illegible], ամենազօրութեամբ, բոլորից լուսաւորող․ բայց ոչ խորև զարեգակնս զգայի՝ մտանես, ծածկես, տեղի տալ 'ի միջոյն կողմանէ երկրիս, կամ 'ի մարդկանէ․ երկինք և երկիր համաձայն քննակեցուցին 'ի նոսա՝ քեզ ներկայ են․ ոչ մի ինչ յայտնապէս կարէ մտանել առ քեզ, այսինքն ծածկել, անտես լինել ։

(2) Շրթամբք հոգւոյ ։ Զյիշատակ դր անուանդ միշտ համբուրելով ընդունող հոգւոյս, և փափաքանօք սրտիս․ որ է ասել, զանուն քո միշտ 'ի բերանն ունելով ջերմեռանդն հոգւով, և այլն ։

(3) 'Ի դրոշմէ խաչի ։ 'Ի նշանագրութենէ խաչիդ՝ որ է նշան քո, զոր աստուածային արեամբդ ներկեալ նորոգեցեր, այսինքն 'ի փոյթն մարդոց՝ փոյթ կենաց արարեր․ և նովաւ 'ի շնորհ որդեգրութեան վերածեր զմեզ մկրտութեամբ, և բուն պատկերի քո յօրինեցեր զմեզ․ այսու պարգևօք, զայս 'ի յաղթողն յաղթէ [illegible]․ այսինքն․ այս պարգևօք խաչիդ քո, և արեանդ, և շնորհաց մկրտութեան՝ ամաչեսցէ սատանայ, և այլն ։ Բազուկ քո․ բազուկ քո զոր 'ի խաչին տարածեցեր, հովանի պաշտպանութեան եղիցի․ և աջ քո, զոր բևեռեցեր 'ի թևս խաչին, կնքեսցէ, իբր կնքով պահպանեսցէ զիս 'ի յարձակմանց թշնամեաց․ իբր [illegible] հալածեսցէ զիս ․

Մերսոփէն յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

# ԲԱՆ. ՂԵ.

ա. Արեգակն արդար, ¹ ճառագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափագ անձկութեան, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, Թագաւոր փառաց, քս արարիչ, խոստովանեալ կեանք: Եւ արդ զթերութիւն վրիպանաց բազմասխալ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ, մատուցես յաղերս հաճոյ հօր քում բարձրելոյ: Որ վասն իմ ² ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն ամենեւին կենաց օրհնութիւն, վերնոց և ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից: Որ թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ, ած և տրդ բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել և այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ³ ազգակցաւ մարմնոյդ առելոյ ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր:

բ. Եւ վասն արեանդ պատուականի ⁴ միշտ մատուցելոյ ի հաճոյ կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս, թողցին պարտիքն, ապաքինեսցին ամօթն, մոռասցին պատկառանքն, ⁵ բարեգործեսցին դատակնիքն, սատակեսցին որդունքն, վերասցի լալն, հանդարտեսցէ կրճտումն ատամանցն, սպառեսցին ողբքն, հատցին արտասուքն, մերժեսցի տուգն, հալածեսցի խաւարն, վտարեսցի հուրն տառակութեան, հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք:

գ. Եկեսցեն գթութիւնք կամողիդ և պարգեւողիդ կենաց ամենից, ծագեսցի լոյսդ, արագեսցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօղդ ողորմութեան, յառաջեսցէ

արբուցէ զանդաստանս պասքեալ՝ անկեալ ոսկե-
բացս թշուառութք 'ի վիհն մահու. ծաղկեցուցէ
պտղաբերեսցէ[6] բաժակդ երկնաւոր արեան կենարա-
րիդ զերկիրս խնամեալ առուրն լուսոյ, որ անծախա-
պէս միշտ[7] պատարագի յիշատակ կենաց փրկութեան
հոգւոց ննջեցելոց։[8] Ով ի ամենայնիւ մահացեալ հո-
գիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո, գթած, 'ի քեզ
զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ 'ի մեղաց ան-
մահ կենդանութք 'ի յարուեն արդարոց, հօր քում
օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ
ՙդոյ բարեբանութի վայելչական գոհութք այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

# ՎՌԽՃՌՆ

---

(1) Ճառագայթ օրհնէալ։ Դուն որդի ես, որ ըստ լուսաւորելոյ զաշխարհ արեգական ես, իբր ծագեալ 'ի հօրէ՝ ճառագայթ ես, ոչ որպէս պատահումն ինչ անցաւոր, այլ գոյակ անձնաւոր, որով և օրհնեալ ես միշտ ընդ հօր։ Լուսոյ ճեռաղարան. բուն խակութի լուսոյ, կամ կերպարանիչ և գոյացուցիչ լուսոյ. ֆոֆոս անջիոսն, փափաքելի յոյժ կարօտանօք արդեօք. Բարուոյ Բերկրօսն, բարի կամ առաքինի մարդոյ զուարճութիւն. կամ, բարի և ախորժելի երաց պատճառ բերկրեցուցանելոյ, կմ զուարճացուցանելոյ զմեզ. յոսոյ փեոսն, յաւսոյ նպաստակ կամ հաստատութիւն։

(2) 'Ի ֆորջ էկեր։ 'Ի պատճառս իմ զփորձ անիծից կրեցեր մահուամբ խաչի, առնլով զիմ նմանութի։ Վասն որոյ եթէ այսու օրինակաւ մե-ռանել յանձն առեր վասն իմ, և ես առաւել հաճեսցիս զթերութի աղօթական բանիցս ընդ... և ընդ իմ աղօթելով կարեկից լինել վշտակ-ցօրս կէրջ, ցաւոց զզենմանս, կամ վասնդաւոր ախտիցս։

(3) Աղգակցու ծարծոյք։ Փոխադրութի հոլովոյ է և առա, եղեալ ըղ-գոյականն իբր յատկացուցիչ. և պարզելի է. աղգակից կամ ընտութիւ-նից մարմնովդ՝ զոր 'ի մէնջ առեր, որ է առել. ըստ մարդկութեդ աղօ-թելովդ առ հայր. որում ըստ ածութեդ համապատիւ ես։

(4) Մէրյ ծաթացէլոյ։ Որ միշտ ընծայի յանդամնելութեն ես, կամ 'ի խորհուրդ պատարագին։

(5) Բարէգործէոյին դադանիկն։ 'Ի բարիքն փոխեսցին մեղաց պարտա-ւորութեամբ։ Սադանէոյին որդանւոյն։ Տրն յաւետարանի անմահ ասաց զորդն գեհենոյն. իսկ առաւօտ աստանելին աղբ ըստ զկործանեալոյն 'ի խա-ծուածոց նոցա, իբր առել. մի եղեց կերակուր որդանցն։ Ըստ այսմ խնամեալի է և վասն յանձորդացն, այսինքն մի պարտաւորեցայց 'ի լալն, 'ի կրճտումն, յորդան։

(6) Բաժակդ երկնաւոր։ Բաժակ արեանդ՝ թէ այն, որում 'ի կենդա-նութեա հաղորդեցայց, և թէ այն՝ որ 'ի մահուանս մատուցանի ՙդր պա-տարագաւոն, պաղաբերի արասցէ զերկիրս մարմնոյս, զարմանեալ առուրն լուսոյ, վասն առուրն յարութե։

(7) Մէրյ պատարագին, արիւնդ. բայց մի օրին. ծէրյ պատարագին, դու։

այարոցին վերագոյն ծառայից ... է այս հինաւոխանութիւն օրհնութեան յիշեալս. Եւ այս մարմնականն նուէր օրհնեալ ձիթոյս, և այլն: Իսկ այլ բանիւքն միջամտ- նեալք են:

(111) Աւանդ ոգւոյ: Աւանդ օծման մեռոնին ոչ լինի դիւր քննել. և խնամն այս՝ կամ զի յօծմանէն առեալ լինի անուանն քրիստոնեայ, և կամ զի մկրտութիւն կից է ընդ օծման: Զայս և կիւրեղ ասէ ՚ի խորհրդածս. *Արդ մեռոնիս արժանացեալք, քրիստոնեայ կոչեցիք, զանուանութիւն անուանս՝ վերստին ծննդեանն առացեալք. զի մինչչև էր արժանացեալ ձեզ այս շնորհ, այնմ անուան արժանաւոր չէիք արժանի. այլ յայն նկարէիք՝ զի լինիցիք քրիստոնեայք||: Եւ ոչ նաւակերտեցի. և ոչ կրօնաւոր կոչիլ, կամ ՚ի կրօնաւորութիւն մտանել առանց օծման գրոցն. զի նա- ւակերտեցի յերրորդականն նշանակէ զառնել, որոշեալ. և հրեայք խմանցն այսու զհրաժարեալն ՚ի մարմնոյ հեշտութեց. որպէս են կրօնաւորքն առ քրիստոնեայս: Եւ ոչ մերձաւորին յորդիս յաւագայն. և ոչ անուանել յե- կեղեցական աստիճան կամ իշխանութիւն առանց գրոցն. կամ առանձ- յորդիս յաւագայն, խնամն ՚ի թիւ խոստովանողաց, կամ ՚ի խորհուրդ խոս- տովանութեան. զի յաւագն՝ խոստովանօղ լինի. և չէ օրէն զչև եւ զգրոցեալքն մեռոնաւ՝ ընդունել ՚ի խոստովանութիւն: Եւ կամ երախոյս ընծայել, յորդ- դորել կամ գիտել ՚ի նահատակութիւն վասն ճշմարիտ հաւատոյ՝ առանց գրոցն. զի այս է նորա նկրդարծումն զօրացուցանել զմկրտեալն ՚ի պահ- պանութիւն հաւատոյ:

(112) Հինաւոխանութիւն: Այս մարմնաւոր նուէր օրհնեալ ձիթոյս՝ յա- րաւմ նա երրորդութեան միաւորի զօրութեամբ և շնորհօք, և ոչ թէ անձնա- ւորապէս, է ճառագայթ փրկչի, թէ ՚ի հոգին, նկրդարծելով ՚ի նմա զնորհ հաստատութեան, և թէ ՚ի մարմինն, բարեկարգութիւն ամրով ան- դամոցն: Որպէս զյաղթողան խնմ յերկաւս միտս, այսինքն հոգևորա- պէս և մարմնաւորապէս. զի երևելի մասունք գլխոյն՝ զորս յիշէ, օծա- նին ՚ի գրոցեալն:

(113) Ըստ, զարդ կամ վայելչութիւն մերոյ դիմաց, ճակատուն. նկարա- գրութիւն, գեղեցկագունութիւն երեսաց: Բարեյիշութիւն պարահանաց, այսինքն քնական զունոյ երեսացն. զի խել զաւարթ ասնէ. բայց աստանօր կառա- կածիմ վերապակ մանել փոխանակ գրեւրոյ պարանոց, զի գրոցեալքն ամօթ- խածութեան ծիծաղելով, բարեձև ցուցանեն զառատանանն:

(114) Հանդերձիւ կրծից: Կարգաւորիչ կամ պատրաստիչ արտաքին գործոց ամրապնդութեան. այսինքն հաստարակաց ադօթից, աղաւաւորութեան եկեղեցւոյ, են. յորժորիւ ձեռաց, բարեկարգօղ առանձին վարուց բարե- պաշտութեան. ղողջաղ հաստանայ, ժողովոյ հաւատացելոց. ունկնութիւն դիմեցման, զօրութիւն, կամ արիութիւն գիտելոյ ընդդէմ թշնամեաց հա- ւատոյ:

(115) Ցանկից: Կախարդական կամ հեթանոսական ծրարից և նշա- նաց. փոխփոխ մի որեն. փախիչ, այսինքն բարձօղ հնայեկոց, անատխապաշտ կապոց. (համայիլ.) նախանձիւ չետանժոսաց. արգելօղ կամ կապօղ աչ- նոցին՝ որք ձեռամբ գիւթեն. (փալմի, կեօզպապըջի.) Գործիւ աղանդից. ՚ի յայտ բերօղ կախարդական ծածուկ կապից, կամ ծածուկ հերձուա- ծոց. Բանախոյեան, զօրաւոր ախոյեան ընդդէմ գիւաց:

(116) Կոփածիւ Նոհեցելոց. այսինքն մկրտելոց, նոր կենք և շնորհս առա- ւորելով ՚ի նմ. փէնլաւ Երախայից, նորահաւատից, որք բազձան երա- խայական օծմանն, այլ և բաց ՚ի մկրտութենէն՝ ցանկան եւս օծման գրոցեալն:

(117) Անմիջին արփածնոյ: Անդխաելի անհասանից, և անկնութ մար- գոյ. յորոց ծածկեալ լինէր խորհուրդ գրոցելն. և ոչ ՚ի նոցանէ միայն.

այլ և 'ի Հռովմայեցւոց ժողովրդեանն. որպէս գրի 'ի գիրս յաղագս եկեղեցւոյ. քահանայ. գլ. Գ. բնաբ. Դ. կամ, անմերձենալի յանհաւատից. զի միւռոնն յեկեղեցական օծմամբ միայն 'ի գործ ածի, և ոչ յաշխարհականս. հերձուածս հեթանոսաց, 'ի սրբասեղանն զարտաքսեալս հոգւոյն սրբոյ 'ի միջոյ գործակցացն, որպէս 'ի ընդունել խօսել, մարգարէանալ, եւն: Այս ազնիւ հիացմանց ընծայեալ սիմոնն մոգն, խնդրեաց զայն իշխանութիւն. (գործոց. Ը. 18:) Եւ յայսմանէ ընծայ Նախախնամութեան անհասողից. զի սա հաւասար 'ի հրաշալի գործոց օծմամբ՝ կամ 'ի բարի Նախախնամ քրիստոնէութեան շարժին, և կամ 'ի հակառակութեան զօրութեան. Մեզնոցուցիւ Գործնեայ, յայսմնիշ զառաջին խորհրդոցն ևս, կամ մարգարէին. զի Հոգւոյն նա բաշխեալ անպատմ առայր զօրութեանցն զարտուղեալ մարգարէութեանն և հրաշագործութեանն. որպէս ծանուցանէ առաքեալն. (Ա. կորնթ. ԺԲ. 24. 25:)

(118) Յորժամն յեղկեց: Պատուէր առ քահանայս կամ առաջնորդս. որպէս և սրբոց, զնմանէ ծառայից. զի ամենեցունց հաւատացեալ է օծումն զօրութեան. ուստի և կանխանց զգոյշ է, և փութով անձնամբ 'ի շնորհս, որպէս և առաքինութեան ծերոց, որք կամ 'ի ծերութեան միջնաբար զօրութեան, և կամ զառաջինն զօրութիւն յերկրավ խնդան. յեռանդութեան նախնեաց, 'ի քահանայութեան և յեկեղեցականութեան. որք միւռոնաւն կնքեալ 'ի Տաճարն և 'ի ձեռս. զմանաւանդ ծառայից, այսինքն մաքրութ անձանց կամ անօթոց՝ որք 'ի նշանակ սրբութեան օծեալ լինին. զսոյն ետեղեալ, որք 'ի սրբարանի թագաւորք՝ օծանելին միւռոնաւ. Նախնեացն սրբոյն, այնուհետև՝ որք 'ի գերագոյն ամենայն իշխանութեան ամբարձեալ, նորոգեալ օծանելին. յառաջ կարգաւորք կոյսերաց. զերապատւութեան կամ մեծ առաւելման կայսերաց, անուանեալ զառաջինն օծումն կայսերականն:

(119) Նշխարհոյն ... : Կնքեալ առանձին նշանակէ զառաքելականութեան 'ի նոյնս եղեալ երագն. այսպէս մեծութեան շնորհաց հոգւոյն առնլով, միւռոնաւ իբր կնքեալ ծածկեալ 'ի մէջ յանուն տն, զօրութեամբ քո. կամ զի միւռոնն յանձնարէն կոչի և սրբոց, որ իբր կնիք է նշանակէն անուամբ Քրիստոսի:

(120) Իւղ անուանն ... : Այս 'ի մէջ օրհնեալս, որպէս և յայլս՝ մկրտելոյ զգեստուց 'ի նախնեաց բանին. և խնամոյն և այնպէս արտաքին է. իբր ասել. օծմամբ միւռոնին կրել կնքեալ ծանուցեալ նշանակի առաքելականութեան շնորհին: Բայց և անուանն ..., այսինքն բանն յասականութեան, կամ ինքն յառաջ անուանս Յիսուս, նորին իսկ կոչմանն ըստ զանազան արարից խնամոցն, որ ... ,իբրև թէ՝ զոր և եղբայրացն 'ի գործ ածեն զանուանն անուանն, 'ի ... յայսմ ածանէ զօրաւորութեան իւրին՝ ընդ ... , նշանակ աւետարան խորհրդոյ: Իսկ թէ զինչ է այն խորհուրդ, 'ի յաւելուածս մեկնութեան, առաւելապատմեալ զանուանն՝ յիշատակս ոչ միայն 'ի յանուանականն, այլև 'ի հայն, և յերկրպագու կամն:

(121) Մահս ... : Այս մանկամարդս յայլոց եղեալ թուի, և ոչ 'ի սոյն վարդապետաց. զի յաւելուած բանն սպասաւորէ անմերձաւոր յաւել յանձնարարելն:

(122) Ջուր ... . զաւակն 'ի խնդրեալն ընդ առաջ՝ (առաջ. ԺԲ. Կ.) զերեսն զայնս միւռոնի օծումն խնդրեսցի:

(123) Իմանի՝ ... : Յունականն բառս ..., իբրև սոյնպէս անուանս ... , առաքելական նշանակութեանն և կենդանութեան նշանակէ իւղ ..., օծանել: Իսկ առաւելապատուութեանն՝ զոր ասեն զնէ նա վարդապետս, հայր յայն իբրև 'ի բաղդեալ յերկրագործ ..., ... ուստի և ասէ, ըստ ..., այսինքն ըստ քերականական կարգութեանն, հայելով յառաջնամն՝ յոր

մէ եղանակէ. որ ըստ խորհրդութեան հոմերական. այսինքն ըստ ողոշմանն, կամ թէ նշանակութեան՝ զոր ունի յանուանական անուանս օրինօք. որ 'ի նոյն արտաքոյ եղանակէ՝ յորմէ և բառն մին. կամ, հոմերան խմացեալ փոխանակ յանուն, ասել կամի. զայս որոշումն բառիս առանուլ ոչ ըստ հայութեան, այլ ըստ յունականին. կամ զարձեալ, հոմերան փոխանակ բանաստեղծի խնամի, խորև թէ ըստ բանաստեղծական ողոշման ասեմ, և ոչ ըստ առաքելական նշանակութեան բառին: Եւ ըստ այսմ քննելով, մարթ է առանուլ զերամս բառն՝ 'ի յոյն գերանուանէս մի, այսինքն ինձ, և 'ի բայէն առ, հասեմ. որոյ ընդունելութիւն ներկայ՝ առն, այսինքն հասօղ. յորմէ ածանցեալ բայքն առնօ, բերեմ, հասեմ. առօ, հասանանեմ. առնօ, ձգեմ, աւարհ-ապանեմ, բառն հարկանեմ: Ուստի ասէ մի առն, նշանակէ՝ ինձ բերօղ, կամ հասօղ. զոր Նք վարդապետս ըստ ծննդութեան խնամա-լով զնէ ինչ մայր: Այլ մեկնութեան նորաստեղծ յաճորդ բանիցն. զի մեկնէ, յինքն չգօղ զմեր բնութեան զօրաղէս. և կարգ հաստատեն զբնու-թութեն ջեռոց, են. ուր 'ի կեր առնելն զնշանակութեն բայիցն ածանցե-լոց 'ի առ բայէն: 'Ի սուրբ գրոց վկայէ առաւել խորհրդածէ զլսողութ գործ մեռանելին. խոր զի այս անգամ ունութեն և առնէ 'ի առաջել գերմանուութեն՝ ընկալեալ մերանութեն. ուստի զմեր զերբառս բնութեան առն՝ յինքն ձգեալ ունել, և 'ի ջուր առաջանելն հերքեալ, հաստատութեան առնէ զբնու-թեն ջեռոյն ըստ բնութեան ծննդեանն. և Նէ բն գրեր մաթուրին, խորև զնա-կարգ առնելով 'ի կամեն՝ արտել թանձրանալոյ և մարմնոյ. այսպէս մեռանելն խառնեալ 'ի մեղ, յետ հաստատութեն փոխարէն զխորոցնելի ձոյրու-թեանն, անհաստատութեն 'ի բայցն, կամ զտառապանաց 'ի բառադարձ են-նոց, այլ և զորհէնոց՝ զջուրց բնական մշտահոսութեն:

(124) Իսկ ստամբանք, զի խառնաստացեալ, կամ մեթոդին և ա զուգանիւ այս մտօքն՝ ըստ այլոց բառի, որ թուի լինել յանուանականս ձևոյս, այս-ինքն սեռս, մթին, որպէս և ինքն զնէ. որ և այս նշանի գրանուոբէ, փոխառեալ կամ այլազանական անուանս չէ օգտոցեղ, առանձնն, ան-յարմար. զի ըստ խնքն կամ զործոյն՝ անուանն յարմարոյ նմա. որոյ խո-րացին կամ զաղանութեն առաւել է քան զամենայն սրբութէ ոչ հնն օրինաց, այլ և օրինակաւ ինչ քան զնոր օրինացն, այսինքն քան զհրա-շատեն և զհաղորդութեն, ոչ ըստ գերազանցութեն խորհրդոյն կամ զործոյն, այլ ըստ երանական ներգործելոյն ունի զաղանութեն ինչ քան զնոյս: Զի ոչ էին նրոյ օրինակաս, ոչ խորև զհուրսն ըստ աստուածային մարմնոյ ասողիցն՝ յայս առնէ զբաշխումն հոգւոյն. և կամ հոգի բնութեն, թէ բնու-թէն հոգւոյն՝ մաշարական յայս առնէ զհաստատուն պատիւն կամ հոգւոյն. այլ նոր յարմարութեն 'ի ստամբս աղբաղեալին, 'ի զղջացուցանեն խորհրդ-դարար մեռելոյ, 'ի ձև խաչի մեռանելն. և այս եղանակ մերձեցուց-անեն 'ի զղջացուցանեն՝ զաղանեանսն ցուցանէ զներգործութեն նորա, զի զհաստատութեն հոգւոյն և զարդարութեն 'ի հաւատս. թէպէտ բնական համեմատութեամբ խաղոյն երևեցուցանել այն, որպէս առաջ մերոյոյն. ըծ. 70. 71. զի անհաւատք մկրտելեանս, հոգևոր կամ անմեղին ներգործու-թեան զաղանի է, վասն այսորիկ և զանուանն ունի անդրէին կամ մթին:

(125) Իսկ ն իսկ ի լոյս: Խորհրդէս 'ի լոյս անմեռոյց ասէ առ, վասն ծագմանն աստուածութեն. ասելոյն վասն անհասանելի զօրոյն 'ի մերոց մտաց՝ 'ի խաւար ծածկեալ ասէ. (սաղմ. ժէ. 12.) * Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր ||: Այնպէս և այս օծումն թէպէտ և լուսաւոր՝ ասելոյն 'ի լեզուաշխարհ անմէց 'ի ձևն նշանաւորեալ, յարմարական բանաստեղծու-թեց կամ խօսից, դրօշմնադէս անուանքն, մակադրական անուանք՝ ստոյգ մութեն կոչի, ըստ մերաղբեալ յունական բառին, (ըծ. 124.) այլ օրին. անուանագրութէ, կամ անուանագրութէ:

(126) Ածանցաւորն: Զերկուսն յանձայնին անուանց յետնեալն ունի ըստ Լ. և այսու ածականաց կոչեմանց կրկին մեծանաց իւրս այսունուերանց, որ մինչ պատուով բառականաց խնկոյ. զի բառ անուանն այ կոչի հուր՝ մասնանցն, և չոյս՝ լուսաւորականն. և այսմ 'ի դէպս յարմարոյ բանին նախգեսող, (Ժ. 17:)

(127) Զիմ նաղխայեն: ոչ մտաւանաւմ զիմ զաստուածային զարդարութին, որ 'ի քո զմթութէդ քաղցրացաւ. փասն այն այլաղրդ և ձևացուցից զնմա, յարմար 'ի յայտնել զնոյն ճշմարտութե.

(128) Մեծաւոյ. կամ ձառա, յերկրայականն զաստուածութն նշանակէ, և 'ի հայուսն՝ զմեծափառն. և երկրորդն հուաղ են յանձնական անուանն՝ մեծան, որ և է յարմար նշանակ մեծագուժոզ կրից. զի զդաստուածութիւն մեծագոյն բանաց, և աստանանէ զհին մարդն մեղաց: Վասն զի հոգևոր ծնմանց հաստատեսցե 'ի մարմնականացն և 'ի փողոկողական, 'ի զդալեկէ և 'ի զարդ հեշտութեց ստանանայի. որովք երբե բարխնոս մեղկութե, խոնարհեցուցիչ թուլութե, դժուարը հայնաքրղոկան, զզեկլիս մեր, և զորկուած, զմերգանձական արկանեալն նշնարհեսի, մաչկանձն յորինեալ, և ստորակ հեշտ կարմրուածոյ ըմբէնս, ձմեռկի ակնածուցս, ճաղաղարձակեալ, թուլացուցանելով 'ի կարգաւոր ձայնարձակել: Անել կամի. որպէս լորք քնարին, և մարմ թմբկի խոնարհութք օդոյ, կամ յանմանցն ջրոյ թուլացեալք, խանդարկն 'ի հնչման ձայնի, այսպէս ստանանայ զօգտր հեշտութիւն թուլացուցեալ զզեկլիս մեր և զայլ զգայարանս, 'ի կորուստ մահու քարշէ զհոգի մեր: Իսկ ոգը մեծանձնաւոր ծնեալք 'ի մկրտութե և 'ի զդաղքին, մերժեսցին կամակեցք և աներկեցք զօրութբ շարժարանաց մեղաց, և 'ի մահ հեշտ մեղաւորք, կենաց հեշտ հաղորդեսցե, զդիւաքին յանձ զօրացեալք սանձոց այլ և հեծանելոյ:

(129) Զորոշեալն թուխաղան. Զկարգեալ խաչն յանձն քո օրհնելով և ծնանելով, Նշանի Բագիլեւոյտ, բան խաչափայտիդ՝ յորում բևեռեցայ, հաստատ հաւատ, բառ զօրութե պաշտելեաց, կամ թն յորդութեն. զի որպէս խաչափայտն քեզ՝ նոյնպէս ծնեալ խաչք երկրպագութե ստացան, և պաշտելիս զործեն: Օրհնութե և ծնունդ խաչի՝ է հին արարողութե, ոչ միայն առ հայս, այլ և առ յոյնս, զորմէ գրեաց Շնորհալին 'ի թուղթն առ ասորւս. և յաւուրքին թղթեին առ կէռ մեծաւորել կայսր:

(130) Նմանափոխ աղեան: Նման ապաւան փրկչին՝ զօրութն պաշտելեաց ընծայէ ծնեալ խաչքն, որ զարդարանացն զխաչն երևեցուցանէ:

(131) Փոխաղ'անուանն իւրոյ: Այսու զմիթենին խաչման մարգարէք, (Երեմ. ԺԱ. 19: Անգեղա. Ժ. 20:) իսկ առաւ փոխանակ մեռանելոյ իմաստ անուանք: Բայց լաւ ևս թէ կարդալ բանիւն՝ իմանի խաչն, որ մեռաննանն ծնեալ, փայտ իւղոյ անուանի առն. այսինքն իւղեալ փայտ օրհնութե. զոր մեռանին զի հաստատեալց կոչեցեալ, զնկարագրեցեալն 'ի հասարակ ամենայն անուանոց՝ աղղեալ, արքայ և մարգարէ 'ի խոխութն չարին աղէտից, 'ի մարմնութե զիւտական աղղեցանաց, և 'ի պաշտօն սանդղածոյ միջնորդ խօսնակել, առ նոյն նիւթս էին, առ փայտ կենաց հաստատ նշագործ. հաւատացանէ, հաստատակ: Այսու ոչ կամի ասել, թէ ոչ ծնեալ խաչի երկրպագել՝ կռապաշտութե է, այլ թէ արարողութե օրհնութե և ծնունդ եղեալ է 'ի զգուշութի արարողութեան. զի մի կարծիցեն՝ թէ փայտ միայն երկրպագեսցէ, այլ այնմ խաչի՝ յորում բևեռեցաւ անէրն, յորոյ առ նուաճ օրհնեսցէ զայն և ծնանեսցէ:

(132) Զի ո որ 'ի մեզ: Որպէս խաչն առէ՝ յանձն քո ծնեալ անասպիտ, այսպէս և որ 'ի մեզ՝ են պատուահանաց զգայութեց ծիրանեցինի Բաժանեցան ցանելոյ, մինչ բաց զդրանըն կամ անդքն, ընդ որս անցանեն ասորեայք

և մտածութիւնք նոցա, յանուն քո. և փառ 'ի ձեռն միտանին առատամտութեան 'ի գլխաւորաւոր համբաւութեան, առ 'ի լինել համեմատ օծեալն հօրն, և անարգելի. (մի օրէն. անուղ,) անձնատրաձեռնել 'ի աղօթարանաց խոստովան- շունչ նմանողին աստուածոյն :

(133) Այսու լսող։ 'Ի մի օրինակ մերձաւորական զատանակ այս 'ի նախ- ընծայութեանց բանիցն, և առնել կամի : Այսու լուսով միտանին զարթուցանել ըղ- ձայութիւնս ընդ երկնից, հաւատալովք 'ի սրբազան երկնային ընդ [illegible] դատաւորաց, ընդ առաջնորդացն՝ որք են օրինակ փայլման շնորհաց 'ի մեզ 'ի ձեռն միտանին :

(134) 'Ի սոյն՝ [illegible] : Այս ասէ՝ նախ յիշատակի համեմատելով բարեկամացն փրկութեան՝ սուրբ, լուսով միտանին ամենեքեան 'ի սիրտս մեր. և ըղ- ձիւք զգեստուն և սիրոյ ծառայելով, աղաղակելով զամենայն ներգործութիւն ամենազօրութեան, 'ի առաքինութեան ընծայեաց յարկին գիտելի զգայար- անաւանդ :

(135) Ահա դոյս : Այսպէս առանձնակելով սկսանի 'ի մեր լսոտ օրինակին, մեր- ձաւորական զատանակ յաւաղնեացն. և առնել կամի : Ահա դղրդ [illegible] դար 'ի գիտելաստաղաշատաւանձն լուսաւորելք, համեմատելք յօրինակ լուսաւորու- թեան միտանի :

(136) [illegible]. մի օրէն. և 'ի հին ըն. [illegible] : Որմունք լսոտ հին լուսաւորաց [illegible] յառաջնորդել դղրդ բանն՝ յոյն աղփառաբանութեան. առ- կայն մեղբ[illegible] և սառոյս խոսքին. զի առաջնորդ ոչ կարողի յանձնական գրոցն յառաջնորդի, և ոչ թուաբանան նշանակութեան նոցա : Այլ խնամի միայն 'ի մերոյ հայկական գրոցն, որպէս և ճշգրտին [illegible] բա- ցայայտէ զինի : Արդ՝ ասէ, բառ հաշուի կամ բառ զուամարանն նշանա- կրացն՝ [illegible], այսու կամ զթիւ աղփառաբանութեան յայս ասէ, որ [illegible] յանուց և բառ այլ բաղդատել արդեացդ՝ 24 թուոյ, թէ- պէտ և մերս 36 է բառ նախնեաց. և կամ առաւել զ120, և զ24 թուոց բաղդատութեան ասէ. գրոց բաղդատականութեան ընդ միմեանս շարադրել- լով ելանէ թիւն 80. զի չորեքս քառն՝ առնէ 80. ուստի և յաւելու. որ [illegible] անուն [illegible]. [illegible] յայտնութիւն 'ի մերասա թուելով զգիրն նշանակող 80 թուոյ, որ է [illegible]. և համառնելով մինչև 'ի [illegible], մինչև 'ի 22 գիրն կարողի այբուբենին, որ է ն. այսու օրինա- կաւ ասէ՝ զխորհուրդ միտանին բացայայտելով, անխորժելի ձայնակ աղօթ- լսառանելք ընթերցողաց : Քանզի 'ի 80 նշանակող գրոյն՝ որ է [illegible], փոխելով 'ի 400, որ է ն, [illegible] ընդ [illegible] անուանն, փոխանակ [illegible] բառին ե- լանէ [illegible] : Որպէս ասէ, զի [illegible] գիտելն ընթեռնու [illegible], [illegible] 'ի նոյն արարածոց երեւալ, և նշանակութեան միութեան. որով միոյ ձայնի փոփոխմամբ [illegible] լինի [illegible] : Յայտնէ և խորհրդածէ, թէ նոյն թիւ զգալով առաւելին յերս, և [illegible] նուիրաբաժանողաց, է օրինակ և նշանա- կէ [illegible], երկի կամ ներգործութեան խորհրդոյն, որ ճշգրտի առաջա- դրելով [illegible] [illegible] յետոյն փոփոխեալ անձնացուցանէ : Այսպէս և միտանին խառնեալ 'ի բնութեան մեր, հոգևորին [illegible] գիտել հա- ղորդեցուցանէ :

(137) Առ [illegible] : Իւրն կամ աղօթս, և կամ խառնեալ յայլ ա- ռաջինս՝ կարգութեան մտանէ 'ի բնութեան. որով է օրինակ խորհրդութեան և հեղուն. միանգամայն [illegible], համեմատ և յառաջնորդ օրինակ բանի, թէ ամենայնին բանին, որ հեղութեան և քաղցրութեան առ մեզ քաղցրացի, և թէ մարդկայնին խօսից, որք [illegible] մտանեն 'ի լսելիս : [illegible], այլ ամենայն լոյծ և հեղուն նիւթոց գնէ 'ի մերոյ կայանալ, 'ի մե- րոյ կամ յերկնաւ նոցա [illegible]. որով է օրինակ բարձրութեան, և անխառն ընթեռնլոյ 'ի մարմնաւորական անդստին հեշտութեանս :

(138) Ցոմոն Ինչ: 'Ի ամին արկեալ խաղ, ոչ Թուլացուցանէ զայն և եզ- ծանէ, որպէս առնեն զինին և Հուրն. այլ 'ի պատշաճ կակղութեն պա- հէ զանին. այսպէս և մտոմն զծնեալս իւր:

(139) Անհատատութ ատաանէլան: Անհամեմատ կամ անզուգական առա- տութիւն, կամ գերազանցութիւն:

(140) Արեւան քո: Զօրութիւն արեւուն քո գործելոյ 'ի ձակատ մարմնոյս, կամ հոգւոյս զայս ծնունն. զի ներգործութիւնք նոր արդարան խոյն 'ի զօրութիւն չարչարանաց նոն յաղթեն:

(141) Ծայրակէյակութիւն. շատաաւխողմանք: Հաւատամ, Թէ նորոգ յայտ- նեսցի բազմամձնաձանց շատաաւխողմանս այս ոգւոց խաղոյ՝ մտոմս, ընծայե- լով զայս 'ի համագործեալ փառամ՝ Թէ հոգւոյն, և Թէ մարմնոյն: Յո- րում ժամանակի Այս Ճաղ, խաղս հոգևոր բառ ներգործութենն՝ համա- գերձ նշանաւ խաչիդ 'ի գեմս իմ փայլեսցէ:

(142) Ո՛ւ ըՄքանանան: Զօրութիւն մտոմն խորին անըմբռնելի ինչ՝ Թուու- ցեալ մատուար Թևօք, 'ի վեր քան զհասուամն մեր մտաց՝ անհասանձանա- պարհաւ, և անհետ փախստեամբ հեռացեալ, ծածկեցաւ յինէն. ո- րում 'ի հին օրինաց՝ կամ յայլ բնական խոյաց ոչ գտաւ հաւատար օրի- նակ, կամ մանանակից, կամ ձևակերպութեն, և ոչ այլ ընկեր՝ ԷԷ որում կցեալ չափեսցի, բայց միայն ձածկեան խաչդ և արևանդ. ընդ որս հո- գևոյն, հոգևոր զօրութիւն գերազանցեալ երևեցաւ:

(143) Անուանք քո անուար: Ցորհնեալ քո զմեզ մտոմաւս, եղիցի և անուանք քո աշխարհ՝ գործեսցես անձնա փառաց, ծագումներեն բարձրաաու, արդարոց կամ հրեշտակաց ընձիւղքն՝ օրհնեալ:

(144) Բարձրեալ: 2 օրին. բարձրագոյն:

(145) Համբերելոյ արեան: 2 օրին. համբերելեան:

(146) Թևոյն: Ըստ բառին նշանակէ զերկայն Թևոյն՝ որք կեցցաւ ան- ցուցանելն ընդ աւելս կատուոյն. նմանութիւն զնի փոխանակ զգայութենց կամ կատարութենց հոգւոյն, և կամ փոխանակ բոլոր մարմնոյն, որ խոր կատու գործեալ է յոյ: Յայս ծնեալ Թևոյնս աւել՝ մի մնացէ. և մի ափրեսցէ փորձական առարկաց տոհմոյ, աղեղութիւն կամ սնութեան աղեկց մեղաց:

(147) Հարանագանձայն: Խորև հաղան զարգացեալ, կամ հարանին պատ- շաձեալ փառօք, գեղայօրէն, գեղեցիկ յօրինեալ հոգևոր գեղեցկու- Թեամբ:

(148) Մուխ կրեռնաց: Այս ծածկապարգև հուրս եղիցի մերձեցելոցն յընտրութեն կամ 'ի մաքրութեն քրիստոնէութեն միասին կրկին եռաց- մամբ արտաքեալ, բարեփափագ հոգևոր ջերմութեն, այլ յօրինուածոյ. ո- րով 'ի կակղութենն փոխեալ 'ի կարծրութեն, լինի այլ յօրինուած կամ գործած: Այսել կամի, որպէս 'ի հուր խաղաղ կի 'ի յեռացեալ ձէԹ մխեալ երկաԹն՝ առաւել կարծր լինի, այսպէս զօրութեն մտոմն եղի- ցի ծնելոցն առեալ՝ միասին կրկին կի առաջին եռացմամն. որով անդրել հոգևորաւէս, 'ի կարծր և յանառատն վիճակ հաստատուան մնացին:

(149) Վէրնամրցանոյ այսը դարձուն: Վերին յաղԹութեն պարգևս, կի մերձացեալ պարգևս՝ այս լեցի նշանակ առեալ զինեալոցն, զի մի պարգևս- ցին յուրէ մարմնական հեշտութենց. մի աղտեղեան հուրէ, բարկութեն, նա- խանձու են. մի ցրտացեալն 'ի սատանայէ ահոյ. մի չիջանելոցն հողմոց փորձութենց. մի աղանդաւորացն չարաաւան, 'ի գեհենայն կամ յերազական արծութեն: Մէ պղունեցոյն, զանձինան՝ որք քեզ պարգևեալք են (Ջ յու- դայ. Թղթոյն. 1.) կամ զհոգի և զմարմին և զնոյնս զօրութիւնն՝ որք նոյ պարգևեալք են, մատնել սատանայի: Եւ մի 'ի սպրուն նշխէն, 'ի վառե- ձան եկեղցն յաջխարհէ, կամ 'ի մահուանն զԹելարեալ գանձս գործոյն

տառապինուն յանմարդարար կորուսանել: Եւ մի՛ զեղչեսցէ, զմնկանկարելոյն ՚ի մեղ օծութիւն՝ անմարմնութեան ՚ի բաց մերկանալ ըստ գործոցն և ըստ պատուոյն, Թէպէտ և ըստ կենցոյ գործովքն միշտ մնայ:

(150) Քեզ միայնոյ միայն օծելոյ: մի օրհնեալ. քեզ միոյ միայն օծելոյ: Քեզ՝ որ միայն և մի ճշմարիտ օծեալ ես, ասացին ունելով, ուրախակցաց կարգացմունք ընդդուաց, հեշմունք յայնեց նուագարանաց. յաղթանակութեան, յայլ օրէն. յաղթականութեան զոհաբանից, այսինքն յաղթողական գովասանութիւնք. Խորհրդածութեան, երանական բարբառք շնորհաց. ուրախանալն, որպիսի երգեցմունք անդմոսաց:

(151) Այն իմ յեռանորդութիւն: Այսպէս կոչ ՚ի մերում ըստ օրինակի որ տասանել յարմար Թուի. (որպ և այլուր ասացաք ՚ի բանին հէ. լծ. 99:) Քանզի ճառքս՝ որ վասն ժամանակին՝ և վասն մեռանելն, ունին առ մի մեռանս կապակցութեան երիւ ընդդէմ Թոնդրակեցւոց սատակելոյ. առաջի այս յետին բան երիւ սորվաբութեան նոյն հայի առ երկրորդն եւ. վն այն առեւ: Այն առաւջին բանն՝ որ վասն ժամանակին, է իմ ձեռնարկ կամ խոստովանութեան ՚ի որդւոյն, ՚ի ժամանակն, որ է ըստ արքայական գործ եկեղեցական. և այս՝ երկրորդ բանս որ վասն մեռանելն, է իմ որդւոյ նուագութեան, հաստատութեան գրութեան զաւանական՝ ՚ի որդւութեան որդւոյն, ՚ի մեռանին՝ որ կրկին որ է քան զժամանակն, խոր նուէր խորհրդոց, և արքայացուցիչ եկեղեցեաց, և ամենայն արքայական անօթոց:

Սերտին յաւելուած նրէին հեծութեան՝ նորին հօխողի, առ նոյն աղերս մաղթանաց բանի:
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ՂԳ.

ա. Տէր յաւիտենական, բարերար և ամենակալ. ստեղծիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք ՚ի մահու և լոյս ՚ի խաւարի. յոյս ակնունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց. որ ամենարուեստ իմաստութեամբ քո ¹ դարձուցանես յայգ զստուերս մահու, աննուաղ ծագմամբ և անմուտ արեգական. քանզի ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ: Որում կրկնի ծունր երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց, և հայիս յաղօթս խոնարհաց, և ընդունիս զխնդրուածս նոցա, տ՛ր իմ և Թագաւոր իմ, կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ. յս քս ած ամենայնի. սուրբ հանգուցեալ ՚ի հոգիս սրբոց. մխիթարութիւն վշտաց՝ և քաւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ

քան զլինել նոցա. առաքեալ զպահպանողական զօրութիւն աջոյ քո, և փրկեալ զիս յերկիւղէ գիշերի և 'ի դիւէ չարէ: Որպէս զի զյիշատակ տօնկալի և Որ. քո անուանդ միշտ համբուրեալ[2] շքթամբք հոգւոյ ըղձութեան շնչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ՝ որ կարդան զքեզ 'ի բոլոր սրտէ:

Է. Ու[3] 'ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիւդ, զոր ամենայն արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և 'ի նոյն շնորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր, և 'ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր այսու պարգևօք ամենականօք, ամաչեցաւ սատանայ, քակտեցին մեքենայքն, բարձցին որոգայթքն, պարտեցին մարտուցեալքն, պակասեցին զէնքն սայրասուրք, մերժեցի մէգն, փարատեցի խաւարն, մեկնեցի մառախուղն: Բազուկ քո հովանաւորի, և աջ քո կնքեսցէ. վասն զի գթած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է 'ի վերայ ծառայից քոց: Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

---

(1) Դաշնաւորականս յոյժ: Քո հիմնաւոր խնամողութեամբ յաւանաւոր զօր-ձուցանես զգիշերն, որ է երբ հեռք և նմանութիւն մահու. կամ, զխաւարն մահու փոխարկես 'ի բարեյաջողութիւն: Անմահ [illegible]. [illegible], [illegible], [illegible]. [illegible] զարթեցուցանես զգայալք [illegible], [illegible], [illegible] 'ի միջէ կող-մանէ երկրիս, կամ 'ի մարդկանէ. երկինք և երկիր [illegible] [illegible] 'ի նոսա՝ քեզ ներկայ են. մի [illegible] յայտնեսցանէ կարէ [illegible] [illegible] քեզ, այսինքն [illegible], [illegible]:

(2) Շքեղամբք հոգւոյ: Զյիշատակ Որ. անուանդ միշտ համբուրելով բե-րանով հոգւոյս, և փափաքանօք սրտիս. որ է ասել, զանուն քո միշտ 'ի բերանի ունելով ջերմեռանդն հոգւով, և այլն:

(3) 'Ի դրոշմէ խաչի: 'Ի նշանագրութենէ խաչիդ՝ որ է նշան քո, զոր ամենայնիւ արեամբդ ներկեալ նորոգեցեր, այսինքն 'ի փրկական մահու՝ փոխանակ կենաց [illegible]. և նովաւ 'ի շնորհ որդեգրութեան վերածեր զմեզ մկրտութեամբ, և [illegible] պատկերի քո յօրինեցեր զմեզ. այսու պարգևօք, զոր 'ի յաջորդն [illegible]. այսինքն. այս [illegible] խաչիդ քո, և [illegible], և շնորհաց մկրտութեան [illegible], և այլն: [illegible]. [illegible] քո զոր 'ի խաչին [illegible], հովանի [illegible]. և աջ քո, զոր [illegible] 'ի թևս խաչին, [illegible], երբ կնքով պահպանեսցէ զիս 'ի [illegible] թշնամեաց. երբ [illegible] հատանեսցէ զիս:

Մերոյին յաւելուած ներքին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ա̃յ ։

# ԲԱՆ. ՂԵ.

ա. Երգական արդար, ¹ ճառագայթ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափագ անձկութեան, բարձրեալ անքնին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրութիւն, յուսոյ տեսութիւն, գովեալ երկնաւոր, թագաւոր փառաց, ք̃ս արարիչ, խոստովանեալ կեանք ։ Եւ արդ զթերութիւն վրիպանաց բազմա-ոխեալ ձայնի եղկելոյս՝ ամենազօրդ բանիւ լցեալ, մատուցես յաղերս հաճութե հօր քում բարձրելոյ ։ Որ վասն իմ ² 'ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանութիւն ամենեւին կենաց օրհնութիւն, վերնոց եւ ներքնոց բարեխնամօղ տեսուչ համայնից ։ Օ՜ի թէ յանձն առեր մեռանիլ վասն իմ, ա̃ծ եւ տ̃րդ բոլորեցուն, որչափ հաճեսցիս առաւել եւ այժմ վտանգաւորս կրից կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ³ ազգակցաւ մարմնոյդ առելոյ 'ի մէնջ՝ առ համապատիւդ քո հայր ։

բ. Եւ վասն արեանդ պատուականի ⁴ միշտ մատուցելոյ 'ի հաճութի կամաց առաքչիդ՝ բարձցին վտանգք մեղուցեալ դատապարտելոյս, թողցին պարտիքն, ապաքինեսցին ամօթն, մոռասցին պատկառանքն, ⁵ բարեգործեսցին դատակնիքն, տապակեսցին որդունքն, վերասցին լալն, հանդարտեսցէ կրճտումն ատամանցն, սպառեսցին ողքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալածեսցի խաւարն, վատնեսցի հուրն սատակութե, հերքեսցին տանջանարանքն բազմօրինակք ։

գ. Եկեսցեն գթութիւնք կամօղիդ եւ պարգեւաղիդ կենաց ամենից, ծագեսցի լոյսդ, արագեսցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօղդ ողորմութե, յառաջեսցէ

արբուցէ զանդաստանս պաքեալ՝ անկեալ ոսկե-
րացս թշուառութի 'ի վիհն մահու. ծաղկեցուցէ
պտղաբերեսցէ[6] բաժակդ երկնաւոր արեան կենարա-
րիդ զերկիրս խնամեալ աւուրն լուսոյ, որ անծախա-
պէս միշտ[7] պատարագի յիշատակ կենաց փրկութեան
հոգւոց ննջեցելոց։[8] Ո ի ամենայնիւ մահացեալ հո-
գիս մարմնովս մեղաց՝ շնորհօք քո, գթած, 'ի քեզ
զօրացեալ քև նորոգեցայց, զատեալ 'ի մեղաց ան-
մահ կենդանութի 'ի յարութեն արդարոց, հօր քում
օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ
քոյ բարեբանութի վայելչական գոհութի այժմ և
միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

## ՎԱԽՃԱՆ

(1) Ճառագայթ օրհնեալ։ Որդի ոգի նոյ, որ լոյս լուսաւորելոյ զաշխարհ արեգական ես, իբր ծագեալ 'ի հօրէ՝ ճառագայթ ես, ոչ որպէս պատահումն ինչ անցաւոր, այլ գոյակ անճառելի, որով և օրհնեալ ես միշտ ընդ հօր։ Լուսոյ չերևորեալ. բուն իսկութի լուսոյ, կամ կերպարանիչ և գոյացուցիչ լուսոյ. ծածուկ անշիջանելի, փափաքելի յոյժ կարօտանօք սրտի. Բարձր երևելի, բարի կամ առաքինի մարդոյ զուարճութիւն. կամ, բարի և ախորժելի իրաց պատճառ բերկրեցուցանելոյ, կմ զուարճացուցանելոյ զմեզ. յուսոյ փեսայեն, յուսոյ նպաստակ կամ հաստատութիւն։

(2) 'Ի ծոցն էին։ 'Ի պատճառս իմ զփորձ անհիծից կրեցեր մահուամբ խաչին, ստանձնեալ զիմ նմանութի։ Վասն որոյ եթէ այսու օրինակաւ մեռանել յանձն առեր վասն իմ, ես առաւել հաճեսցես զթերութեն աղաթականս բանիցս լսել. և ընդ իմ աղօթելով կարեկից լինել վտանգաւորս էին, ցաւոց զգեստս, կամ վտանգաւոր ախտիցս։

(3) Անզգայ անձինս։ Փոխադրութիւն հոլովոյ է և սա, եդեալ ընդ գոյականն իբր յատկացուցիչ. և պարզելի է. ազգակից կամ բնութեակից մարմնոյդ՝ զոր 'ի մէնջ առեր, որ է առել. բաւ մարդկութեն աղօթելով առ հայր. որում բան անծութեն հաւասարակից ես։

(4) Մինչ մատուցելոյ։ Որ միշտ ընծայի յանդամանելութեն նոյ, կամ 'ի խորհուրդ պատարագին։

(5) Բարեգործեսցին տնօրինելն։ 'Ի բարին փոխեսցին մեղք պատրաստութեն։ Մատուցեսցին ուղղակի։ Տէրն յաւիտենական անմահ առաջ զարդն գեհենոյն. իսկ ստամոքսոր ստացականաւ բաւ զարմանալեացն 'ի խածուածոց նոցա, իբր սակս. մի եղեց կերակուր որդանցն։ Ըստ այսմ խնամողն է և վասն յաւիտենականին, այսինքն մի՛ պատուհասվորեցայց 'ի լալ, 'ի կրծուածս, յորդանն։

(6) Բաժակդ երկնաւոր։ Բաժակ արեանդ՝ թէ այն, որում 'ի կենդանութեն հաղորդեցայ, և թէ այն՝ որ 'ի մահուանս մատուցանի ինձ պատարագաւն, պտղաբերեր արասցէ զերկիրս մարմնոյս, զարդարեալ աւուրն լուսոյ, վասն աւուրն յարութեն։

(7) Մինչ պատարագին, որ իմաստ. բոլոր մի օրէն. Մինչ պատարագին, զա.

(8) Զի ամենայնիւ ։ Որպէս զի հոգիս որ զգլխովին մեռեալն է մարմնովս մեղաց, գործովք մեղանչական ախտաւոր մարմնոյս, շնորհօք քո զօրացեալ նորոգեսցի, անմահ կենդանութեան արժանացեալ 'ի մեղաց 'ի յարութեան արդարոց, հօր փառս օրհնեցեալ, այսինքն 'ի հօրէ քումմէ ընդ այլոց ընտրելոց ընդունելով զօրհնութիւնս ։

## Յիշատակարան [1] Մատենիս Գրութեան ։

Ըստ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժութեան, որ ըստ [2] լրապատարն նշուլազեղն արփիաձաձանչ` լուսակիրն օրակշիռն մշտափարատն ակնապարար ականն արեւու` ստեղծականն արուսեակի, [3] որ համբարէ հոլովէ կուտէ ամաց յոլովութիւն 'ի չափս դարուց` շնչասպառ եւ կենդանանորոգ առուղեկան յաւիտենիս, [4] 'ի յաւարտումն կատարման իններեակ յոբելինին, 'ի սկիզբն պսակելոյ մտի տասներկիրն` յաբեթական տոհմիս տումարի · յետ երից ամաց անցելոց` որ զկնի գալստեան 'ի կայս եւ 'ի կոյս կազմանց հիւսիսոյ դիմաց արեւելից` յաղթող եւ մեծ կայսերն հոռոմոց բասլի, յորժամ ընդարձակ եւ մակագաւիթ կանոնաւ սփիռ տարածէր` լիասահման եւ անխտրոց 'ի ստուարակարկատ կաթողս կարծր արձանաց` 'ի ձգումն ձեռին` եւ յանխզելի լարս պարանաց երկարագունից` անթարթափ 'ի նոյն վերասլացեալ 'ի յաջ եւ յահեակ` սեպհականել յաւելուլ բաժինս մասանց վիճակաց` խմբից աշխարհաց 'ի ծոց իւր ։

Արդ 'ի յայնմ անդորրութեան միջոցի, յորում եղերեալ ընդատնեցաւ [5] թշնամիք եկեղեցւոյ, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, [6] դիզի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով 'ի հրաշակերտուհի միագայ իւրի` զբազմաստեղնեան գրուագս գրութեան այսմ տոփերի արգասաւորի, ես Գրիգոր [7] կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց, եւ կրտսեր վարժապետաց, գործակցութեամբ եղբօր իմոյ ընտրելոյ` Յովհաննէս կոչեցելոյ` Նարեկայ մեծափառ եւ բարձրապատիւ ուխտի վանականի · որք իբր զմի մարմին բանական [8] 'ի յերկուց առ մի

կերպարան շինելոյ դիմաց կենցաղավարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, 'ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք։

Արդ հայեսցէք 'ի Ճաշակողացդ յայսմ սեղանոյ յոքնորէն և ախորժահամ հանդերձելոյ՝ ⁹ յիշատակել զմեզ 'ի մաղթանս ուղիղս և 'ի պատկանաւոր խնդրուածս, սեռն սիրով 'ի միտս բարիս. որով և դուք եղիջիք գրեալ 'ի մատեանս կենաց վերին դպրութեն։

---

(1) Մ[illegible] : Այսինքն կարգեալ յօրինուածոյ, կամ կարգաւորութեան մատենիս. յայս միտս դնէ և զինի, [illegible]. Նոյնպէս 'ի Ճակատ մատենին, [illegible], եւն։

(2) [illegible] : Մերձ լինել առ առ լուսով հակառակ լուսնին՝ որ լիանայ և պակասի. [illegible], զետեղեցին նշուլիւք կէս Ճառագայթիւք. [illegible], լուսափիւռ, կամ հրաճաճյլ. [illegible]. շառաւիղ զօրն. [illegible], փառաւոր խաւարի. [illegible], պայծառ կամ զուարՃացուցիչ աչաց. [illegible], առեղծեալ արևուն, յորոշուած քնոյ որ նմանութիւն կոչի արեգական և պարուսեալ։

(3) Որ [illegible] : Արեգական խորով առարկար շրջագայութիւն հետ պէտեալ ժողովէ զպարզութիւն ամսոյ, որով չափին գարզ, [illegible] յաւիտենիս կամ ժամանակի աշխարհիս, յորում ամսոց շրջիցն պակասի [illegible], [illegible], և ամսոց կենդանութեն նորոգի ծննդեամբ. [illegible], անցաւոր, անկայուն։ մի օրին. [illegible]։

(4) 'ի [illegible] : 'ի կատարելն ինն յոթնլինից, այսինքն յինից, որ լինի 450 ամ Դ [illegible], մնանելոյ 'ի տասներորդ յիսուն. յետ երից ամսոց գալստեան կայսերն հռովմայ բազում երկրորդի 'ի կողմանս հիւսիսոյ, յաշխարհ տայոց՝ որ 'ի հիւսիսոյ կայ վասպուրականն աշխարհին, յորում դրեալ Ռա վարդապետս. [illegible], և յարեւելակողմն յունաստանի. յորում ժամանակի բազում կայսր զաշխարհն տայոց, որպէս և զայլ բազում աշխարհս սեպհականեալ յանձինք 'ի ծոց իւր. (զորմէ տես 'ի պատմ. հատ. Բ. եր. 881։) [illegible], [illegible] առհասարակ. [illegible], առաջին աշխարհաց, և ասացից ընդ մեզ մնանելոյ տասն աշխարհաց. կամ, անխափան և անպարտել 'ի թշնամեաց. Դ [illegible], մեծամեծ հաստատուն կարկառեալ կոթողովք քարանց, զորս կանգնեսցէ վասն յիշատակի, կամ յորոշուած աշխարհաց և մեծամեծաց. 'ի մեր լաւ օրին. [illegible], այսինքն թանձր կուռեալ, գիրկեալ։ Այսպիսի արձանք յիշատակաց պատմին և 'ի Պատմութեան խաչին ազգաբանից՝ յասելն. « Յիշատակս քարեղէնս ... 'ի գէտս երեսաց պատկերաց անդրիադրական վիմաց մատոուցին », եւն։ Յիշէ զայս և գրիկաս յոյն պատմիչ՝ կանգնեալ 'ի սահմանս բուն զօրաց։ Յ[illegible] [illegible], երկայն պարանոցք չափեալ զմիջոց սահմանացն. կամ նմանութիւն խմանի, այսինքն ընդարձակ զօրութիւն և բազմութեամբ զօրաց անյաղթելեաց պատսպարող զսահմանն։

Յաղագս վերադրեալ Թուականին՝ յորում գրեցաւ աղօթքս, գիտելի է. զի գալստեան վասն կայսեր՝ զոր յիշատակէ Ռա վարդապետն, ոչ խմանի զգալոյ նորա 'ի մայր հայոց՝ յաշխարհն կիւլիկեցւոց, որ լաւ առաւ-

տարածեալ նորին վարդապետական յՆերսէս եղբայր 'ի հայրենեացն իւրոյ Գուգարենւոյ աշխարհի, սակս 'ի յիշատակարանին լինել հայկականեան Թուականին նոյն. այս է՝ երբ 26 ամաց յառաջ քան զայսօրն, և յայտ է թէ ոչ մատենագրելոյ վարդապետի որ էր նա 'ի մեկնել զայնպիսի խորհրդածութեան գիրս, այլ վարդապետական աստիճանաւ գերապատուեալ, և անուանի նաև առ Թագաւորս 'ի մէջ գիտնականաց ժամանակին. տեսանի երկոտասանից գէթ ամեր յայնժամ զառաջինս հասակին. յոր յաւելեալ և ամս 26, լինէր երբ յետոյն և վեցից ամաց 'ի յօրինել Աղօթիցն.

Այլ ահա յաղագս մեր միա ևս ճշգրիտ ապացոյց 'ի ձեռս բերել 'ի Մեկնութենէ Պատարագի արարեալ մեծին Խոսրովայ եպիսկոպոսի՝ հօր սրբոյն Գրիգորի. քանզի յիշատակարան գնէ 'ի նմա այն մեր Գրիգոր, և ասէ թէ Սահակ որդի Խոսրովու արար զառաջինն գծագրութիւն կամ զգաղափարել մեկնութեան 'ի Թուականին յղթ։ Եւ զի առաջ ծնեալ էին յառաջ քան զեպիսկոպոսանալն Խոսրովու, և առ յետ եպիսկոպոսութեան գրեաց զմեկնութիւն ժամակարգութեան և պատարագին, յայտ է ապա՝ զի ամաց յառաջ քան զՆ Թուականն ծնեալ էր Գրիգոր, ունելով մասամբ ամս գէթ վեց կամ եօթն. և յաւելեալ 'ի յետուն և վեց ամսն, լինէր Գրիգոր աւելի քան զյիսնամենից 'ի յօրինել Աղօթիցն։ Իսկ թէ յետ այնր փութացեալ եւս նորա կատարումն 'ի յաւիտենիցն հանգիստ, զայդ 'ի սոյնպէս յիշատակարանաց գիտեւոչ ընկալաք։

Այսու բան ասացեալքս՝ յորոց ճշգրտի Յիշատակարանաց մերոց Գրիգորի հաւաստեալ ցուցանի, Առաջինն՝ թէ ամաց յառաջ ծնեալ էր նա քան զերկրորդ Թուականն, բայց յիշատակարանին որ 'ի մեկնութեան Պատարագի Խոսրովու։ Երկրորդ, 'ի նմին Թուականին՝ յորում մեկնեաց խօսն զՆերսէս եղբայր, լինէր նա երեսնամեայ՝ և աւելի ևս։ Երրորդ. զհետ զայս ապացուցեալ՝ լինել նմա անցեալ զյիսնամենիւք 'ի Թուականին նծա, կամ նծբ, յորժամ զայսօրն ամենայն գիրսն կատարեաց։

Այլ թէ յոր միոյ խնամի ասացեալքն 'ի բանին ձէ. 3. եթէ հանգչ յանծերութեան, բացատրեսցուք առաջ. ըծ. 9. խօսել զխորին ծերութէ։

Յայսցանէ ամենայնէ մերկանալ զգլխոյն անհիմն Թուաբերութիւնն՝ որ եդեալ կայ 'ի Մեկնութեան բացին Աստուածածնի Յովհաննու Պատրիարքարանի. Թղթահամար շխէ. յաղագս ժամանակի կենաց և գործոց երանելւոյ Նարեկացւոյն։

# ՑՈՒՑԱԿ

[illegible]

[illegible]

աղէրսարկար : աղերսով շինած : քնքուշ : գժ. 8 :
աղէտ : սրտի ցաւ, կսկիծ : Եւրէք եղեռնութեան : իա. 2 :
աղիողորմ : խիստ ողորմուկ : ժբ. 2 :
աղիւսարկութիւն : Թօղլա կամ քերփիճ շինելը : հն. 12 :
աղխ : փակ, գոց, կղպանք : քիլիտ : ժբ. 2 :
աղխել : կղպել, գոցել : քիլիթլէմէք : ժդ. 1 :
աղկաղկ : անկար, խեղճ : սէֆիլ : կբ. 3 :
աղճատանք : աղաւաղաճառաւաղ խօսք : խն. 2 :
աղորիք : ակէկիրմէն : և Նմանութեամբ՝ ակռայ : տիշ : կդ. 2 :
աղու : կակուղ : միլայիմ : ի. 1 :
աղուական, կակուղ, հաղ ընելու : խօշ : կդ. 4 . ղա. 3 :
աղուէս : Թիլքի : ծա. 4.
աղջամուղջ : հզ : 3 . } մթութիւն : գարանլըք, փուս :
աղջութիւն : դ. 3 : }
աղտաղտային : աղի, չոռ : աճը դէհիր : լթ. 2 :
աղօթկեր : աղօթք ընող : դուաճը : ծա. 5 :
աղօտական : մթնշաղ : ծբ. 1 :
աղօտանալ : մթննալ, մարիլ : սէօնմէք : է. 3 :
աճառ : աղտ հանելու շինած բան, ինչպէս սապօնը. եւ : գդ. 11 :
աճիւն : մոխիր : քիւլ : ի. 1 :
ամայաբնակ : անապատը կեցող : խդ. 1 :
ամայի : պարապ, երեսի վրայ ձգած : եաւան, վէրան : դ. 3 : ծբ. 1 :
ամանակ : ժամանակ, ատեն : վագըթ : (յիշատակարան :)
ամբառնալիք գլուխիս : պայծառախնկարան կոթեր : գ. 3 :
ամբարել : ժողվել, պահել : տէփշիրմէք . սագլամագ : դ. 1 :
ամբարձուղէշ : բարձր ճուղով : տաղլը : թ. 2 :
ամբոխ : խառնապարկոյ, հայլը : հն. 12 : կամ, խռովութիւն, վէրվէրէ : ա. 2 :
ամբոխութիւն : նոյն է : լդ. 9 :
ամենաբաղձ : փէք հաղ ընելու : ձդ. 1 :
ամենաբողոր : ալխատութիւն, եէքփարէ : ժն. 2 :
ամենաբուժ : ամենէն ցաւ բժշկօղ. խիստ օգտակար : փէք հայիրլը : իդ. 1 :
ամենաբուրեան : խիստ հոտով : փէք գօգուլու : ղդ. 19 :
ամենագորով : խիստ խղճացող. փէք րահմէթլը : կ. 5 :
ամենադրուս : ամենէնը տանօղ, զալդ ընօղ : ի : 2 . ը. 1 :
ամենադղեցիկ : ամենուն լսելու : փէք քէսկին : հէ. 2 :
ամենախնկաւոր : խիստ անուշ : ծբ. 1 :
ամենածախ : խիստ երօղ մրկօղ : Թէլէֆ էտէն : իբ. 1 :
ամենակարծ : խիստ վախենալու, կամ վտանգաւոր : փէք գօրգուլու : ձն. 2 :
ամենակիր : ամենէն Թիւրլիւ ունօղ : Ն. 3 : կամ, խիստ չարչարուած : փէք էզիյէթլէնմիշ : ձբ. 3 :
ամենապատաղ : ամենէն բանի պատմիչ ընօղ : ծէ. 2 :
ամենապարփակ : ամենէն Թիւրլիւ : խն. 1 :
ամենապարտիր : փէք խարբուած : ծա. 1 :
ամենապատկառ : ամօթով լեցուած : Եւզիւ գարա : թ. 1 :
ամենապայծառ : խիստ պայծառական, փէք ստւլու : իդ. 3 :
ամենասպառ : ալիւթիւն զայ եղած : լդ. 2 :
ամենատիրա : ամենէն տեղ եւրլրիշ եղած : խն. 2 :
ամենավեայր : ամենէն տեղ հասնօղ : գդ. 13 :

ամենավայրական ։ տիեզք ֆիզաֆիզականք ։ ա. 2 ։ կամ, տարածանալոյն ընդող ։ հա. 4 ։
ամենավերակայ ։ ամենայն բանի՝ կամ միշտ հաւասարելիշ եղող ։ հզ. 1 ։
ամենատեսողաց ։ ամենատեսն վրա անձրևած ։ Զ. 1 ։
ամենատեսողի ։ ամենայն տեղ մնացող կամ տարածող ։ հզ. 3 ։
ամենատեսնել ։ խնամ փափագող ։ ղզ. 9 ։
ամենատեսխնդիր ։ խնամ արդարութ ։ տիեզք մնահզման ։ խն. 3 ։
ամենատեփորձ ։ տիեզք վուզզութ ։ խզ. 1 ։ կամ, ամենայն բան քաղող ։ ձր. 3 ։
ամենատեսկիտար ։ խնամ ակար՝ կամ վանացուժ ։ լզ. 2 ։
ամենընդարձակ ։ խնամ առաւա ։ տիեզք ալոլ ։ լզ. 1 ։
ամենատրածևաա ։ խնամ վարդակա ։ տիեզք ուաաաա ։ հզ. 2 ։
ամենեկերկշռաա ։ խնամ վանխկար ։ տիեզք զօրոզաք ։ ղզ. 5 ։
ամենընդգծել ։ առվորակոն ։ տիեզք աշխնա ։ ղզ. 8 ։
ամենընթեաց ։ ամենայն դի վարող ։ հթ. 1 ։ ղ. 1 ։
ամոլք ։ նուաճեն զլխու գլուծ երկու առղեկը ։ կենմինեն պաշթարաֆլըն կեքի առղեկի ։ խն. 2 ։
ամպարհաւասինլ, կամ ամբարհաւասինլ ։ ամբարտ ուանցութել ։ պեշտխաս ընմեք ։ ի. 2 ։
ամպրոպ ։ հովալի խառնակութին ։ ամպ պայծառ կծեան, աջան թուշան ։ ղ. 3 ։ ղ. 3 ։
ամրաղերձ ։ ամուր ու բարձր ։ ղզ. 5 ։
ամրոց ։ բերդ ։ զղալ ։ ղ. 3 ։
ամփոփել ։ ետ առնել ։ կերթ ալմալք ։ ժթ. 2. կամ, ժողվել, պահել, ծածկել ։ առել չիլմեք, եօրթմեք ։ խէ. 3 ։ Եւ կրաւորականն, ամփոփիլ, քաշուելը, պահուելը, քեշնալ, պղուըկլնալ, են ։
այգ ։ առաւօտ ։ առաւօտեան վաղթէ ։ ժզ. 1 ։
այլաբանել ։ օրինակով խօսել ։ մեջինուղեն ակօյլեմեք ։ խթ. 1 ։
այլազգութեան ։ օտար բանենե, այլանդակ ։ ղզ ։ 12 ։
այլանդակ ։ այլանդակ ։ պեդ ։ խզ. 3 ։
այլամտութեն ։ կեղծաւորութին ։ կեքի լեզ լեւուըք ։ լա. 3 ։
այլայլ ։ Թիւրլի Թիւրլի ։ ղզ. 8 ։
այս ։ դև ։ ջին ։ հա. 2 ։
այսախառն ։ սատանայի խառնուելուց կամ մեռաջոց եղած ։ ղզ. 6 ։
այսահար ։ դև, սատանայ ։ ջին ։ խա. 2 ։ ղա. 1 ։
այսակիր ։ մեջը դև ունող ։ ջինլի ։ ժզ. 2 ։ հե. 12 ։
այտ ։ թուշ, երես ։ եանաղ ։ կզ. 2 ։
այտուցուած ։ ուռեցք ։ շիշմե ։ ժզ. 2 ։
անագան ։ ուշ ։ կեչ ։ լթ. 3 ։ կամ, ետեղ քաղաք, ետեղ Թուրքիանա ։ կզ. 2 ։ ձե. 3 ։
անազդելի ։ չյլսուելու ։ կզ. 1 ։ կամ, չերկելու ։ ղզ ։ 21 ։
անախտականի ։ ախտ կամ կիրք չունող, ախ չքաշող ։ Զ. 2 ։ կամ, չա- ւակից չեղող չերկնծացող ։ Ծ. 1. Ծզ. 2 ։
անաղանդ ։ հերետիկոս ։ ղզ. 9 ։
անապականելի ։ չաւրելու ։ հա. 1 ։
անապելի ։ չաղած, հասած ։ զու պաշտմասնեք ։ ծզ. 2 ։
անապէրանքի ։ չաղաշող ։ եալլնար օլմայան ։ խթ. 2 ։
անառոտ ։ ձա. 3 ։ } չխմրթնալու, չսմակլու ։
անառոտանելի ։ ղզ. 2 ։ } անօնեմեք ։
անաւփոփելի ։ չմերղնալու, չխժողվուելու ։ ժզ. 1 ։ կամ, չծածկուելու ։ ձզ. 4 ։
անաճելի ։ չխղաուելու ։ պեօլյուն մեք ։ հե. 7 ։

անհաշտաւ ։ խռովութիւն կենակցիլ չհաշտօք ։ Ը. 1 ։
անհաշտատեսիլն ։ ատամանց սպրր անչին, կամ ազոլ ազոլ եսյձիչ քնոց ։ ղէ ։ 2 ։
անհատական ։ զուտ ։ առանձին ։ ինը. 1 ։
անհատաչափելի ։ չափելիչ չըլլալու ։ հա, 1 ։
անհատանակ ։ էական պարզ ։ ինէ. 2 ։
անհարդարելութիւն ։ պատշաճ չըլլալը ։ լէ. 1 ։ հէ. 5 ։
անհարին ։ անիրաւ չունեցող ։ խոտեբանակ ։ կամ, մարդկանց . բնութ ։ եսապարանի ։ Ը. 1 ։
անհարմարածելի, չհամապատասխանելու, չյարմարաւելու ։ Է, 3 ։
անհարստահարելի ։ զուրկ չըլլալու ։ ինէ. 3 ։
անհաւատալի ։ ինէ. 6 ։ } անհաւատանալի . չհաւատաւելու ։
անհաւատ ։ լէ. 5 ։ } աղբիւրեան, թագաւոր օրէնքներով ։
անհաւասարելի ։ չհամաձայնելու ։ Ձեւով օրէնքներով ։ ինէ. 3 ։
անհեթեթելի ։ չի տարբերելու ։ չէգիտելէ ։ ժէ. 3 ։
անհերքելի ։ անհարազատ . զրուած ։ Ը. 2 ։
անհետաքրք ։ չհետաքրքրելու . չըլլալու ։ ծնդուերով . ծէ. 2 ։
անհիւրընկալ ։ չհիւրասիրելու ։ աղէտ չէինք ։ ձա, 3 ։
անհիւանդելի ։ անձն անհիւանդ . Ը. 2 .
անհիմնակառուց ։ ատամնց զօրէն կամ աւերակ եղած ։ ձէ. 3 .
անհնարելի ։ չհնարուելու, երկրորդ չհասնելու ։ ղէ. 12 ։
անհնազանդել ։ մարդ զօրանալ, բանին անդ չհանդարտել ։ ղեկով եթովպ ։ ծէ, 2 ։
Անհնազանդելի ։ զօրաւելու, զանձնելու, լէ. 3 ։
անհող ։ անտառ . թառայլ ։ ղէ. 9 ։
անհողաձեւութիւն ։ մեծամեծք ։ պարապութեան, էական ։ ինէ. 3 ։
անհողամասութիւն ։ բաժանած անհողամասերը ։ ղէ. 4 ։
անհողամասնակցող ։ խոհեմ կարծիք ։ փէք անդրթ ։ ղէ. 10 ։
անհողանձնութիւն ։ հին օրէնքներին ծածկուած բաները ։ հէ. 15 ։
անհողանելի ։ կարգին մէջ չհասնող ։ արդեօք կնքելէք ։ լէ. 7 ։
անհոգաւ ։ անխոհեմ, անփոյթ ։ ներհակ ։ խէ. 2 ։ կամ, չհոգացուած ։ եսարանձն ։ խէ. 2 ։ կամ, չխնամուած ։ թէրթերելով ։ կա . 2 ։
անհոգանալ ։ ալեա չհոգած ։ թխեմարար ։ ձէ. 3 ։
անհոգորդ ։ ընդհարձակ, լայն ։ էնիկ ։ կէ ։ 2 ։
անհոգութիւն ։ հանդարտութիւն, խաղաղութիւն ։ լէ. 2 ։
անհոգութեան ։ հանգստութեան ։ բանհանգստութիւն ։ լէ. 2 ։
անհոլով ։ չհոլովուող ։ թէք առաջնորդ ։ ձէ. 2 ։
անհողանկար ։ հին մէջն եղած երթալը, կամ առանձինը ։ ղէ. 4 ։
անհողըմպանութիւն ։ եւ զանձնալը, կամ զարմանալը, թէքքերը ընելը, կամ բանելը ։ կերի անձնին, թէքքերականութիւն ։ ինէ. 1 . հէ. 1 ։
անհուն ։ չունելու, չիմանալու ։ չըքամիոյ ։ Ը. 1 ։
անհնարանալի ։ զրուցին չհասնող . ներքին ։ ասոր քննութեան ։ ղէ ։ 8 ։
անհնարաւոր ։ կէսմիջ, խոլորոպ ։ ծէ. 2 ։
անհունական ։ ծէ. 3 ։ } անհունութ, չհունող ։ կէօրինակէ ։
անհունակ ։ ղէ. 3 ։ }
անհունութեան ։ ծածուկ առանձնութեան քաղոց ։ ժէ. 2 ։
անհրաժեշտ ։ ատոյգ, հաստատուն ։ առաջին, զանձը ։ Է, 1 ։
անհրաման ։ չհրահանգող ։ Ժ. 2 ։
անհրեշ ։ չարաբաստելու ։ Խ. 3 ։
անհրաւելի ։ ատամնց նեղելու ։ Ձեւացող ։ ժէ. 3 ։
անհրճուելի, չհրճուելու, չհանդուրժելու ։ խա . 2 ։
անհրապուրելի ։ չհրապուրուելու ։ ժթ. 3 ։
անհուսադրական ։ նախանձ չունեցող ։ մէնէնակ եօք ։ Է. 1 ։
անհպելի ։ ձեռք չըլլալու ։ Հալածանք ։ ինէ. 3 ։

անըմբերելի : չէնհամբերելէմէ : սապըր օլունմազ : Ջ. 1 :
անընդել : ալըշմըշ չէղօղ, եապանի : Թ. 3 :
անընդմիջելի : արալըքսըզ չուանեցօղ, չէմիջամտումէլէմէ : ԽԴ. 1 :
անընդհատ : չէնչատըժօղ : գըրմըլըմամըսմազ : ԴԺ : 10 :
անընտիր : անալըխուտն, ներանէլըմէ : Յ. 2 :
անընտրողապար : Թէվէքէլլի : ՀԵ. 11 :
անթառամելի : չէթառամելէմէ : սօլմազ : ԺԴ. 4 :
անթարթափ : առանց գոցելու թարթելու : ԺԵ. 1 :
անթափելի : չէխառնւելումէ : գուրթուլմազ : ԽԴ : 2 :
անթերի : լման : Թէքմիլ : ԼԴ. 5 :
անթոշնակ : պաշտիհէսիզ : ԽԴ. 2 :
անթոշնակութիւն : Ճառագաւ պաշտիհէ չունենալը : ԽԴ. 3 :
անժամանակ : առջը չէհասնող : վէքթի դալըան : ԾԴ. 2 :
անիշխան : չիշխող : դաւարի օլմայան : ԺԴ. 2 :
անլքանելի : առանց երկուս ձգելու : ՀԶ. 4 :
անխայթել : խոզձակ, խոցմիշ չըմեկ : ԽԶ. 4 :
անխարդախ : չիմնուածքելու. անկեղծ : դօղրուրուղ : ԺԶ. 3 :
անխորամանգ : չխորամանկելու, մեղօ չատանելու : Ճիեւարէթսիզ : ԾԴ. 2 :
անծանօթելի : չիմուանալու : ԽԴ. 2 :
անծախ : ԼԴ. 10 :
անծախելի : ԼԶ. 2 : } չիմնաշնկնելու, չհասնելու : Թէլէֆ օլմազ :
անկապտելի : չուժանկելու : ՀԹ. 2 :
անկած : անշուկ, ցած : ալչաք : ԿԹ. 3 : կամ, ընկած, կործանած : տիւշ-
միւշ : ՃԶ. 6 :
անկամակութիւն : հաշ չըմել : ախըզարլըք : ԴԶ. 8 :
անկայ : ՀԴ : 3 :
անկայուն : ՃԵ. 1 : } չիմնացող, անհաստատ : դայանմազ, Թէվէքլիդ :
անկանել : հուանել, Թէզկեան քանել : տօղուկ : ԿԴ. 2 :
անկաշառ : ըուշվէթ չառնող : Ե. 1 :
անկապուտ : չկրարշատելու : գափըլմազ : Դ. 1 :
անկասկածելի : առանց կասկածելու, առանց վայ գալու : Ե. 2 :
անկատար : վերջ կամ ծայր չունեցող : սոնսուզ : ՃԶ. 6 :
անկերպարան : չիւդանհէսիզ : ՃԴ. 5 :
անկերպարանելի. չիձեւանալու : եօռասանը կէլմեզ : ԴԶ. 6 :
անկէտ : չիվերջնանալու : սոնսուզ : ԼԹ. 2 :
անկինդրուկ : պուհուր չունեցող : ԾԴ. 2 :
անկշիռ : անծանր. հասատար չունեցող : աղըրսըզ : Ծ. 2 :
անկշռութիւն : չիկշռելը, չիանտելը : սայըլմամագ : ԽԵ. 2 :
անկողին : անօշէկ : ՃԴ. 3 :
անկուտինչ : ձայն չհանող : սէսի չըքմազ : ԺԴ. 2 :
անկրելի : չունենալու, օղրաթմիշ չըմելու : ԽԹ. 2 :
անկրկելի : չիմերժանելու, չիկարկառելու : աթըլմազ : ԽԶ. 3 :
անհագագ : անշուշտ : նէֆէսսիզ, սոլուղու քէսիկ : ԼԴ. 7 :
անհամատուտ : երկայն, չկարճելու : Դ. 1 :
անհամբոյր : նախսս, սերթ : ԽԶ. 2 : կամ, աչքած. մնուրանար : ԽԴ. 2 :
անհամբուրելի : չկամակրելու : ԾԶ. 2 :
անհամոզելի : չհամոզուելու : բէճառըլ : Է. 2 : ԾԴ. 2 :
անհանդուրժելի : չհանդուրժելու, չհասնելու : եշլէնմէզ : ԼԹ. 1 :
անհանդէպ : աչէթ, ույկուանաղ : ԴԹ. 3 :
անհաս, չհասնող, անպատկառ : Թիւքենմեզ : ԽԶ. 4 :
անհաստատուածելի : չհաստատուելու : այըրըլմազ : ՀԵ. 5 :

անհարթութիւն : անկարգութիւն : եօլսըզլըգ : խն. 2 :
անհաստատուածելի : չհաստատուելու : մուրատսըզ : հն. 10 :
անհետ : հող չունեցող : դժ. 24 :
անհետազօտելի : չիմնուռուելու : աւարաշըրմազ : խթ. 2 :
անհերքելի : դէմ չկենալու : գարշըլանմազ : խէ. 2 :
անհուն : չափազանց : կէնչիզլիք : լժ. 2 : կամ, չափ չունեցող : դժ. 24 :
անհրաժեշտ : եա չկրնալու, չխմացնելու : կա. 2 :
անհրապուրելի : առանց խաբէութեան . ալդանմազ : դժ. 10 :
անձաւ : մաղարայ : խ. 2 :
անձեռնհասելի : ձեռք չդպչելու, անկարելի : գայիբլըգ : հժ. 1 :
անձիր : չհրահանգ չեղող : նասիբսիզ : կէ. 2 :
անձկալ : բաղձալ : առզուլանմագ : խժ. 2 :
անձկական : նեղ : տարք : ժ. 1 :
անձկութիւն : կարօտ : հասրէթ : ժժ. 1 : կամ, քիչութիւն, պակասութիւն : եօգսուլլըգ : ժժ. 2 : կամ, նեղութիւն : սըգընթը, խն. 3 :
անձնական : բանական : ժ. 1 : կամ, հոգեւոր : ժ. 3 :
անձնահաճոյք : հոգեւորական պատարագելու : դժ. 3 :
անձնամատն : իւր ձեռք մատնող : կէնտինի խաին : խժ. 2 :
անձուկ : նեղ, պզտիկ : տարալըգ, [illegible] : ա. 2 : ժէ. 2 :
անճարակ : ճար չունեցող : չարէսիզ : ժ. 1 :
անճառելի : չպատմելու : ժ. 1 : խ. 3 :
անճոռնի : տգեղ, եամանընթը : ծժ. 2 :
անմահական : խօսք կամ պտուղ չունեցող : լթ. 2 :
անմահանալի : կժ. 2 : } առանց ձայնի : սէսսիզ :
անմահունչ : լժ. 5 : }
անյաղթելի : խիստ խորունկ : [illegible] տէրին : խժ. 4 :
անյայտ : չճանաչելու, մէջ երեւ չկեցող : ժժ. 2 : դժ. 2 :
անյարմարագիր : տգեղ գրած, եալըշ չգրած : ծժ. 4 :
անյեղլի : չփոխուելու : տէկիշիլմէզ : ժ. 1 :
աններհելի : չհամբերող : խժ. 1 :
աննշոյլ : մութ : ըշըգսըզ : խժ. 2 :
աննուաղ : չհատնելու : թիւքէնմէզ : թ. 3 :
անշաղախ : մաքուր, թէմիզ : ձ. 1 :
անշամանդաղ : առանց մառախուղի : ժ. 1 :
անշաւիղ : առանց կամ ճամբայ չունեցող : չըղըլսըզ : կժ. 4 :
անշնորհութիւն : ապերախտութիւն : նանքէօրլըք : դա. 3 :
անշուշտ : առոյգ, հաստատ : սահիհ : կէ. 1 :
անշքեղ : անշնորհքացած : չհրքմնէնմիշ . խթ. 2 :
անոխութիւն : ոխ չպահելը : լա. 3 :
անողոքելի : չկակղելու : ձժ. 2 :
անոսայ : եռապատիկ . խօրուսան : խժ. 4 :
անոտ : ոտքէն չիշարժող, գըմըլտանմազ : կժ. 2 :
անորակ : գոյն չունեցող : ռենկսիզ : լժ. 10 :
անուանեալ : չունեցող, որբ : մանհրուտ : լժ. 2 :
անսպառելի : չփճանալու . հող չունեցող : ժ. 1 :
անսուր : հանլիայ : ժէ. 1 :
անսուրբ : ակնի մէջ չիմացուելու : խժ. 1 :
անսուրճ : եռալ, քնոյ մէջ խեղդուիլ : ձժ. 1 :
անչափազանց : գծով կամ չափով չիչափուելու : ըէօլչիւ եօք : ժ. 1 :
անպատճառելի : չհրքէն, նուախուսէթ : խժ. 3 :
անպարտելի : չյաղթուող, կամ չյաղթուելու : ալթաթմազ, ալթատըլմայան : ժ. 1 :

անպատսպարանելի : չհեղձուելը : էզբէրլէնմէզ : Ի. 3 :
անպատսպարուոր : ապաւէն չունեցող : տուտանաքսըզ : ԼԹ. 2 :
անպատսպարանատար : տեղ մը՝ կամ մնալու մը չունեցող : եուրտսըզ : ԺԷ. 1 :
անպարագրելի : չէ մտքի մէջ չխառնուելը : ԺԹ. 1 .
անպարապ : բանի հետ չեղող, չհանգչող : գալաբալըղ : ԾԸ. 3 :
անպարտաւորելի : չհամոզուելը, չհաւանուելը : գանդըրըլմամագ : ԻԲ. 3 :
անպարտելու : չյաղթահարուելը : ԽԸ. 6 :
անպարտ : չյաղթուելը : եէնիլմէզ : Ղ. 3 :
անպարտասխանելի : կորելը կամ չպարտաւորուելը պարտքը չունեցող, առջիը
տեղը չպարտաւորած : ՀԸ. 3 :
անպարտութիւն : չյաղթուելը : ԽԹ. 2 :
անջատել : բաժնել : այըրմագ : ԼԷ. 5 :
անջնջելի : չինջուելը, չմաքրուելը : ԺԶ. 1 :
անջրպետ : բաժնող բան : արանըրգ մնօղ : այրըլըք : ԻԵ. 2 :
անջրպետել : բաժնել, հեռացնել : այըրմագ : ԺԸ. 2 :
անսալ : մտիկ ընել, մնալ : տինկլէմէք : ԻԷ. 4 :
անսայթաք : չսայթաքելը, չխոտորիլ : սուրչմէզ : ԺԸ. 2 :
անսասանութիւն : չխախտելը . դրուած բաշելը : ԻԶ. 2 :
անսպառելի : ետ չդառնալը : ԼԹ. 2 : կամ անդարձ, արտաքս հանա :
անսասանելի : դրուած չխախտուելը : ՀԵ. 7 :
անսեթեւեթ : պարկեշտութիւն չունեցող, կամ չհանդարտելը . ԻԸ. 3 :
անսխալելի : չմոլորուիլը : թէմէլլի օլմամագ : ՀԹ. 2 :
անսպառելի : չհատնելը, չսպառելը : եէլդըրմամագ . ՂԸ. 5 :
անսպասաւորելի : տեղ չխառնուելը, առնող չունեցող : ԻԹ. 1 :
անսովորական : ԾԶ. 3 : } գէշ չընտելը : գայրըշլամամագ :
անսովորելի : ԽԹ. 1 :
անսպառելի : ջուր չբռնալը : ՃԹ. 5 :
անսքանչելի : չհամապատասխանուելը : էօրթիւլմէզ : ԻԹ. 3 :
անվթար : Ճ. 2 : } չառնուելը, չկրցուելը, հաստատ : աճըր
անվթարելի : ԻԸ. 3 : } գալըր, գավի :
անվրէպ : չխոտորելը, չխառնալ : եանըլմաչ : ԼԸ. 2 :
անտառապատ : չխառնուելը : Ը. 1 :
անտառապատական : տարբերութի մէջ չխառնուելը : ԺԸ. 1 :
անտարբերելի : տարբեր : ԼԷ. 1 .
անտարակոյս : տարակուսութիւն չունեցող : շուպհեսիզ : ԼԸ. 2 :
անտեսանելի : տեղ կամ նշան չունեցող, չունի անցնող : ՀԸ. 3 :
անրջական : քունի մէջ երազ . ԾԸ. 3 :
անցք : հանդիպեալ փորձանք : ալէլագ : ԽԵ. 1 :
անփոփոխագիր : ԺԶ. 2 : } չփոփոխուելը, չփոխուիլը, տէյիշմէզ-
անփոփոխագրելի : ՂԸ. 2 : } մէզ :
անքաղաքական : չափ չունեցող : էօլչիւսիզ : ՀԵ. 12 :
անքասել : անկար, խեղճ, ղարիպ : ԿԹ. 2 :
անքոյթ : ապահով : էմին, սաղլամ : ԽԵ. 2 :
անքող : չծածկուած, բաց : փէշտաքսիզ, աչըգ : ԺԶ. 2 :
անօթ : աման : գապ : ԺԸ. 2 :
աշխար : ողբ, լաց : աղլամագ, ֆիղան : ԼԸ. 4 :
աշխարհակալ : աշխարհը բռնող, բոլոր աշխարհը գրաւող : տիւնեայը թու-
թան : ՀԵ. 8 :
աշտանակ : շամդան, կամ մոմակալ : ՂԸ. 8 :
աշտէ : խրիշ : ՀԶ. 3 :
աշտարակ : խաթիրը նայիլ : ԿԵ. 1 :

[illegible]

լողելիչ : ղէ . 15 :
առընթեր : քովը, մօտը : եանընտա : ձը . 1 :
առժամանեայ : կարճ ժամանակով, շուտ անցնող : հէ . 3 :
առ[illegible] : գոգնոց : կամ փէշտըմալ, չարշաֆ : ճ . 2 :
առիթ : պատճառ : սէպէպ : ա . 2 :
առկայծեալ : մարմրելու եղած : ձէ . 3 :
առհաւատչեայ : չէշնի, փէյ : խէ . 4 :
առձեռն : պատրաստ : հազըր էլտէ : ղէ . 8 :
առուղեկան : անցուոր, անցնող գացող : ( քերականական : )
ասուխ : բերդէ լուծ : խա . 3 :
ասոյն : խօսօղ, բանական : կ . 2 :
ասպաստանապետ : չէն աղէս ստացօղ, կամ ձիանց պահապան : լէ . 17 :
ասպատակ : չէթէճի, քէշֆիճի : կթ . 2 :
ասպարէզ : բաց տեղ : մէյտան : ա : 2 . թ . 1 :
ասպնջականէս : կոնաքճի՝ կնկան քիւմլէթով : կ . ժ :
աստեղք : աս աստղիկները, աշխարհքին : ձա . 4 :
աստուածաբանական : եզխաղացուցող կոչաքը՝ աստուծոյ տեղը : ճ . 2 :
Ածխատուն : այդ հետ մխացուած : ծէ . 4 :
Ածական : ածական բառութէն . ածութէն : ձէ . 3 :
ատամն : ակռայ : տիշ : ճ . 2 :
ատամնատու : ակռայի քիչ հիչ եղող : ատիշէ սոզանման : ձէ . 5 :
ատեան : ատենան, մէջլիս : լը . 4 :
ատենակերպի : աթէնք քաղաքէն : կճ . 1 :
արագ : շուտ : չապուք : կը . 3 :
արահետ : ամենէն անեղ ճամբայ լինող, եայլըմըշ եզող : ժը . 2 :
արահետ վատահաւութեան . ճամբայ ճամբայ : խը . 3 :
արդարանեակ : խիզմէթքեար : կը . 2 :
արբշիռ : գինով : սէրխօշ : ը . 2 :
արբումն : խմելը : իչմէք : լթ . 2 :
արգասիք : հասոյթ, արդիւնք : եէմիշ : չամփուր արգասիքն : չամփուր հասոյթ . քերականի եէմիշ . արգասաբերքելքէ : է . 2 :
արգահատանալ : աղաչել . եալվարմագ օլմագ . ժը . 1 . ժէ . 1 :
արգանդ : փոր : գարըն . ռահմ : լա . 1 :
արգասաւոր : շահաւոր : ֆայտալը . հէ . 5 . ( քերականական : )
արգասիք : գործ . իշ, հարէքէթ : է . 4 :
արգելանն : փակելու տեղ : հափիս եէրի : ը . 2 :
արգ[illegible] : հանս անհը չարչարած : խթ . 2 :
արգեան : ժը . 1 :
արգի : ժէ . 2 :
} հիւմիկական . չքմանիքն :
արդիւն : բերքը՝ գործ : հասիլէթ, լա . 1 : ղէ . 22 : կամ, հասոյթ ընկե-
լը : ղէ . 10 :
արդիւնական : հասոյթ եղած : պատշաճ զարմիշ, թէքմիլ : խէ . 1 :
արդ[illegible] : հիմա ցրուած, կամ զայդ եղած : խէ . 2 :
արժանիք : արժանաւորութիւն, արդիւնք : լէյագաթ : ձէ . 4 :
արի : քաջ, կարիճ : եիկիտ, գուվվէթլի : ձէ . 1 :
արծարծել : հրահրել : ալէֆլէնտիրմէք : Ը . 2 : հա . 2 : կամ, նորոգել :
թազէլէմէք, պաղպըրմագ : խէ . 2 :
արկածք : փորձանք : պէլա, խաթա : է . 3 :
արկանելիք : վերջի լաթ, հագուստ : կէյինէճէք : խթ . 2 :
արկուած : վայն ձգելու բան : էօրթիւ : ղէ . 20 :
արհաւիրք : մեծ վախ, վախնալու բան . զարհուրելու բան : խա , 3 :

արձագանգք : եռ դարձող ձայն : եանգը , ռէզոնի սէսա : գշ . 8 :
արձակերտան : ոտիցկինը կամ խուլայը թողած . խշ . 2 :
արձակուրդ : արձակումն , արձկուիլը : դ . 3 :
արձան : քար . դաշ : դ . 3 : կմ , ոչիքիկի դաշ : իդ . 1 :
արձանագրել : հաստատուն գրել : գայտ էթմէք : հե . 3 :
արձանանալ : խավլի գրուիլ , կամ գրուիլ : իդ . 2 :
արձանացուցանել : բռնել , արգիլել : մէն էթմէք : հա . 4 : կամ , հաստատուն գրել : հշ . 3 :
արձանացուցիչ : բռնօղ , դադրեցնօղ : դ . 1 :
արմատակտուր : քեօքը՝ կամ քեօքէն կտրօղ : ժդ . 3 :
արմատաքի : քեօքէն , կամ քեօքով : կէ . 2 :
արմաւենի : խուրմա ադաճը : կէ : 2 :
արմուկն , ( արմկունք : ) դիրսէկ : դ . 3 :
արմտիք : ընդեղէնք : թէրէքէ , էքին . զախիրէ : կշ . 2 :
արշաւել : վազել . գօշմագ : հա . 2 :
արուարձան : երկիր մարդու քիսմէթ : կ . 4 :
արուեստ : զէնահաթ , մարիֆէթ : թ . 3 :
արութիւն : զօրութիւն , ուժ . գուվվէթ : իթ . 3 :
արուսեակ : աստղաց երկրորդը : ե . 1 . կամ , արև : լդ . 2 :
արջնաթոյր : կթ . 2 :
արջնաներկ : լա . 3 : } սև , մութ րէնկ : գարա :
արտաբերել : դուրս հանել : աղշարը չըգարմագ : իե . 2 :
արտաբերութիւն : դուրս հանած բան : լէ . 2 :
արտադրել : հասարլ ընել : ժ . 1 :
արտալած : քշած , սիւրկիւն , կամ այլ եղած : ծդ . 2 :
արտաձգեալ : դուրս ձգած , զօռով տարած : ծդ . 3 :
արտաշնչացեալ : հոգին ելած , մեռած : կդ . 2 :
արտաքինայարդար : դրսերեսանց մաքրած : դըշարըդան տիւզիւն : իէ . 3 :
արտուղի : ճամփէ դուրս , ծռած : եօլուն շաշըրմըշ : հշ . 3 :
արփիացնցուղ : արևէն , կամ արևածաթին առևնը ցօղուած : կմ , լոյս ցրցնօղ : դ . 1 :
արօտ : չայիր , օթլուգ : իե . 3 :
արօր : հարօր : սապան : ծդ . 2 :
արօրադրել : գետինը հերկել . սապան սիւրմէք : ժշ . 2 :
աւազանիող : մեծ ալօռու , կամ զուռնա : գշ . 7 :
աւազախուլ : զուռնով փլած : խշ . 4 :
աւազաքան : լաւլու , խիճաւի : իդ . 1 :
աւաղ : խիճուկ ձայն : իդ . 3 :
աւաղել : խղճալով ցաւել , վայ տալ : իթ : 2 . խշ . 4 :
աւանդ : էմանէթ : դ . 1 . կամ , ընծայ : փիշքէշ : դ . 2 :
աւանդք առաքելոց : յանձնած հրամանը՝ բան հասալ ընելու : թ . 2 :
աւանդական : աւետարան գրող , կամ քարոզօղ : լդ . 6 :
աւարել : թալլել . եաղմա էթմէք : ժդ . 3 :
աւարտել : լմնցընել : պիթիրմէք : լդ . 5 :
աւաղական : ախուժակ ընող : ողբացօղ : ինլէյէն : իշ . 2 :
ափին : ( ափունք . ) ծովու կմ գետի քէնար : գըլը : դ . 3 :
ափշել : պապղել մնալ : շաշմագ : լդ . 2 :
Բաբելոն : պապղանօք : ա . 1 :
բաղդին : կուռքի պաշտկերը : փութ : իէ . 3 :
բազմաերգուն : շատ ալօլ , պէրէքէթլի : իշ . 3 :
բազմաբիծ : շատ կերողա : չօք լէքէլի : ը . 1 :

բազմաբոյլ ։ խիստ շատավոր ։ չօքլուք ։ Է․ 1 ։
բազմապտղաբերան ։ շատ Թիւրլիւ հոտով ։ ղԶ․ 11 ։
բազմական ։ նստելու, կամ կենալու տեղ ։ օԹուրաջագ ։ Կ․ 3 ։
բազմականկան ։ նստելու տեղ, ինչպէս աԹոռներ, մինդէրներ, եւն ։ կամ նստող-
ներ ։ ԽԶ․ 1․ Ճ․ 2 ։
բազմակերհակ ։ շատ տալղալը ։ ԺԵ․ 3 ։
բազմաձեռնեան ։ շատ ուժով․ կամ զօրլու ։ ղԶ․ 9 ։
բազմամասնեայ ։ կերպալ կերպալ, շատ Թարզ ։ ԽԵ․ 2 ։
բազմայածեան ։ շատ բանի պտտող ։ չօքչէյէ տօլաշան ․ Կ․ 3 ։
բազմատեկնեան ։ շատ ճուպով, տալլը ։ ԽԵ․ 2 ։
բազմարժանի ։ խիստ արժանաւոր ։ փէք լայըգ ։ Ծ․ 1 ։
բազմարկածեան ։ խիստ փորձանքոտ ։ պէլալը ։ խէԹալը ։ ՀԶ․ 2 ։
բազմիլ ։ նստիլ ։ օԹուրմագ ։ ԼԶ․ 2 ։
բազուկ ։ Թեւ մարդու ։ գօլ ։ ԼԾ․ 2 ։
բախտումն ։ զարնելը, զարնուածք ։ վուրուշ, տօգունուշ ։ ԿԶ․ 4 ։
բախտք ։ կուռք ։ փուԹ ։ ԾԾ․ 4 ։
բահաղ ։ կուռքի անուն է ։ ԿԶ․ 2 ։
բաղկացուցանել ։ միաւորել ։ պիրլէԹմէք ։ ՀԵ․ 7 ։
բամբիշն, (բամբշուան ։) չալըփարայ․ զիլ ։ ՂԶ․ 8 ։
բանագէր ։ ճարտարասան, կամ բանաստեղծ ։ շայըր ։ ԾԶ․ 2 ։
բանակ ։ օրտու ։ ԿԶ․ 3 ։
բանապաճոյճ ։ ճառաԹճուԹ խօսող ։ ՀԶ․ 2 ։
բանդագուշեալ ։ խելագար, կատաղած ։ չըլկըն ։ ԺԶ․ 2 ։
բանատարկել ։ բամբասուել ։ պըրփլանմագ, տիլլէնմէք ։ ՃԵ․ 5 ։
բառաչ ։ ոչխարի, կամ կովու ձայն ։ ԺԵ․ 2 ։
բառացի ։ վարպետ, սիրուն շինած ։ ուստաճա ։ ՂԶ․ 8 ։
բասիր ։ Ծ․ 1 ։ } քամահրելու, մեղադրելու ։ այըփլը ։
բասրելի ։ ՂԾ․ 3․
բարբանջութիւն ։ բառք կամ Թապիէթ ցրցնող խօսք ։ Թախլիթ ։ ՂԶ․ 8 ։
բարբառացուցական ։ բառք կամ էշխ ցրցնող ։ ՂԶ․ 8 ։
բարբաւոր ։ գլխուն մերկ չէմը ։ սօյա ։ ՂԾ ։ 2 ։
բարբանջումն ։ խենԹումենԹ խօսք ։ ԽԶ․ 4 ։
բարբառ ։ խօսք, ձայն ։ սէօզ ։ սէս ։ ՂԶ․ 8 ։
բարգաւաճ ։ առատ ։ պօլ ։ ԽԶ․ 5 ։ ՃԶ․ 3 ։
բարգաւաճութիւն ։ մեծնալը, առատ գալը ։ ԽԶ․ 2 ։
բարդութիւն ։ դիզուիլը․ եըղընԹը ։ ԾՈ․ 1 ։
բարեբաստութիւն ։ յաջողութիւն ։ բախտ ։ ԼՁ․ 10 ։
բարեհրաւէր ։ 'ի բարին յորդորող ։ ԾԾ․ 3 ։
բարենշմար ։ աղվոր, սիրուն․ չիրքին ։ ՂԶ․ 6 ։
բարեպատեհ ։ խիստ յարմար ։ փէք ույկուն ։ ՀԷ․ 1 ։
բարեսերմնութիւն ։ աղէկ հունտ տալը ։ ՃԶ․ 3 ։
բարետաւիղ ։ անուշ ձայնով ։ տիւզէնլի ։ ՂԶ․ 8 ։
բարձունք ։ կուռք պաշտելու բարձր տեղեր ։ ՀԵ․ 12 ։
բարձրաբերձ ։ խիստ բարձր ։ փէք եւքսէք ։ եուճէ ։ ՂԶ․ 11 ։
բարձրագոյն ։ ինքզինքով հպարտացող ։ Զ․ 2 ։
բարձք, (բարձից ։) Թօփուխ ։ ԺԶ․ 3 ։
բարոյք ։ բարք, Թապիէթ, սովորութիւն, ատէթ ։ ԾԾ․ 3 ։
բարունակ ։ ճուղ ։ տալ ։ Է․ 2 ։
բարուրք ։ մեղադրանք ։ պէհանէ ։ ՃԶ․ 3 ։
բարօրութիւն ։ աղէկութիւն ։ էյիլիք ։ ԼԾ․ 3 ։
բացական ։ հեռու կեցող ։ ուզագտագի ։ Թ․ 2 ։

բազմականադոյն : հեռաւանց սաւառ : գՁ . 7 :
բազմատուութին : ճնշեալ ընկերը : ստոյն խօսք : ձԶ . 5 :
բազմարդութին : բամբիշութիւն . զուարթութիւն . թեժվերի : գՁ . 8 :
բազմարձակութին : ընդարձակութին . հեռաւորութին : ուղղեցերը , մեկնաւոր :
  հՁ . 3 :
բազցրութին : յայտնի երեւնալը , մեկնութին : մեծաւ : գՁ . 17 :
բաւականաբաշխալ : ընտանի : աղեւորութին : Դ . 4 :
բաւել : կրկնալ : գաւառը օրինաք : ԻԸ . 3 :
բաւեղ : առաջախ , գութար եղած ծածք : Խ . 2 :
բեղնոր : աստուածայ : ԾԹ . 4 :
բեկանելու : կտտորել : դըրաւորութք : ԻՆ . 2 :
բեկութին : կտորտորութիւն . Ջարդըրութիւն : Ը . 2 :
բեհեզգեղուղ : Ճանճերու գծը . կոլակ մի է : ԾԹ . 4 :
բեմ : ատեան , բարձր տեղ : ատենան : ԻԷ . 2 :
բեմական : բեմը կեցող . իր առակաւորը : ԾԷ . 2 :
բերդառաջնորդութին : խալէի Ճէնէ : գԲ . 5 :
բերել : վրան ունենալ , կամ դիմանալ . կեօթիւրմէք , տայանելք :
  Փ . 2 :
բերումն : պատահմունք : կէլիշ : ԻՆ . 2 : կամ , բանի մը եռանէ ընկէնել
  : ԼԷ . 2 :
բերք : հասոյթ եղած բան : ԺԸ . 2 :
բժժանք : կախարդական ծրար : չըգըն . թըլըսըմ : ԿԷ . 4 :
բիր , ( բրի : ) աչէց ապէակք . ԿՆ . 2 :
բիծ : լէքէ , պէրրէ . Է . 3 : ԿԹ , կոծիծ : սիվիլըճիկ : ԿԹ . 2 :
բլուր : թէփէ եէր , պայիր : Խ . 2 :
բնաւ : բոլոր . ամմէն : ակիւթիւն . Ճիւմլէ : ԼԷ . 1 :
բոլորապատուղ : բոլոր ընծայուած : եէքփարէ փիշքէշ օլմաշ : Ա . 1 :
բողբոջ : ֆիտան , ֆիլիզ : ԼԷ . 3 :
բողոք : մեծ ձայն . կամ ֆիրեատ : Ն . 2 : ԻԱ . 2 :
բոյլ : ժողով : Ճիւմհիւռ : ԼԱ . 2 :
բուստ : ԿԸ . 3 : } կարմրած , պրիւնտա . կանակարմիր . գըրմ
բոստրայքին : ԿՁ . 1 : } զըրմըզը :
բստառ : փորու ոլորուձան : ԿԹ . 2 :
բրգակէծ : կրակի ակէս կճօղ , կեռագըրեող : ԿԹ . 2 :
բրցաշնչութին : ակէֆիլի նէֆէս : գԱ . 3 . գՁ . 2 :
բուժեալ : բժշկուած , բըրնւած : ԾԷ . 3 :
բուծեալ : սնած , պէսլէնմիշ եղած : ԾԷ . 3 :
բուռն : ամուր , ուժով : զօրլու : ԺԸ . 2 :
բուռն հարկանել : ձեռք զարնել : էլ վուրմաք : ԼԱ . 2 :
բուրաստան : պտուհասութան : Ը . 2 :
բուք : ձուն հով քամի : գըրյամէթ : ՀԱ . 4 :
բռնեալ : Ճնշմըկցուցած : պատմանալը : ԻԷ . 3 :
բռնակալ : ավուճը լեցըրեող , փէք մենծ : ԺՁ . 3 :
բռնախոյեան : ուժով Ճէնկճի : կիւլէշճի : գՁ . 18 :
բռնամարտիկ : կիւլէշճի , փէհլիվան : գՁ . 13 :
բրել : գետինը փորել . եէր գազըմաք : հՁ . 2 :
բքաբեր : բուք կամ թուֆան բերօղ : ԻՆ . 3 :
բքացեալ : բուքով կամ թուֆանով ծեծուած : ԺՆ . 1 :
Գաղաթն : թէփէ . զաֆա : ԼՁ . 2 :
գալարել : ոլորուել : աիւզիւլմէք , աիւրիւլմէք : ՀԹ . 2 :
գահ , կամ գահոյք : մեծ աթոռ . թախտ : ԼԸ . 2 : ԻԹ . 2 :

գահաւորակ : Թահաւորական : ՀԷ. 3 :
գաղձնաւոր : զարդարեալ խառնել գոյն խառնել : գունաւոր : ԾԷ. 2 :
գաղտնակուր : ծածուկ՝ կամ քիչ քիչ ուտօղ. ճնշակեա որդը, ցեցը, ևն :
 ԿԹ. 2 :
գայլխան : մըղըղախ : ԴԷ. 4 :
գան : ծեծ : քեօթէկը, տայակ : ԼԷ. 3 :
գանչութիւն : կանչելը, ասէր ձայն : էօթմէքը : ԴԷ. 8 :
գարշանատարդայր : գարշանան կատաղած, աղմիշ եղած. ԾԷ. 3 :
գարշապար : ոտից տակը : տաբանն : ԺԷ. 2 :
գարշութնակ : մեւրատա բանով լեցուած : ԻԷ. 3 :
գաւիթ : տան փակ : ավլը : ԼԷ. 7 :
գգուել : սիրով ալեա ընել : եօղշամիշը : ՀԷ. 14 :
գեհեան : խոր տեղ, գժոխք : ճիհէննեմ : Է. 2 :
գեղ : տեսք : կէօզէլլիշ. սիֆաթ : ԾԷ. 2 :
գեղայօրէն : գեղեցիկ յօրինած : ախլաէր : ԴԷ. 24 :
գեղմն : բուրդ : եափաղը : ԾԷ. 1 :
գետահերձ : գետը պատառօղ. ճղքօղ : ՀԷ. 10 :
գետանդարդաշութիւն : գետնային սուրբուլծիշ ըլլալը. այգիներն, աշխարհի բանե-
 րուն հատվաւ՝ անվասա ունենալը : ԼԷ. 2 :
գեր : մեծ : փայլելի, խւասիսն : Է. 2 :
գերագինաղես : ամենայն զօրութիւ, կամ զարմանալի կերպով : հըքմէթիւ
 լէ : ԴԷ. 8 :
գերամբակեր : ամբրէկ ուտօղ : ամբրէկլի : ԻԷ. 3 :
գերաշխարհական : խիստ լաւցօղ : իֆիրաթ ադըլայան : ԽԷ. 5 :
գերաշխարհիկ : մեծ փայլելի, փէք իթիպարլը : Է. 2 :
գերափառ : խիստ ազնիւ : նեվզուհուր : ԴԷ. 5 :
գթել : սիրտէն ընկնել : աջըմաճմագ : ԾԷ. 3 :
գժգմնութիւն : երկու կամենալ : աուրտթըրն աաամագ : ԽԷ. 2 :
գժտութիւն. կռիւ : զանազան, չէքիշ. ԽԷ. 2 :
գինդ, ( գնդի : ) օղ. քիւպէ : ԼԷ. 1 :
գիշատել : փըռըքեալ : փառաալըլամագ : ԺԷ. 1 :
գիշերավար : խոլիկիւն կամ գիշերվան առաջ, կամ առաաամանայ. ԼԷ. 1 :
գիջութիւն : Թացութիւն : բարարքըլը, նեմլիք : ԴԷ. 20 :
գխառնախուխ : մալաջիար չալը յիալես չարցած անկլուած : ԺԷ. 2 :
գլխաշուք : գլուխը ծածկօղ : պաշ էօրթէն : ԼԷ. 1 :
գլխատուել : լմնցընել. գլուխ հանել : պաշա չըգարմագ : ԽԹ. 1 : գլխա-
 տուեալ յանդգաւորութիւն : լմնցած Թէքմիլ ըլլալը : Թ. 3 :
գծագրեր : այլընեաքն գրերը : ԴԷ. 22 :
գծագրել : գիծով նշան ընել : չիզմէքլամագ : ԺԹ. 3 : կամ, խմնցընել : յը-
 ցընել : նիշան մէքամէք, առւյուրմագ : Է. 3 :
գձուձ : խեղճ : անֆիլ : Է. 2 :
գողթիք : տասցէք, լուէք : անլքն : ՀԷ. 1 :
գոլորշի : պատուղուտ շոգի կամ կրակի : պուխար : Է. 3 :
գոհութական : կանկուտիկ, փարափուկ : նաաղեղ : ԽԷ. 2 :
գոյ, ( գոյի : ) եղած բան մը : Է. 2 : կամ բանին մը շէնքը. ձեւը : ալշիլ :
 Է. 1 : անեկացուն գոյիւ. խոափուտա շէնքով :
գոյակամնութիւն : ըլլըլուածը, շէնքը : ՀԷ. 12 :
գոյապան : հատուլ ըռօղ : վար էաիձի : ձԷ. 1 :
գոյժ, ( գուժի : ) բոթ ձայն : մուախուալեթլը խապարբ : Է. 3 :
գուտող : խշխան : զապաքլ : Է. 3 :
գործակաճութիւն : շէնք. ըլլըլուածքը : եափը : ԴԷ. 20 :

գործարան ։ բանելու տեղ ։ քէրխանէ ։ ճէ · 2 ։
գործօնեայ ։ բանին տէրը կամ գլուխը · վարպետ կամ ղալֆայ ։ կամ ընկօղ, բանօղ ։ էտիճի ։ ձէ · 1 ։
գորոզ ։ արտի գութ, թալկեցնիլը · խթ · 2 ։
գումար ։ ժողով ։ ճիւմհիւռ · հե ։ 12 ։
գումարտակ ։ սիւրիւ, պէօլիւկ · դ · 3 ։
գունակութիւն ։ գոյն առնելը ։ պօյանմագ ։ կդ · 2 ։
գունդ ։ ժողով ։ պէօլիւք ։ դ · 1 ։ կամ, գունտա, կլոր շէնքը ։ ղդ · 8 ։
գունել ։ ներկել, ըռէնկ տալ ։ պօյալամագ ։ ճդ · 2 ։ ղդ · 17 ։
գուշակ ։ իմացընօղ ։ խապար տուօղ ։ ժդ · 2 ։
գուպար ։ ճիւմհիւռ, պէօլիւկ ։ կ · 4 ։
գուխհ ։ ճամբայ ։ սօգագ ։ կէ · 2 ։
գրաբանականն ։ գրով լասուած ։ ճդ · 1 ։
գրաստ ։ տաւար, հայվան ։ ժդ · 3 ։
գրաւ ։ փէյ, ռէհին ։ ժա · 1 ։
գրաւական ։ ռէհին, կամ չէշնի ։ ժ · 2 ։ կամ փէյ ։ ղդ · 16 ։
գրաւականել ։ փէյ, կամ ռէհին տալ ։ ճբ · 3 ։ կմ, զաւագ ընել ։ ճդ · 1 ։
գրաւել ։ բանի մը առակ գնել, արգելեցընել, զաւագ ընել ։ թ · 1 ։ խթ · 1 ։
գրաւին · կրկնապատկուի ։ բ · 1 ։
գրգել ։ նազիքը պահել, փափուկ մեծցընել ։ ժդ · 3 ։ խբ · 2 ։
գրգութիւն ։ բարակ միտք ։ նազիք մէնա, կամ մանա ։ ղդ · 9 ։
գրել ։ նշանել ։ սայմագ ։ ծ · 1 ։
գրկանք ։ գրկելը ։ գուճագլամագ ։ խէ · 2 ։
գրուան ։ ցորենի էօլչէկ, չինիկ ։ ճե · 3 ։
գօշել ։ խածխծել, ծակծըկել ։ ժէ · 1 ։
գօտեւոր ։ շորմաւոր ։ գուշանմագ ։ խդ · 1 ։
Գաղապար ։ գաղղրելու, կամ հանդչելու տեղ · ատուռագ · խ · 3 ։ Լատանին գաղապարք ։ իլկիման կամ խալկէլէ ։ խդ · 2 ։
գաժանական ։ գարշելի, գանելու ։ մէքրուհ ։ խն · 2 ։
գաժանահոտ ։ գարշահոտ ։ փիսք գօգմուշ ։ ծդ · 3 ։
գաժանութիւն ։ գառնութիւն, լեղիութիւն ։ աճըլըգ · ծդ · 4 ։
գաղտար ։ կանանչեղէն, խոտ օթըռւգ, եէշիլ ։ կ · 2 ։
գահիճ ։ ճէլլատ ։ խա · 2 ։
գանգատ ։ էհեմալճի ։ է · 2 ։
գանգատութիւն ։ թուլութիւն, անճարկիւրը ։ ձդ · 2 ։
գանգաչել ։ երերալկիլ, ծուռմուռ քալել ։ ժթ · 3 ։
գանգաչեցուցանել ։ թանկ թանկ չալել ։ ղբ · 8 ։
գաշն ։ դավլ ։ շարթ · խդ ։ 1 ։
գաշնաւորել ։ դաշն դնել ։ շարթլաշմագ ։ դ · 3 ։ ժդ · 2 ։
գատակ ։ սիւրիւ, պէօլիւկ ։ կդ · 2 ։
գատատակ ։ պիլէկ ։ բ · 2 ։
գատափարակել, կամ իլ ։ ատրել ։ էօկրէնմէք ։ ճե · 3 ։
գատաստան ։ ատավանձի, համախմ ։ բ · 1 ։
գատաւորնեք ։ մէճլիս ։ սիւճիլ, իլամ ։ դ · 1 ։
գար ։ աշխարհի թագաւորները ։ ակամի ոէմման ։ ճդ · 5 ։
գարան ։ պահուելու տեղ ։ պուսուդմադ եէր ։ ձթ ։
գարանակալ ։ փուսույէ կեցողի, քէմինտար ։ խբ · 4 ։
գարաստանան ։ գրատուն ։ պտղուլէ, պտղուլէլիք ։ խբ · 3 ։
գարբին ։ չիլինկիր ։ կդ · 2 ։
գարման ։ պէտը · թիմար, ամերիկան ։ կ · 5 ։
գառնաճան ։ խաղերբայ ։ պալասաղճի ։ ծա · 5 ։

դաւօղ ։ խարօղ ։ հիլէպազ ։ ԿԹ ․ 2 ։
դդմնի ։ դըրդմի խոտ ։ գապագ ադամճը ։ Կ ․ 5 ։
դեգերիլ ։ օյալանմիշ ըլլալ , ատէտիրկլին մնալ ։ Զ ․ 3 ։
դեգեւալ ։ դողդղալօղ , երերալօղ ։ ԽԷ ․ 3 ։
դեղ ։ մուրէքէպ ։ Թ ․ 1 ։
դեղապատութիւն ։ զէհիր ։ Դ ․ 4 ։
դենար ։ դահեկան ։ ղուռուշ արծԹէ՝ կամ ոսկիէ ։ ԺԷ ․ 3 ։
դերագոյն ։ նեռն ։ ամէնաճիալ ։ ՂԱ ․ 1 ։
դէմք ։ կերպ ։ Թարզ ։ Զ ․ 2 ։ Այս դէմս աղօԹից ։ աղօԹքի Թարզով ։
դժնեայ ։ չար ։ եաւմուզ , զալըմ ։ Է ․ 3 ։
դժնէապար ։ պէԹ Թապիէթլը ։ ՂԶ ․ 12 ։
դժնիկ ։ փուշ է ․ առ. տիքէն ։ ԿԹ ․ 2 ։
դժոխագնեայ ։ գերեզմանի մուԹալըխ ։ ԾԸ ․ 3 ։
դժոխապատում ։ դժոխային կամ խառըշպուռըշ քեօք ունօղ , կամ քեօ-
քը զէհիրլը ։ ԾԸ ․ 1 ։
դժոխորովայն ։ փորը դժոխքի պէս կըլլօղ ։ Ժ ․ 1 ։
դժուարանքելի ։ դժուար անուշնալը , լեղի ։ ԽԸ ․ 3 ։
դժուառք ։ ապառաժ կամ քարոտ տեղուանք ։ սաւաֆ եէր , զաշըլըղ ։
Խ ․ 2 ։
դժրել ։ խօսքի կամ մարդու խալքէութեն ընել ։ անօղանէն շաշմաք , նէքշ
էԹմէք ։ ԾԵ ․ 4 ։
դի ։ մեռած մարմին ։ լէշ ։ ԺԸ ․ 2 ։
դիմազրաւութիւն ։ սրտանց քանի մէջ մանելը , սալմիշ ընելը ։ Կ ․ 4 ։
ՀԾ ․ 1 ։
դիմադրութեն ։ ներհակութեն ։ զըԹլըք , Թէրսլըք ։ Է ․ 1 ։ ԽԴ ․ 1 ։ կամ ,
դէմ դնելը ։ գարշը գօմաք ։ ԿԵ ․ 1 ։
դիմակ ։ երեսի ծածք ։ սուրէԹ ։ Զ ․ 1 ։ Դիմակս դիմակս ։ սոյ սոյ ,
Թիւրլիւ Թիւրլիւ ։ ԼԹ ․ 3 ։
դիմակերպութեն ։ օրինակ ։ նումունէ ։ ՂԶ ․ 4 ։
դիմառութեն ։ փէրանէով խօսք ։ միւխըլլի սէօզ ։ ՂԶ ․ 19 ։
դիմել ։ վրա վազել ։ սիւրաաղ էԹմէք ։ Ղ ․ 2 ։
դիպուած ։ գաշէլը ։ տօգանըշ ։ ՂԸ ․ 5 ։ կամ , պատահմունք , գըլխու
գալըք , փորձանք ։ գազա ։ Ճ ․ 2 ։
դիպուակ ։ երես ։ սըֆաԹ ։ ԿԵ ․ 2 ։ կամ , ծայր ։ ուճ ․ Թէփէ ։ ՂԸ ․ 9 ։
դիւաճնեճեր ։ սատանայի զուրքան ընելու ։ ԾՃ ․ 4 ։
դիւան ։ տիվան , կամ տէֆտէր , քիւԹիւկ ։ ԽԶ ․ 2 ։
դիւանապետ ։ տէֆտէրտար ։ ԾՂ ․ 2 ։
դիւրափախելի ։ խօլայ փիշըրելու ։ ՀԶ ․ 3 ։
դղեակ ։ բերդ ։ գալա ։ ԿԵ ․ 1 ։
դշխոյ ։ Թագուհի ։ սուլԹան ։ ՀԵ ․ 3 ։
դոյզն ։ քիչ ։ ճիգըլը ։ Է ․ 1 ։
դուժ ։ խօրեաԹ ։ կօտխու ։ եասպանի ։ ՂԶ ․ 12 ։
դատիկոն ։ սան խատԹ ։ ԿԹ ․ 2 ։
դարավ ։ քամահրանք ։ զէմմ ։ ԾՂ ․ 2 ։
դարավել ։ քամահրել , վար զարնել , գէշ խօսիլ ։ աշաղա վուրմաք , զէմմ
էԹմէք ։ Ը ․ 2 ։ ԽԹ ․ 2 ։
դրանկանապէս անուանադրութեն ։ վրան դրած՝ կամ Թախմիշ ըրած անուն ։
ՂԶ ․ 19 ։
դրանիք ։ դրան չէմ ։ ՂԸ ․ 5 ։
դրաշմ ։ տպաւորածք , նշան ։ ԿԵ ․ 2 ։
դրուակ , կամ դրուագ ։ չինած բան , կամ խօսք ։ ԼԶ ․ 8 ։

դրուժութիւն : դիրք , շէնք : եօնասան, աղիչիմ : Իէ . 2 :
դրօշ : պայրաղ , սանճագ , թուղ , ալէմ : Լէ . 1 : Դ . 3 :
դրօշեալ : կուռք : Ա . 1 : կամ , ինչ և իցէ տաշած և փորած բան , ինչպէս նա խաչը : ԴԷ . 21 :
դրօշուած : քարէ կամ փայտէ փորուածք : ԴԲ . 3 :
Եզեմ : դրախտին երկիրը : ԼԷ . 2 :
եզօղ : միաւորօղ , կապօղ : ԾԷ . 2 :
եզր : ծայր : քէնար , ուճ : Ծ . 2 :
էլ . ( բայ : ) ըլլալ : օրինակ : ԼԷ . 7 . ելով : ըլլալով : օրինակի , օրուն : ԻԷ . 2 :
Ել . ( անուն . ) ելք . ելքերը չըլլալը : Է . 1 : Է . 3 : կամ , Ճար . Ճարէ : Ելք : Ա . 1 :
ել և ելս առնել : մէկմէկու վրա ելլել , կամ անցնիլ : աշխարհ , խաս օղ մագ : ԻԵ . 1 :
ելլենացի : հոռոմ : ԴԷ . 12 :
եկամուտ : դրսէն եկած , եապանճի : ԽԵ . 1 : ԴԷ . 12 :
եղեամն : դրըտալը : ԿԷ . 3 :
եղեգնախառնեալ : պուշուր պամպուկ : ԴԷ . 11 :
եղեռնութիւն : եղած բան : վերջ օրինաց չէր : ԽԹ . 1 :
եղեռնագործ : խիստ չարագործ : ... : Է . 2 :
եղեռնալից : չար բաներ մեռնել լինօղ : ԻԷ . 3 :
եղերական : լալու՝ կամ ողորմելի խօսք : ԿԷ . 1 :
եղերերգութիւն : ողորմելի երգ : ԽԷ . 1 :
եղեւնի : ... , կամ չամ ագաճը : ԿԹ . 3 :
եղեգնախառն : ... , կամ ... : Է . 3 :
եղինձ : ... : ՀԹ . 2 :
եղծանական : փճանալու : եօղ օլաճագ : ԾԹ . 1 :
եղծանել : աւրել , փճացնել : եօղ էթմէք : ԼԷ . 8 :
եղկութիւն : խեղճութիւն , կամ վայ տալը : ԻԷ . 2 : Ծ . 1 :
եղջիւր : պոյնուզ : ՀԷ . 3 :
եմուկ : ... , կամ ... : Ծ . 2 :
ենթադրել : ... : էթմէք : ԺԹ . 2 :
եպերանք : մեղադրանք : այիպ էթմէք : ԽԷ . 4 :
եպերել : մեղադրել : այիպ էթմէք : ՃԷ . 5 :
եռալ : գլգլալ , ... : գայնամագ : ԿԹ . 1 :
եռապատուական : երեք լոյս կամ Ճառագայթ ունեցօղ : ՀԷ . 7 :
եռանդն : եփ եփելը . գայնամակ : ԽԵ . 5 :
եռօրեայ : երեք օրուան : իւչ կիւնլիւգ : ԼԷ . 5 :
երախայ : մանկութեան ... : ԴԷ . 18 :
երախայրիք : առջի արդիւնք : թուրֆանտա : ԼԹ . 2 :
երախտաւոր : ... . ... : ԻԷ . 1 :
երակ : ... : ԻԷ . 3 :
երամ , կամ երամակ : ... : ԼԹ . 3 : ԽԷ . 1 :
երանելի : գովելի : բախտաւոր : ԼԷ . 2 : ԴԷ . 17 :
երաշխաւորել : հաւատալ : ... : ԿԷ . 2 :
երաստան , կամ երաստանակ ... , ... , ... : Ի . 2 : ՀԷ . 2 :
երբ . ( երբի : ) } անուն : վաղուց , ... : ՃԷ . 6 : ԼԷ . 3 :
երբեք . ( երբեքի : )
երգինծանել : ... : ԿԷ . 2 :
երգութիւն : երգելը . կանչելը : ... : Ի . 1 :
երդ : երդիք , ... : ... : ԺԷ . 3 : ԴԹ . 2 :

Երկեակ : ամէրը : կէօստէրիշ : կբ. 2 :
Երեւակայութիւն : սուտ երեւմունք : խէեալ : ղբ. 10 :
Երեւիլ : խառաց ոչինչ, կամ կերեւի . կբ. 3 :
Երեւոյթ : տեսք . բանին թարգը կամ ինչ բըլմալը . իբ. 3 : ի. 3 : կամ, տեսիլ . աչքի երեւցածը : խբ. 4 : կամ, երեւելի, տեսնելու, աչքի տակ ընկած : լբ. 4 : ղ. 4 :
Երկբայական գիտակցութիւն : իւշկերլեամէ տալմիշ ընկելը : ինէ. 2 :
Երկպառակներայ : երկան լոթով պատած : ծբ. 3 :
Երկիթացեալ : չորցած, ցամքած : գուրումուշ : իթ. 2 :
Երկիկամութիւնք : այէօզէկի : ժբ. 1 :
Երկինջ : կէշնձ կով : տանա : խն. 2 :
Երկիցութիւն : միանձութիւն : ակեօյլիւքլըք : ժբ. 1 :
Երկմտական տարրութիւնք : երկու միկմեկու կապուած բան . ղբ. 2 :
Երկգլխի : երկու կերպ : իկի թարզ : իբ. 2 :
Երկեւանութիւն : չիւբհէ : ժա. 1 :
Երկմիտ : մաղախկառ : գօրգագ : ղբ. 11 : կամ, անհաւատարիմ : խային : ծբ. 2 :
Երկմտութիւն : չիւպհէ : ժէ. 2 : կամ, մախ : գօրգու : ձբ. 2 :
Երկն, ( երկունք : ) ծնանելու ցաւ : ժբ. 1 : կամ, ինչ և իցէ ցաւ, աշխատանք, զահմէթ : իբ. 1 :
Երկնել : ծնանելու ցաւ քաշել : բ. 2 : կամ, ցաւով փէյտահ ընել : ա. 2 : ղ. 3 :
Երկուորեակ : Զուխտ եղներու, կամ մարգու : ծբ. 2 :
Երկրպագութիւն : երկրպագող բաներու հավալա ընելը : ն. 3 :
Երկրորդութիւն : կրկնելը . Թէքրարլամալ : ղբ. 10 :
Երկոք : մեծ աշխատանք : չալըշմայ, զահմէթ : է. 1 :
Երփին : մէկ՝ կամ մութ գոյն . հա. 2 : ղբ. 12 :
Եւղընծիւղ : եղ տուող, ինչպէս զէյթինի ծառը : լթ. 2 :
Զաղեր : գարշելի : մուրտար : նէճիս : ժթ. 3 :
Զազրաթորմի : խիստ գարշելի : փիս մուրտար : կթ. 2 :
Զազրանալ : տղտղալ : մուրտարլանմախ : իթ. 3 :
Զակատել : բանին մը ետը կապել, կամ խնեթենալ . աչքը օղնիք : ն. 2 : խբ. 3 :
Զայրանալ : պզտիկալ : տարալըլմագ : իբ. 2 :
Զանգուած, կամ զանկուած : մէկ տեղ խառնուած բան : քիւլչէ : իբ. 2 : հա. 1 :
Զառածեալ : բ. 1 : տես զառածանք :
Զառամանութիւն : զառամանալ բանը : հըքեալ : խթ. 1 :
Զառանցումն : ձանձէ ծամած : եօղուսուն չաշէրիչ : ն. 1 :
Զբաղիլ : պլըշմիշ : պօշլաշմագ : ֆ. 2 :
Զբաբանքիրել : զբաբանութիւնը սաքլամած : իբ. 3 :
Զեղծանել : սխալել, պիղծ եղել . եօլը ըշմալ : պօզուլմաք, ֆէնալըք կէթմէք : ծ. 4 : ծե. 1 : ձէ. 3 :
Զեղուլ : թափել : դօքմագ : լե. 1 :
Զեղումն : լեցում : տօփարօլման, գաշխլըն : խբ. 3 :
Զենանիլ : մորթուիլ : պօղազլանմագ : լբ. 3 :
Զեռուն : աքէօձէկ, սօղուձան : ժբ. 3 :
Զետեղել : տեղ մը կենալ : տուռմագ, եէրլէշմէք : կբ. 3 :
Զերծանել : ապականել, խանգարել : գուրթուլմաք : ծ. 2 : կամ, բացակայել, չըլղալխըշալ : իբ. 2 :
Զերծումն : բանալը, մէրքիւտելը : աչմագ : լբ. 1 :

զարուանք : գանձիւք Թեթեւանանք . Դ . 1 :
զենն , ( զենու : ) ախլառ փոսասա . ԽԴ . 2 :
զգլացող : աղեկութեն չիճանաչող՝ կամ խելքեար ընող . ՃԷ . 3 :
զընդալ : տատանուիլ , չարչարուիլ . Եզիէթ չէքմէք . ԺԴ . 1 :
զընդան : զինտան . ԺԴ . 1 . ԴԾ . 1 :
զիսա , ( զըսափ : ) խաչկանեղուն տանկը կողմը : և նմանութիւն , նայեն սան կը կողմը . ԽԵ . 2 :
զիւրովին երթալ : ինք զինք մեռցնել : կէնտիսինի եօլտուրմէք : Հ . 3 :
զկծեցուցիչ : ախտ կսկծցնող : խուրէք ոէլէն : ՃԹ . 3 :
զկծիլ : արտեն քեար ընել , կիւճէնմիշ ըլլալ : ԽԹ . 2 :
զմայլեալ : ուրախութեն , ժպտերեսութիւնք : զէֆիք : ԾՆ . 3 :
զմուռս : սարըլըղենս , մուռր : ԴՔ . 8 :
զմռսաղէր : սարըլըղենով լեցուած : ԴՔ . 6 :
զննել : ձեռքով նայել , Թէֆթիշ ընել : ՀԹ . 1 :
զոյգ : Ջուխտ : չիֆթ : Հ . 2 . կամ , պարապար : ԾՔ . 1 :
զոհ , կամ զոհական : պատարագ : ֆէտիահ : ՃԴ . 1 . ԾՔ . 1 :
զոհասցուցանել : պատարագել : ֆէտիահլըմամաք : ԿԲ . 1 :
զուարակ : կէնճ եզ : Թօսան : ՂԹ . 2 :
զուգապարծ : նման գործող : ԺԵ . 2 :
զուգակցութեն : համարօտ , մասնակից : իշտիրաք : ՀԵ . 7 :
զուգաճանապարհ : ԴՔ . 4 : } մէկ ճամբա գացող . մէկ կերպ քալող :
զուգաշաւիղ : ԽԶ . 2 : } ալիր եօլա կիտէն :
զուգափառ : մէկ փառք ունող : ալիր փայէլի : ԼՔ . 3 :
զուգիլ : մէկ ըլլալ : պիրլէշմէք : ԿԹ . 1 :
զուգութեն : միաբանութեն , մասնակցութեն : իշտիրաք : ԴՔ . 15 :
զուր : փուճ : պօշ : ԽԶ . 2 :
զրախալ : տարակուսել , պոռալ : Թիթրէմէք : ԽԹ . 2 :
զրահ : զըրխ : ԿԶ . 2 :
զրահեալ : զըրխ հագած : ԴՔ . 6 :
զրահերտակաւ : փուճ , անպատուել : ԽԵ . 1 :
զրուել : մերժացընել : ալիթիրմէք : ՀԾ . 3 :
զօդել : կպցնել , կամ ամրացնել : պէրքէշտիրմէք : Թ . 1 :
զօրել : կրնալ : գաատիր օլմաք : Թ . 1 :
զօրէն : նման , ալէս : կիպի : որպէս : Ջօրէն գոմէշոյ : Ճնբանիկերեւ ալէս : ատ . խուզլու կիպի : ՀԵ . 10 :
Էր : եղած բան մը : զաթ : ԽՔ . 2 : կամ , Աճ , անմատչիծ էակը : ԺԷ . 2 :
էական : բուն էակը , կամ ամենայնին բնութեն : ԴՔ . 15 :
էականութեն : էութեն , առոլ բնութենը : զաթը : ԾԷ . 1 : կէ՞ , եղած բանը : ԾԷ . 1 :
էութեն , եղածը , կամ ըլլալուածքը : իրրեւ զէութն գործոյ : ասնիքի գործ֊ քով եղածը : Դ . 4 :
էրէց : առաջինը : էվվէլքի : ՃԴ . 3 :
Ըղձական : փափաքելու : թամահէթլի : ԿՔ . 3 :
ըղձակերտ : ախորժելու : հաղը էտէճէք : ԴՔ . 21 :
ըղձուն : ԴՔ . 1 : } բաղձանք : առրզու :
ըղձումն : Հ . 3 :
ըմբերանել : բերանը գոցել , պապանձեցնել : աղզընը գափաթմաք , սուս էթմէք : ՀԷ . 2 : ԽԹ . 3 : Ք . 1 :
ըմպիչ : փէհլիվան : ԴՔ . 13 :
ըմբոշխնել : ծամել : չիյնէմէք : Ն . 2 : ըմբոշխնելի : ծամող : չիյնէյէն : ՃԴ . 3 :

ըմբոստանալ : երեսը դարձնել, գլուխ քաշել : տես չէքմէքը : ծէ : 2 :
ըմպարանհնարք : ապահանաճարհնարք : ընդդիմէլը, նեղդրէթ : խէ. 4 :
ըմպանաւանակ : զուարթ, կամ բարբոջ : զուարթ, մեղմանաւէ : Հ. 2 :
ընդդիմադարձել, կամ ընդդիմադարձիլ : ապստամբել ըլլալ : Դ. 3 : խէ. 3 :
ընդդակից : ընդդակաց եղած, ատելութակցած : զաթիլ : կա. 1 :
ընդդատմակցութիւն : թշնամութեամբ : անպատէմ կռուէն : Ձէ. 3 :
ընդդդրդել : դրդել՝ կամ միջը ոտնահարել : ծա. 4 :
ընդդէմը : փոխարէն միջնորդները, առջևը : դատաւոր եղէ, ապստամբութեան : լէ. 2 :
ընդ կրունկն : ետևանցնելով, ետ ետ : կէրկէ կէրկէ : հա. 2 :
ընդհատ : հետամ : պատշաճ, Փայլը : հէ. 2 :
ընդհարկանել : զարնել, զարնել : ապստամբութեամբ : խէ. 2 :
ընդմիջականութեան : զատարանը : անհամեմ ընթեր : ղէ. 6 :
ընդմիջել : արգելքը առ : լէ. 3 : կամ կենալ ըլլալ : Ճէ. 1 : կամ, ար-
գելուլ : գ. 3 :
ընդոտեմ : մէջ յաղթեց, կամ յաղթեցնել : ղէ. 2 :
ընդոստնուլ, կամ ընդոստանալ : մէջ յաղթել : արշաւանք : Ն. 3 : խէ. 3 :
ընդունել, առնել տալ առնել : ընդունելութիւն : խէ. 4 : խէ. 3 :
ընդունայնութեամբ : փուճ ունայն չարաչարող : նաւափոքր զորավիգ մեծերն :
խէ. 4 :
ընդպահուել : հրել, կամ անկարդեալ ընդնել, քշել առնել : Ճէ. 3 :
ընդփայր : փուճ : նաւափոքր : խէ. 4 :
ընդփակել : գլուխ քաշել : տես գաղտագողանք : կէ. 4 :
ընթացքութեան : առակ առնելը, կամ ընթերցը : խէ. 2 :
ընթացք : ճամբը, Ճամբար, վտարանութիւն : կենաց, եօլ, ճանապարհորդ : Ջ. 1 :
ժէ. 2 :
ընթերակաց : մէջը կեցած : եղբայրութեան տարբան : ժէ. 1 :
ընթրիք : իրիկուան կերակուր : այսչափ թեւերը : ղէ. 21 :
ընծայել : Փեշքէշ ընել, կամ ըլլալ . լէ. 2 : հէ. 3 :
ընկենուլ : վար ձգել : առաջաբար արդարութիւն : լէ. 3 :
ընկողին : անկողին : ժէ. 2 :
ընկողմանել : ընկնել պառկիլ : հանգստանալ : գա. 3 :
ընկճել : ամփել : չէքինէքը : խէ. 4 : կամ, խաւարամիտ ըլլալ : գ. 3 :
ընկրկել : ետ ետ քաշուիլ : կէրկէ չէքիլմէք : հա. 2 :
ընձեռել : ձեռքով տալ : վերբերել : Ն. 4 : Ժ. 2 :
ընչեղ : հարուստ : զէնկին : Հ. 2 :
ըսթափել, կամ սթափել . խելքը գլուխը գալ : այլայլութիւն : ժէ. 3 :
ըստանձնել : շալկել : ստրկութիւն : ծէ. 3 : հէ. 3 :
ըստորադասել, կամ ստորադասել : անոր ստորադասել :
Թաթաւել : թաթխել : պարուրել : ղէ. 12 :
Թալկանալ : թուլնալ, ուժը թափել : մեհանան օտար : Ջ. 2 :
Թախանձ : խիստ աղաչելը : նեղել : խէ. 3 :
Թախծիլ : կամ, թախձիլ : տրտմիլ : թախծալութիւն : ժա. 1 :
Թառամիլ : թառմիլ : սոլմաք : խթ. 2 :
Թառանչ : հառաչանք . քիլէնմէ : խէ. 2 : խէ. 2 :
Թասակը : խոյրի տեղը, կամ մէյտան : լա. 2 :
Թարախան : անուն 'ի լեռին : կ. 20 :
Թարգմանել : մեկնել, խմացնել : թէրճիմա էթմէք : խթ. 2 :
Թարթափումն : աչք թարթել դարձը : լէ. 3 :
Թարմատար : փուճ, անշահ : ծէ. 2 :
Թափանցական, կամ թափանցող : նեղը անցնող, կամ անցող : հէ.
7 : 12 :

Թափանցանցութիւն : անցանելութիւն կամ մտանելութիւն ընդ, ծակ . ինչպէս աչքը, կամ ականջը : ղԷ . 21 :
Թափառականել : անէանալիկին ըլլալ : ժԵ . 2 :
Թափուր : դատարկ : պօշ : ծԷ . 3 :
Թաքչել : պահուըտուիլ : ապաստանանալը : Է . 1 :
Թեղան : մանուած Թել : պէտք ատրը : ղԷ : 24 :
Թելադիր : խրատ տուող, յորդորող : եօկիւթ վերին : խԸ . 2 :
Թերահաւատութիւն : խելքի տկարութիւն : ապրըլ դէպանը : ղա . 3 :
Թերատի : կատարելութենէն պակսիլը . հասնիլ : խԵ . 3 :
Թերի : պակաս : պուտտր : ըԵ . 2 :
Թերութիւն : պակասութիւն, անկատարութիւն . պուտտրլըք, էքսիքլիք : Է . 2 : ըա . 2 :
Թեւ : զանազան : ժԷ . 3 : կամ, ափուխըն : Է . 3 :
Թեւատարածեալ : Թեւով գոցած, Թեւերն տակը առած : ըԷ . 4 :
Թիկն . ( Թիկունք : ) կռնակ : արքԹ, արգա : ժԵ . 1 :
Թիկնաթիկունք : Թիկնաթեւով քաշել, վարել : հա . 3 :
Թիւր : ծուռ : էկրի, եանլըշ : Խ . 3 :
Թխմորել : մուԹ ամպերով, ամպած : պիՖիրլի : Խ . 3 :
Թմբուկ : ԹէՖ : կամ անկանՃի ներսի մաշկը : ղԷ . 20 :
Թշնամանք : անարգանք : ըէզալէԹ, ախաչնամ : ըԵ . 3 :
Թշուառաբերական : Թշուառ քրտնքով վաստկած : խԵ . 3 :
Թոշակ : Ճամբու պաշար : Ժ . 2 : կամ, հաց, էօլէՖէ : խԷ . 3 :
Թօթափել : ծեծքած, էօրսէլէնմիշ եղած : հԸ . 3 :
Թուլացուցանողական : ախուղէնը Թուլցած կամ ալքած : ղԷ . 20 :
Թուխք : Թուշերը : աւշուշ : Ե . 2 :
Թուշատուն : Թուշերու պարծիքը . ինչպէս նաւուն եէլքենը : խԵ . 2 :
Թրծեալ : փուռը եփած : փիշմիշ : Ե . 2 :
Թքանել : Թքնել : Թուքքուրմէք : հԵ . 2 :
ԹօԹափել : ԹափԹփել, ԹօԹվել : սիլքմէք : ժԹ . 4 :
Ժամանակ կացուցանել : հասցընել : եէԹիշտիրմէք : ձԵ . 1 :
Ժամանել : հասնիլ : եէԹիշմէք : ըԷ . 2 :
ԺայԹքել : փախել : դուտանք : կԵ . 1 :
Ժանտ : աղու : զէհր : Է . 1 : կամ, կանանց չեղբնաց ողիդ : խա . 2 :
Ժանիք : գազանի կեռ ակը . Ճանաւար ատրշէի : Է . 1 : ժԹ . 2 :
Ժիր : աշխոյժ, շուտ, համարձակուԹ : Է . 2 :
Ժլատ : նեղսիրտ, խնայող : ծԷ . 2 :
Ժխտել : ինքնաբար ընել : Է . 1 : խԷ . 2 :
Ժողովեալ : արտացած, ներխած, Ջըլըկած : հԷ . 2 :
Ժպտիլ : քԹին տակը ծիծաղիլ : պըտըըԹմաք : խԵ . 3 :
Ժուժկալել : յանդգնիլ : քէւսԹախլըք էԹմէք : կ . 4 :
Իժ : էնկէրէք երլանը : Ե . 4 :
Իղձ : բաղձանք : հաւնելու, արգելու : ա . 1 :
'ի մտանել : կատր մը : ախր միգԹարը : խԵ . 1 :
Ինքնաբուն : ատըլ բուն, ատըլ ինքը : Է . 1 : կամ, զաԹը : ձա . 3 :
Ինքնագործ : ինքնիրեն ըրած : Խ . 2 : կամ, ինք իր գլխուն գործող : քէնտի պաշըինա կիւտէն : ծԷ . 2 :
Ինքնագլուխ : ինք զինք մտածող : խա . 1 :
Ինքնավարով : ինք զինք մեղադրող : խԸ . 2 :
ԻնքնաԹոյն : ինք իրեն զէհիրլի : ձԷ . 3 :
Ինքնակշտամբիչ : ինք զինք յանդիմանող : խԹ . 2 :
Ինքնատատան : ինք իրմէն բանկող : ղԷ . 15 :

խնկնաշուշա : խնկ խունկն վառօղ : կզ . 1 :
խնկնարկու : խնկ զխնկ մատուցանօղ : ընծայմնէ արկանէն : ֆ . 2 :
խնկնադուր : խնկ խունկն ծածկուցօղ : ծթ . 1 :
խնկնօրէն : խնկ խունկն խնկաս բղխած : կա . 1 :
խշանդամ : խշուլ տեղս անճեթ ունօղ : կ . 4 :
խոկ . ( անուն : ) առողջ բուռնը : զաթ : ժէ . 2 : խզ . 4 : խոկոյն : այսինքն խոկումենն , առողջ բանէին : դֆ . 18 :
խոկ և խոկ : խորացնէ : կէրչէքանէն . խէ . 3 : դֆ . 19 :
խոկակից : մեկ էութեն ունօղ : հէմզաթ : լֆ . 4 :
խոկութեն : էութեն : առողջ բանէին խնչ ըլլալը : զաթը : ժա . 3 :
խոշոր : բարբառէն , խեսա , փէք : ժա . 1 :
խրատակշիռ : չխրատ կշռօղ : հայ. թարգման : ծ . 4 :
խրատամերժ : հախ ոտքը վրաանած : խթ . 2 :
խուղաարարական : աղարտոր , եաղլը , այսինքն ջերմեռանդութենով խառնուած : դֆ . 6 :
խուզել : օծել : եաղլամաք : դֆ . 5 :
խուզենի : եղար ծառ : դֆ . 9 :
խուզեփեցական : էղանձնի կամ մխակձնի զէնահաթով եփած : դֆ . 8 :
խուրակեր : խրեն շինածը : հէ . 3 :
Ծայնաատուր : ըանտարձակ : մէյտանը : ձֆ . 1 :
ծանօթք : կուրծք : կէօկիւս : լֆ . 1 :
ծառա : առել , կամ նաւուն առակը : խե . 2 : կամ , նաւ : կէմի : խզ . 2 : ձե . 2 :
ծար : չուվան : խփ : ձէ . 3 :
ծափլկօղ : ծափկելով լեղօղ , չողըխօղ : ժ . 1 :
ծեարդ : ձկյերի սեռուց : խզ . 3 :
ծեռնակարկատ : ծեռան տեղս գխրուած : ժե . 3 :
ծերկամաարմին : բարակ կամ չըլլալու մարմնով : կթ . 2 :
ծիծ : կեօլ : թ . 1 :
ծլկանք : ձ . 2 :
ծլկութեն : լա . 3 : } չարչարանք : սխաւէթ , էզիէթ :
ծծակ : արլըխ : դֆ . 10 :
ծնել : անհերեւութեն ծնել : էանէպախ օլմաք : կզ . 4 :
ծնութեն : անհերեւութեն : էանէպախ լեք : լա . 3 :
ծոյծ : ջըլի , կակուղ : ատլըս : լֆ . 4 :
ծուծ : պօյունպաշըղ : լֆ . 1 : ծուծ կշռոց : թէրազինին թեւը : թ . 1 :
ծուղակ : ծռմու կամ ջրի կենդանի : հա . 3 :
ծուատարանել : յայտնել , մերկնել : ակէյան էթմէք : ֆ . 1 :
ծուաակերկ : ծովս ունօղ : նուլըլու : ( ձիշատակարան : )
ծուանցոյց : ծովս անցնօղ կամ տուօղ : ժզ . 3 :
ծուաատապաձայն : ծուատով պարգապարուած : չէօհլէկի : կէ . 2 :
ծուահանական : ծուարնկայէն եղած : այսատն զիւհէր օլմուշ : ձէ . 6 :
ծուատացօղ : չար խօսօղ : քէմ ախլըլի : ժա . 3 :
ծուցունմն : վառեւըլը : եաղլմաք : լա . 2 :
ծուրչեալ : անհերեւս : ատալըղ : ծէ . 2 :
ծարուն : առւս կենաւլու տեղ , խնչպէս աւէօշեկը : զա . 2 :
ծեւլափակ : անկամձը գոցած : գուլլարը գափալը : ծ . 4 :
ծմռացեալ : ձերմըլկած . խնչպէս ծուլմացած եաղրացին տեղը : խզ . 12 :
ծրարկանութեն : կատարեալ . ամէնն բանով լեցուն : թէմամ : հէ . 7 :
ծրարապատ : ծեփեցուն : տօփաօլու : ( ձիշատակարան : )
ծրբութեն : էանէպախ լեք : զ . 4 :

ըլթադոյն : մթադոյն : մութ մոռ : Ը. 2 :
ըստութիւն : ըստանն ըլլալը : Թեթեւամտիքք : ԼԵ. 2. կմ, ըսելը : խելիթմիքը : ԺԹ. 2 : ԿԸ. 5 : ՂԲ. 1 :
ըմբանել : Թոթովել, երկար ձգել : ուզատալմաք : ԻԵ. 2 : կամ, մերձենալ. ընչել : եօղ էթմէք : ԼԸ. 1 :
Խաղք : խաբէութիւն : հիլէ, ֆէնդ : Է. 3 :
խաւթարեալ : աւրած, փճացած : պօզուլմուշ : ԻԱ. 3 :
խակախորհութիւն : խառնակ միտք : ՂԲ. 8 :
խակակութ : խամ : ԾԶ. 2 :
խակութիւն : անկատարութիւն : [illegible], [illegible] : Ը. 4 :
խաղալիք : անպատշաճութեան խաղք : օյուն : ՀԵ. 12 : կամ. խաղալոյ բա- նիք : օյունճախ : ՃԵ. 3 :
խաղաղաւոր : եւրոպայի ուսուցեալք : [illegible] : ԿԹ. 2 :
խաղերք : ատաղձի : ԼՔ. 3 :
խայծիք : պտուղք : մեյվէ : ԼՔ. 1 :
խանդաղատական : սիրալիր, Թաթլըլըգըլը : ԼՔ. 8 :
խառնախուռն : շատը շըրջիրդ խառնած : ԾԶ. 3 :
խառնիճ : այլեւ [illegible] : [illegible] : ԿԶ. 3 :
խառնիճաղանճ : խառնամբոխ, ամբոխաժողով : ԼԱ. 2 :
խառնիք : խառնած բաներ : ՂՔ. 11 :
խարան : երկաթ տաքելու երկաթ : Ղ. 1 : կամ, տաքցած երկաթ : ԺԸ. 3 :
խարդաւանք : խաբէութիւն : ֆէնդ : Կ. 2 :
խարխափ : ձեռաց երկաթ : ըէնկէր, կէսմէ [illegible] : ԻԽ. 2 : խարխափանք բարձից : [illegible], կամ [illegible] : ԺԸ. 3 :
խարխափեալ : գըլըրլած : ՃԶ. 3 :
խարխափանք : [illegible] : [illegible] : ԺԶ. 2 :
խարխուլ : գըլըրլած, խախտուած : ԽԸ. 4 :
խարտուան : երկաթ տաքելը : ԽՔ. 2 :
խափանեցանել : խափանել, արգելել : մէն էթմէք : ԿՔ. 2 :
խեթանալ : Թշնամի ըլլալ, մեկի մը հետ աւրիլ : [illegible] : ԺԶ. 1 :
խեթիկից : [illegible] : ՂԲ. 5 :
խեթումն, կամ խիթումն : [illegible] : [illegible] : ՂԲ. 10 : ԽՌ. 3 :
խելացիք : խելքը կորած, կամ Թռած : [illegible] : ՀԱ. 2 :
խելք : Նաւաւ խելք : ԽԵ. 2 :
խեղդ : խեղդուելը : [illegible] : ԽԵ. 4 : կամ, խեղդելու կապ : [illegible] : ԼԷ. 3 :
խենեշանալ, կամ խենեշանալ : [illegible] : ՀՔ. 2 :
խենեշութիւն : անզգամութիւն, Թեթեւամտութիւն : ՂԲ. 5 :
խէթ : Թշնամութիւն, ոխ : ԽԵ. 4 : ՀԱ. 2 : կամ, [illegible] : [illegible] : ԿՂ. 2 :
խթան : [illegible] : ՀՔ. 3 :
խժական : [illegible], [illegible] : ՂՔ. 6 :
խիղալակել : [illegible] Թութմիշ [illegible] : ԿԵ. 3 :
խիթ : ցաւ, [illegible] : [illegible] : ԽՂ. 3 : Ղ. 1 :
խիթալ : [illegible] : [illegible] : ԺԵ. 1 :
խլրտումն : [illegible] : [illegible], [illegible] : Ղ. 3 : կամ, [illegible] : Է. 1 :
խխունջ : հողէն հանուած [illegible] Թըրթըռ, կամ [illegible] : Է. 1 :

խծբիծ ։ վիճաբանութիւն ։ աղաղակարարբ ։ ԽԸ. 4 ։
խնծղուք ։ խնդումն ։ շաղփեալք, ահենք ։ Է. 1 ։
խնկաւորել ։ Ճ. 1 ։ ՃԷ. 2 ։ } խունկով պատուել, օրհնել, փառաւորել ։ Այս բառս եկած ա-
խնկել. կամ ել ։ ՂԷ. 13 ։
նուններէն ալ կը նշանակեն՝ օրհնենք, օրհնելու, ԵՆ ։
խնձոյք ։ ուտել խմել ։ զիաֆէթ ։ ԺԶ. 1 ։
խշտի ։ տէօշէկ ։ ԺԸ. 3 ։
խոհեմք ։ գաղտշութիւն ։ մտածմունք ։ ԽՆ. 2 ։
խողխողել ։ մորթած ։ պօղազլամիշ ։ ԺԸ. 2 ։ ԽՆ. 2 ։
խոյ ։ արու ոչխար չեկնտած ։ խօչ ։ ՀԷ. 3 ։
խոյզ ։ փնտռութիւն ։ Թէֆթիշ, արտաշարբանայ ։ ԻԸ. 2 ։
խոշոր ։ խառնակխառն ։ ԻԶ. 3 ։
խոպանացումն. չորնալը, խոտաձ ըլլալը ։ ԼԷ. 2 ։
խոտել ։ երեսէ ձգել ։ կէօզդէն պրագմաք ։ ԻԹ. 1 ։
խորամանկել ։ ֆէնտով խաղել ։ ալ էթմէք ։ ԼԷ. 2 ։
խորխորատ ։ խորունկ փոս ։ աէրթին չուգուր ։ Ն. 3 ։
խորհրդականք ։ մտածմունք ունեցող ։ տիւշիւնիճէն ։ Ո. 1 ։
խորշ ։ ուձ պտուտակ ։ Խ. 2 ։
խորշակ ։ տաք հով ։ սամ եէլի . ԿԸ. 4 ։
խորտակել ։ Ջարդփշուր ընել ։ հուրտահաշ էթմէք ։ Ն. 2 ։ ԼԸ. 8 ։
խորտիկ ։ Թէրպիյէով կերակուր ։ Թաամ ։ ԾԸ. 2 ։
խուել ։ նեղել, չարչարել ։ էզիյէթ վէրմէք ։ ԿԸ. 4 ։
խուզել ։ փետտել ։ ապականք, աղաաշտարբանայ ։ Թ. 2 ։ ԾՆ ։ 4 ։ կամ,
խուզարկէշ ընել ։ ԼՆ. 3 ։
խուժ ։ խուժանամանդի ։ ՂԷ. 12 ։
խուճապել ։ արտորցնել ։ էլէթլէթմէք ։ ՀԹ. 3 ։
խուն ։ քիչ ։ աղձըք, ձիւզի ։ ԿԷ. 2 ։
խուսափել ։ ախմիշմիշ ըլլալ՝ փախչիլ ։ ԿԹ. 2 ։
խուփ ։ աման կափարիչ, կամ դրըձի ։ ՂԸ. 7 ։
խախ ։ չոր չրալիք ։ ԺԸ. 2 ։
խոպոց ։ երկու բան մէկմէկէ բաժնող ։ աէյօրիշ ։ ԺԸ. 3 ։ կամ, հեռա-
ւորութիւն, առավլեղ ։ Ը. 1 ։
խստութիւն ։ այլըը, անչի ։ ՂԸ. 19 ։
խրախոյս ։ յորդորանք, սիրտ տալը ։ գայրէթ ։ Ժ. 2 ։
խրթնանալ. չէնք չհասկցուիլ, ... ։ խաթիֆի, կամ, ...
գէնի դժար էթմէք ։ ՀԸ. 11 ։
խրթին ։ դժար, մխստած ։ չէթրէն ։ ՂԸ. 12 ։
խրձունք ։ կապոց ։ տէմէթ ։ ԼԹ. 2 ։
խրոխտ ։ համարձակ, քէնկին ։ ՂԸ. 3 ։
խրոխտանալ ։ խօրօզլանմիշ ըլլալ ։ ԾԸ. 2 ։
խրատուել ։ խրատուիլ ։ գօրգուլուգ ։ ԻԸ. 3 ։
խրատուցումն ։ խրատչի ըլլալը ։ ՂԸ. 8 ։
խցանել ։ գոցել, գափամամք, Թըգամամք ։ Ն. 3 ։
խօլական ։ խելագարութեամբ ։ խեւթութեամբ ։ ԺԶ. 3 ։
խօսնական ։ խօսելու, խօսող ։ ԼՆ. 3 ։
ծածկել ։ գոց ընել, հազարանել ։ Թէլէֆ էթմէք ։ ՀԹ. 4 ։
ծաղրածու ։ ծաղր՝ կամ մերձը կատարող ։ ԽԸ. 1 ։
ծաղրանութիւն ։ ծաղրը կարելը ։ ՀԷ. 2 ։
ծանուցանել ։ խաբեք ընել ։ ըլդըրըմ էթմէք ։ ԾԸ. 2 ։ Կ. 1 ։
ծերպ ։ խօրթուխ, կամ արալըխ ։ Խ. 2 ։
ծիր ։ չէմպէ ։ ՂԸ. 7 ։

ծծումբ : քիւքիւրթ : Ը. 2 :
ծնդեցեալ : հալածամաշած , ճաղած : ԾԷ. 2 :
ծնօտ : չէնէկէ : ԽԷ. 2 : ԼԷ. 2 :
ծորել : վազել , Թափիլ , կաթել : աղամաք : ԾԷ. 2 : ԿԷ. 2 :
ծործոր : լեռներու մէջ զառուվայր տեղ : էնիշ եօգուշ : Ժ. 2 :
ծուէնք : կտաւի կտոր : փաչաւրա : ԽԷ. 2 :
ծուղակ : տուզաղը : ԽԷ. 3 : Ղ. 3 :
ծուխք , կամ ծխանք : չալկանթը : ԾԷ. 3 : ԽԷ. 2 :
ծրգեալ : տողորուած , պըրըշկած : գարկ օղնուշ , պատուըրաշըղ : Ը. 1 :
Կազզուրել : ամրացնել , զօրացնել : գաւիյէթլէմէք , գուվվէթլէնտիրմէք : Ը. 1 : Ժ. 2 : Ճ. 3 :
կազմ : հազըր : ԽԷ. 3 :
կազմած : շէնք : աշխոյժ , եռանդը : ՃԷ. 1 :
կաթսայ : խազանքին : գազան : ԿԷ. 2 :
կալանաւոր : զնդանի մարդ : հափիս : ՀԷ. 3 :
կականն : հեկեկալով լաց : եօքիւր եօքիւր աղլամաք : ԽԷ. 1 :
կաղակարծ կամ կեղակարծ . շիւպհէլի : ԽԸ. 2 : Ը. 2 :
կաղկանձողական : վընկվընկալով : ԼԷ. 17 :
կաճառ : ժողով : ճիւմհիւր , սիւրիւ : Ի. 3 : ՂԲ. 2 :
կայթ : ցաթկըտելով խաղալը : ոպչրամաղ : ԽԲ. 2 :
կայլակ : կաթ : տամլայ : Ղ. 3 :
կայմ : եէլքէն բանալու փայտ : տիրէկի : օրթա տիրէկը . ԽԷ : 2 .
կայուածք : հաստատուն կենալը : գայիմլիկը : ՂԸ. 10 :
կայտառ : վխտացող կենդանի . ինչպէս պէօճէկը : ԽԷ. 3 :
կայք : կենալու տեղ : տուրաճագ եէրը : ԺԲ. 1 : կամ , կողմ : Թարաֆը : ԺԸ. 2 :
կանխել : առաջ առնելու մէջ ըլլալ : ԿԸ. 1 :
կանոնադրակ : արգելօղ : եասագ էտէն : ՂԷ. 6 :
կանթուխ : աչքի բիբը , կամ պտուղ : Թուրփանա : ԿԸ. 2 :
կաշառել : ըպըշկաթ առնել , մէկ բանով մը շահուիլ : ավրաշըրմաք : Ը : 1 :
կաշառառուութիւն : կաշառքի տեղ տալը : ԼԷ. 2 :
կաշկանդեալ : խըլտարվալու եղած : ԺԸ. 2 :
կատարածն : կատարելու բան կամ գործիք , ինչպէս շուվանը , կամ քինէտար , ևն : ԽԷ. 2 : ԽԷ. 2 . 3 :
կատարածք : օգուտ , Թէտարիշ : ԿԸ. 4 :
կատարում : Թամամն , եավաման : ԺԸ. 1 : ՀԻ. 7 :
կապտել , Թալլել : եաղմա էթմէք : Է. 1 : Ը. 2 :
կառավարել : առաջնորդելով ճամբայ ընել : ԼԸ. 5 :
կառափնիչ : գլխու զարկօղ կամ կտրօղ : ճէլլատ : ՃԸ. 2 :
կառուցանել : շինել : եափմաք , գուրմաք : Ը. 2 :
կասել : դադրեցնել : մէն էթմէք : ԽԸ. 5 : և կասիլ : դադրիլ կենալ : տուրմաք , ֆէրահաթ էթմէք , վազ կէչմէք : Է. 2 :
կատակել : տնազ ընել : մասխարայ էթմէք : ՀԷ : 2 :
կատակերգութիւն , մասխարայի կամ խնդալու երգ , ճամփու ըլլալու խաղ : ԼԹ. 3 :
կար : ուժ : գուվվէթ : ԼԸ. 2 : ՂԶ. 4 :
կարակցութիւն : մասնաւոր Թացութիւն : չամուրլըք : ՃԷ. 3 :
կարեկցել : ցաւակցիլ , կարօտութեան գանկըմաիլ : ԼԷ. 10 :
կարթ : օլթայ . չէնկէլ : Է. 3 : ԽԷ. 3 : ԿԸ. 4 :

կարիք : ակնածանաւորութիւն : խղճմտանք , նախապատիւք : Է . 2 : ԺԹ . 3 : ԽԹ . 1 :

կարծրաբերան : բերանը կամ չենթկէն սանձ . ճնշելէս պարանի ձիանք : կէմ ալմանը : ԽԳ . 2 :

կարկամ : ձեռքը քաշուած , խլախլող : ԾԿ . 2 :

կարկառ : գէղ : երդիկ : ԿԶ . 1 : Կարկառ կուտեմանք : երկրպագելով գլու- նելով , կամ մերցուցած գործեցնելով : ԳԶ . 2 :

կարկառել : երկրպագել , մօտեցնել : սաւանանք : ԺԳ . 2 :

կարկել : պատապանծեցնել : աղցերը գաղափարանք : ԺԳ . 2 :

կարկեհան : կայծքար . ձիւղաձիւն՝ որ գեղեցիկ կը փայլէ : չեփչերալ , … , չափչրալ : ՀԵ . 12 :

կարօղութիւն : կարողութիւն : զօրութիւն . Թագաւոր : ԺԹ . 4 :

կափուցիչ : գոցելը : գամփռայր : ԶԽ . 3 :

կափուցանել : գոցել : խփել : գամփռանք : Ն . 3 :

կաքաւ : խօսօս թեփաւիչ ընելը : ռասող : ԽԽ . 2 :

կեղեքել : պատառել , ծեփ ծեփ ընել . կամ չարչրկել , եօթանելեմիչ ընել . ԿԶ . 3 :

կեղծիք : սուտ բան , շինծու կերպարանք : երեսանց՝ կամ ճշմարտիկ չէյ : ԽՆ . 2 :

կենաղէն : կեանք տուող ախրաշնանմիչ եղած : Խ . 3 :

կենդանատարոյն : ոդջ ոդջ երթող : ակրկ ակրկ եղբայն : ԼԶ . 5 :

կենդանախուժ : կենդանիք ժողովելու : ՃԽ . 4 :

կենսախրախոյս : կենաց յորդորանք տուող : հեշտաթեութիւն դերեն : ԽԳ . 2 :

կենսացնցուղ : կեանք ցողացող : ԳԶ . 6 :

կենցաղ : աշխարհիս կացութ : ՃԽ . 4 :

կերպարանութիւն : չենք , ձև : տեսիլ , … : ԽԶ . 1 :

կերպարանագրաւ : մէկ թարգ ըլլալով : ԳԶ . 9 :

կերպարանութիւն : օրինակ տալը : ԿԶ . 1 :

կերպարանանալ : ձևացնել : եօթանասնն գօտիք , … : ԺԶ . 3 : ԽԹ . 2 :

կէտ : մշտիս : սխալ : ԽԶ . 3 : կամ , մեծ ձուկ : … : ԽԶ . 1 :
Կէտ կշռոյի : միանգամայն ծայր : ԼԽ . 1 :

կիզանել , կամ կիզել : երկել : եռացանք : Ն . 2 :

կիսայար : կէս մարմինը կանգնած՝ կեցած : … , … : ԼԶ :

կիրթ : վարժ , հմտուն : վարժութեամբ : ԳԶ . 17 :

կծծի : խոխոխոլ : ԾԿ . 2 :

կլել : թեղկեղաճ բանել , կուռ գործել : … : Է . 3 :

կնճիռք : մեռնելու … : եօլբ … : ՀԶ . 2 :

կնդրուկ : պուրխուր , … : Ն . 2 :

կնիւն : ստող , … : Հատիկ օթի . Հատիկ … : ԼԹ . 2 :

կշիռ : չափսակ : տողեր : ԾԶ . 2 : կամ , հաւասարր , … : ԳԶ . 15 : կամ , թերթեր :

կշտամբանք : չէխ , չախ : … , … , … : ԽԶ . 1 :

կոթող : … : ԼԷ . 3 :

կոծ : ծեծկուելը մարդու , ծափու . ԼՆ : … : ԿԶ . 5 :

կոկորդ : կենդանւոյ պարանոց : ԽԶ . 3 :

կոհակ : ալիք : ԽՆ . 2 :

կողահերձ : կողը պատառող բանջող : ԽԶ . 6 :

կողկողանք : ողբի ողբի գալը : ԻԶ . 1 :
կոչկոճել : անհամեստ ըլլալ : Թեթեւսոլիկութիւնք . ԻԶ . 2 : ԽԶ . 6 :
կոշտ : գունտ հող : եռանդնու Թօփրագ : ՀԶ . 3 :
կոչնական : կանչելու գործիք , կանչօղ : ԴԶ . 3 :
կորակոր : վար ծռած , գլուխը կախած : ԿԹ . 2 :
կորովել : քաջութեամբ փութանալ , խոհականաշ ըլլալ : չէքինի ալմագ , գօխալմագ : ՀԹ . 4 :
կորիւն : գազանաց ձագ , լակոտ : ճանաւարի եաւրուսի : Է . 1 : կամ , պղտ-ալիկ ձուկ : պալըգ ճըգը : ԽԵ . 1 :
կուզ : ոլոր , խաթ : ՀԱ . 2 :
կուանել : գլխել : Թօփ էթմէք , եղելեալ : ԽԵ . 1 :
կուռ : կերակուր , ուտելիք : եէյէճէք : Կ . 4 :
կուածաղ : ծայրը ամուր , կամ կոկած : ԿԹ . 2 :
կուփել : գլուխը ծեծել , կամ վայ վրան ըրել : ՀԷ . 2 :
կանեալ : պարուրուած , պարուրելով եղած : ՃԷ . 2 : ԴՃ . 5 :
կատակել : ծակ ծակ ընելով շաղշաղել : Է . 3 :
կրթել : վարժել , սորվեցնել : Թէրպիյէ վէրմէք : ՀԵ . 12 :
կրկնապատ : խաթխաթ դասադասուած : ԻԶ . 2 :
կրկնակակամ : Թէքրար ըլլալու : ԽԷ . 1 :
կրկնակապանէն : երկու հեղ չար վարձք առած : ԼԶ . 2 :
կրկնապարոյր : երկու խաթ եղած՝ կամ ծռած : ԿԹ . 2 :
կրկնեռանգ : երկու խաթ առքայուցած : ԴԶ . 24 :
կրկուռ : չալը : Ն . 2 .
կցորդ : կպած , միացած : իլհագ : ԼԱ . 1 :
կքեալ : կծկըռուած : ՃԷ . 3 : կքուածք . կծկըռուիլը : ԺԸ . 2 :
Հաղագ : խաչակ . պօղագ : ԻԶ . 2 : Դ . 1 : կամ , շուինչ : առղուգ , Նէֆէս : ՀԵ . 12 :
հաղորդական : օձանօթով կամ փօԹայով բան հաղօղ : Լ . 2 :
հալուէ : էօտ ապանճի եղը : սէպր : ԴԶ . 11 :
հակամիտութիւն : անհաւասար յօժարութիւն : ԽԶ . 2 :
հակինթ : կարմիր : գըրանէ : ԺԵ . 3 :
հաղբ : սորդայթ : տաւղար : Զ . 1 :
համախումբ : խօսքը մէկ , ուխտուն : ակիր աղբր : ԿԱ . 2 :
համապատուոյ . կամ համապատուոյ : մէկ ակրա ուժօղ . ԽԶ . 3 :
համագրութիւն : համագրաւութիւն : մանթար : ՃԶ . 1 :
համագուգակցել : հաւասարիլ : ակերակէր օլմագ : Թ . 1 :
համաձեւութիւն : մէկ չափով ըլլալը : ՀԶ . 2 :
համաճարակ . բոլոր կերած , կամ եայլլմիշ եղած : ԺԵ . 2 :
համայն : բոլոր , ամմէնը : ակիւԹիւն : ԼԶ . 4 :
համառօտ : կարճ : ՃԶ . 6 : կամ . շխտակ , արդար : ասղուգ , հալալ : ԿԱ . 2 :
համասփիւռ : ամմէն դի եայըլմիշ եղօղ : ԼԶ . 1 :
համայեղութիւն : Նմանութիւն : ԽԶ . 2 :
համբար : աման պահիրէ : ԼԱ . 1 :
համբարտաւան : բարձր տեղ , աշտարակ : գուլէ : Զ . 3 :
համբոյր : հեղուկ , անուշիկ Թամփէթով : ԼԷ . 1 :
հայթայթել : ճարել , փէյտահ ընել : գօռումագ : ԼԶ . 8 :
հայթայթումն : գուԹ շարժելը : մէրհամէթէ կէԹիրմէք : ԺԶ . 2 :
հանդիսադիր : մէկ կամ նման փառք ուժօղ : ԴԶ . 1 :
հանդոյց : հանգուցեալ , կապ : ..., ..., գայտառավէն : ԺԶ . 1 : ԾԸ . 3 : ԴԱ . 1 :

Հանդուրժելից : ԺԵ. 1 : } Ներելի, մեղկ թողող : [illegible], մե-
Հանդուրժողաբար : ԴԺ. 15 : } ղմելով :
Հանդգնաբարութիւնք : Հանդգնաբար թափանցելով, համարձակ : ԼԱ. 3 :
Հանդերձանք : բանիւ մը չէինք : [illegible] : ԺԱ. 1 : ԻԶ. 4 :
Հանդերձաւորել : Դ. 2 : } պատրաստել, սարքել : Հազըրլամաք, տիւ-
Հանդերձել : ԺԶ. 1 : . . . } զէթմէք :
Հանդիմանել : մէկ յանձն ելլել, բանիւ ձեռք զարնել : ԻԷ. 1 :
Հանդիպական : ժողովրդեան, կամ աչքի առջեւ : մէյտանտա : Ա. 2 : ԼԲ. 1 :
Հան : մամ, մեծ նանիկ : պէօյիւք վալիտէսի : ԼԱ. 2 :
Հանճար : խելք : ագըլ : Ը. 4 :
Հանճարագործութիւն : խելքով կառավարուած : ագըլը ուշմաք : ԻԲ. 3 :
Հանուրք : ամէնքը : հէր. հէփ. պիւթիւն : ԼԴ. 4 :
Հաշիւ : հիսապ : ԿԸ. 2 :
Հաշմեալ : ձեռքը ոտքը քաշուած, խապաթլը եղած : ՃԸ. 2 :
Հաշտարար : Հաշտեցընող : պարըշդըրըճը : ԼԵ. 2 :
Հատակ : տակը, կամ յայ : ԼԸ. 4 :
Հաստատապէս : Հաստատութեամբ կամ կայունելով անդ : սապիթ [illegible] էտէր :
Դ. 3 : կամ. Հաստատութեան առօղ : ԻԵ. 2 :
Հաստատուած : բանին չէնքը : եաբըն : Ը. 3 : կամ : անխզծուած : եարա-
տըլմըշ չէյ :
Հաստատուն, Հաստատութիւն : պէրքիթլիք : Ը. 4 :
Հատու : սուր : քէսկին : ԺԴ. 1 :
Հատուած : կտրուած կամ զատուած բան : Ժ. 2 : ԽԴ. 1 :
Հատուցանել : Հատուցանել, պատասխանել : Թիւքէթմէք : ԴՁ. 3 :
Հարազատ : Ներհուն : ադաղան : Թ. 2 : կամ, մէկին մի հետ ըլլալ : ԺԷ. 2 :
կամ, ադդականն. խըզըմ : ԾԴ. 1 : կամ էօզ զաւակ : ԽԸ. 1 :
Հարկանագին. Թէզամ անցնող, էյրէթի. ՀԴ. 3 :
Հարթ : դուրս, շիտակ : տիւզ : ԾԴ. 2 :
Հարթահարել : ըլլալըման : Թէսվամ : ԴԴ. 23 :
Հարթուցեալ : խօսուած, ամէնչնալով մախսած : ԺԷ. 1 : Ձ. 3 :
Հարուստ : զարմանքը, զարմանալիք : մուսաւի : ԻԸ. 6 :
Հաւատարմութիւն : մինչ քննելը : [illegible] Թէֆթիշ. ԺԴ. 2 :
Հեծան : Հաստ փայտ. սոփա : Ժ. 2 : ԺԶ. 1 : Այսպէս կոչանը. կամ
կոչնակին փայտը՝ հեծան կըսուի : ԴԶ. 6 :
Հեծանոց : Հողից, Հարմանձինիարուն քիւրէկը : եաքա : ՀԱ. 3 :
Հեծել, կամ Հեծեծել : Հառաչել : ահ էթմէք : ԺԱ. 1 : ԻԹ. 3 :
Հեղեղատակայր : Ջրոտ տեղ : ԼԹ. 2 :
Հեղեղատ : պղտոր ջուր : չայտըրը : Ա. 2 :
Հեղեղել : ողել ընել, կամ հանել : ԽԸ. 6 : Հեղեղուել : ողլէն քշուիլ
ատրուիլ : ԾԴ. 3 :
Հեղձուցիչ : խեղդուելը : պօղուլմաք : ՀԵ. 12 :
Հեղյոյս : զամ : էքսէր, մըխ : ԻԵ. 2 : ԻԸ. 6 :
Հենդիմել : ծանր կամ մանախարա ընել : մէզաղ էթմէք : Դ. 1 : Կ. 4 :
Հենուլ, կամաւ գործել : պէզ ադղուլմաք : ԿԴ. 2 :
Հեստեալ : գլուխ քաշած : աօփ : ԼԴ. 4 :
Հետազօտել : քննել, Թէֆթիշ ընել : ԻԴ. 2 :
Հետք : գնալը, քալուածք, կամ Ճամբա : ԺԸ. 3 : ԺԸ. 2 :
Հերյադանած : մանկերով պարծենցող կամ զարդարուած : աաչլը : Թ. 2 :
Հերձել, կամ Հերձուլ : Ճղքել : եարմաք : ԼԴ. 2 :
Հերք : երկան մաղ : սաչ : ԼԸ. 3 :
Հերքել : վերընտել. կորսնցընել : գօվմաք : ԼԴ. 2 :

Հէն ։ չէթէճի ։ խա․ 2 ։ խե․ 2 ։
Հէք․ ( Հէքեայ ։ ) խեղճ, թշուառ ։ խա․ 2 ։
Հիացումն ։ մեծ միտքը ։ թաաճճուպ ։ խէ․ 3 ։
Հիմ ։ հիմն ։ նի՛մ չիքան ։ խգ․ 2 ։
Հիւթ ։ նիւթ ։ մասնաւոր բան ։ խթ․ 2 ։ գդ․ 17 ։
Հիւծումն ։ հալիլ մաշիլը ․ ճալքիլը ։ խը․ 1 ։
Հիւղ ։ մանր թօղ ։ դէրպէ ։ խէ․ 2 ։
Հմայեակ ։ կախարդական հմայիլ ։ գդ․ 18 ։
Հմայք ։ ֆալ ։ ֆալճիութիւն ։ պապաղանճիլըք ։ խը․ 3 ։ ծա․ 4 ։
Հնարագիւտ ։ առաջին գտօղ ։ ծե․ 3 ։
Հնդիկ ։ սև մարդ ․ հապէշ ։ արապ ։ գդ․ 12 ։
Հոլով ։ ատեմը ։ խը․ 4 ։
Հողապատուական ։ հողով ծածկած ։ կը․ 1 ։
Հողմահար ։ հովով քշած ։ խէ․ 2 ։
Հոմանիք ։ սիրահար ։ աշըգլըա, դէնկիարլէ ։ ձդ․ 3 ։
Հոմիշխանն ։ մէկ իշխանութիւն ունեցօղ ։ հիւքմի պիր ։ լգ․ 6 ։
Հոյլ ։ բազմութիւն ։ ախուրիւ ։ ա․ 2 ։ լա․ 2 ։
Հոսանուտ ․ ջրլի, ջրջրկոտ ։ սուլու ։ ծդ․ 1 ։ գդ․ 23 ։
Հտաել, կամ հտակել ։ թափիել ։ թափթաքիլ ։ ատօզմէք ։ ատօզիւլմէք ։ ժթ․ 2 ։ իդ․ 1 ։
Հատումն ։ դուրս ըլնելը, կամ ըլած բանը ։ ը․ 3 ։ ժդ․ 2 ։
Հովիտ ։ եայլայ ․ ատէրէ ։ ա․ 2 ։
Հուպ ։ մօտ, քովը ։ եաղըն ։ իդ․ 1 ։
Հպիլ ։ մօտենալ ։ եանաշմաք ։ եանաշմաք ։ իթ․ 2 ։
Հրահանգել, կամ ել ։ սորվեցունել, սորվիլ ․ թէրպիյէ վէրմէք, կամ ալմաք ։ հե․ 12 ։
Հրաշակերտութիւն ։ զարմանալի շէնք կամ գործք, էօղէնմիշ եղած բան ։ ծդ․ 4 ։
Հրաշէկ ։ կրակի գոյն դեղին ։ աթէշլի ։ է․ 2 ։
Հրապարակ ։ դէհլիզար խամէլիք ։ կը․ 4 ։
Հրատ ։ կրակի դէղ ։ աթէշ եըլդըզը ։ ը․ 3 ։
Հրատապ ։ կրակի պէս տաք ։ է․ 3 ։
Հրացայտ ։ կրակ ձգօղ բան ։ բաղնեկցիներլիք ։ ը․ 2 ։
Հրճուանք ։ ճխալը ։ շադըլըք ․ շէնլիք ։ գդ․ 18 ։
Հօրան ։ այծի ախուրիւ ։ խը․ 1 ։
Ձաղանք ։ խայտառակութիւն ։ մասխարա ։ ի․ 1 ։ իէ․ 3 ։
Ձաղել, կամ իլ ։ խաղք ու ծաղր ընել կամ ըլլալ ։ ռէզիլ էթմէք ․ կամ օլմաք ։ իթ․ 2 ։ կը․ 1 ։
Ձանձրել ։ ծեծ ուտել ։ տայաղ եէմէք ։ ժը․ 1 ։
Ձայնատարական ։ ձայն հանօղ ։ գդ․ 20 ։
Ձայնարկու ։ ձայն ձգօղ խապարար տելլալ ։ ծդ․ 4 ։
Ձգտումն ։ ձգելու կամ քաշելու գործիք ․ ինչպէս չուանք ։ չէքէճէք ։ է․ 3 ։
Ձգտիլ ։ եռանդ ընկնիլ ։ ալիր չէյէ չալըշմաք ։ ծե․ 4 ։
Ձեղուն ։ տանյի ծածք ։ թավան ։ ծա․ 4 ։ կը․ 2 ։
Ձեռնազինին ։ ձեռքով բռնելու ։ էլէ կէլէն ։ հե․ 12 ։
Ձեռնածու ։ կէօզպաղճի ։ գդ․ 18 ։
Ձեռնարկութիւն ։ ձեռք ձգելը կամ երկընցնելը ։ էլ ուզատմաք ։ լգ․ 1 ։ կամ, կորած խօսք ։ մէքթուպ ։ լա․ 3 ։
Ձեռներէց ։ առաջ նետուօղ ։ էլ պաշի օլան ։ ծը․ 2 ։
Ձիավարժ ։ աթլը, սիւվարի ․ սիւվար ։ է․ 2 ։

ձիր : պախշիշ : Ժդ . 1 : Ժէ . 3 :
ձորձ : լաթ, հանդուստ : էսպապ : Ժդ . 2 :
ձու : հաւկիթ : եումուրթա : Ժ . 1 :
ձուլածոյ : թափծու կուռք : տէօքմէ փութ : Խդ . 3 :
ձուլել : հալած բան մը թափել : գալըպլամաք : Ժթ . 1 :
ձօնել : ընծայել : փիշքէշ էթմէք : Ե . 2 : Ղդ . 4 :
Ղամբար : մեծ կանթեղ : մաշալա : Լա . 1 :
ղեկ : տիւմէն : Դ . 3 :
ղօղել : ծածկուիլ : պահուըտիլ : կիզլէնմէք : Դ . 1 :
Ճակատ : աչքերէն վերը : էպքէր էօնը : Կէ . 2 :
Ճակատամարտ : դիմացդէմ ճէնկ : Ղը . 6 :
Ի ճահ : յարմար . ուղղումն, եագըշըգլը : Ծդ . 2 :
Ճայթել : չաթ ձայն հանել : Է . 3 :
Ճաշակ : ուտելու բան : եէյէճէք : Ղդ . 4 :
Ճապուկ : կակուղ : եումշագ : Կթ . 2 :
Ճառ : երկընկեկ խօսած՝ կամ գրած բան : քէլամ : Դ . 1 :
Ճառել : զրուցել, բանել : նաղլ էթմէք, տէմէք : Խէ . 1 :
Ճարտարել : եալըլճը ըլմալ, ադիճ ըլմալ : Թ . 3 : կամ, ուտել : եէմէք : Ծէ . 2 :
Ճարպ : փորտու եղ, ճրագու : իչ եագը : Ա . 2 : Է . 3 : կամ, եղ : եաղ : Ղդ . 4 : 17 :
Ճենճել : օղթա դարձնել, քամել : կէզդիրմէք : Ծդ . 2 :
Ճեմութիւն : քամելը, կամ մարմնի պատուհաս, մաքուր խօսք : ադէլամէթ : Ղդ . 19 :
Ճենճեր : մուխ քէֆ : Ա . 1 :
Ճենճերել : քէֆ ընել : Է . 2 : կամ . մխոտ էնել : Ժէ . 1 :
Ճեպ : արտորանք : աճէլէ, ալըլէթ : Ջ . 3 :
Ճիրան : փէնճէ : Է . 3 : Կէ . 3 :
Ճշգրիտ : ըղորդ : սահիհ : Իէ . 3 :
Ճշդել : խղճմտուել ըլլալ : խըտաւ էթմէք : Լա . 1 :
Ճշմարտախօս : բանը ճանաչ : չիրքինք : Լէ . 1 :
Ճոխ : ձեռքը առատ, մէկը մեծ : Խդ . 3 :
Ճոխութիւն : մեծ փառք : տաղթամաթ : Լէ . 5 :
Ճռուողք : ընդունակ : Ճռուոնս : փուֆ փուֆ, Ճառթճառթ : Հա . 2 :
Ճրագաւեղ : զանդարիլ : Ղդ . 8 :
Մաքսաւոր : մախսատար : Խե . 1 :
մածանել : կպչել : եափըշմաք : Լէ . 2 :
մածուած : թանձրացուցած բան : Լէ . 4 : կամ . կպցուցած չէնք : մխ- թիւշմիւշ : Ձե . 2 :
մակադաւիթ : մէկ յանունը : ( յիշատակարան : )
մակագրել : պատճէն կամ մածունի պէս թանձրանալ : Ժա . 1 : Խէ . 3 :
մահապաշտ : մահ ցուցնող : Խէ . 4 :
մահաղէն : մեռցընելու սիրահարեալ եղած : Ղա . 1 :
մահամերձ : մահ բերող, մահուան պատճառ : Խէ . 3 :
մահարձան : խուլէ, տուրպէ : Գ . 3 :
մահիճ : անկողին : Ժէ . 2 :
մահտակեղեան : դէհլիզա սանդուխը : Է . 2 :
մաղձ : սաֆրա : Ե . 1 :
մաճ : սարսափ արօրը : Իդ . 2 :
մաճկալ : սարսափին փայտը կամ բռունք բանող : Ծդ . 2 :
մանկաբարձու : զարմանալի քէզդէն լծուած, կամ խուրնած :

ծդ. 3 ։

մայրք, մեծ ծառեր չամի, կամ ուրիշ այդ ։ Թ. 1 ։

մանեկաղ, կամ մանեկալաղ ։ օրոր, Թռչնոյն ։ ըէ. 3 ։

մանեկամամորթ ։ մամայական ։ Թերթիկյէ ապուշ ։ խօճա ։ ծա. 4 ։

մանեաւանք ։ պղպջակներ, քիչեր ։ քիւշիւքէր . աղար ։ Հա. 3 ։

մանրագործ ։ բոլոր մի է . գանգատարանն ։ կէ. 2 ։

մաշկեակ ։ կաշիէ լաթ ։ Հէ. 10 ։

մառախուղ ։ մուժ, առաւմանն ։ Ի. 2 ։ Ը. 1 ։

մաստեամութ ։ ու մութ ։ գազազանութը ։ դէ. 19 ։

մատանեաւորել ։ կապոր մը առալ ։ ակեր առ մէջմէք ։ ըԻ. 3 ։ կամ, բարձնել, բարշխել ։ Թեժեցի եԹմէք ։ ըԸ. 2 ։

մատատակարարութին ։ պաշտօն, խրախմէԹ ։ մանեատալ ։ ըԻ. 1 ։

մատանեան ։ գիրք ։ քիԹայ ։ Ը. 2 ։

մատանեադէտ ։ քեաԹիպ, այս՝ կամ ախմեան քեաԹիպի ։ իԸ. 3 ։

մատան եղանել ։ մատնել, ելէ մէջմէք ։ իԸ. 2 ։

մարդերեյղ ։ մարդ ասկրամիչ ընօղ ։ կ. 4 ։

մարմանչմուանք ։ եուք, կեռալը ։ խԻ. 2 ։

մարմաշոտական, կեռայբնօղ ։ կԹ. 2 ։

մարտիկ ։ կռուօղ . ճէնկճի ։ Է. 1 ։

մեծապրել ։ մեծ բան ատալ ։ պէօյիւք ապմաք ։ ժէ. 3 ։

մեծգլխակական ։ փէք մուգուֆ ։ Ը. 2 ։

մեկնի ։ յայտնի ։ աշկերտակ ։ դԸ. 11 ։

մեկնարէն ։ մինակ՝ կամ ինք իր գլխուն ճէնկ ընօղ ։ կԹ. 2 ։

մեկնաւոր ։ յայտնի ։ այան . աշկերտակ ։ դԸ. 17 ։

մեղուաման ։ ղասաւիլ, հեռանալ ։ չէքիլմէք ։ իԸ. 2 ։

մեհեան ։ կուռքի տուն . փութխանէ ։ խա. 2 ։

մեղկել ։ Թուլցնել ։ կէվշէԹմէք . դԸ. 23 ։

մեղասամակարդ ։ մեղքով մաղակնած ։ կիւնահքեան գարկ օղլու ։ ծԻ. 3 ։

մեռադք . ախուրկիւմի ատեղ, հաքիս ։ դա. 1 ։

մերակերպութին ։ մեր նման ընթացք ։ դԸ. 7 ։

մերաներ ։ մեր այլէն եղածը ։ ըԸ. 9 ։

մերկամարմնիկ ։ ըա. 2 ։ } չըլլարփս ճէնկ ընօղ . իւնչափս փէհլիվաննէրը ։

մերկամբգանեակ ։ դԸ. 13 ։ }

մերկանալ ։ բացուիլ, երկալ ։ աչըլմաք ։ իԻ. 4 ։

մեքենայ ։ գործիք մեռցնելու, բանելու ։ եՆ ։ ծԻ. 2 ։ ղ. 3 ։

մզել ։ քամել . սիւզմէք ։ դԸ. 11 ։

մզկարհեստ ։ բարակ գործ ապէս շինած ։ դԸ. 20 ։

մէգ ։ մուժ, առաւման, գարանլըք ։ խա. 1 ։

մԹեր ։ ամպոտ ։ խաւարա ։ Ը. 1 ։ կամ պայծառ բան ։ ժղ. 1 ։

մժլիս ։ մանծակ ։ ախմըխ ախնէք ։ կը. 3 ։

մժղուկ ։ գինիի կամ խաղողի ճանճ . կը. 3 ։

միագոյ ։ մէկ կտոր ։ եէքփարէ ։ ( յիշատակարան ։ )

միականութին ։ միաւորութիւն ։ Հէ. 7 ։

միայնակողմն ։ մէկ գին սախտա ։ տարապար ։ ժը. 2 ։

միատարր ։ մէկ խայլիդ ։ Հա. 1 ։

միեւգներու ։ կէրկերաան ։ կը. 3 ։

միանել ։ բանի մը ետեւէն ընկնիլ ։ տայլիդ օղլուք ։ կէ. 2 ։

միտել ։ խօԹել ։ սօգմաք ։ խԹ. 3 ։

մղձկիլ ։ խեղդղդիլ ցաւէն, կամ աղաղակէն ։ Իա. 3 ։

մղապատապատ ։ մուժ մառախօղ . ( յիշատակարան ։ )

մոլեգնաճառ : խենթութեամբ խօսօղ : ՃԺ . 14 :
մողոզք : կուռք անմտացելոց : Ի . 2 :
մորմոքել : կսկծեցընել : խոշխոշեցընել : ԽԳ . 1 : ԿԶ . 3 :
մորոսութիւն : խենթութիւն : անլիլլեք : ԽԵ . 2 : ՂԾ . 3 :
մուխ : երկաթի ջուր տալը : ՂԶ . 24 :
մուն . ( միջ : ) մանր ճանճ : ուջանճըք մժեղք : ԿԷ . 3 :
մուր : թանաք : մուրքեքեայ : ԼԳ . 8 :
մուրհակ : պարտքի թուղթ : թեմեսուկք : Է . 1 : կամ , մճխու : խլամ : ԽԶ .
5 : ԽԷ . 2 :
մուրճ : թաշճիկի չէքիճ : ՂԷ . 7 :
մռայլ : մութ : գարանլըք : ԽԷ . 2 :
մռնչել : մռմռալ : պօռալ : առումուռտանմաք : պաղրրմաք : ԿԷ . 2 :
մրճոտիլ : մրոտիլ . աղտոտիլ : խուլէնմէք : ԽԾ . 2 : ՀԾ . 2 :
մրմնջել : քթէն տակէն երգել կամ կանչել : մըրըլտամաք : ԼԹ . 5 :
մրուր : գիրտ : թօրթը : ԺԹ . 1 :
մրցանակ : յաղթութիւն , կամ յաղթութեան պատիւ . Եօտիւլ : Ժ . 2 :
մրցութիւն : ճէնկ : ԼԾ . 2 :
մօր : ցեխ : չամուր : ՃԷ . 3 :
Յաճախել : շատցընել . մեծցընել : չօղալթմաք : ԺԷ . 1 :
յամեայր : շատ տարենի : ՃԾ . 2 :
յամառ : ինատչի , սէրթ : ԾԷ . 2 :
յամրագոյն : ուշացօղ , անտանացօղ : էհմալճի : ԽԷ . 2 :
յայրապատ : անամօթ : էտեպսիզ : ԼԷ . 1 :
յանդգնիլ : լկրջանալ , լըմընալ : ալքըթմաք : ԿԾ . 1 :
յանդիմանել : առջեւը բերել : հուզուրինէ չըգարմաք : Է . 3 :
յանկաւոր : ուղղակին , մինակայք : ԾԳ . 2 :
յանձնանձել : պէտք ընել : կէօզէթլէմէք : ԺԳ . 3 : ՂԶ . 14 :
յանցք : մեղք : սուչ : ԽԷ . 3 :
յառաջադիմութիւն : մեծ պատիւ : պէօյիւք փայէ : ՂԶ . 18 :
յարագօղ : արեւու գէմը կանգնօղ : ՀԾ . 3 :
յարաթաթաւ : միշտ կամ բոլոր մնացականացած : ԽԵ . 2 :
յարախորժելի : միշտ՝ կամ խիստ հաղ ընելու : ՂԶ . 1 :
յարակայել : միշտ՝ կամ համառօտ պահել : դայիմ թութմաք : ԿԷ . 1 :
յարակայիլ : միշտ կենալ : տայիմ տուրմաք : ԿԾ . 1 : ՂԶ . 14 :
յարակցաբար : միացանելով , ուլաշիր ըլըշըրով : ՃԶ . 3 :
յարգանք : պատիւ , մեծարանք : հուրմէթ : ԼԶ . 1 :
յարգարել : շինել , կարգ դնել : տիւզէլթմէք : Ճ . 1 :
յարկ : տուն . Էվ : Զ . 1 :
յարկել : մէկուն ծածկոյթ գայել : էօրթիւ չալմաք : ՂԶ . 9 :
յարմարատեսական : տղեկ աղէս սկզբան շինուած : ԽԷ . 2 :
յաւակնիլ : յանդգնիլ : անհերքութեամբ առաջ նետուիլ : ԼԷ . 7 :
յաւերժահարս : խիստ գեղեցկանալու : փէրի շահզատեճիք : ԼԷ . 1 :
յաւիտենական : կամ , յաւիտենական : անվերջ 'ի կ . ԼՈւԾ . 17 :
յափշտակել : սլըտիմիշ երթալ , ալըգոր : ՂԷ . 10 :
յեղուղակ : առարկակ : հարցումի , գապատարագ : Է . 3 :
յեղաշրջել : փոխփոխել : ահէկիչքարտիրմէք : Ձ . 3 : կամ , երդել : գայպան
պարապանք : ԽԷ . 1 :
յեղեղել : փոփոխել : թէպդիլ էթմէք : ԿԹ , սղխ սղխ ընել : թէքրար-
լամաք , կերպով այլապէս սեօյլէմէք : ԿԾ . 2 :
յեռուլ . ( յեռեալ . ) կէյըմերմիչ ընել : ԿԳ . 2 :
յեսանել : երկաթը քսելու դարձնել : պիլէմէք : ՂԷ . 5 :

յերկիւղութիւն ։ ուսյղուն չէնք ։ ախուղէն, եռագըշէր ։ Խ. 3 ։
յաւելուլ ։ աւելի աւելցնելով նայել ։ կէօղ ավելնէք ։ ԽԷ. 4 ։ ԿԶ. 3 ։
յղփացեալ ։ խիստ լեցուած, պօլ պօլ ունեցող ։ ԽԶ. 2 ։
յոգնեղեան ։ յիմներորդ աստիճան աղատութիւն ։ ԴԶ. 7 ։
յոլով ։ շատ ։ չօք ։ ԽԵ. 1 ։
յոլովամեղծ ։ Թամամ կազմած ։ փէք բօլ ։ ԽԶ. 4 ։
յոյզք ։ խռովութիւն, խռովիչ անցնելը ։ ալամէթ ։ Թ. 3 ։
յովանակ ։ իշու քուռակ ։ գոմեշ, սըփա ։ ԽԲ. 2 ։
յորդ ։ պօլ, գամշըլը ։ ԽԶ. 3 ։
յորձանք ։ ծովու կամ գետոյ պտոյտ ։ պտուտութիւն, կէփրասար.
Խ. 2 ։
յորջորջումն ։ կանչելը ։ անուան տալը ։ ԽԹ. 2 ։
յօրանջել ։ գերղեւակել ձգել ։ ԼԿ. 2 ։
յուղթի ։ ատամ, պօլ ։ ԿԶ. 4 ։
յուռութք. ( յուռթից ։ ) կռապաշտական, կամ կախարդական հա–
մայել ։ ԿԶ. 4 ։ ՀԵ. 12 ։
յուսահատախիծ ։ խիստ արտամուլ ։ փէք մէյուսլ ։ ԽԵ. 3 ։
յուսախաբեան ։ խիստ խաբօղ կամ կակծողով. ճամբաքերպ էանէն ։ ձէյնէը
ակըլէն ։ ԽԵ. 2 ։
յուսահաւատք ։ շատ կերող ։ չօք Թիւքինխ ։ ԼԶ. 1 ։
յուռունք ։ շատանալք, շատերը ։ չօքլար ։ Զ. 1 ։
յուշօրէն ։ կերպով կերպով ։ Թիւրլիւ Թիւրլիւ. ( յիշատակարան ։ )
յօդ ։ անդամներուն խառնը ։ օյնագ ։ ԼԴ. 2 ։ ԽԴ. 2 ։
յօդաւորութար ։ մարմնին ուժեղացուել ։ ԼԶ. 5 ։
յօդաւորական ։ խօսք կամ լեզուական կապող ։ Զ. 1 ։
յօժել ։ մտածմել ։ ախԹիշարակելք ։ Կ. 3 ։ կամ, խօսք ախուղեշ ընել ։
Ե. 4 ։
յօրանած ։ կազմ ։ ԽԴ. 3 ։ կամ. խօսքին կազմը, ախուղէնը ։ Ծ. 1 ։
Ջ. 1 ։
յօնք ։ ունքեր ։ գաշ ։ ԽԵ. 2 ։
յօշոտել ։ պատառ պատառ ընել ։ փառչա փառչա օլմագ ։ ԽԵ. 2 ։
յօրինել ։ շինել, սարքել ։ ախուղէք. ապինէմաք ։ ԼԶ. 4 ։
Նախադասութիւն ։ առաջ դասել ։ նախադասութեան կոկորդին ։ պօղազին փառչը. զը
ըէրձանը, կամ ըմբռնելին մէջը, կամ սասանքը ։ ԽԴ. 3 ։
Նախընտրութեանելով ։ առաջընտիր խմելցընել ։ էվվելցէն ախղընհելքը ։
ԴԶ. 8 ։
Նախակարապետ ։ առաջընթաց Թագաւոր ։ ԽԷ. 3 ։
Նախայայտնեալք ։ առաջի մարդուսպանները ։ էվվելցէի կիւնահքերաղէր ։ ՀԹ. 3 ։
Նախայրք ։ մէկտեղ առաջիններըը ։ դասըր էվվելցէկէր ։ Գ. 3 ։
Նախընթացութիւն ։ առաջնորդ կամ դլուխ ըլլալը ։ ԴԶ. 8 ։
Նահանգ ։ գաւառ ։ այալէթ ։ ԼԷ ։
Նաւակ ։ Թուղթ ։ բարպէտակիր ։ մէքթուպ, նաւէ ։ ՀԶ. 3 ։
Նանիր ։ փուճ ։ Ֆանի ։ ԾԱ. 1 ։
Նաշխ ։ շարժմարդուն արտայը ։ ախմախ ուննա ։ ԴԶ. 8 ։
Նաւակատիք ։ ուրախութեան օր ։ ասմանմանմ ։ ԴԱ. 1 ։
Նաւուղիղ ։ խառտուած, կամ ախւմէնձի ։ ԽԵ. 2 ։
Նարդոս ։ ծաղիկ է. Նարդոսին կամ Նէրտին ։ ԴԶ. 11 ։
Նեղսող ։ գոմմասանք ։ մէնահ ։ ՀԵ. 6 ։
Ներդնեալ ։ ուժէ ընկած, անճար կամ խեղճ դարձած ։ ԽԱ. 2 ։
Ներգործել ։ բան մը ընել ։ ախր իշ էԹմէք ։ ԼԵ. 1 ։
Նորութիւն ։ Նորուծ, Թազալուխ ։ աՖՖ ։ ԺԶ. 1 ։

քո Ճառագայթ՝ ամենեւին բարերարութիւն, զի ընկա-
լեալ զօրհնութիւն քո ուր, արդարացայց կեցից եւ
մաքուր եղէց 13 յանստեղծիցն քո՝ իմոց ըլկողաց :
Զունիմ համարձակութիւն զմեղապարտ 14 ձեռինս
հաստատուած առ քեզ տարածանել, մինչեւ մատու-
ցես զօրհնեալդ քո զայն 'ի նորոգութիւն դատապար-
տելոյս : Որդ՝ յաղթեալ վերստին իմումս յամառու-
թեան քոյին հեզութեամբդ առ իս ժամանեալ մարդասի-
րապէս. եւ զամենայնն յամենայնի ամենայնիւ քո
կարողութեամբդ, 15 զառաջինն չարիսն՝ միջնովքն եւ վերջ-
նականօքն թող ինձ հնարաւոր անհասից՝ քո թագա-
ւոր լուսոյն արդարոց :

Է. Զեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի
16 վնասակար եմ բարեգործիդ՝ մահու հարուածոց :
Որ կնիքն, առ շնորհն, առ փչումն, առ պարգեւն,
առ աւանդն, առ ձիրն, առ անունն, առ որդեգրու-
թիւնն, առ պատիւն արքայական, առ պատկերն,
առ դրոշմն, առ օծումն, առ Ճոխութիւնն, առ հա-
մարձակութիւնն, առ ընտանութիւն, առ կեանսն,
առ լոյսն, առ երանութիւն, առ յոյսն, առ փառսն,
առ անխանարհելի բարձրութիւն, առ պսակն անկապ-
տելի, առ խոստմունսն ծածկեցելոցն, որ քեւ՝ ուր
քո, բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս՝ իժիս
եւ քարբիս՝ 17 ունկնախցից եւ լսելափակ անլուր ական
ջացս. որ միշտ յառաւելութեան քումդ բարութեան՝
յաքնապատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաճա-
խեալ, իսպառ կործանեցին. մերժեալ 'ի կենաց՝
ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականու-
թեան : Այլ արդ՝ դու միայն իրաւակշիռ եւ Ճշմարտա-
դատ բարերար՝ օրհնեալդ 'ի գթութեան, մեղայ քեզ՝
անօրինեցայ՝ անիրաւեցայ. վասն որոյ եւ եղծայ՝ զեղ-
ծայ՝ յանցեայ՝ ամբարշտեցայ. եւ ոչ լուայ խոստո-
վանեալ եւ երկրպագեալ գովեալ քո բանիդ. որ 18
դու իսկ երեւեցար անՃառելեաւ քո սիրովդ, զոր
դրեալն իսկ մեծ է, եւ նշանակեալն տարափելի : Քեզ
արդարութիւն եւ փառս եւ մշտնջենաւոր գովութիւն, եւ
ինձ պատկառեցելոյս 'ի քէն խնամակալ, քաւութիւն
եւ ողորմութիւն եւ բժշկութիւն, օգնութիւն եւ պահպանու-

Թի՛ սրտի և ոգւոյ. բարեբանեալ յամենայնի յաւիտեանս. ամէն։

---

(1) Ատամանց փեսման ուշոյ։ Օրինակաւ կեանք յաւիտենից՝ թէ ոչ գոյ բարութիւն մարդոյ առանց խնամոյն [illegible] և մարդկային ամենայն. որպէս ոչ գոյ փրկութիւն հոգւոյ առանց քեզ, և ոչ [illegible] բանից առանց [illegible] ուշոյ, և ոչ առանց [illegible] յաւիտենից [illegible] [illegible] քաղցր ծառայութեան [illegible]։

(2) Օգտոր ժեղեր։ 2. օրէն. օգտոր է ժեղ։ Եթէ գտ [illegible] [illegible], և յայն [illegible], զի՞նչ օգուտ է քեզ [illegible], յորժամ ընդ [illegible] [illegible] [illegible]։

(3) Սրբոյն Հոգւոյն։ Մինթէ այս [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], և զանհնարին զատուածային յիշել. (Ցովհէլ. ա. 5. ե. 11.) և կամ այլ [illegible] որ՝ [illegible] [illegible] կարծիցի, այնու զի [illegible] յիշէ զորն [illegible]։ Ն կամ էէր, որպէս [illegible] [illegible] հաւանութեան [illegible] [illegible] [illegible] [illegible]։ Ն զենէր [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] կարծեցեալ, [illegible] [illegible] [illegible] հայր թէ [illegible] [illegible] [illegible], որ է [illegible] [illegible] [illegible]. մինթէ այսու [illegible] [illegible] [illegible] կամ [illegible] [illegible]։

(4) Մերք խնամքնոյն։ Բանն ժողովրդի է. (Է. 5։) Այս առաւ կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] յարգանելի է. կամ յոր [illegible] հայր։ Եթէ բառ [illegible] [illegible] կենաց և [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] զգացութիւն ամենայն. և [illegible] է՝ որ [illegible] յիշեցեալ [illegible] և 'ի նոյնս [illegible], [illegible] [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible], [illegible] են [illegible] բառ [illegible] կենաց՝ [illegible] է [illegible] [illegible] [illegible] և [illegible] յիշել, [illegible] [illegible] [illegible], և յայտայն [illegible]։

(5) Ձայնը ամենից։ Ոչ է [illegible] [illegible] [illegible] մարդոյն [illegible], հաւանելով ամենայն [illegible]. [illegible] [illegible] թէ [illegible] [illegible] մարդոց, և [illegible] 'ի կարգս մարդոյ։ Այլ եթէ նաև [illegible] [illegible] մարդոյն ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] [illegible] [illegible], ոչ [illegible] [illegible] մարդոյն [illegible] [illegible] են կամ [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] լեալ [illegible] օրինակաւ, [illegible] [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] մարդոյն, [illegible]. * Մեզոյք մեզ ընդ հայրս մեր ||։ (Սաղմ. ՃԵ. 6։) Այսր՝ որ ոք ոչ [illegible] [illegible], այլ [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] եթէ [illegible]. որպէս [illegible] [illegible], որպէս թէ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] ոչ [illegible]. կամ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible]. [illegible] [illegible] 'ի [illegible] կամ 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] թէ [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible], կամ կարէ [illegible]։

(6) Ու Բերկեր օրէք։ Ըստ առաքելոյն (Աբակ. ԺԵ. 13.) * Աստուծ [illegible] [illegible] [illegible] [illegible] ||. եթէ ոչ [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] մարդոյն։ (Ա. Կորն. Է. 10։) Եթէ [illegible] [illegible] մարդոյ և [illegible] [illegible] ոչ [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible], ոչ կարէ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]. և ոչ [illegible] [illegible] [illegible] [illegible], այլ [illegible] 'ի [illegible] և [illegible] կայ [illegible]։ Ալ

[illegible] :

(7) [illegible] : [illegible] . ( [illegible] . 6 . ) * [illegible] || : [illegible] . ( [illegible] . 8 : ) . [illegible] . ( [illegible] . 1 . [illegible] . 5 : [illegible] . 17 : ) [illegible] :

(8) [illegible] : [illegible] . ( [illegible] . 5 . ) * [illegible] || :

(9) [illegible] : [illegible] :

(10) [illegible] : [illegible] . ( [illegible] . 15 : ) [illegible] :

(11) [illegible] : [illegible] :

(12) [illegible] : [illegible] : ( [illegible] . 61 : )

(13) [illegible] : [illegible] :

(14) [illegible] : [illegible] :

(15) [illegible] : [illegible]

չարութեան վերջին են, այսինքն ծանր և գժուարաշինելի: Թէպէտ եւս զայս ամենայն ամենահնար զօրութեամբ, զու որ Թագաւոր ես բաւոյն արդարոց, այսինքն արդարոց որք 'ի լոյս են, մաքրութեամբ պայծառացեալք, կամ լուսաւորիչ արդարոց:

(16) Վնասակար եմ: Վնասապարտ, կամ պարտաւոր եմ մահապարտ հարուածոց և չարչարանաց բարկացողին. կամ լաւ եւս, մահու արժանի յանցաւոր եմ առ բարկացողն. եւս զի յանցաւոր եմ առ քեզ միութեան, և յայլոց որ 'ի կարգին յիշատակին, և ամենայնին են արդարոց միութեան թէ այժմ, և թէ 'ի հանդերձելում: առ ամենայն քրիստոնէական, որում յանցաւոր լինիմ չար վարուք:

(17) Որմնափորից և ըմբշամարտ: Խուզեալ ամենայնի, և փակեալ առ ընկերութե. Երկոքեան եւս նշանակեն՝ ամբարիշտ: Որ Գող. որչափ քո բարութեան առաւելոյն առ իս, այնչափ բարերարութեան եւս անձինն չարիքն իմ:

(18) Դու խոյ երևեցար: Կամ զմարմնով երեւումն յաղթահարէ առնէ, և կամ զմարմնաւոր երեւումն առ մեզ, որպէս ասացաւ 'ի բանն. Ե. ԺԵ. 10. և ԽԷ. ԺԵ. 16:

---

Մերսոպին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանին:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ած:

# ԲԱՆ. ԾԱ.

ա. Նու արդ՝ առ երկրածին ոք [1] պաղատեցայց
այլս մահացու ամենապատիր, [2] եթէ ըն-
դունելի է աղաղակելն. առ մահկանացուն բանական,
եթէ սուտ իցէ փրկութիւն առ յուսոյն վստահու-
թեն. [3] առ մարդ ոք եղծական, եթէ ընդ տկարութե
բանին՝ և նանիր է զօրութիւն. [4] առ իշխանս երկ-
րաւոր գահից, եթէ անցաւոր [5] է ընդ ինքեանս և իւ-
րեանցն բարութի. առ եղբայր ոք հարազատ, եթէ
կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութի. առ
հայրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամա-
կանքն ընդ աւուրց նուաղութեան. առ մայրն իմ որ
երկնեաց, եթէ կասեցան գթութիւքն ընդ նահան-
ջել կենդանութեան. առ Թագաւորութիս աշխարհի
արդեօք, [6] որք զմահացուցանելն միշտ արուեստաւո-
րեն, քան զկենագործելն. այլ առ քեզ՝ բարերար
Ած օրհնեալ 'ի բարձունս, որ կենդանի ես՝ և զկեն-
դանութի տաս ամենայնի. որ և յետ վախճանին զօ-
րես անեղծապէս նորոգել:

բ. Որ եթէ փախնումք 'ի քէն, դու զկնի ընթա-

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ
Կարգաթիւ ..........

նաս. Եթէ տկարանամք, զօրացուցանես. Եթէ վրի-
պիմք, շաւիղ դիւրութեան ուղղես. Եթէ պատկա-
ռեմք, քաջալերես. Եթէ ախտանամք յանձն և 'ի
մարմին, բժշկես. Եթէ գարշանամք մեղօք, մաքրես.
7 Եթէ ստեմք, քո ճշմարտութեամբդ արդարացուցանես.
Եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք, յեր-
կինս ցուցանես. Եթէ 'ի կամաց մերոց ետ դառնամք,
դու դարձուցանես. 8 Եթէ մեղանչեմք, ողբաս. Եթէ
արդարանամք, ժպտիս. Եթէ օտարանամք, ոգաս.
Եթէ մերձենամք, տօնես. Եթէ տամք, ընդունիս.
Եթէ յամրանամք, երկայնամտես. Եթէ մեք ժխտեմք,
դու առատապէս շնորհեալ ընծեռես. Եթէ լքանիմք,
օրամես. Եթէ արիանամք, խնդաս:

Գ. Որպէս 9 հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնա-
բան հրաշաւորական՝ զվհատելոյս զսիրտ սփոփէ, և
մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեան հան-
դէս. որ յաղթական է դիւաց, և տարակոյս բան-
սարկուին. որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաղդ
պանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութեամբ
լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեամբ՝ կանգնեալ
է ախոյեան անվանական և անշարժական՝ ամենայ-
նիւ յաւիտենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնա-
նութեան բելիարայ. որ ունի յինքեան զանձս հոգևոր
օգտից դիտողաց մտաց՝ ընծայեալս զպարտումն մա-
հու և զլուծումն մեղաց, և յոյս կրկին՝ յերկուս
յաւիտեանս, և զնորոգումն խոստմանն անեղծութեան
արդարոցն, կանանս բարեհրաւէրս և կենդանա-
տուրս՝ դրեալս հոգւոյն այ. որպէս ամենայն իսկ
երգ սաղմոսացն՝ մաքուր սրտից է տեսանելի՝ կտակ
կենաց մարդկան նկարեալ:

Դ. Ոչ ի թէ 'ի նախնումն 10 տկար կերպարանն՝ զայս
աւետիս և վստահութեան ընդգոգեալ ունէր՝ կարծան-
մանն մահու նախաժամանն մեծ աւետագիր՝ և կեանս
երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անճառելիս. և
այն՝ Ընջական գիրն, և յեղանակաւոր օրինակն, և
պաշտօնն դատապարտիչ վհատութեան յանցաւորացն,
և խափանելի կտակն երկրային, և տկար հաշտարա-
րութեան միջնորդացն, և թերութիւն բանից մաղթա-
ղացն: Որ զի թէ մանաւանդ փրկութեան խոստմանե-

զի է, անտուսան վկայեալ յետ այնքանեաց մեղանաց
անքժշկականաց. որ արեամբն արդարոց եկեղ զնուէ-
րեալն մեծի Թագաւորին հրաշանուն քաղաք հայրե-
նի, ըստ մարգարէագիր անսուտ պատմութեան. որ
և 11 զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախտիս ձեռնե-
կալութեն՝ խնամածօրէնն պաշտպանութեն՝ նախնակերտ
յարկին տեսչութեն, մանկավարժ ինքեան և նախնի,
մեքենայիւ մահու աղացեաց. 'ի յերկուս մասունս
բոլեալ՝ դժնդակ տանջանօք մաշեաց իբր խորհրդով
ապստամբութեն՝ զյուսոյն փրկանակ կորեալ: Ն՛ա-
տրով զչար յաւելուածն մոլեգնական՝ 12 զքրէական
մերմամարտութիւն 'ի բարձրեալն յանդգնութիւն.
քանզի ոչ պատկառեաց երբէք զստեղծողին պատիւ
և 13 զանունն՝ յիւրաքնակ խորանէն մերժել. հալա-
ծեալ զնա հոգին, բեւրաւորայ զանձն դաւանեաց:
Ն՛անզի զնոյն տաճար տիրական՝ ինկարկութեան
հասատողին սահման՝ հուչականորն երկրի տեսարան՝
զտարապեալն ազանց որքարան, ուր տեսիլք հրեշ-
տակականք և ճծայլին հրամանք յաղթողականք՝ լու-
սաւորապէս յայտնութեամբ աղդեալ երևէին, զայն
վայր երկնանման ահաւոր սքանչելատես՝ 14 քեանց
ումեմն քառադիմակի նախանձարկու պատկերի աւե-
րանօյն անապատի՝ պաշտօնետեղ դարշելի և դիւա-
ձնեձեր զոհարան պատրաստեալ կազմեաց: Օ՛րհեալ
զարքայն երկնաւոր 'ի յարքայականն կայից, զամե-
նահարուստն՝ ունայն 'ի ստացուածոց իւրոց, զտա-
նուտէրն՝ անհանգիստ և Թափառական տատանեալ:
15 Ն՛էհհեղցեալ ձեռունն նկարեալ, և զանունն ա-
հեղ վտարանդի տարեալ. գերի տարեալ զաւանդ-
դովեալոյն, ողբալի՝ զողորմածին մասն նուաղեցու-
ցեալ. աղաւեսուն փոքու ապարանք զորահն լուսոյ
կարգեալ, և բնաւից ունողին՝ և ոչ գլխոյն տաղա-
ւար 16 յիւրայնոցն եդեալ. հատեալ զզանկ հզօրին,
բախտից հմայից՝ զսեղանն մեծախորհուրդ արեանն
սրսկման՝ երևեցուցեալ: Տ՛այնեալ հեստ բազուան
ընԹացելոց 'ի դայԹակղուե. հովիւ կորստեան հօտին
սատակման. մոլորուէ բուռն վարդապետ. և 17 այն՝
գիտուէ կրօնիցն օրինաց, հայր ունելով զմեծն եղե-
կիա՝ զնմանակիցն դաւԹի:

Է. Որքան ստացեալ զամուսնոյ չարեաց, որ և զմիոյ պատիւն՝ որ զարքայութեան փառս ընծայեաց նմա, հայհոյեալ և թշնամանեալ, և [18] զաղօթկերացն բազմութիւն սուսերաւ մահու խողխողեալ: Ոստանին զաւաճան. մերձաւոր վատնիչ. հարազատ սատակիչ. կցորդակից սպանօղ: Ուր ա̄ծ ոչ գոյր դառնալ, զի ուրացեալ էր զնա. զաբրահամ ոչ էր յիշել, զի խորթացեալ էր 'ի նմանէ. իսահակայ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր 'ի նմանէ. իսրայէլիւ ոչ էր պարծել, [19] զի տարագիր էր անուան կոչմանն մեծախորհուրդն շնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին. [20] 'ի քաւարանն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. 'ի տապանակն ա̄ծագիծ ոչ էր ապաւինել, զի ընդ զարշուն ձուլածուին էր փոխանակեալ. առ մովսէս ոչ էր կարդալ, զի անքաւելի էր պարտիքն որ առ նա. առ ահարոն ոչ գոյր աղաչել, զի վնասապարտ էր առ նա. առ մերձաւոր մարգարէիցն գունդ ոչ էր դիմել, զի սպանօղ էր նոցա: Այլ նորա քաւութիւն մեղաց, և արքայութիւն թագաւորութեան վերստին պարգեւեալ տուաւ. զի քեզ բարերար՝ բազմացուցես կարգեսցես զովեստս անճառս և անլռելիս 'ի յազգս տոհմից և 'ի դարս ժամանակաց. և զդուռն յուսոյն մերոյ անփակելի պահեսցես՝ 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փըրկութիւն դատապարտելոյս, անմահութեանց պարգեւաց տուիչ քո, գովեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Պաղատեցայց: 3 օրին. պաղատեցայ. և կարէ յարմարիլ յիմաստ կարգի բանիցս. իբր ասել. Ես արդ միթէ առ երկրածին՞ն ոք պաղատեցայ մինչև ցայժմ, միթէ առ մեծս, միթէ առ իշխանս, միթէ առ ծնօղս են, ոչ բնաւ. այլ առ քեզ պաղատեցայ բարերար ա̄ծ օրհնեալ են:

(2) Երկե ընդունայն է: 'Ի տպագրեցելումն նախ քան զայս՝ զչարակարգ երկե յարեցաք 'ի վերջ յառաջընթաց բանին, [illegible], առ երկրածին ոք երկե, ընդունայն է. առ մահկանացու բնութեան երկե, ուստի ինքն [illegible] են: Իբր ասել, եթէ առ երկրածին ոք կամ առ մահկանացու պաղատեցայց, ընդունայն է են: Այլ մեք [illegible] յայնժամ բառ օրինակին տպեցելոյ 'ի կոստանդնուպօլիս, յամին 1774. այլ և [illegible] նոյնպէս գտեալ յեմնակը օրինակս: Սակայն բառս որ [illegible] իսկ յայնժամ, և [illegible] 'ի լուծմունսն՝ ոչ միայն անստոյգ լինել [illegible], այլև զի մեր ընտիր օրինակն կիտիւ զատանէ յանցելոյ բանէն, ընդ յաջորդին յարելով, Եթէ ընդունայն է, Եթէ ուստի ինքն են: Սա [illegible] օրինակս, [illegible] զի բա-

ԾԶ․ 3 ։
մայրք, մեծ ծառեր չամի, կամ ուրիշ այլ ։ Թ․ 1 ։
մանգաղ, կամ մանգաղ ։ օրաք, Թըրփան ։ ԼԵ․ 3 ։
մանկավարժ ։ վարժապետ ։ Թէրպիյէ տուող ։ խօճա ։ ԾԱ․ 4 ։
մանուածք ։ պղպջակներ, քէչէր ։ քէւչէլէքլէր ․ աղլար ։ ՀԱ․ 3 ։
մանրավաճառ ։ բայց մի է ․ գանդրպուրաւան ։ ԿԷ․ 2 ։
մաշկեակ ։ կաշիէ լաթ ։ ՀԷ․ 10 ։
մառախուղ ։ փոշու, տուման ։ Ի․ 2 ։ ԻԲ․ 1 ։
մատնամատուս ։ ան մութ ։ գարանլըղ ։ ՂԶ․ 19 ։
մատնանմուշել ։ կարող մը տալ ։ ակըր ալ վերմեք ։ ԼԵ․ 3 ։ կամ, բաժնել,
բաշխել ։ Թէվզի էթմէք ։ ԼԹ․ 2 ։
մատակարարութիւն ։ պաշտօն, խըզմէթ ։ մանտուայ ։ ԼԵ․ 1 ։
մատեան ։ գիրք ։ քիթապ ։ Է․ 2 ։
մատենագէտ ։ քեաթիպ, ալու՝ կամ ատեանին քեաթիպլէրի ։ ԽԶ․ 3 ։
մատն եղանիլ ։ մատնել, եղէ վերմեք ։ ԽԶ․ 2 ։
մարգերպայ ։ մարդ ամլանաէշ ըլօղ ։ Կ․ 4 ։
մարմանջմունք ։ եռք, կեռասը ։ ԽԵ․ 2 ։
մարմնաշնչական, կեռապայինօղ ։ ԿԹ․ 2 ։
մարտիկ ։ կռուօղ ․ ճէնկճի ։ Է․ 1 ։
մեծապարել ։ մեծ բան սեպել ։ պէօյիւք սայմաք ։ ԺԷ․ 3 ։
մեծագթաակական ։ փէք մուրդուֆ ։ Է․ 2 ։
մեկին ։ յայանի ։ աշկերարէ ։ ՂԶ․ 11 ։
մեկնաղէն ։ մինակ՝ կամ խնք ինը գլխուն ճէնկ ըլօղ ։ ԿԹ․ 2 ։
մեկնաւոր ։ յայտնի ։ այան ․ աշկերարէ ։ ՂԶ․ 17 ։
մեկուսանալ ։ զատուիլ, հեռանալ ։ չէքիլմէք ։ ԽԶ․ 2 ։
մեհեան ։ կուռքի տուն ․ փութխանէ ։ ԽԱ․ 2 ։
մեղկել ։ Թուլցունել ։ կէվշէթմէք ․ ՂԶ․ 23 ։
մեղսասամանկարգ ։ մեղք բով մալլաքիանած ։ կիւնահքեառ ։ գարըի օլմուշ ։
ԾԵ․ 3 ։
մեռաղք ․ ակռակներին ատեղ, հանքօ ։ ՂԱ․ 1 ։
մերձաւորութիւն ։ մեր՝ նման ըլլալը ։ ՂԶ․ 7 ։
մերձաւոր ։ մեր այլէն եղածը ։ ԼԶ․ 9 ։
մերկամարմնիկ ։ ԼԱ․ 2 ։ } չըլլալու ճէնկ ըլօղ ․ խնչալէս փէհլիվան-
մերկամարմնանակ ։ ՂԶ․ 13 ։ } ները ։
մերկանալ ։ բացուիլ, երեւալ ։ աչըլմաք ։ ԽԵ․ 4 ։
մէքենայ ։ գործիք մեռցնելու, բանելու ։ ԽՆ ։ ԾԵ․ 2 ։ Ղ․ 3 ։
մզել ։ քամել ․ սըղմաք ։ ՂԶ․ 11 ։
մզնապահեստ ։ բարակ զարդ ալէս չինած ։ ՂԶ․ 20 ։
մէգ ։ փոշու, տուման, գարանլըք ։ ԽԱ․ 1 ։
մԹեր ։ ամպար ։ խազնա ։ Ջ․ 1 ։ կամ պահած բան ։ ԺԿ․ 1 ։
մժլխ ։ մածակ ։ ափվքի ափնեք ։ ԿՂ․ 3 ։
մժղուկ ։ գինիի կամ խաղողի ճանճ ․ ԿՂ․ 3 ։
միադոյ ։ մէկ կտոր ։ եէքփարէ ։ ( յիշատակարան ։ )
միականութիւն ։ միաւորուիլը ։ ՀԵ․ 7 ։
միայնակեցոյն ։ մէկ գլուն սախսար ։ ասաղլար ։ ԺՂ․ 2 ։
միատարր ։ մէկ խառնքոյ ։ ՀԱ․ 1 ։
միեղջերու ։ կէրկերտան ։ ԿՂ․ 3 ։
միտել ։ բանի մը եւսէն ըլլնիլ ։ տայլըմ օլմաք ։ ԿԷ․ 2 ։
միսել ։ խօԹել ։ սօգմաք ։ ԽԹ․ 3 ։
մղձկիլ ։ խեղդուիլ ցաւէն, կամ սրտնեղէն ։ Խ․ 3 ։
մղամփարատա ։ փոշու փարատօղ ․ ( յիշատակարան ։ )

մոլեգնաճառ : խենթութեամբ խօսօղ : հէ . 14 :
մողոք : կուռք ամմոնացւոց : Ի . 2 :
մորմոքել : կսկծցնել : խոշխոշցնել : իզ . 1 : կզ . 3 :
մորոսութիւն : խենթութիւն : տէլիլիք : խն . 2 : ղա . 3 :
մուխ : երկաթի ջուր տալը : ղդ . 24 :
մուն . ( մնոյ : ) մանր ճանճ : ուճաճըք սինեկք : կէ . 3 :
մուր : Թանաք : մուրեքեկ : լզ . 8 :
մուրհակ : պարտքի թուղթ : թեմեսուկք : Դ . 1 : կամ , մճիա : կղամ : իզ . 5 : խէ . 2 :
մուրճ : Թաշճին չէքիճ : ղէ . 7 :
մսայլ : մութ : գարանլըղ : իզ . 2 :
մնչել : մռմռալ : պօռալ : առումբռալ : պղպղալ : կզ . 2 :
մրճոտել : մրոտել . աղտոտել : խալէնմէք : իա . 2 : հա . 2 :
մփոփել : քթին տակէն երգել կամ կանչել : միրըլտամանք : լթ . 5 :
մօրուր : գեխտ : Թօրթը : ժթ . 1 :
մրցանակ : յաղթութիւն , կամ յաղթութեան պախչիշ . նշանել : Ժ . 2 :
մրցութիւն : ճէնկ : լա . 2 :
մօր : ցեխ : չամուր : ձզ . 3 :
Յաճախել : շատցընել . մեծցընել : չօղալթմաք : ժզ . 1 :
յամոյր : շատ առատ : ձա . 2 :
յամառ : ինատչի , սէրթ : ծզ . 2 :
յամրայլին : ուշացող , անանցող : էհմալչի : խզ . 2 :
յայրատ : անեդէս : եաւեղալիզ : լզ . 1 :
յանդգնել : վէրջանալ , լըմընալ : պիթմէք : կա . 1 :
յանդգնախօսնել : առջևը ելլել : հուղուրսըզ չըքմաք : Է . 3 :
յանկաւոր : ույղուն , մինասիպ : ծզ . 2 :
յանձնանձել : պէտս ընել : կէօզէթլէմէք : ժզ . 3 : ղզ . 14 :
յանցք : մեղք : սուչ : իզ . 3 :
յաջողագործութիւն : մեծ պատիւ : պէօյիւք փայէ : ղզ . 18 :
յառաջօղ : առջևը գնացող կանխող : հա . 3 :
յարաթաթառ : միշտ կամ բոլոր մնալականած : խէ . 2 :
յարախարժելի : միշտ՝ կամ խիստ հաղ ընելու : ղզ . 1 :
յարակայել : միշտ՝ կամ հաստատուն պահել : դայիմ թութմաք : կէ . 1 :
յարակայիլ : միշտ կենալ : դայիմ դուրմաք : կա . 1 : ղզ . 14 :
յարակցապէս : միացանելով , ույմիշ ըլլալով : ձզ . 3 :
յարդարանք : պատիւ , մեծարանք : րայէթ : լզ . 1 :
յարդարել : շինել , կարգ դնել : տիւզէթմէք : Ձ . 1 :
յարկ : տուն . էվ : Է . 1 :
յարկել : վրան ծածկելով գոցել : էօրթիւ չաթմաք : ղզ . 9 :
յարմարապատշաճ : տաղի պէս սիրուն շինած : խզ . 2 :
յաւանեցնել : յանդգնել : անհրաժեշտութեամբ առաջ նետուել : լզ . 7 :
յաւերասահրաշ : խիստ զարմանալու : [illegible] : լզ . 1 :
յաւիտենական : կամ , յաւիտենական : տես 'ի կ . լուծ . 17 :
յաւերժացեալ : պարտիմիշ եղած , պէքեար : ղէ . 10 :
յեղուզակ : աւազակ : հարամի , գողարարող : Է . 3 :
յեղանակել : փոփոխել : տէկիշտիրմէք : Ջ . 3 : կամ , երգել : զայրոյթ
պարապմանք : իզ . 1 :
յեղեղել : փոփոխել : թեպտիլ էթմէք : կզ , [illegible] ընել : Թէքրար-
լամանք , իրիւոէ պիրիւոէ սէօյլէմէք : կա . 2 :
յետոյլ . ( յետեւալ . ) կերպարանափոխ ընել : կզ . 2 :
յետամնել : երկաթը քարերու զարնել : պիլէմէք : ղզ . 5 :

յերկուրութիւն : ուշադրումն չէնք : ակնածէն , խորհրդել : խ . 3 :
յաւելուլ : աւելի անկեալ նայիլ : կեօղ ակնածէք : իէ . 4 : կզ . 3 :
յղփացեալ : խիստ լեցուած , լիով լիով ուռեցող : խը . 2 :
յոխորտան : յանդգնորդ առաջին ամբարտաւանութեան : դը . 7 :
յոլով : շատ : չոք : խն . 1 :
յոլովամերձ : թանձր կացած : փոքր խիտ : խը . 4 :
յոյզք : խռովութիւն , իրար անցնիլը : ալեկոծք : թ . 3 :
յովանակ : իշու քուռակ : գուառակ , ուլոյս : իէ . 2 :
յորդ : լիով , դարձեալ : խդ . 3 :
յորձանք : ծովու կամ գետոյ առատայ : առատութիւն , կերպարանք . խ . 2 :
յորջորջումն : կանչելը : անուն տալը : խթ . 2 :
յորսայսել : զերդեայիլ ձգել : լդ . 2 :
յուռթի : առատ , լիով : կդ . 4 :
յուռութք . ( յուռթից : ) կախարդական , կամ կախարդութեան համ_
մայեկել : կդ . 4 : հէ . 12 :
յուսահատախինդ : խիստ տխրած : փոքր մեռնել : խէ . 3 :
յուսախաբեան : խիստ խաբող կամ կակծացող . Ճանապարհ էակէն : Ճերմակը
ակլէն : խէ . 2 :
յուսահատութք : շատ կերող : չոք թիւպելու : լը . 1 :
յուռնանք : շատանալը , շատեր : չոքեալ : ը . 1 :
յուշորէն : կերան կերող : թիւրաբ թիւրաբ . ( յիշատակարան : )
յօդ : անդամներուն խառնը : ջրաղ : լդ . 2 : խդ . 2 :
յօդառարութեան : մարմնին ունենալով : լը . 5 :
յօդառարական : խօսք կամ ըմբռնում կապող : ը . 1 :
յօդել : միացնել : ակնածիլ : կ . 3 : կամ , խօսք ակնածէշ ընել :
է . 4 :
յօդուած : կապ : խդ . 3 : կամ . խօսքին կապը , ակնածէնը : ծա . 1 :
դ . 1 :
յօնք : ընքվի : գառշ : խն . 2 :
յօշատիլ : պատառ պատառ ընել : փառաչա փառաչա օրէնք : խն . 2 :
յօրինել : շինել , սարքել : ակնածէք . ապրինելթաց : լը . 4 :
Նախադրուած : առան փակը : Նախադրուած կողմը : առաջադրին փակը , ջր
բերանը , կամ ընդունին մէջը , կամ առաւտինքը : խդ . 3 :
Նախաընթացութեան : առաջնոյ իմանցնել : էականն ակնածէնք :
դը . 8 :
Նախակարապետ : առաջնոյ թագած : խէ . 3 :
Նախասահմանեալք : առաջին մեղաւորները : էակէլեր կեանական : հթ . 3 :
Նախանշանք : մեկալ առաջինները : դոյլը էակէլեր : դ . 3 :
Նախընթացութիւն : առաջնորդ կամ դրան ըլլալը : դը . 8 :
Նահանջ : գառառ : ալյակէթ : լէ :
Նամակ : թուղթ : բարեկարգիր : մեծարեալ , նամէ : հը . 3 :
Նաւթիլ : փուշ : Ֆանֆ : ծա . 1 :
Նաշխհ : շարադրութեան արուար : ավետիս ունեն : դը . 8 :
Նաւակատիք : ուրախութեան օր : առաջնորդն : դա . 1 :
Նաւուղեր : խաղաղութեան , կամ ակնածէնք : խէ . 2 :
Նարդոս : ծաղիկ է . Նարդոսին կամ նեղունին : դը . 11 :
Ներքնոց : գոմէշ : մեծ : հէ . 6 :
Ներգեւեալ : ուժէ ընկած , անճար կամ խեղճ դարձած : խա . 2 :
Ներդագործել : բան մը ընել : ալիր իշ էթմէք : լէ . 1 :
Ներքութիւն : Ներունդ , թագաւութիւն : աՖՖ : ժը . 1 :

քո ճառագայթ՝ ամենեւին բարերարութիւն, զի ընկա-
լեալ զօրհնութիւն քո տէր, արդարացայց կեցից և
մաքուր եղէց 13 յանստեղծիցն քո՝ խմոց լլկողաց։
Ունիմ համարձակութիւն զմեղապարտ 14 ձեռնս
հաստատուած առ քեզ տարածանել, մինչև մատուս-
ցես զօրհնեալդ քո զաջ՝ ՚ի նորոգութիւն դատապար-
տելոյս։ Արդ՝ յաղթեալ վերստին իմում յամառու-
թեան՝ քոյին հեզութեամբդ առ իս ժամանեալ մարդասի-
րապէս. և զամենայնին յամենայնի ամենայնիւ քո
կարողութեամբդ, 15 զառաջին չարիմն՝ միջնավքն և վերջ-
նականօքն թող ինձ հնարաւոր անհասից՝ քո Թագա-
ւոր լուսոյն արդարոց։

Դ. Զեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի
16 փտատակար եմ բարեգործիդ՝ մահու հարուածոց։
Առ կնիքն, առ շնորհն, առ փչումն, առ պարգեւն,
առ աւանդն, առ ձիրն, առ անունն, առ որդեգրու-
թիւնն, առ պատիւն արքայական, առ պատկերն,
առ դրոշմն, առ օծումն, առ ճոխութիւնն, առ հա-
մարձակութիւնն, առ ընտանութիւն, առ կեանսն,
առ լոյսն, առ երանութիւն, առ յոյսն, առ փառսն,
առ անխոնարհելի բարձրութիւն, առ պսակն անկապ-
տելի, առ խոստմունսն ծածկեցելոցն, որ քեւ՝ տէր
քո, բազմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս՝ իժիս
և քարբիս՝ 17 ունկնախից և լսելափակ անլուր ական-
ջացս. որ միշտ յառաւելութեան քումդ բարութեան՝
յօքնապատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաղճա-
խեալ, իսպառ կործանեցին. մերժեալ ՚ի կենաց՝
ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականու-
թեան։ Այլ արդ՝ դու միայն իրաւակշիռ և ճշմարտա-
դատ բարերար՝ օրհնեալդ ՚ի գթութեան, մեղայ քեզ՝
անօրինեցայ՝ անիրաւեցայ. վասն որոյ և եղծայ՝ զեղ-
ծայ՝ յանցեայ՝ ամբարշտեցայ. և ոչ լուայ խոստա-
վանեալ և երկրպագեալ գովեալ քո բանիդ. որ 18
դու իսկ երեւեցար անճառելեաւ քո սիրովդ, զոր
գրելն իսկ մեծ է, և նշանակելն սարսափելի։ Ընդ
արդարութիւն և փառս և մշտնջենաւոր գովութիւն, և
ինձ պատկառեցելոյս ՚ի քէն խնամակալ, քաւութիւն
և ողորմութիւն և բժշկութիւն, օգնութիւն և պահպանու-

[illegible]

(1) [illegible]

(2) [illegible]

(3) [illegible] (Յ[illegible]. ա. 5. Ա. 11.) [illegible]

(4) [illegible] (Է. 5:) [illegible]

(5) [illegible] ([illegible] ԺԸ. 6:) [illegible]

(6) [illegible] ([illegible]. ԺԷ. 13.) [illegible] (Ա. Կոր. Է. 10:) [illegible]

[illegible]

(7) [illegible]

(8) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

(14) [illegible]

(15) [illegible]

չարութեան վերջին են, այսինքն ծանր և գժուարաբերձելի: Թող [illegible] զայս ամենայն ամենահնար զօրութիւն, զու որ թագաւոր ես բնութեան արարչաց, այսինքն արդարոց որք 'ի լոյս են, մեղաւորութեան աղաւթաւորացեալք, կամ ըստ առաւելութիւն աղօթարոց:

(16) Վնասակար են: Վնասաբերաբար, կամ աղաղակատոր իմ մահաբեր հարուածոց և չարչարանաց բարեկարգելութիւն. կամ ըստ Եա, մահու արժանի յանցաւոր իմ առ բարեկարգութիւն. եւ զի յանցաւոր իմ առ Տէր մեղաւորութեան, և յայլոց որ 'ի կարգելոյ յիշատակին, և ամենայնին են աղերսանք մեղաւորութեան թէ այժմ, և թէ 'ի հանդերձեալն: առ [illegible] կան, արդ յանցաւոր լինիմ չար վարուք:

(17) Ոտնհարեալց [illegible]: Խայծեալ [illegible], և փախեալ առ [illegible] թեն. երկրորդն և [illegible]: Որ [illegible] բարութիւն [illegible]:

(18) Դու խոյ երկնեցար: Կամ [illegible] երկնաւոր յաղթանակ [illegible], և կամ [illegible] երկնաւոր առ [illegible], որպէս [illegible] 'ի բանն. Ե. ըծ. 10. և խէ. ըծ. 16:

---

Սերովբէն յաւելուած կրկին հեծութեան՝ նորին հոլովոյ, առ նոյն ողբս մաղթանաց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ:

# ԲԱՆ. ԾԱ.

ա. Եւ արդ՝ առ երկրածին ողբ [1] պաղատեցայց այլս մահացու ամենապատիր, [2] եթէ ընդունայն է աղաղակելն. առ մահկանացու բանական, եթէ սնոտի իցէ փրկութիւն առ յուսոյն վստահութի. [3] առ մարդ ողբ եղծական, եթէ ընդ տկարութեան բանին՝ և նմանիր է զօրութիւն. [4] առ իշխանս երկրաւոր գահից, եթէ անցաւոր [5] է ընդ ինքեանս և իւրեանցն բարութի. առ եղբայր ողբ հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անձինն անգորրութի. առ հայրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուազութեան. առ մայրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեան. առ թագաւորութիւս աշխարհի արդեօք, [6] որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն, քան զկենագործելն. այլ առ քեզ՝ բարերար Ած օրհնեալ 'ի բարձունս, որ կենդանի ես՝ և զկենդանութի տաս ամենայնի. որ և յետ վախճանելոյն զօրէս անեղծապէս նորոգել:

բ. Որ եթէ փախնումք 'ի քէն, դու զկնի ընթա-

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ ԱՇԽԱՐՀԻՆ
Կարգ[illegible]

նաս. Եթէ տկարանամք, զօրացուցանես. Եթէ վիրա-
ւորիմք, շաւիղ դիւրութեան ուղղես. Եթէ պատկա-
ռեմք, քաջալերես. Եթէ ախտանամք յանձն և 'ի
մարմին, բժշկես. Եթէ դարշանամք մեղօք, մաքրես.
7 Եթէ ստեմք, քո ճշմարտութբ արդարացուցանես.
Եթէ յանդունդս ներքինս սուզեալ գլորիցիմք, յեր-
կինս ցուցանես. Եթէ 'ի կամաց մերոց ձչ դառնամք,
դու դարձուցանես. 8 Եթէ մեղանչեմք, ողբաս. Եթէ
արդարանամք, ժպտիս. Եթէ օտարանամք, սգաս.
Եթէ մերձենամք, տօնես. Եթէ տամք, ընդունիս.
Եթէ յամրանամք, երկայնամտես. Եթէ մեք ժխտեմք,
դու առատապէս շնորհեալ ընձեռես. Եթէ լքանիմք,
տրտմիս. Եթէ արիանամք, խնդաս:

Գ. Որպէս 9 հարիւրորդ երկրորդ սաղմոսն օրհնա-
բան հրաշաւորական՝ զվհատելոյս զսիրտ ափոփէ, և
մեծ յոյս կենաց աւետարանէ առ փրկութեան համ-
դէպ. որ յաղթական է դիւաց, և տարակոյս բան-
սարկուին. որ իբր զխաչին տէրունի նշան բարեբաստ-
պանծալի սքանչելափառ՝ անխոնարհելի բարձրութեան
լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեան՝ կանգնեալ
է ախոյեան անվանական և անշարժական՝ ամենայ-
նիւ յաւիտենական՝ ընդդէմ անբարի բարուց բռնու-
թեան բելիարայ. որ ունի յինքեան զանձս հոգևոր
օգտից գիտողաց մտաց՝ ընծայեալս զպարգեւսն մա-
հու և զլուծումն մեղաց, և յոյս կրկին՝ յերկուս
յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութեան
արդարոցն, կամանս բարեհրաւէրս և կենդանա-
տուրս՝ գրեալս հոգւոյն այ. որպէս ամենայն իսկ
երգ սաղմոսացն՝ մաքուր սրտից է տեսանելի՝ կտակ
կենաց մարդկան նկարեալ:

Դ. Ոչ թէ 'ի նախնումն 10 տկար կերպարանն՝ զայս
աւետիս և վստահութիւն ընդգծեալ ունէր՝ կարծա-
ման մահու նախաժամման մեծ աւետագիր՝ և կեանս
երկնակրօնս վերնակենցաղս՝ միշտ անճառելիս. և
այն՝ Ընչական գիրն, և յեղանակաւոր օրինակն, և
պաշտօնն դատապարտիչ վհատութեան յանցաւորացն,
և խափանելի կտակն երկրային, և տկար հաշտարա-
րութիւն միջնորդացն, և թերութիւն բանից մաղթո-
ղացն: Որ զի թէ մնանալի փրկութեան խոստովանե-

լի է, անտուստ վկայեալ յետ այնքանեաց մեղանաց
անբժշկականաց. որ արեամբն արդարոց եւեթ զնուէ-
րեալն մեծի թագաւորին հրաշափառն քաղաք Հայրե-
նի, ըստ մարգարէագիր անսուտ պատմութենն. որ
և 11 զմեծն իսկ տեսանողաց՝ բազմերախտիս ձեռն-
կալութեն խնամողորէնն պաշտպանութեն նախնականերա
յարկին տեսչութեն, մանկավարժ ինքեան և նախնի,
մեքենայիւ մահու սղոցեաց. 'ի յերկուս մասունս
խզեալ՝ դժնդակ տանջանօք մաշեաց իբր խորհրդով
ապատամբութեն՝ գլխաւորն փրկանակ կտրեալ: Նա-
տրով զչար յաւելուածն մոլեգնականն՝ 12 զքրէականն
վերնամարտութիւն 'ի բարձրեալն յանդգնութիւն.
քանզի ոչ պատկառեաց երբէք զստեղծողին պատիւ
և 13 զանուն՝ յիւրաքնակ խորանէն մերժել. հալա-
ծեալ զնա հօգին, բեկիարայ զանձն դաւանեաց:
Նանզի զնոյն տաճար տիրական՝ խնկարկութեան
հաստողին սահման՝ հուշակաւորն երկրի տեսարան՝
զսարսափելին ազանց սրբարան, ուր տեսիլք հրեշ-
տակականք և մծային հրամանք յաղթողականք՝ լու-
սաւորապէս յայտնութեամբ ազդեալ երևէին, զայն
վայր երկնանման ահաւոր սքանչելատես՝ 14 քեանց
ումեմն քառադիմակի նախանձարկու պատկերի աւե-
րածոյն անապատի՝ պաշտօնեատեղ դարշելի և դիւա-
ձնեձեր զոհարան պատրաստեալ կազմեաց: Օրկեալ
զարքայն երկնաւոր 'ի յարքայականն կայից, զամե-
նահարուստն՝ ունայն 'ի ստացուածոց իւրոց, զտա-
նուտէրն՝ անհանգիստ և թափառական տատանեալ:
15 Բէհեղցեբուղայ ձեռուն նկարեալ, և զանուննն ա-
հեղ վտարանդի արարեալ. գերի տարեալ զաւանդ-
գովելոյն, ողբալի՝ զողորմածին մասն նուաղեցու-
ցեալ. աղաւեսուն փոքու ապարանք զարահն լուսոյ
կարգեալ, և բնաւից ունողին՝ և ոչ գլխոյն տաղա-
ւար 16 յիւրայնոցն եդեալ. հատեալ զցանկ հզօրին,
բախտից հմայից՝ զսեղանն մեծախորհուրդ արեանն
սրսկման՝ երևեցուցեալ: Լայնեալ հեսս բազուամ
ընթացելոց 'ի գայթակղութ. հովիւ կորստեան հօտին
սատակման. մոլորութե բուռն վարդապետ. և 17 այն՝
զխոտուն կրօնիցն օրինաց, հայր ունելով զմեծն եղե-
կիա՝ զնմանակիցն դաւթի:

Ե. Այնքան ստացեալ զանձամբն չարեաց, որ և զքոյ
պատիւն՝ որ զարքայութեան փառս ընծայեաց նմա,
հայհոյեալ և թշնամանեալ, և [18] զաղօթկերացն բազ-
մութիւն սուսերաւ մահու խողխողեալ։ Ընտանիք զա-
ւաձանն. մերձաւոր վատնիչ. հարազատ սատակիչ.
կցորդակից սպանող։ Առ ած ոչ կայր դառնալ, զի
ուրացեալ էր զնա. զաբրահամ ոչ էր յիշել, զի
խորթացեալ էր 'ի նմանէ. իսահակաւ ոչ էր աղօ-
թել, զի նզովեալ էր 'ի նմանէ. իսրայէլիւ ոչ էր
պարծել, [19] զի տարագիր էր անուան կոչմանն մեծա-
խորհրդին շնորհի. զդաւթեան երգ ոչ էր նուագել,
զի կշտամբիչ էր նորին. [20] 'ի քաւարանն ոչ էր մեր-
ձենալ, զի պղծեալ էր զնա. 'ի տապանակն ուխտա-
գրին ոչ էր ապաւինել, զի ընդ դարշուն ձուլածոյն
էր փոխանակեալ. առ մովսէս ոչ էր կարդալ, զի
անքաւելի էր պարտիքն որ առ նա. առ ահարոն ոչ
կայր աղաչել, զի հակառակորդ էր առ նա. առ մեր-
ձաւոր մարգարէիցն դասուն ոչ էր դիմել, զի սպա-
նող էր նոցա։ Այս նորա քաւութիւն մեղաց, և ար-
քայութեան թագաւորութեան վերստին պարգևեալ տուաւ.
զի քեզ բարերար՝ բազմացուցես կարգեսցես զո-
վեսս անձառս և անլռելիս 'ի յաւէժս տօնմից և 'ի
դարս ժամանակաց. և զդաւանեալ յաւուրն մտից անփո-
խելի պահեսցես՝ 'ի փառս քոյդ բարձրութեան և 'ի փր-
կութիւն զատապարտելոյս, անմահութեան պարգևաց
տուիչ քն, գովեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Պօղօփէօյյ: 3 օրին. պօղօփէօյ. և կարէ յարմարիլ յիմաստս կարգի բանիցս. խօր սակէլ. Եւ արդ միթէ առ երկրածին դը պողոտան-ցայ մինչև ցայժմ, միթէ առ մեծըդ, միթէ առ իշխանս, միթէ առ ծնօղս են, ոչ բնաւ. այլ առ փէղ պողոտանցայ բարերարն տէր օրհնեալ են։
(2) Եփէ ընդունայն է։ 'Ի տառադարձեցելումն նախ քան զայս՝ զդողկալով Եփէ յարեցաք 'ի վերջ յառաջընթացոյ բանին, զինելով, առ Երէկածին ով Եփէ, ընդունայն է. առ ձանկանացն բանական Եփէ, սոսկ ինչէ երէկածին են. խօր սակէլ, եթէ առ երկրածին դը կամ առ մահկանացու պողոտանցայց, ընդունայն է են։ Այսպէս եդաք յայնժամ ըստ օրինակին տպելոյ 'ի կոստանդնուպօլիս, յամին 1774. ուր և Յառաջաբանն այդ. առնէ՝ նոյնպէս գտեալ յօրինակ օրինակս։ Սակայն ըստ արուամ կարգածէաք խոկ յայնժամ, և ակնարկեցաք 'ի լուծմունսն՝ ոչ միայն անտանելի լինել այդմ ձևոյ, այլև զի մեր ընթերց օրինակին կիրառ գրութանէ յանցեալցն բա-նէն, ընդ յանձրոդին յարելով, Եփէ ընդունայն է, Եփէ սոսկ ինչէ են։ Այ-ըին վասն նորոգ եա հաղցատերականեալ զայլ եա օրինակս, առեալ զի բա-

զուարճ ընդ յաղթողին ընթեռնլով զերգն, յաւելլուն և նշան հաղթականն՝ երգել ՚ի ձև [illegible]․ զայն՝ զոր և սոսա յետոյին քանին յայտ առնել [illegible] շաղկապաւն․ առ [illegible] ատրդեօք, որք զնահատուցանելեն եւն․ զնոյն մեսա ցուցանէ և մերձագոյն առնելն, եթէ [illegible] ։ Որսոյն ըստ այսմ ընթերցուածոց ըննի նոյն ձև քանի՝ զոր և յայլ աղօթս ՚ի կիր առնու [illegible] վերտառութեան, որպէս ՚ի Եզ․ 1․ և Եր․ 1 ։ Եւ շաղկապն եթէ խաձանի իւր [illegible] ․ ռամկ․ [illegible] ․ իսկ ըն մէջ ընթերցուածին նշանակէ իւր թէական, ( ռամկ․ եթէ ։ )

(3) Առ ձայնը օգ ։ Խնդրելի է դրոշմումն երկոց բանիցն՝ յորս առնէ, որպէս առ [illegible], կամ առ [illegible], կամ առ [illegible] ։ Թուի [illegible] ընդհանուր կոչել զնր և է ձեռնտուու, թէ ձայնդ իցէ, թէ այլ կենդանի զօրաւոր․ և առնելոյն առ այնդակին առնէ՝ ընդունելոյն է ադողաբերելն, վասն զի կամ չկանխեալ [illegible], կամ չունի կարծեցուցանեն ։ Եւ [illegible] առանձինն խաձանի աղօ բանաւոր, [illegible], բանականն․ բայց և ՚ի անձանէ առեալ է առնէ՝ մերձաւորն, զի ոչ կարէ բանաւորն [illegible] ։ Իսկ ձայնդ [illegible] առանձինն զձայն զօրաւոր, ոսկեղ, քաղցրաձեռն, բայց և նորա զօրութենն այնպէս նմանի է առնէ՝ որպէս և բանն անկար ։ Այսու առ մ՛ որ յայտնագիտաւորաց աղօթքայ կմ՛ աղօթագործիցեմ առնէ․ որոշեւ կամ՛ անկարելի է, կամ՛ չգիտէ անմարմին աղօթագործուցանել, կամ՛ չկարէ հանել ՚ի վերայ ։

(4) Առ Յեղանակս Երկրաւոր ։ Մինչ [illegible] առ երկրաւոր իշխանս աղօթել, որք թէ և կարօղք իցեն, սակայն որպէս [illegible] և [illegible] իշխանութիւնս անցաւորք են, նոյնպէս և բարերարութիւն նոցա կամ՛ [illegible] անցանէ, զաղաղէ կամ՛ ժամանակաւ, կամ՛ փոփոխելով կամացն ։

(5) Առ Եղբայր օգ ։ ՚Ի յաւել բերէ զօգնականութեան՝ որ ՚ի [illegible] ընտանեացն յուսալի թուիցի ։ Մինչ առնէ՝ առ հարազատ եղբայր իւր աղօթականեալ, որ թէև կամիցի յետ զերադին, բայց կարօտ է գուցէ և նա [illegible], յետ [illegible], և յետէն թերեւս կամի զսանձել օգնել է ։ Մինչ առ հօրէն իմ երկրաւոր աղօթականեալ, թէ գուցէ առաւելք [illegible] հօրն նորա առ իւ՝ [illegible] իցեն [illegible] կենաց․ կամ՛ մինչ առ ձայն իմ ըստ [illegible], թէ առաւելք [illegible] գութք նորա ՚ի [illegible] կենաց նորա ։ Լաւագոյն [illegible] կաց ՚ի բանիս, զի հօրն զնուաղութեան միայն առաջով խնամոց և ստուգոյ, իսկ մօրն՝ [illegible] գթոց և կենաց, թուի զենուցանել թէ ՚ի զղջել աղօթիցս [illegible] էր մայր նորա, իսկ հայրն ատեալ կենդանի կոչք հինաւուրց ծերութեամբ պատկեալ ։

(6) Որք զմահացուցանէին ձեր ։ Մինչ առ թագաւորութիւնս [illegible] աղօթականեալ առնէ, որք առ յանցաւորս՝ ձեր, այսինքն առաջնորդ [illegible] ՚ի կիր արկանելն, [illegible] առնն, քան թէ նորին և [illegible] ՚ի կեանս նոցա ։ Կամ՛, ընդհանուր են առաւել, Տէրն է թէ երկրագոյն թագաւորն կարէ միայն բանիւ [illegible] [illegible], այլ ոչ [illegible] կենդանացուցանել․ մահու անձն իշխանութիւն, այլ ոչ կենաց [illegible]․ կարող է [illegible], այլ ոչ [illegible] ՚ի կեանս կոչել ։

(7) Եթէ ոգէնք, ի Յիմարփոխելոց [illegible] ։ [illegible] զքո Տէրութեան [illegible], [illegible] ՚ի [illegible] ։ Այսպէս ՚ի սոսկն [illegible] թէ ոչ Տանջէիմ զլն, հայեցաւ ՚ի նա յն, և [illegible] ընդ որ՝ [illegible] զՏէրութեանն և [illegible] ։ Բայց 2․ [illegible], եթէ ոգէնք ի Յիմարփոխելոց, այսինքն եթէ [illegible] ՚ի քո Տէրութեանդ, զու [illegible] [illegible]․ որպէս աղօթսի սոսոր,

[illegible]

(8) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

նայ: Բայց մեզ առաւել հաւանելի է ասել, թէ 'ի յաշխարհ [illegible] [illegible] ... [illegible]

(11) [illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

(14) [illegible] ... 16 ... 26 ... 17 ... 10 ... 5 ... [illegible]

[illegible] 'ի [illegible] . [illegible] ( Ա. Թագ. ԻԲ. 32. 37: ԻԴ. 9. 18: և Ա. Մնաց. ԻԳ. 22: ) և [illegible] . ( ԼԲ. 34: ) [illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible]

(18) [illegible]

(19) Զի [illegible] էր : Ոչ կարէր ասել՝ [illegible]

(20) 'Ի [illegible] : 'Ի տաճարին՝ որ էր [illegible] : 'Ի [illegible]

---

Մերարին յաւելուած կրկին հեծութեն՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոց մաղթանաց բանի :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ. ԾԲ.

Ա. Օրհնեալ տիրաբար 'ի քում էութեն, անսահմանելի և անփոփոխադրելի. իսկապէս բարի, [1] պաշտօն խնկելի, և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի. [2] երկայն յուսոյ ամենապատրաստ տեսութիւն. գթած ողորմած, որ ոչ պահես ոխս բարկութեան ամաց մեղանաց՝ քթթել մի ական.

որ հրաշալուրս զարմանալիս՝ գեր քան զամենայն ա-
ղինս նախնեացն՝ անսահման առաւելութբ՝ [3] կրկին
ընդ միոյ հաճեցար հեղուլ զողորմութե վերնահոս
վտակս ամենախնկաւորս 'ի շնորհաբաշխութեն նո-
րում: Այլ [4] զանտռուստ զմուտս լուսաւորանի պատու-
հանին անձկութե նշուլիցն աղօտականաց, չափով
գիտութեցն ըստ տողումնի, և իւր իսկ նմին, և ինձ
ընդ նորին՝ բացեր ընդարձակեցեր թշուառացելումս
զառապաստն անջրպետարան ելիցն ողորմութե՝ ձրից
պարգևացն ծածկանաց. [5] զոր ընդ մէջ իմն մանա-
ւորօք աւետաւոր յիշատակաց և 'ի հնումն զայսր
տպաւորութի օրինակաւ նկարագրեր, զդարձարձուքն
առ իս, և ես դառնամ առ ձեզ. և յորժամ դարձ-
ցիս և հառաչեսցես, յայնժամ կեցցես: Նաղի և [6]
զաղջամղջին սևութի գունոյն՝ փոխարկել 'ի ձեան
պայծառութի, և զարանցն արեամբ ներկելոցն՝ յե-
ղանակել 'ի պատահումն գեղման, ըստ եսայեայ և
զաքարիայ. և 'ի մէջ բարկութեն՝ դարձեալ [7] զդյզ
զողորմութի. քանզի անապատանալ քաղաքացն խա-
րայելի, և [8] դարձեալ բնակիլ. և Ճանապարհացն
ամայի լինել 'ի չգոյէ մարդկան, և [9] անդրէն հետե-
ւիլ. և լքանիլ 'ի սովայն ոգւով, և դարձեալ զօրա-
նալ ձեռամբ. և գնալ այ 'ի տեղի իւր զայրացմամբ,
և դառնալ ողորմութբ. [10] ըստ ներողութե՝ զելան,
և 'ի մէջ սաստիցն սպառնալեացն՝ կրկին պաշտպա-
նութի, և 'ի սրտին խռովութե՝ յուզումն խնամոց
գթութե: Այս մարգարէիցն ձայն խնկելի, որ [11] զօրհ-
նեալդ քո գալստեան զազատարարդ հրաման կան-
խաւ ազդէին:

Ժ. Այլ զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ-
արկանել վասն անբաւութե, փոքունք են և նուա-
զունք օրինակք և նմանութիք, [12] հինք և ժամանա-
կաւորք՝ առ աւետեացդ քո յայտնութի, և խաչիդ
փրկագործութիւն: Որ յամենայն վայրի կառուցեր
զխորանն վկայութե արեան քո ուխտի, որք մեծա-
բարբառ միշտ աղաղակեն՝ [13] քան զդատակնիք մա-
հուն հաբելի՝ զյաղթանակ բարեաց քումդ հանդի-
սի, կեանս կրկինս և անմահականս՝ շնորհաց, մկըր-
տութե, յարութե, նորոգութե, առ քեզ ընտա-

նութեան, ընդ հոգւոյդ սրբոյ միութեան, քաւութեան, ազա-
տութեան, լուսաւորութեան, մշտնջենաւոր մաքրութեան,
իսկապէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան,
անկապուտ փառաց, [14] 'ի շրթունս մեր ձայնիւ բարձ-
րելոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Այլ զոր ահա-
ւորն է ասել, կարգեմ աստանօր՝ յիշատակ եդեալ
մեծիդ երախտեաց, [15] ա՛ծ իսկ լինել ընտրութեամբ շնոր-
հին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ
ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ. զոր
կատարեալն երջանիկ խոստմամբն, ըստ պօղոսի բա-
նին, ոչ ունէր օրէնն։ Բայց դու փրկութիւն, եկիր
հայրենիդ քո հարստութեամբ, արարեր և կատարեցեր [16]
զյուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պահեալ
անհամեմատօտելի՝ քաւիչ ամենայնի։ Այլ քեզ փառք
ընդ հօր քում 'ի գովեստ բարեբանութեան հոգւոյդ
քո սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Պարզեա խնկէլի։ Արժանի պաշտամանն խնկոց, այսինքն [illegible] պաշտամանն։ [illegible], երանութեան զոր ամենայն երկիր պաշտէ [illegible] վայելել. կամ, բարեբաստութեան, [illegible] մեր [illegible]։

(2) Եւ[illegible] յաւելոյ։ [illegible] յաւելոյն [illegible]՝ [illegible], ամենեցուն, կամ [illegible] և [illegible], կամ [illegible]։ [illegible], որ ոչ պահես [illegible], 'ի վերայ [illegible] մեղաց մերոց՝ և ոչ [illegible], և ոչ [illegible]. թէպէտ և մեղքն [illegible] իցեն, և [illegible] գործեալ, այլ գթութեան քո ոչ [illegible] պահել [illegible]. [illegible], [illegible], [illegible]։ [illegible], և ոչ յաւի-տեան պահէ [illegible], խնամել՝ ոչ [illegible]։

(3) Կրէլն ընդ [illegible]։ 'Ի նոր շնորհապաշտութեան՝ փոխանակ միոյ խոստ-ման կամ բարւոյ հին օրինացն՝ կրկին պարգեւեցեր. զի այն՝ մարմնաւոր բարիս խոստանայր, կամ լոկ թողութիւն մեղաց. իսկ նորս՝ որդեգրութիւն շնորհաց և երանութեան փառաց, և որ [illegible] [illegible], [illegible] թէ [illegible] նա-հատակաց, [illegible] Այլ [illegible] [illegible]։

(4) Զ[illegible]։ Զայնս հին օրինաց [illegible] լուսաւորութեան՝ ընդ [illegible] [illegible], այսինքն [illegible], [illegible] և [illegible] նոր օրինացս, [illegible]։ Այլ [illegible] [illegible]. [illegible] Ժ. 3. * [illegible] ընդ [illegible]։ || Բայց [illegible] այլ [illegible] 'ի [illegible]. [illegible]. զի 'ի [illegible] [illegible]. (Կ. Թագ. Է. 4.) ընդ [illegible], և [illegible] նոր օրինացս։ Երկրորդն [illegible] [illegible]. Է. 9. * Յաւելեալ ընդ [illegible]. || [illegible] 'ի [illegible]. (երես 49.) [illegible] 'ի վերայ [illegible]. և ասէ. * այսինքն թէ [illegible] 'ի մեզ

նշանակեայ ։ Այսմ յարմարական յաւելում բանիցն . զի ասէ՝ Թէ բանիւք մարգարէից ըստ մտացն յայտնելով զշնորհաբաշխութիւն նորա օրհնութեան , Իւր իւր նմա , ճնշեալն առաջնորդք , և ճիգ ընդ նմին՝ բարձեր զաւազանն կամ զպատուհասն անհրաժեշտական , որ անհրաժեշտական կամ առակելոյ փոխ ա-
զատութեան ծառայութեան պարզեւսց ։

(5) Զոր ընդ մեզ իմն ։ Զոր միջնորդութիւն , կամ 'ի ձեռն մանաւանդ ա-
ւետաւոր յիշատակաց , բանից ։ կամ ընդ մեզ իմն , այսինքն , կենդանաբար մաւանաւոր բանիւք աւետեաց՝ զխնամութիւն այսր շնորհաց նկարագրեր . նկարագրեալք , ծանուցեր ասելով ։ Դարձուցաւ առ իս , ևն ։ ( Զա-
քար . ա . 3 . Մաղաք . գ . 7 ։ ) Եւ թէ Յարժամ դարձցիս , ևն ։
( Երեմ . ե . 15 ։ )

(6) Զաղխմղխելն առաջին ։ Ըստ Եսայ . ( ա . 18 ։ ) և զայրանցն արեանց . զարիւնահեղեցն կարգախութիւն , յեղանակել , փոխանակ յառաջ առեալ ։ ( Եսայ . անդ ։ ) Իսկ զօդաջրեայ ասելն՝ է բանն ( Դղ . Թ . 7 . ) ° Եւ բազ-
մաց զարիւն նոցա 'ի բերանոյ նոցա , և զպղծութիւնս նոցա 'ի միջոյ ատամանց նոցա . և մնասցեն և նոքա մեզ միջոյ ։ ||

(7) Զույժ զողորմութեան ։ Զօրութիւն խմմ յիշել . ( առակաց . գ . 2 ։ )

(8) Դուրջեան բնակիլ ։ Լնուլ բնակչօք , չէին լինել ։ ( Եսայ . խզ . 26 ։ )

(9) Անտրէն հեփնիւ . այսինքն անցանել ընդ այն անցաւորաց ։

(10) Ըստ ներողութեան ։ ըստ թոյլ տալոյն , կամ յետս չընդունելոյն՝ մեղան , զհնարս , կամ զօգնականութեան ։

(11) Զօրծնեայ փո գալստեան ։ Սկսեալ 'ի բանէն , ոս զի և զաղխմղխելն առաջին , մինչև յայն , Այս ժողովրդեան յոյն , զեն կատարելութեան ա-
նձին , կոչ ասել ։ Այն զի զանազանեալն առաքելականութեանն , և զարիւ-
նահեղեան յառաջադոյն փոխանակ , 'ի բազմութեան զողորմութեան մերոց , անհամապատասխանել բազմօրէն՝ և զաղձեալ չէին լինելն , և այլ հետևեալքն , որս ասեմ՝ նոյն ձայնիւ մարգարէից թէպէտ առ անցեալն նշանակեն զխնամս եւ առ խորայել , բայց խորհրդաբար զքո գալստեան շնորհա-
բաշխութեան ծառայեաց ։ Կամ բացատրելով ըստ կարգի շարադրութեան՝ խմանալի է ։ Այս ասեմ է անորոշելի ձայն մարգարէին , որք այսպէս կանխաւ ծառայեցին զպատուհասք զօրութեան քո գալստեան յայտնաբար ։ Սակայն այլաբար յարմարականն խմաստք անդ ըստ ըստ օրի-
նակի , որ զասելն , Այս յոյն ժողովրդ , 'ի զգեստ սկսանեն , և յառաջ 'ի յաւելուածն , և զոր մի ծանիր , ևն . և խմանեն այսպէս ։ Այս ձայնիւ մար-
գարէից՝ որք զքո գալստեան շնորհեաց ծառայեցին , և զոր , այսինքն զոր և զանազանութեանց շնորհս չէ հնար բանիւ թուել , փոփոխ , փոխարէնք են այն բանք մարգարէից , օրհնակք միայն և նմանութիւնք՝ համեմատաբար առ յայտնութիւն աւետեաց քոց , և առ փրկագործութիւն խաչիդ ։ Այս շարք բանիցս առաւել յարմարագոյն թուին մեզ ։

(12) Հինգ և ժամանակաւորք ։ Բանք մարգարէից առ խորայել՝ հինգ են համեմատութիւն նոր աւետեացս . և ժամանակաւորք՝ զի զառժամանակեայս խոստանային , և առ ժամանակ մի . զի զարձեալ անհամապատասխան քաղաքք նոցա , և Յանձնառուք նոցա անկեալք զարձան , ևն ։

(13) Քան զյափշտակ ։ Քան զյափշտակութիւն մահուան հարկեալ՝ առաւել մե-
ծամեծոյն զօրէն խորհրդս արտեան քո , զոր յիմ անձնեալ ընդ սեպհական կառուցեր , և ոչ որոյ առ խորայելականն՝ 'ի միում քաղաքի եւեթ . և զօ-
րէն զյափշտակական բազմաց համբաւոյ շարաշարութեան քոց ։ Կենաց էրէն , զօրէն կամ խնդրելն ոչ մահ կամ պատուհաս , այլ կեանս կենաց շնոր-
հաց և փառաց , կամ մարմնաւոր և հոգևոր , կամ յետ կարասանելոյն միայն զառաւելին շնորհաց՝ զկեանս նորոգութեան . և այսպէս կենաց են՝ շնորհաց , ձրիաբար ևն ։ Շնորհ առաւել ընդ հանուր խմանել՝ ձրի առաւելութեան

կամ՝ պաղպաջեւ, եւ յաճախադէն են յարատեւութեամբ եւր մատամբք ասիր շնոր-հաց, այսինքն մեղմութեամբ, յարութեամբ, սրբեցութեամբ, առաքինութեամբ եւ այլն ։

(14) 'Ի շրթանս մեր յայնժամ քաղցրեսցի ։ Եթէ կեր առաջին երկու բանքն՝ յայնժամ քաղցրեսցի, Թուի խնամեալ զհրաշս մերոյն, որ է ձայն սրտանգետ մեղ 'ի քէն, առաւել նովաւ պարգեւօք զմեզ հոգւոյ, եւ հաշտեցուցանել ընդ աստուածոյ ։ Իսկ եթէ զբանն՝ քաղցրեսցի առաջինք բանքն հաշտեցուցիչ, պարգեւս զգեն 2 օրէն . բառ այսմ ասելն, 'Ի շրթանս մեր յայնժամ, խնամի ձայնասցոյ աղօթքն հաստատական պաշտամանն ։ Եւ զիմաստութեան բա-նիւն է, Թէ այնչափ ընտանեցաք ոչ, եւ կցորդք հրեշտակաց եղաք, մինչեւ պարգեւեալ խօսել ընդ քեզ, եւ հրեշտակօրէն միշնորդ հաշտութեան լինել Թէ՝ յերկիր, եւ Թէ յերկինս՝ բարեխօս լինելով վասն մարդկան ։ Եւ այս իսկ մի է 'ի զեղջաւորաց պարգեւացն՝ զոր 'ի շնոր արկանէր . ուստի բառ շարադրութեանն ասացեալ՝ բանից աղաւնիք, 'ի սնաւական հոգւոյ խնամեա-լք է՝ աղաւնեաց, նման այլոց բարեաց ։

(15) Ան իմ լինել ։ Եթէ բառ սաստկելական բանին (Ք. սերտ, ա. կ.) զերկմտական պարգեւեսցի ամենայն ընտրութեան լինելք հաստատաւորաց, առ մեզ ասէ՝ մեծ եւ եւ անհասալ երկրաւորք են՝ ոչ լոկ կցորդութեամբ շնորհի ամենայն, այլ խօսակցել երբեմն ընդ սերաբէից մշտնջենաւոր, աստուածական մար-մնոյն մաշտակականին, եւ նոյն աստուածն 'ի մի խառնեալ ընդ կենդանին բա-նում ։ Ըստ նորա մտաց, զարմանալի կատարելութեան եւ զկրթութեան խառնակցելոց շնորհացն եւ փառաց ոչ անեղք օրէնն մտաւորական բառ սաստկելոյն ։

( Եսայ. Է. 19 ։ )

(16) Զյանցանս յերկնաբնակաւն ։ Զերկնային անհնարութեան առաջադրոյն ա-սացեալ՝ զոր առ քեզ պարգեւեսցի անհասանելի, այսինքն սաստիկ հասա-նելոյ կամ Թուլանալոյ, կամ զոր զու լինի պարգեւեալ հաստատուն, անփոփոխ . երկեալ անձամբ պարգեւեալ եւ կատարելագործ հայրենի փո հաւաքումն, ճանաչութեան, լինելութեան, կամ հայրական երկնայնութեան . քանզի առ այսչափ մեծ շնորհատրութեան պարգեւեալ եթէ՝ ճանաչութեան ; եթէ երկնայնութեան ։

---

Սերտին յաւելուած նշէին հեծութիւն՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս ձաղկանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

# ԲԱՆ. ՂԲ.

ա. Տէր տէր զօրութեանց, բոլորից գոյից Թագաւոր, օրհնաբանեալ սրբութիւն, ձեռն ամե-նեցուն ։ Որ յաղթես սահմանի լայնատարած ընդ-արձակութեան. [1] անհնարին անբաւութեանց գոլ եւ որ-քանութիւն. մինչ զի կարծրին՝ [2] քեզ հաստատուն է, եւ [3] լոյծն՝ քեզ անդադարեալ, եւ չիք քո իր անհնարաւո-րական՝ յաղթօղ զօրութեան ահեղ. [4] հուրն՝ ցօղ իմն է զովական, եւ [5] անձրեւն՝ բոց կիզանողական ։ [6] Ո՛ քարին բաւես ցուցանել կերպարան տղմանն, եւ զբանա-կանն դնես անխօս եւ անշունչ արձան ։ Ո՛ պարտա-

ւորն ողոքեալ՝ պատուականն առնես, և զկարծե-
ցեալն մաքուր՝ իրաւամբք քննեալ գտանես։ 7 Զմա-
տուցեալն 'ի մահ՝ բերկրութ՟բ բարեաց արձակես, և
զամաչեցեալն՝ զուարթ տեսութ՟բ օծեալ՝ դարձու-
ցանես։ 8 Կանգնես զմատնեալն հաղբից գլորման, և
զսասանեալն՝ 'ի վստահութ՟ի վիմիդ հաստատես։ 9
Զախտացեալն բազմահաւատ՝ երջանիկ կարգես, և
զյառաջատեալն՝ դարձեալ անդրէն 'ի յետս նահան-
ջես։ Այլ յորժամ սպառին առ 'ի մէնջ բարիքն,
զառաւել զարմանալին յայնժամ ներգործես. քան-
զի վասն քո գիտես թողուլ զմեզ՝ և ջնջել զանօրէ-
նութիս, և քաւիչ լինել անիրաւութ՟եց՝ և զմեզս մեր
ոչ յիշատակել, ըստ եսայեայ և երեմիայ։

Բ. Այլ 10 առ շնորհ նորոգ փրկութ՟են բազմօք գո-
հաբանութ՟ք հետևեալ, 'ի յաճախութ՟ի անբաւիցն՝
լռեալ առ սմին իսկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ
զլուսոյդ անսպառ բարիսդ, որ 'ի քէն առ իս 11 յա-
մառս թշուառութ՟ի, քոյին աղերսիւ առ քեզ մաղ-
թեցից, յարմարեալ դարձեալ 'ի նիւթս բանիս ըղ-
տառ ողբերգութ՟ե այսր մատենի, լցից թախծութ՟բք
և հեծեծանօք։ Այլ առեալ խառնեցից 'ի տու-
ղիդ հաճութ՟ի, ընդ ցաւոցն՝ զդեղն, ընդ վհատու-
թ՟են՝ զխրախոյսն. ընդ յուսահատութ՟են՝ զյիշատակդ
անուանն հաստողիդ, ընդ տխրութ՟ես՝ զսփոփանսդ,
ընդ խմուման դառնութ՟ե՝ զքաղցրութ՟ի կենարարիդ, 12
ընդ պատիժ օրինին՝ զշնորհն, ընդ պարտս անիծիցն՝
զազատարար օրհնութ՟իդ, ընդ մարմնոյ մահուն՝ զա-
մենայնիւ նորոգութ՟իդ։

Գ. Աստուած հզօրիդ բանի, ուստի վկայեմ.
ըմբեր լռութ՟են սրտիս՝ տէր իմ, որ հնչումն է առ քեզ
մեծութ՟ե ձայնի երկար գոչելոյ։ Որ մարմնակից և
պատկերակից մեր եղեալ, և 13 քահանայապետայես
անօրինակդ՝ զօրինակին խորտակեալ զլուծ, ընդ
զենման մահու անասնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ
նուիրմամբ, անմահապէս միշտ մատուցանիս. և ան-
նուազաբար քաւութ՟ի շնորհես, ոչ սակաւամեղիցն
միայն, այլ և 14 որոց հատեալ է ակնկալութ՟ի առ-
ելս կենաց։ Զի 15 որքան զօրէ մարմնոց անդամոց
առ մեզս կենդանութ՟ի, թէ և բիւրուց ամաց ունի-

ցի յերկարաձգութենէ, յորժամ ած բոլորեցուն մը
տքին կամաւ և յօժարութե զենումն ընկալեալ, մա-
հու համբերես բաշխեալ 'ի քաւութի։ Զի ոչ եթէ
մաքրութենդ աղախնոյ՝ պարտական գոյ մահու յօրըստ-
օրէ կատարելն, այլ կամօք քովք՝ հոգւոյդ գոր-
ծակցութք, 'ի հաճութենէ հօր՝ և 'ի մեր հաշտութէ
ցանկ մատուցանիս։ Նաև եթէ ամենիցդ ած անքննին՝
16 իմաստս վասն իմ առ իմ փրկութի, 'ի դէմն իմ,
իբր թէ ընդ քոյդ էութեան ես իցեմ մարմնովն պա-
րունակողիդ կցորդ միացեալ. և դու բանբերար, յա-
ղագս իմ 'ի յիմն կերպի՝ փոխանակեալ ընդ իմում
պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ՝ զմահա-
պարտիս հատուց պատուհաս, և 'ի յիմ անուն յան-
ցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրի-
ցեմ, բաղդումն մեռեալ՝ և նմա կենդանի. ոչ ուրացո-
ղացն ձեռօք, այլ դաւանողացն հաւատովք ածապէս
նուիրեալ և 'ի մատուցմա անհատս բաշխեալ։
Է. Ակեր 17 ամն ողղքաւոր՝ չաւատալեացն պաշտօ-
նատար. մեծ խնձ և անկշռելի առ ամին դատեր՝ ան-
յարմարագիր անձին յուսադիր, հաւատամ զփառս
և զերջանկութի, քան թէ մարտիրոսութե խոկ՝ թող
թէ ուղղութե իմն թշուառութե 18 յանցաւոր մար-
մնոյ վախճան ընդունել։ Նաև 19 զանձառութի խոր-
հրդոյս՝ այսու դիտեցի. դաւանէր իսկոյն, որ զի և
մաքրոցն անձինք առանց նուիրման այսր յիշատակի՝
չե՛ն իսկապէս կատարեալք իսպառ, եթէ ոչ ընդ
այս հրաշակերտութիւն մեծութե հոգւով խառնես-
ցին։ Ապա թէ 20 մեղաւորիս մատին՝ կրկին մատու-
ցար բաժին առելով յուսայր, իբրև այն թէ ես լինէն
եղեր Ճշմարտիւ, գրաւեալ զիմն դաժանութի ընդ-
քում համեղութեան, պատարագեալ քոյինանիւթ
զանգուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ։ Այսու ամե-
նայնիւ 21 'ի վերնատանն նախանուէր բարեշնորհու-
թե անհնարաւոր ախտիցն Ճարակ՝ զմարմին և զա-
րիւն իւր բաշխեաց 'ի քաւութի, 'ի վեր կարծեցու-
ցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կա-
տարմամբ. 22 յուսոյս օրինակ յարգաւորութե գրել
զիս 'ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երևեցու-
ցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ,

որչափ անձականիդ առ մարդ գործութի. և տիրական անձախառն մարմնոյն կամաւորական նուիրումն առ անամանական սպանդին մատուցումն. և անմահն՝ առ մահկանացուս. լոյսն ահաւոր՝ առ տտուերայինս. յաւիտենականն՝ քան զանցաւորս. բարձրեալն՝ քան զերկրաւորս. անստեղծն՝ քան զեղականս. բարին իսկութեն՝ քան զթիւրեալս բնութեն. մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն. օրհնութեանն առիթ՝ քան զանիծիցս պատճառ։

Ն. Արդ՝ [23] տուր խոցելոյս ՚ի սիրտ և յոգի՝ աղաչեմ գթած, զառ ՚ի յերկնուստ ընծայեալ զդեղդ կենաց. մատիր քաղցրութ առ ախտացեալս մեղօք. քաւեալ ՚ի պարտեաց՝ ամենակատար բաւականութ։ Իսկ [24] առ ՚ի յինէն՝ այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բանի, որ զի հաստիչդ ամենից ՚ի մէջ բնակես. և ըստ տարագրու սերմանն՝ և հնձելն է իրաւացի, ըստ ճշմարիտ բանին պօղոսի, և աչացաւացն՝ ՚ի տապ արևու ոչ է զօրութի։ Այլ դու բարերար հաստիչ յոչէից՝ յարգես յաւէտ իսկապէս համայն և զդաւանելն զքեզ՝ բաւական առ կենդանութի. և ոչ ես ընդ առհմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խզես զկապ կանոնի, և [25] զմեղաւորս մեծաւ պայմանն աւետեաց՝ համօրէն յանցաւորաց տարակուսելոց։ Դու քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութի յաւիտեանս. ամէն։

---

(1) Ամենայն անբաւութենց։ Եթէ անբաւութի առցի փոխաբերաբար անբաւ կամ անհամեմատ իրաց, խնամոյքն են. իսկ իրաց՝ որք կամ մեզ անբաւ կարծեն, կամ յինքեանս հետ զինեալ կարեն յանբաւս ամէն ըստ թուոյ, ըստ մեծութեն և ըստ կատարելութեն, զորս նոյն՝ եթէ եղելոյն, և եթէ լինելոցն՝ զի և ոչ ունին, չափ կամ սահման։ Սակայն զբարձրագոյնութեն յայնժամ բանին կշռելով, ստուգել ընդունելի է անբաւութի խնամալ առաւելոր՝ անհնարութեն, անկարծելի կամ անհնարին իրք. որպէս և անբաւ նշանակէ ուրեք՝ անկարող, անհնար։ Վասն զի իբր մեկնողաբար ընդարձակելով զբառդ՝ յաւելու, մինչ զի կարծրին՝ ինչ հաստատ է, կամ լոյծն՝ ազնիւ, հուրն՝ ցող, անձրևն՝ բոց. և քեզ քո առն՝ իր անհնարանականն. և թէ այսպէս բառս ցուցանել խոստան են։ Այժմ [illegible] անհնարացից՝ որոց չէ բաւական պարագածական զօրութեան, զոր չափ են առն՝ և կանոն։

(2) Քէզ հաստատ։ Կարծրն՝ քեզ հեռուն լինի. որպէս ջուրն յապակուած լինելն, կամ ատեալ պարփակալքն երկբաղմի ինքնին հաւասար։

(3) Լոյծն. որպէս ջուրք կարմիր ծովուն առ մովսիսիւ, կամ յորդանան առ եղիսէիւ։

(4) Հուրն՝ ցօղ ։ որպէս 'ի հնոցին բաբելոնի ։

(5) Անձրևն՝ բոց ։ [illegible] ։ (Իմաստ․ ԺԶ․ 17․ 19։)

(6) Զքարն բանաւոր ։ [illegible] ։ (Ղուկ․ ԺԹ․ 40։) և [illegible] ։

(7) Զճամբորդեալն 'ի ձուկ ։ [illegible] ։ (Գործ․ ԺԶ․ 63։) [illegible] ։ (Գործ․ ԺԶ․ 11։) [illegible] ։ (Գործ․ ԺԶ․ 18։) [illegible] ։ (Գործ․ Ի․ 41։)

(8) Կանգնեա զմարմնեալն ։ [illegible] ('ի [illegible] ․ 13։ ԼԹ․ 3։ ՂԶ․ 18։)

(9) Զախորժեալն [illegible] ։ Որպէս [illegible] ։

(10) Ան [illegible] ։ [illegible] ։ 'Ի [illegible] ․ 2 օրէն ․ և 'ի հին [illegible] ։

(11) Յանձնառու [illegible] ։ այլ օրէն ․ [illegible] ։

(12) Ընդ պարին օրէնին ։ [illegible] ։

(13) Փառաւորեալ [illegible] ։ [illegible] ։

(14) Որոց հաղթեալ է ։ Ա [illegible] ։

(15) Որքան [illegible] ։ Զի [illegible] ։ Զի [illegible] ։

(16) Իմաստ ։ [illegible] ։ Ա [illegible]

[illegible]

(17) [illegible] ( [illegible] . [illegible] 27 . 149 . ) [illegible] ( [illegible] 153 . )

[illegible]

[illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

[illegible]

(20) Մեղուաբեր ծառն : [illegible]

(21) [illegible]

(22) [illegible]

(23) [illegible]

(24) [illegible]

հոգւոյ Սր. պատուիրապանքիդ ։ և ընդ հանրականն՝ աղաչանօք. որոց աչք հա-
ւատոյն ախտացեալ են աղխտութեամբ և մեղօք, ոչ զօրեն վայելել 'ի լուսաւո-
րութեան ամենայնի սիրոյդ, որ 'ի խորհուրդ պատարագիդ փայլէ ։ Եւ թէպէտ
պէս են օրէնք ամենաբարձեալ քո նախախնամութեանդ՝ ըստ արդարութեան
և ըստ վաստակոց մերոց մատուցանել զքո բարիսդ, աղաչեմ զքեզ բարե-
րար՝ աղօթից զօրով յօժարեա, բաշխել ամենայն առանց մեր արժանեաց
ներգործեա զքո բարիսդ, Ե. յուշեր, հանդերձեա շնորհաբաշխել զքեզ՝ բա-
րեկամս առ կենդանութեան հոգւոց. զի ոչ ես փափկեալ ընդ կամս. այլ
հաճոյից քոց բաշխել ամենայն յաղթեաս, և զորս առնես զօրհնեալ 'ի
բնականն և 'ի գերբնականս, և մինչ զնա մարդ քեզ կարեն անփո-
փոխ՝ յաւիտեան եմ յանդգնութեանց ։

(25) Դեռ մնոյն ճաշ. յայլ օրին. ընք մնոյն ։

---

Մերսինն յաւելուած հրէէն հեծանէ՝ նորին հօփոքէ, առ նոյն
աղէքս մաղթանաց բանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# Ի Ա. Կ. ԺԴ։

ա. Եւ արդ՝ յամենայնի առ ամենայն ակնկալութիւն քո է ողորմութիւն, [1] սկզբնաւորեալ աչաց տեսանելեաց և սրտի իմաստից Ձըս. քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն ։ Դարձ առ իս գթութեամբ, և հանդերձեցես [2] դառնալ ինձ առ քեզ կրկին բերկրութեամբ. զի առանց քոց կամաց՝ ոչ ունիմ լինել նորոգ փոփոխեալ. և եթէ ոչ կամք քո գթասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և [3] եթէ ոչ կառավարդ յարդարեսցես պատրաստել ինձ հետոյ ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վիհ է ինձ խորոց յաջմէ և յահեկէ ։

բ. Ահա ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս. ոչ պանծամ դարովլեալս. ոչ խորոխտանամ լքեալս. ոչ մեծաբանեմ պապանձեալս. ոչ ըմբոստանամ ձաղեալս. [4] ոչ երջանկանամ եղկելիս. ոչ արդարանամ ամբարիշտս ։ Զի ոչ երբէք հարթ ընթանայ երիվար՝ առանց սանձակալի. և ոչ նաւ [5] համբաւնայ հանդէպ՝ առանց ուղղչի. և ոչ արօր կշիռ ինչ գործէ՝ առանց մաճակալի. և ոչ երկուորեակք լծոցն 'ի ճահ ձեմեսցին՝ առանց եզողի. ոչ ամպ վերացուցէ՝ առանց հողմոյ. [6] ոչ ատեղք ցնդին և կամ գումարին՝ առանց ժամանակին. [7] ոչ արեգակն փոխաբերեալ ուր շրջանակի՝ առանց տարրական օդոյ. և ոչ

ես նոքօք հանդերձ, առանց բարեգործիդ հրամանաց անհնարինութեան։ Ո՜վ դու միայն ես տուիչ կենաց բանականաց, և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և 'ի քեն է իմն փրկութիւն, ըստ սաղմոսողին. և դաձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման՝ յականջս լսելութեան ամենայն հասակի, եկայք 'ի համդիսատ իմ բնաւորին աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ 'ի պարտեաց։ Նախ զի՞նչ օգուտ 'ի լուացմանէն, եթէ կրկնակի զաղրացայց. և կամ ո՞ր օգուտ 'ի ձաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց։ Նաև կամ զի՞արդ յաւրահամ պարծեցայց՝ խորթացեալս 'ի գործոց նորին. որդիս գարշուէ հօր ամովրհացւոյ, և մօր քետացւոյ կամ քանանացւոյ, [8] ըստ մարգարէին որ ասէ իս՝ յանկաւոր ձայնի. [9] ժառանգս մերժելի եթովպացի՝ և ոչ սեննեկին տաւայի, ըստ տեսանողին առ իս աւածի. [10] եղբայրս շամրնի՝ և կամ գոմորայ. [11] համբակս անլուաց և անաղելի՝ խակակութ պտղոյն խակուէ տողայ և ողողիքայ, ըստ եզեկիէլի կրկնանախատ կշտամբութեան։

Գ. Նաև քանզի [12] 'ի ծուփս բազմավտանգս ալէտանջ հողմոյ սաստկապէս զգուեալ՝ ուժգին ըշկանօք խոպառ տագնապմամբ 'ի ծովին, փոխեալ ընկեցեալ 'ի վտակն վայրենական ողողիչ. առ որս՝ զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր 'ի հոսմանց բռնութեանց գարնանազայր գետոց, արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման՝ ջրակուլ ազգեպառ պղտորարբութեան՝ դաժանահոտ սկախառն մամռաւրմատ խառնախռիւ՝ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուղխիցն հեղեղիցին՝ հեղձուցեալ։ [13] Նաև սու առակաւ և ես եղկելիս՝ խօսին, և ոչ իմանամ. գոչեն, և ոչինչ լսեմ. բարբառին, և ոչ զարթնանամ. [14] հնչեն, և ոչ փոխադրիմ. փողեն, և ոչ զգամարիմ. վերաւորիմ, և ոչ եւս զգամ, կաոցն գարշուէ նմանեալ՝ թափուր յազգմանէ բարեաց իմաստից։ Նրդարև չար առաւել յաւէտ իսկապէս [15] քան զօրինակդ՝ ճշմարտութիւն, աւելի և մեղադրելի, և տանելին քնի արժանապէս մատնելի։

Դ. Նաև քանզի [16] անդառնալի ուղղույն յիշատակ առտեացս պարտեաց՝ զայս կտակ թողլի որոց ընթեռ-

նուն, իմնմս բանիւ առ ՃԾ կարդալ համապատաս- դութեն, այս կացցէ սահման ¹⁷ յանձնառական խոստովանութեան մշտնջենաւոր ձայնարկու առաջի քո՝ ամենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս, և բանդ ընդ հոգւոյս, զանսահմանելիդ միշտ թախանձեսցէ, իբր յանեղծական մաղթողէ ընկալեալ աղերս ՚ի յիմոյս ձայնէ՝ բարերդութ մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

---

(1) Միջնորդաւոր ույսոյ ։ Աստուծոյ ըստ աստուածոյ ույսոյ մարմնոյ, և մնասցէ Աստուածն կոչէ զՔս Թէ ըստ ծնունդեանն, որով յանեղծ զարկեզանն և զայլ ըստ աստուածոյ, և միանգամայն նոյն արարեալ զնա խնամոտն մնասցէ. և Թէ ըստ մարդեղութեանն, յորում նոյն եղև աստուծոյ ըստ աստուածոյ որ ծնեալ կոյսն, և աստուծոյ քարոզ և ուսուցիչ Ճշմարտութեանն նոր օրինաց ։

(2) Դատական ինչ առ ՃԿ։ 4 օրին. դատական առ ՃԿ ինչ ։

(3) Երեք ոչ խառնակութ ։ Եթէ ոչ զու աստուածոյդ Ճանապարհն մեր առ քեզ՝ ուղղեսցես զնա, վերջ է ինչ խորոց, յորժ խորքն միշտ պատահէ նման յաջնի բարեգործութեան, յորում աստուծոյ աստուածորդութեան ոչ զնաս- լով, վասնզի կայ հաւատոցութեան, և բարձրագոյնն խորհրդութեանց ասաստ- նոյն. Ն յանէլի չար գործոց, յորում անանս Թողեալ, անկանիմ ՚ի միջոց յուսահատութեան և անզգայութեան ։

(4) Ո՛ւ էրշանխնամ ։ ոչ համարիմ զնա արժանի երանութեան, կամ զա- մնութեան ։ ոչ արդարանամ. ոչ ձեռնամ արդար, ոչ չնազանդումեմ զանձն իմ ։

(5) Համբառնայ հանդէպ ։ ոչ ընԹանայ նաւ յաստուծոյս, կամ մերանայ ՚ի մերոյ աւերաց՝ աստուծոյ զեկամաւարի ։ Եւ ոչ արօրն էշխ ինչ գործէ, զի ուղիղ, միօրինակ, հաստատ հերկէ. և ոչ զՔՔՔ լծեալ եզանց ՚ի ձախ Ճիշտդ, պատաշան կամ ուղիղ գնայցեն, առանց ետոյն. ըստ սմանց՝ աստուծոյ մարդոյն եզանց. բայց լաւ ևս, աստուծոյ միաւորողն կամ կառա- վար ընդոյ՝ որ է մնաձակաղն. զի բառս ետոյ, եկամէ ՚ի բառեն եղ, այսինքն մի, միակ ։

(6) Ո՛ւ առփէշ մոլարք, ցնորն, հետանման ՚ի միմեանց, և խոմ փառմուրն, հառաչքն և մերձենան առ միմեանս, առանց ծամանակին, առանց ընդ- հանուր ժամանակին, որով չարքին և բազմապատկին յառաւել չարաժամանք նոցա ։ Մարթ է խմանալ ևս զայլոց անմանր աստանաւոյ, իբր զի երգեմնե ցնորն, այսինքն ծածկին. և երբեմն փառմուրն, զի ՚ի յայտ եկեալ առ- աաժքին՝ ըստ զալոյ և գնալոյ արեւուն. և առանց այսր առանձինեայն և դէպէերայքն ժամանակի ոչ լինէր յառանեղան այդ փոփոխութիւն ։

(7) Ո՛ւ ուրէգան ճոխաբերէոն, փոխեալ ՚ի անդղաղէն՝ ուր ջրճանակ, առ պատրյութ կամ հողմոյ, այսինքն ՚ի ծիր զոդխակրանին, կամ զնորանց առ- ապաենք, առանց փուրրողն օդոյ. այս կամ ըստ կարծեաց նոցա ասէ, որք զՄրջողն յերկրէ մինչև ցառանդայ համարին օդով լցեալ, և չարժ- մանք այնր օդոյ աստէն չարժիլ արեւու, և կամ զաղգեցութ և զըստաղն հաղորդութիւնն ասէ, որ ներգործե ՚ի աստղնս միջնորդութեանն օդոյ ։

(8) Ըստ ծուրգարէին. (Եզեկ. ԺԲ. 3.) ուր ասէ մարդասէրն վասն խա-

[illegible]՝ ծննդեան յերկրէ [illegible], զի անդ ծնեալ [illegible] . և ըստ գործոյն և [illegible], [illegible], և [illegible] . 'ի այն [illegible] յայտնապէս [illegible]՝ թէ [illegible], և թէ [illegible] :

(9) [illegible] . [illegible] հաւատոյ եկեղեցւոյ, որ 'ի [illegible] 'ի [illegible] : ըստ [illegible], ( [illegible] . Թ . 7 . ) * Ո՞չ [illegible] եկեղեցւոյ [illegible] : ||

(10) [illegible] . [illegible], ( ըստ Եզեկ . ԺԶ . 46 : )

(11) [illegible], [illegible], [illegible], ոչ [illegible], [illegible], ոչ [illegible] . [illegible] . այս [illegible] 'ի [illegible], և [illegible]՝ [illegible], կամ [illegible] . [illegible] 'ի [illegible], [illegible] և [illegible] . այս [illegible] ( [illegible] . Կ . ) [illegible], [illegible]՝ [illegible], և [illegible] . [illegible] և [illegible] . [illegible]՝ [illegible] . [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] . և [illegible] :

(12) 'Ի [illegible] : [illegible]՝ [illegible] . որ 'ի [illegible], կամ [illegible] 'ի [illegible], 'ի [illegible], [illegible], [illegible]՝ [illegible], [illegible], կամ [illegible], [illegible] կամ [illegible], [illegible], [illegible] . [illegible], և [illegible] : Ո[illegible] [illegible], [illegible], [illegible] և [illegible], և [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] կամ [illegible] . [illegible], [illegible] և [illegible] . [illegible], [illegible] : Այս [illegible] կամ [illegible], և կամ [illegible]՝ [illegible] : Եւ [illegible]՝ ըստ [illegible], [illegible], [illegible]՝ [illegible] . [illegible] ըստ [illegible], [illegible]՝ [illegible] :

(13) Այս [illegible] . [illegible] . այս [illegible] : [illegible], կամ 'ի [illegible]՝ 'ի [illegible]՝ [illegible], [illegible] և [illegible]՝ [illegible] 'ի [illegible]՝ 'ի [illegible], ոչ [illegible] . ևն :

(14) [illegible], [illegible] կամ [illegible], և [illegible] . ոչ [illegible] 'ի [illegible] :

(15) Քան զգինի՝ [illegible] : Քան [illegible], կամ [illegible]՝ որ է [illegible], [illegible] է [illegible] . զի [illegible] է 'ի [illegible] . [illegible] 'ի [illegible] է : Կամ, քան զգինի . [illegible] 'ի [illegible]՝ [illegible] . զի [illegible] է և [illegible], [illegible] և [illegible] :

(16) Անուշահոտ [illegible] : [illegible]՝ որ [illegible] է [illegible], [illegible] և [illegible] : [illegible], [illegible]՝ [illegible] . [illegible] զի [illegible] :

այլ Գիրք ընդ նորինայս, զգուշացած զգոյշ փոխանակ մտադիւրայս, և Յանգ ընդ հոգւոյս, խնամոյ բանիցն փոխանակ հոգւոցս՝ մինչ Թախանձեցայց զանտանհանելեաց. ԾԾ. ողորմեցայց յամենայն խնդրողէ ընկալցիս զաղաղանս ՚ի ձայնէ աղօթիցս ։

(17) Յանձնառական խոստովանութիւն ։ Չ օրէն. խոստովանութեանց ։

---

Սերտորին յառաջեալ նշենի հեծութեան՝ նորին հոգւոյ, առ Նորա ազնիւ մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ԱՅ ։

# ԲԱՆ. ԾԷ.

ա. Եւ վասն զի սլացեալ ոգւոյս թեւոց ՚ի թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի ՚ի կշիռս իմանալեացս մտաց, ոչ գտի [1] զոք համեմատ ինձ պարտաւոր. և առ այս [2] զդաւթեան սաղմոսին զբանն ՚ի յերգ ինձ առի՝ դառն կշտամբութեան դաւաճանաւոր գործավար. ո՞վ յարիցէ ընդ իս ՚ի չարիս՝ հաւատարել յանօրէնութիս ։ Եւ քանզի այս ըստ սմին մասին՝ կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այրս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. [3] առ այսր իրաւանս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ խապառ, քան իմովս բանիւ բազմաց տարագրել. թերևս սովիմբ առ այս աուտ արդեօք՝ և ինձ շնորհեսցես, շնորհողիս զպարտիս իմոցն ։

բ. Եւ արդ՝ զի՞նչ քեզ աղերս հաճոյական ՚ի յայտում և ՚ի սոյն, և [4] ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցից՝ գովեալ թագաւոր երկնաւոր քո, եթէ ոչ զառ ՚ի յինէն անիծեալսն՝ օրհնել մաղթեմ. զկապեալսն արձակել. ազատել զդատապարտեալսն. [5] բարեգործել զնզովեալսն. պսակել զթշնամանեալսն. սփոփել զտրտմեցեալսն. [6] դարմանել զխոցոտեալսն. խնամել զսարտուցեալսն. պատսպարել զնենգեալսն. զվիրաւորեալսն ՚ի մարմին՝ յոգի բժշկել ։ Եթէ օրհնութեան բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եթէ անիծիւք, մի՛ հայեսցիս ընդունել գթած ։ Եւ տառապեալս ամենաթշուառ՝ [7] ՚ի վերջին սպասաւորութեան մաղթանաց այսր մատենի, ՚ի բովանդակ մտաց շնորհեցի իմոցն՝ [8] փակեալ առ ՚ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաչուք ձայնս. և [9] դժնեից նեն-

զողացն իմոց՝ ընդ բարիսն 'ի բոլոր սրտէ հաշտութեն արդարհատեցի. վասն որոց և ծունր պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ առհա յայց ելեալ առաւել զորովեցիս ըստ քոյդ մեծութեան՝ զովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս, հզօրդ՝ տկարիս, ամենակարդ՝ վարանելոյս, իմաստութեամբդ՝ աղքիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս: Բանզի յաւէտ սխալեալ անկայ ¹⁰ իբրև զողողակ մեթայինս ոչ ընդելական՝ 'ի հաղբս մահու անզգայապէս. չիմացայ զկերուստն. չգիտացի զորոգայթն. չտեսի զըմբռնօղ որոգյն ծածուկ մեքենայս. չկարծեցի զխաբուածս կերպարանաց կեղծաւոր վարմին. չնկատեցի զգայթագղունս շուրջանակի. չշօշափեցի [11] զպատանդիչ զցանցարկ կարթին. [12] ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կարացի ճանաչել, ըստ սաղմոսողին:

Է. Բանզի և որպէս [13] իմաստակի ումեմն արտաքնոյ բարուք թուեցաւ, չար ասել զմահ առ չիմանալոյն պատճառի, և ես վկայեմ իմովս բանիւ. քանզի իբր զանզգայ պատճառս անասնոց մեռանիմք՝ և ոչ զարհուրիմք. կորնչիմք՝ և ոչ հիանամք. թաղեցեալ լինիմք՝ և ոչ խոնարհիմք. տարագրիմք՝ և ոչ տագնապիմք. եղծանիմք՝ և ոչ զղջանամք. մաշիմք՝ և ոչ մտաւեմք. պակասիմք՝ և ոչ պատրաստիմք. գնամք՝ և ոչ զգուշանամք. գերիմք՝ և ոչ ևս զգամք: Եւ հանդիստ ասել երջանիկին յոբայ զվախճան մարդոյ, և ես խոստովանիմ զսոյն ընդ նմին, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան մահացու գործոց ըստանձնեալ: Մանաւանդ զի՝ որոգայթն գաղտնի, և հնարադիրն աներևակի. [14] տարր ժամանակիս յանէից, անցեալն անյայտ, և ապառնին կարծողական. ես անհամբեր, և բնութիւն թերահաւատ. ոտք անհաստատք, և միտք ցնդեալք. կիրք հարկաւորք, և բարք անժուժկալք. մարմին մեղսամակարդ, և յօժարութիւն երկրատէր. դիմամարտութիւն ոնկակից, և խառնութիւն ներհակական. բնակութիւն կաւեղէն, և անձրևք ուժգնակիք. կարիք անթուելիք, և պատահարք ամենագրաւք. միտք չարախնամք, և տենչմունք բարիատեացք. կեանք առօրեայք, և [15] զմբաղք սակաւաւորք. խաբմունք յիմարուն, և խաղալիք տղայա-

[illegible]

( [illegible] )

(3) Ար այսր : [illegible]

(4) Եւ ծանր [illegible]

(5) Բարեգործել [illegible]

(6) Դարմանել [illegible]

(7) 'Ի վերլին [illegible]

(8) Փոխեալ 'ի [illegible]

(9) Դժնեայ [illegible]

(10) Իբրև [illegible]

(11) Զարթուցի [illegible]

(12) [illegible] ( Սաղմ. ԼԹ. 13. ) * [illegible]

[illegible] յայս մասն [illegible] ։

(13) Իմաստասէր [illegible] ։ (Երեմ. 13.) Մահ ոչ [illegible] ։ [illegible]

[illegible] ։ (Անյաղթ. [illegible]) Եւ [illegible] ։

(14) Տուր ծանաւթս ։ [illegible]

[illegible]

(15) [illegible]

(16) [illegible] (Ժէ. 2.) [illegible]

(17) [illegible] (Է. 14.) [illegible]

(18) [illegible]

(19) Զի դու միայն ես յա, ճանաչիս բարեբար . . . ընդ հօր և հոգւոյդ ։ Յ օրին . Զի դու ես յա, ճանաչիս միայն բարեբար . . . ընդ հօր և ընդ հոգւոյդ ։

---

Մերտին յաւելուած երկրին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն աղերս ձաղկանաց բանի ։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ ։

# ԲԱՆ. ԾԱ.

ա. Իսկ* զաւրիթեան մահու դիպուածս՝ դժոխարմատ ծառոյս դառնութեան պտուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դաւաճանօղք, ստորագրեցելովք մատամբքդ նշանակեցից՝ գրեալ յանուանէ, որ են այսոքիկ։

բ. Միրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակնս յայրատատես, ականջս վրիպողուր, [2] ձեռնս մահաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացքս աներկիւղ, հետք խոտորնակ, [3] շունչք ծխախառն, գնացք խաւարային, գոյութիւն լերդի վեմական, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփոփոխ, բարեմանութիւն սասանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ։ Գազան վիրաւոր, թռչուն նետահար, փախստական քարավէժ, ըմբռնեցեալ մնասապարտ, աւազակ ծովակուր։ Ձկնուոր նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ։ Աղօթական անխրախոյս, [4] բեմական ստորնաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական անմունէր։ Պալիր կշռաւբեալ, իմաստակ խելագար, ճարտասան անճոռնի։ Սերպ անպատկառ, դէմք անամօթ, [5] երեսք լղրջեալ, գոյն անհամբոյր, տիպ ամարդի, գեղ ծանակեալ։ Խորտիկ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, [6] այգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշաբեր, հասկ ուռճահալ, մեղր 'ի մկանց ճարակեալ, անպատսպար անկեալ։ Անապարծ յուսահատ, [7] անհամոզելի նզով, անհաշտական բաժանեալ, ունայնաբան շաղակրատ, պաճարամիտ գոռոզ, անամօթէն ապիրատ, դժոխային աղաչ, աներատան յան-

դուզն ։ Սոլեգնութիւն անճառ, ձեռնամաձգութիւն սպա-
նող, տատասկացան երկրագործ, երջանկութիւն եղ-
կելի, մեծութիւն վատթարեալ, վայելչութիւն անշքեալ,
կարողութիւն տկարացեալ, բարձրութիւն խոնարհեալ,
փառաւորութիւն ընդոտնեալ, պատուիրանազանցու-
թիւն յարակայ, սխալանք ինքնակամ ։ Մտակարարն
կամակոր, խորհրդակից նենգաւոր, բարեկամ հա-
տուածեալ, հաղորդապետ դաւաճան, մերձաւոր կծծի,
բաշխող ժլատ, վերատեսուչ կարկամ, [8] ոգի անախ-
տակիր, իղձք անսէր, բարք ատեցող, աղիք անգթա-
կանք, գնացք անխոհեմ; աներևոյթք վնասեալք ;
ծածուկք անիծեալք, դիպուածք թշնամանեալք ։
Վաճառական վատնիչ, շահարար շուայտեալ, պաշ-
տօնեայ արբեցող, [9] գանձուց ստրկան երկմիտ, պատ-
գամաւոր բանսարկու, դռնապան քնեալ ։ Ջրքար
հպարտ, մեծատուն ժխտող ։ Պուրանապետ անօրէն,
պահապան մատնիչ, բնակակից չարախօս, ուրհան-
դակ անժամման, թղթաբեր պարտաւոր, առաքեալ
խռովարար, միջնորդ անիմաստ ։ [10] Արքայ արտա-
լած, թագաւոր թարմատար, կայսր ոգէկործան,
իշխան տիրադաւ, զօրավար զրկող, դատաւոր ակ-
նառու, ռամիկ ինքնագործ ։ Նախատողի ծաղր, սի-
րելոյ աշխար, բանադրի գորով, յանդիմանչի դատա-
խազութիւն ։ Քանզի և [11] ՚ի վեհագունիցդ կոչմանց՝
էր ուրեք արդեօք զի էի. իսկ ՚ի վատթարականացդ
մասանց՝ եկն երբեմն եհաս՝ զի եղէ. Արդ՝ այսքան
վնասակարութիւնք խարդախութեանց յաճախա-
գունից, յորոց յոմանց խաբեցայ իբրև զյիմար, և
յոմանց տիրեցայ իբր զտկար՝ կամաւ մատնեալ զիս
ինքն մահու ։

Է. Արդ՝ զո՞րս ՚ի վերագրելոցդ մասանց՝ քեզ առե-
լեայց, և իմ կորուսչաց՝ ՚ի սպաս պաշտաման քեզ
ընծայեցից. զորպիսիս ապականութե պարագրեալս՝
ամենասուրբդ քո մեծութեն հանդէպ կացուցից. և
կամ որքանեօք երկայնմտութեամբք համբերեսցես այսքա-
նեաց պարտուց. ո՞րքան ներես. ո՞րպէս լուասցես.
զի՞արդ իսկ անսայցես. իբր ոչ մատնեսցես հարուա-
ծոց գանից զարժանիս սաստկման մահու ։ Արդ՝
այսոցիկ անմշկել վթութեանց՝ հոգւոց խաւարի՝ ողոր-

մութն լաւոյ քոյ պատահեսցեն՝ բժշկել քաւել և կենագործել՝ զօրեղութիւն անվթարելի․ և քեզ փառք յաւիտեանսն․ ամէն։

---

(1) Զատիկեան ճաշու ընթերցուածս ։ Զյարութիւն բանին աւետարանաց, առ աւելով զփնդքն, ընծայեալ ճաշու․ վասն որոյ անուն առնու զսկիզբն առաջինկայ բանին․ ուր որոշ ընծայի խնամս չարչարանացն, [illegible] ճաշու ընթերցուածս [illegible] [illegible] ... [illegible]

(2) [illegible] ... ոչ փորձեալ, կամ ոչ [illegible] յաղագս [illegible] ։

(3) [illegible] ... [illegible] անհասատատ ։

(4) [illegible] ... [illegible] ։

(5) [illegible] ... [illegible] ։

(6) [illegible] ... [illegible] կամ ՚ի [illegible] ։

(7) [illegible] ... [illegible] ։

(8) [illegible] ... [illegible] ։

(9) [illegible] ... [illegible] ։

(10) [illegible] ... [illegible]

յանդիմանեալ՝ եղէ զարտախաղութիւն, նոյն թախանձանութեան. կամ առաւելեալ
եղէ ընդդիմեմ նմա զատախազ:

(11) Ի վիճակաւորաց խօսից: Ի զեղխութեան անառակաց բարուց վիճա-
կեցան ինձ յայս հանգամանս, զի եղէ գինեսէր, արբեցող, քաղցրասէր,
մսակերող, զանձնասէր, շուայտ, ևն: Իսկ ի կարեւորականաց. ի
պարարտութիւն անառակաց բարուց և ըստ գործոց իմոց պատուհասեցան
ինձ. զի եղէ նենգաւոր, երկչոտ, անձնասէր, կամակոր, անհնազանդ-
ական, ապստամբ. ևն: Այլ սոյսոքն, որ առհաս այսքան են մեղաւորք և
բարկացողականք խորհրդութեանք, կամ պատուհասականն մեղայն. յորոց մանց,
այսոքիկն յայտնեաց որք յաւելուած պատճառ ի մեղաւոր պատահմանութեան, ի տկա-
րութեան, ի պատուհասից զինուոր, խորհրդոյ երկրի ըղձանաց. և յամաց, յր
ի չար ունակութեանց կամ ամբարշտութեանց յաղթեցայ երկրի կենաց: Այլ
ապա: Ի վերջացելոց բանիցն՝ որք քեզ առաւելք են, և ինձ կորուսիչք,
ողորմ ինչ կարեմ ընծայել քեզ. միթէ խնդրեցեմ աւելի ի քումդ պաշտ-
աման եղէ և ես բերմունս, քաղցրանայ, գայլք, մսակերութեան, պատկա-
ռողութեան, զանձնասէր ևն. որովհետև առ այսոքիկ զոյգ երկրին և պատուա-
կանի անհնազանդութեան. որոց վասն զրկանաց խոկ՝ մտածեմ երկնային
մանկանց հաւանեցեալս, և ոչ մնացեալս ի հարստութեան: Յայսմ ներողամտու-
թեն քո աղաղակեմ, աղաչեմ զի խառնեսցես ինձ հնազանդ ողորմութիւն
լուսոյ քո պատահեցելոց, այսոքիկն լուսաւոր ողորմութեան քո:

Սերտին յառեղեալ կրկին հեծութեան՝ նորին հօխողի, առ նոյն
տէրն մաղթանաց բանի:
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ած:

# ԲԱՆ. ԾԱ:

ա. Բան Ած անուն ահաւոր. [1] մեծութիւն անպատմ.
անքննին բարձրութիւն պատկեր. անսահ-
ման զօրութիւն. [2] կերպարան փրկութեան լուսոյ. պաշտօ-
նեայն կենաց. դուռն արքայութեան վերնոյ հանգըս-
տեանն. ճանապարհ ճշմարտութեան. առաւելութիւն
նորոգ և անապականն երանութեան. [3] անճառակալ իմաս-
տութեանութիւն բոլոր էակութեան. օրհնութեան կոչումն.
առ երեսաց ձայն. բերկրութիւն բարեաց. անմահու-
թեան դեղ. արքայ անճառ Ած միոյ: Որ ինձ անհնարին
է, քեզ դիւրին է. որ ինձ անհնար է, քեզ առհմա-
նեալ է. որ ինձ անմատչ է, [4] քեզ հպաւոր է. որ
եղկելույս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան
մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ
է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չա-
փեալ է. [5] որ ինձ յուսահատութեան է, քեզ սփու-
փանաց է. որ ինձ անբժշկականն է. քեզ անվտան-

գելի է. [6] որ ինձ հեծութիւն է, քեզ խնդութեան
է. որ ինձ ծանունք են, քեզ թեթեւագոյնք են. որ
ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրեցեալ
է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ
ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն
է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհ-
նեալդ քում ձեռին բովանդակեալ է. որ ինձ առ-
կայլն է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է,
քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրա-
հերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ էականուն
զօրութեան ընդ ուշգոյն համարեալ է:

Է. Այլ դու ողորմած ած բոլորից տէր յս քս, եւ [7]
այսմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս. վասն
անուան փառաց մեծութիւն հօր քոյ օրհնելոյ, վասն
կամաց գթութիւն ոգւոյդ քոյ սբյ, տես ՚ի տաժանա-
ւորս կրից յանդիմանական յայտնութիւն, եւ ՚ի խորոց
սրտի ինքնամատոյց դատախազութիւն. նայեաւ ՚ի ընդու-
թիւս [8] ամենապատաղ խակութիւն, եւ պարգեւեալ բժշ-
կութիւն վիրացս, եւ հնարաւորութիւն կորստեանս, զեր-
ծումն բազմամասնեայ մահուս, եւ շաւիղ կենաց ա-
պականելոյս, նորոգութիւն եղծմանս, եւ մուտք յու-
սոյ ամբարշտելոյս: Եթէ ես [9] զանմամանն ինձ կամս
ցուցի, որչափ առաւել դու զանաւորականդ քո
զնմանանի բարերարութիւնդ. եթէ ՚ի փշոց պտուղ
ընծայեցաւ քաղցրութիւն, որչափ առաւել ՚ի ծառոյդ
կենաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես իմոց ատելեաց [10]
ողորմութիւն մաղթեցի, դու քոյոյս զիարդ ոչ կրկին
մատուցես հզօր՝ յանդնաւորդ առատութիւն:

Ը. Արդ՝ տես ՚ի քոյդ մեծութիւն բարձրեալ, նայե-
ցեալ ՚ի յիմս փոքրկութիւն. ընկալ զսակաւ խոստո-
վանութիւնս անհամար մեղացս, որ զանուն համայն
տեսանես. եւ որպէս [11] զվիժմին գթել ոչ գրեցեր, եւ
զաւազակս փոքու սասանել մի համարեցիր. եւ [12] իբրեւ
զդաւթին՝ ընդ մեղայն ասել՝ իսկոյն անցուցեր զպա-
տիժ պարտուցն, եւ առ իմ ձայնիս հեծութիւն զնոյն
գործեսցես երկայնմտութի. որ տաս ամենեցուն առա-
տապէս անաչառութիւ՝ որպէս յաղթող բարի բազ-
միմաստ. եւ ոչ նախատես զյետնեալ տուրուկս՝ որպէս
ողորմած եւ ամենատեղծ. տացես վերստին, եւ [13]

մի կորուսաներ զգնեալս արեամբ քո, և զգնեալս ստեամբ քո՝ գլխաւն ։ Ո՜վ քո՛ է փրկութիւն, և ՚ի քէն է քաւութիւն, և քեզ վայել է փառք յամենայնից յաւիտեանս . ամէն ։

---

(1) Մեծութիւն փառաց ։ մեծավայելչութիւն հօր երկնաւորի . կամ անհուն ճոխութիւն և հարստութիւն ամենայնի ։

(2) Կերպարան ծննդեան ։ ցոյց կամ նշանակ ազատութեան ՚ի խաւարէ ՚ի լոյս, կամ, պատճառք լուսաւոր փրկութեան ։

(3) Անճառելի խոնարհութիւն . խոնարհագոյն անկումն բոլոր երկնաւորեան բոլոր նեղեալ, կամ արարածոց ։

(4) Քեզ հզօր է ։ մի օրինակ . քեզ հզօրէ է ։ որ ինձ անանցանելի է վասն հեռաւորութեան, քեզ մօտ է ։

(5) Որ նոյն յաւիտենականութիւն ։ որպէս գծուագրին պատահարք, ծածուկ փառաւորութիւնք, բարձրագոյն աստուածութիւնք, յորս իմ տկարութիւն յուսահատեալ, քեզ ամենեւին է . զու զաւարճանաւ՝ յայտնեցեր գծուագրին ցուցանել զզօրութիւն քո և զգթութիւն ։

(6) Որ նոյն հեծութիւն ։ որպէս պատարագօղ մարմնոյ և գինւոյ, կամ հաւանութիւնք, որք ասեն ինձ հեծել, քեզ խնդութիւն է, անմահական գթութիւն իմ, կամ զհամբերութիւն . լուս բանին աստուածոյն . (Բ . կորն . Ժ Բ . 9 ։) Ուսանի ասէր երանելին նախահայրն շամշոնեան . (Բ . մակաբ . Է . 6 .) * Հայցի նոր ամծ ՚ի ճգնութիւն պատարագին մարդոյ, և ՚ի ծառայս իւր մխիթարի ։ ||

(7) Եւ այսմ պէրնս . ընդ այլ գործս կարողութիւն քո՝ զորս թուեցի, կարող ես և այսմ, զի առմ իրօք պարտաւորեալս հնարս ազատութիւն զգուշես, եթէ գթութիւն կամիցես ։

(8) Անբաղդատելի խոնարհութիւն ։ յետմ միաւորեալս յօժարեաւ և պատուէրն անխորտակութիւն ։

(9) Զանանահն նոյն նահս ։ Հզաւրն . խնամոյ զաղօթելն վասն չարաչարելոյ՝ որ ՚ի բանն ծն ։ Մարդոյն ասա ասորէ առաւանձնն գնէ զայն նը մարդ զանազանս ։ Այլ յարմարադրեալս խնամող է, թէ զենքնական յայտնու-թեն մեղաւոր՝ և զգաստախառնութիւն անձինն՝ ամենեցուն հրապարակեցի, որ հաւատալ էր ընդութեանս . զի մարդ ՚ի ծածկեալն է ընդունելով . և հա-զիւ յանձն անձնու յայտնել քահանայից ՚ի ծածուկ ։ Եւ այս խոստո-վանութիւն է պատուէն ընծայել ՚ի փրկոյ . որպէս և ասորէ ասէ . Ընթաց զարկու խոստովանութիւն, են ։

(10) Որդնութիւն մաղթեցի ։ վասն տղայութիւն խոնոյ ասաւելոյ աղաչեցի ։ 2 օրին . որդնութեան ։

(11) Զնիկին գթել ։ զարմարապէս զայթակղելն ուրացութիւն՝ ոչ մեծ հաւանեցուր, այլքինքն անասն արարեր, ներեցեր . այսպէս զգեղցիկ իմ, որ առ նորա համեմատութիւն իբր ասաց եմ, մի՛ համարիր, անասն արար ։

(12) Իբրև զաւակն ։ 2 օրին . Իբրև զաւակ ։ որպէս զգութիւն պատարագ մարդոյն իսկոյն թողեր ընդ ասելն մեղայ, նոյնպէս առ հատուցանս աղօ-թից խոնոյ զնոյն ներողութիւն պարգևեա ։

(13) Մի կորուսաներ զգնեալս արեամբ քո, և զգնեալս ստեամբ քո՝ գլխաւն ։ 2 օրին . այսպէս մեկոյն գնեն . Մի կորուսաներ զգնեալս արեամբ քո՝ գլխաւն ։

Մերոպէն յառեղառած ներէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նորին ողբերս ծաղկեալ բանին :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԾԲ.

ա. Օրհնեալ տէր Յս ընդ հօր, 'ի կամս հաճութեան հոգւոյդ քո սրբոյ. և [1] օրհնեալք ամենայն առ 'ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն՝ որդի օրհնելոյ. չիք իմ թագաւոր իշխեցող ծնչոյս բաց 'ի քէն՝ Քս : Այս է օրհնութիւն յակոբայ՝ ասէ եսայի, յորժամ բարձից զմեղս նորա :

բ. Արդ ողորմեաց ինձ տէր բարերարութեամբ՝ ըստ նախնւոյդ քո սովորութեան, և օրհնեա զանօթս քո բանական, ըստ ձայնին դաւթի և ըստ մովսէսի. զի բանիւդ քո փրկութեան ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ 'ի քէն : Ծածկեա ինձ հրաշագործեալ ժողոված արքայ երկնաւոր, [2] որպէս անկելոցն 'ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովելոցն 'ի սրահին բեթհեզդայ : Յորոց մի էր և [3] կրկին թերահաւատն՝ երից տասանց և [4] ութի միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում [5] ոչ անխայեցեր զբժշկութեան ձեռնտուութի, իբր գիտելով զանբայժ չարութիւն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան դաւաճան գիշերին տիրամարտութեան երախտաւորիդ, մեծիդ և բարերարիդ : Որ թէպէտ և կանխաւ ինձ զգուշացուցեր, թէ մի մեղանչեր՝ զի մի կրկնեսցին կրկին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց սկզբնաւոր անհամբերելի՝ դատողացն զքեզ 'ի խաչին : Այլ դու այնպիսւոյ [6] անյարիր ջատուկ մահհուծնգեցեալ չարաշուք առն ողորմեցար, անճառ բարութի, ախրալի մարդասիրութի, սարսափելի ներողութի, առակալի երկայնմտութի, անբաւելի քաղցրութի, փառաւորելի հեզութի : Որ միշտ [7] յաղթիս 'ի գթութէ, և ոչ թշնամանես. պարտիս յողորմութէ, և ոչ պարսաւես. բռնադատիս 'ի մարդասիրութէ, և ոչ անգոսնես. [8] հարկիս 'ի բարութէ, և ոչ հայհոյես. ստիպիս 'ի սիրոյ, և ոչ բամբասես : Պա-

ղատիս դարձին իմ առ քեզ, և ոչ ձանձրանաս. արագես զկնի ապերասանիս, և ոչ լքանիս. ձայնես չլսողիս, և ոչ սրտմտիս. 9 փութաս մեղկելոյս, և ոչ խափանիս: Դու շնորհ՝ ես բարի. առ ամենապարտս՝ ես ներող. առ մեղաւորս՝ ես քաւիչ. առ խաւարեալս՝ ես լոյս. առ մահացեալս՝ ես կեանք:

Գ. Այս 10 են գիրք ամենայն հոգեշունչ օգտակարութեան, որ յաճախս ծնանին երկնաւոր պտուղ անճառս և զարմանալիս: Այսմ և 11 ինձ թշուառացելումս՝ օրհնեալ ամենապարգև, արկ ձեռ զմահիճս խշտացդ մեղաց 'ի վայր կործանմանդ, և հետևեալ ժամանեալ յանդորր հանգիստ անաշխատ կենաց: Խզեցես ամենակարող սուսերաւ բանիդ հրամանի՝ 12 զերիզապնդեալ մահազգեստս պարփակութե դըժոխազնեայ կապանացս. և լոյծ ինձ ըզհանգոյցս խեղդողական ոգեպահանջ սաստկութեան, առաքելով զարժանաւորս մահու՝ յաղատութին վերին անանց բերկրութեան, կենսաբեր և աստուածային քո բանիւդ: Մի տակաւ տակաւ աղդեցցես, և մի օր 'ի յօր յերկարաձգեսցես, զի մի ստուար ծանրութն բեռանցս մեղաց՝ տիրեսցէ թիկանցս աղտերաց, և կործանեալ զիս կորացուսցէ՝ հայել 'ի դժոխս. և ուժգնակի գոռոզ բռնութն՝ 13 անպարապ հոգևորական զինուն արարեալ, մահու ծառայեցուսցէ: Այլ օգնեա ինձ բարի վշտակից՝ հեծութն կարեացս մահու երկանց, առեալ յինէն 14 զփայտ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին. որով կառուցես զվայելչական յաղթանակի արի զօրութեն, պնդապէս հաստատով յուսոյն կարծրութե ընդ քեզ բևեռել անպայթաքելի: Եւ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութի յաւիտեանս. ամէն:

---

(1) Օրհնեալ եմ: Ամենեցուն օրհնութիւն յերկինս և յերկրի՝ 'ի քէն շնորհեցաւ Տէր Յս, որ օրհնեալ միայն ես 'ի քէն, 'ի քումմէ խոկութէ, 'ի քոց արժանեաց, որպէս և հայր քո օրհնեալ. իսկ առ այլ արարածս, մասնաւանդ յազգս մարդկան, 'ի քէն իջանէ օրհնութի. բայց այնմ * 'ի զաւակի քում օրհնեսցին ամ ազգք երկրի: Ու Եւ որպէս դու միայն օրհնիչ, նոյնպէս միայն աղբիւրպէս ինքնագոյն ինքնեցող հոգւոյս կամ կենացս. Եւ զի բաց եղայերայ՝ օրհնութի յակոբայ է բաժանեալ զմեզ ներքս, Աւտ աղօթեմ զքեզ ես բաց այսմ օրհնութե, Եւ: 'ի բանն եղայերայ, (ծն. 20.)

[illegible] օրհնութիւն զնի ոսկւոյ . և բազում բանիւ այլով [illegible] առնել անդ . բայց որ մարդկանացս [illegible] . ( Հռովմ . ԺԱ . 27 . ) " Եւ այս նոցա որ յինէն ուխտ՝ յորժամ բարձից զմեղս նոցա ։ ||

(2) Որոգէս անկերցին ։ Այսու [illegible] մարդկանցս , թէ բազմաց [illegible] 'ի [illegible] բժշկութիւն [illegible] . զոր չէ հարկ [illegible] 'ի քեզ . զի [illegible] եւեթ բժշկութիւն [illegible] . այլ թէ [illegible] , [illegible] ։

(3) Կրկին Երբահաւասն ։ Անդամալոյծն՝ որ [illegible] բժշկեցաւ . և առն կրկին կամ երկիցս [illegible] , նաև զի [illegible] թէ յո բժշկեաց զնա . ( Յովհ . Ե . 15 . ) [illegible] 'ի [illegible] , և բազում կարծեաց [illegible] մարդկանս ։ Սակայն [illegible] մարդկանցս՝ [illegible] , [illegible] 'ի [illegible] ։

(4) Ոսկի միոյ անօթ ։ մի օրինակ . ոսկի միոյ ։ բազում [illegible] է [illegible] , երից փառաց և ոսկի միոյ անօթ , [illegible] երկուք [illegible] և միով ուղիւ [illegible] . զի [illegible] անօթ , և [illegible] է 'ի [illegible] . որպէս և յայլ բանս [illegible] ։

(5) Ուսանողեցէք ։ ոչ [illegible] բժշկութիւն [illegible] . Երր Գիրերուն , [illegible] չարութիւն [illegible] , զոր [illegible] 'ի [illegible] ։ Եւ [illegible] մի այլ [illegible] , զի մի [illegible] . [illegible] զի մի [illegible] , սակայն ոչ [illegible] , [illegible] և [illegible] 'ի մէջ [illegible] , ևն ։

(6) Անյարէր ։ որ ոչ կարէր յառնել և կանգնիլ ։ Ղուկաս . [illegible] կախարդ , [illegible] , և [illegible] անդամալոյծն [illegible] . [illegible] , և [illegible] . կամ թէ 'ի կախարդութենէ [illegible] ։ Բայց զի կայ այս բան և 'ի մեկնի . մեկնութ . [illegible] , բազում [illegible] կախարդի , այլ [illegible] , [illegible] և [illegible] , [illegible] , [illegible] ևն ։ Հին բան . մեկնէ՝ [illegible] . [illegible] ոչ [illegible] . որպէս թէ [illegible] և [illegible] , [illegible] ոչ [illegible] ։ Սակայն թէ [illegible] նոցա [illegible] , [illegible] բժշկութեան քոյ ։ Մուհու Ծնգնշեսու ։ Ո[illegible] , որ [illegible] . և [illegible] . զի [illegible] և [illegible] 'ի [illegible] . մինչ զի [illegible] , [illegible] . զի [illegible] ։

(7) Ցուղնիս 'ի գիւղն ։ մինչ զի թուլութիւն [illegible] . և սակայն [illegible] , ընդ [illegible] , որոց մինչ զի [illegible] է . 'ի այն [illegible] ։

(8) Հօրէնիս 'ի գիւղն . 1 . օրին . 'ի Եւրեւրաւուն ։

(9) Փռաւաս Ծեղէեւոյս ։ [illegible] կամ հոգւոյ [illegible] ։

(10) Եա գիրք ամ ։ Ցայս յաւագութիւն հայրն , և [illegible]

[illegible] և [illegible], ( [illegible]. 16. ) [illegible] և [illegible] 'ի [illegible]։ [illegible] և [illegible], [illegible]։

(11) [illegible]։ [illegible]. [illegible]։

(12) [illegible]։ [illegible]։ [illegible], [illegible] և [illegible], [illegible], [illegible]։ [illegible]. [illegible] և [illegible] 'ի [illegible]։ [illegible], [illegible] և [illegible], և [illegible], և [illegible]՝ [illegible]։ [illegible]՝ [illegible]. [illegible]՝ [illegible]. և [illegible], [illegible]՝ [illegible]։

(13) [illegible]. [illegible] 'ի [illegible] 'ի [illegible], [illegible], [illegible], [illegible] 'ի [illegible]։

(14) [illegible]։ [illegible], [illegible]՝ [illegible] 'ի [illegible]. [illegible], [illegible], [illegible], [illegible]՝ [illegible]. [illegible] և [illegible]՝ [illegible]՝ [illegible] և [illegible] է։ [illegible], [illegible] 'ի [illegible]։ ( [illegible]. 3։ ) [illegible]. [illegible], [illegible], [illegible] է [illegible]։

Մերոպէն յաւելեալ էրէէն հեծութեան՝ նորէն հոխողէ, առ նոյն [illegible] մաղթանաց բանէ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ԾԹ.

Ճ. Հաւատամ և վկայեմ մտաց գիտութեան 'ի քէն ազդեցեալ ոգւոյս իմաստուն ուշիւս տեսանեն. զի ըղձալի են քեզ ամբերար[1] աղաչանք մեղաւորաց քան զխնդրուածս արդարոց։ Օ[վ] ի մինն [2] զպարտութիւն անձինն յայտնեալ՝ շնորհիդ քո սպասէ. առ որ ծանուցեալ զխնուէս չափ, և մեծ կշտամբ բերէ աստէն համբարձեալ՝ [3] ինքնագոր մարտակից նմին իսկ ինքեան, և դատն դարովիչ և ծածկատես դատախազ։ Իսկ մեւամ՝ յարդիւնս բարեացն իւրոց նայելով, [4] յանձին հարեալ ձեռն վստահութեան, մա

ռանայ զսահման բնութեան, և պարգևաց՝ քան ողոր-
մութիւն դիտեալ ակնունի: Վասն որոյ [5] առ միոյն՝ ան-
թիւ են ստեղծուածք ձեռից, որ զողորմութեանցդ
քո փողով բարբառոյ ազդէ. իսկ առ միւսն՝ լուեալ
են քոյդ՝ անքնին ահաւոր և ամենախնամ. ամաչեմ
ասել, թէ և երկրաւորիս գործոց պատմութիւն զքոյդ
յառաջեալ: Արդ՝ արի տէր, և [6] մի զօրասցի քան
զքոյդ՝ աջ հողեղինի. մի կշռեսցին ողորմութիւնք քո՝
ընդ չարից մարդկան:

Ժ. Եւ արդ՝ առողջքն անդամօք՝ անկարօտք են
բժշկութեան. և տեսանողականքն աչօք՝ չունին պէտս
առաջնորդի. և փարթամքն ընչիւք՝ ոչ դեգերին առ
դուրս լիոցն. և ամենայնիւ յղփացեալքն ոչ սպա-
սեն փշրանաց սեղանոյ հացի. և սուրբքն վարուք՝ [7] ա-
պէնիազ են ողորմութեան. Եւ արդ՝ ինձ գթացիր
ողորմել՝ բարձրեալ երկնաւոր հզօր, ամենատխուր
վարանեցելոյս: Քանզի թէ էի իբրև զյոբ, ասէի
զանձն իմ իբրև զնա արդար և անարատ. թէ իբրև
զմովսէս, ասէի վստահութեամբ զնորայսն, ծանիցէ տէր
զայնոսիկ՝ որ իւրն են. եթէ իբրև զդաւիթ, ասէի՝
արարի զիրաւունս և զարդարութիւն. և դարձեալ՝ [8]
զմեծն քան զբնութիւն մարմնոյ, զմեղս թէ տեսանէի
'ի սրտի իմում՝ մի լուիցէ ինձ տէր: [9] Թէ էի իբրև
զեղիա, ասէի զանձն իմ այր այ. թէ էի իբրև զերե-
միա, [10] զքոյդ ճշմարտութիւն յանձն օրինակէի. թէ
էի իբրև զեզեկիա, պարծէի զբարուոքն և զիրաւա-
ցին՝ գնացի առաջի քո արդարութեամբ. [11] Թէ և իբրև
զպօղոս, ասէի զիս բնակարան՝ ազդարան՝ և ընդու-
նարան այ բանին: Այլ ես անօրէնս 'ի մէջ գիտու-
թեան օրինացն, ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ըն-
ծայել յարգանօք բանից իբրև զնոսա, և զբանաւոքն
չարս՝ որպէս զբարիսն զայնոսիկ առաջի քո յիշա-
տակել, այլ և ոչ [12] զամենուստ գոյից զբարեհաճա-
կեալ անունդ հզօր՝ ամբարշտեալս լեզուով գովել:
Իսկ դու առ ամենայն հնարս զօրաւոր՝ մատո ինձ
ոգի փրկութեան, աջ պաշտպանութեան, ձեռն այցելու-
թեան, հրաման բարութեան, լոյս ողորմութեան, բան նո-
րոգութեան, պատճառ քաւութեան, գաւազան կենաց
օգնութեան: Ո՛չ ի դու ես յոյս ապաւինութեան տէր յի

քեզ, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) [illegible]

(2) [illegible]

(3) [illegible]

(4) [illegible]

շնորհօքն իւր արդարացելոց, և նովին շնորհօք կոչելոց յարդարութիւն ։ պարգևաց՝ փոխ ողորմութեան, վարձուց՝ քան թէ ազատ շնորհատուութեանն ակնունի ։ Զայսոսիկ եթէ զանխտրութեան և զանձնիշխանական կամաց խոստովանի, յայտ է թէ այնպիսին ոչ եւս է արդար ։ և ոչ խնդրուածք այնոսիկ հայցուածն՝ են խնդրուածք արդարոց, այլ անընդունելիք իւր և մեղանչականք ։ Իսկ եթէ առանց անխտրութեան խնամոցն այսոցիկ, իբրև թէ արդարոյն անխուղ գործով զանձնէ, և վստահացելոց յինքնակութիւն իւր, 'ի խնդրելն ինչ յԱյ՝ ոչ իբր մեղանչականն որ մնայցէ, այլ իբր բարեկամ և վստահասէր առաջի իւր, այս ոչ հաճոյական արդարութեան ։ որպէս և եղեալ վասն որոյ՝ զուժ չկալութե անձնին խնդրելով, մերժեցանելոյ առաջի իւր զարդարադատութիւն իւր ։ (Ղ. Թագ. Ի. 3 ։) Եւ յորժամ մեղաց առաւել հայցէ բարերարութեան այնպէս վարդապետեսցէ ։ զի յատուկն արդարանկ մեղաւորաց առաւել յորդորել շարժեսցէ զԱծ, քան զքարկանմանկան հայցուածս արդարոց ։ իբր զի յառաջնութեան՝ պատճառ է միայն անհնար ողորմութեան իւր ։ Իսկ յերկրորդումն՝ չափաւոր բարերարութեան արդարոյն ընդ մեղ մնալ՝ իբր մերձաւոր պատճառ արդիւնաւորեն ։

(5) Առ միոյ անկեալ են ։ Առ մեղաւորն, կամ առ ընդունելութեան ապաշխարող մեղաւորին՝ անթիւ են յօժարութեամբ զուարճացեալ՝ 'ի գլուխ կամ 'ի բերան մարդկան, որք զքո ողորմութեանց անմնացեալ ծառայութեան իւր փոխեալ ։ Իսկ առ միոյն, առ արդարոյն կամ առ ընդունելութեան արժանից արդարոյն, ըստ բանին, ոչ այնչափ քո ողորմութեանդ քաղցրացի ։ այլ մեծամասնեալ անկեալ առեալ, Եւ նա երկրաւորին գործոց պարգևեալ, երկրաւոր արդարոյն առաքինութեանց պատմութեան ի յառաջոյ, քան զքո ողորմութեանդ առաւել հաճեալ ։ Վասն զի այս է մարդկան աւելորդութիւն, յորժամ անսահման զխնդրութեան արդարոց կատարելոյ, առաւել արժանաւոր խնդրողին ընծայեն, քան զթութիւն առաջին իւր ։ որպէս թէ նա յայնմանէ խնամս իւր՝ առաւել շարժէ 'ի բարեկամութիւն արդարոց, քան յերկրէ զխտութեան ։ Վասն այսորիկ ասէր ողիս Եզեկիէլ յարուցիթ ։ (Ժ. 29 ։) * Ասացէք զու խնդրուածովք զԱծ ։ զի կենդան արդար ես զու ։ ‖ Ընդ այսպիսի աւելորդութեան մարդկան զժուարեալ ասէ Պօղոս՝ առաջ առ ժողովրդեան ։ (Գործ. Ժ. 12 ։) * Արք Իսրայելացիք, զի՞ զարմանալով եք 'ի վերայ այսորիկ, կամ ընդ մեզ զի՞ եք պշուցեալ, իբրու թէ անձին զօրութեամբ ինչ, կամ քաղցրութեամբ արարեալ իցէ զնորայ գնալ ‖ ։ Եւ թէպէտ ծշմարիտ է, զի Ած բարերարեալ անդստ 'ի վերայ և 'ի բարեխօսութեան արդարոց շարժի զթալ 'ի մեզ, սակայն և այս՝ գործ զթութեան նորա է ։ զի նոյն իւրով ողորմութեամբ արար և սուրբ զնոսա արդարս, և նովին ողորմութեամբ կարգեաց զնոսա միջնորդս և բարեխօսս ։ այլև յընդունելի զբարեխօսութիւն նոցա՝ ողորմութեամբ ընդունի, և ոչ բանադրեալ իբր պարտականս ։ վասն որոյ յաւելեալ նորագործէ և զօրանայ զթութիւն իւր՝ եթէ առ մեղաւորս, և եթէ առ արդարս ։ և այն է յաւելեալն քաղցրացելն ։ Այսպէս 'ի գեղջ ասէ մեծն վարդապետ 'ի մեկն ։ առաջինեալն, 'ի յառաւելապատճեն ։ * Թէպէտ Թուելն ասացից խնդրողք, և կեանք առ ողք, այլ մի անկցի էր՝ որ շարժէ զողորմ 'ի խնդրեն, և զխնդրեալ՝ 'ի ասել ‖ ։

(6) Մի՛ ողորմեսցի փոխ գործոց ։ Մի՛ երկեւեսցի զօրութեամբ քան զքո ողորմութիւն առ հողեղենն, արդարութիւն մարդոյ ։ Եւ մի՛ նշանակեսցի ողորմութիւն փոխ, մի՛ չափեսցես գործոց ողորմութեան քո ըստ ջանից մարդկան, ընդ առաքինական վաստակոց արդարոց ։ Որպէս թէ ասել ։ եթէ միայն զարդարոց խնդրելոյ կատարեսցես վասն առաքինութեան նոցա, երևի՝ թէ ողորմութիւն քո ոչ է կարող ընդունելի առնել զապաշխարող մեղաւորաց ։ և եթէ որչափ արդար է որ, այնչափ առնիցես նմա բարիս, կարծի՝ թէ ողորմութիւն քո ոչ է առաւել քան զպարտսն մարդկան ։ Այլ զի մի՛ այսպէս կարծ

[illegible]

(7) [illegible] ԱՅ [illegible] 3 [illegible]

(8) [illegible] 18 [illegible] ԱՅ [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible] ԱՅ [illegible]

(12) [illegible]

Սերափին յառնելաւած հրէին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն ամէրս ճառընտրաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. Ա.

ա. Եւ արդ՝[1] որպէս զի ոչ վայել է օրհնաբանութիւն 'ի բերան մեղաւորի՝ 'ի Ճշմարտին առակէ կանխաւ իսկ ուսայ, զիա՞րդ յաւելից կրկնել զնոյն գովութիւն աղաչաւորս բազմապատկաւ, որ հանապազ ընդունիմ անէծս[2] 'ի սաղմոսիս բարեբանութեան։ Ո՜ իբր երգեցից ինձ վասանօք, և արձանացուցից նախատինս. և 'ի մերկութեան գրկի՝ փուշս ընդ շուշանաց ժողովեցից։ Ո՜ զիա՞րդ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զառատամատոյն մեղաւորաց փշրեսցես։ Ո՜ զիա՞րդ դարձեալ, թէ մի անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց։ Ո՜ զիա՞րդ, թէ դատ արա ինձ տէր[3] ըստ արդարութեան քո, ըստ անմեղութեան իմոյ որ յիս։ Ո՜ զիա՞րդ, թէ կատարեսցին չարիք 'ի վերայ մեղաւորաց։ Ո՜ զիա՞րդ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայլն որ զկնի։ Ո՜ զիա՞րդ, թէ տեղասցէ 'ի վերայ մեղաւորաց որոգայթ հուր և ծծումբ։ Ո՜ զիա՞րդ, թէ սատակէ տէր զշրթունս նենգաւորս՝ և զլեզուս մեծաբանս։ Ո՜ զիա՞րդ, թէ փորձեցեր զսիրտ իմ, և ոչ գտեր անիրաւութիւն։ Ո՜ զիա՞րդ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս։ Ո՜ զիա՞րդ զևս, թէ ես արդարութեամբ երևեցայց երեսաց քոց։ Ո՜ զիա՞րդ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա։ Ո՜ զիա՞րդ զմիւսն, թէ հատուսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում, և ըստ սրբութեան ձեռաց իմոց։ Ո՜ զիա՞րդ անձամբ ինձէն զստուգն իմ ծանուցեցից՝ ասել ընդ սմին, թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ։ Ո՜ զիա՞րդ 'ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս բամբասեցից։ Ո՜ զիա՞րդ զերջանիկին պարծանս՝ թշուառացեալս կերպարանեցից, թէ դատ արա ինձ տէր՝ զի ես յանմեղութեան իմում գնացի։ Ո՜ զիա՞րդ օտարս 'ի բարեաց՝ զխոտողիգ դաղձնեաց արդարահատեցից, թէ մի համարեր

ընդ ամբարիշտս զանձն իւր։ Ո՜ խորհրդ. եւ լինելն զօ-
րով զայլս անիծեցից, թէ ամէր նոցա ամէր զգործս
նոցա. եւ 'ի կարգ բանիցն համարձակեցայց։
Ի. Քանզի թէ 4 զյետինս բանիցն՝ առաջնովքն
ատտանօր եղից, կրկին ծանրանան ինձ ցաւք, եւ յա-
ճախեսցեն դառնութիք։ Բայց 5 'ի շեղջեցելոցն ար-
տասուաց՝ դոյզն մի չափեալ, բաւականացայց համա-
պագորդեան յանդիմանութե՛ ստգմտաբանին ընտա-
նի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ.
առ որս՝ եւ օպառուած քառասներորդի իններորդի
հատուածի բանի յանդիմանողի՝ 6 զիս զարշեցու-
ցեալ, համապաղ խայտառակէ. խցեալ զբերանս 'ի
փառաբանութէ, եղկելի զանձն իմ ցուցանէ. ածայրին
ձայնիւն դատապարտեալ, յականկալուէ կենաց լքանէ,
միանգամայն եւ 7 վիրգս մահու ինձ՝ իբր 'ի պատնշէ
առաքէ։ Քանզի թէ չար է անէծս առնուլ յօտա-
րէ, ապա 8 անձամբ զանձն անիծանել՝ կրկին չարա-
չար. իսկ եթէ չառնուլ նախատինք 'ի մերձաւորաց՝
օրէնք են, ապա 9 'ի տեառնէն հայել զայսօրիկ, կրից
արեան տաժանմունք, վիշտք աղետից, եւ խեթք մնաց։
Բայց թէ առ խոնարհութե՛ անձին իւրում մատ-
նեսցի, 10 ջնջեալ եւ կշտամբեալ անիծիւք 'ի լեզուէ
իւրմէ, 'ի խոստովանեալ եւ յամենիշխան շնորհաց
բերանոյ վերնոյն՝ օրհնեսցի. զի ճշգրտեալ թարգ-
մանեաց զդարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ լքա-
նելով. 11 տնհմանաւն տիրոյ՝ զպարտեացն արմատ
կրճատեաց, ոչ տիրեալ 'ի խորդակամանաց չարապա-
նողաց. ոչխար հօտին քնի զտաւ բժշկեալ՝ գիմելով
'ի յաղն բուժիչ 12 աղեացն արկածից։ Բայց եւս ան-
բանական բարոյից է՝ 13 առուն կենդանեաց 'ի մէջ
դալարոց ծաղկածին վայրից՝ կենաձիր բանից՝ թըմ-
բրուէ մնաց 'ի յարօտս մահու ճարակել։
Գ. Ա՜ւ արդ՝ քանզի 14 իմ է առակս վերջին կշտամ-
բողական, եւ առ իս ակնարկէ զգիպուածոցն չար
պատահմունս. որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղ-
մունս կիզանողականս հրոյ տոչորման, հասեալ 'ի
յերկնաւոր զգայիւ զագաթանս իմաստնաբանի բաղ-
մակիս։ Քանզի զխորդ 'ի յարդիւնս ինձ օգտից
տաղմանն եկեսցէ, յորժամ անպատուղ 'ի բաղմերդու-

Թէ՛ն լինիցիմ, ոչ նուաղեալ հոգւով, ըստ թելադրե-
լոյն Պօղոսի։ Ո՜ խորհուրդ ընդ մարգարէին եւս զանգրա-
նելին խառնեցից՝ մեծս մեղաւորաց՝ նկուն սիրա-
նեաց. առնել ընդ մեզ, թէ 'ի բաց կացէք յինէն ա-
մենեքին՝ որ գործէք զանօրէնութի։ Ո՜ խորհուրդ ոչ ու-
նելով 'ի բազմացն պատուիրանաց կատարեալ՝ շնոր-
հին եւ օրինին՝ բարբառեցայց զերջանկին, որ նախ
ինքն արար՝ զոր մեզ կանոնեաց, թէ քանզի ծառայս
քո պահեցի զայս. եւ որ զհետն զան առացեալքն։
Ո՜ խորհուրդ թափուրս 'ի լուսթէ իմաստից կենաց՝ ընդ
երկիւղածս նոյն օրհնեցից։ Ո՜ խորհուրդ ընդ մեծին մաղ-
թանաց զիմն յօդեցից, թէ զմին խնդրեցի 'ի տեառնէ՝
զտեսիլ վայելչութե նորա, եւ [15] զհրամանատարութի
տաճարի նորա։ Ո՜ խորհուրդ 'ի հրաժարելն իմ ձեռա-
նամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայել է օրհ-
նութի։ Ո՜ խորհուրդ շրթամբք իմովք զանձն իմ անի-
ծից՝ առնելով զկնի յոլովից առեալն, թէ երեսք մեր
'ի վերայ չարագործաց՝ սատակել զյիշատակս նոցա
յերկրէ. զխորհուրդ զմիւսն դարձեալ, թէ չարք վաղ-
վաղակի սատակեսցին։ Ո՜ խորհուրդ զկերպարանացն իմ
նմանութի, թէ բազումք անբարշտաց խորտակես-
ցին։ Ո՜ խորհուրդ սատակմանն իմն պաղատեցայց, թէ
ահա մեղաւորք կորիցեն։ Ո՜ խորհուրդ զբազմայածեան
լեզուս [16] 'ի յօրհնեալն բանն միեցից, թէ առաջի
պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց լեզուաւ
իմով։ Ո՜ խորհուրդ փշովք մեղաց հեղձեալս՝ զանարա-
տին պարծեցայց, թէ այլ զիս յանբծութե իմում
ընկալար։ Ո՜ խորհուրդ ես մեղաւոր եւ կրկին պատժա-
ւոր՝ զհանդուցանակիցան դաւանեցից ապրել 'ի նոցունց,
թէ 'ի մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զիս
տ՛ծ ։

Է. Ո՜ խորհուրդ իբր ոչ կուապաշտեալ անպատկառա-
պէս պերճացայց ունայն պանծանօք առնել ընդ դաւ-
թի, միթէ մոռացեալ իցէ մեր զանուն այ, կամ
ձգեալ զձեռս 'ի մաղթանս օտար աստուածոց. քանզի
զի որ 'ի մեղս դարշութե խոնարհեցի, առաջին կայ
նորին կառուցեալ առեալ 'ի պաշտօն [17] յաւանակա-
նացն անտարբարծիցն պոռնկապատիր պատկերացն
կերպարանն՝ [18] աստարտայ եւ քամովսայ եւ [19] մեղքո-

նոյ արուարձանի , և [20] Թարահատայ Թարմատարի, ընդ զազրատեացն [21] կանացեաց՝ իշանդամիցն պատ-կառանք՝ անվերարկու ծանակուԹիք ։ Ո՞ւր ոչ պատ-կառեցից սովիմք ասել ընդ նահատակին , որ զայս [22] դիմագրաւուԹիւն առ քարին ունէր միշտ , Թէ վասն քոյ մեռանիմք զօրհանապազ , և որ 'ի կարգին է սորին սաղմոս ։ Ո՞ւր յիմարս յարս և վատԹարս՝ ասել ժպրհիմ, Թէ բերան իմ պատմեսցէ զիմաստու-Թի , և սիրտս զհանճար ․ Իբր [23] մարդելայզ կերպա-րանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղԹե-ցից ։ Ո՞ւր [24] զկրկին երկրորդեալսն մեծանունսն քա-րուԹիս , Թէ հաճոյ եղէց առաջի տն յերկրին կեն-դանեաց ։ Զիա՛րդ ունօղս անքաւից մեղաց՝ զարդա-րոյն առեալ կարդացից , Թէ ոչ մեղք իմ և ոչ յանց-ցանք ․ առանց մեղաց ընԹացայ , և ուղիղ եղէ ։ Զիա՛րդ զիս ինքն մատնեցից կորստեան՝ յասելն զայս բան , Թէ մի՛ ողորմիր գործողացն զանօրէնուԹի ։ Զիա՛րդ , Թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ , այն-պէս և մեղաւորք յերեսաց այ ։ Զիա՛րդ գրգեալս ապականացու փափկուԹի՝ սահմանեցից զանմանն ինձ բան , Թէ խոնարհեցուցի պահօք զանձն իմ , և զազգակիցս նորին ընդ նոյն , Թէ ես 'ի նեղել նոցա՝ քուրձ զգենուի , և իբրև զսգաւոր և զտրտում խո-նարհ առնէի ։ Որպէս հանդարտեցից [25] զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել , Թէ սակայն մրուր բարկուԹեն այ ոչ սպառեսցի , և արբցեն 'ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի ․ Իբրև զեւսն առ սմին , Թէ զամ եղջիւրս մեղաւորաց փշրեսցես ։ Զիա՛րդ զապերախտուԹն յակոբայ [26] 'ի ձառ առեալ հեգ-նեցից , որ ընդ սպասուորին զճշմարտուԹին ընկալեալ մոռացայ ընդ նոսին՝ նոցին ԹերուԹբ զերախտիսն քնի ածայնովքն արուեստիւք խաչին փրկանօք , քան նոքա զզօրավարուԹին մովսէսի՝ ցպայն սքանչելեօք , որ զօրինակն նկարագրէր տէրունական տնտեսու-Թեն ։ Զիա՛րդ զյարուցելոցն 'ի վերայ՝ դիւաց զա-ղէտս ցուցից , իբր նոքա զօտարացեղից խուժադուժ ազգացն՝ ասելով , Թէ արկին զդիակունս բարեացն որ 'ի մեզ՝ կուր մսակերացն Թռչնոց , այս է՝ այ-սոցն օդայնոց ․ [27] որպէս զանկեալ զսերմն բանին 'ի

Ճանապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ որք անուանեցին. Եբրև զնմանակիցն առ 'ի նոյն շաւիղ չարին պատերազմի՝ զուպար զաղտնամարտ մտացս օգտելոց, զոր ես զօրացուցի՝ գործակցեալ հնարից բանսարկուին։ Այլ ոչ ունիմ աղերսել, թէ մի լուեր և մի դադարեր՝ ա՛ծ. և խորհեցան [28] 'ի վերայ մեզ քոց և ատեցին, զոր 'ի կարգէ սաղմոսիս է ասօթել։ Վ.անզի [29] յոյժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ 'ի վերայ բռնութե՛ն մոլեկան դիւաց միշտ ճակատելոց՝ առ ներկայիս խռովութի, և ընդ նոսին՝ նոցին մշակաց։

Ե. (1) Յորոց դու տէր քո՝ որդի բարձրելոյ մեծիդ ա՛յ՝ պահեսցես և ամրացուսցես, երկնային զօրութ շնորջափակութե՝ յամենայն ընթացից խաբողին հողմոց խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի՝ թէ և գացին յիս անօրէնութիք բազմօրինակք, այլ ոչ հայհոյութիք։ Որ ոչ հանդերձ 'ի կորուստ նմանեացն իմոց ամբարշտելոց, այլ [30] ամենազօրով թախանձմամբ ընդ եղծման ջրողողն զազրագործաց՝ կրկին վշտացար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ դրեցեր, ասելով զզարմանալին լողղաց բանն, ածեալ զմտաւ ոչ ևս յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան։ Այլ մխիթարիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս անմարքրից և պարտաւորաց տատակման. որ երբեմն առակաւ դրամենւոյն՝ զանխայելն 'ի կործանելիան ցուցեր՝ ողորմած. և [31] առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վտանգեալ, ընդ յամրանալ անձրևին առ ուրացողացն դարման։ Նշմարելիս ցուցեր [32] բարութե տեսակս յիշատակաց տօնելիս՝ 'ի վերջին աւուրս. քև 'ի ձեռն առաքելոցն քոց՝ ողջոյն հասարակաց անհամբուրիցն հեռաւորաց քաղցրաճաշակս հրամայեցեր։ Նա և յիս ցօղեա կենդանակ զհայրենեաց գթութեցդ զանէր, զի և ես փրկեցայց քաւեալ ամենառատ քո այցելութեդ։ Այլ քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք՝ յաւիտեանս. ամէն։

---

(1) Որդւոյ ղի ոչ վայել է։ Զկատուած աղօթիցս առնու 'ի կատարածէ անցելոյն, յորում ասաց՝ ոչ իշխել 'ի գովութի անուան Այ անմաքուր բերանով։ Որովհետև ասէ՝ ոչ վայել է օրհնութի 'ի բերան մե-

[illegible] ( [illegible]. [illegible], 16.) * Ս[illegible] [illegible] 'ի [illegible] 2. [illegible] ( [illegible]. 9.) * Ո՛չ է [illegible] 'ի [illegible]. [illegible] ոչ 'ի [illegible] ։ ||

(2) 'Ի [illegible] ։ 'Ի [illegible] ։

(3) Ըստ [illegible] ։ է ( [illegible]. Է. 9.) [illegible] ։

(4) Զ[illegible] ։ Զ[illegible] ։

(5) 'Ի [illegible] ։ 'Ի [illegible] ։

(6) Զ[illegible] ։

(7) Վ[illegible] ։ [illegible] 'ի [illegible] ։

(8) Ա[illegible] ։ [illegible] ։

(9) 'Ի [illegible] ։

(10) [illegible] ։

(11) Ս[illegible] ։ [illegible] ( [illegible]. Է. 47 ։ ) [illegible] ։

(12) Ա[illegible] ։ Մ[illegible] ։

(13) Ա[illegible] 'ի [illegible] ։ 2 [illegible] 'ի [illegible] ։ Ա[illegible] ։

(14) Խ[illegible] ։ Ա[illegible] 'ի [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] 'ի [illegible]

բանից առաքինական, սփոփիւ դադարեալս, զխաղաղութիւն պատարագելով. կամ զգլխաւորն, որ է բարւոյն խոնարհութեան մեծին խոստովանութիւն։ Վասն զի մնալով 'ի յաջորդեալս իւր սիրտ, օգնեա ինձ գործելոյ առաքինան, յօրինեալ յանձնեալս երգելով զայն՝ առաքինեւն անսասան մնալ։

(15) Չհրամանատարութիւն։ այլ օրինակ. զհրամանատարութիւն։

(16) 'Ի յօրհնեալն բան.... պնդանալաբար խօ։ այլ օրինակ. 'Ի յօրհնեալ բան.... պնդանալաբար փո։

(17) Յասանախանաց։ Չայս բառ ոսկեազէս գրեն օրինակք. մեր ընթերցք օրինակին 'նախ գրելով յասանախանաց, յետոյ զգուշեաց 'նորին քերելով առնելէ՝ յասաախանաց. և այլ օրինակ գնէ յասաախանաց, և այլք յասանախանաց, որ և երգոց յասանելին աստուածային, կարգեալ երկրով 'ի բառէն յասանք, կամ յանք. (այսինքն ընկերք.) և նշանակելով առաքելական ասէք, կամ առնելով ընկերս զգուշաց 'ի չարին։ Սակայն այժմ քննելով, համարելով թուելով յասանախանաց գնել, որ երգէնէ 'ի բայէն յասանել, այսինքն ասացել, որպէս մեկնի 'ի հին ժողովածու բառից. զի այսպէս գնէ և օրինակին հին բառգրքոց, և մեկնէ՝ աղաչողաց, աղերսելով մեկնութեամբ 'ի գլուխ [illegible], թէ և [illegible] 'ի բառս յասանութիւն։

(18) Աղաւաղաւոյ [illegible]։ [illegible] 'ի բանին [illegible]. [illegible]. 23. 24։

(19) Մեղսաւոր [illegible]։ [illegible], որ և [illegible], էր [illegible]. [illegible] (Գ. Թագ. ժա. 7։) [illegible]

(20) Թագաւորաց [illegible]։ [illegible]. Ապա [illegible]. (յետ. [illegible]. 2.) [illegible]. ( [illegible]. [illegible].) [illegible]. * [illegible] ։ || [illegible]։ Սակայն [illegible]։ Գ [illegible] ( [illegible]. 26.) [illegible]։ Այլ թէ [illegible]։ Թող [illegible]։ [illegible]։

(21) Կանացեաց։ այլ օրինակ. [illegible]։ [illegible]։ [illegible]։

[illegible] ՚ի վերայ [illegible] : Բայց [illegible] է . [illegible] 20 . [illegible] ՚ի վերայ [illegible] . և [illegible] , և [illegible] : Ա[illegible] է , թէ որ ՚ի [illegible] , [illegible] թէ [illegible] , [illegible] , և [illegible] . [illegible] որ ՚ի [illegible] , [illegible] . [illegible] , [illegible] :

(22) Գ[illegible] : [illegible] :

(23) Մ[illegible] : որ [illegible] :

(24) Զ[illegible] , [illegible] : Ա[illegible] * [illegible] , || [illegible] . որ [illegible] ՚ի [illegible] 13 . և [illegible] 9 : և [illegible] ՚ի [illegible] 13 . * [illegible] . || [illegible] . * Զ[illegible] ՚ի [illegible] , և [illegible] , [illegible] ՚ի [illegible] : ||

(25) Զ[illegible] : [illegible] :

(26) ՚Ի [illegible] : Ո[illegible] ՚ի [illegible] , [illegible] . [illegible] , [illegible] ՚ի [illegible] , [illegible] որ ՚ի [illegible] , որ [illegible] :

(27) Ո[illegible] : [illegible] որ [illegible] ՚ի [illegible] , և [illegible] որ [illegible] , որ [illegible] : Ա[illegible] է [illegible] , և [illegible] , [illegible] . [illegible] և [illegible] . [illegible] ՚ի [illegible] . [illegible] ՚ի [illegible] , որ [illegible] : [illegible] է [illegible] . [illegible] , [illegible] և [illegible] , [illegible] , [illegible] . որ [illegible] և [illegible] , [illegible] :

(28) ՚Ի [illegible] : ( [illegible] . ) [illegible] , և [illegible] և [illegible] . [illegible] ՚ի [illegible] , և [illegible] , և [illegible] , թէ [illegible] ՚ի [illegible] , [illegible] :

(29) Ց[illegible] : [illegible] և [illegible] . [illegible] , [illegible] է [illegible] ՚ի վերայ [illegible] , [illegible] , [illegible] ՚ի [illegible] , [illegible] և [illegible] ՚ի վերայ [illegible] , [illegible] , և [illegible] և [illegible] , որ [illegible] և [illegible] :

(30) Ա[illegible] : Ց[illegible] ՚ի վերայ [illegible] , [illegible]

ցեալ չարչարանացն : Տրամադրութիւն նմանութեան առաջ դնէ, եթէ զի առաքելոց պատուիրէ զՏէրն : Այսպիսեաց Գրիգորիոս Նիւսացի, խաչին՝ մեծապէս զուարճանալով զի կեանքն անմահութեան առաջարկութեամբ, և որոց առաջնորդն են մահուան. որոյ օրինակաւ զգալեաց ցուցանէ առ յոյժեան : Իսկ առաքեալն՝ կենաց ծառայութեամբ, ոչ եղելոց անարատ, խաչին միաւորեալ յառաջին : "Աստուծոյ զի սուրբ զԵնոքն || . (Եբր . Ժ . 6 .) և եղկելութեան անդամ յետ Քրիստոսի, ոչ և առնելոյ Քրիստոսի ( Ժ . 21 : ) Կամ, կենաց խաչին կենդանութեամբ, այսինքն առաւելեալ վասն որոյ 'ի Քրիստոսի զանօրինութեանն՝ քան եթէ չէին պատուէին : Եւ արդարև զգործութիւն զօրաց կոչէ զմարմին, ոմանց զնոսա ոչ են առնելեալ են : Զիարդ որ աւետարանն նախահայրենաց բնութեան է՝ առաջնորդեցէ, առաջնորդեցէ, կամ նորոգ խնչ անձնեցէ զնոսա, որպէս թէ յառաջին խորհեալ չէր, և կամ յայլմէ ուսեալ գրեալ գործեալ էր մեծապէս. և այն զի թէ համաձայնութիւն բարձրա ծնունդ մարդկան, առաջնորդեալ արդեօք Ա.Յ ինչ մի 'ի փառացն և 'ի մեծութենէ : Կամ, զի՞նչ զգեստք՝ առ մարդ զերբ արդարութեան յայտնել, եթէ այն թէ արդարութեան առ 'ի նմանէ լինել ուսեալ : Արդարև մի բան է առաջնորդ, բայց զօրութիւն յորդորեալ յանդիման ունելով, որ վասն 'ի գերեզ խաչ բարձրացուցանէ նորա զօրութիւն առ երանելի բան : Եւ զօրութեան զօրաց առնէ, քանզի անդէն 'ի լոյսն բարձրացու այլ 'ի բարձրագոյն Ա.Յ զօրութեան բնութեան զոլ, թող թէ առ մարդոյ քննել, որոյ թէ և հաւանեալ է առնել թէ մարդկօրէն ձևանայ Ա.Ծ առ 'ի ցուցանելոյ զերբն զթութեան, բայց բնութեանն զօրաւորս հաւանական զօրու զօրութեան Ա.Յ առ խոյն առաջնորդութեան :

(31) Ա՛ռ այլ առաջին, առ եղկելին՝ որ զերբն առնել արդել զանձինս, վասն առաջնորդ կարգի յանմեղոյն 'ի խոնարհել զանձինս. և հրամայեաց եր- թալ և երևել առաջնորդ, և ապա թէ զի եղիցի անձինս առ արդարոյ զօրութեան, 'ի զարմանս և 'ի ոգեսս առաջնորդացն զնոսա : (Գ . Թագ . ԺԷ . 1 :)

(32) Բարեբանէ զնոսա : 'Ի միջոցին առաւօտս մարդկանութեան քո՝ ցուցեր ան- ձնական առաջս առաջս զթութեան 'ի բաժանել զօրութեանց, 'ի կենդանեցել զօրութեանց, 'ի կենդանութեան ցուցանել զօրութեանս, յաղթութեան զօրութեանս են . որոց և անմարմնաբար առաջնորդ է և բարեհաճել : Զի ՚ի յետոյ առաջինոյն : Տարակուսելի է՝ թէ այս բարեք յանցանաց ընդ յարուցանէ, թէ ընդ յաւիտեան . զի գործարար օրինակք անմահութեան զնոսա զխաչն . և մի ընդունի օրինակ առաւել կեանք թողու անդրոր : Ընդ անցելոյն խաչին . յաղթութեան առաջնորդ զթութեան ցուցեր քն, քաղ անձանց, այլև առաջնորդ լոյսն առ մեծագոյն ժողովուրդս . իսկ առ հետեւողսն առաջնորդութեան հրամայեցեր ասել ողջոյն խաղաղութեան : Կամ, զնոսա ընդունելով ընդ անցելոյն, այսինքն քն անձանց ցուցեր . իսկ ՚ի յետոյ առաջինոյն յարութեան ընդ յաւիտեանն, այսինքն հրամայեցեր ասել ողջոյն 'ի ձեռն առաքելոցն : Սակայն բան երկուց և ընթերցանան կենդանի է և շարժմանն, որ զօրաց լինել է առաջ յառաջնորդ ՚ի ինն . և խաչելոյն է, քն և 'ի ձեռն առա- քելոց : Արդ՝ եթէ այսքան զթութեան նորա առ առաջնորդ հետե- ւողս, մինչ զաւակացն ցուցել նորա առ իս ընկալեալն զթութեան զանձ, որ կենդանի եմ եթէ 'ի փառս, և եթէ յաղթել . ոչ կարօտեալ մեծահո- գաւ առաքելոցն յայս երանել ինձ . այլ քո բանիդ առաջնորդ եմ է առ իս քան զնոսա առաջին ընթացս :

Մեղաւորին յանդիմանեալ կրկին հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն աղերս մաղթանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ԿԱ.

Եւ ընդէ՞ր է ինձ[1] բնաւին որ 'ի սաղմոսին այնպիսեաց բանիցն՝ 'ի կեր արկանել. որ 'ի նախատինս՝ միանգամայն և 'ի նշաւակ ինձ յարակային, հանապազ երգել իմովս տաւղօք: Քանզի զիա՞րդ արդեօք զշուք երջանկին ինձ դատապարտելոյս նմանեցուցից՝ ասելով ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս թիւրեալն սրտիւ: Զիա՞րդ[2] զկարգադրութիս տանցն՝ 'ի յայսմանէ զկնի թուելոցն զարհուրեցուցչաց՝ ընդակից կայից կանոնաց օրինաւորացն՝ զինուորին և թագաւորին, և մարմնական հրամանատուին, որք և երկնայնոցն են համբուրելիք՝ ասելով, ոչ յուսահատ եղէց 'ի կենաց պատմօղս աւետեաց և նորոյս աշակերտ՝ անմասն յամենայն բարեկարգութեց: Զիա՞րդ ըստ իրաւախոհ առդարոյն, ընդդէմ մեղաւորացն՝[3] մահու զինեցայց առակաւ առաւօտին 'ի սկիզբն արթնութեան միշտ պատրաստական լինելոյ, որ և ոչ զանդամս մարմնոյս զանեալ խրատեցի. զիա՞րդ մասնակցեալ մեծին արուէ՝ սատակեցից 'ի քաղաքի տն զանօրինեալսն, որ և ոչ զբուսեալ բիծս հոգւոյս իմոյ մեռուցի: Զիա՞րդ ստեցից գրողին չև յայտնելոցն, թէ զմոխիր որպէս հաց կերայ. զիա՞րդ, որ ոչ միացուցի յիմոյս կրից կաթիլ մի պղտոր՝ ընդ յստակ արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին, թէ զըմպելիս իմ արտասուօք խառնեցի. և արտասուօք իմովք զանկողինս իմ թացի: Զո՞րս[4] ինձ գրեցից մեղօք մահացեալս, յորժամ սիրօղն այ 'ի բոլոր սրտէ՝ զյանցմունս նախնեացն իւր վարկանիցի, թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք, և որ 'ի վախճանին յանգի սաղմոսն՝ իրաւամբք առ իս, քան առ իսրայէլ: Որո՞վք[5] յարդեցայց դատել ընդ բարիսն, յորժամ մարդկային հնա

րից այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ յիս գտաւ, 'ի գար-
շութեն կերակրոց 'ի մահ սովեցելոց՝ և յաճախու-
թեն ձգանց 'ի հոգւոց նուաղելոց, ըստ խորութեն
ինքնօրէն կրծնից՝ հրէից և հեթանոսաց: Օ՜ իա՞րդ
արդարութն իմ մնայ յաւիտեանս, զոր ոչ ըմաւ իսկ
կատարեցի:

Բ. Ի՞ւ զի մի տաղտկացայց յամեալ 'ի բանիս, հա-
մառօտել զսոյն փութացայց: Օ՜ ի՞նչ ունիմ ասել
'ի տեղի բանիցս՝ զոր ածաշունչ ձայնն նուագեաց [6]
օրհներգոյն դաւթի, թէ բոլորով սրտիւ իմով խնդ-
րեցի զքեզ. զիա՞րդ ընդ սմին զմեծն քան զայս,
թէ յամենայն ճանապարհէ չարեաց արգելի զոտս
իմ. իբր ընդ եղեալս և զայն մատուցից, թէ 'ի
սրտի իմում թաքուցի զբանս քո՝ որպէս զի մի մե-
ղայց քեզ: Ո՞րպէս [7] զունայնութեանցս իբր զլրու-
թեց ճառեցից ընդ պարս մաքրոց, թէ 'ի պատուի-
րանաց քոց իմացեալ, [8] ատեցի զամենայն ճանա-
պարհս չարաց: Օ՜ իա՞րդ [9] զհեզոյն ճշմարտութիւն
իմում սուտութեն մշտնջենական երդմնահարութիւն
կարգեցից՝ ուխտեալ ընդ հաւատարմին, երդուայ
զոր հաստատեցի պահել՝ զդատաստանս արդարութ
քոյ: Օ՜ իա՞րդ ինձ հրեշտակ մահագոյժ [10] անհրա-
ժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, թէ հեռի
է 'ի մեղաւորաց փրկութն: Օ՜ իա՞րդ չարս իսկապէս՝
զբարեացն գրեցից՝ որք 'ի Տնէ առնուն զնոյն հա-
տուցումն՝ զայս տուն յեղյեղել, թէ բարի առնէ
տէր ուղղոց սրտից: Օ՜ իա՞րդ [11] զհամառօտն փոխա-
տրութն անաչառութեն՝ վրիպեցելոյս ինձ սահմանե-
ցից, թէ զթիւրեալսն յափշտակութն՝ տանի ընդ
այնոսիկ, որ գործեն զանօրէնութի: Օ՜ իա՞րդ զմեծա-
զգեստին պանծանս՝ ամաչեցելոյս ինձ պատուատե-
ցից՝ ասել զնորայսն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ
իմ, և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատ-
մին ասացեալքն: Օ՜ իա՞րդ [12] զանճառն քան զմար-
մին բան՝ 'ի ցոյցս առից քաջալերութն վհատելոց,
եւ զանձ գեհենին՝ ասել ընդ օծեալն տյ հոգւովն,
թէ յառաջագոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութն 'ի
լեզուի իմում, [13] 'ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղ-
մոսին՝ մինչև 'ի լրումն աւարտման բանիս: Օ՜ իա՞րդ

դատակցութեան դժնէից մարդոց համաքամն՝ այլոս մա-
հու և որդիս սատակման բարբառիմ զբարեշնոր-
հին, ոչ առհա զատելիս քո՝ տէր ատեցի. և զմնա-
ցուածն սորին կարգի. Ո՜ խորդ մեծական [14] վստա-
հութիւ տօնելի վեհին՝ անձին իմ և դու աշխար աշ-
խարհի՝ զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծա-
ցուցանես ընդ պսակելոյն, թէ փորձեալ զիս տէր և
տես, թէ իցեն անօրէնութիւնք 'ի ձեռս իմ, և զյա-
ւելուածն որ զհետ սորին. Ո՜ խորդ [15] ես գոլով և
յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացելոցն յամ̃ ձայնակ-
ցեալ, պահեա զիս տէր 'ի ձեռաց մեղաւորի, և 'ի
մարդոյ չարէ. Ո՜ խորդ [16] համբարձայց ընդ փառա-
ւորեալն մաղթել ամ̃, թէ դու ես յոյս և բաժին իմ
յերկրին կենդանեաց. Ո՜ խորդ [17] իբր հանդիսա-
ցեալ ընդ ձգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թա-
գաւորին մատուցանելով զառաւելեալն քան զօրի-
նակ աղերս աղօթից, թէ [18] ինձ սպասեսցեն արդարք
քո մինչև հատուցես ինձ.

Դ. Նաբեբանեալ է և այս իմաստ հոգևոր՝ և [19] տէ-
րունի գործոյն նմանի, որ զփորձիչն պատկառեցոյց,
յորժամ զամենայն արհամարհեցէ՝ և զսկզբնապատ-
ճառն եղելոց միայն ընտրեցէ՝ ասելով, թէ [20] երանի
ժողովրդեան, որոյ տէր՝ ած է նոցա. Մեծ է և այս
բարձրութիւն շնորհի՝ և զգուշական համարձակութիւն
լցեալ երանութիւնք, թէ սէրք քո օրհնեսցեն զքեզ.
Ըղձալի է և այս ընտանութիւն մերձաւորական հոգևոր
հաղորդութեան յամ̃ յուսալ և 'ի նոյն արձանանալ՝
բանիւ սաղմոսին բերկրեալ, թէ զկամս երկիւղա-
ծաց իւրոց առնէ տէր. և զկարգ բանին կատարէ,
մինչև [21] զողբալին և զցուարձալին ազդեսցէ, թէ պա-
հէ տէր զամենեսեան որ սիրեն զնա. և զամենայն
մեղաւորս սատակէ տէր. 'ի գլուխս լրման գրոց
նուագարանաց սաղմոսիս՝ իբր թէ զօրինակն իսկ ե-
ցոյց վերջին հատուցման՝ արդարոց և մեղաւորաց.
Ուղակցորդք են միմեանց և զկնի երգեցեալքս.
զի թէ ընդունի զհեզս տէր՝ և խոնարհ առնէ զամ-
բարտաւանս մինչև յերկիր, ապա ինձ որքան եղկու-
թիւք կան առաջի. իսկ եթէ հաճի տէր ընդ ժողո-
վուրդ իւր, և բարձր առնէ զհեզս 'ի փրկութեան, ա-

պա հերքեալս 'ի բարեմասնութեանց եմ՝ մեր հաստա-տեցայց. իսկ եթէ օրհնելի է ա̃ծ 'ի սրբս նորա տիրա-պէս, ապա օտարս եմ 'ի մաքրութեանց՝ ընդ որս դա-սեցայց. իսկ եթէ [22] 'ի կանխերգիցն մերձ այսր եղեց յիշատակարան ինձ կշտամբութե, թէ սիրեցէք զտէր սրբք նորա, զի ստուգութի խնդրէ տէր՝ և կրկին հա-տուցանէ ամբարտաւանիցն, ապա յորում գնդի եմ դասայց՝ գերեալս 'ի գաղտնեաց գտողին չարեաց: Քանզի զօրօրինակ տատանին տագնապաւ տերեւք անկոց [23] եղեւին ծառոց՝ շարժեալք 'ի հողմոց ուժ-գին բախելոց՝ հոսեալք 'ի խոնարհ, այնպէս ջանա-ցաւ ջարդել [24] զընթացից իմոց վերարձակութե քա-ջաբեր ուղէշս՝ զյարմարեալս ձեռամբ անեղ մշա-կիդ: Ո՜ որ հաստատեսցես արմատացուցեալ վերըս-տին դարձեալ՝ նոր պտղաւորութբ անապականաւ, յանդաստան կենաց խնամոց քոց կամացդ՝ ամե-նապարգեւ թագաւոր քս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Բնաւն որ 'ի սաղմոսին: Զամենայն այսպիսի բանս սաղմոսին յա-ռաջ բերել, ուր ինձ 'ի նախատինս և յամենայն յօրինակին, մինչ եւս. կամ պատուհասին, հանապազ ընդդէմ երգել իմով բերանով իբր [illegible]:
(2) Զհրեշտակութեան փառսն: Զերկրորդ հեռացեալ տանց հայրենական տե-ղեացն, ուր են ընտանիք կոչիչ, սեպհական կամ առաջնական կարգին կի[illegible] վայելչութեն գաւթի, որ օրհնաւոր էր, այսինքն աշակերտ հին օրինաց, միաբանութեան զինուոր, թագաւոր, և մարգարէական իշխան՝ զբօսնելով 'ի զանազան հոգւս, և ամենայն այսպիսի կարգս մեծացեալ զանձնէ, որպէս և նոյն նոյնոյն հրեշտակաց, կամ երկնաւոր փառաց զօրագլխաց են առ[illegible] ժելիք: Զի աստ անդ, թէ զգալով խոստովան զմնկերէն՝ հալածէի. ընդ ամբարտաւանին և աղանդին՝ հաց. անգամ ոչ ուտէի. յերկիւղածս [illegible] անկանէի. զամենայն առանց 'ի պաշտօնեայ, են. ( տե՛ս սաղմ. Ճ. 5. 6: ) Այլ՝ եւ զայսպիսի բանս ունելով, զհետ ոչ յուսահատեցայց 'ի կենաց, որ աշակերտ զոլով նոր օրինացս՝ և քարոզիչ, կրօնաւոր և քահանայ, զուրկ եմ յայնց ամ բարեկարգութեց:
(3) Մտեալ զնեղեալ: Մեռուցից, կամ ապականից, տատանեալ տատանեսցին, նմանութբ տերեւոտոյ, որ նշանակէ՝ թէ 'ի սկզբան արդարութե պտղ տուեալ լինել պարտ է ընդդէմ մեղաց. որպէս ասէր դաւիթ 'ի նոյն սաղմ. Ճ. 8. * Ընդ առաւօտս սպանանէի զամ մեղաւորս երկրի: ‖ Այլ՝ եւ զիարդ այսպէս զնեղեցայց, որ զամ մեղանչական մարմնոյ և ոչ զանխիւ խորտակեցի, թող թէ սպանանել: Այլև զյաջորդն զիարդ կարեմ ասել. * Սատակեցից 'ի քաղաքէ տն զամենեսեան՝ որ գործեն զանօրէնութի. ‖ որ և ոչ զարտաքս հոգւոյս՝ զչար ախտն մեռուցի, թող թէ զայլ անօրինեալսն յաւուրութեն ածելով սատակել զչարութեն նոցա:

(4) Իւց գրեցին ։ [illegible] ( [illegible] ) [illegible] 'ի վախճանն [illegible] ։ [illegible] ։
[illegible] ։

(5) Ցուրկեցայց տաւիղ ։ [illegible] ( [illegible] ) [illegible] ։ [illegible] ։ [illegible] ։
[illegible] ։

(6) Օրհներգոյն տաղին ։ այսինքն օրհնութեն երգոյն, կամ [illegible] ։ Մի օրինակ. օրհներգոյին ։ Յ օրինակ. օրհնելոյն ։

(7) Զանայնութենցն ։ [illegible] ։

(8) Ասեցի պակասոյն [illegible] ։ այլ օրինակ. ասեցի [illegible] ։

(9) Զհեղոյն [illegible] ։ [illegible] ։

(10) Անհրաժեշտ վճռի ։ Յ օրինակ. վճիռ ։

(11) Զհամառօտն [illegible] ։ [illegible] ։

(12) Զանճառն [illegible] ։ [illegible] ։ [illegible] ։ [illegible] ։

(13) 'Ի [illegible] ։ [illegible] մինչև 'ի վախճան ։

(14) Վարդապետ [illegible] ։ [illegible] ։

(15) Եւ գոյղ ։ [illegible] ։

(16) Հանդերձեալ [illegible] ։ [illegible] ։

(17) Իբր հանդիսացեալ : Զի՞նչ ես իրքն հանդիսաւորից կամ հանդերձ-ճգնողացն գաւթի՝ դիւրըթանական ճգնութեան մատուցանելով էր, ապագիւր զայն աղաչանս՝ որ ՚ի վերս է քան զօրինակ, կամ յոյժ գերապանծ :

(18) Ինչ ողոռեսցեն : այլ օրէն . ինչ ողոռէն :

(19) Տերունի գործոյն : Յոյժ գովելի է և այն խնամս աստուածային՝ յա-րուցանել զամենայն արարածս արհամարհելով, զինչ միայն ընտրէ առնելով, երանի ժողովրդեան, ևն : Եւ այս նման է քնի գործոյն՝ որով յաղթութ աստուած զկործանիչն առնելով, * Տէր եդ քուն երկիրպագանեսցես, և զնա միայն պաշտեսցես : || ( մատթ . դ . 10 : )

(20) Երանի ժողովրդեան, որոյ : 2 օրէն . երանի է ժողովրդեան, որոց :

(21) Զողջակէզն, որ ասէ, զինչ մեղաւորս սատանայէ . և դդուարճանոյն, որ ասէ, սպանէ էր զամենեսեան՝ որ սիրեն զնա : Որով ՚ի վերջ կատարե-ման աստուածայոց իբրև թէ ծանօթս զօրինակ վերջին հատուցման արդա-րոց և մեղաւորաց :

(22) ՚Ի կենդանեգիրն : ՚Ի յաւիտենական երգեալ աստուածոցն :

(23) Եղեմն ծառոց : Հին լուծ . զերկենին մեկնէ, ցանկ է ծանուցաւ ստու-գասա, այսինքն աստեղատուն եղեւն աւելի, յայտնեան բուսանի, առեալ կատարեն զինքն : Բայց այսպիսի աստանի զհամբաւ ուներ փայտ արմեր և ամենայն . յայ-տնէ շինուածք լինիցին : Ոմանք իմանան զնոյնին . ( ակերել : ) Այլ սա ոչ յարմարի . զի անկեալք նախոյն մանկունս և խոտ գոլով, ոչ այնչափ առ-աւելին ՚ի հողմոց, և ոչ թօթափեն յերկիր . այլ խնամեալ է մարդ ծառն ( չամ աղաձը , ) որոյ անկեալք զեւրաշալուք են և թօթափեալք :

(24) Զընծայից ևնոց : Զամենայն ստանալոյ ձեռագեալ զմնացեալն ըն-թացից շատասակիմն ապարարա ուղէշս, այսինքն զմնացեալին ետնոց զորութեան՝ զմնացս և զկատարս, և զզգայութեց . զորս ետ յարգեմարեաց ՚ի ծառ բնութենս : Բայց մի օրինակ զնէ, զընծայից ևնոց կերակրոյթեան . այլ . ևն . այսինքն զշատատրս՝ որ արձակին ՚ի ծառոյն . և բառ պայս հեռաւորեալ բառքն՝ փախչէին ուղէշս, լինին բացայայտիչ բառքն՝ կերակր-կութեանց :

Մերոյին յառեղուած նրկէն հեծութէ՝ նորին հոգոյն առ նոյն ողբոց մաղթանաց բանի :

՚Ի խորոց սրտից խօսք ընդ Այ :

# ԲԱՆ . ԿԲ :

ա . Այլ արդ՝ ընդէ՞ր ոչ [1] ՚ի վերագրեցելոյն սաղ-մոսնախաձառական՝ և յայլ մարգարէիցն մասն ինչ յօդեցից : Քանզի զի՞նչ վայելուչս իցէ կերակրոյն, եթէ անզգայեալ ցաւովք ուտիցեմ . և կամ զո՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ ՚ի միտ առ-նուցում : Քանզի նզովեմ զիս ինքն ՚ի նոսին, և ոչ իմանամ . լուացեալ լինիմ, և ոչ պայծառանամ . արեամբ ծագեալ, և ոչ լուսաւորիմ . մեղր ճաշակեմ, և ոչ քաղցրանամ . [2] ռետնիւ ընանիմ, և ոչ բժշկիմ . միշտ կանխեմ ՚ի նոյն, և դատարկ երևիմ . Հանա-

պաղ ձա́ղիմ, և ոչ երբէք խրատիմ. ողոքիմ դարձեալ, և ոչ զգաստանամ:

Ե. Արդարև՝ մեղք և անօրէնութիւնք իմ յիս, և ես մաշիմ 'ի նոսին, [3] ըստ մարգարէին՝ որ 'ի դիմաց պարտաւորացն՝ բանի. և տէրունական առակին հին ոսկոցն և նոր գինւոյն: Վասն զի թէ սատակին անօրէնք և մեղաւորք 'ի միասին, ըստ եսայեայ ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի: Քանզի ասեմ զսաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ՝ որ առաւել առնեն զամբարտաւանութի. և կցորդեմ սմին զընթերցուածն, թէ օր տն 'ի վերայ հպարտից և ամբարտաւանից. ասեմ, թէ օտար եղեն մեղաւորք 'ի մօրէ, և որ ինչ կարգ սորին ցուցանէ. յարեմ առ սմին, թէ կործանեսցին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցին յերկրէ, և անիրաւք մերժեսցին 'ի նմանէ: Ողբք ինձ կարդացէք առ ձայնն, թէ զորօրինակ վառի եղէգն 'ի կայծականց հրոյ, այնպէս այրեսցին մեղաւորք 'ի բորբոքեալ բոցոյն. լացէք առ սաղմոսն, թէ արկցես 'ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք 'ի բանս ածեան վՃռին մարգարէիւն ազդեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոսն, թէ մահ հովուեսցէ զնոսա. ողբ արտասուօ՝ ողորմ հառաչմամբ ընդ հեծութիւ իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ խօսայելի և ինձ ասասցէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում: Աւաղ կարդացէք թշուառացելոյս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վայ նոցա՝ զի վազեցին զինև: [4] Նորքան փողեցէք 'ի սիրտ մղձկեալ նոր աղաղակի, յորժամ տեսանօղն աստուծով ամաչեցուցեալ զիս կշտամբեսցէ՝ ընդ ապաբասան տանն յակոբայ, տեսէք արհամարհոտք՝ զարմացարուք և եղծարուք:

Զ. Այլ դարձուսցես և ամփոփեսցես զբարձրացեալ զսուր բարկութեն ահաւորիդ սպառնալեաց՝ 'ի սարսուցելոյս յերեսաց մեծիդ. և խնամօքդ աջոյդ բարերարութեն առ իս ժամանեալ, օծութեն կենաց պարգևատուրեսցես քո աղաչողիս: Եւ քեզ փառք յերկինս 'ի բարձունս, և 'ի մահացուաց յերկիր 'ի

խանձարուրս, 'ի սահմանս բոլոր աշխարհաց, և յամենայն
յաւիտեանս. ամէն:

---

(1) 'Ի վերագրեցելոյն տաղս: Արժան է ասել՝ 'ի յառաջերկրորդ բանս սաղմոսաց յաւելեալ և յայլոց մարգարէից առեալ բանս. զի այնոքիկ են կերպակերպ և զեղ հոգւոյ. և որ շահ 'ի կերպակերպն՝ յորժամ անգրգռա- բար ոք ուսցի, նոյնպէս զինչ օգուտ 'ի սաղմոսէն և յայլոց մարգա- րէից, յորժամ ոչ 'ի միտ առնուցում:

(2) Ոսկեբերան ծանուցանէ: Ոսկեբերն է խէժ ծառոյ 'ի ծառոց, որպէս (չամ ասխոլոր, թէրեպենթին.) են. այսու այլաբանէ զի լուսաւորութեամբ զմեծագին բանս 'ի սաղմոսաց և յայլոց մարգարէից. որք զեղք են միրոյ հոգւոյ: Հին ըստ. զուեալսն մեկնէ, համօրէն քաղցր զեղջ անուանէ, զոր շող բաց ասեն: Մերք կանխեմ, 'ի սաղմոսաց, ընթեռնուլ զմարգարէս, և որպէս թէ ընդ գառաղի՝ անսանձելակ եմ:

(3) Ըստ մարգարէին: Ըստ բանի մարգարէին եսայեայ (ծթ. 12.) զ 'ի զինուց յանցաւորացն առաջնորդ. և ըստ աւետարանական առակին նոր փեոյն. որպէս զինի նոր մաճէ զհին տիկս, այսպէս անօրէնութիւնք իմ յիս մաշէին զիս:

(4) Ես բաժանեցայ: Եարխուն նոր աղաղակի հեր փոխել հեծեծա- ցեալ մեծկեալ սրտիւ:

---

Մեծարեն յաւերժական հրեղէն հեծեալն՝ նորին հոգւոյն, առնել աղերս ծաղկանց բանի:
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ ձյ:

# ԻԲՆ. ԿԳ.

ա. Բարերար և բազմագութ, մարդասէր և եր- կայնամիտ՝ միայն թագաւոր, ընդ Հօր քում պատուեալ և օրհնաբանեալ տէր ամենայնի, որդի այ կենդանարար: [1] Նախատանաց միշտ խնամք կորստեան. որ ամենեքին անփոփոխ ես 'ի չարեաց. որ ոչ կամիս զմահ մեղաւորի. որ փրկութիւն ես 'ի քոց կամաց ընծայեցել. որ դարձուցանես զմոլորեալ մեղաւորս 'ի յօղ քաւութեան. որ զհուր բարկութեան յանձրև փոխարկես: Որ [2] զյետնեալ զկինն 'ի բարեաց՝ կորեկ նակի գայլս նահանջեր՝ երկեակ բնութիւն 'ի նոյն առ- ձանի, ոչ խուսափես ընդ անպարտն, և ոչ համայն ընդ պատժաւորսն: Որ զլուծումն ծովուն սահմանաց՝ իբր զկարկառս քարանց կառուցեալ յեզանակե- ցեր: Որ զկարծրանութ վիմն անապատին՝ [3] 'ի մէ-

ծակս վտանգաց հոսեալ բղխեցեր ։ Որ զյորդանանու
ջրոյն օրաշարժ վայրէջկութիւն հրաշաւոր անդրադար-
ձութեամբ [4] 'ի յետնորդս հեթանոսաց լուացմամբ աւա-
զանին 'ի թիկունս առաքեցեր ։ Որ զպատուաստեալ
պարխայն երկքամն , յօրինակ կործանմամբ բանութեան
սատանայի՝ իբր զթեթեւութիւն յարդի ցնդեցեր ։ Որ
զշիտասահակար ջուր նորին [5] 'ի յառակ այլայլումն առ
'ի բարին փոխարկութեան քանանացւոցն փրկութեան
խորհրդական աղբիւն համեմեալ անուշեցեր ։ Որ զմե-
ռայլին դառնութիւն , իբր զմտաց անհաւանութիւն , կե-
նացն փայտիւ 'ի քեզ յարմարեալ՝ պխտանի արա-
րեր ։ Որ [6] զառեալն 'ի գետոյն՝ 'ի գծագրութիւն ան-
տահմանդ քո հրամանի անորակիդ դունակութեան՝ 'ի
նոր երանգ բոսորայլին՝ մածեր արիւն 'ի ցամաքի ։
Որ [7] զանկենդան ցուպ գաւազանին , 'ի կերպարա-
թիւ առ 'ի զքոյդ մերմելոյ նկարագրիլ , այլ եւ յոտա-
րագնիցն ընտրութիւն 'ի տիպն ապաթոյն կերպիւ վե-
շապի՝ նմանեալ ցուցեր ։ Որ զերջանիկ ձեռն աջոյն
մովսիսի , [8] 'ի ցոյցս տեսութեան ապագայիցս հրաշից
մարդեղութեան քո՝ բարձրեալ , եւ քեւ՝ ախտաւոր մար-
մնոյս մաքուր լինելոյ անփոփոխ փոխատրութեան՝ կրկին
դուշակեցեր ։ Որ [9] յայաքանեացս շրջագրութիւն , բա-
րեխնամապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ
մեղաւորաց կորստականաց [10] նշանակեցեր՝ օրհնեալ
ամենագութ ։

Ժ. Որ բուսուցանես յերկրէ զալարի [11] զմեռեալն՝
յանշնչականէն . որ զանշարժն՝ իբր զընթացող կա-
ռավարես . որ յանարգ արգանդէ՝ կոչես քեզ պատ-
կերակիցս . որ ոսս պատանեկաց՝ [12] աղօրիս ըմբոշխ-
նելիս . որ յայտս մաքուրս՝ հերս ընծայես . որ զաս-
զարթ ոսկութեան վարսից 'ի ձեան կերպարան զարմա-
նագործես . ցուցեալ՝ թէ առ ամենայն սահման հե-
ռաւորական՝ յաղթօղ ես հզօր . որ փոփոխես [13] զշըր-
թունս բնաւորականս , ըստ բանին յոբայ , 'ի կամս
հաւատարիմս ։ Որ սասանես զերկիր , եւ [14] զսիւնս նո-
րին 'ի հիմանց , նշանակեալ հաստատածին գոյիւ՝ թէ
դու միայն մնաս անկործանելի . որ [15] հոլովես զաստեղս՝
իբրեւ զանցաւորս , եւ դարձեալ 'ի նոյնն կապես՝ իբրեւ
զյարակայս . յայտ արարեալ՝ թէ եւ առ մեղաց բազ-

նութի՝ դիւրապէս ունել կամ Թողուլ՝ դոյնպէս զա-
րաւոր իցես ։ Որ 16 զարուեստին անզգայ էութի՝ իբր
երատամանաւ իմն դաստիարակես ․ երևեցուցեալ այնոր
իրի կերպիւ, Թէ զանուանս չար գիտեցուցանս՝ յորժամ
և կամիս՝ հանդարտ առնիցես ։ Որ զանբարբառ բա-
լորակ լուանին՝ կարգես ունայնս և պատարանս ․ 17
լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝
Թէ 'ի նուազուԹէ բարեաց զպարտաւորս մարմին՝
դու ածես 'ի լրուԹի առաջնաստեղծ հարստուԹեն ։
Որ զպատկերս անխօս աստեղաց՝ 18 իբր զգաստակս
դոյզն հօտից՝ տրոհես և ժողովես ․ յոյս իմն կենաց
առ այս խորհրդաբերեալ՝ քաղցրահայեաց տեսուԹի,
Թէ և անապաչաւորաց լեզուաց կարողապէս բաւես
ողորմել ։ Որ 19 'ի մէջ մահու և կենաց՝ շաւիղ վստա-
հուԹեն ուղղես 'ի ծովու ․ վկայուԹի եդեալ հաւա-
տի, Թէ և յանկասկածաւորն վայրի՝ քև պաշտպա-
նիմք անդայԹագելի ․ որ իբր զՋուր կաԹայից 'ի
հրոյ եռացեալ, որպէս զմեղաց մրրիկ պղտորեալ՝
բանիւ կամաց քոց խափուցանես ։ Որ հայիս յերկիր
և տատանես զնա, զի անբանիւն՝ զմտաւորս զգաս-
տացուցանես ․ որ 20 իբր զակատ մի անձուկ նաւի՝ 'ի
վերայ շարժուԹեն ալեաց՝ զանբաւ ԹանձրուԹի զետ-
նոյս դողդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաս-
տուածոց՝ Թէ իցես աներկբայելի, որ 'ի բանն քո զա-
րեղ՝ հիմնացեալ ունիս զամենայն ։ Որ 21 սերմանես
զարտաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկա-
բուստ պահեալ՝ կրկին կենդանածնես ․ որ ապակա-
նացուս աւանդեալ՝ անեղծս ստանաս ․ որ ընդ մա-
հացու նիւԹոյս՝ զնշխարս կենաց խառնես ․ որ հրա-
մանաւ ակնարկուԹե 22 'ի խառն վայրկենի կազմեցեր՝
պատրաստ կացուցեր զանզարդուԹի ամենից եղա-
նակաց ։ Քո է զօրուԹի և կարողուԹի, որ 23 շրՋա-
նակես զժամանակս ամաց հոլովման աւուրց՝ յայլ-
նմանուԹի բարեպատեհ տեսողուԹե ։ Որ կարգաւո
զանմռունչսն՝ իբրև զկենդանիս ․ որ ազդես միայն,
և նոքա ընԹանան ․ որ միայն 24 հեռուս անկանես
անճառ արուեստիւ հնարագիտուԹեան՝ մեզ և
առաւօտ ։ Որ 25 յետ նախակարգ յօրինուածոյն ա-
ռաջնաստեղծ լինելուԹն, արարեր զփառաւորեալսն

մեծամեծս հրաշակերտութեան հանդիսից, ըստ գրոյն եր-
ջանկութե կանխահիացն զարմացման, այլ իմն գոյա-
ցութի տօնելի տեսակի՝ անեղծ աշխարհագործու-
թեան եւս քան զայն՝ 'ի մարդանալդ քո, որոց ոչ
գոյ թիւ ։

Է. Որ անհաս զխնամս մեր՝ քեզ գրեցեր. որ զարդա-
րութիւն քո՝ մեզ շնորհեցեր. որ ընդ քեզ կրեցեր
զհաշտութիւն մերում փրկանակ. որ ոչ երբէք լքա-
նիս յօգնութենէ. դարձո զամբարշտեալս՝ 'ի պաշ-
տօն բարի երկիւղի. զթմբրեալս՝ 'ի զգաստութի արթ-
նութե սրտի. զանմաքուրս՝ 'ի սրբութի պայծառու-
թե կերպարանի. զբազմաբիծս՝ յանբծութի հան-
դարտական ոք պատկերի. զբեկեալս՝ յողջութի, 26
որ 'ի դիպմանց ոչ խորտակի. զլացեալս՝ 'ի խնդու-
թի զուարթութե անտխրելի. զյուսահատեալս՝ 'ի
սէր միաւորիչ անքակտելի. զամաչեցեալս՝ 'ի վստա-
հութի հաստատութե անշարժելի. զխաւարեալս՝ 'ի
լոյս երանութեան անմեկնելի. զմահու գերեալս՝ 'ի
կեանս, որ ընդ եղծմամբ ոչ անկանի ։ Զի փառա-
ւորեսցի անուն քո՝ Տէր, խոստովանեալ յամենայնի,
ընդ հօր եւ ընդ հոգւոյդ սրբոյ՝ 'ի բարձունս երկնի եւ 27
'ի ստորեւս երկրի՝ եւ 'ի բնակիչս նոցա, յաւիտեանս
յաւիտենից. ամէն ։

---

(1) Ընդդարձակօք մեջ ։ Որ ոչ երբէք պատմեսցի ընթերս իմում կորուսեալն, իմոյ ընդ հակառակն, մեջս արդելեալ, խոստանալս զառնի թե կորուսեալ մարդոյ ։ անփոյթ են 'ի լուրեալ, ոչ արկանելու բնաւ 'ի փորձութիւն մեղաց. 'ի փորձելն զմարդ մշտօք՝ հեռացուցանել զնա. կամիս 'ի չար փորձութենէ ։ ոչ ֆրէնական էն, յորդորակի զնի բացն, զի եւ ֆրէնական յորդորական իմանի ըստ բանի սաղմոսին, " Կեանք են 'ի կամաց նորա ։ ||

(2) Զշփոփնեալ ուխտն, զոլորտս՝ որ յիմանեցաւ 'ի բարեաց, այսինքն 'ի կատարելագոյն հրամանին ոչ չդառնալ յետս, կամ յետս մնալ 'ի բարի ընկերացն՝ 'ի զօրութեան եւ 'ի գիտութեան, ... փոխարկելով զնա 'ի քաղ եւ յաղ, ... կամ խոստանեցեր 'ի դառնալոյ 'ի սոդոմ. ... այսինքն խառն բնութի քաղց եւ աղի ։ Եւ այսու երկնեցաւ 'ի նմա առաքինութիւն ոչ, մեծանձնութիւն եւ զթութիւն. զի յարձան փոխարկելովն պատմեցաւ վասն անհնազանդութեան. եւ խոստանալովն դառնալ 'ի սոդոմ, պահեսց զնա եւ 'ի աղծութէ եւ 'ի հարուածոցն սոդոմայեցւոց ։ Վասն այսորիկ ոչ ընդ անապատն գաւառացն ապրեցաւ, եւ ոչ ընդ կորուսեալ սոդոմացիսն կորեաւ. զի հայեցեր նորա յետս՝ ըստ բարութեան մարդասիրաց՝ էր մեղք ներելի, ներողութեալ յերկիւղէ եւ 'ի կանանց թեթեւամտութենէ ։

(3) 'Ի Վէմալոս: 'ի հաստատուն վէմակաց:

(4) 'Ի յերկրորդս հեծեալսն: պղնձագամանեա արարածոց ընթացան 'ի վայր՝ հրաշալեաց յետս դարձուցանելով, 'ի հոգևոր ըմբռնմանս միջամտութեան յետնորդ հեծելոց տարեալ, կամ յառաջագոյն ըմբռնմանս հեծելոց:

(5) 'Ի յառաջ այլայլութեան: Զմիասնականս Հօր երկրորդն յօրինակ փոփոխութեան 'ի բարձրն, այսինքն փրկութեան քահանայութեան հեծելոց, առնուլ ձեռներ 'ի ձեռն եղեալ: ( Տ. Թագ. Ի. 21 : )

(6) Զառնէական 'ի գեղոյն: Այս բան ոչ հայի 'ի նշանն՝ զոր արարեր մեծ ակա առաջի փառացն. վասն զի սովոր պատկանգամ զկեան արփիանացոյց. (Եբր Է. 20.) այլ հայի 'ի նշանն արարեալ առաւօտին առաջի եղբարցեալ սոյ բառ հրամանին նոյ. ( Տ. 9 : ) Զայն Հօր առեալ՝ Թանձրացուցեալ յարփեան 'ի յանձնարկ, որ էր նոր եղանակ քահանայեն, այսինքն նոր կամ ան- բնական գոյն կարմիր, 'ի առնել կամ յօրինակ անմեռարք հրամանակեալ անը- բովիր գեղեցկութեան, որով անտրամելի զուարճանեցար: Այսէ կամի. զոր- գոյն Հօրն ներեալ դարձուցանելն յարփեան՝ էր օրինակ անմահութեան ծնու- թեան ընդունելոյ զմարմին և զարփեան մարդկութենս:

(7) Զանկեներան ցառ: Զանկենեգան զաւառութիւն մեծութեան փոխանակեցեր 'ի կերպարան անմեղոյն միջնորդ 'ի կերպարանութեան առ 'ի գոյոյ մերոյս նկա- րագրել. յօրինակ նկարագրելոյ կամ ձևացուցանելոյ զգէտ բնութեան մերոյս բնութեան՝ առաջին մեղաց. միանգամայն յօրացուցեալ ընդդա- նեան, յօրինակ ընդդրութեան սառար աղբերց հեծելոց, որք եղեն զ- զաւառութեան անկենեգան էին առ ծածկութեան, և փոխեցեր զնոսա 'ի մեռանութենն նոյ, առնելով նոցա զկատարելութեան օծի առաջին չարութեն: Բայց նկարագրել էր նկարագրական խմանալի է, և Թերևս 'ի գոյոյ մեռեալ է փոխանակ զնոցա՝ նկարագրել: Հին ընդ. օտարագրութիւն խնդրոյ դրեսթեան՝ առ որս ընտիր եղոյց ծած զմիւսես զաւառութեան: Բայց անյայտ է:

(8) 'Ի ցոյց փեսութեան: Այս 'ի ցուցանել զխմառոս հոգևորս, զներեղէն յերանն ողոյն, այսինքն զաղէղ ձեռն մեղաւոր նախա բարբառ առնելով, և ա- ռաջ բժշկելով, զօսղանեաց, այսինքն եառեալ զուշակ, նշանակ, յաղ- նակ առաջադրելոց բժշկութեան, զոր 'ի մարդկութեան արարեր, այլ և յօ- րինակ մեղքերեալ զանխուստր մարմինս մեր 'ի մեղաց. անփոփոխ փոխա- փեսութեան. այսինքն հաստատուն փոփոխմանց 'ի յառաջնութեն և յանձնակ- ցութեան: Իսկ նշէին զօսղանեաց առեալ կամ հայի 'ի բժշկութեն ձեռնաց մեղաւոր, որ միանգամայն արարեալ 'ի քարեւ առաջի նոյ, և երկրորդ ան- գամ յերկիրսաոս առաջի ժողովրդեան. ( Եբր. Տ. 6. 7. 30. ) և կամ զերկու ինչ զուշակելն առեալ, այսինքն զխորհրդաւոր բժշկութեան քաղ- հրեայն, և զմեր հոգևոր բժշկութիւն:

(9) Ցայտանեղայ շրջագրութեան: Այսքան օրինակաց յառաջբերութիւն կամ ցուցակութիւն, կամ շուրջ յանձնարելով, զգեստ կոչառական մեղ- ւորացն յայտնեցէր: Մինչև յայս 'ի պաշտօնէից ՍՅ յառաջբեր- ելոց զօրինակս զգեստ նորոյ առ մեղաւորս. ուստի առեալ՝ արտանկ- ներոյ զործեալ. վասն զի առանձին բարեխնամութիւն արարչի կարգի բնութեն ցուցանէր ՍՏ: Իսկ յետ այսր 'ի բնականաց առնու զօրինակ զգեստեն ՍՅ լոյս առողջական կարգի: 'Ի գործս պաշտօնէից՝ երեւէ ճշմարտութիւն սկզբին ՍՅ, իսկ 'ի բնականն՝ ճշմարտութիւն խնա- ամութեանն:

(10) Նշանակեալ օրինական անդնագութ: Որ քառասնեսս, ԿՆ. առասպելս 'ի մեր օրինական կենդանի. զոր և ընտրեցաք համեմատ բովանդակ ընթա- ցից զկնոյս, զի նշանակէր հաստատուն ուր յաւարտերականաւ անդամնելով:

[illegible]

(11) [illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

(14) [illegible]

ծին գոյնս, համագամանօք կազմուածոյ երկրիս. թէ ոմն միայն միոյ ու- շադրելի :

(15) Հոլովմունս պտուղեր : Հինն ըստ. խմմնոյ աշորս եղանակս տարւոյ, զա- մասն յաշուն փոխելով, նոյնպէս և զայլսն : Բայց լաւ ևս խմմնի չո- րեքին տարերքն, որք կամ 'ի միմեանս շրջան առնուն, յորժամ ջուր անօդացեալ, կամ հողն մանրեալ գաւանան յօդս, և ընդ հակառակն՝ օդն խառնի 'ի ջուր կամ 'ի հող. կամ նոյն տարր՝ յինքն հոլովի. որպէս ջուր շոգիացեալ վերանայ, և միւսանգամ թանձրացեալ յինքն ժողո- վի անձրևով. և կամ տարերքն խառնութբ 'ի բաղադրեալս՝ և դարձեալ լուծմամբն՝ հոլովին և կայլին. կամ դարձեալ, հոլովին տարերք մա- նաւոր ջերմերէտոցք, որով ջուրն 'ի հող անկանելոյ, և զօդն գրաւէ, և անդրէն զերջանի. կամ այլուր ընդ հակառակին հողն բացեալ լինի. կամ, յորժամ հողմով օդ և ծով տարաբերին, և դարձեալ կայլին հանդար- տելով : Այսու շրջանաւ երևելին տարերքն իբրև զանցաւոր, 'ի սկզ- փոխ լինելն և 'ի լուծանելն. և իբրև զյարակայս, 'ի գաղափարն 'ի սկզ- բանն խուրձելոյ, կամ խառնութբ 'ի նոր բաղադրեալս : Իսկ ամենայն ցանկս ասէ՝ թէ պտուղ ... , այսինքն կարող 'ի նորել կամ 'ի կաւել զբաղադրութիւն մարդոյ : այլ օրինն. պտղէացեն. այլ. պտղաւորեացեն :

(16) Զօրութիւնն մարգաց : Զանկենդան բնութիւն կամ կազմած արեան իբրև երրորդանաւ զօրելս, յորժամ յամենայնի թողուս բարձրանալ 'ի հիւսիսակողմն, որով տապացուցանէ. և 'ի ձմերայնի 'ի հարաւակող ցածուցանելս՝ առ 'ի մերձել զատայն. ցուցեալ այսու՝ թէ զօրութիւն բնութեան մերոյ համագամանել կարող ևս : Որմնք խմնդան ըս նաև 'ի մերոյ անտիւանեան ընթացից արևու, որով երրևմն գաղափարն զնա ած, որպէս առ յետուաւ, կամ յետս դարձոյց, որպէս առ եզե- կիայիւ : Սակայն առաս զանկանեան ընթացից նորաս խօսի բանս:

(17) Լուսաւորեալ զգաբեանն : Զգուշոց լուսնի անձեցուցանելով և նուազեցուցանելով, յայս առնելս զխորհուրդն առ աւետիս՝ յայտ- թէ կամ 'ի յայս աեսողաց, թէ կարող ևս և զմարդ նուազել 'ի բա- րեաց՝ յառաւելին հաստատութեան դարձուցանել : Լաւ օրինակն զնէ, լու- սաւորեալ, համեմատ այլոց բայից՝ որք 'ի վեր և 'ի վայր զնեն յանցեալ՝ այսինքն յոյժ օրաւորեալ, Երևեցուցեալ, ևն : Իսկ յայլ աղագիս, լու- սաւորել :

(18) Իբր պտուղ : զանդրան աստեղօ՝ իբրև զջուր սակաւ ոչխարոց եր- բեմն փոխել, բաժանեալս կամ հեռացուցանելս 'ի միմեանց. և երբեմն ժողովիս, մերձեցուցանելս, որ յառակալեալ խմմնի զմոլորակեան աստեղս. Այսու յոյս իմն խորհրդաբերեալ, խորհրդաւոր ծանուցեալ մի տարբ- հայեաց փեսուին, քաղցրադրութ խնամակալութիւ, թէ նաև համար կամ անմիջաբար մարդոց ողորմիս : Զբառսն տող ըրահայեաց փեսուին մարթ է և յարել 'ի բայն այսպէս. յոյս իմն փրկարար՝ խորհրդաբանեալ յայտնեալ ... այս քաղցր գիտութիւ, թէ նաև համարոց ողորմիս :

(19) Ի վէջ ժահու : Քոյով աեսչութիւ առս 'ի ծովլու շատից ժողովուրդեան կամ զզուշաւոր լուս բանիս խմսաս. (Ժզ. 3 :) որով զնան մարդիկ իբրև 'ի մէջ կենաց և մահու. և այսու առս մեզ մեկնութիւ կամ առ- ցոյց՝ թէ նաև յանկարծակած անկելոց և 'ի ժամանակի՝ յորժամ վասնք զանազանք պատահեն, և մեք անմխաս մնամք, զու ինքն ևս պաշտպան- ար իբր վճար, զծով որ խառնի որպէս ջուր եռացեալ 'ի հրոյ, և զա- քով հրամանաւ ցածուցանես, եատուր օրինակ թէ նմանապէս զփրկէ զպ- ղոց, որ յառնէ յօգնա մեր՝ զու խոխացանես, խափանես, ապրեցու- ցանելովս :

(20) Իբր զանոթ Գ : 'Ի յոյն բառէն՝ ափափրիմ, նշանակէ՝ մակոյկ, նա

ւակ ։ Որպէս զխոզքս մանկոյն նաւի միոյ 'ի վերայ ալեաց՝ այնպէս շարժես ասէ՝ զըմբռնողական թանձրութիւն գետնոյս․ որով ցուցանէիր ամենայն արարածոց՝ թէ դու կաս առանց երկբայութեան․ կամ, առանց երկբայութեան զմա ես այն՝ որ 'ի բան հրամանի հաստատեալ ունիս զամենայն ։

(21) Սէրմանէս ղուրփաղնիցայեալ ծաղկինս ։ Որմանք խմոցեան զանդրմանց բաւասոց ։ Բայց ոչ յաղթող բանիցն յարմարի, և ոչ բառին որթոփնիցայեալ, որ նշանակէ՝ համեալ զգուշին, այսինքն մեռեալ․ և զի զգուշաց ասաց 'ի սկիզբն ը հատածոյս ։ Այլ խմանելի մեռեալ մարմինք մարդկան․ զոր ակրմանեա ասէ՝ թաղմանքն և 'ի հող լուծանելովն․ բայց և անձկորատ պահելով 'ի գիտութեան քում խւրաքանչիւր մարդոյ զխերին մարմին․ զորս դարձեալ կենդանացուցանես՝ ոչ ապականացու խորև զառաջինն, այլ անապականն յարութեամբ․ և ընդ ծաղուն, ( մի օրին․ ծաղու նիւխոյս ,) է մահկանացու նիւթոյ մարմնոյն խառնեա ասէ զնշխարց կենաց․ մի օրին․ և 'ի հին լուծ․ զնշխարն կենաց, այսինքն զհոգին բանական․ զի 'ի մեռանել մարդոյն՝ հոգին միայն մնայ կենդանի եւր նշխար․ իսկ զնշխարց ասել խմանի․ ըստ որում հոգին բանական՝ է պատկեր և հաղորդութիւն անմահ կենդանութեան նոյ ։ Մարթ է և խմանալ զկենդանական զօրութիւն՝ որ անեղծ պահէ զմարմինն յարուցեալ ։ Որմանք խմացեան 'ի վերայ ակրուանական մարմնոյն՝ որ հաղորդութեամբն խառնի 'ի մեզ ։ Սակայն ասա զյարուէին խօսի նա վարդապետս․ յորում ասէ՝ ընդ մահկանացու նիւթոյս, այսինքն մարմնոյս, խառնեա զնշխարն կենաց ։

(22) 'Ի խոսն վոյրէնի կողմեցեր ։ Եթէ խմասցի 'ի միում բնական վայրկենի յօրինեալ զաշխարհս, է կարծիք բազում հարց, յորոց առեալ ամէն օգտաւէտս, ընդարձակ մեկնարանեաց ։ Իսկ եթէ համարիցիք 'ի վեց աւուրս զանազանս արարեալ նոյ զամենայն, առակաւէին Ճշմարիտ է՝ 'ի խոսն կամ 'ի առակաւ վայրկենի ասել․ զի ոչ եթէ 'ի բովանդակ աւուրն առ առակաւ առակաւ զանազանօք գործէր նծ, այլ լոկ հրամանաւ 'ի մի անդրդուելի վայրկեան իւրաքանչիւր աւուրն մշտարէր զգործն․ ուստի զբովանդակ ժամանակ աւարտմանն 'ի մի հաւաքեալ, նախ զմի վայրկեան մերոյ ժամանակիս կացուցանէր ։ պարբաոց խայոացեր, այսինքն համբերեալ զարդարեցեր զանզարդութիւն ամէնայն եղանակոց․ այսինքն ամենայն գործոց և արարածոց՝ որք լինին յիւրաքանչիւր եղանակս աւուրոյն ։ Զայս բան յարէ յանցեալն, նշանակել թէ 'ի առակաւ վայրկենի կարող գոլով զարդարել զամենայն բնութիւնս, նոյնոք կարող է յական թօթափել զմեռեալ մարմինսն նորոգել ։

(23) Շրջանակէս գծամանակ ։ Կատարելարեն կամ փոփոխեա զշրջան աւուրց առաւօտին յայլ նման աւէն, 'ի ձմերայնւոյ 'ի գարուն, և 'ի գարնանւոյ յամառն, և յամարայնւոյ յաշուն, և իւրաքանչիւր եղանակք ու նոյն զիւրեանց բարեխառնեհ վայելչութիւն և զօգուտ ։ Որմանք ըստ հին լուծ․ խմացեան զփոփոխմանէ լուսաւորաց յեա աւուրն զատատեալ․ բայց ոչ 'ի դէպ․ զի ասաղս խօսի զմնական փոփոխումէ նոցա ։

(24) Հենուս անկանէս ։ Ըստ նմանութեան ասաւյնի կամ կատարայ գործեա զմի օրն, խմանալ արևուն առանելով նգգ, այսինքն մութն, գիշեր․ և եւ մասամբն առանելով առաւօտ, այսինքն տիւ, ցերեկ․ որով մի օրն լինի կրկին երկդոյն կատար՝ գործեալ 'ի անոյ և 'ի առաւօտէ ։ Եւ զայս առնես ասէ՝ անճառ արուեստիւ․ զի զհամեմատ առանձնեան և գիշերոյ հաղիւ նշմարեն բառամանքննեին աշխարհաղեացք յիւրաքանչիւր կողման երկրի ։

(25) Ցեփ նոխոնկոց ։ Ցեա նախկինն արարչութեն՝ արարեր զխառնառօրան հրաշակերտին հանդիսից, փոխանակ ասելոյ՝ զխառնառօրն հրաշալիքս հանդէպս կամ գործս, ընդ որս կանխաւ խակ հեանայր երջանիկ կամ որդւոց զխրն Յոհկայ․ (Թ․ 10) ասելով․ ՚Որ առնէ զմեծամեծս և զանհ

քննիւս, և զխառնաւորս և զհրաշալիսն, որոց ոչ գոյ թիւ ||։ Մատուցաբերաւորք յեղելոց անտի մեծագործութեանց աշխարհի՝ գուշակելոյ Յովբ, թէ Ած առնէ, այսինքն առնելոց է զնա հրաշալիսն, որ է այս ևս գովացումն, այլ իմն առաջադրած կամ յօրինուած փոխելի փոխանի, խնդրելի կամ օրհնաբանելի միծնակի. և է մեկնել առ աւելագործումն, զխորագոյնս քան զաշխարհահայեաս տարաչութիւն, յորում միշտ եղծանելի գործէ, և հաւատ յետոյ վախճանն առնուլու, բայց առաջարկագործութիւն՝ որ ՚ի Քրիստոսի մարմնացանալոյն՝ անեղծ և անվախճան է, ըստ ամենայն յաւիտենական նախականն, և հրաշալի գործք նորա՝ անթիւք։

(26) Որ ՚ի տիեզերաց։ ՚ի հարկանէ, կամ ՚ի սպառնալեաց ոչ խոտորեալք, կամ մի խոտորեցեալ։

(27) ՚ի սփոփելոյ եղերե։ մի օրէն. ՚ի սփոփելոյ։

---

Սրբոյն յառաջադրեալ կրկին հեծութեան՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանին։

՚Ի խորոց սրտից խօսք ընդ Այ.

# ԲԱՆ ԿԴ.

ա. Եւ արդ առ ամենայն բանս՝ յամենայնի ուղիղ ես՝ Տր. իրաւամբք դատիս. արդարութեամբ կշռես. ճշմարտութեամբ չափես. [1] օրհնութեամբ հատուցանես. բարութեամբ ընծայես. առատութեամբ սիրես. յստակութեամբ կամիս. [2] լուսաւորութեամբ համբուրես. փորձիւ յանդիմանես. երկայնմտութեամբ քննես։ Ո՛չ ունիս նենգութիւն՝ և ոչ գռուզութիւն, այլ ամենևին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն։

բ. Արդարացար վերին իմաստութիւն անայլայլական հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անզեղջ գովեստիւ յորդեգրեցելոցն շնորհօք, ըստ բանին սրբութեան՝ որ աւետարանաւն կենաց ՚ի քէն ընկալաք. որ [3] ոչ ՚ի կոծելն ողբացի, և ոչ ՚ի փողելն կաքաւեցի։ Ասացեր անօրինիս՝ թէ մի անօրինիր, և ես ՚ի նոյն չարիս յանդգնեցայ. մեղաւորիս՝ թէ մի ամբառնար եղջիւր ՚ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի. և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ ՚ի ձեռւին քո են եղջիւրք արքայութեան հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ ամբակումայ, դաւթի և զաքարիայ։ Օրհնութիւն ինձ կամեցար՝ ողորմած, և ես անիծեալս՝ մեծ տարագրութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մասն. սիրեցի բարկութիւն

և ոչ բարութիւն. շօշափեցի ըստ գրոյն՝ զխաւար և ոչ զլոյս. կենդանի ձայնիդ քո գթած՝ ապաւառւմն պատասխանեցի. Օրդնն՝ անմահ ասացեր բանիւ եսայեայ, և զհուրն՝ անշէջ, և զկշտամբութիւն՝ անվախճան, և զտեղին՝ յաւիտենից, և զօրինակ նմին՝ սոսկալի, և ես ոչ իմացայ, ըստ սաղմոսողին, և ոչ մտառեցի. այլ 'ի մառայլ մտաւորական կուրութե գնացի. Ցուցեր մարգարէիւն, թէ զօրհնութի սատացի՝ [4] որ զօրէնս դնէ, և ես համառօտել զնոյն փութացայ. Արձան հոգևոր վիմի գրեալ մատամբ քո՝ տէր յս քս, [5] զդաւիթ իւրովքն բանիւք կանգնեցեր, առելով իւքեան ընտրութեան առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յամենայն ժամ, յաւիտեան. անդրադարձութե բանին միջնորդեալ զկրկին հաստատութիւն, թէ և յաւիտեանս յաւիտենից. ընդ որս՝ և զսորին նմանիս պարծանաց՝ առ իմս խորախոյս, և ոչ զկծեցայ. Ձեպեցայ [6] 'ի տունս բաւհաղու, և ոչ տայ. 'ի յերկուս [7] հետս երկմտութե կրկին կաղացի կասեալ 'ի բարեաց, ըստ երգիծանելոյն հեղիու. Ունիմ զմովսէս իւրովքն օրինակօք՝ եկեալ 'ի մեռելոց, և զտառս մարգարէիցն՝ գրեալ 'ի յոգի, և զմատեանս առաքելոցն՝ ընդ մտացս մատն յեռեալ, և զտէրդ հասարակաց՝ կտակաւն աւետեաց՝ յարուցեալ 'ի թաղմանէ անթիւ ննջեցելովք. և անհաւատագոյն քան զհնդեսին եղբայրակցութիս այնր մեծատան, որ է առակ իմն յարմարական, նմանեալ զգայականացն մասանց՝ անողորմիցն յղփացելոց, մնացի իբրև զսալ [8] դարբնաց անոստ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս օրինակն է բելիարայ, և ոչ ապաշխարեցի.

Գ. Այլ ողդեալ վերստին առ սոյն կերպարան լքեալ կրկին ողորմութե բարերի, ահաւոր, մարդասէր, խնամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան թագաւոր, զօրութ պանծալի խաչիդ խորհրրդոյ, 'ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան՝ երկիմանցս յիմարութե և անպտուղ սրտիս լքութե. զի առեալ նպաստ օժանդակութե 'ի գթութե կամաց ամենակալիդ, [9] որոտացէ՛ բղխեսցէ՛ հոգիս, ընծայեալ ուշաց վշտագնեցելոյս՝ վտակս արտասուաց

արտաքսանողաց՝ ինձ 'ի փրկութիւն և 'ի մաքրութիւն, և քեզ 'ի հաճութիւն ընդունելութեան՝ ամենապարգև տէրդ բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն ։

---

(1) Օրհնութիւն հեփոնիա ։ 'Ի հնաւելով մեզ, կամ յորժամ ըղձի մեր զատ խնամեալով և պաշտպանելով, օրհնութիւն ընդունիմք. կամ, ըղձեաց փառաւորեցելոյն 'ի քեզ՝ օրհնութեան գնաս, և ոչ անխծանելով. կամ, 'ի գալուստ քո՝ օրհնութիւն բերես ։

(2) Լուսաւորութիւն համբաւրեա ։ Զկայանութիւն, կամ զպայծառութիւն մտաց. խնամութիւն, և սրտի ախորժեաս ։ Փորչիա յանդիմանեա. քննելով յանդիմանեաս, և ոչ անքննաբար ։

(3) Ո՛ւ՞ կոծեւն ։ Յանձն իւր առնու զառաւելն մանկանց՝ զոր առնելն առաւաց 'ի յանդիմանութիւն հրեից. (մատթ. ժա. 16 ։) Զայն առաւել խրախոյ ինչ աւելորականն 'ի մէջ հրեից համարիմն մեկնիչքն՝ կուռանելով, մեծացիս, կարծեմ, և այլք՝ առեալ 'ի թեթևիցականս ։ Այլոք՝ եւ աւե, ոչ ընդ առաքելապետն կոծեցի, և ոչ ընդ առաքելոյն խնդաւելից եղէ. կամ, ոչ 'ի առաջնոցն զարհուրեցայ, և ոչ 'ի խառնամունս բարեացն յոր գործեցայ ։ Ուստի արդար ցուցար խնամութեամբ հօր՝ ըստ քո խոկ առաւելոյն, 'ի գառնելով դիս. կէլին Վլայեալ յարգարոցն՝ թէ այժմ, և թէ յառաջ գառաասանի. անդէոշ, այսինքն հաստատութեան և անփոփոխելի զօրութեամբ. կամ կէլին, այսինքն գործով և բանիւ ։

(4) Որ աշրէնս տնէ ։ Ըստ սաղմ. (ձք. 8.) օրհնութեան արժանի լեալ՝ որ զօրէնս ուղիղս հաստատէ, կամ 'ի գործ դնէ. խակ ես Ջանացայ հաստատել զօրէնս՝ զանցառութեամբ ։

(5) Զդաւիթ խաւոնչն ։ Իբրև առախաւոյ օրինաց զգեստ զօրութեամբ քով կանգնեցեր զգաւիթ 'ի ձեռն օրինապահութեան, որպէս և ինքնին մեկնէ՝ մինչ պահելով զօրէնս քո, անդրադարձութիւն բանին, մերթ զգաստացուցանելով կամ կրկնելով զնոյն բան՝ յաւիտեանս յաւիտենից, կրկին հաստատեր զպահութիւն օրինացն ։ ընդ որս, այսինքն ընդ որ բանս և զոյգ նման բանս պաշտօնակն մեկնէ, եւ. կամ ընդ որս առեալ իւր եղանակն, այսինքն ընդ որում, խնամի՝ ընդ գաւթի զնորա նման պատուիրանապահս արանց ծառայս կանգնեցեր առ 'ի յորդոր ինձ, և ոչ յօժարեցայ, կամ ոչ 'ի սրտի սանձեցի, եւ ։

(6) 'Ի փոքու բահազուա ։ 3. օրին. 'Ի փոքու, այլ օրին. 'Ի դեղնու ։ Առաւել փութացայ 'ի առաւօտ կամ 'ի հանդէսս բանհարու, այսինքն սխալից մարմնոյ, 'ի խրախուսնս աշխարհի, քան թէ 'ի պաշտօն Այ ։

(7) Հէփո եւլեփոաւի ։ Երկմտութիւն ոչ զհաւատոցն առնէ, այլ զգործոց. կաղացի յերկուս ճանապարհս բարւոյն և չարին անհաստատ գնացիւք. կամ, 'ի ծառայութիւն այ խառնեցի և զծառայութիւն դիւին, ըստ եւփեծանեւյն, ըստ նախատեսելոյն կամ մեղադրելոյն եղիայի ։ (գ. թագ. ժը. 21 ։)

(8) Դաւբնաց անոսփ ։ 2. օրին. անընդոսփ ։ Անշարժ մնացի իբրև զտաշ գարդանաց, որ հարկանի կռանօք՝ և ոչ զգայ, ոչ շարժի. այսպէս և ես անշարժ առ 'ի բարին եղէ ըստ նմանութեան սատանայի ։ Երևեալ գոլ անձն իմ. զի խորհրդածեալ մեծատունն 'ի գժոխս անդ՝ բաւական համարեցաւ 'ի զգաստութիւն հնգեցունց եղբարցն՝ եթէ Ղազարոս ևեթ յարուցեալ գնայցէ և քարոզէր նոցա ։ Իսկ ես ունիմ ահա առնէ՝ զնոյն ինքն զՄովսէս եկեալ 'ի մեռելոց յայլակերպութեան անդ, և զբանս մարգարէից և զճառախօսս առաքելոցն 'ի միտս և 'ի բերանի կրեմ ։ 'Ի մերոյ այ-

տղէկ և զամենեցուն զՏէրդ. ուռնիմ յաղթուցեալ ընդ բազմաց այդոց: Սակայն առաւել անհատան քան զհնդկային եղբարն զատանիմ, որ են յարմարականն օրինակ անուղղոյ մեղացելոց զդայութեանցս: Այլ ուղղեմ, աղաղակեմ, նկրդարծեմ կրկին ողորմութե՛ յայս իմ եղկելի առհասն. և 'ի քարոզեալ աղաչեմ բարեսէրն ըստ թե՛ խնդրեմ ...

ամենայն զատաշղմանն 'ի մեղսն:

(9) Որոգայթն Բղխեոյն հոգին: Այսպէս եղանք ըստ մերում և ըստ այլ եւս օրինակաց՝ համեմատ խնամոյից բանին, իբր ասել. սերոյն զորով իբր անդգամութեան կարծրացեալ և անպատուղ, ծաղկաբերեալ 'ի գթութեա նորա- տեսցէ հոգին զգիմանդը, և բղխեսցէ զարտասուս իբրև անձրև առ 'ի ա- ռողանել զսիրտս են: Իսկ յատակին ասացեալս եղեալ կայր, որով տա- ցէ, են. որ չյարմարի նաև շարակարգութե՛ բանին՝ յետ ասելոյն՝ գի ա- ռնել նորաս օծանդակաւն ... յարել, որով տացէ, են:

Մերոյին յանձնուած կրկին հեծութե՛ նորին հոգւոյ, առ նոյն սուրբ ծաղկանց բանի:

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ այ:

# ԲԱՆ. ԿԱ.

ա. Եւ արդ՝ ես նախանձու ամբարշտաց, գլուխ մեղաւորաց, պետ անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց, [1] աստիկեցիս ըստ վատթարութե՛, այլ ոչ ըստ բարեբաստութե՛, ահա զանճառուցն իմոց ճառեցի. զպատկառելիսն խայտառակեցի. զգաղտնիսն հրապարակեցի. զծածուկսն յայտնեցի. զթաքուցեալսն ցուցի. զամփոփեալսն տարածեցի. զդառնութեա մաղձ ժայթքեցի. [2] զգործակցութի՛ չարին մատնեցի. զամբարեալ թարախ վիրիս քամեցի. զխորս պարտեաց իմոց ծանուցի. զպատրուակն կեղծեաց առի. զքօղ տգեղութե՛ վերացուցի. զամօթալեացն զգեստ մերկացուցի. զգարշելիսն յանդիմանեցի. զմրուրն մահու փսխեցի. զպալարս հոգւոյս խածուածոց՝ քահանայապետիդ քո բացի: Զյանձինս վտանգ ոչ անխայեցի. մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի. [3] զարմատն հնութե՛ տեսիլ արարի. բնութես կարեաց ոչ ողորմեցայ. զմիաբանութե՛ն կապ խզեցի. զդղեակ որտիս քանդեցի. ընդ կամացս որսոյ իբր ընդ դարանակալի մահու կռուեցայ. զպահեստ անյայտիցն արտաքս հանի. ընդ մթերիցն զանձ՝ մեծին գուշակեցի. զդատախազն՝ դատաւորին հանդէպ կացուցի. զապաւնեացն զփորձ

այժմէն իսկ գոլ. զդաշն կործանողին կարեցի.
զուխտն խաբողին ցրուեցի. զկատարած մարտին յաղ-
թութ՝ ՚ի քեզ տէր յս ապաստանեցի. զպատերազմին
խումբ գրգռեցի. զդիմադրութն դիմեցմանն՝ բանիւքդ
այ յուսացայ. զխաւարատիրացն փաղանգ՝ լուսե-
զինացն զինուց սադրեցի։

Ժ. Դու արդ՝ ստեղծիչդ ամենայն եղելոց քս որդի
բարձրելոյդ այ, զաստէն դսրովեալս յայսպիսեաց
բանից, և զհարուածեալս յայսքանեաց դանից՝ մի
կշտամբեսցես կրկնակի դատել ՚ի մեծի աւուրն։
Ո՛հա հզօր անքննին անճառ բարերար թագաւոր ամե-
նայն, առ այս կերպ պատկառանաց՝ ինքնապարտաւոր
խոնարհութե, որ ինձէն զանձն՝ մեծաւ ձաղանօք
յոգի դատեցի, լից նուաստօք այսր մատենի՝ անար-
գանօք ամօթոյ՝ զդէմսն սատանայի. և զերեսս կեր-
պի պատկառեցելոյս նշանաւ խաչիդ զօրացո։ Մ՛խա-
ցի կնիքդ լուսոյ ՚ի դեղ տեսակիս. ամրութեդ նշան
հաստատեսցի՝ 4 ՚ի տիպ դիտակիս. երևակ կենացդ
փայտի ձևացի ՚ի պատկեր այտիս. արուեստդ հրա-
շից՝ ՚ի ճակատիս շուք նշանակեսցի։ Մի այլայլեսցի
յինէն՝ դրոշմդ լուսապաճոյճ. մի բարձցի ՚ի տեսա-
նելեացս բբաց՝ ճաճանչդ օրհնութե. մի մերժեսցի
՚ի գլխոյս՝ առհաւատչեայդ վստահութե. մի սասա-
նեսցի ՚ի բերանոյս ամրութե սեմոց՝ փառք ամենազօրու-
թեանդ։ Պահպանակդ երկրպագելի՝ ՚ի զգայարանս
որտիս միասցի. չորեցս նիւթոց իմոյս գոյութե քա-
ռաթեւիդ նշոյլ ապդեսցէ. ձեռինս կարկառմանն՝
փրկչիդ իշխանութիւն օժանդակեսցէ. մատուցմանս
հաստատուածոյ մատինս՝ խորհրդարանդ համարձակու-
թե բարեգործեսցէ։ Ի մեկնելս իմում, 5 մի հեռա-
ցի սրբութիդ. մի լքցի պատիւս՝ ՚ի պատւիլն պար-
տաւորիս. մի մերժեսցի ՚ի յոգւոյս՝ անդաւաճանե-
լիդ փրկութի. մի ջնջեսցին գիծք կենդանատուիդ՝
՚ի քո գրեցեալս շնչոյ. մի եղծցի նկարուածն արեան
զօրութե ՚ի տիրատիպ խորանէս. 6 ընդ իս բնակես-
ցէ յիմում գերեզմանին. ՚ի ծորել մարմնոյս թշուառ-
ուի՝ օծումն շնորհիդ առ իս պահեսցի. ՚ի նորոգու-
թեն աւուր՝ սովաւ հանդիպեցայց փառաց փեսայիդ.
7 ՚ի քոյոց այտի ծանուցայց, քոյովքդ վառակօք

ողջունեցայց, երախտեօք մեծիդ յարգեցայց, աւա-
ղանին զգեստիւ պերճացայց՝ քաւեալ ողորմութեամբ։
Ածա բարերարութդ զվերարկուդ անապականութեան
տաժանեցելոյ մերոյս մարմնոյս. [8] մի յարիցէ ընդ-
քոյս՝ բանսարկուին. հնացուցիչ հոգւոյս՝ վանե-
սցի. խաւարամանկացն պատիրք՝ մի ընդ իս վերբերե-
ցին։ Օրհնեսցի անուամբ քո գըթածդ՝ վերջն իմ
հանգստեան. ողորմութեամբ քո լցցի դուռն իմ գերու-
թեն. ընդարձակեսցի քեւ ինձ՝ տեղին թշուառութե.
անդորր եղիցի խնամօքդ՝ ինձ բանտն բարկութեն. [9]
անուանեսցէ զիս առ յաճուցն՝ արդարոցն մթութե. յու-
սով քո շտեմարանեսցէ զիս՝ յարկն այն անձկութե.
ձեռամբ քո պահեցայց 'ի խշտին տարտամութեան.
թեւօք քո ընկալայց՝ 'ի տուն տաղաւարի. դու գթ-
վեալ ընդ իս՝ 'ի սենեակն վտանգի։ Նուաղս ինձ աս-
տանօր՝ [10] 'ի թիւս հազարաց, զի երբեմն էի վեր-
նայինն, եւ այժմ անդնդայինն. երբեմն տօնելի, եւ
այժմ աշխարելի։

Է. Այլ եւ արդ [11] կրկին դու օրհնեալ 'ի բոլորից
գոյից՝ յերկնայնոց եւ 'ի ստորնայնոց՝ եւ 'ի սանդարա-
մետականաց մեռելոց՝ անպարտականդ այս տարա-
դրութեան։ Ես վրիպեցայ. ես օտարացայ. ես յիմա-
րեցայ, պարտեցայ, եւ խոտան գտայ. ես լքայ, կա-
մեցայ, եւ կործանեցայ. ես մոլորեցայ. ես մատնե-
ցայ. ես մերժեցայ. ես խորթացայ, գերեցայ, եւ
դայթագղեցայ. ես նզովեցայ. ես թշուառացայ,
որբեցայ, եւ վատթարացայ. ես ընկլուզայ. ես խա-
բեցայ. ես անօրինեցայ ես ապականեցայ, մահա-
ցայ, եւ իսպառ եղծայ. չիք քո առ այս՝ ինչ [12] մասն
չարի, որ ես միայն անփոփոխ բարի։ Արդ՝ կամք քո
յիս, եւ [13] խաւարն ինձ ճառագայթ. ճրագ լուսոյ
քո անդ, եւ գիշերն վաղորդայն. մարմնոյ քո հաղոր-
դեալ, եւ յամօթոյն կարծեաց ապրեալ։ Իսկ ես [14]
ոչ գրեմ զանձն իմ կենդանի՝ վասն անփախչելի
վախճանին. դարձեալ՝ զիս ոչ վարկանիմ կորու-
սեալ՝ վասն աներկեան նորոգմանն։ Որ եւ [15] փա-
կեալ համարիմ ինձ զելս կենացդ՝ վասն անքաւե-
լեացն պարտեաց. դարձեալ՝ բացեալ ինձ ըղ-
դրախտն՝ վասն փրկութեան աւետեաց. քանզի ոչ

այնքան վհատութեան գոյժ տագնապէ, որչափ փրկութեանդ քաղցրալերեալ ձեռն կարկառէ։ Որդ՝ տէր տէր՝ տէր ողորմութի, առ ամենայն ձայն գոհաբանեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) Ատտիկեցիս։ Ատտիկէ էր գաւառ Աքայեայ, կամ Եղլադայ, որոյ մայրաքաղաք էր աթէնք՝ աթոռ գիտութեց և օրինաց և քաղաքականութե. յորմէ ատտիկեցի՝ նշանակէ աթենացի. և զի որպէս իմաստութք անուանի էր այն գաւառ, նոյնպէս չարութեք և մանաւանդ՝ անպատկառութք. կամ զի յառաջին 'ի շինութեն իւրում բարեբաստիկ գոլով, յետոյ կործանմանքն բնաւ անարգեցաւ. վասն այսորիկ ատտիկեցի առի առաւելն յերկպաանչիւր ներհակսն, այսինքն թէ 'ի բարեբաստութե, և թէ 'ի վատթարութե։ Առ յոյնս՝ առել, ատտիկեցի հայեցուած, նշանակէ՝ անպատկառ, լիրբ։ Սոյնպէս, ատտիկեցի պանդուխտ, իմանի անմարդի գրոցի։ Եւ ընդ հակառակն՝ ատտիկեցի հաւատարմութեն, վկայ, քաղաքաւէնիք, եւն, իմանի՝ գերազանց, ընտիր։ Ասելն 'ի սկզբան աղօթեցս նախինի անմարդաւոց, կամ գիւղի, առաջին են, ոմ և առացեալն 'ի բանն հք. 2. է սովորական խոստովանութե արանց երկիւղածաց. զոր նոքա ճշմարտութք ասեն, քանզի միայն զիւրեանց մեղս և զպակասութիւնսն քննեն, և ոչ զայլոց. ուստի որպէս ճանաչեն զինքեանս, այնպէս և խօսին, և բան նոցա գոլով համաձայն ճանաչմանն, ոչ սուտ առի՝ այլ ճշմարիտ. (տե՛ս 'ի մեկն թղթոց. Փիլիպ. բ. 3։ ա. Տիմոթ. ա. 15։) Բան այսպիսի սուտ է արդարև 'ի բերան այնոցիկ, որք մեղաւոր ասեն զանձինս՝ ոչ զի այնպէս ճանաչեն, այլ զի մի՛ յայլոց ծանիցին այնպիսիք։

(2) Զգործակցութիւն չարին։ Զիմ գործակից լինելս սատանայի՝ մերկեցի, յայտնեցի։ Զգօղ տգեղութեն. 'ի բաց առի զծածկոյթ աղեղութեան, զի բացի զաղեղութի իմ։

(3) Զարմատն հնութեան։ զհնին և զմնացեալ արմատն. այսինքն զախտս հին մարդոյն, կամ ապականեալ բնութեանս՝ որք իբր արմատ 'ի խորս թաքուցեալ կային, փոփոխ սրտի, 'ի վեր հանել 'ի սոսս աճմանցն, խայտառակեցի։ Բնութեան կորեաց, այսինքն աղօթից, ապականանաց ոչ տաղտկեցայ։ Զհոգեւորսն, զմխապանիլ իմ ընդ զգայական կամաց, կամ զյաշն ընդ գիւղին՝ խաղեցի խոստովանութեամբս։ Զբղխեալ, զգեղդն, այսինքն զզապանութի սրտիս, յոր ապաստանեալ կային ախտքն և մեղք, քանդեցի հրապարակելով։ ընդ կամօք, ընդ կամաց մարմնոյս՝ որ է որս սատանայի, ելայ ընդ խնդրողի զմահ հոգւոյս կռուեցայ, զանհաճոյս նորա գործելով։ Զամբարտաւանս. զընդդիմամարտն յարձակման սատանայի՝ քեզ ով բանիդ յօւրոյս, այսինքն յուսով յանձնեցի։ Զհոգեւորանցորդն, զկռուեալ գիւացն, խաղեցինացն զինուց, հրեշտակաց զինուցն կամ զօրութեանց ուժդէնեցի, յանձնեցի կամ մատնեցի, մի օրէն. զինու. զոր իբր գործիական առեալ իմանի, զինուէ հրեշտակաց զրթուեցի զծորով պատերազմօղ գիւացն. որպէս առ մակաբէիւ հրեշտակ մի վառեալ զինու երեւեցաւ, և պատերազմէր յարձակիլ. (բ. մակաբ. ժա. 8։)

(4) 'Ի փող դէպակին։ 'Ի կերպարան երկաթոյ՝ հաստատեալ՝ նշան խաչին՝ փոխանակ աթոռոյս։ Երբեւ կէնաց, երեւոյթ կա՞ ձև խաչին տպաւորեալ յայսս իմ, այսինքն յերկաս։ արուեստ, հրաշալի արտաւեռնաց կամ գործիք փրկութե՝ 'ի պատուի ճակատուս նշանակեցի։ այլ օրէն. նշանեցի։ Ցայս ամենայն բանս՝ այլ և այլ օրինակաւ զմի ինչ իմանէ.

այսինքն անապականս առնել յհիքեան և յանդամս իւր զնշան և զզօրու-
թեն այդ խաչին : Խաչհեղաբաժակ , նա խաչն՝ որ է տուելոց կամ անթոււ հա-
մարձակութեն առ նա , ... , օգնեսցէ կամ յաղթեսցէ մա-
տուցանեն մատանս 'ի յաղօթել, 'ի խաչակնքել, 'ի կատարել զխորհուրդս
եկեղեցւոյ , ևն :

(5) Մէ հէտաոյն : 'Ի բաժանել խնուլ յաշխարհէ , կամ 'ի բաժանել հոգւոյս 'ի մարմնոյ՝ արդարութեն շնորհացդ մի հեռասցի : 'Ի ղափին , յորժամ պատահեսցէ անփորձի մարմնոյ, մի՛ բարձցի պատուէն քրիստոնէական, կամ պատիւ պարկեշտութեն : ... , զրոշմունք կամ նմանութենք կենդանացուցիչք՝ որ 'ի ձեռն խորհրդոց եկեղեցւոյ , և 'ի ձեռն շնորհաց , մի՛ ջնջեսցին 'ի հոգւոյս՝ զոր դու դրեցեր 'ի քո նմանութեն . կամ, 'ի հոգւոյս՝ որ քո է գրեալ, այսինքն համարեալ :

(6) Ըստ իւ ... : Դարձո առանձնաւոր արեան քո , նմանապէս և օծումն շնորհիդ՝ ընդ իս միասցէ և պահեսցէ 'ի գերեզմանին : Խանձաղ պարապ է ըստ զօրութեն . վասն զի նորոգութենք խորհրդոց եկեղեցւոյ և շնորհք ազդապէս 'ի հոգւոջ են՝ որ չմնայ 'ի գերեզմանի . բայց վասն շնորհաց և արժանաւորութեն հոգւոյն պահէ նա զմարմինն կամ զնշխարս մարմնոյ՝ անմերձ 'ի գիւական նորոգութենց , և յետ և եկեղեցւոյ ատեսութենէ :

(7) 'Ի ... : 'Ի յառնել խնուլ երևեցայց լինել 'ի ծառայից քոց և 'ի սիրելեաց : ... , զօրութք չարչարանաց քոց զարդարեցայց : Աստուածն ... : Ո՛չ զառաջին անմեղութեն որ 'ի միջոցութե՛ն առնել խնդրէ՝, այլ զամենեւին մաքրութենն 'ի մեղաց , զոր քաւութք շնորհել ասէ :

(8) Մէ ... : Ընդ քո բարեգ կամ պարգևս բնութեան և շնորհաց , որպիսի է կենք միջոցութեան , գրոշմ , և քահանայութե , մի յառնիցէ ... , այսինքն գործք կամ գիւտք սատանայի, որք են մեղքն , կամ պատուհք մեղաց :

(9) Մուսոյն ... : Գերեզմանն մթին՝ իբրև արգանդ մերոյն ծննդեան՝ պահեսցէ զիս յառնումն յարութեն : ... , անձով պատրաստութեն քո ընկալցի , այսինքն ընկալեալ եղեց , եղայց 'ի տուն մահու 'ի գերեզմանն : ... լաւ խնամոց պահպանութե ըստ հնքեան լինել հայցէ 'ի գերեզմանին , ըստ որում վասն Յովսեփայ ասի (Ծննդոց. Ծ. 13.)
* Ընդ նմա էջ 'ի գուբ||:

(10) 'Ի ... : այսինքն հազար անգամ առաւել քան . և ըստ շատ բազմութեն պարգևի՝ առաւել հազար թուով կամ 'ի հազար նուագս . զի բանն հազար՝ որ անձական է թուոյն , եդեալ է 'ի սեռական հոլով իբրև յատկացուցիչ , ըստ ոճոյն 'ի բանին ծը . լծ . կ : ... եթէ հազարաց ... , որպէս թէ հազար անձանց , բազմապատիկ . առաւել քան պատշաճն ընդ այլոց հազարաւոր անձանց . զի խօսի զհասարակաց թշուառութէ մարդկան ըստ մահկանացու միջակեն , որով այն որ երբեմն վերնոյն էր , այսինքն շրջօղ 'ի վերայ երկրի , այլև փոխեալ , զառաջնոյն , նուազ ... , մահուանն և թաղմանն լինի ..., 'ի խորս երկրի ընդ հողով , և ... , ... , նաև ... :

(11) ... : Թէպէտ քան հազար առաւել պատուական , բայց դու կրկին և օրհնութեն ևս արժանի՝ իբր անպարագրական այսմ խնդ ... բազմութեամբ մահուանց . վասն զի ես ... , ևն :

(12) Մ... : 3 օրհն . ... . և խնամոյ յայս աւանդեալ ...տութենս իմ շուննիս դու և ոչ ... գործակցութեն :

(13) ... : Յորժամ կամք քո լիցին յիս , ... խաւար գերեզմանին լինի քան ... , ևն :

(14) Ո՛Հ ԿՐԵՄ ։ Այժմ մինչ առողջ եմ, և չունիմ իմ յետ է, ոչ համարիմ զանձն իմ կենդանի, վասն անփոխելի վախճանին, վասն անվրիպանելի մահուանն․ զի որ վճռեալ է մեռանել անվրէպ, իբր արդէն մեռեալ համարի ։ Բայց օրինակ ինչ գնէ, վասն անլուծելի վախճանին, զոր մարթ է խմանալ զժամանակէ մահուան, զի ոչ գիտեմք զգալ յապաղման նորա ։ Գուրքեաւ Գլ․ 4 օրին․ Ը ։ Սոյնպէս ոչ համարիմ զիս կորուսեալ մահուամբն՝ վասն անէրկնեան նորոգմանն, վասն անկորնչելոյ նորոգմանն ՚ի ձեռն յարութեան ։ ՚Ի բովանդակ բանիս առեալ կամի․ ոչ ՚ի կենդանութեան իմ վստահիմ, վասն զի մեռանելոց եմ․ և ոչ ընդ մահ իմ տրտմիմ, վասն զի յառնելոց եմ ։

(15) Փախչել հանճարիմ ։ Եթէ հալածիմ յանիրաւելի դատաւոր իմ, փախչել ինձ անհնարին զձանձրալուրս կենաց․ բայց ՚ի խաւարութեան փրկութեան հայեցեալ, այժմէն զդրախտն բացեալ համարիմ առաջի իմ ։ Ոչ այնչափ զայժ կամ երկիւղ յաւահասնացուցիչ խաւարն զիս, որչափ ճշմարտին, այսինքն փրկութիւն քաջալերեալ օգնէ․ կամ որչափ աւետիք փրկութեան ըղձացուցանէ․ քանզի նոյն իսկ սպառնալիք սպառահասին առաջնորդէ ՚ի փրկութիւն ձանձրալուրս ։

---

Մերօրին յառեղուած նըշէն հեծութեան՝ նորին հոնոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսի՝ ընդ Այ ։

## ԲԱՆ. ԿՕ.

Ա․ Տէ՛ր՝ որ ոք և տացէ զայս դեղ մաղթանաց այսր[1] մատենի պարկեշտականի պաղատել սովաւ, եթէ ՚ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց և ես իմովս բանիւ կցորդեալ նմա․ իսկ եթէ յարդարոց գուցէ յառաջեալն, գտայց և ես սովիմբ՝ ընդ նմին ողորմեալ նովաւ ։ Ապա թէ երջանկացի այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոյ գրեալ զեղկութիւն, և ես ինձէն վկայեմ այսմիկ ։ Բայց յիշեսցէ նա զսաղոմոն և զբանս նորա զհոգեշունչս, թէ[2] ով ոք վստահացի սիրտ սուրբ ունել, և կամ ով պարծեսցի մաքուր լինել ՚ի մեղաց․ և զի ոչ յարեաւ մարդ երկրածին՝ ազատեալ ՚ի պատասխանեաց․ և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազիւքն, և ոչ՝ թէ և ՚ի թուիչս ամբարձման թևոց բերիցի․ առ որ զգոյշ լինիցի[3] կրկին երկուցեալ ՚ի վիմին իսկ հաստատութեան՝ ունեալ ՚ի պօղոսէ, գուցէ անկեալ ՚ի յերկիր՝[4] սահմանողի այսմ կանոնի իրաւադատի՝ կշռեալ նմանեսցի ։ Ահա ացէ զայս կշտամբութիւն մաքուրն՝ նիւթ պսակաց, առ

'ի չիջանել անընտրողաբար յանձեռնհասն բարձրու-
թէ. պատժապարտն՝ առ իմ ազատութեն, որով ամ
բարձեալ 'ի կործանմանէ հոգևորական մահուն՝
ապրեսցի յուսով։ Նաև ինձ եղիցի պատգամս այս
բանի՝ արձան փորագրեալ՝ ամենևին անեղծանելի,
որ փոխանակ իմոյ եղկելւոյս անձին մահացուի՝ ան-
դադար հնչմամբ հեծութեան լալոյ՝ առանց լռելոյ միշտ
աղաղակէ. լիցի և ոսկերացս քակտեցելոց [5] 'ի հողա-
պատեան շիրիմ վերարկուին՝ անմռունչ ձայնիւ զայս
խոստովանել. հասցէ և մարմնոյս 'ի հող լուծելոյ՝
բարբառով իմն անարգելեալ՝ ծածկատեսիդ զայն
պաղատել։

Է. Տէր գթութեան, աղբիւր ողորմութեանց, պարգևք
բարութեանց, որդի բարձրելոյ տէր յիս քո, ողորմեա [6]
խնայեա, մարդասիրեա. Նայեա 'ի վտանգս. ակնար-
կեա 'ի բեկութիւս. խոնարհեաց 'ի թշուառութիւս.
տես 'ի տարակոյս [7] անձեռնհաս տագնապիս. հասի՛ր
հաղորդել կորստականս կարեաց։ Շօշափեա բժշ-
կապէս՝ զամենաթշուառ ախտաւորութիւս. ձռնկն մա-
տուսցես քաղցրութեամբ՝ ողորմագին հեծութեանս. լուր
'ի խորոցն անդնդոց մահուան գերեզմանի՝ անմռնչելի
հառաչմանս. մտցէ յականջս ամենալուր լսելեացդ՝
ձայն պաղատանաց վտանգեալ անդամոցս։ Նաև վասն
զի [8] գրաւական կենդանութեանս անապական է, անփո-
փոխ լիցի և սիրոյդ քո գթութիւ. կցորդ լեր հեզու-
թեամբ՝ տաժանաւորս տկարութեան։ Մեռեալ պատկե-
րիս՝ մի ոխս պահեսցես. ընդ անշունչ կերպարանիս՝
մի 'ի դատ քննութեան մտցես. մահու տանջեցելոյս՝
մի հարուածս յաւելցես. ընդ բեկեալ խեցեղէն ա-
նօթոյս՝ մի ուժգնութեամբ մարտիցես. վճռեալ կոչկո-
ճելոյս՝ մի բարկութիւ կրկնեսցես. կործանեալ շի-
նուածոյս՝ մի պատուհաս մատուսցես. շանս սպանե-
լոյ՝ մի քարինս արձակեսցես. լուսոյս ջախջախելոյ՝ մի
սաստիկս որոտասցես. հողոյս անպատուելոյ՝ մի իբր
ամբարհաւաճի ուժգին մռնչեսցես։ Ծմախեալս մեր-
ժելի՝ մի 'ի դատ ընտրութեան կոչեսցես. զփոշիս ցնդե-
լի՝ մի իբր զքո դիմամարտ գտցես. զտիղմն տաղտ-
կալի՝ մի իբր զոսոխ վարկանիցիս. զգարշութիւ ան-
գոսնելի՝ մի իբր զառնամարտիկ վանեսցես. զխեթս

'ի բաց ընկենլի՝ մի՛ նիւթ գեհենին պահեսցես. զայս-
քանեաց բազմապատիկ բանից կշտամբեալս՝ մի՛ վե-
րստին յանդիմանեսցես ։

Դ. Այս ամենաթշուառս և 9 խաւարադեալ չիրմին
են առ հա սրտաբեկ և յոգնաթախիծ արգահատուէք.
հաստատեսցէ օրհնեալդ քո բան՝ անփոփոխական
լինել, ըստ սրտի արգահատելոյս. քանզի և այժմ
մինչ կենդանեօքս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ.
որպէս 'ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ
հրամանի՝ անեզծ եմ հաւատովքս ։ Արդ՝ աղաչեմ
զքեզ՝ տէր իմ քո, հայեաց յիս ողորմութբ, և մի՛
թողացուսցես լինել տնակից ինձ բելիարայ. և ըզ-
մահաշեկոյց տապանին ազդուածն անկենդանութեան
թնդման՝ թշուառն թաղման՝ աղաղակ ձայնի հա-
ռաչման լալեաց՝ քեզ հաշտեցուցչաց՝ յարգեսցես
լսել, միայն բարեգործ, հոգեսէր, հզօր մարդասէր.
և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով
ինձ 'ի խաւարին ։ Մնասցեն ընդ իս 10 կենարար քո
կրից պաշտեցեալ մասունք. զի իբր զաւանդ զան-
ձու զիս պահեալ 'ի քեզ, կենաց նորոգման ընծայե-
ցուսցեն. օծանք անվատնելի զինուց ինձ պատկա-
նեսցին, ընդ իս յարակայեալ քարինք պարսից՝ հա-
գեալ հնարից՝ զչարին հալածել զգունդ ։ Մարմին 11
որ առ իս՝ քե տէր վանեսցի. զի եթէ յարիցէ 'ի
վերայ իմ պատերազմել, տեսեալ զքաղաքն ունայն
'ի զօրաց՝ և զազդողականացն գործի ապաձայն, ըզ-
քեզ տէր ունիմ մշտնջենաւոր և անխորհելի պահա-
պան ։

Ե. Ով եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յա-
ռաջ քան զօրն կատարածի, և անշուշտ արգելման
ինձ պատրաստեսցէ, առաքեմ 12 զաղօթմս տէրու-
նականս՝ նմին զան մահու. եթէ 'ի վայր զիս հնարի
կործանել, զծնրադրութի արարչին. եթէ 13 'ի մա-
խիր երկրի թաւալել ձեռն բերիցէ, երեսացն իմ 'ի
նոյն մածուցումն՝ զնա հերքեսցէ. 14 եթէ վաստակս
ինչ ցաւոց նիւթեսցէ, քրտունքն յուռթի արեամբն
զանգեալ փրկչին աշխարհի՝ զնա խուեսցէ. եթէ 15
յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ, կա-
պանք ամենաստեղծին՝ զիս արձակեսցէ. եթէ 16 յա-

բացութեան պարգևաց լուսոյն բանադատեսցէ, հայ-
հոյութեան համբերութեան յանձնամարտիցն՝ զնոսին ընդ-
նոյն կարկեսցէ. Եթէ հարուածանեաց գաղտնաձիգ
զինուց՝ ինձ արձակեսցէ, կարթ հնարից աղեղանն
փառաց հօրն կապարճից՝ նմին պատահեսցէ. Եթէ 17
քօղով լուսոյ խաւարականի՝ մտանել ընդ աչս անմա-
մօթեսցի, կափուցն գլխոյն ձորձով պատեցեալ լոյ-
մանն անմնից՝ զնա տանջեսցէ. Եթէ մոլեսցի 18 զվաստա-
հութեան ձեռին կապել, եղեգն մատուցեալ ՚ի յաջ
դայացուցչին՝ զնա չարչարեալ ըմբերանեսցէ. Եթէ
ձաղանօք այպանման՝ զիս կատակեսցէ, տանելն ծա-
ղու անմնազօրին՝ զնա հեգնեսցէ։ Եթէ 19 բժժա-
նօք ինչ յուռութից՝ կախարդել խորամանկեսցէ, ա-
տակն դիմաց հզօրին ՚ինյ՝ զնա տատակապես ամաչե-
ցուսցէ. Եթէ ՚ի մուստ գիշերայն մթութեան խաւա-
րաւ խաբէութեան 20 լինեալ մորտիցէ, ՚ի Յաւաղայ-
թից լուսոյ երևման քո տէր՝ խայտառակեսցի. Եթէ
՚ի միջօրէական տապոյ փորձութեանն՝ արեգակնակէզ
վատանիչ խորշակին՝ զիս ՚ի յարմատոց խախտել կար-
ծիցէ, ՚ի զօրութէ նշանին լուսոյ խլեալ գօսասցի։
Եթէ ՚ի փչմանն շնորհէ ունայն զիս առնել հնարա-
ւորեսցի, թուքն զոր ընկալաւ տէրն քրովբէից ընդ-
մեղաւորիս՝ զնա պատկառեցուսցէ։ Եթէ ժանիք
խածօղք ինձ ցուցանիցէ, լռութեան երկնաւորին բե-
րանոյ՝ զնա պապանձեցուսցէ. Եթէ 21 խածմամբ ա-
ղուականս հողւոյս աղդեսցէ, բևեռացն հարմունք
հաստողին բնաւից՝ զնա կսկծեցուսցէ։ Եթէ յըն-
թացս անիրաւութեց խորհրդոց զիս մոլորեցուսցէ,
սևեռք ոտից անհատանելւոյն՝ զնա կապեսցէ. Եթէ
հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քացախն ընդ
լեղւոյն խառնեալ ՚ի յարբուցմն բարերարին՝ զնա
դառնացուսցէ. Եթէ 22 առաջին ճաշակմանն փայ-
տին զիս գտցէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռ-
նեալ՝ իսպառ պարտաւորեսցի. Եթէ ընդվզել ընդ-
դէմ հնազանդութեան տն հրամանի զանձն իմ ու-
սուսցէ, բևեռուածն պարանոցի անտահմանելւոյն՝ զնա
կործանեսցէ. Եթէ ՚ի մահ սատակման զիս վանեալ
վիրաւորեսցէ, սուսեր տէգ զինու մխելոյն ՚ի կող
ստեղծչին ադամայ՝ զնա հերձեսցէ. Եթէ երկամբք 23

վշտաց դժոխակմանաց զիս պարփակեսցէ, պատա-
նացն կտաւ՝ ելից ունողին՝ զնա ըմբռնեսցէ. Եթէ
յատակս մահու հայել զիս խարդախեսցէ, բնակել
կենդանւոյն 'ի վէմս մահու՝ զնա մեռուսցէ. Եթէ
խնդասցէ ընդ մարդկօրէնս իմ գայթագղութի, կրկին
կորասցի կարկամեալ կամաւ, յորժամ անմահն ա՟ծ
յարուցեալ փառօք՝ ընդ իւր նորոգեաց զբնաւ մա-
հացեալս: Եթէ ընդ լուծանել փոքր [24] կապանաց հա-
զարամէից՝ բերկրեսցի, դողասցի կրկնեալ վերստին
խոկոյն ընդ վերջին շղթայս անզերծ տագնապին ըմ-
բռնմանն սաստկագունի յանվախճան տանջանարա-
նին: Եթէ [25] ընդ առաջին հարուածն դժուարես-
ցի, դոյժ կորստեան յեռնում սաստկմանն անշէջ
գեհենին՝ որ պատրաստեալն է նորա և նորին հրեշ-
տակաց, նմա պատմեսցի՝ որ յաւուրն մեծի՝ մեծին
ատենի:

Ե. Իսկ [26] ինձ ապաւինելոյս 'ի քեզ՝ տէր իմ, միայն
Թագաւոր ինքնակալ զօրեղ՝ արարիչ երկնի և երկ-
րի՝ և ամենայն զարդուն որ 'ի նմա, որ գալստեանդ
քոյ ակն ունիմ, և ողորմութե՟ փրկչիդ սպասեալ
յուսամ. 'ի յոյս քո անկանիմ, և զգարշապարիդ
հետս համբուրեմ. [27] զպարտու՟ս խոստովանիմ, և
զմեղանս հրապարակեմ. կշտամբանաց քարամբք կո-
ծիմ, և հառաչանօք արտիս տապանամ. 'ի խէթ
խղճիս խոցոտիմ, և բոցով շնչոյս ձենձերիմ. աղի
ցօղով արտասուացս այրիմ, և [28] երիկամանցս ազդ-
մամբ կիզանիմ. յուսակտուր օդով ցամաքիմ, և
դառնաշունչ հողմով շիջանիմ. [29] Թախանձանաց
բանիւս երերիմ, և կողկողագին հեծութ՟բ դողամ.
տաժանելի կրիւք տուայտիմ, և տագնապաւ հոգ-
ւոյս տառապանիմ. 'ի կոծ մրրկաց ծփիմ, և 'ի բախ-
մանէ ալեաց տատանիմ. [30] 'ի լքուէ համբաւոյն սար-
սեմ, և յիշատակաւ ահին կորնչիմ. կերպարանօք
ատենին հայիմ, և ապառնալեօք մեծիդ մեռանիմ.
Լե՛ր՝ բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնա-
միտ, քաղցրութե՟ անճառ, որ բարի և տուիչ տենչա-
լի: Քանզի կարօղ ես յամենայնի և առ ելս շնչոյս
իմոյ՝ [31] փրկութե՟ մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ
ա՟մ փառք՝ յաւիտեանս. ամէն:

(1) [illegible] : [illegible] ( [illegible] . 4 . ) [illegible] :

(2) [illegible] . 9 : [illegible] ( [illegible] . 46 : ) [illegible] . ( Թ. 11. ) * [illegible] : ||

(3) [illegible] : [illegible] . ( [illegible] . 3 : ) [illegible] . ( [illegible] . 12 . ) [illegible] 2 [illegible] 3 [illegible] :

(4) [illegible] :

(5) 'ի [illegible] : [illegible] Տէր [illegible] , և [illegible] :

(6) [illegible] : [illegible] :

(7) [illegible] :

(8) [illegible] :

(9) [illegible]

զձայն գերերգմանեանն՝ որ է նշանակ մահուան, [illegible] [illegible],
զձայն Թնդմանն գերերգմանեանն, որ առաւել կենդանութեան 'ի [illegible] [illegible]
կամ 'ի շարժմանէ Թնդմանն ասէ, [illegible] [illegible] [illegible]
յարգենոցէս, [illegible] [illegible], կամ [illegible] [illegible]:

(10) Կենտրոն [illegible]: [illegible] [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] կամ [illegible]. [illegible] և 'ի կենդանութեան [illegible] [illegible] [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible]: Օ[illegible], [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible]: Մարթ է և [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible], և [illegible] [illegible]: Կամ, [illegible] [illegible], որք 'ի [illegible] [illegible] [illegible]:

(11) Մարգն որ ասի: [illegible] 'ի [illegible] իմ, կամ [illegible] [illegible] ասէ [illegible] [illegible], [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] կամ [illegible] [illegible] 'ի [illegible], և [illegible] [illegible], [illegible] կամ [illegible]՝ որ [illegible] ասէ [illegible], [illegible], [illegible], [illegible] [illegible] [illegible], ևն: [illegible] [illegible]. [illegible] 'ի [illegible] [illegible]. [illegible] [illegible] [illegible]. և [illegible] [illegible] 'ի [illegible] Ն:

(12) [illegible] [illegible], [illegible]՝ [illegible] [illegible]:

(13) 'Ի [illegible] [illegible] [illegible]: այլ օրէն. [illegible]:

(14) Երեք [illegible] [illegible]: 4 օրէն. [illegible]: եթէ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible] կամ [illegible] [illegible]՝ [illegible]՝ [illegible], [illegible]:

(15) Ց[illegible] [illegible]: եթէ [illegible] իմ, կամ [illegible] [illegible] [illegible] [illegible], կամ [illegible], ևն:

(16) Ց[illegible] [illegible]: Եթէ [illegible] [illegible] [illegible] [illegible], կամ [illegible], [illegible] [illegible]՝ որք [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible]: Իսկ եթէ [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible] կամ [illegible], ( [illegible], կամ [illegible] ) [illegible] 'ի [illegible], կամ [illegible], [illegible] և [illegible]:

(17) [illegible]: Եթէ [illegible] [illegible] [illegible] [illegible] իմ, [illegible] 'ի [illegible] կամ [illegible] [illegible] իմ, [illegible] [illegible] [illegible], [illegible] կամ [illegible], [illegible], [illegible]:

(18) Ձ[illegible] [illegible]: Եթէ [illegible] [illegible], կամ 'ի [illegible], կամ 'ի [illegible]:

(19) Բ[illegible] [illegible]: [illegible] [illegible], կամ [illegible]:

(20) Լ[illegible]: [illegible], [illegible]. այլ օրէն. [illegible]:

(21) Խ[illegible] [illegible]: Մեզ կամ [illegible] [illegible], որք են [illegible] [illegible]:

(22) Ա[illegible] [illegible]: Եթէ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible]՝ որ 'ի [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], ևն:

(23) Վարդ՚ դժոխախանաց։ Եթէ յաւուրս մահկանացուս փորձութեանց զեա պատշաճեսցէ, եւն։

(24) Կատանաց հողաբանեից։ Զհամարութեան կատանաս սատանայի՝ զոր գրեաց սբն յովհաննէս (յայտն. ի. 2.) ոմանք՚ի վարդապետաց խմա ցան ճշգրիտ, իբրեւ թէ յետ հազար ամաց զօրութեան քնի՝ լուծանելոց իցէ սատանայ. որպէս խմանայ եւ սորբես մեկնիչ. (ը. յովհ. ճառ ը. եր. 773։) Բայց այլ վարդապետք իմանան զմիջոց ժամանակին՝ որ ի քնէ մինչեւ ՚ի կատարած աշխարհի, յորում առ նեռինն լուծանելոց է սատանայ, այսինքն թոյլ տալ ած՝ զի ՚ի ձեռն նեռին մոլորեցուսցէ զմարդիկ։ Այսպէս իմանայ եւ անդրէաս կեսարացի՝ մեկնիչ յայտնու թեն։ Այլ եւ սա ինքն սբս գրիգոր. զի յարէ զկնի. դողացին կրթեալ ... , եւն, զի յետ լուծանելոյ ՚ի հազարա մեայ կապանացն՝ ... կապելոց է ՚ի վերջին շղթայս յա ւիտենական տանջանացն. յորում ոչ եւս կարող է մոլորեցուցանել զմարդիկ. եւ բաղդատութիւն այսր յաւիտենական կապանացս՝ զառաջինն կա պանսն կոչէ ... ։

(25) Ընդ առաւօտն։ Եթէ զժուարեցաւ սատանայ ընդ առաւօտն հա բուսծին՝ որ քնի եղեւ, ըստ որում խորհրդակեաց զզօրութեն նորա, ... , զի խաչառ պարտաւորութենն՝ որով ՚ի կատարածի աշխարհիս բոլորովին խորտակի զօրութեն նորա, եւ մնայ միայն զեհեանն, յիշեսցի նմա։

(26) Իմն ... ։ Այս բան առաւօտի եւ կապակ ընդ յետին բանին, ... , եւն։

(27) Զ... ։ զի զպարտաւորութիւնս, որպէս եւ ՚ի բանն ծթ. լծ. 2։

(28) Եր... ։ Հին լուծ. զանձկական շարժմանն իմա նայ, բայց անյայտ է. այլ իմանալի է կռկին կամ նեղութեն ցաւոց որ յերկնայնութեան։ ... զի նուաղեալ շնչով որ զայս իմ կարէ. կամ, յուսահատիչ հողմով մտածութեանց եւ փորձութեանց ցա մաքիմ։

(29) Թ... ։ զի թախծանաց կամ տրտմութեն։

(30) ՚Ի ... ։ ՚Ի լոյս կամ ՚ի լուսաւորութեան ... ։

(31) Փր... ։ Նաեւ յետեւել ... կարող եմ փրկութեն մեծի, այսինքն ՚ի յաւիտենական փրկութեան իմ։

---

Միերորդն յաստեղծածն կերպին հետեւութեն՝ նորին հանգոյն, առ նորին առիթս ... բանի։

՚Ի նորոց օրինակ խօսի՝ ընդ այլ։

# Բ Ա Ն. Կ Ա.

Տէ. Բայց քանզի յոյժ արդար է բան իրաւանցն քոյ Տէր առ իս՝ քան առ սկզբնահայրն չարեաց սատանայ։ Զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. եւ վասն իմ՝ զի զհնացեալ պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանս բոլոր էութեն՝ կերպին իսկութեն մեծին Տէր՝ միացոյց ին-

քեանս անշուշտ խառնութիւն։ Նորա ոչ են շնորհեալ
՚ի բազմացն, և ինձ զառավանդականն եհեղ առատութիւն.
վասն նորա ոչ երբէք չարչարեալ, և վասն իմ հա-
նապազ պատարագի. նա անհաղորդ է կենացն, և
ես միշտ վայելեմ ՚ի փրկութենէն. նա վանեալ է խա-
չիւն, և ես զօրացեալ նշանաւն։ Նա հերքեալ ՚ի
լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոս-
տացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեփ-
հականեաց. զնորայն [3] կորեաց զառհաւատչեայ, և
զիմն՝ առանց խզելոյ յարակայեաց. զնա յերամակս
խօզիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կար-
ճաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց.
զնա սողնոց նմանեցոյց, զիս իւրոյն անուամբ կըն-
քեաց։

Է. Իսկ ես զերախտիսն Քոյ լքի՝ զայսքանեաց բա-
րեաց արարողի, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ
նմին յատակս դժոխոց՝ ահա անարժանս բարեաց, [4]
անձիրս երախտեաց, անընդունակս սիրոյ, տռուամբք
մեղաց ձգեալս, յերիկամունս խորոց խոցեալս, քան-
ցեալ ծառս արմատենւոյ, գինիս յեղաշրջեալ, ցո-
րեանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատա-
ռեալ, կնիքս այլակերպեալ, նմանութիւս փոխեալ,
արկանելիքս կիզեալ, ընպանակս կորուսեալ, նաւս
ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատուա-
կան սուզեալ, տունկս գօսացեալ, նեցուկս խորտա-
կեալ, փայտս ամենևին փտեալ, [5] մանրագորս աղա-
ւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խարխալեալ,
բոյս արմատաքի խլեալ, ձէթս հեղեալ [6] ՚ի գուբս
աղբևաց, կաթնս հոսեալ ՚ի կոյտս մոխրոց, այրս
մահու [7] ՚ի յարեանց գնդից։ Քանզի միշտ խոր-
տեալ ընդ երուսաղէմի առակաւ բաբելոնի՝ ՚ի մար-
գարէիցն ձայնից՝ անձն իմ ողբալի, և ոչ ինչ խոր-
տեցեալ. որ աստէն անգոսնեալ եմ, և անդէն խայ-
տառակեալ. աստ դսրովեալ, և անդ կշտամբեալ.
աստ ձաղեալ, և անդ նախատեալ. աստ Թշնամա-
նեալ, և անդ յանդիմանեալ. աստուստ աքշեալ, և
անդամօք լքեալ։ Աստ հեծութիւն, և անդ հառաչանք.
[8] աստ կարծիս, և անդ կատարած. աստ խէթ, և
անդ հատուցումն. աստ արկածք, և անդ հանդէպք

դատաստանի, ուր ոչ է՚ բան իրաւանց, և ոչ ձայն պաղատանաց. ոչ Թիւք աւուրց, և ոչ ելք ժամանակաց. ոչ ուղք յուսոյ, և ոչ դրունք ողորմութեց. ոչ ալ պաշտպանութեան, և ոչ ձեռն այցելութե։

Է. Այլ դու ապաւինութի. դու լինքն փրկութի. դու այցելութի, դու և քաւութի. դու երանութի. քո բժշկութի. քո ողորմութի, միայն Հզօր՝ կենդանի՝ անձառ տէր յս քս բարերար ած. օրհնեալ՝ օրհնեալ, և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սբյ յաւէտ բարձրացեալ՝ի փառս հայրենի իսկութեան մեծիդ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) Ցոյց ուրուք է բան։ Քննութե արդարութենն այս ասացեալ պարզաբանութ-եան [illegible] քան զդատաստանս. զի նա Թէպէտև [illegible] չարչարաց եղև. սակայն յետոյ ոչ առաւ նմա տեղի Թողութե. ոչ շնորհեցան նմա բազում բարիք շնորհաց. ոչ վասն նորա չարչարեցաւ քս. [illegible] 'ի կենաց. [illegible] խաչիւն. [illegible] 'ի լուսոյ, ոչ առաւ նմա հանգիստ և յերկիր. յայս նորա կարգեցաւ. [illegible] արդարեւ, և նոցա նմանեցաւ։ Իսկ ինձ այսպիսի ամենեցուն հակառակ [illegible] յայս. և 'ի մեղաց այսոց ամենայնի [illegible], և զհետ չարին գնացի։ Այսպես ասացեալ է իմ [illegible] քան զդատաստանսն։ Այս բաղդատութե ոչ հայի [illegible] յառաջ-լուն մեղաց և [illegible] քան զդատաստանսն. զի [illegible] մեղաց, և [illegible] ամենայն մեղուցելոց, [illegible] 'ի չարութե, մեծ են նորա մեղքն և [illegible] քան զդատաստանսն. այլ հայի միայն 'ի մեղս [illegible]. զի եԹէ [illegible], [illegible] 'ի նմանէ, այլ և 'ի [illegible] բազում [illegible] շնորհաց եղեն քան [illegible], ասացեալ [illegible] 'ի մեղանչելն [illegible] ած, քան զդատաստանս։

(2) Անեղանելիերկրաւորն, [illegible] բնութեա բոլոր եօթն, [illegible], [illegible], [illegible], [illegible], [illegible] ամենայն ըղ-[illegible] և [illegible]. [illegible], այսինքն իսկական բնութիւն մեծին ած՝ յանձն [illegible] բնութեա, [illegible], [illegible] ընդ [illegible], իսկական կամ [illegible] միաւորութե։ Կամ, [illegible], [illegible] անձին, [illegible] 'ի [illegible]. [illegible]. հատոր 257. [illegible], [illegible] անձին հօր. այսինքն [illegible] ած [illegible] անձին ած Հօր [illegible] մարդկութեա են։ [illegible] 'ի [illegible], 'ի հայրենի [illegible]. [illegible] 'ի Հռ. ԺԵ. 20։

(3) Կործեալ [illegible]. [illegible] յուսոյն, կամ [illegible] ած [illegible]՝ որ [illegible] քան [illegible], [illegible] նմա [illegible]՝ եԹէ [illegible] 'ի [illegible]. և 'ի [illegible] նորա [illegible] ած [illegible]։ [illegible], [illegible] յուսոյն, կամ [illegible] ած՝ [illegible] մեղանչելոյն [illegible], [illegible] կամ [illegible], [illegible] դարձի [illegible]։ [illegible] 'ի [illegible]

զհայրդ յերկնից նորհնական զծագման [illegible] կարող է զեմ ընդ զեմ, կարի աստուածացուցանելով զպարզութեան թիւն, միանգամայն և զմարդոյն աղե- րախատութիւն ։ Աստուածային ասէ՝ ասկա բարիք ընդրհեցան, այլ ինձ բա- ժանեալին առաստաղէս ։ Վասն նորա ոչ երբէք խոստովանեալ քեզ, վասն իմ մեղաց․ նա զուարթ ՚ի կենաց, ես մեղաց ՚ի մերկութեան վայելչ․ նա խնա- մեալ հալածեալ, ես խառնեալ զօրացեալ․ նա անկողմն զգլխաւորն, ես ՚ի բանս ՚ի փառաւոր միացեալ․ նմա և ոչ յերկրի հանդիսա, և ինձ երկիւղք բա- ցեալ իւր հայցմունք․ նա ՚ի խորոց փառաւորեալ, ՚ի յեա քեզ ինքեան ընդա- կեալ․ նա՝ զարդուցիչ անաստուածն կարծելի նմանեալ, և զեա Տաւսապայիթ կոչեցեալ, աշխարհին լայս էք ասեցեալ․ զնա օձն հանդիպին անսուանմաբերեալ, և ինձ զեալ զՔրիստոսինեալ անուն նա անչինչելի կինք միջնորդին ։ Աստուծոյ զատանանեալ օձից և կարծեաց նմանեցուցեալ, հայի ՚ի բանին ․ Աչա եւսա մեղ խոչընդութեան կոխեալ զգանս և զկարիճս || և այլն ։

(4) Անցիր ։ ոչ առաւօտ զգիր, յոր անհնարհանդարտ երախտաւեաց ։ անհնարա- նակի ողրոց ․ ոչ ընդդատոր, արհամարհողս ամենայնին սիրոյն, չՃանաչողա զԹաւանն այ ․ յերկինոաձաեա խորոց, փորձանաւոր զգենլոյ՝ ՚ի խորս երկիւղանց խոցատեալ, յո ՚ի բանս ՚ի նեղքին առաքօրծակս հոգւոյ միջնորդեալ ։

(5) Մահաբարգորս աղաաղէալ․ այսինքն եղծեալ, ապականեալ ։ Իսկ մահաբարգոր է բառ յուռնական․ զորոյ նշանակութիւն բաղդատք այլ և այլ օրի- նակաւ միկնին․ բայց առաւել համարի է նշանակել զառնին՝ որոյ ար- մատն է երկու զգեղս մարդոյ, ուստի և անուանի՝ մարդաբարակ, և այ- լով անուանակ չղեցի ․ ունի արտաքոյ նմանն խնձորոյ՝ անուշահոտ, որպէս և ծաղիկ նորա անուշահոտ է, և միով անուանակ մահաբարգոր առաքինեն, արառուղն, և ծաղիկն ։

(6) ՚Ի գաւիլս աղբեաց ․ ՚ի փորոց աղբեաց ․ ( չերփկիւկիւաձա ։ )

(7) ՚Ի յորեանց գնդից ։ ՚Ի գնդէ կամ ՚ի ժողովոյ արքունականեղաց՝ ես եմ այր մահու, այսինքն մահապարտ ։ Բայց յայլ օրինակ ասի ․ ՚Ի յորեաց գնդից ․ և առաւել պատշաճ Թուի կարգել բանին․ որպէս Թէ ՚ի գնդէ առաքինեաց կամ քաջաց՝ ես միայն եմ մահապարտ ։

(8) Աշտ կործիս ․ առա կանգնած երկինուղի, կամ առա կործիք յաւաց՝ Թէ գուցէ ապրեցայց ՚ի սանձանաց ․ և անկ կորացած, կառապառան երկինուղին, կամ ՚ի գերի եղանել յաւայն ։

(9) Բան երանանց ․ բան շատասանութեան կամ արգասարացուցանելոյ ։ ոչ Երգոց առաքոց ․ ոչ զան ՚ի հանդերձեալն Թիւք առաւելոյ ․ և ոչ էր ծամա- նակաց, վախճան ժամանակաց ․ ոչ ոտքն յաւաց, ուղիք կամ Ճանապարհ յաւաց ․ այսինքն, անվՃար են սանձանքն, և անյուսալի՝ ապաշխա- րութիւն ։

---

Սերտին յառաջեալ սրտին հեծութիւնք՝ նորին հոգւոյն, առ նոյն աղերս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ԿԲ.

ա․ Եւ արդ՝ ՚ի յիշատակ ահարկութեան վերադարձե- ցելոցդ՝ որք յանձուստ են սպառնալիք ինձ ժամանեցելք, զիա՞րդ դադարեցայց ՚ի նորոգ աղերսա- գութեանց, և կամ որպէս զցամաքութիւն առցէ հեղեղք

արտասուացս ։ Օի եթէ զչորեքվտակեան առաջի գետոցդ յորդահոսան ծաւալմանցդ, որ զեդեմ և զերկիր առ հասարակ ոռոգանեն՝ լիապէս բաւականութիւն բաշխեալ ամենայնի, և [1] զաղխումն ելից իւրեանց՝ առ աչս իմ եդեալ, զանձինս մեղաց տոտոկութէ զգոց զովացուցանել մի՛ բաւականասցին ։ Նաև կամ [2] մարգարէին ողջ ըղձականութիւն կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բազմաւ, և ճրագարան տեսութեց կերպիւ աղբերց կայլակմունք, զբեկման ոգւոցս չափել զվտանգ՝ մի՛ ձեռնարկեսցեն. և մի՛ [3] եղերականք ջայլից համօրէն՝ բանահիւսից կանանց լալականաց՝ 'ի սիրտ և յոգի վիրաւորելոց, զաղէտ վտանգիս 'ի յերգ արկանել, և կամ 'ի նուագս ձայնից բերել ։

Ը. Ի՞մ է օրն լինելութեան նզովեալ, և մի՛ յոբայ՝ կամ երեմիայ. քանզի տօնելի է օրն նոցա՝ զորոց մի 'ի նոցանէ մի՛ արժէ աշխարհ, և մի՛ տարադրելի. ապա ուրեմն [4] զիս նկատ եղեալ զմի՛ արժանիս լուսոյ՝ և կամ միոյ մասնաւոր բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծին՝ յորում ես գտայ կորստեան որդիս և մահու դղրացիս, մշակս մեղաց և արքանեակս անօրէնութեանց ։ Որ մի՛ կացի յուխտին կենաց՝ զոր դու սահմանեցեր՝ տ՛ծ բարերար. մի՛ գնացի 'ի քո պատուիրանին կենդանականն անմահացուցիչ. մի՛ վաստակեցի 'ի հունձս արմտեացն, որով 'ի մուտս ձեռին [5] աւուրցն խաղաղութեան կերակրել պատրաստեցայց. մի՛ կառուցի ամրութիւն որմոց՝ և մի՛ ձեղուն յարկաց ձգեցի, որով 'ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. մի՛ համբարեցի նշխարս պաշարաց 'ի յաւուրն անեղբական, որով զտագնապ սովոյն իմ բժշկեցից. մի՛ հանդերձաւորեցի քեզ աղերս աղօթից, որով առաջի քո կալ համարձակեցայց. մի՛ կազմեցի թռչակ փրկութեան վարուց մաքրութեան, որ [6] զնորոգումն ինձ երաշխաւորէ. մի՛ ետու զընտրութեան հաշիւն 'ի կենցաղոյս ճանապարհի՝ իմոյ մատնչին, զի 'ի դատաստանին ձեռանէ աստէն իսկ [7] փրծայց. մի՛ լրութիւն ձեռին օրհնութեան մատեայ յանդիման, որով օրէնսդրին մասնակից գտայց արքեցեալ ։ Ո՛չ դիմաց ետու ըզգուշութիւն, և մի՛ թիկանց պատսպարութիւն, մի՛ աջոյս

իմ զինուորութիւն, և ոչ [8] ահեկիս պարածածկաւն, որով 'ի պատերազմիս վտանգէ զերծայց. զերիվարս ոչ զգեցուցի զրահիւք, և ոչ զմարտիկս՝ սպառազի-նութեամբ, որով զճակատն յարդարեցից ։ Ո կանուխս ոչ կապտեցի պտուղ, և անագանիս ոչ ժամանեցի, և ահա տարակուսիմ ունայն 'ի բարեաց. մաքրութեան ծաղիկ ոչ ունիմ, և ոչ իւղ ողորմութեան, և գիշերոյս մռայլ՝ աննշոյլ. 'ի նիրհումն մահու ննջեալ եմ, և տագնապ կոչողին փողոյ ստիպէ. զպարգ հարսա-նեացն կրկին մերկացայ, և զձէթ վարուցն վերստին լքի, և դուռն մտին հարսանեաց աւասիկ փակի ։

Է. Եւ արդ՝ զիա՞րդ առից մխիթարութիւն այսքա-նեաց վշտաց, և կամ [9] ընդ որքանեաց տարակուսա-նաց խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառա-նեցից. և կամ ո՞ւր արդեօք զգարշապարս ոտին կա-ռուցից. և կամ յո՞ր վստահութիւն զաչս իմ յառե-ցից. և զի՞նչ անդորրութիւն ծփանացս նկատեցից. և կամ յո՞ր ըղձական դիւրութիւն ձեռն համբարձից ։ Որ եթէ 'ի ձեռուն բարձրութեան երկնի, անտի անձրևեաց հուրն սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ [10] յատակ խորութեան երկրի, սա եբաց զկոկորդն ըմբռնողական՝ և եկուլ զդաթան բանակօքն աբիրա-նի ։ Եթէ յանդգնեցայց փախչել յունողէն, գտու-ցէ կալցի զիս վիշապն ահագին ։ Եթէ ընդ գազանս ինչ թափառեցայց, արագունք են խնդրել զվրէժ ստացողին առնուլ առ իս՝ քան երբեմն զեղիսէին՝ առ մատաղ [11] մանկունս բեթելացիս քրմորդիս ։ Եթէ յամենատարած օդոյս պարզութիւն, այն եղև եգիպ-տացւոցն խաւար շօշափելի ։ Եթէ 'ի թռչունս բար-ձանց, նոքա են կոչեցեալք 'ի սպանողն զօրհին [12] բաա-րայ դիւականացն ։ Եթէ 'ի տկարմն խիզախեցից, վա-նիմ [13] 'ի պիծակացն, և զի՞ պիտոյ են ինձ առիւ-ծունք ։ Եթէ յարջոցն պատառողաց ապրեցայց, մժիխքն աբեան ծարաւիք ինձ պատահեսցեն ։ Եթէ յանհօգս ուրեք նստիցիմ, [14] մժղուկքն անարգա-գոյնք՝ իբր ցնցուղս հրոյ եռացման՝ զինև մաղեսցին ։ Եթէ յեղջերէ միեղջերւոյ փախնուցում զերծեալ, նկուն [15] ձիրանք աղկաղկաց մնոցն մորմաքողաց՝ զիս

կեղեքեսցեն ։ Եթէ 'ի սենեակ շտեմարանաց խոր-
շից ղօղեալ ամփոփեցիմ, տաղտկատեսակ դարշու-
թիւն գործոցն՝ [18] մեղաց օրինակքն՝ զիս զազրա-
ցուսցեն ։ Եթէ 'ի վայրս ինչ անդաստանաց կացեալ
զետեղեցայց, շարք [17] շանաձանձոցն տարմից՝ զինև
պատեսցեն ։ Խողում ասել [18] զխառնիճն և զձո-
րեակն զզօրն զօրաւոր՝ ընդ թունաւորն թրթուր,
և ընդ անկենդանական երևելն, հանդերձ ջրակարծ
կարկտիւն, և ապականագործ եղեմամբն . որ առ-
աչաց տեսիլ՝ ապաղենք և նուաստագոյնք, բայց 'ի
յաճնարկելն իմ՝ յաւէտ գոռոզաբար ուժգնութ. հա-
րին վանեցին զհպարտն ամբարհաւաճութի փարա-
ւոնի բռնութեն բուռն զաւազանին՝ յաղթօղ միձա-
կաւ . որ են կերպարանք թաքուցեալցն կրից ալեկո-
ղաց՝ անձնականացն աներևութից՝ եգիպտացւոցն
անօրէնութեց՝ [19] յոգի և 'ի մահ տանջողաց՝ գաղա-
նի խնամողաց ։

Է . Այլ դու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բո-
լորից, 'ի յատեկլին հանդիսացիր հերքել զնոսա . և
ինձ ողորմեալ կրկին գթութ ձեռն մատուցեալ փըր-
կութե տարակուսեցեալ կոչկոծեալ վարանեալ 'ի
մահ պարտելոյս ։ Ո՛վ դու միայն ճանաչիս ած փա-
ռաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւի-
տենից . ամէն ։

---

(1) Զեղխումն [illegible] ։ Զանխն՝ ուստի ելանեն չորեքին գետքն . եթէ ասէ՝ զչորեքեանն գետս եդեմայ՝ և զանխն նոցա յաչս իմ եղեալ բղխեցից, որ են բաւական զողողացուցանել, ևն ։

(2) Մարգարէին [illegible] ։ եթէ ըստ բաղձանաց երեմիայի՝ ( Թ . 1 . ) կրկին և ս քան զնորայն լցցի գլուխս [illegible] . մի օրին . [illegible] . առաջինն առաւել հաստատեայն է բնագրի մարգարէին, որ ըստ ձեռագրաց գնի . * Ո՛տայր գլուխ իմ ջուր . Այսպիսիքն ո՛ տանէր գլուխ իմ երկե ջուր ։ Ըստ այսմ և բան սէր մարդասպեստիս խնդրի . այսպիսիքն լցցի գլուխս երրե ջուրց բաղձութի, կամ երրե առաւելն ջրոյ ։ Սակայն առաւել մեկին և ըստ կարգի տայ զնմանութն, եթէ չարաչարութեն այսպէս լռեցի . [illegible] կատարեսցի . [illegible], ( 2 օրին . [illegible] . ) տեսանեմ լինել [illegible], հասանէմք, կամ հասնիցեք ապաշխարութ ։ Եթէ այս և ս լինիցի, տակաւին զմկրտեալ խորասուզեալն հոգւոյս մեղաց՝ ոչ [illegible], ոչ կարասցեն ցուցանել որչափ է ։

(3) [illegible] ։ ոչ եղեռնական ձայնք ողբոց, կամ ողբալեաւն եղանակք լալականաց՝ կարասցեն լինել երգել զաղէտ վտանգիս ։

(4) Զի՞ս նկատ եղծով։ Ցորժամ յայդ և նշխարս նորայն զոր ծննդեան խորհրդոց, ոչ այնչափ զխորհրդոյն գիտեն նորա. զի որ ծննդեան այնպիսի մեջ փոխել է, այսինքն ուրախալի։ Այլ զիս նկատելով, կամ յիս հայելով, որ չեմ արժանի լուսոյ կամ այլ ինչ բարւոյ, այնու անխ-ծեցին զորն, եմ։ Բայց 4 օրին. և հին բան. զենեն, զիս նկատեալ եղծեալ զուարճանէս, եմ. և խնամի, զիս նկատելով կարգ ազգէն եղեալ կամ ծննդեան զանարժանս լուսոյ։

(5) Ամուրցն խառնուրդ։ 2 օրին. չեք խառնուրդ. և խնամի՝ ի սկզբանէ ասուրը ձեռին։

(6) Զնորոգութեն նոյ երաշխաւորէ. այսինքն յառաջահոգացութեանն, հաւատալն է։

(7) Փրծայց։ այլ օրին. պրծայց։ Ոչ վճարելոյ զհաշիւ մեղաց ընդ մասնաչեն առաքելոց. որով առաքեն ազատեմ ի ձեռաց գաստարակն։ Ի՛ց լրութիւն յետոյն։ Թողի հայցել ի բանն եղեգ. (Ղկ. 29.) * Լցէք զձեռս ձեր այսօր ամն խորաքանչիւր յորդի իւր, և խորաքանչիւր յեղբօր իւր՝ տալ ի վերայ ձեր այսօր օրհնութիւն. * այսինքն կատարեցէք զկամս իմ ի վերայ որդւոց և եղբարց ձերոց՝ սպանանելով զնոսա. ուստի և օրհնութիւն առ լցցի ի վերայ ձեր։ Ըստ այսմ և մեք վարդապետս առէ, ոչ եմ զձեռս իմ սպանանելով զանձնամս իմ զերկրաւորս. որով օրհնեալ, մասնակից լինել օրէնսդրին մովսէսի, սրբեալ և նուիրեալ ամն հոգւ զորդեանն զեւետ։

(8) Անհեշտ պարածածկութ։ ձեռնակցութեանս շուրջանակի ծածկութեան ի ձեռն վահանի։

(9) Ընդ մրջմնեաց փարախուածաց խառարի՝ լռասարութ յառաջ [illegible] խառնեցին։ մի օրին. Մրջմնեաց փարախուածաց խառար՝ ի լռասարութ յառաջ խառնեցին։

(10) Ցոպակ խորութէ երկրի։ 2 օրին. յոպակ երկրի խորութեան։

(11) Մանկանս բեւեռելոյս քրմոցին։ ի դ. Թագ. ժ. 23. ոչ յիշատակեի՝ թէ յորոց էին մանկունքն. բայց քանզի ի բեթելայ էին նոքա, ոյք վարդապետս համարի զնոսա. որպէս քրմացն՝ զորս յետ[illegible] կոտորեաց ի վերայ բարձանց երկնեցն բեթելայ. (դ. Թագ. ժգ. 31. 32։) Զի և կատակել նոցա զեղիսէէ՝ կարծի սպառեալ ի խորանէն ծնողացն, զորս վասն այն կոչեաց մարգարէն՝ որպէս յանցանաց և դասաւորութեան։

(12) Բաւարայ դէմկանցն. աղխտնաշաղախ զխակաղացն. է բանն եղեկելէ. (Ղթ. 17։)

(13) Ի ազծակացն. որք են խայթիչ կենդանիքն նման մեղուի. (եշէկ ասորը։) Մեխկիտն, մժեղունք. (մնծակ. սիսլ սիճէկ։)

(14) Մծղուկին. փոքրիկ ձանձք զինւոյ կամ խաղողոյ, եւր ցիցանը հրո կարգ ցայտմունք բացոյ (այսինքն խլքլըձքամ.) ղէնն ժողլեցին, ի վերայ իմ մանր թօթափեցլին կարգ ի մաղէ։

(15) Ծիրանի, ձանկքն, աղէկաղէկաց ծոցն, անզոր մեոցն, որք են փոքրիկ մծեխք։ Բայց 2 օրին. Մրջմոցն։

(16) Մեղաց օրէնակին։ Այս չեք յօրինակս ինչ, և սաստ խաչ թուի ի կարգէ բանին. զի մեք վարդապետն յիշելով զանարգանն պատուհասս ինչ՝ որ յեգիպտոս և ի քանանացիս, գիտէ միայն ցուցանել, թէ զորութեամբ իմ նաև փոքր և անզոր իրք պատուհասէ զմարդ ասանց զերծանելոյ. և ոչ գիտէ յայտ առնել, թէ այն կենդանիք որոց օրինակք են. ուստի յայլ բանսն ոչինչ այդպիսի բացայայտութեան յաւելու։ Եւ որպէս թուի, այդ յաւելուած յայլմէ եդեալ ի լուսանցան կարգ լուծումն, յետոյ ի գրչաց ի բուն բանսն մուծեալ է։

(17) Ընտանեանոցն վարժից ։ բազմութիւն կամ ժողովք չանաստանեայց, որք են ( կէնէ ։ )

(18) Զխառնելին և գլորելոյն . որք են այլ և այլ տեսակք մարախոյ ։ անկենդանական էրևէլի . անշարժ փոքրիկ ոչխլ բուսոց , որ խոր անկեն-գան երկիր ։ Այսպիսի հայթեն ՚ի բանն յոձելայ . ( ռ. 4 ։ ե. 25 ։ ) Գլոռ-նորդ նորնիոն . Ջուր կարծեցեալ , բայց խորև քար հարկանող և այրող ։ Այս բառ երբեմն կարծիւր նշանակել ՚ի ջրոյ կարծրացեալ և սառու-ցեալ . համարելով թէ բառն նործր , երբեմն կոչատակէ գլխոյն ը սառն , բայց այդ ոչ տառապեցաւ ։ Որ առ ալոց փեօխն ։ Այս ամենայն յիշատակեալք բառ տեսակէ աչաց անդէն , կամ ակար գոլով և անարգ , ՚ի հրամանեալէն այս առատիկ զօրութիւն հարցին զհպարտութե փառաւորելի եաւն գառայղմն , հզօր տրութենն , յաղթող վիճակս , պայծառն հարցն յաղ-թանակ կանգնեալ ՚ի մերոյ բանաւորին ։ Եւ են առքս օրինակք ա-նեծելյթ և հողեալ տանջանաց՝ չարչարողաց ՚ի հողի միջև ՚ի մահ , ՚ի պատուհաս երկխարարական անօրէնութեց ։

(19) Ցօփէ և ՚ի ձահ փախչողաց ։ յօրինակս ինչ՝ չէք ՚ի ձահ ։

---

Մերայքին յառաջբերեալ նըկէին հեծութիւն՝ նորէն հոխողէ , առ նոյն ողբս մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱ՛Ն. ԿԹ.

ա. Եւ արդ՝ վասն զի ՚ի ձեռն մեծիդ և ամենահնար արուեստաւորիդ իմս եղանութե ոչ և ոչ՝ իբր [1] ՚ի քերայս ընտրութե փութոյ քոյ սիրոյ՝ համառօտագ եռամ, և ոչ երբեք պարզիմ . միշտ խառնիմ զսուգիւ՝ և ոչ եւս միանամ . ահա զսուր՝ արծաթագործդ երկնաւոր՝ իմ Հարստարապետ, ՚ի մնաջիս վաստակեալ առ իս աշխատիս , ըստ մարգարէին յայտնի առակի, և չարութիս իմ ոչ հալեցաւ . զոր խնձէն մոլեալ չարաչար՝ իբր զխելագար դիւաբախ իմն ողորմելի՝ [2] յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զիմն զպարտիս ամենցուցանել, քան հաշտութե հնարս խնձ այսու կազմել։ Նա զի մի [3] անզգնդել դիպուած, և անկիրթ պատահումն, և անհաւատար հանդիպումն՝ պատրաստութիւք հանդերձելոց տանջանարանացն խնձ երևեցին , ամենևին անմոռաց պահեաց տատասխն ՚ի յիմում մարմնի՝ նշխար մնացուածոց նախնումն անիծիցն . զոր ՚ի փուքուէ տարրէ անարգէ՝ զմեծն է ուսանել ։

բ. Բանիցի [4] խառղանս ինքնաբերական գիւտք որո-

մայնի՝ բոտոտք Ճապուկք շարժողականք, և ազգի
ազգիք, որդունք աղեաց գաղտնականքը, [5] խաղա-
ւարտք հրակայծակք, և բիծք բոցակիծք, և անիծք
անկերպաւորք, և երամակք ոմանք քրտնածինք զազ-
րաթորմիք կսկծեցուցիչք և մարմնաջողականք։ Սպա-
պատակք [6] այլոց մայրենեաց, ըստ նմանութեան դիւաց
գիշերամարտից՝ և մեկնազէն բարբարոս գնդից խա-
ւարասիրաց, և գազանութեամբ քանասար գայլոց արա-
բացուոց՝ կորակոր գնացիւքն, արջնաթոյր գունովն,
կրկնապարոյր կռածագ կոցաւն, որ զօրէն ունի
խայթոցաց կարծի, [7] իբր դժնիկ փշովք խոցոտեալ՝
ծծեն ձգեն զարեանն խոնաւութի, և յանկողինս
մահձաց հանգստեանն՝ վաստակս կրից ցուցանեն։
Եւ կարկառեալ ուրուք ձեռն՝ հատուցանել զհա-
տուցումն նոցա նոցին, մաղմաղակի զգան զնսաս
վտանգին՝ [8] զոր ազդեն մարմնոյն. և անդէն իսկոյն
լերկամարմին փոքր հատակաւն՝ իբր թեւօք իմն թռ-
չիցս արձակեն, և ըստ մարախի ձեւոյ ոստոստեալ՝
այսր անդր տարաբերին. և ըստ բազմապատիր նեն-
գութեան բարոյից դաւող աղուեսուց՝ խորամանկեալ
խուսափեն [9] 'ի պատուածս բազում երից, զի յեր-
կիւղէ մահուն ապրեսցին։ Եւ որքան չքնաղի և անե-
քանանձամբքն՝ ոչ միայն զգամբկան և զխառնիճա-
ղանձս, այլ և զթագաւորս հզօրս և ահագինս փա-
խուցանեն հանեն տարագրեն 'ի դստիկոն յարկի ա-
պարանիցն բարձրութե, և կամ 'ի բացի բնակեցու-
ցանեն. քաջք արանց արեաց, որք իշխեցին ամբոխից,
և տիրեցին ժողովրդոց, և առին զքաղաքս ազգաց,
զպարտութի իւրեանց զօրաւոր ձեռինն՝ ինքեանք
վկայեն, թէ քանզի ոչ կարացաք 'ի դիմի հարկանել
մեհիցն բռնութե, վասն այնորիկ խոյս տուեալ հա-
սաք յայս տեղի։

Դ. Եւ զինչ է ինձ [10] զփոքունց և զանկածից ծաղ-
րականաց ոմանց գոյութեց 'ի կիր արկանել, որք զօ-
րեղ և անհերքելի ջատագովք են ածութեն՝ յիշա-
տակել ինձ զհանդերձեալսն, որք 'ի մարմնոյս անջ-
րինելոյ՝ ընծայլին պտուղք դառնութե։ Ընդ որս և
եկամուտ սատակչականացն ախտից դիւաք, և կեր-
չացն կոյտք անողոքելիք. յորոց չէ զերծանել, քան

թէ հարկաւ մարմնոյն վտանգի՝ ղապաղայից ոտքօք իմաստասիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց քումդ ակնարկութեան՝ և մարդկային կարք և հնարք վրիպեցան։ Իսկ դու բարերար՝ զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենագործել. և քեզ փառք յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն։

---

(1) [illegible] Դ. 29 ։

(2) [illegible]

(3) [illegible]

(4) [illegible]

(5) Խաղաղարարք հրախայծանք ։ Ուսուցիչք մարմնոյ թարգմանութեանց, յաւելեալ եկեալք յառաջականութեն սրտեան. (չիցառն. կամ միմեանց.) որք իւրեւ հուր այրեն, կամ կարմրացեալ ծայրիւն իւրեւ կայծանեն երեւին ։ Ն բնծք բոցանիծք. մանրիկ բոցոյք կարմրագոյնք, որ իւրեւ բոց կծանեն կամ եռացուցանեն. որպէս ծաղկին, վառանին ։ անիծք անիշխանութք. յորժ մանուկք, որք իւրեւ ձու՝ երեւին անձև, որպէս 'ի գլուխս մանկանց և կանանց. Ն էրամանք ուսանք. բարգենուկք ոլորց, որք յարդարոյ քարանց ծնեալ նին, և զարդարութե լինելոց են, և եռացուցանեն զմարմինն ։

(6) Աշխոյժ ճոյլեանենայ ։ Բարձրութիւնք լուսոյ՝ որք առաւել 'ի գետնի առաջեն խայթելով, ծեծուածն բարբարոս. ճիգնապրութիւն զննութեան անհաղորդ գնդից, որպէս են առաջնորդուհիք զօրքն. զի լուսք առանց մարմնութեան մարմնոյ, և նմանին փախստեայ հոյլից, զծիրական գոյնոց ։ Ջերման փախստեայ, հեր լուծ. մեկնէ՝ արարողք. բայց ոչ վարդագոյնեան զատ զնէ զոյն բառ ։ Այլ թուի լինել արարողականն՝ 'ի բառական փէճ, այսինքն ջուր, ժանտ, և ոսկր, այսինքն գլուխս, յորմէ և անուար՝ նշանակել ջրագլուխս ։ Կամ, թերեւս 'ի յոյն բառէն փանոս, և փանոս նշանակէ արաստաղ, լուսփող են ։ Արշնաբոյր գունդք. անուն կամ թուխս գունդիք. որոց կառույն նշնաղորդոյր, կրկնեալ և շղթեալ 'ի բնական կայս ։ խոնարհք, ամփոփարար մեկնի՝ ծայրն կէս. բայց թուի բաղադրեալ 'ի նուռ բառէն. այսինքն որոյ ծայրն ամուր կամ հաստատուն է, կամ կաւեալ և ողորկ, որ ունի զնմանութեն խայթողի կարծի ։

(7) Իբր տծնիկ ծղուծ ։ Դուծնկին կամ իւրեւ գոյական խմանի վախխանակ ակնքանի. (այլ. անկէն.) և կամ իբր ամծական, զծեալ և զծնգակ փշոլք ։

(8) Զոր ապշեն մարմոյն ։ Յ օրին. մարդոյն ։

(9) 'Ի պտտուածս, 'ի խորշս կամ 'ի պարոյրս բաղամնենից, բաղադրամ ծանրացուցանող փախստական ։

(10) Զփոփանց Ն ղանկածից ։ Ցայլ առաջադրի եղեալ կայր, փոփանց, առակայն ուղղեցայք լուս մեր օրինակաց. զի զօրաշարժական հողով արահամբէ բանին. որով և յաղթող՝ ղանկածից. յր ոէր դիմոյ և զոփար կենդանեաց ծառեալ, որք ուրեղ. բայց եթէ 'ի ցուցանել՝ թէ հզօր և անյաղթելի արաշարականք են խրատանցն ազ. և այլս այնուզիկ են, որք 'ի նոյն խոկ 'ի մարմնոյ մերմէ ծնանին ։ Ընդ որս Ն էխանար ։ Հեր լուծ. եկամուտ ախտ խմանոյ գլուխ. զի ոչ 'ի մեջնջ ծնանի ամէ, այլ արտաքուստ գայ ։ Սոյնպէս նեշլուծն կոյփ, խմանոյ գոլխին, և զոյլ ։ Բայց երկրպէն եւս անկյաղմար. զի ոչ վարդագոյնեան՝ ընդ բնածնես կարգեալ զլուխ, և զուջեն. և ապա յաւելու, թէ բաց 'ի ասացանէ՝ որք 'ի մերմէ մարմնոյս ծնեալ նին, են և արտաքուստ մտեալ ախտք առաջակիցք, այսինքն զանազան հիւանդութիւնք, որք յառաջականութէ օդոյ՝ կամ 'ի թունից նեղադործին 'ի մեզ ։ Այլև զանազան բարգենութիւնք կերչաց, կամ ապականութեանց, այսինքն մարդախոյ, մկանց, գայլոց, առիւծուց, օձից, և այլ գազանաց, որք անաղօրոլք են, և ոչ կարեւոլք զերծանել. այլ 'ի վնասել մարմնոյ ամեկեալ 'ի նոցանէ, բանադրաւորք աղքէք զաղարողաց առանձնան 'ի միասաբեր բեր. և ջեք անդի արարողացին՝ անխանէլ առ նոսա, այսինքն փախչել յոյն անդրս ։ Եւ եթէ երբեմն մարդկայն հնարիւք զերծանիլք յոյնցանէ. այսինքն 'ի հիւանդութենց, կամ յայլ վնասակարաց, կամիք բարերարութեն քո յաղթելն այն հնարք, և ոչ 'ի մերմէ ճարտարութէ ։

Մեծութիւն յաւիտենական երկնի հեծութեան՝ նորին հոգւոյ, առ նոյն ողբոց մաղթանաց բանի ։

՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

## ԲԱՆ. Հ.

ա. Ու քանզի համբարձեալ գլխաւորաց բանիս ՚ի փոքունց աստի երկրայնոց՝ չհամարելոց ընդ գոյս եղելոց՝ [2] ՚ի մեծագունիցն տեսակս, ասացից զտօնելի հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան ։ [3] Որ զի թէ մերձաւորագոյնք իցեն Այ՝ իբրև զնախածանօթ հայրապետութիւն, և կամ մաքրագոյնք՝ որպէս մարգարէքն, կամ անքծագոյնք՝ իբրև զառաքեալքն, կամ ընտրելագոյնք՝ որպէս մարտիրոսքն, եթէ ոչ դու մարդասիրեսցես աննուաղ բարիդ՝ և անփոփոխ խնամակալութեամբդ՝ և անպակաս ողորմութեամբդ, ընդունայն է ինձ փրկութիւն առ ՚ի նոցանէ ։

բ. Ոչ եթէ առ նոյն ինքն աբրահամ ձայն արձակիցեմ, իբր ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետէ, ՚ի տապոյ անտի պապակեալ; կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է [3] ընդ կարեօք հասարակաց անհնարութեան ։ Իսկ եթէ առ մովսէս, և նա զգածեալ է տկարութեամբ, որ ոչ զօրեաց անձն փրկութեան, որ [4] զհայթայթանաց կերակուրն ՚ի պահպանութեան աւուր ժողովէր ։ Իսկ եթէ առ ահարոն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի ։ Իսկ եթէ առ դաւիթ, ՚ի մէջ բարեացն առաւելութեան՝ ստգտեալ է և նա ։ Իսկ եթէ առ նոյ և յոբ՝ և դանիէլ, զայս եզեկիէլ մարգարէ մեկնեաց՝ յանուանէ իսկ յիշատակեալ զնոսա, և զայն ընդ նոսին իբր ՚ի դիմաց Այ ազդեալ, կենդանի եմ ես՝ ասէ տէր, թէ ոչ ապրեցուսցեն զուստերս և զդստերս իւրեանց ՚ի բարկութենէն՝ որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին ։ Իսկ եթէ առ պետրոս վէմն հաւատոյ, ՚ի քումդ խնամոց [5] խուռն մի խիթացեալ՝ և նա ընդ կրիւք իմն զբաւեցաւ ։ Խոստում ասել զառաջնեացն զուժարութիւն [6] խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք և

ցեն ։ Ընդ որս և ⁷ յաւատու ամ̃ն մարգարէի 'ի մէջ
ա̃ծաւաւքն սպասաւորութեան մարդկօրէնն գայթակ֊
ղութիւն մեայ յոլովից անթարգմանելի, թէև 'ի դէմս
իմն մեկնութեան ձեւակերպեցի ։

Է ․ Այլ քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փր֊
կութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բա֊
րերարիդ՝ և զօրացեալք ամենակալիդ ․ կոչեցեալք
պաշտպանողիդ՝ և քաւեցեալք հնարաւորիդ ․ 8 շնոր֊
հեալք ազատեցուցչիդ՝ և բժշկեալք անախտակա֊
նիդ ․ կենդանագործեալք անապականիդ՝ և լուսաւո֊
րեալք նորոգողիդ, այսուհետև դիմացեալ զաւակն
որքանուեց հողածին բնութս, 9 որք մխիթար են օրէ֊
նակաւն նմանապար հարազատապէս վհասուն յու֊
սահատելոց, ահա սա քեզ դիմեցից՝ որդի ա̃յ կեն֊
դանւոյ քո օրհնեալ յաւիտեանսն ։ Ամենայնիդ 10 զա֊
ւակն ազգակից այսմ մաղթանաց աստանօր յիշեալ,
զմերադրելոցդ բան վերստին արդարացուցանէ ․ բա֊
րի է, ըստ իմաստնոյ ուսմեան երջանիկի, անկանել 'ի
ձեռս ա̃ծ, և ոչ 'ի ձեռս մարդկան ․ զի որպէս մե֊
ծութիւն նորա, և ողորմութիւն նորին ։ Այլ այս բան՝
թէև ըղձութիւն իմն գծագրէր, որ զերկրպագմանեան
հարուածն ա̃ծեան սաստկի եդեալ՝ ընդորեաց խնդրեն
կամաւորապար զդատակնիք մահուն սատանայական՝ խոյ
զկենդանի քեզ հաւատոյն յանձնառութիւ, քան զեր֊
կուսն և այլ փորձիկունս՝ որք սաստկեան և ոչ ողոր֊
մին ․ սակայն և իսկ օրինակութիւն բանիս պատկերի 11
Ճարտակեցելոյ հնարս կենաց կարօտեալս անձին՝ ոչ
է այլայլեալ յարմարութէ ․ զի ոչ եթէ զփրկեալսն
նուաստացուցանեմ 'ի մատենի այսր ողբերգութէ, 12
աւանց որոց ոչ է մատչել առ անէր, այլ զփրկողին
անուն պատկեմ, և զշնորհ նորին՝ առ ամենեսին բա֊
րեհաշակեմ ․ և զանունն բարձունան 'ի թուխս մա֊
րուց՝ խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ 13 կա֊
ռուցեալ ողորմութեան դեղոց ։

Ը ․ Ահա դու կենանք, դու փրկութի, դու բժշկու֊
թի, դու անմահութի, դու երանութի, դու լուսա
ւորութի ․ արա ինձ անդորր 'ի մեղաց աշխատութեց,
14 զի և քեզ լեցի հանգիստ 'ի մշտադալար հեծութեց՝
ձանձրացուցիչս թախանձանաց ․ որ ոչ այլ ևսէք,

քան թէ փրկութիւն մարդկան պարարիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

---

(1) 'Ի [illegible]։ 'Ի [illegible] ... (Տես [illegible]) [illegible] ... Այ, [illegible] ... Յ[illegible] 'ի [illegible] Աստուծոյ, [illegible]։

(2) Թէ [illegible]։ Թէ և [illegible] Այ, և [illegible] ... Այ։ 2 [illegible]. [illegible]։

(3) Ընդ [illegible]։ [illegible] ... (Ղուկ. ԺԶ. 26։)

(4) [illegible]։ [illegible] ... (Թուոց. ԺԵ. 32։)

(5) [illegible]։ 'Ի [illegible] ... 'ի [illegible] 'ի [illegible]։

(6) [illegible]։ Թ[illegible] ... 'ի [illegible]։

(7) Յ[illegible], [illegible] ... (Ղ. Թագ. ԺԷ. 1։) [illegible] ... Այս [illegible] (Կ Թ. Մատթ. ԺԲ. 5. 15. ԺԹ. 22.) [illegible] ... Այլ [illegible] ... Այսպէս [illegible]

գժտութիւնականի մտաւ. Իէ ե ՚ի դեմս Իմ ձեռնաւէ յեռակերպեսցի. այսինքն թէ և մեկնումն ենչ գտանելոց լուծման, ասելով թէ Թոյլ եա ած ճշմարիտ մարդկութեան խառնել ՚ի բնութենական մարդկութեան, զի յետոյ պատուահասելով զնա՝ այլոց կուսապաշտելոյն խրատ լիցի. զի եթէ ընդ փոքր յանցման ծառայքն եւրոյ պարգացաւ ած, զիարդ զմեծամեծ յանցանս այլոց անաակս ասանիցէ. և զի ճշմարտելով բանիցն նա ՚ի վերայ մարդկարեան յանցուցելոյ, խմացքն՝ թէ նաև այլ բանք նորա ՚ի վերայ յերաբովանդակ՝ ՚ի գլուխ ելանելոց են: Իսկ թէ զիարդ մարդկութ իւր գոլով, խառնեցաւ ՚ի սուտ մարդկութեան բնութենական, ասեմք՝ թէ խառնեցաւ ոչ երբեւ մարդկութ, այլ երբեւ մարդ. զի ոչ միշտ զանձնայն ենչ յայտանէր ած մարդկութեց. քանզի և նաթան մարդկութ էր, և ՚ի հարցանել ցեա զաւթի՝ չճնել զաւուն նա, պատասխանի ետ՝ ասնել որպէս և հաճոյ է նմա. և աւելայն ՚ի գերեկնեն յայտնութե ասեաւ յէյ, զարմացոյց զըսմենն՝ չչնել. ևն: (Բ. Թագ. Է. 3. 4. 5:) Այսպէս և այժմ իւր համարեցաւ՝ թէ զուցէ բնութենական մարդկութեան յայտնեաց ած զանձնալ ՚ի ասուն նորա, զոր ինքեան յայնժամ ոչ յայտնեաց. և թէպէտ կարող էր և պատրաստական՝ քննել զճշմարտութի մարդկութեն նորա, բայց ակնարկեցաւ և զանց արար. որով և յանցեաւ՝ թէ և ներելի՝ բաց հաատարեալ կատարեաց մարդկաաւորաց. ուստի և պատժեն նորա եղև ապաշխարհին մեծ մարմնոյն, որով ՚ի հայրենի գերեզմանեն զրկեցաւ: Իսկ եթէ ծանր եա համառակելի յանցուածն նորա, աւելայն յետոյ ծանուցեաւ զրկեցաւ. ուստի և ած ՚ի պատուահասելն զնա՝ պահեաց ասելուհեն զպատուհաս ծառայքն եւրոյ: Այսպէսև, և այլ եա բանիւք՝ զայս Թողումն մնան համառօտութե, մեկնել բաց երկայց ենչ մարդկորեն զայնթանչութե մարդկարեանն իւր. զոր միայն գիտէ աստուածոր նը մարդկասիրաս, առ ՚ի ցուցանել՝ թէ արդարոց եա պատուահէ անկումն, որով ողորմութենն իւր կարօտին: Այլ ոչ գիտէ ասել, թէ երկոցունց եա մարդկութեան ճշմարիտ էր, և թէ ած եա նոցա համառօտակ միմեանց մարդկութեանն. (որպէս ասեմք կարծեցին անդգուշաբար:) Այսպիսի մասաց և ոչ նշանաւորեաց մե կայ ՚ի բանս այս մարդկասիրաց. նաև կարէր իսկ ոչ այդպէս կարծել, յայտնապէս ասելով գրոյն. (Գ. Թագ. ԺԳ. 18.) թէ ասաց նմա բնութենականի մարդկութեն:

(8) Ըմբռնեաց արտաքսեցաւ ի նա: Յինքնումն գանելով յառաջանկալեցեր: Այսպէս զորութէ բացատրական են ամ մեծաւական անուանքն՝ որ յայտնէ բանին:

(9) Որք մինչ էն ... վհատումէ: 2 օրին. Մինչորեն ... վատահումէ: Երկարքն եա ունելն զպատուհաս մտաւ, այսինքն ակնառնելով՝ զի և ամբն ՚ի քեն գտանե զողորմութե ՚ի մեղաւորելն, և այսու գիտելով զչարն կատարութե հոգեւորեն բնութենս ՚ի սխալմունս նոցա, նոքա երբեւ համակարծիք մեզ՝ եւրեանց օրինակաւ միսիթարեսցուք լինելն վհատութե յուսահատելոց, կամ միսիթարեն ՚ի վտանգութե յուսահատելոց կամ լքելոց. վասն որոյ և եա առ քեզ դիմեցից, ևն:

(10) Ջատաքն ամբոխից: Ջմինան՝ որ նմանն է այսմ մաղթանաց. և է բանն սիրաքայ. (Բ. 22.) զոր և զաւիթ ասաց առ գաղ. (Բ. Թագ. ԻԴ. 14:) Այս բան սիրաքայ՝ Իէ ե զատաքին Իմ գծուգրէր, թէպէտ և զգութե երկց հարուածոց ընտրութեն յայտ առնէր, որով ՚ի սովոյն՝ ՚ի հալածմանէն՝ և ՚ի մահուանէն ընտրեաց զմերձենն՝ զմահն, որ յետ լինելոց էր, ուստի հանդերձ ողորմութբ, միանգամայն յանձնառութբ ՚ի կամս իւր մեռանելումն՝ կենդանիք լինէին հաւատովն յարութ ՚ի ձեռն քնն. Իսկ այլ երկուքն՝ սով և հալածումն թէպէտ և փոքրունք քան զմահ, բայց անմխիթարար յերկարօրէ պատճառաց լինելով, անողորմաբար

տանջէն ։ Արդ՝ թէ և Դաւիթ և Սիրաք զընտրութէ պատուոյն առա-
ջին, եւ զնոյն օրհնութեամբ ասէ՝ յընտրութէ բարեբարութեանց, յաւ հաստա-
տելով անկանել առ Աստ, քան առ արդարս 'ի մարդկանէ ։ Եւ այսու ոչ
եթէ նուաստացուցանել զնոսա, այլ զանուանն փրկողին մեծացուցանել,
և շնորհաց նորա և ողորմութէ զամենեսեան կարօտ խոստովանել, որով
և մեզն պատուել տալ մեծանալ. քանզի տալ փառք են նորա
յայն ունել զնա, քան յինքեանց. որպէս պատուել պատուէ է մարդոյ՝ 'ի
ձեռանէ թագաւորի հանդերձ զգենուլ, քան թէ ի բարւոյ զգեստուց
առնել զայն և ագանել ։ Ուսոյ (յայսմ. գ. 10.) մեզն զպատուել խո-
նարհաց [illegible] առաւելք [illegible], նմա ընծայեալ զնա փառս և զպա-
տիւ. նշանակեալ թէ այս խոստովանութէ էր նոցա պատիւ փառաց ։

(11) [illegible] ։ [illegible]
[illegible] ։

(12) [illegible] ։ [illegible]
[illegible] ։ Այլ [illegible] առ Աստ. [illegible]
[illegible] առ Աստ. այլ և [illegible]
Աստ [illegible] ։ Որպէս [illegible]
[illegible] ։ (Յով.
ժդ. 8 ։)

(13) [illegible] ։ Այս ոչ [illegible] 'ի [illegible]
ծԹ. 2. [illegible], թէ [illegible] ։ Զի [illegible], չէին
կարօտ [illegible], այլ [illegible] ։
[illegible], առ որս կարօտ
[illegible] 'ի [illegible], և [illegible] քան [illegible]
[illegible] շնորհացն ։ Տեառնեալք [illegible]
ԱՏ [illegible], քան [illegible]
[illegible]. (Է. 8.) * [illegible]
[illegible] է. [illegible] ‖ ։ Եւ [illegible]
[illegible] 'ի [illegible] 'ի [illegible]
[illegible] ։ [illegible]
[illegible]. [illegible] և
[illegible]. [illegible] 'ի [illegible]
[illegible] 'ի [illegible] ։

(14) Զի և [illegible] ։ [illegible] է [illegible]
[illegible] 'ի [illegible] Աստ. [illegible] 'ի [illegible]
[illegible], այլ [illegible] 'ի [illegible] ։

Սերովբէն յաւելուած նշխին հեծութեան՝ նորին հօճողին առ նոյն ողբոց մաղթանաց բանիս ։
Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ՀԱ.

Ա. Եւ քանզի [1] երջանիկքն և փառաւորեալք սրբոց պարք, յորոց ոմանք դոյզն ինչ գթեցին, և յաճախագոյնս հաստատեցան. փոքունս առաւանեցան, և մեծագոյն վառամամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան ։ Յորոց [2] միոյն՝ զզանկուածոյն յայտնել զհաստատակատեղծն ակարութի, իսկ միւսոյն՝ զգերազանցն քան զբնութեան օրէնս, վարս և առաքինութիւնս հրեշտակակերպս ։ Եւ արդ՝ նոքա որ օրհնեալքն են յամենիշխան Աստուծոյ ամենաթեթ հօրն քոյ, ընտրեալքն՝ տօնեալքն՝ խնկեալքն և բարեբանեալքն, իբրև զանդգամ քոյ պաշտեցեալք, և իբրև զօթեվանս հոգւոյն սրբոյ յարդարեալք. [3] յորս չիք ինչ նշմարանք և կամ դիւաբ խաւարի, այլ ամենեւին անկեղծութի և լուսաւոր արդարութի, և որքան մարթ է՝ զմարդն Այ՝ Այ նմանեցուցանել ։ Արեաք պարզք և անպատկառելիք. կրօնք բարձունք և անխոնարհելիք. կեանք զգաստք և անըստգտանելիք. [4] պաշտօն առ Այծ կարծր և անփոփոխարկելի. ընթացք արիականք և անկասելիք. ճշմարտութի միատարր և անցնդելի. դիմագրաւութի զօրեղ և անհերքելի. տեսաւորութի պայծառ և անստուերելի. իմաստասիրութի վերնական և անկոխելի. պատկեր մաքուր և անաղարտելի ։ [5] Որոց կերպարանս և զյիշատակս անուանցն ազաչել՝ Այծ իսկ վարդապետեաց, և նոքօք հաճոյի ’ի մէջ խառովութե արարչին բանն լուսաւորեաց ։

([6] Բանք պանծալիք հայրապետացն Այ ։)

Բ. Բայց ես անպիտանս յամենայնի, և որքան բանզօրէ՝ պարսաւեալս. որ մինչդեռ արթունս եմ, նիրհեմ. մինչդեռ զգաստ երևիմ՝ թմբրիմ. ’ի

բարեպաշտելս իմում՝ գայթագղիմ. մինչ դեռ աղօ-
թեմս՝ և վրիպիմ. ՚ի յընթանալս իմում՝ և կաղիմ.
՚ի յարդարանալս իմ՝ և մեղանչեմ. ՚ի խաղաղանալս
իմում՝ ամբոխիմ. մինչդեռ արշաւեմս՝ առ ՚ի յե-
տոյսն հակառակոտեմ. ՚ի չուելն իմում՝ ընդ կրաւնկն
դառնամ: Ընդ լուսոյն մասին՝ և խաւարս յարեմ.
ընդ քաղցրութեան ճաշակ՝ օշինդր խառնեմ. [7] ընդ
կուզս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանգնելն՝ և
կրկին գլորիմ: Ծաղկիմ, և ոչ պտղաբերիմ. տնկեմ,
և ոչ առնեմ. խոստանամ, և ոչ կատարեմ. ուխ-
տեմ, և ոչ վճարեմ: Սարկաւեմ, և անդրէն ամ-
փոփեմ. ցուցանեմ, և ոչ ընծայեմ. մերձեցուցա-
նեմ, և ոչ մատուցանեմ: [8] Ի ճարակել խոցուա-
ծոյս՝ անդրէն վիրաւորիմ. ՚ի հաշտեցուցանելն՝
վերստին խռովեմ. [9] զուր հանդիստանամ, և երա-
ւամբք պարտաւորիմ. [10] գրիմ, և իսկոյն եղծանիմ.
նուեմ, և [11] ՚ի գիծն թուլանամ. սկսանիմ, և ՚ի
հանգիստն ոչ ժամանեմ: Սարգիմ, և դարձեալ
տապանիմ. ընկանիմ, և կրկին հեղում. [12] շարունա-
կիմ առատ, և անդ ՚ի տարբեր հասիմ. բարդիմ, և
անդէն տաշարիմ: Հիմն արկանեմ, և ոչ գլխաւո-
րեմ. սակաւ վաստակիմ, և բիւրս վաճառեմ. դոյզն
գանձեմ, և անթիւս սպառեմ: Ո՜ այլս խրատեմ,
և ես ինքն անփորձ եմ. միշտ ուսանիմ, և երբեք [13]
՚ի ճշմարտութիւն գիտութեան ոչ հասանեմ: Ո՜ չիջեալ
չարիսն՝ նոյնչափ արծարծեմ. սուղ ինչ քաջալե-
րիմ, և առաւելապէս լքանիմ. լարիմ, և իսկ և իսկ
առ նմին մեղկիմ. զայս կարկատեմ, և զայն պատառ-
եմ. խլեմ [14] զեղիճն, և տատասկ անկեմ: [15] Ընդ
ամբառնալն՝ և այսրէն բերիմ. մտեմ ՚ի բոյնն ա-
ղաւնի, և անտուստ ագռաւ ելանեմ. զամ սակաւ
մի սպիտակ, և որանամ դառնամ բնաւորին սեւա-
ցեալ. առնեմ զիս [16] քեզ դաւանել, և սատանայիցն նը-
ւիրիմ. ընդ յանդիմանն լինելն, և թիկունս դար-
ձուցանեմ: Մաքրիմ, և այլ մրձոտիմ. լուանիմ,
և նովին զաղբանամ. կերպարանիմ զդաւթին, և
գործք զաւուաղայն կատարեմ. շրթամբք ճշմարտեմ,
և ստեմ երիկամամբք. աղօթս մատակարարեմ, և
ահեակ կողմամբս աւերեմ: Ընդ երկրագործութեան

ցորենոյն՝ որոմն սերմանեալ. 17 'ի բարձրագոյն իմաս-
տիցն՝ վայր իջեալ եւ ինքն գտանիմ: Հրեշտակա-
նամ յերեսս, եւ 'ի խորհուրդս դիւանամ. 18 'ի յաստ
հաստատիմ, եւ 'ի միտս տատանիմ. սուտ ձեւանամ,
եւ իրաց խոտորիմ. կեղծաւորիմ արդար, եւ ար-
դեամբք ամբարշտեմ: Դասիմ 'ի պարս հեզոց, եւ
ընդ այնս կաքաւեմ. 'ի մարդկանէ գովիմ, եւ 'ի տեառ-
նէդ պարսաւիմ. 'ի հողածնելոցս երանիմ, եւ
յորդւոցն լուսոյ աւաղիմ. հաճոյանամ յետին ռամ-
կին, եւ թագաւորին մեծի յաչաց ելանեմ: Զա-
տեանն դատաւորին թողեալ, 19 խառնակրօնիցն ա-
ղերսեմ. հերքեալ 'ի վեհիցն, 20 սոսկականացն ողոր-
դիմ. մարմնովս արտաքուստ պճնիմ, եւ անձամբս 21
երփնիւ ճայլին ճանաչիմ. հպաւորիմ դաշն հաստա-
տել, եւ ուխտադրութեայս արտաքս մերժիմ: Այսօր մա-
քուր հոգեկիր, եւ վաղիւ մոլի խելագար. զտէրու-
նի պատուէրն լքեալ, թելադրութե օձին հետեւիմ.
արիանամ զօրապէս, եւ վատթարագոյնս ընկրկիմ.
զծանրութիւն աւուրն բառնամ, եւ 'ի ժամ վարձուն
անմասն ելանեմ. 'ի բացուստ ճոխանն խօսիմ, եւ 22
'ի պատասխանատուութեան պահու պապանձեալ կար-
կիմ. 23 'ի յելս արեւուն հարուստ երեւիմ, եւ ընդ ե-
րեկս ունայն դեգերիմ: Ի յաթոռս ծերոց բազ-
մեալ, եւ խելայեղից կցորդիմ. ննջեմ խեթիւ, եւ
արհաւրօք զարհուրեալ զարթնում: Զանդաս-
տանս կամացս՝ չարաչարս հերկեմ. 24 փոյթ խնամով
'ի չարիս. միշտ անսառակ որդիս. անդարձ տարա-
գրեալս. անզղջական զառածեալս. անմխիթար տրտ-
մեալս. ինքնագրաւ գերեալս. մահու եւ ապականու-
թե ծառայեալս. անողոքելի տանջեալս. անփրկելի
մատնեցեալս. անպատուաստելի հատուածեալս. ան-
արծարծելի շիջուցեալս. անկազդուրելի խորտա-
կեալս. անհանդերձելի կործանեալս: Դու եթէ պարտ
է զսաստիկն սաստանօր ասել անօրինեալս անձին նա-
խատինս, ահա գրեմ, գրեմ եւ 25 ոչ անխայեմ 'ի
խուխս նիւթեալ գեհեննին: Աստացուածս 26 նախան-
ձու նորոյս ադամայ երկնայնոյ, որպէս եւ կայենին ա-
ռաջինն՝ հնոյն եւ հողեղինին. որ ունիմ զմնաւն ա-
տուստ 'ի յանձին փնշանակ ամբաստանութեա, ոչ

զխնջոյս տուրեւառութեան, այլ զլանելոյս կշտամբու-
թեան ։
Է. Այլ արդ՝ ուր իցեն փրկութիւնք, ուր սկզբնա-
հայրն հաւատոց՝ 'ի յաւատահաստութեան վայրի՝ զանդր-
թութիւն իմ չարիս կրկնէ. մեծն մարգարէից՝ քա-
րամբք բանից կոչնաձէ. 27 արին բարեփառ՝ աշտէին
Նոյզակառ՝ 'ի մահ սատակէ. 28 պատկեր Ճշմարտին՝ ընդ
աքարու համայնիւ ջնջէ. 29 Ծնծարեալն վեհից՝ յա-
րադողաց վրիժուց մատնէ. 30 մարգարէածին տե-
սանողն՝ ընդ ամազեկացուոյն առաջի ՏՆ սպանանէ.
31 Նախանձաւորն Այ՝ երկնատեղաց բոցովն վառանէ.
սատուերին լրումն՝ և Նորոյս սկիզբն՝ հեծանոցին ըն-
թրութեմբ հոսէ. պետն առաքելոցն՝ ընդ սափիրայի 'ի
կենաց զրաւէ. զարմանալին քննութեամբ հոգւոյն՝ բու-
րումն ինձ մահու՝ ընդ կենացն քարոզ խառնէ ։ Արդ՝
32 անաչառք և ինձ կաճառք երջանկացն, և ուժ-
գնութեան հրամանի վերնոյն՝ արի սպառազէնք. ընդ
հրեշտակացն՝ և մարդիկ. ընդ տիեզերաց երկրի՝ և
տարերք. ընդ անզգայիցն՝ և շարժողականք. որովք
դատեալ միշտ լինիմ տուժիւք ըկանաց՝ յօրինակ
և յիշատակ սոսկալեացն ապագայից. իբր հողմով
փոթորկի ալեաց յաւէտ մրրկեալ կենացս վստա-
հութիւն, զնայ անկայուն 'ի հաստատութենէ ։ Ո՜ որ
եթէ ոք իմաստութեամբ 'ի քննելն առեալ խուզեսցէ 33
զկրողականն բազմատեսիլ զանազանութի, զմանուածս
փոքունս ընդ մեծամեծացն դասեալ, որ առանց
թուոյ և քանակութեան համարոյ՝ 34 թինդս առեալ
անբաւ երամոց եռան զեռան սլանան 'ի մարմնիս
ծովու, վկայեսցէ և հաստատեսցէ Ճշմարիտ լինել
զասացելոցս բանագրութի ։
Ը. Այլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագա-
ւոր՝ բարի երկնաւոր մարդասէր ՔՍ, Այ կենդանւոյ
միածին որդի, հզօր բարձրեալ անքննին անճառ քա-
ւիչ ամհաւոր, սաստեալ 'ի ձմեռն ամբոխեալ ալեաց
ոգւոյս ծփանաց. 35 արձանացի զծարաւս մոլեգին
շարժման որտիս խռովութեն. ընդոտնեալ 'ի սանձս
կապոյ երասանաց ըմբռնման՝ զցնդեալ մտացս վայ-
րագութիւն ։ Տղեցի խաղաղութի հրամանաւ մեծիդ 36
ամենավարան բերոյս սասանման. սաստակեալ խափա-

նեալ զաղաղմագլխեան անդրանն ուրաքանչիւր զգաղա-
նեաց ամօթոյս՝ երկրպագեսցալք Հինից ։ Գոչեցեր 37
աղօթս մնամնատոյցս զայս նորընծայ տառ. ողորմու-
թեան թախծագին ձայնի ողբերգարկութե այսր մա-
տենի ։ Հան 'ի խորոց մտահուս անդնդոց՝ չքնաղ աղա-
ղեցեալ ընդ մարգարէին փրկելոյ ․ ընկալ զխոստո-
վանութի անձնապատառ բանիս 38 'ի հոռ անուշից ․ չնոր-
հեալ մխիթար զառնութե վշտաց ուժգին հեծութե
յուսահատելոյս ։ Այլ քեզ ընդ հօր հոգւովդ որդւով
փառք պատիւ և իշխանութի՝ յաւիտեանս ․ ամէն ։

---

(1) Երջանիկն և [illegible] ։ Սկսեալ բանիս կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] ․ [illegible] [illegible] , երջանիկ են և [illegible] [illegible] [illegible] , են ։ [illegible] կամ [illegible] է ընդ [illegible] , որ [illegible] են , 'ի բաց [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] է [illegible] ․ երջանիկ և [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] և [illegible] [illegible] և [illegible] , [illegible] [illegible] [illegible] են [illegible] հօրէ , են ։ Զայս աղօթք [illegible] [illegible] [illegible] [illegible] ․ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] 'ի մէջ [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] և [illegible] ։

(2) Յորոց [illegible] ։ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible]՝ [illegible] ․ [illegible] [illegible] , [illegible] և [illegible] նոցա 'ի [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] նոցա , [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] ։

(3) Յորս [illegible] ։ [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] ․ այլ 'ի [illegible] [illegible] [illegible] և [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] ։ [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] ։ [illegible]՝ որ [illegible] [illegible] [illegible] [illegible] է , [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] և [illegible] ։ [illegible] , [illegible] [illegible] , [illegible] [illegible] [illegible] [illegible] ․ ( ա․ տիմոթ․ դ․ 11․ ) [illegible] [illegible] [illegible] [illegible] , 'ի [illegible] [illegible] [illegible] ․ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] ։

(4) Պաշտօն առ [illegible] ։ Ծառայութի նոցա [illegible] և [illegible] ․ [illegible] 'ի մէջ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] [illegible] , [illegible] , [illegible] , և [illegible] ։ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] , [illegible] , և [illegible] , [illegible] և [illegible] ։ [illegible] , [illegible] ․ [illegible] նոցա [illegible] [illegible] , [illegible] , և [illegible] [illegible] , [illegible] ․ 2 [illegible] ․ և [illegible] [illegible] ․ [illegible] ։ [illegible] ․ [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] և [illegible] ։ [illegible] [illegible] ․ [illegible] [illegible]՝ [illegible] , [illegible] ․ [illegible] [illegible] [illegible] , կամ [illegible] [illegible] [illegible] ։

(5) Զարդ [illegible] ։ Զ[illegible] [illegible] նոցա և [illegible] [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] և 'ի [illegible] , [illegible] [illegible] [illegible] , [illegible] 'ի հին և 'ի նոր օրէնս ․ և 'ի ձեռն նոցա [illegible] [illegible] [illegible] կամ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] , [illegible] ։ [illegible] ,

[illegible]

(6) [illegible]

(7) [illegible]

(8) [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible]

(12) [illegible]

(13 [illegible]

(14) [illegible]

(15) [illegible]

(16) [illegible]

(17) [illegible]

(18) [illegible]

(19) [illegible]

(20) [illegible]

(21) [illegible]

[illegible]: Այսպէս կամ այժմ [illegible], [illegible] [illegible]. [illegible], [illegible], [illegible], և [illegible] [illegible] 'ի [illegible]՝ ոչ է [illegible], այլ [illegible], [illegible] [illegible] և [illegible]:

(22) 'Ի պարապախանարութեան: Յ օրին. 'Ի պարապախանութեան: այլ. պարապախանարութեան, կամ պարապախանարբութեան:

(23) 'Ի չէր արևուն: Ընդ [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible]:

(24) Փոյթ խնամոյ 'ի լուրս: Այս չէր յերկս օրինակս:

(25) Ուղղախոյեմ 'ի խոսքս: Գրեմ [illegible]՝ [illegible] [illegible] կամ [illegible]: Բայց Յ. օրինակք [illegible], [illegible] կամ [illegible], և [illegible] է [illegible]. [illegible] կամ [illegible]:

(26) Սփոփանօք նախանձու: [illegible], որ[illegible]. որ [illegible] կամ [illegible], [illegible] և [illegible]. [illegible] և [illegible], [illegible], [illegible] կամ [illegible] 'ի [illegible], որ [illegible] 'ի [illegible], այլ [illegible], [illegible] 'ի [illegible]:

(27) Ածին բարեկամ: Փենեհէս [illegible], որ [illegible] և [illegible] 'ի [illegible]:

(28) Պարփէր ճշմարտին: Ցեաւ՝ օրինակ ճշմարտին [illegible]:

(29) Անձրևոյն վէհից: [illegible], [illegible], [illegible]: ( [illegible]. [illegible]: )

(30) Մարգարէածին փետանոցն այսինքն [illegible]. ընդ [illegible] 'ի [illegible]: Այս բան չէր յերկս օրին:

(31) Նախանձաւորն [illegible]. Եղիա. [illegible]. Ցուցանանէս [illegible]. [illegible]. Պետրոս:

(32) Անուշահոտ և բիւղ: Այդ՝ [illegible] օրինակի [illegible]՝ [illegible], որք [illegible] և [illegible] են, են:

(33) Զուարթական: [illegible], որք [illegible] 'ի [illegible]:

(34) Թևնդու [illegible]: [illegible], [illegible]: [illegible] է, թէ [illegible], [illegible] կամ [illegible]: [illegible], կամ [illegible]՝ [illegible], 'ի [illegible]՝ որք [illegible] և [illegible] 'ի [illegible]:

(35) Արշակայ [illegible]: [illegible], [illegible]: Ցայտ[illegible]: [illegible] 'ի [illegible]. [illegible], որպէս [illegible]:

(36) Անհունական [illegible]: Ցանմտայն [illegible]: [illegible]. որպէս [illegible]՝ որ [illegible]

պյոմնեան, խաւախանեան ասէ՝ զանխոտ մարմնոյս. որոց խոլորանչքուրն ա-
նին զլուխ, և առին անդամք հոգւոյն՝ բայց ուրատական, այսինքն նմա-
նական կամ գրենական. Երկրայիննաւու հինից, որք են խոր հեկք (զուր-
անաւք) շրջեալք կամ ջրաւթեալք յերկրի մարմնոյս. կամ են հեկք զա-
մարմնոյք, որք շրջին 'ի ցամաք երկիր թեւութեամբ :

(37) Աղօթս մշտամաղթոյց : Զայս զբաւարականն ողջոյց ձայնի՝ հասանականն
հրաւէր զաղօթս յանձանձ, զոր մասն մատոյց 'ի վերոյ կխակին : Եւ ասէ,
Նորընծայ պատ, այսինքն նորոգ յաղածակեալ, և ոչ թէ նոր զղջումն առ-
նելով :

(38) 'Ի հոգ անաղէց : Ընկալ զայս խոստովանութիւն փոխանակ պատասխ
բանքին՝ զոր խոստանայք յանձանն յաղօթան, և մատոյց քեզ յետ եղանե-
լոյ 'ի կխակին :

---

Մերոփին յառաջնուած նրէին հեծութիւն՝ նորէն հաւաղն առ նոյն
աղջիկս մաղթանաց բանն :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ մեզ :

# ԲԱՆ. ՀԲ.

ա. Այլ աւհա ձեզ ասեմ ով եկեղեցիք միա-
ձանց՝ և [1] աշակերտութիւնք կրօնաստանաց,
որք մերկամարմին մատանցդ ձեռօք՝ առ անհեկալու-
թի յուսոյն պարգևաց բարեացն անբաւից՝ նոն զի-
նուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորա-
կաց բանից ընծայեցուցի, ընկալարուք զայս աւան-
դութիւն խոստովանութեան 'ի շինուած փրկութեան հո-
գւոց : Ծաներուք ամփոփ զմարմնոյս պարտութի.
յիշեցէք զմարգարէականն՝ ընդ առաքելականին ա-
ռեալ մեզ 'ի խրատ, զի մի պարծեսցի ամենայն մար-
մին առաջի մոյ, և զոչ ոք է արդարն և ոչ մի : Մտե-
րանականն մի մոռանայք, 'ի կատարածն իսկ պա-
տուիրանին զոգջիք զձեզ ծառայս անպիտանս. մի
եղիցի լինել ձեզ որսք խաբողին. [2] զգուշացարուք և
գրոյն, թէ կերակուրք նորա՝ ընտիրքն : Ծանզի և
ես իսկ, որ զայս նուաստութի մասնաւոր պտղոյ ձեզ
ջամբեցուցի, վկայեալ զանձնէ կամաւորական ստգը-
տանք բիւր բամբասանաց՝ անբժշկական մեղանաց,
[3] 'ի սկզբնահայրն սկսեալ մինչև 'ի սպառումն ծննդոց
նորա՝ կամսյականն յանձնառութ հաստեցի եդի զիս
ամենայնիւ պարտական չարեաց :

բ. Եւ այս [4] յումեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հանձե-
ցայ, 'ի յառաջ նորա անյարմարապէս առ այն, որոյ

առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբեք շնացայ, ոչ պոռնկեցայ, և ոչ զաշխարհիս իմոց համբուրեցի ճաշակս մահու: Այլ ոչ ընդհատ իմոց յանօրէնութենէ. թողցէ նմա տէր ած զայսոսիկ. Թէև ճշմարտիւ իսկ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան թէ գթեաց, 'ի յառել զանպարտմարսըն 'ի դիմաց ժողովրդեանն իսրայէլի բանիւ զաքարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք, որ է փարիսեցւոյն ձայնի կերպարան: Բայց ես քանզի գիտաղին նոյ մատնեալ եմ դատաստանի, որ զկիրս աներևութիցն մտաց 'ի կշիռս եդեալ՝ համարի դատել զիս նոքօք ամենիրաւ հատուցմամբք, ոչ կերպարանեցայց տեսողըն. ոչ կեղծաւորեցայց քննողըն. ոչ առեցից 5 զոչ գործեցեալսն նկատողըն. ոչ խաբէութե ընդ միտ իմոց մտից մեծին. ոչ 'ի տեսիլ բարւոյ ցոփութե՝ զչարս քողարկեցից. ոչ 'ի պատկեր ընտանի՝ զապիկարս երբեք յարդեցից. ոչ 6 խենեշեցայց 'ի զարդ օտարոտի. ոչ պճնեցայց այլով պայծառութե. ոչ պաճուճանս յարմարեցից ազեղութեան գեղոյ: Ո՛չ որք մեղաւոր իբրև զիս. ոչ որք անօրէն. ոչ որք ամբարիշտ. ոչ որք անիրաւ. ոչ որք չարագործ. ոչ որք վրիպեալ. ոչ որք սխալեալ. ոչ որք մոլեգնեալ. ոչ որք խարդախեալ. ոչ որք շաղախեալ. ոչ որք դատապարտեալ. ես միայն եմ, և այլ ոչ որք. 7 ես ամենայնին, և յիս ամենեցուն: Ո՛չ հեթանոսք, զի ոչ գիտէին. ոչ հրեայք, քանզի կուրացան. ոչ տգէտք և խառնիճաղանջք, քանզի յիմարք էին իմաստից: Պետ վարժից կոչեցայ՝ յանձինս դատախազ. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգովեստն առ ած՝ եղծի. բարի ասացայ՝ առ եղկութեն ժառանգութե. Սր վկայեցայ 'ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի նոյ. արդար դաւանեցայ՝ ամենայն իրօք ամբարիշտս. հեշտացայ 'ի գովեստ մարդկան, զի ծաղր եղէց յատեանին քո. յաւազանէ կոչեցայ որթուն, և ես 'ի քուն մահու ննջեցի. 'ի փրկութեն աւուր հսկող յորջորջեցայ, բայց զզգաստութեն աչս կափուցի: Ահա դատաստան. ահա յանդիմանութի.
8 ահա նոր կշտամբանք, և հին դատապարտութի. ահա ամօթ դիմաց, և տագնապ հոգւոյս. ահա 9 խնդիրք

փրկութեան , և կեցուք մեծամեծաց ։

Ժ. Ո[illegible] դու միայն՝ տէր ա՜ծ մարդասէր , անոխա-կալ և երկայնամիտ , համարեալդ մեղապարտս ան-ձին՝ ընդ վերջին պարտաւորութե աւուրն ահաւորի՝ զայս կսկծեցուցանօղ ինքնաբանական նախատինս ։ Մի լուայց 'ի քէն զայսոսիկ՝ գթած , փոխանակ զի ես ինձէն անձինս գրեցի ։ Այլ՝ բարձցես և [10] վերա-ցուսցես զպարտաւորութե կանոնիս՝ ընդ քեզ կապելոյս ոտնչանօք հոգւոյս ։ Զամ զնախատինս պատկառանաց խայտառակութեանս . ծածկեա աջովդ կարողութե զօգեղ անսակ մարմնոյս մերկութեան . մատո հանգստեան [11] զթօթեալս ուժգին մեղացս բե-ռամբք . կարգեա ինձ սահման հեռոց բարութե՝ առ-ելս կենացդ . պահեա յիշատակ ինձ ողորմութե՝ և զկնի մահու՝ կեանս ամենեքին , որհնեալ յերկինս , և գովեալ յերկրի . բարեբանեալ միշտ յանմնայնի՝ յաւիտեանս յաւիտենից . ամէն ։

---

(1) Աշակերտութեան ։ Աշակերտեալ անձինք կամ ժողովք միաբանակե-ցաց ։ Որք [illegible] , փոխանակ [illegible]՝ [illegible] ձե-ռաց , այսինքն որք անձէն ձեռօք գծեալ էք ԱՅ , ամենայնեալ ան-բան բարեաց յերկինս . որոց և զայս բանական [illegible] 'ի [illegible] խորանաց՝ ընծայեցի բառ ձեռամբ [illegible] ։ Ընկալարուք զայս [illegible] կամ [illegible] 'ի շահ հոգւոց , և ոչ թէ 'ի գայթակ-ղել կամ 'ի [illegible] ։ [illegible] թէպէտ բառ [illegible] մասին՝ [illegible] և [illegible]՝ [illegible] թերութեանց [illegible] , բայց [illegible] ընդ գծեալ առ ած յաւաքութե՝ [illegible] [illegible] [illegible] առ այնմանիկ որք առաջի մեաց [illegible] ։

(2) Զգուշացուցանէ և գրոյս ։ պահեցէք կամ յիշեցէք զբան զայս . ( Առակ . ա . 16 ։ ) զոր հեն լուծ . [illegible] ընծայէ յորոց ։

(3) 'Ի [illegible] ։ Ցուցանելով նախահօրն [illegible] 'ի վեր-ջին ծնունդ՝ զամենեցուն յանցանս և զխիղճ [illegible] , [illegible] ամենայնին պարտաւորական ։ Մի թուեցի թէ զպարտս [illegible] բանիցս ձեզ [illegible] , զձեզ պարտաւոր ցուցանել կամեցայ այսքան չա-րեաց . այլ [illegible] զանձն իմ միայն [illegible] պարտաւորական ։ Իսկ զձեզ հարցէք [illegible] [illegible] . բայց [illegible] [illegible] զան-ձինս ձեր , և մի նմանեցիք [illegible] ։

(4) Ցուցանէ ոչ պարտաւորել ։ Զայս [illegible] էր [illegible] 'ի վերայ հարաւոր [illegible] , թէ ոչ [illegible] [illegible] , [illegible] ։ զոր [illegible] [illegible] ոչ [illegible] ։ [illegible] [illegible] նէ [illegible] անձնէ առ [illegible] ժամանակաւ . [illegible] . ծնեալ [illegible] [illegible] էր , և [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] ոչ [illegible] ընդ ամե-նապարտ [illegible] [illegible] , և [illegible] [illegible] . [illegible] թէ [illegible] , [illegible] ոչ [illegible] , և ոչ [illegible] , և ոչ [illegible] , [illegible]

և զեկեղեցի [illegible] միաւորեցելոյ [illegible] միշտ [illegible] դրօշ: Սակայն մեք վարդապետք լուծանեմք զխորհուրդ նորա, և առնել բարւոք ցուցանեմք. զի խօսելն զայնմանէ բանիւ առաւելի քան՝ ոչ է հնար [illegible], յորժամ արարածովք ոք առնիցէ. և զի խորհրդով [illegible] յայտնագոյն յանդգնեալ՝ ընդ գործով [illegible] կացուցանէ. և ոչ կարէ առնել ոք, թէ ես և ոչ խորհրդով ընդ [illegible] յայտնի. [illegible] յորժամ [illegible] զանձինս առաւելի քան՝ ոչ [illegible]: Վասն [illegible] բեւ ե ճշմարիտ խոյ գրեցաւ. այսինքն թէ և ճշմարիտ էր նորա [illegible], [illegible] ոչ ընթացաւ, ի [illegible] [illegible] որփան բեւ գեւեալ, [illegible], որպէս թէ առնել [illegible] խոստովանելոց՝ [illegible] ի [illegible]. ( ժա. 5. ) օրհնեալ քեզ, և մե-ծացոյ, այսինքն զօրհնութիւն [illegible] վասն կատարեցելոյ կամ [illegible] [illegible] ծութիւն առաքելութեանց, որ և է նմին [illegible] [illegible]:

(5) Զուլ գործեցելոյն: Ո՛չ [illegible] որ նախ զոչ գործեցելոյն [illegible]. այսինքն կամ զոր [illegible] գործով չեմ [illegible], բայց խորհրդով հաճեալ եմ. և կամ թէպէտ այժմ չեմ գործեալ, բայց յետոյ գործելոց եմ: ընդ մեզ [illegible]: ոչ խոստովանութեամբ հաճոյացուցից առաւելի եմ: Ո՛չ նախ նեղութեան ցուցանէ [illegible]. այսինքն ոչ ընդ [illegible] բարի [illegible]՝ [illegible] ծածկեսցես: Կամ, ոչ ընդ [illegible] բարի [illegible], [illegible] և [illegible]՝ ծածկեսցես [illegible], որպէս [illegible] 'ի [illegible] և [illegible] առ խոստովանեալ մար-դկութեան՝ [illegible]: ( [illegible]. Թագաւ. ժէ. 5. 6: ) Ուր զարթեր, ոչ [illegible] [illegible] կամ [illegible], [illegible], [illegible], [illegible] իւրեանն՝ որ զանձանց [illegible]՝ [illegible] [illegible], [illegible] և հզօր ձեռամբ:

(6) Ուխենեցելոյ: Է օրէն. խենեցելոյ: ոչ [illegible] [illegible] [illegible]. որպէս լինի՝ եթէ ոք 'ի զանձինս գործոց [illegible] և կամ [illegible]՝ [illegible] յանձն առնիցէ, [illegible] ոչ գտցէ այնմանէ: Յայտնապէս բանիւ [illegible] ճանչն կէս [illegible], որ [illegible] [illegible]՝ առ 'ի [illegible] [illegible]:

(7) Եւ ոսկեայն. այսինքն [illegible] [illegible] յանցաւորքն [illegible] [illegible]. և յիս ոսկեղենն. [illegible] [illegible] յանցանքն և [illegible] [illegible] [illegible]: Իսկ թէ այս, և [illegible] [illegible]՝ որ-պէս ճշմարտութեամբ [illegible], առ 'ի կն. ը. 1: Քանզի յորժամ [illegible] չէ [illegible] [illegible] [illegible] յանցանացն՝ որ յայլ յանցաւորս կամ [illegible]. հարկաւ զհետ զայս՝ զի [illegible] [illegible] յանձին խո-րում:

(8) Անձն նոր կազմեալ, առնել 'ի նշանակութիւն անուանս. զի Գրիգոր կոչեցաւ 'ի [illegible], որ թարգմանի՝ հսկօղ, արթուն. և սակայն գործովք [illegible] և [illegible] եղէ, որով և անուամբ լինի [illegible] [illegible]: Եւ հին դարագոյնոքն, նոր [illegible] անուանս [illegible] [illegible] [illegible]՝ զոր առաջին յանձին կրեմ առնել այլ միայնոյ:

(9) Խնդիր քոյնոյ: Այս և վասն [illegible] անուանս լինի [illegible], [illegible], որ [illegible] կարծի բան [illegible] [illegible] Ա.Յ. և սակայն նշխոյ մեծաւեծոյ. ընդ [illegible] յանցանաւն [illegible] է: Վասն զի [illegible] մեծ է և [illegible] [illegible], յորժամ գործք ոչ [illegible] անուանն. զոր օրինակ թէ ոք [illegible] [illegible] [illegible], և գործ [illegible]. [illegible] [illegible]

առնէ՝ ծնեալ զինքն։ Առաջնորդն ընդ տառապեալս կշտամբանօք յառաջ բերէ և զայն թէ՝ հրէից անաստուածեալ էր, և սակայն ոչ ետ հրէից վարկս (Հռովմ. Ժ. 17.) և նոյն յանդգնանութեն առն (Յայտն. Գ. 9:) Եւ ուշ և- ղեալ առաքելոցն խակ յանթացս նախախնամութեն Այ, զի բաց զաղ- ծոց և բաց պաշտօնանն կարգեալ ամենայնէ իւրաքանչիւր ցեղս հնչման առ- նուանն, որպէս Աբրահամու, Յակոբայ, Պետրոսի, Յովհաննու միշտոյք, և այլոց. որպէս զի անուան լցէ նշանակ յայտնիչ գործոցն, և խորհ. ձայնաւոր պատուիր անձինն անուանեալոյ։

(10) Վերջացուցեալ զոյնն։ բարձրեալ զկապ կամ զարգելեալս անձնաւորեալ բանիցս, զոր խորհ. կանոնական առաջարկութեան, կամ երբ բանադրեալս եղև անձինն խնում, թէպէտ և բաց փափուղածոց հոգւոյս չեմ արտաքսեալ 'ի քէն, այլ կապեալ եմ ընդ քեզ։

(11) Ձիւղեալս։ զհաստատուածեալս, կամ զձեռնեալս ծանր բեռնակիրք մեղաց՝ մերձեցոյ 'ի հանգիստ, բաց տրուր և հրաւիրեցեր զծանրաբեռնեալսն առ քեզ զիմեալ և զառնուլ հանգիստ։

---

Մերովբէին յարդարեալ էրէէն հեծեալ՝ նորին հոգւոյն, առ նորա աղերս ծաղկանց բանի։
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ՀԳ.

ա. Թագաւոր բարձրեալ, հզօր, ահաւոր՝ օրհ- նեալդ միայն Տէր Յս Քս, քն է փոխար- կել՝ [1] յանակնկալս կենաց յուսահատութեն զպատա- հիչ անէծս՝ առ կեցուցանօղ օրհնութիւնս. զպարգա- ւաման վհատութեն՝ առ զուարթացուցիչ գովութի. [2] ընդ ամօթոյն՝ համարձակութի. ընդ պատկառա- նացն՝ պատիւ. ընդ տարագրութեն՝ յոյս բարութե. ընդ բաժանմանն՝ անկնկալելի միութե. ընդ սպառնա- կանացն բանից՝ ողորմական սփոփանս. ընդ միանգամ դատապարտութեն՝ [3] կրկին ազատութի։

բ. Ողորմած Տէր՝ մահու մեղապարտիս յաւուր ատ- ճանկման չնչայն կենդանութե, մինչ աչացս ողորմու- դրին հայեցուածս 'ի բարձունս կողկողելի, [4] զդատա- մարկածեան ուղղոյն զանդերձ ընթացեցն զանփոփոխ չեղչն Ճանապարհ յաչս բերելով մտացս անսմանդ ամենայնիւ վտանկեալ. և 'ի յերդ ընակութե յար- կիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսա- մեռութեամբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մա- տանցս, կարկամ համաչմամբ, նուաղ հեծութեամբ նրբական ձայնիւ, յաղի թախծութե յընդամանմանեալ

տարակուսանաց՝ ՚ի խորոցս անհրաւութից զգարծեցե-
լոցս ողբալով հառաչեմ։ Կարծօք ես բարեգութ՝ [5] և
անդ հրաշագործել յաւէտ զօրեղութն ասելով, թէ
ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ. և կամ թօ-
ղեալ լիցին քեզ մեղանք քո. կամ թէ երթ ՚ի խա-
ղաղութի օրհնեալ ՚ի մեղաց։ Այլ զոր յայնմ ժամու
մէ ժամանեցից պաղատել, այսօր ընկալցիս մարդա-
սիրապէս, ով երկայնամիտ բազմաշնորհ ամենակե-
ցոյց։ Յորժամ՝ որ այժմս [6] բանապահ ձոյն խորոխտա-
ձայն սրգացող բարձրապարանոց՝ անկեալ դնիմ զի
անկենդան. կարկեալ ՚ի խօսից. կաշկանդեալ ձե-
ռօք. լքեալ անդամօք. խփեալ շրթամբք. կափու-
ցեալ աչօք։ Տախտակ անշարժուն. կոճղ կիտայ-
րեաց. արձան անզգայ. պատկեր անբարբառ. գոյու-
թիւն անշունչ. ողորմելի տեսիլ. աշխարհելի կերպա-
րան. ողբալի օրինակ. եղկելի դէմք. արտասուելի
նմանութի. լռեցեալ լեզու. ցամաքեալ խօսք. թօ-
թափեալ ծաղիկ. ծորեալ գեղ. շիջեալ ղամբար.
դատարկ կոկորդ. խոպանացեալ սիրտ. [7] աղխեալ
աղդարան. սպառեալ աղբիւր. թալկացեալ մար-
մին. ժողխեալ որովայն. քակտեալ տաղաւար. կա-
տորեալ ոսկր. բաժանեալ յօդք. հատեալ ծառ.
սղոցեալ արմատ. թողեալ տուն. հնձեալ արտ. [8]
ստորախուզեալ բոյս. օտարացեալ բարեկամ. մե-
ռայեալ պահեստ. թաղեալ գարշութի. մերժեալ
ատելի. բարձեալ խէթ. անարգեալ կմախք, և ի բաց
զանպիտան առ ոտն կոխեալ։ Կարօտեալ այլոց
մաղթանաց, որք զհաւատոց թշուառիս ձայնիւ-
նուագեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց՝
բարեբարբառ զթութեան ՚ի բարձունս տարածանեն։
Զառ քեզ [9] դարձն յեղանակեն յարգահատելով,
զոր օրհնեմ. զնշան խաչիդ փրկութե, զոր երկրպա-
գեմ. զյարութեն ճշմարտութի, որում հաւատամ.
զփառացդ քո յայտնութի, զոր փառաւորեմ. զգա-
տաստանիդ ահաւորութի, զոր խոստովանիմ. զքա-
նիցդ յանդիմանութիւն, յորմէ զարհուրիմ. զհո-
գւոյդ սէր յինէ ուղեկցութի, զոր պաշտեմ. [10] զօծմանդ
տեառնագրութի, զոր և համբուրեմ. զթագաւո-
րելն ընդ քեզ՝ տէր յս, որում պաղատիմ։ Արդ [11]

լքաւ՝ մերժեցաւ՝ բարձաւ՝ տրոհեցաւ՝ փախեաւ՝ սրացաւ՝ տեղի ետ կցորդութիւն զուգաւէ կենցաղոյս կենդանութեան. և [12] յուսայք որ 'ի քէն պարգև՝ մնա- ցական և անընդմիջական յիշատակարան պահեցաւ:

Դ. Տէր ողորմութեան 'ի տարակուսանս վտանգելոյս՝ միայն բարեգութ [13] փառաւորեալ որդի ա̃յ, քաւել՝ բժշկել՝ կենագործել՝ պաշտպանել՝ նորոգել՝ նկա- րել՝ կանգնել՝ հաստատել՝ վերստին ստեղծագործել յերջանիկն անարատութիւն. քո է կարողութիւն, քո է փրկութիւն, քո ողորմութիւն. չիք քո անկարութիւն, այլ ամենեւին զօրութիւն, բարձրութիւն, իշխանութիւն, ան- վախճան թագաւորութիւն, իսկութիւն, ինքնութիւն, [14] ամենատեղի բացարձակութիւն, բարերարութիւն, լու- սաւորութիւն. փառաւորեալ տիրապէս, անպակաս և անյաւելուած, [15] խնկեալ խորհրդով անթարգման- նելեաւ յերրորդութեան սրբում, գոհաբանեալ յա- ւէտ և եւս առ սմին 'ի նոյն պաշտօն հաւասարութեան միապատիւ զուգակցութեան, երէկ և այսօր՝ և յա- ւիտենից յաւիտեանս. ամէն:

---

(1) Ցանօթինկալ [illegible] : 'Ի [illegible] որ ան- [illegible] է կենաց, փոխարկել [illegible] յօրհնութիւն:

(2) Ընդ [illegible] : Փոխանակ [illegible] շնորհել համարձակութիւն. [illegible] և յաղօթս : Ընդ [illegible], փոխանակ [illegible] 'ի քէն՝ շնորհել յոյս միութեան, [illegible] ընդ քեզ [illegible] և փառաց :

(3) Կրկին [illegible] : փոխանակ [illegible] 'ի մահ՝ շնորհել կրկին [illegible] 'ի մեղաց և 'ի մահուանէ՝ յարութիւն:

(4) Զ [illegible] : Ո[illegible] կամ [illegible] յա- [illegible] կամ [illegible] և [illegible] : Զայնր [illegible] և 'ի [illegible] որ է [illegible] կամ [illegible], հանգերձ [illegible] [illegible], ևն:

(5) Ես [illegible] : [illegible] կամ [illegible] թ [illegible], ևն:

(6) [illegible] : որ [illegible] կամ [illegible] . [illegible] . 'ի [illegible] [illegible] 'ի [illegible], ևն:

(7) Ա [illegible] : [illegible] կամ [illegible] : [illegible] և [illegible] : [illegible] . [illegible] կամ [illegible] 'ի [illegible] :

(8) Ս [illegible] : Ց [illegible] կամ [illegible] : [illegible] . [illegible] որ 'ի [illegible] 'ի [illegible], [illegible] և [illegible] : [illegible] .

զնոյնինքնութիւն ասելոց կամ՝ առնելոց բարձեալ լինի մտադիւրն ։ Նմանոյ․ ցանկա-
քեալ ամենայնին ։

(9) Պարզին չեղանաւքեն ։ Զգաստութեան առ քեզ զգեստեալ յերկրպագութեան և
առաւել յառաւել քերթեն ։ Զայս, և զյաւելորդ բանսն առնու յառօթից քա-
հանայութեան ։

(10) Զօծմանդ Փեամբրաւեան ։ Խոնարհ զօծմանէն, որ լինի 'ի մտադիւն
ննջեցելոց քահանայքն․ որք և յառօթս քահանայութեանն յերկն ։ Այս
օծումն առանձին և բացառայն 'ի գիտնականաց գերադն յառաջագ եկեղեց-
ցական քահանայապետաց․ գլ․ է․ ընթեր․ է․ խորհ հաստատեալ նորա
յաջորդաւորական ննջեցելոյն 'ի կեր առկեալ․ և այսպիսի առնելութեան
մկրտութեան յերկրպագութեան առաւելոց, որպէս 'ի մեծագոյն խնչ յանդաց երկեի․ և
մինչև 'ի ժթ․ դարն պահիւր յեկեղեցին առաքելականաց առնելութեան
մեռանելոց զմտադիւն ննջեցելոց քահանայքն, որպէս մկրտե աղաղակեան
յորն ։

(11) Լսոս Ձերձեցաս ։ Թեթեւեան մեղանչման թողու, բարձառ, զեղ-
ծեալ, հրաժարեցաւ հարորդութեան կենաց աշխարհի, բայց յուսոյ
վերակութեան և յարութեան արարողեան՝ մեայ խեծ անձնեկին յերկրպագ ։

(12) Յարայր որ 'ի քեն պարգեւ ։ Զ․ օրին․ յոյսը 'ի քեն պարգեւ․ այսինքն
յոյսը որ է քո պարգեւ՝ մեայ խեծ յերկրպագականն ։

(13) Փառաւորեալ որդի ։ Յ օրին․ փառաւորեալ ։

(14) Անմահական քաղաքականութեան ։ ընդարձակութեան որ ընդ աւ զՔեզ առնելով․
առաւել գիտութեան կարող եւ համահաւասարել զգուշեալ մտադիւրն մայր և եղեն,
և նորոգեալ զնոսա յանմարտութեան փառաց ։

(15) Խնկեալ խորհրդով ։ օրհնեալ 'ի յաւիտենից անձնեալն խորհրդով 'ի
նոր եկեղեցութեան, այլ և զոհաբանեալ մերա մեծագոյն 'ի ժամանա-
կի՝ նորին հաւատոյ պաշտամանց համատարածութեան, ևն ։

---

Մերոյին յանդիմանած նրէին հեծումն՝ նորին հոգւոյն, առ նոյն
տերբա ծաղկանաց քանի ։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԻԸՆ․ ՀԳ․

ՃԾ․ Մ
ըզեայ Երկնաւոր, տէր բոլորեցուն, ² առ ա-
մենայն բան՝ յամի մշտ երկայնամիտ, այ
կենդանեաց անքննին որդի ։ Մնա ² անոդ է ողորմելն խա-
կապէս, յորում հաստաւ անհնկալութի վատակոյն․
անոդ է բարեգործելն, յորում ³ տեսուն իմաստից
խափանեցաւ․ յայնժամ ժամու է մարդասիրելն, յո-
րում տկարութեն վտանգ պաշարեալ տիրեաց նեղ-
քոյ և արտաքոյ ։ Մնդամնժր է բժշկութ ամային քոյ
ձեռնին, յորժամ ⁴ ընաւ անդամոցն տեղի եա կեն-
դանութեն․ այն վայր է այցելութե, յորում եւ
հնարից ոչ գոյ ։ Այն է քո մեծութ, յորժամ զյաւ-
սահատութե վէրն ⁵ ողջացուցանես․ այն է հարա-

զատ [6] քումդ ազգակցութեան, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեսցես փրկութիւն ։ Նոյն է համոզի-
տարան քում յաղթանակի, եթէ զփակեալն մտաւո-
կենաց ՚ի տապանումն շնչոյն՝ բացցես ․ այն են քո շը-
նորհք վայելչականք, եթէ զչարեացս իմոց մոռա-
ցեալ՝ զբարեացդ քո յիշեսցես ․ Յայսմ ես անոխա-
կալ, եթէ ապախտաւորիս՝ ընդ երախտաւորացն
խնամարկեսցես ․ [7] ՚ի նոյին ծանեալ գիտացից, եթէ
նայեցար ՚ի նուէր բանիս՝ նախնի գթութեամբդ, եթէ
զտովորութիւն չարեացս բարձցես ։

Դ․ Յաղագս այսորիկ [8] Հիւսին բանք, և եղանակին
նուագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարին ծա-
ռայի՝ զբարեգործացն պարգևեսցէ ․ որ մինչ իրա-
ւամբք մնացէ բանտի, նա յարքայական ապարանս
զնա հանգուսցէ ․ մինչ հրաւիրեալ է ՚ի դուռ տաղնոյ,
նա [9] ՚ի բազմականս ամենապատիւս գահուց դրդե-
ցուցանիցէ ․ մինչ [10] բրելոյ զաչսն գիտեսցէ, նա ՚ի
բարձրութիւն երկրութեան հայեցուցանիցէ ․ մինչ ծայ-
րատութեան մատանցն սպասէ, նա մատանի համարձա-
կութեան մատուցանիցէ ․ մինչ հայի հարուածոց գա-
նից, նա գթոց գիրկս արկանիցէ ․ մինչ պատրաս-
տեալ յուսայ կորստեան, նա երևելի տեսաղաց բազ-
մաց առնիցէ ․ մինչ ակն ունի սատակման մահու,
նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ ․ մինչ հատ-
ման գլխոյն նայեսցի, նա զնոյն պսակաւ պայծառա-
ցուցանիցէ ։ Նոյն պտուղք օրհնութեան՝ գթածի, սքան-
չելարմատ քում շառաւիղաց ․ այս արգասիք կենաց՝
արարչականդ քո հրամանաց ․ այս իղձք խորհրդոց՝ [11]
խոստովանեալդ քո տենչանաց ․ այս նշոյլք լուսոյ՝
ամենասփիւռ ճառագայթից ․ այս ախորժունն ճաշա-
կաց՝ բարեբանեալդ քո քաղցրութեան ։

Ե․ Բան միայնոյ են այսոքիկ տէր ․ ՚ի քէն [12] ազդե-
ցաւ գրել ինձ զսոսին ․ ահա զքոյդ յատուկ աղերս
աղաչեմ՝ ծրհնեալ, ՚ի քոյոց այտի պարգևեալ շնոր-
հեաւ ․ բայց տէր զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց
առակին ։ Մի խառնեսցես [13] ՚ի համբարս բարեացդ
քոց՝ ՚ի չարեացն իմոց ․ մի շտեմարանեսցես զատե-
լիսն քո՝ որ են ոխութիւնք և ցասմունք, ընդ սիրե-
լիսն քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք ․ մի պա-

հեսցես 'ի տեսացուածս քո պաշտելիս՝ զանախորժե-
լիսն քո՝ որ են մթութիւնք և դաժանութիւնք, և զիմ
փխանելիքն՝ որ են մեղք և թշուառութիւնք: Ո՞վ գրեա-
ցես ամբողջ օրհնութեան [14] 'ի մատենից կենաց՝ զմուր-
հակ պարտուց իմոց անիծից. այլ [15] զանհնարա-
ւորսն ինձ համարեալս՝ մեծացուցես կրկին առա-
ւել զանուն քո տէր՝ 'ի նմին, ցուցանել զդոյն ինձ
դիւրինս և հեշտականագոյնս: Հա՛տ են իմ պար-
տիքս և անդր քան զթիւ. այլ [16] ո՛չ այնքան հրաշա-
լիք իբրև զքո զողորմութիւնդ. բազո՛ւմ են մեղանքս,
այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներողութեան.
յաճա՛խ են չարութիւնքս, այլ յաղթական են համայ-
նից՝ հզօր ամենակալ՝ քոյդ մարդասիրութիւն. ինձ են
անհամար՝ իմոյս անձին բիծք, այլ քեզ՝ յոյժ դիւ-
րացեալ են ընդ սահմանաւ: Ո՛չ են այնքան զօրաւորք
առ կենդանութիւն [17] զէնք մեղանաց պատկառեցե-
լոյս պատուաբերութեան, որքան յիշատակ մահու կեն-
դանւոյդ՝ առ վանումն կործանողին բռնութեան:
Օ՜ի՞նչ աղդեսցէ [18] փոքր խաւար՝ աւուրդ ա͞ծյ. զիա՞րդ
բաւեսցէ դոյզն ինչ աղջամուղջ՝ մեծիդ ճառագայ-
թից. զիա՞րդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո
կրից՝ [19] խակութիւն հեշտութեան մարմնոյս տկարութեան:
Օ՜ի՞նչ երևեսցի յաչս ամենակալիդ քոյ առատու-
թեան՝ կոյտք մեղանաց ամենայն տիեզերաց. առհա [20]
կուտ մի հողոյ դիւրափխրելի՝ 'ի կարծրութեան բախ-
ման վանեցեալ, իբր զպղպջակ անձրևոյ բազմաղեղ
հոսմամբ քո կամացդ՝ չքացեալ պայթեալ անդստին:
Օ՜ի՞նչ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ
կարողութեան՝ ժամանակաց առաւելութիւն առ յանցուա-
ծոց իմոց քաւութիւն: [21] Ո՛չ քթթել մի ական, ոչ
խուն մի տեսութիւն ածանցական, ոչ սակաւ մի նայե-
ցուած փայլական, ոչ կիսամասնեայ յամրութիւն, ոչ
փութացելոյ ոտից յեղեղումն, ոչ յելից բարձրու-
թեան միոյ կանգնոյ կաթի անկելոյ, ոչ գիծ մի չափոյ
մատաց հետևեցելոյ, ոչ նշուլից արագութիւն, ոչ շնչոյ
տուրևառութիւն, ոչինչ յայսմ յանգոյ և յանտապա-
ւորական նմանութեան անձև օրինակաց յաւէտ ան-
կայից՝ այնքան առժամայնք կամ հարևանցիկք, որ-
քան եղծմունք, ցնդմունք և հալմունք մեղացս առա-

նամանեաց պաշտօնի՝ քաւեա զօրութեան ամ՛ ամե-
նայնի տէր յո քո, որդի անքննին կենդանութեանդ ա՛յ:
Որ տաս պարգեւս արեւ քաղցրութեան չարաց ընդ-
բարիս. եւ անձրեւես երկաքանչիւրոցն անաչառա-
պէս: Այլեւս սահմանես իրաւամբք՝ եւ [22] զվտանգս
կրիցն հաւասարաբար. որոց մեծ է հանգիստն առ-
ակնկալութիւն պարգեւին, փոքր խթանաւ փորձութեան
զսակաւութիւն պարտուցն առատեն վճարես. իսկ որ
զերկիր ընտրեցին, ներես ողորմութեամբ, տալով եւ սո-
ցա դարման ընդ նոցա՝ մինչ առ քեզ դարձին սպա-
նես: Նու քեզ փառք ամենազօրիդ՝ առ ամենայն
հրաշագործութիւն բարեխնամող երկայնմտութեան, օրհ-
նեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Առ ամենայն բան: Ասացեալ բան զնոյն բան եւ զմիտս՝ երկայնամիտ ես յամենայնի: Կամ, առ ամենայն բան, այսինքն թէ 'ի խոստանալ բարիս, թէ 'ի կատարել զնոյնս, թէ 'ի փրկել 'ի փորձութեանց, թէ 'ի լսել աղօթից մերոց, թէ 'ի պատուհասել, մինչ երկայնմտութեամբ վարիս: Զայն միտս թուի ընդարձակել 'ի յաղերս բանին, յորս ասէ՝ ողորմիս յորժամ չիք ակնկալութիւն. մարդասիրես՝ յորժամ ներքոյ եւ արտաքոյ պաշարեն վտանգք. բժշկես՝ յորժամ յամենայն անդամոց պակասի առողջութիւն, եւն:

(2) Անդ է ողորմեա: յայնժամ, կամ յայնժամ կատարի ամենապէս ողորմութիւն, յորժամ չիք ակնկալութիւն վաստակոց բարի գործոց:

(3) Տեառնէն խնամոցն: Յորժամ ճարտարութիւն կամ հնարք մարդոյ խափանեցան, յորժամ խորհուրդ մարդոյ մթագնեցան, եւ ոչ կարէ ընտրել զօգուտն եւ զպատշաճն, յայնժամ երեւի քո բարերարութիւն՝ յառաջնորդել, 'ի լուսաւորել:

(4) Բնութ անդամոցն: յորժամ կենդանութիւն կամ առողջութիւն ամենայն անդամոցն բարձաւ, կամ հեռացաւ:

(5) Որջնջացուցանես: 2 օրին. առողջացուցանես: մի օր. ողջացուցես:

(6) Վերստին աղքատացուցանէ: այն է աղքատական քո ընծայիւ բնութեանս, կամ զօրութեանս:

(7) 'Ի սուրբ ծածկոց: Յայտնապէս ծանուցանել զխնամս զհաւատացեալս քո [illegible] ծածուկ աղօթիցս լսել առաջին զգթութեամբդ, եթէ զկար [illegible] բարձցես:

(8) Հիւանդ բանի: Յօրինեսցին բանք զօրութեան, եւ երգեսցեն ձայնք օրհ-նութեանց, յորժամ բարի Տեառն պարգեւեսցէ չար ծառայիցն զայն բարիս՝ որ բարերարութեանն վայել են: 'Ի շնորհել [illegible] բարերարութեան ծառայիցն, մինչ օրհնութիւնք արդեաք հնչեսցեն 'ի ծառայից կոյս նորա:

(9) 'Ի բարեխնամ ամենապարգեւ, այսինքն ամենայն խոռք զարդարեալ: Գեղեցիկ փրկեցուցանիցէ: մի օրին. գեղեցիկ փրկութեան ցուցանիցէ: այլ օր. գեղեցիկ փրկանեցուցանէ:

(10) Բերելոյ զգուշն դիտեալ: այսինքն սպասեացէ, մնացէ: լսել սպասել եւ 'ի յաղօթս՝ հայել, յուսալ, խնամոյն՝ սպասել, մնալ, կարկառել:

(11) Խորհրդածականն [illegible]: Այս են խելք սրտից մերոց՝ [illegible] 'ի ծա-

նուաճեալ կամ՝ յօրինաւորանելի փափկացուցանելոյ քոց. որովք չկամիս զմեղս մեղանչողին, այլ զզգաստանալն և զկենալն, եւն։

(12) Աղտեղութիւն կենաց։ Պատերազմել մարմնաւորութեանց և զբաղմանց զգօնանալ, այլ և ներքին լուսով մտացն և յառաջադիմութիւն կամացն շնորհ ժողովել զնա զգեստաւորելի։ Աղտեղութիւնն յարաւել ախտս. այսինքն վասն որոյ զքեզ ուսուցեալ և առաջնորդեալ աստուածոյ՝ 'ի քոց շնորհաց զնա կատարելոց. կամ, զքեզ յառաջել ասելով՝ որով ասես առ մեզ, զարգացուցանել առ իս, և այլն, զոր զիտելն շնորհեալ զառաջնորդել առ մեզ. կամ, ասելով, մարթ է ասել՝ ընծայ, առաջարկել. իբրև թէ զքեզ ամբարշտական և մոլեկանական առաջարկել ներքինութեան, անուղղականութեան շնորհեալ։ Եւ ետես զգանձս առաքինութեանց քոց, ըստ աւելորդաց ասացելն։ Հայեա 'ի բանն առաքելոյ. (Ա. 21.) * Բաշխելոց սիրելեաց իւրոց զմեծութիւն, և զզանձս նոցա զյաւիտենից բարութիւն։ ||

(13) 'Ի հաճելոյս բարեաց։ Այս, և յաւէտ բանքն ոչ խաւարեալ 'ի ներքս յանձ, այլ 'ի գործս իւր՝ զոր 'ի մեզ երեւեցուցանէ. որպէս թէ ասէ. 'ի գործս շնորհաց և առաքինութեան քո մի՛ խառնեսցես զպատրուհասս, որք արտաքին են չարեացն իւրոց։ Մի՛ ցուցցես զգործս սրբութեան և զառաքինութեան՝ որք քեզ առաքելք են, ընդ գործս զթութեան, որ քեզ սիրելի են. 'ի արժանեաց պատուիրանաց քո՝ մի՛ զարգելն աւետեացն քո՝ Միածին. զգործք առաքինութեան. և ըստ համբերութեան, զգործք խոստովանութեան, և մխիթարութեան իմ հոգւոյն, մխիթարականքն՝ մեղք և թշուառութիւնք։

(14) 'Ի մոլեգնութիւն կենաց։ Ըստ սովորութեան զգոյշ՝ այլ և այլ ասէին մեղանչելք կամ զօրութիւնք, յորս զելին առաքելք և մեղաւորք բառ իւրեանց քանզի կոյր գործոց. որպէս 'ի յայտնութեան. Ե. 12. * Եւ զինեալք բառ նոցին. և ո՛չ զիտէք բարձր կենաց։ || Այլ քանզի այն մոլեկանք իրօք ո՛չ այլ ինչ են՝ քան թէ մի և նոյն անմիջական զխոտելի մարմնոյն մեռոց՝ յարութեամբ առաքելոց և մեղաւորաց, նախ իբր սատանայ ասէ որ վարդապետութեան, թէ մի՛ զրկեսցես 'ի մոլեգնութիւն կենաց զմեզ առաքելոց իւրոց. այսինքն յանձնայնն մեռոց՝ որ է մոլեկան կենաց, մի՛ զրկեսցի մեզ 'ի զառաջադրութենէ։

(15) Զանգիտութեան ինչ։ Աստուածոյ կամքն չարութեան այլափոխ է, և արարքն այսպէս. այլ զանհնազանդ իմն համարելով ցուցանէ ինչ մեզ բնութեան հեշտութեանց. որով մեծացուցեալ կեանս առաւել զանազան զի 'ի նոյն, այսինքն 'ի նոյն անհնազանդ։ և կեանս ասէ, այսինքն իբր բարեկամս յաղագս մեղուն, և իբր ասեմ նոքօք 'ի զինուորել զանհնազանդս։

(16) Ո՛չ առնելոյ հրաշալիս։ Թէ՛ և անմիտ են արարածք մեղացս, այլ ո՛չ այնչափ զարմանալի՝ հայելով յառաքինութեան բնութեամբ, 'ի ամբարտաւանութիւն, 'ի ապականութեան, 'ի զանազան փորձութեանց սատանայի, և 'ի աղաղակ մեղաց։ Բայց քո անհնարին բնութեան պարգեւելն և ներելն ամենայնից և թշնամեաց՝ 'ի վեր է քան զամենայն զարմանս։

(17) Զէնք մեղանաց։ Զէնք կամ զօրութիւնք մեղացն՝ զորս ես անձամբ զինեալ առաքելոյս, ոչ են այնքան կարող առ 'ի կենդանանալ մեռելոց և սիրել զիս, որչափ յերկնաւոր մահու քո կարող է փրկել զգեստաւորութեան սատանայի և մեղաց։ Հայեա յառաքելոյն Հռովմ. Զ. 12. 13. 14. Մի՛ այսուհետեւ թագաւորեսցեն մեղք, եւն։

(18) Փոփոխ խաւար։ Գործ մեղացն՝ որ առ քեզ զօրութեամբ համեմատեալ, են իբր փոքր մթութիւն և խաւար առ արեւ, զի՛նչ կարէին աղօտել։ Կամ, փոքր խաւար մեղացն՝ զի՞նչ լինէր առ մեծութիւն լուսոյ։

(19) Խախուտ հեշտութեան։ Խախուտ կամ անհաստատական հեշտութիւն ամբար մարմնոյս՝ զխաբոյ համեմատելոյ ընդ չարչարանաց խաչիդ։

(20) Կորուստ հոգւոյ։ Հաւատալով մեղաց ամենայն աշխարհի զի՞նչ երեւեա

[illegible] , բայց իբրև [illegible] մի հօտոյ՝ որ [illegible] ՚ի խորհրդութէն [illegible] , [illegible] ՚ի [illegible] կամ ՚ի [illegible] ։ Եւ իբրև [illegible] որ [illegible] ՚ի [illegible] ։

(21) Ո՛Չ ԹՈՂՈՒՑՈՒ ։ Ո՛չ թողութիւն մի [illegible] . ոչ [illegible] , [illegible] . ոչ [illegible] , [illegible] ։ ոչ [illegible] , [illegible] . ոչ [illegible] , [illegible] . ոչ ՚ի [illegible] , [illegible] . [illegible] , [illegible] , որ չէ [illegible] . [illegible] ։ ոչ [illegible] . ոչ [illegible] ։ Ո՛չ [illegible] և [illegible] . ոչ [illegible] ։ [illegible] . և ոչ մի [illegible] և [illegible] , [illegible] , [illegible] և [illegible] , [illegible] և [illegible] ։

(22) Զ[illegible] ։ Ո[illegible] , [illegible] , [illegible] և [illegible] , [illegible] . [illegible] ։ Այլ՝ [illegible] . և [illegible] . բայց [illegible] . զի [illegible] ։ Կ[illegible] , [illegible] ։ Եւ [illegible] , [illegible] , որ [illegible] ՚ի [illegible] և [illegible] . [illegible] և ՚ի [illegible] . [illegible] . 14 ։

---

¹ Սերովբէն յառաջացեալ հրէին հեծաւ՝ նորին հոգւով, առ Նոյի աղբերս [illegible] բանի ։
՚Ի խորոց սրտից խօսք՝ ընդ [illegible] ։

# ԲԱՆ. ՀԱ.

Ա. Նա՛ սուրբ՝ ընկղմեալ զմայլեալ և խորասուզեալ կեալ ՚ի յանձառութիւն աստուածութեան բազմամամանեայ յանձախութիւն մեծիդ երախտեաց , որ ամենատատ լումամբ անհատապատեցեալ՝ յաջմէ և յահեկէ ՚ի դիմաց և ՚ի թիկանց համբաւեալ կան անբաւութիւք ։

Պարգեւեալ առ նմին ³ նշխարապատէն երկրորդութեան ածային հո-
գւոյն օգտեցեալ, որ էին յառաջիկայն սահմանեցաւ առաջնոր-
դութեան առ ամենայն բարեօրութեան եկեղեցւոյ գաւառութեան՝ մինչ-
դեռ եղեալ սարկաւագ ։ Այս որ առ մանկականս նորոգեցին՝
յաջողեալ երանաւոր հայրապետութեան անձանցն ։

Է. Մ՝ատուցանեմ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ. ⁴ գովեստի գաւանմանս Ճշմարտականի ։ Զի որպէս երբեմն ⁵ հերձուածականին չարափառութեամբ՝ ամենապատիրն խաբէութեամբ՝ նենգողին կարթիւն հաստուածեալ 'ի բաց հերքեցայ՝ ելեալ 'ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ՝ 'ի յաւանդ. իսկապէս շնորհի՝ անդրէն մեւտանգամ համբարձեալ սովիմբ՝ 'ի Թախիծս Թեւոց լուսոյ, առ յերկինս ժամանեցից հեռեւեալ ։

Ը. Սայլ ⁶ քանզի յարգանդէն՝ յորում յղացայ հագեւոր երկամբք ծնեցեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ՝ ⁷ ամենից կուսից իսկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պայծառ է կանոնաւ սահմանի բանի արձանագրել յայսմ մատենի. զի ծանիցի ցուցցի՝ և այլոց եւս ապագայիցն ազգաց պատմեսցի որքանութեան փառաց խնկելոյն, ⁸ արժանաւորապէս պաշտամամբ պատուեալ՝ իբր մաքուր մարմին ⁹ ընդ գլխոյ մարդեղութեան բանին այ, 'ի յիշատակ Ճառիս հաւատոյ՝ երրորդութեան դաւանութեան ։ Այլ արդ՝ ¹⁰ 'ի յայս օրինակ հոգենկար պատկերի բանի, որ զխորանէս լուսոյ յարմարի, ընկալ զիս՝ գթած օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ 'ի սմին ։ Հան սովաւ 'ի հոգւոյս զնախատինս մեղացս. անմեղս և անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցո. ¹¹ յաւէտ զտկարս 'ի տունս դաւթի, և անտուստ փոխեալ 'ի տունդ այ, ըստ մարգարէին ձայնի՝ որ 'ի քեզ՝ յո ակնարկի ։ Մի ¹² տուկ զմտիցս, և մի անօգուտ զելիցն հեռեւութեան արասցես. մի զհաւատոյս ջերմութեան՝ ցուրտ համարեսցիս, և մի զհամբոյր ողջունիս՝ անկարգ ինչ վարկանիցիս. մի զպաշտօնն՝ ապաշնորհ գրեսցես, և մի զերկրպագութիւն՝ անխորհուրդ լքցես. մի անպտուղ լիցի տեսականութեան պատկերին, և մի աննշոյլ՝ կերպարանին զքանչե-

լութի. 13 մի անհուր ողջակիզին սպանդ մնացի, և
մի պատարագ ուխտի այս ճաշէ՝ արտաքոյ ցրեսցի.
մի ճաշակող լուսոյ՝ ինձ մահու լիցի, և մի բաժակ քո
կողիցդ արեան՝ 'ի դատապարտութիւն եղիցի։

Դ. Աղաչեմ զքեզ՝ տէր իմ 14 միդ յետուէդ, որով
զգթութի հօր քոյ և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծա-
նեաք. քանզի 15 'ի քէն իսկ վարդապետեալ զամե-
նապարգև կարգս եկեղեցւոյ, 16 և 'ի սմին աղօթա-
նուէր լուսաբան կենաց փրկութե բարեաց, տարա-
ծեալ զսիրտս՝ ձեռաց համբարձմամբ՝ զայս կնդրուկ
բանի բնակողիդ 'ի սմա՝ տիրողիդ բնաւից երեքսրբե-
նիդ մատուցեալ, յաւէժ ընծայեցուցանեմք այսու
բարբառով բարեշնորհութե։

Յաղագս որ 'ի Նիկիայն սահմանեցաւ բան, այլ եւս խորհրդածութիւն
[illegible] աստուածութեն։

Ե. Փառաւորեմք վերամբարձեալ նուագօք օրհնու-
թեան երգոց՝ 'ի հաւատ պաշտաման բանի՝
զբարեհրաման պատճառն եղելոց՝ զերրորդութիւնն
անսկիզբն՝ անհամեմատ բարձրութեամբ, անհասական
խորհրդոց և անըմբռնելի իմաստից, անզննելի ըղ-
ձայուեց և 17 անքերելի եզերաց. 18 քանակուէ վեր-
նականն երկնի, և անսահման ներքնային խորոց. 19
լրութի սպառմանց, և նախագրութի սկզբանց. 20
մի՝ յերից անշփոթ կերպից, և երիս՝ միոյ անհա-
տուածելի իսկութեց. 21 'ի վեր քան զմտաց անտար-
գելութի՝ յարաձգեալ ամենայն սուրբք բովանդակ։
Անփոփոխ բարի. անսասանելի ուղղութի. 22 անխառն
կերպարան սիրոյ. մեծութի անյաղթորդ. բարձրութի
անխոնարհելի. 23 անվատնելի տեսականութի. բա-
րերարութի աննուազելի. կամք կայուն. հրաման
կենդանի. ակնարկութի փրկչական. երանութի ճշմա-
րիտ. ակնկալութի հաւաստի. խոստումն անստելի. 24
աւանդ արգասաւոր. ստոյգ աւետիս. 25 վերամբար-
ձութի անձեռնարկելի։

Զ. Մի հայր՝ միայնոյ որդւոյ՝ միական հոգւոյն պա-
տուեալ. ամենահարուստ բարութի՝ ամենեւին ունայն

'ի չարէ․ օրհնաձայն գոհաբանութիւնս անքննին ներբա-
ղիւ գովեալ։

Է․ Մին բարձրեալ ահաւոր անուն՝ [26] համապատիւն
կցորդութեց, անպատումն աղգակցութեց, եռա-
լուսեանն զուգակցուեց, անյաւելուածն լրականու-
թեց, ինքնիշխան կամաւորութիւն պատուասիրեալ
առ հայրն հանդուռնատորիւ՝ գործակցութիւն հոգւոյն
սրբութե խոնարհեալ իջեալ 'ի յերկնից, անմուաղ
գոլով յընտանի փառացն, հաճեցաւ մտանել յար-
գանդ մայրենի ածածին կուսին մաքրութե․ յորում
[27] անձեցոյց զբոյսն օրհնուե 'ի լուսատահման անդա-
տանին անապատութե․ ընդ ամենակատարն էութե
համանեալ յանանջրպետ միակութի, թափան-
ցական խառնութիւն յածութեն ոգի բաղկացոյց ըղ-
գոյութի չնչոյ հրաշապէս։ Որով [28] անստամբակե-
լի երատանաւ սանձաց կրթութե զատահականուիս իմ
հանդարտեցոյց․ և կամաւ ընծայեալ խաչին՝ սամ-
բարձաւ ծաղիկն պտղոյն կենաց՝ [29] 'ի ծայրս լրութե
անմահականն անկոյ․ 'ի մահ վերաւորեցաւ՝ [30] ածու-
թեն անընդմիջելի 'ի մերասերն մարմնոյ, որով կեն-
դացոյց զգործին պարտեաց, արարչութեն իսկութե
'ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմ
նոյն վշտացեալ։ Իջեալ 'ի վայրս խաւարային դժո-
խոց, եհան զկապուտն իւրաստեղծ 'ի կապանաց օձ-
տաղին․ և իբր 'ի նիրհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն
նահանջեալ զդիմեցունն մահու, կանգնեցաւ կենդա-
նացաւ ածապէս՝ ելեալ 'ի յերկրէ հացն կենաց և
հալիւն հօտից բանաւորականաց։ Հաւատարիմ եղև
յաշխարհի․ և [31] երևեցեալ նոյնութիւն՝ ամենեւին ան-
նուաղելի, որպէս եկն համայն, և համբարձաւ բո-
վանդակ․ բազմեցաւ նստաւ 'ի գերունական գահոյն՝
[32] նախնականին պարզութե արարչական փառաւո-
րութիւն։ Ով որ խոստովանիմք ած բարերար և տէր
բոլորից․ որ դատի զամ երկիր արդար ընտրութիւն
յաւուրն մեծի․ որ [33] ինքն է սկիզբն՝ և ինքն կատա-
րած․ նոյն առաջին՝ և նոյն առյապայ, անպակաս
բովանդակութիւն թագաւորեալ 'ի լոյս անմատոյց։

Ը․ Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ՝ և զանբաւ-

ժամանելի բղխումն նոցին փառաւորելոց հոգւոյն անդորրու-
թե։ Որ ստեղծ զմնաւ և կենդանածնէ զմեզ. որ [34]
անդստին իսկ 'ի բնէ համապարփակ մեծութե աշխար-
հականն միգի՝ շրջէր նկարէր և կերպարանէր ամե-
նունակ ջուրքն անբաւութե երկրատարածն ծովու՝ 'ի
կատարումն արդեանն խորհրդոյս՝ զմեր աւազանն լու-
սոյ։ Նախ արար, և այժմ գործէ. գոյացոյց, և մինչ
կատարէ՝ արուեստս, պճանչելիս, նախատեսութիս սրբա-
անելոց, [35] ազդմունս ածօրէնս, զօրութիս զարմանա-
ւորս, մարգարէս, առաքեալս, վարդապետս՝ վար-
ժօղս կրթութե համանձարոյ. [36] Ո սրբարարն մատուց-
մամն արեանն քո՝ յարդարեաց. քաւութիս անձանց՝
առողջութիս մարմնոց՝ ըստ նմանութե քո՝ ողոր-
մութե հրամայեաց։ Ակրտեաց և [37] գեր քան զջուր,
ինքեան միայն բաւականութե՝ նորոգեաց լուսաւո-
րեաց. համապատող նովին բարեգործութե զօրանայ.
Սկայեաց միածնին ածութենն՝ 'ի հոսանման յորդա-
նանաւ. օրինակաւ տեսութե ամպոյ՝ ցուցաւ ձայնիւ
հօր 'ի լերինն Թափօրական։ Ի նոյն տիպ նմանու-
թե՝ հովանի եղև յակոբեան տոհմին՝ 'ի յելն եգիպ-
տոսի. յաւղեգնացութիւն զօրավարութեն մովսիսի՝
հողմով աստուածութե զփարաւոն ընկղմեաց։ Սա-
համայս կատարագործէ. իմաստունս կազմէ. Թա-
գաւորս զօրացուցանէ. քաւութիս ընծեռէ. կեանս
շնորհէ մահացելոց՝ 'ի նորոգութե յարութենս։ Նոյն
ինքն է [38] օծումն մարդացելոյն այ. մշտնջենաւոր հա-
ւասարութե ընդ հօր երկրպագեալ՝ 'ի պատիւ մե-
ծութե որդւոյ. անսահման փառաւորութե օրհնեալ
յաւիտեանս. ամէն։

[39] Նորին ասացեալ 'ի խորհուրդ օծման եկեղեցւոյ, ընդդէմ պղծ-
աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց։

Թ. Դաւանեմք 'ի հաւատս ուղիղ և անխոտորնակ-
ամբծութե՝ համբուրիւ շրթանց ողջու-
նեալ [40] զկատարուցեալս խորան յանշնչական արձանաց՝
ածայնոյն բնակութե եկեղեցւոյս շինուածոյ։ Որ [41] գե-
րաղանց դասու և երկնից ամենազարդ բարձրութե.
որ 'ի նոցին իսկ [42] յառաքելականացն դասուց հիմնե-

ցաւ, յաշակերտաց վերնոյն խնկեցաւ, 'ի սպասաւո-
րաց բանին պաշտեցաւ։ Ակիզբն առեալ կենացս
այս զանձու՝ 'ի վերնայարկն սրահէ, խորհրդական-
տարին վայրէ, զոր հոգւոյն սրբոյ լցոյց, փայլեցուցեալ 'ի
նմա զօրութի՝ յաւուր մեծի պենտակոստէին. Նախ
զատունն բարեպաշտիլ՝ յօրինակ սրբութե կատարման
շնորհքի այսր եկեղեցւոյ [43] կանխամեծար առաւելու-
թե, յորում ապա և 'ի նմին բնակչացն տուաւ լու-
սանորոգ բարեփառութի։ Ուստի արիւն հզօրին սրբոյ
բաշխեալ մատուցանի՝ [44] յաւէտ քան զհաւատելին մա-
հու զուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրու-
թե՝ կենդանութի անմահութեան 'ի սմա ազդելով։
Վասնզի ոչ է կար զօրութե ուրուք ընդ երկնաւ յանհ-
դիման արեգական՝ 'ի սպասաւորութե խորհրդոյ այսր
ահաւորութե ձեռնարկել, եթէ ոչ ընդ թևօք սորին
պահեսցի. Նա զի [45] ոչ երկնիւք բաւականանայ այս
նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեռուն օրհ-
նութե՝ ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք
հերքի այլ ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս
վկայութեան՝ զա̃ծայինն պատարագն մատուցանէ.
մանաւանդ զի [46] պարտաւոր արեան կոչեսցի, որ ոչ
[47] զանձինն օրինակ արիւն՝ յայսնուիրան ընծայեցուս-
ցէ։ Որ՝ 'ի սմա լուացումն 'ի մահն քի, [48] զի մի
յանդէտս անարգեալ ա̃ծութիւնն՝ 'ի ծանուցելումն
զնախնիսն կրեսցէ։ [49] Որ ձեռնադրութի 'ի պատիւ
օծութեան լուսոյն, զի մի յանբծութիւնն խաբէու-
թիւն խառնեսցի։ [50] Որ և շնորհօք, քան թէ ա-
պաշխարութեամբ՝ քաւութիւն, զի մի Ճշմարտու-
թիւնն կերպարանօք խորամանկեսցի։ [51] Որ յըն-
տրութիւն ապառնի՝ հաւատ, զի մի սպառնալիք հա-
տուցմանն՝ զըոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի։ Որ
երկաքանչիւրոց [52] գոյութեց մերոց իրաւամբք կշտամ-
բութի, զի մի կիսամամնեայ առ մարդն ներքին և
առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութիւն՝
կարծիցի յանմահ զօրութի արքայական որդեգրու-
թեան. զի ընդելութբ երկրայնովս՝ առաւելութի վեր-
նումն թագաւորութե յայտնապէս Ճշմարտեսցի։ Որ
յոյս կենդանութե [53] առ անեղծութիւն մեզ, զի ա-
ներկեանութի խոստացելոցն՝ 'ի միտս ունկնդրացն

ծանուցեալ հաւատացի ։

Ժ. Սայս [54] դշխոյ պաշտելի՝ անշնչական եկեղեցի՝ տայ կեանս, և մահու իշխէ, ըստ օրինակի ադամեան պտղոյն յարմարապէս ճաշակելի. գերագանց քան զբանականս՝ յանշնչութեան հրաշագործէ. մինչ զի կատարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, [55] վերստին նկարեալ 'ի մեզ զկերպարանն փառաց լուսոյ։ Կոչեալ եւ է [56] տեսակ մեծութե վերնումն կամարին՝ ակզբնաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղէնացն 'ի նմա զօրութեանց։ Նոր 'իմն ընծայէ [57] թաւիշս մարմնոց՝ ընդ թեթևութիս հոգւոց, պատուականին հարստութե՝ զանարգն յարգաւորեալ։ Ո՛չ [58] ինքնակիր մեղօք զազրանայ, եթէ ոչ՝ 'ի մարդոց չարաց, և կամ անհաւատից կոխեցի։ [59] Տիպ իմն է զարմանաւոր՝ յաղթօղ իմաստից մերս տեսութեց. անքանն 'ի բանաւորէն կառուցեալ, նմին օժանդակեալ՝ իբր վեհագոյնն յաւէտ նուաստի։ Մեծ է քան զմարդ, [60] որքան ընտրեցելոյն մովսիսի՝ ցուպն յաղթողական. առաւել քան զբանաւոր, որքան զահարոնի՝ գաւազանն խորհրդական ծաղկեցեալ. գերագանց քան զմտաւոր, որչափ քան զեղիա և զեղիսէոս՝ գետահերձ մաշկեակն աքանչելահրաշ՝ փայլեալ արուեստիւ։ Օգնութե պարգևէ կրկին ամենակատար [61] որքամնեալ ձեռաց՝ մաքրաբար, քան թէ զինապէս. մարմին նուաճական՝ [62] քարի և հողոյ գոյակից, հարազատ զգայականաց և սրբոց։ Իբր զվէմն անմահ կենդանի՝ 'ի կործանումն է և 'ի կանգնումն. [63] որպէս զդատաւորն ամենից հոգւոց՝ հանդիսանայ հրաշապէս ազդմամբ՝ յանէծս և յօրհնութիւս. իբրև տեսող աներևութից՝ զոմն հրապարակէ, և զոմն տածէ. առ ինքն կոչէ զրեալ յանուանէ՝ իբր զտիրօղ հրամանատար էիցս։ Իբր զլեառն յաւիտենական՝ անհարուածելի է 'ի դիմամարտից. [64] ըմբռնէ զհոգևորս՝ իբր զհնարադրութի մեծին արուեստի. [65] անմերձ և անվրիպութիւ՝ ըստ քնի հետոցն ընթանայ. բարձր ճոխութե անպատկառաբար համարձակապէս՝ զօրէն գովելոյ զլուխ ամբառնայ։

ԺԱ. Սինքեան մեծ ունի սրբութի, մինչ զի զորս ըստ պատկերի այ եղեն, [66] կանոնաւ խտրէ։ Յետ յո-,

գունոց ընտրութեանց փորձից՝ թէ համարձակեցի մարդ-
ոք ախտացեալ՝ 'ի գաւիթս նորին մտանել՝ ոչ պղծի,
այլ ընդ անպատրաստից թերութեանց գծուծի ։ ոչ
նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զշնորհին զչափ ։
ոչ լքանի ինքեամբ՝ պարտաւոր իւրոյն գոլով, այլ
'ի մերոց գործոց խրթնանայ ։ ոչ թողացուցանէ [67] եր-
կիցս մատչել յըմբռնումն տեղւոյն կենդանատուաց,
ըստ տիրական անճառ խորհրդոյն ։ [68] ոչ կրկնի յա-
ւտը՝ զնոյն ցուցանէ, զի մի անընտրաբար՝ նուիրանն
խայտառակեսցի ։ [69] Մշտակցէ կարեաց զօրապէս՝
իբր անախտակիր ապականութեանց՝ որ 'ի մեզ շարժ-
մանց ։ առանց բարբառոյ տիրապէս հրամանա-
տարի ։

ԺԶ. Այս զի և տապան իմն է մաքրական, [70] կրկին
երջանկական, 'ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պա-
հապան ։ Ոչ բազմօք անբանիւք գազանաց դասուք՝
և սակաւ մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվե-
րինսն յինքն հաւաքէ ։ ոչ յալիս խռովութեան բեկի,
այլ 'ի բարձրութիւն երկնի համբառնայ ։ Իբր զաղա-
կերտ հրահանգեալ հոգւոյն իմն՝ [71] փախչի 'ի նենգու-
թէ ։ [72] ոչ 'ի բողք մահու՝ մարմնոյ հարուածոց, այլ
'ի կենացն աւետիս՝ ըմբռնեալ ածէ ։ ոչ նոյիւ ձեռա-
նարկեալ գործի, այլ հաստողին հրամանաւ շինի ։
ոչ մովսէս ընդ բեսելիէլ, այլ միածինն իմն՝ հոգւովն
որով զսա հանդերձէ ։ ոչ [73] յարաշարժ հանապազա-
փոխ, այլ մշտակառոյց հիմամբ անսասանելեաւ զսա
հաստատէ ։ Դարձեալ իբր զտապանակն անխոտ
փայտեղէն մածեալ տախտակօք առանց զգայութեան
'տեառնականաց մեզ առաջնորդէ ։ [74] որպէս կերպա-
րան անքանակ էին յառաջ հետևեալ՝ 'ի հանդեր-
ձանս լուսոյն կենաց՝ տեղի պատրաստէ ։ [75] Ընդ ա-
զինելի անտածուստ սատակէ, եթէ ոչ խաչապէս յօգի
բերիցի ։ սպանանէ վատնեալ վաղվաղակի առժա-
մայն, եթէ անասնայինն լծակցութեան երկրատիրաբար
գետնակոխ սայլիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնազննին
բարձեալ տանիցի ։ Ոչ [76] լեզուաւ մարդոյ, այլ բա-
նիւ հրեշտակաց խօսի ։ ոչ ունկան գոյականութիւն, և
արագապէս մտաւեալ լսէ ։ ոչ ձայն կերպաւորական
բարբառոյ, և զպատգամս գործոցն յուր՝ համօրէն

տղանց պատմեալ հաշուէ. ոչ խաղալեաց շարժականութի, և ա̃մենայնիւ իմն կենդանութեան հաղագու- ազգէ: Ո՛չ տակերաց և ջրոց յօդուած, և [77] երկուք հազարօք կանգնօք լայնութ՛ք՝ իբր զգունդն անհամար՝ բարձրեալն ա̃յ, զկենդանական զօրուն գումարտակ՝ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ-նաւին՝ իբր զանմաքուրս 'ի սրբութ՛է զոմանս ախտիւմեղանաց ջեռեալս՝ հատուածեալ յինքենէ, հեռի ուղեկցէ, տարրեցելոցն 'ի տաժանաւոր աշխատարկութեանց: Նոյն իսկ [78] էութ՛ին ա̃յ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիճի նշանակեցաւ, պատուամամբ կողին զմնաւս սրբուցեալ: Ո՛չ [79] արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք՝ թափանցանց միու̃ն զոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ. [80] Ոչ տողամն կամ զօրաքաղէն՝ մահկանացուաց ոստիկանութի, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ. Ոչ անմնուրբական հասարակաճաշակ իւղով աւ 'ի յակոբայ պարարի, այլ ահաւորին արեամբ՝ և փառօք մեծին օծանի: Ո՛չ [81] տուն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ ա̃յ զտողին որդիս կնքեալ ձեռնադրէ. Ոչ կենցաղոյս յերկրէ յղացմունս, այլ արքայութեան երկնից ժառանգս կրթէ. զ՛ի ծոց իւր գրգեալն՝ գոգոյն աբրահամու ընծայեցուցանէ: Փեսայ [82] հարսանութե սորա՝ որդին ա̃յ կենդանւոյ. օրիորդք խնձոյից սորին՝ հայրապետացն դուստրք: Այն ինքն [83] մաշացուն տանէ այսակիր բարձանցն կռամոլութ՛ն, զի զերկնայնոյն ա̃յ ունի զծանօթութի. տաճարութի է ամենայնիւ դիցն զրօշելոց, զի 'ի համօրէն քարինս սորա՝ ք̃ն երկրպագի. քակտումն է յայտնապէս ուրուական ըղձիցն անտառաց, զի 'ի բնաւից մայրից աշխարհի՝ նմանութ՛ք կենացն փայտի՝ 'ի սմա տեղն նուիրի. խորտակումն է համայն դիւապաշտիր յուռութիցն արձանաց,. զի քարն գովեալ կարկեհան ակամբք և վիմօք կենդանեօք՝ այսրէն հաստատի:

ԺԶ. Այս յարկ չքնաղ և ա̃ծընկալ՝ [84] ազատ է միանգամայն 'ի յամենուստ ծառայութէ. Ոչ [85] օրինակ վերնոյն սիոնի, քան թէ ճշմարտութ՛ի նմին ճանաչի. Ոչ [86] կռապաշտութեան կապաւ՝ բագին, և կամ

լծով օրինին՝ անեղծ պարտաւորութե՛ն, այլ անձրունի բարերարութեան պարգեւարան 'ի մէնջ համբուրի ։ Ո՛չ [87] սասանի երբէք՝ յայլ իմն կերպարան ձեւոյ փոխարկեալ, այլ 'ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի ․ որոյ ինքն եւ երկին երկնի՝ յերկրի լուսապայծառ կերպիւ հաշակի ։ Որպէս չէ [88] առանց հօրն քոյ, եւ ոչ առանց այսր մօր արգանդի յղղի կատարիլ ։ [89] Նստաւն շքին անբովանդակելին, եթէ ոչ 'ի միջին տան տաղաւարեսցի ․ ոչ ունի անեղծ գլխոյն հանգստեան՝ անէրն բոլորից, եթէ ոչ 'ի յայս կայարան կենաց մտեալ ադամնիցի ։ Վրան [90] 'ի կամար վերնայինն երկնի՝ 'ի յայս հիւթաւոր բնակութե առաւել պարծի ․ [91] անբաւութի՞ս մեծեան լուսոյն, որպէս զդէմն մարգարէին՝ եւ զօրինակս որին ծածկեցին, որպէս փախեան 'ի փառաց երեսաց նորին, եւ նմանութե՛ սորուն՝ որ 'ի տաճարին՝ ոչ համդարտեցին, 'ի տօն համդիսի մեծի գովեստի, եւ 'ի բանականաց դասուց խմբեալ նուագի ։ Նա օրհնի կրկին բազձանօք, քան 'ի դրախտն վայելչական ։

ԺԳ. Նոյս մայր հոգեւոր՝ երկնաւոր՝ լուսաւոր, քան թէ երկրաւոր՝ շնչաւոր՝ մարմնաւոր, զիս դգուեսց որդի ․ կայծն ստեանց տոքա՝ արիւնն քոյ ։ Եթէ [92] ձնձնին իսկ պատկեր զոյն որ գրեցէ, ոչ անօրէնի ։ Իւր զնշան խաչին փրկութե՛ զօրութիս զարմանազանս՝ եւ արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշագործէ ․ բեմ աւհաւորին ատենի՝ 'ի ամս հաստատեալ տեսանի ․ ովա խորթաքարոյից հերձուածողաց՝ մոլեգնաձառ բերանք կարկին ։ Սմի եւ [93] քարինս իմն իմանալիս եւ բանաւորականս, որով զգաղանամիտս անմաքուրս՝ բացուստ 'ի բաց արտահեալ տարագրէ ։ Նմանի եւ [94] ձնձս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս՝ միոյն ծոյ քոյ ։ Սմի եւ [95] զդիրն իւր ընդ արեւելս՝ 'ի անեղծ խառնման բնակութենս մերոյ առաջնոյ ․ ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զգալստեանն ծոյ շաւիղ ․ զփայլականն առակ տիրական՝ 'ի դէմն բերեալ մեզ վարդապետէ ․ զփրկութե 'ի յելից անտի ծագման արուսեկին՝ քնեան երեւմանն 'ի վերջնում աւուրն, արարածոց երկրի թարգմանէ ։ Ջնաւս հալածէ ․ ախտաժէտս բժշկէ ․ դիւաց

բունութեանց զօրէ ։ Արգանդ որովայնի սորին՝ աւազանն կենդանարար ․ 'ի պար հարսանեաց սորա՝ դասք առաքելոցն ։ Այնքան ճոխացաւ բարգաւաճեալ երանութիւք, մինչ զի նոյն ինքն [96] փրկչին անուամբ՝ վայելչապէս յորջորջեցաւ ․ տիրամօրն լուսոյ կոչմամբ՝ 'ի մերձաւորաց միածնին ձայնեալ կնքեցաւ ։ Ծփելոց մեղաւորաց՝ նաւահանգիստ հանդարտութեան ․ խորախճանարան վերնոցն դասուց ․ բժշկարան անախտալելի՝ տարակուսեալ պարտաւորաց ։ Երրորդութեան անպատում 'ի սմա փառաւորի՝ օրհնեալ յաւիտենայնի ։

ԺԵ ․ Նաև եթէ որ [97] ձեռն չարութեան 'ի վերինն արքայութիւն յանդգնաբար համբառնայցէ, և գիւտ ինչ մարմնաւոր, և կամ հնարք մարդկային, և կամ արուեստ երկրակենցաղ՝ զսահմանեալ աւանդութիւս առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգև առաւել կենաց, և [98] ակնկալութի ա՟ծային, և հոգւոյն ս՟բյ յայտնեալ՝ լուսանորոգ նախագրութի, և երախտեաց բարձրելոյն՝ ամենատուր լիականութի, և կամաց արարողին՝ խնկաւորեալ խորհրդարան, և առաքելոց ձեռինն աջոյ՝ բարեհանճար հիմնարկութի, և միանգամայն ասել՝ դուռն երկնից, և քաղաք ա՟յ կենդանւոյ, և մայր կենդանեաց՝ ազատ 'ի պարտեաց, և ճշգրիտ տեսակ կերպի երևակիս բանականի, իմանալին՝ խորհուրդ հոգւոյս, և շօշափելին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեանցն անդանձառից՝ գերազանցեալ նոր սրբութի, և քնեանն նշանաւ՝ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոստովանօղմն՝ մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ՝ 'ի ձեռն բանին իւրոյ էակցի, բարձեալ 'ի նմանէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակցի ․ փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին ։ Նաև մեք զօրս գրեցաք՝ սմին և վկայեմք, հաւատացեալ որում կարգեցաք ․ յանուն և 'ի փառս ամենակալ երրորդութեան և միում ա՟ծութեան, յաւիտեանս յաւիտենից ․ ամէն ։

[98] Այն է մ հաստատ յԵրրորդութիւն ․ և այս՝ 'ի ծոցն է մ բանաւոր փառս՝ խոստովանեալ դաւանութիւն ։

(1) Վերոգրեալն յառաջաբան : 'Ի լեառ. [illegible], և 'ի հին լուծ . և յանձնս [illegible] չէր այս մանկացելոց, այլ [illegible] գնի յաղեգացն : Պոմպոնիոս Մէլա : Եւ [illegible] հարգանաց թուել այս . վասն զի [illegible] [illegible] է հնանեալ բանին՝ Մատուցանէն ընծայէն . [illegible] ոչ [illegible] այլ և այլ մանկացելոց : Եւ [illegible] թուել թէ այս [illegible] [illegible] [illegible] լեալ [illegible] բանին յորում [illegible] հաւատոյ [illegible] [illegible] համեմատականս : Եւ [illegible] համեմատականս [illegible] [illegible] 'ի միջոց [illegible] Եկեղեցւոյ՝ որ կայ 'ի համեմատականն [illegible] և [illegible] [illegible], [illegible] և [illegible] ոչ [illegible] [illegible] 'ի միջոց եկեղեցւոյ, [illegible] [illegible] [illegible] : Այսոք [illegible] [illegible] [illegible] բանիս [illegible] . Պոմպոնիոս [illegible] Նէկ [illegible] [illegible] որ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] : Այսպիսի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] բանին՝ որ [illegible] քան զայս . [illegible] [illegible] [illegible] [illegible] բանին՝ ոչ միայն [illegible], այլ և [illegible] [illegible] . զի [illegible] [illegible] . Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible] [illegible] թէ [illegible] քան զայս՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] . որ ոչ [illegible] [illegible] 'ի բանին [illegible], քան թէ 'ի բանին [illegible], յորում 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], Եւ [illegible] [illegible] :

(2) 'Ի [illegible] և 'Ի [illegible] . այսինքն [illegible] և [illegible] : Զ [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]

[illegible] [illegible] [illegible] [illegible] :

(3) Կրթառապոնէ Եռեսուրտ : Վերոգրեալն [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ որ [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], [illegible], [illegible] [illegible] [illegible] : Ընդ [illegible] [illegible]՝ որ [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible]՝

[illegible] [illegible] [illegible] [illegible] :

(4) Գողէսոփէ [illegible] . 2 [illegible] . [illegible] :

(5) Հերյուածողաբութիւն [illegible] : Ըստ [illegible]՝ [illegible]՝ է [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] . և [illegible]՝ [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible]՝ [illegible] [illegible] [illegible] : Ըստ [illegible], Հերյուած, [illegible] [illegible], է [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] : Իսկ [illegible]՝ [illegible] [illegible] 'ի [illegible] . [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] : Այդ՝ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] : Եւ [illegible] [illegible] [illegible] [illegible], որ է [illegible] [illegible], [illegible] [illegible], և [illegible] 'ի [illegible] : Իսկ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible] [illegible] [illegible]՝ որ է [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible], 'Ի [illegible] [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible] [illegible] [illegible] : Հին լուծ . [illegible]՝ [illegible] [illegible] [illegible], որ [illegible] է : Բայց [illegible] է [illegible] [illegible], այսինքն [illegible] [illegible] [illegible] [illegible] :

(6) [illegible] [illegible] : Այսպիսի [illegible] [illegible] [illegible] է, և [illegible] [illegible] [illegible] [illegible] : Պ[illegible] և [illegible] է 'ի [illegible] [illegible]

[illegible]

(7) Ամենից կարգաց : [illegible]

(8) Առժամանակեայս : Յ. օրին. [illegible]

(9) Ըստ [illegible] : [illegible]

(10) 'Ի յոյս օրհնեալ : [illegible]

(11) Յաւէլ պսակս : [illegible]

(Ա Թագաւոր. ԺԶ. 8:)

(12) Սուրբ [illegible] : [illegible]

(13) Մի՛ [illegible] : Յ. օրին. [illegible]

խնամոք ամենայնի, կամ խորհ. մտաց, այսինքն առաւելոյ հոգւոյ մերոյ՝ մի զենումն ողջակիզի մարմնոյ քո՝ Աստուծոյ, այսինքն կատարելոյ։ Եւ կամ խոր անուն ամենայն՝ ողջակէզն, այսինքն առաւելոյ հոգւոյ մատուցելով ող- ջակիզի զենումն մի մեղաց 'ի մեզ եմք։ Եւ ըստ երկրորդ մտացն՝ ու- սուցել յայտնապէս է ասել ծառայից։

(14) Մերկ ձեռութեք. այսինքն մի յանձնութենք. ըստ այսմ խնամ յարմարել ասի. մի յիշխութենէք, ևն. զոր այլ բառարան ասելոց ասէ Ար. մեկնութ- եանն։

(15) 'Ի ձեռն խոյ վերջատողարանս։ Ուսուցանէ, և 'ի ձեռն առաջնոյն՝ զամե- նակարգին խորհուրդ, ամենեցուն և հասարակաց պատրաստեալ կարգս, կամ ամենայն բարեաց պատրաստօղ կարգս եկեղեցւոյ։ Այս կարգ է, առանց նախ քան զամենայն՝ զաստուածութիւն ուղիղ հաւատոյ, զոր քեզ առաջին պարգևանքեր յամենեցունց՝ որք մատչին առ նա. և ճշմարիտ ասացեալ թէ զհոգևոր պատուէ է զաստուածել զհոգիս և զմարմին Ար. և 'ի ձեռն առա- ջնոյ բազմապատիկ ուսմանց զհոգևոր հաւատալեաց 'ի հանդիսանալն. զոր և եկեղեցւոյ ընծայել, նախ քան զամենայն զհաւատոյ զաստուածութիւն պարգևանքէ և մատուցանէ։ Հզօր լուծ. խնամոյ զհոգևոր առաջնորդութեան բարեաց եկեղեցւոյ. եթէ թէ քեզ զամենայն զործովք եղելոց զառաջնորդն ըն- թերցողի, կիսասարկաւագի, և այլն։ Բայց առաջնոյն յայտնապէս է ասել- ասել։

(16) Եւ 'Ի ստեն աղօթարանաէր. ըստ այսմ կարգի ասէ յեկեղեցւոյ, որ է աւագի նուիրական աղօթից, և լուսաւորեն մխիթարելով բարեաց, մատուցա- նելով զայս կենդանի զաստուածութեան, քեզ՝ Երեփոխէնեւր, այսինքն փառա- ւորելոյ երկինս Ար. երգով, այսու Քարքարող Քարէշնորհաւեն. այսու բա- նիւ օրհնութեան կամ զովաբանութեան։

(17) Անփեբեւի Եղէւոց։ անսասանելի կամ անպարագրելի յարապատուոյ։

(18) Քանոնութիւն վերածանի։ քանանեկից, բովանդակեկից հաւասարն երկնից, որ տառս չափէ կամ սահմանի ընդարձակութեան երկնից։ և անսահման, ան- սահմանելի կամ անպարագրելի աննկարագրելի խորոց։ Ո՜չ վերին զայս փառկեր զգեզ, և ոչ ներքինք, այլ ամենայնի նոցա դու ես բովանդակ- կից։ Փոխանակ բառին Ներփնայի՝ մի օրէն. գնէ Երփնայն, փոփոխական։

(19) Լրութէ աղաւաձանց։ լրացուցիչ, կամ վերջին վախճան ամ մտա- ծութեր վախճանաց. կամ, ապառնալ և եղծեալ խոյոց լրացուցիչ, ըստ որում 'ի բնութեան խոյոց՝ յապականելի միոյն՝ զայլ փոխանակ նորա յա- րուցանէ սա։ Կամ, լրութե և կատարելութեն ծայրից խոյոց. այսինքն զերապանցութեանց յիւրաքանչիւր սեռի. խոր մի սա է լրութե զերապատ- ուոր խմաստութե, զերակատար զօրութե, զերակատար միոյ, և այլն։ Եւ Նախապարութէ սկզբանց. այլ օրին. նախադրութէ, այսինքն նախկին ամ սկզբանց, և է նախկին գոյութիւն, ըստ որում առաջին քան զամենայն սկզբունս՝ սա գոյ. նախկին պատուչութիւն, ըստ որում ինքն գոյացուցէ զայլ սկզբունս. նախկին շարժողութիւն, ըստ որում ինքն զնոսա շարժէ և մերձեցուցանէ 'ի գործ։ Կամ, զերկու զայս զխնամարկեալ խնամ ասացեալս, դու միշտ լի մնաս, ուր այլք ամ սպառին. և միշտ նախադասիր դու ես՝ յորժամ այլք սկզբանն լինին։

(20) Մի ջերից. մի էութե յերից անշփոթ անձանց. ա Երիա, երեք անձինք միոյ անբաժանելի Խոյութէց, այսինքն խոյութե կամ էութե, յոքնականն փոխանակ եզականի եդեալ։ յերիա օրին. Երիա՝ Ի միոյ ան- հաւասարութեան Խոյութէց, զոր մարթ է այսպէս եա ասացել, երից անձնա- ւորական խոյութեանց կամ անձանց, որք անհատատեալք են 'ի միոյն, այսինքն յէութենէն։ Խոյութէ փոխանակ անձին ասի և այլուր։ (Յա- ձախապատում. գլ. Ն. եր. 39) ուր Հայր սա՝ կոչի Պատճառ նոցունց

խոկութեանցն || . այսինքն անձանց որդւոյ և հոգւոյն ։

(21) 'Ի վերայ տան ղեկոց անուրջեմնութեան յորդաջեղաց ոգեղէն ջոջանդոտ . 'ի մի օրէն . յորդաջեղոյն կերպիւ զատանելի 'ի հեռաւորաց բառիցն ։ Իմաստն է , ասացեալ զայն ընդդէմութիւն կամ զանօրութեան մասաց՝ որով անդրադել մասնէ և ընթանալ յամէ ամբողջ , զի անզդր և ա ձգի անչափութեանցն , որով բաղձանգամ զամ ուրէք ընկել ։

(22) Անխռովն չէրգրոն ։ Խոկումն միրոյ՝ որ անխռովն է յանխռովու - թէ , 'ի շահաստութեան , 'ի մնացողտեսց խորհրդոց ։

(23) Անփոփոխելի փերոտխանութեան ։ անփոփոխականական ամառութեան , կամ ա- ներգծանելի ամոփ , և գերազանցութեան ։

(24) Առանց արփատաւոր ։ տուոյն կամ ապրով և բաղմաստիճան . կամ , որով՝ ոչ 'ի մնայն անձեալաշին արդատեւ բարերաց ։

(25) Վերադիրքովհեան ։ գերազանցից բարձրութեան , յոր չհասանէ միտս մարոց , կամ զօրութեան և իշխանութեան ։

(26) Հաստատվութեան էզորդունեց ։ Ձայս , և զպահելոցն խառ 'ի Թանձրա- ցեալն . այսինքն հաստատութեան կցորդելոյն , անապաստամ տեղափոխեցոյն , երեկելուանան զուգակցեցն , անյաւելեալ ընդեցելոց , այսինքն կատարե- լոց ։ Արդ ասէ , Որդին Այն , մի բոլերեւ . ( մի որ . բոլերգացեալ . ) յերից հասարակաստուածոյն՝ ծնելեան կամաւ՝ առ 'ի արդարեւ Հօրն , զարծակ- ցութեան Հոգւոյն միոյ խոնարհեցաւ յարդատեղ կուսին ևն ։ անանուա գո- յով յեղափոխի փառացն ։ Յ օրէն . ընփորի ։

(27) Անձեցոյց պէրոյն ։ Կատարեալ զմարմնոյն՝ որ էր առանձնակ օրհնութեան՝ 'ի լուսաւորք և յամենայնակ անփոփոխականի արդարութեան կուսին ։ Զոր ընդ ա- մենակալաւոր էութեան անծութեան հաստատեաց , այսինքն զմարմնոյ աստուածեալ զմարմինն յանսահմանելի փոփոխութեան , անքակտանելի միաւորութեան , ներգոր- ծական խառնութեան , նորոգմամբ և ամբարձ կատարելութեան , յանծութեան ոգի , յան- մարմին անծութեան բարեզարդելոյ գերագոյն բանական հոգւոյն ։ Որովհետեւ տեսանել կամի , անձն որդւոյն իւր յերից անծութեան միաւորելոց անքակտանե- լար զմարմինն , և զհոգին բանականն ։

(28) Անփոփոխելի երանութեան ։ Միաւորելով անքակտանելի զմեր բնու- թիւն ընդ իւրում անծութեան , այսու իբր անփոփոխելի անմահ զմեզ ա- պաստանութեամբ կամ անհնարաւորութեամբ հանդարտեցոյց ։

(29) 'Ի ծայրս կրթութեան ։ Ծագելին կենդանութեան մերձաւոր 'ի բարձրութիւն անմահականն փոխոց խորհրդին , որ եղև զարծի անմահութեան ։ մի օրէն . անսահ- մանականն , այսինքն որ անսահման եղև բարւ զօրութեան և բարւ ամբողջ . զի զօրութեան խորհրդին յերկնից և յերկրի ներգործէ , և պատմուի ոչ միայն յերևութականն, այլ մինչև 'ի ծայրս ամենայնից ։

(30) Ածութեան անընդմիջելի ։ Որդին անծ մարմնանալով 'ի մահ մերձաւո- րեցաւ , անծութեան անքակտանելի զօրով 'ի մեր նմանակից մարմնոյն , որով կենդանութեան արար զմեզ՝ զգործին մահու ։ անդընդութեան իսկութեան , խառն 'ի Թանձրացեալն , այսինքն արարիչն անծ 'ի խորհրդ անդ միջոց առանց բաժանմանն կրելով ընդ նոյնութեան մարմնոյն ։

(31) Եբրայեցւոց նոյնութեան ։ մի օրէն . նոյնաէութեան ։

(32) Դատախանութեան պարզութեան ։ այսինքն նոյնատու հանդերձ առաջելով մարդ- կութեանցն 'ի գերաւորոյ փառան՝ զոր նախ ունէր բարւ աղօղ անծու- թեանն ։

(33) Ինքն և ինքնին ։ Ամենայն զբանն յայտնի . կա . 13 ։ * Եա եմ առաջնոյ և վերջ , սկիզբն և կատարած , առաջին և վերջին || ։ Եւ այս պատճառն քանի ոչ միայն բարւ անծութեանն , այլև բարւ մարդկութեան , որով 'ի կարգի չնոր- հաց և փառաց ինքն է սկիզբն և վախճան ամենայնի ։

(34) Անդրադրին խոյ 'ն բուն ։ այսինքն 'ի սկզբանէ հաստատուած խորհրդին՝

[illegible]

(35) [illegible]

(36) [illegible]

(37) [illegible] ( [illegible] . 44 : )

(38) [illegible] ( [illegible] . 1 . ) * [illegible] ( [illegible] . 8 . ) * [illegible] . 9 :

(39) [illegible]

[illegible]

(40) [illegible]

(41) [illegible]

(42) [illegible] ( [illegible] . 22 . ) [illegible] ( [illegible] . 37 : ) [illegible]

(43) [illegible]

(44) [illegible] ( [illegible] . 24 : )

(45) [illegible]

(46) [illegible] : 2 [illegible]

(47) [illegible]

արարած հանճարեղին խորհել զանեղծ մտածութիւնն ։ Այսպէս թէ ոչ՝ հարկին որ ոչ գիտէ զօրէնս, բաղդատեալ անգամ առաջարկ ստորադասեցեալ եկեղեցւոյ՝ յայտ արտաշարժումն որ անպարտ էր մտածութեանն հանդերձ կարելուն յայտնութեան. որպէս 'ի ժամանակս հալածանաց, 'ի բաղդատելոյ արտաքին ... 'ի մէջ քաղաքին, և յայտ գիտակցաբար կարելարար ։ Զի և ոչ գիտելոյ ընդունակ զանեղծն շարժական ընդ իւր չղջեցուցանէր, որպէս մէջ յանհուն խոնարհ առաւել 'ի կատարման. ծը ։

(48) Զի մի յանգիտս անարգիւռ ։ 2 օրին. Մի մի անարգիւռ յանգիտս ։ Յետ կեղեցեալ մի է ընդունելի կամ միութեան 'ի նոյն քոյ, ( ընդ առաջ. հատոր. Բ. 3. ) յոր 'ի զօրութեան մանկութեան քրիստոսի, կամ յօրինակ մանկութեան թագաւորին 'ի Հռոմ ։ Այսպէս որպէս միանգամայն էր մանկն քրիստոսի, նոյնպէս միանգամայն և միութեան. Մի մի յանգիտս անարգիւռ, զի մի՛ ածել զայն՝ որ յանդգնեալ հրեշտակին, կամ անզգուշութեամբ անարգելոյ 'ի խաչին, մերոյին 'ի ծանուցեալ զնախնին կրօնոյն. այսինքն 'ի ճանաչելն կամ 'ի հաստատութեան զառաջին մանկն կրկնոցն ։ Ակնարկէ 'ի բանին ( եբրայ. Է. 4. ) ուր ասէ առաքելոյն, անհնար է միանգամայն միաւորեցին՝ եթէ կործանեալ զինն 'ի հաւատոց անտի, միւսանգամ նորոգել միութեամբ. եւ զի հարկ էր մերոյին 'ի խաչ հանել զորդին այ, և զարձեալ խոստովանել, որ ոչ կարէ լինել ։

(49) Մի չեռնաղարութիւն ։ Խնամոյ ձեռնադրութեան, թէ զգուշանան, ( որ առ փորձարար 'ի մի գիրս զգուշութեան ձեռնադրութեան բացատրեալ. անուն գործոյ. Ը. 17. ժԹ. 6 ։ ) և թէ քահանայութեան, որք զնոյն առաքելոյն անշնորհս են, ասոր և անկիրթեալք ։ Եւ երկրորդն լինի 'ի պաշտօն օծութեան յատուկ, այսու օծման մեռոնի. զի օծումն՝ պատուական և սրբազան կարգ է անկատար. միանգամայն զօրութեան նշանակէ, և շնորհէ օծելոյն ։ Մի մի յանքծութիւն . այս ձեռնադրութեան և օծումն 'ի գործ ածել յեկեղեցւոջ, և այն միանգամայն եւեթ, որպէս զի 'ի կոչմանէ զգուշանան՝ յանդգնութեան հաւատոյն զոր ընկալաք միութեամբն, մի՛ խոտեսցութեան վարձ կամ մեղքութեան խառնեսցի. և 'ի կոչմանէ քահանայութեան, զի մի՛ յանդգնութեան կարգ քահանայութեան սպրդեսցի խոտելութեան անարժան մարդոց, կամ ոչ քահանայից ։ Վասն զի ընծայեալքն 'ի ձեռնադրութեան զգուշին և քահանայութեան՝ հաստատեալ մնայութեամբ և անջնջելի նշանաւ, և անուանեալ նոցա 'ի գիր անկանելին ըստ կանոնական սովորութեան եկեղեցւոյ. որով խոտելութեան տարածելոյ, կամ կարգաւորելոյ, կամ ոչ քահանայից 'ի յայտ եկեղեցի յանդգնեսցի ։

(50) Մի և փորհօփ ։ Զայս ասեմք ըստ հնոյ ըն. խնամոյ զքաւութեանց՝ որ 'ի շնորհաց միութեան. անկեալն զմիութեանն յատուկ եղեալ են մի վարդապետեան ։ Այլ ըստ կարգի՝ յետ միութեան, և ձեռնադրութեան զգուշին և քահանայութեան՝ խնամոյ է զեկեղեցական առաջնորդութեանն ։ Եւ նոքա՝ զխորհրդականսն. որ քանզի իւրով զօրութեամբ ընդ է զքաւութեան, և որպէս ասէ՝ 'ի գործոյ գործեցելոյ, վասն այսորիկ ասէ. հօփ, քան թէ առաջնորդութեան, այսինքն քան թէ զօրութեամբ առաջնորդական գործոյ ընդ է զթողութեան ։ Իսկ զայս մի ասէ, եթէ ոչ եթէ միանգամ եւեթ արժանեալ իշխանութեան ումեք եկեղեցւոյն՝ ըստ չարաշահութեան նախատանաց, այլ թէ ճշմարիտ զղջացելոյն՝ միով բանիւ եւեթ և միանգամայն քաւին նա մեղք ։ Զի մի ճշմարտութիւն, յոր բազց մարդոյն՝ զի ճշմարտութեան զղջմանն և ուղղութեանն՝ առաջադրին կերպարանեալ մի ձեռնադրի. կամ զի մի՛ ճշմարտութեան նոր օրինաց առաջադրեալ մարդոյն կործանեալ որդեալ և քաւեալ խոցեալ զհին օրինաց ։ Երկրորդ, խնամոյ զխոստովանական առաջնորդութեան, որ լինէր հրապարակաւ մի երկնելի մեղաց՝ կռապաշտութեան, մարդասպանութեան, շնութեան, են. յորում քաւութեան

պատուհասին տանուել 'ի շնորհաց ... կամ եկեղեցւոյ լինել, քան 'ի գը-
րութիւն առաջնորդութեան: Այսպիսի յայսմ առաջնորդութեան մեծա-
գոյն եւեթ լինել ը կանոնաց, որ միայն ստորադասիցի ('ի գիրս յա-
ղագս Առաջնորդ. գլ. Ե:) Այլ և այն ստորադասիս. (գիրք Բ. յա-
ղագս առաջնորդի. գլ. Ժ.) ...: Որպէս մի է միութիւն, նոյն-
պէս մի առաջնորդութիւն, որ հրապարակաւ կատարի: || Սոյնպէս և
այն օգտակարս. ('ի Թղթ. ԾԹ. կամ ԾԷ:) Զի մի ճշմարտութիւն. զի
զի մի՛ յանձնառութիւն այսպիսի առաջնորդութեան՝ ճշմարտութիւն քրիստո-
նէական կրօնի և ... եկեղեցականութեամբ ընկալեալ 'ի կրկնա-
մեղ քրիստոնէից, կամ ... յանձն առնել կարծեցեալ յան-
հաւատից:

(51) Մի՛ շփոթութիւն առաքինի: Մի՛ հաւատաք քաղաքի յեկեղեցւոյ 'ի
համագործակցութեան յարութեան, որով համագրական ընդդէմ աղանդոց և
մոլորութեանց. ... հարուածոյն, մոլորութեանց ... քան
զինչ նորաձևոյն վարդապետութեան կարծեցեալ. որպէս 'ի քաղաքէ արտաքս
առ ամբարշտական գլխաւորութեան մեծաւորաց, ասելով՝ զինչ է նոր վարդապետ-
ութեանց, եւն: (գործ. ԺԷ. 19. 20:)

(52) Գոյութիւնց Վերոյ. 2 օրինակ. չիք Վերոյն: Երկնային գոյութեանց որ 'ի մեղ.
այսինքն հոգւոյն և մարմնոյ, մի խառնեսցի զաստուածային 'ի մերձենումն ա-
ռաւել՝ քաղաքի յեկեղեցւոյ. ... զի մի՛ հոգւոյն միայն
լինելով հաւատոցն, թերևս փոխանորդութեան կարծիցեն յանձնառ ... ա-
փոյական ... յանձնառ յարութեան՝ որով արդարքն որդեգրու-
թեամբ պատուելին յարութեան եղ. զի յարութեան որդիքն՝ եղ որդիք են. (ղուկ.
Ի. 36:) Այլ ... , այսինքն հաղորդութեամբ կամ
մասնակցութեամբ երկրայնոյն մարմնոյս թէ 'ի փառս, և թէ 'ի տանջանս,
կատարեալ անդրանկութեան Թագաւորութեան եղ յայտնապէս ծանիցի,
թէ տէր է հոգւոց և մարմնոց, և զերկրայինն ... գաւառի:

(53) Ան անեղծութեան ... յայլ օրին. և 'ի հին ... անեղծութիւն:
Այս մերկացեալ բանք, սկսեալ անտի, Մի 'ի ... , են ընդդար-
ձակ բացատրութիւնք յետին մասանց Հանգանակին, որ ասէ, ... Դի-
ութի, եւն. զորս առեալ 'ի վերայ այլոց զինի եղելոց, այսինքն մի միու-
թեան, մի առաջնորդութեան, մի յարութեան, մի դատաստանի, մի կեանք
յաւիտենական:

(54) Դըղխոյ պայծէ ... Թագաւորին յարգեալ: Եկեղեցի անուամբ՝ առա-
քելոս իշխական է, վասն այն իշխական անուանք՝ Թագաւորաց նմանեցու-
ցանէ. ըստ որում խոր Թագաւորական իշխանութեան փառք ... հոգևոր՝
խորհրդով հաղորդութեան. ... մերժելով զմահ մեղաց 'ի ձեռն
միութեան և առաջնորդութեան. այլև 'ի մարմնաւոր մահուանէ առաջե-
ցուցանելով զփախուցեալսն 'ի նա, ըստ օրինակի ... , ծա-
ռոյն կենաց, որ անկենդանն ... կեանս տայր, և 'ի մա-
հուանէ ... :

(55) Վերջին նշանակ: Զբանական պատկերն եղ զմարդն՝ զոր բանա-
կան ծնողքն ծնան, եկեղեցին անշունչ՝ կատարէ և կրկին նկարէ 'ի ձեռն
շնորհաց:

(56) Տեառն ... : Եկեղեցին ձևոյն և ներգործութեան նմանութիւն
համարեալ է կամարին երկնից, ... : Այս՝ եթէ
զերկնից խոնարհի, կամ թէ յառաջ քան զհրեշտակս կառուցեալ էցէ
յայս, եր կարծիք առաքելոց նախանեաց՝ ... , և ... , զոր
և այժմ վարդապետս թուի ակնարկել 'ի գանձն եկեղեցւոյ, յասելն: "Որ
յ... յառաջնկառույց զայս կերպարան հրաշալի ... հա-
ճեցար լինել. նախ՝ զանակն, ... : Զեկեղեր զերկինս, և

ասել զերկնայինսն, եւն ԻԱ։ Բայց արդ չէ ընդունելի լուսոյ հաստատուն կայածեալց։ Սակայն լուսոյ կարգի բանին՝ յորում երկու ... [illegible] ..., են ուղղական հոլով հատուածոյն գոյականին փոխան, որպէս է խնամով զեկեղեցւոյ, այսինքն եկեղեցի զգոլով նմանութեան երկնից, յառաջնականացն է քան զընտանեացն յինքեան հրեշտակական զուարթնոց։ Զի եկեղեցին նախ կառուցանի, և ապա օրհնի ... [illegible] ... լինի ընտանեաց հրեշտակաց։ Եւ այսու զխնամածութեան աստուածութեան ինչ ընծայէ եկեղեցւոյ, քան երկնից. զի որ երկինքն ոչ կառուցանի յառաջ քան զհրեշտակական ընտանեացն. իսկ եկեղեցի յառաջ քան զընտանիս հրեշտակաց կառուցանի։

(57) Թաւիլս ծարծոյ։ Նորոգեմեալ Թուչումն կամ Թեւս [illegible] մարմնոյ ... [illegible] ... 'ի ընտանեան Թուչնոց. ընդ. ... [illegible] ..., Թեթեւութիւն կամ Թեթեւացուցանելով զհոգիսն 'ի մեղաց. և զի զհոգիսն երկնայինն առաջնորդէ յերկինս Թռուցանելով, ընդ նմին և մարմինն Թեւակից լինին. որով պտուղ ... [illegible] ..., ... [illegible] ... մեծարէ։ Մարթ է և խնամով ... [illegible] ... ընդ հովանեաւ նորա եկեղեցւոյ Թաւիլն. զի ... [illegible] ... յոյժ՝ Թէ մարմինն Թաւիլս ընդ նորա հովանեաւ՝ ... [illegible] ... 'ի կենաց փառաւորս։

(58) Խնձոմիլիր Վեզեփ։ Եկեղեցին ոչ ... [illegible] ... մեղաց կամ ... [illegible] ... Թեց. այլ միայն ... [illegible] ... 'ի մարդկան ... [illegible] ... ընկալ է 'ի կանանց, և կամ ... [illegible] ...։

(59) Տիզ ... է։ Է կենաց ինչ ... [illegible] ... 'ի մեր քան զմեռս. և որպէս ... [illegible] ... շինեալ, ... [illegible] ... 'ի ... [illegible] ... և 'ի ... [illegible] ..., ... [illegible] ... և ... [illegible] ...։

(60) Որթան ընթրեցելոյն։ Ըստ ... [illegible] ... ընթրեցելոյն ... [illegible] ... մեծ բանին, որ ... [illegible] ... է. այսինքն եկեղեցին մեծ է քան ... [illegible] ..., ... [illegible] ... մեծ է ընտրեցելոյն ... [illegible] ..., այսինքն քան ... [illegible] ... նորա ... [illegible] ...։ ... [illegible] ... 'ի ... [illegible] ..., ... [illegible] ..., ... [illegible] ... է, ... [illegible] ... քան ... [illegible] ...։ Ըստ ... [illegible] ... և ... [illegible] ..., ... [illegible] ... ... [illegible] ...։ Այլ ... [illegible] ..., Թէ եկեղեցի ... [illegible] ... 'ի ... [illegible] ... շինեալ ... [illegible] ... նմա. որպէս և ... [illegible] ... և ... [illegible] ..., ... [illegible] ... 'ի ... [illegible] ..., ... [illegible] ... քան ... [illegible] ... 'ի ... [illegible] ...։ Եւ ... [illegible] ... նորա ... [illegible] ...։

(61) Արեւանեալ յետոյ։ Թուի ... [illegible] ... 'ի ... [illegible] ...՝ որք ընդ ... [illegible] ... եղեալ, ... [illegible] ... նորա ընդդէմ ... [illegible] ...։ (Երեմ ԺԷ. 12։) Այսպէս եկեղեցի Թէեւ 'ի վերջոյ շինեալ, ... [illegible] ... քահանայից՝ ... [illegible] ..., քան զոր ... [illegible] ..., ... [illegible] ..., ... [illegible] ... քահանայից, քան Թէ ... [illegible] ... զէն լինելով։ Կամ, ... [illegible] ..., ... [illegible] ... քահանայից ... 'ի ... [illegible] ... եկեղեցւոյ, և ոչ Թէ զէն ... [illegible] ... 'ի ... [illegible] ... նորա ... 'ի ... [illegible] ..., որպէս ... [illegible] ... 'ի ... [illegible] ... քահանայութեան ... [illegible] ..., եւն։

(62) Քարի եւ հողոյ գոյակից։ Ցերկուս ... [illegible] .... որպէս ... [illegible] .... ... [illegible] ... քարի եւ հողոյ, գոյակից ... [illegible] ... եւ ... [illegible] ...։ ... [illegible] ... 'ի քարէ և 'ի հողոյ՝ ... [illegible] ... և ... [illegible] ... երկուց ... [illegible] ... և ... [illegible] ...։

(63) Որդնոյ պտղաբերոյն։ Զ... [illegible] ... նորոգ... [illegible] ...

մեծամեծաց՝ ընծայէ եկեղեցւոյ. զի որպէս զմիշտն քեզ՝ ՚ի կարծեմանութեան է անհաւատից, որք նախանձին ընդ աստուածութեան նորա. և ՚ի կանգնութեան հաւատացելոց, որք խնդան և մեծացուցանեն զփառս նորա: Իսկ գաւազան հօտին՝ անխնայէ զանհնազանդսն, և օրհնէ զհնազանդեալսն: Իսկ ջրհեղեղ գազանացն՝ զոհ հրապուրանաց, զանհնազանդսն հրապարակէ. և զոհ փոխէ, զզղջացեալսն զարդարանէ, կամ անուանէ: Այլ ևնքն կոչէ յանուանէ զերախայս մկրտեալս, և զձեռնադրեալս, որոց կոչումն լինի յեկեղեցւոջ. և այսու եկեղեցին լինի նորա հրամանատար եկեալ առաքածոց՝ նման Այ, որ զամենեսեան յանուանէ կոչէ՝ ըստ քանակի աստեղացն:

(64) Ըմբռնեն զհոգևորս: Որպէս զհոգևորս մատուցէ, Իբր զխոստովանութիւնն, կամ առակաւ՝ առաքելութեան Այ կատարեալ. կամ, խնամոց և որոշէ զհոգևորս մատուցելն ՚ի ընչաւորաց՝ նորա հնազանդեալ կամ ծառայութեան զխոստովանութեան Այ: Զ օրէն. զոհ. զխոստովանութիւն, այսինքն նորա հեզանդակեալ ձեռամբքն Այ:

(65) Անձինս. անմեղութիւն և առանց արատաւորաց կամ խառնակելոյ, ըստ օրինակի անուանցն եղեալ ընթանալոյ զինի հետոցն քոյ: Այս՝ բանական եկեղեցւոյն յաւէտ պատուհասին ըստ առաքելոյ. (Եփես. Է. 24. 27):

(66) Կանոնաւոր խօսքն: Այլ յիշատակ մեծ արդարութեն ամենայն յիշեցեալ նշանակութեան եկեղեցին, մինչ զի զգաստացեալ եղելոյս ՚ի պատկեր Այ, խորհելով առ ենքն ընդունին. զի այլ կարգաւ՝ և կանոնաւ ընդունին զերախայսն, այլով զխորհրդանոցն, այլով զհաւատացեալս գրոց առաքելութեանց. այլ կանոնաւ զաշխարհականս, և այլով զեկեղեցականս: Իսկ եթէ յետ այնպիսի ընտրութեանց՝ բանադրեալ որք, կամ երախայ, կամ առաքելութեան, կամ այլ որք անարժան մատուցէ, ենքն ոչ պղծի, և ոչ նզովի, այլ փոխէ զոր փոյ. այսինքն նորա անպիտանացն զգայր արդարութեան նորա. կամ թէպէտ յիշեցեալն ոչ պղծի, սակայն յանձն առեալ արատաւորս հաւանելով պղծեալ վասն ոչ զխոստովանութեան զսրբութեան նորա. զի յետոյ օրհնութիւն ցուցցէ թէ մինչ սրբութիւնն արտահանէ եկեղեցին: Ուստի, փոխանակ կամ առաքելոց՝ վասն իւրոց յանցանաց, այլ վասն մեղացն:

(67) Եւ ոչ թողուլ: Ո՛չ թողուլ առ հաւատացելոց երկինս յաւուրն մատչել յանդգնութեան իւր հաղորդութեան, որ է նոր ընկալնել զհնազանդութիւն առ քեզ, ըստ փրկչական անձնոյ խորհրդոյն. որպէս ասէրն ոչ թողուլ նմա մատչելոյ մերձաւորացն երկինս ընկալնել զգեստ նորա. (Յովհան. Ի. 17:) այլ մերձաւորաց մեղացն ընդ այլոց կանանց. (մատթ. ԻԸ. 9:) Եւ այս անմաքրութեան մերկ եղեն ամենայն գիտուն խորհրդոյ. որոց միտ այս էր, այսինքն ոչ երկինս յաւուր ընդունել զնա խորհրդոյն: Կամ, առաքելական խորհրդոյ խնամ զնոյն իսկ խորհրդոյ հաղորդութեան. և մերձ բանին ձեռամբ աղօթելոյ. ոչ թողուլ առ երկինս յաւուր մատչել յառաջ քեզ ըստ ընդունելութեան խորհրդոյ մարմնոյ և արեան նորա:

(68) Ո՛չ եղիցի յաւուր: Ո՛չ երկինս յաւուրն պատարագեսցէ ՚ի մէջ նոյն անպատճառ. որպէս էր հին աւրէնքն, մանաւանդ առաւօտեան, զոր և յանկարծ պատահեն յոյժ: Կամ, ոչ երկու անգամ յաւուրն, այսինքն յառաւօտու և յերեկոյի թողուլ առ պատարագելոյ. որպէս ՚ի հին օրէնս առաւօտուն էր առնել պատարագս առաւօտեան և երեկոյին. (Թուոց. ԻԸ. 4:) Իսկ եթէ ՚ի մէջ նոյն քահանայի խնամով՝ ոչ պատարագել յաւուրն երկինս, այս հարկ ՚ի առաւօտուն առաքելական եկեղեցւոյ. զի յառաքելական եկեղեցին զոյ յերուսաղէմ յետ թուականութեան գալոց ամենայն, թէ չէր առաջնորդել քահանայից նոցա երկինս պատարագել յաւուրն: Զի մի անընդմիջաբար. զի մի յանձնէ պատարագելովն՝ առաւօտութեան եղելոյ, անմաքրութիւն և առանց յարգութեան նուիրացն, նախքան պատարագեսցի առ-

համեմատէին : Որպէս ըստ հին ըմ. խաժամուն 'ի միջոց եկեղեցւոյ առաջա-
բանգէն :

(69) Վ. [illegible] Նորեւոց : Իսպէ բանիւն առաջին [illegible] և դադարմանց լինելը ամենայն պսակաց հոգւոյ և մարմնոյ, [illegible], ննջէն ապա դա-րով յամենայն առաքինութեն սխալից. զի եթէ առաջնոյն առաջնումն լինելը դադարման ամենայն սխալից հոգեկանաց և մարմնականաց, ըստ առօթե-րոյն Նոյա. (Ա. Թագ. Է. 29:) [illegible] և առաւել եկեղեցեաց քրիստո-նէից, յորս առաջաւորութիւն մեղաւորք, հիւանդք, զխաւորք, փորձանաւ-որք, և այլք :

(70) Կրէնին Եըլենիոն : Կրէնին կա երջանիկ քան զնոյնան առաջանն. զի ոչ միայն զօհանդակութեան 'ի նմա առաջէ 'ի հեղձմանէ մարմնոյ և հո-գւոյ, այլ և ծնանի և բազմացուցանէ միրոութիւն, մեռուցանէ հաղոր-դութիւն, և զարդարէ այլովք խորհրդովք. Թող զայլ առաւելութիւն որ 'ի կարգին յիշէ մինչև 'ի բանն Գուրյեւուն Իէր ղատաղանաքն :

(71) Փոխելի 'Ի Ննոգութեն : Եկեղեցին կարգ հետևօղ հոգւոյն, (Իմաստ. Թ. 5.) ընդունի յինքն զամենայն առ 'ի պահել, բայց ոչ զնմանագատաւո-րութեա և առաջանն նոյն ոչ ընկալեալ առանն զօձն :

(72) Ո՛ւ 'Ի Բուլուբ : Տառապանն նոյն չէնութ խոյովլ զմնոհ բառնէր ամենայն մարդկան. խակ եկեղեցին կեանս առնուապանէ 'ի չէնելն խաղալ :

(73) Ցուրուղուրծ : Ո՛չ կարգ զառաջադանն նոյն, կամ զնառաջանն մեկնութիւ անոյադատր շարժի և փոխի ամեղուջէ 'ի ամեղի. այլ հաստատուն կասա-ցանի 'ի ամեղումն. զի չէ օրէն փոխել զամեղի եկեղեցեաց, կամ զամեղի առաջ եկեղեցւոյ հինմնեալ է, փոխել յաշխարհականս չինուած : հաստատէ : մի օրէնն. հաստատեալ է :

(74) Որդեա Կէրդաղան : Ուխտաւորան եկեղեցին կարգ նմանութիւն անփոփոխ էին, անմխութ կամ անսասանելի էին այլ, որպէս և առաջադանակն մեկնե-ումն՝ որ զինն երևեցուցանէր, առաւօտուց ընծայել ամեղի առաջաղատանէ յերկինս :

(75) Ընդ ուղեկէ. յս տըղ : (Բ. Թագ. Է. 7.) անափոփ, անեղէն մեղ-մեղանիք առաջանէ, Եթէ ոչ խոսլուղեն, կամ զմաչ՝ 'ի չորից կողմանց ընդա-կաջին, յովի Բէրէոյ, յամնձին կամ յուսա բարձր, կամ 'ի հոգւոյն կղզ-ջի. քանզի և որպէս յոյն առեալ առաջատեղածացուց՝ առանն ամենայն, զի ոչ [illegible] հրամանին այլ ընծայութ առանձին զառաջադանակն, այլ 'ի այլի եղեւալ երկ-րովք ձգէին : Այսպէս և եկեղեցին առաջատեղածեալ զայնմակ, որք ոչ մնալ-ձին առ նա հաստատելք և երկիւղածուլ, այլ անսասանական երկրպագութ հոգւով մասունքին կարգ յանուն Քնչ անմնա և ձեռամբ շօշափելի :

(76) Լէկղուա Կորգոյ. այլ օրէն. Կորնոյ կամ Կորնոյ : Ո՛չ մարմնաւորքն ընդունա խոսի նմանութեան եկեղեցին, այլ Բանին հէւշարհոյ, աղամնդեան հոգևորաւորս. կամ միջնորդութիւ հրեշտակաց. որպէս 'ի մարգարէական խորհրդին և 'ի աւազանական առաջնորդին բազումք անպաղ առաջադատք ըստ կ ընծէին 'ի ձեռն հրեշտակաց. կամ զարձեալ, հէւշարհ խոնարհ զառաջին-կարգա և զբաժանեալս ըստ առաջնոց. (Ա. Կորն. ԺԱ. 16:) որոց ընդունին խոս-ակ եկեղեցին : Ո՛ւ առնէին Գոյակութեն. չունի կազմեալ ակամբջող, և առ-կայն առաջադատէս ըստ զաղաղանս, զուխոսա, զարհամարհանս, և զանեծս մարդկան : Ո՛ւ յոյն, չունի ձայն յօգնադէր, և առկայն զհրամանս և զգործս յնմ ամենեցուն ծանուցանէ 'ի ձեռն առաքելոց, և քարոզու-թիւ աշակերտեցն : ոչ խաղալեաց, չունի զբարձրունն խաղաղեաց ընչաւո-րաց. և առկայն կար անձայլն կենդանի հաղորդաւ այլ առանէ :

(77) Եւրէնոս Հաղորդ : Որպէս մեան առաջադատակքն հրամայեաց յնտա, զի երկու հազար կանգնու հեռի առաջի 'ի ժողովրդեանէն, (Յեսու, Գ. 4:) և այնպէս ժողովուրդն թէպէտ և էր զատեալ այլ, և կենդանի մնա-

ցնորք 'ի հաղորդութեանց անապականին, առաքելոյն վասն անապականութեան հետեւի 'ի առաքելականին զՀոգւոյն : Այսպէս և այժմ եկեղեցւոյն ընդ Նոսին, ընդ հրեշտակսն՝ հետեւողութեամբ յերկնաւոր իրրեւ անմահ զայն [illegible]՝ որք ընկալեալ են մեղաց թողութիւն . և հետեւ 'ի ձեռն բանականաց և կենդանական առաքինութեան [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible], որք են անհաւատութեան և այլ մեղք :

(78) Երրորդն այ : Աստուածոր [illegible] ոչ 'ի [illegible] [illegible] [illegible], այլ 'ի Քն մարդկացեալ, որպէս և բացայայտէ՝ այ [illegible] Եղիշէ, [illegible] և [illegible] նի՝ նոյն [illegible] ԱՃ [illegible] Քն, ըստ [illegible] եկեղեցւոյ վէմ [illegible] յաւիտենից . ( ա . կոր . Ժ . 4 . ) այլև 'ի մարգարէից [illegible] և [illegible] գուշակեցան : ( Եսայ . ԻԸ . 16 : Դանիէլ . Բ . 44 . 45 : Զաքար . Գ . 9 : ) Եւ ըստ նմանութեան [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] :

(79) Արեւն Երկնից : Ո՛չ եթէ [illegible] [illegible] [illegible] կենդանացուցանէ և [illegible] եկեղեցւոյն, որպէս [illegible] կենդանանիս, այլ [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] :

(80) Ո՛վ [illegible] : Ո՛չ [illegible] կամ [illegible] [illegible], [illegible] կարգութեան կամ գործակալութեան, որք մնահկանացուք էին, այլ [illegible] [illegible] այս [illegible] [illegible] եկեղեցւոյն ըստ [illegible] [illegible] : Եւ [illegible] [illegible] [illegible] և յայս [illegible] 'ի ձեռն [illegible] [illegible] [illegible], առաքելոյն այժմու եկեղեցւոյս [illegible] [illegible] և յայտ [illegible] է, ևն :

(81) Տուն Երկրային : Յակոբ [illegible] և [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] այս [illegible] [illegible] . ( Ծննդ . ԻԸ . 19 : ) Իսկ աստ [illegible] [illegible] [illegible] եկեղեցւոյն՝ 'ի ձեռն [illegible], ոչ եթէ [illegible] [illegible] [illegible] [illegible] եկեղեցւոյ, այլ [illegible] [illegible] և [illegible], [illegible] [illegible] [illegible]՝ որք [illegible] և [illegible] Է [illegible] : Ո՛չ [illegible] : [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] և [illegible] [illegible], այլ [illegible] [illegible] ևն, [illegible] [illegible], [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible] և [illegible], 'ի [illegible] [illegible] [illegible] [illegible] :

(82) Հարմարութիւն [illegible] : Նախաթանկան եկեղեցւոյն՝ [illegible] [illegible] և եկեղեցւոյ [illegible] [illegible] . [illegible] որպէս այն՝ [illegible] [illegible] [illegible], [illegible] և [illegible] եկեղեցիք [illegible] [illegible] [illegible] : [illegible] [illegible], [illegible] [illegible]՝ և [illegible] եկեղեցւոյ՝ [illegible] [illegible] [illegible] :

(83) Մատուցանել [illegible] : Այսու [illegible] [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] [illegible], որք եկեղեցւոյ [illegible] [illegible] [illegible], կամ 'ի [illegible] [illegible] [illegible] : Ո՛չ այսպէս [illegible], այլ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] . [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] 'ի [illegible] [illegible] . [illegible] է [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible] ըստ նմանութեան [illegible] [illegible] [illegible]՝ 'ի [illegible] [illegible] . [illegible] է [illegible] [illegible] [illegible], [illegible] [illegible], [illegible] [illegible] [illegible] 'ի մարգարէից, [illegible] [illegible]՝ [illegible] և [illegible] [illegible] 'ի [illegible] :

(84) Աստ է : Ո՛չ [illegible] [illegible] եկեղեցւոյն [illegible] է 'ի [illegible] [illegible] [illegible], այլ և Նախաթանկան եկեղեցւոյն [illegible] է 'ի [illegible] [illegible], և [illegible] [illegible] [illegible] . Է [illegible] [illegible] [illegible] [illegible] : Ասէ [illegible] 'ի [illegible] . [illegible] . ( Է . 26 . ) Վերին [illegible] [illegible] է || . և այլն :

(85) Օրինակ : Նախաթանկան եկեղեցւոյն ոչ [illegible] [illegible] է [illegible] [illegible]

[illegible]

(86) Կատարողութեան խօսքս ։ [illegible]

(87) Սասանի Երէկս ։ [illegible]

(88) Աւանդ Հօրն ։ [illegible]

(89) Անփառ աչէի ։ [illegible] ( [illegible] Թագ. Է. 6 ։ )

(90) 'Ի խաւար վերնոյին ։ [illegible]

եկեղեցւոյ, այն որոյ աթոռ և քահանայութիւն՝ երկնից երկնիւք են ։ Այժմ ասէ, չէք յայդմ հակառակութիւն. վասն զի առաւել պարծի Այն, առաւել զուարճանայ և հանգչի 'ի նախաթագաւոր եկեղեցւոյ մարդկանց հանդերձ՝ քան ընդ վերին երկնիւ. քանզի զայն անապականութեամբ արար Այն՝ առնելով [illegible], իսկ զեկեղեցի [illegible] [illegible]. երկնից՝ արարիչ միայն է, իսկ եկեղեցւոյ՝ փրկիչ. երկնիւք 'ի պէտս եկեղեցւոյ արարեալ, իսկ եկեղեցի 'ի փառս Այր. այն՝ ծնեալ ոչ, և այս՝ հարուածեալ. և վասն այսորիկ կարէ Քս մեկնել յերկնից, բայց յեկեղեցւոյ ոչ երբեք ։

(91) Աներեւոյթն ... ։ Անբաւ փառքն ..., որ [illegible] երեւեցաւ 'ի գետնի մարմնով, և յօրինակս եկեղեցւոյ՝ որք են խորանն միացութեան, և աստուածային առաքինեք, անհամեմատ [illegible] հոգւոյ ժողովրդեան, մինչ զի փառք ... յերկնից մարմնով, և 'ի աստուածային խորհուրդ [illegible] ։ Եւ [illegible] նոյն փառք այժմ 'ի քեզ հանգչին, հանգիստ ... եկեղեցւոյ, 'ի հաւատացելոցս [illegible] համեմատութեամբ ... , [illegible] ։

Այդ 'ի պատիւ լուսոյն ... , առ յեկեղեցւոյ 'ի [illegible] հանդերձանօք մարդկան ։ Այսպէս ... ։ Նոյն ինքն Այն և մեծութեամբ նորա [illegible] օրհնել յեկեղեցւոյ, քան յեր[illegible] գիտնական ... . վասն զի անոր առաւ անմեղութեան արարչի միայն, այլ ոչ թողութեան. յետ պատուիրանաց յանցուածոյ՝ ոչ ես այլ թողութիւն մնալ յետ [illegible] ։ Իսկ յեկեղեցւոյ առատանան պարգևք և՛ անմեղութեան և՛ թողութեան. եթէ վասն մեղաց [illegible] որ առնեն, զոյ [illegible] 'ի [illegible] ։ Եւ զարմանալ, 'ի [illegible] փառակցութեան [illegible] օրհնութեան Այր ընդ երկրաւոր գերեցկութեան. իսկ յեկեղեցւոյ երկնաւոր բարեաց հաղորդութիւն է ։

(92) Անմահին ... ։ Եթէ ... և նմանութեան հաւասարակից որք զեկեղեցի, ոչ [illegible], ոչ [illegible] ճշմարտութեան խորհրդի, ոչ [illegible]. ոչ [illegible] ։ [illegible] և եկեղեցւոյն կուսութեամբ 'ի [illegible] ծնանի որդիս Այ, որպէս և ասէ զինքն. այլ և զնոյն ինքն [illegible] ծնանի [illegible] 'ի [illegible] ։

(13) Քերովբէ ... ։ [illegible] [illegible] աթոռոյ, [illegible] քերովբէք [illegible] 'ի մերձենալ [illegible], [illegible] և եկեղեցւոյն [illegible] վասն [illegible], կէս [illegible], [illegible], [illegible], [illegible] 'ի [illegible] ։ [illegible] և [illegible], որք 'ի աստուածային [illegible] և այլ [illegible] հարուածեցան. (Ծ. մնկ. ա. 16. գ. 26 ։) Այս [illegible] առաւել [illegible] եկեղեցւոյ. [illegible] և 'ի նախաթագաւոր եկեղեցիս. որպէս [illegible] 'ի ներքս մտանել ։ (Վարք հարանց. երես. 506 ։) 'Ի բաց [illegible] ։ 2 [illegible]. 'Ի բաց [illegible] ։

(94) Այն ... ։ Եկեղեցւոյն [illegible] ծնանի որդիս ոչ [illegible], որք են [illegible] ճշմարիտ և քահանայ [illegible], որ է Յս Քս ։

(95) Զգիրն ... ։ [illegible] եւ յիմ [illegible], զի [illegible] հայեցին, որում [illegible] [illegible]. որպէս [illegible]. ('ի գիրս [illegible] Հ[illegible] [illegible]. գլ. իէ.) ասէ՝ [illegible] զօրութեան ։ Այդ [illegible], [illegible]. [illegible] ։ Յեւ և [illegible], 'ի [illegible]. այլև 'ի գիրս ա. [illegible] Ա[illegible] ։ Եւ [illegible] Օ[illegible]. գիրք Ը. [illegible] 'ի [illegible]. գլ. Թ ։ Այլև զա-

[illegible], 'ի գլուխ Ե. [illegible] գլ. ԺԳ: Այսմ [illegible], [illegible] Գրիգոր, և [illegible] Այսր՝ [illegible] եկեղեցեաց՝ [illegible] գլուխ Բ. գլ. ԾԷ: [illegible] ( գլուխ Ե. գլ. ԽԹ. ) [illegible]: Եւ [illegible] 'ի [illegible] յայսօր:

(96) Փռիւգն [illegible]: Զեկեղեցի՝ [illegible], [illegible] եկեղեցին, [illegible]: Սակայն [illegible] եկեղեցւոյ [illegible] 'ի [illegible]. 78: [illegible] 'ի [illegible]: Վասն [illegible] եկեղե- ցիք [illegible] Փռիւգ, կամ Ան- տիոքիւ, [illegible] յայսօր [illegible]: Ա[illegible] ( Գ. 14. ) [illegible] եկեղեցի 'ի [illegible]: Սոյնպէս [illegible], [illegible] եկեղեցին [illegible] 'ի [illegible]. [illegible] Անտիոքին [illegible] եկեղեցիք [illegible] 'ի [illegible]. [illegible] եկեղեցին՝ [illegible], [illegible] Անտիոքին, [illegible], 'ի [illegible]. և Յայտնու. [illegible]. 15. 20: Սոյնպէս եկեղեցին [illegible] 'ի [illegible] Անտիոքին: [illegible] եկեղեցիք [illegible] Փռիւգ Անտիոքի, ԾՆ: Եւ [illegible] և [illegible] եկեղեցեաց:

(97) Զէնոն [illegible], [illegible], [illegible] ( Բ. [illegible]. ԺԳ. 32. 33: ) Այսպէս [illegible] եկեղեցեաց [illegible], [illegible], [illegible] համբառնալ:

(98) Ա[illegible]: Եթէ [illegible] եկեղեցին՝ [illegible]: 2. [illegible]. [illegible]: Եւ 'ի [illegible], [illegible] 'ի [illegible], [illegible], և [illegible]: Եւ [illegible], [illegible]: Եւ [illegible], [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] և [illegible]: Եւ [illegible], [illegible], [illegible], [illegible], ԾՆ. է [illegible]. [illegible] և [illegible]: Եւ [illegible], [illegible] 'ի [illegible]. ( [illegible]. Բ. 5. )

ոչ է այժմ առնել մի ըստ միոջէ ։ Այլ՝ եթէ ոչ պարզապէս խոստովանեսցի զեկեղեցին, պայմանաւ մերժէ յերեսաց իւրոց զնա հայր․ փոխարէն ընդ գէտ նախ զգուշան այսր առաջադասակ կենաց ։

(99) Այն են հաւատք ։ Ցայլ տարազելոյ, Այս են հաւատք․ բայց ըստ եւս հաւանագոյնն գնել ըն մեր օրէն․ զի բովանդակ զաւանութեան ճառս ունի երկու մասն․ առաջինն ’ի սբ Երրորդութենէ, և երկրորդն՝ ’ի սբ եկեղեցին․ ուստի առնելն, Այն են հաւատք, խնամի՝ առաջինն այն է խոստովանութիւն ’ի սբ Երրորդութենէ․ և այս երկրորդս կամ մերձենա է խոստովանութեան ’ի մայրն իմ սբ եկեղեցին ։ Եւ զայս բան գնէ ’ի կատարածի իւր իւր ձեռնադրել և կնիք ’ի հաստատութիւն զաւանութեանց ։

---

Աշխարհին յառաջելոյ կրէին հեծութիւն՝ նորին հոգւոյն, առ նոյն աղբիւր ճառագայթից բանին ։

’Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ ։

# ԲԱՆ. ՀՕ.

ա. Ո՛վ ողորմած, բաղմագութ՝ հզօր՝ ահաւոր՝ մարդասէր՝ օրհնեալ՝ կենդանի՝ անճառ.[2] որ ոչ ելանէ երբէք ըստ բանն քո՝ իր անձեռնարկելի, որ և մնաց է անհնարաւոր ։ Դժ է հատուցանել պտուղ քաղցրութե ընդ փշոց խստութե, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել ատելւոյն, և աղօթս ’ի վերայ հալածչացն, և փրկութի հայցել խոցողին, և սպանողին ներումն խնդրել՝ ’ի քէն ընծայեցաւ պտուղս այս հրաշից. որոյ քաղցրութիւն անճառ է քան զօրինակ, և բարեբանեալ կամաց քոց ախորժելիք, և գովեալ շքեղութեանց քոց ճաշակելիք, հոգի երեսաց՝ և զօրութի գեղոյ մերոյ տէր քո օրհնեալ ’ի բարձունս ։ Այլ մարդք երկրածինք և ամենավրէպք, և բարեմատոյց ձեռաց՝ չարիս դարձուցին. իսկ դու լոյս՝ և տուիչ լուսոյ՝ ոչ[3] լսես անէծս. ոչ ախորժես չար. ոչ կամիս կորուստ. ոչ ըղձանաս մահ. ոչ յուզիս ’ի խռովութէ. ոչ տխրիս ’ի ցասմանէ. ոչ հարկիս ’ի բարկութէ. ոչ մթանաս ’ի սխրոյ. ոչ այլայլիս ’ի գթութէ. ոչ փոփոխիս ’ի բարութէ.[4] ոչ թիկանց շրջումն, և ոչ երեսաց անդրադարձութի, այլ ամենայն լուսաւորութիւն՝ և նկատումն փրկութեան ։

բ. Եթէ քաւեսցես, կարօղ ես. եթէ բժշկես, զա

րաւոր ես. եթէ կենդանացուցանես, բաւական ես. եթէ շնորհես, առատ ես. եթէ ողջացուցանես, հնարաւոր ես. եթէ պարգևես, ամենալի ես. եթէ արդարացուցանես, ամենարուեստ ես. եթէ մխիթարես, ամենիշխան ես. եթէ նորոգես, ամենակալ ես. եթէ հրաշագործեսցես, ամենաթագաւոր ես. [5] եթէ վերստին հաստատես, արարիչ ես. եթէ կրկին գոյացուցանես, ա̃ծ ես. եթէ հոգաս ընդ մեր, ամենատէր ես. եթէ կորզես 'ի մեղաց, այցելու ես. եթէ չարժանեացս ընծեռես, օրհնեալ ես. եթէ յորսադէն զերծուսցես, փրկիչ ես. եթէ զեղցես 'ի քոյոց 'ի մեզ, հարուստ ես. եթէ նախ քան 'ի մէնջ խընդրելն՝ դու կարկառեսցես, անկարօտ ես. եթէ լայնես նեղութենս, անդորրիչ ես. եթէ զվերջացեալս կոչես, խնամակալ ես. եթէ զսասանեալս հաստատես, վէմ ես: [6] Թէ պաքեալոյս արբուցանիցես, աղբիւր ես. թէ զծածկեալսն երևեցուցանես, լոյս ես. թէ զօգտակարսն իմ ծանուցանես, բարի ես. թէ զբիծսն անտես առնիցես, երկայնամիտ ես. թէ ընդ փոքուս 'ի դատ ոչ մտանիցես, բարձրեալ ես. թէ ծառայիս ձեռն մատուցես, ստացօղ ես. թէ աջովդ քո պաշտպանեսցես, յանձանձիչ ես. թէ վհատեալոյս դարման մատուսցես, կերակրիչ ես. թէ զանդէտս պարարեսցես, վարդապետ ես. թէ զգեմեալս առ քեզ ընկալցիս, ապաւէն ես:

Է. Ու արդ՝ քո են այսոքիկ՝ տէր ողորմութեան [7] ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ՝ նախնի նահատակդ համբերութեան վկայից. որ վասն իմոյ փրկութեան հանդիսացար զօրապէս յասպարիսի Ճակատուն, զի կակղեսցես զկարծր բռնութին մարմնոյս դոռոզութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. և յանպարտակիրդ մարմին չափեալ ըղբնութենս մերում զտաժանական տագնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես 'ի քեզ օրինակեալ. օրհնեալ յաւիտեանս. ամէն:

---

(1) Որ ոչ ելանէ: 'Ի բանէ հրամանի քո ոչ մի ինչ անձեռնարկելի կամ անհնարին կարէ ելանել կամ վրիպել, այսինքն առ քո հրամանդ չէք ինչ անկարելի. որ և ծոցոյ, թէ և մնայ անհնարաւոր էջէ կի՞ թուեցի:

(2) Ընդ ծնչոց ։ Փոխանակ խօսս մեղաց մեղայս՝ հառաչանաւք քաղցր պաղատանաւ՝ քեզ է տէրունական , որ առաջին հայր կամ մարդասէր եղեր ողորմելի կանոնացս՝ Թէ բարի առնել առաւելագոյն , ևն ։ Այս հրաշալի պատուղք 'ի քէն ընծայեցան , որոց քաղցրութիւն 'ի վեր է քան զօրհնեալ , և ախորժելիք են օրհնեալ կամաց քոց , ևն ։

(3) Ու չէս ։ Ցորժամ ոք անիծանէ զընկերն , ոչ կամիս լսել զայնպիսի անէծս . արգելլուս անիծանել նաև զանիծիչս մեր , ( ըստ մատթ . Ե . 44 . ) ոչ չարախօս . ոչ դոյ 'ի քեզ խռովութիւն , ոչ ցասումն , ոչ բարկութիւն ։ ոչ մտախոհ , ոչ ատոտանաւս , ոչ նշաւակիս 'ի սիրոյ . կամ 'ի սիրելեաց ոչ խառնիս յայն , որպէս լինի առ մարդիկ , մթութիւն անձնասիրութեան կամ շահու , կի ոչ պաշտելով զօրէն սիրոյ ։ Այնչափ անխառն է սէրն Այդ , մինչ զի նաև յատելին զմեղս և զմեղաւորս , և 'ի պատուհասելն զպատժաւորս , միշտ սէր մնայ , 'ի սիրոյ շարժի և գործէ , այսինքն 'ի սիրոյ առատ բարութեն իւրոյ ։ Նման այսմ ասաց Յ . 1 . Օրոր Միաւրեց սէր ։

(4) Ո՛ւ Երկնից ։ Այն յիշողէ կողմանէ ոչ անուանս առնէ զմարդն 'ի խնամոց , որ նշանակի շրջմամբ Թիկանցն . կամ երեսաց ... , զի յետոս դարձուցանելն . այլ մարդն դառնալով 'ի ստեղծուածս , Թիկունս դարձուցանէ առ Այդ , և մերժէ զխնամսն նորա . որով և Այդ առն դարձուցեալ զերեսս . ըստ սաղմոսին . ( ԺԷ . 27 . ) * Ընդ Թիւրսն Թիւրեսցիս ‖ ։

(5) Երէ Մեզոփին հաստատէս ։ Եթէ դարձեալ հաստատես զմեզ 'ի բնական կամ 'ի գերբնականն բարիսն . կամ , եթէ կրկին գոյացուցանես յարութեամբ 'ի մեռելոց , յայնժամ ամենայնի ցուցանես լինել արարիչ և Այդ . քանզի նախին արարչական զօրութեամբ որով եղեն առաջինքն , լինին և յետինքս . և նոյն խրատուանք Այդութեն են յառաջնումն և յերկրորդումն ։ Եթէ չարժանեաց , եթէ անարժանեցս պարգևես բարիս , օրհնութիւն ընդունիս՝ և ոչ մեղադրութիւն . ուր ընդհակառակն առ մարդիկ մեղադրելի է երբեմն բարերարել անարժանին՝ յորժամ այնու լինի նմա զեղծանել ։

(6) Թիկ պատէնչալ ։ Ծարաւելոյս ։ ըստ այլ օրէն . ասա և 'ի հետևեալն գլխ , ԷԲէ ։

(7) Ո՛ւ միայն գթեալ ։ Վերագրեալ բանիւս քեզ պատուականին՝ ոչ միայն իբր ճշմարտապէս գթեալ , այլ զի կանխաւ արդեամբք կատարեալ և մեծարեալ են 'ի քէն առ քո , նախնի նահապետք , յառաջընթացք ամենայն վկայից , որ նախ հանգստացար յապաւինեալ նեղութեանց , առ 'ի ճնշել զապստամբութիւն մարմնոյս . և 'ի քո անպատրաստական մարմնով ընդունելով զառաժանելի կիրս բնութեն մերոյ , արդեամբք օրինակեալ ցուցեր զանձնառ գթութեանդ՝ զոր անմնայլ բնութե Այդութեանդ անմարթ էր ցուցանել . զի մերկ Այդութեանդ գութք անհասանելի նկարագրելն , զոր մարդանալովդ արարեր յայտնապէս ։

Մերարին յաւելեալ նրկէն հեծութեան՝ նորին հոհողէ, առ նոյն աղերս ճողողանաց բանի:

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ:

# ԲԱՆ. ՂԵ:

Ա. Եւ քանզի օր է օրհնաբանեալ և[1] լուսաւորող՝ կշռութեան երկուց ընտրութեանց՝ արարածոցս սահմանութեանց՝ յեղանակելոյ յայլ իմն եութիւն երկնակենցաղ անփոփոխադրելի, ամբարձելոցն խոնարհութեան, և կործանելոցս վերբերութեան, սարսափելի ուրբաթու մեծի պասեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան[2] զուարճախառն երկիւղիւ, ահա ընձեռի համարիմ ասել աստանօր 'ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր՝ Ած բոլորից:

Բ. Մացեր յաւետենի քում ստեղծուածոյս իմոյս կերպիւ[3]. ոչ խօսեցար՝ տուիչդ բանի. ոչ բարբառեցար՝ հաստիչդ լեզուի. ոչ ձայն արձակեցեր՝ ստացողիչդ երկրի. ոչ մռնչեցեր՝ ամենազդեցիկ փողդ մեծութեան. ոչ երախտեօքն քո յանդիմանեցեր, և ոչ չարեօք նոցին ըմբերանեցեր. ոչ մատնեցեր ամօթոյ՝ զմատնիչսն զքեզ տանջանաց մահու. ոչ 'ի կապելն զքեզ դիմադարձեցեր, և ոչ յապտակելն դժուարեցար. ոչ 'ի թքնուլն թշնամանեցեր, և ոչ ընդ կռփելն երբէք խռովեցար. ոչ ընդ կատակելն սրբամեցար, և ոչ ընդ խաղ արկանելն երեսս փոխեցեր: Մերկացուցին զզգեստ պատմուճանին[4] իբրև 'ի տկարէ, և դարձեալ ագուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ: Եթէ ոչ էր[5] արբեալ կրկնակի քացախ՝ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մթերեալ նախնի դառնութեան. Ճաշակեաց վհատութե, և արգել անդէն տարակուսանօք. առին մոլեգնաբար, և դարձեալ մատուցին անպատկառապէս: Դանիւ հարուածոց յետին անարգութե 'ի մէջ խառնիճաղանճին ամբոխի դատապարտեցին. ծաղր կրկնեցին նախատանաց, և պսակ եղին արհամարհութեան:

Է. Ո՛չ եսուն [6] հանգիստ կենդանաբարիդ, եթէ ոչ՝ զզօրծի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ. առեր իբրև զհեզ. բարձեր որպէս համբերող, [7] ըստանձնեալ իբր զպարտական՝ զփայտն մշտաց։ Որպէս զծաղիկ շուշանաց հովտաց՝ ուսով բերեալ զզէնն կենաց, զի յարհաւրաց դև շերայնոց՝ [8] զիւրակերտս գահաւորակս մարմնեղէն գոյութեան՝ պահպանեսցէ 'ի դատապարտութենն վայրի՝ իբր 'ի խորախնձան խնձոյից ։ Հանեն արտաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զխոյն սաբեկայ՝ ձգեալ զեղջերացն. տարածեցին 'ի սեղան խաչին իբր զպատարագ. բևեռեցին որպէս չարագործ. պնդեցին իբր զապստամբ, զխաղաղունիդ երկնաւոր՝ իբր զաւազակ, զանկապուտ մեծութիւնդ՝ իբր զտառապեալ, զառ 'ի քրովբէից պաշտեցեալդ՝ իբր զքամահեալ, զսահմանող կենաց՝ իբր զարժանաւոր սատակման մահու. զաւետարանիս նկարիչ՝ իբր զհայհոյիչ օրինին. զտէր և զկատարումն մարգարէից՝ [9] իբր զհամառօտիչ գրեցելոցն. զճառագայթդ փառաց՝ և [10] զկնիք անքնին խորհրդոցդ հօր՝ իբր զներհակ ծննդիդ կամաց. զօրհնեալդ իսկապէս՝ իբր զտարագրեալ. [11] զկապող օրինին լուծիչդ՝ իբր զայր 'ի նզովս գրեալ. զհուրդ ծախիչ՝ իբր զհերքեալ իմն կալանաւոր. զհաստող երկնի և երկրի՝ իբր զհաւատոյ պատժաւոր. զ'ի լոյս անմատոյց ծածկեալդ՝ իբր զհողածին ըմբռնեալ ։

Ը. Ո՛վ քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարութիւնդ ողորմածիդ գթութեան, որ վասն ապախտաւոր և անօրհնեալ ծառայիս՝ տէրդ բոլորից՝ զայս ամենայն կամաւորապէս և հաւանողական [12] համբերութիւն տարեալ՝ մարմնոյդ միութեամբ 'ի քեզ ընկալար. և մինչև 'ի քնարան շիրմին տապանի՝ անպական 'ի լրութիւն ամբողջ նոյնութեամբ ա՟ծ անքնին՝ զնոյն կրեալ նախատինս անձառ համբերութեամբ, յարեար կենդանի ինքնիշխան բարձրութեամբ լուսոյ՝ անմնուազ մարմնով, և անթերի ա՟ծութեամբ ։ Օրհնեալ փառք, գովեալ գթութիւն, բարերարեալ միշտ ողորմութիւն, յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

(1) Լուսանորոգ ։ Օր ուրախութեան չարչարանաց, յորում լոյսն ապաւի-
նեալ՝ որ 'ի մեզ ծագեաց խաւարեցաւ, կրկին նորոգեցաւ յինքնեցուց ժա-
մանն. կամ նորոգեցաւ լոյսն ամբողջութեն ։ Կոչուի Երկուշաբթի.
որ կշռութեն կամ բաժանմանն երկուց մասանց աւուր, այսինքն առաւօ-
տեան և գիշերոյ. զի 'ի միում ժամու երկրին եղև միաւորութեան սոսա և գիշեր ։
կամ, որպէսման ընդարութեն արդարոց և մեղաւորաց, որ ցուցաւ յերկա-
տասանեկին ։ ապաշխարոյ առաջնութեն, յորում արարածք խորհրդածութ
ըստ խորհրդոց աստուածոյ առաւօտեան. արեգակն և լուսին՝ խաւարեցեալք.
երկիր՝ շարժեցեալք. վէմք՝ պատառեցեալք. գերեզմանք՝ բացեալք. որ է
օրինակ յետնաւորաց յայտ խոհ ելանէ, փոփոխելոյ յայլ արարածք մեծ միայն
մարդկան, այլ և ամենայն արարածոց, որոց նորոգութն եղև քնի չար-
չարանօքն ։ անթերջբեղոյն գիտութեան կարծանելեացն, և մեղ կործանեցուն՝ կամաւ-
նեանն և բարձրութն ։

(2) Զատուցանոյ Երկուշաբթի ։ 2 օրէն . Երկուշաբթի ։ Գիտեմ սակ՝ զայս ա-
ղօթս երկիւղիւ խառնեալ ընդ ուրախութն ։ Երկիւղ, զի չարչարանք
փրկչին՝ մեծափառութն և գառանցն են խնդ մեղաց, և եա նոր մե-
ղքք անդորոյ առնեմ զնոյն, և ապերախտութն գառանց առ
աւուրն ։ Եւ խնդութն, զի այն չարչարանք՝ մեծութն են մեղաց, և
փրկանք հոգւոյս, և յուսադրութն քաւութն նոր պատարագս. զորս
խոնարհեալ զանգուած ածին ոյ, և զմեծութն ճշմարիտ նորա, և զգաստա-
կանութն հոգւոյս ։ Եւ այսպէս նոյն չարչարանք են ըստ այլ և այլ բա-
նի լինին պատճառք խնդութն և երկիւղի, որք միաւորութեան լինին 'ի
սրտի բարեպաշտս միայն՝ մին յաղթութեամբ մեռանելն, և մի փրկչութեան ։
Եւ այս կրկին ներգործութեանց լինելոց են 'ի սրտի՝ ըստ խորհրդածութ
մասնաւորութն ։ Եթէ փարձութեանց մեղաց յարձակմն 'ի մեղ, երկիւղ առ-
նէ ճշմարտել զչարչարանս փրկչին. եթէ լուսածն կամ յուսահատութ
գայցէ 'ի մեզ, զխնդութեան ածցուք զմտաւ ։

(3) Ու խոսեցար ։ Զանճառելի համբերութն և զխոնարհութն փրկչին
բացատրելով, զխորհրդածութ համառօտեալ չարչարանաց նորա առանձնա-
ցուցանէ խորհրդոց ներհակութն ։ Լռել կարէր ասէ՝ որ առաջիկայ են խօսեց.
ոչ ձայն համեր՝ որ զերկիր դողալ են ։ Զայսպիսի առ Քս յերկրորդ
գէմս խօսի. բայց 'ի բանէն՝ Եբրայեցւոյն ըղձեւոր, մինչև 'ի համար Ա.
Թուղթ յերկրորդ գէմս գարձուցանել, որ և յայտնի է յաւելի, Ճար-
կեաց, արգել ։

(4) Իբրև 'ի փկարէ ։ Զհամբերամ փրկչին 'ի բաց համեմն համարելով զմա
ակարը, անձրեւ 'ի սպասաւորանել զամենն. խոկ մեծանալ զի անդրանիկ
մեղքը, գարձնալ ապացուցին նոքա, համարելով թէ անկարելի ընկալնել
է, փոխելով ոչ կարէ առ ապառնելոյ զամենն ։

(5) Աւէնուլ կորզելի ։ Միանգամ նախ քան զխաչելն՝ մատուցաւ գինի
ընդ լեղի խառնեալ. (ըստ մատթ. իէ. 34.) կամ զմռսեալ (ըստ
մարկ. ժե. 23 ։) Երկրորդ անգամ 'ի խաչին՝ քացախ ընդ լեղւոյ. և
զերկրորդն եա փոյախ կոչէ նա վարդապետս ։ Յաւակշռութն ճաշակեաց զեա-
փոխէ, լցեալ և թուլացեալ գոլով 'ի զօրութէ. բայց արգել անդէն,
խակոյն փորձնութեան. զի մի երևեցուցէ՝ թէ առ չըմպելոյ ցաւոցն Ճա-
շակէ. ուր ճինքն յայն սակս Ճաշակեաց, զի զգայցէ զդառնութենն, ա-
ռանց խառնանելոյ զցաւսն ։ Եւ ասէ, եթէ ոչ այսոց կրկնակի արգելեալ
էր փրկիչն զդառն ընկալելոյ, ոչ 'ի բաց փոխէր զմաղձ առաջին գառն
մեղացն ապականի, զապականութեննն՝ որ 'ի մեղաց ապականի մթերեալ էր 'ի
հոգիս ։

(6) Հանգիստ կենդանարարիդ. (մի օրէն. կենարարիդ ։) Յետ ասանելոյ
զբեղ ընդ գիշերն ողջոյն, ակնարկեալ զառն հարուածոցս և նախատանաց

հրէից և հեթանոսաց, ոչ եւսւն կենդանաւորաբարեալ և ոչ փոքր մի հան-գիստ, այլ անդէն զգործի մահուան զծանրացելոյ խաչափայտին հանդուր-ցին 'ի Թիկունս քո. Նախ քեզ եսսւն բառնալ զծանրութիւն խաչին, և ապա խաչին բառնալ զքեզ, երբ առաւել 'ի խաչն՝ քան 'ի քեզ խնդա-լով: Իսկ զմե ում երկայնամիտ, ընկալեալ յանս քո զխաչն՝ որպէս սը-գաւոր հանգեաս քո, երբ Թեթև էին զխռովութ և սփոփեցն, որպէս Թէ ծաղիկ շուշանաց էր ինձ:

(7) Ըսփանիշէնաւ Իէր: Ցանձն բարձեալ զխաչն երբ աղաղատական փոխա-նակ մեր, կամ ըստ կարծեաց հրէից: Ցայտնապէս անուղիս՝ բառս քն Իէր, որպէս երգաւկի խմանէին ըստ յարմարութեն խաղաղանչելոյ բանին. այսինքն մի՝ յայտնողական՝ ըստ Ճշմարտութե. որպէս ասէն, Իէր Եէլոհիմ, Իէր հեղ. ևն: Երկրորդ՝ յայտնողական առ կարծիս հրէից. որպէս ա-սեն. Իէր գողոփոմէ, Իէր գաւաոյլ, ևն: Երրորդ՝ նմանական, որպէս ասեն. Իէր ղիոյի սաբէեկայ:

(8) Զխուռակերփս: Զառ յինքեանէ կարգեալ աԹոռս կամ բարձնքս հա-գուսյս՝ զմարմինն, ողորմանեցէ նա խաչն 'ի գեհենայն երկնաւորաց, 'ի դափագայրփունն վոյրէ, 'ի ժամ քնոյն՝ որ է աղաւաժ մեղաց, և զի դրամ արաւէկեր մահու՝ նշանակէ զպարտաւորել մեր 'ի մահ. ասաւն այնպէս անկերկիւղ պահեսցէ զիս 'ի ժամ քնոյն, որ զի անկողինքն լինիցին բնու-Թեա սփոփումն հանգստեան երբև 'ի խրատխաճանի:

(9) Իէր ղեհամոովբիւ: Իբրև զկրճմանիչ կամ բուծիչ գուշակուԹեց մարգարէիցն: Ըստ այլ մտաց՝ Ճշմարտութիք առի քո հաստատիչ օրինաց, այսինքն բառնալով զաւեալորդան, և 'ի հաստատութե աւետարանին մե-րածելով, ըստ բանին հաւոյմ. (Թ. 28:) * Զբանն հակիրճ արասցէ տէր, || ևն:

(10) Զթիթ անփին: Զբուռն նշանակ և զհաստատութե խորհրդոց իւ հօր՝ երբև զհակառակ կամաց նորա:

(11) Զիտղոյ օրէնին: Զլուծիչ աղաղատաւորութե հին օրինաց՝ խաչեցին երբ զնզովեալ 'ի նոյն օրինաց: 2 օրին. ղեկողող օրէնին, այսինքն զլու-ծիչք աղաղատաւորող կամ բանադատող օրինաց:

(12) Հաճուճ փուրէաւ: 2 օրին. խոփուրէաւ: Զայս ամենայն սփոփական կամօք կրելով, 'ի ձեռն միաւորութե մարմնոյդ՝ Ի փեղ յանձայնն անձնդ ընկալեալ. և մինչև 'ի գերեզման անապակաս և նոյն ած գոլով, կրեցեր զնոյն նախատինս անապական համբերութե: Ո՛չ Թշնամիք քո յաղթեցան նախատանօք խաչին, և ոչ անհաւանելի սէր քո շառաղաւ կենդանայն չարչարել վասն մեր. այլ յետ մահուան և 'ի խաչէն ևս իջանելոյ՝ առա-կաւքն առ գերեզմանին նախատէին զքեզ զինուորքն և կնքելովն, և զու զայն յանձն առեր. մինչև ապա յարեար, ուղիղ 'ի բաց Թողել 'ի մարմնոյդ՝ բայց զանապականութիւն ևեթ, զչեցեալ փոխան այնր զլուսաւորու-ծառ բարձրութե փառաց: Եւ արդ, զինչ տացուք արիառը քեզ ընդ այսր ամենայնի անկշիռ երախտեաց. եթէ օրհնութե, եթէ գովութե, եթէ բարեբանութե, այսպէսի Թէ և յաւիտեան մատուցին, այլ փո-քունք են: Ահա զու Ցը փրկիչ, զու միայն քեզ փոխարէն:

Մերոյին յառաջեալ նշխին հեծութեան՝ նորին հոգւոյն առ նոյն ազդիւ ձաղկանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ՀԲ։

ա. Եւ արդ՝ անկեալ յերեսս [1] հողանիւթ կերպիւս, 'ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագութեամբ, զձեռագործիդ ողորմածութեան զկենդանարար սոսս համբուրեմ, զայս օրինակ մաղթանաց մեծիդ ընծայեցուցեալ։

բ. Աղաչեմ զքեզ միայն խնամակալ, մարդասէր,
գթած, կենդանացուցիչ, հզօր, այցելու, պաշտպան. [2] Որ
ունայնացուցեր վաստակն աշխատութեան փրկական կրից
մարդացելոյդ վասն իմ Այ. [3] Որ սոսկ եղեցի քրտանցն
կաթուած խառնեցեալ արեամբ՝ 'ի մատնութեանն
աւուր գիշերի. Որ լցեր սուրերացեալ լուսոյդ
երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց թշուառա-
ցելումս ինձ պարգևեցեր. Որ ջնջեցերն շնորհացդ
աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. Որ
անշահ եղեցին կրիցդ պտուղք, զոր կարօտութեան
իմում մատուցեր։ Որ պարծեցի բանսարկուն վա-
նեալ՝ զքո ստացեալս իւրացուցանել. ահա յաղթեա-
ցեր կամօք քո՝ ըղձից չարին. վերստին ապշեցեր
միանգամ զարհուրեալն. կրկին պարտեցեր իսպառ
դատեցեալն։ Որ անխայեր [4] զազատարարդ քո բանն,
որ զստեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ
դարձուցանէ. զանձկաւն արարեր բարերարութի [5]
յանակնկալ ժամուն յուսահատութեան, յորժամ բնաւ
իսկ կորեալ և օտարացեալ էր կենդանութեան շաւ-
ժողութի. մեռար անմահդ՝ և զմահացեալս նորոգե-
ցեր. [6] եթէ զկանոն համաձևութեան օրինին փոխեցեր,
արդ զչխուրինն և զհեշտականն և զեւս հնարաւորն
Որ արգելցես՝ սկզբնաձիր ողորմածութեան բարեգութ
օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր։ Ազդեալ բա-
նիւդ ամենազօրաւ, որ զգոյութի լուսոյն ստեղծեր
'ի նախնումն աւուր, և վաղվաղակի փափախեալ զը-
տայց 'ի լաւ անդր. և փոխանակ զի ես ոչ խնդրեցի

հետևել լուսոյդ , դու եղիցես ինձ յայց՝ ճառագայթ
ծագման հայրենի կերպիդ , և կոչեցայց առաջի քո
ծառայս միաբանապարտ՝ ողորմեալ շնորհեալ առ 'ի
քէն . 7 ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ 'ի ըղ-
պարտոն հատուցանել , այլ շնորհեա ինձ տառա-
պելոյս զերեսս քո՝ լոյսդ 'ի խաւարի սրտից վհատե-
լոց : Ո՛րդէլ և կնքեալ 8 զընթացմունս եկեղցն , որ
միշտ զեղուն բարիքն հոսեալ 'ի յուշոյս իմ տեսու-
թէ . պահեա ինձ զշնորհ անմնապայծառ զանձուցդ
մնացականաց . որով պատուական զոհեալ՝ քեզ անուա-
նեցայց , պաշտպանեալ 'ի քէն՝ անսահման բարի :

Գ . Ո՛հա ողորմեա ինձ գթած , աղաչեմ զքեզ ո-
ղորմեա ինձ՝ հզօր , կրկին ողորմեա : Ո՛ր փոխար-
կեր երկունս ցաւոց՝ ընդ չարեաց իմոց բարիդ ա-
մենեքին . որ բառնար 'ի վտանգելոյս՝ զառ 'ի քէն
պարգևեալդ շնորհ . որ կապտեր զփշուն անշնորհ-
նեալդ հոգւոյ . որ լուծաներ զխնկեալ 9 զկնիք ար-
քունական պատկերիդ : Ո՛ր յայտնեցեր 10 փուշք
մեղանացս՝ 'ի սրբութիւն մտացս . որ խզեր զկապ միու-
թեան զընդ քեզ սիրոյն պնդութեան . որ մերժեցես 11
զարուեստ զօրութեան լեզուոյս յարմարութեան . որ պա-
կասեցուցաներ զաջողուած աջոյս՝ առ 'ի զլուսոյդ
մտաւունս բաշխել : Ո՛ր գրեր 12 'ի դպրութեան կենաց
մատենիդ՝ զմահուն պարտիս . որ պահեր . որ ինձ հա-
մարեր . որ յիշեցուցաներ . որ ամաչեցուցաներ . որ նա-
խատեր . որ ատեն հարկաներ . 13 որ արձանացուցաներ
զմեղկութեցն . որ ամբարեր զկորստեանցն . 14 որ իբր
ստգտեալ իմն ամբաստաներ : Ո՛ր յարուցեր ընդ
իս 15 զծառն անիծից . որ արձակեր 'ի յիս զաղաղարթ-
մնասուցն . որ ընծիւղեր զծաղիկ մեղացս . որ բերցես
ընդ առաջ զնամակ պարտուցս . որ արտաքերեր
զէութեն պտղոյն : Ո՛ր թուեցես 16 'ի ձիւղս երկրա-
ստեղծ մատանցդ՝ զգիրս գործոցս . որ մատուցես
բան ընդդէմ ահեղ՝ զանօրէնութիւս իմ յիշատա-
կել . որ մատնեցես իմոցս կամաց զաւանդս հոգւոյս՝
վարել 'ի գերութեն . որ ասաէն զիս փառաւորեր՝ զի
անտանօր դատապարտեցես . 17 որ նուաղութեն այսր-
անցաւորի՝ զյաւիտենական բարիսն տուժեր . որ 'ի

սակաւուամ այսմ ժամանակի՝ զանվախճանելի զփառաւորն չափեր. մի ընդ հովտիս մշտաց հեծութեան՝ զանխառնական զկենանսդ գրաւեր. մի ընդ ստուերի այսր մթութեան՝ զանճառաելիդ լոյս փոխանակեր. մի զերասանակ միտացս լքցես՝ ըստ արատուղի հետս հեռանել. մի [18] զկամաւորն կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն. մի [19] զհովիտ հանճարոյս ստուերական պահեր՝ 'ի հանդերձեալսն ինձ հրապարակել։ Եթէ ամբարես զաւանաց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյս. եթէ շտեմարանես 'ի սըրտի, սատանային կիզեալ անբոց այրեցայց. եթէ քննեսցես զանօրէնութիւնս, առանց յանդիման քեզ լինելոյ՝ խոպան հալեցայց. [20] եթէ ընկակից ինձ թողցես ըզմեղսն, 'ի նոսին վատնեալ մաշեցայց ։

Դ. Ակնարկեալ միշտ զօրեղ ամենակարօղ՝ փախնուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. Հրամայեալ զթած, խնամակալ, գովեալ, լոյս անշիջանելի, զօրութիւն անսահմանելեաւ, զի [22] նոր հաստատեսցի գոյութիւն բնութեան մարմնեղէն յաւկի անդամոցս. յորում հանգուցեալ անլքանելի՝ բնակեսցես բազմեալ ախորժ տենչանօք՝ միութիւն հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեղացս մերժեալ իսպառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես՝ ամենակեցոյց Թագաւոր անմահ տէր յս քս, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

(1) Հոգանիսի կերպիւ ։ մի օրին . կերպիւ ։
(2) Մէ սահայնապէ վասպան ։ 2 օրին . վասպան ։
(3) Մէ սով Եղիշէ ։ Մէ անդորր և անդօր եղիցի կաթուած քրտանց քոց, խառնեցէալ արեամբ ։ Ասացեալ սաստ և 'ի բանն կէ. կ. որ հաստատեալ զհաստատուն կարծիս մեկնչաց՝ թէ քրտունք խառն ընդ արեան հոսէին 'ի մարմնոյ փրկչին 'ի գիշերի մատնութեան ։ Իսկ կայսերասնա համարի՝ թէ յետ ապաւինելոյ քրտանցն բովանդակ արիւն անխառն հոսէր ։
(4) Զաղափարեալ փո բան ։ Մէ խնայեր զքաղցրութեան քո բանիդ, ապա ասէր. Թողեալ լեզին քեզ մեղք քո. կամ, Արժանի եղեալ ես 'ի հեշտանագութէ քումմէ, են ։
(5) Յանձնիչեալ ժամանակ ։ Ասացեալ առ անդամանկոյսն՝ որ երկնաւոր և աստուածային մեծացեալ, կայր 'ի յաւասահասութեն, անմահնեալ ցուցեր զպարկեշտութիւն, նմանեալ և առ մեռեալ միածնին՝ որ 'ի նոցին, այսպէս և առ մեղուցեալ բնութիւն՝ որ անշահ մեծացեալ 'ի բնական օրէնաց, և անօգնական 'ի ըղրաւոր օրինաց, կայր յաւասահասեալ 'ի բաժնեա-

թէ, և սատար 'ի հոգևոր կենաց, զոր 'ի վերջնում զարթու յանկարծ երևեցար, և զանձնաւ բարեկարգութեան ցուցեր, մտանելով մեզ մեր :

(6) Եթէ ընդլայն : Եթէ զկանոնն օրինացն՝ որ հաւատոյ յանցանացն չափիցեր զպատուհասն, ասելով. Այն ընդ ակն. կամ հրամայեր, Այնչափ որ մեղիցէ՝ նոյն և մեռցի, զոր փոխեցեր. զի ոչ միայն 'ի մէնջ ըռ յանցանաց ոչ պահանջեցեր զհատուցումն, այլ և մեր փոխանակ անպարտ մեռար : Կամ, եթէ զայդ կանոն օրինաց քնութեամբ, զի 'ի մեռանելն մարդոյ՝ հարկ է եղծանիլ անձինն, զոր փոխեցեր՝ մեռանելով մարդկութեամբ, և անմահ մնալով անձամբք, եթէ զպայմանն՝ որ ընդ ենթեան մեծ էին և գժտութիւն, արարեր ողորմութեամբ, առաջ մեզ արդարութեան զգեցուցանելն և զհեշտացուցանելն, թէպէտ և առ քո զօրութեան՝ ամենայն ինչ միօրինակ դիւրին է : Իսկ առ մարդկան քո՝ նաև անհնարինք կարելի է. զի Աստուծոյ մեծամեծն արդարև օղ ողորմութեան եւ. նախնեաց զարդ զոր առնել կամեցար՝ ողորմութեան է. մինչ զի նաև 'ի պատահմունս ոչ յիմանիս յողորմութենէ :

(7) Ո՛հ ժամանակ : Ո՛չ ակնոյ է քեզ երկար ժամանակ առ 'ի զպարտս քո հատուցանելոյ, այլ բաւական է երևեցուցանելոյ զերախտս քո : Կամ, մի յերկարաձգեսցես զհատուցումն պարտուցս. այլ փութապէս շնորհեաս, և այլն :

(8) Զընթացումն Եւթն : Իմաստնական զննութեամբ, որով արարչագործես ընթացս երկնից և հողոյ յաւէտ խնդր. բարւոք քո. այլ պահեա 'ի միտս քո զշնորհ զանձանց երախտատուաց :

(9) Զ Բոփ, շնորհացդ, որ է նմանութիւն ծնութեանդ :

(10) Փառաց Լեզանալ : Մի վերասցին ծնանելոցն մեզ քո 'ի ոչնչութենէ ծագեալ, 'ի հոգիս քո, որ արարչագործ աստուածութեանդ : Թուի ակնարկել 'ի բանն Եսայեայ. (Ե. 6.) ուր զսրովբեսն տես՝ որ զհոգին նշանակէ, ասէ. * Բուսցի 'ի նմա փուշ երկրէ 'ի խոպանին : || Կամ առասէ զանգս առ ձայնին առ մանկանցեալն, յորում 'ի արարչական արարչութիւն նմա մնանարապէս էին. ( Յ. մակ. Է. 38 : )

(11) Զոր ունի : Մի բարձցես զդարձողութիւն կամ զհաստատութեանս ընդդէմ և բանի 'ի քարոզելն. կամ, մի արհամարհեսցես զայնմիտ հայեցուածովն օգուտ : կամ, մի արգելուս զքո շնորհեալ արարչութեան պատճառն ամենայն : Աստուծոյ խնամածն ասաւել յարմար է յանձին ազգաց բանին. մի դանդաղեցուցաներ զօրհնաբանութիւն զօրաւոր, ևն, այսինքն մի երբէք յանդգնեսցիս բարձցես յնմնէն շնորհ զօրագործութիւն, և մի զհատուցանելութեան մեծամասնեալս 'ի բաշխելդ ժողովրդեան զմարդկութիւն մարդկոյ քո :

(12) 'Ի դղրդելի կենաց : Տես զնմանն այսպէս բանին 'ի հզ. լուծ. 14 :

(13) Մի արգելցուցաներ : 'Ի մեծամեծս կենաց մի հաստատեալ նշանակեսցես զեղեդեաց, զյանցանս հերքումն խոնյ : Եւ մի ամբարեր զհիպոբրոնայս, զգործս արժանի կորստեան :

(14) Մի եւս արտաքեալ : 3. օրէն. խոր Գործեալ : Ըստ աստուծոյ խնամք. մի անգամ ամենայն զնմնէն երբէք զյանցանաց, երբէք զմեղադրանս : Զերկարոգն մարթ է բացատրել. եւ մեղաց փոխարինել յերկրպագել պատուիրան, մի երբէք 'ի ձեռս անկեալ համարիցես, և անզգամութեան ընկեցես :

(15) Զկատար անիծից : Մի թող տայցես՝ զի Ը եւ յարիցէ տապալումն լինելութեանս, որոյ մինչ մարտնչող սատանայ կամ անդր են չար մեծութեանց. և ծառայից՝ անկարգ յօժարութեանցս. իսկ պատուով զորոց մեղաց : Վասն մի արգահատես, մի 'ի յայն բնութեան, մի երևեցուցանելեր, կամ մի արգելանացուցանէր զհրաշս ողորմածի, զհատուցումն զործոց մեղաց : Այսպէս երևելի 'ի մեղաւոր յարուցեալն. ասէ իմն զի մի ընդ նոցա մերձաւ կին ընկեցէ և խաւար յարութեանն :

(16) 'Ի Հիւանդս երկրպագեալ : Նմանութիւն սաղմոսի՝ չկարել ձգել եւ մի ըստ մասին զգործս մեղաց. զի որպէս կառքն տառապալից կարել կարէ ինչ, 'ի մեռելոյ մնացորդաց համբարելոյ մի, երկու, եւն :

(17) Մէջ նաւապետի : Մէջ նաւաց կամ սակաւ մայրեղենաց անդրանորդ նաւուցս՝ պատուհասաւորական բարկութեան առաջ ինձ կարասանել. մի զանխելաձանն փոտեալ 'ի սակաւ ժամանակիս առաջնոր ինձ վճարել. մի զանսասխատ կենդանութեան հոգևոր առաքինութեան փոխել :

(18) Զխոնարհ կենցաղոյս : Զինչ եւ զատուծանելի անդր կենաց աշխարհի՝ մի համարեցայս ինձ բաւական հանգիստ : Կամ, մի թողուր թէ զայս ցուցեալ զայս կենցաղ՝ որ իբր կամեցեալ է անցաւորն 'ի հանդերձեալ կեանս, համարեցայց ինձ աւետիս հանգստեան :

(19) Զհոգւոյ հանձարոյս : Զվերաստեղծական նմանս մի թողցես 'ի խաւարի, որով անձնանութ մտացեալ խոնց մեղաց՝ 'ի հանդերձեալն հաստատական ինձ :

(20) Եթէ փոխիցի : Եթէ անհրաժեշտ ինձ թողցես զմեղսն, մինչ ընդ իս ամէլ, եւ ընդ իս յառնել, նորին բաւական են 'ի մաքրել զհոգիս. առաջին արատաւորեալ կամ բարեկեաց բարիքն՝ անկանել այլ ծառաց զօրել, առաջին զնորոգ եւ անապական առնելն :

(21) Նոր հաստատեսցի : Զի նորոգեսցի բարեպաշտ կարգաւն բնութեան մարմնոյ անդրանիկս. որ ըստ հրաշափառութեան մարմնոյն առ հոգին, եւ զգայութեանցն առ միտսն, եւ մտացն առ Այ, եւ հաստատի նոր մարդ 'ի քեզ :

---

Ներքին յաւելուած երկին հեծութեան՝ նորին հոլովի, առ նոյն տէրս մաղթանաց բանին :

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

## ԲԱՆ. ՀԹ.

ա. Յիշեա՛ տէր, տէր գթութեանց, սիրօղդ իրաւանց՝ ամ ճշմարիտ. նայեա՛ վերստին 'ի բնութեան կերպարան միշտ սխալական. գննեա՛ ինձ դարձեալ՝ զամենընթաց տարածմանն եւեթ արեանս շարժողութեան. բժշկապէս մատիր տեսանել, զի մարդն եմ հաստատեալ մօք խակութեան թերի խորհրդոց՝ յայն ինչ, զոր դու իսկ վկայեցեր տեսօղդ աչէից՝ միայն դու անմահն տուեն խաւարի: Նայեա իրաւունս է դրել՝ ինձ ընդ մեղուցեալսն մարդկօրէն վրիպանաց սխալմամբ՝ պարտեալ կրկին իբր զերկրածին մահացու մարմին, քան բանիդ քում տեւել. քանզի արդարեւ՝ գիտակ իսկ ես, թէ չար է արարն՝ եւ ընդաբոյս չարութիւն մեր, եւ ոչ փափոխեն խորհուրդք մեր յաւիտեանս, ըստ հոգեհանձար իմաստնոյն կանխագէտեալց առակի :

Է. Թեթեւացո³ զանտանելին տանջանացն, որ պատ֊
րաստեալ և մնայ ինձ՝ արկանել զորդիս գեհենին՝ ⁴
զարդ մահուն յաւիտենականի. բարձ զամօթոյս
պարտիս, որ պահեալ է յայտնել Թշուառականիս
յետին ատենին յանդիմանութեան. ⁵ Խրատ խաղա֊
ղութեան յառաջապարգեւ ողորմութեան քո ընծայեցո.
զի մի անտանելիքն ահաւորութեան 'ի ցոյց ինձ ե֊
կեալ կերպարանեսցին, անյոյս տաժանութիւն ընդ կենաց
զղջման առաջի կարգեալ, դատաստանին ահաւոր,
անկաշառ և անխաբելի դատաւորին, ամօթն սոսկա֊
լի, կշտամբանքն սարսափելի, յանդիմանութիւն ան֊
փախչելի, տագնապն անձողոպրելի, պակուցումն
անխրախուսելի, դողումն անմխարելի, լալումն
անսփոփելի, կրճտումն ատամանցն անբժշկելի, ապա֊
կանութիւն անողջանալի, անէծքն սարսափելի՝ ձայնին
քո բանիդ, փակումն դրոյն, և արգելումն ողորմու֊
Թեանն. Որ ⁶ ընդ դալարեացն երկնի՝ և ընդ երկրի
դղրդելն ընդ կարծրութիւն յատակիս, ընդ կուտա֊
կելոյ կոհակաց խռովութեան ծովու երբ փախստեան
կերպ ցուցանելով, մի զմիոյ հետս խափանեսն կապեալ
յերկոցունց. և ⁷ տատանեալ տապանեալ լայնատա֊
րած գետնոյս Թանձրութեան 'ի հիմանց անտի, ընդ
ուժգնակի բախման Թնդելոյ ներքնային խորոց՝ հար֊
Թէ զլերինս, և հալեալ հորդեհին բնութիւք մկնաց
և ամենայն տարերաց գոյից. այլայլին երկինք՝ յա֊
նեղծ փոփոխութիւն, և յեղանակին արարածք տարե֊
րօք իւրովք 'ի նորոգ նմանութիւն. Ծածկուիք զոր֊
ծոցս հրապարակին, և աներեւոյթք կրից մեր յայտ֊
նին. վարք կրօնից ներգործեցելոց՝ ⁸ 'ի մարմինս մեր
նկարին։ Թագաւորն երկնից՝ յատենի նստի, վճիռ
հատուցմանն 'ի ձեռին իւրում։ Ո՜հ ⁹ վայ ինձ եօթ֊
նիցս անդամ կրկին եղկութեան, ընդ չափոյ կշռութեան
այսմ համարու, որ զամբաւութիս Թուաց պարագրէ։
Ո՜ ինչ գործեցից ողբալիս հոգի՝ յայնմ մեծի աւուր
վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառա֊
ջեալ քան զհանդիպումնն. զոր ¹⁰ ամն մարգարէ՝ զօ֊
րինակին նմանութիւն 'ի դէմս բերելով, զճնղ տագ֊
նապի անզերծ փախստեանն նշանակէ ասելովն. զօրա֊
օրինակ եԹէ փախիցուցու ոք 'ի ձեռաց առիւծու,

Եւ պատահեսցէ նմա արջ. և փախուցեալ յերեսաց
արջոյն, և մտանիցէ 'ի տուն, և յեցուսցէ զձեռն
իւր 'ի յորմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ
կրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իրի՝
զտեսիլն քստմնելի, ոչ ապաքէն՝ ասէ, խաւար է օր
տեառն, որ խաւարոյ և մթոյ, որ ամպոյ և մա-
ռախղոյ։

Է. Յորժամ հրեշտակին պահպանողականն [11] կենա-
կից, հզօր սատիկան՝ երաւամբք ամբաստանեսցէ, և
հատուցանօղն ահաւոր՝ արդարութեամբ յանդիմանես-
ցէ։ Ապաստաւորք թագաւորին առանց խնայելոյ խու-
ձապեն, զոմանս 'ի կեանս հրաւիրեն, և զոմանս յա-
մօթն դատապարտեն. կիսոց՝ դէմս լցեալս ծաղու-
ցուցանեն, և ինձ՝ ահարկուս և քստմնելիս երևեցու-
ցանեն. ոմանց՝ պսակս լուսապաձոյձս մատուցանեն,
և այլոց՝ կորուստ մահու բողոքեն. արդարոցն ձայն
աւետեաց, և ինձ գոյժ անվախճան վշտաց։ [12] Յոր-
ժամ առ քարինն՝ մահու յաղթութեան իսպառ մեռա-
նի, և ինձ չարագործիս կրկին յարակայի. ուր դը-
րանն քաղցել՝ ոչ ինչ օգտիցէ, վճար եղեալ դթու-
թեանն առ իս։ Յորժամ [13] դպրութիւնք հրաշիցն զար-
մանալեաց, որ են ծածկեալքն յայժմուցս հառա-
քակաց վարուցն տեսակք՝ մարդկայինն բնութեանս գոր-
ծոց, յաղագս որոյ եղեն գոյութիւնք իմ էից՝ յիւրա-
քանչիւր մարմինս անպակաս գրութեամբ իւրոյն երևին.
և խորութիւնք անձառելցն կնքեցելոց յիմաստից առ-
տեացս՝ առաջի աչաց մերոց կերպարանին։ Ուր
այժմ [14] շահավաճառութիւնք ողբոց և արտասուաց
զերկինս գրաւեն, և անդ իբր զապաժամանս ընդու-
նայնութիւնք՝ արհամարհեալք լքանին. հառաչմունք
հեծութեան ոչ կանխաւ սաստ առաքեալ, չէ երբէք
դատանել անդէն. ողորմութիւնք ճշդով սերմանեալ,
ոչ պայծառ վառմամբ զնան առաջի։ Ուր [15] աս-
պանն նախայանցիցն, և կտակարանն տիրանարգիցն,
և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիմանն եղեալ մե-
ծաձայնս դատախազեն. յորում սոսկալի վայրի՝ ուր
զուխտն կցորդական հայրենի, և ուր զխորանն վկայու-
թեան անտեսիցն, և ուր զարիւն մեծին ոչ՝ ամբաստան
իմն իբրու ացի [16] առաջի իմ տարածանեն։ Ոտան-

Ջանաբանեան բազմապատիկս՝ անձամբ անձին ատենի իսկ պատրաստեցի, ըղձալով մխիթարեցայց. [17] Համառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոցն, որ փառաւորեալքն են երանութեամբ, [18] սարսեն զողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսաց մեծ դատաւորին, ես եղկելիս՝ աւանդակորոյս սատակման որդիս՝ ուր երևեցայց. որ ոչ միայն չեմ պատկելոց, այլ և պատուհասն իմ անտանելի,

և կորուստն անսպառելի :

Է. Բայց [20] արքայեան ամենապարգև՝ զօրութիւն անճառ՝ ձեռն փրկութեան 'ի կորուստ գերելոյս. զի օգնեալ 'ի քէն՝ դարձայց միւսանգամ 'ի դըրանց դժոխոց, ամենապատրաստ հանդերձեալ ամենևին անվտանգելի՝ պրծեալ 'ի պատժոց. տատանօր տեսեալ մտացս իմաստիւ զապագայիցն դիպուածս, բաւականացեալ 'ի լոյր երկիւղին 'ի տագնապէ տանջանաց՝ աչխին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց. և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք խնդրեն 'ի քէն զիս 'ի կերակուր՝ ծախել ատամամբքն դազանութեան. զի զորովայն մահուն լցուցեալ՝ զաւտուստ պարարեալս՝ անդ ձգեալ հալեն, ուր անսպառպահի մնացուած մթերիցն՝ 'ի ծախումն յաւիտենից : Օ՜վ դու միայն բաւես կորզել 'ի ժանեաց սատակման՝ 'ի կեանս և յերանութի, ընաւից ապաւէն թագաւոր լուսոյ՝ տէր իմ քո, օրհնեալ յաւիտեանս.

ամէն :

---

(1) [illegible] (Ծննդ. Է. 21 :) [illegible]

(2) [illegible]

կամ մտաց, եւ ընդունայն բարութիւն մեր, քննական կամ ՚ի ծննդեանն յաժա-
րութիւն առ չարն. եւ ոչ գործոցն խորհրդոց մեր. խորհրդոյն ասացեալ է
՚ի մարմնոյ եւ յարենէ՝ ոչ փոփոխմանն ՚ի չարէն, այսինքն մինչ ՚ի չարն
հակառակութեան: Զայս բան առաջ իմաստութեան ( Իմաստ. ժէ. 10.)
զբանականացն՝ վասն մանաւանդ պատճառի անմեղին, ընդ որով անմեղաց
էին. որպէս եւ յայտ է զինի. ( Հռովմ. 11.) «Զի ողորմեսցի ամենեցուն էր
՚ի սկզբանէ. ‖ (Ըստ ծննդոց. Թ. 25:) Եւ նա վարդապետեաց յարգանդէ
զայն առ ամենայն մարդկանէ՝ առաջ ընդհանուր պատճառի սկզբնականին
մեղաց:

(3) Զատուցեալ փառաւորութեան: Զծանօթութեան յաւիտենականն առաջնորդեալ՝
Եւեւնոյն, այսինքն բարձր լինելն քաւութեան մեղաց. կամ, նուաճեալ փա-
խուցեալ ՚ի ժամանակաւոր առաջնորդս:

(4) Զարդ մահուն: Եւս որպէս զմեհենի, որ վասն մեղաց եւ խոր գլուխ.
այսինքն պատուիրանաւոր նոյն յաւիտենից պարտաւորութեան, որպէս
գոյն է զարդ կախարդանաց:

(5) Խորան խաղաղութեան: Պատուհաս հաշտութեան ընդ քեզ՝ այժմէն քա-
ղցրութեամբ ամ ՚ի մերոյ իմ. զի մի՛ անփառնելիքն ահաւորութեան, երկիւ-
ղալիքն ահաւոր մեծութեան քո կամ զառաստաւորից. կամ, զի մի՛ ահա-
ւոր անտանելիքն յանդիման աչացս երկեալ երեւեցին. անյապաղ առաջա-
թեն ընդ կենաց գլխոյն, փոխանակ կենսարար զգեստուն առաջին զինելով:
Այն անտանելիքն են դարպասն ահաւոր, եւն:

(6) Ընդ գաւառէն երբին: Գաղտնութեան երկնից՝ խորհրդականն յայտ եւ այլ
մեզ առաւել է ՚ի վարդապետաց. ( ՚ի մեկնիչ. յայտն. Դ. 14:) ամենայն
զերկրորդ գաղտնաւորքն խնամակալով, եւ այլոց՝ զհրեշտակաց մշտակերպ Է
կործանման երկրի. եւ կեանց՝ զեկեղեցւոյ անյայտնին յառաջ նոցին:
Բայց ըստ ճշմարտին տեղեկութիւն խնամոյն մեկնիչք զհաւատարմութեան եւ զարգանալ
Թարգմ եւ մթագին ամենայն զերկրայքն երկնից. որովք խաղաղ ծածկին իւրն
զմտադրեալ փաթութեան. եւ լուսաւորքն՝ որք իւր գրուածք են ՚ի առա-
ջնորդութեան երկնից, անհրաժեշտ լինին: Կամ, գաղտնութեան իմն զաղացա
խոյս ամենայն, որք ՚ի մեկնաւս շղթայակերպով երեւեցուցանեն զերկրին
գաւառին: Ընդ որս եւ երկնից գրգռելոյ, շարժի ընդ նորոգուք յարափոխ,
՚ի այնպիսութեան իւրում իբրեւ ՚ի խառնելով ծովու, յորում կոհակք կամ
ալիք դիզացեալք իբրեւ փոխելով ցուցանեն, բայց զհոգեւորք մեկնաւոր՝
կազմին:

(7) Տապանէ տանելոց լայնատարած Գեդէոնի բանիցու թեան: 2 մեկն. փառա-
ւորն առանց լայնատարած Գեդէոնի բանիցութեան: Այն շարժման երկրի՝
ոչ իբրեւ զմնական գեղեցկաշարժս՝ լինի ՚ի մանաւանդ մեղաց, կամ առ
երեւոյթ գեղեցկոյս. այլ բովանդակ հողագործութեամբ ամենայն Թանձրութեան
զօրութեան, ՚ի նմաքին խորոց անտի գործոյն հողոյ ուժգին յարուցանել
լով. որով լերինք առաջնոյն, եւ հովին բնութեան վիճող, ՚ի ծծմբագործու-
հրոյ. կամ հովիւ առէ զմանր փշրելին. եւ այլքեալ եղծանին բնութեանց
փոխելոց գոյից. այսինքն զոյացեալքն ՚ի առարկայից, որք են բաղադրեալքն
՚ի նոյնանց. զի բան առարկայքն մարմնոյ միայն ՚ի հոգւոյն, եւ ոչ առարկա-
նոյն: Այսպիսին եղիցի, երկնից երկնից կամ օդոյ մարմնոյն յառաջ խառ-
նութեան. եւ մնան այնուհետեւ յաւէտ եւ անեղծ. եւ յեղանակին ուղղութ.
փոփոխման նոյնութեան առաջադրեալ՝ փոխեցոյ նորոյ, բաղադրեալ սկզբնաւորք
խոհեմնից, ՚ի նորոգ նմանութեան, ՚ի նոր կերպարան. որով խնամի՝ թէ մարմ-
նաւորքս ամենայն կերպարանափոխ լինին:

(8) ՚Ի մարմնոյ մեր: Գործք արդարոց եւ մեղաւորաց երեւին ՚ի մարմնին
խոստովանելով առաջադիր նշանօք ուրախութեան եւ տրտմութեան, զոր է այ-
լով կա նշանօք՝ որպէս ՚ի կայծին ցուցանէ: Այլպէս մասամբ կամ մարմ-

[illegible] իւրաքանչիւր կրօնից կամ կարգաց՝ [illegible] գործովք [illegible] , [illegible] երկինս և երկիր. և իւրա-քանչիւր այր թէ [illegible] գործեալ լիցի՝ և կամ հակառակ՝ [illegible] : Ընդ երկնից [illegible] , և [illegible] հա-[illegible] 'ի [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] [illegible] :

(9) Վա՛յ ինչ եղեւ իմ : Յոհան. Ը. 13. [illegible] երկիր. [illegible] , թէ [illegible] երկիր, և թէ [illegible] կամ, [illegible] : Այս [illegible] ԲԾ. ԲԾ. 6 :

(10) Որ մարգարէ : Այսինքն [illegible] . ( Ի. 19. 20. ) [illegible] օր [illegible] , [illegible] . ( [illegible] . 15 : )

(11) Կենդանի : Այսու [illegible] թէ [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] 'ի [illegible] . [illegible] է [illegible] :

(12) Յերեւեալ առ Տաճարն : Յայտնեալ 'ի [illegible] , [illegible] , [illegible] 'ի [illegible] : Իսկ ինչ [illegible] , այսինքն [illegible] , [illegible] . [illegible] , [illegible] 'ի [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] 'ի [illegible] . [illegible] , [illegible] 'ի [illegible] , [illegible] 'ի [illegible] :

(13) Դղրդումն եղաւ : Մ[illegible] գործոց [illegible] թէ [illegible] , և թէ [illegible] . [illegible] , [illegible] 'ի [illegible] : Այս [illegible] իւրաքանչիւրոցն , [illegible] 'ի [illegible] իւրաքանչիւրոց : Եւ [illegible] , կամ [illegible] . [illegible] . [illegible] , և [illegible] . [illegible] , [illegible] . [illegible] : Այս [illegible] , այսինքն 'ի [illegible] իւրաքանչիւրոց , այլ և 'ի [illegible] , [illegible] , [illegible] 'ի [illegible] : Որ [illegible] թէ [illegible] , [illegible] . [illegible] , և թէ [illegible] 'ի [illegible] կամ 'ի [illegible] : Եւ [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , [illegible] , և

ամբողջականաց միաբանութեանց, եւն, որք անձամբք են յայտնի մեր գիտու-
թեան, անդ 'ի գաղտնութեանն յայտնապէս ծանիցեն : Եւ այնպէս զորդիս
մարդոյն՝ եւ զորդիս իւր երկրաւորին իբրեւ երկրաւ ընտրեաց, յորոց մերոյ կատ-
արեալ իւր գաղտնեացն զմարդիկ : ( Առաքել . Դ . 1 . եւ Ժգ . 4 : ) Ցայտ խոհս
եւ զբանագիտ . ( Ընդ . 7 : ) * Արդարութեանք քո որպէս լերինք ած, իրա-
ւունքը քո՝ որպէս խորս բազում : ||

(14) Շահախնդրութիւն աղէտոյ : 2 օրէն. եւ 'ի հեռ ընդ . վաճառաշահութիւն :
Որք այժմ շահեկանութեան որոց զգեստն զերծեալս կարգեն առանձնաբար, անդ
յետ սորա կեանս իւր զապաժանման ընդունայնութիւն, իբրեւ զանձնագանն հաղ-
ւական, կամ ոչ 'ի պատշաճ ժամու արարեալ անօգուտ գործոյ՝ արգահա-
տարահին :

(15) Տօղանն նախադասութեան : Տօղանն նոյն երկրացի 'ի յանդիմանութիւն
առաւելին յանցաւորացն 'ի բնական օրէնսն : Ի կթանկարանն՝ փիլանդրփիլն .
նախատանք օրինացն մտաւորի երկրացին հրէիցն անարգաբար զգետ . որք
եւ խաչն քնի երկրացի այժմուս, քրիստոնէից՝ որք 'ի նոր օրէնս : Զեռա-
ցուցանէ զանաւիլ առանձին քնի իւր բանասերն՝ ըստ օրինակի նկարչաց,
որք զնոյ երկրացուցանէին առաքելոյն, եւ զմտաւոր՝ ասխատակաքն : Արդ
թէ ոչ՝ նոյն բնական առաքելոյն՝ եւ ասխատակաքն ոչ մնան միջեւ յոր գաղտ-
նութեան, բայց 'ի խաչափայտեն քնի . զոր յաւետարանէ զխաւարք մաղ
եւ երեւել 'ի գաղտնութեանն : Եղանիլնան 'ի վերայ մտաւորի առնէ ըստ անձանց
կարծեաց՝ եւ վասն աստուածայոց մտաւոր երեւել յայնժամ . այնպէս եւ
վասն նոյնեան առաքելոյն առնի 'ի գիրս ինչ՝ կարգաւորս լինել հանդերձեալ
ասացուն : Բայց այսպէսի յանդիմանութեանց կարգի են : Արդ մեր այս
վարդապետութիւն է, թէ նոյ բնական օրինացն՝ ( զոր կոչէ՝ ասխար հաջէնդ , )
յանդիմանէ զառաւելին միաբանեալսն . եւ մտաւոր՝ նաեւ գրաւորական օրէ-
նացն կշտամբէ զհրէայսն . եւ քն նաեւ աւետարանական օրինացն՝ զքրիս-
տոնեայս : Իսկ ինձ առնէ՝ երեքին եւս գաղտնեալ լինին . զի երկրաւն եւս
խորհրդոց, եւ յերկրին երկնաւոր վայելեալ, եւ ոչ աղքատաց :

(16) Աղօղին իմ փարածանեն : Զքանզիանարանն բաղձմաղափիւ՝ անյանէ .
եւն : 2 օրէն . այսպէս զնեն . աղօղին իմ փարածանեն , զքանզիանարանն բաղ-
ձմաղափիւ , զոր անյանէ անյին տափէն իւղ պարզափեղի : Զինէր մինեաւէ
ցայց , եւն . որ այսպէս խմանի . զերկրաւին օրէնսն առաւելի իմ աստուածանանն
իբրեւ բաղձմաղաւորի ամենեքեան , զորս անձամբ խմել աստ ինձ արտաքաս-
ացի : Վասն որոյ զխափիլ միաբանութեանց , եւն :

(17) Հանառօտեղը յաւող : արտաքսանեալս 'ի յաւողյ : տե՛ս 'ի բանին Ճ .
Ը . 1 :

(18) Մարմնն գաղալով : Դաղաղն հրեշտակաց եւ այլ՝ խմանի արտաքսեալ
արդիւնապէս յանհամար մեծութէ գաղտնութեան, եւ ոչ յերկինքն գաղտ-
նութեան իւր յանցաւոր կամ զատեալ : Այսու օրինակաւ խոսի եւ առաք-
եալսան ( Հռով . Ժ . առ Թեսաղոնիկեցւոց մեծութեանն . ) վասն ընդհանուր գաղ-
տնութեան . * Երկնից անհնարին արարչութեանց զնոյն խոկ հրեշտակս, եւ
ոչ միայն զհրեշտակս, այլ եւ զհրեշտակապետս, զաթոռս, զտէրութիւնս .
զիշխանութիւնս, եւ զզօրութիւնս . զի առնէ՝ զօրութիւնք երկնից շարժեսցին .
վասն զի ծառայականք նոցա պատիժս ընդունելոց են վասն անցելոց կեն-
ցաց խորհրդոց : || Նա նորին առաքելականն . Թղթ . Ը . առ Ողիմպիադա առնէ
վասն հրեշտակաց . * Զի թէպէտեւ միոյ երկինք յանցանաց խոզդ ոչ ու-
նին, եւ ոչ 'ի գաղտնութեան մտանելոց են, սակայն ամենայն 'ի հարցան
փորձի զընդհանուր ազգ մարդկան եւ զաւելին անհնարինս, ոչ առանց
երկեղի կան առաջնոր : ||

(19) Արտփեռ : Կանխեցոյ յառաջ քան զօր գաղտնութեանն՝ յէան էրր-
խամէ, զօդնութեան փրկութեան . որով դարձոյց ճառանգան, որպէս յայլ

[illegible] ... 'ի ... 'ի ... և ... 'ի ... և ... 'ի ... 'ի գծագիր հօրէնցին, և ... ծածկեցին :

---

[1] Սերովբէն յանդըրանած կըկէն հեծուն՝ նորէն հօնող, ... նորին
աղերս մաղթանաց բանի :
'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Ա՛յ :

# ԲԱՆ. Զ.

Ա՛. Եւ որդ. 'ի վերայ այդքանեաց [1] յուսահատու-
թեանց և աճարկու որոտաբեկութեանց, պակու-
ցանողական սոսկութեանց ա՛ծային բարկութեանց, տագ-
նապեալ ոգւով թախծութեան խռովս, աղաչեմ ըզ-
քեզ որ ա՛ծածին : Հրեշտակ 'ի մարդկանէ. մարմ-
նատեսիլ քերովբէ. երկնաւոր արքայուհի. ան-
խառն իբրև օդ. մաքուր որպէս լոյս. [2] անշաղախ
ըստ նմանութեան պատկերի արուսեկին բարձրութեան.
գերազանց քան զըմնականութիւն [3] անկոխելին սրբութեանց.
երանաւոր խոստմամբն տեղի. եդեմ շնչական. ծառ
կենացն անմահից [4] բոցեղէն սրովն պարսպեալ. 'ի
բարձրելոյն հօրէ զօրացեալ և հովանացեալ, հանգ-
ստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրագործեալ,
բնակութեամբ որդւոյն յարդարեալ և տաղաւարեալ:
Միածինն հօր՝ և քեզ անդրանիկ. որդին քո ծնըն-
դեամբ՝ և տէր արարչութեամբ: Ընդ անաղտ [5] մաքրու-
թեանդ՝ և անբիծ բարի. ընդ անարատ սրբութեանդ՝ և
խնամակալ բարերարս. ընկալ զմաղթանս այսոր աղեր-
սանաց՝ [6] քում դաւանողիս, և մատո ընծայեալ ընդ-
ունելի պատնեալ [7] զբանս իմ նախնի՝ մեծիդ ներբողի՝
'ի քոյդ պաղատանս: Հիւսեալ միացեալ զմեղուցելոյս
դառն հեծութիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ
հայցուածոց՝ տուընկդ կենաց պտղոյն օրհնութեան. զի
'ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և 'ի մաքրա-
կան քո ծնելութենդ ապաւինեալ և լուսաւորեալ,

կեցի՛ց քո՛ի որդւոյ քոյ և մե՛ր ։

Զ. Ո՛ժանդակեամ թևոցդ աղօթիւք՝ խոստովա-
նեալ[8] մայրդ կենդանեաց՝ և ելիցն իմ յերկրէս հով-
տէ, առանց ըլկանաց հետևել 'ի կեանս օթեվանացդ
պատրաստուն. զի թեթևացի կատարածն իմ ինձ
ծանրացելոյս անօրէնութեամբ ։ Ն՛րբացեա առն ինձ բեր-
կրութե՛ զօրն իմ տագնապի՝ ողջացուցիչ երկանցն
եւայի. բարեխօսեա խնդրեամ աղաչեամ, զի ըստ ան-
ճառելի մաքրութեանդ և ահա զբանիդ հաւատամ
զընդունելութի ։ 9 Ն՛րբասուք օգնեա վտանգեցե-
լոյս՝ գովեալդ 'ի կանայս. ծնունդ խոնարհեցո առ իմ
հաշտութի ծնօղդ ա՛յ. ընդ իմում թշուառիս հոգամ
խորամն բարձրելոյն. ձեռն տուր անկելոյս տաճար
երկնայինն. փառաւորեալ զորդիդ քո 'ի քեզ՝ 10 ա՛ճա-
բէն ինձ հրաշագործել քաւութի և ողորմութի աղա-
խին ա՛յ և մայր. բարձրասցի պատիւ քո ինև, և
ցուցցի փրկութի իմ քև ։

Է. Ն՛թէ զիս գտցես տիրամայր. 11 թէ ինձ ողոր-
մեսցիս՝ մ(ա)րբուհի. թէ զկորուսեալս շահեսցիս՝ ան-
նարատ. թէ 12 զհարթուցեալս յանձանձեսցես՝ ան-
ջանիկ. թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բա-
րեշնորհ. թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝
միշտ 'ոչ կոյս. թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մե-
ծարեալդ ա՛յ. թէ յիս ցուցցես զգթածութիւն՝
լուծիչդ անիծից. թէ զծփեալս հաստատեսցես՝
հանգիստ. թէ 'ի խռովութեանցս յուզմանց փա-
խուսցես զիս՝ խաղաղարար. թէ վրիպելոյս ինձ հնա-
րաւորեսցես՝ գովեալ. թէ վասն իմ 13 մնասցես 'ի հան-
դէս՝ մահու նահանջիչ. թէ զդառնութիւս իմ անու-
շեսցես քաղցրութի. թէ զբաժանմանն իմ խորոց
քակտեսցես՝ հաշտութիւն. թէ զանմաքրութիւս իմ
բարձցես՝ եղծմանն ընդունիչ. թէ զմատնեալս մահու
փրկեսցես՝ կենդանի լոյս. թէ զլալեացս ձայն հա-
ցես՝ բերկրութի. թէ զխորտակեալս կազդուրես-
ցես՝ դեղ կենաց. թէ 'ի կործանեալս յիս անշար-
կեսցես՝ հիմնելից. թէ ողորմութ ինձ պատահեսցես՝
14 կոյսն նուիրեալ, օրհնեալդ միայն 'ի շքեղութեան ան-
բիծս լեզուաց երջանկաց. ահա 15 կաթիլ մի կաթին
քումդ կուսութե՝ յանձն իմ անձրևեալ՝ կենաց ինձ

զօրէ, մայրդ բարձրելոյ նոյն քո արարչին երկնի և բնաւորին երկրի: Ո՛ որ անճառապէս ծնար [16] բովանդակ մարմնովն և համայն աստուածութեամբ, որ փառաւորեալն ես ընդ Հօր և Հոգւոյն սրբոյ էութեամբ, և անքննութեամբ մերոյին բնութեանս միացելով, [17] ամենային՝ և յամենայնում, մի յերրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն:

---

(1) Յաստուածաբանեանց: 'Ի վերայ այսքան յաւատահաւանչ խորոց և գիտութեան-ծոց, և պատմութեանց ողորմելեանց, ըստ նմին ասաց, և սպրդաբանութեանց ասացեալներ, սպասաւորելոյ, որք միայն խոհ յամբողջին բարեկութեան յաւ-հեռ պատասխանատուն, այժմ ընդունելով ասպարութեամբ, թէպէտև պարզապես-ցի ու գիտութեան Աւգ սովորաբար զոր յանկարծ կորուսանէին, բայց երկրորդ-չափ զուգեալ վասն անպարփակութեան չլինելով ընկեր. վասն այսորիկ ա-ռաւելագոյն 'ի քո միջնորդութեան, առաջին գիրք են: Ցոյցս բարեկամ յաստուածաբանը, յաստուածաբանեան, կամ անյայտ լինելոյ, անյօսածնեան, և հեթանոսաց ասացին, գիտելի է, զի պէտսպէս օրինակաւ վարքն 'ի գիրս. երկրորդ նշա-նակեն զյաւատահաւատցն խոս. երկրորդ զմեծ զօրութեան խորոց. երկրորդ զմեծ և զաստուածային արարածութեան: Բայց յառաջագոյն նշանակեն զբա-ժանումն բաղձալական մասին մարդոյ 'ի բարւոյն՝ զոր չէ հնար ասացեալ. և ըստ զանազանութեան բարեկացն՝ և անհնարութեանց նոցա, յաստուածատու-թեան եւս լինի բարի և օրինաւոր, կամ անբարի և անպատշաճ: Եթէ հայի 'ի գերբնական բարիս փրկութեան՝ իբր անհնարին ու ասացեալ նաև զօրութեամբ իւր, միշտ է չար, և մեղք ընդդէմ հոգւոյն սրբոյ: Իսկ առաջին յայտ է թէ ոչ ըստ այսմ մասին 'ի կիր առնու նա վարդապետս, որ առնէ նոյն ուրեք խոստովանի զմեծ կարող ամենայն անհնարից, և միշտ հայցէ զգիտութիւն և զփրկութեան: (տես 'ի բանն ժա:) Իսկ եթէ յաստուածատու-թեան հայի 'ի բնական բարիս՝ իբր անհնարին բնական զօրութեամբ, կամ 'ի գերբնականն բարիս՝ իբր անհնարին մարդկային զօրութեամբ. կամ նաև ընդ կարողի հասարակ նախախնամութեան իւր, ըստ այսմ յաստուածատութիւնն բարի է և օրինաւոր՝ յորժամ անհնարութեան ճշմարիտ է: Իսկ յայս մասն խոստովանի է՝ ուր ուրեք նա վարդապետս զինքեան, կամ զայլոց կենդանի միջնորդաց զնէ յաստուածատուտ կամ սրտակաւանդ 'ի յաւէտ. որպէս 'ի բանն հա. կ. 'ի վերջն. Հրեշտակաց յաստուածատուութիւն: և հը. ա. յանձնելով ձայնիւ յաստուածատութեան: և հթ. 3. հանդստեանն յաւէտ: և ասա. 3. Թէ յաստուածատութեան ինչ միջնորդութեանն: ըստ այսմ և լա. 3: ժը. 1: խը. ա: Վասն զի ծանրութեան մեղացն՝ զոր խոստովանի, յանձնառութեան փրկ-ծութեանց և որդեգրութեան առատութեան, զերագանցութեան 'ի մեղս, առաջ-նախնութեան մարդոյն, արդարութեան իւր, են. այս եւս անհնար առնէին զաղաչանս մեր յայտնութեան՝ ոչ միայն մարդկային զօրութեամբ, այլ և բա-զում անգամ ըստ հասարակ օրինաց նախախնամութեան իւր. ուստի յորժամ կորուսանէ յաստուածատութեան նկարագրի 'ի մեղացն. բայց քանզի սովորեալ կարող է նա բազմապատկութեամբ, և անբաւ ողորմութեան կամի և խոստա-նայ առաջ ճշմարիտ հայցողացն, վասն այսորիկ միայն առնելի յաւէտ խոստն ընդ երկիւղի: Թող զի ամբարտաւան ընդ կիրս յաստուածատութեան կից զա-րդ արդարութեան, և ըստ մեծութեան յաստուածատութեան՝ մեծ արդարութեան, նմին իրի բարեւմ անգամ յաստուածատութեան նշանակէ առաւելեալ արդարութեան, և յաստուածատութեան նշանակէ՝ կարելի արդարանալ, փրկել, և այլն: Զայս հա-

մտաւորս ծառայութեան, ոչ միայն վասն բանից այդ վարդապետութեան, այլ և վասն այլ դիւրաց՝ յորս գտանէին պատուհաս բառւք. որպէս և այն՝ որ 'ի շնորհականն յաջողութեան առէ: * Մեծք խոհեցելոյն, զի՞ լուս յուսահատեալ, || ուր յայտնապէս զբնական յաւուրն խօսէ՝ որով անհնարին էր բնական ճանապարհաւ կենդանի առնանել զորդի իւր. յորմէ և անհնարին թուէր ծնանել կոյս. և ոչ եթէ զգերբնականն կամ զանձրացուցականն յաւուրն, որոյ սահմանութիւն միայն է մեղք ընդդէմ հոգւոյն սրբոյ: Իսկ զայս այլազգ ե-մանաւոր՝ այնպէս խառնիւրաւ է, որպէս եթէ ոք զաւակն առաքելոյն. (Բ. Կորն. Ա. 8.) * Մինչև անյոյս լինելոյ մեզ և 'ի կենաց, || խոնարհեցէ՝ անյոյս լինել 'ի զօրութենէն իւր, կամ 'ի յաւիտենական կենաց, ուր բանն է զօրաւորէ 'ի նուաղութեան բնական ճանապարհաւ: Վասն որոյ զյուսահատն է՝ զի մի՛ ոք ապախտաւոր այլ է՞ այլ խոնարհեցէ զաւակից զգեստուն, կամ առաքանիցէ զզբօսուն, որով զանձն ապէտ յուսացանիցէ:

(2) Անշուշտ: Մաքրաբար, յատուկ՝ իբրև զանխափ աստուածային բարձրութեան. այսինքն առանց աստուծոյ, յորժամ բարձր է, և յաստուծոյ ընդ աստուածային:

(3) Անխափան արփոյնց: Վասն զանխափ արդարութեան արդարութեան, ուր ոչ կախէին քահանայքն և ժողովրդեանն: (Երրոր. Թ. Դ.) և նա կոյսն գերապատիւ առաջ քան զայն, զի առնէր միջնորդամ յանձին մատնէր քահանայութեան՝ մատուցանել զպատիւն անարատից. իսկ 'ի նա կոյսն ոչ երբէք եմուտ մարդ, այլ միայն Տէրն բանն՝ առանցել 'ի նմանէ մարմին:

(4) Բազմերկիր արդեօք: Հինգերորդ պատմաբանութիւն պատմելոյ էր նա կոյսն՝ ոչ զի 'ի խնամոց նորա անհնարին մեծագոյն մարդկային իբրև զծառայ զպատուհասն, այլ զի կուսութիւն նորա անմեկնելի 'ի մարդկանէ լինելոյ, և զօրութիւնն մեծութեան նորա թագաւոր պատմեցից 'ի զինւոր:

(5) Մաքրութեան: Ձ որպէս. Մաքրութեամբ: ընդ անարատ մաքրութեան կուսութեան՝ միանգամայն բարի էր՝ ոչ միայն այլոց առաքինութեանց, այլ և համբերութեամբ զաւակութեան 'ի մեզ: Այսպէս զանազանեալ արդարութիւն ա-նմանեալ, ոչ պատշաճ յանուանք մեղաւորաց, այլ ընդհանուր խնամակալ արդեանց:

(6) Վասն զուարթագին: Որ զատուցանէ զերեւ Մայր իւր, և մինչ կոյս. և առնելոյն ազգաց իմաց զօրեղ բարձրանոց:

(7) Ջերմն իմ նախնի: զԳուամարք խնդրեցին առնէ, զոր առնէր յառաջ յո-լանելով էր լուռ խնդրոյ Սանդղակնեանց մեծաց Եղիսաբեթայ, յորժամ զերկաց զօրութիւն խրատեն Աստուածեանց: Եւ զի այն փառաւորութիւն և շնորհս զինուորաց 'ի նոյն թագաւորին, որպէս առնէ ամենայնի 'ի յերկրաւոր-կարգաւոր, եթէ միով կամ երկու առնելու զինին յօրինեցաւ նախարարանն, զինուոր զայց իբր 18 կամ 20 ամսոց յառաջ արդարեալ քան զաղօթան, որ կատարեցան 'ի Թովքին ՆԾ կամ ՆԾԲ:

(8) Մայրս կենդանեաց: Ձ որպէս. կենդանութեան. այլ որ. կենաց: Օգնական, հեռի 'ի Թիֆլիսիս Եւեայց արծիւր, բարեխառնագոյն աղօթիւք. կամ փառաւորութեանն հայոցս՝ Թեաւղ աղօթից, խմբեալ եղանակեալ յարմարեալ՝ տե՛ղ անդրանիկն, զոր խառնասուլանեալ ճշմարտեալ մայր կենդանեաց կամ կենդանութեան՝ փոխանակ Եւայի, որ եղև առաւել մայր մեռելոց: Որպէս զի եղեւ իմն առանց մեղաց և առաջնորդ եղանել զնոր 'ի կենաց օթեւանաց պարգեւարարին. իմն փառաւորութիւն հոգւոյս, այսինքն զնոր 'ի պատրաստեալ օթեւանս կենացն. որով զանէ կատարեալ կենացս մահու՝ թեթևանայցէ իմն, զիւրանայցէ, որ 'ի կենդանութեան ծառայութեան մե-ղաց: Անյնպէս զի որ մահուան՝ որ ապաշխարեցուցիչն է, ընդ վասն իմ ամենայն ծնունդն. և այս չէ՞ քեզ զժուարին կամ անհնարին. քանզի զգա ալք լսողացն կամ բարձող զոլով երկանց՝ ցաւոցն Եւայի, լուս նմին և զառաջնորդ մահու՝ որ եղև 'ի մեզ յանխծից նորա՝ կարող ես 'ի ծնունդն

[illegible] ։ Այլ [illegible] ։ [illegible]

(9) Ա[illegible] ։ [illegible] ։ Այլ [illegible] ։ Զ[illegible] ։ [illegible]

(10) Ա[illegible] ։ [illegible]

(11) Թ[illegible] ։ [illegible] ։ Մ[illegible] ։ Ց[illegible] ։ Ե[illegible] ։ Այլ [illegible] ։

(12) Զ[illegible] ։ [illegible] ։

(13) Մ[illegible] ։ [illegible] ։

(14) Կ[illegible] ։ Կ[illegible] ։ Կ[illegible] ։ Այլ[illegible] ։ Ա[illegible] ։

(15) Կ[illegible] ։ Ա[illegible] ։ Մ[illegible]

մեղելոյս. խոնարհեալ մի եւեթ կամաւորն զթութեն զօրէ ատենաւ յիս կեանս վասն իմ. կամ, կամաւորն վարուցս մի միայն առաջնորդութեան յանձն իմ կերպարանելով՝ բաւականն առ 'ի կեանս է ինձ։

(16) Բազմակերպ խորհուրդ։ Զառաջինն առանձնային ծնունդ ասելով մարդկեղէն բնութեան, և համայն մեղաւորն, անձնովն և վերստացեալ ազնուութեն. որ և փառաւորեալ է ընդ հօր և հոգւոյն այժմ՝ ոչ միայն ազգին եղելութեամբն, այլ մարդկային բնութեանս միացելով յանձն նորա. զի որպէս 'ի կուսէդ մարդկային Ած ծնեալ, նոյնպէս ազգութեն 'ի հօրէ՝ մարդ փառաւորեալ հօր։

(17) Աստուծոյ և յայտնութ։ տես 'ի բանն ՂԶ. ԺԲ. 6։

Սերոբէին յաւերժական կրկին հեծուն՝ նորին հօրոյն, առ Նորին անիրա մաղթանաց բանի։

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ՁԱ.

Ա. Ընդ անծանօթին մաղթանաց՝ ահա և զմերանցն անմահ հրեշտակացն լուսակերպից զազդերս հայցուածոց, որ վասն իմ զուշեն առանց լռելոյ հանապազորդեան արդարահատութե[1] մաքուր բերանոց՝ ընկալ բարեգութ։ Որք են բարիք բարեգործեալք 'ի բարերարէդ՝[2] անկիրթք չարեաց, հաստեալք յամենիշխան հրամանաց էիդ. զօրութիք հզօրք՝ անմարմնութե բարձրելոյդ. մեծք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթօղք և անպարտելիք. և ըստ ընթացից տեսութե մտաց՝ արդարութիք։

Բ. Որք և պատշաճորոյս անկոյ թղենւոյն[3] եռամեծանե դատարկութե, որ զմնաւ յաւիտեանս պարունակէ ժամանակն՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութեն յերկարաձգելոյ՝ յայգի աշխարհիս արմատացելոյ, սին տաղարթիւն պտղուղելոյ՝ զրկեալ 'ի պտղոց, որ է ճշգրիտ պատկեր թշուառ մարդկութեն, ուրք բարեխօսք՝ հանդերձիչք՝ այլ և խնամակալք. որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում[4] կրիցս կարեկցելով, բարեմասնութե մեր ապաւեն. և[5] յաւիտենականն կենդանութե փրկութե մեր աղօթեն՝ զայս բան առնելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ։ Քանզի արդարև[6] մեր են այս աղաչանք 'ի բարերարէդ. որ վասն մեր կարգեալ առ Նոսա. զի[7] նոքա բանիւ են առեալ

ծեալ, և մեք ձեռամբ ներգործեալ: Որք և գալոց են
ընդ միածնիդ՝ վկայք ստուգալի դատաստանին հա-
տուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորու-
թե երկրայնոցս, յահաւորին ատենի՝ յայտնիչք իրա-
ւամբք զմատակարարութին՝ որ առ մեզ. [8] որ և ան-
տանօր կարեկցեն ազդեալ հառաչմամբ զմշտանուէրն
նուագ ձայնի, ողորմեա՛ դու ստեղծեր, մի՛ կորու-
սաներ:

Է. Արդ՝ ընդ գոհաբանութե ձայնից խնդրուա-
ծոց՝ անմահականացն վեհից՝ և ՚ի մեր հեծութիս հա-
տատեսցիս՝ ընաւէից արարիչ, որ [9] յաղթես զթութե
քո վերնոցն և ստորնայնոցս. քանզի քո՛ է բարերա-
րելդ առ մեզ և առ նոսին: Արդ՝ վասն [10] բարե-
զարդութե անախտականացն, հրաշատեսիլ հրակեր-
պիցն, անշաղախ մաքրոցն, անմեղիցն, բոցանիւ-
թիցն, հոգեղինացն, և անվանելեացն. [11] ամենաձե-
ցուն առաւելութե ՚ի բարձրն ընտրականութե գե-
րափայլ յաճախ գիտութե՝ անցաւոր ջերմութե ջե-
ռուցանօղք՝ խնքնաբուն տապովն ա͞ծսիրութե ըստ
խնքեանց զմերս սառնասեր սրտիցս անբորբոք շի-
ջուցին, այրել անաղօտ ՚ի մեծախորհուրդ սրբում սե-
ղանին՝ որ ՚ի խորանին, առանց նիրհելոյ և դանդա-
ղանաց սպասել հրամանաց երանականաց կեցուցիչ
կամաց ամենաստեղծիդ. քրովբէօրէն առաքինութե
յա͞ծ միացեալք անբաժանելի: Որք երկնաւոր պե-
տութիք են մեծք, և զինուորութիք անբիծք ահաւորք,
երկնաւորիդ ա͞յ՝ [12] աղատաղնեայ պաշտօնեայք, ՚ի
յամպոյդ լուսոյ՝ ցոլք նշուղից:

Ը. Որովք և ինձ մեղաւորիս հողեղէնի մարդասի-
րեսցես ողորմել՝ յիսուս [13] աղաչանօք իմոյն հրեշտա-
կի, դարձուցանելով զիս տէր՝ ՚ի բարիդ քո հետս
լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պաշտպանաւն, զոր
հաւատացեր նմին տեսչութե, զընկալեալն ՚ի քէն ՚ի
կենցաղ ստեացս՝ ուրախութբ սրտիւ յիս բերկրեալ,
անմեղադրելի առ ՚ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց
զուարճութբ՝ քեզ արքայ բարձրութե փառաց ան-
հասից՝ ՚ի խրախճանս կենդանախումբս բերկրեցե-
լոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ՝ գովեալ
ողորմած: Եւ քեզ անքնին ընդ հօր անհասի՝ թուա-

կցուԹի հոգւոյդ անձառուն՝ վայելէ փառք պատիւ և երկրպագուԹի, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

(1) Մաքուր Բերանոց: Բերանք հրեշտակաց՝ են միտք նոցա, [illegible] Ամենասուրբ [illegible] Աստուծոյ [illegible] Տէր [illegible] հրեշտակաց՝ [illegible] նոցա:

(2) Անլռելի Լեզուօք: Ա[illegible] [illegible] հրեշտակաց [illegible] հրեշտակք [illegible] նոցա [illegible] հրեշտակք [illegible] յայլ [illegible]:

(3) Երամական Պարերգութեամբ: [illegible] երկրպագեն [illegible] ( որ է [illegible] ) հրեշտակքն են Քերովբէք ևն:

(4) Կրկնակ Բարեբանութեամբ: [illegible] մերոյ:

(5) Ցնծութեան Լիութեամբ: [illegible] 'ի [illegible]:

(6) Մեր են այս: 'Ի գիտնոց մերոց, [illegible] Աստուծոյ [illegible] հրեշտակաց:

(7) Դրախտ Բանի: Այս [illegible] Թէ հրեշտակք [illegible], և [illegible] է [illegible] և [illegible]. ( Ծննդ. Բ. 6. 21. 22: ) Այսպէս որ [illegible]

[illegible]

(8) [illegible] (Տե՛ս Հրշ. երես. 113. և 291.) [illegible] Ե. 1. "[illegible] ...." և [illegible] Հմ. 3. [illegible] ... [illegible] Եփ. 2. Հբ. 2. 3. [illegible]

(9) [illegible]

(10) [illegible]

(11) [illegible]

[illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

---

Մեկնութիւն յառաջագրեալ ներքին հեծութեան՝ նորին հեղինակի առ նոյն ամենայն մաղթանաց բանի։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ։

# ԲԱՆ. ՁԲ.

ա. Տէր ամծ բարերար բազմապարգեւ Թագաւոր, կենաց պատսպարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զանպատումն, և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչև կատարեցեր զա

ունեցեալն ընդ անմահալիր ծնութեդ ։
ե. Սրբդ՝ վասն առաքելոցն սրբոց յերկնատեղծ քո
ձեռագործ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծելոց,
[2] զորոց զգովեստն արժանաւորութե ըստ իմում կա-
րի՝ առ ՚ի փառս քո տէր ամենայնի՝ յայլում բանի
պաշտեցի, և ինձ ողորմեսցիս [3] յիշատակաւ սրբոյ
նոցին ընտրութե ։ [4] Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հան-
դերձեսցեն յերանութին փափաքելի. ձայն բարի հո-
վուութե նոցին՝ ՚ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուի-
ցի ։ Սամն կալայց [5] ՚ի յանեղծութին փրկութե տօ-
նեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկըզ-
բնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց,
գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշ-
խանացն պանծալեաց, լուսապայծառ Թագիւ պճնե-
լոցն, ՚ի զարդ անկապուտ զօրութե շնորհին պայծա-
ռացելոց, իւղովն զուարթութե տիրական լուսոյն
կատարելոց ։
է. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ
ծոյ քմի՝ և [6] մարտիրոսացն ընտրելոց նահատակութբ,
որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգա-
ւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հո-
ղաղանդուածն բնութբ՝ մարտուցեալ [7] ընդ տարր
դոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և
կենդանացան հոգեպէս. արիաբար ելեալք ՚ի յերկ-
րէ, [8] ըստ մարգարէին, վկայք Քրիստոսի [9] ամենա-
փորձն մահու. իմանալեացն անտեսից և ծածկելոց՝
աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն ատենանկա-
տիչք. աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նո-
ցին. որ [10] հաւասարեալ գործովք ընդ նոսին, կա-
տարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարեն ՚ի խորա-
ճանս անկէան երանութե. որոց հաճոյական և ըն-
դունական մաղթանօք, արիւնընծայ վաստականաւէր
[11] քրտնակնդրուկ աշխատիցն յարգմամբ՝ ընկալ զիս
նորաւ. [12] ըստ նոցին մասին անեղծ փրկութբ ՚ի քեզ
արձանացեալ ։
ը. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ
ներկելոցն, և [13] ճգնաւորացն սրբոց հարցն միանձանց՝
և [14] քեզ հետևելոցն որդւոյ այ, անպարտելի քաջու-
թբ և անպատիր զգաստութբ, ընդ դժնեայ դաւաց

մարմնոյս բռնութեն արխայես մարտուցեալ, ստվերմբ
վանեցին զանմարմինն բելիար. և մշտամարտ հան-
դիսիւ՝ յասպարիսի կենցաղոյ՝ առանց զգուանաց
ծանրաբեռնութեն 'ի լայնածաւալ ծփանաց աշխար-
հիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութեն ըղ-
թեթեւութի հոգւոցն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն
կենաց հասին. և իբր սիրողք [16] վերնում վիճակին՝
առանց յետնոցն մտածութե, զթողն յաղթութե
համարձակապէս՝ պայծառ ճոխութբ պճնեալ խոկա-
պէս՝ 'ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր
մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմե-
ղաւորս 'ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին:
Ե. Այլ և ահա խառնեալ զանմաքուրս բան՝ [16] ընդ
նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսար-
կութի, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճութի, և ես
ընդ նոսին՝ իբր զաւանութի եղեալ ընդ քաղցու,
կամ [17] տատասկ ընդ ողորկութե, տգեղութի ընդ
վայելչութե, և տիղմ ընդ գեղեցկութե մարգար-
տի, կամ հող ընդ յստակութե ոսկւոյ, և կամ քա-
րինս անարգս ընդ պայծառութե արծաթոյ, [18] բա-
ցասութի ընդ ճշմարտութե, [19] կամ աւազ ինչ ա-
տամնառու ընդ կակղութե զանգուածոյ հացի. արդ
լուր՝ հզօր հնարաւոր գովեալ, [20] զնոցայն վասն իմ,
և զիմս ընդ նոսին 'ի նոցին գովեստ, 'ի փրկութիւն
իմ և 'ի փառս քո՝ ամենազօրութ, բարերար, օրհ-
նեալ, երկայնամիտ, կարօղ, անքննին, անճառ,
անեղծ և անստեղծ: Ո՛վ են պարգեւք, քո են շնորհք.
զմե սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի: Ո՛չ ես
դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ
գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես
տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ա-
պրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես
գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ.
ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացու-
ցիչ, այլ մխիթարիչ: Ո՛չ եղծանես, այլ գրես.
ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ատն հարկանես,
այլ սփոփես. [21] ոչ պատճառս յօդես մահու, այլ
հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամն շարժեալ տա-
տապման, այլ 'ի փրկութի ողորմութե: Ո՛չ մասա-

Նեցուկ : տապակ : կէ. 2 :
Նեխար : չար գէշ : մեղուն չհրմանն : ղբ : 9 :
Նժար : Թէրազուին Թասը : Թ. 1 :
Նիւթել : պատրաստել : միաբանակ ընել : Է. 3 :
Նկատ եղանակել : ամչնալ : կեօրմէք . պատկառիլ : կբ. 2 :
Նկարել : նախշել, նկարով քաշել : պատկերենք : ղ. 5 : Նկարեալ յորինուած-
  նի : տղայքին մարմինը ձեւանալ : Ղ. 2 :
Նկուն : ընկած, անճրկած, ակրա չուանող : Ղ. 2 :
Նհանջել, կամ Նահանջել : ետքիլել, ետ քաշել : կէրի չէքմէք : Ղ. 3 :
Նշաւակել : խայտք ու ծաղր ընել : խաքարէթ էթմէք : Ղ. 2 :
Նշկահեալ : անարգուած, մէկ դի ձգած : խբ. 1 :
Նշմար, կամ Նշմարանք : շուշտք, մանցորդ . խը : Ղ. 1 : խէ. 2 : ղ. 3 :
Նշոյլ : շառաւ : շէօհլէ : Է. 2 : ժա. 1 :
Նողկալ : զզուելի ըլլալ : խըյրան, կամ մէհրան օլմաք : ղ. 3 :
Նողկութիւն : զզուելիութիւն, անհաճութիւն : ղբ. 20 :
Նուաղ : տկարանալ խօսք, կամ խօսակ : ժէ. 1 :
Նուաղ : քիչ : ճիւղի : ըբ. 1 :
Նուաճութիւն : տակը ընկած : Թապի, մութըլ : Ղ. 4 :
Նուիրան : պատարագ : հէ. 11 :
Նպաստ : օգնութիւն : եարտըմ : Ծ. 2 :
Նպաստել : փէկրան ձգել : խբ. 3 :
Նպատակ : Նետի նշան : Նիշան, նիշանկահ : Թ. 3 :
Նրբութիւն : բարակութիւն, բարակ բան : ինճէլիք : ղբ : 9 :
Շաղակրատ : լաքարդան, շաթաֆճի : ծղ. 2 :
Շաղկապ : մէկ տեղ կապ : ղբ. 18 :
Շաղկապութիւն : միաբանալը, կապակցելը : պիրլէշմէ : ղբ. 9 :
Շամբ : եղեգնուտ : զամբուղ լըք : Թ. 1 :
Շանդաղդուխ : եաղաքմի ապչ մը է : ղբ. 12 :
Շանթաճանճ : կէնէ : կբ. 3 :
Շանթ : կայծակ : երընդրըմ : Ղ. 3 :
Շառաւիղ : ծիլ : ֆիդան : ժբ. 2 :
Շարադասութիւն : մէկ տեղ դնելը : ղբ. 2 :
Շարաւ : Թարախ : իրին : Ղ. 1 : իբ. 3 :
Շարունակ : կարգ : սըրայ : իբ. 1 : խղ. 2 :
Շաւիղ . ճամբու իղ : իբ. 2 :
Շերտ : փայտի կամ տախտակի կտոր : ղբ. 3 :
Շեղջ : դէզ : երղըն : Ղ. 2 :
Շեփոր : գերեզմանի : Թիւրաք : ըղ. 2 :
Շնչասպառ : շունչը հատցընող, հոգին հանող : (յէշատակարան :)
Շշուկ : մեղմել, մամնամուն : Ծ. 3 :
Շողք : գողողակ : սրուխոր : խբ. 4 :
Շուայտութիւն : ուտել խմելը : մէսթի մուասիլըք : խբ. 3 :
Շուէտականութիւն : արագութիւն : աճելէ : ղբ. 11 :
Շունչ : սոլուխ, նէֆէս : կամ, քամի, հով : բուղխար : Ծ. 2 :
Շուք : չէնք չնորհք : եօալարամ : խէ. 2 : կամ, պատիւ : խրմէթ : ձբ. 4 :
Շտեմարան : ծածուկ տեղ : կիլարը եէր : Ծ. 2 :
Շփոթութիւն ընելոյ : չարար գինեն նէֆէսը բանող : ղ. 1 :
Շփոթանակ : աւելը : ձբ. 3 :
Շփոթկոտութիւն : չարա գինու կամ էթրաֆի եղած բան, ինչպէս պատառ,
  կամ պղպջակ : ղա. 2 : ղբ. 12 :
Շքամուտ : խուզելիշ ըլլալը, շաղալիշ ընելը : ղա. 3 :

շքեղաշուք : սիրուն զարդարեալ : փիքք շէօհրէթլի : դէ. 3 :
Ոգեպարհ : ապրելու կեր : կեչինէճէք : ժէ. 4 :
ոգեպահանջ : հոգին հանօղ : ճան ալըճը : ժը. 6 :
ոգեսպառ : շունչը հատած կամ կորած : նութգու քէսիլմիշ : ծդ. 3 :
ոգորել : կռուելով : չէքիշմէք : թ. 3 :
յոգւոց հանել : ախ ընել : էյնէլմէք : ժթ. 3 :
ոխութիւն : ոխ պահելը : գարէզ : հդ. 3 :
ողկոյզ : կուժ : սալքըմ : ժէ. 1 :
ողողակ : ջրի սաստիկ քալող, ինչպէս հեղեղ, կամ սաղըրըճը : ծե. 2 :
ողողել : խրխալով ընել, կամ սէլի սասկ սանել : ձդ. 6 : ողողել : լուա-
ցուել : կամ սէլով տարուել, ծածկուել : դդ. 11. 24 :
ողորկութիւն : գուր կամ ափող ըլլալը, ափող բան մը : ձե. 5 :
ողորմագէրս : ողորմուկ եալվար ըլլալու : հա. 4 :
ողջք : խնդրուածք : նիաղ. ափլէկ : ժե. 1 :
ողոքական : կակուղ : եավաշ : ե. 1 :
ողոքաւոր : աղօթք ընօղ : տուաճը : ծդ. 4 :
ոճ : ցորենի և այլ նմանեաց մէջ եղած բոյսը, կամ խաշէնքը. և նմանու-
թե, կարգ, սովոր : Ե. 3 : յոճն առաջին. պարզութեան ատեն ջուրը. առ-
ջի ճամբան :
ոսոխ : հասիմ, տուշմանճը : կդ. 2 :
ոստայն : կտաւի թելը, կամ, էօրիւմճէք : է. 3 :
ոստիկան : քեհեայ, միւպաշիր : ծդ. 2 :
ոստիկանութիւն : վերակեցու ըլլալը : միւպաշիրլիք : հե. 12 :
ոստոստումն : ցատկելը : սըչրամաք : գա. 3 :
ոտնալպիրծ : ոտքը սպրդօղ : դդ. 2 :
ոտնատուութիւն : ոտքի արգելք : գա. 3 :
որակութիւն : գոյն : րէնկ : թ. 1 :
որայ : ցորենի կամ գարիի կապոց . թութամ, տէմէթ : ե. 2 :
որոջ : էգ ոչխար կէնճ : լա. 3 :
ուլ : այծու ձագ : քէչի եավրուսու : ժդ. 1 :
ուղեկցել : մէկ ախր երթալ, ճամբայ ցուցընել : հգ. 12 :
ուղեղ : ըղեղ : պէյին : դե. 8 :
ուղերձեալ : ծլած : բուսած, միծցած : ժե. 4 : ժթ. 2 :
ուղէշ : ֆիտան, կամ երկընցած ճուղ : տալ : ժդ. 2 :
ուղի, կամ ուղք : ճամբայ : եօլ : ժա. 1 : կէ. 2 :
ուղխ : սէլ : ծդ. 3 :
ունելիք : մաշայ : լդ. 5 :
ունկի : օնձա, 8 կամ 12 տրէմ : ժդ. 2 :
ունկնդրելոց : անկանջը թըլխոնտիշ ընօղ կամ ըլլած : ծ. 4 :
ունկնդրութիւն, անկաճելուկ : մաղդաս պէօճէկլի . գդ. 14 :
ուշ : միտողութիւն, միտքը հիֆզ, խաթըր : ժդ. 2 : կամ, միտքը : ազլ.
ֆիքր : ծթ. 1 .
ուռ : սավայի տալ : ժդ : 1 :
ուս : կռնակ : օմուզ : հէ. 3 :
ուտիչ : ցեց : կիւվէ : դե. 9 :
ուտճահալ : ցեցէ կամ պէօճէկէ կերած : ծդ. 2 :
ուրոյն : զատ, հեռու : պաշխաճա : դ. 3 .
ուրոյնութիւն : պաշխա ըլլալը : ֆարգ : լդ. 7 :
ուրուական : թախայլէթ : հա. 4 : կամ, ստուերանման : հէ. 12 :
ուրուաձայն : անշահ ձայն հանօղ : պէթ սէսլի : դե. 8 :
Չարաշուք : խիստ չար, կամ ցած : նուխուսէթ : ծե. 2 :

չաւատացլի : չհաւատալոյ, ստեա, կուռք : ծզ . 4 :
չորեքքաղաքեան : չորս ձուռ վաղօղ, չորս ակեղով : կը . 1 :
չու : քայլելով առաւօտ երթալը, ճամբայ ընելը : կեօչ : ը . 2 :
չքնաղ : աղուոր : չքնին, անկրկին : ժա . 1 :
չքաւոր : ցած, խեղճ : աքֆիր : կթ . 2 :
Պալար : եւարայի ուռեցք : գառապահձըք : իզ . 2 : կե . 1 :
պախարակիլ : նախատուիլ : ախլըենմէք : խզ . 5 :
պակուցումն : մեծ վախ : իֆթիրաթ գօրզու : է . 3 :
պահակ : անկարգաւորի բռնած, ինչպէս ակման կիսպեննային : ծը . 3 :
պահպանակ : պահօղ, կամ պահուելոյ տեղ : զ . 3 : կե . 2 : կամ, զըրխ,
անինքայենա : ղզ . 12 :
պաղատանք : աղաչանք : ախլէկ : ըզ . 9 :
պաղպաջուկք : քեօշկի պէս շինած տեղ : իե . 2 :
պաճար : ծե : 2 :
պաճարեղէն : ժ . 1 . } ամենայն : հայվան, ապրանք :
պաճուճիլ : զարդարուիլ : տօնանմանք : թ . 2 .
պայթզղա : քեչելդաւէ : զ . 2 :
պայթիլ : ճաթիլ : փաթլամանք : հզ . 3 :
պայման : չափ . կանոն : քաւուլ : ը . 3 : զ . 1 : ծզ . 5 :
պան : հացի պնակ : սօֆուն : ըզ . 8 : ղզ . 8 :
պաշտօնատեղ : պաշտօնելու տեղ : կուռքի տաճն : ծա . 4 :
պապանձիլ : խօսք ծածկուիլ : հերաբեթլընմէք : իթ . 2 :
պարգեւիլ : ծառայութեն ցուցնել : առաւանք : ե . 3 :
պարանոցել : խըռխըռալով կարդալ, բանալ : զարդ. եթմէք : կզ . 4 : պա-
րանոցիլ : ուէհեն գրուիլ : խզ . 3 :
պարաւանի : կենդ առայ : օդլան, անկի գանդը : ժը : 2 :
պարապումն : ըեցումն : գաշկըն : խը . 3 :
պարզամտութեան : խարաքերատր : իզ : 3 :
պարիր : խարքէուլթե : ֆքնա : զ . 3 : կե . 2 :
պարկանիլ : յարմարիլ : ույատամնք . անուղէն մեկմէք : իզ . 3 : կամ,
հաստատուիլ, անդրաւորել : եկըլէշտիրմէք : զ . 3 :
պարսճառասնր : առեղծուած : ղզ . 1 :
պարտէզ : մէթերնոց, թաւմկյէ : կ . 2 : ղը . 5 :
պարտաշահատման : համբուղ կամ ձայնդ անկը գառաստաքարուած : իթ . 2 :
պարտուածօրէն : պաճուճ, մուռթ : առքաուլը : ղզ . 7 :
պարտուստա : կցուածք : կկյարքրմէ : ղը . 9 :
պարտուաստակիլ : կցուիլ, միանալ : գայնաշմամք : իէ . 4 :
պարտրիլ : խառնուիլ : ալըաանմանք : իթ . 3 :
պարտրոյգ, կամ պարտրոյկ : մուտի կամ ձըրագի ֆիթիլ : ղզ . 2 :
պարտր : շաղք, պղըա : ե . 2 :
պարպարիլ : գլիմնալ : անեմիըրմէք, թասվըրմանք : ժ . 1 :
պարուրիլ : ժողվելով գոցիլ : պինալմէք : ժը . 3 : ղա . 1 :
պարպա : քար նետելու գործիք : սափան : ըզ . 7 : ղը . 4 :
պարսպատ : քաւանհրամնք : ըեւանդայըք, մեըլմէթ : խը . 2 :
պարսպել : սափան նետել, քարոտել : է . 2 : ղ . 3 :
պարսպոտիլ : յաղթըուիլ : եէնիլըմէք : իթ . 3 :
պերճանալ : փառաւորուիլ, կամ աղալանմէշ ըլլալ : ժզ . 2 :
պինծակ : էշէկ առիւծ : կը . 3 :
պղպջակ : ջրի կամ սապոնի բռուշտը : առ գառապառձըրը : հզ . 3 :
պճնիլ : սաղուիլ : պէզէլըենմէք : ը . 2 :
պնդել : ամուր կապել, ամրցնել : խե . 1 : պնդիլ : եանկեն վարել : սը-

պղպղջակս աւուշմէք ։ խէ. 2 ։
պուեանիկոս ։ բամբասասերող ։ շաղփր ։ խէ. 6 ։
պուրակ ։ կառափոց ։ անէմէթ ։ թ. 1 ։
պչրութիւնք ։ անհամեստ զարդարանք ։ հանդերձ եռանդեալ ։ խէ. 4 ։
պսակ ։ մերձ ։ սահմ ։ խէ. 2 ։
պսակապատճոյճ ։ պսակով զարդարեալ ։ ըէ. 1 ։
պտղածնել ։ պտուղ բերել ։ դէ. 21 ։
պտղատուհմայական ։ առատբերու պտուղ տուօղ ։ դէ. 9 ։
պտուղանկէլ ։ պտղաբերել ։ ազնաշմեաք ։ դ. 4 ։
պրկել ։ խոշոխոռեգծ կապոտել ։ գ. 4 ։
Ջահ ։ մոմաշմայլայ ։ գէ. 8 ։
Ջահել ։ ծաղթել, փայլել ։ շէօհլէլէնմէք, երլանդաղգանոնք ։ ճէ. 2 ։
Ջամբել ։ կերցընել ։ եէյմաքմէք ։ Է. 2 ։
Ջայլ ։ ողջուալոյ ։ ադլայըշ ։ կէ. 1 ։
Ջաստուկ ։ ճատար, կամ ցաւատար ։ մերդալլը ։ ծէ. 2 ։
Ջեռնուլ ։ տաքնալ ։ գըզմաք ։ հէ. 12 ։
Ջերմն ։ տենդ ։ սըթմա ։ դէ. 3 ։
Ջերմնական ։ սըթմալը ։ խ. 3 ։
Ջնար ։ սանթուռ ։ գէ. 9 ։
Ջնջալ ։ ծեծուած ։ կ. 2 ։
Ջորեակ ։ այդ մը չէքիլիկէ մանէր ։ կէ. 3 ։
Ջութակ ։ սանթուռ, կամ քէմանն ։ գէ. 8 ։
Ջրակայծ ։ Ջուր երեւցած, Ջրի աչէս ։ կէ. 3 ։
Ջրել, Ջրեալ ։ Ջնճել, Ջնճոլուել ։ արօզմաք, արօզուլմաք ։ լէ. 3 ։ կէ. 1 ։
Ջրողող ։ Ջրով ծածկըուած կամ խեղդըուած ։ կ. 5 ։
Ռետին ։ ծառէ մածած խէժ ։ ինչպէս զամկիս, չամաղըղի, եւն ։ կէ. 1 ։
Սագրել ։ յանձնել ։ սփառէլչ էթմէք ։ կամ, զըրցանել ։ ախուլթմէք ։ կէ. 1 ։ սադրօղ ։ զըրզուօղ ։ գ. 3 ։
սալ ։ էօրս ։ կէ. 2 ։ կամ, դայլաղն քար ։ գէ. 8 ։
սակ ։ չափ ։ միգթար, ժէ. 2 ։ ժէ. 3 ։ խէ. 2 ։ ե. 3 ։
սակաւաձեռն ։ սակար. զայլըֆ ։ Է. 2 ։ կամ, քիչ ։ ձիւղի ։ գէ. 15 ։
սակաւամանեայ. քիչ, կառր մը ։ ակիր ալ ։ Ա. 1 ։
սահանք ։ Ջրին խաղով մալերը ։ խ. 2 ։ կէ. 1 ։
սահման ։ չափ, սինօռ. կամ, չափաւոր եւ կարգած խօսք ։ Է. 3. 4 ։
սաղարթ ։ ոստեր ։ եաբրաղ ։ թ. 2.
սայրասուր ։ բերանը սուր ։ աղըզը քէսկին ։ գէ. 2 ։
սանդարամետական ։ գետնին տակը եղած, կամ դժոխային, գե ։ լէ. 5 ։ խէ. 3 ։
սանձ ։ կէմ, ախըզլըն ։ Է ։ 2 ։
սանձակալ ։ կէմը բռնօղ ։ Է. 2 ։
սանձակոտոր ։ կէմը կոտրօղ ։ զառըղի չէկօղ ։ կէմ ալմաղ ։ խէ. 2 ։
սառնամանիք ։ սառուց ։ բուզ ։ Է. 3 ։ Է. 1 ։
սառնամոր ։ սառի աչէս, սառուղ կարած ։ ձա. 3 ։
սառնասրտութիւն ։ սառն սրտով ըլլալը ։ գէ. 11 ։
սաստ ։ չէխ, չըքըրշ, թաղըր, խըշմ, գազէպ ։ Է. 2 ։
սաստեր ։ զօրաւորայի չափի լաւակ ։ խէ. 1 ։
սարգ ։ մետաքս ։ էօրիւմճէք ։ գէ ։ 14 ։
սարսուռ ։ դող ։ թիթրէմէ ։ Է. 3 ։
սարսռեցուցանել ։ դըղուխ քաշերով փախած ։ խէ. 2 ։
սաւառնել ։ խանասաններըը ալըմէշ ըլլէլ ։ գա. 1 ։
սգալ ։ սուգանել ։ գոյգը կամ եէլէմ չէքմէք ։ խէ. 1 ։

Կ

անասունք : գերան եղջիւր : ժբ. 3 :
անգամանաննոց : գունով երկնից խառնիւր : խը. 2 :
անապահովական : առաջին երկնից : գանձք : լդ. 5 :
անաղուհ : աղէկդարան : դ. 2 :
անուն : պայծառ, յիստակ : գիտելով, փառք : Ժ. 2 :
անհոգ : գամ. մեծ, երկնեւ : կը. 4 :
անթափ : գլդամ, չաւառ : պայծէթլ : խդ. 3 :
անթափելի. խոնարհ գլուխ գալ : պարզելանանք : դ. 3 :
անդրագոյն : առաջնաւոր եղող : Փառաւոր : հդ. 2 :
անիկ : բարձրակ հով : խօշ բռնադիւտ : լսելի ձայն : լբ. 3 :
անին : փոխ. անչափ : խէ. 3 :
անիրաւութիւն : անէր ձգօղ : դը. 3 :
ալանեալ : մեղանով թաշկիկ : Ե. 2 :
ալիք : Նեռնին ծովի երկաթը : օգ. ամենայնի՝ : ժը. 1 : խը. 3 :
անխռովելի : պարզամաքրութիւն : անձայնալ : ծը. 2 :
անկախութիւն : կամով կամ չանձնուորով խոնարհած : չանձնաւոր, պատուանդան :
ծդ. 3 :
անկատարակ : թափառիկ, կամ անհանգ : Ը. 2 :
անկերպարանիցս : առաջին լուսաւորող : ծդ. 1 :
անկերպարանելի : առաջիններ : երբ աղօթել : լդ. 5 :
անկերպարանիր : հը. 2 :
անկերպարանենուհ : ձե. 2 : } առաջի ատեանք, կամ պատրաստեալք :
անկերպարանակ : պարոն կամ չարիքէն գլուխ : դը. 8 :
անկիւթաւորի : թագաւոր : դդ. 12 :
աղօթել : անկատարելիւթեանք : ծա. 4 :
անդառնապատուանումն : փոխ կամ անչափ չմնացած : եռանդանոր : դ. 1 :
առողջութիւն : առողջանալ : լը. 2 : կէ. 1 :
ասակ : փոխ, անչափ : Փառաւորեալ, Նահիկէ : հը. 2 :
ասպարէզ : եղեան, կամ ցած, կամ պայմանը մեծաց : դ. 2 : հա. 2 :
աստուածաբանութիւն : աստուածային մեծ, անհասանելի : պարզապատուական, ամփոփման : դդ. 12 :
աստուածն : մեծ փառք : նիզակաւոր գործողը : լէ. 3 :
ատր : փառ ամեն՝ անլէջն փոփոխած : խ. 2 :
ատեղ : արամանութեան : գամ, թագաւոր : Ծ. 1 :
ատանել : խոստով երկնային : պատճառելը : լը. 2 :
ատենահամբաւ : շնորհը, փէշիկ : ծը. 2 :
արգելք : խնամատուութիւն խօսք, կամ չէնք : ձը. 2 :
արքայութիւն : մնացեալ ամենայն, կամ մնացեալ կեանքը : լդ. 5 : խդ. 2 :
արքայութեանց : մնացելոց ամեն : խէ. 3 :
արդարութիւն : սիրելի, կամ սիրահարութիւն : դ. 3 : ծը. 2 :
արդարանալ : հասանել : թիւերեւեմք, եօթ օրինակ : բ. 2 :
արդարացած : ընծայել, ծայր : թէքեւալ, ու. : լա. 1 :
արդար : անդամ : գիտաֆէթ : դդ. 21 :
արդարադատ : մեծեղբար : ժը. 3 :
արդեօք : Ներքին սիրելի ընտանեաց : խը. 5 :
արտաքնակ : գլուխ քարոզ, պատրաստութիւն : լա. 2 : խնայելու ատամնաբոյժ : խը. 3 :
արտադրանել : մեղադրել, առաջին երկինք խոնարհել : պարզաբանութիւն, սրբազան եթ-
մէք. խթ. 3 :
արքայ : ծիծ : մեծ : ե. 2 :
արտաքերել : վայր քարոզ : ձե : 2 :
արտաքսանակել : անկէն խորամանկ եղած. հդ. 2 :
արտահայտել : ամեն ծածկելով : լէ. 3 :

տորնաքարշ : ցած կամ փուշ բանսերու ընկած : ծէ. 2 :
տողք : վարժիններր . աշակերտիկներ : ձէ. 2 :
տուար : հաստ, խոշոր : զալըն, զառայս : խէ. 2 :
տուարածակարկատ : խոշոր քարերով կարկատած, կամ էջքէնմիշ եղած :
(յիշատակարան :)
տուարատեղի : հաստ կամ խոշոր տաւերով : թ. 2 :
տուգանել : բանով կամ անուանովը խափանթ ընել : դէ. 20 :
տուէր . շուք : քէօլկէ : ժէ. 1 :
տրկամեծար : ծառան կամ ցած մարդը մեծարօղ : է. 1 :
տրկութիւն : ցածութիւն : ալչագլըք, էտնալըք : դէ. 7 :
տրուկ : բայէ : է. 2 :
տրջանել : փուշամոն ըլլալ, վազ գալ : խթ. 3 :
տրամադրութիւն : սուր բան չըննելը, կամ երկաթ պելը : խէ. 2 :
տրուհ : սօֆա, մէյտան : ծա. 4 :
տրամնալ : վըզ ընելով փախչիլ : ժա. 3 : ն. 2 : խէ. 3 : տրտմնալ, մեծըմ
տուրցած . ցցուած : սիվրիլէնմիշ : խէ. 3 :
տրտահետ : Որ կամ թէմիզ ճամբա ունօղ : դէ. 11 :
տրբերդեան : Որ Որ երգօղ : դէ. 1 :
տրփիկ : տխուտիւկ : չըղըրթմայ, կամ Նէյ : դէ. 8 :
տրոփել, կամ տրոփիլ : ցըցնքել, ցանել, ցանուիլ : սէրպմէք, սէրպիլմէք :
խէ. 5 : դա. 2 :
տփխո : տօլ, ընդարձակ, կամ չորս դին : ( յիշատակարան : )
տփոփանք : մխիթարանք : թէսէլլի : խէ. 3 :
ուքանչելութիւն : զարմանալի ըլլալը, զարմանալի կերպ : աճայըպ թարդ,
հըքմէթ : ժէ. 2 : հե. 3 :
Վաղորդայն . առաւօտ : սապահ վագթի : կե. 3 :
վայր : տեղ : եէր : խէ. 1 :
վայրագութիւն : եապանիլիք, եապանըլըք : է. 4 : լէ. 1 :
վանդակապատ : պարմաքլըխով կամ ղաֆէսով չինած տեղ : գաֆէս
լիք : խե. 2 :
վանել : հրելով հալել, վռընտել : իթիլմէք, գօվալամաք : խէ. 3 :
վաստակ : աշխատանք : զահմէթ, ըզդըլէթ : ձե. 1 :
վատնել : ցրուել, զայ ընել : տաղըթմաք : խէ. 3 :
վարանել : տարակուսիլ, չորս դին կամ բոլոր եայըլմիշ ըլլալ : ըա. 3 :
վարանիլ : վախէն կամ ամէնէն անճրկիլ, կամ տէտիրկին ըլլալ : ժա.
3 : խէ. 3 : խէ. 2 :
վարատական : թիրթի կալ, կամ քթի չէնկել, կամ հալլայ : դը. 2 :
վարատատական : բարբառական, տէտիրկին : ժա. 3 : խէ. 2 :
վարատիլ : ցրուիլ : տարտընիլ, տէտիրկին ըլլալ : խէ. 3 :
վարկածք . մտքի դրածը, մտածմունք : թահմին, զըյաս : խէ. 4 :
վարկանել : միտքը դնել, սեպել : սանմաք : ժթ. 3 :
վարմ : թօռ, կամ տուզախ : ե. 3 : ղ. 3 :
վարսք : փէրչէմ : կէ. 3 : կամ, ծառէն փէրչէմը : թ. 2 :
վեհ : խիստ մեծ : ալա, մէշհուր : ը. 2 :
վերադրութիւն : վրայ ընկնելը, կամ մէկ մէկու վրայ դրուիլը : ե. 2 :
վերակացութիւն ; վրայ կենալը կամ հսկելը : ա. 2 :
վերակենդանել : ողջ ըննալ : տիրիլմէք : լէ. 5 :
վերամբարձութիւն : վեր բարձրանալը կամ ելլելը : ձէ. 3 : դէ. 9 :
վերընթացութիւն : վեր ելլելը : ձէ. 5 :
վերծանել : կարդալ : օգումաք : խէ. 4 :
վերնակենցաղ : երկինքը ապրօղ կամ ապրելու : ծա. 4 :

մերանամարտ : Այն դէմ Ճէնկ լինօղ : ղա . 3 :
մերանամրցանակ : Երկնային յաղթութեան մրցանակն : ղէ . 24 :
մերնաշաւիղ : մեր երկրու : ղբ . 11 :
մերձնական աՃառ : աղա հանելու զօրաւոր դեղ , ինչպէս պաշտ աառօ-
նը . եՆ : ղէ . 11 :
մէս : քիթը մեծ . հաղարտ : մատղուր : Ծ . 2 :
միթխարութիւն : խօսա մեծութիւն . համեթալութը : ղբ . 2 :
միժած : անցուցած տղայ : մարդթենանէն եմքէլ առմուշ : Ի . 2 :
միժակ : մար մարդերը : կէ . 1 :
միհ : խոտուկ միտա : ժա . 1 :
միՃակաւորել : բաժնըռուէլ : Թէմըք օրմսը : ղէ . 8 :
միմական : քար գարծած , քարի պէս պինդ : ծը . 2 :
միրգ : Նեւենքլու մեծկակ քար . կ . 2 : միրգ սալի : անէօշէմէջի քար :
ղբ . 8 :
մհաւորել : մերոշ թուլինալ կամ կոտրել : ինչէկի քրտըլմուք : Է . 4 :
մկանի . բարակ մարդուկ Ջուր : ապար սու : Ե . 2 : իե : 4 :
մնարանօղի : նաալան տեղ ընկած , կամ մըռնաած . ժե : 2 . ծա . 4 :
մնարել : քշել : գօվմուք : խթ . 3 :
մնանել : ըսպորցնել : զալալունըլթմսը : Ի . 2 :
մըան : չատըր : Ի . 2 :
մըժամուս : Էօճ կամ հայֆ անեօղ . ծը . 5 :
մըխալակ : ղալամ , կի՞ կրկուամ : իը . 2 : կամ , ծուա : նանըըշ : ժը . 8 :
ղբ . 9 :
մըխալել : Ճամբէ գուրա եղէլ . եօլտան շաշմուք . Ե . 2 : կամ , զրկուել .
մահրուամ գալմուք : լբ . 2 :
մընջողական : ձիու պէս ցանկութիւն , կամ աղմիշ ըլլալը : խե . 2 :
Տաղնապ : աղխլէթ : Է . 3 :

| | |
|---|---|
| տամանիք : խե . 3 : <br> տամանուամն : բ . 2 : | մեծ աշխատանք : իֆրաթ զահմէթ : |

տանել : պէտ ընել . պէտքէմէք , թիմար էթմէք : Ե . 2 : Թ . 2 :
տակաւ տակաւ : կամաց կամաց : աղար աղար : ծբ . 3 :
տաղանդ : օխայով լաստակ : իգ . 2 :
տաղաւար : խուլիպէ : կամ չատըր , գօնագ : բ . 1 :
տաղաւարել : բնակել : գօնագ էթմէք : հե . 13 : կամ , բնակուել .
բնակարան ըլլալ : գօնագ օլմուք : Ճ . 1 :
տաղակապաղական : կերակ ընելու : վիէք մուրատա : ղգ . 20 :
տաղական : գանելու : կերակ էտէՃէք : ա . 1 : կ . 5 :
տաշտ : Թաս , քեսաէ : Լ . 2 :
տապ : գոլ , տաքութիւն : ըՃակըլը : Է . 3 :
տապախառն , տաք գոլով խառնած , ինչպէս սամ եկլին : ղբ . 9 :
տապանալ : տաքնալ : գըզմուք , լաըլթմա օլմուք : իթ . 2 :
տապար : կացին : պալթա : ժգ . 3 :
տատ : գիր : նաաք : կի՞ , գըրուածք , գըրած խօսք : լգ . 2 :
տատատանել : տրտմելու , հոգալու : գասավէթլի : լա . 2 :
տատատակեցան : խոշոր փուշ , կամ ոէմիր ոիքէնի ցանօղ : ծե . 2 :
տարապարել : վազնել , հեռացնել . գօվմուք : Ե . 2 : Է . 1 :
տարաղ : կերպ : Թարզ , սոյ : ժբ . 2 : ծգ . 5 :
տարաժամ : պէվախտ : ձբ . 6 :
տարակոյս : մեծ բաժնըրուած Ճամբա : գ . 3 :
տարակուսել : փոշնել : շէքին գօփարմուք : ժե . 2 :
տարագեղ : օրինակ : էօրնէք , նումունէ : ժե . 2 :

[illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

---

Սրբոյն յաւելուած Ներսիսի հեծութեան՝ նորին հոգւոյն առ նորա աղերս մաղթանաց բանին ։

Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Աստուծոյ ։

## ԲԱՆ. ՂԲ.

ա. Տէր ամ բարերար բազմապարգև Թագաւոր, կենաց պատուպարան, լուսոյ կերպարան, լայնատարր հանգստարան. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զանպատումն, և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչև կատարեցեր զա-

ուեցեալն ընդ ամենայնիւր ծնութեռ ։
Բ. Սրդ՝ վասն առաքելոցն մեր յերկնաստեղծ քո
ձեռացդ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծելոց,
2 զորոց զգովեստն արժանաւորութե ըստ իմում կա-
րի՝ առ 'ի փառս քո տէր ամենայնի՝ յայլում բանի
պաշտեցի, և ինձ ողորմեցիս 3 յիշատակաւ սիրոյ
նոցին ընտրութե ։ 4 Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հան-
գերձեցեն յերանութին փափաքելի. ձայն բարի հո-
վուութե նոցին՝ 'ի յողջոյն ինձ կենաց քաղցր լուի-
ցի ։ Սան կալայց 5 'ի յանեղծութի փրկութե տօ-
նեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբ-
նաշնորհիցն պատուոյ, փառաւորեալն դասուց,
գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշ-
խանացն պանծալեաց, լուսապայծառ Թագիւ պճնե-
լոցն, 'ի զարդ անկապուտ զօրութե շնորհին պայծա-
ռացելոց, իւղովն զուարթութե տիրական լուսոյն
կատարելոց ։
Գ. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ
այ քոյ՝ և 6 մարտիրոսացն ընտրելոց նահատակութ,
որք մահացու և վշտաշարչարն մարմնով, վտանգա-
ւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հո-
ղազանգուածն բնութբ՝ մարտուցեալ 7 ընդ տարրս
գոյից ամենայն նիւթից՝ պատկեցան բարձրացան և
կենդանացան հոգեպէս. արիաբար ելեալք 'ի յերկ-
րէ, 8 ըստ մարգարէին, վկայք ճշմարիտք 9 ամենա-
փորձն մահու. իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝
աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն աստէնընկա-
լիչք. աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նո-
ցին. որ 10 հաւասարեալ գործովք ընդ նոսին, կա-
տարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարծին 'ի խորա-
ճանս անկէտն երանութե. որոց հաճոյական և ըն-
դունական մաղթանօք, արիւնընծայ վաստականուէր
11 քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զիս
նորօք 12 ըստ նոցին մասին անեղծ փրկութբ 'ի քեզ
արձանացեալ ։
Դ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ
ներկելոցն, և 13 ճգնաւորացն մեր հարցն միանձանց՝
և 14 քեզ հետեւելոցն որդւ այ, անպարտելի քաջու-
թբ և անպատիր զգաստութբ, ընդ ողջունեայ դասուցն

մարմնոյս բռնութեն՝ որպիսապէս մարտուցեալ, սովիմբ
վանեցին զանմարմինն բնիւր. և մշտամարտ համ-
դիսիւ՝ յառաջարիսի կենցաղոյս՝ առանց զզուանաց
ծանրաբեռնութեն 'ի լայնածաւալ ծփանաց աշխար-
հիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութեն ըն-
թեթևութի հոգւոցն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն
կենաց հասին. և իբր սիրօղք [16] վերնում վիճակին՝
առանց յետնոցն մտածութեն, զթագն յաղթութեն
համարձակապէս՝ պայծառ ճոխութբ ագձնեալ իսկա-
պէս՝ 'ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր
մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմե-
ղաւորս 'ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին:

Ե. Այս ահա խառնեալ զանմաքուրս բան՝ [16] ընդ
նախագրեալ երջանկացն փառաւորական աշխատաւոր-
կութեն, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճութի, և ես
ընդ նոսին՝ իբր դառնութի եղեալ ընդ քաղցու,
կամ [17] տատասկ ընդ ողորկութեն, տգեղութի ընդ
վայելչութեն, և որդն ընդ գեղեցկութեն մարգարի
տի, կամ հող ընդ յստակութեն ոսկւոյ, և կամ քա
րինս անարգս ընդ պայծառութեն արծաթոյ, [18] բռ-
ցասութի ընդ ճշմարտութեն, [19] կամ աւազ ինչ ա
տամնառու ընդ կակղութեն զանգուածոյ հացի. արդ-
լուր՝ հզօր հնարաւոր գովեալ, [20] զնոցայն վասն իմ,
և զիմս ընդ նոսին 'ի նոցին գովեստ, 'ի փրկութիւն
իմ և 'ի փառս քո՝ ամենազօրդ, բարերար, օրհ-
նեալ, երկայնամիտ, կարօղ, անքննին, անճառ,
անեղծ և անստեղծ: Որ են պարգևք, քո են շնորհք.
դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի: Ո՛չ ես
դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ
գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես
տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ա-
պրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես
գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ.
ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացու-
ցիչ, այլ մխիթարիչ: Ո՛չ եղծանես, այլ գրես.
ոչ սասանես, այլ հաստատես. ոչ ոտն հարկանես,
այլ սփոփես. [21] ոչ պատճառս յօդես մահու, այլ
հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամս շարժեալ տա
տակման, այլ 'ի փրկութի ողորմութեն: Ո՛չ մաա-

Նեցուկ ։ տայանաք ։ կէ. 2 ։
Նեկտար ։ չոք դէ ։ մէլէմին չէյթան ։ դժ ։ 9 ։
Նժար ։ թէրազինին թասը ։ Թ. 1 ։
Նուաճել ։ զարդել ։ փէքեարէհ ընել ։ Ե. 3 ։
Նկատ եղանել ։ սահմանել ։ կէօզէթմէք. սըրտ... ։ կջ. 2 ։
Նկարել ։ Նախշել, Նկարով քաշել ։ սուրաթլամաք ։ զ. 5 ։ Նկարել յորինուա-
ծի ։ տղայոյն մայրենիքը ձեւանալ ։ Ջ. 2 ։
Նկուն ։ ակքամ, անճրկեալ, սիրտ չունեցող ։ Ջ. 2 ։
Նհանջել, կամ Նուահանջել ։ տրտմել, նա քաշել ։ կէտի չէքմէք ։ Ջ. 3 ։
Նշաւակել ։ խաղք ու ծաղր ընել ։ խայրէթ էթմէք ։ Ջ. 2 ։
Նշկահել ։ անարգուած, մէկ դի ձգած ։ խջ. 1 ։
Նշխար, կամ Նշխարանք ։ շողշող, մնացորդ. խղ ։ Ջ. 1 ։ խե. 2 ։ զ. 3 ։
Նշոյլ ։ շաւղ ։ շէօհլէ ։ Ե. 2 ։ Ժա. 1 ։
Նողկալ ։ զզուելի ըլլալ ։ իկրահ, կամ մէհրամ օլմաք ։ զ. 3 ։
Նողկութիւն ։ զզուելիութիւն, անհամութիւն ։ դջ. 20 ։
Նուագ ։ երգելու խօսք, կամ խաղալ ։ ժե. 1 ։
Նուաղ ։ քիչ ։ ճիւղի ։ լջ. 1 ։
Նուաճութիւն ։ ստակը ընկած ։ թաւաք, մութը ։ Ջ. 4 ։
Նուիրան ։ պատարագ ։ հե. 11 ։
Նպաստ ։ օգնութիւն ։ եարտըմ ։ Ծ. 2 ։
Նպաստել ։ փէքլաւ ձգել ։ խջ. 3 ։
Նպատակ ։ Նետի նշան ։ նշան, նշանակետ ։ Թ. 3 ։
Նրբութիւն ։ բարակութիւն, բարակ բան ։ ինճէլիք ։ դջ ։ 9 ։
Շաղակրատ ։ լաֆազան, շաթաֆճի ։ Ծջ. 2 ։
Շաղկապ ։ մէկ տեղ կապ ։ դջ. 18 ։
Շաղկապութիւն ։ միաւորել, կապակցել ։ պիրլէշմէ ։ դջ. 9 ։
Շամփ ։ եղեգնոց ։ զամփուրը ։ Թ. 1 ։
Շանդաղլութիւն ։ եռապատիկ ապրի մի է ։ դջ. 12 ։
Շանթաճանճ ։ կէճէն ։ կջ. 3 ։
Շանթ ։ կայծակ ։ եըլտըրըմ ։ Ջ. 3 ։
Շառաւիղ ։ ծիլ ։ ֆիտան ։ Ժջ. 2 ։
Շարադասութիւն ։ մէկ տեղ դնելը ։ դջ. 2 ։
Շարաւ ։ Թարախ ։ իրին ։ Ջ. 1 ։ իջ. 3 ։
Շարունակ ։ կարգ ։ սըրայ ։ իջ. 1 ։ խջ. 2 ։
Շաւիղ. ճանապարհ իղ ։ իջ. 2 ։
Շեղում ։ փոյթան կամ տափաստանի կարդ ։ դջ. 3 ։
Շէկ ։ դեղ ։ եշիլ ։ Ջ. 2 ։
Շիրիմ ։ գերեզմանն ։ թիւրպէ ։ լջ. 2 ։
Շիշատապար ։ շուշէնը հատապանող, հողին հանող ։ (յիշատակարան ։)
Շլուկ ։ մէլմէլէ, մայմուն ։ Խ. 3 ։
Շղթի ։ զնջիրը ։ տուռ խար ։ խջ. 4 ։
Շնայնութիւն ։ ուշել խմելը ։ մէյխոր միւսաւ ... ։ խջ. 3 ։
Շնթաթութիւն ։ աղտեղութիւն ։ աճէլէ ։ դջ. 11 ։
Շնչ ։ օղլուխ, նէֆէս ։ կամ, քամի, հով ։ բուղղար ։ Խ. 2 ։
Շող ։ շէնք շնորհք ։ եօշաամ ։ խե. 2 ։ կամ, պարտաւ ։ խղըէթ ։ ձջ. 4 ։
Շումնարան ։ ծածուկ տեղ ։ կիզլի եէր ։ Խ. 2 ։
Շողոքորթութիւն ։ շողոմ գովելն նէֆէսը բանով ։ զ. 1 ։
Շողոմուկ ։ ամէ ... ։ ձջ. 3 ։
Շողոքորթութիւն ։ շողոմ գովել կամ էթրաֆիի երած բան, ինչպէս սրտով,
կամ դարխոր ։ զձ. 2 ։ դջ. 12 ։
Շռայլութիւն ։ խուրջին շարելը, շաղղին ընելը ։ զձ. 3 ։

շքեղաշուք : միրուն զարդարուած : պէք շէօհրէթլի : դէ . 3 :
Ոգեպահ : ապրելու կեր : կէչինմէճէք : եէ . 4 :
ոգեհանահանջ : հոգին հանօղ : ճան ալըճը : եզ . 6 :
ոգեսպառ : շունչք հատած կամ կարած : նութֆա քէսիլմիշ : ծդ . 3 :
ոգորել : կռուըտել : չէքիշմէք : թ . 3 :
յոգուոց եղանել : ախ ընել : ինլէմէք : իթ . 3 :
ոխութիւն : ոխ պահելը : ղարէզ : հզ . 3 :
ողկոյզ : կութ : սալգըմ : ժէ . 1 :
ողողակ : ջրի տակը քշող , ինչպէս հեղեղ , կամ տաղըտըճը : ծէ . 2 :
ողողել : խղխղել ընել , կամ սէլի տակ առնել : ձզ . 6 : ողողիլ : լուա-
ցուիլ : կամ սէլով տարուիլ , ծածկըռուիլ : դէ . 11 . 24 :
ողորկութիւն : դուզ կամ ամուղ ըլլալը , ամուղ բան մը : ձզ . 5 :
ողորմագերս : ողորմելի եղանակաւ ըլլալու : հա . 4 :
ողջք : խնդրուածք : Նիազ . տիլէկ : ժբ . 1 :
ողոքական : կակուղ : եումշաք : բ . 1 :
ողոքաւոր : աղօթք ընօղ : տուաճը : ծդ . 4 :
ոճ : ցորենի եւ այլ նմանեաց վեր ելած բոյսը , կամ խաւլէքը . եւ նմանու-
թբ , կարգ , սրայ : Է . 3 : յոճն տաւաղին . այսինքն ամէն ջրի ճամբա-
յին ճամբային :
ոսոխ : հասըմ , տուշմանը : կէ . 2 :
ոստայն : կտաւի թելը , կամ , էօրիւմճէք : Է . 3 :
ոստիկան : քեհեայ , միւպաշիր : ծէ . 2 :
ոստիկանութիւն : վերակացու ըլլալը : միւպաշիրլիք : հէ . 12 :
ոստոստումն : ցատկելը : սըչրամալը : գա . 3 :
ոտնալուալկրծ : ոտքը լուացօղ : դէ . 2 :
ոտնատառութիւն : ոտքի արգելք : գա . 3 :
որակութիւն : գոյն : րէնկ : թ . 1 :
որայ : ցորենի կամ գարիի կապոց . թուլթամ , տէմէթ : է . 2 :
որոջ : էգ ոչխար կէնճ : լա . 3 :
ուլ : այծու ձագ : քէչի եաւրուսու : իէ . 1 :
ուղեկցել : միկ տեղ երթալ , ճամբայ ցուցընել : հզ . 12 :
ուղեղ : ըղեղ : պէյին : դէ . 8 :
ուղերձեալ : ծլած : բուսած , մեծցած : ժէ . 4 : իթ . 2 :
ուղէշ : Ֆիտան , կամ երկընցած ճուղ : տալ : իզ . 2 :
ուղի , կամ ուղիք : ճամբայ : եօլ : իա . 1 : կէ . 2 :
ուղխ : սէլ : ծդ . 3 :
ունելիք : մաշայ : լզ . 5 :
ունկի : օնձա , 8 կամ 12 արէմ : իզ . 2 :
ունկնդրելոց : անկաճը թըլտառմիշ ընօղ կամ լըսած : Ծ . 4 :
ունկնտանութ , անկանճնութիւն : մէզական աղէօձէկի . դզ . 14 :
ույշ : յիշողութիւն , յիշելը հըֆզը , խաթըրը : իզ . 2 : կամ , միտք : ֆի-
քըր : ծթ . 1 .
ուռ : տամլայի ծառ : իզ : 1 :
ուս : կռնակ : օմուզ : հէ . 3 :
ուսիչ : ցեց : կիւվէ : դէ . 9 :
ուտաճահալ : ցեցէ կամ ագէօձէկէ կերած : ծէ . 2 :
ուրոյն : զատ , հեռու : այաշկաձա : Է . 3 :
ուրոյնութիւն : զատուիլ ըլլալը : ֆարգ : լզ . 7 :
ուրուական : Թասվիրի : հա . 4 : կամ , տուտուանուտ : հէ . 12 :
ուրուաձայն : անշարհ ձան հանօղ : աշէթ սեսլի : դէ . 8 :
Չարաչուք : խիստ չար , կամ ցած : Նուխուսեթ : ծէ . 2 :

չաւատացի : չհաւատալու, սուտ, կուռք : ծէ. 4 :
չորեքվտակեան : չորս ձուղ վտակ, չորս ակով : կէ. 1 :
չու : քայլելով առաջ երթալը, ճամբայ ընելը : կեօչ : ի. 2 :
չքնաղ : աղուոր : չտեսնուած, անլսելի : ժա. 1 :
չքաւոր : ցած, խեղճ : աէֆիր : կթ. 2 :
Պալար : եռացման ուռեցք : պատարանձլք : իէ. 2 : կէ. 1 :
պախարակել : նախատել : ախլըշտմէք : իդ. 5 :
պակուցանել : մեծ վախ : իֆրաթ զօրզու : է. 3 :
պահակ : անկարգային բանտած, ինչպէս սխման կեւրեկնային : ծը. 3 :
պահպանակ : պահօղ, կմ պահպանելու տեղ : դ. 3 : կէ. 2 : կմ, զրահ, անհետեալէնա : ղէ. 12 :
պաղատանք : աղաչանք : ախլէկ : լէ. 9 :
պաղպաջուտք : քեօշկի պէս շինած տեղ : իէ. 2 :
պաճար : ծէ : 2 :
պաճարեղէն : ժ. 1 . } անասուն : հայվան, սաւար :
պաճուճել : զարդարուել : սօնանմաք : թ. 2 .
պայթառ : քէշիրաւոկ : դ. 2 :
պայթել : ճաթել : փաթլամաք : հէ. 3 :
պայման : չափ . կանոն : քաւլ : ի. 3 : դ. 1 : ծէ. 5 :
պան : հացի զնասակ : սօմուն : լէ. 8 : ղէ. 8 :
պաշտօնեայ : պաշտելու տեղ : կուռքի տուն : ծա. 4 :
պատապանել : խիստ ծարաւել : հեղառեթլենմէք : իթ. 2 :
պատարել : ծառաւէն ցածել : սուսամաք : է. 3 :
պատասխանել : խօսք... կասել, բանել : զարդ. եթմէք : կէ. 4 : պատասխանել : ուէհին զրուել : իդ. 3 :
պատառնիկ : կէնճ տաղայ : օղլան, ուրի զանէր : ժէ : 2 :
պատարագուն : լեցուն : գաշկըն : իդ. 3 :
պատրաստաւոր : խաղայերաւոր : իէ : 3 :
պատուհր : խաբէութիւն : ֆէնտ : դ. 3 : կէ. 2 :
պատկառել : յարգանքել : ուչաստահանք . արեւերն վէրմէք : իդ. 3 : կամ, հաստատել, անդադարել : եէրլէշտիրմէք : դ. 3 :
պատմաճառ : սակդծուած : ղէ. 1 :
պատմիչ : մէթերխի, թարիխչի : կ. 2 : ղի. 5 :
պատշաճաւոր : հանելով կամ ձայնով տեղը զառնաստաբառած : իթ. 2 :
պատուաւոր : պատուով, մուռթ : սօլուալը : ղէ. 7 :
պատուաւոր : կցուածք : կէյրէկլէ : ղի. 9 :
պատուաւորել : կցուել, միանալ : զայնաշմաք : իէ. 4 :
պատրել : խաբուել : ալդանմաք : իթ. 3 :
պատրոյգ, կամ պատրոյկ : մոմի կամ ճրագի ֆիթիլ : ղէ. 2 :
պար : շարք, պարան : է. 2 :
պարարել : գիրանալ : սէմիզլէմէք, թավլանմաք : ժ. 1 :
պարզապել : ժողովելով զարկել : պիւզմէք : ժէ. 3 : ղա. 1 :
պարս : քար նետելու գործիք : սափան : լէ. 7 : ղի. 4 :
պարսաւ : քամահրանք : ըեւսվայըք, մէլամէթ : իդ. 2 :
պարսել : սափան նետել, քարտել : է. 2 : զ. 3 :
պարտել : յաղթուել : եէնիլմէք : իթ. 3 :
պերճանալ : փառաւորուել, կամ աղաղանելու ըլլալ : ժէ. 2 :
պիծակ : էշէկ առըւը : կէ. 3 :
պիղծակ : ջրի կամ արդինքի բարշաք : սու գաւազանձըղը : հէ. 3 :
պնդել : սաստկուել : պէքլէնմէք : ը. 2 :
պնդել : սանուր կապել, ամրացնել : իա. 1 : պնդել : եաւէն վատել : պա-

պարապրաս անուշմեք : խէ. 2 :
պատուիրակս : բանաստեղծ : շարյր : խէ. 6 :
պատուրակ : կատաղոց : տէմէթ : թ. 1 :
պչրութիւնք : անհամեստ զարդարանք : հանդերձ հօտառամ : խէ. 4 :
պտուակ : մերգ : ոստ : խէ. 2 :
պտտկապաճոյճ : պատանեալ զարդարուած : լէ. 1 :
պտղաբերել : պտուղ բերել : դէ. 21 :
պտղատուհամակն : առաջնլուն պտուղ տուող : դէ. 9 :
պտուղասկիզբ : պատարագ : տօլաշմանք : դ. 4 :
պրծել : խղճմտութիւն կապուտել : դ. 4 :
Ջահ : մոմաշաղոյ : դէ. 8 :
Ջահիլ : ծամթել, փայլել : շէօհլէլէնմեք, եղլապարանօք : ձէ. 2 :
Ջամբել : կերակրել : ետարկանք : ե. 2 :
Ջայլ : ողջառուան : առաջառաջ : կէ. 1 :
Ջատուկ : ձայնը, կամ յառաջարդ : մասաղվր : ծէ. 2 :
Ջեռնուլ : տաքնալ : գրգռմնք : հէ. 12 :
Ջերմն : տենդ : արթմնմն : դ. 3 :
Ջերմնախտական : արթմնալը : խ. 3 :
Ջնար : անմնթուռ : դէ. 9 :
Ջնեալ : ծեծուած : կ. 2 :
Ջորեակ : այն որ չէքնկէ մաներ : կէ. 3 :
Ջութակ : անմնթուռ, կամ քնամանն : դէ. 8 :
Ջրակոխ : ջուր երեցած, ջրի այեր : կէ. 3 :
Ջոկել, Ջոկել : ջնջել, ջնջլուել : արօնանք, արօղուլանք : լէ. 3 : կէ. 1 :
Ջրաղաց : ջրով ծածկեալ կամ խեղդեալ : կ. 5 :
Ռահվիրն : ծառն է մեղուած խեժ : ինչպէս զամիս, շամամատուրն, եւ ն : կէ. 1 :
Սադրել : յանձնել : միփարչէշ էթմեք : կամ, գրգռել : տիւրթմեք : կէ. 1 : սադրող : գրգռող : դ. 3 :
սալ : կօրս : կէ. 2 : կամ, զայդաղն քար : դէ. 8 :
սակ : չափ : միջթար, ժէ. 2 : ժէ. 3 : խէ. 2 : ն. 3 :
սակաւաձեռն : ակար. զայլքի : է. 2 : կամ, քիչ : ձիւղի : դէ. 15 :
սակաւաժամանեայ. քիչ, կարճ մը : ազիր աղ : ա. 1 :
սահանք : ջրին խաղով մաղերը : խ. 2 : կէ. 1 :
սահման : չափ, ախմօռ. կամ, չափաւոր եւ կարգած խօսք : ե. 3. 4 :
սաղարթ : տերեւ : եասփրաղ : թ. 2.
սայրատուր : բերանը սուր : աղըը քէսկին : դէ. 2 :
սանդարամետական : դժոխքին տակը եղած, կէ դժոխայքն, գե : լէ. 5 :
խէ. 3 :
սանձ : կէմ, ախիզլին : է : 2 :
սանձակալ : կէմը բռնող : է. 2 :
սանձակոտոր : կէմը կոտրող : զառաղի չեկող : կէմ ալմող : խէ. 2 :
սառնամանիք : սառուց : պրուզ : է. 3 : է. 1 :
սառնատեր : սառի պէս, պաղ կարած : ձա. 3 :
սառնալարութիւն : պաղ պաղ ըլլալը : դէ. 11 :
սաստ : չէխ, չէվքրշ, թաղկր, խորշ, գաղէպ : լ. 2 :
սատեր : զօլաթայի չափի լատակ : խե. 1 :
սարդ : մամուկ : էօրիւմճէք : դէ : 14 :
սարսուռ : դող : թիթրէմէ : է. 3 :
սարսռացեալ : դողալու քաշելով փախած : խէ. 2 :
սաւառնել : խանտասելը սալմիշ ընել : դա. 1 :
սգալ : արտամել : գայղը կամ էլէմ չէքմեք : խե. 1 :

անաւրք : դրան էշիկ : ժը. 3 :
անդամնամննոց : դուռ էքմէք խամուրը : խը. 2 :
անպհանկան : առըլ խոինը : ղալթըր : լդ. 5 :
անպրուհ : ապէկդրակէ : դ. 2 :
անուն : պայծառ, յստակ : զիւլալ, փակ : Ժ. 2 :
անտես : գամ. մեկն, էքսէր : կդ. 4 :
աթափ : գգաստ, չուառ : զայրքէթլի : խդ. 3 :
աթափիլ. խեւլքը գլուխը գալ : այրքլանմաք : դ. 3 :
ափգասցող : աղաղանմիչ եղող : ֆոտուլ : հդ. 2 :
ափկ : բարակ հով : խօշ ըուզկեար : լաթլըֆ եէլ : լը. 3 :
ափն : փուշ. անշահ : իէ. 3 :
ափրարկու : սէր ձգօղ : դը. 3 :
աղանող : վերալով թուշել : ե. 2 :
աղաք : նեմին ծառին երկաթը : օդ. անէմիրի՛ : ժդ. 1 : իդ. 3 :
ախրալի : զարդանական : անձայրող : ծը. 2 :
ակախտան : կառով կամ շամանուով խառնած : շամանողլու, պառլանըղ :
ծդ. 3 :
ակառտուակ : թապախ, կամ տահան : Ը. 2 :
ակզբնալոյս : առաջին լուսատրող : ծդ. 1 :
ակզբնածին : առաջինեկ : իլք առդնուշ : լդ. 5 :
ակզբնաձիր : հը. 2 : } առաջի առաւօտը, կամ պառրքեօղը :
ակզբնաշնորհ : ձե. 2 : }
ակզբնապար : պարոն կամ շալղըլի գլուխ : դը. 8 :
ակիւթանցի : թանթար : դդ. 12 :
ողոցել : անէսանէրիկլէմէք : ծա. 4 :
անտոխտարապատտուաստ : փուշ կամ անշահ շինուած : եօլսանըղ : դ. 1 :
ասղուն : սօղուձան : լը. 2 : կէ. 1 :
ասկ : փուշ, անշահ : ֆայլիանէսից, նաֆիլէ : հը. 2 :
ասկական : եայան, կամ ցած, կամ պայջարը մարդ : դ. 2 : հա. 2 :
ասկանքթխար : ասկալի մեծ, աճապին : պալասան, անխմաղ : դդ. 12 :
ասկումն : մեծ վախ : իֆրաթ գօրգու : լէ. 3 :
ատր : փոր ամեղ՝ ակլէն փորած : ե. 2 :
ատաղ : ապատմութին : զամ, թասաս : Ծ. 1 :
ատալել : խոտը կըէլ : պաթըրմաք : լը. 2 :
ատրհանգակ : շաթրր, փէշքիկ : ծդ. 2 :
ապխեր : խմաստուն խօսք, կամ չէնք : ձը. 2 :
ապաժեղ : մորթած անասուն, կամ մորթըլուխը : լդ. 5 : խդ. 2 :
ապաճեղատուն : մորթելու տեղ : խէ. 3 :
ապառաժէն : սիլահէլը, կամ սիլահտար : Ը. 3 : ծը. 2 :
ապառանել : հասանել : թիւքէնմէք, եօղ օլմաք : ը. 2 :
ապաստանած : ըէբնալը, ծայր : թէքմիլ, ուճ : լա. 1 :
ապասա : անզամ : զիաֆէթ : դդ. 21 :
ապերգանի : մէհլէմ : ժը. 3 :
ապրաձել : նեղա միմեւշեմիշ ըլլալ : խը. 5 :
առաստաղակ : գլուխ քաշօղ, զառաղդարղ : լա. 2 : խնչալէս առաստաղայ : խը. 3 :
առաջաստանել : մեղադրել, առաջը եղեալ դատմնել : այրըղլամաք, սիթէմ էթ-
մէք. խթ : 3 :
առաջնք : ծիծ : մէմէ : ը. 2 :
առաջապարէր : վառ քաշօղ : ձե : 2 :
առաջախտուպեալ : առաջէն խլռափմիշ եղած . հդ. 2 :
առապածածկել : առաջը ծածկըրուխել : լէ. 3 :

ստորնաքարշ : ցած կամ փուշ բանսրու ընկած : ծկ. 2 :
ստորք : վարիններս • աշակերտքներ : ձդ. 2 :
ստուար : հաստ, խոշոր : գալըն, գապա : խդ. 2 :
ստուարակարկառ : խոշոր քարերով կարկառած, կամ եզրէնմիշ եղած : (յիշատակարան :)
ստուարատերեւն : հաստ կամ խոշոր տերեւով : թ. 2 :
ստուգաբանել : բառով կամ անուանօքը խօսակաւթ ընել : դդ. 20 :
ստուեր • շուք : քէօլկէ : ժդ. 1 :
ստրկամեծար : ծառան կամ ցած մարդը մեծարօղ : դ. 1 :
ստրկութիւն : ցածութիւն : ալչագլըգը, էսնալըգը : դդ. 7 :
ստրուկ : քուլէ : դ. 2 :
ստրջանալ : փիշման ըլլալ, վազ գալ : խթ. 3 :
սրագործութիւն : սուր բան շինելը, կամ երկաթ սրելը : խդ. 2 :
սրահ : սօֆա, մէյտան : ծա. 4 :
սրանալ : վրդ ընկելով փախչիլ : ժա. 3 : ն. 2 : խը. 3 : սրացեալ, մերթ տուրցած • ցցուած : սիվրիլէնմիշ : խը. 3 :
սրբահետ : Որ կամ թէթեւ ճամբայ ունօղ : դի. 11 :
սրբերգական : Որ Որ երգօղ : դդ. 1 :
սրինկ : սուլուլուկ : չըդըրթմայ, կամ նէյ : դի. 8 :
սրսկել, կամ սրսկիլ : ցրցնքել, ցանել, ցանուիլ : սէրփմէք, սէրփիլմէք : խը. 5 : դա. 2 :
սփիւռ : պօլ, ընդարձակ, կամ չորս դին : (յիշատակարան :)
սփոփանք : մխիթարանք : թէսէլլի : խը. 3 :
սքանչելութիւն : զարմանալի ըլլալը, զարմանալի կերպ : աճայիպ թարզ. հըքմէթ : ժէ. 2 : հն. 3 :
Վաղորդայն • առաւօտ : սապահ վաղթի : կն. 3 :
վայր : տեղ : եէր : խդ. 1 :
վայրագութիւն : եապանիլիք, եապանլըգը : ը. 4 : լդ. 1 :
վանդակապատ : պարմաքլըքլըով կամ խաֆէսով շինած տեղ : գաֆէսլիք : խն. 2 :
վանել : հրելով ձգել, վռնտել : խթխմէրմէք, գօվալամագ : խը. 3 :
վաստակ : աշխատանք : զահմէթ, սրգըէթ : ձն. 1 :
վատնել : ցրուել, զայ ընել : տաղըթմագ : խը. 3 :
վարանել : տարակուսիլ, չորս դին կամ բոլոր եայլըմիշ ըլլալ : լա. 3 :
վարանիլ : վախէն կամ ամօթէն անձրկիլ, կամ տէտիրկլին ըլլալ : ժա. 3 : խդ. 3 : խը. 2 :
վարապան : բերնի կապ, կամ քթի չէնկել, կամ հալխայ : դի. 2 :
վարատական : բարբարական, տէտիրկլին : ժա. 3 : խէ. 2 :
վարատիլ : ցրուիլ : տարածնիլ, տէտիրկլին ըլլալ : խէ. 3 :
վարկանք • մտքի դրածը, մտածմունք : թախմին, գըյաս : խը. 4 :
վարկանել : միտքը դնել, սեպել : սանմագ : ժթ. 3 :
վարմ : թօռ, կամ տուզախ : ճ. 3 : զ. 3 :
վարսք : փէրչէմ : կդ. 3 : կամ, ծառին փէրչէմը : թ. 2 :
վեհ : խիստ մեծ : ալա, մէշհուր : ը. 2 :
վերադրութիւն : վրայ ընկնելը, կամ մէկ մէկու վրայ դրուելը : ճ. 2 :
վերակացումն : վրայ կենալը կամ հսկելը : ա. 2 :
վերակենդանել : ողջ ըլլալ : տիրիլմէք : լդ. 5 :
վերամբարձութիւն : վեր բարձրանալը կամ ելլելը : ձը. 3 : դդ. 9 :
վերընթացութիւն : վեր ելլելը : ձդ. 5 :
վերծանել : կարդալ : օգումագ : խը. 4 :
վերմակենցաղ : երկնիքը ապրօղ կամ ապրելու : ծա. 4 :

վերնամատոր ։ այն դէմ ձէնն ընող՛ ։ ղա · 3 ։
վերնամրցանակ ։ երկնային յաղթութեան մրցանակին ։ ղէ · 24 ։
վերնաշաւիղ ։ վեր ելնելու ։ ղէ · 11 ։
վերջնական ածառ ։ առաջ հանելու զօրաւոր դեղ, ինչպէս ալաշ տապօ- նը · ԵՆ ։ ղէ · 11 ։
վէս ։ քիթը մեծ · հպարտ ։ մամռոտուր ։ Ծ · 2 ։
վիթխարութիւն ։ խիստ մեծութիւն · հանրթալիքս ։ ղէ · 2 ։
վիժած ։ անցուցած տղայ ։ վաղթենական եմքել տօղմուշ ։ Ե · 2 ։
վիժակ ։ վար վաղելը ։ կէ · 1 ։
վիհ ։ խորունկ փոս ։ ժա · 1 ։
վիձակաւորիլ ։ բաժնըւիլ ։ թէվզի օլմաք ։ ղէ · 8 ։
վիմակեան ։ քար գործած , քարի պէս պինդ ։ ծղ · 2 ։
վիրգ ։ նետելու մեծկակ քար · կ · 2 ։ վիրգ սալի ։ ակօշէմէյի քար ։ ղէ · 8 ։
վհատիլ ։ սիրտը թուլնալ կամ կոտրիլ ։ իւրէկի քըրըլմաք ։ Է · 4 ։
վտակ · բարակ վազուկ ջուր ։ առւար առու ։ Ե · 2 ։ իե ։ 4 ։
վտարանդի ։ եստղան տեղ ընկած , կամ վըռնտուած · ժե ։ 2 · ծա · 4 ։
վտարել ։ քշել ։ գօվմաք ։ իթ · 3 ։
վտանել ։ լըւորցլմել ։ ղաստանլաթմաք ։ Ի · 2 ։
վրան ։ չադըր ։ Ի · 2 ։
վրիժառու ։ էօձ կամ հայֆ առնող · ձբ · 5 ։
վրիպակ ։ ղալաթ , կէտ պակասէմ ։ իղ · 2 ։ կամ , ծուռ ։ եանլըշ ։ ժբ · 8 ։ ղբ · 9 ։
վրիպիլ ։ ձամբէն դուրս ելնել · եօլտան շաշմաք · Ե · 2 ։ կամ , պակսիլ · մահրում գալմաք ։ լբ · 2 ։
վրնջողական ։ ձիու պէս ցանկութիւն , կամ աղմիշ ըլլալը ։ խե · 2 ։
Տագնապ ։ ազիւէթ ։ Է · 3 ։
տաժանելիք ։ խե · 3 ։ } մեծ աշխատանք ։ իֆրաթ զահմէթ ։
տաժանանաց ։ բ · 2 ։ }
տածել ։ պէտք ընել · պէսլէմէք , թիմար էթմէք ։ Ե · 2 ։ թ · 2 ։
տակառ տակառ ։ կամաց կամաց ։ աղար աղար ։ ծբ · 3 ։
տաղանդ ։ օխայով լըտակ ։ իդ · 2 ։
տաղաւար ։ խուլիպէ ։ կամ չադըր , գօնագ ։ բ · 1 ։
տաղաւարիլ ։ բնակիլ ։ գօնագ էթմէք ։ հե · 13 ։ կամ , բնակուիլ · բնակարան ըլլալ ։ գօնագ օլմաք ։ Ճ · 1 ։
տաղակապաղպական ։ իքրահ ընելու ։ փէք մուրտառ ։ ղէ · 10 ։
տաղտկալի ։ զզուելու ։ իքրահ էտէձէք ։ ա · 1 ։ կ · 5 ։
տաշտ ։ թաս , քեասէ ։ Լ · 2 ։
տապ ։ գոլ , տաքութիւն ։ ըլըձաքլըք ։ Ղ · 3 ։
տապախառն , տաք գոլով խառնուած , ինչպէս տամ եկլին ։ ղբ · 9 ։
տապանել ։ տաքնալ ։ գըզըլմաք , ըսըթմա օլմաք ։ իթ · 2 ։
տապար ։ կացին ։ պալթա ։ ժդ · 3 ։
տառ ։ գիր ։ եազը ։ կէտ , գրուածք , գրած խօսք ։ լդ · 2 ։
տառամնելի ։ տրտմելու , հոգալու ։ գասավէթլի ։ լա · 2 ։
տատասկացան ։ խոշոր փուշ , կամ տէմիր տիքէնի ցանող ։ ծղ · 2 ։
տարագրել ։ վռնտել , հեռացնել · գօվմաք ։ Ե · 2 ։ Ը · 1 ։
տարազ ։ կերպ ։ թարզ , եօլ ։ ժը · 2 ։ ծդ · 5 ։
տարաժամ ։ պէվախտ ։ ձբ · 6 ։
տարակոյս ։ մերթ՝ բաժնըւած ձամբա ։ ղ · 3 ։
տարակուսել ։ փորձնել ։ չէքինի գօխարմաք ։ ժե · 2 ։
տարացոյց ։ օրինակ ։ էօրնէք , նումունէ ։ ժե · 2 ։

[illegible]

(12) [illegible]

(13) [illegible]

---

[illegible]

'Ի խորոց սրտից խօսք՝ ընդ Այ :

# ԲԱՆ. ԶԲ.

Ա. Տէր մեծ բարերար բազմապարգեւ Թագաւոր, կենաց պատսպարան, լուսոյ [illegible], լայնատարր [illegible]. որ յաղագս մեղուցելոյս եկեալ մարմնացար. գործեցեր զամենայն [illegible], եւ համբերեցեր զչարչարանս, [1] մինչեւ կատարեցեր զա

ուեցեալն ընդ ամենայնիւ ածութեդ ։
Զ. Որդ՝ վասն առաքելոցն մերոց յերկնատունեղծ քո
ձեռացդ ձեռնադրելոց, և հոգւովդ սրբով օծելոց,
[2] զորոց զգովեստն արժանաւորութե ըստ իմում կա-
րի՝ առ 'ի փառս քո տէր ամենայնի՝ յայլում բանի
պաշտեցի, և ինձ ողորմեսցիս [3] յիշատակաւ սիրոյ
նոցին ընտրութե ։ [4] Շաւիղ ինձ եղիցի նոքօք՝ և հան-
դերձեսցեն յերանութիւն փափաքելի . ձայն բարի հռ-
չակաւորութե նոցին՝ 'ի կողջայն ինձ կենաց քաղցր լսւի-
ցի ։ Մասն կալայց [5] 'ի յանեղծութեն փրկութե տօ-
նեցեալ յուսոյն՝ ընդ առաջնորդացն կենաց, սկզբ-
բնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց,
գետոցն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշ-
խանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնե-
լոցն, 'ի զարդ անկապուստ զօրութե շնորհին պայծա-
ռացելոց, խնդամն զուարթութե տիրական լուսոյն
կատարելոց ։
Է. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ-
ոյ քո՝ և [6] մարտիրոսացն ընտրելոց նահատակութբ,
որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վտանգա-
ւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հո-
ղազանգուածն բնութբ՝ մարտուցեալ [7] ընդ տարր-
գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և
կենդանացան հոգեպէս . արիաբար ելեալք 'ի յերկ-
րէ, [8] ըստ մարգարէին, վկայք Ճշմարիտք [9] ամենա-
փորձն մահու . իմանալեացն անտեսիցն և ծածկելոց՝
աներկբայ բարեացն՝ յուսով տեսելոցն աստէն նկա-
տիչք . աշակերտք առաքելոցն և չարչարակիցք նո-
ցին . որ [10] հաւասարեալ գործովք ընդ նոսին, կա-
տարեալ լրմամբ անպակասելեաւ՝ պարեն 'ի խորա-
Ճանս անկէտն երանութե . որոց հաճոյական և ըն-
դունական մաղթանօք, արիւնընծայ վաստակաւնաւէր
[11] քրտնակնդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զիս
նորադ [12] ըստ նոցին մասին անեղծ փրկութբ 'ի քեզ
արձանացեալ ։
Ը. Ընդ խողխողեալսն հուրբ և սուսերբ՝ արեամբ
ներկելոցն, և [13] Ճգնաւորացն մէջ հարցն միանձանց՝
և [14] քեզ հետեւելոցն որդւոյ քո, անպարտելի քաջու-
թբ և անպատիր զգաստութբ, ընդ դժնեայ զաւուրց

մարմնոյս բռնութեն՝ արիաբար մարտուցեալ, ասպիրակ
վանեցին զանմարմինն բելիար. և մշտամնայս հան-
դիսիւ՝ յաղթարիւք կենցաղոյս՝ առանց զղջմանաց
ծանրաբեռնութեն 'ի լայնածաւալ ծփանաց աշխար-
հիս ծովու՝ տապանակաւ մարմնոյս թանձրութեն ըզ-
թեթևութի հոգւոցն թռուցեալ՝ 'ի նաւահանգիստն
կենաց հասին. և իբր սիրողք [15] վերնում վիճակին՝
առանց յետնոցն մտածութե, զթագն յաղթութեն
համարձակապէս՝ պայծառ ձոխուք պճնեալ իւրա-
պէս՝ 'ի գլուխ կապեցին. վասն նոցին արժանաւոր
մաղթանաց և նուիրական հայցուածոց՝ և զիս զմե-
ղաւորս 'ի պատժականաց՝ ընկալ ընդ նոսին։
Ե. Ի՛ւ ահա խառնեալ զանմաքուրս բան՝ [16] ընդ
նախագրեալ երջանկացն փառաւորական աղերսան-
կութե, որ վասն իմ գոչեն քեզ 'ի հաճութի, և ես
ընդ նոսին՝ իբր զառնութի եղեալ ընդ քաղցու,
կամ [17] տատասկ ընդ որորկութե, ագեղութի ընդ
վայելչութե, և տիղմ ընդ գեղեցկութե մարգարի-
տի, կամ հող ընդ յստակութե ոսկւոյ, և կամ քա-
րինս անարգս ընդ պայծառութե արծաթոյ, [18] բա-
ցասութի ընդ ճշմարտութե, [19] կամ աւազ ինչ ա-
տամնառու ընդ կակղութե զանգուածոյ հացի. արդ
լո՛ւր՝ հզօր հնարաւոր զօրեալ, [20] զնոցայն վասն իմ,
և զիմս ընդ նոսին 'ի նոցին զօրեա, 'ի փրկութիւն
իմ և 'ի փառս քո՝ ամենազօրութ, բարերար, ծրհ-
նեալ, երկայնամիտ, կարող, անքննին, անճառ,
անեղծ և անստեղծ։ Քո են պարգևք, քո են շնորհք.
դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի։ Ո՛չ ես
դատապարտիչ, այլ արդարիչ. ոչ ես կորուսիչ, այլ
գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես
տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ա-
պրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես
գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ.
ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշուառացու-
ցիչ, այլ մխիթարիչ։ Ո՛չ եղծանես, այլ գրես.
ոչ սասանես, այլ հաստատես. ոչ սան հարկանես,
այլ ափոփես. [21] ոչ պատճառս յօդես մահու, այլ
հնարս խնդրես կենաց. ոչ ես 'ի կամս շարժեալ տա-
տանման, այլ 'ի փրկութի ողորմութե։ Ո՛չ մաս-

Նեցուկ : ապաւէն : ԿԷ. 2 :
Նեռն : չար դեւ : մէլուն շէյթան : ԴԺԲ : 9 :
Նժար : թէրազինին թասը : Թ. 1 :
Նիւթել : պատրաստել : փէյտահ ընել : Ե. 3 :
Նկատս ածանել : տեսանել : կէօրմէք. սէյրէթմէք : ԿԲ. 2 :
Նկարել : նախշել, նկարով քաշել : սուրաթլամագ : Դ. 5 : Նկարիլ յորովայ-
նի : տղայքին մարմինը ձեւանալ : Է. 2 :
Նկուն : ալչաք, անձրկեալ, ակրտ չունող : Է. 2 :
Նահանջել, կամ նուահանջել : տրտմել, ետ քաշել : կէրի չէքմէք : Է. 3 :
Նշաւակել : խայտիք ու ծաղու ընել : խաղրէթ էթմէք ; Է. 2 :
Նշկահել : անարգութեամբ, մէկ դի ձգած : ԽԷ. 1 :
Նշմար, կամ նշմարանք : շօշափ, մեանգոյն . ԽԶ : Է. 1 : ԽԵ. 2 : Ղ. 3 :
Նշոյլ : շաւղ : շէօհլէ : Ե. 2 : ԺԱ. 1 :
Նողկալ : գարշելի ըլլալ : իզըրան, կամ մէհրան օլմաք : Ղ. 3 :
Նողկութիւն : գարշելիութիւն, անհամութիւն : ԴԷ. 20 :
Նուագ : սիւրինկի խօսք, կամ խաղալ : ԺԵ. 1 :
Նուազ : քիչ : ճիւզի : ԼԷ. 1 :
Նուաճութիւն : տակը ընկած : թապի, միւթի : Է. 4 :
Նուիրան : պատարագութիւն : ՀԵ. 11 :
Նպաստ : օգնութիւն : եարտըմ : Ծ. 2 :
Նպաստել : փէքրանէ ձգել : ԽԷ. 3 :
Նպաստակ : նետի նշան : նիշան, նիշանկեահ : Թ. 3 :
Նրբութիւն : բարակութիւն, բարակ բան : ինճէլիք : ԴԷ : 9 :
Շաղակրատ : լաֆազան, շաթաֆաճի : ԾԴ. 2 :
Շաղկապ : մէկ տեղ կապ : ԴԷ. 18 :
Շաղկապութիւն : միաբանը, կապուելը : իթթիհատ : ԴԲ. 9 :
Շամբ : եղեգնոց : ղամըշլըք : Թ. 1 :
Շանդագլուխ : եաւաչանի ալը մի է : ԴԷ. 12 :
Շանաճանճ : կէնէ : ԿԲ. 3 :
Շանթ : կայծակ : եըլտըրըմ : Է. 3 :
Շառաւիղ : ծիլ : ֆիտան : ԺԲ. 2 :
Շարադասութիւն : մէկ տեղ դնելը : ԴԷ. 2 :
Շարաւ : թարախ : իրին : Է. 1 : ԽԷ. 3 :
Շարունակ : կարգ : սըրայ : ԽԷ. 1 : ԽԷ. 2 :
Շաւիղ . ճանապարհ իղ : ԽԶ. 2 :
Շեղբ : փըչաղին կամ սաքմալին կտոր : ԴԲ. 3 :
Շեղջ : դէզ : եըղըն : Շ. 2 :
Շեփոր : պղնձէ փողն : թիւրօպէ : ԼԷ. 2 :
Շնչաւոր : շունչը հաստատող, հոգին հանող : (կենդանութեամբ :)
Շշուկ : վըրվըրէ, վայնասուն : Ի. 3 :
Շողի : պռտորչի : սըրճայր : ԽԷ. 4 :
Շուայտութիւն : ուտել խմելը : մէսթի մէյխօրլըք : ԽԷ. 3 :
Շուլթափութիւն : պարապութիւն : աճէլէ : ԴԷ. 11 :
Շունչ : օղլուխ, նէֆէս : կամ, քամի, հով : բուղի լխար : Ի. 2 :
Շուք : շէնք շնորք : եօղամամ : ԽԵ. 2 : կամ, պատիւ : իզզէթ : ՁԷ. 4 :
Շտեմարան : ծածուկ տեղ : կիզլի եէր : Ի. 2 :
Շքեղութիւն շինչյ : շորա գլխէն նէֆէսը քաշող : Ղ. 1 :
Շքանակ : անէվէ : ՁԷ. 3 :
Շքեղութիւն : շորա գլխու կամ էթրաֆի եղած բան, Ինչպէս պատըր,
կամ պըրխօր : ՂԱ. 2 : ԴԷ. 12 :
Շողոքորթ : խուռլէքէշ ըլլալը, շողոքէշ ընելը : ՂԱ. 3 :

Շքեղաշուք : փիրուն զարդարուած : փէք չէօհրէթլի : ղէ. 3 :
Ոգեալան : ապրելու կեր : կեչինէճէք : խէ. 4 :
ոգեալահանչ : հոգին հանող : ճան ալըճը : խը. 6 :
ոգեսպառ : շունչը հատած կամ կարած : նէֆէս քէսիլմիշ : ծը. 3 :
ոգորել : կռուըտել : չէքիշմէք : թ. 3 :
յոգունց եղանել : ոխ ընել : էյինլէմէք : խթ. 3 :
ոխութիւն : ոխ պահելը : գարէզ : հզ. 3 :
ողկոյզ : կուժ : սալքըմ : ժէ. 1 :
ողողակ : ջրի տակը քալող, ինչպէս ձուկը, կամ տալղըճը : ծե. 2 :
ողողել : խըլխուծ ընել, կամ սեղի տակ առնել : ձը. 6 : ողողիլ : ըստա-
ցուիլ : կամ սեղմ տարուիլ, ծածկուիլ : ղէ. 11. 24 :
ողորկութիւն : գուռ կամ սեւ ըլլալը, սեւ քան մը : ձը. 5 :
ողորմածներու : ողորմուկ եալկար ըլլալու : հա. 4 :
ողոք : խնդրուածք : ներող. սպէկ : ժը. 1 :
ողոքական : կանկուղ : եալվաշ : ը. 1 :
ողոքաւոր : աղօթք ընող : տուաճի : ծէ. 4 :
ոճ : ցորենի և այլ ներմնեաց մէր եղած բոյսը, կամ խաղէմը. և նաճաքա-
թը, կարգ, սրայ : ն. 3 : յոճն տաւալքին. ոջանքին աւքի ջուրը. տա-
քի ճամբային :
ոսխ : հասխմ, տամլաճի : կդ. 2 :
ոստայն : կտաւի թելը, կամ, էօրիւմճէք : է. 3 :
ոստիկան : քէհեայ, միւպաշիր : ծդ. 2 :
ոստիկանութիւն : վերակացու ըլլալը : միւպաշիրլիք : հե. 12 :
ոստոստումն : ցատկելը : սըչրամալը : ղա. 3 :
ոտնալզկոց : ոտքը սրկող-օղ : ղէ. 2 :
ոտնատուութիւն : ոտքի տրգելը : ղա. 3 :
որակութիւն : գոյն : րէնկ : թ. 1 :
որայ : ցորենի կամ գարիի կապոց. թութամ, տէմէթ : ը. 2 :
որոջ : էզ ոչխար կէնճ : լա. 3 :
ուլ : այծու ձագ : քէչի եավրուսու : խղ. 1 :
ուղեկցել : մէկ տեղ երթալ, ճամբայ ցրուել : հէ. 12 :
ուղեղ : ըղեղ : պէյին : ղը. 8 :
ուղերձեալ : ծլած : բուսած, միծցած : ժե. 4 : խթ. 2 :
ուղէշ : ֆիտան, կամ երկընցած ճուղ : տալ : խզ. 2 :
ուղի, կամ ուղիք : ճամբայ : եօլ : խա. 1 : կէ. 2 :
ուղխ : սէլ : ծզ. 3 :
ունելիք : մաշայ : լը. 5 :
ունկի : ամսա, 8 կամ 12 սրէմ : խդ. 2 :
ունկնափսոց : սնկաճը թըլխամիշ ընող կամ ըրած : ծ. 4 :
ունկնամուտ, ունկնաճեմուկ : մադաստ պէօճէկի. ղը. 14 :
ուշ : յիշողութիւն, յիշելը հըֆզ, խաթըր : խզ. 2 : կամ, միտք : աղլ.
ֆիքըր : ծթ. 1.
ուռ : տամաչի տալ : խը : 1 :
ուս : կանանչ : օմուզ : հէ. 3 :
ուտիճ : ցեց : կիւվէ : ղէ. 9 :
ուտիճահալ : ցեցէ կամ պէօճէկէ կերած : ծղ. 2 :
ուրոյն : զատ, հետու : պաշկաճա : ղ. 3.
ուրոյնութիւն : պաշխա ըլլալը : ֆարգ : լզ. 7 :
ուրուական : թախիլեթ : հա. 4 : կամ, տուտուման : հէ. 12 :
ուրուաձայն : անշահ ձայն հանող : պէթ սէսլի : ղը. 8 :
Չարաշուք : խիստ չար, կամ ցած : նուխուսէթ : ծե. 2 :

չուառատեալք : չհաստատեալք , տկար , կուռք : ծզ . 4 :
չորեքվտակեան : չորս ճիւղ վտակօղ , չորս անկիւն : կը . 1 :
չու : քայլելով առաջ երթալը , ճամբայ ընելը : կէօչ : ը . 2 :
չքնաղ : աղւոր : չքնին , տեղաղեր : ժա . 1 :
չքաւոր : ցած , խեղճ : աէֆիլ : կթ . 2 :
Պալար : եարայի ուռեցք : պապարուճքեք : իզ . 2 : կե . 1 :
պախարակել : նախատել : ախլէնմէք : խը . 5 :
պակուցանել : մեծ վախ : իֆիրամ գորգալ : է . 3 :
պահակ : անկարիարի բռնած , ինչպէս սիմոն կիւրենացին : ծը . 3 :
պահապանակ : պահօղ , կամ պահուելու տեղ : ւ . 3 : կե . 2 : կմ , զըրխ ,
ախնէպէնա : ղզ . 12 :
պաղատանք : աղաչանք : ախլէկ : լը . 9 :
պաղպաջուտք : քէօշկի պէս չինած տեղ : իե . 2 :
պաճար : ծե : 2 :
պաճարեղէն : ժ . 1 . } անասուն : հայվան , աավար :
պաճուճել : զարդարուել : առնանելայք : թ . 2 .
պայազատ : քիշիզատէ : ւ . 2 :
պայթիլ : ճաթիլ : փաթլամաք : հզ . 3 :
պայման : չափ . կանոն : քարուլ : ը . 3 : ւ . 1 : ծզ . 5 :
պան : հացի պնակ : սօֆրա : լը . 8 : ղզ . 8 :
պաշտօնեատեղ : պաշտելու տեղ : կռուոցի տուն : ծա . 4 :
պատապակիլ : խիստ ծարաւիլ : հէրարէթլէնմէք : իթ . 2 :
պատաքիլ : ծարաւէն ցամքիլ : սուսամաք : ե . 3 :
պատառատել : խըրախըրվարու կտրել , բաժնել : զարար էթմէք : կզ . 4 : պատ-
առնուլ : ուէհին զրաւել : խը . 3 :
պատանի : կէնճ տղայ : օղլան , տէղի գամըլը . ժը : 2 :
պատարագուն : ընցուն : պաշկըն : խը . 3 :
պատարագամատոյց : խաապէրտար : իզ : 3 :
պատեհ : խարքէութե : ֆէնա : ւ . 3 : կե . 2 :
պատեկանել : յարմարել : ույդուրմաք . տէուզէն մէրմէք : իւ . 3 : կամ ,
հաստատել , տեղաւորել : եէրլէշտիրմէք : ւ . 3 :
պատճառաւոր : սանդղուած : ղզ . 1 :
պատնէշ : մէթէրիզ , թապիյէ : կ . 2 : ղը . 5 :
պատուաճառատ : հանդով կամ ճոխիղ տեղը պատրաստուած : իթ . 2 :
պատուածօրէն : պռճուկ , մուրթ : տօլապըը : ղզ . 7 :
պատուատաս : կցուածք : կէյրմիրմէ : ղը . 9 :
պատուատանել : կցուել , միանալ : պայնաշմաք : իէ . 4 :
պատրել : խաբուել : ալդանմաք : իթ . 3 :
պատրոյգ , կամ պատրոյկ : մոմի կամ ճրագի ֆիթիլ : ղզ . 2 :
պար : շարք , սրբա : ե . 2 :
պարապել : զինուալ : աէմիրմէք , թամլանմաք : ժ . 1 :
պարուրել : ժողվելով գոցել : պիւրիմէք : ժը . 3 : ղա . 1 :
պարս : քար նետելու գործիք : սափան : լզ . 7 : ղը . 4 :
պարսաւ : քամահրանք : ըխտամսըզլք , մէլամէթ : խը . 2 :
պարտել : սափան նետել , քարտանել : է . 2 : ղ . 3 :
պարտիլ : յաղթուիլ : եէնիլմէք : իթ . 3 :
պերճանալ : փառաւորուել , կամ աղաղանմէշ ըլլալ : ժզ . 2 :
պիծակ : էշէկ առւըր : կը . 3 :
պղպջակ : ջրի կամ սապոնի բուշտը : սու գապարճըղը : հզ . 3 :
պճնիլ : զարդարուել : պէզէնմէք : ը . 2 :
պնդել : ամուր կապել , ամրացնել : խե . 1 : պնդիլ : եանէն վազել : պը-

պարապորդ տուչութիւնք : ԽԸ. 2 :
պտղաբերելիս : բամբասանողն : չարքն : ԽԸ. 6 :
պտտական : կապորդ : ակնածէթ : ԺԹ. 1 :
պչրութիւնք : անհամեստ զարդարանք : հանդերձիվ եռամամ : ԽԸ. 4 :
պսակ : մեղրմ : ոճով : ԽԸ. 2 :
պատկանայպատճառ : պատկերով զարդարուած : ԸԷ. 1 :
պտղաբերել : պտուղ բերել : ԴԶ. 21 :
պարզաբանութիւն : տայրելու պտուղ տուող : ԴԶ. 9 :
պատուածիլ : պատուել : տօնադրանք : Է. 4 :
պղծել : խառնակաւ կապուել : Գ. 4 :
Ջահ : մաշալայ : ԳԶ. 8 :
ռահել : ծամթել, փայլել : շէօհլէնլիք, եղբայրասէրք : ԺԸ. 2 :
ռամիկել : կեղծանել : եէտամպարք : Է. 2 :
ռայլ : ողջունելոց : աղախոչ : ԿԶ. 1 :
ռաստանակ : հաստ, կամ ցուցադրութ : մնայառմ : ԾԶ. 2 :
ռենանուլ : տագնապ : զղղմոյք : ՀԷ. 12 :
ռեղմն : անհեգ : սըլթման : ԶԸ. 3 :
ռեղմնական : սըլթմանըն : Խ. 3 :
ռմբոր : սանթուռ : ԳԸ. 9 :
ռնեոլ : ծեծուած : Կ. 2 :
ռոփեակ : որ մի չէզքէրքէ մանր : ԿԶ. 3 :
ռուֆակ : սանթուռ, կամ քէմանն : ԳԶ. 8 :
ռշակարծ : ռուբ երկւցած, ռշն այէս : ԿԶ. 3 :
ռմել, ռմել : ռնձել, ռնձլուել : [illegible] : ԼԶ. 3 : ԿԶ. 1 :
ռղողոզ : ռղով ծածկուած կամ խեղդուած : Կ. 5 :
Ռուբէնի : ծառէ մղած խէժ : [illegible], չամանգագրէ, եւն : ԿԶ. 1 :
Սաղրել : յանձնել : սփոփարէշ էթմէք : կամ, զդրել : տուրութմէք : ԿԶ.
1 : սաղրոմ : զգդուող : Գ. 3 :
սալ : եօրս : ԿԶ. 2 : կամ, զաղղամ քար : ԳԶ. 8 :
սակ : չափ : միգթար, ԺԸ. 2 : ԺԷ. 3 : ԽԷ. 2 : ՀԶ. 3 :
սակաւանձեան : սակաւ. զայըշի : Զ. 2 : կամ, քիչ : ձիւղն : ԳԶ. 15 :
սակաւամանութեանց. քիչ, կարճ մի : այլևս այլ : Ծ. 1 :
սահմանք : ռահն խաղով մարեալ : Խ. 2 : ԿԶ. 1 :
սահման : չափ, սինոռ. կամ, չափառութ և կարգած իրենք : Է. 3. 4 :
սաղարթ : տերեւ : եափրագ : ԺԹ. 2 .
սայլասասուր : բերանը սուր : աղղը քէսկին : ԳԶ. 2 :
սանդղաբանութիւն : գետնէն տաւլը եղած, կմ գժտութիւն, գև : ԼԶ. 5 :
ԽԶ. 3 :
սանձ : կէմ, ախըզլըգ : Զ : 2 :
սանձահարել : կէմը բանող : Զ. 2 :
սանձահարող : կէմը կապող : զսպողն չէկող : կէմ ալըմագ : ԽԶ. 2 :
սառնամանիք : սառուց : բուզ : Է. 3 : Է. 1 :
սառնասիրտ : սառն այէս, պաղ կարծ : ԾՌ. 3 :
սառնսացութիւն : պաղ սրտ բըլմալը : ԳԶ. 11 :
սաստ : չէր, չըղըլշ, թամբիր, խըրշմ, գաղէպ : Ը. 2 :
սատակեր : զօրաթօյի չափ բռնակ : ԽԵ. 1 :
սարդ : մանման : եօրիւմճէք : ԳԶ : 14 :
սարսուռ : դող : թիթրէմէ : Զ. 3 :
սարսռացական : դղրդ քաշելով փախած : ԽԸ. 2 :
սաստանել : խանդանելով սաղմիչ ընել : ԳՌ. 1 :
սգալ : արտասուել : գլայըը կամ էլէմ չէքմէք : ԽԵ. 1 :

սեաւք : գլխան էշին : ժբ. 3 :
սեպհականեալ : գուղ էքանք խառչանը : խբ. 2 :
սեպհականն : առանձին իրենը : գանձը : լգ. 5 :
սերմուհ : աղէկզգուշ : գ. 2 :
սեան : պայծառ, յստակ : գեղեցիկ, փայլ : Յ. 2 :
սեւեռ : գամ. մեխ, էբենոս : կգ. 4 :
սթափ : զգաստ, ծուլ : պայծառութիւն : խզ. 3 :
սթափել . խոկալ գլուխը գալ : այժմյանաբար : զ. 3 :
սիգաւոր : առաջնորդ եղող : ծառայ : հգ. 2 :
սիկ : բարձրակ հող : խոշ բուծակ : լաթենի եկել : լբ. 3 :
սին : փուճ. ունայն : խէ. 3 :
սիրաբորբու : սէր ձգող : գբ. 3 :
սլանալ : վազելով թռչիլ : ե. 2 :
սլաք : նետին ծայրի երկաթը : օգ. անձնիւն : ժզ. 1 : խզ. 3 :
սխրալի : զարմանալի : անճառելի : ծբ. 2 :
սկաւառակ : կաւով կամ ջամբռանով խառնած : ջամբռաղու, պաղլանիք : ծզ. 3 :
սկուտեղ : թաղարակ, կամ առհան : Է. 2 :
սկզբնաւորդ : առաջին լուսատոր : ծզ. 1 :
սկզբնածին : առաջինեկ : իշխ առաջնուշ : լզ. 5 :
սկզբնաձիր : հբ. 2 : } առաջին առողջ, կամ պարգեւողք :
սկզբնաշնորհ : ձե. 2 : }
սկզբնապատար : պատճառ կամ շահղղէլ գլուխ : դբ. 8 :
սկիւթացի : թաթար : դզ. 12 :
սողոսկել : ներսանկելելմէք : ծա. 4 :
սնոտիապաշտութիւն : փուճ կամ ունայն չինուած : եօթանասնից : զ. 1 :
սողուն : սողունաձև : լբ. 2 : կէ. 1 :
տակ : փուճ, անշահ : Փիլիսոփայ, Նաֆիլէ : հբ. 2 :
տակակապ : եայման, կամ ցած, կամ ապաշաւը մարդ : զ. 2 : հա. 2 :
տակավինթխար : տակաւին մեծ, ահագին : ապաւլապան, անվերջանի : դզ. 12 :
տակաւին : մեծ վախ : իֆիրամթ գօրդու : լէ. 3 :
տապ : փոս ահեղ՝ անէլէն փորած : խ. 2 :
տարազ : տարամանութին : զամ, թասաս : Ծ. 1 :
տարածել : խոցը էլեգինել : պայթուցանք : լզ. 2 :
տարրհանդակ : շաթըր, փէյլէկ : ծզ. 2 :
տաճիկք : խմնաստունն խօսք, կամ չէնք : ձբ. 2 :
տապանակ : մորթած անասուն, կամ մորթըլուխը : լզ. 5 : խզ. 2 :
տապանագործ : մորթելու անող : խէ. 3 :
տապառաձեւն : սիրանալ, կամ սիրահատար : զ. 3 : ծզ. 2 :
տապալել : հատանել : թիւքէնմէք, եօղ օլմաք : բ. 2 :
տապաստած : ըմբռնալ, ծայր : թէքմէլ, ուժ : լա. 1 :
տապաս : անզամ : գիաֆէթ : դզ. 21 :
տարեզանիք : մէհլէմ : ժբ. 3 :
տաղտկել : նեղու սիրտը ըլլալ : խբ. 5 :
տառատեսակ : գլուխ քաշող, զարդարել : լա. 2 : ճիշտէս տառատանց : խբ. 3 :
տարաձայնել : մեղադրել, առաջը երեսը զարնել : այրալլամալք, սիթէմ էթ-մէք. խթ : 3 :
տարինք : ծիծ : մէմէ : ի. 2 :
տարորոշել : վար քաշող : ձե : 2 :
տարրախառնական : տակէն խառնիչ եղած . հզ. 2 :
տարրածածկել : տակը ծածկուիլ : լէ. 3 :

տարփաւորաց : ցած կամ փոքր բանսկոա ընկած : ծէ. 2 :
տարրք : վարժիծնսրը . աշակերտութիւնք : ձէ. 2 :
տաստակ : հաստ, խոշոր : գաւթն, գարդար : խէ. 2 :
տաւարածնարածա : խոշոր քարերով կարկաած, կամ եզրէնովք տղած :
(յիշատակարան :)
տաւարասատեղն : հաստ կամ խոշոր սալերով : թ. 2 :
տաւագարմնել : բառով կամ անուանելը խարաթ ընել : դէ. 20 :
տաւեր . շուք : քէօշկէ : ժէ. 1 :
տարկամեծաշ : ծառան կամ ցած մարդը մեծաւրօղ : է. 1 :
տարկութիւն : ցածութիւն : ամչուցելք, էատաւելք : դէ. 7 :
տարօուկ : բայէ : է. 2 :
տարշանաւ : փխուշման ըլլալ, վարք գալ : իթ. 3 :
տրամադրութիւն : սուր բան չիսնելը, կամ երկաթ ոտելը : խէ. 2 :
տրոհ : սոֆա, մէյտան : ծա. 4 :
տրտմալ : վերք ընելով փափչէլ : ժա. 3 : ե. 2 : խէ. 3 : տրտնջեալ, մեղքթ
ուրացած . ցցուած : ախմխրչէնեմիշ : իէ. 3 :
տրփահեա : նա կամ թեթեւիկ ճամբայ ածօղ : դէ. 11 :
տրփերդեան : նա նա երդօղ : դէ. 1 :
տրփնկ : ախուրուկ : չըղըրթմայ, կամ նէյ : դէ. 8 :
տրտնջել, կամ տրտնջիլ : ցրցնքել, ցանել, ցանուիլ : ակրաֆելիք, ակրաֆելէլմիք :
իէ. 5 : դա. 2 :
ուխիւ : պօլ, ընդարձակ, կամ չորս գլխն : (յիշատակարան :)
ախորժանք : մխիթարանք : թէսէլլի : իէ. 3 :
ուքանչելութիւն : զարմանալի ըլլալը, զարմանալի կերպ : անձայլայ թարզ,
հըքմէթ : ժէ. 2 : հէ. 3 :
Վաղորդայն . առաւօտ : առաջան վաղթի : կէ. 3 :
վայր : տեղ : եղր : իէ. 1 :
վայրապարութիւն : եսապանիլլիք, եավուղլուք : է. 4 : լէ. 1 :
վանդակապատ : պարմախլըքլով կամ խաֆէսով չինած տեղ : գաֆէսլիք : իէ. 2 :
վանել : հրելով հանել, վարընկել : իթիտմէրլիք, գօվալամաք : իէ. 3 :
վատասանակ : աշխատանք : զահմէթ, արդէթ : ձէ. 1 :
վատնել : ցրուել, զաղ ընել : տաղըլթմաք : իէ. 3 :
վարանել : տարակուսիլ, չորս գլխն կամ բոլոր եայլըմիշ ըլլալ : լա. 3 :
վարատիլ : վախէն կամ ակրակէն անձրկիլ, կամ տէտիրկին ըլլալ : ժա.
3 : իէ. 3 : իէ. 2 :
վարդապետ : թիրկին կամ, կամ քթի չէնկել, կամ հայլօղ : դէ. 2 :
վարդապետական : բարբարական, ակէտիրկին : ժա. 3 : իէ. 2 :
վարատիլ : ցրուիլ : տարատղնիլ, տէտիրկին ըլլալ : իէ. 3 :
վարկածք . մտքի գրածը, մտածմունք : թահմին, զըյաս : իէ. 4 :
վարկանել : միտքը դնել, սեպել : սանմաք : ժթ. 3 :
վարմ : թոռ, կամ ուռկան : ե. 3 : զ. 3 :
վարուք : փէրչէմ : կէ. 3 : կամ, ծառին փէրչէմը : թ. 2 :
վեհ : խիստ մեծ : սեպ, մեծահաւր : է. 2 :
վերադարձութիւն : վրա ընկնիլը, կամ մէկ մէկու վրա գրուիլը : ե. 2 :
վերակացութիւն : վրա կենալը կամ հսկելը : ա. 2 :
վերանկենցաղել : ողջ ընկնալ : ախըրէլմէք : լէ. 5 :
վերամբարձութիւն : վեր բարձրանալը կամ ելլելը : ձէ. 3 : դէ. 9 :
վերընթացութիւն : վեր ելլելը : ձէ. 5 :
վերծանել : կարդալ : օգուլմաք : իէ. 4 :
վերնականցաղ : երկինքը ապրօղ կամ ապրելու : ծա. 4 :

վերնամատոյց : այդ դէմ ձեռնն ընծայ : դա. 3 :
վերնամտիցանակ : երկնային յաղթութեան մրցանակին : դժ. 24 :
վերնաշաւիղ : վեր ելնելու : դէ. 11 :
վերջնական ատեան : ատեան հանելու զօրաւոր դեռ, ինչպէս պաշտօ-
նը. կն : դժ. 11 :
վէս : քիթը մեծ. հպարտ : մեծապարծ : Ծ. 2 :
վկթխարութիւն : խռով մենծութիւն. հանդարտանք : դէ. 2 :
վիժած : անցուցած տղայ : վարդենիներն եղեն տղամաշ : Ե. 2 :
վիժակ : վար վարելը : կդ. 1 :
վիհ : խորունկ փոս : ժա. 1 :
վիճակաւորիլ : բաժնըլուիլ : թեւերի օրինաք : դէ. 8 :
վիմական : քար գործած, քարի պէս պինդ : ծզ. 2 :
վիրգ : նետուելու մեծկակ քար. կ. 2 : վիրգ սալի : անօշեմեռի քար :
դէ. 8 :
վհատիլ : սիրտը թուլնալ կամ կոտրիլ : իւրեկեի քրասըրմաք : դ. 4 :
վտակ. բարակ վազուկ ջուր : առուր առու : Ե. 2 : իե : 4 :
վտարանդի : եստաղան տեղ ընկած, կամ վռնտուած. ժե : 2. ծա. 4 :
վտարել : քշել : գօտմաք : խթ. 3 :
վտանել : լըստրցընել : գաղտանըլաթմաք : Ե. 2 :
վրան : չատրը : Ե. 2 :
վրիժառու : էօճ կամ հայֆ առնող. ձը. 5 :
վրիպակ : զալլատ, կմ՛ զըկուած : իզ. 2 : կամ, ծուռ : եանլըշ : ժը. 8 :
դը. 9 :
վրիպիլ : ճամբէն դուրս ելլել. եօլտան չաշմաք. Ե. 2 : կամ, զըկուիլ.
մահրում գալմաք : լը. 2 :
վշնջողական : ձիու պէս ցանկութիւն, կամ աղմուկ ընելը : խե. 2 :
Տաղաւար : ալայէթ : է. 3 :
տաժանիք : խե. 3 : } մեծ աշխատանք : իֆրաթ զահմէթ :
տաժանուածն : ը. 2 : }
տածել : պէտք ընել. պէտքեմեք, թիմար էթմէք : Ե. 2 : թ. 2 :
տակաւ տակաւ : կամաց կամաց : աղար աղար : ծը. 3 :
տաղանդ : օխայով լըստակ : իդ. 2 :
տաղաւար : խուլիպէ : կամ չատրը, գօնաղ : ը. 1 :
տաղաւարիլ : բնակիլ : գօնաղ էթմէք : հն. 13 : կամ, բնակուիլ.
բնակարան ըլլալ : գօնաղ օլմաք : Ճ. 1 :
տաղտկաղանական : նեղրահ ընելու : սիքը մուրտառ : դժ. 30 :
տաղտկալի : գանելու : նեղրահ էտէճեք : ա. 1 : կ. 5 :
տաշտ : թաս, քեասէ : Լ. 2 :
տապ : գոլ, տաքութիւն : սըճագլըք : Լ. 3 :
տապակխառն, տաք գոլով խառնած, ինչպէս սամ եզնն : դը. 9 :
տապանալ : տաքնալ : գըզըլմաք, ըսըլթմա օլմաք : իթ. 2 :
տապար : կացին : պալթա : ժդ. 3 :
տառ : գիր : եազը : կմ՛, գըրուածք, գրած խօսք : լդ. 2 :
տառապանելի : տրտմելու, հոգալու : գասավէթլի : լա. 2 :
տառապակցական : խոշոր փուշ, կամ ուժմիր ոտքերնի ցանող : ծը. 2 :
տարաբաղդել : վըընտել, հեռացընել. գօվմաք : Ե. 2 : ը. 1 :
տարազ : կերպ : թարզ, ոյ : ժը. 2 : ծդ. 5 :
տարաժամ : պէվախտ : ձը. 6 :
տարակոյս : մերթ՝ բաժնըլուած ճամբա : գ. 3 :
տարակուսել : փրցընել : չէքիփ գօփարմաք : ժե. 2 :
տարացոյց : օրինակ : էօրնէք, նումունէ : ժե. 2 :

տապամ : սփռիւ : կը : 3 :
տառապանք : անձկածութիւն : լթ . 2 :
տարտարոս : դժոխքի անդունդը : ճիհէննէմ : ը . 1 :
տարր : մարմնաւոր բաներուն թեմէլը . այսինքն, կրակ, օդ, ջուր, և հող : խմախուր, անասիր : ձը . 3 : կամ, անանցանելի հասարակ եղած բան : ի . 2 :
՚ի տարր գալ : եղած բաներուն տարրը մէջը : խա . 2 :
տարր արկանելոյ : պատճառ փորձանքներու : դը . 6 :
տարր ժամանակաց : սկիզբն կամ մայրերանը աշխարհքիս ժամանակներուն : ծե . 3 :
տարրիչ : հասարակ ընող : ձդ . 1 :
տարփանք : մեծ բաղձանք : արզու : ժը . 1 :
տաւիղ : զանգուն : չալղը մի է : կա . 1 :
տեղալ : անձրևի պէս թափել : եաղմագ . ժթ . 2 :
տենչանք : մեծ տարփանք : ժը . 1 :
տեսանական . երևելի, աչքի եկող : կէօրիւնէճէկ : իդ . 2 : կամ, տեսնող : կէօրէն : լդ . 5 :
տեսանականել : երևելի ընել, ցուցընել : դէ . 10 :
տէգ : մզրախ : խե . 3 :
տիեզերակալ : աշխարհք բռնող : ալէմի պատատան : դ . 4 :
տիղմ : ցեխ : չամուռ : ժէ . 1 :
տիպ : կերպ, կերպարան, քէյֆիյէթ : դ . 1 :
տիրապետ : ծդ . 2 : } տէրը բռնող, անհաւատարիմ : աղաղութեան խոյզի:
տիրապետութ : է . 2 : }
տիք : տարիներ, տարիք : եաշ : ժա . 2 :
տխուր : տրտում : մէլուլ, մահզուն : իթ . 2 :
տխրատեսակ : սև մութ գոյն ունեցող : լդ . 8 : դդ . 12 :
տղմահաղ : թանձր չամուռով լցուած : պալչըգլը : ժդ . 1 :
տնկակից : ընտական : տալլընտան, զաթը : ծե . 3 :
տնտեսել : հոգալ . տալ : գայյըրըմագ : ժե . 2 : կամ, ցուցընել : պէյան էթմէք : խը . 6 :
տնօրէնութիւն : տան գործք, կամ թէտպիր : դը . 3 :
տոկոսիք : ըստակին շահ : ֆայըզ : ա . 2 :
տոհմ : ազգ : սոյ, սիլսիլէ : ծա . 5 :
տոհմական : սոյլու, սոյզադէ : դ . 2 :
տոյժ : պատիժ, ճէրիմէ, ճուրքամ : ը . 2 : իդ . 2 :
տոչորել : եփել մրկել : եանտըրմագ : է . 5 : կամ, ցամքել . գուրուտուլմագ : իդ . 2 :
տոռն : չուվանէ կապ : քէնտիր : իը . 1 : կէ . 2 :
տուայտել : հալել, մաշել : կդ . 5 :
տուժել : ճէրիմէ կամ ճուրքամ քաշել : է . 3 :
տումար : տէֆթէր : լթ . 2 :
տպաւորութիւն : շատ նման : փէք ույկուն, թըպքը : ժթ . 3 :
տատրուն : աղոչ : գումրուգ : խե . 3 :
տրոհել : բաժնել . զատել : այըրմագ, սէչմէք : ժդ . 1 :
տրտում : ցած, տխուր : տալգըն, էսէֆ : ժե . 2 :
Ցայգ : գիշեր : կէճէ : ր . 2 :
ցանգ : միշտ : տայիմ : ըե . 1 :
ցանց : խ . 3 . } աղ, ձուկ կամ թռչուն բռնելու թօռ :
ցանցառիկ : ծե . 2 : }
ցասումն : բարկութիւն : էօֆքէ : ժե . 3 :

ցեղ ։ ազգ ։ ԺԶ. 2 ։
ցեխ ։ վայրի էշ ։ եասաղան էշէնի ։ ԽԶ. 2 ։
ցնորք ։ խենթութիւնթ մտամոլուքենէր կամ երազները ։ խելայել ։ ԺԶ. 3 ։
ՃԶ. 1 ։
ցնցուղք ։ ցամթկառուք ջրի կամ կրակի ։ անցրցիրնթի, փիւսիկուլե ։ Զ.
3 ։ ԿԶ. 3 ։
ցողանալ ։ փայլփլել ։ շառաքլանելիք, շէօհլէլէնէք ։ Ե. 2 ։
ցոլք ։ փայլփլանք ։ շառաքլանշ ։ ձա. 3 ։
ցուփուն ։ հաստարձակուն ։ աշըքըլըք, անբազեսալիք ։ ՀԶ. 2 ։
ցուպ ։ գաւազան ։ աէկէնէք ։ Կ. 4 ։
Փաղանգ ։ սիւրիւ, գաղթար ։ ԿԵ. 1 ։
փառաբանել ։ շօյել ։ խօշ ըէլի կէչինէք ։ Ժ. 1 ։
փառաւոր ։ խօժուխ ալեղ ։ Խ. 2 ։
փառաքարութիւն ։ շան ալէս եանեաղփարութին ։ ԽԵ. 2 ։
փեթթեալ ։ Ֆիլիզլէնմիշ եղած ։ ԶԶ. 11 ։
փոխադարձել ։ հատուցանել ։ մուգաբէլէ էթմէք ։ Ե. 3 ։
փոխադարձութիւն ։ հատուցումն ։ մուգաբէլէ ։ ՀԵ. 9 ։
փոկ ։ կաշիէ կապ ։ ԽԵ. 2 ։
փող, ( փողի ։ ) պօրազ ։ ԽԶ. 3 ։
փող. ( փողոյ ։ ) բուրու ։ ԿԶ. 2 ։
փողել ։ բուրու կամ պօրու չալել ։ ԿԶ. 2 ։ ԶԶ. 7 ։ կամ, ամուր կանչել, պօռալ ։ պաղըրըմաք ։ ԿԶ. 2 ։
փրկանաւոր ։ փրկութեան գործիք, կամ միջնորդ, ազատօղ ։ գուրթարըճը ։
ԽԶ. 2 ։ ԾԱ. 4 ։
փրկանք ։ ազատելու գին ։ պէհա ։ ՃԷ ։ 2 ։ Զ. 2 ։
փքանալ ։ ուռիլ ։ պէօյիւնլէնմէք ։ Ե ։ 2 ։
Քաղեալ ։ քաշուած, ժողված, քէչիրըլմիշ ։ ԽԹ. 2 ։ ՃԷ. 3 ։
քաղցկեղ ։ կերցաւ ։ չիբիբինէյէ ։ ԺԶ. 3 ։
քաղցրաւենի ։ անուշեղէն ։ թաթլը, շէքէրլեմէ ։ ԽԱ. 2 ։
քամահել ։ անարգուրիլ ։ այըփլամաք, գէմմ օլմաք ։ ՀԷ. 3 ։ ՃԶ. 5 ։
քայլ, կամ քալ ։ կերպարանք, լէօֆ ։ ԼԶ. 1 ։
քանակէլ ։ շարքի մէջ մտնել, պարտկիլ ։ եօլ չիկէ կիրմէք, քիւչիւլմէք ։
ԼԶ. 10 ։
քանատոր ։ ժամա ։ զանգ, եասթուղ ։ ԿԹ. 2 ։
քանդակուած ։ փորուածք քարի կամ փայտի վրայ օյմա ։ ԺԱ. 2 ։
քանիք ։ Ենչըրատար ըլմալը ։ Է. 1 ։
քանցել ։ փրցուել. կտրտուել ։ գօփարըլմաք. գըրըլմաք ։ ԽԶ. 1 ։
ԿԷ. 2 ։
քանքար ։ օխայով կամ քէսէյով քասակ ։ ԺԶ. 1 ։
քառաչափեան ։ չորս աչքով, կամ չորս գիծէն անմօղ ։ ԾԱ. 4 ։ ամեն 'ի
լուծմունքն ։
քառանկեալ ։ չորս կողմ ունօղ, ինչպէս ՆԱ խաչը ։ ՂԱ. 2 ։
քառանկիւնեան ։ անօրթ թարաֆլը ։ ՂԶ. 21 ։
քառաք ։ չորս ։ աէօրթ ։ ՃԶ. 1 ։
քարախուշկայն ։ քարով ծեծկըռուօղ ։ ԺԶ. 2 ։
քարամէժ ։ խայայէ վար ինկած ։ ԾԶ. 2 ։
քարք ։ թաշ եըլմին ։ Ե. 1 ։ Ծ. 4 ։
քարտէն ։ թուղթ ։ քեադըտ ։ Թ, 1 ։
քաւարան ։ քաւօղ ։ աֆֆ էտէն ։ ՂԶ. 1 ։
քեղիք. մանրուն ։ կամ, մանրին կամ ամուլլենին կոճը ։ ԼԶ. 3 ։
քերթութիւն ։ քերականական շէնք ։ ՂԶ. 19 ։

քթթելական : ակնթարթ, աչք բանալ գոցելը. և նմանութեամբ, քչմեկ
մը : աչքի աղբիւրը : ժդ. 1 :
քիմք : ատամնափ : իդ. 2 :
քինաւոր : ղարէզլի : գա. 1 :
քղանցք : փէշ, էթէկ : ժը. 2 :
քնարան : քնանալու տեղ, գերեզման : հէ. 4 :
քննիչն : թէֆթիշչի : 'ի քննիչն ատենաւ : քննել : թէֆթիշ էթմէք, սորա-
մաք : հա. 3 :
քողարկել : ծածկել : էօրթմէք : հէ. 2 :
քողընծայ : քողքով ծածկած : գէ. 3 :
քրմնակրօն : քուրմերուն կրօնքին կամ կանոնին : լէ. 1 :
քրմնամոլութ : քերմէն չինած, կամ հասարակ բրած : ծէ. 4 :
քրմնաշուէջ : քուրմ չէշով կամ բերնով խօսած : լէ. 2 :
քստմնափուշ : իը. 6 : } փուշ փուշ ըլլող, կամ ըլլալը : խիստ գա-
քստմնելի : . . . է. 1 : } ղալու :
քրայ : զուարճալի կամ խաղալի օձախ : ժթ. 1 : իէ. 3 :
քրէական : թագաւորի կամ ատեանին գէմ բրած : ծա. 4 : գա. 3 :
քրձազգած : չուալ կամ խարար հագած : իթ. 2 :
քրմերգի : քուրմի կամ կուռքի քահանայի ձայնով : կը. 3 :
քրմնակնիգրուհի : անուշահոտ քրմանով եղած : ձը. 3 :
քրքում : զաֆրան : դէ. 11 :
ք.քուանք : ծեծկլուելով լալը : ժը. 2 :
Օդ : հավա : խէ. 2 :
օդախոնաւ : հավան թրջող : դէ. 20 :
օդաշու : հավային մէջը թռչող : դէ. 5 :
օդուած : տես յօդուած :
օձք, ( օձից : ) ոտից ամանն : փաթաթուն : խէ. 3 :
օթեւան : իջնելու տեղ, տուն : օթաղ, դօնաղ : է. 1 :
օթոց : զգեստ, հագուստ : էսպապ : է. 1 :
օժանդակ : օգնական : եարտըմճի : իթ. 1 :
օժանդակել : օգնել : եարտըմ էթմէք : կն. 2 : կամ, զօրացընել, մեծ
բանի հասցնել : ն. 1 :
օճառք : գործիք : ամանեղէնք, փուտատա : կզ. 3 :
օն և օն գրել : իրար ետևել : հաջ. ասպէտք : իթ. 3 :
օշինդր : փելին . զ. 3 : հա. 2 :
օրանկչիւ : օր չափող : ( յիշատակարան : )
օրհնելով : օրհնութեան երգող, օրհնող : կա. 2 :
օպող : բամբող, յորւող : առաղլուան : ժդ. 4 : կամ, բամբասած,
զղջուխ քաշած : աղտեղէշ, ապաշ չէքմիշ : իը. 2 :

*Tip. ed Edit. li RR. PP. Armeni di S. Lazzaro in Venezia.*

| ՎՐԻՊԱԿՔ | | | ՈՒՂՂԵԱԼ |
|---|---|---|---|
| Երես. | տող. | | |
| Է | 16 | Արդ՝ | Արդ՝ |
| Ը | 46 | մնկնչի | մեկնչի |
| Թ | 12 | կեւլեկեցւոց | կիւլեկեցւոց |
| 21 | 1 | Այ | ԱՅ |
| 23 | 50 | յաքդարակս | յադարակս |
| 24 | 21 | սպաստանեալ | ապաստանեալ |
| 57 | 33 | գծագրեմ | գծագրեմ 10 |
| 83 | 21 | դարշապարգս | դարշապարդ |
| 91 | 36 | բանտարկուին. | բանտարկուին. որպէս զան-<br>բժշկելի մանրեցեալ 20. |
| 200 | 8 | ոըք | ոյք |
| 215 | 44 | ոչ կարօտանաս | 3 ոչ կարօտանաս |
| 216 | 6 | Այլ.քեղ | 4 Այլ.քեղ |
| | 6 | ոչ վրիպեալ | 5 ոչ վրիպեալ |
| 217 | 37 | խմաւփն, | 5 խմաւփն, |
| 232 | 3 | զարժաւորութիւ | զարժանաւորութիւ |
| 250 | 11 | սկզբնաւորող | սկզբնաւորօղ |
| 254 | 37 | մովսիսական | մովսիսական |
| 259 | 37 | անարգ | անարգ: |
| 290 | 44 | ոգումն | ոգւումն ; |
| 296 | 8 | Հարկիս 'ի գիտութէ. | 8 Հարկիս 'ի բարութէ. |
| 299 | 18 | ըղձալի | ըղձալի |
| 310 | 19 | անդէն | անդէն |
| 322 | 51 | զի ւրաքանչիւր | զիւրաքանչիւր |
| 326 | 5 | օրհնարանելի | օրհնաբանելի |
| 338 | 10 | ընդ | ընդ |
| 370 | 20 | աղգարան | աղդարան |
| 373 | 8 | 'ի նսային | 'ի սային |
| 391 | 47 | Ինքն և օնիդէն : | Ինքն է օնիդէն |
| 401 | 24 | Այ | ԱՅ |
| | 31 | (13) Քարինս | (93) Քարինս |
| 408 | 12 | գիւացկործանման | գիւաց կործանման |
| 425 | 16 | ծաւր | ծանր |
| 460 | 24 | (9) Պահնոփին | (9) Պահնոփի |
| 472 | 37 | յանդ 'ի դրոյն | յանդ ի դրոյն |

ԳՐԱԴԱՐԱՆ
ԳՐԻԳՈՐ [illegible]
Կարգաթիւ ..............................